Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՊԱՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՅՈՐ ԱՌԱՋԻՆ

Ա.Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ, Գ.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ
2014

ՀՏԴ 37(091):941(479.25)
ԳՄԴ 74.03 +63.3(2Հ)
Ա 774

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ՝
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտ (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. Ա.Մելքոնյան, պ.գ.թ. Ա.Մաղալյան, պ.գ.թ. Ա.Վարդանյան, պ.գ.թ. Մ.Հարությունյան):
Երևանի պետական համալսարանի հանրակրթության ամբիոնի վարիչ, մ.գ.դ. Կ.Աթայան:

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում «Փյունիկ» համահայկական բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր Լ.Ա. Սարգսյանին՝ գրքի հրատարակությունը հովանավորելու համար:

Ավանեսյան Ա.Ս., Հարությունյան Գ.Հ.
Ա 774 Արցախի կրթական համակարգը: Ա. Ավանեսյան, Գ. Հարությունյան.-
Ստեփանակերտ: Դիզակ Պլյուս, 2014. Հ. 1.- 480 էջ:

Աշխատության առաջին հատորում ուսումնասիրության է ենթարկված Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմությունը: Արխիվային հարուստ նյութերի, սկզբնաղբյուրների և ժամանակակիցների հուշերի համադրական վերլուծության հիման վրա հետազոտվել և նորովի լուսաբանվել են քննարկվող ժամանակաշրջանի Արցախի կրթական համակարգի սկզբնավորման ու զարգացման ուղղությունները՝ կրթական գործի կառավարման համակարգը, ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգը և պատրաստման հիմնախնդիրը, Հայ Առաքելական Եկեղեցու նշանավոր գործիչների, դպրոցի և մանկավարժության ասպարեզի երախտավորների, կին լուսավորիչ-մանկավարժների, Շուշիի թեմական դպրոցի և նրա սաների լուսավորչական գործունեությունը, նրանց առաջավոր փորձը և պատմական ու տեսական արժեք ունեցող այլ հարցեր, որոնք հնարավորինս ամբողջական կերպով գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:
Աշխատությունը նախատեսված է հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմությամբ զբաղվողների, առանձնապես ուսուցիչների, մանկավարժական կադրեր պատրաստող բուհերի դասախոսների, ուսանողների և, առհասարակ, ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 37(091): 941(479.25)
ԳՄԴ 74.03 +63.3(2Հ)

ISBN 978-9939-1-0029-6

© Ավանեսյան Ա.Ս., 2014
© Հարությունյան Գ.Հ., 2014

Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS «Արցախի կրթական համակարգը» գիտական թեմայի շրջանակներում:

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյա հարուստ մշակութային ժառանգության անբաժանելի մասն է կազմում հայ դպրոցը, որն ունի հազարամյակների պատմություն: Հայ դպրության արմատները ձգվում են մինչև հայ ժողովրդի՝ որպես ինքնուրույն էթնիկական միավորման, ձևավորման ակունքները:

Պատմական Արցախը, հանդիսանալով արևելահայության մի հատվածը և ընդգրկված լինելով հայկական լեռնաշխարհի ընդհանուր քաղաքական ու մշակութային կյանքում, դարեր շարունակ կիսել է հայ ժողովրդի ճակատագիրը՝ իր ավանդը ներդնելով նրա նյութական ու հոգևոր մշակույթի, հայեցի կրթություն տվող դպրոցի ստեղծման ու զարգացման գործում:

Արցախահայ դպրոցը, լինելով հայկական դպրոցի մի անբաժան մասը, բազմադարյա պատմություն ունի: Անցյալ դարերի և մեր ժամանակաշրջանի Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմությունն ուշադիր ուսումնասիրողը, իհարկե, կհանդիպի մեծ դժվարությունների, սակայն կգտնի փառահեղ էջեր, կզարմանա հայ ժողովրդի այս հատվածի այդչափ ուսումնասեր լինելու վրա, կհիանա այն սխրագործություններով, որ անձնուրաց կատարել են հայտնի ու անհայտ բազմաթիվ ուսուցիչներն ու կրթական գործի կազմակերպիչները: Եվ, չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններին, Արցախի ժողովուրդն իր գոյության ամենաօրհասական պահերին անգամ չի կորցրել հոգու արիությունն ու մտքի սլացքը: Նա ամեն անգամ առասպելական փյունիկի պես հառնել է մոխրակույտերից, մաքառել իր գոյության, մշակույթի և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող կրթական օջախների համար: Արցախի ժողովրդի պատմության տարբեր փուլերում հայեցի կրթություն տվող դպրոցները կենաց ու մահու գոտեմարտում մաքառում էին և պահում իրենց կենսահաստատությունը, շարունակում ավելի կամ պակաս չափով ծառայել արցախահայության մշակութա-լուսավորական կարիքներին, նրա ազգապահպանման գործին: Ուշագրավ է նշել նաև այն, որ արցախահայությունն էլ իր հերթին ամեն կերպ երախտահատույց է եղել իր զավակների ուսուցիչներին, պատվել ու մեծարել նրանց, իր բերանի վերջին պատառը չի խնայել երկրամասի հայագիր դպրոցների պահպանման համար: Ահա թե ինչու դպրոցը, աճող սերնդի կրթության ու լուսավորության գործը որոշակի ու կարևոր տեղ են ունեցել Արցախի ժողովրդի հոգեկան ոգորումների ոլորտում:

Արցախի բազմադարյա կրթական համակարգի պատմությունը V դարից մինչև XX դարի առաջին երկու տասնամյակը (1900-1920թթ.) համեմատաբար քիչ է ուսումնասիրված:

Ընդհանրապես, համակողմանի ուսումնասիրված չէ խորհրդային շրջանի (1923-1988թթ.) Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի պատմությունը:

Համակողմանի ուսումնասիրված չէ նաև 1988-2012թթ. ընդգրկող ժամանակաշրջանի Արցախի կրթական նոր համակարգի ամբողջական պատմությունը:

Պատմաքննական վերլուծության տեսանկյունով ընդգծենք, որ նախախորհրդային շրջանի ուսումնասիրողները բավարարվել են Արցախի առանձին կրթական օջախների մասին որոշ նյութեր հրատարակելով: Մեծ մասամբ կապված լինելով դպրոցական կյանքի հետ, նրանք, բնականաբար, վեր են հանել իրենց ժամանակաշրջանի դպրոցների ցավոտ հարցերը, աշխատել են ուղիներ նշել նրանց բարելավման համար (Ալեքսանդր Երիցյան, Արսեն Ղլտճյան, Ստեփան Մալխասեանց և ուրիշներ)[1]: Արցախի առանձին դպրոցների պատմության վերաբերյալ

1. Այս և ներքոհիշյալ հեղինակների աշխատությունները տես գրքի վերջում բերված օգտագործված գրականության ցանկում:

ուսումնասիրություններ են կատարել Լեոն, Համբարձում Առաքելյանը, Մակար Բարխուդարյանը, Երվանդ Լալայանը և ուրիշներ: Այս ուսումնասիրողները հիմնականում սահմանափակվել են օբյեկտիվ փաստերի հիման վրա կոնկրետ տվյալ դպրոցի անցած ուղին շարադրելով: Նրանք մեծ մասսամբ չեն խորացել պատմական երևույթների մեջ, չեն վերլուծել կրթական շարժման էական հարցերը, դպրոցը կտրել են քաղաքական-հասարակական իրադրությունից:

Սակայն նշենք, որ Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ, ականավոր պատմաբան Լեոն Ղարաբաղի թեմական դպրոցի պատմությանը նվիրած իր աշխատության մեջ հաջողությամբ փորձել է դուրս գալ մեկ դպրոցի սահմաններից և ստեղծել կրթական վիճակի ընդհանուր պատկերը, թեմական դպրոցի կյանքը շաղկապել ժամանակի հրատապ խնդիրների հետ: Լեոի այդ աշխատությունը մինչ օրս էլ մնում է որպես արցախահայ կրթական համակարգի պատմությանը նվիրված ուշագրավ և եզակի արժեքավոր աշխատություն *(տես գրականության ցանկը):*

Հարկ է նշել, որ խորհրդային շրջանում Արցախի բազմադարյա դպրոցի պատմության ուսումնասիրության ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել նաև Աբ.Մովսիսյանը, Առ. Առաքելյանը, Ռ. Տեր Գասպարյանը, Ս.Ավագյանը, Մ.Սանթրոսյանը, Բ.Ուլուբաբյանը և շատ ուրիշներ: Սակայն նրանց աշխատություններում մանկավարժական տեսական, կրթական համակարգի կառավարման բազմաբնույթ հարցեր քննական խոր վերլուծություններ չեն պարունակում: Նրանք ձեռնպահ են մնացել կրթական շարժման ընդհանուր հարցերից և բավարարվել են փաստերի շարադրմամբ: Հեղինակները չեն խորացել դպրոցի ներքին կյանքին վերաբերող հարցերի վերլուծության մեջ, չեն անդրադարձել կրթական գործիչների և նրանց սաների գործունեությանն ու ձեռնարկած ջանքերին, դրանով էլ քննարկվող ժամանակաշրջանի դպրոցի պատկերը նրանց աշխատություններում ամբողջական չի ստացվել:

Խորհրդային շրջանում փորձեր արվեցին արցախահայ դպրոցի պատմության նոր լուսաբանման ուղղությամբ: Երևան եկան Արցախի դպրոցի պատմությանը (V-XX դարի սկիզբը) նվիրված ուսումնասիրություններ (Վ.Սևյան, Կ.Ղահրամանյան, Շ.Մկրտչյան, Գ.Հարությունյան), որոնց մեջ առանձնահատուկ տեղ գրավեցին պրոֆ. Գ.Հարությունյանի աշխատությունները («Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը 5-20-րդ դարի սկիզբը», «Արցախահայ դպրոցը 19-րդ դարում», «Շուշիի ռեալականը», «Շուշիի մանկավարժական ուսումնարանը»): Նրանում, Արցախի դպրոցի ներքին կյանքին վերաբերող հարցերի պատմաքննական վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշ պատկերացում կազմել անցյալի և նոր ժամանակների արցախահայ դպրոցի հետ կապված մի շարք հարցերի մասին: Արցախի դպրոցի 1600-ամյա պատմության համառոտ նկարագիրը ներկայացվում է նաև «Արցախի դպրոցը հնագույն շրջանից մինչև մեր օրերը», «Կրթությունը Արցախում», 405-2005թթ. (Գ.Հարությունյան, համահեղինակներ) աշխատություններում: Անշուշտ, արժեքավոր ենք համարում Արցախի դպրոցի պատմությանը (V-XX դարի սկիզբը) նվիրված վերոնշյալ հեղինակների աշխատությունները:

Սակայն ուշադիր ուսումնասիրելով մատենադարանի ձեռագրերը, վավերագրերը, հայ պատմիչների՝ Մ.Խորենացու, Եղիշեի, Ագաթանգեղոսի, Մ.Կաղանկատվացու, Վարդան, Վարդապետի և ուրիշների ու մեր ժամանակի անվանի պատմաբանների՝ Աբ.Մովսիսյանի, Ար.Շավարշյանի, Մ.Սանթրոսյանի, Ց.Սիմոնյանի և շատ այլոց աշխատությունները, հին և նոր գրականագիտական աղբյուրները, հատկապես արխիվային հարուստ նյութերն ու պարբերական մամուլը (1858-1920թթ.),

նկատել ենք, որ հետազոտողների կողմից դեռևս ըստ պատմաշրջանների պատմաքննական և մանկավարժական վերլուծության չեն ենթարկվել Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմության հետ կապված հետևյալ հարցերը.

I. V-XVIII դարերում.

1. Արցախի կրթական համակարգի սկզբնավորման ու զարգացման նախապայմանները,
2. կրթական գործի կառավարման համակարգը, դպրոցական կանոններ, հրահանգները, ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգն ու պայմանները,
3. հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեությունը,
4. Վաչագան Բարեպաշտի լուսավորչական գործունեությունը,
5. դպրոցի և մանկավարժության ասպարեզի գործիչների գործունեությունը,
6. կին մանկավարժների լուսավչորական գործունեությունը և այլն:

Մեր հետազոտությունները հավաստի հաստատել են նաև այն փաստը, որ XIX դարի Արցախի կրթական համակարգի պատմությունն ուսումնասիրելիս հետազոտողների տեսադաշտից դուրս են մնացել ներքոբերյալ հարցերը.

1. XIX դարի առաջին կեսին Արցախի կրթական նոր համակարգի ձևավորման ու զարգացման նախապայմանները,
2. Արցախի թեմի լուսավորիչ մանկավարժների և հոգևոր-մշակութային գործիչներիի լուսավորչական գործունեությունը,
3. դպրոցի ներքին կարգ ու կանոնը,
4. հայ եկեղեցին և դպրոցը,
5. XIX դարի 2-րդ կեսի դպրոցի նոր վերելքի նախապայմանները, դպրոցական կանոնադրությունները և դրանց նշանակությունը,
6. դպրոցական համակարգը և նրա նյութական բազան,
7. լուսավորչական շարժումը և կրթական գործի առաջադրած խնդիրները,
8. Արցախի կրթական համակարգի բարեփոխումների և լուսավորության հարցերը Շուշիի պարբերական մամուլի էջերում (1874-1920թթ.),
9. Շուշիի թեմական դպրոցի լուսավորչական գործունեությունը,
10. Շուշիի թեմական դպրոցի սաները և նրանց գործունեությունը,
11. ուսուցիչը, նրա ընտրությունը, նշանակման կարգն ու պայմանները, պատրաստման հիմնախնդիրը 1850-1920թթ., ինչպես նաև դպրոցի մանկավարժության, հոգևոր-մշակութային գործիչների, կին մանկավարժերի լուսավորչական գործունեությունը Արցախի թեմի դպրոցներում և այլ բազմաբնույթ հարցեր ***(տես՝ աշխատության բովանդակության ցանկը):***

Առ այսօր ուսումնասիրված չէ Արցախի կրթական համակարգի պատմությունը 1900-1923թթ., ինչպես նաև խորհրդային շրջանի Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգի ձևավորման ու զարգացման փուլերը, կրթական գործի կազմակերպիչների գործունեությունը 1923-1988թթ.:

Հարկ է նշել, որ ուսումնասիրված չեն նաև նորաստեղծ Արցախի Հանրապետության հանրակրթական ոլորտում իրականացվող բարեփոխումները, կրթական համակարգի ձևավորման ու զարգացման նախապայմանները, կրթական համակարգի բարեփոխումների առավելությունները, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվող բարեփոխումները, մանկավարժական կադրերի պատրաստման հիմնախնդիրները, մանկավարժական գիտական միտքն Արցախում, ԼՂՀ ժողովրդական ուսուցիչների և վաստակավոր մանկավարժների գործունեությունը, ուսումնագիտական աստիճանաշնորհումը ԼՂՀ պետական և ոչ պետական բուհերում, Արցախի գոյա-

մարտին մասնակից ուսուցիչների և նրանց սաների գործունեությունը 1992-2012թթ. և այլ հարցեր:

Ուշագրավ է նշել այն փաստը, որ վերջին տարիներին նկատելիորեն մեծացել է հետաքրքրությունը նոր շրջանի արցախահայ դպրոցի պատմության նկատմամբ: Արցախի բարձրագույն դպրոցի գիտակրթական համակարգի պատմությանն է նվիրված մանկ. գիտ. դոկ. Ա.Ավանեսյանի («Արցախի գիտակրթական համակարգ, կայացման ընթացք, զարգացման միտումներ», «Արցախի բուհական համակարգը և գիտակրթական ներուժը» և այլն) աշխատություններն ու բազմաթիվ հոդվածներ:

Հեղինակներն ըստ արժանվույն գնահատել են մեղվաջան բնույթ կրող բանասերների, պատմաբանների, մանկավարժների այն աշխատանքը, որ նրանք կատարել են արցախահայ դպրոցի ու մանկավարժության պատմության առանձին փաստեր հայտնաբերելու և պարզաբանելու ուղղությամբ:

Ուսումնասիրության թեման ինքնին խիստ ծավալուն է: Դա ստիպել է մեզ ավելի հանգամանալի ուսումնասիրել թեմայի հետ առնչություն ունեցող պատմագիտական և մասնագիտական գրականությունը, արխիվային բազմաթիվ փաստաթղթեր, անցյալի և մեր ժամանակի պարբերական մամուլը, նշանավոր գործիչների արխիվային նյութերը: Շարադրանքի համար հիմնական նյութ են ծառայել արխիվային այն հարուստ փաստաթղթերը, որոնք հայտնաբերվել են ԼՂՀ վաստակաշատ մանկավարժների, հանրակրթական դպրոցների, միջնակարգ մասնագիտական հաստատությունների արխիվներում: Օգտագործվել են նաև ՀՀ ԿԳՆ և ԼՂՀ ԿԳՆ արխիվներում պահպանվող նյութերը, ինչպես նաև ԼՂՀ հանրակրթական դպրոցների շրջանավարտներից ստացված նամակներում զետեղված հարուստ փաստագրական տվյալները մեզ հետաքրքրող հարցերի մասին:

Աշխատությունը գրվել է գերազանցապես արխիվային նյութերի, վավերագրերի, պարբերական մամուլում լույս տեսած հոդվածների հիման վրա, որոնց հիմնական մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Աշխատության <u>առաջին հատորում</u> շարադրվում է Արցախի կրթական համակարգը՝ V դարից մինչև XX դարի առաջին երկու տասնամյակը (1900-1920թթ.):

<u>Երկրորդ հատորը</u> բովանդակում է խորհրդային շրջանի Լեռնային Ղարաբաղի հայ կրթական համակարգը 1920-1988թթ.:

Աշխատության <u>երրորդ</u> հատորում ներկայացվում է Արցախի կրթական համակարգը 1988-2013թթ.:

Անշուշտ, աշխատության մեջ կլինեն նաև թերություններ, երբեմն իրար հակասող փաստեր (քանզի փաստագրական շատ տվյալներ գրի են առնվել հանրակրթական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների հուշերից՝ արխիվային տվյալներ չլինելու պատճառով), վրիպած կլինեն թվականներ և այլն:

Հարգարժան ընթերցողը թող ների տեղ գտած նման թերությունների համար, քանզի մեր նպատակն է եղել նորովի ուսումնասիրություններ կատարել և ստեղծել Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմությունը: Դրանով իսկ հեղինակները հասած կլինեն իրենց համեստ նպատակին, իսկ աշխատության վերաբերյալ ցանկացած դիտողություն նրանց կողմից կընդունվի սիրով և շնորհակալությամբ:

Հեղինակները խորին շնորհակալություն են հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց խորհուրդներով և մասնակցությամբ նպաստել են աշխատության ստեղծմանը:

Հեղինակներ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ V-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ: ԿՐԹԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Համառոտ ակնարկ Արցախի կրթական համակարգի սկզբնավորման ու զարգացման պատմաշրջանների մասին (V-XVIII դարեր)

Կրթությունը Հայաստանում և նրա արևելյան հատվածում՝ պատմական Արցախում, հազարամյակների պատմություն ունի և բոլոր ժամանակներում դիտվել է որպես ազգային ինքնության դրսևորման և գոյապահպանման կարևորագույն գործոն: Կրթությունը և գիտությունը առանձնահատուկ դեր ունեն մեր ժողովրդի կյանքում: Պատմականորեն հաստատված է, որ մեր ժողովրդի զարգացման հիմնական միտումը դարեր ի վեր եղել է կրթագիտական ուղղվածությունը: Եվ դա առաջին հերթին նպաստել է մեր ժողովրդի, նրա լեզվի, մշակույթի պահպանությանը:

Հայտնի է, որ մինչև հայ գրերի ստեղծումը, Հայաստանում, նրա անբաժան մաս կազմող Արցախում գործում էին հունական և ասորական տիպի հայկական դպրոցներ: Օտարալեզու դպրոցներում անցնում էին այլազան առարկաներ, նաև՝ օտար լեզուներ (հունարեն ու ասորերեն, հետագայում, IV դարի վերջից սկսած՝ պարսկերեն), գրագրությունները վարում էին թե հունարեն ու ասորերեն և թե պարսկերեն լեզուներով:

Հայ դպրոցի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում[1] հիշատակվում է, որ նախամաշտոցյան շրջանում պետական-աշխարհիկ հայկական (ոչ հայալեզու) դպրոցներում հայոց լեզվի ուսուցումը տարվել է հայոց (մայրենի) լեզվով, մի շարք առարկաներ դասավանդվել են թարգմանաբար՝ հայերեն թարգմանությամբ: Այլ կերպ՝ հայոց դպրոցներում դասավանդումը շատ հաճախ վարել են հունարեն (երբեմն՝ ասորերեն) տառերով, սակայն օտարալեզու դպրոցի ուսուցման ու կրթության բովանդակությունը եղել է զուտ հայկական:

Պրոֆեսոր Ցոլակ Սիմոնյանը «Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության» աշխատության մեջ հավաստում է, որ մեհենական դպրոցներում (մինչև քրիստոնեության ընդունումը) դասավանդումը տարվել է հայոց լեզվով ու գրերով, ընդ որում և՛ ձևով, և՛ բովանդակությամբ լինելով զուտ հայկական[2]: Մանկավարժության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Մախչանյանը «Հայ գրականության ուսուցման պատմություն, (V-XX դարեր)» աշխատության մեջ փաստարկում է, որ նախամաշտոցյան շրջանում հայերն ունեցել են իրենց սեփական գիրը և որ մեհենական գրականությունը, ի տարբերություն պետական աշխարհիկ գրականության, ստեղծվել ու զարգացել է այդ գրով (մեհենական գրականությունը, թարգմանությունները, վարազի վզի գիրը, հայոց տառերի գոյությունը, բարձր զարգացած մշակույթը, գրականություն, գիտություն, արվեստ և այլն[3]):

1. Աբ.Մովսիսյան, Կրթությունը Հին Հայաստանում, Երևան, 1947, էջ 2-3, նաև տե՛ս Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (5-15-րդ դարեր), Երևան, 1958, էջ 30-38, Ց.Սիմոնյան, Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 14-18:
2. Ց.Սիմոնյան, Ակնարկներ հայ դպրոցի մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 16:
3. Հ. Մախչանյան, Հայ գրականության ուսուցման պատմություն, Երևան, 1979, էջ 6-7:

Պրոֆեսորը միաժամանակ մատնանշում է, որ մեհենական դպրոցներում ժամանակի պահանջները բավարարող տարբեր առարկաների հետ մեկտեղ ուսուցանում էին նաև հայոց հին գրական լեզուն՝ գրաբարը, որն այն ժամանակ բավական զարգացած էր և հետագայում պահպանվել է միայն գրականության մեջ:

Անվանի գրող ու գրականագետ Վրթանես Փափազյանը «Պատմություն հայոց գրականության» աշխատության մեջ իրավացիորեն մատնանշում է, որ գրաբարը ոչ թե V դարում հնարվեց կամ մշակվեց (ինչպես կարծում են շատերը), այլ V դարից շատ դարեր առաջ մշակվեց ու անընդհատ մշակվող մի լեզու էր, որով Մեսրոպն ու Սահակը գրեցին: Նա, անշուշտ, հայ ժողովրդի գոնե մի մասի, մի գլխավոր և մեծ մասի խոսակցական լեզու էր, որ հեթանոսական օրերից ի վեր, Քրիստոսից գուցե շատ դարեր առաջ զարգացել, ճոխացել էր շնորհիվ ծաղկած գրականության»:[4]

Պատմագիտական հավաստի աղբյուրներն[5] անհերքելիորեն վկայում են, որ Արցախ աշխարհում ևս, որը Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից մեկն էր և ընդգրկված հայկական լեռնաշխարհի ընդհանուր քաղաքական ու մշակութային կյանքում, կրթությունն ու մշակույթը սկզբնավորվել են մեր դարաշրջանից առաջ ասորական և հունական, հետագայում, IV դարի վերջից սկսած՝ պարսկական զարգացած մշակույթների ազդեցությամբ, ինչը մեծ չափով երևան է գալիս մեր թվարկության առաջին դարերում, մասնավորապես՝ IV դարում:

Այսպիսով, հայ գրերի գյուտից առաջ՝ մինչև Հայաստանի առաջին բաժանումը (387թ), ինչպես Մեծ Հայքի նահանգներում, այնպես էլ նրա Արևելյան կողմանց ամենախոշոր նահանգում՝ պատմական Արցախում, դպրության գործը կազմակերպվում էր հունական և ասորական լեզուներով: Ականավոր պատմիչ Ագաթանգեղոսի վկայությամբ՝ պետք է ենթադրել, որ հայոց լեզվով դպրոցների հիմնադրումը սկսվել է դեռևս IV դարից:[6] Մինչ այդ պատմական պահը, բարձր խավի երեխաներն իրենց կրթությունը ստանում էին մասնավոր դպրոցներում՝ տնային դաստիարակության միջոցով, կամ մեհենական դպրոցներում, որտեղ քուրմ դաստիարակները ոչ միայն լեզուներ և որոշ գիտություններ էին ուսուցանում, այլև երեխաներին տալիս էին ռազմաֆիզիկական դաստիարակություն: Այդ մասին Աբ. Մովսիսյանը «Կրթությունը հին Հայաստանում» աշխատության մեջ հիշատակում է, որ Արտաշեսյան և Արշակունյաց հարստությունների ժամանակաշրջանում (IX դարից մ.թ.ա. մինչև IV դարի վերջը մ.թ.), թե՛ պետական-աշխարհիկ և թե՛ մեհենական-հոգևոր հանրակրթական դպրոցներից բացի գործել են նաև մատաղ սերնդի ռազմաֆիզիկական դաստիարակության, պետական-աշխարհիկ (երբեմն էլ մասնավոր) ուսումնական այլատիպ հատուկ հաստատություններ, որոնցում ուսման բովանդակությունը ներառում էր ֆիզիկական վարժություններ, զինավարժություններ, ռազմախաղեր, ռազմարշավներ և նպատակ ուներ ֆիզիկապես կոփել պատանիներին ու նրանցից պատրաստել մարտիկ զինվորներ:[7] Աթենական դաստիարակության այդ ձևը (հին Հունաստանում գործել է հատուկ դաստիարակչական հիմնարկ՝ էֆեբիա-դպրոց, որտեղ մեծ ուշադրություն էր դարձվում երեխաների ռազմաֆիզիկական դաստիարակությանը) կիրառվել է նաև հին Հայաստա-

4. Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 67-68:
5. Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ, Գ.Տեր Մկրտչեան եւ Ստ.Կանայեանց, Տփխիս, 1909, էջ 417, Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն (հնագույն շրջանից մինչև մեր օրերը), Երևան, 1994, էջ 23, նաև տես՝ Զարհանալյան, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1886, էջ 19:
6. Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 437:
7. Ա.Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 8-10:

նում՝ նրա արևելյան տարածքներում՝ Սյունիքում, Արցախում, Փայտակարանում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստարկումները հաստատում են այն իրողությունը, որ IV դարից սկսած հայկական կրթության գործի ուսումնասիրությունն ունի փաստացի պատմություն՝ հայ մատենագրական վկայություններն ու տվյալները: Համաձայն այս վկայությունների, IV դարում Հայաստանում և նրա արևելյան հատվածում՝ Արցախում, գոյություն ունեցած դպրոցները եղել են երկու կարգի՝ հունական և ասորական, իսկ բաժանումից հետո որոշ տեղեր գործել են նաև պարսկական տիպի դպրոցներ: Հայ գրերի գյուտից առաջ, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո, Հայաստանում, նրա արևելյան նահանգներում, նաև՝ Արցախում, ընդունված էր գրելու և կարդալու համար գործածել հունական և ասորական գրեր, իսկ որոշ ժամանակ հետո՝ նաև պարսկական գրեր: Հարկ է նշել, որ ասորական, իսկ որոշ տեղերում պարսկական գրերի գործածությունը կապված էր քաղաքական այն ակտի հետ, որ տեղի ունեցավ 387 թվականին, այսինքն՝ երբ Հայաստանը բաժանվեց երկու մեծ պետությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Այս ակտից հետո հունական բաժնի Հայաստանում գրագրությունը, ուսուցումը դպրոցներում ամենուրեք տարվում էին հունական գրերով, իսկ պարսկական ենթակայության Հայաստանում, նրա արևելյան մասում, ինչպես նաև պատմական Արցախում երկու լեզուներով՝ պարսկերեն և ասորերեն:

Հր. Աճառյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ գրում է. «Հունական և թե պարսկական մասի Հայաստանում հայ աշխատավոր ժողովուրդը խոսել ու ստեղծագործել է իր մայրենի լեզվով՝ հայերենով»:[8] Նա նշում է, որ հունական և պարսկական մասերի Հայաստանի այս դպրոցները ճիշտ կլինի անվանել հունատառ և ասորատառ դպրոցներ, որովհետև այստեղ խոսքը միայն գրի մասին է և ոչ այն լեզվի, որով դպրոցներում ավանդվել է գիտություն: Հայ մեծ լեզվաբանը միաժամանակ մատնանշում է, որ անհնարին է պատկերացնել, որ ուսուցման գործընթացն ամբողջովին իրականացվել է ասորերեն կամ հունարեն լեզուներով, ասենք, օրինակ, երգը, մարզանքը, հաշվելը և այլն սովորեցրել են հունարեն կամ ասորերեն:[9] Քանի որ վանական դպրոցների նպատակն է եղել պատրաստել ուսուցիչներ, որոնք կարողանային Սուրբ գիրքը (Աստվածաշունչը) կարդալ և ժողովրդի համար թարգմանել հայերեն, ապա այդ դպրոցներում պետք է տիրապետող լիներ հայերենը և ոչ թե պարսկերենը կամ հունարենը: Հետևաբար, ասորական կամ հունական գերակա ազդեցությունը հայկական կրթական գործի և, ընդհանրապես, հայկական մշակույթի զարգացման բնագավառում պետք է վերապահումներով ընդունել:

Ճգնաժամային այս ծանր կացությունից դուրս գալու փրկարար ելք հանդիսացավ հայ գրերի գյուտը, որն անխզելիորեն իրար կապեց մեր ժողովրդի անցյալն ու ապագան, պատմության քառուղիներում անդավաճանորեն հանդիսանալով այն ամուր հենարանը, որին ապավինեց ազգային մեծ երազանքը՝ ունենալ սեփական գիր, գրականություն և, ինչու չէ, նաև պետականություն: Մեսրոպյան գիրը դարձավ ազգային միասնության հենքը՝ ամեն մի սերնդի մեջ պահպանելով հայ լինելու հպարտությունը:

Հայ գրերի գյուտից անմիջապես հետո Հայաստանի բազմաթիվ գավառներում ու գյուղերում ստեղծվեցին հայագիր դպրոցներ:

---

8. Հր.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1 մաս, Երևան, 1940, էջ 335-336:
9. Նույն տեղում:

Պատմական աղբյուրները[10] վկայում են, որ հայկական գրերն ստեղծելուց և առաջին հայեցի կրթություն տվող դպրոցը հիմնելուց (Վաղարշապատում, 405թ.) հետո, V դարի սկզբին լուսավորչական նպատակներով Հայոց Արևելից կողմանք եկավ Մեսրոպ Մաշտոցը՝ իր մի խումբ աշակերտներով: Հաստատվելով Ուտյաց աշխարհի բնակավայրեր մերձակա Ճախճավսուտ և Գիտ Լուսաբույր վայրերում, Մաշտոցն ամենուրեք քրիստոնեական վարդապետությունը քարոզում էր հայերենով, արդեն գործող դպրոցներում, մասնավորապես, Ամարասի եպիսկոպոսական դպրատանը մտցնում է հայերեն ուսուցում, հիմնում մի շարք հայկական դպրոցներ, զարկ տալիս երկրամասի մշակութային վերելքին: Աբ. Մովսիսյանն իրավացիորեն նշում է, որ V դարի սկզբներին Հայաստանում, պատմական Արցախում հաստատված հայագիր առաջին դպրոցներում դասավանդվում էին մայրենի լեզու, թվաբանություն (համարողություն), պատմություն, աշխարհագրական-բնագիտական տարրական գիտելիքներ, կրոնական առարկաներ, հունարեն, ասորերեն:[11]

Մատենագիր Մովսես Կաղանկատվացու վկայությամբ Մեսրոպ Մաշտոցը Արևելյան Հայաստանի նահանգներում, մասնավորապես, Արցախ աշխարհում բացում է ոչ միայն տարրական, այլև հոգևոր բարձրագույն կրթություն տվող դպրոցներ՝ Հաշու գյուղավանում (Աղվանքի եպիսկոպոսանիստ բնակավայրերից մեկի՝ Պարտավի մոտ):[12] Կորյունը «Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի» աշխատության մեջ փաստում է, որ գործող դպրոցներն ըստ պատկանելության եղել են պետական, եկեղեցական, մասնավոր և տնային:[13] Ղազար Փարպեցին «Պատմություն Հայոց» աշխատության մեջ գրում է, որ 5-րդ դարասկզբից Հայաստանում, նրա արևելյան նահանգներում՝ Սյունիքում, Արցախում, Փայտակարանում, ամենուր բացվում էին հայագիր դպրոցներ: Փարպեցին դրանք անվանում էր «Դպրոցք հոտին ուսմանց», այսինքն՝ ժողովրդին ուսուցանող դպրոցներ:[14]

Այստեղ խոսքը ժողովրդական դպրոցի, լայն իմաստով ժողովրդական կրթության մասին չէ, այլ ժողովրդական տարբեր խավերի մանուկներին ընդգրկող տարրական, աշխարհիկ բնույթի դպրոցի մասին, որ նախորդ դպրոցների (նկատի ունենք մինչև V դարը գործող դպրոցները՝ հունական, ասորական, պարսկական) համեմատությամբ ավելի զանգվածային էր:

Երախտաշատ մանկավարժ գիտնական Աբ.Մովսիսյանը հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմությանը նվիրված իր արժեքավոր աշխատության («Ակնարկ հայ դպրոցի և մանկավարժության պատմության 10-15-րդ դդ.») առաջին բաժնում գրում է. «5-րդ դարասկզբին Հայաստանում, Արցախում գործող դպրոցներն (տարրական, եկեղեցական, հոգևոր) ստեղծվեցին պետական հրամանով: Իշխանության մարմիններն ու հասարակությունը եռանդուն կերպով ձեռնամուխ եղան դպրոցի կազմակերպման ու զարգացման գործին, քանի որ այդ ձեռնարկումը մի անբաժանելի մասն էր այն մեծ գործի, որի նպատակն էր իրա-

10. Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 26,27,70, Ց.Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 22, Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1908, էջ 32:
11. Աբ. Մովսիսյան, նշվ.աշխ., էջ 40-41:
12. Մ. Կաղանկատվացի, նշվ.աշխ., էջ 65-66:
13. Կորյուն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913, էջ 7, նաև, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 7:
14. Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1908, էջ 32:

կանացնել հայ ժողովրդի տենչանքը, ձեռք բերել ազատություն ու անկախություն: Ժողովուրդը ցնծությամբ ընդունեց հատկապես այն լուրը, որ պետությունը ձեռնարկել է նաև հասարակական դպրոցների բացումը. այդ ձեռնարկումը ժողովրդի դարավոր իղձերից մեկի իրականացումն էր, որի համար նա պետք է տրամադրեր իր բոլոր միջոցներն ու կարողությունները:»[15]

Վերոնշյալ և այլ աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ V դարի սկզբներին Արևելյան Հայաստանում և պատմական Արցախում բացված հայագիր դպրոցները հայ ժողովրդի պատմության մեջ հայոց առաջին հասարակական, ժողովրդական բնույթի դպրոցներն էին, որոնց մասին հոգ էր տանում պետությունը: Նրանց հատկացնում էին տներ (որոնք կոչվում էին դաստիարակչական հիմնարկներ), նշանակում «գիտուն և հավատարիմ» դպրապետեր, ուսուցիչներ և սրանց աշխատավարձ էր տրվում պետական գանձարանից: Հարկ է նշել, որ Հայաստանում, Արցախում հասարակական-ժողովրդական դպրոցների համեմատաբար զանգվածային բնույթը, ինչպես բնութագրեցինք, պետք է համարել Բյուզանդիայի ու Պարսկաստանի ծանր լծից ազատագրելու համար հայ ժողովրդի ձեռնարկումներից մեկը: Այդ է պատճառը, որ հայ մշակույթի ականավոր գործիչների, պետական իշխանավորների կողմից հորդորվում էր նմանատիպ դպրոցներ ստեղծելու և այդ դպրոցներում ավելի շատ հայ մանուկներ ընդգրկելու գործը:

Բնութագրող ժամանակաշրջանում Հայաստանում, Արցախում հասարակական այդ դպրոցների կողքին կային նաև հատուկ հոգևոր տիպի դպրոցներ, որոնք գործում էին Դադի, Ամարասի, Սուրբ Հակոբի, Գտչա խոշոր եկեղեցիներին ու վանքերին կից: Դրանք սպասարկում էին եկեղեցիների, վանքերի կարիքները, պատրաստում հոգևորականներ: Այդ տիպի դպրոցները, ի տարբերություն գրագիտական (տարրական) դպրոցների, ավելի բարձր են: Այստեղ բացի գրագիտությունից, թվաբանությունից ու երաժշտությունից անցնում էին նաև փիլիսոփայություն և կրոնական առարկաներ:

Ժամանակի հայ պատմիչները՝ Փավստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին և Կորյունը, հավաստում են, որ սկսած 4-րդ դարից Հայաստանում, Արցախում եղել են եկեղեցական վանական դպրոցներ: Իսկ Մեսրոպ Մաշտոցը, ինչպես վկայում են Կորյունը, Կաղանկատվացին, V դարի սկզբին ստեղծեց նաև առաջին բարձր տիպի վանական դպրոցը Վաղարշապատում, Ամարասում, ուր պատրաստվում էին հոգևոր գործիչներ, ուսուցիչներ, թարգմանիչներ: Պետք է նշել, որ ոչ հասարակական և ոչ էլ հոգևոր-վանական դպրոցները չէին կարող բավարարել այն պահանջները, որ կային V դարում պետական, հասարակական, եկեղեցական և մշակույթի բազմաթիվ բնագավառների գործիչներ պատրաստելու խնդրում:

Արշակունյաց թագավորության փլուզումից հետո կործանվեց հայոց պետականությունը, ինչպես նաև քայքայվեցին հասարակական դպրոցները, որովհետև Հայաստան և Արցախ ներխուժողներն ամեն կերպ ձգտում էին ուսուցանել իրենց ուսմունքը, կրոնն ու լեզուն և այդ նպատակի համար հաստատում էին իրենց դպրոցները: Հետևաբար, քաղաքական իրադարձությունների հետ կապված, քայքայվեցին Արցախում գործող հասարակական բնույթի դպրոցները, նրանց մի մա-

15. Աբ. Մովսիսյան, նշվ.աշխ., էջ 30-31, նաև նույն հեղինակի՝ Հայագիր դպրոցի ծագումը, Երևանի պետ.համ. «Գիտ. աշխատ.», հ.13, 1940, էջ 146:

սը քաշվեց, հաստատվեց ժողովրդից հեռու, անապատների, մենաստանների և վանքերի նեղ ու անձուկ պարիսպների հետևում, եկեղեցական գավիթների ու խուցերի մեջ, իսկ մյուս՝ ավելի ժողովրդական բնույթ կրող մասը, աշխատավոր խավերին անմիջապես սպասարկելու նպատակով ծվարեց ժողովրդի մեջ, նրա տներում ու ծխապատկան եկեղեցական շենքերում, որոնք պահվում էին հասարակական միջոցներով:

Ինչպես նշում է Աբ.Մովսիսյանը, այս դպրոցների մեջ պահպանվեց ու զարգացավ ժողովրդական կրթության ոգին և ժողովրդական բուն տարրը, չնայած դրանք փոքր ու մանրացած դպրոցներ էին և իրենց բովանդակությամբ խիստ աղքատիկ:[16]

Դարեր շարունակ Արցախի ժողովուրդն իր դպրոցը պահել է վանքերում, այնպես որ այդ տեղերով չեն բնորոշվում դպրոցների իսկական բովանդակությունը, նրանց կոչումները, այդ տեղերում եղած դպրոցների մի զգալի մասը հասարակական դպրոցներ էին:

Պարզ է, որ տներում և վանքերում համեմատաբար ավելի հեշտ էր դպրոցներ պահելը, քան հասարակական հաստատություններում: Նվաճողները եթե առհասարակ ոչնչացնում էին դպրոցները, այդ թվում և եկեղեցական ու վանական դպրոցները, ապա երբեմն էլ, քաղաքական նկատառումներով, ժողովրդին շահելով, ներքին խռովությունները մեղմելու նպատակով որոշ խոշոր վանքերին ու եկեղեցիներին, այնտեղ եղած դպրոցներին առժամանակ չէին դիպչում: Ճիշտ է, շատ հազվագյուտ, բայց հայոց պատմության մեջ եղել են այդպիսի դեպքեր, իսկ հասարակական դպրոցները նրանք ոչնչացնում էին անողոք կերպով, ամենուրեք, բոլոր դեպքերում: Արշակ Ալբոյաճյանը «Պատմություն հայ դպրոցի» աշխատության մեջ իրավացիորեն նշում է, որ հասարակական, եկեղեցական, ծխական, վանական դպրոցներում ուսման բովանդակությունը, ծրագիրը հիմնականում որոշվում էին դասատուական կազմով, այս վերջիններիս գիտելիքներով: Այդ դպրոցներում անցնում էին հիմնականում գրագիտություն, աշխարհագրություն, աստղաբաշխություն, թվաբանություն, բնագիտություն, երկրաչափություն, երաժշտություն, նկարչություն, կրոն և այլն:[17]

Արևելյան Հայաստանի, ինչպես նաև Արցախի գավառներում, ժողովուրդն առավել մեծ ուշադրություն էր դարձնում և ինչ որ չափով նյութապես ապահովում տնային և մասնավոր դպրոցները, առավել հոգ էր տանում եկեղեցական և վանական դպրոցների մասին, քանի որ այլ դպրոցներ չլինելու պատճառով այստեղ իրենց ուսումը շարունակում էին աշխարհիկ դասի երեխաները: Հայտնի է, որ հայոց աշխարհում դարեր շարունակ եկեղեցական-վանական դպրոցներն իրենց վրա են վերցրել պետական, հասարակական դպրոցների դերը: Ճիշտ է, սրանք չեն կարողացել մասամբ ընդունել հատկապես աշխատավորական խավերի երեխաներին, բայց գյուղական, տնային և մասնավոր դպրոցների աշակերտների մի մասը հնարավորություն է ունեցել իր կրթությունը շարունակել վանական և եկեղեցական դպրոցներում: Անհերքելի ճշմարտություն է, որ հայագիր դպրոցի մեջ մեր ժողովուրդը տեսել է իր ազգային անաղարտությունը և դրա միջոցով պահել, պահպանել ու զարգացրել իր լեզուն, գիրն ու գրականությունը, ողջ մշակույթը:

Պատմական Արցախում լուսավորչական, մշակութային, դպրոցական կյանքն

16. Աբ. Մովսիսյան, նշվ.աշխ., էջ 330: Նաև տե՛ս Ար. Ալպոյաջյան, Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946, էջ 26-38:
17. Նույն տեղում:

աշխույժ վերելք է ունենում Արցախ-Ուտիքյան աշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտի ժամանակաշրջանում (485-510թթ.)՝ V դարի վերջին: Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագանի օրոք դպրոցական ցանցն ավելի է ընդլայնվում: Աղվենի ժողովում ընդունված օրենքներից մեկում վկայված է, որ երկրամասի եկեղեցիները հանդիսացել են նաև դպրոցներ, իսկ երեցներն ունեցել են աշակերտներ:[18] Աղվենի ժողովի 16-րդ կանոնը սահմանում էր երեցի և աշակերտների փոխհարաբերությունները, ինչպես նաև հիշյալ կողմերից որևէ մեկի թույլ տված օրինազանցության դեպքում պատժի տեսակներն ու խստությունը: Բացի եկեղեցիներին կից դպրոցներից, հիմնվել են նաև գյուղական դպրոցներ, որոնց ծախսերը հոգում էին գյուղական համայնքները: Ինչպես հավաստում է մատենագիրը՝ Մ.Կաղանկատվացին, Վաչագան Բարեպաշտ թագավորը մեծապես հետաքրքրվում էր ուսումնական գործով՝ հաճախակի այցելելով դպրոցներ և ունկնդրելով աշակերտներին: ***(Վաչագան Բարեպաշտի լուսավորչական գործունեությունն ավելի մանրամասն կներկայացվի առանձին բաժնում):***

Չնայած իրար հաջորդող օտարերկրյա զավթիչների հաճախակի ավերիչ արշավանքներին, Հայոց Արևելից կողմանքը՝ Արցախը և լեռնային Ուտիքը, շնորհիվ իրենց անառիկ դիրքի, Սյունիքի պես եղել են Հայաստանում հայ դպրոցական կյանքի պահպանման ու զարգացման առավել ապահով վայրերից: Անգամ Ամարասը, որն իր տեղադրությամբ և աշխարհագրական դիրքով համեմատաբար մատչելի է թշնամուն, եղել է ոչ միայն Արցախի հոգևոր (եպիսկոպոսանիստ), այլև մշակութային ու տնտեսական կարևոր կենտրոն, որտեղ հմուտ վարդապետները կրթում էին ուսումնատենչ պատանիներին, ստեղծում աշխատություններ, արտագրում անցյալի մտքի մեծարժեք գործեր: Այստեղ անընդմեջ գործում էր դպրոցը, ստեղծվում էին ձեռագրեր, որոնցից շատերը հասել են մեզ:[19]

Լեոն «Հայոց պատմություն» աշխատության մեջ գրում է, որ V դարում հայոց Արցախյան հատվածը, ունենալով սեփական դպրոց, գիր ու գրականություն, թևակոխում է ինքնուրույն, մայրենի լեզվով մշակույթ զարգացնելու շրջան: Այդ մշակույթը հայկական պետականության ձեռքում որպես զենք ծառայեց պայքարելու բյուզանդական ու պարսկական աշխարհակալների հափշտակիչ քաղաքականության դեմ՝ Արցախի քաղաքական ու մշակութային անկախությունն ապահովելու համար: Այդ մշակույթը խթանելու և հետագայում զարգացնելու կարևոր ազդակներից հանդիսացան նաև հայագիր դպրոցները, որոնք ունեին հայերեն գրաճանաչությունն Արցախում տարածելու ընդհանուր նպատակադրում:[20]

Պատմագիտական աղբյուրների տվյալների համաձայն՝ V-VI դարերում հոգևոր եկեղեցական դպրատներն ու դպրոցները, որոնց մի մասը ժամանակի ընթացքում վերածվեց բարձր տիպի դպրոցների Արևելյան Հայաստանում և Արցախում, գործում էին նաև որպես հասարակական և մասնավոր դպրոցներ: Այդ մասին Աբ. Մովսիսյանն իրավացիորեն նշում է, որ Արցախի կողմերում գործող հասարակական դպրոցներն (վերստին բացվել են V դարի վերջերին) իրենց վրա կրում էին Արևելյան Հայաստանի դպրոցների կնիքը, ավանդաբար պահպանում էին նրանց խոր ազդեցությունները, որոնք գլխավորապես արտահայտվում էին

18. Մ. Կաղանկատվացի, նշվ.աշխ., էջ 26-27:
19. Շահեն Մկրտչյան, Ամարասի վանական համալիրը, Կրթությունը Արցախում 405-2005, Եր., 2005, էջ 6-14:
20. Լեո, Հայոց պատմություն, հ.2, Եր., 1947, էջ 156:

ուսման ծրագրերի, ուսման բովանդակության, դասավանդման ձևերի ու մեթոդների մեջ:[21]

Կրթական գործը VI դարում՝ օտար զավթիչների տիրապետության շրջանում, Հայաստանում և Արցախում ծանր հարված կրեց: Բ.Ուլուբաբյանն «Արցախի պատմությունը» աշխատության մեջ գրում է, որ VI դարը ոչ միայն Արցախ աշխարհի, այլև ամբողջ Հայաստանի և հայ ժողովրդի կենսագրության ամենամշուշոտ շրջաններից մեկն է, չկան այս դարում ստեղծված ժամանակագրական ծավալուն երկեր, որոնք պատմեին ժողովրդի գլխով անցածը, և, հիմնականում միայն հետագայի հեղինակներն են, որ ավանդությամբ իրենց հասած պատմություններն են հիշում և այն էլ հիմնականում հայ եկեղեցու իրողությունների վերաբերյալ:[22]

«Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում» աշխատության մեջ Բ.Ուլուբաբյանը հավաստում է, որ VII դարասկզբին, չնայած ճգնաժամային իրավիճակին (արաբական տիրապետության շրջանում) Արցախում հոգևոր-մշակութային կյանքի վերափոխումների ոլորտում շարունակվում էին Իշխան Ջիվանշիրի (642-683թթ. տերն էր Գարդմանքի և միաժամանակ համարվում էր հայոց Աղվանքի Իշխանաց Իշխանն ու սպարապետը) լուսավորչական ձեռնարկումները. նա հովանավորում էր երկրամասի հայկական դպրությունն ու մշակույթը և իր եկեղեցանպաստ գործունեությամբ դառնում Արցախ-Ուտիքային աշխարհի սիրելին:[23]

Երկրամասի ներքին կյանքում Ջիվանշիրն անշեղորեն հետևում էր Վաչագան Բարեպաշտի օրինակին, ամրապնդում տնտեսական ու իրավական կարգը, Արցախի վանքերին ու եկեղեցիներին կից բացում դպրոցներ, որտեղ սովորում էին բազմաթիվ հայ պատանիներ: Այս դպրոցները հիմնականում պատրաստում էին եկեղեցական գործիչներ, որոնք միաժամանակ ուսուցիչներ էին: Անդրադառնալով այդ շրջանի հայագիր դպրոցների ներքին կյանքին ու կրթության բովանդակությանը, Մանուկ Աբեղյանը գրում է, որ «Եկեղեցական, վանական դպրոցները հանդիսանում են գրականության ակունքները», գիտությունն այդ դպրոցներում ավանդվում էր հայոց լեզվով և հայկական գրերով, բայց հունարեն լեզվի ավանդումը չէր վերանում հայկական դպրոցներից:[24]

Պատմաշրջանում, չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններին, Արցախի մշակութային բարձր մակարդակը վկայում է երկրամասի ժողովրդի խոր սերն ու պատկառանքը կրթության ու դպրոցի նկատմամբ: Լեոն հիշատակում է, որ VIII դարում Արցախում կրթագիտական կենտրոնի վերածվեցին Ամարասի, Դադի, Հոռեկա, Սուրբ Եղիշեի վանքերին կից գործող դպրոցները:

Արևելյան Հայաստանի և նրա Արցախյան հատվածի մշակութային, կրթական կյանքում մեծ աշխուժություն էր նկատվում IX դարի վերջին և, հատկապես, X դարի սկզբին: Ստեղծվում են բարենպաստ պայմաններ դպրոցական ցանցի ընդլայնման և աշխարհիկ կրթության տարածման համար: Եվ եթե V-IX դարերում Արցախում աշխարհիկ դպրոցը ետին պլան է մղվել կամ որոշ չափով դադարել գործելուց ու զգալիորոն թուլացել էր ուսուցման ու կրթության աշխարհիկ ոգին, ապա IX դարի վերջերին՝ Բագրատունյաց թագավորության հաստատումից հե-

21. Աբ. Մովսիսյան, նշվ.աշխ., էջ 330-331:
22. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն, Երևան, 1994, էջ 35-36:
23. Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 61-62, ինչպես նաև Ա.Վարդանյան, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013, էջ 164:
24. Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գիրն ու գրականությունը, «Սովետական գրականություն», Երևան, 1941, թիվ 2, էջ 59:

տո, ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Արցախում հիմնվել են զգալի թվով ուսումնակրթական օջախներ, մասնավոր դպրոցներ, մի խոսքով՝ ստեղծվել են բարենպաստ պայմաններ աշխարհիկ կրթության տարածման համար: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ հոգևոր կրթության հիմքերը խարխլվում էին: Ոչ, այն բավականին կենսահաստատ էր և այն էլ հատկապես վանական դպրոցներում:

IX դարավերջից և հատկապես X դարից Հայաստանում, այդ թվում՝ Արցախում, զգալի փոփոխության է ենթարկվում կրթության բովանդակությունը, մինչ այդ տիրապետող ներքին (հոգևոր) գիտություններից զատ սկսում է զգալիորեն մեծ տեղ հատկացվել նաև արտաքին գիտություններին՝ հունահռոմեական անտիկ դասական գրականությանը, փիլիսոփայությանը (հունական և հայկական), տրամաբանությանը, քերականությանը, բժշկագիտությանը, մաթեմատիկային, տոմարագիտությանը և այլն:

Վերոնշյալ փաստագրական տվյալները վկայում են, որ Արևելյան Հայաստանում և Արցախական աշխարհում կրթական գործը, թեկուզև ընդհատումներով (պայմանավորված սոցիալ-քաղաքական բարդ իրադարձություններով), զգալի վերելք է ապրել V-X դարերում: Դա պայմանավորված էր հայ ժողովրդի ազգային-հասարակական զարգացման ընթացքով և նրա կյանքում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական երևույթներով:

Վերը համառոտ շարադրածից կարող ենք եզրակացնել, որ պատմական Արցախում V-X դարերում հոգևոր-մշակութային-լուսավորչական վերելքը, հայագիր դպրոցների հիմնումը, սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները՝ արհեստների, առևտրի զարգացումը, հանդիսացան այն ընդհանուր աղբյուրը, որն իր ներգործությունն ունեցավ հետագա դարերում (X-XVIII) Արցախում ծավալված մշակութային, լուսավորչական տեղաշարժերի, դպրոցի ու կրթական գործի զարգացման վրա: Հարկ է նշել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում վանքերն ու եկեղեցիները, որոնք Արցախ-Ուտիքյան աշխարհում գրագիտություն տարածելու, ձեռագիր գրքեր ընդօրինակելու ու պահպանելու լուսավոր օջախներ էին, այն ժամանակ ամրոցների դեր էին կատարում: Չնայած դրանք պաշարվում էին, հրդեհի մատնվում, ավերվում օտար նվաճողների ու վայրագ ցեղերի ասպատակությունների ժամանակ, սակայն նորից հայ արհեստավորի ձեռքով հառնում էին մոխրակույտերից, վերակառուցվում ու պահպանում էին հայ դարավոր մշակութային արժեքները:

X-XII դարերում Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Արցախում, զարգանում են տնտեսությունը, առևտուրը, արհեստները, ճարտարապետությունը, քանդակագործությունը, գիտությունն ու արվեստը, ստեղծվում են գրչության օջախներ, հաստատվում են տարբեր տեսակի ու բնույթի դպրոցներ՝ հոգևոր խոշոր կենտրոններ:

Բ.Ուլուբաբյանը «Դադի վանք կամ Խոթա վանք» աշխատության մեջ մատնանշում է, որ այդ շրջանում նշանավոր են եղել Ամարասի, Գտչավանքի, Դադի վանքի դպրոցները: XIII դարում Արցախի նահանգի Խաչեն գավառի կրոնական-մշակութային կենտրոններ էին Դադի, Գանձասարի վանքերը: Դադի վանքը Գանձասարի Հասան Ջալալյանի ապարանքն էր, և վանքի եկեղեցական դպրոցի ծախսերը հոգում էր կաթողիկոսը:[25]

Հասան Ջալալի անմիջական նախաձեռնությամբ սկսվում է Գանձասարի

25. Բ.Ուլուբաբյան, Դադիվանք կամ Խոթավանք, Էջմիածին, 1970, էջ 10:

վանքի շինարարությունը: Նորակառույցին վիճակված էր բազմապատկելու նախկին հոգևոր կենտրոնի փառքը, դառնալու ոչ միայն Խաչենի իշխանության մշակութային կյանքի խոշոր կաթողիկոսանիստը, այլև քաղաքական մեծ խմորումների, ճակատագրական դեպքերի ու իրադարձությունների կազմակերպիչը:[26] Խաչենի իշխանության հոգևոր-մշակութային կենտրոնում՝ Գանձասարում, ծավալվել է մշակութային, շինարարական լայն գործունեություն, վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, եղել են հարուստ ձեռագրատուն, դպրանոց, ստեղծվել են բարձրարժեք ձեռագրեր, գործել է մատենադարան, կրթվել են հոգևոր գործիչներ, որոնք իրենց նպաստն են բերել Արցախի, ինչպես նաև հայոց մյուս լուսավորչական թեմերի մտավոր ու մշակութային կյանքի զարգացմանը:

XIII դարի սկզբին Արցախի ժողովրդի վիճակն անմխիթար էր, քանի որ մոնղոլ-թաթարները սկսում են նվաճել Հայաստանը, Անդրկովկասը, ինչպես նաև՝ Արցախը: Հետագա դարերում Արցախը վերածվում է թուրքմենական վաչկատուն ցեղերի արշավանքների թատերաբեմի: Բարբարոս զավթիչներին հաջորդում են օսմանյան և պարսկական նոր արշավանքներն ու կռիվները, որոնք իրենց արհավիրքներով ու ավերածություններով գերազանցում են նախորդ բոլոր նվաճողներին:

Արցախի ժողովրդի ըմբոստ ոգին չէր կարող հաշտվել այդ ծանր իրադրության հետ. նա նորից ոտքի է ելնում և պայքարի դրոշ պարզում:

Արցախի քաղաքական կյանքի ծանր կացությունը հարատևել է դարեր շարունակ և մեծապես արգելակել երկրի տնտեսության, շինարարության ու մշակույթի առաջընթացը: Այդ երևույթը շատ ծանր է անդրադարձել դպրոցների և, ընդհանրապես, կրթության գործի վրա:

Իրար հաջորդող քաղաքական, սոցիալական ծանր պայմանների հետևանքով Արցախի գավառներում գործող դպրոցները կարճատև կյանք են ունեցել, եզակի են այն կրթօջախները, որոնք կարողացել են մի քանի տասնամյակ իրենց գոյությունը պահպանել. օրինակ՝ Գանձասարի, Դադի, Գտիչ, Ս.Հակոբի և մի շարք վանքերի դպրոցները: Իսկ դա պայմանավորված էր նրանով, որ այդ վայրերում եղել են աշխարհագրական նպաստավոր պայմաններ և երկրի վրա հարձակվողներին դիմակայող ուժեր: Նման իրադրության մեջ ահա Արցախի կրթական օջախները կենաց ու մահու գոտեմարտում մաքառում էին և պահպանում իրենց կենսահաստատությունը:

Արցախի կրթամշակութային գործի և հասարակական մտքի հետագա զարգացումը լուրջ վտանգի էր ենթակա հատկապես XVI-XVIII դարերում: Անշուշտ, դա պատմաշրջանում ստեղծված քաղաքական, տնտեսական, սոցիալական ծանր պայմանների, թուրք-պարսկական տևական պատերազմների հետևանքն էր: Արցախի ժողովուրդը ենթակա էր ֆիզիկական բնաջնջման կամ ձուլման մշտական վտանգի: Հասկանալի է, որ այդ պայմաններում Հայաստանում և Արցախ աշխարհում կրթամշակութային գործը չէր կարող կայուն զարգացում ապրել: Պատմաշրջանում ստեղծված անտանելի պայմանների հետևանքով Արցախի մի շարք վայրերում փակվում են հայկական դպրոցները: Ազգային մշակույթն ու դպրությունը զրկվում են կենսատու հզոր ակունքներից: Նկարագրելով այդ ժամանակաշրջանը, Առաքել Դավրիժեցին գրում է. «Կարդացող չկար. մոռացել էին, թե ինչ է գիրքը և ինչ հզորություն ունի նա, և որ գրքերը ծածկվել էին հողով ու մոխրով»:[27]

26. Բ.Ուլուբաբյան, Գանձասար, Երևան, 1981:
27. Առաքել Դավրիժեցի, Պատմություն հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 261:

Չնայած թուրք-պարսկական տևական պատերազմների հետևանքով Արցախը հայտնվել էր տնտեսական, քաղաքական ծանր կացության մեջ, և ժողովուրդը զրկված էր տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորություններից, այնուամենայնիվ, Արցախի ժողովուրդը հերոսական ջանքերի շնորհիվ ամենածանր պայմաններում անգամ պահպանում է իր հոգևոր մշակույթը, ազգային կերպը և ամենամեծ գանձը՝ հայեցի կրթություն տվող դպրոցը: Ստեղծված քաղաքական պայմաններում դպրոցները թշնամիներից թաքցնելու, ավելի ապահովելու համար շատ հաճախ դրանք ստեղծում էին վանքերին ու եկեղեցիներին կից, որոնցից շատերը գտնվում էին հեռավոր խուլ ձորերում, հեռու լեռների ծերպերում, այրերում և մենաստաններում: Հասկանալի է, որ այս պայմաններում Արցախի մի շարք վայրերում շատանում են աշխարհագրական դիրքով անառիկ վանքերին ու եկեղեցիներին կից գործող դպրոցները, ինչպես նաև տնային ու մասնավոր փոքրացած դպրոցները և, ընդհակառակը, նվազում ու շատ տեղերում էլ անհետանում են հասարակական տարբեր տիպի ու բնույթի խոշոր դպրոցները:

Բնութագրելով այդ ժամանակաշրջանի դպրոցական գործի վիճակն Արցախում, Մ.Բարխուդարյանն «Արցախ» աշխատության մեջ գրում է, որ XVII-XVIII դարերում Արցախյան աշխարհում, երբեմն որոշ ընդհատումներով, շարունակել են գործել Գանձասարի, Դադի, Գտչա, Ս.Հակոբի, Ջրաբերդի Երից Մանկանց վանքերի, Շուշիի եկեղեցու և այլ վանքերի եկեղեցիներին կից դպրոցները:[28]

Քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող փաստագրական նյութերի վերլուծությունը ցույց է տվել, որ վերոնշյալ դպրոցներից շատերը կորցրել են իրենց վաղեմի փայլը և հիմնականում վերածվել սովորական գրաճանաչության տարրական դպրոցների: Հարկ է նշել նաև, որ այդ դպրոցները մեծ մասամբ չեն կարողացել իրենց գոյությունը պահպանել մինչև հայ նոր դպրոցի կազմավորման շրջանը՝ XIX դարի սկիզբը, դրանցից շատերը խիստ կարճատև կյանք են ունեցել: Եվ այն հարցին, թե XIX դարի սկզբին կամ Ռուսաստանին միանալու նախօրեին Արցախը կրթական համակարգի ինչպիսի ժառանգություն է ստացել նախորդ ժամանակաշրջանից (նախամաշտոցյան և մաշտոցյան շրջանից մինչև XVIII դարի վերջը), պետք է ուղղակիորեն պատասխանել, որ այդ ժառանգությունը որոշակի առումով բավարար հիմքեր է ստեղծել պատմության նոր շրջանում՝ XIX դարասկզբին Արցախի դպրոցի ու կրթական գործի համար:

Արցախի տնտեսական, քաղաքական, մշակութային, կրթական համակարգում զգալի տեղաշարժեր կատարվեցին հատկապես XIX դարում:

28. Մ. Բարխուդարյան, Արցախ, Նոր հր., 1995, էջ 83:

2. Կրթական գործի կառավարման համակարգը, դպրոցական կանոնները, հրահանգները, ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգն ու պայմանները

Մեր ձեռքի տակ եղած պատմագիտական աղբյուրների, Մատենադարանի ձեռագրերի, վավերագրերի և այլ փաստագրական նյութերի ընձեռած հնարավորությունների վրա հիմնվելով՝ համառոտակի տեղեկություններ տանք նաև քննարկվող ժամանակաշրջանի (V-XVIII դարերում) Արցախի կրթական գործի կառավարման համակարգի, դպրոցական կանոնների, հրահանգների, ուսուցչի ընտրության, նշանակման կարգի ու պայմանների մասին: Մեր կարծիքով, դա ընթերցողին հնարավորություն կտա պատկերացում կազմել Արցախի կրթական համակարգի ձևավորման ու զարգացման ամբողջական պատմության մասին: Նկատի ենք ունեցել նաև այն հանգամանքը, որ հրապարակի վրա եղած պատմամանկավարժական աղբյուրներում դեռևս պատմական վերլուծության չի ենթարկվել այդ կարևորագույն հիմնահարցը:

Արևելյան Հայաստանում, նրա անբաժան Արցախյան հատվածում, հայեցի կրթական համակարգի հիմքը դրվել է V դարի սկզբին: Տարբեր ժամանակաշրջաններում, կապված հասարակական, սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերի հետ, որոշ փոփոխություններ են կատարվել երկրամասի կրթական գործի կառավարման համակարգում:

Պատմամանկավարժական աղբյուրները[1] վկայում են, որ Հայաստանում և արցախյան հատվածում V-X դարերում ստեղծվեց պետական կառավարման կրթական համակարգ, որի մեջ ներառված էին ըստ բնույթի, տեսակի և աստիճանի հետևյալ տիպի ուսումնական հաստատություններ.

ըստ բնույթի

ա) հոգևոր,

բ) աշխարհիկ,

ըստ տեսակի

ա) պետական,

բ) հասարակական-համայնական,

գ) վանական,

դ) եկեղեցական-ծխական,

ե) տնային-մասնավոր,

ըստ աստիճանի

ա) ցածր-տարրական,

բ) միջին-միջնակարգ (պետական աշխարհիկ դպրոցներ),

գ) բարձր-բարձրագույն (ժամանակի ընթացքում հոգևոր տիպի դպրոցները վերածվեցին բարձր տիպի դպրոցների):

Աշխարհիկ ուսումնական հաստատությունների կարգին են դասվել պետական, հասարակական-հանրային, տնային-մասնավոր, որոշ վերապահումներով նաև եկեղեցական-ծխական դպրոցները: Հոգևոր դպրոցներ են համարվել վանական ուսումնարանները, վարդապետարանները, նաև որոշ եկեղեցական-ծխական դպրոցներ:

Պետական դպրոցները գտնվել են պետության, հասարակականը և եկեղեցա-

1. Աբ.Մովսիսյան, նշվ. աշխ., 1947, էջ 315, Ց.Սիմոնյան, Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 29-30:

կանը՝ համայնքի, տնայինը՝ մասնավոր անձանց տնօրինության, իսկ վանականը՝ վանքերի իրավասության ներքո:

Այս բնույթի ու տեսակի բոլոր դպրոցները, առանց բացառության, կարող էին ունենալ թե տարրական և թե միջնակարգ աստիճաններ, սակայն բարձրագույն աստիճան ունեցել են միայն վանական (Ամարասի, Դադի և Գտչա վանքերի) ու պետական դպրոցները: Այդ դպրոցներում գործում էին որոշակի կանոններ, որոնց համաձայն՝ որբերը, աղքատ ընտանիքների երեխաները սովորում էին անվճար:

Արսեն Ղլտճյանը «Կանոնագիրք հայոց» աշխատության մեջ իրավացիորեն նշում է, որ հասարակական նշանակություն ունեցող հիմնարկությունների կամ հաստատությունների վերաբերյալ ընդունված հայոց հին կանոնների և օրենքների մեջ, սկսած դեռ մեր թվարկության IV դարից, արտացոլված են դպրոցը, կրթությունը, ուսուցումն ու դաստիարակությունը: Օրինակ՝ Աշտիշատի հայոց ժողովի (365թ.) կողմից ընդունված 6-րդ կանոնի համաձայն՝ մեծերը կրտսերների, իսկ ուսուցիչները՝ աշակերտների նկատմամբ պետք է լինեին խիստ պատասխանատու, ուշադիր և հոգատար:[2]

V դարի սկզբներին գրված, այսպես կոչված, Սահակյան կանոններից մեկի (9-րդ կանոն) մեջ նույնպես խոսվում է դպրոցի և ուսման մասին:[3] Այս կանոնները սահմանված են այն ժամանակ, երբ արդեն վանական դպրոցներից զատ գործում էին հայագիր հասարակական դպրոցներ, որոնց նկատմամբ հոգ ու խնամք էր տանում հայոց պետությունը:

Քննարկվող ժամանակաշրջանում (V դարում) Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի ընդունած օրենքներից մեկում նշվում է, որ երկրամասի եկեղեցիները հանդիսանում են նաև դպրոցներ, իսկ եկեղեցիներն ունեն աշակերտներ: Աղվենի ժողովի 16-րդ կանոնը վերաբերում է դպրոցներին՝ յուրաքանչյուր եկեղեցու կից և գյուղերում բացել դպրոցներ, որոնց ծախսերը հոգում են գյուղական համայնքները: Դպրոցական կանոններից մեկում սահմանվում էին երեցի (դաստիարակի) և աշակերտների փոխհարաբերությունները, ինչպես նաև հիշյալ կողմերից որևէ մեկի թույլ տված օրինազանցության դեպքում պատժի տեսակներն ու խստությունը: Այդ նույն կանոնի մեջ հիշատակվում են տգիտության վնասները և հորդորվում է, որ երեխաներին անհապաղ դպրոց ուղարկեն: Վերոնշյալ կանոնի մեջ խթանվում է դպրության գործը՝ կրթությունը համարելով մարդկային ամենամեծ առաքինություններից մեկը:[4] 17-րդ կանոնում ասվում է, թե քահանաների հիմնական գործն է խրատել, դաստիարակել և ուսուցանել մանուկներին, բայց ոչ վճարովի, այլ՝ ձրի: Այդ կանոնով պահանջվում է ուսման վարձ չառնել երեխաներից, դպրոցները պետք է պահվեն պետության, համայնքների և եկեղեցու կողմից հատկացված միջոցներով: Վաչագան թագավորի հոգածության առարկան էր դպրոցը: Այդ տեսանկյունով էլ դպրոցի վերաբերյալ ընդունված կանոններում (16,17,18) պահանջվում էր յուրաքանչյուր գյուղում բացել դպրոց, իսկ ուսուցիչ-ուսուցչապետը (ռաբունապետը) պետք է հաշվետու լինի աշակերտների կարգապահության, ուսման առաջադիմության, կիրառված պատիժների, խրախուսման միջոցների և կրթական ներքին կյանքին առնչվող այլ խնդիրների համար:

---

2. Ար.Ղլտճյան, Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1914, էջ 18-19:
3. Նույն տեղում:
4. Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1913, գլ.27, էջ 26-29:

Ար. Ղլտճյանը «Կանոնագրքում» հիշատակում է, որ VII դարում Դվինի ժողովում (649թ.) ընդունված Դ և Ե կանոնների մեջ հրահանգվում է թեմերի, վանքերի ու անապատների գլուխ կանգնած եպիսկոպոսներին ու վարդապետներին, որ մշտապես հետևեն կրթական գործին՝ «տեսչութիւն և հոգաբարձութիւն արասցեն ի լոյս և ի պաշտոն և ի դպրոցս վայել…»:[5]

Քանի որ պատմական Արցախը Հայաստանի արևելյան մի հատվածն է, այդ կանոններով են առաջնորդվել նաև երկրամասի կրթական գործի կառավարման մարմինները:

Միջնադարյան Հայաստանում և Արցախում դպրոցները կառավարում էին կանոններով, որոնք նախատեսված էին Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերում, ինչպես նաև Կոստանդին Կաթողիկոսի կանոնագրքում: Արսեն Ղլտճյանը «Կանոնագիրք հայոց» աշխատության մեջ վկայում է, որ Կոստանդին Կաթողիկոսի սահմանած կանոնները հաստատվեցին 1242 թվականին Կիլիկիայի Սիս քաղաքում գումարված ժողովի կողմից և առավել պաշտոնական ուժ ստացան: Այս կանոնների մեջ նույնպես կան մի շարք կետեր, որոնք վերաբերում են հայեցի կրթություն տվող դպրոցներին, ուսման և կրթության գործին: Այստեղ կան մի քանի կանոններ, որոնք ցայտուն արտացոլում են ժամանակակից կրթության նկատմամբ ժողովրդի ու պաշտոնական հաստատությունների վերաբերմունքը:[6]

Ուսումնասիրած աղբյուրների պատմաքննական վերլուծությունը համոզում է, որ քննարկվող ժամանակաշրջանում (V-XIII դարերում), Հայաստանում և Արցախում արդեն կար դպրոցական համակարգ, սահմանված էին դպրոցի կարգն ու կանոնները, որոնց համապատասխան աշակերտները բաժանվում էին տարբեր խմբերի, ըստ իրենց տարիքի ու գիտելիքների իմացության չափի: Դպրոցական կանոններում սահմանվում էին նաև դպրոցի ռաբունապետի (ուսուցչապետի) և ուսուցիչների պարտականությունները: Կանոններում խոսվում էր նաև կրթության ու դաստիարակության վերաբերող բազմաթիվ հարցերի մասին, որոնք ամենացայտուն վկայություններն են այն բանի, որ տվյալ ժամանակներում, հայ ժողովրդի կյանքի անհրաժեշտ և հուզող հարցերի շարքում իրենց պատշաճ տեղն են գրավել դաստիարակության և կրթության հարցերը: Այդ կանոնների մեջ այնպիսի իմաստություններ կան, որոնք երկար ժամանակ անհայտ են եղել, շատ ուշ են իրենց տեղը գտել մանկավարժության մեջ, բայց նրանք արժեքավոր են և ուսանելի: Արսեն Ղլտճյանը վերստին նշում է. «Ինչպես կարելի է մոռանալ, որ 13-րդ դարում հատուկ կանոններ էին սահմանվում կրթության և դաստիարակության գործում անհատական, առանձին մոտեցում ցուցաբերելու մասին՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները»:[7] Այս կանոններով ամեն մի դաստիարակից իրավացիորեն պահանջվում է նախ և առաջ ճանաչել սանին, մշտապես գիտենալ նրա վարքը և ըստ այդմ ուսուցանել ու դաստիարակել: Մանկավարժական այս պահանջը XIII դարում միանգամայն նոր, առաջադիմական երևույթ էր:

Այսպիսով՝ Հայաստանում և Արցախում կրթության համակարգի կառավարման այդ ժամանակաշրջանին բնորոշ էին.

---

5. Ար.Ղլտճյան, Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1914, էջ 113:
6. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1850, Սմբատ Գունդստաբլ, Դատաստանագիրք, Էջմիածին, 1918:
7. Ար.Ղլտճյան, Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1914, էջ 122-123:

- ընդհանուր կրթական համակարգի ստեղծումը,
- դպրոցական համակարգի, որպես կրթության համակարգի կենտրոնական օղակի, պետության, համայնքների և եկեղեցիների ու վանքերի կողմից հատկացված միջոցներով ապահովումը,
- կրթության մատչելիությունը բոլոր խավերի երեխաների համար,
- գյուղաբնակ և քաղաքաբնակ սովորողների կրթական մակարդակի ոչ էական տարբերությունը,
- ուսուցիչ-դաստիարակի պատասխանատվությունը երեխաների կրթության ու դաստիարակության նկատմամբ,
- կրթության կառավարման բոլոր օղակներում հաստատված լիազորությունների (ուսուցչի, ուսուցչապետի, եկեղեցական գործչի և այլն) սահմանումը և այլն:

Իհարկե, դրա հետ մեկտեղ գոյություն ունեին նաև կրթության կառավարման մի շարք բացթողումներ.

- անընդհատ խորացող հակասությունները դպրոցի և իրական կյանքի միջև,
- դպրոցներում դասավանդող ուսուցիչների ոչ մասնագիտական պատրաստվածությունը (շատ դեպքերում միայն քահանաներն էին դասավանդում),
- դպրոցների փակման պատճառ էր դառնում նյութական միջոցների բացակայությունը և այլն:

Դպրոցների բացման, բնականոն գործունեության ապահովման, ուսման և գրագիտության տարածման համար մղվող պայքարը միշտ էլ զուգակցվել է հայ ժողովրդի, նրա առաջադեմ մտավորականության պայքարով ընդդեմ կրթության գործի խոչընդոտների:

Պատմագիտական աղբյուրների վկայությամբ, հետագա դարերում (XIV-XVIII դարեր), քաղաքական, սոցիալական ծանր պայմանների հետևանքով փակվում են դպրոցները, ինչպես Առաքել Դավրիժեցին է նշում. «սկսվում է հայոց կրթության գործի մի նոր ու տևական քայքայում, իսկական անկում»:[8] Այդ շրջանում չկար կրթության մի ընդհանուր համակարգ: Պատմիչի վկայությամբ՝ դպրոցները գործել են ինչպես բազմաթիվ վանքերում, այնպես էլ մենաստաններում, անհատական տնային, առտնին և առանձին «դպրատներ»-ում:

Արցախում կրթական գործի կառավարման համակարգում լուրջ փոփոխություններ է կատարվում հատկապես XIX դարում ***(այդ մասին մանրամասն կնշվի աշխատության հաջորդ գլխում):***

Ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա համառոտակի ներկայացնենք նաև բնութագրող ժամանակաշրջանում ուսուցչի ընտրության, նշանակման կարգն ու պայմանները:

Քննարկվող ժամանակաշրջանում (V-XVIII դարերում) հայ իրականության մեջ դպրոցական գործի սկզբնավորման, զարգացման և արդյունավետության որոշող նախապայմանը պահանջվող ուսուցչական կադրերի առկայությունն է: Իսկ ուսուցչական կադրերի պատրաստումը և դրանցով հայեցի կրթություն տվող դպրոցների ապահովումն այն ժամանակաշրջանում ավելի շատ դժվար և երկար ժամանակ պահանջող խնդիր էր անգամ նյութական-դրամական առկայության պայմաններում: Ուսուցիչների ընտրության խնդիրը մշտապես մտահոգել է ժամանակաշրջանի հայ մտավորականությանը, քանի որ բանիմաց ուսուցչի աշխա-

8. Առաքել Դավրիժեցի, Պատմություն հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 221-222:

տանքով են պայմանավորված ազգի հետագա զարգացումն ու բարգավաճումը:

Հայտնի է, որ պատմաշրջանում Հայաստանում և Արցախում կրթական համակարգի հիմնական օղակներն են եղել վանական, եկեղեցական, հասարակական, պետական ու մասնավոր դպրոցները: Այս դպրոցները գտնվում էին տարբեր պայմաններում, նրանց մի մասը, հատկապես հասարակական և տնային դպրոցները, նյութական ավելի վատ դրության մեջ էին: Դպրոցի վիճակով էր պայմանավորված ուսուցչի նյութական ու բարոյական վիճակը, նրա հասարակական դիրքն ու հեղինակությունը: Աբ. Մովսիսյանը իրավացիորեն նշում է, որ հայագիր դպրոցների սկզբնավորումից հետո, այն դպրոցները, որոնք հաստատվում էին արքունիքի, պետության կողմից, նրանց ուսուցիչները նշանակվում էին պետական մարմինների կողմից. դրանք «կարգէին հմուտ դպրապետս և ուսուցչիս»: Այս ուսուցիչների և դպրապետների համար պետական գանձարկղից «սահմանէին դարմանս ռոճկաց», այդ դպրոցների ուսուցիչների դրությունը համեմատաբար լավ էր:[9]

Պատմագիտական աղբյուրների և փաստագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայոց պատմության մեջ կան բազմաթիվ փաստեր, որ ապացուցում են հայոց թագավորների, իշխանների, դպրոցի տեր համայնքի ղեկավարների և մասնավոր դպրոցատեր անձանց կողմից ուսուցիչներ ընտրելու և նշանակելու կարգ ու կանոնների առկայությունը:

Մեսրոպի աշակերտ Կորյունը վկայում է, որ հայոց Վռամշապուհ արքայի հրամանի համաձայն՝ հայ գրերի ստեղծումից հետո Հայաստանի գավառներում բացվում են դպրոցներ, նշանակվում ուսուցիչներ, նրանց համար պետական գանձարանից կարգվում են ռոճիկներ «և նոցին ռոճիկս կարգելի պատեհագոյն տեղիս»:[10] Պատմիչը գրում է, որ հայոց արքայի հրամանի համաձայն՝ Մեսրոպ Մաշտոցը Հայաստանի, այդ թվում՝ Արցախի, գավառներում դպրոցներ հաստատեց և նրանց համար նշանակեց հավատարիմ ուսուցիչներ, դպրապետեր: Այս ձևով դպրոցներ հաստատելը, ուսուցիչներ և դպրապետեր նշանակելը, սրանց ռոճիկներ կարգելը շատ սովորական երևույթ էր հետագա դարերում:

Մովսես Կաղանկատվացին «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատության մեջ գրում է, որ Արցախ-Ուտիքյան աշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտի լուսավորչական ձեռնարկումներից մեկը դպրոցական ցանցի ընդլայնումն էր: Մատենագիրը նկարագրում է, որ երբ նա շրջագայում էր պատմական Արցախի գավառները, բացում էր դպրոցներ, նշանակում ուսուցիչներ և պահանջում երեխաներին կրթել ու դաստիարակել: Համաձայն Աղվենի ժողովի 18-րդ կանոնի՝ «Հայոց Արևելից կողմանց տերության առաջին օրենքն այն պետք է լինի, որ բոլոր հայաշատ վայրերում բացեն կրթատներ (դպրոցներ) և դասավանդեն գիտուն ուսուցիչներ, երեխաներին սովորեցնեն գրելն ու կարդալը: Դա տերության հզորության ամենամեծ ակունքն է»:[11] Դպրոցներում ուսուցիչներին նշանակում էին Աղվենի ժողովում ընդունված կանոնների համաձայն և նշանակում ռոճիկ պետական գանձարանից:

Եթե պետական և հոգևոր դպրոցներում կարգերն այդպես էին. ուսուցիչները,

---

9. Աբ.Մովսիսյան, նշվ. աշխ., 1947, էջ 351, նաև՝ Ց.Սիմոնյան, Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 29-30:

10. Մ.Կորյուն, նշվ.աշխ., էջ 26-27:

11. Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 26-27: Նաև տե՛ս Հ.Խաչատրյան, Վաչագան, Երևան, 1998, էջ 101, 223-227:

դպրապետերը այսպես թե այնպես վարձատրվում էին, իսկ վանական դպրոցների ուսուցիչները, որոնք միաժամանակ վանքերի պաշտոնյաներ ու վարժապետներ էին, նույնպես ապահովված էին նյութապես (հատկապես Բագրատունյաց թագավորության շրջանում), ապա ամենավատթար դրության մեջ էին հասարակական, գյուղական ու տնային դպրոցների ուսուցիչները: Սրանց բախտը որոշվում էր տվյալ համայնքի ազգաբնակչության, եկեղեցական գործիչների՝ հովանավորների կողմից, ամեն ինչ կախված էր նրանց բարեհոգությունից, աշակերտների նվիրատվություններից և այլն:

Հայ դպրոցի պատմությանը նվիրված աշխատության[12] մեջ հիշատակվում է, որ V-XIII դարերում, որ համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան էր, Հայաստանում և Արցախում գործող բազմատիպ դպրոցների վերաբերյալ ընդունված կանոններում շատ արժեքավոր տեղեկատվություններ կան ուսուցչի մասին: Օրինակ, Աղվենի ժողովի կանոններից (16.17.18) մեկում խրախուսվում է ուսման գործը և ուսուցչի ամենամեծ պարտականություն համարվում «ուսումն անուշացնել», որ շատերը գան դպրոց: Բագրատունյաց թագավորության շրջանում ավելի են մեծանում պահանջներն ուսուցչի նկատմամբ: Այդ պահանջները գրանցվում են կանոնագրքերում, Սմբատ Գունդստաբլի և Մխիթար Գոշի դատաստանագրքերում և օրենքի ուժ ստանում:

Պատմաշրջանում (V-XIII դարեր) գործող դպրոցական կանոնների և օրենքների համաձայն՝ ուսուցիչը պետք է լինի ճանաչված, հեղինակավոր, գիտուն և խիստ, բարի ու մարդասեր, շատ գրքեր կարդացող, ինչպես Կ.Գանձակեցին է ասում՝ «իմաստուն բանիւ և գործի կարող»:[13]

Քննարկվող ժամանակաշրջանում ուսուցչի նկատմամբ այս կարգի պահանջները ճշմարիտ և պերճախոս վկայություններ են այն բանի, որ հայ ժողովուրդը դպրոցի դարավոր պատմություն է ունեցել և, չնայած պատմական ծանր փորձություններին, հարատևել են կրթական օջախները, գնահատվել ուսուցչի դերն աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Ուսուցչի նկատմամբ այսպիսի մոտեցումը կարող է մշակվել դպրոցական կյանքի երկարամյա, դարավոր փորձից հետո, իսկ այդ փորձը հայագիր դպրոցն ուներ մաշտոցյան շրջանից մինչև XIII դար: Ուսուցչի նկատմամբ պահանջը չի սահմանափակվում դպրոցի վերաբերյալ ընդունված կանոններով. հետզհետե, ժամանակի պահանջներին համեմատ, նոր խնդիրներ են առաջադրվում: Արսեն Ղլտճյանը «Կանոնագիր Հայոց» գրքում գրում է. «Ավելի ուշ՝ ժամանակի հրահանգներից մեկում, որ կարծեք զարգացնում է XIII դարի ուսուցչի մասին կանոնները, ցայտուն կերպով երևում են նոր առաջադրանքներ, նոր պահանջներ ուսուցչի նկատմամբ, դրանց մեջ սուր կերպով դրվում են նրա պատասխանատվության խնդիրները երեխաների ուսուցման և դաստիարակության բազմաթիվ բնագավառներում»:[14] Կանոնագրքում ուսուցչին առաջադրված պահանջներին զուգընթաց կան նաև բազմաթիվ խորհուրդներ ուսուցչի և աշակերտի փոխհարաբերության մասին: Արցախի դպրոցներում դասավանդող ուսուցիչները՝ դպրապետերը, իրենց պրակտիկ գործունեության ընթացքում առաջնորդվում էին այդ պահանջներով:

Հետագա դարերում (XIV-XVIII դարեր), չնայած իրար հաջորդող քաղաքական

12. Ար. Ալպոյաջյան, Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946,
13. Կիրակոս Գանձակեցին, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 285-286:
14. Ար.Ղլտճյան, Կանոնագիրք հայոց, Թիֆլիս, 1914, էջ 122-123, նաև Աբ.Մովսիսյան, նշվ.աշխ., էջ 355:

իրադարձություններին ու ծանր պայմաններին, Արցախում գործող բոլոր փոքր ու մեծ դպրոցները (տնային, եկեղեցական, վանական) պահվել են ժողովրդի միջոցներով, գտնվել նրա մշտական հոգածության ու խնամքի ներքո: Չնայած դրան, անապահով է եղել Արցախի դպրոցների գոյությունը: Հետևաբար, անապահով էր նաև ուսուցչի նյութական վիճակը: Օրինակ՝ Դադի, Ամարասի, Գտչա և Սուրբ Հակոբի վանքերում գործող դպրոցները պահվում էին վանքերի կողմից հատկացված և ժողովրդի միջոցներով, վանքի դպրոցի ուսուցիչներն օգտվում էին այդ միջոցներից, իսկ տնային կամ մասնավոր դպրոցների ուսուցիչները վարձատրվում էին աշակերտների նվիրատվության միջոցներով: Այստեղից էլ սկիզբ է առնում հասարակական դպրոցների, ժողովրդական ուսուցչի այն ծանր վիճակը (հատկապես XVI-XVIII դարերում թուրք-պարսկական տևական պատերազմական շրջանում) ու գնալով ավելի վատթարանում, հարատևում և հասնում մինչև XIX դարը՝ հայ նոր դպրոցի կազմավորման շրջանը:

Այսպիսով, Արցախի հայեցի կրթություն տվող դպրոցի սկզբնավորումից մինչև XIX դարը, բոլոր ժամանակներում, իրենց ժամանակի պահանջներին համեմատ, ուսուցչի առջև ծառացել են բազմաթիվ հարցեր, որոնց լուծման մեջ են կայացել նրա ստեղծագործական աշխատանքի հաջողությունները:

3. Հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեությունը V-XVIII դարերում

Մեր հետազոտության մասին հստակ պատկերացում կազմելու համար կարևոր է որոշ տեղեկություններ տալ նախամաշտոցյան շրջանի հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեության մասին: Այսինքն՝ պատմաշրջանը հիմնավոր ուսումնասիրած ժամանակագիրների տեղեկությունների համաձայն, Արցախ-Ուտիքյան աշխարհում լուսավորչական շարժումն ինչ հանգամանքներում է սկիզբ առել և զարգացում ապրել հետագա ժամանակներում:

Պատմագիտական աղբյուրների և այլ նյութերի պատմաքննական վերլուծությունը համոզում է, որ Հայոց Արևելից կողմանց՝ Արցախ աշխարհում, լուսավորչական շարժում է ծավալվել հատկապես քրիստոնեության շրջանում՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո (301թ.):

Մովսես Կաղանկատվացին «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատության մեջ հիշատակում է, որ Ս. Թադեոս առաքյալի աշակերտներից մեկը՝ Եղիշե Երանելին, իր քարոզչությունն սկսելով Արևելյան Անդրկովկասի հյուսիսային եզրից, շարժվել է դեպի հարավ, անցել Կուր գետը՝ սուրբ հավատի դարձնելով Ուտիքի հայությանը, ապա Ուտիքի ու Արցախի սահմանագլխին՝ Գիս ավանում կառուցել եկեղեցի՝ առաջին սրբարանը և հայկական օջախը Հայոց Արևելից աշխարհում, այդ եկեղեցում մատուցել անարյուն պատարագ: Պատմական գրականության մեջ հենց այս տեղն էլ կոչվում է «Արցախ-Ուտիք հայաշխարհի քրիստոնեական դարձի ծննդարան»:[1]

Պատմաշրջանի հմուտ հետազոտող Բագրատ Ուլուբաբյանը «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» աշխատության մեջ հիշատակում է, որ այսպես է սկսվել Արևելից աշխարհի լուսավորությունը: Եղիշե Երանելու ջերմեռանդ քարոզողները ճանապարհ են հարթել նոր հավատի լայն տարածման համար:

Արցախ աշխարհում լուսավորչական շարժումը լայն թափ է ստանում հատկապես Գրիգոր Լուսավորչի հայրապետական գործունեության շրջանում:

Ագաթանգեղոսը՝ Գրիգոր Լուսավորչի կենսագիրն ու հայոց հավատի արմատավորման առաջին պատմիչը, «Պատմություն հայոց» աշխատության մեջ հիշատակում է, որ Մեծ Հայքի Հայրապետ ձեռնադրված Գրիգոր Լուսավորչի հայրապետական գործունեության մեջ ևս մեծ տեղ է բռնում Արցախ աշխարհը: Պատմիչը նաև վկայում է, որ հայոց քահանայապետն անձամբ շրջել է Արցախում, ավարտին հասցրել նրա բնակչության քրիստոնեացման անհետաձգելի գործը, ապա նոր հավատի կրակն անշրջելի դարձնելու համար Արցախի կենտրոնական մասում՝ Հաբանդ գավառի Ամարաս ավանում հիմնադրել ու կառուցել է Հայոց երկրի հնագույն վանքերից մեկը:[2] Համահայկական համազգային այս լուսավորչական խանդավառ շարժման մեջ էին ընդգրկված Արցախը և Ուտիքը: Եվ դա՝ հատուկ նպատակով: Լուսավորիչը գիտեր, որ արևելքից ու հյուսիսից այդ նահանգները հարևան են հեթանոսական զանազան աղանդների մոլեռանդ կրողների: Անհրաժեշտ էր ոչ միայն հայկական երկու նահանգներն անդարձ առնել քրիստոնեության գիրկը, այլև հարևան երկրներում տարածել այն, այդ կողմերից գալիք

1. Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., հ.Ա, գլ.Զ, նաև Բ.Ուլուբաբյան, Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 2001, էջ 26-30, Արցախի պատմություն, էջ 23-24:
2. Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Տփխիս, 1909, էջ 437-438:

վտանգները չեզոքացնել: Եվ Հայոց Հայրապետն այդ գործի մեծ կարևորության գիտակցությամբ էլ եկավ Արցախ հայաշխարհ, այստեղ անձամբ գլխավորեց լուսավորության տարածումը: Այն ժամանակ Ամարաս վանքը համարվում էր ոչ միայն Արցախի հոգևոր (եպիսկոպոսանիստ), այլև երկրամասի լուսավորության, մշակութային կարևոր կենտրոն: Ըստ հավաստի աղբյուրների, մինչև մեսրոպյան հայեցի կրթություն տվող դպրոցի բացումն այստեղ շարունակաբար գործել է օտարալեզու՝ հունա-ասորական տիպի դպրոց, որտեղ դասավանդում էին հայ ուսուցիչներ և նրանց ու աշակերտների ուժերով ստեղծվում էին թանկարժեք ձեռագրեր, որոնցից շատերը հասել են մեզ:

Պատմաշրջանը հիմնավոր ուսումնասիրած Փավստոս Բյուզանդը «Պատմություն հայոց» աշխատության մեջ պատմում է, որ Գրիգոր Լուսավորչի գնալուց հետո Արցախի տերերը ներկայացան Տրդատ արքային և խնդրեցին, որ իրենց երկրամասի առաջնորդ ուղարկի Գրիգոր Լուսավորչի ժառանգներից մեկին՝ Գրիգորիսին, որը, չնայած երիտասարդ էր, սակայն հայտնի էր իր իմաստնությամբ և ջերմեռանդ հավատով: Փավստոսը նաև պատմում է, որ իր եռանդուն գործունեության շնորհիվ Գրիգորիս եպիսկոպոսը լուսավորչական որոշ ձեռնարկումներ իրականացրեց: Շատ կարճ ժամանակում Գրիգորիսը կարգավորեց Արցախի ու հարևան Ուտիքի եկեղեցական գործերը. կառուցվեցին ու նորոգվեցին Ամարաս, Ուռեկա (նաև՝ Հոռեկա, այժմյան Մարտակերտի Թալիշ գյուղի մոտակայքում, ուր այժմ էլ պահպանվում է Ուռեկան, հնչում է նաև՝ Հոռեկա), Ջրվշտիկ (հետո կոչվեց Գլխովանք, որովհետև այդտեղ էր պահվում Սուրբ Եղիշեի գլուխը)[3] վանքերը, որոնք ժամանակին՝ մինչև Արցախում մեսրոպյան հայագիր դպրոցի բացումը, լուսավորչական օջախներ էին:

Ավանդույթներից հայտնի է, որ Գրիգորիսից հետո լուսավորչական գործունեությունը շարունակել են Դադո և Խադ անուններով եպիսկոպոսները: Այս երկու եպիսկոպոսներից Դադի անունն է կրում Թարթառի հովտի ամենահին սրբարանը՝ Դադի վանքը (այն վերակառուցվել է 1214թ.), իսկ Խադ եպիսկոպոսի անվամբ կոչված է Խադավանքը (այժմ՝ Խաթրավանք): Բացի այս վարկածից կա ևս մեկը, ըստ որի՝ Դադի վանք անունը գալիս է Քրիստոսի 70 աշակերտներից մեկի անունից՝ Դադո, որը Ս.Թադեոս առաքյալի ընկերն էր և նրա հրամանով եկավ քարոզելու:

Արցախ-Ուտիքյան աշխարհում լուսավորչական շարժումը ծավալվել է հատկապես V դարի վերջին՝ Վաչագան Բարեպաշտի ժամանակաշրջանում, հոգևոր-մշակութային գործիչներ Ամպակի (Վաչագան արքայի ուսուցիչ, Ամարաս վանքի դպրապետը), Շուփազիշ եպիսկոպոսի, ուսուցչապետ Մինասի ջերմեռանդ գործունեության շնորհիվ: Նրանք կրթատներ (կրթական օջախներ) են բացում Ազոխ, Տող (Դող), Մուշկապատ (Մենակապատ), Ամարաս և այլ գյուղերում, միաժամանակ Աղվենի ամառանոց դպրատանը հիմնում են մատենադարան (ձեռագրատուն): Արքայի շրջագայության ժամանակ գյուղերից հավաքում են հին գրքեր, ձեռագրեր և պահում ձեռագրատանը: Մատենագիրը խանդավառությամբ նկարագրում է վերոնշյալ հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեությունը: «Պատմություն Աղվանից» աշխատության մեջ Կաղականտվացին գրում է, որ Աղվենի ժողովի ընդունած 18-րդ կանոնի համաձայն՝ հոգևոր-մշակութային գործիչները յուրաքանչյուր եկեղեցու կից բացում են դպրոցներ (կրթատ-

3. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 271:

ներ), երեխաներին սովորեցնում գրել, կարդալ, հաշվել: Ուսուցչապետ Ամպակը ոչ միայն դպրություն էր ուսուցանում, այլև հավաքում էր հին ձեռագիր մատյաններ, գրի առնում Արցախի գյուղերում տարածված առակները, ասացվածքները, հանելուկները, օրհնանքներն ու ժողովրդական հեքիաթները: Սրանք ժամանակին ժողովրդական մանկավարժության աղբյուր են եղել, որով և դաստիարակել են երեխաներին: Այդ գործիչների լուսավորչական ձեռնարկումներից մեկն էլ այն է, որ արքայի հրամանով բնակչությանը գրել-կարդալ էին սովորեցնում: Մատենագիրը վկայում է, որ Վաչագան թագավորը Աղվենի ժողովում (որին մասնակցում էին Արցախ-Ուտիքյան հայաշխարհի տերերը, զորապետները, հոգևոր գործիչները), պահանջում է, որպեսզի, սահմանված կանոնների համաձայն, դպրոցների և գրագետ մարդկանց թիվն ավելանա Հայոց Արևելանց կողմանց գավառներում:[4]

Ինչպես տեսանք, V դարում Արցախյան հայաշխարհը, ունենալով սեփական գիր, դպրոց ու գրականություն, Վաչագան Բարեպաշտի ժամանակաշրջանում թևակոխում է ինքնուրույն, մայրենի լեզվով մշակույթ զարգացնելու շրջան: Այս ժամանակաշրջանում բուռն վերելք ապրեց լուսավորչական գործը:

Հետագայում՝ VII դարում, Հայոց Աղվանքի իշխանաց իշխանն ու սպարապետ Ջիվանշիրը (գահակալել է 642-683թթ.), այցելելով կենտրոնական Հայաստան, բանակցություններ վարեց հայոց սպարապետ Գրիգոր Մամիկոնյանի և Անաստաս Ա.Ակուռեցի կաթողիկոսի հետ, որպեսզի ոչ միայն միասնաբար դիմագրավեն արտաքին վտանգները, այլև վերջիններս հովանավորեն իր երկրամասում ազգային մշակույթի նոր վերելքը: Այդ ժամանակաշրջանում հայոց կաթողիկոսի և Աղվանի Վիրո կաթողիկոսի (նստավայրը Պարտավն էր), երկրամասի հոգևոր գործիչների եռանդուն գործունեության շնորհիվ եկեղեցաշինությունն ու դպրոցաշինությունը լայն թափ են ստանում: Ջիվանշիր իշխանն անշեղորեն կիրառեց հայոց լուսավորչական հավատի սկզբունքները և պայքարում էր ամեն մի ոտնձգության դեմ: Նրա խորհրդով է, որ Մովսես Կաղանկատվացին գրեց այս երկրամասի («Պատմություն Աղվանից աշխարհի») հավաքական պատմությունը՝ ի մի հավաքելով նախորդ ժամանակագիրների ու հիշատակագիրների գրառումները:

Նկատի ունենալով, որ մեր ուսումնասիրության պատմաշրջանի հետ է կապված Կաղանկատվացու լուսավորչական, մշակութային գործունեությունը, ուստի նպատակահարմար գտանք համառոտակի տեղեկություններ տալ այդ մասին:

Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Վ. Առաքելյանը («Պատմություն Աղվանից աշխարհի» գրքի թարգմանիչ, Երևան, 1969), «Մովսես Կաղանկատվացի» հոդվածում[5] մատնանշում է, որ Մ. Կաղանկատվացին համարվում է Արցախ-Ուտիքյան հայաշխարհի ականավոր մշակութային գործիչը: Նա ապրել և ստեղծագործել է VII դարում և ծնվել է Հայոց Արևելից կողմանց Ուտի գավառի Կաղանկատույք գյուղում: Ա. Մնացականյանը «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը»[6] աշխատության մեջ նշում է, որ Կաղանկատվացին ոչ միայն շրջագայել է գավառները և քաղաքական դեպքերն ու անցքերը նկարագրել ականատեսի ստույգությամբ ու ճշտությամբ: Մատենադարանի որոշ ձեռագրեր վկայում են, որ նա նաև դպրապետ էր կրթատներում (դպրոցներում), երեխաներին սովորեցնում էր գրել, կարդալ: Մանուկ Աբեղյանը «Հայոց հին գրականության պատմու-

4. Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 222-231, նաև Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 30-34:
5. Տե՛ս Հայ մշակույթի գործիչներ, Երևան, 1976, էջ 133-141:
6. Ա.Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երևան, 1966, էջ 84-86:

թյուն»[7] աշխատության մեջ փաստում է, որ VII դարում ոչ միայն Հայաստանում, այլև Հայոց Արևելից կողմանց գավառներում՝ Արցախ-Ուտիք աշխարհում, հայ մշակույթը զարթոնք ու ծաղկում ապրեց և այդ ժամանակաշրջանի մշակութային մեծ գործիչ էր Մովսես Կաղանկատվացին:

Մովսես Կաղանկատվացին իր աշխարհայեցողությամբ, նպատակներով ու ձգտումներով Խորենացու և մյուս ականավոր հայ պատմիչների (Եղիշե, Բյուզանդ, Ագաթանգեղոս) աշակերտն էր, նրանց հայրենասիրական ու մարդասիրական գործի շարունակողը:

Արցախ աշխարհում մշակութային կյանքը վերելք է ունենում IX դարի վերջին, հատկապես՝ X դարի սկզբին: Դա Հայոց աշխարհում համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան էր: Բագրատունյաց թագավորության հաստատումից հետո, ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Արցախում, հիմնվում են զգալի թվով ուսումնակրթական օջախներ: Բավականին կենսահաստատ էին նաև հոգևոր կրթության օջախները: Քննարկվող ժամանակաշրջանում մտավոր կրթական զարթոնքի օջախ է հանդիսանում Ամարասը, Դադի, Գտչա, Ս.Հակոբի վանքերը: Հոգևոր մշակութային գործիչների գլխավոր խնդիրներից մեկը դառնում է գրագիտության տարածումը, և նրանք, շրջելով երկրամասի տարբեր վայրեր, բացում են դպրոցներ: «Արարատ» ամսագրում[8] տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին X դարի 2-րդ կեսին (949թ.) Արցախ գալով, լուսավորչական մի շարք ձեռնարկումներ է իրականացնում: Նա իջևանում է Գրիգոր մեծ իշխանի տիրույթում՝ ժողովի հավաքում Ուտիքի և Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերին, հորդորում նրանց վերակառուցել եկեղեցիները, ընդլայնել կրթական օջախների ցանցը: Նա նշանակում է նաև դպրապետ, ուսուցիչներ: Կաթողիկոսի թղթում տեղ են գտել Արցախի նշանավոր իշխանապետերի, հոգևոր գործիչների անունները. «Թագաւորն որ կոչ էր իշխանակ որդի տեառն Ատրր Ներսեհի և Սենեքերիմ Աղունից իշխանանց, Սենեքերիմ որդի Գրիգորի Խաչան Իշխանի … Վաչագան Գոռոզաց իշխան, Գուրգեն, Արևելաց իշխան»:[9] Կաթողիկոսի թղթում նշվում է Արցախում իրագործված լուսավորչական գործունեության մասին: Այդ մասին Ստ.Օրբելյանը նույնպես հիշատակում է, որ Անանիա Մոկացի կաթողիկոսին ներքին Խաչենի տեր Գրիգորն ընդունել է իր մոտ և որ նրա իջևանը եղել է Գանձասարի վանքը՝ Արդախ կոչված վայրում:[10] Պատմիչը նաև վկայում է, որ կաթողիկոսը ժողովի հավաքած Արցախի իշխանավորներին, հոգևոր գործիչներին հորդորում է վանքերին և եկեղեցիներին կից բացել կրթօջախներ, ուշադրություն դարձնել նաև ցածր խավի մարդկանց երեխաների դաստիարակությանն ու կրթությանը՝ նրանց ընդգրկելով կրթօջախներում: Բացի այդ, կաթողիկոսը հանձնարարում է հավաքել Արցախի վանքերի և եկեղեցիների ձեռագիր մատյանները և կենտրոնացնել Ամարասի կամ Դադի վանքի մատենադարանում:[11] Այն ժամանակ Արցախի գավառներում կրթալուսավորչական շարժմանը մեծ չափով նպաստում էին վանքերն ու եկեղեցիները, որոնք հոգևոր, մշակութային արժեքների պահպանման հուսալի ամրոցներ էին:

Պատմագիր Մովսես Կաղանկատվացու հավաստմամբ, X-XI դարերում Արցախում մշակութային ու լուսավորչական գործունեություն է ծավալում Արցախ-Ու-

7. Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 413:
8. «Արարատ», 1897, մարտ, էջ 94:
9. «Արարատ», 1897, մարտ, էջ 95-96:
10. Ստ. Օրբելյան, ժամանակագրություն, Երևան, 1942, էջ 279:
11. Նույն տեղում:

տիքյան հայաշխարհի կաթողիկոս Մովսեսը, որին նաև կոչում են դպրապետ: Ներսես Ակինյանը «Մովսես Դասխուրանցի (կամ՝ Կաղանկատվացի)» աշխատության մեջ գրում է, որ «այս Մովսես նախ եղած է Փառիսոսի վանքին (մատենագրի վկայությամբ Արցախի այդ գավառը X-XI դարերում եղել է հայկական փոքրիկ քաղաքական, լուսավորչական մի կենտրոն և ունեցել է իր առանձին թագավորները.- Ա.Ա, Գ.Հ.) վանական և ապա արժանացած կաթողիկոսության աթոռի վրա բազմել, ուստի վաստակավոր մին էր, շատ տեր ու միջեն ընտրյալ մը»: Փառիսոսի թագավորության շրջանի գրական, լուսավորչական կյանքի բարձր մակարդակը լավ պատկերացնելու համար հիշատակենք Հովհաննես Սարկավագ Իմաստասերի արգասավոր գործունեությունը[12] (մանկության օրերին բախտ ունեցավ կրթվելու և դաստարակվելու Մովսես Դպրապետի մոտ Փառիսոս վանքում):[13] Կենսագրի տեղեկություններից հայտնի է, որ նա Փառիսոս գավառում բացում է մի շարք կրթական օջախներ, հավաքում է հին ձեռագիր մատյանները, պահում Փառիսոսի վանքում: Հետագայում, ավարտելով Հաղպատի վանքի բարձր տիպի դպրոցը, որպես ուսուցչապետ աշխատում է Անիի իմաստասիրական բարձր տիպի դպրոցում *(Հովհաննես Սարկավագի լուսավորչական գործունեությունը մանրամասն կներկայացվի հաջորդ բաժնում):*

Պատմագիտական աղբյուրների համաձայն՝ XII դարի վերջին՝ XIII դարի սկզբներին Արցախ աշխարհում մշակութային, շինարարական, լուսավորչական գործը վերելք է ապրում Գանձասարի Հասան Ջալալյանի (Վախթանգ Տանգիկի ավագ որդին) իշխանության ժամանակաշրջանում: Ժողովրդական լուսավորությունը, եկեղեցաշինության և հատկապես դպրոցական գործը դառնում են Խաչենի հոգևոր-մշակութային գործիչների կենսական խնդիրներից մեկը: Հասան Ջալալյանի կենսագրության նշանակալից մասն է կազմում մշակութային, լուսավորչական և եկեղեցաշինարարական գործունեությունը՝ ծավալված Խաչեն գավառում և Արևելյան Հայաստանում: Հասան Ջալալյանի անմիջական նախաձեռնությամբ սկսվում է Գանձասարի նորակառույց վանքի շինարարությունը (1216-1238թթ.):[14] Նորակառույցին վիճակված էր բազմապատկելու նախկին հոգևոր կենտրոնի փառքը, դառնալու ոչ միայն Խաչենի իշխանության մշակութային կյանքի խոշոր կաթողիկոսանիստը, այլև քաղաքական, ազատագրական շարժումների կենտրոն:

Դարեր շարունակ Հասան Ջալալյան տոհմի հոգևոր գործիչների հոգածության շնորհիվ Գանձասարն Արցախ աշխարհի հոգևոր, միաժամանակ նաև մշակութային, լուսավորչական, ազատագրական շարժումների կենտրոնի համբավ է ունեցել: Այստեղ՝ հոգևոր գործիչների եռանդուն գործունեության շնորհիվ, ծավալվել է մշակութային, շինարարական լայն գործունեություն, վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, ստեղծվել հարուստ ձեռագրատուն, դպրանոց, բարձրարժեք ձեռագրեր, կրթվել են հոգևոր գործիչներ, որոնք իրենց նպաստն են բերել Արցախի, նաև՝ հայոց լուսավորչական մյուս թեմերի մտավոր և մշակութային կյանքի զարգացմանը: ***(Գանձասարի հոգևոր-մշակութային գործիչների՝ Սարգիս Հասան Ջալալյանի և Բաղդասար Միտրոպոլիտի լուսավորչական գործունեության մասին մանրամասն՝ հաջորդ գլխում):***

---

12. Ա.Աբրահամյան, Հովհաննես Սարկավագ Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956:
13. Ս.Ջալալյան, Ճանապարհորդութիւն, Բ., էջ 216:
14. Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 176-177, Է. Դանիելյան, Գանձասարի պատմութիւն, Երևան, 2005, Գանձասարի վանք, Եր., 2009:

Բ.Ուլուբաբյանը «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» աշխատության մեջ, բնութագրելով երկրամասի հոգևոր գործիչների լուսավորչական ձեռնարկումները, նշում է, որ XIII դարում Արցախի Վարանդա և Դիզակ գավառներում լուսավորչական լայն գործունեություն են ծավալել Ամարասի վանքի եպիսկոպոսներ Սարգիսն ու Վրթանեսը (1241-1246թթ.):[15] Այս հոգևոր գործիչների նախաձեռնությամբ վերակառուցվել է հարավային Արցախի եպիսկոպոսանիստ վանքի (Գտչավանքի) գլխավոր եկեղեցին: Նրանք Դիզակի և Վարանդա գավառի վանքերին ու եկեղեցիներին կից բացել են դպրոցներ, հավաքել հին ձեռագրեր ու մատյաններ և Ամարասի վանքում հիմնել ձեռագրատուն (մատենադարան): Պատմաշրջանում Արցախի մշակութային բարձր մակարդակը, որպես անժխտելի փաստ, վկայում է արցախցու սերն ու պատկառանքը կրթությոան ու դպրոցի նկատմամբ:

Հետագա դարերում (XIV-XVIII) Արցախի քաղաքական կյանքի ծանր կացությունը մեծապես խոչընդոտել է երկրի տնտեսության, շինարարության, մշակույթի, դպրության առաջընթացին: Նման քաղաքական աննպաստ հանգամանքներում շատ կրթօջախներ չէին կարող գոյատևել: Միայն Գանձասարի, Գտչա, Դադի, Ս.Հակոբի, Երից Մանկաց վանքերում գործող մշակութային օջախները, դպրոցները, շնորհիվ աշխարհագրական նպաստավոր պայմանների և այդ վայրերի դիմադրող ուժերի, կարողացան պահպանել իրենց կենսունակությունը և դիմակայել օտար զավթիչների կործանիչ աղետին:

Արցախում կրթամշակութային գործի և հասարակական մտքի հետագա զարգացումը լուրջ վտանգի էր ենթակա հատկապես XVI-XVIII դարերում: Անշուշտ, պատմաշրջանում ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, թուրք-պարսկական տևական պատերազմների հետևանքով է, որ այդ պայմաններում երկրամասում կրթամշակութային գործը չէր կարող կայուն զարգացում ապրել:

Բ.Ուլուբաբյանն «Արցախի պատմություն» աշխատության մեջ, բնութագրելով այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունները, գտնում է, որ XVII դարում Արցախում՝ Խամսայի մելիքությունների[16] ժամանակներում (Խամսա՝ բառացի հնգյակ), Գյուլիստանում, Ջրաբերդում, Խաչենում, Վարանդայում, Դիզակում մելիքներն ինքնապաշտպանական նպատակներով ոչ միայն ամրոցներ, բերդեր էին կառուցում, այլև իրենց ուշադրության կենտրոնում էին պահում երկրի մշակույթն ու լուսավորությունը զարգացնելու, կրթական օջախներ հիմնելու գործը:

Խամսայի մելիքությունների ժամանակաշրջանում, համախմբելով Արցախի գավառների հոգևոր-մշակութային գործիչներին, Գանձասարի կաթողիկոս Պետրոս Խանքենդցին (1653-1675թթ.) մի շարք լուսավորչական ձեռնարկումներ է իրականացրել: Նրա՝ մոտ երկու տասնամյա գահակալության շրջանում երկրամասում սկսվեց հոգևոր-մշակութային մեծ վերելք, որի մասին հիշատակագիրները հիացմունքով են խոսում: Այսպես, ականավոր հոգևոր-մշակութային գործիչը քաղաքական իրադարձությունների այդ դժվար պայմաններում վերանորոգեց Ամարասի, Դադի, Գտչա, Սուրբ Հակոբ վանքերը և մի շարք եկեղեցիներ, հիմնեց դպրոցներ, զարկ տվեց ձեռագիր մատյանների ընդօրինակման գործին, բարեկարգեց նաև Խոխանաբերդի, Դադի, Խոթավանքի համալիրներին կից գործող

15. Բ.Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 2001, էջ 180-182:
16. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, հ.10, էջ 122:

դպրատները: Պետրոս կաթողիկոսը քահանաներին, սարկավագներին հորդորեց հավաքել հին ձեռագրերը, մատյանները և Գանձասարի, Դադի վանքում ստեղծել մատենադարան:[17] Հետագա տասնամյակներում Արցախ աշխարհում մշակույթը, դպրոցն ու լուսավորությունը շոշափելի արդյունք ունեցան հոգևոր-մշակութային գործիչ Եսայի Հասան-Ջալալյանի բեղմնավոր գործունեության շրջանում:

Եսայի Հասան-Ջալալյանը (ծննդ.թ. անհայտ, 1701 թվականից Գանձասարի կաթողիկոս) Արցախ աշխարհի մելիքական ուժերի կազմակերպիչն ու առաջնորդը, ինչպես նաև՝ հայ ազգային-ազատագրական պայքարի ոգեշնչողը և ղեկավարներից ամենակարկառուն գործիչը, Գանձասարի կաթողիկոսական աթոռ բարձրացավ հայ ժողովրդի համար ստեղծված ամենածանր պայմաններում: Իսրայել Օրու մահից հետո նա գլխավորել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը և նպաստել հայրենասիրական գաղափարների տարածմանը:[18] Նա՝ հոգևոր-մշակութային, հասարակական, քաղաքական և ռազմական գործիչը, որը կրծքին կաթողիկոսական խաչ ուներ կախած, կողքին՝ զորավարական թուր, ձեռքից վայր չէր դնում պատմիչի գրիչը, թուրք նվաճողների դեմ մղած թեժ մարտերի կարճ դադարներին անպաճույն լեզվով, քաջիմացությամբ ու արդար խոսքով գալոց սերունդներին էր հանձնում կրակոտ օրերի շունչը, հայրենապաշտպան զորքերի սխրագործությունը, հայոց ռուսական կողմնորոշման, ռուսական արքունիքի հետ կապված հույսի ու ակնկալության վառ արտահայտությունները:[19] Տպագրված մեզ է հասել Եսայի կաթողիկոսի պատմության մի հատված (Եսայի կաթողիկոս Ջալալյանի «Պատմութիւն կամ հիշատակ ինչ-ինչ անձից դիպելուց աշխարհին Աղուանից» գիրքը տպագրվել է Շուշիի տպարանում, 1839թ., Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանի նախաձեռնությամբ): Մատենադարանի գրադարանում գրքի վրա կարդում ենք. «Հրամայեցեք մուծանել ի տպ. սեփական ծախյոք մերովք վիճակավոր Առաջնորդ Ղարաբաղու և այլոց՝ Արքեպիսկոպոս և Ասպետ միտրոպոլիտ Բաղդասար Հասան Ջալալյանց: Ի 7 հունիսի, 1839 ամիս»: Եսայու գրած առաջաբանում նշվում է, որ ինքը մտադիր է տալ ներկա օրերի պատմությունը՝ ազատամարտերի ճշմարիտ պատմությունը, XVII-XVIII դարերի նշանավոր մարդկանց գործունեությունը, ռուս-հայկական և հարևան ժողովուրդների համագործակցությունը: Լինելով ուսումնական գործի ջատագով, հոգևոր մեծ գործիչն ու լուսավորիչը դպրոցներ է բացում Արցախի վանքերին, եկեղեցիներին կից, նշանակում դպրապետեր: Նրա մշակութային, լուսավորչական ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ վերակառուցեց եկեղեցիներն ու վանքերը և իր սեփական միջոցներն էր ծախսում այն ամեն բարենորոգումների համար, որոնք հարկավոր էին, որպեսզի Գանձասարը՝ Հասան Ջալալյանի հռչակավոր վանքը, դառնա ոչ միայն Արցախի, այլև հայության հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը: Եսայի կաթողիկոսի աշխատությունների նպատակը վանքապատկան կալվածքների վերաբերյալ այն չէր, որ դրանցով ապահովեր վանականների և վանքերի գոյությունը, այլ գլխավորապես այն, որ դրանք լինեին եկամուտների մշտական աղբյուր՝ Արցախի գավառներում կրթական օջախներ, մշակութա-լուսավորական հիմնարկներ հիմնելու համար: Հոգևոր-մշակութային մեծ գործիչը Գանձասարի վանքի դպրատանը կից ստեղծեց հարուստ գրադարան (մատենադարան), այնտեղ հավաքելով նաև Արցախի վանքերում, եկեղեցիներ-

17. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն, էջ 134-138:
18. Է.Դանիելյան, նշվ. աշխ., էջ 216-217:
19. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն, էջ 136:

ռում գտնված նշանավոր գրչագիր մատյանները, ձեռագրերը, որոնք ըստ էության գիտական-ուսումնական էին՝ նվիրված հայ ազատագրական շարժումների (տիկին Սաթենիկի մատյանը նվիրված էր Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի ազատագրական պայքարի պատմությանը), հայագիտության, կրոնագիտության, մշակույթի ճյուղերի պատմությանը: Մեծ է նաև Եսայի կաթողիկոսի ջանքերն Արցախի արվեստի ճյուղերի (ճարտարապետության, քանդակագործության, գեղանկարչության և այլն) զարգացման ասպարեզում:

Հետագա ժամանակներում Արցախի թեմի առաջնորդները (Սարգիս Հասան Ջալալյան, Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյան և ուրիշներ) շարունակեցին Գանձասարի կաթողիկոսի ազգանվեր մշակութային, լուսավորչական, շինարարական բարենորոգումները *(այդ մասին մանրամասն՝ աշխատության հաջորդ գլխում):*

4. Վաչագան Բարեպաշտի լուսավորչական գործունեությունը

V դարի երկրորդ կեսին՝ Վահանանց ապստամբությունից հետո (480-ական թվականների սկզբին), Արևելյան Հայաստանում արտոնություններն ու ազատությունը տարբեր դրսևորումներ ունեցան նախկին միասնական թագավորության մեջ գտնված երկրի տարբեր կողմերում:

Բ. Ուլուբաբյանը, «Արցախի պատմություն» աշխատության մեջ բնութագրելով այդ ժամանակաշրջանը («Արցախ Առանշահիկ թագավորության ստեղծումը»), գրում է, որ կենտրոնական Հայաստանում տեր դարձան Մամիկոնյանց ու Բագրատունյանց նախարարական տների իշխանները և ջանացին օգնել երկրի ինքնուրույն զարգացմանը, քանի որ պայմանագրի համաձայն (Պարսից արքունիքը հատուկ պայմանագրով բավական արտոնություններ շնորհեց Հայաստանին, որոշակի ազատություն տալով նաև նախարարներին ու եկեղեցուն), Պարսից արքունիքն այդ տոհմերի ներկայացուցիչներին էր վստահում իր կուսակալությունը: Իսկ Աղվանից մարզպետության ներսում, Արցախի տեր Առանշահիկները, օգտվելով համեմատական ազատությունից, ձեռք բերեցին քաղաքական ու մշակութային անկախություն և ստեղծեցին մի վարչություն, որը պատմական աղբյուրներում հայտնի է թագավորություն անունով:

Արցախ-Ուտիքյան թագավորության հիմնադիրն Առանշահիկ Վաչագանն էր, որը գահ բարձրացավ իր երկրի պատմության ամենաճակատագրական անցումներից մեկում: Մատենագիրը՝ Կաղանկատվացին, Վաչագանին ներկայացնում է ամենավսեմ բարեմասնություններով. «քաջությամբ իմաստուն և վարժ խոհականությամբ, բարձր և վայելուչ հասակ»:[1]

Հայրենի երկրամասի համար այդ բախտորոշ պահին գահ բարձրանալով, Վաչագան թագավորը հարազատ է մնում հայրենակիցների խաթարված քրիստոնեական լուսավորչական հավատքին, հրաժարվում պարսից հավատքից, վերստին ընդունում իր պապերի լուսավորչական քրիստոնեությունը և դառնում նրա պաշտպանն ու եռանդուն տարածողը, իր երկրի նվիրյալ լուսավորիչն ու շինարարը:

Պատմաշրջանին վերաբերող ավելի արժանահավատ ներքոբերյալ և այլ աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Վաչագան Բարեպաշտը V դարի վերջին Արցախ-Ուտիքյան հայաշխարհի տիրակալն էր, որը, օգտագործելով ժամանակի քաղաքական կյանքի նպաստավոր պայմանները, իր երկրամասում ստեղծել է ինքնուրույն իշխանություն, ինչպես նաև նրա հետագա գոյատևման պայմաններ: Բ.Ուլուբաբյանը «Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության» աշխատության մեջ, ուշադիր քննություն առնելով Վաչագան Բարեպաշտի կյանքը և գործունեությունը, իրավացիորեն նշում է, որ Վաչագանի ծառայությունը մշակութային, լուսավորչական և հոգևոր բնագավառներում նրան բարձրացրել, մեր ազգային կյանքում դարձրել է բացառիկ երևույթներից մեկը:[2] Մի խոսքով, ժամանակը հրամայական պահանջներ էր դնում և պետք է ծնվեր այդ պահանջների կատարողը: Վաչագան թագավորը դարձավ ժամանակի պահանջով ասպարեզ եկած այն խոշոր գործիչը, որը վերականգնեց ազգային կորսված արժեքները, խթանեց մշակութային աննախընթաց զարգացումը:

---

1. Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 26,65, նաև Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 29-30, Հ.Խաչատրյան, «Վաչագան», Երևան, 1998, էջ 76-86:
2. Բ.Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության (5-7-րդ դդ), Երևան, 1991, էջ 156-157:

Մատենագիրը խանդավառությամբ է պատմում Վաչագան թագավորի եռանդուն գործունեության մասին: Սկզբում նա հզորացրեց երկրի պաշտպանությունը, կառուցեց բերդեր, բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր, ըստ ժամանակագրի վկայության՝ տարվա օրերի թվով, այսինքն՝ 365 կամ 366 («ըստ թռլոց ալորց տարլոյն եկեղեցիս միայն Բարեպաշտն Վաչագան շինեաց յԱրևելս»):[3] Առաքինի ու բարեշնորհ մարդկանց նշանակեց հոգևոր օջախներում. «Եվ կարգեալ տեղեաց եպիսկոպոս և երիցունս մեծարեալ էին յամս թագավորութեան Բարեպաշտ արքային Վաչականայ»:[4] Քրիստոնեական հավատի մի բուռ վերելք է ստեղծվում այդ եկեղեցիներում ու վանքերում:

Մատենագիրը նկարագրում է նաև Վաչագան թագավորի լուսավորչական արգասավոր գործունեությունը, նրա հայրական հոգատարությունը դպրոցական երեխաների նկատմամբ: Եվ մեր առաջ հառնում է Վաչագան Բարեպաշտ թագավորը՝ հայրենասիրական զգացումով նվիրված իր երկրի հասունացող սերնդի կրթության ու դաստիարակության, ինչպես նաև ժողովրդի լուսավորության վեհ գործին:

Կրթական և լուսավորչական գործիչ Վաչագան Բարեպաշտ թագավորի հոգածության կենտրոնում էին ոչ միայն երկրի ժողովրդի կեցության խաթարված վիճակի բարելավման, այլև լուսավորչական օջախների ցանցի ընդլայնման խնդիրները: Մատենագիրը վկայում է, որ Վաչագան արքան այնպես էր սրտին մոտ պահում դպրոցն ու երեխաների դաստիարակությունը, որ երբ որևէ գյուղ էր գնում (նույնիսկ սրբերի հիշատակը հարգելու համար), անպայման մտնում էր դպրատուն, իր շուրջն էր հավաքում մանկանց և, մեկի ձեռքը գիրք տալով, մյուսին պնակիտ,[5] առաջարկում է միասին միաբան ու բարձրաձայն կարդալ: Երեխաներն իրենց անարատ շուրթերով հեգում են ոսկեղենիկ հայերենը և նրանց ինքնավստահ ու բարձրաձայն ընթերցանությունն արձագանք էր տալիս Արցախ աշխարհի բոլոր անկյուններում, հնավանդ լեռնաստանը լցնելով արդեն գրի ու դպրության փոխված մայրենի խոսքի հզոր ելևէջներով: Մատենագիրը միաժամանակ պատմում է, որ Վաչագան Բարեպաշտը երեխաների առաջադիմությամբ ավելի էր ուրախանում, քան եթե մեծագույն հարստություն գտներ:[6]

Հայոց Արևելից կողմանց կամ Աղվանից եկեղեցու պատմության այս ժամանակահատվածին վերաբերող պատմագիտական աղբյուրները վկայում են, որ Վաչագան Բարեպաշտը տերության մեջ իր ասպախմբով շրջագայությունն սկսում է Դրմբոն (Դրմփոն-Դրմփոց) գյուղից: Նրան ուղեկցում էին հոգևոր գործիչներ՝ Շուփհազիշայ Եպիսկոպոսը (դպրապետ), քահան-ուսուցիչներ Ամպակը (Ամարաս վանքից, որը եղել է արքայի ուսուցիչը), Մինասը (Ազոխից), որոնք ժամանակին սովորել են Մաշտոցի հիմնադրած դպրոցում: Արքան իր ասպախմբով լինում է Դրախտիկ, Ազոխ, Տող (Դող), Մենակապատ (Մուշկապատ), Հացի, Ամարաս գյուղերում, Կապաղակ (Աղվանից թագավորության մայրաքաղաք), Մեծ Կվենք կամ Կվանք (Մեծ Կողմանք), Մեծ Իրանք (Խաչենի գավառ), Ուտիքի Գարդման և Արցախ աշխարհի հայաշատ այլ վայրերում:[7] Լուսավորչական-կրթական գործի

3. Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 90:
4. Նույն տեղում, էջ 60:
5. Հր.Աճառյանը «Պնակիտ», նաև «պնակ» բացատրում է «գիր գրելու կամ նկարելու տախտակ», «այբուբեն սովորելու տախտակ», (տես՝ նրա Հայերեն արմատական բառարան, հ.Ե, Երևան, 1931, էջ 1091):
6. Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 26-27:
7. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 110:

զարգացման միտումով Բարեպաշտը դպրոցներ է բացում երկրամասի գավառներում, նշանակում ուսուցիչներ և պետական գանձարանից ռոճիկ: Վաչագանի ժամանակագիրը պատմում է, որ Վաչագան թագավորի երկրում, եկեղեցի-դպրատներից բացի, գոյություն ունեին գյուղական դպրոցներ,[8] որոնց ուսուցիչները վարձատրվում էին: Բարեպաշտն իր շրջագայությունն ավարտում է Աղվենի իր ամառանոցում (ըստ Լեոի, գտնվում է Մռավ սարի հարավային լանջին՝ Պարտավի դիմաց), և շրջագայության արդյունքներն ընդհանրացնում Աղվենի ժողովում:[9]

Աղվենի ժողովի ընդունած կանոնները, ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի հետաքրքրական վավերագրությունը լինելու հետ միասին, արժեքավոր են նաև նրանով, որ արտացոլում են Վաչագան թագավորի ծավալած կրթական գործի մի շարք բնորոշ կողմեր: Օրինակ ԺՁ (16-րդ) կանոնից իմանում ենք, որ եկեղեցիները ժամանակին հանդիսացել են նաև դպրատներ և երեցներն ունեցել են աշակերտներ: Իսկ եթե նկատի ունենանք մատենագրի այն տեղեկությունը, ըստ որի՝ Վաչագան թագավորը Հայոց Արևելից կողմանց գավառներում կառուցել էր տարվա օրերի թվով եկեղեցիներ ու վանքեր, ապա, վերջիններս դպրատներ կամ կրթական օջախներ դարձնելով, կարելի է պատկերացնել, թե երկրում լուսավորչական ինչպիսի կյանք էր եռում: Համաձայն ժողովի 18-րդ կանոնի, «Հայոց Արևելից կողմանց տերության առաջին օրենքն այն պետք է լինի, որ բոլոր հայաշատ վայրերում բացեն կրթատներ (դպրոցներ), որ բոլոր մարդիկ սովորեն հայերեն գրելն ու կարդալը: Դա տերության ամենամեծ ակունքն է»:[10] Հայկ Խաչատրյանը «Վաչագան» վեպում վկայում է այն փաստը, որ արքայի շրջագայության ժամանակ գյուղերի բնիկ հայերը նրան նվիրում են ոսկյա և արծաթյա կազմով հին գրքեր:[11]

Վաչագան Բարեպաշտը երկրորդ անգամ շրջագայում է Արցախ-Ուտիքյան նահանգներն ու գավառները, ստուգում Աղվենի ժողովի կանոնների իրագործումը, նույնիսկ խստիվ պատժում հատկապես նրանց, ովքեր չեն հետաքրքրվել երկրի մշակութային կյանքով, դպրոց-կրթատուն չեն բացել:

Հետաքրքրության տեսանկյունով և այսօրվա ուսուցչի համար, որպես ուսանելի օրինակ, վկայակոչենք Վաչագան Բարեպաշտի լուսավորչական ձեռնարկումներից մի ուշագրավ փորձ:

Ըստ մատենագիտական աղբյուրների տվյալների՝ Վաչագան արքան մի քանի անգամ այցելում է կրթատներ (դպրոցներ) և, իր շուրջը հավաքելով աշակերտներին, հորինում մի հետաքրքրական դասաձև, որ կիրառվում էր միայն իր Աղվենի ամառանոցի կրթատանը: Աշակերտների միտքն ամենից շատ լարվում էր այդ դասի ժամանակ: Արքան ուսուցչապետ Ամպակի հետ երեխաներին բաժանում էր երկու խմբի, կանգնեցնում նրանց դեմ դիմաց և առաջադրում մի շարք հարցեր. «Ō տառով ինչ բառեր գիտեք, որոնք կան կամ կարող են լինել մեր շրջապատում,- հարցնում էր թագավորը,- յուրաքանչյուրը մի բառ պիտի ասի, իսկ դիմացինը պարտավոր էր այդ բառով որևէ խոսք ասել կամ նախադասություն կազմել (ինչպես այսօր նախապատրաստական դասարանում կամ առաջին դասարանում):

Եվ դաս-մրցությունն սկսվում է:

- Ōալապատիկ:

8. Կաղանկատվացի, գիրք առաջին, գլ. ՀԷ, իթ.
9. Լեո, նշվ.աշխ., էջ 156:
10. Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 162-163:
11. Հ.Խաչատրյան, Վաչագան (պատմավեպ), Երևան, 1998, էջ 101, 223, 237:

- Ես ծալապատիկ նստում եմ և նոր ձեռքս տանում գդալին:
- Ծաղիկ:
- Մեզ մոտ շատ ծաղիկներ են աճում և հոտավետ դարձնում շրջապատը:
- Ծաղկանոց:

Եթե առաջին խմբի ասածը կամ մյուս խմբի պատասխանը դուր չէր գալիս Վաչագան Բարեպաշտին, ապա նա ընդհատում էր երեխաներին և պարտադրում, որ նրանք ճշտեն իրենց ասածները: Վերջում արքան մոտենում էր եռոտանու վրա դրված Աստվածաշնչին, բացում հաստափոր գիրքը և սկսում կարդալ այս կամ այն հատվածը: Աշակերտները ձայնակցում էին նրան: Ամեն անգամ արքայի գալուստը կրթատուն դառնում էր կրթատան աշակերտների քննություն:[12] Հենց այդ ժամանակ էլ ի հայտ էին գալիս շնորհալիները՝ արտասովոր հիշողության տեր և ճարտար ձեռք ունեցող երեխաները, որոնց արքան գովաբանում էր:

Մ.Կաղանկատվացու աշխատությունից նաև տեղեկանում ենք, որ Վաչագան Բարեպաշտի այցելությունն Արցախ-Ուտիքյան աշխարհի գյուղերի (Ամարաս, Ազոխ, Հացիկ, Դրմբոն, Դրախտիկ, Քարվեն, Կապաղակ, Ուտիք, Կաղանկատուք[13] և այլն) կրթատներ (դպրոցներ), մի տեսակ հրճվանքով էր լցնում երեխաների սրտերը: Վաչագանի ներկայությամբ ռաբունապետերը հաշվետու էին լինում աշակերտների ոչ միայն առաջադիմության, այլև կարգապահության, կիրառված պատիժների, խրախուսման, մանկավարժական ներգործության այլ մեթոդների (համոզում, դրական օրինակ և այլն) և կրթատան ներքին կյանքին առնչվող այլ հարցերի մասին:

Ուսման առաջադեմ աշակերտներին Վաչագան արքան խրախուսում էր շարքի առջև և պարգևատրում մի պնակիտ կամ մի գիրք (ձեռագիր) և այդ պահերին պարգևատրված աշակերտին թվում էր, թե դարձել է արքա կամ զորավար, նրա հոգին լցվում էր գալիքի հավատով և ապագայի նկատմամբ մեծ երազանքով:

Փաստերի համադրումից գալիս ենք այն եզրակացության, որ Վաչագան Բարեպաշտի ձևակերպած վերոհիշյալ և այլ հարցաշարերում ստեղծված են մանկավարժական խորհուրդներ երեխաներին՝ բարություն, համբերություն, ազնվություն, աշխատասիրություն, ուշիմություն, համեստություն, հարգանք ծնողների, մեծերի նկատմամբ, խելամտություն ուսման նկատմամբ և այլն: Հարկ է նշել, որ սրանք, հանդիսանալով ժողովրդական ստեղծագործության արգասիք, Արցախի ժողովրդի էթնիկական և մանկավարժական իդեալների արտահայտությունը, ինչպես հեքիաթները, առածները, ժամանակին այն նյութն էին, որոնց միջոցով դաստիարակվել է հայ սերունդը:

Պատմագիտական գրականության մեջ հատկապես արժևորվում է Արցախի Աղվենի վայրում Վաչագան Բարեպաշտի և Շուփհազիշայ եպիսկոպոսի կողմից կազմակերպված եկեղեցական ժողովը, որը բախտորոշ նշանակություն ունեցավ V դարի վերջում Արցախի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի, լուսավորության զարգացման համար:

Ժամանակագիրը պատմում է, որ Աղվենի ժողովն ընդունեց 21 կանոն (որից՝ 16, 17, 18-ը վերաբերում են երկրի լուսավորության գործին), «Սահմանադրություն կանոնական»՝ հայերեն հնագույն օրենքների ժողովածու: Աղվենի ժողովի այս կանոններն արժեքավոր են այն տեսակետից, որ բացահայտում են V դարի

12. Մ.Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 26-38,41:
13. Գյուղը, որտեղ ծնվել է Մ. Կաղանկատվացին, Ուտիք գավառներից մեկն է, Թարթառի հովտում՝ Պարտավից դեպի արևմուտք (Կաղանկ. աշխ., էջ 65):

Հայաստանում, Արցախ-Ուտիքյան աշխարհում գոյություն ունեցող եկեղեցիների ու վանքերի տերերի իրավունքները, եկեղեցուն տրվող տուրքերի տեսակները, հոգևորականության իրավունքների սահմանները, լուսավորության տարածումը, կրթական օջախների ցանցի ընդլայնումը և ուսուցիչների ու դպրապետերի նշանակման կարգն ու պայմանները:

Ուշադիր ուսումնասիրելով պատմաշրջանին վերաբերող գրականությունը, նկատում ենք, որ Վաչագան Բարեպաշտն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում նաև այն հարցի վրա, որ յուրաքանչյուր երդիկի տակ պիտի ամենաքիչը հայերեն մի գիրք լինի և հայատառ մատյանը պիտի դառնա յուրաքանչյուր ընտանիքի սրբությունը, նրա բախտավորության հմայիչը: Տառերն են, որ ժողովրդին տանում են դեպի քաղաքակրթության բարձունքները: Իսկ մենք պետք է այնպես անենք, որ այդ տառերը զորացնեն բոլոր հայերին և ոչ թե հայերի մի մասին: Հայերի համար այդպիսի առաքելություն ունեն Մեսրոպ Մաշտոցի արարած տառերը, որոնք իրենց արտաքին տեսքով էլ մեզ նման են, տառապանքից ինչ-որ չափով մեջքները կորացած, բայց տոկուն, զորեղ: «Դպրոցների և գրագետ մարդկանց թիվը պետք է ավելանա Հայոց Արևելից կողմանքում»:[14]

Կարևոր է, որ Վաչագան Բարեպաշտի լուսավորչական-կրթական գործը դատարկ տեղում չէր ծավալվում: Ինչպես նշեցինք, նրանից առաջ ևս Ուտիքի և Արցախի աշխարհներն ընգդրկված էին դարակազմիկ այն հոգևոր վերափոխումների ոլորտներում, որոնց հեղինակներն էին հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչն ու նրա թոռ Գրիգորիսը, Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները:

Պատմական գրականության մեջ արձանագրած տեղեկությունների համաձայն, Վաչագան Բարեպաշտի բազմաբովանդակ գործունեությունը (հատկապես Աղվենի ժողովը) վերստին վկայում է այն ճշմարտությունը, որ նա մի խոշոր ու տաղանդավոր թագավոր էր և ամենից առաջ նրան հետաքրքրում էին երկրի մշակութային կյանքի զարգացումը, իրավական նորմերի ստեղծումը, հայ եկեղեցու հզորացումը, որը խոշոր ազդակ է մարդկանց կիսավայրենական վիճակից դուրս բերելու, պետության ու երկրի իսկական քաղաքացիներ դարձնելու ճանապարհին: Օրինակ, պատմիչն ասում է. Վաչագան Բարեպաշտն առաջին հերթին դպրոցներ էր բացում այն երեխաների համար, որոնց ծնողները նախկինում աղանդավորներ են եղել. «Հրամայէր ժողովել զմանկունս կախարդաց և զիւթաց, և քրմաց, և մատնահատաց և գեղատուաց, հրամայէր դպրոցս ունել և ուսուցանել զաստ ու ածեղէն ուսումն, և տեղե կացուցանել վարուց քրիստոնէութեան առ և հաստատել»:[15]

Վաչագան Բարեպաշտին ոգևորող երկու հզոր դրդապատճառներն են՝ հայրենասիրությունն ու զորեղ քրիստոնեական հավատքը (նրա թագավորության շրջանում քրիստոնեական հավատքի բուռն վերելք առաջացավ երկրամասի եկեղեցիներում) և լուսավորության տարածումն Արցախ-Ուտիքյան հայաշխարհի գավառներում:

Վաչագան Բարեպաշտի գործունեության մեջ առավել շեշտվեցին հայրենասիրությունը, ազգասիրությունը, կրոնական բուռն զգացումը և ակտիվ նվիրվածությունը երկրի ժողովրդի բարեկեցությանն ու լուսավորության տարածմանը: Նրա ջերմեռանդ լուսավորչական գործունեությունը, հայրական հոգածությունը դպրոցական երեխաների կրթության ու դաստիարակության գործի նկատմամբ, վերս-

14. Նույն տեղում:
15. Տե՛ս Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 60:

տին հաստատում են այն պատմական ճշմարտությունը, որ պատմաշրջանում Վաչագան Բարեպաշտը Հայոց Աղվանքի հայկազուն Առանշահիկ տերերի լավագույն ներկայացուցիչն էր, այն քաջամիտ ու հայրենասեր իշխողը, որ կարողացավ Արցախ-Ուտիքյան հայաշխարհի ազգային ոգին աննախադեպ բարձրության հասցնել՝ ըստ ամենայնի օգտվելով և՛ նախնիների թողած ավանդներից, և՛ իր ժամանակի բարենպաստ պայմաններից:

Այսպիսով, տեղեկանում ենք, որ Վաչագան Բարեպաշտը դաստիարակվել էր պատմահայր Խորենացու և Փավստոս Բյուզանդի մատյանների հիման վրա, նրանց հայրենասիրական կրակներից ջերմացել և նրանցից առել իր գործունեության ծրագիրը: Այդ նրանց լուռ թելադրանքով էր, որ Բարեպաշտ թագավորը վեր հանեց իր հայրենիքի առաջին լուսավորիչ Գրիգորիսի փառքը, չմոռանալով նաև նրա մեծանուն պապին, հայոց մյուս սրբերին ու սրբությունները: Եվ այս ամենով բորբոքեց լուսավորչական հավատքի համաժողովրդական կրակը, ամենուր հայալեզու կրթօջախներ բացեց, անբաժան մնաց մայր հայրենիքի հասարակական-կրոնական, հոգևոր-մշակութային կյանքից և, ազգակից իմաստուններից դասեր առնելով, իր երկիրը ղեկավարեց որպես ժամանակի ամենաառաջավոր ու տաղանդավոր պետական գործիչներից մեկը:

5. Կրթական գործի կազմակերպիչները

Դարերի ընթացքում ժողովրդի լուսավորության, մասնավորապես, մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցերը եղել են Արցախի նշանավոր մտածողների ուշադրության կենտրոնում: Այդ հարցերի լուսաբանմամբ զբաղվել են շատ մանկավարժներ, որոնք այս կամ այն չափով իրենց լուման են ներդրել արցախահայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության մեջ: Արցախի դպրոցի պատմության տարբեր շրջաններում հայտնի ու անհայտ բազմաթիվ ուսուցիչներ ու դպրոցի մանկավարժ գործիչներ նվիրվել են աճող սերնդի կրթության ու դաստիարակության պատվավոր գործին: Նրանք համատեղել են իրենց հայրենանվեր գործունեությունը՝ ղեկավարել ազգային-ազատագրական շարժումը, պայքարել օտար զավթիչների դեմ, վառ պահել ազգի պայքարի ոգին, ստեղծել ու թողել հարուստ ժառանգություն հայ դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման գործում:

Քննարկվող ժամանակաշրջանում (XI-XIII դարեր) Արցախ աշխարհում ժողովրդական լուսավորությունը, հատկապես դպրոցական գործը, դառնում է հայ նշանավոր գործիչների, մանկավարժների կենսական խնդիրներից մեկը: Կրթության, մշակույթի զարգացման բնագավառում բացառիկ դեր է վերապահվում այդ շրջանի կրթական գործի կազմակերպիչներ՝ մանկավարժ, փիլիսոփա, տոմարագետ, մաթեմատիկոս, բանաստեղծ Հովհաննես Սարկավագ (Վարդապետ) Իմաստասերին, առակագիր, իրավագետ, մանկավարժ Մխիթար Գոշին և ուրիշների: Հայ դպրոցի պատմությանը նվիրված աշխատությունների և այլ աղբյուրների ու վավերագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել մեզ համառոտակի ներկայացնել այդ գործիչների լուսավորչական գործունեությունն Արցախ-Ուտիքյան աշխարհում:

<u>Հովհաննես Սարկավագ (Վարդապետ) Իմաստասեր:</u> Աշոտ Աբրահամյանի և այլոց աշխատություններում բերված տվյալների[1] համաձայն՝ Հովհաննես Սարկավագը ծնվել է 1045թ. Արցախի նահանգի Փառիսոս գավառի Փառախոնիս գյուղում, քահանայի ընտանիքում: Մ.Կաղանկատվացու հավաստմամբ և այլ աղբյուրների վկայությամբ՝ Արցախի այս գավառը X-XI դարերում եղել է հայկական մի փոքրիկ քաղաքական կենտրոն և ունեցել իր առանձին թագավորները: Պատմագիրը վկայում է, որ X դարի սկզբին Արցախ և Ուտիք նահանգների, ինչպես նաև Կամբեճեան գավառի տեր Համամ-Գրիգոր Առանշահիկի որդին՝ Սահակ Սևադան, իր ժառանգական տիրույթը միացնելով Փառնես գավառին, այդ թվում Ուտիքը, Գարդմանքը ու Ջորագետը՝ հիմնեց Փառիսոսի իշխանությունը: Տարբեր ժամանակներում, չնայած այլազգիների ոտնձգություններին, Արցախի այս հատվածում ոչ միայն չեն մարել ազգային ազատասիրական գաղափարն ու ոգին, այլև շարունակ վերելք է ապրել ու զարգացել մշակույթը, գործել են կրթական օջախները:

Հովհաննես Սարկավագն սկզբնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում, ժամանակի նշանավոր Անիի ու Հաղպատի բարձր տիպի դպրոցներում:[2] Ականավոր գիտնականի վաստակին քաջածանոթ հայ մեծ ուսուցչապետ Վարդան Արևելցին հաղորդում է, որ Հովհաննեսի ծնողներն առանձնակի հոգածությամբ

---

1 Ա.Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956: Նաև Տեր-Մինասյան Ի., Հաղպատի դպրոցը և Հովհաննես Սարկավագ Վարդապետը, «Արարատ», 1901, Հ.Ոսկան, Հովհաննես Սարկավագի կյանքը, գրությունները, «Հանդես ամսօրյա», 1925:

2. Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, 1946, էջ 49-92:

են աճեցրել ու դաստիարակել իրենց որդուն՝ ներշնչելով նրան բարեպաշտություն ու սեր հայրենիքի, ժողովրդի, գիտության նկատմամբ: Հաղպատի դպրոցի նրա դասընկերներ, միջնադարյան հայտնի իրավագետ Դավիթ Ալավկա որդին և Գրիգոր Թոքակերի որդի կոչվող մատենագիրը մատնանշում են, որ Սարկավագը համառորեն զբաղվել է ինքնազարգացմամբ, աշխարհիկ ու կրոնական գիտությունների ուսումասիրությամբ՝ միշտ ձգտելով նորանոր գիտելիքներ ձեռք բերել:

Կենսագրի տեղեկություններից[3] երևում է, որ Հովհաննեսը դեռ աշակերտական տարիներից աչքի է ընկել արտակարգ ընդունակություններով ու աշխատասիրությամբ: Ցանկանալով կոնկրետ օրինակով ցույց տալ նրա աշխատասիրությունը, կենսագիրը բերում է նրա կյանքի այդ շրջանի հետ կապված հետևյալ միջադեպը: Հաղպատում սովորելու տարիներին ուսուցիչն իր աշակերտներին տանում է վանքի մոտիկ քարայրում գտնվող ձեռագրատուն՝ աշխատելու գրչագրերի վրա: Նրանց մեջ էր նաև Հովհաննես Սարկավագը: Աշակերտներն ամբողջ օրն աշխատում են և ճաշին դուրս գալիս, փակում մատենադարանի դուռը: Երեկոյան պարզվում է, որ աշակերտների մեջ չկա Հովհաննեսը: Փնտրում են ամեն տեղ՝ մոտիկ անտառներում, գյուղում, բայց ոչ մի տեղ չեն կարողանում գտնել նրան: Մի քանի օր հետո, երբ նորից գնում են ձեռագրատուն, Հովհաննեսին գտնում են ձեռագրերի վրա աշխատելիս: Երբ զարմացած հարցնում են նրան, թե ի՞նչ է կերել ու խմել այգում այդ օրերին, նա հանգիստ ցույց է տալիս իր կարդացած ձեռագրերը և պատասխանում. «Այդ է եղել իմ կերակուրը և ըմպելիքը, այդ եմ կերել և խմել այս օրերին»:

Հաղպատի դպրոցում Հովհաննեսի հետ միասին սովորել են միջնադարյան հայտնի իրավագետ Դավիթ Ալավկա որդին և Գրիգոր Թոքակերի որդի մատենագիրը:

Հաջողությամբ ավարտելով Հաղպատի դպրոցը, հայ մատենագրությունը լավ յուրացրած և հունական ու լատինական լեզուներին ու դպրություններին քաջածանոթ՝ Հովհաննեսը մեկնում է Անի քաղաք, այնտեղ բացում դպրոց՝ իր վրա վերցնելով նրա տնօրինությունը: Նա բոլոր ջանքերը գործադրում է, որպեսզի դպրոցում դասավանդումը դնի բարձր հիմքերի վրա: Կենսագիրը, խոսելով Հաղպատի դպրոցում Հովհաննեսի ստացած գիտական բարձր պատրաստության և իր իմացությունը սաներին հաղորդելու սիրահոժար ցանկության մասին, ավելացնում է, որ Հովհաննեսն «իմաստուն մեղվի պես մտքում ամբարելով երանգ-երանգ, տարբեր հոտի ու համի ծաղիկներ, բերեց իր քաղաքը, ծննդավայրը, քաղաքամայր Անի և փարթամությամբ լցրեց տունը»:[4]

Հովհաննեսի հիմնած դպրոցում, բացի կրոնականից, ինչպես պարզվում է, դասավանդել են նաև երկրաչափություն, փիլիսոփայություն, տոմարագիտություն, տիեզերագիտություն և բնագիտական առարկաներ:

Հովհաննեսի դպրոցի հռչակը շատ արագ տարածվում է և այնտեղ սովորելու են գալիս Հայաստանի, նրա արևելյան հատվածի՝ Արցախի, Ուտիքի բոլոր հայաշատ վայրերից:

Հովհաննես Սարկավագը վաղ տարիքում ստացել է սարկավագության հոգևոր աստիճան, ուստի և «սարկավագ» անվանումը դարձել է սովորական: Նրան անվանում էին նաև «Իմաստասեր», «Մեծ Սոկրատեսն Հաղպատի» և այլն: Մանուկ Աբեղյանը «Հովհաննես Սարկավագ Իմաստասեր» գրքում նշում է, որ նրա գերեզ-

3. Հ.Ոսկան, Հովհաննես Սարկավագի կյանքը, գրությունները, «Հանդես ամսօրյա», 1925:
4. «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956, էջ 120:

մանը (Հաղպատի վանքում) ունի այս տապանագիրը. «Արծանս այս՝ Սեմական Սոփեստով Սարկավագի» հին հունականի իմաստով, գիտուն, գիտնական:[5]

Սարկավագը խորապես ուսումնասիրել է հոգևոր-աստվածաբանական ու «արտաքին» գիտություններ, ինչպես նաև քերականություն ու մի շարք լեզուներ, ճշգրիտ գիտություններ՝ մաթեմատիկա, երկրաչափություն, տոմարագիտություն: Այդ իմաստով մաթեմատիկական գիտությունների ասպարեզում նա Անանիա Շիրակացուց հետո ամենախոշոր դեմքն է հայ իրականության մեջ: Գրել է նաև բանաստեղծություններ, հմտացել երաժշտական հնչակարգի հարցերում, նրան են վերագրվում Հռիփսիմյանց ու Վարդանյանց նվիրված երաժշտական կտորները: Գործուն մասնակցություն է ունեցել նաև հասարակական կյանքին. եղել է կաթողիկոսության պաշտոնական ներկայացուցիչը Վատիկանի հետ տարվող բանակցություններում:[6]

Հայ մանկավարժության պատմության մեջ Սարկավագը բացառիկ դեմք էր, կրթական գործի բարեռորոգիչ, նոր դպրոցի հիմնադիր, մանկավարժական մտքեր հղացող և դրանք խիզախորեն կյանքի կոչող ուսուցչապետ: Երկար տարիներ՝ որպես ուսուցիչ-ուսուցչապետ, աշխատել է Անիի և Հաղպատի դպրոցներում (1085թ. բացել է Անիի իմաստասիրական դպրոցը), դասավանդել քերականություն, փիլիսոփայություն, տոմարագիտություն ու մաթեմատիկական առարկաներ: Մանկավարժական գործունեություն է ծավալել նաև Սյունյաց նահանգում և Արցախում (կան տվյալներ, որ եղել է Ամարասում և Դադիվանքում), բացել նոր դպրոցներ, և որոշակի կարգ ու կանոն մտցրել դպրոցական գործի մեջ, բարելավել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործը՝ շարունակելով ու ավարտին հասցնելով Գրիգոր Մագիստրոսի բարեռորոգումները: Սարկավագն այն մանկավարժն էր, ով անընդհատ ջանադրորեն որոնում և շատ հաճախ գտնում էր ուսուցման և դաստիարակության այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք ընդունելի են եղել հետագա բոլոր ժամանակների առաջավոր դպրոցների կողմից և համահունչ են անգամ այսօրվա ազգային դպրոցի պահանջներին: Հայկական դպրոցի պատմության մեջ առաջին անգամ նա էր, որ կարդալ-գրելու անջատ ուսուցման փոխարեն մտցրեց մինչ այդ չընդունված միաժամանակյա ուսուցման եղանակը: Ուշագրավ է նշել այն փաստը, որ Հայաստանի, Արցախի և Ուտիքի դպրոցներում աշխատելու տարիներին նրա աշակերտները գրի էին առնում խելացի զրույցները, օգտվում իմաստասիրական գրքերից: Նույն պահանջներն էր կիրառում նաև բնական ու մաթեմատիկական գիտությունների ուսուցման գործընթացում: Առաջարկում էր դպրոցը և, առհասարակ, ուսուցումը դուրս բերել սխոլաստիկ կաշկանդումներից՝ քարոզելով գիտելիքները մատչելի դարձնելու, կայուն յուրացնելու, կյանքում կիրառելու և դրանից օգտվելու անհրաժեշտ պահանջը: Շարունակելով Գ. Մագիստրոսի գործը՝ Սարկավագն անհրաժեշտ համարեց Հայաստանի նահանգներում բացել 3 տիպի դպրոցներ, այսօրվա մեր պատկերացմամբ՝ տարրական, միջնակարգ ու բարձրագույն: Իսկ Արցախի և Ուտիքի գավառներում բացում է տարրական դպրոցներ: Իր մանկավարժական գործունեության տարիներին Սարկավագը դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները կարգավորեց ըստ ուսումնական տարիների ու դպրոցի աստիճանների, մտցրեց ուսուցանվող առարկաների աստիճանական հաջորդականությունը, ճշտեց դրանց ցանկն ու բովանդակությունը: Այսօրվա

5. Նույն տեղում:
6. Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, 1946, էջ 49-92, 94:

հասկացությամբ դա ոչ այլ ինչ էր, քան՝ դպրոցի համար ունենալ որոշակի ուսումնական պլան ու ծրագիր:[7] Սարկավագն զգալի գործ է կատարել նաև ուսումնակրթական զանազան նյութերով դպրոցն ապահովելու ուղղությամբ՝ ստեղծելով և կազմելով ձեռնարկներ, դասագրքեր, ուսումնական այլ նյութեր: Նման աշխատություններից հատկապես հիշատակության արժանի է «Բան խրատ առ ուսումնասերս», «Վասն շարժման երկրի», «Թվաբանություն» (դասագիրք), «Հաղագս անկյունավոր թվոց», «Ճառհաղագս իրավաբանության և այլն»:[8] Նրա հեղինակած գրքերի այս ոչ լրիվ թվարկումն անգամ վկայում ու հաստատում է մեծ մանկավարժի բազմակողմանի զարգացած տաղանդն ու ստեղծագործական մտքի թռիչքը: Հովհաննես Սարկավագի աշխատություններում սփռված են նրա գաղափարներն ու խոհերը, դաստիարակության, ուսուցման գործընթացին վերաբերող տեսական ու գործնական ընդհանրացումները: Կրթության և դաստիարակության նպատակը համարելով սովորողների գիտակցության մշակումը, հայրենասիրության և առաքինության պատվաստումը, Սարկավագն ընդգծում էր, որ կյանքի առօրյա հրատապ պահանջներին պետք է հարմարացնել դպրոցում ավանդելիք առարկաները, սովորեցնել այնպիսի գիտություններ, ինչպիսիքն են լեզուները, մաթեմատիկան, ֆիզիկան, աստղաբաշխությունը, հայագիտական առարկաները և կարևորում էր յուրացրած գիտելիքների կիրառումը գործնականում: Այլ կերպ ասած, այսօրվա հասկացողությամբ, առաջ է քաշել դպրոցի կապը կյանքի հետ զուգակցելու անհրաժեշտ պահանջը: Սարկավագը բարոյական դաստիարակության նպատակը համարում էր սերնդի մեջ լավ քաղաքացու հատկանիշների պատվաստումը: Եվ «Բան խրատ առ ուսումնասերս» աշխատության մեջ շարադրում է մարդու բարոյական դաստիարակության, ջանասիրության, բարեկիրթ բարք ու վարքի, կարգ ու կանոնի անչափ ուսանելի բազմաբնույթ հարցեր և մեկնաբանում, բացատրում դրանց էությունը, նշանակությունը կյանքում, դաստիարակության, ուսուցման գործում: Կարևոր նշանակություն տալով աշխատանքային դաստիարակությանը, Սարկավագը գտնում է, որ աշխատասիրությունը հարկավոր է փոքրուց պատվաստել երեխաների մեջ, դաստիարակել աշխատելու սովորություն ու հմտություն: Աշխատանքային դաստիարակության հետ սերտորեն կապված՝ ընդգծում է նաև ֆիզիկական դաստիարակության կարևորությունը, առաջարկում երեխաներին սովորեցնել բացօդյա խաղեր, մրցումներ, ռազմական վարժություններ: Հովհաննես Սարկավագն առաջարկում էր ուսուցման և դաստիարակության գործընթացում հաշվի առնել երեխայի տարիքային առանձնահատկություններն ու նրա նկատմամբ դրսևորել հարգանքի ու սիրո վերաբերմունք: Իր օրինակով նա հսկայական ներգործություն է ունեցել ժամանակակիցների և հատկապես իր սաների վրա: Վերջիններից Երեմիա Անձրևիկը, Սամուել Անեցին և ուրիշներ, իրենց հուշերում ջերմորեն խոսելով մեծ գիտնականի ու մանկավարժի մասին, մատնանշում են, որ Սարկավագն անհուն սիրում էր աշակերտներին՝ նրանց դաստիարակության գործի մեջ տեսնելով իր կյանքի ամբողջ իմաստը: Ի պատասխան դրա, աշակերտները փոխադարձ սիրով էին կապված իրենց ուսուցչի հետ: Հովհաննես Սարկավագի աշխատություններում ու մեթոդական ձեռնարկներում բազմակողմանիորեն լուսաբանված են նաև ուսուցման տեսության հարցերը, սկզբունքներն ու մեթոդները, կազմակերպման ձևերը և դպրոցի կյանքի հետ կապված այլևայլ հարցեր: Նա հնադարյան հայ մանկավարժնե-

7. Ց.Սիմոնյան, «Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության», Երևան, 1971, էջ 42-43:
8. Նույն տեղում:

ից առաջինն էր, որ տվեց զննության, զննական-առարկայական ուսուցման տեսական մանկավարժական հիմնավորումը, կարևորեց ուսուցումը դիտողական դարձնելու անհրաժեշտությունը: Ուսումնական նյութի տրամաբանական ըմբռնման և կայուն յուրացման համար Սարկավագը կիրառում էր գիտակցականության մատչելիության սկզբունքները և առաջարկում ուսուցումը սկսել պարզից, հասկանալիից, հեշտից, ապա աստիճանաբար անցնել բարդին, դժվարին: Ուսումնական նյութի հաստատուն յուրացման համար կարևոր էր համարում ուսուցչի պարզ ու հասկանալի, դյուրըմբռնելի խոսքը, վերլուծումն ու մեկնաբանումը, կրկնությունների կատարումը՝ հարց ու պատասխանի միջոցով: Շատ հետաքրքրական են Հովհաննես Սարկավագի դասի կազմակերպման ու անցկացման ձևերը, որոնց մեջ երևում է այս կամ այն դպրոցի իսկական պատկերը, նրա զարգացման աստիճանը: Նա աշակերտներին բաժանում էր խմբերի՝ հաշվի առնելով նրանց տարիքն ու զարգացման աստիճանը: Մատենադարանի թիվ 745/649 ձեռագրի մեջ նշված է, որ Սարկավագի պաշտոնավորած դպրոցներում դասը սովորաբար սկսվում էր այսպես. աշակերտը գալիս է «հաշիվ պահանջելով» կամ ինչպես ասում են աշակերտը գալիս է «հաշիվ տալու», այսինքն՝ ստուգում նախորդ օրվա տված դասը՝ աշակերտներից «խնդրեր զհամարս», թե ինչպես են սովորել նախորդ դասը, ապա տալիս էր նոր դասը՝ «զնոր դասս ասել աշակերտաց», «զուսումն տալոց», որից հետո «խնդրել զհամարս»: Նորից ստուգում է նոր տված դասը, թե՝ նրանք, արդյոք, հասկացե՞լ են ուսուցչի ասածները և ինչը պետք է կրկին բացատրի ուսուցիչը: Սարկավագը, ինչպես նաև ժամանակի նշանավոր մանկավարժներ Հովհաննես Վանականը, Հակոբ Վարժապետ Կարկցին, Հովհաննես Տետեն և ուրիշներ դաս տալուց հետո երկար ժամանակ աշակերտների հետ կրկնում էին դասը, որպեսզի վերջիններս լավ յուրացնեին այն, մինչև լավ չյուրացնեին դասը, չէր հաղորդվում նորը… Դասը սերտելու համար նրանք հատուկ վարպետությամբ կիրառում էին դասավանդման առաջավոր մեթոդներ: Սարկավագն իր աշխատություններում արժեքավոր խորհուրդներ է տալիս ուսուցչին՝ լինել նրբանկատ ու բարեկիրթ, անընդհատ հարստացնել գիտելիքները, կատարելագործվել և մեթոդաբար հոգածություն ու սեր ցուցաբերել սաների նկատմամբ:

Նպատակահարմար ենք գտնում նաև ներկայացնել մեծ գիտնականի՝ մանկավարժական աշխատանքին զուգընթաց կատարած հետազոտական աշխատանքները:

Հովհաննես Իմաստասերի մասին, որպես մեծ գիտնականի, գովեստով են խոսում նրա գրական և գիտական վաստակին ծանոթ գրեթե բոլոր պատմիչները՝ Սամուել Անեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուրիշներ: Այսպես, օրինակ, Կիրակոս Գանձակեցին, որն ապրել է Հովհաննես Սարկավագից մոտավորապես մեկ դար հետո, խոսելով նրա գիտական վաստակի մասին, հետևյալ ձևով է բնութագրում նրան. «Շատերից գիտությամբ խելոք, ամեն բանում հանճարեղ, մտահարուստ Հովհաննեսը»:[9]

Իմաստասերի հռչակը, որպես գիտնականի, ինչպես երևում է, դուրս էր եկել Հայաստանի շրջանակներից: Վրացական «Քարթլիս զխովրեբա» պատմական աշխատության հին հայկական թարգմանության մեջ տեղեկություն կա առ այն, որ Հովհաննեսը վրաց Դավիթ թագավորի կողմից հարգված անձնավորություններից մեկն էր. Դավիթ թագավորը, հայտնում է պատմիչը, «սիրում է հայ ժողովրդին,

9. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 113:

(հայկական) եկեղեցիները և Հաղպատի հռետոր մի վարդապետի, որի անունն էր Սարկավագ, նրան էր խոստովանում իր հանցանքները և խոնարհելով իր պատվական գլուխը, ստանում էր նրա օրհնությունը»:[10]

Հովհաննեսը մանկավարժական աշխատանքին զուգընթաց գիտական հետազոտություններ է կատարել տոմարի, տիեզերագիտության, փիլիսոփայության, պատմության վերաբերյալ, գրել է բանաստեղծություններ, հմտացել է նաև երաժշտական հնչակարգի հարցերում: Նա գործուն մասնակցություն է ունեցել հասարակական կյանքին:

Հովհաննես Սարկավագը հանրագիտակ մատենագիր է: Նրա աշխատությունները մեծ արժեք են ներկայացնում գիտությունների պատմության համար: Սարկավագի երկերից 17-ը վերաբերում են տոմարին:

Նա տոմարական նոր համակարգի հիմնադիր է հանդիսացել հայ իրականության մեջ: Նրա անվան հետ է կապված հայկական շարժական տոմարն անշարժ դարձնելու իրողությունը: Սկսած 353 թվականից մինչև 1084 թվականը հայկական տոմարում տարվա 365 օրերի վրա նահանջը հաշվի չառնելու հետևանքով Ամանորը չորս տարին մեկ մի օրով առաջ էր անցել, որի պատճառով էլ հայկական տոները դուրս էին եկել մյուս ժողովուրդների տոների զուգակցությունից ու տոմարական հաշվումների մեծ դժվարություններ ստեղծել: Հովհաննես Սարկավագ Իմաստասերը տոմարական այս խառնաշփոթությունը վերացնելու համար կատարել է հետևյալ բարեփոխությունները.

ա) Հայկական Ավելյաց ամիսը, որը բաղկացած էր 5 օրից, սահմանել է ամեն չորրորդ տարին մեկ անգամ 6 օր, որով հայկական տոմարը դրել է անշարժ հիմքի վրա:

բ) Նկատի ունենալով, որ հայկական շարժական տոմարը սկսելու ժամանակից մինչև XI դարը հայկական թվագրության մեջ մուտք է գործել շուրջ մի տարի ավելի, այն դուրս է հանել հայկական տարեթվից:

գ) Հայկական տարվա անշարժ Ամանոր է սահմանել օգոստոսի 11-ը:

Հովհաննես Իմաստասերը կազմել է ՇԼԲ (532) տարիների նոր ցանկ՝ 1084 թվականից մինչև 1616 թվականը՝ նշելով յուրաքանչյուր տարվա վերադիրը, յոթներյակը. տանուտերը և կրոնական տոները: Այդ ցանկը դարեր շարունակ հանդիսացել է տոմարական հաշվումների տեղեկատու-ձեռնարկ:

Հովհաննեսի այդ ցանկի առաջին տարին՝ 1084 թվականը, հիմք է ծառայել մի նոր թվագրության սկզբնավորման, որը հայ մատենագրության մեջ հայտնի է «սարկավագդիր», «մտրուկ» կամ «փոքր թվական» անուններով:

Հովհաննես Սարկավագն իր կատարած տոմարական բարեփոխությունը մատչելի դարձնելու նպատակով կազմել է բազմաթիվ աղյուսակներ, բոլորակներ: Նրանցից առանձնապես արժեքավոր են «խառնախորան» կոչվող աղյուսակները, որոնց մեջ զուգադրված են հռոմեական, հունական, պարսկական, հայկական, եբրայական, արաբական, մակեդոնական, եգիպտական, եթովպական, աթենական, բյութական, կապադովկիական, վրացական և աղվանական տարվա բոլոր օրերը: Այդ աղյուսակների հիման վրա անսխալ կարելի է որոշել, թե ո՛ր ժողովրդի, ո՛ր ամսի քանիսը մյուս ժողովուրդների ո՛ր ամսի քանիսին է համապատասխանում: Տրված են նաև շաբաթվա տանուտերերը, արեգակի գոտիները և աստիճանները, արեգակի հեռավորությունները տարվա տարբեր օրերին՝ աս-

10. «Համառօտ պատմութիւն վրաց», Վենետիկ, 1904, էջ 122-123:

պարեզներով, ցերեկվա և գիշերվա տևողությունը տարբեր օրերում՝ ժամերով ու րոպեներով և այլն:

Իմաստասերը Շիրակացու «Պատճեն տոմարի» աշխատության սկզբունքով կազմել է իր «Պատճեն տոմարին»՝ տոմարական անշարժ հիմքի վրա: Այդ աշխատությունը յուրատեսակ տոմարական հանրագիտարան է, որի մեջ մանրամասն տեղեկություններ են տրվում ամիսների կրկնակների և կիսակների, տարվա տանուտերի, վերադրի, գարնանամուտի, ամառնամուտի, ձմեռնամուտի և աշնանամուտի, արեգակի որ կենդանակերպում գտնվելու և բազմաթիվ տոմարական հաշվումների մասին՝ հայկական անշարժ ու շարժական, հռոմեական, եբրայական և եգիպտական տոմարական համակարգերով: Իմաստասերի տոմարական համակարգն իր արժանի տեղն է գրավել անցյալում հայտնի մյուս ժողովուրդների աչքի ընկնող համակարգերի շարքում: Նրա կազմած անշարժ տոմարը բարձր գնահատականի է արժանացել տոմարի պատմությամբ զբաղվող գիտնականների կողմից:

Միջնադարյան մատենագիրները Հովհաննես Սարկավագին հիշում են նաև «պոետիկոս» (այսինքն՝ բանաստեղծ) մականունով: Մեզ են հասել նրա չափածո և արձակ մի քանի բանաստեղծությունները, որոնց գլուխգործոցն է «Բան իմաստութեան ի պատճառ զբօսանաց առ ձագն, որ զաղօթանոցաւ նորա ճռուողէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ»: Իրավացիորեն նկատել են, որ Հովհաննեսի այս ստեղծագործությունը եթե «պատահմամբ փրկված չլիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»:[11]

Հովհաննես Սարկավագն իր մի քանի աշխատություններում անդրադարձել է հայ հասարակական կյանքում նկատվող ցավալի երևույթներին և վշտով նշել իշխողների ու մեծահարուստների՝ աշխատավորության նկատմամբ գործադրած բռնություններն ու կեղեքումները:

Հակադրվելով այն կարծիքին, որ իբր թե հասարակության մեջ բոլոր մարդիկ հավասար են իրար, նա գտնում է, որ հասարակությունը կազմված է անհավասար իրավունք ունեցող դասերից: Թեպետ խոսքով, ասում է նա, հավասար են համարում իշխանին և ռամիկին, դատավորին և քաղաքացուն, բայց եթե բանականորեն նայելու լինենք իրականությանը, շարունակում նա, կտեսնենք, որ անհավասար են:

Հովհաննես Սարկավագը մեծ հումանիստ է: Նա գտնում է, որ տարբեր ազգության մարդիկ, որոնք խառն են ապրում իրար հետ, պետք է միաբան, համերաշխ լինեն: Մի այլ կապակցությամբ անդրադառնալով մարդասիրության հարցին, նա գտնում է, որ մարդասիրությունը մարդկության մեծագույն առաքինություններից մեկն է:

Իմաստասերը նաև մեծ հայրենասեր էր: Նա վշտով էր նշում հայ իշխանների կենտրոնախույս ձգտումները, հայ ժողովրդի ծանր վիճակը, հայ բնակչության արտագաղթը և այլն: Ղևոնդյանց նվիրված հոգևոր երգի մեջ նա դիմում է Աստծուն և խնդրում, որ նա զորավիգ դառնա հայ ժողովրդին և նրա ցրված զավակներին, պանդուխտներին, ցիրուցան եղածներին հավաքի իր հայրենի երկիրն ու փրկի կորստից:[12] Նա մահացել է 1129 թվականին:

---

11. Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հտ.Դ, Երևան, 1970, էջ 72:
12. Այդ մասին մանրամասն տե՛ս Հայ մշակույթի գործիչներ, Երևան, 1976, էջ 235-244, նաև Ալիշան Ղ., Սարկաւագ Սոփեստես, «Յուշիկք հայրենեաց Հայոց», հտ.Բ, Վենետիկ, 1870:
Պետրոսյան Գ., Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959:
Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1964:

Մեծ գիտնականի մանկավարժական, փիլիսոփայական, մաթեմատիկական և գիտության այլ բնագավառների վերաբերյալ առաջ քաշած խորիմաստ մտքերն արժեքավոր և ուսանելի են նաև այսօր:

Մխիթար Գոշ (Մխիթար Վարդապետ պատմիչ, 1130-1213թթ.): Ականավոր իրավագետ, առակագիր, մանկավարժ, հասարակական գործիչ: Ծնվել է Գանձակում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական եկեղեցական-ծխական դպրոցում: Ապրել է իր ժամանակի հասարակական-քաղաքական կյանքով և արձագանքել նրան՝ գրչով և անձնական գործունեությամբ: Չափահաս դառնալով՝ որոշում է նվիրվել հոգևոր կոչման, ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Գիտելիքներ ձեռք բերելու համար գնում է որոնելու գիտնական վարդապետների: Աշակերտում է ժամանակի անվանի հայագետ և մշակութային խոշոր գործիչ Հովհաննես Տավուշեցուն և ուրիշ մեծավաստակ գիտնականների, ստանում վարդապետի կոչում: Սակայն այդ էլ չի բավարարում Մխիթարին. նա Արևելյան Հայաստանից հասնում է Կիլիկիա և թաքցնելով վարդապետական աստիճան ունենալը, վերստին ուսանում է Սև լեռան Կարմիր վանքի մեծ համբավ հանած բարձր տիպի դպրոցի ուսուցիչ-ուսուցչապետների՝ երևելի գիտնականների մոտ:

Ուսումնառությունն ավարտելուց հետո Մխիթար Գոշը վերադառնում է հայրենիք՝ Գանձակ, բացում դպրոցներ, և ծավալում լուսավորչական գործունեություն երկրամասի հայկական գյուղերում (1160-1174թթ.): Իրար հաջորդող քաղաքական, ռազմական իրադարձությունները ծանր դրսևորումներ ունեցան նաև Գանձակի հայ իրականության մեջ:

Խաչենի նշանավոր իշխան Վախթանգը զսպիչ դեր ուներ Գանձակի մահմեդական տերերի նկատմամբ, և շատ էր մտահոգված Արցախի ու հարևան գավառների հայության իրավունքների պաշտպանությամբ, ուստի, երբ գործնականում հնարավոր դարձավ, իր դղյակում ապաստան տվեց Մխիթար Գոշին, ամենայն կերպ խրախուսելով և աջակցելով, որպեսզի նա գրի-ավարտի Հայոց դատաստանագիրքը: Գոշն իր դատաստանագիրքը գրել է Խաչենում, 1184 թվականին և, ի պատասխան Վախթանգի ու նրա կին Արզու խաթունի հոգատարության, ձեռագրի հիշատակարանում արտահայտել է իր անհուն երախտագիտությունը նրանց:[13] Իսկ դատաստանագրքի հեղինակային մի ձեռագրի մեջ էլ պահպանվել է Գոշի մի այլ հիշատակարան, որով նա Վախթանգին հանձնարարելու պես խնդրում է հավատարմորեն կիրառել դատաստանագիրքը:[14]

XIII դ. նշանավոր պատմագիր Կիրակոս Գանձակեցին, որ եղել է Գոշի աշակերտի՝ Վանական Վարդապետի աշակերտը և իր պատմության մեջ կենսագրական տեղեկություններ է հաղորդում Մխիթարի մասին, գնահատում է նրան որպես «այր իմաստուն և հեզ, վարդապետական ուսմամբ հռչակեալ», «մեծ վարդապետ», «հռչակաւորն և մեծիմաստն գիտութեամբ»:[15] Պատմագիրը պատմում է նաև Խաչենի մշակույթին Գոշի մատուցած ծառայությունների մասին: Խաչենում Մ. Գոշի մշակութային, լուսավորչական գործունեության մասին գովեստով է խոսում նաև Վարդան Վարդապետ պատմիչը:

Այդ աղբյուրների տվյալների համաձայն, Հաթերքի Վախթանգ իշխանի աջակցությամբ Մխիթար Գոշը դպրոցներ է բացում Դադի վանքում, Վախթանգ իշխանի դղյակում՝ Հաթերքում, Խոխանաբերդում՝ Գրիգոր իշխանի դղյակում, և այլ վայ-

13. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն, Երևան, 1964, էջ 72:
14. Նույն տեղում:
15. Վարդան Վարդապետ, Հավատքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 144-146:

ներում: Նշանավոր է եղել Դադի վանքի բարձր տիպի դպրոցը, որտեղ դասավանդել է նաև Վախթանգի կինը՝ Արզու խաթունը: Ի դեպ, նշենք, որ պատմաշրջանում, նույնիսկ ամենադժվարին պայմաններում, որոնց մեջ գտնվում էր Արցախ աշխարհը, այդ երեք իշխանություններում (ներքին Խաչեն, Միջին Արցախ կամ Հաթերք և Վերին Խաչեն) հոգևոր-մշակութային կյանքը, լուսավորությունն ու դպրոցը, չնայած դանդաղեցված, բայց շարունակում էին զարգանալ, իսկ դա պայմանավորված էր աշխարհագրական նպաստավոր պայմաններով, երկրի դիմադրող ուժերով և նվիրյալ մշակութային գործիչների եռանդուն գործունեությամբ:

Խաչենում ծավալած գործունեության շնորհիվ Մխիթար Գոշի համբավը տարածվում է ողջ երկրամասում, և բոլոր կողմերից (Արցախի գավառներից, նաև Ուտիքից) նրա մոտ գալիս էին մատենագիտական ուսումնասիրության և կատարելագործման նպատակներով, իսկ ոմանք էլ, թաքցնելով իրենց անունը, կոչումը և գիտելիքները, գալիս էին նորանոր գիտելիքներ ձեռք բերելու մտադրությամբ:

Մխիթար Գոշը բեղմնավոր մշակութային, լուսավորչական և մանկավարժական գործունեություն է ծավալում նաև Արևելյան Հայաստանի նահանգներում: Որոշ ժամանակ անց նա հաստատվում է Աղստևի հովտի (ներկայիս Դիլիջանի մոտ) Գետիկ վանքում, բացում դպրոց, որն աստիճանաբար վերածվում է բարձր տիպի մասնագիտական՝ իրավագիտության դպրոցի: Դպրոցում անցնում էին գլխավորապես իրավագիտական, փիլիսոփայական, հասարակագիտական առարկաներ (իրավագիտություն-օրենսգիտություն, տրամաբանություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն, աստվածաբանություն և այլ գիտություններ): Մ. Գոշն իրավագիտության որոշ առարկաներ դասավանդել է նաև Խաչենի դպրոցներում:

Մխիթար Գոշը մեծ հեղինակություն և հարգանք է վայելել ոչ միայն Արցախի մտավորականության, այլև իր ժամանակի քաղաքական ու պետական գործիչների շրջանում: Նա եղել է Զաքարե Երկայնաբազուկի խոստովանահայրն ու խորհրդատուն և առանձնապես գնահատվում էր նրա կողմից: Երբ 1207թ. Զաքարեն Անի քաղաքում Արևելյան Հայաստանի եկեղեցականների ժողով է գումարում՝ հաստատելու Սիսի ժողովի որոշումներն ու կանոնները շարժական սեղանի թույլտվության մասին, որպեսզի զորականները ևս պատարագի հնարավորություն ունենան, Մխիթարը չի գալիս, պատճառաբանելով, թե հիվանդ է ու անկար: Ժողովականները, որ դեմ էին շարժական սեղանին, նամակով խնդրում են, որ գա: Մխիթարը չի կարողանում մերժել նրանց թախանձանքը և գալիս է: Դիմավորելով նրան, Զաքարեն ասում է. «Քանի որ դու եկար, այլևս նրանք ինձ փույթ չեն»: Նրա համար Մխիթարի կարծիքն ավելի մեծ արժեք ուներ, քան եկեղեցականների ժողովինը:

Ժամանակին Մխիթար Գոշի մասին պատմվել են ավանդություններ, որոնց մեջ նա սրբացվել է:[16]

Մխիթար Գոշի գրչին են պատկանում մատենագրության զանազան ճյուղերին վերաբերող մոտ մեկ տասնյակ աշխատություններ.[17] «Համառօտ մեկնութիւն մարգարեութեանն Երեմիայի», «Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա», «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձվածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ»[18], «Թուղթք

16. Տե՛ս Ա.Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 178-179, 321:
17. Տե՛ս Հայ մշակույթի գործիչներ, Երևան, 1978, էջ 279-284:
18. «Արարատ», 1901, էջ 497-504, 562-568, 1901, էջ 55-61, 121-127:

խրատականք»[19], «Շարք հայրապետացն Աղուանից», Աղոթքներ, «Վկայութիւն սրբոյն Խոսրովայն»[20], Առակներ, «Դատաստանագիրք հայոց»[21]: Սրանցից ներկայումս հրատարակված են վերջին յոթը, իսկ երկրորդը մեզ չի հասել:

Ուշագրավ է «Յայտարարութիւն»-ը[22], որը մի գրություն (նամակ) է՝ ուղղված Զաքարեին և Իվանեին, որով լայնախոհ հեղինակը հորդորում է նրանց, որ աշխատեն մեղմել հայ ու վրաց եկեղեցիների տարբերությունների հողի վրա եղած բամբասանքների ազդեցությունն այդ երկու ժողովուրդների քաղաքական համակեցության վրա, և «Շարք հայրապետացն Աղուանից»-ը[23], որ միակ աղբյուրն է, ուր համառոտ շարադրված է Աղվանքի XI-XII դարերի պատմությունը:

Մխիթար Գոշի աշխատություններից բացառիկ արժեք են ներկայացնում մանավանդ Դատաստանագիրքը և Առակները:

Մինչև XII դարը հայ իրականության մեջ աշխարհիկ օրենսգիրք չի եղել, իրավական հարցերը լուծվում էին սովորութական իրավունքով և եկեղեցական կանոններով:[24] Բայց եթե դա հնարավոր էր նախորդ շրջաններում, ապա Մխիթար Գոշի ժամանակաշրջանն առաջադրում էր աշխարհիկ դատաստանագրքի ստեղծման սուր պահանջ, որ թելադրվում էր ժամանակի սոցիալական և քաղաքական պայմաններով:

IXդ. վերջերին հայկական անկախ ու ինքնուրույն պետականության վերականգնմամբ՝ Բագրատունիների ժամանակ, նպաստավոր պայմաններ են ստեղծվում հայ ժողովրդի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար: Մեծ վերելք են ապրում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, աշխուժանում է քաղաքային կյանքը, բարգավաճում են հին քաղաքները, հիմնվում և արագորեն զարգանում են նոր բազմամարդ քաղաքներ, որոնք դառնում են նաև առևտրի կենտրոններ:

Այս բուռն զարգացումը, զգալի չափով ընդմիջվելով սելջուկյան արշավանքների ու տիրապետության ժամանակ (XI դարի երկրորդ կես-XII դարի առաջին կես), շարունակվում է Զաքարյանների օրոք, երբ Հայաստանի հյուսիս-արևելյան մասերը Վրաստանի օգնությամբ ազատագրվում են սելջուկներից: Այս շրջանում սկսում է հզորանալ նաև Կիլիկյան հայկական իշխանությունը:

Թե՛ Արևելյան Հայաստանում և թե՛ Կիլիկիայում տնտեսական կյանքի վերելքը, քաղաքների ու քաղաքային կյանքի ծաղկումն առաջացնում են տեղաշարժեր հասարակական հոգեբանության, սոցիալական հարաբերությունների մեջ, սրվում է դասակարգային հակամարտությունը:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ առաջացած փոփոխությունները պահանջ են առաջադրում կարգավորելու հասարակության տարբեր դասերի ու խավերի, նրա անդամների իրավահարաբերությունները, իրավագրելու գոյություն ունեցող դրությունը: Ժամանակի այս պահանջը բավարարելու նպատակով Մխիթար Գոշը ձեռնարկում է գրել դատաստանագիրք՝ Արցախում՝ Խաչենում, այնուհետև այն ավարտում է Հայաստանի այլ վայրերում, իսկ Ներսես

19. «Բազմավեպ», 1933, N9-10, էջ 451-459, «Սոփերք հայկականք», ԻԳ, Վենետիկ, 1933, էջ 1-82:
20. Ղ.Ալիշան, Հայապատում, մասն 2, Վենետիկ, 1901, էջ 384-391:
21. «Գրիգոր Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Տփղիս, 1905, էջ 361-366:
22. «Հայոց նոր վկաները», աշխատությամբ Հ.Մանանդյանի և Հ.Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 23-44:
23. Մխիթար Գոշ, Առակներ, աշխատությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1951:
24. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, աշխատությամբ Վ.ծ.վ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880:

Լամբրոնացին (1153-1198) թարգմանում է բյուզանդական օրենքները՝ Կիլիկիայում:

Ինչպես նշեցինք, Մ. Գոշը «Դատաստանագիրքը» ձեռնարկել է գրել 1184 թվականին. «ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղև ի թուականութեանս հայոց ՈԼԳ» (=1184)[9], այն ժամանակ, երբ հին Գետիկ վանքն ավերվել էր, դեռ չէր վերականգնված ու վերակառուցված, և նա ապրում էր Դասնո անապատում ու Հոռոմաշեն վանքում:

Մխիթար Գոշը գիրքը հյուսել է հետզհետե («առ սակաւ սակաւ»), երկար տարիների ընթացքում և ավարտված չի համարում, քանի որ, նրա կարծիքով, օրենսգրքերը երբեք կատարյալ և ավարտուն չեն կարող լինել, ժամանակի, միջավայրի և իրադրության պահանջով միշտ ենթակա են փոփոխման, լրացման ու կատարելագործման: Իր դարաշրջանի համար այս շատ առաջադիմական մտահայեցողությունից ելնելով էլ նա խնդրում է հետնորդներին՝ «որքան նորագոյն իրք պատահի և քննեսցի չիմաստնոց և հատցի դատաստան՝ զնոյն գրել ի գիրս»:[25]

Այսպիսով, հորինելով «Դատաստանագիրքը», նա նպատակ ուներ զսպել ավատատերերի կամայականություններն ու ապօրինությունները և հասարակական ու մարդկային հարաբերությունները կարգավորել օրենքի ուժով: Այս տեսակետից ուշագրավ են հատկապես այն հոդվածները, որոնք ուղղված են «թույլերի», հասարակության ստորին խավերի շահերի պաշտպանությանը:

Մխիթար Գոշը հռչակավոր իրավագետ էր, շնորհալի առակագիր և մեծատաղանդ ուսուցիչ-մանկավարժ: Նա հայոց առաջին օրենսգիրք-դատաստանագրքի հեղինակն է: Խաչենում, Հայաստանի այլ վայրերում իր բացած դպրոցներում ուսուցումը կազմակերպում էր ձրի, անվճար, որոշ վերապահումներով պարտադիր ուսուցման ջերմ կողմնակից էր և առաջին օրինականացնողն իր «Դատաստանագրքում»: Ճիշտ է, դրանք համընդհանուր ճանաչում և կիրառում չստացան պետականության բացակայության և սոցիալ-տնտեսական այլազան նկատառումներով, բայց փաստը մնում է փաստ, որ Մխիթար Գոշի մոտ այդ դրույթներն օրինականացված են:

Մխիթար Գոշը միաժամանակ մեր առաջին առակագիրն է: Նրա 190 առակները (մի մասը գրել է Խաչենում՝ մանկավարժական գործունեության տարիներին) ուսուցողական (դիդակտիկական) բնույթի են, նպատակադրում են «ախորժելի ձևով խրատել և ազդել»[26], ունեն ուսուցողական և բարոյախոսական, բարոյակրթական նշանակություն, հետևապես՝ որպես ուսումնական ձեռնարկ կամ դրան նյութ մատակարարող գործեր, թե իր ժամանակ և թե հետագայում արժանավոր տեղ են գրավել դաստիարակության, կրթության և դպրոցական ուսուցման մեջ: Այսօր էլ, մանկավարաժական նկատառումներով, ուսանելի են նրա կազմած բարոյակրթական-բարոյախրատական բնույթի խրատները, վարքի ու բարքի կանոնները:

25. «Դատաստանագիրք, նախադրություն», էջ 69-70:
26. Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 137:

6. Կին մանկավարժների լուսավորչական գործունեությունը

Վերոնշյալ կրթական, մշակութային գործիչների բեղուն գործունեության շրջանում Արցախում հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում և դպրոցաշինության ասպարեզում լայն գործունեություն են ծավալել նաև կին լուսավորիչ-մանկավարժները

Հայ պատմագիտության մեջ, մամուլում և, առհասարակ, գրականության մեջ, մանկավարժական աղբյուրներում շատ է խոսվել հայ կանանց հարցի մասին, որ հայ կինը տղամարդուն հավասար, շատ դժվարություններ է կրել, վարել է ընտանիքի տնտեսությունը, իսկ անհրաժեշտության դեպքում օտար նվաճողների ու բռնակալների դեմ է ելել և զենքը ձեռքին պաշտպանել հայրենիքի ազատությունն ու անկախությունը:

Մեր պատմիչները, պատմաբանները, գրողները, մանկավարժներն ու հոգևոր-մշակութային գործիչները շատ են գրել հայ կնոջ առաքինության, ճկուն մտքի, հարուստ երևակայության, աշխատասիրության, ընտանիքին, հայրենիքին և ազգին նվիրվածության մասին: Այդ են վկայում Մ. Խորենացու, Եղիշեի, Ղ. Փարպեցու, Մ. Կաղանկատվացու, Մխիթար Գոշի, Վարդան Վարդապետի, Վարդան Հացունու, խորհրդային և մեր ժամանակների հետազոտողների՝ Աբ. Մովսիսյանի, Ց. Սիմոնյանի, Հ. Մաթևոսյանի, Հ. Խաչատրյանի, Բ. Ուլուբաբյանի, Ս. Ավագյանի և այլոց ուսումնասիրությունները: Հայ կանանց մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ, հրատարակվել կենսագրական բառարաններ, գրքեր, ալբոմներ և այլն: Սակայն մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի (V-XIII դարերում) Արցախի կին լուսավորիչ-մանկավարժների գործունեությունը դեռևս պատմամանկավարժական տեսանկյունով լուսաբանված չէ: Այս տեսանկյունով էլ սույն աշխատության այս բաժնում բնութագրելով Արցախի հոգևոր-մշակութային, դպրոցի ու մանկավարժության ասպարեզի գործիչների մշակութային, լուսավորչական գործունեությունը, չենք կարող չհիշատակել պատմաշրջանում արցախահայ կյանքում վիթխարի դեր խաղացած հայ կանանց բեղուն գործունեությունը՝ լուսավորության, մշակույթի, հասարակական կյանքի բազմաթիվ բնագավառներում:

Հանրահայտ է, որ պատմական բոլոր ժամանակաշրջաններում և ամեն մի իրադրության պայմաններում, Արցախցի կինը մեծ ջանասիրությամբ ու խանդավառությամբ է կատարել իր սրբազան պարտականությունները, եղել է առաջին հերթին հոգատար ու սիրելի մայր, դաստիարակչուհի, հոգացել ոչ միայն իր, այլև հասարակության բոլոր խավերի երեխաների կրթության, ուսուցման, դաստիարակության մասին և կյանքի ուղեգիր տվել նրանց:

Արցախցի հայ կինն ակտիվորեն մասնակցել է նաև պետական-հասարակական աշխատանքներին՝ հանուն երկրի և ժողովրդի, ազգի բարօրության չխնայելով ջանք ու եռանդ, իսկ անհրաժեշտության դեպքում և վճռական պահերին կյանքը զոհաբերել այդ նպատակների իրականացման համար: Շատ կանայք դպրոցական ուսուցման և ինքնակրթության շնորհիվ հասել են ցանկալի մտավոր մակարդակի և զբաղվել դասատվությամբ՝ որպես ուսուցչուհիներ իրենց գիտելիքները հաղորդելով աշակերտ-աշակերտուհիներին: Նույնիսկ ամենադժվարին պայմաններում, որոնց մեջ գտնվում էր Արցախ-Ուտիքյան աշխարհը, ամուսնու բացակայության դեպքում երկիրը կառավարում էր նրա կինը: Պատմության մեջ նրանք հայտնի էին իրենց հայրենասիրական, մշակութային, լուսավորչական ազգանվեր ձեռնարկումներով:

Պատմագիտական գրականությունից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք,

որ V դարում «տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի» տղամարդկանց շարքերում կռվում էին թշնամու դեմ և միաժամանակ դաստիարակում իրենց զավակներին, որպեսզի նրանք անուսում չմնան: Վ.Հացունին միայն հին կանանց մեջ է գտնում իսկական հայուհու պատկերը: «Իսկապես ուշագրավ ու պատկառելի է հին հայ կնոջ պատկերը, շատ ավելի քան զոր կարելի է երևակայել», ասում է նա՝ թվելով հին հասարակական կյանքի բազմաթիվ բնագավառներում հայ կնոջ գործուն մասնակցությունը:[1]

Դեռ V դարի արցախահայ կանանց սխրագործությունների մասին խոսելիս Հայկ Խաչատրյանը «Վաչագան» պատմավեպում գրում է, որ Արցախ-Ուտիքի թագավոր Վաչեն, կամովին հրաժարվելով արքայական թագից, երկիրը չզրկեց ինքնուրույնությունից: Իշխանությունն իր ձեռքն առավ արքայամայր **Էշխը:**[2] Այս հզոր կինը ծանր ու թեթև արեց (մտքում կշտամբում էր որդուն՝ Վաչեին «Ես քո տղամարդ ասողին») և գտավ, որ չի կարելի հույս կապել նաև մյուս որդու՝ Հազկերտի հետ, որը միայն լավ որսորդ էր ու նժույգավար, սակայն ընդունակ չէր երկիրը կառավարելու: Եվ նրա միակ հույսն իր թոռն էր՝ Հազկերտի և **Արևիկի** որդի Վաչագանը: Տատի կարծիքով, Արցախ-Ուտիքի աշխարհի ապագա տերը՝ թագավորը, Վաչագանն է:

Տատը եղավ Վաչագանի առաջին դաստիարակչուհին: Էշխի՝ թագուհու, բացած տնային-մասնավոր դպրոցում կրթություն ու դաստիարակություն են ստանում ոչ միայն իր թոռը՝ Վաչագանը, այլև հասարակ խավերի երեխաները՝ տղաներն ու աղջիկները: Ինչպես նշել ենք նախորդ բաժնում՝ ուսուցիչն էր Մամիկոնյան տոհմի շառավիղ Ամպակը: Հետագայում Աղվենի կրթատանը (դպրոցում) աշակերտ-աշակերտուհիներին գրել կարդալ էին սովորեցնում թագուհին և հարսը՝ Արևիկը, Վաչագան արքայի կինը՝ Շուշանիկը:[3]

Թագուհի Շուշանիկը ոչ միայն դպրոցներ էր բացում հայրենի գյուղում՝ Ազոխում (Շուշանիկը Ազոխում հայտնի մտավորական Հրաչյայի դուստրն էր), Դրախտիկում և այլ գյուղերում, այլև իմաստուն խորհուրդներով սկսեց խառնվել տերության գործերին, երբեմն արքային ետ էր պահում հանպատրաստից վճիռներ արձակելուց: Վաչագանը զարմանքով տեսնում էր, որ կինը արտասովոր խելք ունի և իր խորհրդածությունները կիսում էր նրա հետ: Շուշանիկն իր հիշատակարանում գրի է առնում Վաչագան արքայի գործունեությունը՝ երկրի հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի և այլ բնագավառներում: Արքայի շրջագայության ժամանակ նա միշտ իր ամուսնու կողքին էր, հորդորում էր նրան հոգ տանել հատկապես հասարակ խավի երեխաների կրթության ու դաստիարակության մասին: Թագուհին մեծ դեր է խաղացել երկրի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում, ակտիվորեն մասնակցել նաև երկրի շինարարության, զանազան մեծ ու փոքր եկեղեցիների կառուցումանը, խոշոր նշանակություն ունեցող բարեգործական ձեռնարկումներին:

VII դարասկզբին, չնայած ճգնաժամային իրավիճակին, Արցախ-Ուտիքյան աշխարհում հոգևոր-մշակութային կյանքի վերափոխումների ոլորտներում շարունակվում էին Վաչագան Բարեպաշտի լուսավորչական ձեռնարկումները: Բ.Ուլուբաբյանը «Խաչենի իշխանությունը 10-15-րդ դարերում» աշխատության մեջ[4] բե-

1. Վարդան Հացունի, Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936, էջ 6-8:
2. Հ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 47-48:
3. Նույն տեղում, էջ 110-114:
4. Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխ. 10-15-րդ դդ, էջ 61:

ռում է այն փաստը, որ VII դարասկզբին Արցախ-Ուտիքյան աշխարհի իշխանանց իշխան ու սպարապետ Ջիվանշիրն անշեղորեն հետևում է Վաչագան արքայի օրինակին, ամրապնդում իր տնտեսական ու իրավական կարգը, Արցախի վանքերին ու եկեղեցիներին կից բացում կրթական օջախներ: Միհրանյանների, հատկապես՝ Ջիվանշիրի օրոք մեծ ուշադրություն էր դարձվում քաղաքաշինությանը, աննախընթաց շուք ու փայլ ստացան Գարդման բերդն ու Պարտավը:

VII դարի երկրորդ կեսին՝ Ջիվանշիրի մահից հետո (683թ. Ջիվանշիրին դավադրաբար սպանեցին մայրաքաղաք Պարտավի իր դղյակի պարտեզում),[5] երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի բնագավառներում սկսած նրա բարենորոգումները շարունակում են մայրը՝ **Աստղիկը** (քանի որ Միհրանյան վերջին արու իշխանազունին՝ Ստեփանոսին սպանեցին Թարթառի հովտում, Դադի վանքի մոտ) և դուստրը՝ **Ասպրամը:** Երկրամասի ներսում տիրող քաղաքական բարդ իրադարձությունների հետ կապված՝ Ջիվանշիրի մայրն իր աղջկան՝ Ասպրամին, փախցրեց Խաչենի բերդ, այնտեղ ամուսնացրեց Սահլ Սմբատյան մեծ իշխանի որդի Ատրներսեհի հետ: Այստեղ Ասպրամ իշխանուհին անշեղորեն հետևում է իր հոր օրինակին, ամուսնու հետ միասին մասնակցում երկրի շենացմանը, վերանորոգում ու կառուցում մի շարք եկեղեցիներ ու վանքեր, նրանց կից բացում կրթական օջախներ: Վարդան Հացունին, անդրադառնալով տարբեր բնագավառներում հայ կնոջ կատարած ստեղծագործ աշխատանքին, իրավացիորեն մատնանշուում է, որ հայ կինն «աղքատիկ խրճիթներում» հավաքում էր իր զավակներին և, կանգնելով «դաստիարակության գործին գլուխ», ուսում և կրթություն էր տալիս նրանց: Հայրենասիրական սխրագործություններով և մշակութային, լուսավորչական ձեռնարկումներով Ասպրամն անշեղորեն հետևում է հայոց պատմության մեջ հայտնի կին գործիչներին՝ Փառանձեմ թագուհուն (IV դարում 14 ամիս փոխարինեց իր ամուսնուն՝ Արշակ արքային և ղեկավարեց Արտագերս ամրոցի պաշտպանությունը), թագուհի Շուշանիկին, որը Վաչագան արքայի հետ մեկտեղ ակտիվորեն մասնակցում էր երկրի բարեշինմանը, Մամիկոնյանց տիկին Շուշանիկին և շատ ուրիշների, որոնց մասին գովեստով է խոսում Վ.Հացունին «Հայուհին պատմութեան առջև» աշխատության մեջ:

XI-XII դարերում արցախցի կնոջ շինարար ձեռքը մասնակցել է երկրամասի պալատների, դղյակների, բերդերի և ամրոցների, եկեղեցիների և վանքերի, դպրոցների, գրատների, մատենադարանների, դպրատների, ջրմուղների, կամուրջների և այլ կառուցապատմանը: Երկրամասի կանայք զբաղվում էին նաև բազմաթիվ արհեստներով և արվեստներով՝ գեղանկարչությամբ, ձեռագործությամբ, ասեղնագործությամբ: Արհեստավոր կանանց արտադրանքը որոշ չափով դուրս էր գալիս ընտանիքի շրջանակներից և կրում էր հասարակական սպառողական բնույթ: Հենց դրանով էլ արհեստավոր, արտադրող կինը փորձ է անում դուրս գալ ընտանեկան նեղ պայմաններից և առաջին քայլերն է անում հասարակական կյանքին մասնակցելու համար:

Պատմագիտական գրականության մեջ կան բազմաթիվ վկայություններ քննարկվող ժամանակաշրջանում Արցախի կանանց գործունեության մասին:

Բագրատ Ուլուբաբյանը Վարդան Վարդապետ պատմիչի «Հավատքումն պատմութեան» աշխատությունից վկայում է, որ Զաքարյան իշխանության շրջանում Արցախ-Խաչենը բաժանված էր երեք իշխանությունների՝ Նեքին Խաչեն, Միջին Արցախ կամ Հաթերք և Վերին Խաչեն: Այս երեք իշխաններն էլ խնամիական

5. Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմություն, էջ 39-40:

կապերով կապված էին Զաքարյան տոհմի ստեղծած կենտրոնի հետ: Ներքին Խաչենի տեր Վախթանգ-Տանգիկը կին էր առել Սարգիս Զաքարյան մեծ իշխանի դուստր Խորիշահին՝ Զաքարեի և Իվանի քրոջը: Վերին Խաչենի կամ Ծարի տեր Հասանի կինն էր նույն Սարգսի մյուս դուստր Դոփին: Իսկ Հաթերքի տեր Վախթանգի կինն էր Արծրունյաց տոհմի հռչակավոր քուրդ իշխանի դուստր Արզու խաթունը: Քուրդ իշխանի քույրն էլ Սարգիս Զաքարյանի կինն է եղել, այսինքն՝ Զաքարեի և Իվանի մայրը: Միանգամայն պարզ է, որ մի այսպիսի խնամիական հյուսվածքը պետք է բարերար ազդեցություն ունենար ստեղծված ազգային պետական մարմնի վրա՝ այն դարձնելով կուռ ու միասնական:

Այդ երեք իշխանությունների կանայք հսկայական դեր են խաղացել երկրամասի մշակութային կյանքի, լուսավորության զարգացման և, մասնավորապես, հայ սերունդների դաստիարակության, կրթության գործում: Պատմաշրջանում նրանք հայտնի էին երկրամասում ծավալած հայրենանվեր գործունեությամբ, մշակութային, լուսավորչական ձեռնարկումներով:

Ինչպես նշեցինք, Ներքին Խաչենի տերն էր Վախթանգ-Տանգիկը, կինը՝ մշակութային հայտնի գործիչ, իշխանուհի **Խորիշահը:**[6] Նա ոչ միայն տնտեսություն էր վարում, մասնակցում երկրի կառուցապատման գործընթացին, այլև զբաղվում երեխաների դաստիարակությամբ ու կրթությամբ:[7]

Գարեգին կաթողիկոսը «Յիշատակարանք ձեռագրած» ուսումնասիրության մեջ գրում է, որ Վախթանգի ու Խորիշահի կողմից գրվել է Ավետարան-հիշատակարան «Զմտաւ ածեալ զբանս մարգարէին, որ ասէ՝ պատուիրանք տեառն լոյս և լուս տան աչացս, և երկիւղն Աստուծոյ մտա յաւիտեան: Արդ ես Վախթանգ և զուգակից իմ Խորիշահ ցանկացող եղաք սրբոյ Աւետարանիս»:[8] Հիշատակարանում խոսվում է այն մասին, որ Վախթանգն ու Խորիշահը կառուցել են եկեղեցի, նրան կից բացել դպրոց «Երևելի սպասիլք զարդարեալ ներքոյ և արտաքոյ և հաստահեղուն հաւրին ուածովքո»:[9] Ինչ եկեղեցի է կառուցվածը: Խորիշահն իր մի արձանագրությամբ պատմում է. «…վերստին շինեցի զեկեղեցին Մեծառանից ի փրկութիւն հոգոյ իմո, ի բարեխալս զաւակաց իմոց…… Գ Վախթանգ և զիս յաղաւթս յիշեցէք»:[10] Խոսքը Մեծառանք գավառի եպիսկոպոսանիստ Սուրբ Հակոբ վանքի մասին է, որ Խոխանաբերդի ճյուղի հոգևոր-մշակութային կենտրոններից է եղել:

Մխիթար Գոշը, ականատես լինելով Արցախի հոգևոր-մշակութային տեղաշարժերին, ճարտարապետական աննախընթաց կառույցներին, իր մի աշխատության մեջ հիշատակում է, որ իշխանուհի Խորիշահը եղավ ոչ միայն վանքեր, եկեղեցիներ կառուցողներից մեկը, այլև մանուկների «սնուցանող, դաստիարակ և ուսուցանող»:[11] Նրա մասնավոր դպրոցում (դա անվճար դպրոց էր, որտեղ սովորում էին հասարակ մարդկանց երեխաները) աղջիկների ամենասիրելի զբաղմունքներից են եղել ձեռագործությունը և ասեղնագործությունը: Իսկ Վարդան Հացունին «Հայուհին պատմութեան առջև»[12] աշխատության մեջ գրում է, թե իր կյանքի վեր-

6. Տե՛ս Վարդան Վարդապետ, նշվ. աշխ., էջ 40:
7. Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 70-76:
8. Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց Ա. Էջմիածին, 1868, էջ 761:
9. Նույն տեղում:
10. Տե՛ս Մ.Բարխուդարյան, Արցախ, Թիֆլիս, 1895, էջ 177:
11. Տե՛ս Մ. Գոշ, Կաթողիկոսք ի դեպ Աղուանից աշխարհին ի մեջ ԺԲ դարում, Վենետիկ, 1854, էջ 104:
12. Վ.Հացունի, նշվ. աշխ., էջ 109:

ջին տարիներին այդ արհեստով էր ապրում Խորիշահը (1212-1216), որի մասին ասում են, թե «ինքն ձեռագործով իմով կերակրէր»:[13] Ականավոր իրավագետը պարծանքով է խոսում Խաչենցի շնորհալի կնոջ՝ իշխանուհի Խորիշահի մասին, որը եղավ ուսանելի օրինակ իր ժամանակակիցների և հետագա սերունդների համար:

Խաչենի շնորհալի կանանց մշակութային-լուսավորչական գործունեության մասին գովեստով է խոսում Վարդան Վարդապետ պատմիչը, գրելով, որ XII դարի սկզբներին Վերին Խաչենի կամ Ծարի տեր Հասանի մահից հետո իշխանությունը կառավարում էր նրա կինը՝ **Դոփի իշխանուհին:** Խելամիտ կառավարելու համար իշխանական տոհմը հետագայում կոչվել է նրա անունով՝ Դոփյան:[14] Իշխանուհի Դոփին շինարարական, լուսավորչական մի շարք ձեռնարկումներ իրագործեց: Ամուսնու՝ Հասանի, եղբայրը՝ նշանավոր հոգևորական գործիչ Հովհաննեսը, 1204 թվականին Թարթառի աջ ափին՝ Վաղուհասից արևմուտք, կառուցել է մի տաճար՝ այն կոչելով հայոց եկեղեցու նշանավոր գործիչների մեկի՝ Խաթ եպիսկոպոսի անունով՝ Խադավանք (Խաթրավանք): Դոփի իշխանուհին, ակտիվ մասնակցելով ճարտարապետական այդ կառույցի շինարարությանը, այն ավարտվելուց հետո այստեղ անմիջապես բացել է եկեղեցական դպրոց, որտեղ դասավանդում էր Հովհաննես եպիսկոպոսը:[15]

Պատմիչը միաժամանակ նշում է, որ Հովհաննես եպիսկոպոսը շինարարության ժամանակ Դոփի իշխանուհու հորդորմամբ հավաքել է խաչքարեր, ձեռագրեր ու մատյաններ: Հովհաննես եպիսկոպոսը հավաքած մատյաններով վանքի համալիրում ստեղծել է մատենադարան, որը մի փառավոր գործ էր միջնադարյան Խաչենի լեռնաստանում: Այս ձեռագրերից շատերն այժմ պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում: Բ. Ուլուբաբյանը «Դադի վանք կամ Խոթավանք»[16] աշխատության մեջ նշում է, որ այն ժամանակ Խաչեն գավառի կրոնական-մշակութային կենտրոններ էին Դադի վանքը, Խաթրավանքը, Ս.Հակոբի վանքը, Գանձասարը: Դարեր շարունակ այստեղ անընդմեջ գործել են եկեղեցական, հետագայում՝ ծխական դպրոցներ:

Արցախ աշխարհի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում և դպրոցաշինության ասպարեզում մեծ դեր է խաղացել Հաթերքի իշխանանց իշխան Վախթանգի կին **Արզու խաթունը,** որը հայտնի էր Խաչենի մշակույթին մատուցած իր մեծ ծառայությամբ: Ամուսնու՝ Վախթանգի, մահից հետո (1214թ.), նրա աթոռն անտեր էր մնացել, որովհետև տղաներից երկուսը մահացել էին, իսկ երրորդը՝ զոհվել պատերազմում: Արզու խաթունը հենց նույն 1214-ին երեք հարազատների շիրիմների վրա նրանց հիշատակին հին Դադի վանքում կառուցել է մի փառահեղ տաճար, որն այժմ էլ կանգուն է և վկայում է Խաչենի շինարար վարպետների ստեղծագործական վսեմ ձիրքը: Նա ուներ նկարակերտության ու ոստայնանկության տաղանդ: Կիրակոս պատմիչը գրում է. «Տաղանդավոր արուեստագիտուհին քանքարա թագոյց մեկը չէր և մենք նրան տեսնում ենք այդ վարագույրները հրաշակերտելիս իր աղջիկների, աշակերտուհիների հետ, որոնց ինքը դաստիարակել է: Նրա նկարները քանդակագործը վերցրել է, անշուշտ, տիկնոջ ձեռքով գործուածներից»:[17]

---

13. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջմիածին, 1858, էջ 125-126:
14. Տե՛ս Վարդան Վարդապետ, նշվ.աշխ., էջ 140:
15. Նույն տեղում:
16. Բ.Ուլուբաբյան, Դադի վանք կամ Խոթավանք, էջմիածին, 1970, էջ 10:
17. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջմիածին, 1858, էջ 202-203:

Պատմիչը նաև վկայում է, որ կրթական, լուսավորչական, եկեղեցական կառույցների նվիրյալը Հաթերքում ստեղծել է մեծ արհեստանոց, որտեղ գործում էին գորգեր, սուրբ խորանի ծածկույթներ ու վարագույրներ, որոնց վրա Քրիստոսի ու մյուս սրբերի պատկերներն էին «գորգ քանդակերպ և ճշտագույն հանոլածովք»:[18]

Եվ նրանք այդ նուրբ ու հրաշալի գործվածքներով զարդարում էին ոչ միայն հայրենի Դադի վանքը, այլև Հաղպատի, Մակարավանքի և շատ այլ վանական համալիրների տաճարները: «Եվ նրանք, ովքեր տեսնում էին այդ գործվածքները,- գրել է Կիրակոս պատմիչը,- օրհնություն էին տալիս Աստծուն, որ այդ կանանց պարգևել է ոստայնանկության իմաստությունը և նկարակերտության հանճարը»:[19] Պատմիչը միաժամանակ նշում է, որ մի տեսակ ձեռագործության տնային դպրոց է եղել Հաթերքի իշխան Վախթանգի տունը, որտեղ տիկին Արզու խաթունը սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել, ձեռագործ, երաժշտություն, որոշ տեղեկություններ էր տալիս ժամանակի հայտնի գիտությունների՝ մաթեմատիկայի, աշխարհագրության, հայոց պատմության, արվեստի մասին, միաժամանակ աշակերտներն աշխատում էին արհեստանոցում, գործում գորգեր, վարագույրներ:

Մանկավարժական տեսակետից շատ հետաքրքիր է, թե Արցախի առաջին հայ կինը, որպես ուսուցիչ, ուսուցչապետ, ինչ ձևով էր իր աշակերտներին գրագիտություն սովորեցնում, դաստիարակում, նրանց սնուցում ջանասիրություն, հայրենասիրություն, սեր դեպի աշխատանքը, պարտքի պատասխանատվության զգացում, նվիրվածություն, բարոյական այլ հատկանիշներ: Արժեքավոր էր երեխաների գեղագիտական դաստիարակության պահանջը նրա հիմնած ժողովրդական դպրոցում, որտեղ սովորում էին բոլոր խավերի երեխաները: Ինչպես տեսնում ենք, Արցախի հայտնի մշակութային գործիչ, դպրոցաշինարար Արզու խաթունն իր հիմնած դպրոցում մեծ ուշադրություն է դարձրել երեխաների կրթությանը, աշխատանքին, բարոյական, գեղագիտական դաստիարակությանը:

Պատմաշրջանում, որպես տնային դաստիարակ, արվեստագետ, հայտնի է եղել նաև Խաչենի Հասան Ջալալի կինը՝ Բարեպաշտուհի Մամքանի դուստր **Մամախաթունը,** որը լսել է մեծ ուսուցչապետ Հովհաննես Երզնկացու դասախոսությունը աստղերի շարժման մասին և իր որդու ձեռքով գրել տվել այդ դասախոսությունը, ինչպես վկայում է Ղ. Ալիշանը. «Յաղագս երկնային շարժման» վերնագրով: Այդ կնոջ ուսումնասիրությանն ենք պարտական, որ վերոհիշյալ գործը մնացել և հասել է մեզ:[20]

Նման օրինակներ շատ են (Թագուհին, Դովլա Մարինեն և ուրիշներ): Այսքանն էլ բավական է ապացուցել, որ քննարկվող ժամանակաշրջանում տնային դպրոցներում և ընտանիքներում դաստիարակված ու կրթված կանայք էին ընտանեկան դաստիարակության լավագույն օրինակներ տալիս, ակտիվորեն մասնակցում երկրի ճարտարապետական կառույցների կերտմանը, մշակույթի, գիտության ու արվեստի զարգացմանը, երեխաների կրթության ու դաստիարակության, գրքի ու գրականության ստեղծման գործին:

Այդ ժամանակաշրջանում Արցախի կանանց համար հանրային համակարգի կրթության բացակայության, անջատ ու երկսեռ դպրոցներ չունենալու, դրանցից

18. Նույն տեղում, էջ 203:
19. Նույն տեղում:
20. Ղևոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1885, էջ 512:

չօգտվելու դեպքում բնական է, որ նրանք կյանքի բազմաթիվ բնագավառներում իրենց դրսևորելու համար պարտական էին տնային կրթությանը: Տնային դպրոցները հայոց կրթության համակարգում մեծ դեր են խաղացել և երբեմն նույնիսկ երկար ժամանակ փոխարինել հասարակական ու պետական դպրոցներին: Նույնիսկ երբ Հայաստանի, Արցախի համար ամենադժնդակ պայմաններում քայքայվում էին դպրոցները, երբ երկիրն ընկնում էր նվաճողների ծանր լծի տակ, աճում էին «մանր դպրոցները», «տուն-դպրոցները» և «իմաստնոց տները»:[21]

Իսկ թե ինչպես էին Վերին Խաչենցիք վերաբերվում մշակույթին, արվեստին, դպրոցին, շատ լավ նկարագրում է Մ. Գոշ Վարդապետը, գրելով. «Խաչենցիք անմասն չեն մնում և այդ մտավոր-մշակութային եռանդուն շարժմանը: Լեռնային պարզ և կոպիտ շինարարությունը, որ փոքրիկ ու անուշագրավ յիշատակարաններով է հանդես բերուած Արցախի լեռներում, ընդունում է Զաքարեան շրջանի արուեստի ներշնչումները և դրանց ամենագեղեցիկ կոթողն է Գանձասարի վանքը»:[22]

Պատմական աղբյուրներից հայտնի է, որ մինչև Գանձասարի նոր վանքի կառուցումը և Հասան Ջալալյան տոհմի փառավոր հոգևոր-մշակութային լուսավորչական գործունեության ծավալումը՝ Արցախի ու շրջակա գավառների համար հոգևոր-մշակութային կենտրոններ են եղել Գանձասարի հինավուց եկեղեցին, Խաչենի իշխանանիստ Խոխանաբերդը, Խադա (Խաթրա), Դադի, Ս.Հակոբի վանքերը, Վաղուհաս գյուղի հինավուրց եկեղեցին, որը կառուցվել է Խոխանաբերի տեր Գրիգոր իշխանի դուստր՝ Տուղանի իշխանի կին **Հասանի** նախաձեռնությամբ. «Ի թիվս ՈԿԴ (1215թ.) էր: Ի վերջին և ի նվազել ժամանակիս ես Հասան դուստր մեծի Գրիգորոյ ամուսին տաւղանայ իշխանի, շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն… և առն իմոյ….»:[23] Այդ վանքերն ու եկեղեցիները, բացի ամրոցների դեր կատարելուց, Հասան իշխանուհու լուսավորչական ձեռնարկումների շնորհիվ ծառայել են նաև Արցախում գրագիտության տարածմանը, դրանցում գրքեր են գրչագրվել, Ավետարան, հիշատակարան: Դարեր շարունակ այդ պատմաճարտարապետական կոթողներին կից գործել են դպրոցներ, որտեղ պահպանվել է հին ձեռագրերի մի մասը (այժմ պահպանվում է Մատենադարանում), իսկ մյուս մասն այրվել, ոչնչացվել է, հրդեհի մատնվել օտար զավթիչների իրագործած ավերվածությունների ժամանակ:

XII դարի սկզբներին մշակութային, շինարարական, լուսավորչական գործը վերելք է ապրում Հասան-Ջալալյանի (Վախթանգ Տանգիկի ավագ որդին) իշխանության ժամանակաշրջանում: Նրա կենսագրության նշանակալից մասն է կազմում շինարարական գործունեությունը, որ ծավալվել էր հայրենի Խաչենում և Խաչենի սահմաններից դուրս՝ Հաղպատում ու Կեչառիսում: Ամենուր նրա հետ էր կինը՝ **Բարեպաշտուհի Մաքմանը,** որը ինչպես ամուսնու հետ, այնպես էլ նրանից զատ և որդի Աթաբեկի, դուստր Մամախաթունի հետ և միայնակ եկեղեցիներ էր նորոգում ու կառուցում, խաչքարեր կանգնեցնում, օժանդակում մատյանների ստեղծմանը, բացում դպրոց, որտեղ սովորում էին ոչ միայն հոգևորականների, իշխանական տոհմի, այլև հասարակ աշխատավորների երեխաները: Հասան-Ջալալի և իր տիկնոջ՝ իշխանուհի Մամախաթունի անմիջական նախաձեռնությամբ սկսվում է Գանձասարի նորակառույց վանքի շինարարությունը: Նորակա-

21. Մ.Գոշ, նշվ. աշխ., էջ 104-105:
22. Նույն տեղում, նաև Կ.Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 126:
23. Մեսրոպ մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքեր, Երուսաղեմ, 1938, էջ 93, 102:

ռույցին վիճակված էր բազմապատկելու նախկին հոգևոր կենտրոնի փառքը, դառնալու Խաչենի իշխանության մշակութային կյանքի խոշոր կաթողիկոսանիստը:

Պատմական գրականության մեջ կան բազմաթիվ վկայություններ XVII-XVIII դարերում Արցախի հայ կանանց հասարակական, քաղաքական, լուսավորչական գործունեության մասին (դժբախտաբար XIV-XVI դարերի Արցախի կանանց գործունեության վերաբերյալ տեղեկություններ չկան մեզ հետաքրքրող պատմաշրջանի պատմագիտական աղբյուրներում): Նրանք մասնակցել են շատ ժողովների, հանդեսների, ընտրությունների, պատերազմական գործողությունների, ամրոցների պաշտպանության, երկրի շինարարական կառույցներին:

Հասարակական տարբեր խավերի, տարբեր ծագում ունեցող բազմաթիվ կանայք պետական, հասարակական, մշակութային և վանական ու եկեղեցական զանազան հիմնարկներին ու կրթական օջախներին նվիրել են տներ, կալվածքներ, անասուններ, ջրաղացներ, զանազան տեսակի գույք ու թանկարժեք իրեր: Առավել մեծ մշակութային գործ էր, երբ կանայք գրում կամ գրել էին տալիս տարբեր բովանդակությամբ բազմաթիվ գրքեր, ավետարաններ և նվիրում մատենադարաններին, գրատներին, դպրոցներին ու գիրք սիրող, պահող առանձին գիտուններին, ուսուցիչներին, վանքերին ու եկեղեցիներին: Առավել շատ կանայք եղել են գրչության արվեստի աչքի ընկնող ներկայացուցիչներ: Գրքեր արտագրող, օրինակող գրիչներ: Արցախի պատմությանը նվիրված աշխատություններում[24] շատ են խոսում Դիզակի տիրակալ Եգանյան տոհմի կանանց՝ **Գոզալի դուստր Թավարի,** Մելիք Հուսեինի կնոջ՝ **Աննայի** (Դիզակի տիրակալ Մելիք Եգանի քույրը), **մայրապետ Գայանեի** մշակութային, լուսավորչական գործունեության մասին: Գայանեն՝ Աննայի դուստրը, մտնում է կուսանոց, նվիրվում գրչարվեստին: Ղ.Ալիշանը «Սիսուան (Սիսական)» աշխատության մեջ գրում է. Ղարաբաղի կուսանոցում հայտնի գրիչ էր մայրապետ Գայանեն, որ «ջերմեռանդ սիրով» ընդօրինակեց մի ավետարան:[25]

«Սակավ ամօք առաջ,- գրում է Ալիշանը,- մի ի կուսացն Երինի կամ Եռինե անուն՝ ընդօրինակերաստ զժամագիրս ատենի և ընծաեր Մահդասի Կարապետի և եղբոր նորա տեառն Բաղդասարա ծերունուն ի Գեօղն Յօջազ»:[26] «Իմ 1881 թվի ճանապարհորդութեան ժամանակ,- գրում է Ռաֆֆին,- Աւետարանոց գիւղում ինձ յաջողուեցաւ տեսնել մի հրաշալի գրչագիր աւետարան, որ գրուած էր նաև Գայանեի ձեռքով»: Ղ. Ալիշանն իր աշխատության մեջ նաև հիշատակում է, որ ղարաբաղցի **Մարիամ** անունով մի կույս ընդօրինակում էր Գր.Տաթևացու «Ոսկեփորիկ» գիրքը՝ Շէնհէր մենաստանում, ուր կային բազմաթիվ գրագետ կանայք: Մարիամը գրչության արվեստի մեջ իրեն անվանում էր «դեռ թերավարժ»:[27]

Պատմական աղբյուրներից հայտնի է, որ XVIII դարի սկզբներին Արցախ-Սյունիքի ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ, գիտուն, ուսումնասեր և մշակութային, լուսավորչական ձեռնարկումներով հայտնի է եղել Գանձասարի Հասան Ջալալյանի եղբոր՝ Դանիել բեկի, դուստր **Սաթենիկը** (Մխիթար Սպարապետի կինը), որը գրել է Դավիթ բեկի, Մխիթար Սպարապետի ազատագրական

---

24. Մ.Բարխուդարյան, Աղուանից երկիր և դրացիք, «Արցախ», Թիֆլիս, 1895, էջ 198, Ղ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1885, էջ 259, Ռաֆֆի, հ.10, Եր., 1964, էջ 184-185, Ա.Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIXդդ, Երևան, 2007, էջ 169-170:
25. Ղ.Ալիշան, նշվ. աշխ., էջ 259-260:
26. Վ.Հացունի, նշվ. աշխ., էջ 6-8, նաև Վարդան Վարդապետ, նշվ. աշխ., էջ 40-41:
27. Մ.Գոշ, նշվ. աշխ., էջ 104-105:

պայքարի պատմությունը: Նրան անվանում են ժամանակաշրջանի մեծ պատմիչ, ով անմոռանալի հետք է թողել հայոց պատմության մեջ:[28]

Քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող պատմագիտական աղբյուրներում և, հատկապես, Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ում[29] (մոտավորապես 200 այսպիսի կանանց անուն է հայտնի մեզ Աճառյանի բառարանից) կան հիշատակություններ նաև Արցախի հայ կանանց մասին, որ նրանք գրել են տվել գրքեր, ծաղկազարդել, կազմել ու դրանք նվիրել կրթական օջախներին, եկեղեցիներին և վանքերին: Առավել շատ կանայք եղել են ուսուցիչ-ուսուցչապետեր, դպրապետեր, գրչության արվեստի ներկայացուցիչներ և նրանց մասին առավել շատ են խոսում հայոց պատմության, հին և նոր գրականության մեջ և նրանցից շատերի կատարած գործերի հիշատակները չեն թառամել մինչև այժմ:

Այսպիսով, ուսումնասիրության բնույթից ելնելով չենք ընդարձակում վերոհիշյալ փաստագրական նյութերի, օրինակների ցանկը, անշուշտ, մեզ հետաքրքրող պատմաշրջանին վերաբերող աղբյուրներում փաստերը շատ են, կարծում ենք, որ այսքանն էլ բավական է որոշ գաղափար կազմելու, թե ինչպես էին պատմության տարբեր շրջաններում Արցախի կանայք մասնակցում երկրամասի մշակույթի, գիտության ու արվեստի, երեխաների կրթության ու դաստիարակության, գրքի ու գրականության ստեղծման գործին:

28. Ա.Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 502-510, նաև Ց.Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 102-104:
29. Հր.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Եր., հ.Ա, 1942, հ.Բ., 1944, հ.Գ. 1945, հ.Գ, 1946:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը արցախահայության դպրոցական գործի զարգացման գործընթացում

XIX դարի սկզբին Արցախի ժողովուրդը պատմության նոր ժամանակներին էր հասել տնտեսապես ու մշակութապես խիստ թուլացած: Թուրք-պարսկական դարավոր լուծը քամել էր երկրի ուժերը, կործանման եզրին հասցրել նրան... Օրհասական դրությունից ելք որոնելով՝ արցախահայ ժողովուրդն իր հայացքը հառեց հյուսիսի մեծ հարևանին՝ Ռուսաստանին, նրա հետ կապելով փրկության հույսը:

Պատմագիտական գրականությունից[1] հայտնի է, որ դարերի ընթացքում Արցախի հերոսական ժողովուրդը, ենթարկվելով օտար նվաճողների ու վայրագ ցեղերի ասպատակություններին, երբեք չի կորցրել իր ոգու կորովը, բազմիցս ազատագրական պայքար է մղել օտար զավթիչների դեմ՝ հանուն իր ազգային ինքնուրույնության, հոգևոր անաղարտ կեցության: Անառիկ աշխարհագրական պաշտպանական շինությունների, իշխանների խոհեմ քաղաքականության և ազատատենչ ոգու շնորհիվ Արցախը կարողացավ դիմագրավել տարբեր փորձությունների և գոյատևել որպես Հայոց աշխարհի ինքնուրույն պատմաքաղաքական միավոր՝ պատմաաշխարհագրական, հասարակական և մշակութային բազում թելերով անքակտելիորեն միահյուսված նրան:

Հայտնի են մի շարք քաղաքական և եկեղեցական գործիչներ ու առաջնորդներ՝ Իսրայել Օրի, Մինաս վարդապետ, Հովսեփ Էմին, Դավիթ Բեկ, Էջմիածնի, Գանձասարի մի շարք կաթողիկոսներ, եկեղեցականներ, ովքեր հայրենիքի փրկությունը տեսնում էին Ռուսաստանի օգնության մեջ:

Հայ ժողովրդի՝ ռուսական կողմնորոշման ջատագովները դարձան նաև Ղարաբաղի մելիքները[2], որոնց ղեկավարությամբ, XVII դարի 20-ական թվականներից սկսած, փորձ էր արվում Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել պարսկական և օսմանյան գաղութատիրությունից: Չկարողանալով ճնշել արցախցիների դիմադրությունը՝ պարսից Նադիր շահը (1736-1747թթ.) ճանաչում է նրանց ինքնավարությունը, որը, սակայն, վերջնականապես վերանում է, երբ XIX դարի սկզբին Արցախ-Ղարաբաղը միանում է Ռուսաստանին:

Ռուսաց կայսր Ալեքսանդր I-ի 1801թ. սեպտեմբերի 12-ի մանիֆեստով Արևելյան Վրաստանը միացավ Ռուսաստանին: Վրաստանի հետ միասին Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև հայկական մի քանի շրջաններ՝ Լոռի-Փամբակը, Ղազախը, Շամշադինը: Սրանով սկսվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաս-

1. Այդ մասին մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, Արցախի պատմություն, Երևան, 1994: Զ. Գրիգորյան, Հայ-ռուս ժողովուրդների բարեկամությունը, Երևան, 1967, Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953 և այլն:

2. Այդ մասին տե՛ս Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, թ. 1, էջ 199: Առաքել Վարդապետ, Դիզակի մելիքությունը, Վաղարշապատ, 1913, էջ 12-13: Ա.Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIXդդ, Երևան, 2007:

տանին միացման գործընթացը, որը պատմական տեսակետից **<u>առաջին</u>** քայլն էր: **<u>Երկրորդ</u>** քայլը դա 1813թ. հոկտեմբերի 12-ի Արցախի Գյուլիստան ավանում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված հաշտության պայմանագիրն էր: Այդ պայմանագրով Ռուսաստանին անցան Արցախը, Զանգեզուրը, Կապանը, Մեղրին, Գանձակը, Իջևանը, Շիրակը:

Իսկ III փուլում, 1828թ. փետրվարի 10-ին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրի համաձայն Ռուսաստանին անցան Արևելյան Հայաստանի մնացած շրջանները՝ Երևանի և Նախիջևանի խանությունները ու Օրդուբադի գավառը: Սրանով ավարտվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման գործընթացը:

Անդրկովկասի և, մանավանդ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին գոյատևման նոր պայմաններ, նոր բարենպաստ իրավիճակ ստեղծեց հայ ժողովրդի համար: Թեև չլուծվեց հայ ժողովրդի ազգային ազատագրության խնդիրը, սակայն նախկին անկարգ-անկանոն պայմաններին, թալանին ու ավերին փոխարինելու եկան անձի ու սեփականության ապահովությունը, ստեղծվեցին ապրելու և գործելու անհամեմատ քաղաքակիրթ, նպաստավոր ու խաղաղ պայմաններ: Միանալով Ռուսաստանին՝ Արևելյան Հայաստանը (նաև Արցախը) վերջնականապես փրկվեց դարերով իր գլխին կախված ֆիզիկական բնաջնջման ու բռնի ձուլման վտանգից:*

Պարսկա-թուրքական լծի տակ գոյություն ունեցող ամեն տեսակի ու աստիճանի իշխողների կամայականության, տարրական օրինականության բացակայության փոխարեն Ռուսաստանի տիրապետության տակ հաստատվում են նոր վարչական կարգեր ու օրենքներ, որոնք այս կամ այն չափով ապահովում են բնակչության կյանքն ու գույքը:

Ընդգծելով Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի, ներառյալ Արցախի, միավորման առաջադիմական նշանակությունը, մենք, իհարկե, նկատի ունենք ոչ թե պաշտոնական Ռուսաստանը՝ իր ցարական բռնապետությամբ, չինովնիկությամբ, ճորտատիրական կարգերով և ազգահալած քաղաքականությամբ (ռուսականացման քաղաքականությամբ)[3], այլ ռուս մեծ ժողովրդի հայրենիքը, իսկական Ռուսաստանը՝ իր առաջավոր մշակույթով ու գրականությամբ, քաղաքական ականավոր գործիչներով ու ազատագրական պայքարով:

Ռուսաստանին միանալուց հետո հայ ժողովրդի այս հատվածը ևս մոտիկից հաղորդակցվեց կայսրությունում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերին: Սոցիալական ու ազգային ազատագրության խնդիրներն առանձին կարևորություն էին հաղորդում արցախահայերի լուսավորությանը, մանավանդ, որ քննարկվող ժամանակաշրջանում լայն ծավալ էր ստացել ազգային համախմբման (հատկապես դարի երկրորդ կեսին) գործընթացը: Ազգային զարթոնքը, ժողովրդին ինքնագիտակցության բերելու անհրաժեշտությունը հրամայաբար պահանջում էին հրաժարվել հին կրոնական սխոլաստիկ դպրոցից (նկատի ունենք մինչև XIX դարի կեսը), աշխարհականացնել ու ժողովրդականացնել այն, նոր շունչ ու բովանդակություն հաղորդել նրան:

Ռուսաստանին միանալուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև Արցախի տնտեսական, մշակութային կյանքի ու լուսավորության զարգացման համար:

---

* Տե՛ս АКАК, т.7, Тифлис, 1878, док. 432, էջ 480-481:

3. Ցարիզմի լուսավորչական, դպրոցական ռուսականացման քաղաքականության մասին տե՛ս Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 34-36 և այլն:

XIX դարի առաջին կեսին արցախահայ դպրոցի զարգացումը տեղի էր ունենում յուրահատուկ բարդ ու հակասական պատմական, քաղաքական և մշակութային իրադրության մեջ, քաղաքական և մշակութային բազմապիսի գործոնների ազդեցության տակ, որոնք, ներգործելով տարբեր միտումներով ու ձևերով, ոչ միայն լրացրել ու օժանդակել են մեկը մյուսին, այլև հաճախ խաչաձևվել, հակադրվել են միմյանց:

Այստեղ կնշենք այդ գործոններից առավել կարևորները, որոնք որոշակի դեր են խաղացել ինչպես Հայաստանի, այնպես էլ արցախահայ դպրոցի զարգացման գործում: Դրանց մեջ **առաջին** տեղը պատկանում է այն ժառանգությանը, որ մենք ստացել ենք հայ դպրոցի հարուստ և ուսանելի անցյալից: **Երկրորդ** գործոնն այն է, որ Արցախն Արևելյան Հայաստանի հետ միասին վերջնականապես ազատվեց թուրք-պարսկական դարավոր լծից և միացավ Ռուսաստանին, որի արդյունքում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ նոր դպրոցի կազմավորման ու զարգացման համար: **Երրորդը՝** դպրոցական նոր համակարգն իր բոլոր կողմերով սկսում էր տարբերվել նախորդ դարերի դպրոցներից՝ թե՛ կրթության բովանդակությամբ և թե՛ ներքին կյանքով: **Չորրորդ** գործոնը՝ արցախահայության մշակույթի, լուսավորության ու դպրոցի զարգացումն սկսում էր ոչ միայն արևելահայերի, այլև Ռուսաստանի (ռուսահայ համայնքի) հայ լուսավորչական թեմերի (Վրաստան, Նոր Նախիջևան, Աստրախան, Շամախի) և այլ հայաշատ վայրերի մշակութային կենտրոնների, մշակույթի, լուսավորության ու դպրոցի հետ սերտորեն կապված: Սակայն նշենք, որ Ռուսաստանից եկող ազդեցությունը, մասնավորապես, արևելահայ, արցախահայ դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման վրա եղել է ոչ միատարր ու միարժեք, այլ հաճախ հակադիր ու իրարամերժ, մի կողմից դրական ու առաջավոր, որը բխել էր ռուս առաջավոր մանկավարժական մտքից ու դպրոցից, մյուս կողմից՝ բացասական ու հետադիմական, որը բխել էր պաշտոնական Ռուսաստանից, նրա իշխանությունների միտումնավոր դպրոցական-լուսավորչական քաղաքականությունից: Եվ վերջապես՝ **հինգերորդ** գործոնը հայ եկեղեցու ազգանպաստ գործունեությունն է, որը կարևոր դեր է խաղացել հայ դպրոցի պահպանման ու զարգացման համար ***(այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):***

Դարասկզբին սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները որոշ պայմաններ ստեղծեցին Արցախում. նկատելի տեղաշարժ կատարվեց ինչպես բնակչության աճի, առևտրի, այնպես էլ արդյունաբերության մեջ: Ճիշտ է, շատ դանդաղ, բայց աճում էր քաղաքային բնակչությունը, զարգանում տնտեսությունն ու մշակույթը:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի մշակութային կենտրոն Շուշի քաղաքը ռուսական տիրապետության ընթացքում մեծացել էր, զարգացել տնտեսապես ու մշակութային առումով, առևտրական լայն կապեր ուներ ոչ միայն Անդրկովկասի առանձին քաղաքների, շրջանների, այլև արևելյան ու արևմտյան երկրների հետ[4]: Միաժամանակ այստեղ էին գալիս առևտուր անելու Անդրկովկասի հարևան վայրերից ու երկրներից՝ Ռուսաստանից, Պարսկաստանից, Թուրքիայից և Հնդկաստանից[5]:

Մինչ Ռուսաստանին միանալը՝ Շուշին, որպես հայաշատ քաղաք, իր բնակչության թվաքանակով Անդրկովկասում գրավում էր 4-րդ տեղը: Դեռևս 1795թ.

4. Описание Крепости Шуша и всего Карабаха, “Северная пчела”, N11.
5. Газета “Кавказ”, 185, N26.

Շուշիի բնակչության թիվը հասնում էր 10 հազարի, 1830թ. Շուշիում կար 1698 տուն, որից 763-ը հայեր էին, 563-ը՝ այլազգիներ: Վիճակագրական տվյալներով 1851թ. Շուշիի ամբողջ բնակչության թիվը կազմում էր 15194 մարդ: Շուշիից ավելի բնակչություն ունեին միայն Թիֆլիսը՝ Անդրկովկասի ամենախոշոր քաղաքը, և Շամախին. 1862-63թթ. մարդահամարի տվյալներով Բաքվում ապրում էր 3189 մարդ, իսկ Շուշիում՝ 19659[6]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում քաղաքական ու տնտեսական կյանքում տեղի ունեցած վերոհիշյալ և այլ իրադարձություններ իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաև դպրոցական կյանքի ու մանկավարժական մտքի զարգացման վրա՝ առաջադրելով նոր պահանջներ, նոր խնդիրներ: Արցախում ևս ժողովրդական լուսավորության ասպարեզում որոշ տեղաշարժեր կատարվեցին: Հայ առաջադեմ գործիչներից շատերը սկսեցին այստեղ մանկավարժական գործունեություն ծավալել, իսկ Շուշին դարձավ հայ մշակութային կարևոր կենտրոններից մեկը:

Զգալի տեղաշարժ է կատարվում Արցախի դպրոցական կյանքում, գնալով ընդլայնվում է դպրոցների ցանցը:

Դարասկզբին դպրոցներ են բացվում Շուշիում և Արցախի մի շարք գյուղերում: Օրինակ, 1800թ. Արցախի Գանձասարի վանքում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց 30 աշակերտով և մեկ վարժապետով: Շուշիում, Նուխիում (այն ժամանակ Նուխին մտնում էր Արցախի թեմի մեջ) և այլուր բացվում են մասնավոր դպրոցներ: Շուշեցի Մելիք Ազատյանը 1805թ. բացում է մասնավոր դպրոց 35 աշակերտով: Շուշիի եկեղեցուն կից Հակոբ Յուզբաշյանը բացում է մասնավոր դպրոց 45 աշակերտով[7], այնուհետև Նուխի քաղաքում նույնպես բացվում է մասնավոր դպրոց 15 աշակերտով, որտեղ սովորում էին նաև աղջիկներ:

Անվանի մանկավարժ, հասարակական և մշակութային գործիչ Մեսրոպ Թաղիադյանն իր «Ճանապարհորդություն ի Հայս» գրքում նշում է, որ հայտնի լուսավորիչ Պողոս վարդապետ Ղարաբաղցին 1821թ. բացել է մասնավոր դպրոց՝ Շուշիի հարուստների երեխաների համար, որտեղ սովորում էին նաև աղքատ խավի երեխաներ: Իսկ Հովսեփ վարդապետը դպրոց է բացում Ս. Հակոբի, Գանձասարի վանքերում:

XIX դարի 20-ական թվականներին Արցախ աշխարհում որոշակի առաջընթաց է կատարվում լուսավորության ասպարեզում, գնալով ընդլայնվում է դպրոցական ցանցը:

1827թ. Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» բողոքական միսիոներները (Շուշի են գալիս 1823թ.) Շուշիում բացում են առաջին ուսումնարանը: Մեկ տարի հետո ուսումնարանն արդեն ուներ 130 աշակերտ[8], որոնց զգալի մասը չքավոր ընտանիքներից էին:

Չնայած այն ժամանակ գրագիտությունը մատչելի էր միայն վաճառականների ու հոգևորականների զավակների համար, սակայն բողոքական միսիոներներն աշխատում էին դպրոցում ընդգրկել նաև չքավոր ընտանիքների երեխաների, որպեսզի հասարակության ուշադրությունը բևեռեն իրենց կրոնական ուսմունքի վրա: Միսիոներների բացած դպրոցն ուներ 2 դասարան: Այստեղ ուսուցանում էին հայերեն, Հին և Նոր կտակարանների ընթերցանություն, թվաբանություն, աշխար-

6. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, հ. 1, էջ 148:
7. ՀՊԱ, ֆ. 9, գ. 19, ֆ. 56, գ. 78, թ. 43: Տե՛ս նաև Մատենադարան, Կաթ. դիվ. թ. 11, վավերագիր:
8. Հ. Ղուկասյանց, Բողոքականությունը Կովկասի հայոց մեջ, Թիֆլիս, 1886, էջ 9:

հագրություն, թարգմանություններ էին կատարում գրաբարից աշխարհաբար և ընդհակառակը: Այդ առարկաները դասավանդում էին նաև տեղական հայ հոգևորականներ և ուսուցիչներ: Օրինակ, Պողոս վարդապետ Ղարաբաղցին, Հովսեփ վարդապետ Արցախեցին (Տեր-Ավագյան) և ուրիշներ դասավանդել են այդ դպրոցում:

Արցախում այս վարդապետների կատարած լուսավորչական գործի մասին դրականորեն է արտահայտվել նաև Մեսրոպ Թաղիադյանն իր վերը հիշատակված գրքում: Թաղիադյանը միաժամանակ ընդգծում է, որ նրանք ժամանակի կրթված մարդիկ էին, որոնք դպրոցներ էին բացել Գանձասարի և Սուրբ Հակոբի վանքերում, ուր սովորում էին նաև Շուշիի հարուստ և ազնվականների երեխաները[9]:

Պետք է ասել, որ բողոքական միսիոներների սկսած գործը որոշ դեր խաղաց տպագրության և դպրոցական ցանցի ընդլայնման բնագավառում: Միսիոներների ուսունարանի շրջանավարտներից ոմանք դպրոցներ են բացում քաղաքում և գյուղերում: Օրինակ, համաձայն արխիվային նյութերի, այդ ժամանակաշրջանում Շուշիի գավառում կային հինգ այդպիսի դպրոցներ՝ երկուսը քաղաքում, իսկ երեքը՝ գյուղերում, որոնցից յուրաքանչյուրն ուներ 20-30 աշակերտ[10]: Արխիվային մի այլ փաստաթղթում կարդում ենք, որ 1828թ. սկսած մասնավոր անձանց, մանավանդ քահանաների միջոցով բացվում են առտնի փոքրիկ դպրոցներ: Օրինակ, Տեր-Խաչատուր քահանայի 1828թ. հիմնած դպրոցը, որն ուներ մեկ ուսուցիչ և 10 աշակերտ: 1830թ. բացվում է Հ. Հարությունյանի դպրոցը, որն ուներ մեկ ուսուցիչ և 10 աշակերտ: 1831թ. բացվում է Առաքել Սարկավագի դպրոցը՝ 50 աշակերտով և այլն[11]:

Այդ դպրոցներում ուսուցումը հիմնականում տարվում էր հայերեն: Իհարկե, եկվոր միսիոներներն իրենց ընդարձակ ծրագիրն իրագործելու համար որոշ գործ էին կատարել Արցախում, սակայն տեղում գործուն աջակցություն չստանալու և եկեղեցականների դիմադրության հետևանքով նրանք ստիպված էին փակել իրենց դպրոցները և հեռանալ Արցախից:

Արցախի դպրոցական կյանքում սկսվեց մի նոր տեղաշարժ. 1829թ. օգոստոսի 2-ին ցարի կողմից հրապարակվում է առաջին պաշտոնական դպրոցական փաստաթուղթն Անդրկովկասի համար՝ «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրությունը»[12]: Այս կանոնադրությամբ Անդրկովկասի ուսումնական գործը և դպրոցական համակարգը կազմակերպական հիմունքներով ու բովանդակությամբ պետք է մոտենան համառուսականին: Կանոնադրության համաձայն՝ Անդրկովկասում գտնվող գավառական ուսումնարանները ենթարկվում են Թիֆլիսի գիմնազիայի տնօրենին, իսկ վերջինս էլ իրեն ենթակա բոլոր ուսումնական հաստատություններով գտնվում է տեղի գլխավոր ուսումնական իշխանության անմիջական իրավասության տակ:

Ինչ խոսք, ցարիզմի լուսավորչական-դպրոցական քաղաքականությունն Անդրկովկասում և Ռուսաստանի այլ ծայրամասերում նպատակ չէր դնում բարձրացնելու անդրկովկասյան ժողովուրդների լուսավորչական ու մշակութային վերելքը: Սակայն ցարիզմը նպատակ ուներ Անդրկովկասը վերջնականապես ենթարկել իրեն ոչ միայն տնտեսապես, այլև իր լուսավորչական քաղաքականու-

9. Մ. Թաղիադյան, Երկեր, հ. 1, Կալկաթա, 1847, էջ 292:
10. ՀՀ ԱԱ, ֆ. 309, գ. 1, գ. 246, թ. 1-20:
11. ՀՀ ԱԱ, ֆ. 309, գ. 1, գ. 246, թ. 20-26:
12. Ս. Երիցյանց, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 244:

թյամբ: Ըստ այդմ էլ ստեղծվում են նոր դպրոցներ: Օրինակ, վերոհիշյալ կանոնադրությամբ նախատեսվում է Անդրկովկասում ունենալ 1 գիմնազիա (Թիֆլիսում) և 20 գավառային ուսումնարաններ: 1830թ. Շուշիում բացվում է պետական գավառային ուսումնարան, որն ուներ 127 աշակերտ և 15 ուսուցիչ, աշակերտների 40 տոկոսը հայեր էին[13]: Այդտեղ դասավանդում էին կրոն, սրբազան պատմություն, ընթերցանություն, վայելչագրություն, թվաբանություն, հայոց և ռուսաց լեզուներ: Մեկ տարի հետո նման տիպի ուսումնարան բացվեց նաև Նուխիում: Այդ ժամանակ դպրոցներ են բացվում նաև նահանգային քաղաքներում և գավառական կենտրոններում: Բացի պետական գավառային ուսումնարանից, 1830-ական թվականներին Շուշիում գործում էր 10 դպրոց՝ 6-ը ռուսական, 4-ը՝ հայկական:

Դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 30 երեխա: Այդ շրջանում մասնավոր դպրոցներ են բացվում նաև Գանձասարի, Ամարասի, Գտչա և այլ վանքերում: Ի դեպ, Գանձասարի վանքի դպրոցը գործում էր դեռևս 1800 թվականից, որտեղ սովորում էր 30 աշակերտ:

Արխիվային վիճակագրական տվյալները վկայում են, որ 1830-ական թվականներին Արցախի թեմում գործում էին 25 հայկական եկեղեցական և մասնավոր դպրոցներ, որտեղ սովորում էր 252 աշակերտ: Միայն Շուշի քաղաքում կար 3 դպրոց՝ 100 աշակերտով, Նուխիում գործող նման տիպի դպրոցների քանակը հասնում էր 4-ի, իսկ աշակերտների թիվը՝ 74-ի[14]: Ի դեպ, Արցախի թեմում բացված հայկական դպրոցների մեծ մասը գտնվում էր Շուշիի թեմական դպրոցի ենթակայության տակ: 1829թ. կանոնադրության համաձայն՝ եկեղեցական դպրոցները պետք է պատրաստեին գյուղական քահանաներ:

Քննարկվող ժամանակաշրջանում ոչ միայն պետական գավառային ուսումնարանները, այլև հայ եկեղեցու կողմից պահվող մասնավոր դպրոցները ենթակա էին ժողովրդական լուսավորության նախարարության մարմիններին:

Արցախում դպրոցական ցանցն ընդլայնվեց հատկապես այն բանից հետո, երբ 1836թ. մարտի 11-ին Նիկոլայ I-ի կողմից հաստատվեց «Հայ լուսավորչական հավատքի հոգևոր կառավարման կանոնադրությունը», որը հայտնի է «Պոլոժենիե» անվամբ («Պոլոժենիեն» գործադրվեց 1837թ. հունվարի 1-ից: Այն դադարեց գործելուց 1917թ.): Այդ կանոնադրությամբ հայ լուսավորչական հասարակությունը բաժանվեց վեց եկեղեցական թեմի՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, Աստրախանի, Երևանի, Վրաստանի և Իմերեթիայի, Շիրվանի կամ Շամախու, Ղարաբաղի կամ Արցախի[15]:

Կանոնադրության համաձայն՝ Շուշին դառնում է թեմական առաջնորդանիստ քաղաք և հոգևոր կենտրոն՝ ինչպես Արցախի, այնպես էլ Նուխիի գավառի հայերի համար: Արցախի թեմին էին պատկանում նաև այն լուսավորչական եկեղեցիները, որոնք գտնվում էին Տաթևի (միտրոպոլիտության), Շաքիի (Նուխիի) և Թալիշի գավառներում: Թեմական իր հաջորդն ուներ Նուխիում: Յուրաքանչյուր թեմում թեմական նախագահությամբ ստեղծվում է կոնսիստորիա, որը պետք է հոգ տաներ նաև թեմում գտնվող ուսումնարանների (սեմինարիաների), ինչպես և վանքերին, եկեղեցիներին կից գործող դպրոցների մասին: Պետք է ասել, որ «Պոլոժենիե»-ն հայ եկեղեցու վրա մեծ պարտականություններ էր դնում՝ հիմնել հոգևոր սեմինարիաներ ամեն մի թեմում, եկեղեցիներին, վանքերին կից բացել

13. Кавказский календарь, 1846, стр. 147.
14. ՀՀ ԱԱ, ֆ. 89, գ. 13, թ. 1-10:
15. «Պոլոժենիե» 1836թ. բարձրագույն կարգադրության յաղագս կառավարութեան գործոց լուսավորչական հայոց եկեղեցուց ի Ռուսաստանի, էջմիածին, 1836թ., էջ 1:

դպրոցներ: Սակայն այս բոլորից կարելի է ընդհանուր գծերով սահմանազատել ազգային դպրոցների երեք տիպ՝ թեմական, հոգևոր և ծխական ***(կային նաև իգական և երկսեռ դպրոցներ, որոնց մասին ավելի մանրամասն կխոսվի աշխատության հաջորդ բաժնում):***

Հիշատակված կանոնադրությամբ իրավունք էր տրվում բոլոր հայկական թեմերում եկեղեցիներին կից հիմնել մեկական ծխական դպրոց, որը պետք է բացվեր միայն հոգևոր իշխանության կարգադրությամբ: Այսպես, 1830-ական թվականների վերջերին Արցախում դպրոցներ են բացվում Գանձասարում, Ճալեթի (Նուխի) Ս. Հակոբի վանքում և Շուշի բերդաքաղաքում: Այդ դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 15-20 աշակերտ[16]: Կանոնադրությամբ նախատեսվում էր նաև բոլոր հայկական թեմերում բացել թեմական դպրոցներ: Երևանի թեմական դպրոցից հետո (1837) Շուշի քաղաքում ևս բացվում է հայոց թեմական դպրոց: Դեռևս 1837թ. սեպտեմբերին էջմիածնի սինոդը կարգադրում է Արցախի թեմի կոնսիստորիային և թեմական Բաղդասար միտրոպոլիտին՝ նախապատրաստական աշխատանք տանել Շուշիում թեմական դպրոց հիմնելու ուղղությամբ, այդ նպատակով կազմել նախահաշիվ: 1838թ. կոնսիստորիան Սինոդ է ներկայացնում թեմի «Հոգևոր դպրոցի և հոգևոր ուսումնարանաց» նախահաշիվը: Սինոդը 1838թ. մարտի 7-ի իր նիստում որոշում է բացել թեմական դպրոց. այն հիմնադրվում է նույն թվականի հունիսի 22-ին:

Ժամանակի հայկական դպրոցների ճնշող մեծամասնության նման, ինչպես Լեոն է գրում, Շուշիի թեմական դպրոցը նույնպես «ծնվեց աղքատության մեջ»[17]: Շուշիի թեմական դպրոցը, գտնվելով նյութական ծանր վիճակում, վեց տարի գոյություն ունենալուց հետո 1844 թվականին փակվում է: Թեմական իշխանությունները դիմում են տեղական բնակչության օգնությանը. թեպետ արդյունքը չնչին է լինում, այնուամենայնիվ, 1845թ. օգոստոսի 17-ին վերաբացվում է դպրոցը: Այդ ժամանակ թեմական դպրոցն ուներ 5 ուսուցիչ, 45 աշակերտ, որից 31-ը՝ հոգևորական, 4-ը՝ աշխարհիկ[18]:

Թեմական դպրոցի վերատեսուչ հրավիրվեց արքունի ուսումնարանի տեսուչ Խիտրովը. նա համաձայնում է ձրի դասավանդել մի շարք առարկաներ (ռուսերեն, ֆիզիկա, մաթեմատիկա և այլն), իսկ եղբայրներ Քալանթարյանները (դարձյալ ձրի) 8 ամիս իրենց տունը տրամադրում են սեփական շենք չունեցող թեմական դպրոցին: Բացի թեմական դպրոցից, 1848թ. Շուշիում կար 2 ուսումնարան, մեկը՝ եկեղեցական, մյուսը՝ գավառային: Նուխիում կար նման տիպի 2 դպրոց[19]:

Ղարաբաղի կոնսիստորիայի՝ էջմիածնի սինոդին ներկայացված վիճակագրական տվյալներով 1841թ. Ղարաբաղի 11 վանքերից Ամարասի, Գանձասարի և Գտչա վանքերում գործում էին երեք եկեղեցական դպրոցներ[20]: Արխիվային մեկ այլ փաստաթղթում կարդում ենք, որ 1848թ. Վարանդա գավառի Աշան գյուղի բնակիչները խնդրում են Շուշիի հոգևոր առաջնորդին գյուղում բացել եկեղեցական-ծխական դպրոց: Այդ նույն թվականի աշնանը բացվում է դպրոցը, որն ուներ 2 դասարան, 30 աշակերտ, 1 ուսուցիչ (Հովսեփ Շինդինյանց): Նա դասավանդում էր հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, վայելչագրություն:

---

16. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 182:
17. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 182:
18. Մատենադարան, Կաթ. դիվ. թ. 116, վ. 363:
19. Кавказский учебный Округ, Положение кавказского учебного округа на 1848, Тифлис, 1848, стр. 25-26.
20. Մատենադարան, Կաթ. դիվ. թ. 72, վ. 416:

Վերոհիշյալ սեղմ ակնարկից երևում է, որ XIX դարի առաջին կեսից սկսած՝ հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի ընդհանուր աշխուժացման հետ միասին Արցախում հատկապես դպրոցական գործը զգալի առաջընթաց է ապրում: Այդ մասին է վկայում նաև տվյալ ժամանակաշրջանում այստեղ նոր բացված դպրոցների ոչ լրիվ ցանկը (տե՛ս աղյուսակ 1):

(Աղյուսակ 1)

Արցախում XIX դարի 1-ին կեսի դպրոցները[21]

Թ.Թ. Ը.կ.	Թվականը	Դպրոցի վայրը	Դպրոցի տիպն ու անվանումը	Դպրոց.	Աշակերտ. քանակը	Ուսուց. թիվը
1	2	3	4	5	6	7
1	1800	Գանձասարի վանք	Եկեղեցական-ծխական	1	30	2
2	1805	Շուշի	Մասնավոր	2	140	2
3	1818	Նուխի (Շեքի)	Եկեղեցական-ծխական	4	40	2
4	1827	Շուշիի գավառ	Առտնին (մասնավոր)	1	30	1
5	1827	Շուշի	Ուսումնարան (միսիոներական)	1	130	5
6	1828	Շուշի	Մասնավոր	2	40	2
7	1830	Շուշի	Արքունի գավառային ուսումնարան	1	108	4
8	1831	Շուշիի գավառ	Մասնավոր	3	60	3
9	1831	Նուխի	Արքունի գավառային ուսումնարան	1	65	2
10	1834	Շուշի	Մասնավոր	3	81	3
11	1838	Շուշի	Թեմական դպրոց	1	350	18
12	1840	Շուշիի գավառ	Եկեղեցական-ծխական	8	75	3
13	1844	Նուխի	Եկեղեցական-ծխական	2	50	2
14	1848	Աշան գյուղ (Վարանդա գ.)	Ծխական	1	30	1
15	1848	Նուխի գավառ	Ծխական	1	30	1

(Այս և մյուս աղյուսակները կազմել ենք տարբեր աղբյուրների տվյալների հիման վրա):

Եվ այսպես, XIX դարի առաջին կեսն արևելահայ, այդ թվում՝ Արցախի նոր դպրոցի կազմավորման այն շրջանն էր, երբ նա, զարնվելով ժողովրդական տգիտության ապառաժներին, սայթաքելով ու երերալով, ճանապարհ է հարթում՝ հետագայում ավելի հաստատուն ու որոշակի քայլեր անելու համար: Դարի առաջին կեսին Արցախի թեմում նկատվում է դպրոցական գործի որոշակի աշխուժացում, որը գնալով ավելի թափ է ստանում 50-60-ական և հետագա տասնամյակներում:

21. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 78, թ. 48:

2. XIX դարի առաջին կեսին Արցախի դպրոցների տիպերը և կառավարման համակարգը

Արևելյան Հայաստանի (նաև Արցախի) միացումը Ռուսաստանին, ինչպես ասվեց, բարենպաստ պայմաններ ստեղծեց երկրամասի դանդաղ, բայց որոշակի առաջընթացի համար: Այն իր արտահայտությունը գտավ նաև ազգային դպրոցի կյանքում: Վ. Երկանյանը «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում» աշխատության մեջ իրավացիորեն նշում է, որ խոսելով XIX դարի առաջին կեսի ազգային կրթության մասին, դժվար է արձանագրել նրանում գոյություն ունեցող մի որոշակի համակարգ: Փաստորեն, դա մի ժամանակաշրջան էր, երբ նոր էր սաղմնավորվում մեր ազգային դպրոցը՝ նոր ժամանակների հասկացությամբ[1]: Խորհրդահայ անվանի մանկավարժ Մ. Սանթրոսյանը «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» աշխատության մեջ գրում է. «19-րդ դարի առաջին կեսին Անդրկովկասում (Հայաստանում, Արցախում) հետզհետե ձևավորվում է ամենաբազմազան տիպի դպրոցների մի համակարգ (խառնաշփոթ), որը դժվար է դպրոցական համակարգ անվանել և անգամ որևէ դասակարգման ենթարկել»[2]: Այդ ժամանակաշրջանում, ինչպես ընդգծում է նա, ստեղծվող և գոյություն ունեցող դպրոցներն իրարից տարբերվում էին բազմապիսի գծերով ու հատկանիշներով՝ ազգային-էթնիկական, կրոնական-դավանական, գերատեսչական-ենթակայության՝ պետական, եկեղեցական և այլն:

Քննարկվող ժամանակաշրջանում պետական դպրոցներն իրենց հերթին ենթարկվում էին տարբեր գերատեսչությունների, կային նաև բարեգործական ընկերությունների միջոցով պահվող դպրոցներ և, այսպես կոչված, մասնավոր դպրոցներ, որոնք նույնպես ունեին մի շարք տարբերակներ՝ արական, իգական, երկսեռ և այլն:

Դարասկզբին ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում չկար դպրոցական միասնական կանոնադրություն, չկար մի որոշակի մարմին, որն ի վիճակի լիներ կարգավորել և միօրինակություն մտցնել դպրոցների տիպերի ու բնույթի մեջ: Այդ բանը չկարողացավ անել նաև 1836թ. Կանոնադրությունը: Այդ Կանոնադրության մեջ զանգվածային դպրոցների մասին հիշատակվում է միայն որպես «վանքերին և եկեղեցիներին կից գտնվող դպրոցներ»: Դրա համար էլ դպրոցական գործում ստեղծվեց խառնաշփոթ վիճակ. ազգային դպրոցները հանդես էին գալիս ամենաբազմազան անուններով՝ մասնավոր, եկեղեցական, վանական, հոգևոր, ազգային, ժողովրդական և այլն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1800-1840-ական թվականներ) արևելահայ իրականության և Արցախի կրթական համակարգում ներառվում էին տարբեր տիպի դպրոցներ:

<u>Առաջին տիպին</u> պետք է վերագրել այն դպրոցները, որոնց նպատակն էր պատրաստել եկեղեցական սպասավորներ: Դրանցից էին Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցը, վանական դպրոցները, ինչպես նաև 1836թ. Կանոնադրության համաձայն ստեղծված թեմական դպրոցները Երևանում, Թիֆլիսում, Շամախիում և Շուշիում: Ի դեպ, նշենք, որ Շուշի քաղաքում սկզբում բացվել է հոգևոր ուսումնարան (1836թ. Կանոնադրության համաձայն), այնուհետև թեմի առաջնորդ Բաղ-

1. Վ.Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 16-17:
2. Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 41-42:

դասար միտրոպոլիտի ջանքերով հիմնադրվել է հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ 1838թ. հունիսի 22-ին (այսինքն՝ հոգևոր ուսումնարանի իրավահաջորդը), որի պատմությունը գրել է թեմականի շրջանավարտ պատմաբան Լեոն[3]:

Այդ դպրոցների լիիրավ տերն ու տնօրենը եկեղեցին էր, թեև հետագայում արդեն թեմական դպրոցն սկսեց ավելի աշխարհիկ երանգավորում ստանալ: Շուշիի թեմական դպրոցի «հոգևոր» անվանումը գուցե ամենից շատ չէր համապատասխանում այդ դպրոցներին (նկատի ունենք նաև Արևելյան Հայաստանում), քանի որ նրանում առավել ակնառու էին հանդես գալիս աշխարհիկ սկզբունքն ու հասարակական նախաձեռնությունը: Հոգևոր դպրոցներն իրենց մեջ պարունակում էին ազգային կրթության հետագա ծավալման ու զարգացման նախատիպը, կրթություն, որը բարեհաջող պայմանների առկայության դեպքում ի վիճակի էր դառնալու մի ամբողջական կազմակերպված համակարգ (դա վերաբերում էր դարի երկրորդ կեսին)՝ սկսած տարրական դպրոցից մինչև միջնակարգ (այն ժամանակ՝ դարի 80-ական թվականներին, թեմական դպրոցներն անվանում էին նաև միջնակարգ մասնագիտական հաստատություն):

<u>Երկրորդ տիպի</u> դպրոցների շարքին պետք է դասել հիմնականում խոշոր բնակավայրերում ստեղծված դպրոցները (անկախ նրանց անվանումից), որոնց նպատակն էր կրթություն տարածել ժողովրդի ամենատարբեր խավերում՝ Շուշիում, Արցախի թեմի մեջ մտնող՝ Նուխի գավառում: Այդ տիպի դպրոցներն էին՝

1. Ուսումնարան (Շուշի, Նուխի քաղաքներում)
2. Գավառային՝ ռուսական տիպի ուսումնարաններ:

Այդ դպրոցների մի մասը ստեղծվում էր հոգևորականների նախաձեռնությամբ: Օրինակ, Շուշիի ուսումնարանը սկզբում բացել են Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» բողոքական միսիոներները 1827թ.[4]: Իսկ 1829թ. ցարական կառավարության ընդունած՝ «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրության» համաձայն՝ Շուշի քաղաքում բացվում է ռուսական տիպի գավառային ուսումնարան, Նուխի քաղաքում՝ 1831 թվականին[5]:

Դպրոցների **<u>երրորդ տիպը</u>** եկեղեցիներին կից, ինչպես նաև հոգևորականների մասնավոր նախաձեռնությամբ ստեղծվող դպրոցներն էին, որոնց հիմնական բնորոշ գիծը խալֆայականությունն էր: Մի քիչ գրել-կարդալ, կրոն, երբեմն էլ թվաբանական նախնական գիտելիքներ՝ ահա այն ամենը, ինչ տալիս էին այդ դպրոցները: Օրինակ, պատմամանկավարժական գրականությունից[6] տեղեկանում ենք, որ Շուշի քաղաքում Տեր Խաչատուր քահանայի 1828թ. հիմնած մասնավոր դպրոցում սովորում էր 10 աշակերտ: Նմանատիպ դպրոցներ են բացում նաև Առաքել Սարկավագը, քահանա Հ. Հարությունյանը և շատ ուրիշներ: Այս տիպի դպրոցները մեծ մասամբ դուրս էին եկեղեցու իրավասությունից և ապրում ու գործում էին ինքնուրույն, վաղուց ի վեր սրբագործված չգրված օրենքներով: Այս դպրոցների շարքին պետք է դասել նաև գրագետ հայուհիների՝ կույսերի ու վարպետների դպրոցները, որոնցում սովորում էին դեռատի աղջիկներ, ինչպես նաև փոքրահասակ տղաներ:

---

3. Մանրամասն տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1913:
4. Մանրամասն տե՛ս Հով. Ղուկասյանց, նշվ. աշխ., էջ 9: Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 46-47:
5. Տե՛ս նաև Գ. Հարությունյան, Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը (5-19-րդ դարերում և 20-րդ դարի սկզբին), Ստեփանակերտ, 2002, էջ 24-28:
6. Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 26-28:

Ընդհանուր առմամբ, կրթական գործի հեղհեղուկ վիճակը, հոգևորականության ապաշնորհությունը, ժամանակի տնտեսական ու մշակութային կյանքի ոչ բավարար վիճակն այնքան էլ հնարավորություն չէին տալիս ստեղծելու ազգային քիչ թե շատ բարեկարգ կրթական համակարգ: Իսկ ինչպիսի՞ն էր քննարկվող ժամանակաշրջանում Արցախի դպրոցների կառավարման (ղեկավարման) համակարգը:

Արևելյան Հայաստանը (նաև Արցախը) Ռուսաստանին միանալուց հետո ցարական կառավարության առաջնահերթ անելիքներից մեկը երկրում լուսավորության բնագավառում կարգ ու կանոն հաստատելն է, այսինքն՝ Անդրկովկասում լուսավորության, դպրոցական գործի ղեկավարման, տեղական մարմինների ստեղծումն էր: Ինչպես նշեցինք, այդ մտադրությամբ էլ ցարական կառավարության լուսավորության նախարարությունը 1829թ. օգոստոսի 2-ին հրապարակում է առաջին պաշտոնական դպրոցական փաստաթուղթն Անդրկովկասի համար՝ «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրությունը»[7]: Այս կանոնադրության համաձայն, ինչպես վերը նշեցինք, Անդրկովկասում գտնվող գավառային ուսումնարանները, այդ թվում նաև Շուշիի, Նուխիի գավառական ուսումնարանները, ենթարկվում են Թիֆլիսի գիմնազիայի տնօրենին, իսկ վերջինս էլ իրեն ենթակա բոլոր ուսումնական հաստատություններով գտնվում է տեղի գլխավոր ուսումնական իշխանության անմիջական իրավասության տակ:

Թիֆլիսի գիմնազիայի տնօրենը միաժամանակ հանդիսանում է անդրկովկասյան բոլոր ուսումնարանները կառավարողը. նրա անմիջական ղեկավարմանն են ենթարկվում այդ ուսումնարանների տեսուչների պաշտոնակատարները[8]: Հայաստանի, Արցախի կրթական համակարգի կարևորագույն գործերի և ձեռնարկումների քննարկմամբ զբաղվում էր Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը:

Արևելահայ իրականության մեջ, Արցախի թեմում դպրոցական գործի ղեկավարման այս համակարգը, մասնակի փոփոխություններով, շարունակվում է մինչև 1848թ., երբ Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի նախաձեռնությամբ մշակվում է նախագիծ՝ Կովկասյան ուսումնական օկրուգ կազմակերպելու մասին: Այն կոչվում էր «Կանոնադրություն կովկասյան ուսումնական օկրուգի և նրան ենթակա ուսումնական հաստատությունների մասին» և կազմված էր «Կայսրության մեջ ուսումնական գործի կառավարման ընդհանուր կարգի մեջ միօրինականություն ստեղծելու նպատակով»[9]: Կանոնադրության համաձայն, Կովկասի ուսումնական օկրուգը բաժանվում է ուսումնարանների հինգ տնօրինությունների (Թիֆլիսի, Քութայիսի, Շամախի-Դերբենդի, Ստավրոպոլի, Սևծովյան Զորքի երկրի)[10]: Հիշատակված յուրաքանչյուր տնօրինություն կառավարում է համապատասխան նահանգի ուսումնարանները: Համաձայն կանոնադրության, Թիֆլիսի տնօրինության մեջ են մտնում նաև Երևանի նահանգի, Շուշիի գավառի դպրոցները:

Կովկասյան առանձին ուսումնական օկրուգը՝ կազմակերպվելով և գործելով 1849 թվականից սկսած, գոյություն է ունենում ընդամենը մինչև 1853թ.: Նույն թվականի հոկտեմբերի 29-ին հաստատվում է Կովկասյան ուսումնական օկրուգի նոր կանոնադրությունը, որի համաձայն Շուշիի, Նուխիի գավառական ուսումնա-

7. Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 36-37:
8. Նույն տեղում:
9. Кавказский учебный Округ, Положение кавказского учебного округа на 1848, Тифлис, 1848, стр. 1-2.
10. Նույն տեղում:

ռանները ենթարկվում են Թիֆլիսի տնօրինությանը, իսկ եկեղեցական ծխական դպրոցները, թեմական դպրոցը ենթարկվում են Էջմիածնի Սինոդին: Ուսումնական հանձանժողովը կաթողիկոսի անունից թեմերի առաջ խնդիր է դնում յուրաքանչյուր գյուղում դպրոց բացել:

Այսպիսով, ինչպես վերը նշվեց, XIX դարի առաջին կեսն արցախահայ նոր դպրոցական համակարգի ձևավորման ու կառավարման այն շրջանն էր, երբ նա, զարնվելով ժողովրդական տգիտության ապառաժներին, սայթաքելով ու երերալով, ճանապարհ է հարթում՝ հետագայում ավելի հաստատուն ու որոշակի քայլեր անելու համար: Դարի առաջին կեսին ստեղծված համեմատաբար նպաստավոր պայմաններում, Արցախի ժողովուրդը սոցիալ-տնտեսական ու քաղաքական հանգամանքների բերումով սկսել էր հաղորդակից դառնալ ժամանակի ազդեցություններին, սկիզբ առել ու դարակեսին լայն ծավալ էր ստացել ազգի համախմբման գործընթացը, որը շարժման մեջ է դրել հասարակության մտավորական մասին, խթանելով հայ մշակույթի ամենատարբեր բնագավառների զարգացումը:

Հայ ժողովրդի ազգային զարթոնքն իր հետ բերել էր լուսավորական մի ազդու շարժում, որը ծավալվել է նաև Արցախ աշխարհում: Պայմանների բերումով, մեծ մասամբ գործելով ժողովրդի բուն զանգվածից հեռու, հայ գործիչները զգում էին, որ առաջին հերթին պետք է լուսավորել հենց այդ զանգվածին, մղել նրանց ազգային ինքնագիտակցության:

Անշուշտ, դարի առաջին կեսը և հատկապես հետագա ժամանակաշրջանը՝ 1850-60-ական թվականները, արևելահայ, այդ թվում՝ Արցախի դպրոցի գաղափարական հիմնավորման ու նախապատրաստության շրջանն էր, որոնումների շրջան, երբ հայ գործիչները ճանապարհ էին հարթում ազգային լուսավորության համար:

3. Հայ եկեղեցին և դպրոցը

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով հայ եկեղեցին և հոգևորականությունը վաղուց դուրս էին եկել զուտ եկեղեցական-կրոնական կազմակերպության շրջանակներից՝ ակտիվորեն մասնակցելով հայ ժողովրդի ներքին և արտաքին քաղաքական կյանքին:

Պատմաշրջանում հայ եկեղեցին ձեռք էր բերել քաղաքական որոշ ուժ և հեղինակություն: Արևելյան Հայաստանը (նաև Արցախը) Ռուսաստանին միանալուց հետո ցարական կառավարությունը պետք է ձգտեր ըստ ամենայնի օգտագործել հայ եկեղեցու ազդեցությունն ու հեղինակությունը նաև դպրոցական բնագավառում: Հայտնի է, թե ինչպիսի դեր էր խաղում ցարիզմի համար հայ եկեղեցին նրա արևելյան քաղաքականության մեջ: Ցարական իշխանությունները չէին կարող անտարբեր մնալ այդ եկեղեցու հետագա ճակատագրի նկատմամբ և պետք է ձգտեին նրա կազմակերպվածությանը ևս իրենց համար ցանկալի ուղղություն տալ:

Սակայն նշենք, որ հայ եկեղեցու նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության մեջ գոյություն ուներ որոշակի հակասականություն. մի կողմից՝ հատկապես արտաքին քաղաքական նկատառումներով, նա շահագրգռված էր հայ եկեղեցու, էջմիածնի ու նրա կաթողիկոսի ունեցած մեծ ազդեցությամբ ու հեղինակությամբ, մյուս կողմից՝ չէր կարող հանդուրժել հայ եկեղեցու որևէ ազդեցություն ներքին-քաղաքական հարցերում, որևէ միջամտություն պետական իշխանությունների գործառույթներին:

Հայ եկեղեցու և նրա իրավունքների ու պարտականությունների, գործունեության շրջանակների ու գործառույթների սահմանմանը, եկեղեցական ու պետական մարմինների փոխհարաբերության ճշտմանը պիտի ծառայեր ցարական կառավարության կողմից 1830 թվականից նախապատրաստվող և 1836թ. մարտի 11-ին հրապարակված հայտնի կանոնադրությունը՝ (Положение об управлении духовных дел армяно-григорианского исповедения)[1] «Հայ-գրիգորյանական (լուսավորչական.- Ա.Ա., Գ.Հ.) հավատքի հոգևոր գործերի կառավարման կանոնադրություն» անվամբ, որը, ինչպես վերը նշեցինք, պատմության մեջ հայտնի է «Պոլոժենիե» համառոտ անվամբ:

Ըստ «Պոլոժենիեի»՝ հայ լուսավորչական շրջանները բաժանվում են վեց եկեղեցական թեմերի՝ 1. Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, 2. Աստրախանի, 3. Երևանի, 4. Վրաստանի-Իմերեթիայի, 5. Ղարաբաղի կամ Արցախի, 6. Շիրվանի կամ Շամախու (հետագայում Ռուսաստանին միացված Կարսի մարզը մտցվեց Երևանի, իսկ Նուխիի գավառը՝ Արցախի կամ Ղարաբաղի թեմի կազմ): Թեմերի ներսում հաստատվում էին հաջորդություններ:

Արցախի (Ղարաբաղի) թեմին են պատկանում այն լուսավորչական եկեղեցիները, որոնք գտնվում են բուն Արցախի, Շաքիի (Նուխիի) և Թալիշի տարածքում: Արցախի թեմակալը հաջորդ ունի Նուխիում (Շաքիում):

Կանոնադրության («Պոլոժենիեն» բաղկացած էր 141 հոդվածից, որոնք բաժանված էին 10 գլուխների) 65-րդ հոդվածում ասված է. «Թեմի թեմակալը նմանապես ջանադիր ուշադրություն է դարձնում եկեղեցիներին և վանքերին կից

1. Свод законов российской империи, П 11, ч. 1, СПБ, изд. 1857, 1896. Ա. Երիցյանի «Ամենայն հայոց կաթողիկոսությունը» գրքի Բ մասի հավելվածում բերված է սույն կանոնադրության 1836թ. կատարված թարգմանությունը. «Բարձրագույն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսավորչական հայոց եկեղեցվոյ ի Ռուսաստանի», էջմիածին, 1836թ.:

գտնվող ուսումնական հաստատությունների վրա, իրենից կախված բոլոր միջոցներով օժանդակում է այդ ուսումնարանների բարելավմանը և տարածմանը: Թեմակալը գերազանցապես հոգ է տանում, որպեսզի նրանցում կիրառվեն ուսուցման ճիշտ և հարմար կարգ ու սովորեցնողների և սովորողների մեջ պահպանվեն բարի բարքեր»[2]: Կանոնադրության դրույթների համաձայն՝ Արցախի թեմում թեմակալի նախագահությամբ Շուշիում ստեղծվում է կոնսիստորիա (հանձնաժողով), որի գործառույթների շրջանակի մեջ մտնում են հետևյալ հարցերը.

1. Հայ եկեղեցին, լինելով դպրոցների իրավատերն ու կազմակերպիչը, հոգ է տանում թեմում գտնվող ուսումնարանների, վանքերի, եկեղեցիների և ստվածահաճո հաստատությունների մասին.

2. Արցախի թեմի սահմաններում իրեն ենթակա հայ-լուսավորչական վանքերի, եկեղեցիների (Ղարաբաղի, Նուխիի գավառներում), ուսումնարանների և աստվածահաճո հաստատությունների օգտին կատարվող կամավոր նվիրատվությունների գանձման թույլտվություն.

3. Միջնորդել էջմիածնի Սինոդի (բարձրագույն հոգևոր մարմին) առաջ՝ հիմնելու նոր վանքեր, եկեղեցիներ և ուսումնարաններ, կազմել ուսումնարանների, դրանց ուսուցիչների և աշակերտների ստույգ ցուցակները և ամեն տարի էջմիածնի Սինոդին ներկայացնել մանրամասն տեղեկություններ իրենց ենթակա ուսումնարանների մասին.

4. Թեմակալը (Շուշիի կոնսիստորիայի նախագահը) և նրա հաջորդը (Նուխիում) լուրջ ուշադրություն են դարձնում վանքերի և եկեղեցիների մոտ գտնված դպրոցների վրա և մասնավորապես՝ թեմեր այցելության եկած ժամանակ, օգնելով իրենցից կախված բոլոր միջոցներով այդ ուսումնարանների բարելավմանը և տարածմանը. նրանք պիտի գլխավորապես հոգ տանեն նրանց մեջ կանոնավոր և հարմար դասավանդման եղանակ մտցնելու և ուսուցիչների ու աշակերտների մեջ բարի վարք ու բարք պահպանելու մասին:[3]

5. Թեմակալը պարտավորեցնում է կոնսիստորիայի անդամներին ներկայացնել եկեղեցիներին, վանքերին կից գործող դպրոցների, ուսումնարանների, մասնավոր դպրոցների ստույգ ցուցակը և հաշվետվություն՝ դպրոցների բարեկարգության, ներքին կարգ ու կանոնի մասին և այլն[4]:

Հայ եկեղեցին քննարկվող ժամանակաշրջանում շատ քիչ հնարավորություններ ուներ 1836թ. կանոնադրությամբ իրեն տրված պարտականությունները կատարելու համար: Դպրոցական շատ հարցեր արտացոլում չեն գտել կանոնադրության մեջ: Հաճախ շփոթություն էր առաջանում սովորական եկեղեցական դպրոցի և հոգևոր դպրանոցի (սեմինարիայի) հասկացությունների մեջ, որոշակիություն չկար դպրոցների տիպերի, աստիճանների, աշակերտների կազմի, ուսման ծավալի ու տևողության հարցերում, պարզ չէր, թե ինչպիսի սկզբունքներով պետք է մշակել վանքերին ու եկեղեցիներին կից գործող դպրոցների կանոնադրությունները, ինչպիսի փոխհարաբերություն պետք է լիներ արքունի և հայոց եկեղեցական դպրոցների միջև և այլն: Չնայած այս բոլորին, «Պոլոժենիեն», անշուշտ, որոշ դրական դեր կատարեց նաև դպրոցական գործի կազմակերպման բնագավառում: «Պոլոժենիեն» հայ հոգևոր առաջնորդներին՝ որպես կրթական

2. Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 18-19: Նաև տե՛ս Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 126:
3. Տե՛ս Մ. Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 693: Տե՛ս նաև Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 126-127:
4. Նույն տեղում:

համակարգի ղեկավարների, պարտավորեցնում էր հետևել նաև դպրոցական գործին:

Ս. Էջմիածնի Սինոդի 1837թ. կազմած «Հայ եկեղեցու վիճակագրութիւնը Կովկասում» օրագրութեան տվյալներից տեղեկանում ենք, որ դարի առաջին կեսին Արցախի թեմում «կայ 3 վանք, 53 եկեղեցի, 32 ժամատուն, 1 եպիսկոպոս, 6 վարդապետ, 2 աբեղայ, 117 աւագ քահանայ և քահանայ, 10 սարկավագ, 8 դպիր, 6 կույս և 3 եկեղեցական-ծխական դպրոց[5]:

Վերոհիշյալ փաստերի համադրումից գալիս ենք այն եզրահանգման, որ 1836թ. «Կանոնադրությամբ» հայ եկեղեցու վրա բավական ընդարձակ իրավունքներ և պարտականություններ են դրվում դպրոցական գործի բնագավառում. հիմնել և ունենալ հոգևոր ուսումնարաններ Էջմիածնում և ամեն մի թեմում, այդ թվում՝ Արցախի թեմում, եկեղեցիներին, վանքերին կից բացել դպրոցներ, Շուշիում և Նուխիում հիմնել հոգևոր ուսումնարաններ, սահմանել ներքին կարգ ու կանոն և ուսումնական դասընթաց՝ պետական մարմինների և Սինոդի հաստատմամբ, այդ ուսումնական հաստատությունների համար հայթհայթել նյութական-դրամական միջոցներ և այլն:

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում Շուշին դառնում է թեմական առաջնորդանիստ քաղաք և հոգևոր մշակութային կենտրոն ինչպես Արցախի, այնպես էլ Նուխիի հայերի համար: Թեմի կոնսիստորիայի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտի լուսավորչական ձեռնարկումների և եռանդուն գործունեության շնորհիվ Արցախի և Նուխիի գավառներում ընդլայնվում է դպրոցական ցանցը, արձանագրվում է դպրոցական գործի որոշակի աշխուժացում, ինչը նախապայմաններ է ստեղծում դարի երկրորդ կեսի կրթական գործի, հայ մշակույթի ամենատարբեր բնագավառների զարգացման համար:

5. «Փորձ», 1881, հ. 3, էջ 123-125: Տե՛ս նաև Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), գիրք Թ, Երևան, 2001, էջ 14-15:

4. Դպրոցների նյութական-դրամական վիճակը

Քննարկվող ժամանակաշրջանում, ինչպես նաև դրանից առաջ և հետո, հայկական դպրոցների բացման ու պահպանման հետ կապված ամենածանր ու դժվար լուծելին նյութական-դրամական միջոցների խնդիրն էր: Նյութական անապահովությունը եղել է հայ դպրոցի մշտական ուղեկիցը, շատ հաճախ պատճառ դառնալով, որ հազիվ ծնունդ առած, նորաբաց դպրոցը դադարեցնի իր գոյությունը:

XIX դարի առաջին կեսին Արցախի թեմում հայկական դպրոցական գործը սկսել էր առաջանալ, թեև շատ դանդաղ ու վարանոտ քայլերով: Դրա հիմնական պատճառը տնտեսական կյանքի խիստ հետամնացությունն էր, ժողովուրդը զանգվածաբար չէր զգում կրթության, գիտության տարածման հրամայական անհրաժեշտությունը: Դրանից է, որ դեռևս ժողովրդի մեջ մուտք չէր գործել ծխական ժողովրդական դպրոցը: Լեոի արատահայտությամբ՝ այդ դպրոցը «դեռ հասարակական գիտակցության հիմնաքար չէր դարձել»[1]: Դպրոցը երերուն էր, անկայուն: Ինչպիսի մեծ դժվարությունների ու զոհողությունների գնով որ նա բացվում էր, նույն հեշտությամբ էլ կարող էր փակվել՝ չդիմանալով անանց խոչընդոտներին:

Դարի առաջին կեսին ցարական կառավարության ունեցած վերաբերմունքից, նրա ռուսացման քաղաքականությունից[2] հասկանալի պետք է լինի, որ ցարիզմը ոչ միայն չէր ջանում որևէ նյութական օգնություն ցույց տալ հայկական դպրոցներին, այլև ամեն կերպ աշխատում էր դժվարություններ հարուցել նաև այդ ուղղությամբ՝ սկսած աշխարհիկ ծագման երեխաներին հոգևոր, եկեղեցական դպրոցներում ուսանելն արգելելուց, վերջացրած՝ հայ եկեղեցական կալվածքների բռնագրավմամբ (XX դարի սկզբին): Բացառություն էին կազմում միայն այն հայկական դպրոցները, որոնք ցարիզմի արտաքին ու ներքին քաղաքականության անմիջական գործիք էին, ինչպես, օրինակ, Շուշիի, Նուխիի գավառային ռուսական տիպի ուսումնարանները, որոնք բավականին առատ դրամական օժանդակություն էին ստանում ցարական գանձարանից:

Դարի առաջին կեսին ստեղծված պայմաններում Արցախի հայկական դպրոցների պահպանման հիմնական միջոցները կազմում էին՝

- հայ եկեղեցու կողմից հոգևոր, եկեղեցական-ծխական դպրոցներին տրվող նյութական-դրամական օժանդակությունը,
- գերազանցապես անհատական կարգի կամավոր նվիրատվությունները,
- աշակերտներից գանձվող ուսման վարձը և այլն:

Արցախի թեմական եկեղեցին ուներ եկամտի մի շարք աղբյուրներ, որոնց արդյունքները լիովին կամ մասսամբ հատկացվում էին Շուշիի թեմական-հոգևոր ու եկեղեցական ու ծխական դպրոցների պահպանմանը: Այդ աղբյուրներն էին՝ մոմավաճառությունը, եկեղեցիների և ուխտատեղերի, եկեղեցուն պատկանող խանութների, հյուրանոցների, բնակելի և այլ շենքերի եկամուտները: Դպրոցների պահպանման աղբյուրներից մեկն էլ դառնում են ուսուցիչների ռոճիկներից պահվող որոշ գումարները:

Սակայն հայ եկեղեցու եկամուտները բավական սահմանափակ էին, իսկ ծախսերը՝ շատ մեծ, մանավանդ, բազմանդամ, մասնավորապես՝ կուսակրոն,

1. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 227:
2. Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 34-36:

հոգևորականության պահպանման համար կատարվող ծախսերը: Հետևապես, եկեղեցին չէր կարող լիովին ապահովել թեմի դպրոցների գոյությունը:

Քննարկվող ժամանակաշրջանում դպրոցների պահպանման մյուս կարևոր աղբյուրը մասնավոր նվիրատվություններն էին, որոնք կատարվում էին զանազան առիթներով ու ձևերով:

Կամավոր նվիրատվությունները կատարվում էին ամենաբազմազան ձևերով և լինում էին նույնպես տարբեր բնույթի ու չափի: Դրանք կազմակերպվում էին եկեղեցու ներկայացուցչի կամ այլ անձանց կողմից, երբ հանգանականության մասնակից էր դարձվում ծխականների զգալի մասը: Դա տեղի էր ունենում, որպես կանոն, որևէ վայրում նոր դպրոց բացելու, դպրոցական շենք կառուցելու կապակցությամբ և այլն: Կամավոր նվիրատվությունները կատարվում էին նաև առանձին անձանց (մեծ մասամբ՝ ունևորների) կողմից, այս կամ այն առիթով՝ մերձավորների մահվան հիշատակը հավերժացնելու կամ ընդհակառակը՝ ընտանեկան ուրախության՝ պսակի, ծննդյան, մկրտության, նշանադրության կապակցությամբ և այլն: Կամավոր նվիրատվությունների շարքում հատուկ տեղ են գրավում համեմատաբար խոշոր գումարների, անշարժ գույքերի կտակները:

Բազմաթիվ են հայ դպրոցի մեծ ու փոքր, մեզ հայտնի ու անհայտ, անկեղծ բարերարները, դրանց բոլորի անունները հիշատակելու հարկն ու հնարավորությունը չկա: Իբրև նմուշ ռուսահայ իրականությունից բավական է հիշատակել Աստրախանի Աղաբաբյաններին, որոնց միջոցներով հիմնադրվել է բարձր տիպի դպրոց Աստրախանում, Մոսկվայի Լազարյաններին (հիմնադրել են Լազարյան ճեմարան-համալսարանը), Թիֆլիսի Ներսիսյան, Թեոդոսիայի Խալիպյան, Ախալցխայի Կարապետյան և այլ դպրոցների հիմնադիրներին, որոնց անուններով էլ կոչվել են հիշյալ ուսումնական հաստատությունները[3]:

Որպես ավելի համեստ մասշտաբի բարերարների ուսանելի օրինակ, հիշատակենք Գանձասարի կաթողիկոս Սարգիս Հասան Ջալալյանին (իր միջոցներով Գանձասարի վանքում, Շուշիում, Վրաստանում և հայ լուսավորչական թեմերում բացում է հայկական դպրոցներ): Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանը, 1836թ. նշանակվելով Արցախի թեմի առաջնորդ, սկզբում Շուշիում բացում է հոգևոր ուսումնարան, այնուհետև բավականին նյութական միջոցներ է տրամադրում Շուշիի թեմական դպրոցի հիմնադրմանը, գրատպությանը, իսկ 1843թ. իր միջոցներով կառուցում է հոյակապ առաջնորդարան, որը Շուշի քաղաքի փառավոր տներից մեկը կարելի է համարել: Այնուհետև, Արցախի թեմի դպրոցներին բավականին դրամական միջոցներ են հատկացնում Հարություն Ամիրխանյանը, Գրիգոր Տեր-Ավագյանը, և շատ ուրիշներ[4]: Ուշադրության արժանի է այն փաստը, որ Շուշիի հայ հասարակությունը, ինչպես նաև գյուղերի բնակչությունը, հանգանականություն էին կատարում և հավաքած գումարները հատկացնում նորաբաց դպրոցներին:

Վերոհիշյալ փաստերի համադրումից հանգում ենք այն եզրակացության, որ քննարկվող ժամանակաշրջանում, երբ բացակայում էին անգամ հոգևոր-եկեղեցական դպրոցների գոյության համար քիչ թե շատ ապահովված ու տևական նյութական-դրամական միջոցները, երբ չկար որևէ հաստատություն, մարմին, որը

3. Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Իգնատյան, Լազարյան ճեմարան, Երևան, 1969, Մ. Սանթրոսյան (Աղաբաբյան դպրոցի մասին), նշվ. աշխ., էջ 286, Մ. Սանթրոսյան, Ներսիսյան դպրոցի պատմություն, Երևան, 1981:

4. Լեո, նշվ. աշխ., էջ 136-138:

կոչված լիներ հոգ տանելու բացվող ու գոյություն ունեցող դպրոցների պահպանման ու նյութական ապահովման մասին, կամ երբ դպրոցների գոյությունը կախված էր բոլորովին պատահական եկամուտներից և զանազան բարեգործների նվիրատվություններից, հասկանալի պետք է լիներ, որ նման պայմաններում դպրոցները երկար գոյատևել (գոյությունը պահպանել) չէին կարող: Այդ վիճակում էին ոչ միայն եկեղեցական-ծխական դպրոցները, այլև Շուշիի թեմական դպրոցը, որը նյութական միջոցների բացակայության հետևանքով քանիցս փակվել (1840, 1848) և վերաբացվել է: Բացառություն էին կազմում միայն Շուշիի, Նուխիի գավառային ռուսական տիպի ուսումնարանները. ինչպես նշեցինք, ցարական կառավարությունը դրամական միջոցներ էր հատկացնում այդ ուսումնական հաստատություններին:

Այսպիսով, ամբողջ շարադրանքից կարելի է եզրակացնել, որ, չնայած ցարական կառավարության հետադիմական քաղաքականությանը, չնայած պետությունը ոչ մի կոպեկ նպաստ չէր տրամադրում ազգային դպրոցներին, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը, նրա առաջավոր մտավորականությունը հոգ էին տանում լուսավորչական գործի առաջընթացի, տարբեր տիպի դպրոցների նյութական վիճակի հնարավորինս բավարարման համար:

5. Դպրոցի ներքին կարգ ու կանոնը

Հայ դպրոցի զարգացման ընթացքում աստիճանաբար փոխվել ու կատարելագործվել են ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը՝ կապված տվյալ տիպի դպրոցի նպատակների, ուսման բովանդակության, ուսուցման մեթոդների և այլ հանգամանքների հետ:

Մեր խնդրից դուրս համարելով հարցի մանրամասն մեկնաբանությունը, տեսնենք, թե դարի առաջին կեսին ինչպիսին էր ներքին կարգ ու կանոնն Արցախի հայկական դպրոցներում:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի դպրոցներում գոյություն չի ունեցել ժամանակակից դաս-դասարանային համակարգ, այսինքն՝ բացակայում էր դպրոցի ներքին կյանքի, աշխատանքների կազմակերպման ու կարգավորման որևէ ճշտիվ սահմանված համակարգ. դա վերաբերում էր թե՛ ուսումնական տարվան և թե՛ ուսումնական օրվան: Տարատարիք երեխաները դպրոց են ընդունվել տարվա ցանկացած ժամանակ, չի եղել որոշակիորեն սահմանված ուսումնական տարի, որն ունենար իր սկիզբն ու ավարտը, ուսումն անընդհատ էր ամբողջ տարին: Տարբեր ժամանակ դպրոց ընդունված տարբեր գրքեր ունեցող ամեն մի աշակերտի հետ ուսուցիչը, որպես կանոն, պարապում էր անհատապես, աշակերտներն իրենց տարիքին ու գիտելիքներին համապատասխան միատարր խումբ, դասարան չեն կազմել: Ուսուցման այդ ձևը կիրառվում էր հատկապես մասնավոր դպրոցում:

Խոսելով այդ մասին, Երվանդ Շահազիզը գրում է. «Խալֆայական շրջանում դպրոց բացելը շատ հեշտ էր, ոչ թույլտվություն էր պահանջվում, ոչ էլ նյութական միջոցներ, բավական էր, որ վարժապետը, քահանան, տիրացուն կամ գրագետը ցանկություն հայտներ երեխա կարդացնելու, իսկույն մանուկներից կկազմվեր մի խումբ և կհավաքվեր վարժապետի սենյակներից մեկում և ահա դպրոցը պատրաստ էր»[1]: Ուսուցիչներն ազատ էին որևէ իշխանության հսկողությունից:

Մասնավոր դպրոցներում ուսուցիչները շարունակում էին սովորեցնել անհատապես: Օրինակ, ըստ Լեոի՝ երբ Ղարաբաղում դարասկզբին սկսվում է դպրոցական շարժումը, Շուշիի հարուստները հրավիրում են Պողոս վարդապետ Ղարաբաղցուն և Հովսեփ վարդապետ Արցախեցուն՝ իրենց երեխաներին մասնավոր կարգով ուսում տալու համար: «Այդ երկու վարդապետների բացած դպրոցը գրագիտութեան մի քանի փշրանքներ էր տալիս աշակերտներին մեծ տանջանքներով»[2]: Շուշիում մասնավոր դպրոցներ են բացում Տեր-Խաչատուր քահանան, Առաքել Սարկավագը և ուրիշներ: Ուսուցման նման ձևին էին դիմում արհեստավորները, քահանաները, տիրացուները: Դրանք Լեոն անվանում է խալֆայական տիպի դպրոցներ, ուր հավաքվում են 10-15 տղաներ, աղջիկներ, ծնկաչոք սերտում այբբենարան, սաղմոս, կտակարան և այլն:

Սահմանված ուսումնական տարվա, կարգավորված դպրոցական կյանքի և ուսումնական աշխատանքների կարևոր նախապայմաններից է աշակերտների դպրոց ընդունվելու որոշ կարգի և ժամկետների գոյությունը: Մինչդեռ այդ բանը շատ երկար ժամանակ անտեսվել է ոչ միայն խալֆայական տիպի, այլև պատմաշրջանի բարեկարգ համարված եկեղեցական-ծխական, թեմական դպրոցներում: Այսպես, օրինակ, Շուշիի թեմական դպրոցում մինչև XIX դարի 40-ական թվականները չկար որևէ սահմանված կարգ՝ աշակերտներին ընդունելու, արձակելու, քննությունների, տոների մասին և այլն[3]: Թեմական դպրոցի ուսումնական աշխատանքների կազմակերպման համակարգի, կարգ ու կանոնի մասին Լեոն

1. Տե՛ս Եր. Շահազիզ, Նոր Նախիջևանի ուսումնական գործի անցեալը, Նոր Նախիջևան, 1894, էջ 4:
2. Լեո, նշվ. աշխ., էջ 86:
3. Տե՛ս Հ. Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, Շուշի, 1913, էջ 14-15:

գրել է. «Հոգևոր ուսումնարանը հայոց Շուշի քաղաքի, որ ունի երեք սենյակ, որից մինը է և ընդարձակ և երկունքը փոքրիկ է, որը և բավական են իբրև հարյուր աշակերտաց զետեղման»[4]:

Թեմական դպրոցում ուսումնական տարին սկսվել է ոչ թե սեպտեմբերից և ավարտվել մայիսին, այլ տևել է հունվարից հունվար: Տարվա ընթացքում գրեթե միշտ նորեկների ընդունելություն է եղել, դասարանի ցուցակում անունները հաճախակի ավելացել ու պակասել են, աշակերտների թիվը մի դասարանում հասել է մինչև 86-ի, իսկ մյուսում՝ 25-ի: Ուշագրավ է, որ այդ շրջանում (1840-50-ական թվականներին) յուրաքանչյուր առարկայի շաբաթական հատկացվել է որոշակի ժամաքանակ[5]:

Դպրոցի աշխատանքային և ներքին կյանքի կարգավորման համար պակաս կարևոր չէ նաև ուսումնական օրվա խելացի և արդյունավետ կազմակերպումը: Մինչդեռ դպրոցներում ինչպես ուսումնական տարին, այնպես էլ ուսումնական օրը կարգավորելիս ամենևին հաշվի չէին առնվում երեխաների տարիքային առանձնահատկությունները, նրանց աշխատելու հնարավորությունները, հոգնածությունը, հանգստի պահանջը, ուսումնական-մտավոր աշխատանքի ամենատարրական ու անհրաժեշտ առողջապահական պայմանները, որի հետևանքով էլ երեխաների առողջությունը մեծապես վնասվում էր:

Ինչպես ուսումը շարունակվում էր ամբողջ տարին, այնպես էլ օրվա ընթացքում այն տևում էր առավոտից երեկո, առավոտյան լուսաբացին աշակերտները գալիս էին դպրոց, այստեղ մնում և սովորում մինչև կեսօր, երբ տեղի էր ունենում պարապմունքների որոշ դադար՝ ճաշի, երբեմն նաև հանգստի ու խաղերի համար, իսկ այնուհետև դարձյալ շարունակում էին պարապել: Առհասարակ, ուսումնական տարվա սկիզբը և վերջը պայմանավորվում ու որոշվում էր արևածագով և մայրամուտով, բնական լույսի առկայությամբ[6]:

Օգտագործելով ռուսական արքունի դպրոցների, ինչպես նաև Թիֆլիսի Ներսիսյան, Երևանի թեմական դպրոցների փորձը, Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչները 1840-ական թվականների վերջերին (երբ նորից վերաբացվում է) փորձ են անում կարգավորել ներքին կարգ ու կանոնը, կարգավորելու ուսումնական օրը, ջանալով ելնել երեխաների տարիքային առանձնահատկություններից: Օրինակ, 1846-47 ուստարում թեմական դպրոցում ուսումնական օրվա տևողությունը սահմանվում է 5 դասաժամ, առաջարկվում է դժվար դասերը նշանակել ճաշից առաջ, այնպես անել, որ երկու դժվար դասեր հաջորդեն միմյանց[7]:

Այսպիսով, XIX դարի 40-ական թվականների վերջերին որակական փոփոխություն է նկատվում Արցախի թեմի դպրոցների ներքին կարգ ու կանոնի, ուսումնական աշխատանքների կազմակերպման ձևերի մեջ: Ավելի է հիմնավորվում ուսումնական աշխատանքի կազմակերպման դաս-դասարանային համակարգը, որոշակիորեն սահմանվում են ուսման ժամկետները, տարբեր տիպի դպրոցներ ընդունվող երեխաների տարիքը (7 տարեկանից) և այլն: Այսինքն՝ մանկավարժական պրակտիկայում, գրեթե բոլոր դպրոցներում, վերափոխվում է կարգ ու կանոնը, ուսումնական աշխատանքի կազմակերպման միասնական ձև է դառնում որոշակի տարիքի երեխաներից կազմված դասարանում տրվող դասը: Այս բոլորին պիտի ավելացնել այն շատ կարևոր հանգամանքը, որ դպրոցներում, հատկապես թեմական դպրոցում դասավանդող ուսուցիչները, բարեխղճորեն են կատարում իրենց պարտականությունները երեխաների կրթության ու դաստիարակության գործում:

4. Լեո, նշվ. աշխ., էջ 209:
5. Մատենադարան, կաթ. դիվ. թ. 166, վ. 345:
6. Մանրամասն տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 209-212: Նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 56, ծ. 81, գ. 37, թ. 113:
7. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 18-19:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Նոր ժամանակներում՝ XIX դարի առաջին կեսին, հայ քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին զուգընթաց՝ արցախահայության առաջադեմ մտավորականությունը կարողացավ կարճ ժամանակում յուրացնել դարի շունչը, քայլ առ քայլ վերագտավ ու գիտակցեց նախնիների ստեղծած մշակութային արժեքների ոգին և, հենվելով դրանց վրա, կերտեց ժամանակի պահանջներին համահունչ իր մշակույթը:

Երկրամասի ժողովրդի լուսավորության, մասնավորապես, դպրոցական գործը, մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցերը միշտ եղել են Արցախի նշանավոր մտածողների ուշադրության կենտրոնում:

Արցախի մշակույթի, լուսավորության, կրթական գործի զարգացման մեջ ներքաշվեցին հայ մտավորականության նոր կարող ուժեր, որոնք բեղմնավոր գործունեություն ծավալեցին Հայաստանում, նրա արևելյան հատվածում՝ Արցախում, նպաստելով հարազատ ժողովրդի հոգևոր վերածննդին և վերափոխմանը: Պատմաշրջանի կարևոր իրադարձություններն (Արևելյան Հայաստանի, Արցախի միացումը Ռուսաստանին) իրենց ազդեցությունն էին թողնում նաև Արցախի մշակույթի, լուսավորության, տպագրության զարգացման ու նրա ուղղությունների վրա և ստեղծագործելու մշտական լիցք հաղորդում հոգևոր-մշակութային գործիչներին, լուսավորիչ մանկավարժներին: Եթե ժամանակաշրջանի քաղաքական ծանր կացության հետ կապված՝ հայ ուսուցիչն ու բանաստեղծը, գիտնականն ու արվեստագետը, հոգևոր-մշակութային գործիչներն ապաստան են գտել օտար երկնակամարների տակ, ապա իր ժողովրդի ազատությանը ձգտող ոգին, հայրենիքի անկախությունը վերականգնված տեսնելու տենչը մղել են արցախահայ մտավորականներին, հոգևոր գործիչներին վերադառնալ հայրենի երկրամաս և նվիրվել ազգանվեր լուսավորչական գործունեության:

XIX դարի առաջին կեսին Արցախի թեմի լուսավորիչ-մանկավարժներ ու հոգևոր-մշակութային գործիչներն էին Հովսեփ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին, Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանը, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը և ուրիշներ:

Պատմագիտական աղբյուրների, մատենադարանի վավերագրերի, պարբերական մամուլում (1858-1920թթ.) լույս տեսած բազում հոդվածների և այլ նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել մեզ համառոտակի (ելնելով մեր ուսումնասիրության բնույթից) լուսաբանել նրանց արգասավոր գործունեությունը:

1. Արցախի թեմի լուսավորիչ մանկավարժների գործունեությունը

XIX դարի առաջին կեսին՝ հայ նոր դպրոցի կազմավորման շրջանում, արցախահայ կյանքում հանդես են գալիս լուսավոր դեմքերը, որոնք դրվատում էին մեր մայրենի լեզուն ու գրականությունը, քննադատում հետամնացությունն ու տգիտությունը: Նրանք զգալի դեր խաղացին դպրոցի զարգացման, ուսուցչական կադրերի պատրաստման, դասագրքերի կազմման գործում:

Հովսեփ Արցախեցի (Տեր-Ավագյան): Նրա ծննդյան թվականն անհայտ է: Ռաֆֆին իր երկերի 10-րդ հատորում նշում է, որ Արցախեցու ծնողները Նուխի քաղաքից են եկել ու բնակություն հաստատել Արցախում XVIII դարի վերջին: Իսկ Լեոն թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում նշում է, որ «ինչ այժմեան ժամանակ կարելի եղավ իմանալ Շուշու ծերերից, այն է, որ Յովսեփ վարդապետ «իմաստասերը», «գիտնականը» Խաչենի Ղշլաղ գյուղիցն էր, վերին աստիճանին զվարճախոս էր: Բաղդասար միտրոպոլիտի գործերից մեկը (1847թ., թ. 5) ունի վերնագիր «Յաղագս մահուան գիտնական Յովսեփ վարդապետին՝ (մահացել է 1847թ.) միաբանի սրբոյ վանիցն Գանձասարու»: Վարդապետը մեռավ խոր ծերության մեջ... Բաղդասար միտրոպոլիտը հրամայեց թաղել նրան Գանձասարի հյուսիսային կողմում, ուր այսօր էլ կայ նրա գերեզմանը»[1]: Հովսեփ վարդապետի կենսագրական տեղեկությունները սուղ են: Եղել է Շուշիի թեմի վարդապետ, որպես վանական ապրում էր Գանձասարի և Ս. Հակոբի վանքերում՝ զբաղվում լուսավորչական գործունեությամբ: Հավաստի աղբյուրների համաձայն՝ նա դպրոցներ է բացել Գանձասարում, Դադիվանքում և այլուր, դասավանդել ճարտասանություն, քերականություն, տրամաբանություն, գրաբար, աստվածաբանություն և այլ առարկաներ:

Հովսեփ Արցախեցու լուսավորչական գործունեության մասին ակնածանքով է արտահայտվել հայտնի հասարակական գործիչ, գրականագետ և մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանը «Ճանապարհորդություն ի Հայս» գրքում[2]: Նա պատմում է, որ Շուշիում եղած ժամանակ (Եփրեմ կաթողիկոսի հետ՝ 1821-1822թթ.) ծանոթացել է Հովսեփ Արցախեցու հետ, որին քաղաքիս հարուստները (Հախումյաններ, Ջալալյաններ, Թառումյաններ) բերել էին տվել՝ իրենց տղաներին ու աղջիկներին ուսուցանելու[3]: Հովսեփ վարդապետն այստեղ բացեց նաև մասնավոր դպրոց՝ ընչազուրկ խավին պատկանող ընտանիքների երեխաների համար:

1820-ական թվականներին Շուշիում ուսումնարանների բացման, ինչպես նաև մշակութալուսավորական և տպագրական գործն առանձնապես մեծ թափ է ստանում, երբ այստեղ է ժամանում Շվեյցարիայի Բազել քաղաքի քարոզչական (միսիոներական) ընկերությունը: Միսիոներների հետ ակտիվ լուսավորչական աշխատանք է տանում նաև Հովսեփ Արցախեցին: 1827թ. քաղաքի արևելյան մասում նրանք հիմնում են ուսումնարան, որտեղ սովորում է 130 աշակերտ: Ուսումնարան են ընդունում գլխավորապես 10-12 տարեկան չքավոր հայ պատանիների: Դպրոցը ժողովրդական բնույթ էր կրում: Ուսումնարանում Արցախեցին դասավանդում էր Հին ու Նոր կտակարանների ընթերցանություն, աշխարհագրություն,

1. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 85: Նաև տե՛ս Մակար եպ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 179:
2. Տե՛ս Մ. Թաղիադյան, «Ճանապարհորդություն ի Հայս», Կալկաթա, 1847, էջ 28-29:
3. Ջ. Մ. Միրզաբեկյան, Մեսրոպ Թաղիադյան, Երևան, 1971, էջ 21-22:

տրամաբանություն և այլ առարկաներ, թարգմանություններ է կատարում գրաբարից աշխարհաբար և ընդհակառակը: Ուշագրավ է, որ ուսումնարանի շրջանավարտներից ոմանք էլ իրենց հերթին դպրոցներ են բացում քաղաքում և գյուղերում:

Հովսեփ Արցախեցու ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ միսիոներների հետ Շուշիում սկիզբ է դնում տպագրական գործին: Բացի կրոնական գրքերից, Արցախեցին տպագրում է հայերեն դասագրքեր, այբբենարան, կազմում աղյուսակներ, քերականության ձեռնարկներ: Առանձնապես կարևոր է շեշտել, որ ուսումնարանում և հրատարակություններում գործածության մեջ է մտնում աշխարհաբար՝ ժողովրդական լեզուն: Եթե Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում հրատարակում են Ավետարան աշխարհաբար լեզվով, ապա Շուշիում՝ Հովսեփ Արցախեցու «Համառոտ բառգիրք գրաբար և աշխարհաբար, ի պետս համբակաց» (1830, Շուշի) գրաբարից աշխարհաբար բառարանը: Լեզվաբան Գր. Վանցյանը «Պատմական քերականություն արևելահայ լեզվի»[4] աշխատության մեջ, արժանավույնս գնահատելով այդ գիրքը, նշել է, որ աշխատության մեջ տրված են գրաբար բառերի աշխարհաբար բացատրությունները, ընթերցողը գտնում է տվյալ բառի հոլովման ձևերը և ձևաբանական մյուս եզրույթները: Դրական այդ երևույթը, անկասկած, ժամանակին որոշակի դեր է կատարել հայերենի ուսումնասիրության բնագավառում: Իր լեզվական մաքրությամբ ու պարզությամբ այդ աշխատությունը գերազանցել է մինչև XIX դարի 60-ական թվականները հրատարակված բոլոր գրքերին:

Հովսեփ Արցախեցու աշխատությունների շարքին են պատկանում «Առաջին մաս փիլիսոփայութեան, որ ասք տրամաբանութեան» (1840, Շուշի), «Տրամաբանություն» (1841թ.), «Մաշտոց» և այլն:

Հետևելով ֆրանսիացի փիլիսոփա, բարոյագետ ու աստվածաբան Անտոն Կովդնի ուսմունքին՝ Հովսեփ վարդապետը հայ իրականության մեջ դարձավ տրամաբանության բազմակողմանի ըմբռնման նախակարապետներից: Նա փորձել է մշակել այնպիսի տրամաբանություն, որը համատեղեր ավանդական տրամաբանության երկու ըմբռնումները՝ ինդուկտիվն ու դեդուկտիվը, և վերացներ դրանց միջև գոյություն ունեցող հակասությունը: Ըստ այդ գաղափարի՝ տրամաբանությունը պետք է զբաղվեր և մեթոդական, և ապացուցողական խնդիրներով: Որպես մեթոդական գիտություն այն պետք է քննարկեր ճշմարտությունը ձեռք բերելու պայմանները, այսինքն՝ թե ինչպես են կազմավորվում իմացության նախատվյալները և որոնք են դրանց ակնհայտության պայմանները, իսկ որպես ապացուցման մասին ուսմունք՝ թե ինչպես են հայտնի ճշմարտությունները հավասարաբանվում ուրիշներին: Ելնելով տրամաբանության՝ որպես գիտության, նման ըմբռնումից, Արցախեցին քննության է առել գիտական իմացության և ձևական տրամաբանության հետ կապված բազմաթիվ հարցեր, որոնք հետագայում զարգացրել են նրա աշակերտները:

Արցախեցուն աշակերտել են բազում անվանի գործիչներ, հատկապես՝ ուսուցիչներ, որոնք հետագայում Արցախի շատ վայրերում բացելով դպրոցներ՝ զբաղվել են մանկավարժական գուրծունեությամբ:

<u>Պողոս վարդապետ (Ներսիսյան) Ղարաբաղցի:</u> Լայն համբավի տեր գիտնա-

4. Գուրգեն Սևակ, «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», Երևան, 1955թ. հավելվածում մի հատված բերելով «Կարճառոտ աղոթքներ շաբաթի ամեն մեկ օրին համար...» գրքից, հիմնվելով Գր. Վանցյանի աշխատության վրա, բնականաբար նշում է 1822թ. Շուշիում լույս տեսած գիրքը:

կան ու մանկավարժ, Հովսեփ Արցախեցու տաղանդավոր աշակերտներից: Ծնվել է 1795թ. Արցախի Խաչեն գավառում (մահվան թվականն անհայտ է), քահանայի ընտանիքում: Լեոն Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատության մեջ նշում է, որ Պողոս վարդապետը Տաթևի միաբան էր, աշակերտել է հոգևոր գործիչ-լուսավորիչ Արցախեցուն, սովորել Գանձասարի վանքի դպրոցում: Իր ուսուցչի հետ Պողոս վարդապետը լուսավորչական գործունեություն է ծավալում Արցախի գավառներում, բացում դպրոցներ, բարելավում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործը, կիրառում ուսուցման և դաստիարակության առաջավոր մեթոդներ:

Խորհրդահայ հայտնի մանկավարժ ու հետազոտող Մ. Սանթրոսյանը «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» աշխատության մեջ նշում է. «Վրաստանի թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին 1817թ. դասավանդման է հրավիրում հայկաբանի համբավ վաստակած Պողոս Ղարաբաղցուն, որն աշակերտներին սովորեցնում էր իր ժամանակի բարձր համարված գիտությունները՝ Չամչյանի քերականությունը, Ադոնցի ճարտասանությունը»[5]: Այս դպրոցը, փաստորեն, դառնում է 1824թ. բացված Ներսիսյան դպրոցի, այսպես ասած, նախապատրաստական բաժանմունքը: Պողոս վարդապետը Ներսիսյան դպրոցում աշխատում է 1824-1826թթ. և դասավանդում էր ճարտասանություն, տրամաբանություն ու քերականություն: Նրան աշակերտել են անվանի հայագետներ, դպրոցի ու մանկավարժության ասպարեզի անվանի գործիչներ Մ. Թաղիադյանը, Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանցը և ուրիշներ: Որպես ճանաչված ուսուցիչ՝ Պ. Ղարաբաղցին աշխատել է Սևանի, Ակուռի վանքի դպրոցներում, Շուշիում՝ միսիոներների ուսումնարանում՝ 1827-1834թթ., այնուհետև թեմական դպրոցում՝ 1838-1840թթ.: Թեմական դպրոցը ժամանակավորապես փակվելուց հետո հայտնի չէ, թե ինչո՞վ է զբաղվել Պողոս Ղարաբաղցին, ինչպե՞ս է ընթացել նրա կյանքը:

Պողոս վարդապետն իր մանկավարժական գործունեությանը սերտորեն զուգակցել է գիտականը, հեղինակել շատ գրքեր ու դասագրքեր, որոնք թե իր ժամանակին և թե հետագայում որպես արժեքավոր ձեռնարկներ կիրառվել են հայկական դպրոցներում: Հիշատակության արժանի է «Համառոտ հայկական քերականության» (1829, Շուշի) աշխատությունը, որտեղ ներկայացված են հայերենի հոլովները, բնութագրված են խոսքի մասերը, տրված են քերականության առանձին սահմանումները:

Պողոս վարդապետը մի շարք մանկավարժական ձեռնարկների, հոդվածների հեղինակ է, քաջածանոթ է հայ մանկավարժության պատմությանը: Իր աշխատություններում բազմակողմանիորեն քննարկել է ուսուցման, դաստիարակության, դպրոցի ներքին կյանքին վերաբերող բազմաթիվ հարցեր: Մանկավարժական գործունեության տարիներին նա հակադրվում էր մինչ այդ գոյություն ունեցող ուսուցման սխոլաստիկ մեթոդին և բացառում այն:

Նա զգում էր, որ ուսուցումը գրաբար լինելու հետևանքով երեխան դժվարությամբ է ընկալում անծանոթ նյութը, ուստի իր կազմած դասագրքում, իր ուսուցիչ Արցախեցու նման, գրաբար բառերի կողքին տալիս էր աշխարհաբարի բացատրությունը: Պողոս վարդապետը մեծ ուշադրություն էր դարձնում երեխայի դաստիարակությանը, որով, ըստ նրա, պարտավոր է զբաղվել և ծնողը, և ուսուցիչը: Նա խիստ անհրաժեշտ էր համարում դաստիարակի անձնական օրինակը. ուսու-

5. Մ. Սանթրոսյան, «Արևելյան դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին», էջ 167: Տե՛ս նաև Ներսիսյան դպրոցի պատմություն, «Լույս» հր., 1981, էջ 110:

ցիչը պետք է կարողանա նվաճել երեխայի սիրտը, ճիշտ կիրառել մանկավարժական մեթոդները: Պողոս վարդապետի կարծիքով՝ երեխայի դաստիարակության համար շատ կարևոր նշանակություն ունի ընտանեկան միջավայրը, մթնոլորտը, որը հանդիսանում է նրա կյանքի ամենանշանավոր շրջանը: Երեխայի բնավորության հիմնական գծերը ձևավորվում են ընտանիքում, ընտանեկան հարաբերությունների մեջ: Այստեղից էլ՝ Պողոս վարդապետը էական նշանակություն է տալիս ընտանեկան դաստիարակությանը: Դաստիարակությունը պետք է նպաստի, որ ընտանեական հարաբերությունները ճշտորեն կազմվեն, իսկ եթե դա հնարավոր չէ, այդ դեպքում երեխային պետք է հանել այդ միջավայրից և դնել նրան դաստիարակության համար հարմար պայմանների մեջ:

Նրա մանկավարժական գործունեության մասին հիացմունքով են հիշում սիրելի աշակերտները՝ Մ. Թաղիադյանը, Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանցը: Պողոս վարդապետը շատ պահանջկոտ էր, բազմակողմանի գիտելիքների տեր ու մեծ հայրենասեր, բարերար և հարգանքով էր վերաբերվում իր աշակերտներին: Երկու մեծ լուսավորիչների մասին գովեստով է արտահայտվել նաև թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտը: Լեոն իրավացիորեն նշում է, որ անուրանալի են երկու վարդապետների ջանքերը դպրոցաշինության և գրատպության ասպարեզներում:

Ավելորդ չէր լինի նշել, որ բազելցի միսիոներների ընկերությունը Շուշիում և Մոսկվայում տպագրել է 11,679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն և 100 օրինակ եբրայերեն գրքեր:

Ինչ վերաբերում է Շուշիում հրատարակված հայերեն գրքերին, որոնց օրինակների հետ մենք ծանոթացել ենք Երևանի հանրային և Մատենադարանի գրադարաններում, ստորև տալիս ենք դրանց համառոտ ցանկը: Այս հրատարակությունները մեծ մասամբ կրոնական-քարոզչական բնույթ են կրում, բայց կան նաև աշխարհիկ բովանդակությամբ գրքեր, բառարաններ, քերականական ձեռնարկներ:

1. Պատմություն Սուրբ գրոց (թարգմանություն ռուսերեն, 44 էջ, Շուշի, 1828թ.):

2. Ընթերցուածք ի Ս. գրոց Հին կտակարանի (ի պիտոյ վարժարանաց), 28 էջ, Շուշի, 1829թ.:

3. Հավաքումն Աստուծային վկայութեանց, 184 էջ, Շուշի, 1829թ.:

4. Պողոս Ներսիսեանց Ղարաբաղցի՝ Համառոտ հայկական քերականութիուն, 30 էջ, Շուշի, 1829թ.:

5. Հովսեփ Արցախեցի՝ Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պետոյ համբակաց), 398 էջ, Շուշի, 1830թ.:

6. Ժամանակի վերջն (թարգմանություն), 46 էջ, Շուշի, 1832թ.:

7. Ավետարանի ճշմարտութեան և զորութեան համար (թարգմանություն), Շուշի, 1833թ.:

8. Կիուրեղ Երուսաղեմցի՝ Ճառեր վասն տասն հրամանաց հաշվատոց, 46 էջ, Շուշի, 1833թ.:

9. Ճանապարհորդութիւն առ բարեպաշտ կեանս (թարգմանություն), 150 էջ, Շուշի, 1833թ.: 2: 10 քարոզ ավագ ուրբաթ օրին համար: Շուշի, 1833թ.:

10. Մեղքը խաղ անելու բան չէ (թարգմանություն), 14 էջ, Շուշի, 1833թ.:

11. Չամչեան Միքայել՝ Քերականութիւն հայկազեան լեզուի, 328 էջ, Շուշի, 1833թ.:

12. Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար, 77 էջ, Շուշի, 1833թ.:

Ինչպես երևում է մեր ներկայացրած ցուցակից, վերջիններիս մի մասը փոքրիկ գրքույկներ են, բայց դրանց մեջ կան և այնպիսիները, որոնք 150-ից մինչև 400 էջի են հասնում: Գրքերի մի մասը թարգմանություններ են, բայց կան և ինքնուրույն աշխատություններ: Վերոհիշյալ ցուցակում արժեքավոր աշխատություն է Հովսեփ Արցախեցու գրաբարից աշխարհաբար լեզվով կազմած բառարանը:

Ուշագրավ է, որ Արցախի թեմի հայտնի լուսավորիչներ Հ. Արցախեցին, Պ. Ղարաբաղցին առաջիններից էին, որ Արցախում զբաղվել են կանանց կրթության հարցերով, բացել մասնավոր դպրոց (Շուշիում)՝ հարուստ խավի աղջիկների համար:

Արցախյան լեռնաշխարհում ծնվել են տաղանդավոր գիտնականներ, արվեստի, գրականության, ռազմական-քաղաքական, հոգևոր-մշակութային ասպարեզի հայտնի գործիչներ: Նրանք միշտ էլ միասին են պայքարել օտար զավթիչների դեմ, ղեկավարել ազգային-ազատագրական շարժումը, կոփել իրենց մարտական ոգին, միմյանց հետ կիսել ուրախությունն ու տխրությունը, ստեղծել ու թողել են հարուստ ժառանգություն մշակութային կյանքի տարբեր բնագավառներում:

2. Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի լուսավորչական, գրահրատարակչական գործունեությունը

Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյան (1775-1854թթ.): Ականավոր եկեղեցական, հասարակական և մշակութային գործիչ, Շուշիի հոգևոր թեմի առաջնորդ: Նրա ամբողջ գործունեությունը սերտորեն առնչվում է պատմաշրջանում՝ արցախահայության կյանքում առաջացած հուզող հարցերի հետ:

Դարեր շարունակ Հասան Ջալալյան տոհմի հոգևոր գործիչների հոգածության շնորհիվ Արցախ աշխարհում պահպանվել է Գանձասարի՝ որպես հոգևոր, միաժամանակ հայ ազատագրական շարժումների կենտրոնի դերը: Այստեղ ծավալվել է մշակութային, շինարարական լայն գործունեություն, վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, եղել են հարուստ ձեռագրատուն, դպրանոց, ստեղծվել են բարձրարժեք ձեռագրեր, Մատենադարան, կրթվել են հոգևոր գործիչներ, որոնք իրենց նպաստն են բերել Արցախի, ինչպես նաև Հայոց մյուս թեմերի մտավոր ու մշակութային կյանքի զարգացմանը:

Այս համատեքստում անուրանալի է Հասան Ջալալյան տոհմի ականավոր գործիչ Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանի բազմաբովանդակ, բեղմնավոր գործունեությունը: Բաղդասար միտրոպոլիտը, ինչպես երևում է նրա «ցուցակ ծառայութեան»-ից[1], ծնվել է Գանձասար գյուղում (այժմ՝ Վանք), 1775թ. հունվարի 12-ին: Նրա հայրն էր Դանիել Բեկը՝ Մելիքբեկ Հասան Ջալալյանի որդին: Դանիել Բեկը կրտսերն էր Մելիքբեկի ութ արու զավակներից, որոնցից երկուսը՝ Հովհաննեսը և Սարգիսը, հայտնի դարձան իբրև կաթողիկոսներ: Մելիքբեկի աղջիկն էր Ղամար-Սուլթանը, որն ամուսնացավ Ջրաբերդի նշանավոր Մելիք Հաթամի հետ, և նրա որդին էր Դիզակի նշանավոր Մելիք-Մեժլումը: Դանիել Բեկն ամուսնացավ Հռիփսիմեի հետ և ունեցավ երկու զավակ՝ Ալավերդի և Բաղդասար:

«Փորձ» ամսագրի 1880թ. թիվ 5-ում տպագրված Տեր Հովհաննիսյանի «Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանցի համառոտ կենսագրութիուն» հոդվածից, ինչպես նաև Լեոի Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատությունից տեղեկանում ենք, որ Բաղդասար մետրոպոլիտի մանկությունը համընկավ այնպիսի մի ժամանակաշրջանի հետ, երբ Ղարաբաղի մելիքությունները հույսերի և տագնապների մեջ էին: Այդ այն ժամանակ էր, երբ նորից բորբոքվեց ազատագրական շարժումը: Լեոն իրավացիորեն նշում է, որ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի ժամանակ, երբ լեռնական փոքր իշխողներին մտցնում էին Եկատերինա կայսրուհու և նրան շրջապատողների դիտավորությունների ու գաղափարների իրագործման շրջագծի մեջ, ծրագրվում էր հայկական անկախություն Անդրկովկասում, և Հովսեփ արքեպիսկոպոսին մնում էր միայն ոգևորել հայ մելիքներին, դրդել, որ նրանք լինեն գործունյա, դիմադրեն Շուշիի խանին և այլն:

Բանակցությունները հայերի և ռուսների միջև նորից եռանդուն բնույթ էին ըն-

1. Կազմված է Շուշվա կոնսիստորիայում, 1850թ.: Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 100:

դունել, և Գանձասարը (Խաչենի Հասան-Ջալալյանների տոհմային սրբարանը, ուր գտնվում էր նաև Աղվանից կաթողիկոսությունը) նորից դարձել էր գաղտնի ժողովների, խորհրդավոր գրագրությունների մի կենտրոն, ուր հավաքվում էին ղարաբաղցի ուխտապահ մելիքները և ուր նրանց միավորում, առաջնորդող մտքեր էր հաղորդում Բաղդասարի հորեղբայր Հովհաննես կաթողիկոսը՝ Եսայի կաթողիկոսի այդ արժանավոր հաջորդը:

Ռուսաց ազատարար զորքերին Անդրկովկասում սպասում էին 1783-1785թթ., և Արցախի հայությունը կատարյալ հիմքեր ուներ հավատալու, թե գալիս է խանական իշխանության վերջին ժամը: Հասկանալի է, որ դրական խոստումներով ոգևորված հայերը կարող էին մոռանալ զգուշությունը, արհամարհել իրենց թշնամուն: Իսկ թշնամին՝ Իբրահիմ խանը, նույնպես գործում էր, բայց ավելի մեծ շրջահայացությամբ, ավելի նուրբ ու ճարպիկ միջոցներով: Մի կողմից նա հսկում էր, թե ինչ էր կատարվում ուխտապահ մելիքների միջև, մյուս կողմից ինքն էլ բանակցություններ էր վարում ռուսների հետ: Եվ երբ համոզվեց, որ հայերին տրված ռուսական խոստումներն արագ և անպայման կատարվելիք բաներ չեն, այն ժամանակ նա սկսեց գործել ուխտապահ մելիքների դեմ[2]: Լեոն նշում է, որ հայ ազատագրական շարժումը երբեք դավաճանների պակասություն չի զգացել: Եվ 11 տարեկան էր Բաղդասարը, երբ նրա հորեղբայր Հովհաննես կաթողիկոսը, հարազատ եղբոր մատնությամբ, կալանավորվեց Իբրահիմ խանի մարդկանց ձեռքով և տարվեց Շուշի, ուր նրան սպասում էին արևելյան բռնավորի տանջալի կտտանքները: Նա մեղավոր էր, որ գաղտնի հարաբերություններ ուներ ռուսների հետ և սպանվեց: Դա ահաբեկման առաջին ակցիան էր և խորտակման սկիզբը: Իբրահիմ խանը կարողացավ այնպես ահաբեկել իր թշնամի մելիքներին, որ նրանք փախան երկրից և ապաստան գտան Գանձակի խանի մոտ: Գանձասարը ենթարկվեց կողոպուտի, իսկ այդտեղ մնացած Հասան Ջալալյանները, որոնցից Սարգիս եպիսկոպոսը կաթողիկոսության ներկայացուցիչն էր, շարունակ հալածվում էին կասկածամիտ խանից: Սարգիսը մի քանի տարի դիմացավ այդ հալածանքներին: Բայց 1791թ. նոր աղետ տեղի ունեցավ: Իբրահիմ խանի ձեռքով սպանվեցին Սարգիս եպիսկոպոսի երկու եղբայրները՝ Ջալալ Բեկն ու Դանիել Բեկը (Բաղդասարի հայրը): Շուշիում կալանավորվեց Մելիք-Մեժլումի մայրը՝ Ղամար-Սուլթանը, որը Դանիել Բեկի քույրն էր: Այս ողբերգությունը Սարգիս եպիսկոպոսի մեջ այլևս չէր թողնում հայրենի վանքում մնալու վստահությունը[3]:

Այսպիսով, XVIII դարի վերջին թուրք-պարսկական տևական պատերազմի շրջանում Արցախում ստեղծվել էին քաղաքական, տնտեսական աննպաստ պայմաններ, և երկիրը հայաթափ էր եղել: Սարգիս կաթողիկոս Հասան Ջալալյանն Արցախի հայ գաղթականների հետ տեղափոխվում է Գանձակ (1791-1795թթ.) և նշանակվում տեղի հայոց թեմի առաջնորդ, իսկ այնուհետև ապրում Վրաստանում՝ Հաղպատի վանքում (1796-1808թթ.): Նրա հետ էր նաև պատանի (17 տարեկան) Բաղդասար վարդապետը, որը 1792թ. հունվարի 12-ին, Գանձասարի վանքում, ընդունել է սարկավագության աստիճան իր հորեղբորից, ում մոտ էլ,

2. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 100-104:
3. Նույն տեղում, էջ 101-102:

ըստ երևույթին, ստացել էր սկզբնական դաստիարակությունը: 1796թ. մարտի 13-ին Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցում Սարգիս եպիսկոպոսը՝ Գանձասարի վերջին կաթողիկոսը, տվեց նրան ավագ սարկավագության աստիճան, իսկ երկու տարի հետո՝ 1798թ. մարտի 8-ին, նույն եկեղեցում ձեռնադրեց վարդապետ: Պատմում են, որ Բաղդասարի վարդապետացումը փութացնում էր մանավանդ Գանձակի Ջավադ խանը: Սա այնքան հիացած էր նրա ձայնի վրա, որ եկեղեցի էր հաճախում՝ նրա երգեցողությունը լսելու համար[4]: Ղուկաս կաթողիկոսը, լսելով Բաղդասար վարդապետի երգեցողությունը, պատվիրեց Սարգիս կաթողիկոսին ծայրագույն վարդապետության կոչում տալ նրան[5]:

Բաղդասար վարդապետը սկզբնական կրթությունը ստացել էր Թիֆլիսում՝ Սերովբե Պատկանյանի (Պատկանյան տոհմի Գաբրիել քահ. Պատկանյանի, Ռաֆայել Պատկանյանի, Քերովբե Պատկանյանի, Միքայել Պատկանյանի նախահայրը) մասնավոր դպրոցում: «Ցուցակ ծառայութեան»-ը վկայում է, որ Բաղդասար ծայրագույն վարդապետը սովորել է Սերովբե Պատկանյանի մոտ 1799-1802թթ.: Ուսումնասիրել է հայերեն, քերականություն, ճարտասանություն, կրոն, Ս. Գիրք: Լեոն նշում է. «Բայց 24 տարեկան հասակում սկսած այս ուսումն էլ, անշուշտ, առանձին մի աչքի ընկնող գիտութիւն չը հայթայթեց վարդապետին. Բաղդասարը մինչև վերջն էլ մնաց խեղճ գիտութեան տէր մի մարդ, և եթէ կարողացավ ինքն իրեն յայտնի դարձնել, այդ՝ գլխաւորապես բնատուր տաղանդի շնորհիվ»[6]:

Բաղդասար միտրոպոլիտը կանոնավոր ուսում չի ստացել, բայց սաստիկ ուսումնասեր էր, ուներ բնական խելք, տոկուն էր և հեռատես:

Սարգիս կաթողիկոսը 1808թ. Բաղդասար վարդապետին իր որդի Մելիք Գրիգորի հետ ուղարկում է Գանձասար: Բաղդասար վարդապետը վանք մտավ, երբ այն բոլորովին ամայի էր, զուրկ հոգևոր միաբանությունից: Եռանդուն, գործունյա վարդապետը կարողացավ կարճ ժամանակում ոչ միայն կարգի բերել վանքը, այլև մասամբ ետ վերցնել վանքապատկան կալվածքների մի մասը, որոնց տիրացել էին թուրք բեկերը և հայ ազնվականները: Սարգիս կաթողիկոսը գաղթական հայերի հետ 1812թ. Հաղպատից վերադարձավ Գանձասար և վերականգնեց իր Աղվանից կաթողիկոսական իրավունքները: Սակայն 1815թ. ռուսական կառավարությունը նրան հարկադրեց հրաժարվել կաթողիկոսական տիտղոսից և շնորհեց (էջմիածնի բարձրագույն խորհրդի համաձայնությամբ) միտրոպոլիտության տիտղոս՝ արքեպիսկոպոսի աստիճանով: Այսպիսով, վերացավ Աղվանից կաթողիկոսությունը, որ գոյություն ուներ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի ժամանակից:

Սարգիս միտրոպոլիտը ցանկանում էր, որ Հասան Ջալալյան տոհմի մեջ, որը դարեր շարունակ պահպանել էր կաթողիկոսությունը, պահպանվեր և միտրոպոլիտությունը: Այդ նպատակով 1820թ. գարնանը Բաղդասար վարդապետին ուղարկում է էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսի մոտ, եպիսկոպոս ձեռնադրվելու համար: Բաղդասար եպիսկոպոսը, վերադառնալով Գանձասարի վանք Սարգսի ծե-

4. Գ. Հովհաննիսյան, «Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալեանցի համառոտ կենսագրութիւն», «Փորձ» ամսագիր, թ. 5, 1880:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:

ության պատճառով, համարյա ինքն էր կառավարում հոգևոր իշխանությունը: Սարգիս միտրոպոլիտի մահից (1828թ.) երկու տարի անց Բաղդասարը Եփրեմ կաթողիկոսի կոնդակով ստացավ միտրոպոլիտի աստիճան և նշանակվեց Գանձասարի թեմի առաջնորդ:

Ռաֆֆին իրավացիորեն նշում է, որ պետք է մի առանձին բախտ համարել, որ այն ժամանակներում, երբ ռուսները տիրեցին Ղարաբաղին և Երևանի նահանգին, էջմիածնում գտնվում էր Ներսեսի նման մի եկեղեցական, իսկ Գանձասարի վանքում՝՝ Բաղդասար միտրոպոլիտը: Այդ երկուսն էլ իրենց գործունեությամբ բավական նման էին միմյանց, այն զանազանությամբ միայն, որ Ներսեսն ուներ քաղաքական իդեալներ, իսկ Բաղդասարը՝ եկեղեցական և վանքային բարեկարգության եռանդ[7]:

Լեոն, վկայելով Տեր-Հովհաննիսյանի «Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանցի կենսագրությունը» հոդվածը («Փորձ», 1880թ. 5), գրում է. «Ահա այս ժամանակից է, որ Բաղդասար միտրոպոլիտը սկսում է իր գործունեությամբ հռչակ և ընդարձակ ժողովրդականություն ստանալ: Առաջնորդանիստ տեղը դարձեալ Գանձասարն էր և նրան ենթարկուած էր նաև գավառի վարչական կենտրոն Շուշին: Միտրոպոլիտի շինարար ջանքերը երբեք չեն ընդհատվում և նրանք մեծագույն մասամբ նուիրուած են Գանձասարի վանքին, որ մի տեսակ նուիրական պաշտամունք էր նրա համար: Շարունակելով վերացնել կալուածական վեճերը, միտրոպոլիտը միաժամանակ միջոցներ էր գտնում և չը գտած ժամանակն էլ իր սեփական միջոցներն էր ծախսում այն ամեն բարեկարգութիւններ համար, որոնք հարկավոր էին Գանձասարը բարձրացնելու ու նախկին հռչակին մոտեցնելու համար: Մանավանդ շատ էր աշխատում, որ Հասան Ջալալեանների հռչակավոր վանքը դառնայ մտավոր գործունեութեան և դաստիարակութեան կենտրոն»[8]:

Բաղդասար միտրոպոլիտի ջանքերի նպատակը վանքապատկան կալվածքների վերաբերյալ այն չէր, որ դրանցով ապահովեր վանականների և վանքերի գոյությունը, այլ գլխավորապես այն, որ դրանք լինեին եկամուտների մշտական աղբյուր՝ Արցախի գավառներում կրթական օջախներ, մշակութալուսավորական հիմնարկներ հիմնելու համար:

Ակնառու էին Բաղդասար միտրոպոլիտի ջանքերը նաև դպրոցաշինության և տպագրական գործի ասպարեզում: Սկզբում Գանձասարի վանքում մի դպրոց հիմնեց (1830թ.) և հրավիրեց Ճարտասան և հայկաբան Հովսեփ վարդապետ Արցախեցուն (Տեր Ավագյան) որպես վարժապետ և նույն դպրոցի կառավարիչ: 1836թ. մարտի 11-ին ինքնակալության կողմից հաստատված «Հայ լուսավորչական հավատքի հոգևոր կառավարման կանոնադրության» համաձայն՝ Շուշին դառնում է թեմական առաջնորդանիստ քաղաք և հոգևոր կենտրոն ինչպես Արցախի, այնպես էլ Նուխիի գավառի հայերի համար: 1837թ. հուլիսի 1-ին Բաղդասար միտրոպոլիտը կայսերական հրամանով (Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի հորդորմամբ) նշանակվեց Արցախի թեմի առաջնորդ և նույն թեմի կոնսիստորիայի նախագահ: Ղարաբաղի կոնսիստորիան բացվել է 1837թ. նոյեմբերի 4-ին: Առա-

7. Տե՛ս Ռաֆֆի, Երկ. հ. 10, էջ 456:
8. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 114-115:

ջին անդամներն էին լուսավորիչներ Հովսեփ վարդապետը, Խաչատուր քահանա Տեր-Հովհաննիսյանը, Ավետիք քահանա Տեր-Սարգսյանը, Առաքել քահանա Յուզբաշյանը, որոնք մասնավոր եկեղեցական-ծխական դպրոցներ են բացել Արցախի գավառներում և Նուխիում[9]:

Օգոստոսին Բաղդասար միտրոպոլիտը տեղափոխվեց Շուշի, որտեղ նրա համար սկսվեց գործունեության ավելի լայն ասպարեզ ու միաժամանակ ծանր աշխատանք:

Հոգևոր գործիչն ու լուսավորիչը դպրոցներ է բացում Արցախի վանքերին կից, որտեղ սովորում էին տասնյակ աշակերտներ: Նշանավոր էին հատկապես Գանձասարի, Ս. Հակոբի, Ամարասի, Շուշիի վանքապատկան դպրոցները: Բաղդասար միտրոպոլիտը 1837թ. սեպտեմբերին Շուշիում բացում է 22 աշակերտով հոգևոր ուսումնարան, որտեղ ուսուցումը տարվում էր երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն, թաթարերեն, ինչի մասին վկայում է իր ազգական և մշակութային անվանի գործիչ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցն իր «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստանի» աշխատության մեջ[10]:

Թեմի առաջնորդը ձգտում էր մշակութային որոշ ձեռնարկումներ իրականացնել: Նա 1837թ. իր միջոցներով գնում է Շվեյցարիայի Բազել քաղաքի բողոքական միսիոներների տպարանը՝ բոլոր սարքավորումներով: Այն վերանվանվում է «Տպարան վիճակավոր Առաջնորդին Ղարաբաղու ու բարձր Սրբազան միտրոպոլիտին Բաղդասարի», իսկ տպագրված գրքերն ունենում են հետևյալ դրոշմը. «Հրամանով տեառն Բաղդասարի իշխանազնի Ջալալյան սրբազան արքեպիսկոպոսի և միտրոպոլիտի հայոց ամենայն Աղվանից»: Այն գործում է կանոնավոր, համալրվում է Մոսկվայի Լազարան ճեմարանի տպարանից բերված տառատեսակներով և տպագրական պարագաներով:

Բաղդասար միտրոպոլիտը, բավական մեծ գումար հատկացնելով Վենետիկի Մխիթարյանների վանքին, բերել տվեց մի-մի օրինակ նրանց բոլոր հրատարակություններից և ստեղծեց հոգևոր դպրոցին կից հարուստ գրադարան՝ այնտեղ հավաքելով նաև Արցախի վանքերում գտնված նշանավոր գրչագիր մատյանները: Այդ գրքերը հետզհետե իր սեփական տպարանում տպագրելու մտադրություն ուներ: Տպագրել էր տալիս հատկապես այնպիսի գրքեր, որոնք, ըստ էության, գիտական-ուսումնական էին՝ նվիրված հայագիտությանը, կրոնագիտությանը, մայրենի լեզվի օրինաչափություններին: Նրանց թվում էր Միքայել Չամչյանի «Քերականություն հայկազյան լեզվի» աշխատությունը, որը մինչ այդ լույս էր տեսել Վենետիկում, Ս. Ղազար կղզում, 1801թ.: Աշխատությունը, փաստորեն, ուսումնական ձեռնարկ է, որի մեջ հետազոտված են հայոց լեզվի բառային կառուցվածքը, հոլովները և խոսքի մասերը, և տրված են դրանց սահմանումներն ու օրինակները:

Տպագրվել է նաև Եսայի կաթողիկոս Ջալալյանի «Պատմություն կամ հիշատակ ինչ-ինչ անձից դիպելուց աշխարհին Աղվանից» գիրքը:

Մատենադարանի գրադարանում պահպանվող այդ գրքի վրա կարդում ենք.

9. Ս. Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստանի, 1858, էջ 355:
10. Նաև տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 116-117:

«Հրամայեցեք մուծանել ի տիպ. սեփական ծախյոք մերովք վիճակավոր Առաջնորդ Ղարաբաղու և այլոց՝ Արքեպիսկոպոս և Ասպետ միտրոպոլիտ Բաղդասար Հասան Ջալալյանց: Ի 7 հունիսի 1839 ամի»:

Եսայու գրած առաջաբանում նշվում է, որ ինքը մտադիր է տալ ներկա օրերի պատմությունը, շարադրել հայ ժողովրդի՝ անցյալում կրած տառապանքները, կանգ առնելով կոնկրետ փաստերի վրա: Եսայի Հասան Ջալալյանն իր պատմությունը սկսում է պարսիկների տիրապետության ժամանակաշրջանից, ներկայացնում հայոց երկրի ներքին երկպառակությունները, պատերազմական գործողությունները, թշնամիների արշավանքները և լեզգիների բարբարոսությունները և այլն: Աշխատության մեջ բավականին ծավալուն ներկայացվում են ժամանակի դեպքերը, խոսվում ժողովուրդների, մասնավորապես, հայերի ու վրացիների բարեկամության մասին: Մեծ էր Ե. Հասան Ջալալյանի համակրանքը Վրաստանի նկատմամբ, և պատահական չէր նրա քննադատությունն այն խաների (Գյանջայի, Կախեթի, Ղազախի և այլն) հասցեին, որոնք ձգտում էին կործանել Վախթանգի տիրապետությունը: Գիրքը հայոց պատմությունն ուսումնասիրողներին օգնում է որոշակի գաղափար կազմել XVII-XVIII դարերի իրադարձությունների, առանձին նշանավոր մարդկանց գործունեության, հայերի և հարևան ժողովուրդների հարաբերությունների և նրանց համագործակցության մասին:

Այնուհետև լույս են տեսնում Միքայել Սալլաթյանի «Կրոնագիտություն կամ հոգեվարժություն քրիստոնեական», «Առաջին մասն փոքր քերականության գրաբար լեզվի հայոց», Խաչատուր Տեր Օհանյանի «Համառոտ Հայկազյան քերականություն» և այլ գրքեր: Շատ գրքերի ծախսերը հոգում էր ինքը՝ Բաղդասար Հասան Ջալալյանը: Բաղդասար միտրոպոլիտի օրոք տպագրված գրքերի մեծ մասը եկեղեցական էին (ինչպես, օրինակ, 1838թ. լույս տեսածները՝ «Խորհրդատեր սրբազան պատարագի», Եփրեմ խուրի Ասորիի «Գիրք աղոթից» և այլն), մի մասն էլ՝ ուսումնագիտական:

Բաղդասար միտրոպոլիտի մահվանից (1854թ.) հետո տպարանն իր տնօրինության տակ է վերցնում Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանը: Նոր թեմական առաջնորդը նպատակ է դնում ամենից առաջ լույս ընծայել ուսումնական ձեռնարկներ և գիտական աշխատություններ:

Լինելով ուսումնական գործի ջատագով, թեմի առաջնորդն ակտիվ աշխատանք է տանում նաև Շուշիի թեմական դպրոցի հիմնադրման գործում: Լեոն թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատության մեջ վկայում է, որ դեռևս 1837թ. սեպտեմբերից էջմիածնի սինոդը կարգադրում է Ղարաբաղի թեմի կոնսիստորիային և թեմական Բաղդասար միտրոպոլիտին նախապատրաստական աշխատանք տանել Շուշիում թեմական դպրոց հիմնելու համար, այդ նպատակով կազմել նախահաշիվ: 1838թ. Շուշիի կոնսիստորիան սինոդ է ներկայացնում թեմի «Հոգևոր դպրոցի և հոգևոր ուսումնարանաց» նախահաշիվը: Սինոդը 1838թ. մարտի 7-ին իր նիստում որոշում է բացել թեմական դպրոցը, այն հիմնադրվում է հունիսի 22-ին և պահպանում իր գոյությունը մինչև 1920 թվականը, մինչև Շուշիի հայկական թաղամասի ավերումը[11]:

Դեռ նոր հիմնած թեմական դպրոցը մեծ խոչընդոտների է հանդիպում. սուղ

11. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 182:

էին նյութական միջոցները, և դա շատ էր մտահոգում Բաղդասար միտրոպոլիտին: 1844թ. մարտի 1-ին դպրոցը փակվում է: Սակայն նորից է բացվում հաջորդ տարվա հուլիսի 17-ին: Բաղդասար միտրոպոլիտը դիմում է ժողովրդին՝ հանգանականություն և նվիրատվություն կազմակերպելու կոչով: Թեև քիչ դրամ է հավաքվում, բայց մի կերպ պահպանվում է դպրոցի գոյությունը: Իսկ դրա համար քիչ ջանքեր չեն գործադրում նաև դպրոցի ուսուցիչները, որոնց մի մասը շարունակում էր աշխատել ձրի:

Բաղդասար միտրոպոլիտի ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ 1843թ. կառուցեց հոյակապ առաջնորդարան, որը Շուշի բերդաքաղաքի փառավոր տներից մեկը կարելի է համարել: Այնուհետև Շուշիում բացեց երկու արական ծխական դպրոցներ 15-20-ական աշակերտով, նախապատրաստական աշխատանքներ էր տանում նաև Շուշիում հիմնելու օրիորդաց դպրոց: 1853թ. թեմի առաջնորդն իր միջոցներով գնեց մի ընդարձակ հողամաս՝ նպատակ ունենալով իր արդեն ստեղծած թեմական դպրոցի համար առանձին շենք կառուցել: Բայց վաղահաս մահն (1854թ.) անկատար թողեց նրա այդ ձեռնարկումը:

Բաղդասար միտրոպոլիտից հետո Ջալալյան տոհմից միայն Սարգիս արքեպիսկոպոսը միառժամանակ վարեց Արցախի թեմական առաջնորդի պաշտոնը և 1872թ. ավարտեց դպրոցի շենքի կառուցումը: Վերջինիս մահից հետո Հասան Ջալալյանների տոհմն այլևս նշանավոր եկեղեցական գործիչ չտվեց:

3. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի լուսավորչական գործունեությունը

Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց (1810-1879թթ.): Շուշիի թեմական առաջնորդ (1868-1876թթ.), խոշոր հոգևոր-մշակութային գործիչ, դպրոցական, ինչպես նաև տպագրական-հրատակչական գործի նվիրյալ: Նրա գործունեության շնորհիվ քննարկվող ժամանակաշրջանում որոշակի առաջընթաց է արձանագրվել Արցախի հանրային կյանքում:

Սարգիս Ջալալյանցն իր տնօրինության տակ էր վերցրել Շուշիի հոգևոր հայերի տպարանը՝ շարունակելով հրատարակել ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, գիտական աշխատություններ, դպրոցական կանոնադրություններ, պարբերականներ:

Պատմաշրջանում ծավալվող լուսավորչական շարժումը նոր իմաստ էր հաղորդել Սարգիս Ջալալյանցի գործունեությանը: Ժողովրդին լուսավորելու գործում նա առաջնակարգ տեղ է հատկացնում դպրոցին, քանի որ մշակութային օջախների հետ միասին դպրոցին վիճակված էր խոշոր դեր խաղալ արցախահայության կյանքում: Թեմի նորընտիր առաջնորդի[1] ձեռնարկած քայլերից էր դպրոցական գործի կարգավորումը: 1865թ. նա Շուշիի կոնսիստորիայի նիստում կազմում է հանձնաժողով՝ կարգադրելով շրջագայել գավառի գյուղերը և ստուգել դպրոցների վիճակը: Սարգիս արքեպիսկոպոսը կոնսիստորիայի անդամների առաջ խնդիր է դնում յուրաքանչյուր գյուղում դպրոց բացել, հոգ տանել այն նյութական միջոցներով ապահովելու մասին: Ամենից կարևորը, որ պարունակում էր կոնսիստորիայի նիստում ընդունված հրահանգը, այն է, որ թեմում գործող եկեղեցական-ծխական դպրոցները կազմվելու են 1-2 դասարանից, իսկ միջոցները ներելու դեպքում կարելի էր ունենալ նաև երրորդ դասարան: Որոշակի փոփոխություն էր կատարվում թեմական դպրոցի ներքին կյանքում: Լեոն վկայում է, որ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը երկար ժամանակ բացակայում է (1867-1870թթ.) Արցախի թեմից. Գևորգ Դ կաթողիկոսը նրան ուղարկել էր Կ. Պոլիս[2]: 1870թ. գարնանը, վերադառնալով Արցախ, թեմի առաջնորդը ձեռնամուխ է լինում նոր ծրագրերի իրականացմանը: Ի թիվս մի շարք մշակութային-լուսավորչական ձեռնարկումների, նա սևեռուն ուշադրություն է դարձնում նաև արվեստի ճյուղերի զարգացմանը: Արվեստի բնագավառում Սարգիս Ջալալյանցի ձեռնարկած առաջին քայլերից մեկը թատերական կյանքի աշխուժացումն էր: Ճիշտ է, մշտական պրոֆեսիոնալ թատրոն դեռ չկար, բայց նրա հորդորներով թատերասեր երիտասարդները հաճախակի ներկայացումներ էին տալիս Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում, ինչպես նաև գյուղերում:

Սարգիս արքեպիսկոպոսի աշխատանքն արգասավոր եղավ քաղաքաշինության, բնակելի տների վերակառուցման, ճարտարապետության զարգացման ասպարեզում: Շուշի քաղաքում զգալիորեն ծավալվում են շինարարական աշխատանքները, կառուցվում վարչական և հասարակական, ուսումնական շենքեր: Գնահատանքի արժանի է հատկապես թեմական դպրոցի շենքի կառուցումը: Ռաֆֆին հիշատակում է. «1872 թվին Սարգիս արքեպիսկոպոս Հասան Ջալալյանցը ավարտեց դպրոցի շենքը և առաջնորդարանի շինությունն ավելի ընդար-

1. Լեո, նշվ. աշխ., էջ 346:
2. Նույն տեղում:

ձակվեց: Այն օրից այդ տան մեջ զետեղվեցավ Շուշիի թեմական դպրոցը, առաջնորդարանը և կոնսիստորիան»[3]: Թեմական դպրոցի բացման արարողությունը տեղի ունեցավ նույն թվականի հունիսի 22-ին, ի հիշատակ դպրոցի հիմնադրման: Թեմի առաջնորդի աշխատանքների թվում կարելի է հիշատակել վանքերի, եկեղեցիների, զանգակատների շինարարությունը: Համախմբվելով նրա շուրջ՝ ժողովուրդը ձեռնամուխ եղավ հայրենի երկրի ավերված գյուղերն ու վանքերը, եկեղեցիները, կամուրջներն ու հին մատուռները վերականգնելու աշխատանքներին: Խոշոր կառուցողական աշխատանք կատարվեց հատկապես Ամարասում, Գանձասարում, Դադի վանքում և այլուր:

Նշանավոր գործիչն իր ամբողջ կյանքը նվիրեց Արցախի մշակույթի զարգացմանը: Ռաֆֆին գրում է. «Բաղդասար միտրոպոլիտից հետո Հասան Ջալայանների տոհմից միայն Սարգիս արքեպիսկոպոսը բավական ժամանակ վարեց Ղարաբաղի թեմական առաջնորդի պաշտոնը. նրա մահից հետո Հասան Ջալայաններից այլևս նշանավոր եկեղեցականներ չհայտնվեցան»: Սակայն Արցախի թեմի առաջնորդները, հայ մտավորականության կարող ուժերը շարունակեցին Հասան Ջալալյան տոհմի հոգևոր գործիչների մշակութային, շինարարական բարեգործությունները:

<u>Հարություն Ամիրխանյան (Միրզա Ֆարուխ) (1798- ՞):</u> XIX դարի առաջին կեսի Արցախի թեմի լուսավորիչներից: Ծնվել է Դիզակի գավառի Թաղուտ գյուղում: 1805թ. ռուս-պարսկական կռիվների ժամանակ, երբ ընդամենը 5-6 տարեկան էր, գերի է վերցվում: Պարսկական արքունիքում նա ստանում է Ֆարուխ անունը: Կարճ ժամանակամիջոցում տիրապետում է մի քանի լեզուների: Քսան տարեկանում արդեն Թեհրանի Սարդարի քարտուղարն էր: 1826թ. ռուս-պարսկական պատերազմի օրերին, օգտագործելով հարմար առիթը, Միրզա Ֆարուխը փախչում է և գալիս Շուշի: Բազելցի բողոքականների հիմնած ուսումնարանում դասավանդում է կրոն, պարսկերեն լեզու, ակտիվ մասնակցություն ունենում տպագրական գործի զարգացմանը և թարգմանություններ կատարում:

Լեոն Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատության մեջ գրում է. «Միրզա Ֆարուխի (Հարություն Ամիրխանեան) մատուցած ծառայությունները շատ մեծ էին, շատ լավ գիտէր պարսկերէն և արաբերէն: Նրա որդին էր յայտնի պաստոր Աբրահամ Ամիրխանյանը: Նա թարգմանել է Ավետարանը (գրաբարից՝ աշխարհաբար), որ տպուեց Մոսկվայում Միքայել վարդապետ Սալլանթեանի թույլտուութեամբ»[4]:

Հարություն Ամիրխանյանը բազելցի միսիոներներ՝ Ավգուստ Դիտրիխի (որը Մոսկվայում Միքայել վարդապետ Սալլանթյանի մոտ սովորել էր հայոց գրաբար լեզու)[5], Ֆելիցիա Զարեմբայի հետ միասին նպատակ էր դրել քրիստոնեական հավատքը տարածել այլադավան ժողովուրդների մեջ, բաց անել ուսումնարան, սկիզբ դնել տպագրական գործին՝ Ս. Գիրքը զանազան լեզուներով տպելու համար, տպագրելու նաև դասագրքեր իրենց հիմնած ուսումնարանների համար[6]:

Շուշիի թեմական դպրոցի առաջին ուսուցիչներ Առաքել Յուզբաշյանի (դասավանդում էր հայոց լեզու), կոնսիստորիայի թարգման Սարգիս Աթաբեկյանի (դասավանդում էր հայ գրականություն, պատմություն), Ագուլեցոց եկեղեցու սարկա-

3. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 326:
4. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 94-183:
5. Հ. Ղուկասյանց, Բողոքականությունը Կովկասի հայոց մեջ, Թիֆլիս, 1886, էջ 3:
6. Նույն տեղում, էջ 3:

վագ Գրիգոր Տեր-Ավագյանի և ուրիշների հետ Հարություն Ամիրխանյանը դասավանդում էր կրոն, պարսկերեն լեզու:

Լեոն վկայում է, որ Բաղդասար միտրոպոլիտի կարգադրությամբ Հ. Ամիրխանյանը նշանակվել է թեմական դպրոցի կրոնի ուսուցիչ:

Այսպիսով, վերը համառոտ շարադրածից կարող ենք գալ այն եզրակացության, որ լուսավորիչ մանկավարժների, հոգևոր մշակութային գործիչների գործունեությունն առնչված է եղել ժամանակի հայ ժողովրդի քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքում ծագած հիմնահարցերի հետ: Ազգային վերածնության նորաբողբոջ գաղափարների պայքարի մի ժամանակաշրջան էր դա, երբ հայ ազգանվեր մտավորականները, կյանքի ու զարթոնքի կոչելով ժողովրդին, հույս ու հավատ էին ներշնչում գալիքի հանդեպ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ (1850-1896թթ.)

1. Արցախահայ դպրոցի նոր վերելքի նախապայմանները: Դպրոցի առաջին կանոնադրությունները և նրանց նշանակությունը

XIX դարի երկրորդ կեսին Արցախի տնտեսական-քաղաքական-մշակութային կյանքում տեղ գտած շրջադարձը և առաջավոր մտքի վերելքը զգալիորեն կապված և պայմանավորված էին Արևելյան Հայաստանում, ինչպես նաև Ռուսաստանում, Անդրկովկասում իրագործվող արմատական փոփոխությունների հետ, որոնք ուղղակի ազդեցություն էին թողնում նաև հայ հասարակական-քաղաքական շարժումների վրա: Սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշ առաջընթացը շոշափում էր նաև հոգևոր կյանքի ոլորտը: Նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրվում նաև ժողովրդական լուսավորության ասպարեզում: Արցախի ժողովուրդը ևս մոտիկից հաղորդակցվում է արևելահայ հատվածում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերին: Ազգային զարթոնքը, ժողովրդին ազգային ինքնագիտակցության բերելու անհրաժեշտությունը հրամայաբար պահանջում էին հրաժարվել հին կրթական համակարգից, աշխարհականացնել ու ժողովրդավարացնել դպրոցը:

Եթե դարի առաջին կեսին արցախահայ առաջադեմ գործիչներին մեծ ցավ էր պատճառում հասարակական անտարբերությունը, երբ լուսավորիչների գաղափարները բազմաթիվ խոչընդոտների էին հանդիպում, ապա երկրորդ կեսին հասարակության գիտակից մասը, հատկապես մտավորականությունը, խթանում էր հայ մշակույթի ամենատարբեր բնագավառների զարգացումը, դրանով նպաստելով ազգի հոգևոր համախմբման գործընթացին:

Արցախահայ դպրոցի նոր վերելքի և զարգացման առաջին նախապայմանը դարակեսին երկրամասում սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխություններն են: Դրանք անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին Արցախում քաղաքային բնակչության զարգացման համար, ճիշտ է, շատ դանդաղ, բայց աճում էր քաղաքային բնակչության թիվը, զարգանում էին տնտեսությունը, մշակույթը, կրթական գործը:

Այսպես, օրինակ, ինչպես նշել ենք, Արցախի մշակութային կենտրոն Շուշի քաղաքը բնակչության քանակով 1852թ. Անդրկովկասի քաղաքների շարքում 4-րդ տեղն էր գրավում՝ զիջելով Թիֆլիսին, Շամախուն ու Նուխիին: 1862-1863թթ. մարդահամարի տվյալներով Շուշին ուներ 12.774 բնակիչ, որոնցից 6.356 շունչը՝ արական սեռի, 6.418-ը՝ իգական: Քաղաքում կային 1846 քարաշեն տներ, 576 խանութ, 11 սայլուղիներով իրար հետ կապված փողոցներ, 6 հրապարակ, 4 քարե և 2 փայտե կամուրջներ:[1] «Կովկասյան օրացույց»-ում, 1853թ. թիվ 4-ում տպագրված Մ. Կոնտրովիչի հոդվածում մոտավորապես այսպես է հանրագումարի բերվում Շուշիի բնակիչների կազմը.

Ուղղափառ հոգևորականներ	1 հոգի (հայ),
Հայ լուսավորչական	37 հոգի, կին՝ 38 (հայ),

1. Այդ մասին մանրամասն տե՛ս “Кавказский календарь”, 1853, Тифлис, стр. 430.

Եկեղեցական ծառայողներ	19 հոգի, կին՝ 33 (հայ),
Քաղաքացիական չինովնիկներ	742 հոգի, կին՝ 780 (որից 112-ը՝ այլազգի),
Արքունական գյուղացիներ	3076 հոգի, կին՝ 3037 (որից 1222-ը՝ այլազգի),
Կալվածատիրական գյուղացիներ	2381 հոգի, կին՝ 2452 հոգի (որից 1224-ը՝ այլազգի)[2]:

Այսպիսով, բերված տվյալները վկայում են, որ Շուշիի բնակչության հիմնական զանգվածը հայեր էին: Նշենք նաև, որ 1850-ական թվականներին Շուշիի բնակչության մասին Կոնտրովիչի հոդվածում բերված վիճակագրությունը ստույգ չէ: Ըստ Կովկասյան օրացույցի տարբեր համարներից ընդհանրացրած մեր տվյալների՝ նկատելի է մի քանի տասնյակ հոգու տարբերություն: Այսպես, ըստ դասերի, Շուշիի բնակիչների քանակը հասնում է տղամարդու՝ 6318, կնոջ՝ 6426, ընդամենը՝ 12744 հոգու:[3]

Վիճակագրական տվյալներով 1854թ. Շուշիի ամբողջ բնակչության թիվը կազմում էր 15194 մարդ, 1862թ. տվյալներով՝ 19659[4]: 1873թ. Շուշիի բնակչության թիվը հասնում էր 24500-ի, այսինքն՝ 1860-ական թվականների համեմատությամբ բնակչությունն աճել էր գրեթե հինգ հազարով: 1880-ական թվականների սկզբներին Շուշիում մոտ 3000 հայ ընտանիք կար[5]: Լեոն 1890թ. «Մշակ»-ում գրել է, որ Շուշիում հայերը քաղաքում մեծամասնություն են կազմում, իսկ թուրքերը՝ փոքրամասնություն[6]: Ըստ 1886թ. «Ընտանեական հաշվեցուցակների»՝ Շուշի քաղաքի բնակչության թիվը հասնում էր 26806 հոգու, որից, ստորև նշված աղբյուրների համաձայն, մոտավորապես 56 %-ը հայ էր, 43 %-ը՝ թաթար, 1 %-ը՝ ռուս[7]: Շուշիի բնակչության թվի մասին ավելի հավաստի տվյալներ է հաղորդում 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարը, որի տվյալներն ընդունված են որպես հիմք բնակչության էթնիկ կազմը ուսումնասիրելիս: Ըստ դրա՝ Շուշին ուներ 25800 բնակիչ, որի մոտավորապես 55.7 %-ը հայ էր, 41.6 %-ը՝ թաթար, 1.5 %-ը՝ ռուս, 1.1 %-ը՝ այլք (վրացիներ, լեհեր, ուկրաինացիներ, մոլդովացիներ և այլն)[8]:

XIX դարի վերջին, իրար հաջորդող քաղաքական բարդ իրադարձությունների հետևանքով, Արցախի բնակչության թվաքանակն աստիճանական անկում է ապրում, հատկապես 1905-1906թթ. ռուսական առաջին հեղափոխության շրջանում հայ-թուրքական (թաթարական) արյունոտ ընդհարումների ժամանակ, որոնք և պատճառ դարձան հայ բնակչության տեղահանման համար: Անշուշտ, դա բացասաբար անդրադարձավ արցախահայության լուսավորության զարգացման վրա, համարյա 1890-1905 թվականներին, ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցա-

2. Ռ. Տեր-Գասպարյան, Շուշի, Երևան, 1993, էջ 49:
3. "Кавказский календарь", 1853, Тифлис, стр. 35. (Այս աղյուսակն իր մեջ պարունակում է չպարզաբանված հարցեր՝ չի բացատրվում այլազգի արտահայտությունը, շեշտվում են միայն հայերը և մահմեդականները, ընդ որում մահմեդականների թվային տվյալներն այդքան էլ հստակեցված չեն):
4. Մ. Ս. Սողոմոնյան, Արցախ-Ղարաբաղի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, թ. 1, էջ 127-148:
5. «Մշակ», 1882, թ. 8:
6. Նույն տեղում, 1890, թ. 38:
7. Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из населенных списков 1886г., Тифлис, 1893, стр. 540-541.
8. Первая всеобщая перепись населения Российской империи 1897г., Елисаветпольская губерния, кн. 63, СНБ, 1904, стр. 60-61.

խում դպրոցների մեծ մասը փակվել էր:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի դպրոցական գործի զարգացման երկրորդ նախապայմանը սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող առաջընթացն է 1850-1890-ական թվականներին:

Արցախի տնտեսական կյանքի զարգացումը XIX դարի կեսերին ավելի նկատելի դարձավ: Բնակչության զբաղմունքի գլխավոր ճյուղերն էին գյուղատնտեսությունը և արհեստագործությունը (կաշվի մշակում, կոշկակարություն, բրուտագործություն, ներկարարություն, կար ու ձև, քարտաշություն, հյուսնություն, գինեգործություն և այլն): 1860թ. տվյալներով՝ Արցախում զգալի չափով բարձրանում է գյուղատնտեսության բերքատվությունը: Գյուղացիները մշակում էին ցորեն, գարի, հաճար, կորեկ, բրինձ, բամբակ, ծխախոտ և այլ մշակաբույսեր[9]:

XIX դարի 50-60-ական թվականներին Արցախում նկատելի տեղաշարժ կատարվեց ինչպես առևտրի, այնպես էլ արդյունաբերության մեջ:

Մինչև 1850-1860-ական թվականները, Արցախում բացի մանր ձեռնարկություններից, խոշոր արդյունաբերություն գոյություն չուներ: Այդ տասնամյակից հետո Արցախի արդյունաբերության մեջ ամենատարածված ճյուղը մետաքսի արդյունաբերությունն էր:

Մետաքսագործությունն Արցախ մուտք է գործել դեռևս 13-րդ դարում[10]: Առաջին անգամ մետաքսի գործարան են բացել եղբայրներ Աղաբաբ և Գրիգոր Խաչատրյանները[11]:

Արցախում (Շուշիում, Վարանդայում, Խաչենում) գործում էին նաև տակառագործական, փայտասղոցման և այլ ձեռնարկություններ:

Մեր ձեռքի տակ եղած նյութերի[12] և ընձեռած հնարավորությունների հիման վրա ստորև աղյուսակի ձևով ներկայացնում ենք Արցախում գործող առևտրական, արհեստավորական մանր ձեռնարկությունների, արդյունաբերական արտադրության ճյուղերի ընդհանուր պատկերը 1890-1895 թվականներին.

Աղյուսակ

Ըստ կարգի	Գործարաններ, մանր ձեռնարկություններ	Ձեռնարկության վայրը	Հիմնադրման տարեթիվը	Բանվորների թիվը	Աշխատավարձի չափը յուրաքանչ. բանվորի	Արտահանվող արտադրանքի վայրը
1.	Մետաքսաոլորման գործ.	Շուշի քաղաք Նուխի քաղաք Բալուջա Խնձրիստան Դիզակ Վարանդա Ջրաբերդ	1856-1857թթ.	3065 2324 44 52 252 324 188	1ռ. 68 կոպեկ	Ռուսաստան, Պարսկաստան, Բաղդադ

9. Գ. Ա. Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 31-32:

10. “Кавказский календарь”, на 1912, стр. 300-301.

11. “Кавказский календарь”, на 1853, стр. 435-436.

12. Брокгауз и Ефрон, Энциклопедический словарь, т. 6, Москва, 1904, стр. 25. «Ազգագրական հանդես», 1897, էջ 98: “Кавказский календарь”, на 1853, стр. 435-436. «Մեր ուղին», Բաքու, 1912, էջ 110, Գ. Ա. Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, էջ 31-32: «Մշակ», 1888, թ. 100, 101, 102 և այլն:

2.	Գինեգործա-կան	Շուշի քաղաք Նուխի քաղաք Դիզակ Վարանդա Ջրաբերդ			22ռ. 45 կոպեկ 21ռ., 25 կոպեկ 18ռ., 22 կոպեկ 12ռ., 15 կոպեկ 11ռ., 18 կոպեկ	Բաքու, Թիֆլիս և այլ
3.	Կաշեգործա-կան	Շուշի քաղաք Նուխի քաղաք		1254	3ռ., 50 կոպեկ	
4.	Օճառի	Շուշի քաղաք Նուխի քաղաք Վարանդա	1850թ.	896	1ռ., 44 կոպեկ	
5.	Աղյուսի	Խանքենդի (Ստեփանա-կերտ) Վարանդա (Ննգի)	1850թ.	926	3ռ., 86 կոպեկ	
6.	Շերամապա-հական	Վարանդա Ջրաբերդ	1856թ.	254	4ռ., 48 կոպեկ	
7.	Մանր ձեռնար-կատիր. Արծաթա-գործներ Ժամագործներ Գդակագործ-ներ Ներկարարներ և այլն	Արցախի գավառում	1850 1856 1860 1850 1860	36724	Յուրաքան-չյուր բավոր 45-54 կոպեկ, մինչև 1-2ռ.	

Արցախում տնտեսության և հատկապես արդյունաբերության ճյուղերում շոշափելի առաջընթաց էր նկատվում XIX դարի վերջին, սակայն այն ընդհատվում է 1904-1905թթ.՝ ազգամիջյան ընդհարումների շրջանում: 1905թ. օգոստոսի 27-ին «Մշակ» թերթն այդ մասին գրում է. «Սարսափելի աղետ եղավ Շուշիի գլխին: Օգոստոսի 16-ին սկսվեց կատաղի զինված ընդհարում հայերի և կովկասյան թաթարների միջև, որն անընդհատ տևեց մինչև օգոստոսի 20-ի կեսօրը: Այրվել էր հայոց թաղամասը: Կրակը կլանեց 400 տուն, որոնց թվում քաղաքային վարչությունը, Խանդամիրյան թատրոնը, Մարիամյան դպրոցը, հիվանդանոցը,

դեղատունը և գրեթե հայերի ամբողջ խանութները:[13] Ձինված ընդհարումներ են տեղի ունեցել նաև գավառի հայկական գյուղերում:

Համեմատաբար խաղաղ պայմաններում ժողովուրդը մտահոգվում է վերականգնելու այրվածը, կառուցելու քանդվածը, կենդանություն տալու այն ամենին, ինչը փչացել, մոխիր էր դարձել: Սրան արձագանքում են շատ կազմակերպություններ, ընկերություններ և առանձին անձինք:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի մշակույթի, կրթական գործի ու լուսավորության առաջընթացին նպաստեցին ռուսահայ, արևելահայ կյանքում ձևավորված հասարակական-քաղաքական հոսանքները, որոնց մեջ ընթացող պայքարը նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր դնել իր համար ցանկալի հունի մեջ: Այսպես, հետբարեփոխումային հայ իրականության մեջ որոշակիորեն իրար հակադրվեցին հասարակական հոսանքները՝ ազգային-պահպանողականները և ազատականները, որոնք ձգտում էին դպրոցն ու մշակույթը ծառայեցնել իրենց նպատակներին[14]:

Արցախահայությունը սերտորեն կապված էր հայ հասարակական-քաղաքական հոսանքների ծավալած առաջադեմ լուսավորչական գաղափարների, Ռուսաստանի և այլ երկրների հասարակական-քաղաքական անցուդարձերի հետ, որոնք բարերար ազդեցություն ունեցան ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև մշակութային կյանքի, դպրոցական գործի, լուսավորության զարգացման վրա: Պատմական հանգամանքների բերումով և աշխարհագրական դիրքի թելադրանքով Արցախը միշտ էլ կապող օղակ է եղել Ռուսաստանի, Արևելքի ու Արևմուտքի երկրների միջև: Այդ պատճառով Արցախի մշակույթը մշտապես գտնվել է այդ երկրների մշակութային ակտիվ փոխազդեցությունների ոլորտում՝ պահպանելով իր հոգևոր ինքնատիպությունը: Մշակութային նորամուծություններն իրենց արժանի տեղն են գրավել երկրամասի ավանդական մշակութային արժեքների թվում:

Պատմաշրջանում Արցախի դպրոցական գործի, լուսավորության զարգացման վրա իրենց ազդեցությունն են թողել հայ ժողովրդի ազգային համախմբման գործընթացը, ազգային-ազատագրական շարժումների ծավալումը, գաղափարապես մշակված ու ընդհանուրի հավանության արժանացած ծրագրերի իրականացումը, հայկական հարցի արծարծումները, որոնք նոր խնդիրներ են առաջադրել հայ առաջադեմ մտավորականներին: Նրանք առաջնորդվել են այն գաղափարով, որ ժողովրդին հարկավոր է լուսավորել, հաղորդակից դարձնել դարաշրջանի սոցիալական ու քաղաքական տեղաշարժերին, մշակութային արժեքներին, նպաստել նրա ազգային ինքնագիտակցության զարգացմանը, կյանքի կոչել նրա խորքերում ծվարած կենսունակ ուժերին՝ մասնակից դարձնելով դրանք ժողովրդի հոգևոր վերածննդին և վերափոխմանը:

XIX դարի 50-60-ական թվականներից մշակույթի, դպրոցական գործի, լուսավորության զարգացման գործում վճռորոշ դեր էր խաղում այն հանգամանքը, որ ռուսական առաջավոր մշակույթի ազդեցության տակ հայ իրականության մեջ, ինչպես նաև Արցախյան հատվածում կրթական գործը թևակոխում էր վերելքի շրջան, որն ամուր կապերով կապվում էր կյանքի հետ, արձագանքում ժողովրդի պահանջներին, արտացոլում ազգային-ազատագրական շարժման գործնական խնդիրները: Նոր շրջանում հասարակական կյանքում կարևոր տեղ էր գրավում

13. Տե՛ս «Մշակ», 1905, մարտի 24, թ. 53:
14. Տե՛ս Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 6:

պարբերական մամուլը, որի էջերում աշխույժ բանավեճ էր ծավալվում ազգային լուսավորության և բազմաթիվ այլ հրատապ հարցերի շուրջը: Օրինակ, «Հյուսիսափայլ»-ի (1858-1864թթ.) շուրջ համախմբված հասարակական-քաղաքական առաջադեմ գործիչների ու գրողների շարքում էին նաև Մ. Նալբանդյանը, Ս. Նազարյանցը, Ս. Շահազիզը. Ռ. Պատկանյանը, Պ. Պռոշյանը և ուրիշներ: Ուշագրավ է այն, որ 50-60-ական թվականներից սկսած լուսավորության զարգացման, դպրոցական գործի զարգացման բնագավառում հսկայական դեր կատարեցին ժամանակի մանկավարժական մի շարք ամսագրեր ու թերթեր՝ «Դպրոց», «Դաստիարակ», «Մանկավարժական թերթ», «Վարժարան», «Մանկավարժանոց» և այլն: Հայ մշակույթի ականավոր գործիչների եռանդուն գործունեության շնորհիվ Արցախի թեմում վերելք է ունենում կրթական գործը, ստեղծվում էին մշակութային, կրթական հիմնարկներ և ընկերություններ: Այդ գործիչներից նկատի ունենք Պետրոս Շանշյանին, Պերճ Պռոշյանին, Մարիամ Հախումյանին, Սարգիս Տեր-Ղազարյանին, Գրիգոր Դովլաթյանին, Բարսեղ Տեր-Մովսիսյանին և շատ ուրիշների: Նրանց հետ միասին, և հետագայում Արցախի մշակութային կենտրոն Շուշի քաղաքում երկարամյա կամ կարճատև բեղուն մանկավարժական գործունեություն են ունենում նաև Ռուսաստանում և Եվրոպայում մանկավարժական կրթություն ստացած մասնագետներ, գործնական մանկավարժներ Ս. Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Ղ. Աղայանը, Ն. Տեր-Ղևոնդյանը, Ս. Բեկզադյանը, Խորեն Ստեփանեն և ուրիշներ: Նրանց հետ միասին մանկավարժական գործունեություն են ծավալել նաև հայ գրողներից շատերը՝ Ռաֆֆին, Մուրացանը, Հ. Առաքելյանը, Սեմեոն Հախումյանը և ուրիշներ: Հայ պարբերական մամուլում, նաև Շուշիում հրատարակված պարբերականներում լույս տեսած մանկավարժական, հրապարակախոսական կամ գեղարվեստական հոդվածներում ուսուցման դաստիարակության վերաբերյալ բազմազան խնդիրներ են արծարծվում, քննարկվում մանկավարժական հարցեր, առաջարկվում ընդլայնել դպրոցների ցանցը, հիմնել լուսավորչական, բարեգործական ընկերություններ, միություններ, որոնց գործունեությունը նպատակամղված լինի երկրամասի լուսավորության տարածման, ազգային համախմբման գործընթացին:

Պատմագիտական, մանկավարժական աղբյուրներից[15] տեղեկանում ենք նաև, որ Արցախի երիտասարդությունն իր ուսումնառության ընթացքում Ռուսաստանում և Եվրոպայում հաղորդակից է դառնում հասարակական-քաղաքական շարժումներին, կյանքի ընդհանուր առաջընթացին: Նա ոչ միայն յուրացնում էր այդ երկրների մշակույթը, այլև դրանից վերցնում այն արժեքավորը, որը կարող էր առաջ մղել երկրամասի բազմադարյա մշակույթը: Փաստորեն, հենվելով համամարդկային մշակույթի, լուսավորության, դպրոցի հարուստ ժառանգության արմատների վրա, յուրացնելով եվրոպական, ռուսական մշակույթի զարգացման ուղղությունները, Արցախը հարստացրեց հայրենի մշակույթը, որը ոչ միայն մրցունակ դարձավ, այլև ներկայացրեց արտահայտամիջոցների իր անկրկնելի դրսևորումները, որոնք ծնունդ էին առնում ազգային կյանքից, մտածողությունից, մշակութային համընդհանրությունից, ազատագրական շարժումներից, տնտեսական կացությունից և հասարակական հարաբերություններից: Այդ պատճառով այս ժամանակահատվածի Արցախի մշակույթն իր ավանդն ունեցավ համազգա-

15. Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Գ. Հարությունյան, Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը 5-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը, 2002 և այլն:

յին մշակույթի վերելքի գործում՝ այն հարստացնելով իր տեղական երանգավորումներով և հայ մշակույթին բնորոշ առանձնահատկություններով: Կարևորում ենք նաև այն իրողությունը, որ Արցախի առաջադեմ երիտասարդությունն ուսումնառության տարիներին (Մոսկվայի Լազարյան ճեմարանում, եվրոպական համալսարաններում) ոչ միայն հաղորդակից դարձավ ընթացող տեղաշարժերին, այլև կարողացավ Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայագիտական դպրոցի միջոցով հայ ազգային մշակութային հարաբերությունները դուրս բերել միջազգային ասպարեզ, ճանաչել տալ այլ ժողովուրդների:

XIX դարի երկրորդ կեսին Արցախի դպրոցական վերելքի, լուսավորության զարգացման վրա մեծ ազդեցություն են ունեցել տարբեր կրթասիրական-բարեգործական ընկերությունների ու միությունների լուսավորչական ձեռնարկումները, դպրոցի վերաբերյալ ընդունված կանոնադրությունները: Դրանց հիմնական ուղղություն տվողը լուսավորյալ մտավորականության ներկայացուցիչներն էին, ազգաճանաչման ու ազգային ինքնագիտակցության համար ծավալված ազատագրական պայքարի գաղափարախոսները, որոնց գործունեությունը նպատակամղված էր ազգային համախմբման գաղափարին:

1850-60-ական թվականներին ծավալվող հասարակական, լուսավորչական շարժման շնորհիվ սկսեցին հասարակական ընկերություններ ստեղծվել արևելահայության շրջանում: 1860թ. հիմնվեց «Հայոց բարեգործական ընկերություն»-ը, որի կանոնադրությունը հաստատվեց 1868թ.: Նրա մասնաճյուղերն ստեղծվեցին Ալեքսանդրապոլում (1860թ.), Էջմիածնում (1862թ.), Թիֆլիսում (1862թ.), Բաքվում՝ հայրենասեր բժիշկ Դ. Ռոստոմյանի ջանքերով, 1864թ.: Արևելահայ իրականության մեջ (Նոր Նախիջևանում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Շուշիում և այլուր) կազմակերպվեցին հայուհյաց բարեգործական ընկերություններ, որոնց նպատակն էր պատշաճ մակարդակով կազմակերպել կանանց կրթության գործը, նպաստել լուսավորության օջախների գործունեությանը:

Արցախահայության առաջադեմ մտավորականների ջանքերով հիմնադրված (1850-1890-ական թվականներին) նմանատիպ ընկերությունները լուսավորչական լայն գործունեություն են ծավալել: Այդ ընկերությունները վարում էին ընդհանուր բարեգործություն՝ աջակցություն էին ցույց տալիս սովյալներին, հիվանդներին, հայ գաղթականներին, նյութական միջոցներ հատկացնում դպրոցների, գրադարան-ընթերցարանների բարեկարգմանը, պարբերական մամուլի հրատարակմանը, նպաստում դասագրքերի տպագրությանն ու տարածմանը, կազմակերպում անգրագիտության վերացման կիրակնօրյա դպրոցներ և իրականացնում լուսավորչական այլ ձեռնարկումներ: Ճիշտ է, այդ ընկերությունների մի մասը գտնվում էր մեծահարուստ անհատների ազդեցության տակ, սակայն դրանց մեծամասնությունը կազմակերպվում և գործում էր առաջադեմ մտավորականության, հասարակության լայն խավերի նախաձեռնությամբ ու նյութական միջոցներով:

Արցախի ազգային լուսավորչական գործի զարգացմանը նպաստեց հայ մտավորականության առաջատար գործիչների՝ Հակոբ Տեր-Մովսիսյանի, Նիկոլայ Աթաբեկյանի, Ստեփանոս Ներսիսյանի (դասավանդում էին Շուշիի թեմական դպրոցում) և ուրիշների նախաձեռնությամբ 1858թ. Շուշիում հիմնադրված «Ընթերցասիրաց ընկերությունը»[16], որը 1859թ. այստեղ առաջին անգամ բացեց գրադա-

16. Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, էջ 11: Նաև Ռ. Տեր-Գասպարյան, նշվ. աշխ., էջ 91-92: «Ազգագրական հանդես», 1897, թ. 11, էջ 106:

ման-ընթերցարան: Նյութական միջոցներ ստանալով քաղաքի և գավառի հայությունից, ինչպես նաև Հայաստանի այլ վայրերից, հայկական գաղթօջախներից, ընկերությունը դրանք տրամադրում էր դպրոցների վերաբացմանը, որոնք նյութական միջոցների անապահովության պատճառով փակվել էին, ինչպես նաև չքավոր աշակերտությանը, տպագրական-հրատարակչական գործի բարելավմանը, նպաստում դասագրքերի տպագրությանն ու տարածմանը:

Ընկերությունն իր միջոցներով ստանում էր 1860-ական թվականներին լույս տեսնող հայկական և ռուսական հասարակական-քաղաքական և գիտահանրամատչելի բազմաթիվ պարբերականներ, այդ թվում նաև Վիշնոգրադսկու "Педагогический вестник", Չումակովի "Журнал для воспитания" և այլ մանկավարժական ամսագրեր: Ընկերության անդամները կապ էին պաշտպանում արևմտահայ, արևելահայ ընկերությունների անդամների հետ, համատեղ մշակում իրենց հետագա ծրագրերը:

Լեոն գրում է, որ գրադարան-ընթերցարանն ուներ մի ընկերության բոլոր հանգամանքները, որը կառավարման համար ամեն տարի հանձնաժողով էր ընտրում, ընկերության անդամներից (100-ից ավելի անդամներ) վճարներ էր ստանում, նաև նվիրատվություններ, այն կոչվում էր «Թանգարան վերածնության», որը նմանվում է Կ. Պոլսում 1850թ. բացված «Վերածնության թանգարան», «Եղբայրական Մեսրոպյան հիմնարկութեան»[17]: «Որքան հայերը մոտենում էին եվրոպական լուսավորությանը,- շարունակում է Լեոն,- այնքան ավելի պարզ էին տեսնում հայ ազգի հետամնացության ամենագլխավոր պատճառը՝ տգիտությունը, և այնքան ավելի հայ հարուստների բարեգործական եռանդը ուղղվում էր դեպի կրթական նպատակը: Այդ եռանդի շնորհիվ էր, որ սկսեց զարգանալ մեր մշակույթը, մեզանում երևացին կանոնավոր կրթական օջախներ[18]:

Արծարծելով լուսավորչական մի շարք հարցեր, «Կռունկ հայոց աշխարհի» ամսագիրը 1860թ. թիվ 2-ում գրել է, որ այդ գրադարան-ընթերցարանը «Ղարաբաղի մայրաքաղաքի մեջ համայնական առաջին կազմակերպությունն է»[19]: Ամսագրի մի այլ համարում լույս է տեսել մի շուշեցու նամակը հետևյալ բովանդակությամբ. «Այս ազգօգուտ ձեռնակութեան կարգադրութիւնը 1858 թվականին կամավոր սրբագրութեամբ բավական դրամ (գումար) հավաքելով կազմվեց մի ընկերութիւն (1859) Շուշվա հասարակութեան համար»: Այդ գործում նշանակալից գործ կատարեցին Պ. Աստվածատրյանը, Պ. Բաբայանը և Ա. Բահաթրյանը, որոնք հայերեն և ռուսերեն բազմաթիվ գրքեր նվիրեցին ընթերցարանին: Հասարակությունը մեծ հոգատարությամբ նյութական միջոցներ է տրամադրում գրադարանին: Շուշի քաղաքում հաստատված գրադարանը կոչվում էր «Հասարակաց մատենադարան Շուշուց հայոց»: Այսպես, կյանքի պահանջներին համընթաց, ժողովրդի մեջ ավելի է բորբոքվում հետաքրքրությունը դեպի ազգային լուսավորության գործը:

1860-ական թվականներին լուսավորչական արդյունավետ գործունեություն ծավալեց առաջադեմ գաղափարներով տոգորված գործիչների՝ Պ. Շանշյանի, Պ. Պռոշյանի, Ս. Հախումյանի, Մ. Հախումյանի, Ստեփան եպիսկոպոսի և այլոց նախաձեռնությամբ Շուշիում հիմնված «Դպրոցասեր հայուհյաց ընկերությունը»[20]:

17. Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), էջ 11:
18. Նույն տեղում, էջ 12:
19. «Կռունկ հայոց աշխարհի», Թիֆլիս, 1860, թ. 2, էջ 149:
20. Լեո, նշվ. աշխ., էջ 291:

Կարևոր նշանակություն տալով աղջիկների կրթության և դաստիարակության հարցերին, նրանք ակտիվ մասնակցություն ունեցան իգական դպրոցներ հիմնելու գործին: Սկզբում բացում են Արցախի առաջին բարեկարգ իգական դպրոցը (1864), իսկ այնուհետև Նուխիում և Դիզակի գավառում: Ի դեպ նշենք, որ մեր ազգային գրողներից և ականավոր մանկավարժներից շատ շատերը (Ղ. Աղայան, Վ. Փափազյան, Լեո, Ս. Մանդինյան, Մ. Աբեղյան և ուրիշներ) տարբեր ժամանակներում դասավանդել են նաև Շուշիի օրիորդաց դպրոցում, որը գործում էր երբեմն ընդհատումներով, երբեմն մեծ դժվարություններ հաղթահարելով Շուշիում:

Հետևելով վերոհիշյալ գործիչների ուսանելի օրինակին, 1865թ. Մարիամ Հախումյանի, Եկատերինա Բահաթրյանի և ուրիշների նախաձեռնությամբ Շուշիի հայ տիկնանց միությունը հիմնադրում է «Ազգանվեր հայուհյաց» ընկերությունը, որի նպատակն էր իգական դպրոցներ բացել Խաչենի, Վարանդայի, Դիզակի գավառներում: Շուշիի հայ հասարակությունն ակտիվ մասնակցություն է ունենում այս նախաձեռնությանը. հավաքվում է անհրաժեշտ գումար, 40 հայ կանայք պատրաստակամություն են հայտնում որդեգիրներ պահելու, իսկ թեմական առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը որդեգրում է երկու աղջիկներ[21]: Պ. Պռոշյանը մեծ ոգևորությամբ գրել է. «Օհ, բայց ի՞նչ մեծ պահը ամենքին ավետում էր, ամեն տեղ Շուշվա տիկնանց ազգասիրութիւնն է, որ գերդաստանի հայրը և ճշմարիտ հայը կարող էին չուրախանալ իրենց ընտանեաց արած այսպիսի օգտավետ և ընդհանուրին վերաբերեալ գործի համար»[22]: Շուշեցի հայ կանայք շահագրգռված էին աջակցելու ընկերության գործունեությանը. գավառում լուսավորության տարածման գործում մեծ ջանքեր էին թափում հատկապես աղջիկ երեխաների կրթության գործը կազմակերպելու համար: Դրանց թվում էին Վարսենիկ Գյանջեցյանցը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը և շատ ուրիշներ: Նրանց հայրենասիրական գործունեությունն օրինակ է դառնում իրենց հաջորդների համար:

Հետաքրքիր ու բովանդակալից լուսավորչական ձեռնարկումներ իրականացրեց գեղանկարչուհի Մարգարիտ Ալեքսանյանի հիմնադրած (1868թ.) «Շուշիի կուլտուրական միություն» ընկերությունը, որի գործունեությունը ժամանակակիցները (Մակ. եպ. Բարխուդարյան, Գրիգոր Տեր-Ղազարյան, Հակոբ Տեր-Ստեփանյան, Լեո և ուրիշներ) շատ բարձր գնահատեցին: Ազգանվեր գեղանկարչուհին միության անդամների նախաձեռնությամբ հավաքում է բազմաթիվ ձեռագիր մատյաններ, ավետարան, թեմական դպրոցին կից ստեղծում է նկարչական արհեստանոց, որի սաները (Ստ. Աղաջանյան, Միքայել Արութչյան և ուրիշներ) հետագայում դարձան արվեստի վաստակավոր գործիչներ:

Փաստորեն, XIX դարի 50-70-ական թվականներին բոլոր ընկերություններն ունեին մի նպատակ՝ զարկ տալ հայոց հինավուրց Շուշի քաղաքի մշակութային կյանքին, ընդլայնել դպրոցական ցանցն Արցախի թեմում:

Արցախահայության մեջ նմանատիպ ընկերությունների բուռն գործունեության նոր շրջան է սկսվում 1880-ական թվականներից: Գյուղերում ժողովներ էին գումարվում և որոշվում նվիրատվությունների միջոցով հիմնել մարդասիրական ընկերություն: Օրինակ, Դիզակի գավառի հասարակության հիմնած «Կրթասիրական ընկերությունն» իր միջոցներով 1880թ. Ներքին Թաղլար գյուղում բացում է

21. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադյան, Պետրոս Շանշեանց, Թիֆլիս, 1898, էջ 73:
22. Պ. Պռոշեան, Ղարաբաղի տիրամայր Սուրբ Մարիամի օրիորդաց ուսումնարանի բացվելը, Շուշի, 1864, էջ 18:

օրիորդաց դպրոց, որը կոչվում է Ս. Մեսրոպյան անունով: Դպրոցն ուներ երեք դասարան, որտեղ սովորում էին 40 աշակերտուհիներ[23]: Մշակութային շատ գործիչներ (Հ. Առաքելյան, Ս. Հախումյան, Տ. Նազարյան, Լեո, Մ. Դոլուխանյան և ուրիշներ) եռանդուն մասնակցություն են ունենում այդ գործին:

Հայրենասեր գործիչների նախաձեռնությամբ 1881թ. Շուշիում հիմնվում է «Կովկասի հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղը»[24], որի վարչության նախագահը, միաժամանակ նաև գանձապահն ու քարտուղարը Լեոն էր: Ընկերության անդամների թիվը տարեցտարի ավելանում էր՝ հասնելով 160-ի[25]: Վարչության խորհրդի տարեկան տեղեկագիրը հաղորդում է, որ ընկերության Շուշիի ճյուղի առաջին տարվա նախահաշիվն էր 1148 ռուբլի 65 կոպ., որից 500 ռուբլին նվիրել էր շուշեցի Մարկոս Դոլուխանյանը: Վարչությունը քայլեր է ձեռնարկում Շուշիում բացելու գրադարան-ընթերցարան: Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգապետը 1886թ. հունիսին գրադարան-ընթերցարան հիմնելու իրավունք է տալիս վարչությանը, մշակվում են կանոններ ու ներկայացվում խորհրդի հաստատմանը: Գրադարանը բացվում է 1889թ. մարտին: Նույն թվականի հունվարի 1-ին գրադարանն ուներ 4917 անուն գիրք՝ 6793 ռուբլու արժողությամբ: Գրադարանը ստանում էր նաև պարբերական հրատարակություններ՝ «Մշակ», «Արարատ», «Նոր դար», «Մուրճ», “Кавказ”, “Русская мысль”, “Кавказский календарь” և այլն: 1890 թվականին ընկերության անդամների թիվը հասավ 212-ի:

Հետագայում Շուշիի թեմական դպրոցի նախահաշիվը 800 ռուբլուց հասավ 1700-ի[26]: Գնալով աճեցին վարչության եկամուտները: Օրինակ, 1888թ. մուտքը եղել է 2090 ռուբլի, մեկ տասնամյակ անց, 1899թ.՝ 25000 ռուբլի: Տեղեկագրի մեջ նշվում է, որ այդ գումարները ծախսվում էին գրադարան-ընթերցարանի, տառապյալներին և չքավոր աշակերտներին նպաստելու համար: Ուշագրավ է, որ 1893թ. Շուշիի մի խումբ երիտասարդներ իրենց ժողոված գումարների մի մասը հանձնում են վարչությանը՝ գրքեր, ամսագրեր, պարբերականներ հրատարակելու համար: «Մշակ»-ը գովեստով է գրում 1897թ. Շուշիում մի խումբ երիտասարդների հիմնած «Թատերական ընկերության» գործունեության մասին: Ընկերության անդամները Խանդամիրյանի թատերական դահլիճում ներկայացում են տալիս (Ժորդ Օնեի «Դարբնապետ» կատակերգությունը) և հավաքած 300 ռուբլին բարեգործական նպատակով նվիրում վարչությանը[27]:

XIX դարի 90-ականներին Շուշիում և գավառներում գործում էին նաև «Մարդասիրական», «Դպրոցասիրաց», «Թատերական», «Հայուհյաց» բարեգործական ընկերություններ: Այդ ուղղությամբ անուրանալի ծառայություններ մատուցեցին մշակույթի անվանի գործիչներ Սոֆյա Առաքելյանը, Գրիգոր Տեր-Ղազարյանը, Հովհաննես Տեր-Գրիգորյանը, Տիգրան Նազարյանը և ուրիշներ: Նրանք իրենց գործունեությունը ծավալեցին Արցախի գավառներում՝ նյութական օժանդակություն ստանալով հասարակությունից: 1886թ. Ղարաբաղի Աշան, Ղզղալա և Սպիտակ գյուղի բնակիչները միանում են, ստեղծում մի ընկերություն և ընդհանուր վճիռ կայացնում՝ Աշան գյուղում բացել կենտրոնական արական միդասյա

23. ՀԱԱ, ֆ. 56, g. 3, գ. 6, թ. 1, 12:
24. Մանրամասն տե՛ս՝ Հ. Շատվորյան, Թիֆլիսի հայ բարեգործական հաստատությունների պատմությունից, Երևան, 2007:
25. Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), էջ 205:
26. L. Բաբայան, Լեո, Թիֆլիս, 1908, էջ 10:
27. «Մշակ», 1897, թ. 15:

ծխական դպրոց, որը գործում է նույն թվականին, ուր սովորում էր 35 տղա և 15 աղջիկ[28]:

Արցախում մշակութային լայն գործունեություն է ծավալել հատկապես «Թանգարանային և հնագիտական» ընկերությունը (1896թ.), որի հիմնադրման գործում մեծ դեր են խաղացել Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչներ Էյզեն Ռեսլերը (գերմաներենի ուսուցիչ), Ս. Գուլիքեխվյանը (պատմության), Ս. Աթաբեկյանը (աշխարհագրության), Յ. Ճաղարբեկյանը (բանասիրության) և ուրիշներ[29]: Նրանք իրենց սաների հետ միասին հնագիտական ուսումնասիրություններ են կատարում Արցախի գավառներում, հայտնաբերում զգալի թվով շինությունների մնացորդներ, անոթներ, դրամներ, զենքեր, զարդարանքներ, մատանիներ, սափորներ, եկեղեցական մատյաններ, գորգեր, գեղեցիկ մանվածքներ, զանազան գործիքներ ու այդ ամենը ցուցադրում թեմական դպրոցին կից գործող թանգարանում: Ցուցադրվում են նաև թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի աշակերտների ուժերով հայտնաբերված խաչքարերը, արձանագրությունները:

Ցարիզմի ազգահալած քաղաքականության պայմաններում, երբ (1896-1905թթ.) փակվեցին հայկական դպրոցները, արևելահայ իրականության մեջ, ինչպես նաև Արցախում այդ ընկերությունների մշակութային գործունեությունն արգելվեց և նրանք սահմանափակվեցին միայն աղքատախնամ աշխատանքներով: Իշխան Գրիգորի Գոլիցինը, 1896թ. դառնալով Կովկասի փոխարքա, եռանդուն հարձակում սկսեց հայերի դեմ: Գոլիցինի առանձնահատուկ մտահոգության առարկան էին հայկական բարեգործական ընկերությունները, որոնց նա համարում էր ազգային-հեղափոխական շարժմանն օժանդակող մարմիններ, ոչ պակաս վտանգավոր, քան դպրոցները: Կովկասի հայոց բարեգործական ընկերությանն արգելվում է բացել տեղական նոր բաժանմունքներ: 1896 թվականից տեղական իշխանությունների կողմից դպրոցների փակման հետ միասին սահմանափակվում է Շուշիում գործող բազմապիսի կամավոր ընկերությունների գործունեությունը: Պաշտոնական տվյալների համաձայն, որոշ գյուղերում՝ Մեծ Թաղլարում, Ճարտարում, Գիշիում, Կուսապատում և այլուր կառավարությունից գաղտնի հասարակական ընկերությունները շարունակում են իրենց կրթանպաստ գործունեությունը:

Կովկասի փոխարքայության վերահաստատումից հետո, ցարիզմը վերանայեց հայերի նկատմամբ ավելի քան երկու տասնամյակ վարող իր քաղաքականությունը, թույլատրեց վերաբացել կրթական օջախները, և վերակագնել հասարակական ընկերությունների կրթանպաստ գործունեությունը:

XIX դարի 90-ական թվականները ծանր տարիներ էին և՛ դպրոցական, մշակութալուսավորչական աշխատանքի, և՛ մամուլի, գրատպության, և՛ հասարակական ընկերությունների գործունեության համար: Գործադրվում էին բազմաթիվ միջոցներ Արցախի աշխատավոր մարդկանց կամքն ու համառությունը, ոգու արիությունը կոտրելու համար, բայց չէր հաջողվում: Արցախի հայ հասարակությունը, գիտակցելով լուսավորության օջախների դերն ու նշանակությունը, հանդես է բերում ակտիվ նախաձեռնություն, իրեն դրսևորում որպես երկրամասի մշակութային վերափոխումների ջերմ կողմնակից: Հանգանակությունների միջոցով հավաքված գումարները հատկացվում են դպրոցների շենքերի վերանորոգմանը, գրադարան-ընթերցարանների կահավորմանը: Ժողովրդի մեջ յուրահատուկ

28. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 149, թ. 112, գ. 543, թ. 8:
29. «Մշակ», 1898, թ. 6, հունվարի 17: Տե՛ս նաև «Ազգագրական հանդես», 1896, Ա գիրք, էջ 5-6:

մրցակցություն էր ծավալվել գրադարան-ընթերցարանները գրականությամբ, լրագրերով, թատերական բեմերով և այլ հարմարություններով ապահովելու համար: Վարանդա, Դիզակ, Զրաբերդ գավառների հասարակությունները գրադարան-ընթերցարաններին նվիրում էին հայերեն, ռուսերեն գրականություն, պարբերականներ, այլ իրեր ու հարմարանքներ: Այդ մասին հաղորդող հոդվածագիրը նշում է, որ գումարներ են հատկացվել նաև “Мираж”, «Նեցուկ», “Шушинский листок”, “Шушинская жизнь”, «Արարատ», «Դաստիարակ» և այլ թերթեր ու ամսագրեր բաժանորդագրելու համար:

Չնայած առկա դժվարություններին, վերոհիշյալ ընկերությունները և հիմնարկները հայրենասեր մտավորականների աջակցությամբ որոշակի հաջողությունների են հասել հայ հասարակության շրջանում տարվող մշակութալուսավորչական աշխատանքների ծավալման, բնակչության հոգևոր պահանջմունքների բավարարման ուղղությամբ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կրթական գործի զարգացմանը նպաստեց նաև դպրոցական կանոնադրությունների հրապարակումը:

XIX դարի 50-60-ական թվականներին հայ իրականության մեջ ծավալված լուսավորչական շարժումն իրական հնարավորություններ է տալիս ընդլայնելու ազգային դպրոցների ցանցը, ընդունելու դպրոցական կանոններ, որոնք առավել ևս հրատապ էին դարձել, քանի որ կառավարությունը հրապարակել էր Կովկասի ուսումնական մասի նոր կանոններ, և հայ դպրոցն առանց կանոնադրության թողնել՝ կնշանակեր դուռը բացել իշխանությունների անցանկալի միջամտությունների առաջ: Մեծավաստակ գիտնական Ստ. Մալխասյանցը «Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյա գոյության» աշխատության[30] մեջ իրավացիորեն նշում է, որ լուսավորչական շարժումը հայ իրականության մեջ՝ հայ լուսավորչական թեմերում 1850-60-ական թվականներին ծավալվեց հոգևոր դպրոցների, հատկապես Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շուրջը: Այդ առաջադիմական շարժումն արձագանք գտավ նաև Շուշիում: 1859թ. շուշեցի առաջադեմ մտավորականների (Հովսեփ Ներսիսյան, Կարապետ Հախումյան, Սիմոն Տեր-Իսրայելյան, Ներսես Աբաբեկյան և ուրիշներ) նախաձեռնությամբ հրավիրվում է ժողով, և դիմում են կաթողիկոսին՝ պահանջելով թեմական դպրոցի հատուկ կանոնադրություն և աշխարհիկ հոգաբարձություն: Եթե հոգաբարձության ընտրությունը որոշ չափով հարթ անցավ, ապա կանոնադրության հարցում եղան ընդհարումներ: Ժողովրդի կողմից դպրոցին ցույց տրվող նյութական օժանդակությունը կանոնադրության հաստատման պայման դարձավ: Վերջապես՝ 1861թ. դեկտեմբերի 4-ին, թիվ 282 հրամանի համաձայն, հայոց կաթողիկոսը հաստատեց կանոնադրությունը[31], որը և Շուշիում ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Կանոնադրությամբ թեմական դպրոցն ուներ երեք բաժին՝ 6 դասարանով, յուրաքանչյուրում 25-30 աշակերտ: Բացի հինգ հոգաբարձուներից, թեմական դպրոցը ուներ 5 փոխնորդ, որոնք ընտրվում էին Ղարաբաղի և Նուխիի հայ հասարակությունից՝ միայն վեհափառ կաթողիկոսի կոնդակով: Կանոնադրության մեջ սահմանվում են դասավանդվող առարկաները՝ կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, Հայաստանի պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, ընդհանուր երկրաչափություն, երգեցողու-

30. Տե՛ս Ստ. Մալխասյան, Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյա գոյության (1824-1899թթ.), Թիֆլիս, 1900, էջ 83:

31. Կանոնադրություն Շուշվա հայոց հոգևոր թեմական դպրոցի, 1859, էջ 1-7: Տե՛ս նաև ՀՀԱԱարխ., ֆ. 56, g. 3, գ. 311, թ. 46, 47, 49:

թյուն, մարմնամարզություն, վայելչագրություն և այլն: Նոր պայմաններում թեմական դպրոցի հոգաբարձությունը ստանձնում է թեմի բոլոր ծխական դպրոցների կառավարումը: Ուշագրավն այն է, որ հասարակությունն անտարբեր չմնաց դպրոցական շարժման նկատմամբ, նա միջոցներ հատկացրեց հատկապես ծխական դպրոցներին: Լուրջ բացն այն էր, որ ծխական և թեմական դպրոցները դեռևս չունեին մշակված միասնական կանոններ:

Երբ Արևմտյան Պրուսիայի հայոց թեմական առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս[32] (1866թ. սեպտեմբեր), նրա առաջին քայլերից մեկը լինում է հայ իրականության մեջ դպրոցական գործի կարգավորումը: 1867թ. հունիսի 14-ին նա էջմիածնի միաբաններից կազմում է ուսումնական հանձնաժողով՝ կարգադրելով մշակել դպրոցական կանոնադրություն: Ապա ուղևորվում է Պետերբուրգ՝ կառավարությանը ներկայացնելու, և ճանապարհին շրջագայում է հայոց լուսավորչական թեմերում, ծանոթանում կրթական գործին: Վերադառնալով էջմիածին, միաժամանակ պատվիրում է շտապեցնել կանոնադրության մշակումը:

Այսպես, 1868թ. հուլիսին հրապարակվում են ծխական դպրոցների կանոնները, որի համաձայն յուրաքանչյուր գյուղում պետք է դպրոց բանալ: «Արարատ» ամսագրում կարդում ենք թեմերին ուղղած կաթողիկոսի առաջադրանքը. «Գյուղորեից եկեղեցիքը, եթե ունին սեպահական դրամ, նոցա տոկոսիքեն, մասնավոր թոշակ յատկացնեն յուրյանց դպրոցներուն. և երբ ոչ չեն բավեր նոքա՝ դրամագլխեն միայն մի մասը ծախս անեն, գյուղական ազգային մանկունքը բոլորովին տգիտության մեջ չթողնելու համար»:[33]

Նույն թվականին հրապարակվում են ծխական դպրոցների կանոնները: Այս կանոններով առաջին անգամ փորձ էր արվում կարգավորել տարածքում գտնվող ժողովրդական տարրական կրթական օջախները և պարզել նրանց ենթակայության հարցը: Կանոնների առաջին հոդվածն արձանագրում էր, որ «Ծխական կամ սկզբնական կոչին այնոքիկ եկեղեցական դպրոցաց, որք գտանին առ յուրաքանչյուր եկեղեցեավ»[34]: Նման դպրոցների նպատակն էր կրթել մանուկներին և պատրաստել նրանց թեմական դպրոց ընդունվելու, ընդ որում, քաղաքներում և գյուղերում եղած բոլոր եկեղեցիները պարտավոր էին իրենց կից ունենալ մեկական ծխական դպրոց: Սրանց գոյության միջոցները կազմվելու էին աշակերտների ուսման վարձից, կամավոր ժողովրդական նվիրատվություններից և եկեղեցու ունեցած դրամագլխի տոկոսներից: Դպրոցը կազմվելու էր մի դասատնից, իսկ միջոցները ներելու դեպքում կարելի էր ունենալ նաև երկրորդ դասատունը:

Ամենից կարևորը, որ պարունակում էին կանոնները, հոգաբարձության ստեղծումն էր: Ծխական դպրոցները պետք է կառավարվեին ժողովրդի կողմից ընտրված և թեմական իշխանությունից հաստատված հոգաբարձությունների միջոցով, ընդ որում, երեք հոգաբարձուներից մեկը պետք է լինի հոգևորական, իսկ երկուսը՝ աշխարհական: Այս կանոնադրության համաձայն, Շուշի քաղաքում թույլատրվում է թեմական դպրոցից և հոգևոր իշխանությունից ընտրել հինգ հոգաբարձու: Փաստորեն, հոգաբարձուները լինելու էին Արցախի և Նուխիի դպրոցների լիիրավ տերը, քանի որ նրանցից էր կախված ուսուցիչների ընտրության, դասաժամերի տևողության, նյութական միջոցների տնօրինության հարցերը:

32. Տե՛ս Մ. Աբեղյան, Գևորգ Դ. Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 29:
33. «Արարատ», 1868, հատ. Գ, էջ 3
34. Տե՛ս «Արարատ», 1868, հատ. Գ, էջ 70:

Կանոնադրությունը կարգավորեց ծխական դպրոցների գոյավիճակը, և հետագայում դրանք լայն տարածում գտան ինչպես ողջ Անդրկովկասի, այնպես էլ Արցախի հայաշատ վայրերում: Արխիվային վիճակագրական տվյալների համաձայն՝ 1860-70-ական թվականներին («Կանոնադրության» ընդունումից հետո) Արցախի թեմում գործում էին 29 ծխական դպրոցներ (մի մասը եկեղեցական-ծխական էր կոչվում, մյուս մասը՝ ծխական), իսկ Նուխիի գավառում՝ հոգևոր սեմինարիա, օրիորդաց դպրոց, Վարդաշեն գյուղում՝ ծխական դպրոց, Նիժ ուդիական և Բեկլարիստ հայկական գյուղերում՝ նախակրթական, և մասնավոր դպրոցներ[35]:

Ծխական դպրոցների ուսուցիչներ ընտրում էին հոգաբարձուները, որոնք պետք է ավարտած լինեն թեմական դպրոցը, կամ Նուխիի հոգևոր ուսումնարանը:

Ծխական դպրոցների կանոնները հրապարակելուց հետո, 1869թ. փետրվարին Գևորգ կաթողիկոսն ընդունեց թեմական դպրոցների կանոնադրությունը[36], որտեղ դարձյալ հաստատվում ու ամրապնդվում էր հոգաբարձուների դերը, որոնք պետք է լինեն աշխարհական և հաստատված միայն կաթողիկոսի հրամանով:

1868-1869թթ. Գևորգ Դ կաթողիկոսի հաստատած դպրոցական երկու կանոնադրության հիման վրա թեմական յուրաքանչյուր դպրոց կազմում է իր կանոնադրությունը: Այդ նոր կանոնների մեջ կային որոշակի սխալներ: Նկարագրելով այդ ժամանակաշրջանում թեմական դպրոցի վիճակը, Լեոն գրում է. «Շուշվա թեմական դպրոցը հեռու էր կյանքից, դեռ տանջարան էր մանուկ սերնդի համար, ամեն ինչ արհեստական է, խորթ, բնական գիտությունների հոտն անգամ չկար: Այստեղ էլ մանկավարժական զորավոր զենք էր ճանաչված ծեծը, այստեղ էլ աստվածաբանությունը համարվում էր «մայր գիտելաց», դրա փոխարեն չի կարելի չնշել ուսուցիչների առանձնակի հոգածությունը հայկաբանության նկատմամբ»:[37] Ամենուրեք գյուղերում և քաղաքներում հասարակական վճիռներ են կայացվում՝ բաց անելու ծխական դպրոցներ: Ուշադրության է արժանի հայ մանկավարժության երախտավորներից մեկի՝ Ա. Բահաթրյանի բնութագրումը. «Ժողովրդական կամ ծխական ուսումնարաններ ասելով հասկացվում է մի այնպիսի ուսումնավանդ դաստիարակող հաստատություն, որտեղ հայտնի աստիճանի հասած մի ազգի մանուկները կարող են ստանալ կրթություն, որը օգտակար է այդ ազգի բոլոր անդամների համար, առանց զանազանելու ժողովրդի դասակարգերը և սեռը, և որը սորա համար ասում է ընդհանուր ազգային կրթություն»[38]: Այսինքն՝ իր թերություններով ու բացերով հանդերձ, ծխական դպրոցները որոշ դեր են կատարել ազգային կրթության գործում:

Այսպիսով, XIX դարի 60-ական թվականներին հայկական դպրոցները (ծխական, թեմական և վանական) ստանում էին ընդհանուր կանոնադրություն, հնարավորություն էր ստեղծվում այս կամ այն չափով դպրոցական միասնական համակարգ կառուցելու:

35. «Հրահանգ հայոց եկեղեցական դպրոցների», ՀՀԱԱրխ., կաթ. դիվ., ֆ. 56, ց. 3, գ. 954, թ. 1:
36. Տե՛ս «Արարատ», 1869, հ. Ժ, էջ 141-146:
37. Տե՛ս «Մշակ», 1902, թ. 106:
38. «Մանկավարժական թերթ», 1878,թ. 1, էջ 3:

2. Արցախի դպրոցական համակարգը և նրա նյութական բազան XIX դարի երկրորդ կեսին (1850-1896 թթ.)

XIX դարի 50-60-ական թվականները շրջադարձային եղան արևելահայության, նրա Արցախյան հատվածի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքում, ինչպես նաև լուսավորության ու դպրոցաշինության ասպարեզում: Դարեր շարունակ, ինչպես և մեր ուսումնասիրվող ժամանակաշրջանում, դպրոցը դիտվել է որպես ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյատևման կարևորագույն գործոն: Սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշակի զարգացման հետևանքով այդ տասնամյակում գաղափարական ուժեղ պայքար ծավալվեց նորի և հնի միջև, որն ընդգրկեց մշակութային կյանքի բոլոր բնագավառները:

Մտավոր զարթոնքի այդ տարիներին մշակույթի այլ բնագավառների հետ մեկտեղ սկսեցին զարգանալ նաև լուսավորությունն ու դպրոցը:

Դարի 60-ական թվականները եղան ազգային դպրոցի գաղափարական հիմնավորման ու նախապատրաստման, որոնումների ժամանակաշրջան, երբ հայ լուսավորիչները ճանապարհ էին հարթում ազգային լուսավորության համար. «Հետաքրքրությունը կրթական գործի նկատմամբ ցածր աստիճանի հասավ, երբեք նախկինում այնպիսի բուռն զարգացման վերելք չի եղել լուսավորության բնագավառում, ինչպես 60-ական թվականներին[1]: Լուսավորական խնդիրների առաջ քաշումը խիստ ժամանակին էր և բխում էր հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության պահանջներից:

Այդ շրջանում հայ իրականության մեջ դպրոցական գործի զարգացման բնագավառում մեծ դեր կատարեց ժամանակի պարբերական մամուլը: Լույս տեսնող շատ պարբերականներ՝ «Հյուսիսափայլ», «Արարատ», «Նոր դար», «Դպրոց», «Դաստիարակ», «Կռունկ հայոց աշխարհի», «Արծագանք», «Մշակ» և այլն (1858-1890թթ.) արտահայտում էին ժողովրդական խավերի տրամադրություններն ու հայացքները:

Արցախահայությունը մոտիկից հաղորդակցվում է Ռուսաստանում, արևելահայ իրականության մեջ տեղի ունեցող սոցիալ-քաղաքական, հասարակական տեղաշարժերին: Ազգային զարթոնքը հրամայաբար պահանջում էր վերափոխել դպրոցի ներքին կյանքը, կրթության բովանդակությունը, դասավանդման մեթոդներն ու կազմակերպման ձևերը, ժողովրդավարացնել դպրոցը:

Քննարկվող ժամանակաշրջանում դպրոցական գործը դառնում է առաջավոր գործիչների ամենակենսական և հուզող հարցերից մեկը: Տարբեր ժամանակներում (1850-1890թթ.) Արցախի թեմում լուսավորչական գործունեություն ծավալած մանկավարժների, գրողների, մշակութային գործիչների (Պ. Շանշյան, Պ. Պռոշյան, Մ. Ղազարյան, Պ. Աղայան, Գ. Դովլաթյան, Ն. Աթաբեկյան, Խ. Ստեփանե, Արիստակես վարդապետ Սեդրակյան, Հ. Առաքելյան, Ս. Մանդինյան, Մ. Բարխուդարյան, Մ. Ալեքսանյան, Մ. Հախումյան և շատ ուրիշներ) եռանդուն գործունեության շնորհիվ զգալի առաջընթաց են ապրում լուսավորությունն ու դպրոցը: Այսպես, դպրոցները ստացան պատշաճ մակարդակով մշակված կանոնադրություններ, ծրագրեր, ուսումնական պլաններ, իսկ առաջատար դպրոցները (Շուշիի թեմական, իգական, Դիզակի, Վարանդայի, Ջրաբերդի երկդասյա դպրոց-

1. Տե՛ս Ն. Գ. Սարգսյան, 19-րդ դարի 60-ական թվականների արևելահայ հասարակական մանկավարժական շարժումը և «Հայկական աշխարհը» ՀՊՄՀ գիտակ. աշխատ. մանկավարժական գիտ. բաժին, թ. 1, 1969, էջ 43:

ները. առաջին դասը՝ 1-3, երկրորդ դասը՝ 4-5-րդ դասատանը) դարձան մտավորական պատրաստող և կրթական շարժմանն ուղղություն տվող կենտրոններ: Հայրենասեր գործիչների ջանքերով, հայ բնակչության ցուցաբերած օգնությամբ դարի 50-60-ական, առավել ևս 70-ական թվականներին նկատելիորեն աճում էր դպրոցների, աշակերտների և ուսուցիչների թիվը: Այսպես, Ս. Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալների համաձայն՝ 1850-ական թվականներին Արցախի թեմում եղել են դպրոցական իշխանություններին ենթակա թեմական դպրոց՝ 210 աշակերտ, 14 ուսուցիչ, Շուշիի քաղաքային ուսումնարան՝ 127 աշակերտ, 6 ուսուցիչ[2]: Քաղաքային ուսումնարանը բացվել է 1854թ. Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու միջնորդությամբ՝ Ռուսաստանի Ալեքսանդր II ցարին ուղղած խնդրագրի համաձայն[3]: Բացի այդ, Շուշիում կային 3 եկեղեցական-ծխական դպրոցներ՝ 40-50 աշակերտ, 3 ուսուցիչ, իսկ Վարանդայի, Դիզակի, Խաչենի գավառներում՝ 10-ից ավելի եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնցից յուրաքանչյուրում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 12 ուսուցիչ: Արցախի թեմի մեջ մտնող Նուխի գավառում կային 1 թեմական դպրոց (Նուխի քաղաքում), 1 քաղաքային ուսումնարան, 2 եկեղեցական-ծխական և 3 մասնավոր դպրոցներ[4]: Նախորդ ժամանակաշրջանի համեմատ առաջընթաց տեղաշարժ է նկատվում դպրոցական կյանքում:

Դարի 60-ական թվականներին դպրոցների վերաբերյալ ընդունված կանոնադրության (1868թ.՝ ծխական, 1869թ.՝ թեմական) համաձայն՝ որոշ փոփոխություններ կատարվեցին դպրոցների ներքին կյանքում: Ըստ այդմ՝ թեմական դպրոցում ավելանում են դասարանները (6), յուրաքանչյուրում՝ 25-30 աշակերտ, սահմանվում է ուսումնական օրվա ժամկետ՝ 5-6 ժամ, յուրաքանչյուր եկեղեցու կից բացվում է դպրոց, գյուղերում՝ նախակրթական և մասնավոր դպրոց: Բացի այդ, Շուշիում բացվում է իգական դպրոց՝ 1864թ., որի նախաձեռնողները եղել են՝ Պետրոս Շանշյանը, Պերճ Պռոշյանը, Մարիամ Հախումյանը: Այդ առթիվ «Մեղու Հայաստանի» թերթը գրում է. «Օրիորդաց դպրոցը այնքան աչքի ընկնող գործ էր այն ժամանակ Կովկասի կյանքի մեջ, որ անգամ նրա վրա ուշադրություն է դարձրել Կովկասի փոխարքայի տիկին Օլգա Ֆեոդորովնան. նա շնորհակալություն է հայտնում Մարիամ Հախումյանին օրիորդաց դպրոցի հոգաբարձությունն իր ձեռքն առնելու և նրա մասին հոգս քաշելու համար[5]: Պ. Պռոշյանի, Պ. Շանշյանի և Մարիամ Հախումյանի նախաձեռնությամբ գրվում է օրիորդաց դպրոցի կանոնադրությունը[6]: Ըստ դրա՝ օրիորդաց դպրոցում, արական դպրոցի համեմատ, մի փոքր սեղմված ծրագրով դասավանդվում էին հայոց և ռուսաց լեզուներ, կրոն, ազգային պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երգեցողություն և ձեռագործ: Կանոնադրության համաձայն՝ օրիորդաց դպրոցը պետք է պատրաստեր կրթված հայուհիներ՝ ծխական դպրոցներում դասավանդելու համար: Օրիորդաց դպրոցի բացումը նշանակալից երևույթ էր ոչ միայն Արցախի, այլև ամբողջ Անդրկովկասի հայության կյանքում:

---

2. Տե՛ս «Հրահանգ հայոց եկեղեցական դպրոցների», ՀՀԱ, ֆ. 56, ց. 3, գ. 954, թ. 4:
3. Տե՛ս Գ. Հարությունյան, Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, էջ 24-28: Նաև տե՛ս Состояние просвещения восточных армян 1830-1870гг. Сборник документов и материалов, док. N64 , Ереван, 1981, стр. 109. Նաև Մատենադարան, կաթ. դիվ., թղթ. 175, վավ. 264 / 28:
4. «Փորձ», 1881, թ. 3, էջ 122:
5. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1864, թ. 46:
6. Պ. Պռոշյան, Պ. Շանշյան, Ղարաբաղի Տիրամայր Սուրբ Մարիամի օրիորդաց ուսումնարանի բացվելը, Շուշի, 1864, էջ 12:

XIX 70-ական թվականներին Արցախի թեմում ավելի մեծ թափ ստացավ լուսավորչական ու դպրոցական շարժումը: Դպրոցական կյանքի համեմատական աշխուժացումն առաջ է քաշում կրթության գործը բարելավելու, աշխարհականացնելու, ժամանակակից մանկավարժական նվաճումները կիրառելու խնդիրները: Դրանց լուծմանն է նվիրվում Արցախի թեմի դպրոցներում բեղուն գործունեություն ծավալած հայ մանկավարժության նոր սերունդը: Այդ տասնամյակում Արցախի դպրոցին զգալի ծառայություններ են մատուցել Շուշիի թեմական դպրոցի տեսուչներ, անվանի մանկավարժներ Խորեն Ստեփանեն, Արիստակես վարդապետ Սեդրակյանը, փիլիսոփայության դոկտոր Վասակ Պապաջանյանը, բժիշկ Բալաբեկ Աղասարյանը և ուրիշներ: Նրանց շնորհիվ ընդլայնվեց Արցախի թեմի դպրոցների ցանցը: Սինոդի վիճակագրական տվյալների համաձայն՝ 1870-ական թվականներին թեմում գործում էին 31 հայկական դպրոցներ (նախակրթարաններ՝ հայկական), 761 աշակերտով[7]:

Դպրոցական կյանքում նկատելի տեղաշարժը բացատրվում է նրանով, որ Սինոդն իր իրավասության տակ կենտրոնացրեց հայկական բոլոր դպրոցները: Դպրոցական կյանքի աշխուժացումը խիստ ժամանակին էր և բխում էր հայ ժողովրդի սոցիալական ու հասարակական պահանջներից:

XIX դարի 80-ական թվականներին ժողովրդական լուսավորության ասպարեզում սկսված ռեակցիան ավելի ծանր դրսևորումներ ունեցավ հայ իրականության մեջ: Ցարական կառավարությունը շարունակում էր իր սահմանափակումներն ազգային դպրոցների նկատմամբ: Դպրոցների և, ընդհանրապես, հայության դեմ ցարիզմի իրականացրած բացարձակ ռուսացման քաղաքականությունը մեծ դժգոհություն առաջացրեց ոչ միայն արևելահայերի, այլև արևմտահայերի շրջանում: Կ. Պոլսի «Արևելք»[8] պարբերականը ահազանգող հոդվածներ էր տպագրում ցարիզմի քաղաքականության մասին, մեղադրում ցարական կառավարությանը, որ չուզեց սպասել կաթողիկոսի ընտրությանը և ժողովրդին զրկեց սեփական դպրոցներից: «Արևելք» պարբերականի առանձին բաժիններում տպագրված հոդվածներում արծարծվում էր նաև կրթական ընկերությունների գործունեությունը: «Արևելյան մամուլը» ցարիզմի վարմունքը համարում էր ոչ միայն «մեծ անիրավություն, ապերախտություն... և անարդարանալի բռնաբարութիւն, այլ քաղաքական ծանր սխալ մը»[9]:

Ոչ միայն արևմտահայությունն էր իր հուզմունքն արտահայտում. դպրոցների շուրջ ծավալված աղմուկը դուրս էր եկել կայսրության սահմաններից, որի մասին նաև եվրոպական մամուլում սկսել էին հոդվածներ տպագրվել: 1885թ. փետրվարի 5-ին կառավարության ընդունած որոշման համաձայն՝ ինչպես հայ լուսավորչական թեմերում, այնպես էլ Ղարաբաղի թեմում փակվում են 24 հայկական դպրոցներ[10]: Հանդիպելով անսպասելի դիմադրության, ցարիզմը երկյուղ էր կրում լրիվ վարկաբեկվելուց, ուստի և հարմար առիթի էր սպասում որոշ զիջումներ անել, որպեսզի վերաբացի հայկական դպրոցները:

Նորընտիր Մակար կաթողիկոսը հանդիպում ունեցավ Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի հետ և խնդրեց նրա միջամտությունը դպրոցների վերաբացման օգտին: 1886թ. հունվարի 16-ին կայսրը հաստատեց դպրոցների

7.ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, գ. 49, 50, թ. 19: Նաև «Դպրոց», 1875-76, մաս Ա, թ. 4, էջ 133:
8. Տե՛ս է. Կոստանդյան, Կոստանդնապոլսի «Արևելք» օրաթերթը, Երևան, 2003, էջ 4, 34-35:
9. «Արևելյան մամուլ», 1885, թ. 3, էջ 137:
10. ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 314, թ. 69-80:

վերաբացման որոշումը: «Արարատ»[11] ամսագրի 1886թ. հունիսի համարում տպագրվեցին հայոց եկեղեցական-ծխական դպրոցների նոր կանոնները, որոնք կազմվել էին ս. Էջմիածնի Սինոդի կողմից՝ հաշվի առնելով կառավարության պահանջները:

Նոր կանոնադրության մեջ պաշտպանվել էր արական և իգական դպրոցների անջատ լինելու սկզբունքը, թույլ էր տրվում միմյանց մոտ գտնվող գյուղերին պահել մեկ կենտրոնական դպրոց, սահմանված էին կաթողիկոսի իրավունքները դպրոցների նկատմամբ: Նրա հրամանով են բացվում և նրա սահմանած կանոններով առաջնորդվում միդասյա և երկդասյա դպրոցները և այլն:

Դպրոցական կանոնների հաստատումից հետո (1886թ և 1889թ. կանոնները) որոշ առաջընթաց էր նկատվում դպրոցական կյանքում: 19-րդ դարի 80-90-ական թվականների վերջին Արցախի թեմում գործում են 16 հայկական դպրոցներ: Այդ դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 30-40 աշակերտ, իսկ դասավանդող ուսուցիչների քանակը հասնում էր 17-ի[12]: Նուխիի գավառում գործող դպրոցների քանակը հասնում էր 10-ի, ուսուցիչներինը՝ 14-ի, իսկ աշակերտներինը՝ 376-ի[13]: 1890-1895թթ. Արցախի թեմում մեծանում է բնակչության հետաքրքրությունը լուսավորչական գործի նկատմամբ: Հասարակությունը ցանկություն է հայտնում յուրաքանչյուր գյուղում բացել դպրոց, կառուցել դպրոցական շենք: Էջմիածնի Սինոդին ներկայացրած Շուշիի կոնսիստորիայի վիճակագրական տվյալների համաձայն՝ Արցախի թեմում գործում էին 25 հայկական դպրոցներ, բացի Շուշիի թեմական և օրիորդաց դպոցներից: Սակայն 1895 թվականից փակվում են հայ լուսավորչական թեմերում, այդ թվում նաև Արցախի թեմում գործող հայկական դպրոցները, որոնք վերաբացվում են 1906թ.:

Քննարկվող ժամանակաշրջանի դպրոցական գործի վիճելի հարցերից են նաև դպրոցական համակարգի, տիպերի, աստիճանների, ուսման տևողության, դպրոցների կառավարման և ենթակայության հիմնախնդիրները:

Արցախի դպրոցական գործը խորությամբ բնութագրելու և կրթական համակարգը մանրազննին վերլուծելու համար խոր ուսումնասիրության են ենթակա դպրոցների տիպերի, աստիճանների, ուսման տևողության, կառավարման հարցերը:

Նախորդ շարադրվածից ակնառու է դառնում, որ Արցախում ձևավորված ու կանոնակարգված դպրոցական համակարգ չի եղել ոչ միայն մինչև Ռուսաստանին նրա միանալը, այլև մինչև XIX դարի վերջին քառորդը:

Դրա հիմնական պատճառներից մեկը պատմական այն ծանր հանգամանքներն էին, որոնց մեջ գտնվում էին, ընդհանուր առմամբ, Անդրկովկասի և, մասնավորապես, Արևելյան Հայաստանի (նաև Արցախի) դպրոցները: Այն արտահայտվում էր ոչ միան դպրոցի, կրթության ու դաստիարակության ուղղվածության, այլև դպրոցական համակարգի, տիպերի ասպարեզում, երբ կրթական ասպարեզում խաչաձևվում էին մի կողմից պարսկաթուրքական տիրապետության ժամանակաշրջանից ժառանգություն մնացած հինը, միջնադարյանը, մյուս կողմից՝ այն համեմատաբար նորը, որը կողմնորոշվում էր դեպի եվրոպական ու ռուսական կրթական համակարգը և մանկավարժական միտքը:

XIX դարի երկրորդ կեսին ժամանակի պահանջները, հասարակական-քաղա-

11. «Արարատ», 1886, թ. 2, էջ 146, թ. 3, էջ 87:
12. ֆ. 56, ց. 3, գ. 78, գ. 314, գ. 149:
13. ֆ. 56, գ. 50, թ. 60-61:

քական և կրթալուսավորական շարժումն առաջնահերթ խնդիր են դնում՝ հստակորեն սահմանել դպրոցների տիպերը, համակարգը, ուսման տևողությունը, ինչպես նաև դպրոցի ներքին կյանքը կարգավորող շատ խնդիրներ:

Այժմ հանգամանորեն ցույց տանք, թե դարի երկրորդ կեսին Արցախի թեմում ինչ տիպի դպրոցներ են գործել և սրանցից յուրաքանչյուրն ինչ էր իրենից ներկայացնում:

1. Եկեղեցական-ծխական դպրոցներ: Արխիվային բազմաթիվ փաստաթղթերում և այլ աղբյուրներում հաճախ օգտագործվում են եկեղեցական, եկեղեցական-ծխական, ծխական ուսումնական հասկացությունները. երբեմն («Եկեղեցական ուսումնական» արտահայտությունը կիրառվում է հոգևոր ուսումնարան իմաստով, բայց շատ ավելի հաճախ ծխական՝ եկեղեցուն կամ վանքերին կից կազմակերպված դպրոցի իմաստով): Իսկ այդ եկեղեցական-ծխական դպրոցը կարող է լինել ամենաբազմատիպ թե՛ իր աշակերտության կազմով և թե՛ կրթության ուղղվածությամբ ու բովանդակությամբ:

Վերջապես, այդ եկեղեցական-ծխական դպրոցները կարող են ամբողջովին կամ մասամբ պահվել եկեղեցու միջոցներով կամ եկեղեցուց ոչ մի նյութական օժանդակություն չստանալ և այլն:

Ծխական դպրոցները հաճախ հանդես էին գալիս նաև ծխական-եկեղեցական անվամբ (եկեղեցիներին կից լինելու պատճառով), զանգվածային, տարրական դպրոցներ էին, որոնք ծնունդ էին առել XIX դարի 50-60-ական թվականներին և, ի հակակշիռ խալֆայական դպրոցների, գտնվում էին եկեղեցու իրավասության տակ: Ծխական դպրոցների վերաբերյալ ընդունված առաջին պաշտոնական կանոնադրությունը (1868թ.) կարգավորեց ծխական գոյավիճակը և հետագա 10-15 տարում դրանք լայն տարածում գտան ինչպես Անդրկովկասի հայաշատ վայրերում, այնպես էլ Արցախի թեմում:

1886թ. կանոնադրության մեջ նշվում է, որ ծխական դպրոցների հիմնական նպատակն է տարրական գրագիտություն սովորեցնել երեխաներին և կադրեր մատակարարել թեմական դպրոցների համար: Հատկանշական է այն, որ ծխական դպրոցները թեմականի համար համարվում էին որպես նախապատրաստականներ և զգալի ուղղություն ու ղեկավարություն էին ստանում նրանց կողմից: Ծխական դպրոցներում ուսման տևողությունը 2-3 տարի էր, սակայն կարող ուժերի նյութական միջոցների առկայության դեպքում ավելացվում էր ևս 1-2 տարի: Այդ դպրոցներում դասավանդում էին կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, վայելչագրություն, թվաբանություն, երգեցողություն: Միաժամանակ որոշակի տեղեկություններ՝ գիտելիքներ էին տալիս (նախնական) աշխարհագրությունից, պատմությունից, բնագիտությունից, նկարչությունից, ձեռագործ (երբեմն մասնավոր նախաձեռնությամբ աղջիկների համար) և այլն:

Ծխական դպրոցներում սկզբնական շրջանում պատշաճ կարգ ու կանոն չկար՝ աշակերտների ընդունելությունը կատարվում էր տարվա բոլոր եղանակներին, լրիվ չէր կիրառվում դպրոցական ծրագիրը, դասաժամերը սահմանափակված չէին, չկար ամառային արձակուրդ, միշտ չէր ծեծը դուրս մղվում դպրոցից: Հետագայում այս բացերը գնալով սկսեցին վերանալ: Ծխական դպրոցն ուներ 1-2 ուսուցիչ, որոնցից մեկը տեղական քահանան էր, որը դասավանդում էր կրոնական առարկաներ:

XIX դարի 60-ական թվականներին սկսված հասարակական-քաղաքական շարժումը մեծ աշխուժություն էր մտցրել դպրոցական գործի մեջ: Գնալով էլ ավելի է ակտիվանում Արցախի ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր

դպրոցների ստեղծման ուղղությամբ: Ծխական դպրոցները մինչև 60-ական թվականները կոչվում էին եկեղեցական-ծխական, իսկ հետո դարձան ծխական-նախակրթական, դարի 70-80-ական թվականներից սկսած անվանվեցին միդասյա-երկդասյա երկսեռ դպրոցներ, որոնք գոյատևեցին մինչև խորհրդային շրջանը:

Այսպես, օրինակ Սինոդին ներկայացված Արցախի թեմի տեսչի պաշտոնական տեղեկագրում նշվում է, որ միդասյա դպրոցներում համարյա առանց բացառության գոյություն ունի դասավանդման համակարգ, որով ուսուցիչ-ուսուցչուհին պարապում է այն բոլոր առարկաներով, որոնք մատնանշված են միդասյա դպրոցի ծրագրում:

Երկդասյա դպրոցներում ուսուցիչ-ուսուցչուհիների շաբաթական դասերի նվազագույն թիվն էր 24, առավելագույնը՝ 42. այդքան դաս (շաբաթական 42, տևողությամբ յուրաքանչյուր դասը 40-45 րոպե) տալիս էր այն ուսուցիչ-ուսուցչուհին, որն ստիպված էր, մեն-միայնակ լինելով, պարապել երկու (1 ու 2-րդ) կամ երեք (1-ի, 2-րդ ու 3-րդ) բաժանմունքից բաղկացած, երկու կամ երեք տարվա դասընթաց ունեցող, միդասյա դպրոցի բոլոր առարկաները, 42 դասին նվիրվում էր շաբաթական 30 ժամ, օրը՝ 6: Մոտավորապես 24 դաս շաբաթական ուներ միդասյա նորաբաց, դեռևս մի բաժանմունք (1-ի) ունեցող դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհին, նույնչափ դասեր (24-28) ունեին երկդասյա դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիները, որոնց աշխատանքն այդպիսով ավելի թեթև էր, քան երկու կամ երեք բաժանմունք ունեցող երկդասյա դպրոցի միակ ուսուցիչ-ուսուցչուհունը[14]:

Քանի որ ճեմարանների և թեմական դպրոցների շրջանավարտների մեծ քանակություն էր զգացվում, պաշտոն էր տրվում թեմական դպրոցների ու ճեմարանի բարձր դասարաններից (սկսած 4-րդից) դուրս եկածներին, միայն ոչ նրանց, ովքեր հեռացված են դպրոցներից անընդունակության կամ վատ վարքի պատճառով, այդպիսիններից էլ պահանջվում է ուսման բավարար առաջադիմության ու լավ վարքի վկայական: Պաշտոն է տրվում նույն պատճառով միջնակարգ ու քաղաքային վեցդասյա դպրոցների շրջանավարտներին: Ուսուցչուհիներից ավելի գերադասվում էին նրանք, ովքեր ավարտած են պետական օրիորդաց գիմնազիաների լրիվ դասընթացը: Պետական դպրոցներն ավարտողներից նրանց է պաշտոն տրվում, ովքեր բավարար կերպով տիրապետում են հայոց լեզվին՝ բանավոր ու գրավոր:

Արցախի թեմի հայ եկեղեցական-ծխական դպրոցներում պաշտոնավորող համարյա բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներն էլ, առանձին բացառություններով հանդերձ, գտնվում էին երիտասարդ տարիքում:

Արցախի թեմի հայ եկեղեցական-ծխական դպրոցներում գործածության մեջ են գտնվում հետևյալ դասագրքերը.

ա) կրոնից՝ Սահակ քահանա Սահակյանի դասագրքերը,

բ) հայոց լեզվից՝ Հովհաննես Թումանյանի, Ստ. Լիսիցյանի ու Շանթի «Լուսաբեր» դասագրքի 1-ի և 2-րդ տարիները:

Գործածության մեջ էին նաև վերջինիս 3-րդ և 4-րդ տարիների դասագրքերը, ինչպես և Ղազարոս Աղայանի ու Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի դասագրքերը: Քերականության դասավանդման համար գերադասություն էր տրվում Մանուկ Աբեղյանի դասագրքին, օգտվում էին նաև Տեր-Ղևոնդյանի ու Բալասանյանի դասագրքերից:

<u>2. Հոգևոր դպրոց:</u> Հոգևոր դպրոցները կարծես ծխական դպրոցների շարունա-

14. Այդ մասին տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 46, 52, 149, 152:

կությունն էին և ավելի լայն գիտելիքներ էին տալիս: Այս դպրոցները մեծ մասամբ կազմված էին լինում նախակրթարաններից, որոնք իրենց ուսման ծավալով հավասարվում էին սովորական ծխական դպրոցին, և 3-5 հիմնական դասարաններից, այնպես որ ուսման ողջ ընթացքը տևում էր 6-8 տարի: Հոգևոր դպրոցներում դասավանդում էին, բացի ծխական դպրոցի առարկաներից, նաև հայոց, ռուսաց լեզուներ, ընդհանուր պատմություն ու աշխարհագրություն, թվաբանություն, բնական պատմություն, գծագրություն, երկրաչափություն, ֆիզիկա, մարդակազմություն և այլ առարկաներ:

Հոգևոր դպրոցներն արևելահայ հատվածում և Արցախում հիմնվում էին քաղաքներում և խոշոր բնակավայրերում, ուր հնարավոր էր ստեղծել նյութական ավելի տանելի պայմաններ, ներգրավել առաջատար մանկավարժների, բարելավել կրթօջախների վիճակը:

Գտնվելով նման իրավիճակում, հոգևոր դպրոցներն արագ բարգավաճում էին և արդեն 1880-ական թվականների սկզբներին նրանցից մի քանիսը իրավամբ դարձան միջնակարգ կրթական հաստատություններ:

Չնայած այդ դպրոցները կոչվում էին հոգևոր, այնուամենայնիվ, նրանցում առավել ակնառու էին հանդես գալիս աշխարհիկ սկզբունքն ու հասարակական նախաձեռնությունը:

Հոգևոր դպրոցներն իրենց մեջ պարունակում էին ազգային կրթության հետագա ծավալման ու զարգացման նախատիպը, կրթություն, որը բարեհաջող պայմանների առկայության դեպքում ի վիճակի է դառնալու մի ամբողջական կազմակերպված համակարգ՝ սկսած տարրական դպրոցից մինչև միջնակարգը: Այդ գործընթացը խմորվում է հոգևոր դպրոցի շուրջը: Բայց դա միևնույն ժամանակ մեծագույն վտանգ էր պարունակում իր մեջ: Ցարական բյուրոկրատիան համաձայնել էր հայկական դպրոցի ինքնավարությանը, պայմանով, որ նա սահմանափակվի հայ-լուսավորչական ծխականների զավակներին գրել-կարդալ սովորեցնելով և նրանց կրոնական բարեպաշտության և կույր հնազանդության ոգով դաստիարակելով: Թույլ էր տրված նաև «աստվածաբանական գիտությունների մեջ հայ պատանիների կրթվելու համար» բացել թեմական դպրոցներ: Պաշտոնական իշխանությունների համար անցանկալի էր դպրոցի չափից ավելի բարգավաճումն ու ընդարձակումը, ուստի հայ եկեղեցին աշխատում էր աննկատելի դարձնել նրա գոյությունը՝ ավելորդ ու վտանգավոր միջամտություններից խուսափելու համար: Չափազանց հատկանշական է այդ տեսակետից Մակար եպիսկոպոսի (ապա՝ կաթողիկոս) տված խորհուրդը «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Ղ. Սիմոնյանին, որն իր հուշերում այդ մասին գրում է. «Սոցա մասին (ծխական դպրոցների - Ա. Ա., Գ. Հ.) էլ շատ ընդարձակվելու խնդրանոք արգելք էր լինում Թիֆլիսի առաջնորդ՝ ի տեր հանգուցյալ Մակար արքեպիսկոպոսը (ապա՝ կաթողիկոս) ասելով. «Ի՞նչ թմբկահարելու բան է, մի քանի երեխայք կարդալ-գրել են սովորում, որ եկեղեցիներում փոխասացներ ունենանք, ի զուր ուրիշների ուշադրությունն էլ գրավելու առիթ պիտի տանք»[15]:

Բայց ինչպես վարվել, երբ կյանքի առաջընթացը թափ էր հաղորդել դպրոցին ու երևան հանել նրա մի նոր, զարգացած տիպը: Էջմիածինը չէր կարող և չէր էլ ձգտում արգելակել կրթական գործի զարգացումը. նրա հոգսն այդ կրթական գործն իր իրավասության տակ պահելն էր: Եվ ահա հոգևոր իշխանություններն ու նրանց հետևությամբ ժամանակի մամուլն ու հասարակայնությունը նոր տիպի

15. «Հովիվ», 1909, h. 43, էջ 676:

դպրոցների համար քաղաքացիություն տվեցին «հոգևոր» անվանմանը, որը դրանց կրոնական ուղղվածության պատրանք էր ստեղծելու և շեղելու էր իշխանությունների ուշադրությունը: Այդ էր պատճառը, որ հետագայում էլ հոգևոր դպրոցները միասնական կանոնադրություն չստացան՝ դրանով իսկ հայ առաջադեմ դպրոցական գործիչների համար ստեղծելով անկաշկանդ գործելու հնարավորություն:

XIX դարի կեսից Արցախի դպրոցի կյանքում նշանակալի տեղ էին գրավում Շուշիի հայոց հոգևոր-թեմական դպրոցը և Նուխիի հայոց ազգային հոգևոր ուսումնարանը:

Շնորհիվ իր նպաստավոր դիրքի, բնակչության ձեռներեցության (Հայաստանից և Արցախի տարբեր վայրերից այստեղ գաղթած արհեստավորական խավերի), Նուխին XIX դարի կեսից համեմատաբար արագ զարգացման էր հասել և ստեղծել ուրույն քաղաքական-հասարակական կյանք՝ իր հայաշատ կենտրոնով:

Արհեստների և առևտրական կապերի զարգացումը բավական աշխույժ անց ու դարձ էր առաջացրել քաղաքում, որը և իր բարերար ազդեցությունն էր թողել սկիզբ առած դպրոցական շարժման վրա: Վաղուց ի վեր այստեղ գոյություն ունեին խալֆայական տիպի հայկական մասնավոր, եկեղեցական դպրոցներ, իսկ 1838 թվականին, Լեոն է նշում Շուշիի թեմական դպորցի պատմությանը նվիրված գրքում, Նուխիում բացվում է ազգային հայոց հոգևոր ուսումնարան: «Արարատ» ամսագրի 1870թ. (Ժ.Բ. համարում) նշվում է, որ Նուխիի հայոց ազգային հոգևոր ուսումնարանը տասը տարի (1870-1860թթ.)[16] շարունակ անընդհատ գործել է համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններում, կանոնավոր վիճակում քան Շուշիի գավառի մյուս դպրոցները, նույնիսկ Շուշի քաղաքի հայոց ազգային հոգևոր թեմական դպրոցը: XIX դարի 70-80-ական թվականներին Նուխի քաղաքի հոգևոր դպրոցն ունեցել է 224 աշակերտ, 8 ուսուցիչ: Հոգևոր դպրոցը նույնպես արժանացել է հայկական դպրոցների ճակատագրին, փակվել և վերաբացվել է: Հետագայում՝ 1906-1907 ուստարում, այն դարձել էր երկդասյա արական երկսեռ դպրոց, ուր սովորում էր 242 աշակերտ, դասավանդում 10 ուսուցիչ, իսկ 1910-1911 ուստարում դպրոցն ուներ 6 բաժանմունք, 12 ուսուցիչ:

<u>Վանական դպրոց:</u> Հայ իրականության մեջ դպրոցական այս տիպերի կողքին դեռ շարունակում էին գոյություն ունենալ նաև վանական որոշ դպրոցներ Տաթևում, Ճալեթում, Գեղարդում, Հառիճում, Սանահինում, Սաղիանում, Երնջակում, այդ թվում նաև Արցախում՝ Գանձասարում, Դադի, Գտչա վանքերում:

Դարերի ընթացքում ժամանակի պահանջների և երկրի քաղաքական ծանր կացության հետևանքով դպրոցների մեծ մասը կենտրոնանում է վանքերում: Վանքաշատ Արևելյան Հայաստանը, այդ թվում՝ նրա մի հատվածը կազմող Արցախը, հայտնի է դառնում նաև իր վանական դպրոցներով:[17]

Լեոն «Հայոց պատմություն» աշխատության մեջ նշում է, որ հայոց վանքերը հսկայական դեր են խաղացել հայոց կյանքի ոչ միայն քաղաքական, այլև կրոնական ու կրթության բնագավառներում, որին, բացի հոգևորականներից, մասնակից են եղել նաև գիտության, գրականության, երաժշտության, նկարչության և այլ բնագավառների մարդիկ: Տնտեսական, քաղաքական ծանր պայմաններում կրոնական կազմակերպությունների ու եկեղեցական հաստատությունների և հատկապես խոշոր վանքերի ամենակարևոր առաքելություններից մեկը կրթության գործի

16. Տե՛ս «Արարատ», 1870, հ. ԺԲ, էջ 308:
17. Լեո, Հայոց պատմություն, հատոր 2, Ա.Գ. հտ. Թիֆլիս, 1917, Երևան, 1946 և 1947, էջ 673:

կազմակերպումն էր, որն ավանդաբար շարունակվել է միչև XIX դարի կեսերը:

Այս պայմաններում կրոնական կազմակերպություններն ու եկեղեցական հաստատությունները մի տեսակ ինքնուրույն, բազմակողմանի արտոնություններով ու իրավունքներով էին հանդես գալիս, նրանք ոչ միայն կրթելու դերակատարություն ունեին, այլև լիակատար իշխանություն կրթական գործի նկատմամբ:

Հայոց խոշոր վանքերը, առանձնապես հիշատակելի են Արշակունյաց, Արագածոտնի, Սանահինի, Հաղպատի, Մարմաշենի, Աղթամարի, Շիրակի, Կեչառիսի, Բջնիի, Այրիվանքի, Տաթևի, Մեծոփա, Երզնկայի, Կիլիկիայի և Արցախի՝ Ամարաս, Գանձասար, Դադի, Գտչա, Ս.Հակոբի, Երից Մանկաց և այլն, համարյա թե առանց բացառության ունեցել են դպրոցներ (իրենց հիմնադրման օրից), գրչության օջախներ, մատենադարաններ ու գրատներ: Բացի հոգևորականներից նրանք պատրաստել են նաև գիտության, գրականության, երաժշտության, նկարչության և այլ բնագավառների մասնագետներ:

Այս վանքերը տվել են երկրի համար շատ հայտնի մատենագրեր, փիլիսոփաներ, ճարտասաններ, քերականագետներ, մաթեմատիկոսներ, տոմարագետներ, երկրաչափներ և այլ բոլոր մասնագիտությունների համար ուսուցիչներ:

Արցախի վանքերը, հետևաբար և նրանց կից գործող դպրոցները, կառուցվում էին հատուկ տեղերում, որ ապահով լինեին թշնամիների հարձակումներից, ունենային կալվածքներ, միաբանություններ և դպրոցներ:

Հետագայում, հատկապես XIX դարի կեսերին, դրանք մեծ մասամբ վերածվել են սովորական ծխական դպրոցների:

<u>Թեմական դպրոց:</u> Քննարկվող ժամանակաշրջանում հայկական դպրոցի ամենից բարձր տիպը թեմական դպրոցներն էին (այս դպրոցները հաճախ կոչվում էին նաև դպրանոց, հոգևոր սեմինարիա): Սրանք, ինչպես արդեն ասվել է, բացվել էին 1836թ. «Կանոնադրության» հիման վրա, ըստ որի յուրաքանչյուր ռուսահայ թեմ պետք է ունենար իր թեմական դպրոցը: Նման դպրոցներ հիմնվել էին Թիֆլիսում՝ 1824թ. Ներսես Աշտարակեցու ստեղծած դպրոցի հիման վրա, Երևանում՝ 1837թ., Շուշիում՝ 1838թ., թեմականի անուն էր կրում նաև Շամախու դպրոցը՝ բացված 1844թ.: Սակայն նյութական խիստ անապահով վիճակը, կադրերի բացակայությունը հնարավորություն չեն տվել Շամախու թեմական դպրոցին զարգանալու. մի կերպ քարշ տալով իր գոյությունը, այն հաճախ փակվել է և չի կարողացել բարձրանալ ծխականի մակարդակից: 1886թ. հետո Շամախու դպրոցը լրիվ և պաշտոնապես դասվել է ծխական դպրոցների շարքը, թեև շարունակել է գոյություն ունենալ թեմի աղքատիկ եկամուտներով:

Թեմական դպրոցները, ունենալով համեմատաբար երկար կյանք, ժամանակի ընթացքում աստիճանաբար զարգացել էին և դարձել կրթական շարժմանը գործնական ուղղություն տվող կենտրոններ. մեր դպրոցական կյանքի մեջ ներդրվող նորամուծությունները հիմնականում ծնունդ էին առնում, փորձվում ու տարածվում էին այս դպրոցներից: Ունենալով ուսման ավելի ընդլայնված ծրագիր, թեմական դպրոցները համեմատաբար առավել լայն հնարավորություն էին տալիս ժամանակի հայ մանկավարժներին ծավալելու իրենց գործունեությունը, դեպի իրենց էին գրավում լավագույն ուսուցիչների: Թեմական դպրոցները նկատելիորեն առաջադիմեցին, միաժամանակ դառնալով հասարակական տարբեր խմբավորումների ու հոսանքների պայքարի ասպարեզ:

Թեև Շուշիի թեմական դպրոցը ստեղծվել է հոգևոր կարիքները բավարարելու (կրթված քահանաներ պատրաստելու) համար, բայց շուտով նա շատ ավելի լայն նշանակություն ստացավ, և հոգևոր բնույթը մղվեց ետին դիրքերի վրա, տեղ բա-

ցելով աշխարհիկ սկզբունքների համար: Այստեղ մանկավարժական աշխատանքին լծված հայ մշակույթի գործիչներն ամեն կերպ ջանում էին թեմական դպրոցը վերածել բազմակողմանի կրթություն տվող միջնակարգ ուսումնական հաստատության, որի սաները կարող էին դուրս գալ կյանքի ասպարեզ և ընդունվել բարձրագույն դպրոցներ կամ նվիրվել մանկավարժական աշխատանքի:

Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմությունը գրել է Լեոն՝ «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի» (Թիֆլիս, 1914): Այդ դպրոցի գործունեության մասին հանգամանորեն տեղեկություններ է տրվում նաև պրոֆեսոր Մ.Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին» (1964), Վ.Երկանյանի «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում» (1970), Ս.Խուդոյանի «Արևելահայ դպրոցը 1800-1920թթ.» աշխատություններում, ինչպես նաև պարբերական մամուլում լույս տեսած առանձին հոդվածներում: Այդ նկատառումով էլ մենք այստեղ կսահմանափակվենք միայն մի քանի համառոտ տեղեկություններով, կվկայակոչենք նոր փաստեր, որոնք առնչվում են Շուշիի թեմական դպրոցի գործունեությանը:

Հայկական դպրոցների վերաբերյալ ընդունված առաջին պաշտոնական կանոնադրությա համաձայն (1836թ. հայտնի «Պոլոժենիեն»), 1838թ. հունիսի 22-ին բացվում է Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունն Արցախում: Թեմական դպրոցի հիմնական խնդիրն էր հայ եկեղեցու սպասավորների պատրաստումը: Սակայն հայ հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց և նրա թելադրանքով թեմական դպրոցն աստիճանաբար հեռացել է իր հիմնական խնդրից ու ավելի ու ավելի մոտեցել աշխարհիկ նպատակների իրականացմանը: Այդ դպրոցներից են դուրս եկել ծխական տարրական դպրոցների ուսուցիչների մեծ մասը, հայ մշակույթի ու հասարակական մտքի գործիչները: Դա վերաբերում է նաև Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցին, որը նշանակալի դեր է խաղացել Արցախի ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Թեմական դպրոցը բազմիցս եթարկվել է ցարական կառավարության հետապնդումներին, փակվել, վերաբացվել, գտնվել իշխանության հսկողության տակ, բայց և պատվով է ծառայել արցախահայերի մշակույթի, լուսավորության, գիտության առաջընթացին:

Հետևողաբար, Շուշիի թեմական դպրոցը ձեռք է բերել աշխարհիկ բովանդակություն (իհարկե, բոլորովին չհրաժարվելով իր հոգևոր ուղղությունից) և դարձել թեմի միակ ազգային միջնակարգ դպրոցը: Տարբեր ժամանակներում թեմական դպրոցում բեղմնավոր մանկավարժական աշխատանք են կատարել անվանի մանկավարժներ, գրողներ, հասարակական գործիչներ Պ.Շանշյանը, Պ.Պռոշյանը, Խորեն Ստեփանեն, Ս.Մանդինյանը, Հ. Առաքելյանը, Լ.Սարգսյանը, Մ.Աբեղյանը, Հր.Աճառյանը, Հ.Հովհաննիսյանը և ուրիշներ:

Իր գործունեության սկզբնական շրջանում թեմական դպրոցն աղքատության մեջ ծնված մի փոքրիկ հիմնարկություն էր, որը չի ունեցել նույնիսկ իր սեփական շենքը, այլ տեղափոխված է եղել մի մասնավոր անձի տուն:

Սկզբում ունեցել է մոտ 20 աշակերտ, ուսուցիչների մի մասը պարապել է առանց վարձատրության, անցել են հայոց լեզու, ռուսաց լեզու, պարսկերեն, թվաբանություն, սրբազան պատմություն, երգեցողություն:

XIX դարի 60-ական թվականներին թեմական դպրոցը հանձնվում է Շուշիի հասարակության կողմից ընտրված հոգաբարձությանը: Այսպիսով, իրականանում է դպրոցական կյանքում ժողովրդի մասնակցության ապահովման ժողովրդավարական սկզբունքը, որը հայ իրականության մեջ առաջ քաշել ու պաշտպանում

էին Մ.Նալբանդյանը, Ս.Նազարյանը, Պ. Շանշյանը և ուրիշներ: Սահմանափակվում էին հոգևոր իշխանության իրավունքները: Այդ սկզբունքն իր արտահայտությունն է գտնում նաև Շուշիի թեմական դպրոցի՝ 1861թ. կազմված ու կաթողիկոսի կողմից հաստատված կանոնադրության մեջ:

Շուշիի թեմական դպրոցը մեծ բարեփոխումների է ենթարկվում, երբ Մատթեվոս կաթողիկոսը շուշեցիների խնդրանքով 1863թ. թեմականի տեսուչ է նշանակում հայտնի մանկավարժ Պետրոս Շանշյանին: Վերջինիս օգնականն էր Պերճ Պռոշյանը, ով այնտեղ դասավանդել էր հայոց լեզու, հայ գրականություն և ազգային պատմություն: Նրանց ջանքերի շնորհիվ թեմական դպրոցը սկսում է ծաղկել, դառնում է եռդասյա՝ իր երկու ծխական դպրոցներով: Փոխվում է նաև դպրոցի անունը: Այն V դարի հռչակավոր պատմիչ Եղիշեի անվամբ կոչվում է «Եղիշյան ազգային հոգևոր դպրոց»:

Սրանց ջանքերով է նաև, որ բացվում է Շուշիի օրիորդաց դպրոցը (1864թ.):

Շուշիի թեմական դպրոցում բեղմնավոր մանկավարժական գործունեություն են ծավալել փիլիսոփայության դոկտոր Վասակ Պապաջանյանը (1877-78), եվրոպական համալսարանում մանկավարժական կրթություն ստացած Սեդրակ Մանդինյանը (1879-81): Վերջինիս շնորհիվ առաջին անգամ թեմականում դասավանդվել է մանկավարժություն, իսկ չորրորդ դասարանն ավարտողներից կազմվել է մանկավարժական հատուկ դասարան, որը տեղի ծխական դպրոցների համար ուսուցիչներ էր պատրաստում: 1881-82 ուստարում թեմական դպրոցի ուսուցչի, ապա նաև տեսչի պաշտոն է վարել անվանի գրող, մանկավարժ Ղ. Աղայանը: Հետագայում Շուշիի թեմական դպրոցի տեսչի պաշտոնում աշխատել են Լևոն Սարգսյանը, Պետրոս Մելքումյանը, Ստեփանե Դեմուրյանը և ուրիշներ:

Շուշիի թեմական դպրոցը բազմիցս փակվել-վերաբացվել է՝ հայերի ու հայ դպրոցների նկատմամբ ռուսական կառավարության վարած հակահայկական քաղաքականության սաստկացման հետևանքով:

Այս դրությունը շարունակվում է մինչև 1905թ. աշունը: Թեմականն ավելի բարեկարգ տեսք է ստացել 1908-1910թթ.՝ տեսուչ Ավետիք Տեր-Պողոսյանի օրոք և նրա ջանքերով:

1913թ. բավականաչափ մեծ շուքով տոնվել է դպրոցի 75-ամյակը (1838-1913թթ.), որի առթիվ և գրվել է Լեոի գիրքը՝ նվիրված թեմական դպրոցի պատմությանը:

<u>Ռեալական ուսումնարան:</u> Դեռևս XVI-XVII դարերում ռեալական գաղափարն առաջ են քաշել նոր ձևավորվող բուրժուազիայի ներկայացուցիչները՝ նպատակ ունենալով երեխաներին տալ բնական ու ճշգրիտ գիտելիքներ, այսպիսով իսկ նրանց նախապատրաստել գործնական կյանքի: Հայտնի է, որ Եվրոպայի առաջին ռեալական ուսումնական հաստատություններից էին մաթեմատիկական և նավաշինության գիտությունների դպրոցը (1701, Մոսկվա) և մաթեմատիկական ու մեխանիկայի ռեալական դպրոցը (1706-1708, Հալլե, Գերմանիա): XIX դարի 60-ական թվականներին Ռուսաստանում (1864թ. կանոնադրությամբ) դասական գիմնազիային զուգահեռ բացվեցին նաև ռեալական գիմնազիաներ (7-ամյա ուսման տևողությամբ), ուր դասական հունարեն և լատիներեն լեզուների փոխարեն դասավանդվում էին օտար լեզուներ: 1872թ. ռեալական գիմնազիային փոխարինեց ռեալական ուսումնարանը (ուսման տևողությունը 6-7 տարի, դրանք, որպես կիսամասնագիտական ուսումնական հաստատություններ, ստեղծվել են Գերմանիայում XVIII դարի կեսերին):

XIX դարի կեսերին ինչպես Ռուսաստանի տարբեր վայրերում, այնպես էլ

Անդրկովկասում բացվում են Արքունի ռեալական ուսումնարաններ:

Ցարական կառավարության որոշմամբ 1881թ. Շուշիում բացվում է Արքունի ռեալական ուսումնարան:[18]

Իգական դպրոցներ: Հայ իրականության մեջ կանանց կրթության համար նույնպես որոշ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հատկապես Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո: Սակայն պետք է ասել, որ XIX դարի սկզբներին հայ կանանց կրթության գործը դեռևս շատ ցածր մակարդակի վրա էր: Բավական է ասել, որ դարասկզբի առաջին տասնամյակներին Հայաստանը չուներ իգական պատշաճ դպրոցներ, մինչդեռ Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում վաղուց կային այդպիսիները: XIX դարի առաջին տասնամյակում՝ հասարակական կյանքի առաջընթացի հետ կապված, ժամանակի մանկավարժական և գեղարվեստական գրականության մեջ առաջադեմ մամուլում աշխուժություն է նկատվում հանրային կյանքում կնոջ դերի, նրա կրթության ու հոգևոր զարգացման հարցերի շուրջ: Օրինակ, Մեսրոպ Թաղիադյանը մեծ նշանակություն էր տալիս աղջիկների կրթությանը: Նա գտնում էր, որ հայ աղջիկները պետք է տղաներին հավասար կրթություն ստանան: 1828թ. երևանցիներին հղած նամակում Թաղիադյանն առաջարկում էր լրջորեն զբաղվել կանանց կրթության ու դաստիարակության գործով, նորաբաց դպրոցներում ընդգրկել նաև աղջիկներին: «Կարծեմ ինձ վրա կծիծաղեք,- գրում է Թաղիադյանը,- եթե ասեմ, որ ինգլիսի և ֆրանկի կանայք ու դստերքն վեց-յոթը լեզու գրել, կարդալ գիտեն, մեծ-մեծ գրքեր են շարադրում, տպում, ասեղնագործություն, կար ու ձև, վաճառականություն և այլն, մինչդեռ մեր «խաթուն դստերն» մենակ տուն սրբել գիտեն»:[19] «Ճառ դաստիարակության օրիորդաց» աշխատության մեջ Թաղիադյանը հորդորում է ծնողներին, որպեսզի «նրանք ոչինչ չխնայեն իրենց աղջիկներին կրթություն տալու համար»:[20]

XIX դարի առաջին կեսին հայ կանանց ազատության և կրթության պահանջով հանդես եկավ հայ ժողովրդական մանկավարժության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Առաջ քաշելով կանանց կրթության ու դաստիարակության հույժ կարևոր խնդիրը, Աբովյանն այն կապում էր հայ ժողովրդի կրթության և լուսավորության ընդհանուր գործի հետ: Ըստ Աբովյանի՝ ժողովրդի լուսավորությունը և երեխաների դաստիարակությունը մեծ մասամբ կախված է կանանցից. նրանց շփումը տղամարդկանց հետ ազնվացնում է վերջիններիս, հղկում ու մեղմացնում, բարեփոխում տղամարդկանց բնավորությունը, իսկ որպեսզի կինը կարողանա այդպիսի մշակութային լուսավորչական դեր խաղալ, ամենից առաջ ինքը պետք է կրթված ու լուսավորված լինի:

Կանանց կրթության հարցը հայ մտավորականությունը լայն քննարկման առարկա դարձրեց առանձնապես XIX դարի 60-ական թվականներին: Այդ տասնամյակում հայ իրականության մեջ սկսված լուսավորչական շարժումն առաջադրեց նաև կանանց կրթության հարցը: Հայ կանանց կրթության մասին արժեքավոր գաղափարներ են առաջ քաշել ու զարգացրել Ս.Նազարյանցը, Մ.Նալբանդյանը, Ս.Շահազիզը, Պ.Պռոշյանը, Ղ.Աղայանը, Գ.Արծրունին, Ռաֆֆին, Ռ.Պատկանյանը և ուրիշներ, դառնությամբ ցույց տվել ժամանակի հայ կնոջ տխուր վիճակը: Նրանք գտնում էին, որ կինն ավելի շատ է շփվում երեխաների հետ, նրա ազդե-

18. Այդ մասին տե՛ս, Հ.Գրիգորյան, Գ.Հարությունյան, Շուշիի ռեալականը, Երևան, 2001:
19. Մ.Թաղիադյան, Ընտիր երկեր, Երևան, 1946, էջ 328:
20. Նույն տեղում: Տե՛ս նաև Մ. Թաղիադյան, Ճառ դաստիարակության օրիորդաց, Կալկաթա, 1847, էջ 11: Զ.Միրզաբեկյան, Մեսրոպ Թաղիադյան, էջ 131-132:

ցությունը մեծ է ընտանեկան դաստիարակության մեջ, ուստի հայ կինն էլ պետք է ուսյալ լինի: Հայ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը պատկերավոր ասել է. «Մայրը պիտի ուսուցանե յուր զավակներին ազգային լեզու, մայրը պիտի տնկե տղայական սրտերի մեջ ազգության սերմը այնպիսի խնամքով և հոգաբարձությամբ, որ Հյուսիսի սրտաբեր մրրիկը կամ Հարավի այրող օդը չկարողանային չորացնել նորանց ծլելու բույսը»:[21]

Դեռևս 1855թ. իր «Յաղագս հայկական մատենագրության» հրապարակախոսական երկում Մ.Նալբանդյանը բարձրացրել է աղջիկների ուսման խնդիրը: Նա ասում է, որ հայերի մեջ բոլորովին աչքաթող է արված աղջիկների կրթության խնդիրը, մինչդեռ այն խիստ անհրաժեշտ է ազգային լեզուն պահպանելու, զանգվածների ընդհանուր լուսավորության և ազատագրական ընդհանուր պայքարի տեսանկյունից ևս: Այդ մասին Ա.Հովհաննիսյանն իրավացիորեն գրել է. «Նալբանդյանի համար կնոջ խնդիրը սերտորեն կապված էր նրա քաղաքական և սոցիալական ազատագրման խնդրի հետ»:[22] Ազատ կնոջ իրավունքները նա շաղկապում է աղջիկների դաստիարակության, հանրության ընդհանուր լուսավորության և ազգային-ազատագրական ընդհանուր պայքարի հետ:

«Հյուսիսափայլ»-ում հրապարակված շատ հոդվածներ վկայում են այն մասին, որ հայ առաջադեմ մտավորականությունն առանց իգական սեռի կրթության չէր պատկերացնում ժողովրդական կրթության իսկական ժողովրդավարացումը, կանանց կրթության հարցը կապում էր կնոջ ազատագրման հետ: Ցավով խոսելով ժամանակի հայ կնոջ թշվառ վիճակի մասին, Ստ.Նազարյանցը «Հյուսիսափայլ»-ում գրել է. «Հայերի կանանց բնավորության մասին չի կարելի ոչինչ վճռական բան ասել, ուր չկա ազատություն և ընկերական կյանք, ինչպես կարելի է ճանաչել լավն ու վատը»:[23] Կամ Սմբատ Շահազիզն իր «Լևոնի վիշտը» (1865թ.) երկում ասում է, որ հայ աշխատավորական խավերի աղջիկները, մեծ մասամբ գյուղական վայրերում, անուս են, ստրուկ, հլու-հնազանդ, իսկ քաղաքներում կենցաղավարող հայ մեծատունների աղջիկներն օտարախոս են, զուրկ հարկավոր գիտելիքներից, ազգային զգացումից:

Կանանց կրթությունն ու դաստիարակությունը համարելով ազգային վերածնության կարևոր նախապայմաններից մեկը, Ղ.Աղայանը առաջ է քաշում գրագետ մայրեր պատրաստելու, իգական դպրոցներ հիմնելու խնդիրը. «Մեզ մայրեր են պետք, իրանց զավակաց կրթության հոգ տանող մայրեր,- գրում է նա,- ուրեմն պետք է նախ կրթված մայրեր դաստիարակել, աղջիկների համար ևս դպրոցական կրթությունը պարտադիր դարձնելով»:[24]

60-70-ական թվականների ինչպես հայ լուսավորչական այլ թեմերում, այնպես էլ Արցախի թեմում բացվում են իգական դպրոցներ: Մինչև XIX դարի 60-ական թթ. Արցախի թեմում գրեթե չկար բարեկարգ իգական դպրոց: Ասում ենք «գրեթե», քանի որ Շուշիում գոյություն է ունեցել կուսանոցի միաբանուհի Եղիսաբեթ Սարգսյանցի խալֆայական տիպի իգական ուսումնարանը, որտեղ սովորում էր 10-15 աղջիկ: Այդ դպրոցը բնութագրել է Լեոն տիկ.Մարգարիտ Ալեքսանյանի «Գեղագիր ալբոմ»-ի համար գրած առաջաբանում: Շուշվա կուսանոցի միաբանուհի Եղիսաբեթ Սարգսյանցը կատարում էր տեղի հարուստ աղջիկների վարժու-

21. «Հյուսիսափայլ», 1860, թ.1, էջ 79:
22. Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953թ., էջ 292:
23. Ա.Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ.2, Երևան, 1955թ., էջ 177:
24. ՊԳԹ, Աղայանի արխիվ, թիվ 11, էջ 24-25:

հու պաշտոն. «Նա Շուշիում հայտնի էր Աքեր անունով: Աքեր Եղիսաբեթի դպրոցը ժամանակի խալֆայական դպրոցներից մեկն էր, մի հողե կտուրի տակ հավաքված 10-15 օրիորդ, ովքեր ծնկաչոք սերտում են այբբենարանը, սաղմոս, կտակարան»:[25]

Ի դեպ հայերի մոտ դեռ շատ հնուց կանանց ուսուցումը կատարվել է ոչ թե դպրոցում, այլ անհատական, տնային (առտնին) ուսուցման ձևով, երբ հայուհին հաճախ վարպետուհու կոչմամբ մի քանի աղջիկների սովորեցնում էր տարրական գրագիտություն, աղոթքներ, ձեռագործ և այլն: Խոսելով այդ տիպի «դպրոցների» մասին, պրոֆեսոր Աբ. Մովսիսյանն իր «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10-15-րդ դարեր)» աշխատության մեջ նշում է, որ հայ կանայք զբաղվում էին նաև բազմաթիվ արհեստներով և արվեստներով: Ուշադրության է արժանի այն փաստը, որ Արցախում եղել է աղջիկների առտնին ուսուցում: Օրինակ, Ա.Մովսիսյանը Գանձակեցու «Պատմություն հայոց» գրքից բերած տվյալների հիման վրա ցույց է տալիս, որ XIII դարում յուրատիպ ձեռագործության տնային դպրոց է եղել Արցախի Ջրաբերդ գավառի Հաթերքի իշխան Վախթանգի տունը, ուր տիկին Արզու խաթունն իր աղջիկների հետ սքանչելի վարագույրներ է ասեղնագործել, գեղեցիկ գույներով նկարազարդել և նվիրել զանազան եկեղեցիների ու վանքերի, ինչպես օրինակ, Հաղպատի, Մակար և Դադի վանքերին:[26]

XIX դարի երկրորդ կեսին Արցախում ինչպես արական, այնպես էլ իգական դպրոցների բացման գործում կարևոր դեր են կատարել Պ.Պռոշյանը, Պ.Շանշյանը, Ա.Բահաթրյանը, Ս.Մանդինյանը, Ղ.Աղայանը և նշանավոր այլ մանկավարժներ:

Վճռական նշանակություն տալով աղջիկների կրթության ու դաստիարակության հարցերին, Պռոշյանն ակտիվ մասնակցություն է ունենում իգական դպրոցներ հիմնելու գործում: Օրինակ, 1861թ. Պռոշյանը մեծ դժվարություններով հիմնում է «Գայանյան» դպրոցը Թիֆլիսում, որը թեև կարճ կյանք է ունենում, սակայն վարակիչ օրինակ է ծառայում ուրիշների համար:[27] Չմերժելով իր բարեկամ տեսչի՝ Պ.Շանշյանի հրավերը, Պռոշյանը գալիս է Շուշի: Հետաքրքիր է նշել Պռոշյանի պահանջներից մեկը. «Խոստացիր պարոն Պետրոս, ինձ օգնել Արցախում աղջկանց դպրոցի հիմք դնելու, ես առանց աղջկանց դպրոցի ապրել չեմ կարող»:[28]

Եվ այսպես, 1864թ. մի խումբ գործիչների՝ Պետրոս Շանշյանի, Գարեգին Մելիքսեթ Մուրադյանի, Ստեփան եպիսկոպոսի, Բալաբեկ Մելիք Ղարագոզյանի համառ ջանքերով բացվում է Շուշվա բարեկարգ առաջին օրիորդաց դպրոցը: Այս իգական դպրոցի բացմանը և գործունեությանն ակտիվ մասնակցություն է ունեցել շուշեցի մեծահարուստ Համբարձում Հախումյանի կինը՝ տիկին Մարիամ Հախումյանը: Լեոն նշում է, որ այս գեղեցիկ երևույթը ծնունդ առավ դարձյալ Հախումյանների ընտանիքում, ժամանակակիցների վկայությամբ՝ օրիորդների կրթությամբ վաղուց էր զբաղվում Հախումյանների ընտանիքը մասնավոր կերպով: Տիկին Մարիամն իր տանը դաստիարակում էր յոթ աղքատ աղջիկների: Շանշյանի ժամանակ էր, որ տիկին Մարիամի մեջ ինքնավստահություն առաջա-

25. Տե՛ս Լեոյի առաջաբանը տիկ. Ալեքսանյանի «Գեղագիր» ալբոմին, Թիֆլիս, 1891, էջ1:
26. Աբ.Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի ու մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 498:
27. Պ.Պռոշյան, Հուշեր, Երևան, 1940թ., էջ 55:
28. Նույն տեղում, էջ 56:

ցավ ավելի հաստատուն հիմքի վրա դնելու աղջիկների կրթության գործը: Ուշագրավ է վեհափառ կաթողիկոսին հղած Մարիամ Հախումյանի նամակն օրիորդաց դպրոց բացելու մասին. «Գիտելով Ձեր սերը դեպի ազգային լուսավորությունը և հաստատ լինելով, որ ամեն մի ազգային գործ, առավել ևս ազգային լուսավորության, ցանկալի է Ձեր սրբազանության ազգասեր սրտին, ես Շուշուայ քաղաքի տիկնանց կողմանե դիմում են Ձերդ սրբազանեությանը և խնդրում եմ խոնարհաբար տալ մեզ հրաման բանալ ուսումնարան, արժանացնելով ընդունել ուսումնարանը Ձերդ սրբազանեության բարձր հովանավորութեան ներքոյ: Ընդսմին խնդրում ենք խոնարհաբար առաջարկել Արցախում հոգևոր դպրոցի տեսչին ընդունել ուսումնարանի ուսումնական մասի կառավարությունը՝ համաձայն այն կարգադրութեան (կանոնադրության), որ ընդսմին ներկայացնում եմ Ձեր բարեհաճությանը»:[29]

Կաթողիկոսի կողմից կանոնադրությունը հաստատվելուց հետո Մարիամ Հախումյանի նախաձեռնությամբ Շուշվա հայ տիկնանց միաբանությունը մի ընկերություն է կազմում իգական դպրոց հիմնելու համար: Այս նախաձեռնությունը լայն արձագանք է գտնում. հավաքում են անհրաժեշտ գումար, 40 հայ կանայք որդեգիրներ պահելու պատրաստակամություն են հայտնում: Ինքը՝ թեմականի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը, երկու աղջիկ է որդեգրում: Վերջապես՝ 1864թ. գարնանը, դպրոցը բացվում է: Պռոշյանը մեծ ոգևորությամբ գրել է. «Օհ, բայց ի՜նչ մեծ պահքը ամենքին ավետում էր ամեն տեղ Շուշվա տիկնանց ազգասիրությունն է, որ գերդաստանի հայրը և ճշմարիտ հայը կարող էին չուրախանալ իրենց ընտանեաց արած այսպիսի օգտավետ և ընդհանուրին վերաբերյալ գործի համար: Շուշվա հայ հասարակությունը սիրով էր սպասում դպրոցի բացմանը. Ոչ միայն Հախումյանցի դահլիճն էր ոտնատակ տրորվում, նոցա բոլոր տունը, կարողությունները և կյանքերն առանց ակնկալության նվիրված էր ղարաբաղցվոց լուսավորության գործին»:[30] Տիկին Հախումյանը նորաբաց Մարիամյան դպրոցին հատկացնում էր իր տան հինգ սենյակները, իսկ թեմական դպրոցի ուսուցիչները հանձն են առնում ձրի պարապել և իրենց վրա են վերցնում դպրոցի ուսումնական մասի հսկողությունը: Այդ առթիվ «Մեղու Հայաստանի» թերթը շնորհակալական խոսք է հղում «Տիկին Մարիամ Հախումյանին, որ ձեռնամուխ եղավ կանանց կրթության սկզբնավորմանը: «Անտարակույս են,- գրում է թերթը,- որ մեր ազգային յառաջադիմությանը վերաբերյալ բարի գործը մեծ ուրախություն է պատճառում մեր բոլոր համազգիներին, ի թիվս որոցե մեզ էլ»:[31] Պռոշյանը Շանշյանի և Մարիամ Հախումյանի հետ միասին գրում է դպրոցի կանոնադրությունը, որը կոչվում էր «Ղարաբաղի Տիրամայր սուրբ Մարիամյան օրիորդաց ուսումնարանի կանոնադրություն»: Ըստ այդ կանոնադրության՝ օրիորդաց դպրոցում դասավանդում էին հայոց և ռուսաց լեզուներ, կրոն, ազգային պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երգեցողություն և ձեռագործ: Այդ ժամանակ մեծ նշանակություն էր տրվում աղջիկների ձեռագործությանը, ինչպես գրում է Հ.Առաքելյանը, որովհետև այդ գործն այնքան կարևոր է, որքան գրել-կարդալը:[32] Կանոնադրության համաձայն օրիորդաց դպրոցը պետք է պատրաստեր կրթված հայուհիներ, որոնք կարողանան դասավանդել ծխական դպրոցներում:

29. Պ.Պռոշեանց, Ղարաբաղի տիրամայր Սուրբ Մարիամի Օրիորդաց ուսումնարանի բացվելը, Շուշի, 1864, էջ 12:
30.Նույն տեղում, էջ 18:
31. «Մեղու Հայաստանի», 1865, թ.25, էջ 127:
32. «Հայկական աշխարհ», 1876, թ.3, էջ 30:

Օրիորդաց դպրոցների բացումը նշանակալից երևույթ էր ոչ միայն Շուշիի, այլև ողջ Անդրկովկասի հայության կյանքում: Այդ մասին շատ լավ է գրել Մուրացանն իր «Խորհրդավոր միանձնուհի» վեպում: Կամ Սեմեոն Հախումյանի ջանքերով Շուշիում լույս տեսած «Գործ» (1881թ.) հանդեսը գրել է, որ Շուշիի օրիորդաց դպրոցը մեծ աշխատանք կատարեց «ազգային և ընտանեկան կյանքի համար», զգալի ավանդ մուծեց բարոյական վերածնության գործի մեջ, առաջադեմ մեթոդներով կազմակերպեց ուսուցման և դաստիարակման գործը օրիոդների շրջանում»:[33] Հանդեսը նաև առաջ է քաշում դպրոցական լայն ցանցի ստեղծման, նոր օրիորդաց դպրոցներ հիմնելու, աշխակերտներին տարբեր մասնագիտական գիտելիքներ տալու հարցը: Հախումյանը միաժամանակ գրում է, որ «ամեն մի բարեկիրթ ու հասկացող հասարակություն, որ ունի իր սեփական, ազգային կրթական հաստատությունները», պետք է հաշիվ պահանջի ուսումնական օջախների գլուխ կանգնած անձանցից, քանի որ ժողովրդի առջև հաշվետվությամբ հանդես գալը բարձրացնում է ղեկավարների պատասխանատվությունը: Եվ պետք է ասել, որ «Գործ»-ի էջերում զգալի տեղ էր հատկացվում նաև Արցախում գործող դպրոցների գործունեությանը:

Եթե մինչև XIX դարի 50-ական թվականները հայ աղջիկները սովորում էին մեծ մասամբ միայն Թիֆլիսի ազնվազարմ օրիորդաց ինստիտուտում (1840), Սուրբ Նինայի (1846), Հռիփսիմեի (1848) և այլ դպրոցներում, ապա 60-70-ական թվականներին նրանք հնարավորություն ստացան սովորելու հայկական իգական դպրոցներում: Նշանակալից է հատկապես, որ 60-70-ական թվականներին հայ իրականության մեջ արդեն գործում էին Երևանի Գայանյան (1866), Ալեքսանդրապոլի Արղության (1867), Կարսի Հռիփսիմյան (1868), Թիֆլիսի Գայանյան (1869), Մարիամյան (1866), Հովնանյան (1877), Ախալցխայի Եղիսաբեթյան (1870), Ախալքալաքի Սանդուխտյան (1871), Բաքվի Հռիփսիմյան (1869) և շատ այլ օրիորդաց դպրոցներ: Սակայն իգական դպրոցները մեծ մասամբ եկեղեցական-ծխական տիպի էին, որտեղ դասավանդում էին նաև հատուկ առարկաներ՝ ձեռագործ, կար ու ձև և այլն: Իգական դպրոցները բացվում էին այնտեղ, ուր արդեն գոյություն ունեին արական դպրոցներ, առկա էին կարող ուսուցչական ուժեր: Պետք է նշել, որ 70-ական թվականների կեսերից սկսած՝ նորաբաց դպրոցների մեծ մասը երկսեռ էր: Մինչդեռ դա արգելակում էր տղաների դպրոցում աղջիկների սովորելը և, ընդհակառակը, նահապետական բարքերի թելադրանքով ծնողներից շատերը դժվարությամբ էին հաշտվում աղջիկների կրթության մտքին կամ կասկածանքով էին վերաբերվում տղամարդ դասատուներին:

Լուրջ նշանակություն տալով այդ հարցին, հայ առաջավոր մտավորականները պահանջում էին նաև երկսեռ համատեղ ուսուցում: Օրինակ, Հ.Առաքելյանը նշում էր, որ տղաները և աղջիկները կանոնավորապես պետք է հաճախեն դպրոց, ուսում առնեն համատեղ, իրենց կրթությունը ստանան մայրենի լեզվով: «Ժողովուրդը սկսեց պահանջ զգալ դեպի ուսումն ու կրթությունը և ահա ժողովրդի պահանջի հետևանքով է մեր ծխական երկսեռ ուսումնարանների բացումը 70-ական թվականներին»,- դրվատանքով գրել է «Գործ»-ը:[34]

XIX դարի 70-ական թվականներին Արցախի թեմում ևս ընդլայնվում է իգական դպրոցների ցանցը: Օրինակ, Սինոդի պաշտոնական տվյալներով 1874-1875թթ. Շուշի քաղաքում գործում էր 2 երկսեռ դպրոց՝ 40 աշակերտով (որից 27-ը՝ տղա-

33. «Գործ», 1884, թ.1, էջ 23:
34. «Գործ», Շուշի, 1882, թ.1, էջ 89:

ներ): Այդ նույն շրջանում Նուխի քաղաքում կար 1 մասնավոր օրիորդաց ուսումնարան և 1 երկսեռ դպրոց՝ 18 աշակերտով:

Երկսեռ դպրոցներում աշակերտների մեծ մասը աղջիկներ էին: Այսպես, օրինակ, 1876թ. վիճակագրական տվյալներով Շուշի քաղաքի եկեղեցու 2 երկսեռ դպրոցներում 32 աշակերտից 20-ը աղջիկ էր, իսկ քաղաքի 1 երկսեռ դպրոցում 15 սովորողից 10-ն աղջիկ էր:[35] Նշենք, որ այդ ժամանակ Շուշի քաղաքում կար նաև 1 օրիորդաց դպրոց, որն ուներ 2 դասարան, 2 պատրաստական, 2 ուսուցչուհի և 85 աշակերտուհի:

Սինոդի կողմից 1876թ. հաստատված եկեղեցական-ծխական դպրոցների կանոնադրությամբ եկեղեցական-ծխական դպրոցներում ուսուցանվող առարկաներից բացի, իգական դպրոցներում պետք է անցնեին նաև ձեռագործ ու երաժշտություն: «Հայկական աշխարհ»-ում տպված «Աղջիկների համար օգտակար գիտություններ» վերնագրով հոդվածում շեշտվում է, որ կանանց համար էլ պետքական են ոչ միայն հասարակական գիտություններ, այլև մաթեմատիկա, ֆիզիկա, երկրաբանություն և այլն:[36]

Թեմական դպրոցի տեսուչ նշանակվելով՝ Արիստակես վարդապետ Սեդրակյանը 1876թ. գալիս է Շուշի և բացում մի օրիորդաց դպրոց, որը Մարիամյան օրիորդաց դպրոցի հետ միասին զգալի դեր խաղաց Շուշիի հասարակության կյանքում (նշենք, որ Արցախում հայ կանանց կրթության գծով մեծ աշխատանք է կատարել նաև Հ.Առաքելյանի քույր Սոֆյան, որը ժամանակի զարգացած և կրթված օրիորդներից էր, գիտեր մի քանի լեզու և զբաղվում էր գրքերի թարգմանությամբ):

Դպրոցական այս ուշագրավ նախաձեռնությանն անտարբեր չմնաց Արցախի հայ հասարակությունը: Եթե մինչ այդ հնարավոր էր միայ քաղաքում բացել օրիորդաց դպրոցներ, ապա այդ ալիքը տարածվում է նաև գյուղերում: Գյուղական հանրությունն աշխատում էր ետ չմնալ իրենց աղջիկներին կրթություն տալու գործում: Հետզհետե Ղարաբաղի թեմում ընդլայնվում է ինչպես արական, այնպես էլ իգական դպրոցների ցանցը: Օրինակ, պաշտոնական վիճակագրությունների համաձայն՝ 1880թ. Վարանդա գավառի Ներքին Թաղլար գյուղում բացվում է 1 օրիորդաց դպրոց՝ Ս.Մեսրոպյան անունով: Դպրոցն ուներ 3 բաժանմունք, որտեղ սովորում էր 40 աշակերտ: Այդ նույն շրջանում երկսեռ նոր դպրոցներ են բացվում Շուշի և Նուխի քաղաքներում: 1882թ. Թիֆլիսում կայացած «Հայոց ընդհանուր ուսուցչական ժողովը» արձագաքում էր, որ գյուղացիները նույնպես քիչ չեն մտահոգված կանանց կրթության հարցով: Թե՛ հարուստ և թե՛ աղքատ դասակարգի համար իգական կրթության գործը դառել էր առաջին անհրաժեշտության խնդիր: Դրվատելով այդ երևույթը, «Գործ» հանդեսը գրել է, որ դպրոցը տալիս է հայ ոգով և հայ կրթությամբ դաստիարակված օրիորդներ և ապագա մայրեր, որոնք նույն ուղղությամբ ու հոգով պիտի դաստիարակեն իրենց զավակներին և մեր հասարակության կյանքի մեջ նոր թարմ շունչ մտցնեն: Այնուհետև «Գործ»-ը գրում է, որ հայոց օրիորդական դպրոցի առաջին շրջանավարտներն իրենց գեղեցիկ առաջադիմությամբ և զարգացմամբ պիտի միշտ այդ դպրոցի զարդը կազմեն և օրինակ հանդիսանան իրենց հաջորդներին: Այդպիսիններից էին Վարսենիկ Գյաջյանցը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Եկատերինա Առաքելյանը և շատ ուրիշներ: Այդ օրիորդները խորանում են գիտության տարբեր ճյուղե-

35. ՀՀԱԱ, ֆ.56, ց.3, գ.52, թ.15-20:
36. Նույն տեղում:

ռում, ակտիվորեն մասնակցում գավառի լուսավորչական-հասարակական կյանքին և հմտանում մանկավարժական արվեստի մեջ:[37]

Ուշագրավ է, որ գյուղերում ժողովներ էին գումարում և որոշում ընդունում՝ բացելու ինչպես արական, այնպես էլ իգական կամ երկսեռ դպրոցներ: Օրինակ, արխիվային մի փաստաթղթում կարդում ենք Արցախի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի՝ Սինոդին ներկայացված տեղեկագիրը, որտեղ ասված է, որ Հադրութի հասարակությունը 1885թ. խնդրագիր է ներկայացրել էջմիածնի կաթողիկոսին՝ օրիորդաց ուսումնարան բացելու թույլտվություն ստանալու մասին: Ըստ կաթողիկոսի հրամանի՝ ուսումարանը բացվում է և կոչվում Ս.Մարիամյան օրիորդաց ուսումնարան: Այդ նույն օրինակին են հետևում Կարկաժան, Խանաձախ, Նենգի և մի քանի գյուղեր:[38] Հիշյալ շրջանում բավականին առաջադիմություն էր նկատվում Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցում: Այն ուներ 5 դասարան, 182 աշակերտուհի, 11 ուսուցիչ և 2 վարժուհի: Լավ վիճակում էր նաև Նուխի քաղաքի իգական դպրոցը, որն ուներ 2 դասարան, 82 աշակերտուհի և 2 վարժուհի: Մնացած ուսուցիչների թվի մասին արխիվային փաստաթղթերում վկայություն չկա, սակայն նշվում է, որ այդտեղ դասավանդում են նաև ազգային հոգևոր դպրոցի ուսուցիչներ: Իգական դպրոցի ղեկավարման և պահպանման գործը կատարվում էր՝ մի կողմից ժողովրդի ընտրած հոգաբարձուների (տնտեսական ղեկավարություն), մյուս կողմից ժամանակի ընդհանուր կենտրոնի՝ էջմիածնի ուսումնական խորհրդի միջոցով: Թեև իգական դպրոցներում իշխում էր կրոնա-բարոյական ուղղությունը, այնուամենայնիվ, անցյալի համեմատությամբ այս շրջանում նոր բացվող իգական դպրոցները մեծ առավելություններ ունեին ուսման բովանդակությամբ:

Մանկավարժական գրականության մեջ 1860-1884թթ. միջև ընկած ժամանակաշրջանը հայ իրականության մեջ համարվում է իգական դպրոցների զարթոնքի շրջան: Սակայն 1884թ. հետո ցարիզմի ազգահալած քաղաքականության հետևանքով կանանց կրթական գործը նույնպես ընդհատվեց: Միայն 1886թ. Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի կողմից դպրոցների վերաբացման մասին հրաման արձակվելուց հետո Ղարաբաղի թեմում սկսեցին վերաբացվել իգական դպրոցներ: Ըստ Սինոդի վիճակագրական տվյալների՝ 1886-90-ական թվականներին Շուշիի և Նուխիի գավառներում կային 4 երկսեռ դպրոցներ, որտեղ սովորում էր 113 աշակերտ-աշակերտուհի: Նկատելի չափով աճեց նաև Շուշիի և Նուխիի օրիորդաց երկդասյա դպրոցների աշակերտների թվաքանակը՝ հասնելով 340-ի:

Մինչև 1889թ. Շուշիի օրիորդաց դպրոցը գործում էր թեմական դպրոցին կից, և երկու դպրոցն էլ կառավարում էր մեկ հոգաբարձություն: Նույն թվականին վեհափառ կաթողիկոսի կամքով Մարիամյան օրիորդաց դպրոցն անջատվում է թեմականից: Գոյություն ունեցող կանոնների համաձայն՝ օրիորդաց դպրոցի համար ընտրվում է առանձին վարչական մարմին:

Դարի 90-ական թվականների կեսերին Արցախի թեմում ավելանում է իգական դպրոցների թիվը: Ըստ պաշտոնական տվյալների՝ իգական երկսեռ դպրոցներ են բացվում Շուշիում, Սարուշեն, Վարազաբույն, Հադրութ և այլ գյուղերում: Այդ դպրոցներում սովորող աշակերտների թիվը հասնում էր 200-ի, ուսուցիչներինը՝ 6-ի:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանն իր «Աղվանից երկիրը և դրացիք» աշ-

37. «Գործ», 1882, թ.1, էջ 89:
38. ՀՀԱԱ, ֆ.56, ց.3, գ.128, թ.1-19:

խատության մեջ գրում էր, որ 1893թ. Նուխիի գավառում գործում էին 2 երկսեռ երկդասյա դպրոցներ: Ըստ նրա, երկսեռ դպրոցներում սովորում էր 178 աշակերտ, իսկ Ս.Մարիամյան օրիորդաց երկդասյա ուսումնարանում սովորում էր 112 օրիորդ, դասավանդող ուսուցիչների թիվը հասնում էր 5-ի, որից մեկն էլ վարժուհի էր: Այդ ուսուցիչները դասավանդում էին նաև երկսեռ դպրոցներում:[39] Վեհափառ կաթողիկոսի կոնդակով նոր դպրոցներ են բացվում Վարդաշեն, Նիժ, Բեկլարիստ և այլ գյուղերում:

Վերոնշյալ փաստագրական նյութերի վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ քննարկվող ժամանակաշրջանում Արցախում կանանց կրթությունը զգալի հաջողությունների հասավ:

Իգական դպրոցների ստեղծման գործում խոշոր ավանդ մուծեցին Պ.Շանշյանը, Պ.Պռոշյանը, Մարիամ Հախումյանը, Ս. Հախումյանը, Հ.Առաքելյանը, Եկ. Բահաթրյանը և շատ ուրիշներ: Վահե Երկանյանը «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում» աշխատության մեջ գրում է, որ առաջին իգական կանոնավոր ու հարատևած դպրոցի հիմնադրման պատիվը պատկանում է Շուշիին: 1864թ. այստեղ աշխատում էր դպրոցական գործիչների մի եռանդուն խումբ՝ Պ.Շանշյան, Պ.Պռոշյան, Մարիամ Հախումյան, Գարեգին (Մելիքսեթբեկ) Մուրադյան, Համբարձում Հախումյան և ուրիշներ: Հետագա տարիներին՝ հայ մշակույթի ականավոր գործիչների եռանդուն գործունեության շնորհիվ, կանանց կրթությունը զգալի առաջադիմության է հասնում:[40]

Մեր ուսումնասիրության բնույթից ելնելով՝ նպատակահարմար գտանք համառոտակի ներկայացնել նաև Արցախի դպրոցների բացման ու պահպանման հետ կապված **<u>նյութական բազան:</u>**

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայկական դպրոցների բացման ու պահպանման հետ կապված ամենածանրն ու դժվարինը նյութական-դրամական միջոցների խնդիրն էր: Նյութական անապահովությունը եղել է հայ դպրոցի մշտական ուղեկիցը, շատ հաճախ պատճառ դառնալով, որ հազիվ ծնունդ առած՝ նորաբաց դպրոցը դադարեցնի իր գոյությունը:

XIX դարի երկրորդ կեսին հայկական դպրոցների շուրջը ծավալված լուսավորչական շարժումը ոչ միայն նախանձախնդիր եղավ բարձրացնելու դպրոցական գործը, այլև մտահոգվելու դպրոցի համար նյութական միջոցներ հայթայթելու հարցով: Ազգային դպրոցների պահպանման և բեղմնավոր գործունեության վճռական պայմաններից մեկը Մ.Նալբանդյանը համարում էր դպրոցի նյութական միջոցների ապահովումը: Նա գտնում էր, որ ազգի արծաթը պիտի ներդրվի դպրոցների և ոչ թե եկեղեցիների ու վանքերի վերակառուցման գործում: «Հյուսիսափայլ»-ը գրում է. «Թող աշխատեն դպրոց շինել, աշակերտ ուսուցանել, ազգ լուսավորել»:[41] «Հյուսիսափայլ»-ը լավ էր հասկանում, որ ժողովրդական կրթության բարելավումն ամենից առաջ կախված է որոշակի նյութական միջոցներից, և այդ միջոցները պետք է ստեղծի ինքը՝ ժողովուրդը: Այդ մասին Ստ.Նազարյանցը գրում է. «Հայերը կարոտ են մի այնպիսի կրթության, որ յուրյանց միջից, արմատից դեպի վեր և ազգային հիմքից գոյանար ու հառաջ գնար և այս գործը պարտական է կատարել հայոց ազգը ամենևին ինքնիշխան, յուրահատուկ ձեռքի

39. Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, Աղվանից երկիրը և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 260:
40. Վ.Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, էջ 51-52:
41. «Հյուսիսափայլ», 1859, թ.8, էջ 675:

վաստակով, առանց նյութական օգնություն խնդրելու տերությունից»:[42]

1882թ. օգոստոսի 23-ին Թիֆլիսում գումարված հայոց ուսուցիչների ընդհանուր ժողովն արձանագրում էր, որ դպրոցների նյութական միջոցների սղությունը, նրանց կողմից ուսումնական վարչության իրավասության սահմանի ճիշտ որոշումը և լուսավորիչների պակասությունն այն գլխավոր խնդիրներ են, որոնց վրա անհրաժեշտ է ամենախորին ուշադրություն դարձնել:

Պետք է ասել, որ ստեղծման պայմաններում հայ դպրոցը դեռևս չուներ իր գոյության համար մի հիմնական տնտեսական աղբյուր: Վատ էր հատկապես գյուղական դպրոցների տնտեսական վիճակը «Գյուղերից եկեղեցիք,- ասված է այդ կանոնադրության մեջ,- եթե ունեին սեպհական դրամ, նոցա տոկոսիքեն մասնավոր թոշակ յատկացնեն յուրյանց դպրոցներուն, և երբ ոչ չեն բավեր նոքա, դրամագլխեն մի մասը ծախս անեն, գյուղական ազգային մանկունքը բոլորովին տգիտության մեջ չթողնելու համար»:[43] Ըստ կանոնադրության՝ եկեղեցական-ծխական դպրոցների միջոցները կազմվելու էին աշակերտների ուսման վարձից, կամավոր ժողովրդական նվիրատվություններից և եկեղեցու ունեցած դրամագլխի տոկոսներից: Անշուշտ, կանոնադրության մեջ դպրոցների նյութական միջոցների հարցն անորոշ վիճակում էր թողնված, փաստորեն դա լրիվ կախված էր պատահականություններից: Եթե եկեղեցին միջոցներ չունենար կամ նվիրատվություններ չլինեին, ապա դպրոցը կկանգներ կործանման առաջ:

Ցարական կառավարությունը ոչ միայն չէր ջանում որևէ նյութական օգնություն ցույց տալ հայկական դպրոցներին, այլև ամեն կերպ աշխատում էր դժվարություններ ստեղծել՝ սկսած աշխարհական ծագում ունեցող երեխաներին հոգևոր-եկեղեցական դպրոցներում չսովորելն արգելելուց, վերջացրած հայ եկեղեցական կալվածքների բռնագրավմամբ: Չնայած դրան, ժողովուրդը միջոցներ էր ձեռնարկում հոգալու դպրոցի նյութական միջոցները: Ինչպես Անդրկովկասի հայաբնակ, այնպես էլ Արցախի գյուղերում ու քաղաքներում հասարակական վճիռներ են կայացվում, որոշում դպրոցի պահպանման համար նյութական միջոցներ հանգանակել: Շատ հաճախ վճիռներ են կայացվում հասարակության և եկեղեցու միացյալ ջանքերով կառուցել դպրոցական շինությունը, որոշում են նաև աշակերտների ուսման վարձի չափը: Օրինակ, այդ մասին 1870թ. «Արարատ» ամսագրի 4-րդ համարում տպված շուշեցու մի նամակում ասվում է, որ Զրաբերդ գավառի Մարաղա, Բ.Սարով, Ղարաչինար, Չայլու, Կուսապատ, Վերի շեն և այլ գյուղեր հանգանակել են 890 ռուբլի և տրամադրել դպրոցներին: Ամսագրի 1871թ. համարում Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Մաղաքյա Պլուզյանը գրում է, որ գավառի հասարակայնությունը հանգանակել է 550 ռուբլի և մի մասը նվիրել հայոց հոգևոր դպրոցին, իսկ մյուս մասը՝ Գանձասարի վանքի դպրոցին: Այդ նույն շրջանում Շուշիի հասարակայնությունը հագանակում է ևս 500 ռուբլի և հանձնում թեմական դպրոցին: Արխիվային մի փաստաթղթում կարդում ենք 1871թ. փետրվարի 28-ի Սինոդին ներկայացված Արցախի կոնսիստորիայի կառավարիչ Սարգիս արքեպիսկոպոսի այն գրությունը, որտեղ ասված է, որ Զրաբերդ գավառի բնակիչ Գրիգոր Ունանյանցը 530 ռուբլի է տվել Շուշիի հոգևոր կոնսիստորիային՝ դպրոցի համար ծախսելու:[44]

«Մեղու Հայաստանի» թերթը հետաքրքիր փաստ է բերում իր 1859թ. հունվա-

---

42. Նույն տեղում:
43. Հայ մանկավարժներ, գիրք Ա, էջ 197:
44. «Արարատ», 1868, թ.2, էջ 26: Նաև տե՛ս ՀՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.69, թ.35:

րի 31-ի համարում: Թերթն իր ընթերցողներին պատմում է, որ շուշեցի Գևորգ Աբրահամյանը նույն տարվա օգոստոսի 15-ին սեփական ծախքով գալիս է Ամարաս, զրուցում դասատուների հետ, իմանում դպրոցի պակասությունների մասին և իր դրամական միջոցներով վերանորոգում, կահավորում վանքի հյուսիսային կողմի չորս դասասենյակներն ու գրասենյակը: Նա վանքի հանրակացարանի համար մահճակալներ է ձեռք բերում, կառուցում սեղանատուն, դպրոցին նվիրում մեծ քանակությամբ թուղթ, գրենական պիտույքներ, թերթեր և հանդեսներ: Շուշիի գավառի դպրոցների տնտեսական մասը կառավարում էր թեմական դպրոցի հոգաբարձությունը, իսկ Նուխիի գավառինը՝ տեղի փոխնորդը: Հոգաբարձությունն էր կարգ ու կանոն սահմանում, ինչպես ուսումնական, այնպես էլ տնտեսական գործերում: Լեոն գրում է. «Ամեն տարի հոգաբարձությունը կամ նրա ներկայացուցիչը աղքատության ցուպը ձեռքին շրջել է քաղաքե-քաղաք, դռնե-դուռ և մուրալով մի կերպ պահպանել է թեմական դպրոցի գոյությունը, հետևանքն էլ կրթական դաստիարակչական տեսակետից մխիթարական չէր կարող լինել և չէր, որովհետև մեծապես նյութական պատճառով դպրոցը զրկված է եղել կարող ուժերից, ստեղծագործ ու դաստիարակության գործին նվիրված, ուստի և անկարող է եղել կանգնել յուր բարձր կոչման վրա և տալ հասարակության, ազգին և եկեղեցուն ավելի պատրաստի և պիտանի անդամներ»:[45]

1869թ. Գևորգ կաթողիկոսի կողմից հաստատված թեմական դպրոցների կանոնադրությունից հետո անհամեմատ ավելացան Շուշիի թեմական դպրոցի նյութական միջոցները: Նախ նշենք, որ 1838թ. կազմված նախահաշվով սեմինարիայի համար նշանակված էր ծախս 1860 ռուբլի, իսկ Նուխիի հոգևոր ուսումնարանի համար՝ 920 ռուբլի: Սեմինարիայի նյութական միջոցների սակավության պատճառով ուսուցիչների մի մասը ծառայում էր ձրիաբար:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Շուշիի թեմական դպրոցի 1841-1847թթ. հաշիվը հասնում էր 3970 ռուբլու, տարեկան միջինը կազմում էր 400-500 ռուբլի: Վերոհիշյալ կանոնադրությամբ թեմական դպրոցի նյութական միջոցները գոյանալու էին թեմի եկեղեցական կալվածքների եկամուտներից, կամավոր նվիրատվություններից և ունևոր ծնողներից գանձվող ուսման վարձից:

1860-1865թթ. թեմական դպրոցի նյութական միջոցներից էին մոմավաճառությունը, աշակերտների ծնողներից և Շուշի քաղաքի պսակներից ստացված նվերները, ամեն մի տնից ստացված 20-ական կոպեկ, սրբադրած քահանաներից ստացված մեկական ռուբլի դրամը, զանազան գրքերի վաճառքից, վանքերի կալվածքներից ստացված դրամական միջոցները, հոգևորականներից ստացված տուգադրամները և դրամական այլ աղբյուրներ:

Շանշյանի տեսչության ժամանակ համեմատաբար աճեց թեմական դպրոցի եկամուտը՝ կազմելով 5116 ռուբլի: Հասարակայնությունը մեծ ոգևորությամբ էր նվիրված լուսավորչական գործին: Շատերն էին աջակցում դպրոցին, գործում նրա առաջադիմության համար՝ թե՛ նյութապես և թե՛ բարոյապես: Օրինակ, այդ ժամանակ մեծ համբավ ունեցող նկարիչ Ներսես Ներսեսյանցը (Խանքենդցի) գալիս է Շուշի, ձրիաբար աշակերտներին ուսուցանում նկարչություն, գծագրություն և տալիս նաև ձեռագործության օրինակներ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում երբեմն պատահել է, որ դպրոցը չնչին գումարներով է պահպանվել, հոգաբարձությունը ստիպված է եղել ժամանակի

45. Մանրամասն տե՛ս Լեո, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, Շուշի, 1914:

ընթացքում աշակերտների ուսման վարձն ավելացել՝ սկզբում 6 ռուբլի, հետո՝ 10 ռուբլի, ապա՝ 12 ռուբլի, 20 ռուբլի (դպրոցում չքավորների թիվը կազմում էր աշակերտների 30-40 տոկոսը):[46] Չնայած այդ միջոցներին, շատ դպրոցներ շարունակում էին մնալ նյութական ծանր վիճակում: Խղճուկ վիճակում էր գտնվում նույնիսկ Ս.Մարիամյան օրիորդաց դպրոցը: Այդ մասին «Մեղու Հայաստանի» թերթը գրում է. «Դրամական հաշիվները, որ ամենայն մանրամասնությամբ զեկուցեց տիկին Հախումյանը ժողովին, ցույց է տալիս, որ նորափնջիկ դպրոցն ուներ արդյունք առայժմ երեք տեսակ աղբյուրից՝ հոգաբարձութեան տարեկան տուրքերից, որդեգրուհեաց թոշակից և բարերարաց նուիրատությունից: Առաջին տարուա ընթացքում դպրոցն ունեցել էր մուտք՝ 757 ռուբլի, ծախս՝ 412 ռուբլի: Միայն վերակացուհին և կարի վարժուհին էին ռոճիկ ստացել, մնացած ուսուցիչները ձրի էին դասեր տուել»:[47]

Արցախի հայկական դպրոցների պահպանման կարևոր աղբյուրներից մեկը մասնավոր նվիրատվություններն էին, որոնք կատարվում էին ամենաբազմազան առիթներով ու ձևերով: Ավելորդ չենք համարում բերել կամավոր նվիրատվությունների մի քանի օրինակ: «Նոր դար»-ը գրում է. «Շուշեցի հայ վաճառական պարոն Դավիթ Խանդամիրյանը մեռնելիս իր դիզած հարստությունից 10000 ռուբլի կտակեց հիմնավոր թեմին՝ Ղազանչոց թերի մնացած եկեղեցուն 300 ռուբլի, տղայոց ուսումնարանին 1000ռ. և մնացած գումարները այլ աղքատանց ընտանիքներին տվեց»:[48] Այդ նույն եկեղեցուն կից դպրոցին 1872թ. շուշեցի Պողոս Ալեքսանյանն իր թողած կտակով հատկացրել է 1000ռ.: Նման բարերար գործ է կատարում նաև շուշեցի պարոնուհի Ղարաբեկյանցը, իր հանգուցյալ ամուսնու հիշատակի առթիվ 100ռ. նվիրում է օրիորդաց դպրոցին, 100ռ. հայոց բարեգործական ընկերության Շուշիի բաժանմունքին: «Մշակ»-ը գրում է դրվատանքով, որ Հ.Ժամհարյանը, ցանկանալով հարգել իր եղբոր հիշատակը, 600 ռուբլի նվիրում է թեմական դպրոցին, այդ փողի տոկոսով ուսուցանում երկու չքավոր աշակերտների: Այս բարերար գործին ձեռնամուխ է լինում նաև Նուխիի հասարակայնությունը: Օրինակ, նուխեցի Դավիթ Ախվերդյանը, որն ապրում էր Բաքվում, 300ռ. է նվիրում գավառի Ճալեթ գյուղի հասարակայնությանը՝ բարեկարգելու տեղի Ս.Աստվածածնյա վանքի ուսումնարանը: «Նոր դար»-ը գովեստով է խոսում պարոն Նազարյանի և Խոջամիրյանի մասին, որոնք հանգանակում են 150ռ. և նվիրում Նուխիի օրիորդաց դպրոցին:[49] 1869թ. թիվ 3-ում «Արարատ» ամսագիրը գրում է, որ Ղարաբաղի ազնվական պարոն Պողոս Մելիք Ղարագյոզյանը Երևանից Շուշիի օրիորդաց դպրոցին նվիրել է 200ռ. և այլն:[50]

Ուշադրության է արժանի այն փաստը, որ գյուղական վայրերում նույնպես հանգանակություն էին կատարում և հավաքված գումարները հատկացնում դպրոցին: Օրինակ, ըստ արխիվային տվյալների՝ 1883-1884թթ. Ջրաբերդ գավառի Կուսապատի հասարակայնությունը հանգանակում է 6000ռ. և սկսում դպրոցական շենքի կառուցումը: Այդ նախաձեռնությունն արձագանք է գտնում այլ գյուղերում, ինչպես և Նուխիի գավառում: Այդ մասին «Արարատ» ամսագիրը գրել է, որ Խուշկաշեն գյուղի բնակիչները, մտահոգված իրենց երեխաներին ուսուցա-

46. Մատենադարան, Կաթ.դիվ. թ. 116, վավ. 863:
47. «Մեղու Հայաստանի», 1865, թ. 17:
48. «Նոր դար», 1887, թ.28:
49. «Մշակ», 1872, թ.4:
50. Նույն տեղում:

նելու հարցով, հանգանակում են որոշ գումար և իրենց ջանքերով կառուցում դպրոցի մի փոքրիկ շենք: Կալվածատեր Հայրապետը ևս նյութական օգնություն է ցույց տալիս, 60 սայլ փայտ է բերել կիր պատրաստելու համար, օգնում է շինությանը հարկավոր այլ նյութերով:

Հայկական դպրոցների պահպանման մյուս կարևոր աղբյուրներից մեկը բարեգործական ընկերությունների կողմից ցույց տրված նվիրատվություններն էին: Արձագանքելով ժողովրդին լուսավորելու պահանջներին, հայ հասարակայնությունը ձեռնամուխ եղավ գործնական աշխատանքի. մեկը մյուսի հետևից ստեղծվեցին զանազան խմբակներ, միություններ, ընկերություններ, որոնք իրենց հիմնական անելիքներից էին համարում նաև նորաբաց դպրոցների նյութական օգնության ցուցաբերումը: Դեռևս Ստ.Նազարյանցը «Հյուսիսափայլ»-ում առաջարկեց Ռուսաստանում ստեղծել մի «Ընդհանուր հայկական ընկերություն», որի առաջնահերթ խնդիրը լիներ չքավոր հայերի զավակներին կրթություն տալը և նրանց օգնելը կյանքում տեղ գրավելու: «Մեր ցանկությունն է,- ասում է Նազարյանցը,- որ կարողանանք ժողովրդին մոտեցնել փոքր ինչ դպրության հետ, նյութ և սնունդ դնել հայկական չոր ու ցամաք դպրության մեջ և ինչպես մի կողմից լեզուն, մյուս կողմից և նույն ինչքան դպրության հոգին ու ուղղությունը որքան կարելի է շինեն ժողովրդական, ազատելով աբեղայականությունից, որի մեջ մնացած է այժմ անտեր անտերուչ»:[51] Իհարկե, պայմանները հնարավորություն չտվեցին ստեղծելու նման ընդհանուր ընկերություն, սակայն որոշ տեղերում ստեղծվեցին ավելի նեղ ընդգրկումով ընկերություններ, որոնք և հիմնականում ստանձնեցին «Հյուսիսափայլ»-ի առաջարկած դերը: Առաջինն արձագանքեցին նոր-նախիջևանցիները, որոնք 1860թ. հիմնեցին Հայոց բարեգործական ընկերություն, որի կանոնադրությունը հաստատվեց 1868թ.: Այնուհետև՝ «Հյուսիսափայլ»-ին արձագանքող հայաշատ կենտրոն Բաքվում 1864թ. կառավարության կողմից հաստատվում է համարժեք ընկերության կանոնադրությունը և սկսվում է նրա պաշտոնական գործունեությունը: 1879թ. մարդասիրական ընկերություն է ստեղծվում նաև Նոր Բայազետում: 1881թ. հունիսի 8-ին Թիֆլիսում փոխարքայի պաշտոնակատար Լորիս Մելիքովը հաստատեց մի կանոնադրություն, որը կոչվեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերության կանոնադրություն»: Այն հրապարակվեց “Кавказ” լրագրի պաշտոնական բաժնում՝ նույն թվականի հոկտեմբերի 16-ին: Համեմատաբար ավելի լայն էին այս բարեգործական ընկերության գործունեության շրջանակները: Ըստ կանոնադրության՝ բարեգործական ընկերությանը իրավունք էր վերապահվում ունենալու տեղական մասնաճյուղեր: Այսպես, կարճ ժամանակում մասնաճյուղեր բացվեցին Երևանում (1882-1899), Քարվանսարայում (1882-1883), Ախալցխայում (1884-1894), Գորիսում (1884-1889), Նախիջևանում (1885-1889), Բաթումիում (1889-1898), Կարսում (1889-1899), Նուխիում (1890-1891), Շուշիում (1881-1899) և հայաշատ այլ վայրերում: Շուշիի ընկերության ճյուղի իսկական գործունեությունն սկսվում է 1882թ.: Այդ ժամանակ Շուշիի մասնաճյուղի վարչության նախագահն էր պատմաբան Լեոն, որը միաժամանակ գանձապահն էր ու քարտուղարը: Նրա հոգաբարձության շրջանում թեմական դպրոցի եկամուտը 8000 ռուբլուց հասնում է 17000-ի:[52] Շուշվա ճյուղի առաջին տարվա նախահաշիվն էր 1148 ռուբլի 65 կոպ. (մուտք), որից

51. Ե.Շահազիզ, Դիվան. Միքայել Նալբանդյանի, Երևան, 1932, էջ 7:
52. Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, էջ 205:

500 ռուբլի նվիրել էր շուշեցի Մարկոս Դոլուխանյանը: Վարչությունը նախագծում է Շուշիում բացել գրադարան-ընթերցարան: Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգապետը 1886թ. հունիսին գրադարան-ընթերցարան հիմնելու իրավունք է տալիս վարչությանը, մշակվում են կանոններ ու ներկայացվում խորհրդի հաստատմանը: Գրադարանը բացվում է 1889թ. մարտին: Նույն թվականի հունվարի 1-ին գրադարանն ուներ 4917 անուն գիրք՝ 6793 ռուբլու արժողությամբ: Ընկերության անդամների թիվը տարեցտարի ավելացավ՝ հասնելով 160-ի: Աճեցին նաև վարչության եկամուտները: Օրինակ, 1889թ. մուտք է եղել 2090 ռուբլի, իսկ 1899թ.՝ 2500 ռուբլի: Վարչության խորհրդի տարեկան տեղեկագրի մեջ կարդում ենք, որ այդ գումարները ծախսվում են գրադարանի, տառապյալների և չքավոր աշակերտներին նպաստելու համար: Տեղեկագրի մեջ նշվում է, որ 1893թ. Շուշվա մի խումբ երիտասարդներ իրենց ժողոված փողերի մի մասը նվիրում են գրադարանին, իսկ մյուս մասը հանձնում վարչությանը՝ գրքեր հրատարակելու համար:[53] Ինչպես արդեն նշել ենք, որ 1897թ. Շուշիում մի խումբ երիտասարդներ Խանդամիրյանի թատերական դահլիճում ներկայացում են տալիս (Ժորդ Օնեի «Դարբնապետ» կատակերգությունը) և հավաքած 300 ռուբլին բարեգործական նպատակով նվիրում վարչությանը:[54] Այդ շրջանում Նուխիում գործող ընկերությունը կոչվում էր «Ուսումնասիրական ընկերություն Նուխի քաղաքի յանուն սրբույն Եղիշեի առաքելույն Աղուանից»: Այդ ընկերությունը հիմնվել է դեռևս 1878թ., որի կանոնադրությունը հաստատել է Գևորգ կաթողիկոսը 1880թ.: «Ուսումնասիրական ընկերությունը» 1882թ. հուլիսին դիմում է Կովկասի բարեգործական ընկերության խորհրդին, հայտնում, որ ունի ընկերության 25 անդամներ, առձեռն 1126 ռուբլի և ցանկություն է հայտնում միանալ բարեգործական ընկերությանը, կազմել Նուխիի մասնաճյուղ:

Ընկերության միջոցներով 1893թ. հունիսի 23-ին Նուխիում բացվում է գրադարան: 1899թ. գրադարանն ուներ 972 անուն հայերեն և 590 անուն ռուսերեն գրքեր՝ 232[55] ռուբլու արժողությամբ: Գրադարանը ստանում էր 20 անուն պարբերական հրատարակություններ՝ «Մշակ», «Արծագանք», «Նոր դար», «Հանդես ամենօրյա», «Մուրճ», «Աղբյուր», «Տարազ», «Արարատ», “Кавказ”, “Русская мысль”, “Новая время”, “Вестник Европы” և այլն:

Վերոհիշյալ ընկերությունը միաժամանակ վարում էր ընդհանուր բարեգործություն՝ աջակցություն էր ցույց տալիս սովյալներին, հիվանդներին, աղետյալներին, հետագայում՝ նաև հայ գաղթականներին: Օրինակ, ընկերության Նուխիի մասնաճյուղը հայ գաղթականներին տվել է 400 ռուբլի նպաստ: Ուսումնասիրական ընկերությունը 1150 ռուբլի նպաստ է տալիս Նուխիի գավառի Վարդաշեն, Ամրավան, Բեկլարիստ, Սուլթան-Նուխոյ դպրոցներին:[56] Վերջինս նաև Բաքվի մարդասիրական ընկերությունից ստանում է տարեկան 200 ռուբլի: Այդ ժամանակ մի խումբ հայ ուսանողներ ամառվա արձակուրդներին Նուխի քաղաքում մի քանի անգամ բարեգործական նպատակով ներկայացումներ են տալիս և հավաքում 675 ռուբլի, հանձնում տեղի օրիորդաց դպրոցին: XIX դարի 60-ական թվականների կեսերից սկսած՝ հայ դպրոցի համար ստեղծվում են խիստ անբարենպաստ պայմաններ: Ցարական իշխանությունների հակահայկական քաղաքա-

53. Լեոն Բաբայան, Լեո, Թիֆլիս, 1908, էջ 10:
54. «Տեղեկագիր», 1894, էջ 77:
55. «Մշակ», 1897, թ.15:
56. «Մուրճ», 1890, թ.2, էջ 305:

կանությունը, ուսումնական վարչության ամենօրյա միտումնավոր ստուգումները հուսալքություն առաջ բերեցին կրթական գործիչների շրջանում: Դրան զուգահեռ՝ առանց այն էլ աղքատության ճիրաններում գտնվող դպրոցն է՛լ ավելի էր խրվում նյութական կարիքների մեջ: Եթե մինչև 80-ական թվականների կեսերը յուրաքանչյուր դպրոցի վրա ծախսվում էր միջինը 1400 ռուբլի, ապա 80-ական թվականներին այդ գումարը մեծ չափով պակասեց: Է՛լ ավելի է իջնում աշակերտներին հասնող ծախսի գումարը. այն կազմում էր 18 ռուբլի՝ նախկին 26 ռուբլու փոխարեն: Ուսուցչի միջին վարձատրությունը տարեկան 300 ռուբլի էր կազմում:

Այն աղբյուրները, որոնցից գումարներ էին ստանում ծխական դպրոցները, 90-ական թվականներին աստիճանաբար ցամաքում էին, և դպրոցները մնում էին աշակերտներից ստացված ուսման վարձերի և մասամբ էլ գյուղացիության օժանդակության հաշվին: Աշակերտների տարեկան ուսման վարձը հասնում էր 10 ռուբլու: Հոգաբարձությունը տարեկան մուտքն ավելացնելու համար ուշադրություն է դարձնում նաև աշակերտական ուսման վարձի վրա: Նաև նշենք, որ աշակերտների ուսման վարձերը լինում էին մի քանի կարգի՝ լիաթոշակ 12ռ., կիսաթոշակ 6ռ., քառաթոշակ՝ 3ռ. և ձրիավարձ: Աշակերտության ամբողջ թվի 30-35 տոկոսը ձրիավարձ էր: Շատերը դպրոցից ձրի գրենական պիտույքներ էին ստանում: 1886թ. Շուշիի օրիորդաց դպրոցի 268 աշակերտից 92-ը ձրիավարձ էր, իսկ Նուխի քաղաքի երկսեռ դպրոցում ձրիավարձ էր 25 հոգի: 1889-1890 ուսումնական տարվա ընթացքում թեմական դպրոցի 274 աշակերտից ձրիավարձ էր 69-ը: Այդ նույն շրջանում թեմական դպրոցի տարեկան եկամուտը կազմում էր 17-18 հազար ռուբլի:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ չնայած ցարական կառավարության հետադիմական քաղաքականությանը և չնայած որ պետությունը ոչ մի կոպեկ նպաստ չէր տրամադրում ազգային դպրոցներին, այնուամենայնիվ հայ ժողովուրդը, նրա առաջավոր մտավորականությունը հոգ էին տանում լուսավորչական գործի առաջընթացի, տարբեր տիպի դպրոցների նյութական վիճակի հնարավորինս բարելավման համար:

3. Լուսավորչական շարժումը և կրթական գործի առաջադրած խնդիրները

XIX դարի երկրորդ կեսին հայ ժողովուրդը սոցիալ-տնտեսական ու քաղաքական հանգամանքների բերումով կրում էր ժամանակի ազդեցությունն ու արծարծում ժամանակի խնդիրները: Հասարակության գիտակից մասը՝ հատկապես մտավորականությունը, խթանում էր հայ մշակույթի ամենատարբեր բնագավառների զարգացումը՝ նպաստելով ազգի հոգևոր համախմբման գործընթացին:

Հայ ժողովրդի ազգային զարթոնքը բնութագրվում էր լուսավորչական շարժմամբ: Հաճախ անջատ լինելով ժողովրդի բուն զանգվածից՝ հայ առաջադեմ մտավորականները, լուսավորիչները զգում էին, որ առաջին հերթին պետք է լուսավորել հենց այդ զանգվածը, բոցավառել ու մղել նրան ազգային ինքնագիտակցության: Դարի երկրորդ կեսն ազգային դպրոցի գաղափարական հիմքերի ձևավորման ու նախապատրաստման մի շրջան էր, որոնումների շրջան, երբ ազգանվեր հայ գործիչները հող էին նախապատրաստում ազգային լուսավորության համար:

Առաջնակարգ տեղ հատկացնելով ազգային դպրոցին, լուսավորչական շարժումը գտնում էր, որ այն երեխային պետք է դաստիարակի վառ հայրենասիրության ոգով, ժողովրդի հերոսական անցյալից վերցված ոգևորիչ օրինակներով: Դեռևս դարի առաջին կեսին այդ ուղին էր բռնել հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խ.Աբովյանը, նրա ամեն մի խոսքը տոգորված էր բոցավառ սիրով առ հայրենիքը, նրա բնությունն ու պատմական սխրալի իրադարձությունները: Լուսավորիչների խոր համոզմամբ չէր կարելի ճշմարիտ հայրենասեր լինել առանց ժողովրդի պատմությունն իմանալու, առանց նրա լեզուն, գրականությունն ու արվեստը ճանաչելու, առանց այդ ամենի նկատմամբ ազգային հպարտությամբ ներշնչվելու: Ձգալով, թե պետական նյութական օժանդակությունը որպես փոխհատուցում ինչպիսի պայմաններ կարող էր առաջադրել, Ստ.Նազարյանցը գրում էր. «Հայերը կարոտ են մի այնպիսի կրթության, որ յուրյանց միջից, արմատից դեպի ի վեր և ազգային հիմքից գոյանար ու հառաջ գնար. հայագործը պարտական է կատարել Հայոց ազգը ամենևին ինքնիշխան, յուր հատուկ ձեռքի վաստակով, առանց նյութական օգնություն խնդրելու տերությունից»:[1]

Ազգային լուսավորության քարոզիչները մեծ նշանակություն էին տալիս նաև կնոջ կրթությանն ու նրան հասարակական ակտիվ գործունեության մղելուն: Նրանք իրավացիորեն ելնում էին այն հանգամանքից, որ կինն ավելի շատ է շփվում երեխաների հետ և դրա համար էլ նրա ազդեցությունը մեծ է ընտանեկան դաստիարակության մեջ:

Հայ լուսավորիչները պայքար ծավալեցին դպրոցը ժողովրդականացնելու, նրանում պատշաճ կարգ ու կանոն հաստատելու, մարմնական պատիժը վերացնելու, մանկավարժական նոր մեթոդներ կիրառելու, աշակերտներին գործնական գիտելիքներ տալու՝ նոր առարկաներ մտցնելու համար: Լինելով ժողովրդական շահերի ջերմ պաշտպաններ, լուսավորիչները ջանում էին, որ առաջին հերթին կրթություն ստանան հասարակ ժողովրդի զավակները, որ դպրոցն անցնի բանիմաց աշխարհականների ձեռքը: Դպրոցի ժողովրդայնության հարցն ամենից ավելի ուժեղ էին հիշեցնում Ստ.Նազարյանցը, Ս.Շահազիզը, Մ.Նալբանդյանը: Վերջինս ավելի արմատական էր դնում «հասարակ ժողովրդի» շահերից դպրո-

1. Հայոց ազգի ուսումնատվությունը, ուսումնարանները և ուսուցիչները, Ս.Պետերբուրգ, 1865, էջ 82-83:

ցին մոտենալու հարցը, այդ «հասարակին» համարելով ազգության մեքենայի «առանցքը, լծակը և հաստարանը»[2]: Նալբադյանը ժողովրդի լուսավորությունը կապում էր նրա ազատագրության հետ:

XIX դարի 50-60 ական թվականներին հայ իրականության մեջ ծավալվեց լուսավորչական շարժում՝ Անդրկովկասի հայկական հոգևոր և թեմական դպրոցների, հատկապես Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շուրջը: Դա, ըստ էության, նման էր Կ.Պոլսի ժողովրդավարական սահմանադրական շարժմանը: Սակայն, եթե Պոլսում այդ շարժումն ավելի լայն ընդգրկում ուներ, ներառում էր հայ համայնքի ողջ ներքին կյանքը, ապա Թիֆլիսում այն ծավալվեց հատկապես Ներսիսյան դպրոցի շուրջը: Ցնունդ առնելով ժամանակի առաջադրած պահանջներից՝ այդ շարժումը պսակվեց աշխարհիկ ուժերի հաղթանակով, նոր ուղի ու հեռանկարներ բացելով ազգային դպրոցի հետագա աշխարհականացման ու ժողովրդավարացման համար:

Բնութագրելով այդ ժամանակահատվածը՝ Ստ.Մալխասյանը գրում է. «Սա մի երկունքի շրջան էր, որտեղ մանկավարժական նոր սկզբունքներ, առարկաների լայն ծրագիր, իրավունքների ու պարտականությունների սահմանադրություն առաջին անգամ հանդես եկան հին դպրոցի և նորան հատուկ կարգերի տեղը բռնելու»:[3]

Թիֆլիսում ծավալվող լուսավորչական շարժումն իր բուռն արձագանքներն ունեցավ նաև Արցախում: Անշուշտ, Արցախի տնտեսական-քաղաքական և մշակութային կյանքում շրջադարձը և առաջավոր մտքի վերելքը զգալիորեն պայմանավորված էին արևելահայ հատվածում, ինչպես նաև Անդրկովկասում և, ընդհանուր առմամբ, Ռուսաստանում իրագործվող արմատական սոցիալ-քաղաքական փոփոխություններով, որոնք ուղղակի ազդեցություն ունեին նաև հայ հասարակական-քաղաքական շարժումների վրա: Սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշ առաջընթաց էր նկատվում նաև հոգևոր կյանքի ոլորտում: Նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրվում նաև ժողովրդական լուսավորության ասպարեզում: Արցախի ժողովուրդը նույնպես հաղորդակցվում և սերտորեն առնչվում էր արևելահայ հատվածում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերին:

XIX դարի 50-60-ական թվականներին Ռուսաստանում ինչպես և Անդրկովկասում ծավալվող հասարակական-քաղաքական և մանկավարժական շարժումն իր բարերար ազդեցությունն էր ունենում նաև Արցախում. այստեղ ևս սկսվում էր զարգանալ հայ դպրոցը և մանկավարժական միտքը: Լուսավորիչ գործիչների ջանքերով (Շանշյան, Պռոշյան, Մելիքսեթբեկ-Մուրադյան, Բարսեղ Տեր-Մովսիսյան և ուրիշներ) Արցախի թեմում, ինչպես նաև Նուխիում, սկսեցին բացվել արական, իգական, մեկդասյա, երկդասյա, երկսեռ դպրոցներ: Արցախում ծավալվող առաջադիմական գործիչների նախաձեռնությամբ Շուշիում 1858թ. հիմնադրված ընկերությունը («Ընթերցասիրաց ընկերություն») առաջին անգամ բացեց գրադարան-ընթերցարան: Նյութական միջոցներ ստանալով քաղաքի և գավառի հայությունից, ինչպես նաև Հայաստանի այլ վայրերում ապրող, մոսկվաբնակ շուշեցիներից, հայկական գաղթօջախներից, ընկերությունը դրանք տրամադրում էր դպրոցների վերաբացմանը, որոնք նյութական միջոցների անապահովության

2. Մ.Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 292-293:
3. Ստ.Մալխասյան, Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյա գոյության (1824-1899), Թիֆլիս, 1900, էջ 83:

պատճառով փակվել էին, ինչպես նաև չքավոր աշակերտությանը, տպագրական-հրատարակչական գործի բարելավմանը, նպաստում դասագրքերի տպագրությանն ու տարածմանը:

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատության մեջ Լեոն գրում է, որ քաղաքի գրադարան-ընթերցարանն ուներ մի ընկերության բոլոր հանգամանքները, որը կառավարման համար ամեն տարի հաճնաժողով էր ընտրում, ընկերության անդամներից (100-ից ավելի անդամներ, իսկ Նուխիում նմանատիպ ընկերության անդամների թիվը՝ 50) վճարներ էր ստանում, նաև նվիրատվություններ, այն կոչվում էր «թանգարան վերածնության», որը նմանվում էր Կ.Պոլսի 1850թ. բացված «Վերածնության թանգարան», «Եղբայրական Մեսրոպյան հիմնարկութեան»:[4]

Անդրադառնալով Շուշիում ծավալված լուսավորչական շարժման գործիչների ձեռնարկումներին, «Կռունկ հայոց աշխարհի» ամսագիրը գրում է, որ այդ գրադարան-ընթերցարանը «Ղարաբաղի մայրաքաղաքի մեջ համայնական առաջին կազմակերպությունն է»:[5] Ամսագրի մի այլ համարում լույս է տեսել մի շուշեցու նամակը հետևյալ բովանդակությամբ. «Այս ազգօգուտ ձեռնարկութեան կարգադրութիւնը 1858թ. կամավոր սրբագրութեամբ բավական դրամ (գումար) հավաքելով կազմվեց մի ընկերութիւն (1859) Շուշվա հասարակութեան համար»:[6] Այդ գործում նշանակալից գործ կատարեցին Պ.Աստվածատրյանը, Պ.Բաբայանը և Ա.Բահաթրյանը, որոնք հայերեն և ռուսերեն բազմաթիվ գրքեր նվիրեցին ընթերցարանին: Արցախի հայ հասարակությունը մեծ հոգատարությամբ նյութական միջոցներ է տրամադրում գրադարանին: Շուշի քաղաքում հաստատված գրադարանը կոչվում էր «Հասարակաց մատենադարան Շուշուց հայոց»:[7] Այսպես, կյանքի պահանջներին համընթաց, ժողովրդի մեջ ավելի է բորբոքվում հետաքրքրությունը դեպի ազգային լուսավորական գործը:

Դարի 70-80-ական թվականներին Արցախում ստեղծված իրադրությունը նոր իմաստ էր հաղորդում ծավալված լուսավորական շարժմանը, իրական հնարավորություններ տալիս ընդլայնելու ազգային դպրոցների ցանցը: Ժողովրդին լուսավորելու սուր կարիքն առաջադեմ հայ երիտասարդներին մղում էր ձեռք բերելու բարձրագույն կրթություն: Նրանք մեկնում էին Ռուսաստանի և Եվրոպայի համալսարաններ և գիտության հետ միասին տոգորվում ժամանակի առաջավոր շնչով: Վերադառնալով հայրենի երկրամաս՝ նրանք (Ա.Բահաթրյան, Մ.Ղազարյան, Պ.Շանշյան. Օ.Դովլաթյան, Ս.Մանդինյան և ուրիշներ) արմատական վերափոխումներ կատարեցին լուսավորության ու դպրոցաշինության ասպարեզում: Վերոնշյալ և այլ գործիչների ջանքերով Արցախում մեկը մյուսի հետևից հրապարակի վրա սկսեցին երևան գալ զանազան խմբակներ, միություններ, ընկերություններ, որոնք իրենց հիմնական և առաջին անելիքը համարում էին նորաբաց դպրոցներին նյութական օգնության ցուցաբերումը:

Այդ տասնամյակում Արցախում ծավալվող լուսավորական շարժումը ծնունդ տվեց մի շարք կազմակերպությունների, որոնց վիճակված է աչքի ընկնող դեր խաղալ, կրթական ասպարեզում, դրանք «Մարդասիրական», «Դպրոցասիրաց», «Թատերական», «Բարեգործական» և այլ ընկերություններն էին, որոնք, նյութա-

4. Տե՛ս, Լեո, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 11-12:
5. «Կռունկ հայոց աշխարհի», Թիֆլիս, 1860, թ.2, էջ 149:
6. Նույն տեղում, թ.3, էջ 112:
7. Նույն տեղում:

կան օգնություն ստանալով հասարակությունից, Շուշի քաղաքում, գավառի գյուղերում բացում են գրադարան-ընթերցարան, լուսավորական կրթական օջախներ:

Քննարկվող ժամանակաշրջանում երևան են գալիս նաև մի շարք այլ կազմակերպություններ, որոնք փորձ են անում զբաղվել քաղաքական հարցերով ևս՝ ժողովրդի լուսավորության խնդիրը սերտորեն կապակցելով սոցիալական և ազգային-ազատագրական շարժման հեռանկարների հետ:

Այդ տեսակետից ուշագրավ է օրինակ, Արցախի հոգևոր մշակութային կենտրոն Շուշի քաղաքը, որտեղ հասարակական նախաձեռնությունն ու ազգային խնդիրների նկատմամբ հետաքրքրությունը բավական կազմավորված ավանդույթներ ուներ: Դեռևս 50-ական թվականների վերջին այստեղ կազմակերպվեց «գրադարանային ընթերցասիրական» ընկերություն, քիչ անց երևան եկան դպրոցական գործին օգնելու, լուսավորություն տարածելու բազմաթիվ ընկերություններ: Անժխտելի փաստ է, որ Արցախում գործող ընկերությունների երակարատև գործունեությունը պայմանավորված էր հասարակության նախաձեռնողականությամբ:

XIX դարի 90-ական թվականների կեսերին՝ ցարիզմի ազգահալած քաղաքականության պայմաններում, երբ (1895-1905թթ.) փակվեցին հայկական դպրոցները, արևելահայ իրականության մեջ, ինչպես նաև Արցախում այդ ընկերությունների լուսավորչական գործունեությունն արգելվեց, և նրանք սահմանափակվեցին միայն աղքատախնամ աշխատանքներով:

Այսպիսով, XIX դարի կեսերի ազգային զարթոնքը, որն իր հետ բերել էր մի պատկառելի լուսավորչական շարժում, 70-80-ական թվականներին ընթացավ ավելի լայն ու խորացող հունով: Կյանքի բոլոր բնագավառներում սկսված աշխուժությունը մեծապես խթանեց հայ հոգևոր կյանքի տեղաշարժին: Այս շրջանում էր, որ լայնորեն սկսեցին կենսագործվել այն լուսավոր գաղափարները, որոնց համար մաքառել էին հայ ժողովրդի լավագույն զավակները: Սա մի շրջան էր (1850-1890թթ.), երբ ժողովրդին լուսավորելու քարոզն ու կոնկրետ գործն ավելի ամուր շաղկապվեցին իրար և տվեցին պայմաններին համապատասխանող ցանկալի արդյունքներ:

Վերոհիշյալ փաստերի համադրումից գալիս ենք այն եզրակացության, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում արևելահայ իրականության մեջ, ինչպես և Արցախում ծավալվող լուսավորչական շարժումը շրջադարձային նշանակություն ունեցավ մեր ազգային դպրոցի կյանքում, առաջադրեց նոր պահանջներ, նոր խնդիրներ: Լծվելով ազգային համախմբման գործին, հայ մտավորականները, անկախ իրենց քաղաքական պատկանելությունից, գիտակցեցին, որ անհնարին է ազգը միավորել ու նրա մեջ միասնության գաղափարներ տարածել առանց ժողովրդի համատարած տգիտության դեմ պայքարի, առանց գրագիտության տարածման: Եվ այդ գործիչների առաջին քայլը եղավ հնարավոր բոլոր միջոցներով լուսավորություն քարոզել: Առանց ազգային դպրոցի, առանց ազգային դաստիարակության չէր կարող լինել ազգային ինքնաճանաչողություն, որը և ժողովրդական զանգվածների մեջ պետք է ծներ ազգային համախմբման, միասնության գաղափարը:

4. Արցախի կրթական համակարգի բարեփոխումների և լուսավորության հարցերը Շուշիի պարբերական մամուլի էջերում (1874-1920թթ.)

XIX դարի երկրորդ կեսին ազգաճանաչման և ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար ծավալված լուսավորչական շարժումն իրական հնարավորություններ է տալիս հայ լուսավորչական թեմերում ընդլայնելու ազգային դպրոցների ցանցը: Գնալով ակտիվանում էր ժողովրդի հասարակական նախաձեռնողականությունը նոր դպրոցների ստեղծման ուղղությամբ: Ազգային դպրոցի նոր վերելքի շրջանում հասարակական կյանքում կարևոր տեղ էր գրավում հայ պարբերական մամուլը, որի էջերում աշխույժ բանավեճ էր ծավալվում նաև ազգային լուսավորության, ժամանակի պահանջներին համահունչ կրթական համակարգի բարեփոխումների և բազմաթիվ այլ հրատապ հարցերի շուրջ: Ինչ խոսք, դպրոցին ու մակավարժական մտքին հետաքրքրող հարցերն այս կամ այն խորությամբ միշտ էլ տեղ են գտել մեր բոլոր պարբերականների էջերում: Այդ հարցերին, ի թիվս այլ խնդիրների, անդրադարձել են Գ.Պատկանյանի «Արարատը» (1850-1859թթ.), Ստ. Նազարյանցի ու Մ.Նալբանդյանի «Հյուսիսափայլը» (1858-1884թթ.), Մ.Մսերյանի «Ճառաքաղը» (1858-1862թթ.), Ստ. Մանդինյանի «Մեղու Հայաստանին» (1858-1886թթ.), Գ.Այվազովսկու «Մասյաց Աղավնին» (1860-1864թթ.), Մ.Աղաբեկյանի «Կռունկ Հայոց աշխարհի» (1860-1863թթ.), Ռ.Պատկանյանի «Հյուսիսը» (1863-1864թթ.) և այլն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում զարգացող հայ դպրոցը հրամայական պահանջ էր դնում մանկավարժական հատուկ մամուլի ստեղծման (գոնե այնպիսի մամուլի, որտեղ մանկավարժական հարցերը գերակշռող տեղ գրավեին մյուս խնդիրների համեմատ), առանց որի անհնարին էր պատկերացնել նրա հետագա վերելքն ու առաջընթացը: Եվ ճիշտ էին նկատում ականավոր հայ մանկավարժները (Ղ.Աղայան, Ստ.Նազարյանց, Ս.Մանդինյան, Ա.Բահաթրյան և ուրիշներ), որ հայ դպրոցը, եթե ցանկանում էր իրոք նոր լինել և կատարել իր առջև դրված խնդիրները, ապա պետք է մշակեր ուրույն ազգային մանկավարժական միտք, որը, հենվելով այդ դպրոցի առաջավոր ավանդույթների վրա, մղվելով դարաշրջանի կոնկրետ իրավիճակից, կարողանար յուրացնել և կիրառել նոր մանկավարժության սկզբունքները: Հայ կրթական գործի նախորդ տասնամյակներն անպտուղ չէին մանկավարժության ասպարեզում, ականավոր մանկավարժների (Թաղիադյան, Աբովյան) բեղմնավոր գործունեությունը, ազգային լուսավորության խնդիրներին նվիրված նրանց և դարի երկրորդ կեսին հայ մանկավարժության նոր սերնդի մեծարժեք ստեղծագործություններն ամուր հիմք էին ստեղծել, որի վրա նոր պայմաններում պետք է ծլարձակեր ազգային մանկավարժական միտքը և ավելի մոտիկից կապվեր դպրոցի առօրեական խնդիրների հետ: Այդ օրերին «Մշակը» գրում էր. «Մենք հասկացանք մեր դաստիարակության թերությունները, և ամենքս սկսեցինք (գոնե այդպես ենք կարծում) մանկավարժությամբ պարապել»:[1]

Արևելահայ իրականության մեջ, ինչպես նաև Արցախի թեմում մինչև մանկավարժական մամուլի սկզբավորումը, դեռ 1868թ. հրատարակվող «Արարատ» ամսագիրն իր էջերում զգալի տեղ էր հատկացնում նաև դպրոցական-մանկավարժական հարցերին, իրենց ծրագրային հոդվածներով երբեմն հանդես էին գալիս աչքի ընկնող մանկավարժներ: Լինելով հայ եկեղեցու պաշտոնական օրգանը,

1. «Մշակ», 1872, թ.1:

«Արարատը» հրատարակում էր դպրոցների կանոնադրություններն ու ծրագրերը, պարզաբանում դրանց իմաստը: Սակայն «Արարատը» դեռևս լրիվ մանկավարժական մամուլի օրգան չէր, այն կրում էր պաշտոնական էջմիածնի կնիքը և դպրոցին նվիրված նյութերի մեծ մասը շաղախված էին կրոնա-բարոյական ոգով:

Իր բնույթով «Արարատից» քիչ էր տարբերվում աչքի ընկնող եկեղեցական-կրթական գործիչ Խորեն Ստեփանեի (Ստեփանոս Ստեփանյան) կողմից դեռևս 1865-1871թթ. Թիֆլիսում հրատարակվող «Հայկական աշխարի» գրական-մանկավարժական ամսագիրը, **որով սկիզբ դրվեց հայ մանկավարժական մամուլին:** Այնուհետև «Հայկական աշխարի» ամսագիրը հրատարակվել է Գանձակում (1873-1874թթ.), Շուշիում (1874-1876թթ.), Բաքվում (1877-1879թթ.), Երևանում (միայն մեկ համար): 1874թ. երբ «Հայկական աշխարհը» սկսեց վերահրատարակվել Շուշիում, Խորեն Ստեփանեն (խմբագիրն ու հրատարակիչը) նպատակ էր դրել իր պարբերականը ծառայացնել «ազգային կրթությանը և լուսավորությանը»: Խմբագիրը հարմար գտավ ավելի ուժեղացնել նրա մանկավարժական թեքումը, որը սակայն կրում էր շեշտված կրոնական ուղղություն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախահայ մանկավարժական կյանքում նշանակալից երևույթ էր Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարի» ամսագրի երևան գալը, որը նաև խոշոր իրադարձություն էր դպրոցական կյանքում:

Հարկ է նշել, որ XIX դարի 70-ական թվականներին արցախահայ մամուլի սկզբնավորումը կապվում է երկրամասի ազգային ինքնագիտակցության, մշակույթի, լուսավորության, կրթության և հասարակական մտքի զարգացման հետ:

Արցախի պարբերական մամուլի պատմության անդաստանը ժամանակի առումով հսկայածավալ և բավական բարդ մի աշխարհ է: Պատմաշրջանում հրատարակված 21 պարբերականների հետ գործել են նաև բազմաթիվ ձեռագիր պատի թերթեր (թեմական, օրիորդաց դպրոցում, ռեալական ուսումնարանում և թեմի գավառների երկդասյա դպրոցներում, որոնց մի մասը պահպանվում է Ազգային պետական արխիվի 56-րդ ֆոնդում), աշակերտական խմորատիպ թերթեր ու ամսագրեր:

Արցախի պարբերական մամուլի զարգացման առաջին շրջանում (1870-1880թթ.) սկզբնավորվում են ազգային լրագրությունն ու հրապարակախոսությունը, որի ամենակարևոր առանձնահատկությունն ազգային նպատակաուղղվածությունն է:

Այս առանձնահատկությունն արդեն բավական նկատելի է Շուշիում լույս տեսած անդրանիկ պարբերականի՝ «Հայկական աշխարի» գրական-մանկավարժական, ապա նաև կրոնական ամսագրի (1874-1876թթ.) էջերում: Ամսագրի հրատարակման նախաձեռնողը եղել է եվրոպական համալսարաններում մանկավարժական կրթություն ստացած, Շուշիի թեմական դպրոցի տեսուչ և ռուսաց լեզվի ուսուցիչ Խորեն Ստեփանեն:

Արցախահայ առաջին պարբերականը Մարկոս Աղաբեկյանի «Կռունկ հայոց աշխարհի» (1863), այնուհետև «Կռունկ» (1864) ամսագրի 1865թ. Թիֆլիսում և Խ.Ստեփանեի հրատարակած «Հայկական աշխարի» ամսագրի իրավահաջորդն է:[2]

Հայ մանկավարժական մամուլի սկզբնավորման նախապայմանը դարի երկրորդ կեսերին հայ ժողովրդի լայն ծավալ ստացած հասարակական-քաղաքական աշխուժացումն էր, որը մեծապես խթանում էր ազգային համախմբման գոր-

2. Տե՛ս Մ.Մխիթարյան, Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարի» ամսագիրը, Երևան, 2007, էջ 8-9:

ծընթացին արևելահայության շրջանում, այդ թվում՝ Արցախում, առաջ բերելով լուսավորչական մեծ շարժում: Հենվելով ազգային կրթության դարավոր ավանդների, հայ լուսավորիչների գաղափարական ժառանգության, ժամանակի առաջավոր մանկավարժական մտքի հարաճուն նվաճումների վրա, նոր ժամանակի գործիչներն առաջնային են համարում մանկավարժական մամուլ ունենալու հրամայական պահանջը: Ինչպես նախորդ շրջանի հայ լուսավորիչների պարագայում էր, այնպես էլ դարի 70-ական թվականների կրթական գործիչների առաջին մտահոգության առարկան շարունակում էր մնալ ժողովրդին լուսավորելու, նրան ազգային ինքնագիտակցության բերելու գաղափարը, և հաստատուն քայլեր էին արվում քանակական ու որակական առաջընթացի ուղղությամբ:

Շուշիում տպագրված «Հայկական աշխարհ» ամսագրի առաջին՝ ապրիլյան, համարում Խ.Ստեփանեն ութ էջի վրա զետեղված խոսքում ողջույն է հղում ամենայն Հայոց Գևորգ Դ Հայրապետին, հայտնում է իր ողջ կյանքն ազգին ու եկեղեցուն նվիրաբերելու պատրաստակամությունը, այնուհետև ծրագրի նախաբանում նշում, որ ամսագիրը մեծ նշանակություն է տալիս կրոնական բարոյախոսությանը:[3] Այդ նպատակով նա տպագրում էր խրատական հոդվածներ, քարոզներ, ջանալով զարկ տալ կրոնական ընթերցանությանը և դրանով ժողովրդի մեջ կենդանացնել մարող կրոնական բարեպաշտությունը: Իր ծրագրային հոդվածներում Խ.Ստեփանեն գրում է, որ ամսագիրը պետք է հետապնդի հայ ժողովրդին կրթելու, դաստիարակելու, նրա մեջ լուսավորություն տարածելու նպատակ: Նա կոչ էր անում հասարակությանը՝ բոլոր ուժերը նվիրաբերել կրթության գործին: Ինչպես տեսնում ենք, Խ.Ստեփանեն նվիրվում էր երկու սկզբունքի՝ եկեղեցուն ու դպրոցին, որոնք համարում էր հայ ժողովրդի մտավոր վերածնության հիմնական լծակները:

Նորաստեղծ ամսագրի անդրանիկ խմբագրական մարմնի կազմի մեջ մտնում էին Արցախի մշակութային գործիչներ Համբարձում Առաքելյանը, Հովհաննես Քոջուբեկյանը, Մաղաքիա Պլուզյանը, Մովսես Աթաբեկյանը (թեմական դպրոցի ուսուցիչներ, վերջինս՝ տեսուչ), իսկ ավելի աչքի ընկնող հոդվածագիրներն էին մեր մամուլի անխոչ մշակներ Գրիգոր Արծրունին, Ներսիսյան դպրոցի հոգաբարձու Գրիգոր Իզմիրլյանը և ուրիշներ: Պարբերականի երկու տարիների համարներում տպագրված նյութերը գրեթե ամբողջապես նվիրված էին արցախահայության հասարակական, քաղաքական կյանքին, լուսավորության, գիտության, մշակույթի, կրթական համակարգում՝ հայ մանկավարժության նոր սերնդի նախաձեռնությամբ իրականացվող հիմնախնդիրներին: Ամսագրի խմբագիր Խ.Ստեփանեն դպրոցների զարգացումը գաղափարական լուրջ հարց էր համարում, որի լինելիությունը զուգորդում էր ազգի ամբողջականության պահպանման ծրագրի հետ:

Անկախ այն բանից, որ ժամանակի արցախահայ դպրոցները հիմնվում էին եկեղեցիներին կից, Ստեփանեն կրթության միակ չափանիշը համարում է դրանց զանգվածայնությունը, իսկ դպրոցի ուղղության հիմնական ելակետը՝ ազգային ոգին:

«Հայկական աշխարհ» ամսագրի մանկավարժական բաժնում առաջադրվել են նաև կրթական գործի զարգացման հետ կապված հետևյալ հարցերը.

1. ուսումնական-դաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը եկեղեցական-ծխական, օրիորդաց և թեմական դպրոցներում:

2. Կանանց կրթության բարելավումը, օրիորդաց և երկսեռ դպրոցներում:

3. «Հայկական աշխարհ», 1874, թ.1, էջ 3:

3. Հրապարակային քննությունների կազմակերպումը թեմական դպրոցում (Խ.Ստեփանեն ոչ միայն իր ամսագրում առաջարկում է, այլ որպես տեսուչ, առաջին անգամ ինքն է կազմակերպում հրապարակային քննություններ՝ մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին և Շուշիի հասարակության ներկայացուցիչներին):

4. Աշակերտների ուսման առաջադիմության կամ ծուլության և անկարգության հարցի մասին՝ ուսուցիչների ամենօրյա հաշվետվությունների քննարկումը մանկավարժական ժողովներում:

5. Մանկավարժական խորհրդի նիստում քննարկել գործադրվող դասագրքերի, ուսումնական պլանների, ծրագրերի կատարման ընթացքը, աշակերտների առաջադիմության և ուսման մեջ ետ մնալու պատճառները:

6. Ռուսաց լեզվի դասավանդման որակի բարձրացումը դպրոցներում:

7. Ձրի ուսում, նպաստ, թոշակ՝ աշակերտներին (նկատի ունի ուսման մեջ առաջադիմող սովորողներին):

8. Դպրոցի ներքին կարգուկանոնի պահպանման վերաբերող հարցերի քննարկումը մանկավարժական ժողովներում և այլն:[4]

Ուշագրավ է նշել այն փաստը, որ Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Խորեն Ստեփանեն ոչ միայն իր ամսագրի առաջին համարում առաջադրում է դպրոցի ներքին կյանքին վերաբերող վերոնշյալ հրատապ հարցերը, այլև առաջին անգամ իր պրակտիկ գործունեության ընթացքում կյանքի է կոչում դրանք՝ փորձելով որոշ բարեփոխումներ կատարել Արցախի դպրոցական համակարգում:

Ամսագրի առաջաբանում Խորեն Ստեփանեն նաև նշում է, որ Շուշիում տպագրվող պարբերականը հանդես է գալու նոր ծրագրով: Այդ մասին հաղորդում է տրվում Անդրկովկասի մի շարք պարբերականներում: Ահա թե ինչ է գրված «Մշակ»-ի 1874թ. մարտի 14-ի համարում. «Կառավարությունից թույլատրված նոր պրոգրամով այս 1874թ. ապրիլ ամսից պետք է հրատարակվի նոր ամսագիր «Հայկական աշխարհ», որը կբովանդակի.

1. Մանկավարժական ընտիր հոդվածներ, մանկավարժության ներկա դրության և զարգացման տեղեկություններով զանազան լուսավորված աշխարհների մեջ:

2. Օրիորդներին և պատանիներին օգտավետ ընթերցանության համար գրվածներ պատմական, բնագիտական, կենսագրական, ճանապարհորդական, առողջապահական և այլն:

3. Աշխարհաբար լեզվի կանոնների և ոճերի քննությունները:

4. Մանկավարժական և դպրոցական գրվածների քննություն, հոգևորականների և հոգևոր դպրոցների մասին տեղեկություններ և այլն:

Իրոք, ամսագրի մի քանի համարներ պարունակում են հետաքրքիր տեղեկություններ առանձին ժողովուրդների նիստուկացի, սովորությունների, զբաղմունքի, տարբեր երկրների աշխարհագրական դիրքի, պատմական անցքերի ու կարևոր իրադարձությունների մասին, որոնք հայ բնակչությանը հաղորդակից են դարձնում գիտական արժեք ներկացնող փաստերի, հայ և արտասահմանյան, ռուսական մանկավարժության գրականության առանձին նմուշների, կապերի և այլ նորությունների հետ:

Ամսագրում թարգմանաբար տպագրվում են դասական մանկավարժների՝ Կոմենսկու, Ռուսոյի, Պեստալոցցու, Դիստերվեգի, ռուս մեծ մանկավարժ Ուշինսկու

4. «Հայկական աշխարհ», 1874, թ.1 (ապրիլի համարը):

և այլոց մանկավարժական հայացքներին նվիրված հոդվածներ: Տպագրվում են նաև հատվածներ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից, դրվագներ մեր հերոսական անցյալից: Նրա էջերի մեծ մասը գրավում են մանկավարժական նյութեր: Ուրախությամբ էր նշվում, որ 1860-70-ական թվականներին Արցախի թեմում որոշ չափով ավելացել են եկեղեցական-ծխական, օրիորդաց դպրոցները, համեմատաբար բարելավվել են ուսուցման մեթոդները, դպրոցները համալրվել են ուսուցչական կադրերով:

Մանկավարժական բաժնում քննադատելով ուսուցման հին եղանակները, «Հայկական աշխարհ»-ը գրում է. «Աշակերտները ուսուցիչներին հարգում էին ոչ թե սիրուց, այլև երկյուղից մղված և համարձակություն չունեին որևէ մեկից բացատրություն պահանջելու այս կամ այն մութ հարցի վերաբերյալ»:[5] Ուսուցիչները դպրոցական մարմնամարզության փոխարեն աշակերտներին ստիպում են դասասենյակների հատակը լվանալ, ֆիզիկական վարժությունները կեղտոտ դասասենյակներում անցկացնել, դա սխալ է և հակասում է մանկավարժական տարրական կանոններին: Ամսագիրը Շվեյցարիայի դպրոցների օրինակն է բերում, որտեղ մարմնամարզության դասերն անց են կացվում մաքուր օդում, գտնում, որ պետք է նրանցից սովորել: Առաջարկում է դպրոցական նոր շենքեր կառուցել, որտեղ ուսումնա-դաստիարակչական աշխատանքները կկազմակերպվեն ավելի արդյունավետ: Ամսագիրը պրոպագանդում է այն գաղափարը, որ գյուղերից եկած յուրաքանչյուր երիտասարդ կրթություն ստանալուց հետո վերադառնա իր ծննդավայրը և օգտակար լինի ժողովրդին, լծվի լուսավորչական գործին: Օրակարգի նյութ է դարձնում նաև դպրոցներում նկատվող թերությունները, խոսում դպրոցավարության, ծրագրամեթոդական և այլ հարցերի շուրջ: Ամսագիրը միաժամանակ արծարծում է նաև ուսուցիչների գիտելիքների խորացման հարցը: «Ուսուցիչները կարոտ են երկու բանի,- կարդում ենք այստեղ,- նոքա ոչ միայն սովորեցնելու, այլև սովորելու հարկավորություն ունին»:[6]

Ավելին, պարբերականը հաճախակի տպագրում է «Գործնական խրատներ անփորձ ուսուցչին» խորագրով հոդվածների շարք, ուր խոսվում է ուսուցիչների մանկավարժական վարպետության, աշակերտների մեջ առ կրթությունը, ուսումը սեր պատվաստելու մասին: Շեշտվում է նաև, որ ուսուցումը հաճախ պետք է լինի ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների համար: Լրջությամբ ու խոհեմությամբ կատարելով իրենց պարտականությունները, ուսուցիչները երբեք չպետք է անպատրաստ մտնեն դասարան:

Հասարակության ուշադրության կենտրոնում դնելով ուսուցիչների, դաստիարակների դերը՝ ամսագիրը միաժամանակ պահանջում էր, որպեսզի, մի կողմից բնակչությունը հարգալից վերաբերմունք ցուցաբերի ուսուցիչների նկատմամբ, իսկ մյուս կողմից ինքն ուսուցիչը հասկանա, թե ինչպիսի կարևոր պարտականություն է կատարում հասարակության մեջ և ունենա իր սեփական արժանապատվության զգացումը, լինի կենդանի օրինակն այն առաքինությունների, որոնք նա պետք է ներարկի աշակերտներին, նրանց մեջ հետաքրքրություններ արթնացնի գիտելիքների նկատմամբ:

«Հայկական աշխարհ»-ի էջերում նաև քննադատական խոսքեր են ասվում այն ուսուցիչների ու դաստիարակների հասցեին, որոնք շարունակում էին կառչած մնալ դաստիարակության հին, սխոլաստիկ մեթոդներին: Մեծ նշանակու-

5. «Հայկական աշխարհ», 1875թ. թ.9, էջ 133:
6. Նույն տեղում, էջ 133-134:

թյուն էր տալիս ուսուցիչներին գործնական մանկավարժական ունակություններով ու հմտություններով զինելու խնդրին:

Ամսագրի էջերում բազմաթիվ նյութեր են զետեղված նաև աշակերտների դաստիարակության, դպրոցներում մարմնամարզության զարգացման, մի շարք առարակների օգտակարության, տեսության ու պրակտիկայի խելացի զուգորդման և այլ հարցերի մասին: Ընթերցողները ծանոթանում էին դպրոցների աշակերտների քանակի, առաջադիմության, ուսումնական ծրագրերի հետ:

«Հայկական աշխարհ»-ի տեսադաշտը բավական մեծ էր. նա հանդես էր գալիս նաև իբրև գիտության պրոպագանդիստ: Նա բացահայտում է երիտասարդության դերն օգտակար գործ կատարելու մեջ: Ամսագրի 24-րդ էջում կարդում ենք. «Բայց եթե մի գիտնական կամ հմուտ անձ կամենա, որ իրենցից հետո եկողները կամ ապրողները ուսումից և գիտությունից օգուտ քաղեն, այն ժամանակ նա գործ կածե կենդանի խոսքի տեղ գրությունը: Եվ գիտնական, և ուսումնական մարդկանց տեղեկություններից օգուտ քաղելու համար հարկավոր է անպատճառ կարդալ կարողանալ: Ուստի կարդալը նույնպես մի միջոց է գիտություններին հասնելու համար»:[7] «Հայկական աշխարհ»-ն առաջ է քաշում նաև իգական սեռի կրթության հարցը: Միաժամանակ քննադատում է նրանց, ովքեր թերագնահատում են կանանց գիտության մեջ խորանալու կարողությունը. «թե կարդալը հարկավոր է կնոջ, որպես և տղամարդուն, դա անհասկանալի է: Ով որ կարդալը սովորել է, դրանով մի ընդունակություն է ձեռք բերել, որից յուր կենդանության ժամանակ մեծ օգուտներ կարող է քաղել»:[8]

«Աղջիկների համար օգտավետ գիտությունները» վերնագրով հոդվածում շեշտվում է այն ճշմարտությունը, որ կանանց համար էլ պետքական են ոչ միայն հասարակական գիտությունները, արվեստը, գրականությունը, այլև մաթեմատիկան, ֆիզիկան, երկրաբանությունը, կենդանաբանությունը, բուսաբանությունը և այլն:

Այս մասին կարդում ենք. «և նույնպես օգտակար գիտություններին վերաբերվում են բնական, պատմություն, կենդանիների, հանքերի գիտությանը, ֆիզիկական-բնական զորությունների ուսումասիրումը, ինչպիսինն են տաքություն, լույս, էլեկտրականություն… երկրի և ուրիշ աշխարհների վերաբերյալ ուսումնասիրությունները, պատմություն կամ թե մեզանից առաջ ապրողների վերա տեղեկություն ունենալ, հայրենիքի գրականության իմանալը…»:[9]

Ամսագիրը կանանց լուսավորությունը կարևոր է համարում առանձնապես կրթված դաստիարակներ պատրաստելու տեսակետից: Գտնում է, որ կինը պետք է լինի տղամարդկանց հասարակության և իր երեխաների դաստիարակը:

Կնոջ տղամարդկանց դաստիարակ լինելու մասին միտքը սկիզբ է առնում Ռուսոյից: Այս միտքը մեծ արձագանք գտավ ինչպես այլուր, այնպես էլ հայ իրականության մեջ:

Ամսագիրը կանանց կրթությունն առանձնապես կարևոր է համարում ընտանեկան դաստիարակության վիճակը բարելավելու, երեխաների սկզբնական դաստիարակությունն ամուր հիմքերի վրա դնելու տեսանկյունից:

«Մայրն է այն հողը,- գրում է Ռաֆֆին,- որից ծլում ու ծաղկում են երեխայի բնական կատարելությունները, մայրն է այն աղբյուրը, որից բխում են երեխայի

7. «Հայկական աշխարհ», 1875, թ.1, էջ 24:
8. Նույն տեղում, էջ 26-27:
9. «Հայկական աշխարհ», 1875, թ.1, էջ 25:

ազնիվ հատկությունները: Մայրը սկսյալ օրորոցի միջից՝ կաթի հետ սնուցում է երեխային թե՛ մարմնապես և թե՛ հոգեպես»:[10]

Ամսագիրն առավել չափով մեծ տեղ է հատկացնում մտքի նշանակության պարզաբանմանը, շեշտում, որ մարդ, լինելով աշխարհի ստեղծվածների բոլոր տեսակներից ամենազարգացածն ու կատարյալը, հնարավորություն ունի ամեն ինչ ըմբռնելու գիտակցաբար և ճանաչողաբար: «Մտավորական դաստիարակություն» նշանավոր հոդվածում հանգամանորեն մատնանշվում է, որ «Մտքի նշանակությունը մարդու արժանավորության մեկ էական մասն է: Մեր հասկացողությունը գրված գեղեցիկ և բարի բանի ծառայության մեջ, մեզ բարձրացնում է երկրի բոլոր մյուս արարածներից: Պարզորեն խոսելով, մարդը ստեղծված է տիրելու երկրի վրա, նրա գործողությունների մեջ չի տեսնվում մթություն, նա գործում է բոլորը գիտակցաբար, ճանաչողաբար: Նա կարող է մտածել պատճառը և արդյունքը, անցյալն ու ապառնին լծորդել, յուր կյանքի համար մի հիմնագիծ որոշել, նպատակներ ճանաչել և միջոցներ հաշվել»:[11]

Այսպիսով «Հայկական աշխարհ»-ը, լինելով առաջին մանկավարժական մամուլն Արցախում, իր կարճատև գործունեության ընթացքում կարողացավ բավական կատարելագործվել, վերացական-խրատական ոգին փոխարինել դպրոցներին հուզող կոնկրետ խնդիրներով: Այդ մամուլը հաճախ մեղադրվում է կյանքից կտրվելու մեջ, նկատելի է կոնկրետ քննադատության բացակայությունը: Սակայն սրանում ոչ այնքան մեղավոր է մամուլը, որքան կյանքի հետամնացությունը: Շատ դեպքերում հոդվածագիրները, քննադատական որևէ խոսք ասելիս, կեղծանունով էին ստորագրում, խույս էին տալիս գոյություն ունեցող բացասական երևույթներն իսկական անուններով կոչել, որովհետև գավառներում տիրող աղայական դասը, զանազան խմբակցությունները պատրաստ էին անխնա վրեժ լուծել հանդուգն հոդվածագիրներից:

Պատահում էր, որ մանկավարժական մամուլը մեղադրվում էր նաև ոչ ինքնուրույն, թարգմանական նյութերի տպագրության համար: Ընդհանրապես, այդ մամուլի բոլոր օրգաններն էլ մեծ տեղ էին հատկացնում եվրոպական մանկավարժությանը, տպագրում էին դասական մանկավարժների՝ Կոմենսկու, Ռուսոյի, Պեստալոցցու, Դիստերվեգի, Ֆրեոբելի և ուրիշների կյանքն ու գործը լուսաբանող հոդվածներ, ամեն առիթով օրինակ էին բերում եվրոպական դպրոցներն ու դպրոցական համակարգը: Այս հարցում մեղադրանքը նույնպես օբյեկտիվ չէր: Միայն հայ մամուլը չէր, որ թարգմանական նյութեր էր տպում. ռուսական մանկավարժական մամուլը ևս լի էր գերմանական, ընդհանրապես, եվրոպական մանկավարժերի թարգմանություններով: Իսկ գերմանական մանկավարժության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը պատահական չէր: Նախ, գերմանական մանկավարժական միտքը խոշոր նվաճումներ էր ձեռք բերել, իսկ հայ մասնագետ մանկավարժների մի զգալի մասը կրթություն էր ստացել գերմանական համալսարաններում:

Ասպարեզ մտած մի խումբ եռանդուն կրթական գործիչներ, մանկավարժներ, լինելով միևնույն սերնդի մարդիկ, ըմբռնելով ժամանակի հրատապ խնդիրները, անդուլ պայքար սկսեցին ազգային դպրոցի բարեկարգման համար: Չնայած ժամանակի օտարամուտ մանկավարժական մտքի հզոր ազդեցությանը, հայ մանկավարժությունը խոսեց շեշտված ազգային առանձնահատկությունների սեփա-

10. «Հայկական աշխարհ», 1875, թ.1, էջ 28:
11. «Հայկական աշխարհ», 1876, թ.1,3, էջ 20-21:

կան ձայնով, չդավաճանեց իր մեծ նախորդների սկզբունքներին:

Օրինակ, ամսագիրը ռուս մեծ մանկավարժ Կ.Դ. Ուշինսկու հետևությամբ պայքարում էր ամեն ազգին բնորոշ մանկավարժության համար՝ մերժելով մանկավարժական համակարգեր փոխ առնելու օգտակարությունը: Իր 1876թ. 1-2 համարներում հրատարակած շատ կարևոր «Գերմանական ուսումնարանը չի կարող ամենևին ուրիշ ազգերին օրինակելի գաղափար դառնալ» հոդվածում, որը գրված է Ուշինսկու ազդեցությամբ, ամսագիրը գտնում է, որ յուրաքանչյուր ժողովրդի մանկավարժություն պետք է համապատասխան լինի նրա հոգեկան կետրվածքին, սովորություններին ու ավանդույթներին:

Նշենք նաև, որ այս ամսագիրը, նպաստելով հայ մանկավարժական մտքի զարգացմանը, միաժամանակ խոշոր դեր է խաղացել այլ ժողովուրդների մանկավարժական գաղափարներին հայությանը հաղորդակից դարձնելու գործում:

«Հայկական աշխարհ» ամսագրում հրատարակված իրենց հոդվածներում հայ առաջատար մանկավարժները, գրողները (աշխատակցում էին Գր.Արծրունին, Պ.Պռոշյանը, Համբ. Առաքելյանը, Ս.Մանդինյանը և ուրիշներ) դպրոցի ու դաստիարակության հարցում առաջադրել են նոր ու արդարացի պահանջներ, որոնց մի մասն էլ մինչև այժմ չի կորցրել իր տեսական ու գործնական մանկավարժական նշանակությունը:

Երախտագիտության զգացումով պետք է նշել, որ «Հայկական աշխարհ» մանկավարժական ամսագիրը հայրենասեր-մանկավարժ, հասարակական գործիչ Խորեն Ստեփանեի ղեկավարությամբ հաջողության է հասել ոչ միայն մանկավարժական մտքի, այլև ազգային ինքնաճանաչման զարգացման ուղղությամբ:

Արցախահայ դպրոցին ու մանկավարժական մտքին հետաքրքող հարցերն այս կամ այն խորությամբ լուսաբանվել է նաև 1882-1884թթ. Շուշիում լույս տեսած «Գործ» գրական-քաղաքական հանդեսում: Նրա խմբագիր-հրատարակիչն էր Սիմեոն Հախումյանը: Նա ոչ միայն քաջատեղյակ էր հայկական, ռուսական և արտասահմանյան գրականություններին, տիրապետում էր մի քանի լեզուների, այլև հմուտ մանկավարժ էր՝ աշխատել է Կարսի հայկական դպրոցներում 1879թ., իսկ հետո՝ 1880-1888թթ., Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցներում, որպես ռուսաց և հայոց լեզուների ուսուցիչ: Նա ջանադիր աշխատանք է տարել նաև Թավրիզի հայոց երկսեռ դպրոցում:

Քաղաքական, տնտեսական, հրապարակախոսական և գրական հարցերից բացի Ս.Հախումյանը արծարծում էր նաև մանկավարժական հարցեր, պայքարում դպրոցական գործը բարձր հիմքերի վրա դնելու համար:

Հանդեսի անդրանիկ համարի «Երկու խոսք»-ում[12] Հախումյանը խստորեն քննադատում էր հոգևոր դպրոցների, մասնավորապես, Էջմիածնի ճեմարանի ուսումնական գործի անմխիթար վիճակը, նշում, որ վատ ծրագրերի հետևանքով մայրենի լեզվից և գրականությունից բազմաթիվ կարևոր թեմաներ չեն անցնում: Ուսուցիչների մի զգալի մասն իր գիտական պաշարով ու բարոյական վարքագծով դասարան մտնելու իրավունք չունի: Ուսուցման գործին խանգարում են ոչ միայն կանոնավոր դասագրքերի և ձեռնարկների խիստ պակասը, այլև ուսուցման արատավոր մեթոդները:

Հանդեսում տպագրված բազմաթիվ նյութեր այն միտքն են արտահայտում, թե դպրոցները հայրենիքի համար պետք է պատրաստեն գործունյա, լիարժեք մասնագետներ, այնպիսի պատանիներ ու աղջիկներ, որոնք առաջադիմելու ուժ ունե-

12. «Գործ», 1882, թ.1, էջ 14:

նան, չընկճվեն դժվարություններից:

«Գործ»-ը գտնում էր, որ հասարակությունը պետք է հաշիվ պահանջի ուսումնական օջախների ղեկավարներից: Ժողովրդի առջև հաշվետվությամբ հանդես գալը բարձրացնում է նրանց պատասխանատվությունը: Այս նպատակով էլ հանդեսի էջերում լայն տեղ է հատկացվում Արցախում գործող դպրոցների գործունեության լուսաբանմանը:

Խոսելով Շուշիի ազգային թեմական և օրիորդաց դպրոցների անցած ուղու մասին, «Գործ»-ը հիացմունքով է նշում Սեդրակ Մանդինյանի մանկավարժական գործունեությունը: Մանդինյանը մի մանկավարժ էր, որ աչքի էր ընկնում ոչ միայն իր գիտելիքներով, այլև կազմակերպչական ընդունակություններով: Նրա ջանքերը եռանդուն էին հատկապես ուսուցչական կադրեր պատրաստելու և ուսուցման առաջադիմական մեթոդներ կիրառելու ասպարեզում:

Հրապարակելով երկու դպրոցների հաշվետվությունը, «Գործ»-ն իր առանձին համարում գրում էր, որ 1880թ. սեպտեմբերից միչև 1881թ. սեպտեմբերն ազգային հոգևոր դպրոցն աչքի է ընկել իր ուսուցիչներով, աշակերտներով ու ուսուցման ձևերով: Դպրոցի 12 ուսուցիչներն ու նրանց 8 օգնականներն[13] ամեն կերպ ձգտել են աշակերտության մեջ սեր պատվաստել ուսման, քաղաքակրթության նկատմամբ: Նշվում են հատկապես Ղազարոս Աղայանի, Հակոբ Խոջամիրյանի. Սամվել Գյուլզադյանի, Գաբրիել Ղուլիքևխյանի և ուրիշների անունները, որոնք մեծ ծառայություններ ունեն հայ մշակույթի, գրականության ու արվեստի տարբեր բնագավառներում: «Գործ»-ն ընթերցողներին որոշ մանրամասնություններ է հաղորդում դպրոցների կառուցվածքի, դասարանական կազմի և աշակերտների քանակի մասին: Շեշտվում է, որ հոգևոր դպրոցը բաղկացած է 3 պատրաստականից, 4 դասատներից և մի մասնագիտական-մանկավարժական բաժնից, որի ուսման տևողությունը մեկ տարի է:

Հետաքրքիր են նաև աշակերտների խրախուսանքին վերաբերող տվյալները: Ցուցահանդեսներ էին կազմակերպում շնորհքով սովորող աշակերտների աշխատանքներից և աղջիկների ձեռագործներից, ուսուցչական ժողովի որոշմամբ ուսման գերազանցիկները ստանում էին մրցանագրեր և վարժապետական (դասատվական) կոչումներ, այսինքն՝ մի քանիսին իրավունք էր տրվում ուսուցիչ լինելու հայ ծխական և սկզբնական ուսումնարաններում:

Բացի այդ, ուսուցչական կոլեկտիվներն էին երաշխավորում այս կամ այն աշակերտին ընդունվելու էջմիաժնի ճեմարան կամ ուսումը շարունակելու բարձրագույն հաստատությունում: «Գործ»-ը «Կանայք Հնդկաստանում»[14] հոդվածի մեջ նշում է, որ թեև կանանց հարցը միշտ էլ հուզել է ամբողջ Եվրոպային, սակայն չի լուծվել և մինչև հիմա էլ կինը մնում իր նախկին վիճակում:

Հետաքրքիր է նաև Հնդկաստանի կանանց մասին ասվածը: Հանդեսը պատմում է, որ աստիճանաբար հնդիկ կինը ձեռք է բերում որոշ իրավունքներ և դառնում է լուսավոր, լրջախոհ, բանիմաց: Դրան մեծապես նպաստում են բացված մշակութա-լուսավորական օջախները և ուսումնական հաստատությունները:[15]

«Գործ»-ը կարևոր է համարում օրիորդաց դպրոցների դերը կանանց զարգացման և առաքինություններով օժտման ասպարեզում: Շեշտվում է հատկապես Թիֆլիսի Գայանյան դպրոցի ուսանելի օրինակը: Դպրոցը մեծ աշխատանք է կա-

13. «Գործ», 1882, թ.2, էջ 24:
14. Տե՛ս «Գործ», 1884, թ.1, էջ 21:
15. Նույն տեղում, էջ 26:

տարել «ազգային և ընտանեկան կյանքի համար», զգալի ավանդ մուծելով «ազգի բարոյական վերածնության գործի մեջ»: Հանդեսը նշում է, որ Շուշիի օրիորդաց դպրոցը պետք է ընդօրինակի իր ավագ քրոջը, առաջադեմ մեթոդներով կազմակերպի ուսուցման և դաստիարակության գործն օրիորդների շրջանում, հասնի այն բանին, որ Շուշիում էլ ընտանեկան կյանքի և ազգի բարոյական վերածննդի համար պատրաստվեն լիարժեք քաղաքացիներ: Հանուն այս վեհ նպատակի, ընդգծում է հանդեսը, Շուշիի հայ բնակիչները, որոնց թիվը հասնում է 20000-ի, պետք է ընդառաջեն դպրոցին նյութապես և բարոյապես ապահովվեն լուսավորության գործի առաջընթացը:

«Հանդեսը» նաև ընդգծում է, որ որոշ հաջողություններ է ձեռք բերել օրիորդաց դպրոցը, ուր աշակետների թիվը հասնում է 149-ի: Մի շարք առարկաների հետ միասին հայ աղջիկները սովորում էին ձեռագործի արվեստը, որը նրանց ուսուցանում էր Զառի Արզումանյանը: Շուշեցի այս տարեց կինը քիչ ջանքեր չի թափել օրիորդների ուսուցման գործն Արցախում կազմակերպելու գործում:

Այստեղ էլ պատշաճ մակարդակի վրա էր աշակերտուհիների խրախուսման խնդիրը:

Օրինակելի սովորողները, կազմելով հայոց օրիորդական դպրոցի առաջին երեխայրիքը, իրենց գեղեցիկ առաջադիմությամբ և զարգացմամբ պիտի միշտ այդ դպրոցի զարդը կազմեն և օրինակ հանդիսանան իրենց հաջորդներին: Այդպիսիններից էին Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Կատերինե Դոլուխանյանը, Շուշանիկ Բեգլարյանը և շատ ուրիշներ:

Դրվատելով ուսումնական այդ օջախը, հանդեսը միաժամանակ գրում է, որ «Դպրոցը տալիս է... հայ հոգով և հայ կրթությամբ դաստիարակված, մեծացած օրիորդներ, ապագա մայրեր, որոնք նույն ուղղությամբ և հոգով պիտի դաստիարակեն իրենց զավակներին և մեր հասարակության խորթացած, ստորացած կյանքի մեջ նոր, թարմ կյանք պիտի մտցնեն»:[16] Այնուհետև հանդեսը շարունակում է. «Ուսուցչական խումբը և դպրանոցի տեսչությունը ջանացել են այնպիսի միջոցներ գտնել, որոնք դպրոցից դուրս ևս նպաստեն սաների և սանուհիների մտավոր բարոյական զարգացմանը: Այդ նպատակով դեռ 3 տարի առաջ երկու դպրոցներում ևս հաստատվել են աշակերտական գրադարաններ և «կարեկցության գանձանակ» անունով արկղներ չքավոր ուսանողներին օգնելու համար»:

Հանդեսն առաջ է քաշում դպրոցական լայն ցանցի ստեղծման, օրիորդաց դպրոցներ ունենալու, սովորողներին տարբեր մասնագիտական գիտելիքներ հաղորդելու, դպրոցներում դաստիարակության և ուսուցման առաջավոր մեթոդներ կիրառելու և այլ հարցեր:

«Գործ»-ն իր էջերում զգալի տեղ էր հատկացնում նաև մանկավարժական հարցերին: Իրենց ծրագրային հոդվածներով երբեմն հանդես էին գալիս նշանավոր մանկավարժներ Ս.Հախումյանը, Ս.Մանդինյանը, Ղ. Աղայանը, Հ.Առաքելյանը, Ս.Բեկզադյանը, Լ.Սարգսյանը և ուրիշներ. նրանք արծարծում են դպրոցական ցանցն ընդլայնելու, դպրոցները լավագույն մանկավարժներով ապահովելու, ուսուցման և դաստիարակության նորագույն մեթոդներ օգտագործելու և հրատապ այլ հարցեր:

Որոշ հետաքրքրություն է ներկայացնում ականավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի խմբագրությամբ 1896թ. Շուշիի Մ.Մահտեսի-Հակոբյանի տպարանում հրատարակած «Ազգագրական հանդես»-ը: Ուշադրության է արժանի այն փաս-

16. «Գործ», 1882թ., թ.1, էջ 89:

տը, որ հանդեսը որոշ ժամանակ լույս է տեսնում հեղինակի անձնական միջոցներով: Հետագայում Ե.Լալայանի անմիջական ջանքերով հիմնված ազգագրական ընկերության կողմից հնարավորություններ են ստեղծվում հանդեսի սիստեմատիկ հրատարակման համար:

Հանդեսի առաջնորդող հոդվածում նշվում է, որ պարբերականը կդառնա ժողովրդական կյանքի ճշմարիտ մի հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իր նյութը կվերցնի ազգային վեպ ստեղծելու, լեզվաբանը՝ բառեր և ոճեր կքաղե ազգային լեզուն հարստացնելու և օտարացնելուց ազատելու… Բժիշկը՝ նրա ցավերը կտեսնե՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կյանքը կըմբռնի՝ այն բարեփոխելով…[17]

«Ազգագրական հանդես»-ի բաժիններում («Ազգագրություն», «Հնագիտություն», «Բանասիրություն», «Մանկավարժություն» և այլն) արծարծվում են նաև ընտանեկան կյանքին վերաբերող մի շարք հարցեր:

Իրենց արժեքավոր հոդվածներով հանդեսում պարբերաբար հանդես էին գալիս անվանի գիտնականներ Մանուկ Աբեղյանը, Ստեփանոս Մալխասյանցը, Հրաչյա Աճառյանը, Թորոս Թորոմանյանը, Երվանդ Շահազիզը, Խաչիկ Սամվելյանը, Գարեգին Լևոնյանը, գրող Վրթանես Փափազյանը, ինչպես նաև ժամանակի նշանավոր մանկավարժներ:

Ուսուցման և դաստիարակության հարցերն իրենց որոշակի արտացոլումն է գտել նաև Շուշիում հրատարկվող ժամանակի «Ղարաբաղ» (1911-12թթ.), “Шушинская жизнь” (1913-14թթ.), «Փայլակ» (1915-17թթ.) և այլ պարբերականներում: Այդ պարբերականների դերը մեծ է եղել, մասնավորապես, ուսուցման որակը բարձրացնելու և սովորողների դաստիարակությունը ճիշտ ուղիով տանելու ասպարեզում:

«Ղարաբաղ»-ն առաջ է քաշում ոչ միայն կանոնավոր դպրոցներ ունենալու, այլև ուսուցումը բարձր հիմքերի վրա դնելու խնդիրը: Հենց առաջին համարում տպագրված «Թերթը և կրթական գործը», «Թերթը և հայ ուսուցչությունը» թղթակցություններում ընդգծվում է կրթության, մատաղ սերնդի դաստիարակության և, ընդհանրապես, այդ բնագավառում պատասխանատվության բարձրացման կարևորությունը: Թերթն իր ուսուցիչ հայրենակիցներից պահանջում է խոր զգացումով և սրտացավությամբ կատարել ստանձնած գործը, մտածել լիարժեք քաղաքացիներ պատրաստելու մասին: «Ըստ երևույթին,- գրում է թերթը,- բոլոր ուսուցիչները գիտեն, որ չկա այլ ասպարեզ, քան ուսուցչականը, ուր մարդ անհատը այնքան պատասխանատվության ենթակա լինի, թե հասարակական կարծիքի և թե հենց իր սեփական խղճմտանքի առջև, չկա ավելի ծանր ու դժվարին պաշտոն, քան ուսուցչականը:

Ստանձելով այդ վեհ պաշտոնը, մարդը իր մեջ պիտի զգա կոչում, սեր և պատրաստություն, նա պիտի իր կատարած աշխատանքից որոշ բավականություն ստանա և ոչ թե ծանձրույթ, նա պիտի գոհունակությամբ և լրջությամբ կատարի իր սրբազան միսիան՝ մատաղ սերնդին դաստիարակելու պատասխանատու գործը, հակառակ դեպքում անօգուտ կանցնեն նրա թափած ջանքն ու ճիգերը»:[18]

1912թ. ապրիլի 29-ի համարում՝ «Դպրոցական հարցը» հոդվածում «Ղարաբաղ»-ն իր ընթերցողներին ասում է. «Մենք պարծենում ենք մեր մի քանի դպրոցներով, նրանց տված շրջանավարտներով, բայց չենք մտածում դրանց որակի մասին և անհոգության ենք մատնում այն կարևորագույն և առաջնակարգ դասը, որի

17. Տե՛ս «Ազգագրական հանդես», Ա գիրք, 1896, էջ 6:
18. Տե՛ս «Ղարաբաղ» 1911, թ.1, նոյեմբերի 17:

կոչման բարձրությունից կախված է դպրոցի առաջադիմությունը: Դա ուսուցչությունն է, դպրոցի ղեկավար, սնունդ տվող փայփայելի դասը»:[19]

«Ղարաբաղ»-ը մտահոգվում էր դպրոցներում բարձրորակ ուսուցիչներ ունենալու խնդրով, մի բան, որ ժամանակի ցավոտ հարցերից մեկն էր:

Ինչ խոսք, այն ժամանակ դառն էր ուսուցիչների վիճակը, մեծ մասը չուներ նյութական միջոցներ: Տնտեսապես անապահովվածությունն իր խոր կնիքն էր դնում ուսման որակի վրա: Շատ տեղերում ոչ միայն ուսուցիչների խիստ պակաս էր զգացվում, այլև դպրոցական շենքեր չկային, ուսուցումը տարվում էր բաց երկնքի տակ կամ չափազանց անհարմար անկյուններում:

Թերթը շարունակում էր իր ընթերցողներին հայտնել դպրոցական գործում տեղ գտած բազմաթիվ թերությունների և բացերի մասին: «Թղթակցություններ» ընդհանուր խորագրի տակ «Ղարաբաղ»-ը 1912թ. մայիսի 19-ի համարում հրապարակում է մի նամակ Հադրութից: Նամակի հեղինակը գանգատվում է, որ «Հադրութի ծխական երկսեռ, երկդասյա դպրոցը մինչև հիմա չունի իր սեփական շինությունը, դրա համար էլ դպրոցը տեղաբաշխված է երկու բնակարաններում, որը շատ անհարմարություններ է առաջ բերում թե դասատուների և թե աշակերտության համար»:

Թերթը տխրությամբ պատմում է նաև Ճարտարի դպրոցի անմխիթար վիճակի մասին: «Շուշիի ծխական դպրոցները» թղթակցությունում թերթը նշում է, որ Շուշիում հիմնականում դպրոցների թիվը չի ավելանում, որ միայն ծխական եկեղեցիներին կից են հիմնվում այսպես կոչված դպրոցներ: Ավելին «Ծխական դպրոցների մեջ մանկավարժական կապ, միություն չկա: Ամեն մի դպրոց անկախ մյուսից ձգտում է ինքնուրույն կերպով առաջ ընթանալ, տալով փոքր չափով գրագիտություն իր սաներին»:[20]

«Ղարաբաղ»-ը նշում է, որ ծխական դպրոցները չեն կարողանում հագեցնել իրենց «Սաներին ուսման ծարավը, որովհետև 2, 3 կամ 4 տարվա դասընթացով, այն էլ միացյալ բաժանմունքներով և փողոցից հավաքած երեխաներով, շատ դժվար է ցանկալի արդյունք տալ»:[21]

Թերթը ցավով հրապարակում է աշակերտների գիտելիքները գնահատելու մի քանի տխուր փաստեր, շեշտում, որ հոգաբարձուները չեն մտածում աշակերտների քննությունները կանոնավոր անցկացնելու մասին, առանձին ուսուցիչներ քննությունը վեր են ածում մի յուրօրինակ խաղի:

Արցախի թեմի տեսուչ Առաքել Առաքելյանը «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911-12 ուս. տարում» ծավալուն հոդվածաշարում նշում է, որ «անցյալ 1910-11 ուստարում թեմի ծխական դպրոցները զուրկ են եղել թեմական տեսչից, որոնց ղեկը հանձնված է եղել տեղական հոգևոր վարիչների ձեռքը, որոնց ապիկարության և միմիայն իրենց հատուկ անհոգության պատճառով անխնամ մնացած դպրոցները հասել են իրենց քայքայման ու անկման ծանր աստիճանին, փակվել են մի շարք դպրոցներ, իսկ եղածներում կրթված ու ցենզավոր ուսուցիչներին շատ տեղերում փոխարինել են անկիրթ, անցենզ, կիսագրագետ ածնավորություններ, որոնք այս կամ այն գյուղում իրենց շուրջը հավաքած մի խումբ երեխաներ՝ գրագիտություն են սովորեցրել ու այդպիսով մի կերպ պահպանել իրենց ողորմելի դրությունը»:[22] Տարբեր առիթներով Ա.Առաքելյանը շրջագայում է Արցախի թեմի

19. «Ղարաբաղ», 1911, թ.1, նոյեմբերի 17:
20. «Ղարաբաղ», 1912, 10-ին մայիսի:
21. Նույն տեղում:
22. Նույն տեղում:

դպրոցները, այցելում գյուղական, եկեղեցական-ծխական դպրոցներ, հարցաքննում աշակերտներին, օգնություն ցույց տալիս ուսուցիչներին՝ ուսուցումն ավելի լավ կազմակերպելու համար:

Նրա տեսչության շրջանում, Արցախի թեմի դպրոցները բավականին առաջադիմում են. բարելավվում է ուսուցումը, ուսուցչական ասպարեզը հիմնականում մաքրվում է անորակ դասատուներից, կարգ ու կանոն է մտցվում դպրոցների ներքին կյանքում, հոգ է տարվում լեզուների ուսուցումը բարձր հիմքերի վրա դնելու համար:

Շուշիում հրատարակվող թերթերը լուսաբանում են նաև դպրոցահասակ երեխաների դաստիարակության հարցերը, նշում դպրոցի և ընտանիքի դերն այդ կարևոր ասպարեզում: Կանանց գիմնազիայի բացման առթիվ գրված թղթակցության մեջ "Шушинская жизнь" թերթն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ կրթությունն ընտանեկան դաստիարակությունից չպետք է կտրել, այլ պետք է ամուր լինի ընտանիքի և դպրոցի կապը: Հետևաբար՝ երեխայի կրթության ու դաստիարակության համար պատասխանատու են ոչ միայն ուսուցիչները, այլև ծնողները: Դրա հետ կապված՝ թերթն առաջ է քաշում մի այլ հարց. ուսուցումն ինքնանպատակ չպետք է լինի, դպրոցում ստացված գիտելիքները պետք է ի սպաս դրվեն օգտակար գործի, կիրառվեն առօրյա կյանքում: Այս միտքն ավելի ընդգծված ձևով արտահայտվում է "Шушинская жизнь" թերթի 1913թ. թիվ 8 համարում[23] տպագրված մի քանի թղթակցություններում: Թերթը գտնում է, որ դպրոցից ելած սաները ոչ միայն զինված պետք է լինեն գիտելիքներով, այլև ընդհանուր զարգացում ունենան, լինեն կուլտուրական, դաստիարակված, ձևավորված աշխարհայացքով: Շրջանավարտները տոգորված պետք է լինեն ջերմ հայրենասիրությամբ, զբաղվեն միայն հանրօգուտ աշխատանքով, մտածեն ժողովրդի ապագայի մասին: Առանձին քաղաքացիների նամակներում դատապարտվում է նրանց վարքագիծը, ովքեր թերևս կրթություն են ստացել, բայց անվայել արարքներ են թույլ տալիս, անազնվություն են հանդես բերում, զուրկ են խղճից ու պատասխանատվության զգացումից: Եվ այդ ամենը հետևանք է այն բանի, որ դպրոցներում ուսումը տարվում է միակողմանի, ծայր աստիճան ցածր մակարդակով, չեն ուսումնասիրվում մեր երկրի, ժողովրդի պատմությունը, քաղաքական առարկաներ չեն անցնում, դասավանդելիս բացակայում է կենդանի օրինակը, սերտ միասնություն չկա հաղորդվող գիտելիքների և առօրյա կյանքի միջև:

Աշակերտների դաստիարակության վրա վատ է ազդում նաև այն, որ դպրոցներում մշակութային-հասարակական միջոցառումներ, ինչպես նաև աշակերտական խմբակներ չեն կազմակերպվում, չկան հանրամատչելի գրականություն-գեղարվեստակա լիարժեք գործեր և այլն:

Թերթը կարևոր տեղ է տալիս նաև աշակերտների (գեղարվեստական) ճաշակի զարգացմանը, որով գրեթե չեն զբաղվում ոչ օրիորդաց և ոչ էլ տղաների դպրոցները:

Աշակերտների դաստիարակության վերաբերյալ թերթերը տպագրում են առանձին հոդվածներ, որոնց հեղինակները փորձում են առաջ քաշած թեզերը հաստատել կենդանի օրինակով, ցույց տալ այն ուսանելին, դրականը, որ պետք է ընդօրինակվի և արմատավորվի դպրոցներում:

Շուշիում լույս տեսած «Փայլակ» թերթը (1915-1917թթ.) մի շարք խնդիրների

23. "Шушинская жизнь", 1913, N.8:

հետ միասին արծարծում է նաև դպրոցական կյանքին, երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող մի շարք հարցեր:

Թերթը կարևոր է գտնում ինչպես բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալու, այնպես էլ ուսուցումը նոր հիմունքներով կազմակերպելու, դպրոցում նոր առարկաներ մտցնելու, լեզուներ ուսումնասիրելու և այլ խնդիրները:

«Հայ դպրոցը» հոդվածում, բնորոշելով դպրոցի տեղը հասարակական կյանքում, թերթը գրում է. «Դպրոցը մանկավարժական հիմնարկություն է. այդ իսկ պատճառով, նրա հիմքում, որպես ամենից ամուր և ապահով պատվանդան, պիտի կցված լինի, մանկավարժական ճշմարտությանը: Իսկ ամեն կրթության, մտքի, հոգեկան ուժերի, ամեն մշակույթի մանկավարժական բազան այս ճշմարտությունն է. նպատակահարմար և հասարակաօգուտ կրթության համար մայրենի լեզուն միակ բավական և անփոխարինելի միջոցն է»:[24] Թերթը կարևորում է հանրօգուտ աշխատանքը սիրող և հարգող, դժվարություններից չվախեցող երիտասարդ սաներ պատրաստելու խնդիրը և շեշտում, որ դրա լուծման գործում մեծ է դպրոցի դերը: «Դպրոցական ռեֆորմ» առաջնորդող հոդվածում կարդում ենք. «Դպրոցական գործով, մատաղ սերնդի կրթությամբ և դաստիարակությամբ հետաքրքրվող հասարակությունը վաղուց նկատել և մատնանշել է այն հակասությունը, որ կա դպրոցի ծրագրի, նրա կատարած գործի, տված արդյունքի և կյանքի պահանջների, հասարակության զարգացման կարիքների միջև:

Մինչդեռ կյանքը պահանջում է դպրոցավարտ երիտասարդից՝ ի վիճակի լինել արտահայտելու կենսական արժեքներ: Մինչդեռ հասարակությունը պահանջում է նրանից կարողանալ ստեղծել հասարակաօգուտ արժեքներ. դպրոցը տալիս է գրաճանաչություն, գիտությունների զանազան ճյուղերի մասին ընդհանուր հասկացողություն: Մինչդեռ հասարակության զարգացման շահերի տեսակետից դպրոցավարտ երիտասարդությունը պիտի կարողանա դիմանալ կյանքի արհավիրքներին և ուժ ունենա կռվելու նրա հետ և դրած նպատակին հասնելու, իսկ սրա համար դպրոցը պետք է կարողանա աշխատանքի մեջ կոփել ու ամրապնդել իր սաների կամքը, հասունացնել նրանց մեջ սիստեմատիկ գործունեության կարողությունը, դպրոցն արձակում է իր ծոցից կամազուրկ, սիստեմատիկ և պլանավոր աշխատանքի համար անպատրաստ, շուտ գրավվող և նույնքան շուտ հիասթափվող երիտասարդություն»:[25]

Թերթը պակաս կարևոր չի համարում կանանց կրթության գործը: Այս մասին նա խոսք է բացում մի շարք առիթներով: Ուշագրավ է հատկապես ականավոր պատմաբան Լեոի հոդվածը «Փայլակ»-ի 1917թ. 20-րդ համարում:

Լեոն գրում է, որ կինը, կրթվելով, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելով, պետք է լինի տղամարդուն հավասար, մեր հասարակության իրավահավասար անդամը: Կրթություն տալու հետ միասին, շեշտում է մեծ գիտնականը, կնոջը պետք է սովորեցնել կատարելու տարբեր աշխատանքներ, տիրապետելու տարբեր մասնագիտությունների:

Կրթության ու դաստիարակության հարցերին նվիրված հոդվածների և թղթակցությունների շարքը բավականին մեծ է թերթում: Թերթը շատ բան է տեսնում կրթված մարդկանց շրջանում. չէ՞ որ լուսավորված գաղափարներն ու մտքերն են, գրում է «Փայլակ»-ը, լուսավորում մարդկանց ճամփաները, սպեղանի լինում մարդկային ցավերին ու հոգսերին: Եվ այս ասպարեզում մեծ դեր ունեն կատա-

24. Տե՛ս «Փայլակ», թ.3, 1915թ., մարտի 15:
25. «Փայլակ», թ.14, 1915թ., ապրիլի 26:

ռելու մտավորականները: «Կազմակերպչական գործի անհրաժեշտությունը» հոդվածում Արշավիր Քամալյանը գրում է. «Ղարաբաղի ինտելիգենցիան պիտի և պարտավոր է կազմակերպվելու. նա պիտի յուր ձեռքը վերցնի ժողովրդին նոր ոգով կրթելու գործը, որպես միակ տարրը այդ խնդրում: Անհրաժեշտ է համախմբվել և անհապաղ գործի անցնել, այլ կերպ ժամանակակից ինտելիգենցիան յուր անտարբերությամբ մեծ պատասխանատվություն է վերցնում յուր վրա: Ժամանակը պահանջում է զոհաբերում. մենք պարտավոր ենք այդ զոհը տալու ազատության ընդհանուր գործին»:[26]

Թերթի դերը ուշագրավ է նաև ընթերցողներին հայրենասիրությամբ դաստիարակելու գործում: Հրատարակված առանձին նյութեր պատմում են հայերի սխրագործությունների, հերոսական դրվագների, հայրենիքի թշնամիների դեմ նրանց անձնվեր պայքարի մասին:

Այդ տեսակետից ուշագրավ է Լեոի «Ղարաբաղ և ղարաբաղցիներ» մեծածավալ հոդվածը, որն իր բովանդակությամբ, ընդգրկված փաստերով ու նյութի շարադրմամբ պատիվ է բերում «Փայլակ»-ին: Այն լույս է տեսել թերթի 1917թ. մարտի 9-ի, 16-ի և 23-ի համարներում:

«Փայլակ»-ի էջերում պատմվում է այն մասին, որ Ղարաբաղը հետզհետե կյանքի շատ ասպարեզներում զիջում է իր դիրքերը և շարունակում է մնալ Ռուսաստանի հետամնաց ծայրամասերից մեկը, ուր թագավորում են տգիտությունն ու խավարամոլությունը: Սակայն ազատության տենչը միշտ վառ է մնում ղարաբաղցիների սրտում:

Այսպիսով՝ արցախահայ պարբերական մամուլի սկզբնավորումն ու զարգացումը պատմական ժամանակաշրջանի օրինաչափ ծնունդն էին և արտահայտում էին XIX դարի երկրորդ կեսի ու XX դարի սկզբների արցախահայ իրականության մեջ տեղի ունեցած բարդ տեղաշարժերի բովանդակությունը: Լույս տեսած պարբերականներն իրենց արծարծած հարցերի բազմազանությամբ (կրթական համակարգի բարեփոխումների, լուսավորության, մշակութային կյանքի և այլն), խմբագրական աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակով, հեղինակային կոլեկտիվի լրագրողական աշխատանքի հմտությամբ՝ ամենայն իրավամբ ուսումնասիրվող ժամանակաշրջանի հայ պարբերական մամուլի պատմության լավագույն էջերն են կազմում:

Արցախահայ մամուլը նոր որակ բերեց հայ լրագրության աշխարհը և շուրջ կես դար արգասավորեց հայկական պարբերական մամուլի պատմության անդաստանը:

26. «Փայլակ» թ.14, 1915թ. ապրիլի 26, էջ 27:

5. Շուշիի թեմական դպրոցի լուսավորական գործունեությունը (1838-1920թթ.)

Շուշիի թեմական դպրոցի պատմությունը գրել է բազմավաստակ պատմաբան, թեմականի շրջանավարտ Լեոն (Առաքել Բաբախանյան): Այդ դպրոցի 75-ամյա պատմությանն է նվիրված նաև Համբարձում Առաքելյանի «Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեայ յոբելյանը» (Շուշի, 1913թ.) խորագրով աշխատությունը, որտեղ համառոտակի ներկայացվում է թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիրը, ինչի մասին Լեոի աշխատության մեջ չի նշվում: Խորհրդային շրջանի հայ մանկավարժության երախտավոր Մուշեղ Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» (Երևան, 1964թ.) աշխատության 6-րդ գլխում համառոտակի տեղեկություններ է տրվում նաև Շուշիի թեմական դպրոցի պատմության մասին: Բացի այդ, Շուշիի թեմական դպրոցի պատմության մասին համառոտ տեղեկություններ են տրվում նաև Սուրեն Խուդոյանի «Արևելահայ դպրոցները 1830-1920թթ.» (Երևան, 1987թ.), Վահե Երկանյանի «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում» (Երևան, 1970թ.) աշխատություններում, ինչպես նաև հայ մշակույթի նշանավոր գործիչների այլ գրքերում ու հոդվածներում:

Ուսումնասիրելով վերոնշյալ և այլ աղբյուրներ, հայ պարբերական մամուլում (նախախորհրդային, խորհրդային շրջանի և մեր ժամանակների) լույս տեսած բազմաթիվ հոդվածներ, հարուստ արխիվային նյութեր, մատենադարանի վավերագրեր, Ղ.Աղայանի, Ս.Մանդինյանի, Մ. Աբեղյանի, Հր.Աճառյանի, Ար.Տերտերյանի, Լ.Վարդունու, Աշ.Հովհաննիսյանի և շատ ուրիշների հուշերը, որոնք ժամանակին դասավանդել են թեմական դպրոցում, ինչպես նաև թեմականի շրջանավարտների հուշերը, նկատել ենք, որ առ այսօր լուսաբանված չէ նաև Շուշիի թեմական դպրոցի լուսավորչական գործունեությունը: Մեր առաջադիր նպատակն է նաև նորահայտ արխիվային վավերագրերի և տպագիր սկզբնաղբյուրների օգնությամբ ցույց տալ Արցախի առաջին միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատության՝ թեմական դպրոցի, լուսավորչական գործունեության զարգացման ուղիները 1838-1920թթ., մանրակրկիտ ուսումնասիրությամբ ստեղծել հանրագիտարանային աշխատություն՝ խնդրո առարկա ժամանակաշրջանի Արցախի կրթական համակարգի բովանդակալից պատմության մասին:

Իր գործունեության ընթացքում Շուշիի թեմական դպրոցը բացառիկ և կարևոր դեր խաղաց ոչ միայն Արցախի, այլև արևելահայ մշակույթի, լուսավորության զարգացման գործում:

Շուշիի թեմական դպրոցն իր հիմնադրման առաջին տարիներին ապրել է բավականին ծանր օրեր: Մեր ձեռքի տակ եղած արխիվային և այլ բնույթի աղբյուրներում թեմական դպրոցի բացման տարեթիվն ու ամսաթիվը միշտ չէ, որ համընկնում են՝ միաժամանակ մնալով 1837-1838թթ. շրջանակներում: Հիշյալ դպրոցի պատմության հայտնի գիտակ Լեոն հաղորդում է, որ դպրոցը հիմնադրվել է 1838թ. հունիսի 22-ին,[1] արխիվային մի փաստաթղթում[2] կարդում ենք, որ այն հիմնադրվել է Երևանի թեմական դպրոցի բացումից (1837) հետո, նոյեմբերին:

Թեմական դպրոցի գոյության և հետագա զարգացման հետ կապված ամենասուր և ցավոտ հիմնախնդիրներից մեկը դպրոցական շենքի հարցն է եղել, որը շարունակ զբաղեցրել է թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանին: Ի դեպ, նշենք, որ սկզբում դպրոցը տեղավորված է եղել մեկ մարդու մասնավոր տանը: Նա 1853թ. իր միջոցներով գնեց մի ընդարձակ հողամաս՝

1. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի (1838-1914), էջ 182:
2. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.78, էջ 543:

նպատակ ունենալով իր արդեն ստեղծած թեմական դպրոցի համար առանձին շենք կառուցել: Բայց վաղահաս մահը (1854թ.) նման ձեռնարկումը թողեց անկատար: Հետագայում թեմական դպրոցի շենքը կառուցեց թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը 1872 թվականին:

Թեմական դպրոցի յուրահատուկ նախապատմություն է հանդիսանում այն, որ Բաղադասար միտրոպոլիտը 1836թ. Շուշիում բացում է հոգևոր ուսումնարան, որի բազայի վրա հիմնվում է թեմական դպրոցը և Արցախի թեմում ծավալում արգասավոր լուսավորչական գործունեություն:

1836թ. հայտնի «Պոլոժենիե»-ի (կանոնադրության) համաձայն հայ լուսավորչական թեմերում թեմական հոգևոր դպրոցների, այդ թվում՝ Շուշիի թեմական դպրոցի, հիմնական խնդիրն էր հայ եկեղեցու սպասավորների պատրաստումը: Սակայն հայ հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց և նրա թելադրանքով թեմական դպրոցներն աստիճանաբար հեռացել են իրենց հիմնական խնդրից և ավելի ու ավելի մոտեցել աշխարհիկ նպատակների իրականացմանը: Այդ դպրոցներից են դուրս եկել մեր ծխական տարրական դպրոցների ուսուցիչների մեծ մասը, հայ մշակույթի ու հասարակական մտքի շատ գործիչներ:

Շուշիի թեմական դպրոցը հանդիսացել է արցախահայության հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում, լուսավորության բնագավառում նշանավոր դեր խաղացած փոքրիկ ուսումնական հաստատություններից մեկը և իր որոշակի տեղն ունի մեր ազգային առաջընթացի պատմության մեջ: Նրանում լիովին իրենց արտացոլումն են գտել երկրամասի հայ հասարակական կյանքի հակասությունները, առաջավոր ու հետադեմ ուժերի գաղափարական պայքարը, հին ու նոր մանկավարժության ջատագովների բախումները և այլն: Այդ դպրոցը ևս ենթարկվել է կառավարության հետապնդումներին, գտնվել է իշխանության մշտական հսկողության և սպառնալիքների տակ, բայց և պատվով է ծառայել Արցախի թեմի հայության լուսավորության առաջընթացի ազգանվեր գործին:

Իր 80-ամյա գոյության ողջ ընթացքում թեմական դպրոցը սերտ կապերով կապված էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, հայոց թեմական դպրոցների, էջմիածնի Գևորգյան ճեմարանի հետ: Շնորհիվ այդ ուսումնական հաստատությունների, Շուշիի թեմականն ավարտած արցախցի երիտասարդներն իրենց ուսումը շարունակում են այդ կրթօջախներում, հաղորդակից դառնում ռուս առաջավոր մշակույթին, սոցիալ-քաղաքական, հասարակական տեղաշարժերին և, վերադառնալով հայրենիք, նվիրվում երկրամասի լուսավորության զարգացման գործին:

Շուշիի թեմական դպրոցի գործունեության երեք տարում (1838-1841թթ.), թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտի և ուսուցիչների (Ա.Յուզբաշյան, Ս.Չմշկեան, Ա.Ավշարեան, Տ.Մովսիսեան և ուրիշներ) ջանքերով թեմականը դարձել է Արցախի մշակութային, հայագիտական կենտրոն, պահպանելով ուսումնական հաստատության ազգային կերպարանքը, ուսման ներգրավելով նաև հեռավոր ծայրամասերից, Նուխի քաղաքից, Բաքվից, Շամախուց և այլ հայաշատ վայրերից եկած հայ երեխաներին, նրանց նույնպես հաղորդակից դարձնելով հայոց հին ու նոր հոգևոր-մշակութային արժեքներին, միշտ վառ պահել ազգային ինքնաճանաչման ոգին:

Մեծ է Շուշիի թեմականի դերը XIX դարի առաջին կեսին գրատպության զարգացման գործում: Հայտնի է, որ էջմիածնից հետո հայկական բնաշխարհում երկրորդ տպարանը ստեղծվել է Արցախի խոշոր մշակութային կենտրոն Շուշի քաղաքում՝ 1827թ.:[3] Հրատարակչական գործը որոշակի բարելավվեց թեմի առաջ-

3. Տե՛ս Ռ.Իշխանյան, Հայ գիրքը (1512-1920), Երևան, 1981, էջ 111:

նորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանի եռանդուն գործունեության շնորհիվ: Նրա ջանքերով Վենետիկի Մխիթարյանների միաբանության, Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանից բերված նոր տառատեսակներով ու սարքավորումներով հիմնովին վերանորգվում է տպարանը, այն տեղափոխվում է թեմական դպրոց ու կոչվում Շուշիի հայոց հոգևոր տեսչության տպարան կամ ուղղակի «Վիճակավոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան միտրոպոլիտի Բաղդասարի»:[4] Միտրոպոլիտի գործունեության շրջանում թեմական դպրոցի տպարանում հրատարակված հայագիտական, ուսումնական, կրոնական, գրականագիտական և լեզվաբանական աշխատություններից ուշագրավ էին հատկապես Հովսեփ Արցախեցու «Համառոտ բառգիրք իր գրաբարե աշխարհաբար», Պողոս Ղարաբաղցու (Ներսիսյան) «Համառոտութիւն հայկական քերականութեան» ուսումնամեթոդական ձեռնարկները, Եսայի կաթողիկոս Ջալալյանի «Պատմություն կամ հիշատակ ինչ-ինչ անձից դիպելուց աշխարհին Աղվանից», Միքայել Սալաթյանի «Կրոնագիտություն կամ հոգեվարժություն քիրստոնեական» և այլ աշխատություններ, ուսումնական ձեռնարկներ և ուղեցույցներ:[5]

Շուշիի թեմական դպրոցի լուսավորչական գործունեությունը լայն թափ է ստանում հատկապես XIX դարի երկրորդ կեսին: Այսպես, դարի 50-ական թվականներին թեմական դպրոցում հիմնադրվում է «Կրթասիրական ընթերցասիրաց ընկերություն» (1858-1859թթ.), որի հիմնական ուղղություն տվողը թեմական դպրոցի ուսուցիչներն էին՝ Հակոբ Տեր Մովսիսյանը, Նիկոլ Աթաբեկյանը, Ստեփան Ներսիսյանը և ուրիշներ: Շուշիի մտավորականության ներկայացուցիչների գործունեությունը նպատակամղված էր ազգային համախմբման գաղափարին: Այդ և ուրիշ գործիչների, թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ այստեղ առաջին անգամ բացվեց գրադարան-ընթերցարան: Ընկերությունը հայ լուսավորչական թեմերից (Նոր Նախիջևանից, Աստրախանից, Վրաստանից, Երևանից, Բաքվից, Մոսկվայի Լազարյան ճեմարանից և այլ հայաշատ վայրերից) ստանում էր լույս տեսնող հայկական և ռուսական պարբերականներ («Հյուսիսափայլ», «Արարատ», “Журнал для воспитания”), գրքեր, ուսումնական ձեռնարկներ: Բացի այդ, ընկերության անդամները գրադարան-ընթերցարանին են նվիրում բազմաթիվ գրքեր, ձեռագիր մատյաններ:

XIX դարի 60-ական թվականներին՝ կյանքի պահանջներին համընթաց, արցախահայության մեջ ավելի է բորբոքվում հետաքրքրությունն ազգային լուսավորական գործի նկատմամբ: Այդ տասնամյակում թեմական դպրոցում լուսավորչական արդյունավետ գործունեություն ծավալեցին առաջադեմ գաղափարներով տոգորված գործիչներ Պետրոս Շանշյանը, Պերճ Պռոշյանը, Սիմեոն Հախումյանը, Մարիամ Հախումյանը, Ստեփան եպիսկոպոս Մուրադյանը և ուրիշներ: Նրանց նախաձեռնությամբ Շուշիում ոչ միայն բացվեց առաջին բարեկարգ օրիորդաց դպրոցը (1864),[6] այլև հիմնվեց «Դպրոցասեր հայուհյաց ընկերություն» (1864թ.), որի անդամները (40 հայ կանայք) պատրաստակամություն են հայտնում նվիրատվություններ կատարել և գյուղերում բացել իգական դպրոցներ: Շուշեցի հայ կանայք (Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը և ուրիշներ) թեմական դպրոցի ուսուցիչների աջակցությամբ գավառում լուսավորություն են տարածում հատկապես աղջիկ երեխաների կրթության գործը կազմակերպելու համար:

---

4. Տե՛ս Հայ գիրքը 1801-1805թթ., Երևան, 1968, էջ 112-113:
5. Նույն տեղում:
6. Գ.Հարությունյան, Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարում, Ստեփանակերտ, 2000, էջ 25:

Դարի 70-ական թվականներին, շնորհիվ Շուշիի թեմական դպրոցի, մշակութային կյանքը վերելք է ապրում: Թեմականի դերն ավելի է բարձրանում, երբ թեմական դպրոցի տեսուչ Խորեն Ստեփանեի աշխատակցությամբ հրատարակվում է «Հայկական աշխարհ» մանկավարժական ամսագիրը (1874-1876թթ.)[7], որը մեծ դեր է խաղում արցախահայ հասարակական, գիտակրթամշակութային կյանքում: Ամսագրի հրապարակումների միջոցով մանկավարժական ոլորտի աշխատողներն իրազեկ են դառնում Արցախի թեմի դպրոցներում, մշակույթի օջախներում առկա խնդիրներին, տեղեկանում յուրաքանչյուր օջախում դրանց լուծմանն ուղղված ջանքերին: Այս կերպ փորձի փոխանակումը նպաստում է առկա դժվարությունների առավել հեշտ հաղթահարմանը: «Հայկական աշխարհ»-ը դարձավ նաև ուսուցիչների անհատական ունակությունները դրսևորելու մշտահոժար ամբիոն: Ամսագրի ծրագրային հիմնական խնդիրն է նաև համակողմանի լուսաբանել թեմական, օրիորդաց, ծխական դպրոցների ներքին կյանքին վերաբերող բազմաբնույթ հարցեր: Ամսագիրն իր շուրջն է համախմբում թեմական, օրիորդաց դպրոցների ուսուցիչներին՝ հայ մանկավարժության նոր սերնդի գործիչների մի մեծ խումբ, որի միջոցով էլ նպատակ էր դրված լուծել Արցախի կրթական համակարգում կուտակված հրատապ խնդիրները, ինչը հնարավորություն կտա ունենալու առաջավոր կրթական համակարգ:

Դարի 70-ական թվականներին թեմական դպրոցի դերն առավել բարձրանում է գրատպության զարգացման գործում: Այսպես, օրինակ, թեմական դպրոցի տպարանում այդ տասնամյակում տպագրվող գրքերի բնույթը նկատելիորեն փոխվում է: Լուսավորության, գրականության և հայագիտության զարգացմանը համընթաց մեծ չափերի է հասնում պատմագիտական, բանասիրական, տեղեկագրական, լեզվագիտական, գեղարվեստական գործերի և զանազան դպրոցական դասագրքերի, ուսումնական պլանների, ծրագրերի, քարտեզների ու բառարանների հրատարակությունը, ընդլայնվում է նաև թարգմանական գրականության տպագրությունը: Աստիճանաբար կատարելագործվում է տպագրության տեխնիկան: Հոգևոր հայրերի տպարանը շարունակում է հրապարակ հանել նոր հրատարակություններ: Այստեղ լույս են տեսնում գիտության մագիստրոս Կ.Եղյանցի «Ներքին կեանք հին Հայաստանի» նշանավոր աշխատությունը, որը ռուսերենից աշխարհաբար էր թարգամանել Պ.Պռոշյանը, Մ.Շամշյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» ուսումնական ձեռնարկը՝ որպես վերահրատարակություն և այլ գրքեր, ձեռնարկներ, դպրոցական կանոնադրություններ: Ուշագրավ է նշել, որ 1870-ական թվականներից սկսած՝ թեմական դպրոցում գրատպությանը զուգընթաց կազմակերպվում է նաև գրավաճառության գործը: Արցախի թեմում, Նուխիում, Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, իսկ հետագայում հայաշատ այլ կենտրոններում շրջիկ գրավաճառների փոխարեն երևան են գալիս գրավաճառանոցներ, ձևավորվում ու զարգանում է գրադարանային գործը, տպագրվում ու տարածվում են հատուկ գրացուցակներ, իսկ թեմական դպրոցի ուսուցիչները (Բարսեղ Տեր Մովսիսյան, Վարդան Փափազյան, Խորեն Ստեփանե և ուրիշներ), թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը, մեծ աշխատանք են ծավալում այդ ուղղությամբ, կապեր հաստատում Ռուսաստանում, հայկական գաղթօջախներում բնակվող հայության հետ, նպաստում հայ գրքի տարածմանը:

Գրքի տարածման ուղղությամբ նշանակալի է նաև թեմական դպրոցում հիմնված «Կրթասիրական ընկերության» (1876) գործունեությունը, որը կազմակերպում է դպրոցներին գրքեր, ուսումնական դասագրքեր, ձեռնարկներ, պլաններ ու ծրագրեր մատակարարելու գործը, հիմնում է փոքրիկ գրավաճառանոցներ (խա-

7. Մ.Մխիթարյան, նշվ.աշխ., էջ 12:

նութներ) թեմական դպրոցում և Նուխիի ազգային հոգևոր ուսումնարանում, այլ հայաշատ վայրերում:

Շուշիի թեմական դպրոցը XIX դարի 80-90-ական թվականներին, չնայած նույնպես ենթարկվել է ցարական կառավարության հետապնդումներին, գտնվել իշխանության մշտական հսկողության տակ, այնուամենայնիվ, մանկավարժական կոլեկտիվի եռանդուն գործունեության շնորհիվ պատվով է ծառայել արցախահայության լուսավորության առաջընթացի ազգանվեր գործին: Այդ տասնամյակներում արմատական վերափոխումներ կատարվեցին թեմական դպրոցի լուսավորչական գործունեության մեջ: Այսպես, թեմական դպրոցի ուսուցիչների (Ս.Մանդինյան, Ղ.Աղայան, Հ.Առաքելյան, Լ.Սարգսյան, Գ.Գուլիքևխյան, Մակար Բարխուդարյան, Գ.Հովհաննիսյան, Ս.Գիուլզադյան և ուրիշներ) և Շուշիի հայ հասարակության ներկայացուցիչների նախաձեռնությամբ քաղաքում հիմնվում է «Կովկասի հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղը»,[8] որի վարչության նախագահը, միաժամանակ նաև գանձապահն ու քարտուղարը Լեոն էր: Ընկերության անդամների թիվը տարեց տարի ավելանում է՝ հասնելով 160-ի:[9] Ընկերության հանգանակած միջոցներով Շուշի քաղաքում բացվում է գրադարան-ընթերցարան, դրանց մի մասն էլ հատկացվում է հրատարակչական գործին:

Արցախի թեմում լուսավորության, մշակույթի, հասարակական-քաղաքական մտքի, զարգացման գործում թեմական դպրոցի դերն ավելի է բարձրանում: Թեմական դպրոցի հայոց լեզվի գրականության ուսուցիչ Նիկ. Տեր Ավետիքյանը հրատարակում է «Քնար խոսնակ» գրական-պարբերական ժողովածուն (1881թ.), որն ունեցել է ընդամենը մեկ համար: Ինքնատիպ այդ հրատարակության մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գրականության, մշակութային կյանքի հարցերին նվիրված բազմաբնույթ նյութեր՝ բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածքներ, թարգմանություններ ռուս և եվրոպական դասականներից՝ Պուշկինից, Լերմոնտովից, Հայնեից, Բայրոնից և այլ հեղինակներից: Պարբերականի գրական-գեղարվեստական բաժնում Տեր-Ավետիքյանը տպագրում է 1880թ. գրած իր «Պուշկինի արձանը» բանաստեղծությունը, ուր բարձր է գնահատում ռուս մեծ բանաստեղծի գրական ժառանգությունը և դրվատում հայ և ռուս գրական, մշակութային դարավոր կապերն ու բարեկամությունը:[10]

Ժողովածուում հրապարակված «Հյուսիսի ձմեռ», «Սով», «Հյուսիսի աշուն», «Հասարակություն» և այլ ստեղծագործություններում հեղինակը շոշափում է սոցիալ-տնտեսական հարցեր և փորձում է գեղարվեստական խոսքի ուժով արտահայտել աշխատավորների իղձերն ու ցանկությունները, նրանց միտքն ու խոսքը: Պարբերականի առաջնորդողում Ն.Տեր-Ավետիքյանը նշում է, որ 70-ական թվականների սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում նկատվող վերընթաց շարժումը մեծ վերափոխումների հունով տարավ արցախահայ իրականությունը: Այդ հողի վրա թափ առած հասարակական կյանքի աշխուժացումը ծնունդ տվեց նաև ժամանակի պահանջներին համահունչ պարբերական մամուլի հրատարակմանը: Այդ ժամանակներում կյանքի ուղեգիր ստացան «Հայկական աշխարհ»-ն ու իր պարբերական ժողովածուն, որն առաջընթաց երևույթ էր երկրամասի մշակութային կյանքում:

Պարբերական ժողովածուի էջերում արտացոլված են նաև արցախահայ կյանքի զարգացումը խթանող մշակութային ուղղությունները՝ դպրոցական գործի վե-

8. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 205: Տես նաև Հ.Շատվորյան, Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության պատմություն, Երևան, 2007:
9. Նույն տեղում:
10. Ս.Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), էջ 73:

ռելքը, կանանց կրթության պահանջը, թատրոնի ստեղծման և այն ապահովելու անհրաժեշտությունը, մամուլի օրգաններ ստեղծելու, հրատարակչական մարմիններ կազմակերպելու գործը և այլ հիմնախնդիրներ: Այսպիսով, Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» գրական-պարբերական ժողովածուն որոշակի դեր է խաղացել ժամանակաշրջանի Արցախի գրական մտքի առաջընթացի ասպարեզում, նպաստել մշակութային կյանքի զարգացմանը, արծարծել ժամանակի հրատապ խնդիրները:

Գրեթե նույն տարիներին (1881-1884թթ.) Արցախի մշակույթի, հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես և լուսավորության ասպարեզում մեծ դեր է խաղացել ականավոր մշակութային գործիչ Սիմեոն Հախումյանի «Գործ» գրական, քաղաքական և ազգային հանդեսը:

Սկզբից ևեթ Ս.Հախումյանը հրապարակախոսական-հրատարակչական հմտություն է հանդես բերում՝ հարուստ և խելացի ծրագիր պատրաստելով «Գործ»-ի հրատարակման համար: Բազմաթիվ հարցերի լայն լուսաբանման համար նա նպատակ ուներ պարբերաբար, ամիսը մեկ անգամ հրատարակել «Գործ»-ը հետևյալ բաժիններով. խրոնիկա (ենթադրվում էր տպագրել կառավարական կարգադրությունները, ռուսական, անդրկովկասյան և արտասահմանյան կյանքի նորությունները), լուսաբանել հայերի և հարևան ժողովուրդների տնտեսական, բարոյական վիճակը, գեղարվեստական գրականություն, քննադատական տեսություններ, քաղաքական, ներքին կյանքի տեսություն և մանկավարժական ժամանակագրություն:[11] 1881թ. նոյեմբերի 27-ին Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությունը պաշտոնապես հայտնում է Ելիզավետպոլի նահանգապետին, որ Հախումյանին թույլատրվում է հրատարակել «Գործ» հանդեսը՝ ներկայացված ծրագրով: Հախումյանի «Գործ» հանդեսի անդրանիկ համարը լույս է տեսնում 1882թ. մայիսին, Թիֆլիսում, Ա.Վարդանովի տպարանում, ընդամենը մեկ համար՝ 112 օրինակով:[12] Ս.Հախումյանը նյութական ծանր կացության պատճառով հնարավորություն չի ունենում հրատարակել հաջորդ համարը: Իսկ որպեսզի չկորցնի հրատարակչի իրավունքը, Հախումյանը ստիպված 1883թ. հրատարակում է 13 էջանոց մի տետր «Գործ» անունով (Մ.Մահտեսու տպարանում): Երրորդ համարը լույս է տեսնում 1884թ.: Թեև հրատարակիչը խոստանում է կարգավորել հանդեսի հետագա լույս ընծայումը, սակայն դա նրան չի հաջողվում, և այն հրատարակվում է ընդամենը երեք համարով:

Թեմական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ Սիմեոն Հախումյանի «Գործ» պարբերականը Արցախի մամուլի պատմության այս շրջանում առանձնանում է լայն տեղեկատվությամբ, հասարակական կյանքի, մշակույթի, աշխարհաբարի, դպրոցի ու մանկավարժության, նոր գրականության, գիտության, արվեստի և մշակութային կյանքի այլ ուղղությունների վերաբերյալ իր հրատապ ու հարուստ նյութերով: «Գործ»-ի համարներում հրապարակված նյութերը բազմաբովանդակ էին: Տեղեկատվության հետ միասին նրանում զետեղվում էին նաև բանաստեղծություններ, արձակ գործեր, գրական, գիտական, հասարակական, քաղաքական, կրթական կյանքին առնչվող բազմաբնույթ հոդվածներ և այլ նյութեր: Հանդեսը կարևորում էր նաև ռուս և եվրոպական առաջավոր արվեստին, գրականությանը, կրթական համակարգի ոլորտին հաղորդակից լինելու, հոգևոր-մշակութային կապերն ամրապնդելու անհրաժեշտությունը:

---

11. Ա.Բ.Կարինյան, Հայ պարբերական մամուլի պատմությունից, հ.1, Երևան, 1963, էջ 222: Տե՛ս նաև Մ.Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, էջ 11:
12. Ա.Կարինյան, նշվ.աշխ., էջ 224:

«Գործ» հանդեսին Արցախի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքին վերաբերող հետաքրքիր և բովանդակալից հոդվածներով աշխատակցում էին տաղանդավոր հրապարակախոսներ, գրողներ, արվեստի նշանավոր գործիչներ, մանկավարժներ Համբարձում Առաքելյանը, Ալեքսանդր Քալանթարը, Հակոբ Խոջամիրյանը, Մահտեսի Առուստամյանը և ուրիշներ: Մշակույթի գործիչները «Գործ»-ի առաջին համարում տպագրած իրենց հրապարակումներում հայ մտավորականության ուշադրությունը հրավիրում են տնտեսական խնդրի վրա, որի լուծումով էլ պայմանավորվում է ժողովրդի մտավոր զարգացման հետագա ապահովումը:

«Գործ» հանդեսն իր լուրջ ավանդն է ներդրել Արցախի պատմության, երկրամասում տեղի ունեցող մշակութային վերընթացի լուսաբանման գործում: Առաջին անգամ ակնարկների ձևով սկսվել է հրատարակվել Արցախի մշակույթի նշանավոր օջախներ Շուշիի թեմական դպրոցի 46-ամյա և օրիորդաց դպրոցի 6-ամյա տարեդարձների տոնակատարությունները և ընդգծվել այդ երկու կրթօջախների խաղացած դերն արցախահայ իրականության մեջ, երկրամասի ժողովրդի սոցիալ-քաղաքական և մշակութային առաջընթացում: Միաժամանակ, հանդեսը հարց է բարձրացնում, որ 20000 բնակիչ ունեցող Շուշի քաղաքում բացվի մի գրադարան կամ ընթերցարան:[13]

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում ականավոր բանասեր, ազգագրագետ, թեմական դպրոցի ուսուցիչ Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդես»-ը (1896-1897թթ.), որը տպագրվում էր Շուշիում՝ Մահտեսի Հակոբյանի տպարանում: Պարբերականին աշխատակցում էին հայագիտության երախտավորեր Մ.Աբեղյանը, Հր.Աճառյանը, Ստ.Մալխասյանը, Թ.Թորամանյանը, Եր.Շահազիզը, Ն.Տեր-Ավետիքյանը, թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի ուսուցիչները և ուրիշներ:

Հանդեսի համարներում տպագրված բազմաբնույթ նյութերը ցույց են տալիս, որ Արցախի՝ ըստ ժամանակագրության չորրորդ պարբերականում աստիճանաբար ամրապնդվում են այն սկզբունքները, որոնք առաջադրվել են նախորդ պարբերականների ծրագրային նյութերում, որոնք էլ որոշել են նրա ճիշտ դրվածքը և օրինակ հանդիսացել նաև հետագա տարիներին հրատարակված գիտական մամուլի համար: «Ազգագրական հանդես»-ը համաքայլ էր ընթանում կյանքի պահանջներին, ակտիվորեն միջամտում էր գիտական մտքի կազմակերպմանն ու ուղորդմանը, խթանում երկրամասի ազգագրության, հայագիտության, նաև մշակութային կյանքի առանցքային հարցերի պարզաբանումը:

Հանդես հրատարակելու միտքը միանգամից չի հղացել Եր.Լալայանի մոտ, նա երկար ժամանակ այդ մասին խորհել և ջանքեր է ներդրել: Սկզբում ջանասիրաբար աշխատակցում էր հայ նշանավոր պարբերականներին («Արարատ», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Փորձ», «Արձագանք» և այլն), հրատարակում ազգագրական, բանասիրական, պատմագիտական հոդվածներ, ապա՝ աշխատություններ, որտեղ արտահայտում է իր հասարակական-գաղափարական մտորումները: Ականավոր ազգագրագետը նպատակադրվում է հրատարակել իր ծավալով և կառուցվածքով այնպիսի մի պարբերական, որտեղ արտացոլվեն այդ միտումները և զետեղված հոդվածները, փաստերը պատմագիտական, ազգագրական, բանասիրական, մշակութային կյանքին վերաբերող նյութերն ու հաղորդումները, նամակները և այլ նյութեր գերազանցապես վերաբերվեն հայ ժողովրդին, նրա պատմությանը, տնտեսական դրությանը, մշակույթին:

13. «Գործ», 1882, էջ 82:

Այս պարբերականի գլխավոր միտումը եղել է ազգագրության, բանահյուսության, հնագիտության, հայագիտության հիմնահարցերի լուսաբանումը: Առաջին գիրքը սկսվում է «Ազգագրություն» բաժնով, որտեղ զետեղված են բազմաբնույթ հոդվածներ՝ հայ ազգագրության համառոտ տեսության մասին: Հենց իր հոդվածում Եր.Լալայանը պատմում է ազգագրության անգնահատելի գոհարների՝ գողթան երգերի ու զրույցների կարևորության մասին, նշելով, որ դրանք «Հայոց հոգեկան ու մտավոր կյանքի փառավոր արշալույսի պայծառ հայելին են»:[14]

Վերոհիշյալ տասնամյակում Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները, բացի պարբերական մամուլի հրապարակումից, հետաքրքիր ու բովանդակալից լուսավորչական ձեռնարկումներ են իրականացնում: Այսպես, օրինակ, 1896թ. թեմական դպրոցում հիմնադրվում է Թանգարանային և հնագիտական ընկերություն, որի հիմնադրման գործում մեծ դեր են խաղացել թեմականի ուսուցիչներ Էյզեն Ռեոսլերը (գերմաներենի ուսուցիչ), Ա.Գյուլիքեխյանը (պատմություն), Ս.Աթաբեկյանը (աշխարհագրություն), Յ.Ճաղարյանը (պատմություն), Ա.Աթաբեկյանը (բանահյուսություն) և ուրիշներ:[15] Նրանք իրենց սաների հետ միասին հնագիտական ուսումնասիրություններ են կատարում Արցախի գավառներում, հայտնաբերում զգալի թվով շինությունների մնացորդներ, անոթներ, դրամներ, զենքեր, զարդարանքներ, մատանիներ, սափորներ, եկեղեցական մատյաններ, գորգեր, գեղեցիկ մանվածքներ, զանազան գործիքներ ու այդ ամենը ցուցադրում թեմական դպրոցին կից ստեղծված թանգարանում: Ցուցադրվում են նաև թեմական դպրոցի աշակերտների ուժերով հայտնաբերված խաչքարերը, արձանագրությունները, Արցախի բնակչության զբաղմունքի, ծիսակատարությունների, ժողովրդական այլ սովորությունների, ազգագրության, պատմության վերաբերյալ գտած հնությունները, ձեռագիր մատյանները, Շուշիում հրատարակված պարբերականների համարները և այլ իրեր: Դրվատելով այդ նախաձեռնությունը, Երվանդ Լալայանն «Ազգագրական հանդես»-ի «Հնութիւններ» բաժնում մատնանշում է, որ հայտնաբերված հնությունները դարերի պատմություն ունեն և ամենից առաջ վկայում են տեղի բնակիչների զբաղմունքի և մշակույթի զարգացման բարձր աստիճանի մասին:[16]

Շուշիի թեմական դպրոցում հիմնադրվում են նաև «Մարդասիրական», «Թատերական», «Դպրոցասիրաց», «Գրադարանային» ընկերությունները, որոնց նպատակն էր լուսավորություն տարածել Արցախի գավառներում: Շուշեցի հայրենասեր գործիչներ Մ.Ժամհարյանը, Մ.Թադևոսյանը, Ս.Դոլուխանյանը, Ա.Թառումյանը և ուրիշներ հայրենօգուտ նվիրատվություններ են անում ընկերությունների ֆոնդին՝ լուսավորչական օջախներ ստեղծելու, գրադարան-ընթերցարան բացելու, գիրք, գրականություն հայթաթելու համար: Ընկերությունների միջոցներով ստեղծված Շուշիի թեմական դպրոցի գրադարանը հարստացել է տիկին Նվարդ Ժամհարյանի նվիրատվությամբ: Նա իր ամուսնու՝ գրող Մարգար Ժամհարյանի, ամբողջ գրադարանը (բաղկացած 238 գրքից)[17] նվիրում է դպրոցին և քաղաքի գրադարան-ընթերցարանին:

Թեմական դպրոցի հայ գրականության, պատմության ուսուցիչ, ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանի նախաձեռնությամբ 1887թ. ուսուցիչները (Ա.Աթաբեկյան, Յու. Ճաղարյան, Ա.Գյուլիքեխյան) բարձր դասարանի աշակերտների

14. «Ազգագրական հանդես», 1896, Ա գիրք, էջ 9:
15. «Մշակ», 1898, թ.6, հունվար 17: Տե՛ս նաև «Ազգագրական հանդես», 1896, Ա գիրք, էջ 5-6:
16. «Ազգագրական հանդես», 1986, գիրք Ա, էջ 39:
17. «Մշակ», 1909, թ.3 (հունվար):

հետ միասին կազմակերպում են «Գրական ընկերություն»:[18] Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր էր կարդալ մեկ ռեֆերատ: «Գրական ընկերությունը», պարապմունքներից բացի, ձեռնամուխ է լինում հրատարակչական գործունեության: Ընկերության անդամները Մ.Աբեղյանի նախաձեռնությամբ հրատարակում են Ռաֆֆու «Խենթ» վեպը՝ Արցախի մշակույթի ականավոր գործիչ, շուշեցի Տիգրան Նազարյանի խմբագրությամբ, Հ. Սենկևիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, Աբեղյանի «Դավիթ և Միհր ժողովրդական դյուցազնական վեպ»-ը (հայ ժողովրդական էպոսի երկրորդ տարբերակը), Լեոի գեղարվեստական ստեղծագործություններն ու պատմական ուսումնասիրությունները՝ «Վե՞պ, թե պատմութիւն» (1887), «Կույր աղջիկը», «Վահան Մամիկոնյան» (1888), «Իմ Յիշատակարան», «Սպանուած հայրը» (1889) և այլ գործեր:[19] «Գրական ընկերության» նիստերում հայ գրականության, պատմության, հայ ժողովրդի պատմական անցյալին և ներկային վերաբերող թեմաների շուրջ ծավալվող բանավեճերը զարգացնում էին աշակերտների գրական միտքը և գեղագիտական ճաշակը: Հետագայում ընկերության անդամներից շատերը (Լ.Աթաբեկյան, Հ.Խանլարյան, Մ.Հովհաննիսյան, Ա.Աբրահամյան և ուրիշներ) աչքի ընկնող տեղ գրավեցին հայ գրականության, պատմության անդաստանում:

XIX դարի վերջին՝ XX դարի սկզբին Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչների՝ Ար.Տերտերյանի, Նիկ. Տեր-Ավետիքյանի, Հր.Աճառյանի, Առ.Առաքելյանի, Հովակիմ Ներսիսյանի, Հովսեփ Ներսիսյանի, Աբ.Ոսկանյանի, Բենիկ Վարդապետի (տեսուչ), Ար. Միրաբյանի և ուրիշների խմբագրությամբ և ծանոթագրություններով լույս են տեսնում Ղ.Աղայանի, Մուրացանի, Հ. Խանլարյանի, Լ. Աթաբեկյանի, Համբ. Առաքելյանի, Ս. Հախումյանի և այլ հայ գրողների ստեղծագործությունները: Բացի այդ, թեմականի ուսուցիչներ Լ.Վարդունու, Նիկ. Յարամիշյանի, Ս. Ափյանի, Գ. Խաչյանի, Աշ. Հովհաննիսյանի, Հ. Մուսայելյանի, Ա. Բահաթրյանի, Ա. Դանիելյանի և շատ ուրիշների խմբագրությամբ լույս են տեսնում «Ղարաբաղ», «Միրաժ», «Միություն», «Փայլակ», «Նեցուկ», «Ծիածան», «Պայքար», «Արցախ», «Նոր կյանք» և այլ պարբերականներ: Տարբեր համարներում լույս տեսած բազմաբնույթ հոդվածներ նվիրվել են մյուս ժողովուրդների հետ արցախահայության պատմական, լեզվագրական, մշակութային ու տնտեսական կապերին, ինչպես և արցախահայության ու նրա մշակույթի հետ այլ ժողովուրդների պատմության ու գործիչների առնչությունների հարցերին: Հատկապես շատ ուսումնասիրություններ են նվիրվել հայ-ռուսական բարեկամական փոխհարաբերություններին ու դարավոր մշակութային կապերին:

Շուշիի թեմական դպրոցի պատմության տարբեր շրջաններում բեղուն լուսավորչական գործունեություն են ծավալել հայ դպրոցի և մանկավարժության ասպարեզի ականավոր գործիչները, գրողները, մանկավարժները, մշակույթի տարբեր ոլորտի գործիչները: Ուշադրության է արժանի նշել այն իրողությունը, որ թեմականն ավարտած շրջանավարտները, բարձրագույն կրթություն ստանալով Ներսիսյան դպրոցում, Լազարյան ճեմարանում, էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ինչպես նաև եվրոպական համալսարաններում, վերադառնում են թեմական դպրոց և իրենց ուսուցիչների հետ միասին նվիրվում երկրամասի մշակույթի, լուսավորության զարգացման գործին: Թեմականի սաները երկար տարիներ դասավանդել են նաև Արցախի թեմի այլ դպրոցներում:

18. Հ.Առաքելյան, նշվ.աշխ., էջ 68-69:
19. Ս.Ավագյան, նշվ.աշխ., էջ 124, նաև Մ.Հարությունյան, Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, 2010, էջ 60-61:

6. Հայկական դպրոցների վերաբերյալ ընդունված կանոնադրությունները (1870-1896թթ.) և ցարիզմի հակահայկական քաղաքականությունը լուսավորության բնագավառում

XIX դարի 60-ական թվականներին Արևելյան Հայաստանում, Արցախի թեմում ևս, դպրոցական կյանքում նկատվող տեղաշարժերը պայմանավորված էին նորընտիր Գևորգ Դ Կաթողիկոսի (1866թ.)[1] մի շարք լուսավորչական ձեռարկումներով: 1867թ. հունիսի 14-ին նա էջմիածնի միաբաններից կազմում է ուսումնական հանձնաժողով՝ կարգադրելով մշակել դպրոցական նոր կանոնադրություններ՝ ծխական և թեմական դպրոցների համար: Ինչպես նշել էինք նախորդ բաժնում՝ 1868թ. առաջին անգամ հաստատվում են ծխական դպրոցների կանոնները, մի տարի հետո՝ 1869թ. փետրվարին, Գևորգ Դ Կաթողիկոսի լուսավորչական մյուս ձեռնարկումը եղավ թեմական դպրոցների կանոնների ընդունումը:[2]

Ի տարբերություն 1859թ. կանոնադրության, նոր կանոնադրության համաձայն Շուշիի թեմական դպրոցում որոշակի փոփոխություններ կատարվեցին ներքին կյանքում՝ կրթության բովանդակության մեջ և կառավարման համակարգում:

XIX դարի 70-ական թվականներին արևելահայ իրականության մեջ, ինչպես և Արցախի թեմում ավելի մեծ թափ ստացավ լուսավորչական ու դպրոցական շարժումը: Դպրոցական կյանքի համեմատական աշխուժացումն առաջ է քաշում կրթության գործը բարելավելու, աշխարհականացնելու, ժամանակակից մանկավարժական նվաճումները կիրառելու խնդիրները: Դրանց լուծմանն է նվիրվում Հայաստանում, Արցախի թեմի դպրոցներում բեղուն գործունեություն ծավալած հայ մանկավարժության նոր սերունդը: Գնալով ակտիվանում էր հայ գործիչների նախաձեռնողականությունը նոր դպրոցների ստեղծման ու կանոնների մշակման ուղղությամբ:

Սակայն, 70-ական թվականների սկզբին՝ հայկական նոր դպրոցի կազմավորման առաջին իսկ շրջանից, ցարիզմը սկսեց հատուկ ուշադրություն սևեռել այդ գործընթացի վրա: Այն հանգամանքը, որ հայ դպրոցը զարգանում էր պետականին զուգահեռ և նրանից անկախ, չէր կարող չդառնալ պետական պաշտոնյաների մտահոգության առարկան: Այսպես, 1867թ.[3] ցարական կառավարության ընդունած կանոններով Կովկասի բոլոր դպրոցները ենթարկվեցին ուսումնական վարչության վերահսկողությանը՝ բացառությամբ հայ լուսավորչական և ուղղափառ եկեղեցու իրավասության տակ գտնվող դպրոցների: Երբ ստեղծվեց ժողովրդական դպրոցների վերատեսուչների ինստիտուտը, կովկասյան իշխանությունները փորձեցին հայկական դպրոցները նույնպես ենթարկել այդ տեսուչների վերահսկողությանը: Սակայն Գևորգ Դ Կաթողիկոսը, պատճառաբանելով, որ հայ եկեղեցին անհիշելի ժամանակներից ի վեր եղել է ազգային դպրոցի միակ իրավասու տերը, հրաժարվեց ընդունել նման վերահսկողությունը: 1871թ. կառավարությունը որոշեց երկրի բոլոր եկեղեցական-ծխական դպրոցները ենթարկել ժողովրդական դպրոցների տեսչությանը, և հայկական դպրոցներն այս անգամ ևս դուրս մնացին այդ վերահսկողությունից ու պահպանեցին իրենց ինքնավարությունը: Դա հավասարապես վերաբերում էր նաև Արցախի թեմի դպրոցներին:

Կոչված լինելով կենսագործել ցարական իշխանությունների համընդհանուր

1. Տե՛ս Մ.Աբեղյան, Գևորգ Դ.Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 29:
2. «Արարատ», 1869, թ.4, էջ 82:
3. Журнал министерства народного образования, 1869г., 1.142, стр.72.

ռուսականացման քաղաքականությունն «այլազգիների» նկատմամբ, Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձությունը սկզբից ևեթ վարեց ազգային դպրոցները դուրս մղելու ուղեգիծ: Հոգաբարձությունը լայն աջակցություն էր գտնում Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետ բարոն Ա. Նիկոլաի կողմից, որը երկրամասի ռուսականացման մոլեռանդ ջատագովն էր: Նրա զեկուցագրից[4] տեղեկանում ենք, որ կովկասյան իշխանություններն սկսել են սերտորեն հետաքրքրվել հայ լուսավորչական թեմերում, այդ թվում նաև Արցախի թեմում գործող դպրոցների կառուցվածքով ու կազմով: Նրանց ամենից շատ մտահոգում էր այն հարցը, թե ինչո՞ւ այդ դպրոցները հոգևոր են համարվում, բայց ունեն մեծ թվով աշակերտներ (օրինակ, 1871-72 ուստարում Շուշիի թեմական հոգևոր դպրոցն ուներ 250 աշակերտ), իսկ եթե իրականում դրանք հոգևոր չեն, ապա ինչո՞ւ չեն ենթարկվում Կովկասի ուսումնական գերատեսչությանը:

Որոշ ժամանակ անց, ձգտելով ավարտել կայսրության դպրոցական համակարգի միակերպության ձևավորման գործընթացը, պետական գերատեսչության խորհուրդը ցարի հաստատմանը ներկայացրեց հայեցակարգ՝ Կովկասում ուսումնական մասի վերափոխման և դպրոցական նոր կանոնների ընդունման մասին:

Կովկասի ուսումնական օկրուգի հաշվետվությունից[5] տեղեկանում ենք, որ 1873թ. նոյեմբերի 22-ին ցարը հաստատեց նոր կանոնները, որով տեղական դպրոցական համակարգը հավասարվում էր ընդհանուր կայսերականին: Համաձայն ընդունված կանոնների 8-րդ կետի՝ կովկասյան երկրամասի բոլոր պետական, հասարակական, մասնավոր դպրոցները պետք է ենթարկվեին Թիֆլիսի նահանգում՝ ժողովրդական ուսումնարանների տնօրինությանը, մյուս նահանգներում՝ վերատեսուչերին, իսկ եկեղեցական-ծխական դպրոցների նկատմամբ այդ նույն օղակները պետք է իրականացնեն վերահսկողություն: Ընդ որում՝ այդ բոլոր դպրոցների վրա տարածվում էին կայսրությունում գործող այն օրենքները, ըստ որոնց ռուսաց լեզուն պարտադիր է՝, իսկ Ռուսաստանի պատմությունը և աշխարհագրությունը պետք է դասավանդվեն այն դպրոցներում, որտեղ անցնում էին ընդհանուր պատմություն և աշխարհագրություն: Ըստ արխիվային նյութերի և այլ աղբյուրների՝ Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի 1873-1874 ուստարվա ուսումնական պլանում այդ առարկաները ներառված էին:[6]

Քննարկվող ժամանակաշրջանի հայ կրթական գործի լավագույն ներկայացուցիչները (Պ.Պռոշյան, Պ.Շանշյան, Ս.Մանդինյան, Ղ.Աղայան, Հ.Տեր-Հովհաննիսյան, Հով. Տեր-Գրիգորյան և ուրիշներ) գտնում էին, որ անհրաժեշտ է ստեղծել թեմական տեսչի պաշտոն, որը վերահսկի դպրոցները՝ այդպիսով իսկ բացառելով Կովկասի գերատեսչության վերահսկողությունը: Գևորգ կաթողիկոսն իսկույն ևեթ կարգադրեց ստեղծել այդ մարմինը, որը կկարգավորեր և ուղղություն կտար դպրոցների գործունեությանը: «Արարատ» ամսագրի 1873թ. դեկտեմբերի համարում տպագրվեցին թեմական տեսչության ստեղծման մասին կաթողիկոսական կարգադրությունը և հրահանգը:[7] Կաթողիկոսի կոնդակով Արցախի թեմի տեսուչ

4. Տես՝ Доклад Его Императорскому Высочеству Наместнику Кавказского главного инспектора учебных заведений, С.С. Неверов, 1892г., стр.29-30.

5. См. Отчет по главному управлению наместника кавказского, Тифлис, 1873, стр. 277-280.

6. Տե՛ս Հ.Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր (1852-1912թթ.), Շուշի, 1913, էջ 58-60:

7. Տե՛ս «Արարատ», 1873թ. դեկտեմբերի համարը:

նշանակվեց Արիստակես Վարդապետ Սեդրակյանը: Թեմական տեսչության անհրաժեշտությունը՝ ազգային դպրոցի ինքնավարությունը պահպանելու տեսակետից բացի, հարկավոր է նաև դպրոցի ներքին կարիքների համար: Դպրոցների թիվը գնալով աճում էր, մեծանում էին դրանց պահանջները, մերձավոր ղեկավարման կարիք էր զգացվում:

Իհարկե, Գևորգ Դ կաթողիկոսի այդ ձեռնարկումը՝ թեմական տեսչության ստեղծման մասին հրահանգի արձակումը, միանգամայն սրեց դրությունը և կովկասյան վարչությանը ստիպեց դիմել շտապ միջոցների՝ 1873թ. կանոնները հայկական դպրոցների վրա տարածելու համար:

Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետ բարոն Ա. Նիկոլային 1874թ. հունվարին դիմեց կաթողիկոսին և պահանջեց անմիջապես ընդունել կանոնները՝ հայկական դպրոցները պետք է ենթարկվեն պետական վերատեսուչներին: Գործը բավական լարված բնույթ ստացավ: Կաթողիկոսի խնդրանքով կառավարությունն անտեսեց կովկասյան իշխանության մի շարք պահանջները, այդ թվում նաև փոխարքայի այն պնդումը, թե կաթողիկոսի կողմից թեմական տեսչության ստեղծումն անօրինական է: Այս հարցում որոշ դեր խաղաց նաև արտասահմանի հայության և, հատկապես, ռուսահայ համայնքի, պոլսահայերի շրջանում սկսված այն հուզումը, որն առաջացել էր արևելահայերի, ինչպես նաև Արցախի թեմի, Նուխիի գավառի հայկական դպրոցները եկեղեցու իրավասությունից խլելու մասին տարածված լուրերի պատճառով: Տարբեր կազմակերպությունների հայ հասարակական-քաղաքական գործիչները բազմիցս խնդրանքով դիմեցին ցարական կառավարության պաշտոնյաներին՝ ընդունելու դպրոցական նոր կանոններ:

Այսպիսով, 1874թ. հուլիս 19-ին ընդունված կանոնները որոշակի արտոնություններ տվեցին հայ լուսավորչական թեմերի հոգևոր առաջնորդներին: Նոր կանոնները սահմանում էին.

1. Հայ լուսավորչական հոգևորականության պարտականությունն է մնում, համաձայն հոդ.975-ի (հատ.11-րդ, մ. 1-ին), եկեղեցական դպրոցների հիմնումը և նրանց տեսչությունը, ինչպես նաև հոգատարությունը ուսուցման ճիշտ ու հարմարավոր կարգի և ուսուցիչների ու աշակերտների միջև բարի բարքերի պահպանության նկատմամբ:

2. Հայ հոգևորականության կողմից հիմնվող և ղեկավարվող հանրակրթական եկեղեցական-ծխական ուսումնարանների նկատմամբ ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների վրա պարտավորություն է դրվում, համաձայն պետական խորհրդի 1873թ. նոյեմբերի 23-ի բարձրագույն հաստատված կարծիքի, վերահսկել.

ա) որպեսզի բոլոր ուսումնարաններում դասավանդվի ռուսաց լեզուն, իսկ այն ուսումնարաններում, որտեղ անցնում են ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, դասավանդվեն Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն՝ ռուսաց լեզվով,

բ) որպեսզի այդ ուսումնարաններում դասավանդողները լինեն ռուսահպատակներ և ունենան անհրաժեշտ բարոյական հատկություններ:

Վերատեսուչներին իրավունք չի վերապահվում միջամտել ուսումնարանների տեսչական մասին և վերահսկել նրան:

3. Հոգևորականներ պատրաստելու նշանակում ունեցող ուսումնարանները ենթակա չեն ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների վերահսկողությանը և մնում են հոգևոր իշխանության բացարձակ ենթակայության ներքո: Այս հաստատությունների ուսման դասընթացի և ներքին կարգի կանոնները պետք է

ներկայացվեն բարձրագույն կառավարության հաստատմանը:[8]

Գևորգ IV կաթողիկոսը շարունակեց իր արգասավոր հոգևոր-մշակութային գործունեությունն ազգային դպրոցների զարգացման ուղղությամբ: Հայ լուսավորչական թեմերում, ինչպես նաև Արցախի թեմում դպրոցական կյանքի նկատելի տեղաշարժը բացատրվում է նրանով, որ Սինոդն իր իրավասության տակ կենտրոնացրեց հայկական բոլոր դպրոցները: Մի քանի տարիների (1868-1874թթ.) փորձը թելադրեց էջմիածնի Սինոդին թարմացնել ու բարելավել նաև ծխական դպրոցների 1874թ. ընդունված կանոնները: Դրա հիման վրա էլ 1876թ. հոկտեմբերին կաթողիկոսը կոնդակով հաստատեց ծխական դպրոցների նոր կանոնադրությունը, որը կոչվում էր «Կանոնք ծխական դպրոցաց»:[9] Նոր կանոնադրության համաձայն՝ ծխական դպրոցն այժմ պետք է ունենար երկու դասարան, յուրաքանչյուրն ուսման երկու տարվա տևողությամբ: Դասավանդվող առարկաներին ավելացվել էին պատմությունը, երգեցողությունը, գծագրությունը: Սակայն նոր կանոնադրության մեջ չէր արտացոլվել ազգային դպրոցների՝ իրականում գոյություն ունեցող տիպային բաժանումը, ինչպես և անորոշ էր թողնվել առարկաների ընդգրկման հարցը: Սահմանվել էր նաև, որ յուրաքանչյուր ուսուցչի 60-ից ավելի աշակերտ հասնելու դեպքում պետք է բացել երկրորդ զուգահեռ դասարան:

Նոր կանոնադրության մեջ նշվում էր նաև, որ բացի հոգաբարձությունից պետք է առաջադրվեր մի քահանա կամ սարկավագ, որը մշտապես հետևելու է դպրոցի կյանքին: Չնայած կանոնները նախատեսված էին չորս տարվա (1876-1880թթ.) փորձի համար և ենթակա էին հաստատման կամ փոփոխությունների, սակայն մինչև 1886թ. այլևս հնարավոր չեղավ մշակել դպրոցական նոր կանոններ: Դպրոցական կյանքի աշխուժացումը, կրթական-լուսավորական խնդիրների առաջքաշումը խիստ ժամանակին էր և բխում էր հայ ժողովրդի սոցիալական ու հասարակական պահանջներից:

XIX դարի 80-ական թվականներին Ռուսաստանում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ արմատապես փոխեցին ինքնակալության դիրքորոշումն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության հարցերում, մասնավորապես, լուսավորության ոլորտում:

Ժողովրդական լուսավորության ասպարեզում սկիզբ առած ցարական ռեակցիոն քաղաքականությունն ավելի ծանր դրսևորումներ ունեցավ հայ իրականության մեջ: Որքան բարձրանում էր հայ ազգաբնակչության ազգային ինքնագիտակցությունը, ուժեղանում ինքնուրույնության ձգտումը, այնքան ինքնակալությունն ավելի էր ուժեղացնում հակամիջոցները՝ հայկական դպրոցների նկատմամբ սահմանելով խիստ վերահսկողություն: 1884թ. փետրվարի 16-ին ցարը հաստատեց ժողովրդական լուսավորության նախարար Ի.Դելյանովի, Ա.Դոնդուկով-Կորսակովի, Դ. Տոլստոյի (Պետերբուգում կայացած խորհրդակցության նախագահը) նախաձեռնությամբ մշակված «Կովկասի հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին կանոնները», որտեղ նշվում էր. «Հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարաններ են կոչվում բոլոր հանրակրթական տարրական, մեկ և երկդասյա այն ուսումնական հաստատությունները, որոնք գտնվում են եկեղեցիներին ու վանքերին կից և պահվում են կամ բացառապես եկեղեցիների ու վանքերի գումարների հաշվին, կամ ծխականների կողմից ցույց

8. Այդ մասին մանրամասն տես Վ.Երկանյան նշվ.աշխ., էջ 83-84:
9. «Դպրոց», 1875-76, մաս Ա, թ.ս, էջ 133:

տրվող օժանդակությամբ»:[10] Համաձայն այդ կանոնադրության՝ հայ լուսավորչական թեմերում, ինչպես նաև Արցախի թեմում հայկական դպրոցների ղեկավարությունն իրականացնելու էին թեմակալները, որոնց իրավունք էր տրվում դրանց վերահսկելու համար կառավարչապետի և հոգաբարձուի գիտությամբ ունենալ մի տեսուչ, որը պետք է անպայման հավատարիմ հոգևոր անձ լիներ: Նշվում էր նաև, որ ուսումնական գերատեսչության վրա պարտավորություն է դրվում վերահսկել եկեղեցական դպրոցներում բոլոր առարկաների դասավանդմանը՝ բացառությամբ կրոնի:

Կայսերահաստատ կանոններից ոգեշնչված՝ Կովկասի իշխանությունները գործի անցան: Վերջապես նրանց հաջողվեց ձեռք բերել հայ դպրոցի գործերին անարգել միջամտելու երկար սպասված իրավունքը: Հայ հոգևորականությունը փաստորեն մնում էր որպես նյութական միջոցներ հայթաթող, քանի որ բոլոր առարկաների վրա վերահսկողություն էր սահմանվում (բացի կրոնից): Այդ էլ հենց պետք էր ցարական իշխանավորներին, որոնք չնչին գումարներ հատկացնելով ժողովրդական լուսավորությանը, ի վիճակի չէին լինի հայ դպրոցները նյութապես ապահովել, օժանդակություն ցույց տալ: Կառավարությունն ավելի մեծ ուշադրություն էր դարձնում արքունի ուսումնարանին, քան ծխական և թեմական դպրոցների տնտեսական առաջադիմությանը: Այդ շրջանում բարեկարգ վիճակում էր միայն Շուշիի ռեալական ուսումնարանը, որը բացվել էր 1881թ. նոյեմբերին: Այն ուներ 7 դասարան, 23 ուսուցիչ, 316 աշակերտ, որոնցից 252-ը հայեր էին, 72-ը՝ ռուսներ, 15-ը՝ վրացիներ, 17-ը՝ կովկասյան թաթարներ:[11]

Հայկական դպրոցների և, ընդհանրապես, հայության դեմ ցարիզմի իրականացրած բացարձակ ռուսականացման քաղաքականությունը մեծ դժգոհություն առաջացրեց ոչ միայն արևելահայերի, այլև արևմտահայերի շրջանում: Կ.Պոլսի «Արևելք»[12] պարբերականն ահազանգող հոդվածներ էր տպագրում ցարիզմի քաղաքականության մասին, մեղադրում ցարական կառավարությանը (1882թ. Գևորգ Դ Կաթողիկոսի մահից հետո պետք է ընտրվեր նոր կաթողիկոս), որ նա ժողովրդին զրկեց սեփական դպրոցներից:

Էջմիածնի Սինոդն անսպասելի դիմադրություն ցույց տվեց, հրաժարվեց նոր կանոններն ընդունելուց, պատճառաբանելով, որ կրթական գործը կաթողիկոսի՝ վաղուց ի վեր ճանաչված իրավասության է ենթակա, և ինքը այժմ, երբ հայրապետական աթոռը թափուր է, չի կարող իր վրա ծանր պարտականություն վերցնել եկեղեցու հանդեպ: Սինոդը խնդրում է կանոնների իրագործումը հետաձգել մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը:[13] Կովկասյան իշխանությունը մի քանի անգամ կրկնեց իր առաջարկը, բայց Սինոդն անդրդվելի մնաց: Ավելին, Սինոդն զգուշացրեց հայ լուսավորչական թեմերին, որպեսզի նրանք ոչ մի պայմանով չընդունեն կանոնները, պատճառաբանելով, որ հոգևոր իշխանությունից կարգադրություն չեն ստացել: Սինոդին նորից առաջարկվեց մինչև նոյեմբերի 10-ը զեկույց ներկայացնել կանոնների ի կատար ածման մասին: Սակայն, Սինոդը պնդում է, որ հայկական դպրոցները մտնում են էջմիածնի հոգևոր իշխանության իրավասության տակ:

Կովկասի կառավարչապետը հարմար է գտնում, որ հայկական դպրոցները

---

10. Правила об армяно-григориянских церковных училищах на Кавказе, М., 1884г., стр.2.
11. Գ.Հարությունյան, նշվ.աշխ., էջ 23-24, նաև տես, Ռ.Տեր Գասպարյան, նշվ.աշխ., էջ 82:
12. Է.Կոստանդյան, նշվ.աշխ., էջ 4,34,35:
13. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.114:

պետք է խլել էջմիածնի տնօրինությունից և հանձնել ժողովրդական լուսավորության նախարարությանը և այդ առիթով վերափոխել 1884թ. փետրվարի 16-ի կանոնները, իսկ եթե էջմիածինը չենթարկվի այս պահանջին ևս, ապա փակել դպրոցները: 1885թ. հունվարին կառավարչապետի մասնակցությամբ տեղի ունեցավ նոր խորհրդակցություն (որին ներկա էին Դ.Տոլստոյը, Ի.Դելյանովը, Ի.Զինովևը), որը պահանջեց Սինոդից՝ փակել հայ լուսավորչական թեմերում գործող բոլոր դպրոցները, բացի ռուսական տիպի ուսումնարաններից:

1885թ. փետրվարի 5-ին ցարը հաստատեց Կովկասի կառավարչապետի խորհրդակցության որոշումները:[14]

Էջմիածնի Սինոդին ներկայացված հայ լուսավորչական թեմերի կոնսիստորիայի վիճակագրական տվյալների համաձայն, 1885թ. փետրվարի 5-ի որոշման համաձայն՝ փակվել են. Վրաստանի թեմում՝ 79, Երևանի թեմում՝ 102, Շամախու թեմում՝ 11, Կարսի և Բաթումի վիճակներում՝ 27, Աստրախանի թեմում՝ 14, Ղարաբաղի կամ Արցախի թեմում՝ 25 հայկական դպրոցներ, ընդամենը՝ 257 դպրոց:[15] Հանդիպելով անսպասելի դիմադրության, ցարիզմը երկյուղ էր կրում լրիվ վարկաբեկվելուց, ուստի և հարմար առիթներ էր սպասում որոշ զիջումներ անել, որպեսզի վերաբացի հայկական դպրոցները:

Նորընտիր Մակար կաթողիկոսը (1885-1891) հանդիպում ունեցավ Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի (1882-1890) հետ և խնդրեց նրա միջամտությունը դպրոցների վերաբացման համար: 1886թ. հունվարի 16-ին կայսրը հաստատեց դպրոցների վերաբացման որոշումը: «Արարատ» ամսագրի 1886թ. հունիսի համարում տպագրվեցին հայոց եկեղեցական ծխական դպրոցների նոր կանոնները, որոնք կազմել էր Ս.էջմիածնի Սինոդը՝ հաշվի առնելով կառավարության պահանջները:

Նոր կանոնադրության մեջ պաշտպանվել էին արական և իգական դպրոցների անջատ լինելու սկզբունքները, թույլ էր տրվում միմյանց մոտ գտնվող գյուղերին պահել մեկական կենտրոնական դպրոց. սահմանված էին կաթողիկոսի իրավունքները դպրոցների նկատմամբ, նրա հրամանով էին բացվելու և նրա սահմանած կանոններով առաջնորդվելու միդասյա և երկդասյա դպրոցները և այլն: Ի տարբերություն 1868-1876թթ. կանոնների, նոր դպրոցական կանոններում սահմանվում էր դպրոց ընդունվելու տարիքը, ժամկետը՝ հունվարին և սեպտեմբերին, արձակուրդներ՝ քաղաքներում հունիսի կեսից մինչև օգոստոսի վերջը, իսկ գյուղերում՝ ըստ պայմանների: Սահմանվում էին նաև եկեղեցական ու կայսերական տոն օրերը՝ ընդամենը 26 օր: Եկեղեցական-ծխական դպրոցներում ավանդվելիք առարկաներ էին հաստատվում՝ հայոց և ռուսաց լեզուները, կրոնը, թվաբանությունը, հայոց և ռուսաց ընդհանուր աշխարհագրությունը, գծագրությունը, իսկ իգական դպրոցներում՝ ձեռագործ:

Չնայած կառավարության պահանջով Սինոդը հաստատեց դպրոցական կանոնները, սակայն դրանք զուրկ էին որոշակիությունից: Կանոններում չէր նշված ուսուցիչների ընտրության, ուսումնական ծրագրերի, դասավանդվող առարկաների մասին, խոսք չկար Հայաստանի պատմության և աշխարհագրության դասավանդման վերաբերյալ: Այդ կանոնները որոշակի փոփոխություններ կրեցին 1889թ. մարտի 22-ին հաստատված նոր կանոններում, որ կոչվում էին «Կանոնք

14. Նույն տեղում:
15. ՀՀ ԱԱ, ֆ.56, g.3, գ.10, 314, թ.69, 80:

եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց»:[16]

Այս կանոնների համաձայն՝ թեմական առաջնորդը ղեկավարում էր դպրոցները, գործում կաթողիկոսի գիտությամբ ու համաձայնությամբ: Դպրոցական հոգաբարձություններն անմիջապես ենթարկվում էին առաջնորդներին, իսկ ուսուցիչների ընտրության համար սահմանվում էր հետևյալ կարգ. ուսուցիչ լինել ցանկացողները պետք է դիմեին կաթողիկոսին, որը կազմում էր նրանց ցուցակը: Միայն այդ ցուցակի մեջ մտած մարդկանցից կարելի էր ընտրել ուսուցիչներ: Կանոնները մտցնում էին նաև ավագ ուսուցչի պաշտոնը, որի ընտրությունը կատարում էր առաջնորդը:

Արխիվային վավերագրերը վկայում են, որ 1889թ. կանոնները հաստատվելուց հետո Արցախի թեմում գործում էին 25-ից ավելի հայկական դպրոցներ: Այդ դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 30-40 աշակերտ, իսկ դասավանդող ուսուցիչների քանակը հասնում էր 32-ի:[17]

XIX դարի 90-ական թվականներին ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով հայկական դպրոցների վրա խիստ վերահսկողություն է սահմանվում: Կովկասյան ուսումնական վարչության ամենօրյա միտումնավոր հսկողությունը, դպրոցական ասպարեզի սահմանափակումները խոր վիատություն և հուսալքում առաջ բերեցին կրթական ասպարեզի գործիչների շրջանում: Ազգային դպրոցի վաղվա նկատմամբ անվստահությունը համակել էր նրանց: Դպրոցի անհրապույր ներկան և էլ ավելի դժգույն ապագան խիստ անհանգստություն էին պատճառում հայ գործիչներին, Էջմիածնի Սինոդի հոգևոր իշխանությանը: Սակայն հայկական դպրոցների պահպանման ուղղությամբ Էջմիածնի ձեռնարկած միջոցներն ապարդյուն անցան: 1896թ. հունվարին ընդունված որոշման համաձայն՝ կովկասյան իշխանությունները փակեցին հայ լուսավորչական թեմերում գործող բոլոր դպրոցները: Դպրոցների փակումն ուղեկցվում էր ոստիկանական բռնի ուժով և խոր զայրույթ է պատճառում ժողովրդին: Գնալով ծավալվում է հայ հասարակության դժգոհությունները ցարիզմի ռուսականացման քաղաքականության դեմ:

16. «Կանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց», Վաղարշապատ, 1889, էջ 2:
17. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.149, թ.110, 170:

7. Հայ եկեղեցու դիմադրությունը ցարիզմի հակահայկական քաղաքականության դեմ և նրա ազգաշահ առաքելությունն ազգային դպրոցի պահպանման գործում

XIX դարի երկրորդ կեսին հայ եկեղեցական հոգևոր գործիչները, ազգաշահ առաքելությամբ լծվելով ազգային համախմբման գործին, գիտակցեցին, որ ազգի միավորումը, նրա մեջ միասնության գաղափարների սփռումն անհնարին է առանց ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու, ազգային կրթական օջախների կենսահաստատությունը պահպանելու:

Ցարիզմի ազգահալած քաղաքականության պայմաններում, երբ ժողովրդական լուսավորության ասպարեզում սկսված ռեակցիան ավելի ծանր դրսևորումներ ունեցավ, հայ հոգևոր գործիչները երբեք չեն կորցրել իրենց հոգու կորովը, միշտ միջոցներ ու հնարներ են գտել ստեղծված քաղաքական բարդ իրադրության պայմաններում պահպանելու ազգային կրթօջախների գոյությունը՝ նույնիսկ կառավարությունից գաղտնի:

Ս.Էջմիածնի հոգևոր գործիչները, հայ լուսավորչական թեմերի, այդ թվում՝ Արցախի թեմի առաջնորդները, իրենց եռանդուն գործունեությամբ նպաստել են երկրամասի մտավոր և մշակութային կյանքի զարգացմանը:

Ինչպես միշտ՝ հայոց պատմության ամենաճգնաժամային շրջաններում, նույնպես և մեր ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայ եկեղեցական հոգևոր գործիչները հանգանակությունների և իրենց միջոցներով հնարավորություններ են տալիս ընդլայնելու ազգային դպրոցների ցանցը՝ դպրոցը համարելով ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյատևման կարևորագույն գործոն:

XIX դարի 60-ական թվականներին ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Արցախի թեմում դպրոցական կյանքում նկատվող զգալի տեղաշարժերը պայմանավորված էին նորընտիր Գևորգ IV կաթողիկոսի (1866) մի շարք լուսավորչական ձեռնարկումներով: Մ.Աբեղյանը «Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց» աշխատության մեջ գրում է. «Այնպիսի մի ժամանակ, երբ դպրոցին վիճակված է խոշոր դեր խաղալու հայ ժողովրդի կյանքում, Արևմտյան Պրուսիայի հայոց թեմական առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսի ընտրությունը Ամենայն հայոց կաթողիկոս, դրական դեր կարող էր կատարել: Հետաքրքրական է, որ երբ նորընտիր կաթողիկոսը 1867թ. սկզբներին ժամանում է Պոլիս, տեղի վեց հայ խմբագիրներ մի ուղերձ են հղում նրան ու հայ եկեղեցու և ազգի ապահովությունը հոգալու մասին մի շարք խնդիրների հետ միասին առաջ են քաշում դպրոցական գործը բարելավելու հարցը, պահանջում, որ նա ապահովի «ազգային դաստիարակության ծավալումը, այն է՝ սրտով, մտքով հայեր պատրաստել»:[1]

Նորընտիր Գևորգ Դ կաթողիկոսի առաջին քայլերից մեկը լինում է դպրոցական գործի կարգավորումը: 1867թ. հունիսի 14-ին նա էջմիածնի միաբաններից կազմում է ուսումնական հանձնաժողով՝ կարգադրելով նրան մշակել եկեղեցական-ծխական դպրոցների կանոնադրությունը: Մի տարի անց՝ 1868թ.[2] հուլիսին, հրապարակվում են ծխական դպրոցների կանոնները: Էջմիածնի ուսումնական հանձնաժողովը կաթողիկոսի անունից թեմերի առաջ խնդիր է դնում յուրաքանչյուր գյուղում դպրոց բանալ:

Ծխական դպրոցների կանոնները հրապարակելուց հետո Գևորգ կաթողիկոսն

1. Տե՛ս Մ.Աբեղյան, Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 29:
2. «Արարատ», 1869, հ.Ժ, էջ 141-146:

ընդունեց նաև թեմական դպրոցների կանոնադրությունը (1869թ. փետրվարին): Այսպիսով, 60-ական թթ. վերջերին հայկական դպրոցն ստանում էր ընդհանուր կանոնադրություն, հնարավորություն էր ստեղծվում կառուցել այս կամ չափով միասնական դպրոցական համակարգ:

Գևորգ Դ կաթողիկոսը բովանդակալից լուսավորչական ձեռնարկումներ իրականացրեց հայ լուսավորչական թեմերում: Ստեղծվեցին լուսավորչական, բարեգործական ընկերություններ, որոնք աջակցություն էին ցույց տալիս սովյալներին, հիվանդներին, հայ գաղթականներին, նյութական միջոցներ հատկացնում դպրոցների, գրադարան-ընթերցարանների բարեկարգմանը, պարբերական մամուլի հրատարակմանը և այլն: Հետզհետե ակտիվանում էր ժողովրդի հասարակական նախաձեռնողականությունը նոր դպրոցների ստեղծման ուղղությամբ: Սակայն, ցարական կառավարությունը ձգտում էր «այլազգիների» լուսավորչական գործն իր ձեռքից բաց չթողնել և կարողանալ ուզած ուղղություն տալ նրան: Այդ գործում ամենահիմնական նշանակությունը պետք է ունենար կենտրոնացված վարչական վերահսկողության սահմանումը:

Դարի 60-70-ական թվականներին ցարական կառավարության ռեակցիան ավելի ցցուն դրսևորվեց Ռուսաստանի «այլազգիների» լուսավորության հարցում:

Ցարական ժողովրդական լուսավորության նախարարության պաշտոնյաների կողմից մշակվում էին կանոններ «այլազգիների» դպրոցների համար, որոնց հիմնական բնորոշ գիծը ուսուցումը ռուսերենով վարելն է: Հետզհետե ուժեղանում էր հալածանքը հայկական կրթօջախների նկատմամբ: Ցարիզմը հատուկ ուշադրություն էր դարձնում հայ դպրոցի վրա, քանի որ հայ դպրոցը զարգանում էր պետականին զուգահեռ և նրանից անկախ, ուստի չէր կարող չդառնալ պետական պաշտոնյաների մտահոգության առարկան: Այդ նպատակով էլ 1867թ. ընդունվեցին կանոններ, որոնց համաձայն Կովկասի բոլոր դպրոցները («այլազգիների»), պետք է ենթարկվեն ուսումնական վարչության վերահսկողությանը: Սակայն Գևորգ կաթողիկոսը, պատճառաբանելով, որ հայ եկեղեցին դարեր ի վեր եղել է ազգային դպրոցի միակ իրավատերը, հրաժարվեց ընդունել այն:

Դարի 70-ական թվականների սկզբներին Գևորգ կաթողիկոսը, նախօրոք զգալով, որ հայ դպրոցի ինքնավարության գլխին ամպեր են կուտակվում, որոշեց դիմել հակամիջոցների: 1873թ. կանոնների ընդունման հետ գրեթե միաժամանակ ստեղծվեց հայկական դպրոցների թեմական տեսչի պաշտոն: Թեմական տեսչության անհրաժեշտությունը՝ ազգային դպրոցի ինքնավարությունը պահպանելու տեսակետից բացի, հարկավոր էր նաև դպրոցի ներքին կարիքների համար: Այդ կանոնադրության համաձայն՝ կաթողիկոսի կոնդակով Արցախի թեմական դպրոցի տեսուչ նշանակվեց Խորեն Վարդապետ Ստեփանեն (1873-1874թթ.): Իսկ այդ ժամանակ թեմի առաջնորդն էր Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը (1864-1878թթ.): Թեմի առաջնորդն ու ազգային գործիչը հոգ էին տանում Արցախի թեմում ընդլայնելու եկեղեցական-ծխական դպրոցների ցանցը:[3]

Թեմական տեսչության ստեղծումը զգալիորեն սրեց դրությունը և կովկասյան ուսումնական վարչությանը ստիպեց շտապ միջոցների դիմել՝ 1873թ. կանոնները հայկական դպրոցների վրա տարածելու համար: Բարոն Ա. Նիկոլաին 1874թ. հունվարին դիմեց Գևորգ կաթողիկոսին և պահանջեց անմիջապես ընդունել կանոնները: Սակայն կաթողիկոսը պատճառաբանում էր, որ 1836թ. «Պոլոժենիեն»

3. Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 285-286:

հայ հոգևորականության բացարձակ իրավունք է տվել կառավարելու հայ լուսավորչական թեմերի (Երևանի, Վրաստանի, Շամախի-Դերբենդի, Աստրախանի, Նոր Նախիջևանի, Ղարաբաղի կամ Արցախի) դպրոցները և որ այդ կայսերական հաստատ օրենքը դեռևս ուժի մեջ է: Կաթողիկոսը գտնում էր, որ հայկական դպրոցները երբեք չեն շեղվել օրինականությունից և թեմական տեսուչներն իրենց հերթին կոչված են էլ ավելի կարգավորելու ազգային դպրոցների կյանքը: Չնայած կովկասյան իշխանությունների խիստ վերահսկողությանը, Գևորգ կաթողիկոսը շարունակեց իր գործունեությունն ազգային դպրոցների զարգացման ուղղությամբ:

XIX դարի 80-ական թվականներին ժողովրդական լուսավորության ասպարեզում սկսված ռեակցիան ավելի ծանր դրսևորումներ ստացավ ազգային ծայրամասերում: Ընդհանրապես, այդ տասնամյակում խիստ ուժեղացավ ազգային ճնշումը: Մայրենի լեզուներով հրատարակությունների արգելումը, ազգային մշակույթի գործիչների հալածանքը զուգակցվում էին բռնի ռուսականացմամբ, ուղղափառության ստիպողական տարածմամբ: Ազգային ճնշումը հատկապես որոշակի արտահայտություն գտավ մշակույթի ասպարեզում, որտեղ այն նախ և առաջ դրսևորվեց «այլազգիների» դպրոցների ու հասարակական կյանքի բոլոր կողմերի ռուսականացման մեջ և կրոնական ասպարեզում:[4]

Գևորգ Դ Կաթողիկոսի մահը (1882թ. վերջին) արագացրեց ցարիզմի գրոհը հայերի կրթական իրավունքների վրա. կաթողիկոսական աթոռը թափուր էր, այլևս բողոքի տհաճ ձայներ չէին լսվի և կարելի էր անկաշկանդ գործել: 1883թ. հավանություն գտավ բարոն Ա. Նիկոլաիի զեկուցագիրը Պետերբուրգի խորհրդակցությունում, որին ներկա էին հայազգի Ի.Դելյանովը, Դոնդուկով-Կորսակովը, Կ.Յանովսկին և ուրիշներ: Խորհրդակցության անդամների հատուկ ուշադրությունը հրավիրվեց հայկական դպրոցների «աննորմալ» վիճակի վրա, որոնք դուրս լինելով պետական հսկողությունից և գտնվելով էջմիածնի Սինոդի գերիշխանության տակ, հաճախ վեր են ածվել օտարերկրյա, հակակառավարական քարոզչության օջախների: Առաջարկվեց շտապ միջոցներ ձեռնարկել հայ աճող սերնդին «վերահաս վտանգից» փրկելու համար, մշակել հայ դպրոցների նոր կանոններ, մանավանդ, որ կաթողիկոսական աթոռը թափուր էր և ժամանակը խիստ նպաստավոր:[5]

1884թ. փետրվարի 16-ին ցարը հաստատեց խորհրդակցության մշակած «Կովկասի հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին կանոնները» (“Правила об армяно-григорианских церковных училищах а Кавказе”, 1884г., стр.1), որի համաձայն ուսումնական գերատեսչության վրա պարտավորություն է դրվում հսկել եկեղեցական-ծխական դպրոցներում բոլոր առարկաների դասավանդումը, բացառությամբ կրոնի առարկայի: Հայ հոգևորականությունը փաստորեն մնում էր որպես նյութական միջոցներ հայթաթող, քանի որ բոլոր առարկաների վրա հսկողություն էր սահմանվում (բացի կրոնից):

Էջմիածնի Սինոդը, թեմերի առաջնորդները (այդ ժամանակ Արցախի թեմի առաջնորդն էր Գրիգոր արքեպիսկոպոս Սագինյանը (1883-1886թթ.), Շուշիի թեմականի տեսուչ Համբարձում Առաքելյանը, Գարեգին քահանա Գեոդակյանը (թե-

4. Арешян С.г. Армянская печать и царская цензура, Ереван, 1957, стр. 24-26, տե՛ս նաև, Витте Ю., Воспоминания, т.2, М.1960, стр. 206-207.

5. Այդ և այլ զեկուցագրերը, դպրոցների վերաբերյալ ընդունված ցարական կառավարության որոշումներ պահպանվում են ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.78, գ.102, 149, ֆ.29, ց.1, գ.62 և այլ ֆոնդերում:

մականի կրոնի ուսուցիչը) և շատ մտավորականներ դիմադրություն ցույց տվեցին: Կայսրերահաստատ կանոններից ոգեշնչված կովկասյան իշխանությունները գործի անցան: 1885թ. փակվեցին ազգային բազմաթիվ հայկական դպրոցներ: Արցախի թեմում դպրոցների փակմանը կանչված ոստիկանությունն ամենուրեք հանդիպում էր զսպված սառնության: Արխիվային մի փաստաթղթում կարդում ենք Շուշիի գավառապետի զեկուցագիրը. «Փակման և աշակերտների արձակման ժամանակ ես ականատես եղա խիստ տխուր և թախծալի պատկերի: Լուռ ու համեստորեն ուսումնարանից միասին դուրս եկող արցունքոտ աչքերով աղջիկներից ու տղաներից բացի, լալիս էին բոլորը, ովքեր ներկա էին դրան»:[6] Նման զեկուցագրեր կային նաև Երևանի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսիայի և այլ գավառապետերից, որտեղ ներկայացվում էր հայ դպրոցի անմխիթար վիճակը:[7] Արցախի թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը Սինոդին գրած իր նամակում[8] նշում է, որ չնայած դպրոցների փակումը ծանր տպավորություն թողեց հայ ազգաբակչության շրջանում, այնուամենայնիվ, Արցախի առաջավոր մտավորականությունը չէր նահանջում իր դիրքերից, շարունակում էր պայքարը ժողովրդական զանգվածների շրջանում լուսավորություն տարածելու համար:

Նորընտիր Մակար կաթողիկոսն աթոռին բազմեց այն ժամանակ (1885թ.), երբ հայ լուսավորչական թեմերում հայկական դպրոցներն արդեն փակված էին: Նրա առջև խնդիր էր ծառանում՝ մի կողմից միջոցներ ձեռք առնել ազգային դպրոցներին նորից կենդանություն հաղորդելու, և մյուս կողմից չբարկացնել իր հովանավորներին:

Կաթողիկոսի եռանդուն գործունեության շնորհիվ 1886թ. հունվարի 16-ին կառավարության որոշմամբ բացվեցին հայկական դպրոցները: Միաժամանակ, «Արարատ» ամսագրի նույն թվականի հուլիսյան համարում տպագրվեցին հայոց եկեղեցական-ծխական դպրոցների նոր կանոններ, որոնք կազմվել էին էջմիածնի կողմից՝ հաշվի առնելով կառավարության պահանջները:[9]

Դպրոցական նոր կանոններում պարզորոշ նշվում էին կաթողիկոսի իրավունքները դպրոցների հարցում. նրա հրամանով են բացվում և նրա սահմանած կանոններով առաջնորդվում միդասյա և երկդասյա դպրոցները, կաթողիկոսն է հաստատում հոգաբարձուներին, ուսուցիչների ընտրության և նշանակման հարցը վճռում են թեմի առաջնորդները:

Կաթողիկոսը ստեղծեց նաև ուսումնավարչական հանձնաժողով, որը զբաղվելու էր դասագրքերի ընտրության գործով և ուսուցիչների ցուցակագրման մասին վճիռներ էր ներկայացնելու իրեն: Իհարկե, Մակար կաթողիկոսի դպրոցական նորամուծությունները ստեղծված վիճակից ելք գտնելու հուսահատ փորձեր էին, որոնք խորացող ճգնաժամային պայմաններում մի առանձին հաջողություն չէին ունենալու: Սակայն առաջիկա մի քանի տարիներին հայ դպրոցը դեռևս գործելու և առաջնորդվելու էր այդ նորամուծություններով:

XIX դարի 90-ական թվականներին ծանր, վտանգներով լի կացության է ստեղծվում հայ հասարակության համար: Ցարական իշխանությունների կողմից խիստ հսկողություն է սահմանվում առանց այն էլ աղքատության ճիրաններում գալարվող հայ դպրոցի վրա, ստեղծվում են ծայր աստիճան անբարենպաստ պայմաններ:

---

6. ՀՀ ԱԱ, ֆ.57, ց.1, գ.147, էջ 31-32, 33:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, գ.148, 149, էջ 14-15, 16:
9. «Արարատ», 1886 հուլիս համարը: Նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.149, թ.110, 170:

Մակար կաթողիկոսի մահից հետո՝ 1891թ. մինչև 1893-ի սեպտեմբեր կաթողիկոսական թափուր գահը բարձրացավ իսկապես համազգային ընտրյալ Մկրտիչ Խրիմյանը:[10] Մակար կաթողիկոսից հետո ծայրաստիճան պառակտված էր էջմիածնի միաբանությունը, բարձիթողի էին արվել «Արարատ» ամսագրի հրատարակության, Գևորգյան ճեմարանի գործունեության խնդիրները, ինչպես նաև անուշադրության էր մատնվել հայ լուսավորչական թեմերի դպրոցական ներքին կյանքին վերաբերող հարցերը, մի խոսքով, հայ դպրոցի համար ստեղծվել են անբարենպաստ պայմաններ:

Նորընտիր կաթողիկոսը ձեռնամուխ եղավ Մայր Աթոռի ներքին բարեկարգության, ինչպես նաև հայկական դպրոցների ներքին կյանքին վերաբերող հարցերի լուծմանը: Նա էջմիածնի միաբաններից կազմում է ուսումնական հանձնաժողով՝ կարգադրելով նրան թեմերի առաջնորդներին լայն հնարավորություններ տալ ընդլայնելու ազգային դպրոցների ցանցը: 1893-1894թթ. կաթողիկոսի նախաձեռնությամբ հայ լուսավորչական թեմերում բացվեցին մի շարք դպրոցներ: Արցախի թեմի առաջնորդ Կարապետ Եպիսկոպոս Այվազյանի և Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսյանի նախաձեռնությամբ Արցախի թեմում բացվեցին 10 եկեղեցական-ծխական, իգական, 4 երկսեռ դպրոցներ:[11]

Սինոդի վիճակագրական տվյալների համաձայն՝ դպրոցներում աշակերտության թիվը նկատելիորեն ավելի բարձր էր: Յուրաքանչյուր դպրոցին ընկնող աշակերտների միջին թիվը 30-ից հասել էր 40-45-ի: Կային, իհարկե դպրոցներ, որոնք ունեին ավելի շատ աշակերտներ: Օրինակ, Շուշիի թեմականը՝ 250-280, ռեալականը՝ 350-400, օրիորդաց դպրոցը՝ 100-150, քաղաքային ռուսական տիպի ուսումնարանը՝ 200-220 աշակերտ: Սովորողների 8-10 տոկոսն էին միայն հոգևորականներ, ազնվականների ու աստիճանավորների զավակներ, մնացած գերակշռող մասը մանր առևտրականների, արհեստավորների ու երկրագործների զավակներ էին:[12] Կաթողիկոսի կոնդակով պահանջվում էր թեմերի առաջնորդներից՝ դպրոցներում սովորող աշակերտության 30-35 տոկոսը (աղքատ խավի երեխաները) ձրիավարժ լինեն՝ բարեգործական ընկերություններից հատկացված միջոցների հաշվին: Օրինակ, Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցների աշակերտ-աշակերտուհիներից շատերը գրենական պիտույքներ էին ստանում:[13]

Կաթողիկոսի ձեռնարկումների ուշագրավ կողմերից մեկն էլ այն էր, որ բարձրացրեց թեմական դպրոցների մակարդակը, նրանց համար նոր միասնական ծրագիր հաստատեց: Ըստ այդ ծրագրի Շուշիի թեմական դպրոցը պետք է ունենար վեց դասարանյա կազմ (լրիվ միջնակարգ), մի բան, որին հասել էր Ներսիսյան դպրոցը: 1894թ. սեպտեմբերի 1-ից հայ լուսավորչական թեմերի թեմական դպրոցները, այդ թվում Շուշիի թեմականը, արդեն ունեին վեց դասարանյա կազմ: Վերանում էին թեմականների նախապատրաստական դասարանները և նրանց համար սովորողների կոնտինգենտ պետք է պատրաստեին եկեղեցական-ծխական դպրոցները: Ի դեպ, նշենք, որ 1887/88 ուսումնական տարում թեմական դպրոցներն ունեցել են վեց դասարանյա կազմ, սակայն հայտնվելով նյութական ծանր պայմաններում, կրճատվել են թե՛ աշակերտների, և թե՛ դասարանների թիվը:

---

10. Տե՛ս Է.Կոստանդյան, Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 354-355:
11. ՀՀ ԱԱ, ֆ.56, g.3, գ.78, թ.10, գ.214:
12. Նույն տեղում:
13. Լեո, նշվ. աշխ., էջ 254-260:

Կովկասյան իշխանություններին դուր չէր գալիս հայ լուսավորչական թեմերում դպրոցական ցանցի ընդլայնումը, հայ պարբերական մամուլի հրատարակումը, մշակութային գործիչների ակտիվությունը հասարակական, քաղաքական կյանքում:

Կովկասի կառավարչապետ Ա.Շերեմետևը, գնահատելով ստեղծված վիճակը, վերլուծելով հայերի ազգային-ազատագրական շարժման հեռանկարները, պահանջ ներկայացրեց կառավարությանը՝ հատուկ ուշադրություն դարձնել հայ պարբերական մամուլի վրա: Գրաքննչական մարմիններն արգելում էին տեղական և, առանձնապես, հայկական նոր պարբերականների հրատարակումը: Հայ մամուլին արգելվում էր գրել «հայկական հարցի», թուրքական կառավարության քաղաքականության մասին, 1893թ. գրաքննությունը խոչընդոտեց Ռաֆֆու «Սամվելի» բեմականացմանը, հայ շատ գրողների գործերն արգելքի տակ էին, թույլ չէր տրվում նաև թարգմանել օտարերկրյա, հատկապես բուլղարական, ազատաշունչ ոգով գրող հեղինակներին:[14]

Քննարկվող ժամանակաշրջանում ցարիզմի ազգային հալածանքների (հատկապես հայերի նկատմամբ) սաստկացման ընդհանուր շղթայում կարևոր օղակ էր դպրոցը: Կովկասի կառավարչապետ Շերեմետևը Պետերբուրգ ուղարկեց (1895թ. հուլիսին) հայկական դպրոցները էջմիածնի ենթակայությունից հանելու և կովկասյան ուսումնական գերատեսչությանը հանձնելու իր առաջարկները: Կառավարչապետը գտնում է, որ եկեղեցական-ծխական դպրոցները միաժամանակ լուրջ խոչընդոտ են ուղղափառության տարածմանը, որ շատ վայրերում հայերը լրիվ հայախոս ու հայասեր են դարձել և այլևս չեն հաճախում ուղղափառ եկեղեցիներ:[15]

Առաջարկությունն արժանացավ ցարական կառավարության հավանությանը, ներքին գործերի և ժողովրդական լուսավորության նախարարներին պատվիրվեց ձեռնամուխ լինել դպրոցների ընդունմանը: Շերեմետևը նաև զեկուցեց նրանց, որ սխալ կերպով եկեղեցական համարվող դպրոցների թիվը հասել է 168-ի: Դեկտեմբերի 8-ին կառավարչապետի օգնական Տատիշչևը Կ. Յանովսկուն հանձնեց (որը ղեկավարում է ուսումնական վարչությունը) հայ եկեղեցական դպրոցների, այդ թվում՝ Արցախի թեմի դպրոցների ցուցակը և կարգադրեց դրանք ընդունել իր ենթակայության տակ: Կովկասի կառավարչապետը հատուկ գրությամբ դիմեց Մկրտիչ կաթողիկոսին, որ եթե եկեղեցական-ծխական դպրոցները պահվում են բարեգործական ընկերությունների նպաստների, ուսման վարձի և այլ աղբյուրների հաշվին[16], ապա դա օրենքով չի նախատեսված:

Կաթողիկոսը 1885թ. դեմկետմբերի 23-ին և 1896թ. հունվարի 27-ին նամակներով դիմեց Կովկասի կառավարչապետին և ներքին գործերի նախարար Ի.Է. Գորեմիկինին. «Օրենքը բոլորովին էլ չի որոշում ծխական ուսումնարանի պահպանության գործում եկեղեցու մասնակցության պարտադիր չափը»:[17] Մինչ էջմիածինն զբաղված էր գրագրությամբ, իշխանությունները հունվարից ձեռնամուխ եղան երկար սպասված կարգադրության իրագործմանը:

Երբ հայկական դպրոցները փակվեցին (1896թ. հունվարի որոշմամբ), կաթողիկոս Խրիմյանը 1896թ. փետրվարի 10-ի կոնդակով հրահանգեց կազմել փակ-

14. Տե՛ս Армянс. П., նշվ.աշխ., էջ 46-64:
15. Նույն տեղում, նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ.56, g.3, գ.199, էջ14:
16. ՀՀ ԱԱ, ֆ.56, g.3, գ. 199, էջ 14-15:
17. Վ.Երկանյան, նշվ. աշխ., էջ 200-201:

ված դպրոցների, նրանց պատկանող գույքերի ցուցակները, մանրամասն տեղեկագիր կազմել նրանց գոյության միջոցների մասին:[18] Կաթողիկոսը կարգադրեց դպրոցների բոլոր ունեցվածքը դնել փակի տակ, իսկ դպրոցական շենքերի պահպանումը վերապահել տեղական եկեղեցիներին, քանի որ այդ ամենի իրավատերը նրանք էին: Շուշիի թեմական դպրոցի տեսուչ, խոշոր եկեղեցական գործիչ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, թեմի առաջնորդ Գարեգին վարդապետը, թեմականի ուսուցիչներ Կարապետ քահ. Վարդապետյանը, Գևորգ Գյուլիքևխյանը, Տեր-Կարապետյանը և ուրիշներ էջմիածնի Սինոդին առաջարկեցին թեմի եկեղեցու գումարներով գյուղերում, կամ եկեղեցիներին ու վանքերին կից բացել նոր դպրոցներ, որոնք կհամապատասխանեն Կովկասի կառավարչապետի կամ պետության պահանջներին:

Արցախի թեմի գյուղերից ծխականները 400-ից ավել ստորագրությամբ խնդրագիր[19] են ուղարկում կաթողիկոսին, որպեսզի պահպանեն դպրոցները կամ դրանց գույքը չհանձնվի Կովկասի ուսումնական վարչությանը: Զրկվելով սեփական ազգային դպրոցից՝ Արցախի թեմի գյուղերում կառավարությունից գաղտնի գործում էին մասնավոր դպրոցներ:

XIX դարի 90-ական թվականների վերջին՝ XX դարի սկզբին հայերի կրթական գործի դեմ սկիզբ առած լայն հալածանքը միայն տարրական դպրոցներով չսահմանափակվեց: 1903թ. հունիսի 12-ի օրենքով, փակվեցին նաև հայ լուսավորչական թեմերի թեմական դպրոցները, այդ թվում՝ Շուշիի թեմականը: Զրկվելով սեփական հայեցի կրթություն տվող դպրոցից, Արցախի թեմում հայ աշակերտության մի մասը ստիպված էր ընդունվել Շուշիի ռեալական ուսումնարան, մյուս մասն էլ սկսեց սովորել նախկին եկեղեցական-ծխական դպրոցների փոխարեն բացված ռուսական տիպի քաղաքային դպրոցներում (Շուշի քաղաքում և Նուխիում), որոնք, փաստորեն, նույն արքունի բարեկարգ ուսումարաններն էին: Սրա հետևանքով ռուսական ուսումնարաններում սովորող հայ աշակերտության թիվը նկատելիորեն ավելացավ:

Եթե 1896-1902թթ. տվյալներով Շուշիի ռուսական երկու տիպի ուսումնարաններում սովորում էր 300-350 աշակերտ, որից 250-ը՝ հայեր, ապա 1903թ. հունիսի 12-ի օրենքի համաձայն, երբ փակվում է նաև Շուշիի թեմական դպրոցը, սովորողների թիվը հասավ 543-ի, որից՝ 349-ը հայեր, իսկ դասավանդող 30 ուսուցիչներից 25-ը հայ էին:[20]

Վերոհիշյալ տասնամյակում Կովկասում հաստատված գոլիցինյան ռեժիմն աննախադեպ աստիճանի հասցրեց հայահալած քաղաքականությունը: Զգալով վերահաս վտանգը, Մկրտիչ Խրիմյանը փորձեց ստեղծված վիճակից ելք գտնել: Փորձելով դիմել հակամիջոցների, Ամենայն հայոց կաթողիկոսը վերահաս վտանգից խուսափելու համար ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, աշխատեց ուժեղացնել ծխի ժողովրդավարական սկզբունքները, ժողովրդին շահագրգռել սեփական եկեղեցու և նրա ունեցվածքի կառավարման, որպեսզի անախորժության դեպքում նա պաշտպան կանգնի եկեղեցուն: Ամենուրեք տարերային հավաքներ ու ժողովներ էին կազմակերպվում: Հայ լուսավորչական թեմերում, այդ թվում՝ Արցախի թեմում, որոշում էին պայքարի ելնել, հանրագրեր էին կազմում և ուղարկում էջմիածին ու թեմական առաջնորդներին՝ պահանջելով չենթարկվել ցարի

18. Է.Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 397:
19. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 66-67:
20. Գ.Հարությունյան, Շուշիի ռեալական, 2001, էջ 29-30:

որոշմանը, բողոքել, դիմադրել: Միայն Շուշի գավառում հանրագրի տակ ստորագրեց 2 հազարից ավելի մարդ: Նմանատիպ հանրագրեր էին կազմվում Վրաստանի, Շամախու, Երևանի թեմերում, օրինակ, Ախալցխայում հանրագրի տակ ստորագրեց 10 հազար մարդ:[21] Էջմիածինը, որտեղ սկզբում հուսալքման մթնոլորտ էր առաջացել, սկսեց աշխուժանալ:

Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը ռուսական պետության հակահայկական միջոցառումները ներկայացնում էր իբրև առանձին նախարարությունների վարչությունների, Կովկասի կառավարչապետի ապօրինի գործելակերպ, որոնց դեմ իր բողոքն էր ուղղում հայ եկեղեցու գլուխը, ապավինելով ցարի «արդարամտությանը»:[22] Սակայն վերջին 1903թ. հունիսի 12-ի օրենքը կաթողիկոսը ներկայացնում է իբրև նախարարների խորհրդի որոշում և դարձյալ բողոքում, որ այդ բոլոր միջոցառումներն (Հայաստանի, Արցախի գավառներում, Նուխիում կազմակերպված ցույցերը, բողոք նամակները, ժողովի մասնակիցների բազմաթիվ ստորագրությունները և այլն) ուղղված են հայ եկեղեցու գոյությանը, որովհետև այդ հրամաններով նա զրկվում է «քրիստոնեական բարեգործություն» իրականացնելու շնորհներից և իրավունքներից: Զրկել եկեղեցուն այդ միջոցներից՝ նշանակում էր հարցականի տակ դնել նրա գոյությունն ընդհանրապես: Այս բոլոր փաստարկներով կաթողիկոսը կարծես ցանկանում էր համոզել Նիկոլայ 2-րդ ցարին, որ իր կողմից ստորագրված բարձրագույն հրամանը բնավ էլ նրա կամքի արտահայտությունը չէ, այլ նրա նախարարների ապօրինի գործունեության արդյունք են:

Հակացարական ցասումը մոլեգնեց նաև Արցախի թեմում: Այստեղ թեմական առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի ղեկավարությամբ կազմակերպվում էին ցույցեր, ուժեղ դիմադրություն ցույց տրվեց Ելիզավետպոլի նահանգի ոստիկանությանը, երբ վերջինս բռնագրավում էր դպրոցների, եկեղեցիների գույքը, նույնիսկ փակված թեմական օրիորդաց դպրոցների գույքը: Արցախի թեմի հոգևորականությունը հրաժարվեց մասնակցել գույքի հանձնմանը: Ելիզավետպոլի նահանգի ոստիկանական հանձնաժողովը խռովահույզ ժողովրդի աղմուկ-աղաղակի, հրմշտոցի միջով հազիվ կարողացավ հասնել նահանգապետի իջևանատեղին, որը գտնվում էր Շուշի քաղաքում: Այստեղ կենտրոնացված զորքերի ու ամբոխի միջև տեղի ունեցավ ընդհարում (1903թ. սեպտեմբերի 15-ին)[23], կազակները շղթա կազմեցին ու համազարկ տվին, իսկ նրանց վրա կրակում էին տների կտուրներից ու լուսամուտներից: Գազազած ոստիկանությունը բազմաթիվ խուզարկություններ կատարեց, հատկապես կասկածի տակ էին թեմական դպրոցի (փակված) և ռեալական ուսումնարանի հայ սովորողներն ու ուսուցիչները: Լուրեր տարածվեցին որ կոնսիստորիայի շենքն ականապատված է, և գույքն ընդունող հանձնաժողովը, նախքան այնտեղ մուտք գործելը, կարգադրեց շենքի շուրջը փորել՝ ուժանակի հաղորդալարերը գտնելու համար: Իշխանությունների պահանջով Շուշիի քաղաքագլուխ Ա. Իշխանյանը հեռացվեց պաշտոնից, շատերն աքսորվեցին:[24] Հուզումներ տեղի ունեցան հայ լուսավորչական մյուս թեմերում՝ Վրաստանում, Նուխիում, Շամախի քաղաքում, Նոր Նախիջևանում և այլուր: Բո-

21. Վ.Երկանյան, նշվ. աշխ., էջ 244:
22. Տե՛ս Է.Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 410:
23. Այդ մասին տե՛ս Հ.Ս.Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյացիոն հուզումները Հայաստանում (1899-1908թթ.), Երևան, 1978, էջ 70: Տե՛ս նաև Գ.Ս.Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1964, էջ 52-54:
24. Գ.Ս.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 53-54:

ղոքի ցույցերին հաճախ մասնակցում էին նաև մեծ թվով կանայք:

Ալեկոծված Կովկասը խաղաղացնելու համար Նիկոլայ 2-րդը Կովկասում վերականգնեց փոխարքայությունը: Առաջին փոխարքա նշանակվեց փորձված դիվանագետ Կոմս Միխայիլ Իլլարիոնովիչ Վորոնցով-Դաշկովը: Ամենայն հայոց կաթողիկոսը դարձյալ մեկնեց Թիֆլիս՝ նոր փոխարքային դիմավորելու և բանակցություններ վարելու հայ ժողովրդին հուզող տարբեր խնդիրների շուրջ: Հակահայկական քաղաքականությունն աստիճանաբար մեղմանում էր: Ցարական արքունիքում ավելի բարձր էին հնչում 1903թ. հունիսի 12-ի օրենքի դեմ արտահայտվողների ձայները: Ցարը ստիպված էր հաշվի նստել այդ կարծիքների հետ, իսկ նորընտիր փոխարքան Կովկասից հայտնեց իր կարծիքը. «Չի կարելի ապազգայնացնել մի ժողովրդի, որը գոյություն ունի մի քանի հազարամյակ, ունի պատմություն,... Ունի ինքնատիպ մշակույթ, գրականություն, թերթեր, թատրոն»:[25]

Փոխարքայի գալուստն արագացրեց արդեն վերանայվող որոշումը հայ եկեղեցական կալվածքները, դպրոցների գույքը վերադարձնելու մասին. 1905թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ 2-րդ ստորագրեց նոր հրաման հունիսի 12-ի օրենքի մասին:[26] Հայ լուսավորչական թեմերում՝ հայ ժողովրդի բոլոր խավերի, հատկապես հոգևոր նվիրյալ գործիչների մղած պայքարը պսակվեց հաղթանակով: Եկեղեցուն վերադարձվեց կրթական գործով զբաղվելու իրավունք ևս: Տարբեր վայրերից ստացված շնորհավորական հեռագրերն ընդգծում էին կաթողիկոսի, թեմի առաջնորդների դիմադրողական ոգին և արիությունը:

Այսպիսով, հայ եկեղեցական գործիչների, հայ լուսավորչական թեմերի, այդ թվում՝ Արցախի թեմի առաջնորդների եռանդուն ջանքերի շնորհիվ հայ դպրոցը, որ տասը տարի (1896-1906թթ.) փակել էր իր դռները, սկսել էր նորից գործել, վերադարձվել էին բռնագրաված եկեղեցական կալվածքները, դպրոցների գույքը: Այդ հաղթանակում հատկապես մեծ ու անգնահատելի են Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանի ջանքերը:

25. Վ.Երկանյան, նշվ.աշխ., էջ 279:
26. Է. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 419-420:

8. Արցախի դպրոցական գործի վիճակը 1895-1905 թթ.: Դպրոցների փակումն ու վերաբացումը

XIX դարի 90-ական թվականների սկզբներին Արցախի թեմում համեմատաբար աճում է տեղական բնակչության հետաքրքրությունը լուսավորական գործի նկատմամբ: Հասարակությունը ցանկություն է հայտնում յուրաքանչյուր գյուղում դպրոց կառուցել: Հաճախակի Արցախի բնակավայրերից խնդրագրեր էին ներկայացնում Էջմիածնի Սինոդին՝ բացել դպրոցներ, օգնել բարեկարգելու եղածները: Գյուղերում ժողովներ էին հրավիրվում, հոգաբարձու ընտրում իրենց միջից: Արխիվային մի փաստաթղթում կարդում ենք, որ 1893թ. Ջրաբերդի գավառի Տոնաշեն և Մադաղիս գյուղերի բնակչությունը խնդրագիր է ուղարկում կաթողիկոսին, խնդրում իրենց գյուղերում բացել եկեղեցական-ծխական ուսումնարան և իրենց միջից ընտրել հոգաբարձու (դպրոցը պետք է կրեր Ս. Եղիշեի անունը): Նոր դպրոցներ են բացվում նաև Հադրութի Մեծ Թաղլար, Տող, Ազոխ, Վարանդայի (Մարտունու) Սարուշեն, Գիշի, Ճարտար, Ջրաբերդի՝ Բագյուղ սարով, Մարաղա և այլ գյուղերում, ինչպես նաև Նուխի գավառի հայկական Վարդաշեն, Նիժ, Բեկլարիստ գյուղերում:[1] Մի այլ փաստաթղթում կարդում ենք այն մասին, որ Նուխիի հայ հասարակությունը բավականին գումար (650 ռուբլի) է հավաքել՝ գրադարան, ընթերցարան բացելու համար, ինչի մասին խնդրագիր է ուղարկում կաթողիկոսին: 1893թ. մայիսի 2-ին կաթողիկոսը հաստատում է նուխեցիների այդ խնդրագիրը: Տեղական վարչության նախագահ Վահան Տեր-Գրիգորյանցի հավաքած գումարներով բավականաչափ գրականություն է գնվում նորաբաց գրադարան-ընթերացարանի համար: Մեծ օգնություն է ցույց տալիս նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը:[2] Բարձր գնահատելով գրադարանի կրթական դերը, «Մշակ»-ը «Դպրոցական գյուղական գրադարաններ» հոդվածում գրել է. «Որպեսզի ժողովրդական դպրոցը կանգնած լինի հաստատուն հիմքի վրա, որպեզի արգասաբեր լինեն նրա վրա գործադրված ջանքերը, հաստատուն լինի սաների ամբողջ կյանքում նրա տված գիտությունը, անհրաժեշտ է դպրոցից դուրս էլ հնարավորություն տալ նրանց շարունակելու ընթերցանությունը, անհրաժեշտ է հիմնել գյուղական գրադարան: Առանց գրադարանի դպրոցի տված օգուտները շատ անգամ բացասական են լինում և ապարդյուն»:[3]

Չնայած ժամանակաշրջանի խեղդուկ մթնոլորտին, դպրոցական գործը հայ լուսավորչական թեմերում, ինչպես նաև Արցախի թեմում զարգացման որոշ վերելք է ապրում առաջադիմական շարժման ազդեցության ներքո: Հայ առաջադեմ մտավորականությունը հոգ էր տանում լուսավորչական գործի առաջընթացի, տարբեր տիպի դպրոցների նյութական վիճակի հնարավորինս բարելավման համար: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1894-95թթ. ուսումնական տարում Արցախի թեմում կար 24 հայկական դպրոց: Աշակերտների թիվն այդ դպրոցներում հասնում էր 1800-ի, իսկ ուսուցիչներինը՝ 50, որից 11-ը կանայք էին: Նշենք, որ կանանց մի մասը դասավանդում էր և՛ արական, և՛ իգական դպրոցներում:

Սակայն նշենք, որ XIX դարի 90-ական թվականների կեսերից հայ լուսավորչական թեմերում, ինչպես նաև Արցախի թեմում դպրոցի համար ստեղծվեցին խիստ անբարենպաստ պայմաններ: Ազգային հալածանքների սաստկացման

1. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.78, թ.12,14,16:
2. Նույն տեղում:
3. «Մշակ», 1894, թ.126 թ.3:

ընդհանուր շղթայում կարևոր թիրախ էր դպրոցը: 1896թ. փետրվարին, կառավարության որոշմամբ փակվում է հայկական ծխական դպրոցների զգալի մասը, իսկ մի տարի հետո (1897թ.) դպրոցները հանձնվում են ցարական Ժողովրդական լուսավորության նախարարության տնօրինությանը: Սա ինքնին նշանակում է, որ ավանդվող առարկաներն ու դպրոցական ծրագրերը ենթարկվում են պետական վերահսկողության, նեղանում են հայոց պատմության, աշխարհագրության և տեղական մյուս առարկաների ուսուցման շրջանակները: Կառավարության թիվ 4457 հրամանի համաձայն՝ առաջարկվում էր Արցախի թեմի կառավարիչ, վարդապետ Սաթունյանցին փակել թեմի եկեղեցական ուսումնարանները:[4] Կովկասյան իշխանությունները ձգտում էին դպրոցների գույքի և նյութական միջոցների հաշվին բացել արքունի դպրոցներ, որոնցում ուսուցումը պետք է տարվի ռուսերեն լեզով:

Ցարիզմի նպատակը պարզ էր. նա ցանկանում էր հայերին զրկել ազգային ինքնագիտակցության կոփման ամենահիրական միջոցից՝ դպրոցից, և վերաբացման միջոցով այն վերածել նրանց ձուլման գործիքի: Ընդ որում, իշխանությունը չէր ցանկանում այդ նպատակի համար միջոցներ հատկացնել, այլ ուզում էր լրիվ տեր դառնալ հայ հասարակության ու եկեղեցու նյութական զոհողությունների գնով ստեղծված դպրոցին. «ամենաողորմած» ցարը միջոցներ չուներ «լուսավորություն» կոչված շռայլության համար: Հայ դպրոցի կործանումն օր առաջ տեսնելու մոլուցքով բռնված ցարական բյուրոկրատիան մոռացության էր տվել մի փոքրիկ մանրամասնություն՝ դպրոցների նյութական հնարավորության իրավական կողմը:

Երբ հայկական դպրոցները փակվեցին բոլոր թեմերում (Երևանի, Նոր Նախիջևանի, Վրաստանի, Շամախու, Դերբենդի, Աստրախանի, Ղարաբաղի կամ Արցախի), կաթողիկոսը՝ Մկրտիչ Խրիմյանը, փետրվարի 10-ի կոնդակով հրահանգեց ամբողջ ունեցվածքը դնել փակի տակ, իսկ դպրոցական շենքերի պահպանումը վերապահել տեղական եկեղեցիներին, քանի որ այդ ամենի իրավատերը նրանք էին:

Կովկասի ուսումնական վարչության պետ Յանովսկին գտավ, որ անհրաժեշտ է հայկական բոլոր փակված դպրոցների շենքերը, գույքը և պահպանության միջոցները ենթարկել իր տնօրինությանը:[5] Սակայն նա դիմադրության հանդիպեց. էջմիածինը հրաժարվեց իշխանությանը հանձնել փակված դպրոցների մեծ մասի գույքը, պատճառաբանելով, որ դա եկեղեցու սեփականությունն է: Շատ վայրերում գյուղական բնակչությունը հրաժարվում էր նյութական միջոցներ տրամադրել արքունի դպրոցների պահպանությանը: Որոշ տեղեր կառավարությունից գաղտնի պահվում էին մայրենի լեզվով մասնավոր դպրոցներ՝ Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդ գավառների, ինչպես նաև Նուխի գավառի հայկական գյուղերում: Այդ մասին Լեոն գրում է. «Գյուղերում բացված էին գաղտնի դպրոցներ: Ես նույնիսկ իմացա, որ Կարսի շրջանում, Ղարաբաղի թեմում այդ գաղտնի դպրոցները ունեն նաև թեմական տեսուչ»:[6]

Շուշիի գավառում այդպիսի դպրոցների քանակը հասնում էր 5-ի, յուրաքանչյուր դպրոցում սովորում էր 25-30 աշակերտ: Սակայն տեղական իշխանությունները հետագայում ևս փակում էին նաև նման տիպի դպրոցները: Նրանք ուսուցիչ-

4. ՀՀ ԱԱ, ֆ.20, g.1, գ.103, էջ 17, 18:
5. «Արարատ», 1896, թ.1, էջ 133, 134:
6. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 134-135:

ներից ստորագրություն էին վերցնում, որ չեն զբաղվի մասնավոր տներում կամ գաղտնի դպրոցներում երեխաների ուսուցմամբ:

Կանգնելով կատարված փաստի առաջ՝ ինչպես Անդրկովկասի, նմանապես Արցախի հայ հասարակությունը զգաստացավ, գիտակցեց, թե ինչ անգնահատելի գանձ է կորցնում և ինչ նշանակություն ունի ազգային դպրոցն իր գոյատևման համար: Հայերը սկսեցին միջոցներ որոնել որևէ կերպ դպրոցները պահպանելու համար: Հասարակական վճիռներ են կայացվում դպրոց հիմնելու մասին: Կաթողիկոսը և թեմական տեսուչները բազմաթիվ խնդրագրեր էին ստանում տեղերից, որոնց տակ ստորագրողներն ուղղակի աղաչում էին թույլ չտալ փակելու դպրոցները: Օրինակ, արխիվային փաստաթղթերում հանդիպում ենք Շուշիի և Նուխիի գավառներից կաթողիկոսին ուղղած բազմաթիվ խնդրագրերի, որոնց տակ 100-ից ավելի ծխականների ստորագրություններ կան: Խնդրագրերում միաժամանակ ասվում էր. «Հազիվ մեր երեխաները սկսել էին ընտելանալ մայրենի և ռուսաց լեզուների գիտության, սակայն ստիպված են նորից խավարի մեջ ընկնել»:[7]

Հակահայկական հալածանքներն առավել խստացան, երբ Կովկասի կառավարչապետ նշանակվեց իշխան Գոլիցինը: Նոր կառավարչապետն անհապաղ կարգադրեց կաթողիկոսին փակել հայկական բոլոր դպրոցները, այդ թվում՝ գաղտնի մասնավոր դպրոցները: Նաև կարգադրեց ուսումնական վարչության անդամներին՝ տեղեկություններ հավաքել հայկական դպրոցների տնտեսական վիճակի մասին և 1897թ. նոյեմբերի 28-ին գաղտնի գրությամբ[8] դիմեց ներքին գործերի նախարարին, որպեսզի նա, ի լրումն հունիսի 2-ի օրենքի, իրականացնի հայկական դպրոցների գույքի բռնագրավումը:

1898թ. մարտի 17-ին ցարական կառավարությունը քննեց Գոլիցինի 1897թ. զեկուցագրի մեջ կրկին առաջ քաշված դպրոցական գույքի բռնագրավման հարցը, որն արժանացավ կայսեր հավանության: Իր զեկուցագրում Գոլիցինը դժգոհությամբ արձանագրել էր, որ «նախկին հայկական դպրոցների տեղը ռուսական դպրոցների բացումն անհնար եղավ, և այդ ծայր աստիճանի ցավալի հանգամանքը կարող է միայն ծառայել երկրամասում հայկական գործի առավելագույն հաջողության»:[9] Կառավարությունը հավանություն տվեց Գոլիցինի առաջարկին և գտավ, որ դպրոցական գույքը պետք է հանձնվի Կովկասի ուսումնական վարչությանը՝ որպես իրավաբանական անձի:

Իշխան Գոլիցինի օրոք սկսվեց նաև հայ մամուլի ու գրականության աննախադեպ հալածանքը: Նախնական գրաքննություն հաստատվեց կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատ» ամսագրի նկատմամբ,[10] 1898թ. փակվեց «Արձագանքը», նոր պարբերականների հրատարակությունը կտրականապես արգելվեց:

Գոլիցինի օրոք էլ ավելի սաստկացավ այլազգի և, հատկապես, հայ պաշտոնյաների օտարումը Կովկասից: Կառավարչապետը ծայրահեղ անցանկալի էր համարում, որ տեղացիները բարձրագույն կրթություն ստանան, քանզի, նրա կարծիքով, այդպիսով աճում էր «անջատողական» ձգտումներ ունեցող ազգային մտավորականության թիվը:[11]

---

7. ՀՀ ԱԱ, ֆ.406, ց.1, գ.57, թ.3-4, ց.2, գ.624, թ.2:
8. Այդ մասին տե՛ս Վ.Երկանյան, նշվ. աշխ., էջ 208:
9. Նույն տեղում, էջ 209:
10. Տե՛ս Է.Կոստադյան, Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, էջ 396-397:
11. Վ.Երկանյան, նշվ. աշխ., էջ 220:

Ցարիզմի հակահայկական քաղաքականությունը խստորեն քննադատում էին ռուսական մշակույթի ականավոր գործիչները՝ Ն.Մառը, Մ.Կովալևսկին, Ա. Վեսելովկսին և ուրիշներ: Անատոլի Վեսելովսկուն խոր ցավ էր պատճառում փոքրաթիվ ազգերի դեմ ցարիզմի մղած հալածանքը, որը նա «խաչակրաց արշավանք» էր համարում, գտնում էր, որ մեծ տարբերություն կա «իրենի», հարազատի նկատմամբ եղած բնական սիրո և «անջատողականության» միջև, հայկական դպրոցները փակելու համար խիստ քննադատում էր իշխանություններին: Նա գտնում էր, որ Ռուսաստանի ժողովուրդները պետք է անկաշկանդ ու բնական սիրով կապվեն միմյանց հետ: Խոսելով հայ գրողների վրա ռուս գրականության թողած ազդեցության մասին, նա գրում էր. «Դա միակ «ռուսացումն» է, որ կարելի է ջերմորեն ողջունել, քանի որ այն ընդհանուր գաղափարների, մշակութային ձգտումների ու գեղարվեստական կերպարների հողի վրա մերձեցնում է երկու ժողովուրդներին»:[12] Հետագայում, հիշելով գոլիցինյան ռեակցիայի տարիները (1897-1903թթ.), Վեսելովսկին գրում էր. «Որքա՛ն տանջալի ու ցավալի էր գիտակցել, որ ռուս ժողովուրդը կարծես թե պատասխանատու է այն ամենի համար, ինչ նրա անունով կատարվում է Ռուսաստանի ծայրամասերում: Ինքնակալական ռեժիմը մեկ անգամ չէ, որ կեղծավորաբար քողարկվում էր նրա շահերով, արշավի ելնելով ուրիշների մշակույթի դեմ»:[13] Կովկասի իշխանության գլուխ անցնելով, Գոլիցինը եռանդուն հարձակում ծավալեց Անդրկովկասի տարբեր ազգությունների դեմ: Նա զարգացրեց ու նոր աստիճանի հասցրեց գաղութային-համաձուլարար քաղաքականությունը, նա բոլորին ուզում էր ռուսացնել, բայց, բնականաբար, ամենից թշնամաբար նա վերաբերվեց հայերին,- գրում է ռուս ականավոր գրող, հրապարակախոս Ս.Յ. Վիտտեն:[14] Ռուսաստանի առաջադեմ մտավորականությունը հակադրվում էր հայ ժողովրդի նկատմամբ ցարական ռեակցիային և ձեռք մեկնում նրան:

XIX դարի վերջին հայերի դեմ ծավալված անզուսպ հալածանքի պայմաններում կովկասյան իշխանությունները 1898թ. ամռանը ձեռնամուխ եղան մարտի 26-ի օրենքով (1897թ.) նախատեսված հայկական եկեղեցական, ծխական դպրոցների շենքերի ու գույքի բռնագրավմանը: 1898թ. հունիսի 8-ին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձու Յանովսկին շրջաբերականով դիմեց տեղական մարմիններին՝ մինչև հուլիսի վերջը շտապ կարգով ընդունել հայկական բոլոր փակված դպրոցների շարժական ու անշարժ գույքը. նրանցից ստացված եկամուտներն ուսումնական վարչության անունով մուտքագրել պետական գանձարան: Ուսումնական վարչությունը ձգտում էր իր ձեռքում կենտրոնացնել հայկական դպրոցների գոյության բոլոր լծակները:

Հայերի կրթական գործի դեմ սկսած լայն հալածանքը չսահմանափակվեց միմիայն եկեղեցական-ծխական, իգական դպրոցներով: Ցարիզմը փակեց նաև թեմական դպրոցները, այդ թվում նաև Շուշիի թեմականը: Լեոն գրել է. «Հազիվ է փոքր ինչ սկսվել լուսավորչական գործը, երբ նորից մի դժբախտություն էր հարվածում Արցախի թեմի հայ ազգաբնակչությանը»:[15]

1903թ. դեկտեմբերի 10-ին ստացվում է էջմիածնի Սինոդի հրամանը՝ Կովկասի քաղաքական մասի կառավարչապետի կարգադրությամբ փակել թեմական

12. Տե՛ս "Вестник воспитании", 1905, N9, стр. 134.
13. Նույն տեղում:
14. С.Ю. Витте, Воспоминания, т.2, М., 1960, стр. 207-208.
15. Լեո, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպ. պատմ., էջ 578:

դպրոցը: Ելիզավետպոլի նահանգապետը նախազգուշացնում է դպրոցի տեսուչներին, որպեսզի այն փակելու ժամանակ անկարգություններ չլինեն, քանի որ տեղական իշխանություններն իսկույն կճնշեն դրանք:

Շուշիի թեմական դպրոցը փակելուց հետո ամբողջ գույքը ցուցակագրելով, հանձնվում է թեմի առաջնորդին, իսկ շինությունը, օրենքի համաձայն, անցնում է կառավարության ձեռքը՝ իբրև եկեղեցական իշխանությանը պատկանող կալվածք:

Դարավերջին սկսվեց նաև հայ մամուլի ու գրականության հալածանքը: Ազգային հարցերը շոշափող հոդվածներն արգելվում էին մամուլում, փակվում հայոց հրատարակչական ընկերությունները և այլն: Ցարիզմի ճնշող քաղաքականությունը մեծ հուզումներ առաջացրեց Անդրկովկասի տարբեր վայրերում, այդ թվում նաև Շուշի և Նուխի քաղաքներում, գյուղերում: Ամենուրեք ժողովրդական պայքարը լայն բնույթ ստացավ, տարածվում էին բազմաթիվ կոչեր, թռուցիկներ, խստորեն քննադատվում ցարիզմի ազգահալած քաղաքականությունը: Ռուսաստանում, Անդրկովկասում ծավալվող զանգվածների հեղափոխական շարժումից ահաբեկված՝ ցարական կառավարությունը ստիպված էր 1905թ. օգոստոսի 1-ին թույլատրել վերաբացելու հայկական դպրոցները: Կայսերական որոշումների համաձայն՝ տեղական իշխանությունները օգոստոսի 4-ին թույլատրեցին բացել նաև Շուշիի թեմական դպրոցը:

Այսպիսով, հայ դպրոցը, որ տասը տարի (1895-1905թթ.) փակել էր իր դռները, կանգնել էր դժվարին խնդիրների առաջ: Պետք էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, դպրոցական գույքն ու շենքերը, մի խոսքով՝ ամեն ինչ նորից սկսել: Կաթողիկոսը հատուկ կոնդակով պատվիրեց հոգաբարձուական ընտրություններ անցկացնել, ուսուցչական խմբեր կազմել և նախապատրաստել հայ լուսավորչական թեմերում փակված դպրոցների բացումը:

Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1905-1906 ուստարում Արցախի թեմում բացվեցին 23 եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնցից 8-ը երկդասյա էին: Միդասյա դպրոցն ուներ 4-ամյա, իսկ երկդասյանը՝ 5-ամյա դասընթաց: 1905թ. հետո Արցախի դպրոցական համակարգի մեջ մտնում էին ծխական 4-ամյա և 6-ամյա տարրական դպրոցներ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ: ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1850-1920 թթ.)

1. Ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգն ու պայմաններն Արցախի թեմում 1850-1890-ական թվականներին

XIX դարի երկրորդ կեսին արևելահայ իրականության մեջ, ինչպես նաև Արցախի թեմում արմատական վերափոխումներ կատարվեցին լուսավորության, դպրոցաշինության ասպարեզում, մշակույթի բնագավառի բազմաճյուղ ոլորտներում: Լուսավորության տարածման, դպրոցական գործի զարգացման բնագավառում մեծ դեր կատարեց ժամանակի պարբերական մամուլը: Արցախահայությունը մոտիկից հաղորդակցվում է արևելահայ կյանքում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական, հասարակական տեղաշարժերին: Ազգային զարթոնքը և ժողովրդական ինքնագիտակցության արթնացումը հրամայաբար պահանջում էին հրաժարվել հին դպրոցից, աշխարհականացնել ու ժողովրդավարացնել դպրոցը, այն ապահովել որակյալ մանկավարժական կադրերով: Ժամանակի հայ ականավոր մանկավարժները ճիշտ էին նկատում, որ հայ դպրոցի հետամնացության գլխավոր պատճառներից մեկը եղել է որակյալ ուսուցչական կադրերի պակասը:

Մեծ կարևորություն տալով այդ հարցին, Ստ. Նազարյանցն ասում էր, որ բարեկարգ հայ դպրոցներ ստեղծելու համար ոչ միայն անհրաժեշտ են որոշ պայմաններ՝ հաջող դասագրքեր ու ձեռնարկներ բոլոր դասարանների համար, այլև ամենակարևորը՝ որակյալ ուսուցիչներ: «Հրամայական անհրաժեշտություն է, որ մեր դպրոցներն ունենան գիտուն, մանկավարժական գիտելիքներով զինված բարեխիղճ ուսուցիչներ»[1]:

Դպրոցի կրթական ու դաստիարակչական աշխատանքի հաջողության համար Ղ. Աղայանը վճռական նշանակություն էր տալիս ուսուցչի դերին, նրա անձնավորությանը: Հայ մանկավարժներից ոչ ոք այնքան մեծ ուշադրություն չի նվիրել այդ հարցին, ոչ ոք այնքան ճիշտ ու խելացի չի լուսաբանել այն, որքան Աղայանը: Նա ասում էր, որ ժողովրդական ուսուցիչը պետք է լինի մտավորապես լավ պատրաստված, բարոյական բարձր սկզբունքների ու հատկանիշների տեր, մշտավառ ոգևորությամբ լի և սրտանց կապված մանկավարժական ու հասարակական աշխատանքներին: Ուսուցիչն իր աշակերտների համար պետք է լինի կատարելատիպ, հեղինակավոր[2]: Աղայանն ուսուցչի անձնավորության հետ է կապում դպրոցական կրթության ու դաստիարակության բոլոր հարցերը:

XIX դարի 50-60-ական թվականներին հայ իրականության մեջ հրապարակ եկավ հասարակական մի նոր դաս, որին վիճակված էր դառնալու դպրոցական գործի կենտրոնական, վճռորոշ դեմքը: Դա նոր, ժողովրդական ուսուցիչների դասն էր: Աստիճանաբար թափանցելով Անդրկովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերը, ինչպես նաև Արցախի թեմը, այդ դասը հետզհետե ավելի ու ավելի լայն հասարակական ճանաչում էր գտնում: Եթե մի ժամանակ հայ աշխատավորի միակ խորհրդատուն և հրահանգիչը եղել է ծխական քահանան, տիրացուն, ապա

1. Տե՛ս Ար. Շավարշյան, Հայ մանկավարժներ, գիրք Ա, 1958, էջ 187:
2. Ղ. Աղայան, Երկեր ժողովածու, հ.ս, Երևան, 1963թ., էջ 204, 206:

այժմ նրան սկսում է փոխարինել ավելի գրագետ ու զարգացած ժողովրդական ուսուցիչը, որն այս կամ այն կերպ կրթություն էր ստացել, որոշ չափով կարողանում էր ճիշտ կողմնորոշվել քաղաքական-հասարակական խնդիրներում, հնարավորինս միջամտում էր տեղի կյանքին, օգնում ու խորհուրդներ տալիս գյուղացուն: Ժողովուրդն սկսել էր հաճախ դիմել նրան, ունկնդրել նրա ձայնին: Աղքատ ու չարքաշ գյուղացին միշտ խոր ակնածանքով էր վերաբերվում լավ ուսուցչին, նրա մեջ տեսնելով իր զավակին լուսավորելու կարողունակ մի անձնավորության:

Ուսուցչությունն էր այն գրեթէ միակ ասպարեզը, որին դիմելով՝ հայ նոր մտավորականությունը կարող էր մերձենալ բուն ժողովրդին, կենդանի խոսք ասել նրան, օգնել թեթևացնելու ամենօրյա հոգսերը: Դրա համար էլ մեր համարյա բոլոր մշակութային ու քաղաքական գործիչներն իրենց գործունեությունն սկսել են դպրոցից: Իսկ նրանցից շատերը մինչև վերջ էլ մնացել են այնտեղ:

Համբարձում Առաքելյանը, իր հուշերում անդրադառնալով XIX դարի 70-ական թվականների վերջերին և 80-ականների սկզբներին Շուշիում տեղի ունեցած անցքերին, գրում է. «Եվ շուտով կազմվեց մի մտերմական գրական-մտավոր շրջան: Հաճախ հավաքվում էինք ինձ մոտ կամ Ղազարոս Աղայանի մոտ: Դպրոցի տեսուչն էր այդ ժամանակ Սեդրակ Մանդինյանը: Մեր շրջանին մոտեցան գրեթե բոլոր ուսուցիչները: «Թեմականի» հետ (այսպես էր կոչվում թեմական տեսուչը մեր շրջանում) շարունակ խոսում էինք եկեղեցական-ծխական դպրոցների թիվը Ղարաբաղում ավելացնելու, մանկավարժական որակյալ կադրեր ուսուցչական աշխատանքին ընդգրկելու անհրաժեշտության մասին[3]:

Հայկական դպրոցներում ուսուցիչների ընտրությունն ու նշանակումը կատարվում էր հետևյալ ձևով. ա) ուսուցիչները նշանակում էին ժողովրդական ուսումնարանների Թիֆլիսի տնօրինության որոշմամբ և էջմիածնի կաթողիկոսի և թեմի տեսուչների համաձայնությամբ[4]:

Այսպես, 1868 թվականին Գևորգ Դ Կաթողիկոսի կարգադրությամբ «Արարատ» ամսագրում հրատարակվում են եկեղեցական դպրոցների առաջին կանոնները, համաձայն որոնց՝ Սինոդի ուսումնական հանձնաժողովը կաթողիկոսի անունից թեմերի առաջ խնդիր է դնում յուրաքանչյուր գյուղում դպրոց բանալ, իսկ ուսուցիչների ընտրության և նշանակման հարցը վճռում են թեմի առաջնորդները: Կանոնները սահմանում էին, որ եկեղեցական-ծխական դպրոցներում դասավանդելու իրավունք ունեն թեմական և արքունի միջնակարգ դպրոց ավարտածները և կաթողիկոսի թույլտվությամբ ավելի թերի կրթություն ունեցողները:

Այս կանոններով առաջին անգամ փորձ էր արվում կարգավորել տարածքում գտնվող ժողովրդական տարրական կրթական հաստատությունների ներքին կյանքը, սահմանել ծխական դպրոցներում ուսուցիչների ընտրության և նշանակման կարգը, նրանց դասավանդելիք առարկաները, ռոճիկի չափը, դասաժամերի որոշակիությունը, իրավունքներն ու պարտականությունները: Եկեղեցական-ծխական դպրոցների կանոնների համաձայն՝ Շուշիի թեմական դպրոցի մանկավարժական ժողովի որոշմամբ 1868-1869 ուսումնական տարում թեմականը գերազանց ավարտած աշակերտներին (Ա. Աղայան, Ն. Աթաբեկյան, Յ. Ստեփանյան, Թ. Մինասյան և ուրիշներ[5]) երաշխավորում էին դասավանդել Շուշիի, Վա-

3. Հ. Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, էջ 47-48:
4. ՀՀԱԱ, ֆ. 56, g. 3, գ. 78, թ. 8,9: Նաև տես, «Արարատ», 1868թ., հ. գ. էջ 35:
5. Այդ մասին տե՛ս Հ. Առաքելյան, Շուշիի թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիրը (որը 75-ամյա պատմության մի մասն է), Շուշի, 1913թ., էջ 54-60:

ռանդայի, Դիզակի, Խաչենի գավառների եկեղեցական-ծխական դպրոցներում: Նույնը կատարվում էր նաև Նուխիի գավառում, քանի որ Նուխիի դպրոցները ենթարկվում էին Շուշիի կոնսիստորիային:

1869թ. հուլիսին թեմական դպրոցների վերաբերյալ ընդունված կանոններում նշվում է, որ թեմական դպրոցներում թույլատրվում է դասավանդեն բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտածները կամ արքունի ուսումնարանի վկայական ունեցողները, իսկ թեմականի տեսուչը պետք է լինի աշխարհիկ անձնավորություն: Շուշիի թեմական դպրոցն առաջնորդվում էր իր կանոնադրությամբ (այն էական տարբերություն չուներ 1859թ. կանոնադրությունից), որի համաձայն ուսուցիչների ընտրության և նշանակման կարգը որոշում էին թեմի առաջնորդը (այն ժամանակ թեմի առաջնորդն էր Սարգիս Հասան Ջալալյանը) և թեմական դպրոցի տեսուչը, իհարկե, համաձայնեցնելով էջմիածնի Սինոդի ուսումնական հանձնաժողովի նախագահի՝ կաթողիկոսի հետ: Շուշիի թեմական դպրոցը, ունենալով համեմատաբար երկար կյանք, ժամանակի ընթացքում աստիճանաբար զարգացել, դարձել էր արցախահայության ոչ միայն կրթական շարժմանը գործնական ուղղություն տվող գիտակրթական, մշակութային կենտրոն, այլև ուսուցչական կադրերի պատրաստման դարբնոց: Արցախի թեմի դպրոցական կյանքում իրականացվող նորամուծությունները հիմնականում ծնունդ էին առնում, փորձվում ու տարածվում թեմական դպրոցից, իսկ 80-ական թվականներից՝ նաև ռեալական ուսումնարանից: Այդ ուսումնական հաստատությունները համեմատաբար առավել լայն հնարավորություն էին տալիս լավագույն շրջանավարտներին ծավալելու իրենց գործունեությունն Արցախի թեմի Նուխիի գավառի հայկական դպրոցներում, միաժամանակ իրենց էին գրավում լավագույն ուսուցիչներին: 1860-ական թվականներից սկսած՝ կրթական ասպարեզի աշխուժությունն առաջին հերթին իրեն զգացնել տվեց թեմական, օրիորդաց դպրոցներում, երբ թեմականի տեսուչն էր եվրոպական համալսարաններում մանկավարժական կրթություն ստացած Պետրոս Շանշյանը: Հայ թեմական գործիչներն ամեն կերպ ջանում էին թեմական դպրոցները, այդ թվում Շուշիի թեմականը, վերածել բազմակողմանի կրթություն տվող միջնակարգ ուսումնական հաստատությունների, որոնց սաները կարող էին դուրս գալ կյանքի ասպարեզ, ընդունվել բարձրագույն դպրոցներ կամ թեմականն ավարտելուց հետո նվիրվել մանկավարժական աշխատանքի:

Շուշիի թեմական դպրոցի համար որոշ վերելք արձանագրվեց Մաղաքիա Պլուզյանի տեսչության (1870-1873թթ.) շրջանում: Նա առանձնահատուկ ուշադրություն դարձրեց ուսուցիչների ընտրությանն ու նշանակման պայմաններին: 1872-1873 ուսումնական տարում՝ մայիսի վերջին հրավիրած մանկավարժական ժողովում[6] թեմական տեսուչն առաջարկեց գերազանցիկ աշակերտներին (թվով 14) երաշխավորել և թեմի հայկական դպրոցներում աշխատելու վկայագիր տալ, նաև պարտավորեցրեց ուսուցիչներին՝ նրանց մասին ներկայացնել լավ բնութագիր:

Հայկական դպրոցներում ուսուցիչների ընտրության և նշանակման հարցը պարբերաբար արծարծվում էր «Մշակ», «Արարատ», «Կռունկ հայոց աշխարհի», «Հայկական աշխարհ», «Դպրոց» և այլ պարբերականներում: «Հայկական աշխարհ» մանկավարժական ամսագրի խմբագիր Խորեն Ստեփանեն գտնում էր, որ «Մեր ազգի բարոյական փրկությունը, եթե հնարավոր է՝ ուսումնարանով և եկեղե-

6. Տե՛ս Լեո, Շուշիի թեմական դպրոցի պատմություն, էջ 242:

ցիով պիտի հասնե» և, գյուղացու թշվառության պատճառը անգրագիտությունը համարելով, ավելացնում էր. «Եթե մենք կամենում ենք ազգի բարոյական կյանքը կործանման վտանգից փրկել, մեր բոլոր ուժերը կրթությանը տալու ենք»[7]: Ամսագրի խմբագիրն ավելի արմատական հարցեր էր բարձրացնում՝ դպրոցներն ապահովել որակյալ ուսուցչական կադրերով: «Դպրոց» ամսագիրը (խմբագիրն էր Վահան Բաստամյանը, 1874-1876թթ.), արձագանքում էր ազգային կրթության հրատապ հարցերին, ջանքեր էր գործադրում, որպեսզի դպրոցներում դասավանդեն բանիմաց ու գիտուն ուսուցիչներ: «Ազգային դպրոցի շուրջը պիտի ժողովվի ազգի բարեմիտների բոլոր գործունեությունը»- գրում է «Դպրոցը»[8]:

XIX դարի 80-ական թվականներին ժողովրդական լուսավորության ասպարեզում սկսված ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը ավելի ծանր դրսևորումներ ստացավ ազգային ծայրամասերում: Խիստ ուժեղացավ ազգային ճնշումը, հայ դպրոցի համար ստեղծվեցին անբարենպաստ պայմաններ, հատկապես 1884թ. փետրվարի 16-ին ցարի հաստատած՝ «Կովկասի հայ-լուսավորչական եկեղեցական ուսումնարաններ» կանոնադրությունն ընդունվելուց հետո: Կանոնադրության յոթերորդ կետում ասվում էր. «Դպրոցների ղեկավարությունն իրականացնելու են թեմականները, որոնց իրավունք է տրվում դրանց վերահսկելու համար կառավարչապետի և հոգաբարձուի գիտությամբ ունենալ մի տեսուչ: Կարևորն այն է, որ այդ տեսուչը պետք է անպայման հավատարիմ հոգևոր անձ լինի: Հոգևոր իշխանությունը պետք է Կովկասի կառավարչապետին հայտնի նաև դպրոցների բացման, փակման, ուսուցիչների նշանակման ու ազատման մասին, ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ»[9]: Կանոնադրության այդ բաժնում նաև նշվում է, որ ուսումնական շրջանի հոգաբարձուին. այն դեպքում, երբ նա ուսուցիչներից կամ ուսուցչուհիներից որևէ մեկին համարում է իր կոչմանն անհամապատասխան, իրավունք է տրվում դիմել հոգևոր վարչությանը տվյալ անձնավորությանն զբաղեցրած պաշտոնից անմիջապես հեռացնելու և ուրիշով փոխարինելու մասին: Հոգևոր իշխանության կողմից այդ պահանջը չկատարելու դեպքում, հոգաբարձուն այդ մասին հայտնում է ժողովրդական լուսավորության նախարարությանը, իսկ հատկապես կարևոր դեպքերում՝ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին, որն իր իսկ հայեցողությամբ համապատասխան միջոցներ է ձեռնարկում և իր ստացած կարգադրությունների մասին տեղեկացնում է ժողովրդական լուսավորության նախարարին»[10]:

Հայկական դպրոցի վերաբացումից հետո, 1886թ. հուլիսյան համարում տպագրվեցին հայոց եկեղեցական-ծխական դպրոցների նոր կանոնները, որոնք կազմվել էին էջմիածնի Սինոդի կողմից՝ հաշվի առնելով կառավարության պահանջները: Մակար կաթողիկոսն աշխատել էր կանոնների մեջ հատկապես շեշտել այն հարցերը, որոնց վրա կառավարական խորհրդակցությունն ավելորդ էր համարել հատուկ կանգ առնել: Կանոններում պարզորոշ նշվում էին կաթողիկոսի իրավունքները դպրոցների հարցում. նրա հրամանով են բացվում և նրա սահմանած կանոններով առաջնորդվում միդասյա և երկդասյա դպրոցները, կաթողիկոսն է հաստատում հոգաբարձուներին, ուսուցիչների ընտրության և նշանակ-

7. «Հայկական աշխարհ», Շուշի, 1874թ., թ. 1:
8. «Դպրոց», 1874, թ. 1, էջ 12-13:
9. "Правила об армяно-григорианских церковных училищах на Кавказе", "Русские писатели об Армении", составители С. Арешян, Ереван, 1946г., стр. 1,2.
10. Նույն տեղում, էջ 2-3:

ման հարցը վճռում են թեմի առաջնորդները: Ինչպես 1868/69, 1876 թվականների կանոններում էր սահմանված, այս կանոններում նույնպես սահմանվում էին, որ եկեղեցական-ծխական միդասյա, ծխական երկդասյա, օրիորդաց դպրոցներում կարող են դասավանդել թեմական դպրոցն ավարտածները, իսկ ավելի թերի կրթություն ունեցող ուսուցիչները դպրոցներում դասավանդում են միայն կաթողիկոսի թույլտվությամբ:

1889թ. մարտին դպրոցների վերաբերյալ հրատարակված կանոնադրությունն ուսուցիչների ընտրության համար սահմանում էր հետևյալ կարգը. ուսուցիչ լինել ցանկացողները պետք է դիմեն կաթողիկոսին, որը կազմում էր նրանց ցուցակը: Միայն այդ ցուցակի մեջ մտած մարդկանցից կարելի էր ընտրել ուսուցիչներ: Կանոնները մտցնում են նաև ավագ ուսուցչի պաշտոնը, որի ընտրությունը կատարում էր թեմական առաջնորդը: Այնուհետև ավագ ուսուցիչը, հոգաբարձության հետ խորհրդակցելուց հետո, ընտրում է դպրոցի ուսուցիչներին և ներկայացնում թեմակալի հաստատմանը[11]: 1889թ. պետական որոշումներից հետո կաթողիկոսը պատվիրեց ուսուցիչներին պատրաստվել և վկայականի քննություն հանձնել արդեն պետական հաստատություններում: Ինչպես տեսանք, 1886թ. հուլիսին «Արարատ» ամսագրում հրատարակված կանոններում նույնպես պարզորոշ նշվում է, որ ուսուցիչների ընտրության և նշանակման հարցը վճռում են առաջնորդները: Ուսուցիչների նշանակման հարցում կաթողիկոսին վերապահված այդ իրավունքի դեմ դուրս եկավ Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձու Կ.Յանովսկին: Նա պահանջեց, որ այդ հարցը յուրաքանչյուր առանձին դեպքում համաձայնեցվի իր հետ և ոչ թե սոսկ «տեղեկացվի իրեն», ինչպես օրենքն էր սահմանել:

Յուրովի մեկնաբանելով անհամապատասխան ուսուցիչներին հեռացնելու իրեն տրված իրավունքը, Կ. Յանովսկին գտնում էր, որ կաթողիկոսը կարող է ուսուցիչներ ընտրել միայն ուսուցչական վկայական ունեցողներից:

Ըստ նրա՝ էջմիածնի ճեմարանն ավարտածներն իրավունք ունեն դասավանդել միայն կրոն և հայոց լեզու: Իր այս պահանջը չկատարելու դեպքում Կ. Յանովսկին սպառնում էր հեռացնել վկայական չունեցող ուսուցիչներին: Միանգամայն հասկանալի է, որ հնարավոր չէր կարճ ժամկետում պարտադրել բոլոր ուսուցիչներին վկայականի քննություններ հանձնելու:

Վերոնշյալ դպրոցական կանոնադրություններում նշվում էր, որ ծխական դպրոցներում ուսուցչի և ուսուցչուհու նշանակվելն ու արձակվելն ընդհանուր կարգով պետք է իրականացվեն լուսավորչական հոգևոր վարչության անմիջական կարգադրությամբ[12]: Միաժամանակ թեմական առաջնորդները պարտավոր էին ուսումնական շրջանի հոգաբարձուին հաղորդել, թե ինչպես է կազմված ուսուցչական տվյալ խումբը[13]:

Մակար կաթողիկոսը մի շարք կոնդակներով ու կարգադրություններով աշխատեց կարգավորել ուսուցիչների ընտրության գործը: Նա պահանջեց, որ հայ լուսավորչական թեմերում, այդ թվում՝ Արցախի թեմում, եկեղեցական-ծխական դպրոցներում դասավանդող ուսուցիչները պետք է ունենան թեմական դպրոցի կամ արքունի ուսումնարանի շրջանավարտի վկայական, իսկ հոգևոր անձիք՝ էջմիածնի Գևորգյան ճեմարանի վկայական: Շուշիի ռեալական և քաղաքային ուսում-

11. Записка об армянских школах (составители Ал. Харуски и А. Петров), СТБ., 1911г., стр. 27.
12. «Արձագանք», 1889թ., թ. 19, էջ 281: Նաև, կաթ. դիվան. թ. 126, վավ. 399:
13. «Մշակ», 1894թ., թ. 70:

նարանների շրջանավարտներին իրավունք էր տրվում դասավանդել ծխական դպրոցում, և թեմականի 1-3-րդ դասարաններում:

1889թ. դպրոցական կանոնները հրատարակվելուց հետո կաթողիկոսը հատուկ դասակարգում սահմանեց ուսուցիչների համար. նայած կրթական մակարդակին, ուսուցիչները բաժանվեցին 13 կարգի և դրան համապատասխան կազմվեց ու հրատարակվեց ուսուցիչների նոր ցուցակը, որի մեջ մտնում էին 32 ուսուցիչ-ուսուցչուհիներ: Դրանից հետո այդ ցուցակներն ամեն տարի թարմացվում և փոփոխվում էին[14]: Կաթողիկոսն ուսուցիչների վարձատրության գործը կարգավորում էր ըստ նրանց կարգի (ավագ, միջնակարգ, բարձրագույն կրթության վկայական ունեցողներ, երկդասյա դպրոցի, քաղաքային ուսումնարանի, արքունի ուսումնարանի, Գևորգյան ճեմարանի շրջանավարտներ, տիրացուներ՝ կրոնի ուսուցիչներ և այլն), դասավանդվող առարկայի բնույթի և դպրոցի գտնվելու վայրի:

Քննարկվող ժամանակաշրջանում հայ դպրոցի տնտեսական երերուն վիճակի պայմաններում սա ուսուցիչների վարձատրության գործում կայունություն և որոշակիություն մտցնելու փորձ էր. սահմանվում էր աշխատավարձի նվազագույնը, թեև տվյալ դեպքում էլ տուժում էին բարձր վարձատրվող որակյալ ուսուցիչները: Ուսումնասիրելով 90-ական թվականների սկզբներին հայ պարբերական մամուլում լույս տեսած մի շարք հոդվածներ, նկատել ենք որ որոշ հեղինակների կողմից անարդարացի խիստ քննադատության էր ենթարկվում ուսուցիչների ընտրության և վարձատրության կարգը: Օրինակ, «Մշակը» պահանջում էր հոգևորականությանը հեռու վանել կրթական գործից, մեծացնել ժողովրդի նախաձեռնողականության շրջանակները և դրանով նրան կրկին մոտեցնել դպրոցին: «Մուրճը»[15] բողոքում էր, որ 1889թ. վերականգնված դպրոցական տեսուչների պաշտոնում նշանակվում են միայն հոգևոր անձիք:

Սակայն քննադատները հաշվի չէին առնում, որ այդ փոփոխությունները կաթողիկոսի կողմից կատարվել են միայն ցարական իշխանության պահանջով: Այսպես, օրինակ, 1889թ. դեկտեմբերի 27-ին Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովը կաթողիկոսին գրած նամակում դժգոհում էր, որ նրա հրապարակած դպրոցական նոր կանոններում (1889թ. հուլիսին) չի շեշտված թեմական տեսուչների պաշտոններում պարտադիր կերպով հոգևոր անձաց նշանակելու անհրաժեշտությունը: Նա տարակուսում էր նաև, որ դպրոցների ղեկավարման գործում թույլատրված են աշխարհիկ հոգաբարձուներ և գտնում էր, որ «ժողովրդական դպրոցների ղեկավարման համար աշխարհիկ մարդկանց ընտրության գործում անհրաժեշտ է մեծագույն զգուշություն, առանձնապես մեր օրերում, որոնք այնքան հարուստ են քայքայիչ ազդեցություններով»[16]:

Հայ պարբերական մամուլում («Մշակ», «Արձագանք», «Մուրճ» և այլն) լույս տեսած որոշ հոդվածների հեղինակների՝ Կաթողիկոսի կողմից սահմանված ուսուցիչների ընտրության, նշանակման կարգի և ռոճիկի չափի վերաբերյալ քննադատությունը տեղին չէր, քանզի, անշուշտ, տիրող իրավիճակը, հասարակության բողոքները, քննադատությունը, պետական արտոնյալ դպրոցների հետ մրցակցությանը դիմանալու ձգտումն էր, անշուշտ, որ էջմիածնին ստիպեցին որոշակի

14. Այդ մասին տես, ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 10, 12, նաև «Արարատ», 1889թ., թ. 19:
15. «Մշակ», 1892թ., թ. 44:
16. Տես՝ Доклад Его Императорскому Высочеству Наместнику Кавказского Главного Инспектора учебных заведений, докладчик С.С. Неверов, 1892г., стр. 44-45:

միջոցներ որոնել՝ պահպանելու համար ազգային դպրոցը, քանի որ ցարական իշխանությունների կողմից խիստ հսկողություն էր սահմանվում առանց այն էլ աղքատության ճիրաններում գալարվող հայ դպրոցի վրա: Ինչ խոսք, ազգային հալածանքների սաստկացման ընդհանուր շղթայում կարևոր թիրախ էր դպրոցը: Այդ դժվար կացությունից դուրս գալուն ուղղված կաթողիկոսի ձեռնարկումներն ազգաշահ էին:

Դարի 90-ական թվականների սկզբներին հայ դպրոցի համար ստեղծվեցին անբարենպաստ պայմաններ: Ուսուցիչների ընտրության և նշանակման կարգը նորից շոշափվեց կովկասյան կառավարչապետ Ս. Շերեմետևի (1890-1896)) խորհրդակցություններում: Այսպես, 1889թ. վերջին (դեկտեմբեր) և 1890թ. սկզբին, կովկասյան կառավարչապետի խորհրդակցությունը որոշեց հինգ տարվա ժամկետ սահմանել, որպեսզի հայ լուսավորչական թեմերում հայկական դպրոցի ուսուցիչները ուսուցչական պետական վկայական ձեռք բերեն: Սակայն, չնայած էջմիածնի հորդորներին, հայ ուսուցչությունը դժվարությամբ էր տեղից շարժվում, երկար տարիներ դպրոցում աշխատելուց հետո, դարձյալ կանգնելով քննական հանձնաժողովի առաջ: Կովկասի հոգաբարձու (ուսումնական գերատեսչության պետ) Կ. Յանովսկին պատվիրել էր առանձնապես խիստ վարվել քննություն հանձնող հայ ուսուցիչների նկատմամբ: Առաջին տարիներին ցենզի հարցը մի տեսակ մոռացության մատնվեց, սակայն 1892թ. հայ մամուլն սկսեց անհանգստանալ, զգալով, որ այդ հարցը կարող է վտանգել դպրոցի գոյությունը: Երևանի, Վրաստանի թեմական տեսուչները, այդ թվում՝ Շուշիի թեմական տեսուչ Լևոն Սարգսյանը մայիսին դիմեցին Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերությանը և օգնություն խնդրեցին ցենզի քննություն հանձնողների (նկատի ունենք նաև Արցախի թեմի հայկական արական և իգական դպրոցների ուսուցիչների) համար դասընթացներ կազմակերպելու նպատակով[17]: Հաջորդ տարի նախաձեռնությունն իր վրա վերցրեց Կովկասի բարեգործական ընկերությունը. Թիֆլիսում, Ախալցխայում, Շուշիի մասնաճյուղում մոտ 60 հոգու համար կազմակերպվեցին դասընթացներ[18]: Փորձ ձեռք բերելով, հայոց բարեգործական ընկերությունը որոշեց ամեն տարի կազմակերպել ուսուցիչների որակավորման դասընթացներ:

Սակայն ուսուցչական ցենզի հարցը սուր կերպարանք ստացավ: Կովկասի ուսումնական վարչությունն սկսեց որոշ տեղեր ձեռնամուխ լինել դպրոցների փակմանը, հիմք ընդունելով, որ ուսուցիչներն ուսուցչական պետական վկայական չունեն: Այդ ժամանակ Շուշիի ռեալական և քաղաքային ուսումնարանների շատ հայ ուսուցիչներ, որոնք ունեին համապատասխան ցենզ, դիմեցին էջմիածնի Սինոդին, իրենց թույլատրել նաև դասավանդելու եկեղեցական-ծխական դպրոցներում:

1894թ. հունիսի 4-ին Խրիմյան կաթողիկոսը դիմեց կառավարությանը՝ խնդրելով մեկ տարով երկարաձգել ուսուցչական ցենզ ձեռք բերելու ժամկետը և դրանով փրկել հայ դպրոցը փակման վտանգից: Կովկասի ուսումնական վարչության պետ Կ. Յանովսկին միաժամանակ նույնպես դիմեց կառավարությանը և կարգադրություն խնդրեց ցենզ (վկայական) չունեցող հայ ուսուցիչներին հեռացնելու մասին: Սակայն, այս անգամ կառավարությունը հարգեց Ամենայն հայոց կաթո-

17. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 22, ց.1, գ. 544, էջ 4, նաև ց. 3, գ. 78, թ. 10, 11:
18. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 28, գ. 281:

ղիկոս Խրիմյանի խնդրանքը՝ համոզված լինելով, որ դա, միևնույն է, վիճակը չի փոխի, իսկ կաթողիկոսն առիթ չի ունենա հայտարարելու, թե հայ եկեղեցին հալածվում է[19]:

Այն ժամանակ, երբ կաթողիկոսը 1895թ. հուլիսի 28-ին կառավարությանը խնդրանք էր ներկայացրել ուսուցչական ցենզի ժամկետը կրկին երկարաձգելու մասին, Կովկասի կառավարչապետ Շերեմետևը Պետերբուրգ ուղարկեց հայկական դպրոցները էջմիածնի ենթակայությունից դուրս բերելու վերաբերյալ իր առաջարկները՝ միաժամանակ պատճառաբանելով, որ այդ դպրոցները լուրջ խոչընդոտ են ուղղափառության տարածմանը, որ շատ վայրերում հայերը լրիվ հայախոս ու հայասեր են դարձել և այլևս չեն հաճախում ուղղափառ եկեղեցիներ[20]: Կառավարչապետն առաջարկում էր մերժել կաթողիկոսի խնդրանքը և պահանջել 1884թ. փետրվարի 16-ի կանոններին չհամապատասխանող դպրոցները գոյության միջոցներով հանդերձ հանձնել ուսումնական վարչությանը, իսկ չենթարկվելու դեպքում՝ փակել դրանք: Կառավարությունն այս առաջարկին հավանություն տվեց և պատվիրեց ներքին գործերի նախարարությանը՝ նախապատրաստվել դպրոցների ընդունմանը:

Հայերի կրթական գործի դեմ սկսված լայն հալածանքը միայն եկեղեցական-ծխական դպրոցներով չսահմանափակվեց: 1903թ. հունիսի 12-ի օրենքով փակվեցին նաև թեմական դպրոցները: Ամենուրեք, հայ լուսավորչական թեմերում, այդ թվում՝ Արցախի թեմում ուսուցչական հավաքներ ու ժողովներ էին կազմակերպում, բազմաթիվ հանրագրեր էին կազմվում և ուղարկվում էջմիածին, թեմական առաջնորդներին՝ պահանջելով չենթարկվել կառավարության որոշմանը, բողոքել, դիմադրել՝ պահպանելով հայկական դպրոցների գոյությունը[21]:

Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանի խնդրագրերն ու բողոք-նամակները ստիպեցին ցարական կառավարությանը փոխել հուլիսի 12-ի օրենքը և վերաբացել հայկական դպրոցները:

Ինչպես վերը նշվել է, հայ դպրոցը, որ տասը տարի փակել էր իր դռները (1896-1905թթ.), այժմ կանգնում էր դժվարին խնդիրների առաջ: Դժվար կացության մեջ էր նաև հայ ուսուցիչների վիճակը: Պետք էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, պետությունից ընդունել դպրոցական գույքն ու շենքերը, մի խոսքով ամեն ինչ նորից սկսել: 1905-1906 ուսումնական տարում դպրոցների վերաբերյալ հրատարակված նոր կանոնադրությունը ուսուցիչների ընտրության ու նշանակման կարգը սահմանում էր հետևյալ ձևով. ա) ուսուցիչները նշանակվում են թեմերի առաջնորդների և թեմական դպրոցների որոշմամբ, բ) թեմական դպրոցի գերազանցիկ աշակերտներին երաշխավորվում էր դասավանդելու ծխական միդասյա, երկդասյա դպրոցներում: Դպրոցական նոր կանոնները մտցնում են նաև ավագ ուսուցչի պաշտոն:

19. Տե՛ս ՀՀԱԱ, ֆ. 22, ց. 1, գ. 276, էջ 30, ֆ. 56, ց. 3, գ. 119, էջ 12:
20. Նույն տեղում:
21. Հ. Խ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 72:

2. Ուսուցչի պատրաստման հիմնախնդիրն Արցախի թեմում՝ 1838-1920թթ.

Մանկավարժական հայտնի ճշմարտություն է, որ բոլոր ժամանակներում դպրոցական գործի սկզբնավորման, զարգացման և արդյունավետության չափորոշիչը պահանջվող քանակի ու որակի ուսուցչական կադրերի առկայությունն է: Բնականաբար, այդ չափորոշիչն ակնհայտ էր նաև քննարկվող ժամանակաշրջանի հայ իրականության մեջ: Իսկ այդ մասնագետների պատրաստումը և նրանց միջոցով ազգային դպրոցների ապահովումը շատ ավելի դժվար և երկար ժամանակ պահանջող խնդիր էր անգամ նյութական միջոցների առկայության պայմաններում:

Բոլոր ժամանակներում ուսուցիչների պատրաստման հիմնախնդիրը մշտապես մտահոգել է հայ ժողովրդին, քանի որ բանիմաց ուսուցչի աշխատանքով է պայմանավորված ազգի ոչ միայն ներկան, այլև ապագան և, որպես արդյունք, ժողովրդի հետագա զարգացումն ու բարգավաճումը: Ինչպիսին ուսուցիչն է, այնպիսին էլ հասարակությունն է՝ այս սկզբունքով է առաջնորդվել XIX դարի հայ մտավորականությունը: Կարևորելով ուսուցիչների պատրաստման անհրաժեշտությունը՝ նրանք պահանջում էին հատուկ ուշադրություն դարձնել այդ հրատապ խնդրին:

Այդ առնչությամբ, մասնավորապես, հայ մեծ լուսավորիչ մանկավարժ Խ. Աբովյանն իր «Ընդհանուր դիտողություններ»-ում գրում է, որ դպրոցական գործի հաջողությունը կապահովվի միայն գիտուն, մանկավարժորեն-մեթոդապես պատրաստ բարեխիղճ ուսուցիչներով: Ուստի բարձր որակավորման ուսուցիչներ պատրաստելու նպատակով նա անհրաժեշտ է համարում, որ ինչպես ուրիշ երկրներում կամ Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, այնպես էլ Թիֆլիսում անհրաժեշտ է ուսուցչական սեմինարիա: իսկ եթե այդ առաջարկը գլուխ չգա, ապա շատ ցանկալի է, որ Թիֆլիսի գիմնազիայի ստորին դասարանների փորձված, հմուտ ուսուցիչների դասերին պարբերաբար հաճախեն անփորձ ուսուցիչները և առաջիների վերահսկողության տակ ձեռք բերեն ավանդման վարպետություն: Աբովյանի այդ առաջարկները մնացին ձայն բարբառո հանապատի[1]:

Ուսուցիչների պատրաստման հիմնապնդիրը հայ իրականության մեջ, ինչպես և Արցախի թեմում, միշտ էլ դիտարկվել է ականավոր հայ մտավորականների կողմից հայ դպրոցի զարգացման բոլոր պատմաշրջաններում:

XIX դարի առաջին կեսին՝ հայ նոր դպրոցի կազմավորման շրջանում, որոշակի փոփոխություններ կատարվեցին Արցախի թեմի դպրոցաշինության ասպարեզում, հայ գործիչների ջանքերով ընդլայնվեց աշխարհիկ դպրոցների ցանցը: Սակայն դպրոցներում դասավանդում էին քահանա ուսուցիչները, տիրացուները, ոչ լիարժեք կրթություն ունեցող աշխարհականները (այդ վարժապետները հաճախ վարպետներ էին կոչվում): Ուսուցիչներից ոմանք էլ մի կերպ կարդում էին, բայց գրել չգիտեին և իրենց աշակերտներին գրել էլ չէին սովորեցնում. օրինակ, Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի, Շուշիի գավառներում մասնավոր դպրոցներ էին բացում (1800-1820թթ.) և ուսուցանում են անգամ արհեստավորները, ինչպես Ալեքսանդր Արարատյանցն է մատնանշում. «Երբեմն էլ կասկածելի բախտախնդիրներ, թոկից փախածներ, որոնք տգետ են, բայց ուսուցիչ կոչելով իրենց, երեխաներին մի կերպ տառերն են ուսուցանում»[2]: Հասկանալի է, որ նման «ուսու-

1. Տե՛ս Ար. Շավարշյան, Հայ մանկավարժներ, գիրք Ա., Երևան, 1958, էջ 71:
2. Ալ. Արարատյանց, Հիմակրթություն գավառական ուսումնարանի, Թիֆլիս, 1889, էջ 64:

ցիչները» ոչ մի չափով պիտանի չէին կարող լինել Արցախի թեմի (Նուխիի) նոր բացվող, ժամանակակից, բարեկարգ հայկական դպրոցների համար: Եթե այդ դպրոցներից մի քանիսը բացվում և գործում էին նյութական-դրամական միջոցների միանգամայն բավարար պայմաններում, ապա նրանք սկզբից ևեթ դժվարին վիճակի մեջ էին ընկնում քիչ թե շատ պիտանի ու որակյալ ուսուցիչներ գտնելու տեսակետից:

XIX դարի առաջին կեսին Արցախի թեմում չի բացվել ուսուցիչներ պատրաստող և ոչ մի հատուկ ուսումնական հաստատություն: Արցախի թեմի դպրոցների համար ուսուցիչներ հավաքագրելու հնարավոր ուղիները մի քանիսն էին: Դրանցից մեկը ռուսերեն լեզվով դասավանդող, ինչպես և այլ հանրակրթական առարկաների դասավանդման համար Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Երևանի գիմնազիան, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Աստրախանի Աղաբաբյան բարձր տիպի և այլ դպրոցներ ավարտած անձանց ներգրավումն էր: Այդպիսի ուսուցիչներ համեմատաբար շատ էին այնպիսի վայրերում, որտեղ հայկական դպրոցի կողքին կային ռուսական արքունի գավառային ուսումնական հաստատություններ, որոնց ուսուցիչներից շատերը միաժամանակ մանկավարժական աշխատանք էին տանում Արցախի թեմի եկեղեցական-ծխական դպրոցներում: Օրինակ, Արցախի թեմի հայտնի լուսավորիչներ Հովսեփ Արցախեցին, Պողոս Ղարաբաղցին[3] ժամանակին, որպես գիտուն, բազմակողմանի կրթված ուսուցիչներ, իրենց լուսավորչական ձեռնարկումների իրականացման հետ զուգընթաց, բեղուն մանկավարժական գործունեություն են ծավալել Գանձասարի հոգևոր դպրոցում (պատրաստելով հոգևորականներ, ուսուցիչներ), բազելցի միսիոներների բացած Շուշիի ուսումնարանում (1827թ.) և գավառային ուսումնարանում (1830), նրանց հետ Շուշիի դպրոցներում դասավանդում էին Հարություն Ամիրխանյանը (տիրապետում էր մի քանի լեզուների), Գրիգոր Տեր Ավագյանը և ուրիշներ[4]:

Մինչև Շուշիի թեմական դպրոցի բացումը, թեմում գործող եկեղեցական-ծխական, վանական դպրոցները, 1827թ. բազելցի միսիոներների բացած ուսումնարանը, Շուշիի գավառային (1830) և Նուխիի ռուսական տիպի ուսումնարանները որոշ չափով վերածվել էին ուսուցիչների պատրաստման կենտրոնների:

Քննարկվող ժամանակաշրջանում հայ լուսավորչական թեմերի դպրոցների համար ուսուցիչների պատրաստման գործում հիմնական դերը, միաժամանակ դիտարկվել է «Հայ լուսավորչական հավատի հոգևոր գործերի կառավարման կանոնադրությունում», «Պոլեժենիե»-ում, որը ժամանակին էապես նպաստել է XIX դարի առաջին կեսի Արևելյան Հայաստանի, այդ թվում՝ Արցախի թեմի ազգային դպրոցների համար ուսուցիչների պատրաստման գործին: Կանոնադրության 7-րդ բաժնում թեմական առաջնորդներին, հոգաբարձուներին պարտավորեցվում է ոչ միայն ընդլայնել եկեղեցական-ծխական, հոգևոր-վանական դպրոցների ցանցը, այլև դպրոցներում ներգրավել մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների, որոնք ունենան արքունի ուսումնարանի կամ թեմական դպրոցի վկայական: Այդ ժամանակ Շուշիի ուսումնարանի (նկատի ունենք բազելցի միսիոներների հիմնադրած ուսումնարանը), գավառային պետական ուսումնարանի լավագույն շրջանավարտներին թեմի առաջնորդի (Արցախի թեմի առաջնորդն էր Բաղասար միտրոպոլիտը 1828-1836, 1836-1854թթ.) երաշխավորությամբ թույլատրվում էր դասավանդելու եկեղեցական-ծխական դպրոցներում, բացի այդ՝

3. Տե՛ս Գ. Հ. Հարությունյան, Արցախի թեմի լուսավորիչներ, Ստեփանակերտ, 2002, էջ 14-30:
4. Նույն տեղում:

էջմիածնի Ժառանգավորած դպրոցը և հոգևոր ուսումնարանն ավարտածները դասավանդում էին նաև Արցախի թեմի դպրոցներում:

XIX դարի առաջին կեսին ազգային դպրոցների համար ուսուցիչների պատրաստման գործում չափազանց մեծ է Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1815), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824), Երևանի թեմական դպրոցի (1837), ինչպես նաև հայ լուսավորչական թեմերի (Նոր Նախիջևանի, Վրաստանի, Շամախու, Աստրախանի) թեմական դպրոցների, այնպես էլ Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի դերը: Ռուսաստանի, Թեֆլիսի բարձրագույն դպրոցների շրջանավարտները, վերադառնալով հայրենիք, աշխատում էին ազգային դպրոցներում, և դասավանդող ուսուցչական կազմը որակապես համալրվում էր մասնագիտական բարձրագույն կրթություն ստացած բանիմաց մանկավարժական կադրերով:

Իր գործունեության առաջին իսկ օրերից Շուշիի թեմական դպրոցը (1838թ. հունիսի 22) պատրաստել է ուսուցիչներ ազգային դպրոցների համար: Դպրոցի ընդունակ, բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտի երաշխավորությամբ աշխատում են եկեղեցական-ծխական, հոգևոր դպրոցներում, մի մասն էլ ուղարկվում է բարձրագույն կրթություն ստանալու հայկական բարձրագույն դպրոցներում՝ Ներսիսյան դպրոցում, Լազարյան ճեմարանում:

Ազգային դպրոցների համար ուսուցիչների պատրաստման հիմնախնդիրը լայն քննարկման առարկա դարձավ հատկապես XIX դարի երկրորդ կեսին: Հայտնի է, որ քննարկվող ժամանակաշրջանում արևելահայ իրականության մեջ, այդ թվում՝ Արցախում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակը, մշակութային կյանքում նկատվող տեղաշարժերը խթանեցին նաև ժողովրդի գաղափարական զարթոնքը: Որոշակիորեն աշխուժացավ դպրոցաշինությունը, առաջ քաշվեցին բազմաթիվ կրթական խնդիրներ, որոնց շարքում շարունակում էր անչափ կարևոր ու հրատապ մնալ ուսուցչական կադրերի պատրաստման խնդիրը, որը գտնվում էր XIX դարի երկրորդ կեսի հայ կրթական գործիչների ուշադրության կենտրոնում: Ազգային դպրոցի կրթադաստիարակչական գործի հաջողության գլխավոր նախապայմանը, ըստ Ս. Նազարյանցի՝ ուսուցիչն է, նրա բարձր որակը: «Հյուսիսափայլ» ամսագրում (1858-1864թթ.) և՛ Նազարյանցը, և՛ Մ. Նալբանդյանն առաջադրում են ստեղծել Կենտրոնական միջնակարգ դպրոց իբրև «Մայր և ծննդարան մյուս դպրոցների»: Այդ դպրոցը պետք է նախ ուսուցիչներ պատրաստի ժողովրդական դպրոցների համար, այդտեղ սովորողներին զինել այն բոլոր առարկաների հիմնավոր գիտելիքներով, որոնցով նրանք կարողանան դիմել Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի մշակութային կենտրոնները՝ բարձրագույն կրթություն ստանալու համալսարաններում ու, վերադառնալով հայրենիք, տարբեր մասնագիտությունների գծով գործեն ազգային հիմնարկներում[5]: Հայ դպրոցի վարժապետները տգետ են, ասում է Ս. Նազարյանցը, սահմանափակ մտքի տեր, անսիրտ, անհոգի դեպի իրենց պարտականությունները, այդպիսի ուսուցիչներով դպրոցը երբեք չի բարեկարգվի: Հրամայական անհրաժեշտություն է նոր ուսուցչություն պատրաստել՝ գիտուն, մանկավարժական գիտելիքներով զինված, բարեխիղճ[6]:

Անդրադառնալով ուսուցչական նոր կադրերի պատրաստման հարցին, Միքայել Նալբանդյանը գտնում էր, որ ազգային աշխարհիկ դպրոցների համար պատ-

5. Տե՛ս «Հյուսիսափայլ», 1860, թ.1, էջ 79: Նաև Ար. Շավարշյան, նշվ. աշխ., էջ 187:
6. Տե՛ս Ա. Շավարշյան նշվ. աշխ. էջ 187-188:

ռաստվող ուսուցչական կադրերը պետք է լինեն բացառապես քաղաքացիական անձինք[7]: Դրանով իսկ, Նալբանդյանը ցանկանում էր դպրոցը դարձնել, իրոք, ժողովրդական, աշխարհիկ:

Ազգային դպրոցի կրթադաստիարակչական ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարը ուսուցիչն է, որի տիպարն Ղ. Աղայանը ներկայացնում է որպես վեհ ու վսեմ: Հայ մեծ մանկավարժը հատուկ ուշադրություն է դարձրել նաև ուսուցչի մասնագիտական պատրաստվածության հարցին: Ըստ Աղայանի՝ բարեկարգ ազգային դպրոցներ ստեղծելու համար անհրաժեշտ են ոչ միայն հաջող ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր ու ձեռնարկներ, այլև ամենակարևորը՝ գիտուն, իր առարկային խորապես տիրապետող որակյալ ուսուցիչներ. «Մանկավարժությունը արվեստ է, ուսուցիչը արվեստագետ»[8]:

Իր «Մեր մանկավարժական տարակուսանքներ»-ը հոդվածում Ս. Մանդինյանը հանգում է այն հետևության, որ «չի կարող դպրոցը յառաջանալ, եթե պատուական ուսուցիչներ չունենք, չի կարող, որովհետև նախագիծ չունի և որովհետև չունի մի այնպիսի ճարտարապետ, որ իր մեջ կենդանի պահպանե այդ նախագծի ոգին և միաբանական ուղղութիւնը»[9]:

Քննարկվող ժամանակաշրջանում ականավոր հայ մանկավարժները ճիշտ էին նկատում, որ հայ դպրոցի հետամնացության գլխավոր պատճառներից մեկը որակյալ ուսուցչական կադրերի պակասն է: Վերոնշյալ մանկավարժները և շատ ուրիշներ գտնում էին, որ ստեղծված պայմաններում ազգային դպրոցը կարող էր ժողովրդին ծառայել միայն մասնագիտական պատրաստություն ունեցող ուսուցիչների շնորհիվ: Այս և մյուս հրատապ խնդիրների շուրջ Արևելյան Հայաստանում, Արցախի թեմում սկսվում են ակտիվ քննարկումներ: Նշված խնդիրներն իրենց լուծումներն են ստանում XIX դարի 60-70-ական թվականներին հայ իրականության մեջ ծավալված հզոր հասարակական-մանկավարժական շարժման պայմաններում: Լուսավորչական շարժումն իր բարերար ազդեցությունն է ունենում նաև Արցախի դպրոցական գործի զարգացման, ինչպես նաև ուսուցչական կադրերի պատրաստման հրատապ խնդիրների քննարկման վրա:

Դարի 60-ական թվականներին Արցախի թեմում մանկավարժական բեղուն գործունեություն են ծավալում Պետրոս Շանշյանը, Պերճ Պռոշյանը, Մելիքսեթ Մուրադյանը և ուրիշներ: Նրանց ջանքերով գործող դպրոցները՝ եկեղեցական-ծխական, հոգևոր-թեմական, օրիորդաց (1864թ. Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցը) դպրոցները շարունակում են պատարստել ուսուցիչներ կրթական օջախների համար: Պերճ Պռոշյանի, Պետրոս Շանշյանի, Մարիամ Հախումյանի կազմած «Ղարաբաղի Տիրամայր սուրբ Մարիամյան օրիորդաց ուսումնարանի կանոնադրություն»-ում նշվում է, որ օրիորդաց դպրոցը պետք է պատրաստե «կրթված հայուհիներ, որոնք կկարողանան դասավանդել ծխական դպրոցներում»[10]:

XIX դարի 70-ական թվականներին Արցախի թեմում մանկավարժական կադրերի կատարելագործման և վերապատրաստման գործում կարևոր դեր էր վերապահված մանկավարժական մամուլին, որտեղ զետեղված մանկավարժական բնույթի հոդվածները, եվրոպական և ռուսական աղբյուրներից կատարված

7. Ս. Խուդոյան, Մ. Նալբանդյանը դաստիարակության մասին, Երևան, 1955, էջ 51:
8. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ.4, 1963, էջ 78-79:
9. Ս. Մանդինյան, Մեր մանկավարժական տարակուսանքները, Թիբիլիսի, 1875, էջ 7-8:
10. Տե՛ս Պ. Շանշյան, Պ. Պռոշյան, «Ղարաբաղի Տիրամայր սուրբ Մարիամյան օրիորդաց ուսումնարանի կանոնադրություն», Շուշի, 1964, էջ 2-3:

թարգմանությունները մեծապես նպաստում էին ազգային դպրոցի կատարելագործմանը և ուսուցիչների մասնագիտական գիտելիքների հարստացմանը: Այսպես, օրինակ, Շուշիի «Հայկական աշխարհ» մանկավարժական-կրոնական ամսագիրը «Գործնական խրատներ անփորձ ուսուցչին» խորագրով հոդվածում խոսում է ուսուցիչների մանկավարժական վարպետության, աշակերտների մեջ դեպի կրթությունը, ուսումը սեր պատվաստելու մասին: Եթե որակյալ ուսուցիչների պակաս էր զգացվում Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Էջմիածնում և հայաբնակ այլ վայրերում, ապա ինքնին հասկանալի է, թե ինչպիսին կլիներ վիճակը Արցախի թեմի հայկական դպրոցներում:

XIX դարի երկրորդ կեսին Արցախի թեմի շատ դպրոցներ ապահոված չէին որակյալ ուսուցիչներով: Բազմաթիվ դպրոցներում դասավանդում էին քահանաներ, տիրացուներ, սարկավագներ, կիսագրագետ աշխարհականներ և այլ անձինք: Օրինակ, Ալ. Երիցյանը Ներսիսյան դպրոցի պատմությանը նվիրած աշխատության մեջ գրում է, որ 1860-70-ական թվականներին Նուխիի գավառում գործող 18 հայկական դպրոցներից (նախակրթարաններ) յուրաքանչյուրում աշխատում էր 1 ուսուցիչ, որը քահանա է կամ տիրացու: Որակյալ ուսուցչական կադրերի պակասն էլ ավելի զգալի էր Ղարաբաղի գյուղական դպրոցներում[11]: Այդ տասնամյակում Արցախի թեմում համեմատաբար բարեկարգ դպրոցները (Շուշիի թեմական և օրիորդանց դպրոցները, քաղաքային ուսումնարանը) սկսում են մասամբ բավարարել քիչ թե շատ որակյալ ուսուցիչների պատրաստման պահանջը: Սակայն նշենք, որ քննարկվող ժամանակաշրջանում (1850-1870-ական թվականներ) Արցախի թեմի դպրոցների ճնշող մեծամասնությունը հնարավոր չէր ապահովել քիչ թե շատ որակյալ մանկավարժական կադրերով ոչ միայն այն պատճառով, որ այդպիսի կադրեր չկային կամ խիստ հազվագյուտ էին այդպիսիք, այլ եղած հատուկենտ կադրերին էլ հնարավոր չէր հրավիրել դպրոցների ճնշող մեծամասնության նյութական ծանր պայմաններում գտնվելու պատճառով:

Դպրոցաշինության, ժողովրդի լուսավորության ինչպես նաև ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման գործում չափազանց մեծ են եղել Արցախի կրթասիրական, բարեգործական միությունների և ընկերությունների («Ընթերցասիրաց ընկերություն», 1858, «Դպրոցասեր հայուհյաց ընկերություն», 1864-65, «Հայոց Բարեգործական ընկերության» Շուշիի մասնաճյուղի, 1881, «Դպրոցասիրաց», «Թատերական» 1886-1889թթ. և այլն) դերը: Հայտնի է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում դպրոցների բացման ու պահպանման, ուսուցիչների վարձատրության հետ կապված ամենածանրն ու դժվարինը նյութական-դրամական միջոցների խնդիրն էր: Եվ դա միշտ էլ մտահոգել է հայ գործիչներին, հայրենասեր բարերարներին, քանի որ ցարական կառավարությունը ոչ միայն չէր ջանում որևէ նյութական օգնություն ցույց տալ հայկական դպրոցներին, վարձատրել ուսուցիչներին, այլև ամեն կերպ աշխատում էր դժվարություններ հարուցել նրանց համար:

Հետաքրքրության համար բերենք մի քանի օրինակներ Արցախի բարեգործական միությունների և ընկերությունների անդամների ազգանվեր գործունեությունից: Օրինակ, «Մեղու Հայաստանի» թերթը հետաքրքիր փաստ է բերում իր 1859թ. հունվարի 31-ի համարում: Թերթն ընթերցողներին պատմում է, որ Շուշիի «Ընթերցասիրաց ընկերության» անդամ, շուշեցի Գևորգ Աբրահամյանը նույն

11. Տե՛ս Ալ. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 274:

տարվա օգոստոսի 15-ին սեփական ծախքով գալիս է Ամարաս, զրուցում ուսուցիչների հետ, իմանում դպրոցի պակասությունների մասին և իր դրամական միջոցներով վերանորոգում, կահավորում վանքի հյուսիսային կողմի չորս դասասենյակներն ու գրասենյակը, վարձատրում նաև ուսուցիչներին: Նա վանքին կից գործող դպրոցին նվիրում է մեծ քանակությամբ թուղթ, գրենական պիտույքներ, թերթեր և հանդեսներ[12]: «Արարատ» ամսագրի 4-րդ համարում տպված Շուշեցու մի նամակում ասվում է, որ Ջրաբերդի գավառի Մարաղա, Բեգում Սարով, Չայլու, Խաչեն, Կուսապատ գյուղերի բնակչությունը հանգանակել է 500 ռուբլի և տրամադրել դպրոցների վերանորոգմանը և ուսուցիչների վարձատրությանը[13]: Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Մաղաքիա Պլուզյանը նույն ամսագրի նույն համարում տպագրված իր նամակում գրում է, որ Շուշիի գավառի հասարակությունը հանգանակել է 500 ռուբլի[14] և մի մասը նվիրել հայոց հոգևոր թեմական դպրոցին, իսկ մյուս մասը՝ գավառի ծխական դպրոցներում դասավանդող ուսուցիչներին, որպեսզի աշակերտներից ուսման վարձ չվերցնեն: Արխիվային մի փաստաթղթում կարդում ենք Արցախի կոնսիստորիայի կառավարիչ Սարգիս արքեպիսկոպոս Սաթունյանցի 1872-73 ուստարում, փետրվարին Սինոդին ներկայացրած այն գրությունը, ուր ասված է, որ Ջրաբերդ գավառի բնակիչ Գրիգոր Ունանյանցը 530 ռուբլի է նվիրաբերել Շուշիի հոգևոր կոնսիստորիային դպրոցի համար ծախսելու[15]: Արցախահայ պարբերական մամուլում («Հայկական աշխարհ», «Գործ», «Քնար խոսնակ», «Ազգագրական հանդես», «Ղարաբաղ» և այլն) բազմաթիվ նամակներ են տպագրված «Հայոց բարեգործական ընկերության» Շուշիի մասնաճյուղի անդամների՝ (Յ. Առաքելյան, Ա. Բահաթրյան, Մ. Հախումյան, Ն. Տեր Ավետիքյան, Ա. Թառումյան, Մ. Ժամհարյան), առանձին անհատների՝ Դավիթ Խանդամիրյանի, Պողոս Ալեքսանյանի, Հ. Ժամհարյանի, Դավիթ Հախվերդյանի և ուրիշների հայրենասիրական նվիրատվությունների մասին[16]: Արցախի թեմի ընկերությունների նվիրատվությունների և առանձին անհատների կողմից հատկացված խոշոր չափի գումարների հաշվին բացվում են բազմաթիվ ծխական դպրոցներ, իսկ այդ նվիրատվությունների մի մասն էլ հատկացվում է թեմական դպրոցին՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար:

XIX դարի 70-80-ական թվականներին հայ անվանի մանկավարժները բարձրացրին ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման հիմնախնդիրը և նրան ներկայացվող մասնագիտական պահանջները: Այդ շրջանում ազգային դպրոցին հարկավոր էին և՛ տեսական, և՛ գործնական, և՛ հոգեբանական, և՛ մեթոդական մանկավարժական պատրաստվածություն ունեցող մասնագետներ: Բոլորը գիտակցում էին, որ միայն գրագետ և բանիմաց ուսուցչի աշխատանքի շնորհիվ ազգը կարող է բարգավաճել, ունենալ և՛ գրագետ բժիշկներ, և՛ գրողներ, և՛ արվեստագետներ, և այլ մասնագետներ: Անվանի մանկավարժ, հրապարակախոս Իս. Հարությունյանն առաջարկում է էջմիածնի հոգևոր իշխանության նախաձեռնությամբ և կառավարության թույլտվությամբ հիմնել ուսուցչական դպրոց, որից դուրս գային մանկավարժության տեսությանն իրազեկ ու պրակտիկային

12. «Մեղու Հայաստանի», 1859, հունվարի 31-ի համարը:
13. «Արարատ», 1870, թ.4, էջ 139:
14. Նույն տեղում:
15. «ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 69, թ. 35:
16. Այդ մասին տես, «Հայկական աշխարհ», 1874, թ. 1, «Գործ», 1882, թ. 2, էջ 6-7:

ծանոթ դպրոցական գործիչներ[17]: Ղ. Աղայանը «Խորհրդածություն դաստիարակության վերա» հոդվածում իրավացիորեն մատնանշում է, որ ուսուցիչների վերապատրաստման համար հարկավոր է հայոց թեմական դպրոցներում կազմակերպել ամառային մանկավարժական դասընթացներ[18]: Ոգևորված այդ գաղափարով, նա ոչ միայն ծրագիր է մշակում, այլև Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին (1880-1882թթ.) ստանձնում այդ դասընթացները կազմակերպելու պարտականությունները: Աղայանը միաժամանակ նշում է, որ եթե Շուշիում հնարավոր չէ ուսուցչական դպրոց ստեղծել, ապա անհրաժեշտ է թեմական դպրոցում ստեղծել մի վերջին՝ մանկավարժական մասնագիտական դասարան և ուսուցիչներ պատրաստել: Լեոն վկայում է, որ Սեդրակ Մանդինյանի տեսչության ժամանակ (1880-1881թթ.) Շուշիի թեմական դպրոցում «Չորրորդ դասարան ավարտողներից կազմվեց յատուկ մանկավարժական դասարան, ուր Մանդինյանի դասախոսությունները (մանկավարժություն և հոգեբանություն առարկաներից) լսում էին ինն աշակերտ, երկու աշակերտուհի և մի երկու ուսուցիչ (դրանց թվում և Գաբրիել Գուլիքևխյանը): Լինում էին և գործնական պարապմունքներ, փորձնական դասեր: «Մի տարուց յետոյ,- շարունակում է Լեոն,- Ղարաբաղի թեմական դպրոցը բաց էր թողնում տարրական ուսումնարանների համար յատուկ պատրաստուած ուսուցիչներ, որոնք յանուհետև կատարեցին թեև համեստ, բայց շատ գնահատելի դեր մեր դպրոցական աշխարհում»[19]: «Գործ» ամսագիրը գրել է, որ Շուշիի թեմական դպրոցի մանկավարժական ժողովի որոշմամբ շնորհալի (գերազանց) աշակերտներին տալիս էին վկայականներ և վարժապետական (դասատվական կոչումներ՝ ուսուցիչ լինելու հայոց ծխական և սկզբնական ուսումնարաններում)[20]: Բացի այդ, ինչպես պարբերականն է գրում, դպրոցի ուսուցչական կոլեկտիվը երաշխավորում էր այս կամ այն աշակերտին՝ ընդունվելու էջմիածնի ճեմարան կամ որևէ բարձրագույն դպրոց[21]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի թեմի դպրոցների համար ուսուցիչների պատրաստման և մշակույթի, լուսավորության, կրթական գործի զարգացման գործում չափազանց մեծ է Շուշիի ռեալական ուսումնարանի (1881-1920թթ.) դերը: Թեմական դպրոցի համեմատ՝ ռեալական ուսումնարանն ունեցել է ավելի մեծ բյուջե, որոշ չափով հագեցված ուսումնական կաբինետներ, ընդհանուր հիմնարար գրադարան (գլխավորապես ռուսերեն լեզվով): Ցարական կառավարության կողմից նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ռուսական տիպի այդ հաստատության համար: Եթե ցարիզմի ազգահալած քաղաքականության պայմաններում տասը տարի շարունակ փակվել, վերաբացվել էին հայկական եկեղեցական-ծխական դպրոցները, որոնց ճակատագրին է արժանացել նաև Շուշիի թեմական դպրոցը (հատկապես 1903թ. հունիսի 12-ի օրենքից հետո), ապա Շուշիի ռեալականը մշտական գործել է նպաստավոր պայմաններում: Ինչպես Լեոն է նշում՝ Շուշիի ռեալական ուսումնարանը պահպանել է ազգային ուսումնական հաստատության կերպարանքը՝ չխորթացնել հեռավոր ծայրամասերից եկած հայ երեխաներին մեր իրականությունից, մայրենի լեզվից, միշտ վառ պահել ազգային ինքնաճանաչման ոգին[22]: Շուշիի հայ առաջավոր մտավորակա-

17. Տե՛ս «Արծագանք», 1889, թ. 45:
18. Տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ.4, 1963, էջ 78-79:
19. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 404:
20. «Գործ», 1882, թ. 1, էջ 89:
21. Նույն տեղում:
22. Լեո, նշվ. աշխ., էջ 554:

նությունը, շարունակում է Լեոն, որոնցից շատերը ռեալականի ուսուցիչներն էին և նրա սաները, ձգտում էին ուսումնարանը դարձնել Արցախի ժողովրդի մշակութային կրթական, լուսավորական, մանկավրժական կադրերի պատրաստման կենտրոն, ինչպես թեմական դպրոցը[23]:

Ռեալական ուսումնարանի ուսուցիչներ Համբարձում Առաքելյանը, Սիմեոն Հախումյանն իրենց հուշերում պատմում էին, որ ամեն ուսումնական տարում ռեալական ուսումնարանի մանկավարժական խորհրդի (ժողովի) որոշմամբ գերազանցիկ աշակերտներին երաշխավորում էին դասավանդելու եկեղեցական-ծխական, իգական դպրոցներում, իսկ երբ դպրոցները փակվել էին, ռեալականի սաները կառավարությունից գաղտնի դասավանդում էին մասնավոր դպրոցներում, երբեմն էլ ձրի[24]: Ռեալական ուսումնարանը սերտ կապերով կապված էր Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցների, Նուխիի ազգային հոգևոր ուսումնարանի, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և այլ ուսումնական հաստատությունների հետ: Ռեալականի շրջանավարտները բարձրագույն կրթություն են ստացել վերոնշյալ ուսումնական հաստատություններում, ինչպես նաև Եվրոպական համալսարաններում և, վերադառնալով Շուշի, աշխատում էին նաև Շուշիի գավառի ծխական դպրոցներում, միաժամանակ թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում կազմակերպում ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Այսպես, օրինակ, Եվրոպական առաջավոր մտքին լավատեղյակ ականավոր գիտնական Մանուկ Աբեղյանը (բարձրագույն կրթությունը ստացել է Գերմանիայում[25]՝ Բեռլինի, Լայպցիգի համալսարաններում) 1886-1888թթ. դասավանդելով Շուշիի թեմական դպրոցում, նաև ռեալական ուսումնարանում, կազմակերպում էր ոչ միայն փորձնական դասեր սկսնակ ուսուցիչների համար, այլև, ամառային արձակուրդներին, վերապատրաստման դասընթացներ: Այդ երկու ուսումնական հաստատություններում աշխատելու տարիներին Մ. Աբեղյանն օրվա հրատապ պահանջ էր համարում ոչ միայն այն, որ ավանդվելիք առարկաների դասավանդումը բարձր հիմքի վրա դրվի փորձառու պրակտիկ մանկավարժների կողմից, այլև այն, որ նրանք իրենց ուսանելի փորձը փոխանցեն սկսնակ ուսուցիչներին, բարձրացնեն նրանց մասնագիտական պատրաստվածության որակը:

Հետագայում Մանուկ Աբեղյանի ուսանելի օրինակին են հետևում ռեալականի շրջանավարտներ՝ Ռուսաստանում, Եվրպայում բարձրագույն կրթություն ստացած Լևոն Աթաբեկյանը, Ֆրեյդուն Հակոբ Աղալյանը, Արտեմ Աղամալյանը և ուրիշներ[26]: Նրանք երկար տարիներ աշխատել են Արցախի թեմի դպրոցներում՝ իրենց փորձը փոխանցելով սկսնակ ուսուցիչներին: Ինչպես արդեն նշել ենք, Շուշիի թեմական դպրոցը թեև պաշտոնապես կոչվում էր հոգևոր ազգային դպրոց, սակայն պատրաստում էր ոչ միայն հոգևորականներ, այլև, առաջին հերթին, ուսուցիչներ Արցախի թեմի դպրոցների համար: Կաթողիկոսի կոնդակով հայ լուսավորչական թեմերում գործող թեմական դպրոցներին կից, այդ թվում՝ Շուշիի թեմական դպրոցում 1882 թվականից սկսած, պաշտոնապես բացվում է մանկավարժական դասարան՝ ուսուցիչներ պատրաստելու համար:

---

23. Մանրամասն տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի:
24. Հ. Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, Շուշի, 1918, էջ 62-64:
25. Այդ մասին Ս. Հախումյանը գրում է իր հրապարակախոսական հոդվածում, որը տպագրվել է 1899թ. «Նոր դարում», թ.-2:
26. Տե՛ս Հ. Առաքելյանի նշվ. աշխ., էջ 61-62:

Քննարկվող ժամանակաշրջանում ուսուցիչների պատրաստման հիմնախնդիրն իր արտացոլումն է գտել նաև հայկական դպրոցների կանոնադրություններում: Այսպես, Շուշիի թեմական դպրոցի առաջին կանոնադրության մեջ[27] (1859թ.) ասված է, որ թեմական դպրոցի նպատակն է պատրաստել ինչպես եկեղեցու պաշտոնյաններ, տիրացուներ, սարկավագներ, այնպես էլ աշխարհիկ անձինք, որոնք կարողանան կրթել, դաստիարակել հայ սերնդին: Իսկ 1869թ. Գևորգ Դ կաթողիկոսի կողմից հաստատված թեմական դպրոցների կանոնադրության մեջ[28] ամրագրվում է, որ թեմական դպրոցներում հոգևորականների պատրաստմանը զուգընթաց՝ թեմական դպրոցների նպատակներից մեկն էլ եկեղեցական-ծխական, իգական դպրոցների համար ուսուցչական կադրերի պատրաստումն է: Թեմական հոգևոր դպրոցները, իրապես չհանդիսանալով մանկավարժական ուսումնական հաստատություններ, երբեմն իրենց շրջանավարտներին ապագա մանկավարժի վկայական էին տալիս: Օրինակ, Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1870թ. շրջանավարտներին (Միրզաբեկյան՝ կրոնի ուսուցիչ, Կարապետ քահանա՝ թվաբանություն, տիրացու Ավագ Ավշարյան՝ հայոց լեզու, Թիմուր Միչասյան՝ երաժշտություն և ուրիշներ) տրված վկայականներում նշված է, որ նրանք եկեղեցական պաշտոն վարելու հետ միասին ունեն իրավունք դասավանդելու եկեղեցական-ծխական և օրիորդաց դպրոցներում[29]:

XIX դարի 70-80-ական թվականներին թեմական դպրոցների կանոնադրություններում նշված է, որ յուրաքանչյուր թեմական դպրոցին կից պետք է բացել մանկավարժական դասարան՝ ուսուցչական կադրերի պատրաստման և վերապատրաստման դասընթացների համար: Ուսուցիչների պատրաստման հարցը դիտարկվել է նաև 1986-1894թթ., և հայկական դպրոցների վերաբացումից հետո (1906թ.) ընդունված կանոնադրություններում: Հարկ է նշել, որ հայ նոր դպրոցի կազմավորման շրջանում ընդունված դպրոցական բոլոր կանոնադրությունները հանդես են եկել որպես յուրօրինակ կրթական չափորոշիչներ՝ խթան հանդիսանալով ազգային նոր կրթական համակարգի ձևավորման ու զարգացման համար: Դպրոցական կանոնադրությունները պաշտոնապես ամրագրում են թեմական, օրիորդաց, երկսեռ դպրոցների հիմնական նպատակը՝ պատրաստել ուսուցիչներ ծխական դպրոցների համար:

Ուսուցիչների պատրաստման, մասնագիտական զարգացման և նրանց մանկավարժական մեթոդիկայով ապահովման գործում բացառիկ դեր են խաղացել նաև դարի երկրորդ կեսին կայացած Հայոց ուսուցչական համագումարները[30]: Համագումարներում լուծումներ են գտել տեսական և գործնական մանկավարժության բոլոր խնդիրները, լուսաբանվել նորագույն գաղափարները, մշակվել բոլոր ազգային դպրոցների համար նախատեսված միասնական ուսումնական ծրագրեր, կատարվել է փորձի փոխանակում: Սակայն, ամենակարևորն այն է, որ ուսուցչական համագումարների շնորհիվ աշխարհով մեկ սփռված բոլոր հայկական դպրոցների ուսուցիչներն ունեցան համագործակցելու հնարավորություն: Համագումարներից մեկում ունեցած իր ելույթում Ղ. Աղայանն ասում է, որ մեր ազգային դպրոցներում դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է լինի

27. Կանոնադրություն Շուշվա հայոց հոգևոր դպրոցի, 1859, էջ 4-5:
28. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց.3, գ. 311, թ. 46-49:
29. Տե՛ս Հ. Առաքելյանի աշխ., էջ 54-55:
30. Այդ մասին տե՛ս Հովհան-Նալատյան Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմություն, Թիֆլիս, 1883:

մտավորապես լավ պատրաստված և մշտավառ ոգևորությամբ կապված իր աշխատանքին: Ուսուցիչը դպրոցի կրթադաստիրակչական աշխատանքների ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարն է[31]:

XIX դարի 80-90-ական թվականներին (մինչև 1896թ. հայկական դպրոցների փակումը) Արցախի թեմի, այդ թվում՝ Նուխի գավառի հայաբնակ վայրերի, դպրոցներում ժողովրդական ուսուցիչների շարքերը համալրվում էին Շուշիի թեմական դպրոցը և ռեալական ուսումնարանն ավարտած՝ ուսուցչի վկայական ստացած երիտասարդ մանկավարժներով, որոնք ավելի ու ավելի լայն ճանաչում են գտնում ժողովրդի մեջ: Այսպես, եթե մի ժամանակ հայ աշխատավորի միակ խորհրդատուն ծխական քահանան էր, ապա այժմ նրա խորհրդատուն ժողովրդական ուսուցիչն էր: Ուսուցչությունն այն բնագավառն էր, ուր հայ առաջադեմ մտավորականությունը կարող էր մերձենալ բուն ժողովրդին, կենդանի խոսք ասել նրան, օգնել նրան՝ մասամբ թեթևացնելու ամենօրյա հոգսերը: Եվ չպետք է զարմանալ, որ հայ մշակույթի, քաղաքական, կրթական ասպարեզների գործիչները բեղուն գործունեություն են ծավալել նաև թեմի դպրոցներում ***(այդ մասին մանրամասն կնշվի հաջորդ բաժնում):*** Խոսելով եկեղեցական - ծխական դպրոցների ժողովրդական ուսուցչի մասին, Շուշիի թեմական դպրոցի սան, անվանի մանկավարժ Ա. Բահաթրյանը գրել է. «Ծխական ժողովրդական ուսուցչի համար առաջնորդողը պետք է լինի ոչ թե մի որևէ մասնավոր օգտի ծառայող սկզբունք, այլ պարզ մարդասիրական մարդկային սկզբունքը: Նրա բոլոր գործունեությունները, աշակերտների վերաբերությամբ պահանջները, դպրոցի կազմակերպությունը, ուսումն և կարգապահությունը աչքի առաջ պետք է ունենա ընդհանուր զարգացումը: Մենք կասենք, որ ուսումնարանի ամենագլխավոր անձն, նորա հոգին՝ ուսուցիչն է»[32]:

Սակայն ցավով պետք է նշել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայ դպրոցի նյութական ծանր վիճակն առաջին հերթին հարվածում էր ժողովրդական ուսուցչին: Եթե Շուշիի դպրոցներում (թեմական, օրիորդաց, ռեալական ուսումնարան) ուսուցիչները քիչ թե շատ ռոճիկ էին ստանում, ապա նրանց մեծ մասը ստիպված է բավարարվել տարեկան 60-150 ռուբլով:[33] Ծանր էր հատկապես գյուղական ուսուցիչների վիճակը: Շատ դեպքերում նրանք անձամբ շրջում էին տնետուն՝ ուսման վարձը ժողովելու կամ տոն օրերին նվիրատվություններ հավաքելու համար: Շատ գյուղերում ուսուցիչն ուսման վարձ չէր ստանում, այլ մի կերպ ապրում էր գյուղացիների նյութական օգնությամբ: Ավելորդ չէր լինի բերել մի քանի կոնկրետ օրինակներ Արցախի թեմի ուսուցիչների նյութական անապահով վիճակի մասին, մարդիկ, ովքեր, այնուամենայնիվ, կատարում էին իրենց սուրբ ու պատվավոր պարտականությունները՝ դաստիարակում հայ սերնդին, լուսավորություն տարածում ժողովրդի մեջ:

Այսպես, օրինակ, արխիվային մի փաստաթղթում կարդում ենք Ղարաբաղի թեմի առաջնորդ Անդրեաս Վարդապետ Տեր Անդրեասյանի տեղեկագիրը Ջրաբերդ գավառի ուսուցչության վիճակի մասին: «Շատ կրիտիկական է, շատ ցավալի ու խղճալի է, շատ թշվառ է գյուղական ուսուցչի վիճակը, նա տանելով յուր ծառայությունը հեռու, խուլ անկյունում (Բ. Սարով, Մարաղա, Մադաղիս գյուղերում),

31. Նույն տեղում, էջ 28:
32. Տե՛ս «Մանկավարժական թերթ», 1878, թ. 1, էջ 5:
33. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 43:

զրկված լինելով կյանքի ամեն հարմարանքից, ապրում է խոնավ սենյակում, ստանում ողորմելի նվազագույն աշխատավարձ, բայց չի ընդհատում պարապմունքները դպրոցում»[34]: Մի այլ փաստաթղթում գրված է, որ Կուսապատի գյուղի երկդասյա դպրոցի ուսուցիչ՝ Էջմիածնում կրթություն ստացած, առաջավոր մտավորական Հովսեփ վարդապետ Փինաչյանը, որը դպրոցի տնօրենն էր, իր մի քանի ուսուցիչների աշխատավարձը հոգում է ամսական յուրաքանչյուր աշակերտից գանձվող 40-50 կոպեկով[35] և հասարակության կողմից ցույց տրվող նյութական որոշ օգնությամբ: Վերոնշյալ և այլ փաստաթղթերում կային նաև տվյալներ Վարանդայի, Դիզակի, Նուխիի գավառների հայկական դպրոցների ուսուցիչների չնչին աշխատավարձի մասին: Ստեղծված անբարենպաստ պայմանները հնարավորություն չեն ընձեռում Արցախի թեմի դպրոցները (նկատի ունենք գյուղերի ծխական դպրոցները) ապահովելու որակյալ մանկավարժական կադրերով, ոչ միայն այն պատճառով, որ այդպիսի կադրեր չկային, այլև, որ եղած հատուկենտ մարդկանց էլ հնարավոր չէր հրավիրել՝ դպրոցները ծանր պայմաններում գտնվելու հետևանքով: Համեմատաբար բարվոք էր Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչների աշխատավարձը՝ 250-1000 ռուբլի[36], իսկ ռեալական ուսումնարանի ուսուցիչների աշխատավարձը՝ 350-1200 ռուբլի[37]: Ուսուցիչներն ըստ կրթական ցենզի (վկայականի) բաժանվում էին հետևյալ կարգերի՝ տեսուչ, օգնական, ավագ, կրտսեր: Այս կարգերի համապատասխան էլ կատարվում էր ռոճիկների բաշխումը: Տարբեր էր նաև ծխական դպրոցների ուսուցիչների աշխատավարձը: Այսպես, այն դպրոցները, որտեղ հասարակության և առանձին բարերար մարդկանց կողմից նվիրատվություններ էին կատարվում ու տրվում դպրոցին, ուսուցիչների ռոճիկը հասնում էր տարեկան 350-400 ռուբլու: Իսկ մնացած դպրոցներում՝ 60-150-ից մինչև 200-250 ռուբլու[38]: Նաև նշենք, որ մասնավոր դպրոցներում դասավանդող ուսուցիչների վարձը եղել է ամսական 20-ական կոպեկ: Լինում էին դեպքեր, երբ ինչպես թեմական, այնպես էլ ծխական դպրոցների ուսուցիչներն ամիսներով աշխատավարձ չէին ստանում: Էլ չենք ասում այն մասին, որ դպրոցների ճնշող մեծամասնության համար սահմանված չէր աշխատավարձի որոշակի չափ. աշխատավարձի չափը կախված էր դպրոցի տարեկան եկամուտներից և ուսման վարձ տվող աշակերտների քանակից: Եվ այսպես, տասնամյակներ շարունակ նյութական անապահովությունը եղել է հայ դպրոցի մշտական ուղեկիցը, ինչը և դժվար կացություն էր ստեղծում ուսուցչի համար:

Չնայած այդ ամենին, Արցախի թեմում դպրոցների ցանցի ընդլայնման, առանձնապես դպրոցների վերաբացման արդյունքում տեղի էր ունենում ուսուցիչների թվաքանակի որոշ աճ: Օրինակ, 1870-1906թթ. ընթացքում ուսուցիչների քանակական աճը հետևյալ պատկերն էր ներկայացնում.

34. ՀՀ ԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 20, թ. 381:
35. Նույն տեղում, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 43:
36. Լեո,Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 413:
37. Նույն տեղում, էջ 416-417:
38. Լևոն Սարգսյան, ժողովրդական կրթության գործը մեզանում, Մոսկվա 1892, էջ 27:

Արցախի թեմի հայկական դպրոցների ուսուցիչների թվի աճն ըստ ուսումնական տարիների[39]

Ուսումնական տարին	Թեմական դպրոց	Եկեղեցական ծխական դպրոց	Իգական	Մասնավոր	Ընդամենը
1871-72	6	9	2	50	67
1873-74	10	24	5	3	42
1875-76	10	30	4	1	45
1877-78	12	51	2	1	66
1879-80	12	20	3	2	37
1881-82	17	21	5	3	46
1883-84	12	3	1	-	16
1885-86	15	28	4	-	47
1887-88	13	28	5	-	46
1889-90	14	33	7	1	55
1891-92	14	30	8	1	53
1893-94	15	25	6	2	48
1895-96	15	50	11	1	77
1897-98	18	4	3	4	25
1899-1900	18	2	1	-	21
1901-1902	18	1	-	-	19
1903-1904	17	1	2	-	20
1905-1906	20	60	12	-	92

Արցախի թեմի դպրոցներում դասավանդող բարձրագույն կրթությամբ ուսուցիչների թիվը չնչին էր. ուսուցիչների մեծ մասն ուներ միջնակարգ և միջնակարգից ցածր կրթություն, իսկ ոմանք էլ չունեին մանկավարժական կրթություն: Այն ժամանակ միակ մանկավարժական ուսումնական հաստատությունը Երևանի ուսուցչական սեմինարիան էր, որը բացվել է 1881 թվականին[40]: Սեմինարիան ուսուցիչներ էր պատրաստում ինչպես ռուսական, այնպես էլ հայկական դպրոցների համար:

Քննարկվող ժամանակաշրջանում ինչպես արևելահայ իրականության մեջ, այնպես էլ Արցախի թեմում գործող հայկական դպրոցների համար ուսուցչական կադրերի պատրաստման ու մատակարարման հիմնական կենտրոնները եղել են ժամանակի բարեկարգ դպրոցները: Դրանք են՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (որտեղ սովորում էին նաև Արցախից ուսումնառության եկած երիտասարդները և, վերադառնալով հայրենի երկրամաս, նվիրվում մանկավարժական աշխատանքի), Շուշիի թեմական, Գայանե Դանիելյանի երկսեռ դպրոցները, ռեալական ուսումնարանը: Հայկական դպրոցները փակվելուց հետո (1895-1905թթ.) միայն ռեալական ուսումնարանն էր բարեկարգ վիճակում և մանկավարժական կադրեր էր պատրաստում ոչ միայն Արցախի, այլև Նուխիի գավառի հայաշատ վայրերում գործող հայկական դպրոցների համար:

39. Տվյալները բերված են բազմաթիվ աղբյուրներից, որոնք հնարավոր չէ մեկ առ մեկ ցույց տալ: Հիմնական փաստագրական տվյալները գտնվում են կաթ. դիվ, ֆ. 56, ց. 1, գ, 78-ում:
40. Բ.Ա.Բաղդասարյան, էջեր Երևանի կրթական օջախների պատմությունից (1920-1917), 1917, էջ 5:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտ շարադրանքից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում (1830-1895թթ.), մինչև հայկական դպրոցների փակվելը (1895-1905թթ.) չնայած ժամանակաշրջանի հեղհեղուկ իրավիճակին, ցարական կառավարության ազգահալած քաղաքականությանը և նյութական դժվարություններին, այնուամենայնիվ, դպրոցական գործի զարգացումն անհրաժեշտ պահանջ էր դնում հայ մտավորականության առաջ՝ պատրաստելու ուսուցչական կադրեր, բարձրացնելու ուսման որակը: Անշուշտ, ժողովրդական ուսուցչությունն էլ իր հերթին հաղթահարում էր ժամանակի դժվարությունները և անձնվիրաբար լծվում Արցախի հայկական դպրոցների զարգացման, աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

XX դարի սկզբին՝ հայկական դպրոցների վերաբացումից հետո (1906թ.), արմատական վերափոխումներ են կատարվում դպրոցաշինության ասպարեզում: Արցախի թեմում՝ նորաբաց միդասյա, երկդասյա, թեմական, նոր տիպի՝ օրիորդաց դպրոցների, ռեալական ուսումնարանի ուսուցչական կազմերը որակապես համալրվում են մասնագիտական բարձրագույն կրթություն ստացած բանիմաց մանկավարժներով: Նկատի ունենք հատկապես Առաքել Առաքելյանին, Արշավիր Քամալյանին. Լևոն Վարդունուն, Շավարշ Վարդունուն, Արսեն Տերտերյանին, Աշոտ Հովհաննիսյանին, Ռուբեն Տեր-Ղազարյանին, Հակոբ Խանլարյանին և շատ ուրշների: Արցախի թեմի հայկական դպրոցներում վերոնշյալ և ուրիշ շատ այլ փորձառու մանկավարժների բեղուն գործունեության տարիներին ոչ միայն բարձրանում է դպրոցներում աշակերտների ուսման առաջադիմությունը, հաստատվում կարգ ու կանոն, հստակեցվում և հարստացվում կրթության բովանդակությունը, միաժամանակ կազմակերպվում փորձնական դասեր՝ ներգրավելով նաև սկսնակ ուսուցիչներին, այլև թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում իրականացվում են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Նույն դասընթացները կազմակերպվում են նաև Նուխիի ազգային հոգևոր դպրոցում, որին մասնակցում են 20-ից ավելի ուսուցիչներ: «Ղարաբաղ» թերթի 1911թ. թիվ 2-ում[41] տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ 1911-1912 ուստարում Շուշիի թեմական դպրոցում կազմակերպված դասընթացներում, որտեղ ներգրավված էին 60-ից ավելի ուսուցիչներ, դասավանդում էին Ղարաբաղի դպրոցների տեսուչ Առաքել Առաքելյանը (1911-1913թթ.), թեմական դպրոցի ուսուցիչներ Լևոն Վարդունին, Արսեն Տերտերյանը, Գարեգին Գուլիքևխյանը, թեմի առաջնորդ Զավեն Վարդապետ Բաբայանցը և ուրիշներ: Դասընթացներին ներգրավված էին հիմնականում միդասյա դպրոցի ուսուցիչները, որոնց՝ ավարտելուց հետո, տրվում էին որակավորման վկայականներ, իսկ ովքեր կրթական ցենզ (վկայական) չունեին՝ համապատասխան հանձնաժողովի կողմից ստուգման էին ենթարկվում, և մանկավարժական խորհրդը, գնահատելով նրանց մասնագիտական պատրաստվածության որակը, իր որոշմամբ համապատասխան վկայական էր տալիս նրանց՝ իրավունք ընձեռելով դասավանդել միդասյա դպրոցներում:

Սակայն նշենք, որ Արցախի ծայրամասային գյուղերի միդասյա դպրոցները դեռևս ապահովված չէին ուսուցչական կադրերով, դասավանդում էին գյուղի քահանան, կամ տիրացուն: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Առ. Առաքելյանը, որպես Ղարաբաղի դպրոցների տեսուչ, առաջարկում է թեմական դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ 6-րդ դասարանի առաջադեմ աշակերտներին

41. Տե՛ս «Ղարաբաղ», 1911, թ.1, 2,3 նաև տես, ԼՂՀ Արխիվ, ֆ. 1, գ. 10, թ. 2, 3, 4:

երաշխավորել դասավանդելու միդասյա դպրոցներում, միաժամանակ նրանց համար նպաստավոր պայմաններ ստեղծել մասնակցելու նաև ավարտական քննություններին:

Քննարկվող ժամանակաշրջանում (1910-1920թթ.) Արցախի կրթական գործիչների և մամուլի («Ղարաբաղ», «Միություն», «Փայլակ», «Նեցուկ», «Պայքար», «Նոր կյանք» և այլն) ուշադրության կենտրոնում եղած մյուս կարևոր հարցը միդասյա, երկդասյա, եկսեռ դպրոցների համար ուսուցիչների պատրաստումն էր: Ակնհայտ էր, որ նոր պայմաններում զարգացող դպրոցը չէր կարող գոյություն ունենալ հին ուսուցչական կադրերով, որ միայն առանձին բանիմաց մանկավարժների ջանքերը դեռևս բավարար չէին: Ինչպես դարի երկրորդ կեսին («Հայկական աշխարհ», «Գործ», «Քնար խոսնակ», «Ազգագրական հանդես») սկզբից ևեթ մամուլը, այնպես էլ նոր ժամանակներում Շուշիում լույս տեսած պարբերականներն ահազանգում էին գյուղերում ուսուցիչների կարող ուժերի խիստ պակասի մասին: Ժամանակի պարբերական մամուլում լույս տեսած բազմաբնույթ հոդվածներում հեղինակները (Լ. Վարդունի, Շ. Վարդունի, Ռ. Տեր Գասպարյան, Բենիկ Վարդապետ՝ թեմական դպրոցի տեսուչ և ուրիշներ) առաջարկում են դպրոցներում բարձրացնել մանկավարժական ժողովների կազմակերպման դերը, գտնելով, որ այդ ժողովները միաժամանակ ընդօրինակման, ուսուցիչների դաստիարակման լավագույն դպրոց կարող են լինել: Լեոն գրում է, որ թեմական դպրոցի մանկավարժական ժողովներում Ն. Երամիշյանը (տեսուչ), Գ. Գուլիքևխյանը, Կ. Վարդապետյանը, Ն. Շահգելդյանը, Ս. Տեր-Ղուկասյանը և ուրիշներ պրոպագանդում ու կիրառում էին մանկավարժական նորագույն սկզբունքներ[42]: Լեոի աշխատությունից[43] նաև տեղեկանում ենք, որ մանկավարժական ժողովներում վերստին ուշադրություն դարձվեց ուսուցչական կադրերի պատրաստման ու վերապատրաստման հարցին:

Փաստագրական, արխիվային հարուստ նյութերի ուսումնասիրությունը[44] հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ժամանակաշրջանում (1913-1920թթ.) բացի թեմական դպրոցից, ռեալական ուսումնարանից, Արցախի թեմի դպրոցների համար մանկավարժական կադրերի պատրաստման գործում մեծ դեր ունի նաև Շուշիի «Մարիամ Ղուկասյան» օրիորդաց միջնակարգ դպրոցը, որը հիմնադրվել է 1912թ. մայիսին: Իր գոյության երրորդ տարում (1915-ին) այն եղել է բավականին խոշոր մանկավարժական ուսումնական (միջնակարգ մասնագիտական) հաստատություն՝ ունենալով 11 ուսուցիչ-ուսուցչուհի և 320 աշակերտուհի: Նշանակալից է նաև, որ 1917թ. այն արդեն ուներ լրիվ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատության դասընթաց՝ մանկավարժական թեքումով: «Մարիամ Ղուկասյան» օրիորդաց դպրոցում դասավանդում էին թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի ուսուցիչները: Ղուկասյան եղբայրները (Շուշեցի Պողոս, Հակոբ, Արշակ և Աբրահամ) իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով ոչ միայն բացել են դպրոցը՝ անվանակոչելով Մարիամ Ղուկասյան, այլև Շուշիում գտնված իրենց մեծ տունը նվիրել դպրոցին, ինչպես նաև տրամադրել խոշոր գումար, որի տոկոսներով հնարավոր լինի ոչ միայն պահել դպրոցը, այլև ավելացնելով դասարանների թիվը՝ դարձնել այն միջնակարգ մաս-

42. Լեո, նշվ. աշխ., էջ 446: Նաև՝ Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 74-78:
43. Նույն տեղում, էջ 448:
44. «Արարատ», 1913, թ. 8-9, էջ 685-686: 1916, թ. 1, էջեր 307-312, 323, 627, 784, ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 543:

նագիտական ուսումնական հաստատություն: «Արարատ» ամսագիրը[45] գրել է, որ «Մարիամ Ղուկասյան» օրիորդաց բարձր տիպի դպրոցի հիմնադրումից հետո Արցախի թեմի դպրոցները համալրվում են որակյալ մանկավարժական կադրերով:

Շուշիի «Փայլակ» թերթի աշխատակից Լևոն Վարդունին «Հայ դպրոցը» հոդվածում 1915թ. գրում է. «Դպրոցը մանկավարժական հիմնարկություն է, այդ իսկ պատճառով նրա հիմքում, որպես ամենից ամուր և ամենից ապահով պատվաստան պիտի դրված լինի մանկավարժական ճշմարտությունը»[46]: Անվանի մանկավարժը «Փայլակ» թերթի մի այլ համարում տպագրված իր «Դպրոցական ռեֆորմ» հոդվածում առաջարկում է բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալու համար Շուշիում հիմնադրել նոր տիպի մանկավարժական ուսումնական հաստատություն, որտեղ ուսումնասիրեն մանկավարժա-հոգեբանական առարկաները[47]: Այն ժամանակ Արցախի թեմի դպրոցները, շարունակում է Լևոն Վարդունին, կունենան բարձրորակ մանկավարժական կադրեր: Լևոն Վարդունու մտահղացումներն իրականացան, բայց, ավաղ, հայկական Շուշին 1920թ. մարտի 23-ի զանգվածային ջարդերի հետևանքով հիմնահատակ ավերվելուց ու հայաթափվելուց հետո միայն՝ արդեն խորհրդային իշխանության օրոք, երբ ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշմամբ Արցախ-Ղարաբաղն ինքնավար մարզի կարգավիճակով բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին: Ռեալական ուսումնարանի շենքում բացվեց երկաստիճան հանրակրթական դպրոց, որը 1921-1922 ուստարում վերափոխվում է ուսուցչական սեմինարիայի, իսկ 1922-1923 ուստարում՝ մանկավարժական ուսումնարանի: Այն դարձավ Լեռնային Ղարաբաղի հայկական դպրոցների համար մանկավարժական կադրեր պատրաստող միակ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի դպրոցների համար մանկավարժական կադրեր պատրաստելու գործում չափազանց մեծ են եղել թեմական, օրիորդաց դպրոցների, Շուշիի ռեալական ուսումնարանի դերը: Ի պատիվ՝ այդ ուսումնական հաստատություններում բեղուն մանկավարժական գործունեություն ծավալած մեր անվանի մանկավարժների, գրողների, մշակույթի գործիչների պետք է նշել, որ չնայած ժամանակաշրջանի խեղդուկ մթնոլորտին, ցարական կառավարության ազգահալած քաղաքականությանը և նյութական դժվարություններին, այնուամենայնիվ, նրանք անձնվիրաբար կանգնած էին ժողովրդին ծառայելու դիրքերում՝ կրթելով ու դաստիարակելով հարյուրավոր պատանիների և աղջիկների, ովքեր հետագա ժամանակներում, որպես արժանավոր հերթափոխ, իրենց ուսերին տարան արցախահայ մտավորականության նոր սերունդների պատրաստման դժվարին, բայց պատվավոր գործը:

45. «Արարատ», 1915, թ. 2, էջ 444:
46. «Փայլակ», 1915, թ. ժ. մարտի 8:
47. «Փայլակ», 1917, թ. 20, թ. 25:

3. Արցախի կրթական և մշակութային գործիչների գործունեությունը 1860-1920թթ. (առաջավոր փորձի ընդհանրացում)

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում մեծ թիվ էին կազմում հայ մշակույթի, գրականության, կրթական գործի այն երախտավորները, ովքեր, սկսած XIX դարի 60-ական թվականներից, արգասավոր մանկավարժական գործունեություն են ծավալել Արցախի թեմի ուսումնական հաստատություններում:

Երկարամյա մեր ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռնել հարուստ արխիվային տվյալների, պարբերական մամուլի (1860-1920թթ.) բազմաթիվ հրապարակումների, պատմագիտական, գրականագիտական աղբյուրների և այլ նյութերի հիման վրա առաջին անգամ ի պատշաճն ներկայացնել հայ մի շարք նշանավոր մանկավարժների, գրողների, մշակութային գործիչների, ինչպես նաև Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտների մանկավարժական-լուսավորչական գործունեությունն Արցախի թեմի դպրոցներում, հանգամանորեն ցույց տալ նրանց կողմից կիրառված մանկավարժական այն առաջավոր փորձը, նորարարականը, որոնք ուսանելի են մեր ներկայիս ազգային դպրոցի համար:

XIX դարի 60-ական թվականներից համեմատաբար նպաստավոր պայմաններ էին ստեղծվում մանկավարժների գործունեության համար: Ասպարեզ մտած մի խումբ եռանդուն կրթական գործիչներ, լինելով միևնույն սերնդի մարդիկ, ըմբռնելով ժամանակի հրատապ խնդիրները, անդուլ պայքար սկսեցին ազգային դպրոցի բարենորոգման համար: Չնայած ժամանակի օտարամուտ մանկավարժական մտքի հզոր ազդեցությանը, հայ մանկավարժությունը խոսեց ազգային առանձնահատկություններից բխող սեփական ձայնով, չդավաճանեց իր մեծ նախորդների սկզբունքներին:

<u>Պետրոս Շանշյան, 1819-1889թթ.:</u> Արցախի դպրոցի և մանկավարժության ասպարեզի երախտավոր, ով ստացած լինելով պատշաճ կրթություն ռուսաստանյան և եվրոպական համալսարաններում, զգալի ավանդ է ներդրել այդ սկզբունքները նոր սերնդին փոխանցելու գործում:[1] Ականավոր մանկավարժը, որը գտնվում էր մեր լուսավորիչ գործիչների՝ Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի մանկավարժական նոր դրույթների ու մոտեցումների խոր ու բարերար ազդեցության ներքո, իր ողջ կյանքում անմնացորդ նվիրվել էր ազգի լուսավորության գործին: Միանգամայն իրավացի էր Լեոն, երբ գրում էր. «Ազգային ուժեղ ինքնագործունեութիւն եվրոպական լուսավորութեան առաջնորդութեամբ- ահա Շանշյանի կառավարած դպրոցի նշանաբանը»[2]:

Նրա անունը, դուրս գալով Ներսիսյան դպրոցի սահմաններից, տարածվել էր ամբողջ Անդրկովկասում: 1863թ. արցախահայությունը հատուկ խնդրագրով դիմում է Մատթեոս կաթողիկոսին, խնդրելով, որպեսզի ամենուրեք անուն հանած Պետրոս Շանշյանը նշանակվի Շուշիի թեմական դպրոցի տեսուչ:

Նույն թվականին մանկավարժական պրակտիկայում հարուստ փորձ կուտակած Պ. Շանշյանն ստանձնեց Շուշիի թեմական դպրոցի տեսչի պաշտոնը (1863թ.): Նա իր ժամանակի այն հայ սակավաթիվ գործիչներից էր, որ թեմական դպրոց մտավ նրա ներքին կյանքը հեղաբեկող մտահոգացումներով, ուսման և ուսուցման վիճակն արմատապես վերափոխող նպատակներով:

Հմուտ մանկավարժը, կյանքի կոչելով իր սկզբունքները, ձեռնամուխ եղավ

---

1. Մելքիսեդեկ եպս. Մուրատեան, Պետրոս Շանշեաց, Կենսագրութիւն, Թիֆլիս, 1898, էջ 7, 9-10: Տե՛ս նաև Հայ մշակույթի օրրանը, Երևան, 1971, էջ 262-263:
2. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 284:

երկրամասում կրթական կյանքի արմատական փոփոխությանը, նախ և առաջ փոխելով կրթօջախի անունը. «Հոգևոր ճեմարանը» վերանվանվեց «Եղիշեի ազգային հոգևոր դպրոց»: Շանշյանն իր սաների մեջ ուժեղացնում է հայրենասիրական ոգին, արթնացնում ազգային ինքնագիտակցությունը: Նա փոփոխություն մտցրեց նաև թեմականի ներքին կյանքում, նոր շունչ ու թարմություն հաղորդեց նրա բովանդակությանը: Պ. Շանշյանի ծառայություններից մեկն էլ այն էր, որ նա փոփոխություն մտցրեց նաև թեմի եկեղեցական-ծխական, օրիորդաց դպրոցների ներքին կյանքում:

Ազգային գործոնն ուժեղացնելու նպատակով Շանշյանը լայն տեղ տվեց մայրենի լեզվի ուսուցմանը, ապա և զգալիորեն ընդլայնեց ավանդվող առարկաների մինչ այդ խիստ սահմանափակ ցանկը: Նրա նախաձեռնությամբ դպրոցում սկսեցին դասավանդվել ընդհանուր պատմություն, մարդաբանություն, հայոց պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, երեխայի աշխարհաճանաչությանը նպաստող, նրա ազգային ինքնագիտակցությունը խթանող այլ առարկաներ: Այս բարեփոխումներով Շանշյանը ոչ միայն նպաստում էր հայոց լեզվի ուսուցմանը, այլև չափազանց հեշտացնում էր արդեն իսկ հայերեն ավանդվող առարկաների յուրացումը:

Ելնելով առաջավոր ժողովրդավարական մանկավարժության դիրքերից, Պ. Շանշյանը Շուշիի թեմական դպրոցում որոշ բարեփոխումներ մտցրեց նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և ներդպրոցական կառավարման համակարգում: Նրա մտցրած մանկավարժական նորությունները են.

1. հայոց լեզվի դասավանդման որակի բարձրացում,

2. մի շարք նոր առարկաների ներմուծում և ուսումնական պլանի համալրում բնական գիտություններով,

3. ծեծի արգելում և ընկերական ստեղծագործական մթնոլորտի աշխուժացում,

4. ուսուցումն առանց հարկադրանքի կազմակերպում: Ըստ մարդասիրական ըմբռնումների, ասում էր նա,՝ մենք պետք է յոլա գնանք առանց հարկադրանքի: Եվ մենք ստիպված ենք բացառել հարկադրանքի միջոցները, քանի որ դրանք մեր տրամադրության տակ պարզապես չկան, բացի այն մանկավարժներից, ովքեր կարող են հաղթել երեխային գոռոցով կամ վախեցնելով*:

Շանշյանը թեմական դպրոցում աշխատելու տարիներին մարդասիրական վերաբերմունք է ցուցաբերում ուսուցիչների և աշակերտների նկատմամբ, մասնակցում աշակերտների խաղերին ու զբոսանքներին: Նա այն կարծիքին է, որ ուսուցիչ-դաստիարակն իր վարքագծով, առաքինությամբ ու կատարելությամբ լավագույն օրինակ պիտի ծառայի աշակերտի համար: Այսօրվա հասկացությամբ՝ այդ հատկանիշները պետք է ջանալ պահպանել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների ողջ ընթացքում:

Ներդպրոցական կառավարման համակարգում Պ. Շանշյանի մտցրած բարեփոխումներից է այն, որ թեմական դպրոցում ուսումնական պրոցեսն անջատվում է տնտեսական ղեկավարությունից (ինչպես Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում էր): Աշխատանքից հեռացնում է սխոլաստիկ մանկավարժներին, «վարժապետներին», հրավիրում բարձրորակ մասնագետների և բարձրացնում դասավանդման որակը: Ուսուցումը և դաստիարակությունը մանկավարժական նոր սկզբունքնե-

* Լեո, նշվ. աշխ., էջ 285-286:

րով կազմակերպող Պ. Շանշյանը հատուկ ուշադրություն է դարձնում թեմական դպրոցում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանն ու որակի բարձրացմանը:

Հայտնի է, որ մինչև Պ. Շանշյանի ժամանակաշրջանը, Արցախի թեմի դպրոցներում ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը շատ խայտաբղետ էին, տարատարիք երեխաները դպրոց էին ընդունվում տարվա ցանկացած ժամանակ, չի եղել որոշակիորեն սահմանված ուսումնական տարի, որն ունենար իր սկիզբն ու ավարտը, ուսումն անընդհատ էր ամբողջ տարին: Շանշյանի տեսչության շրջանում համեմատաբար որոշ բարեփոխումներ կատարվեցին նաև այդ առումով: Նրա գալով ուսումնական տարին թեմական, օրիորդաց և Շուշի քաղաքի մյուս դպրոցներում սկսվեց սեպտեմբերի 1-ից և շարունակվում էր մինչև հունիսի վերջը, իսկ հուլիս և օգոստոս ամիսներին աշակերտներն արձակվում էին ամառային արձակուրդի: Սահմանվում էր նաև ուսումնական պարապմունքների տևողությունը. թեմական դպրոցներում՝ 5-6 ժամ, ծխական և օրիորդաց դպրոցներում՝ 4-5 ժամ, դասամիջոցների տևողությունը՝ 10-15 րոպե, մեծ դասամիջոցները՝ 25-30 րոպե[3]:

Իր տեսչության շրջանում Պ. Շանշյանը կարևոր ուշադրություն է դարձնում նաև Շուշիի թեմական դպրոցի կառավարման ու սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանն ու որակի բարձրացման հարցերին: Նա փորձում է Ներսիսյան դպրոցի ներքին կյանքում կատարած նույն կարգի բարեփոխումները[4] մտցնել նաև թեմական դպրոցում՝ որպես մանկավարժական նորարարություն: Շանշյանը գտնում էր, որ դպրոցի ղեկավարությունը (տեսուչ, հոգաբարձու) պետք է կարողանա մանկավարժական կոլեկտիվին նպատակաուղղել նորովի մտածելու դպրոցի մասին, չսահմանափակվել սեփական հետաքրքրությունների շրջանակով, այլ իր աշխատանքը դիտել կոլեկտիվ աշխատանքին մասնակցի դիրքերից: Նա կարևորում է նաև այն, որ թեմական դպրոցի կառավարման բազմաբնույթ խնդիրների իրագործումն անհնար է առանց դպրոցի տեսչի, հոգաբարձուի (ղեկավարի) գործունեության գիտակցված հետևողականության, մանկավարժական կոլեկտիվի և կառավարչական անձնակազմի գործողությունների ու պարտականությունների որոշակիացման ու միմյանց հետ փոխհամաձայնեցվածության: Թեմական դպրոցի նպատակաուղղվածության և պլանայնության այս սկզբունքի կիրառմանը զուգակցում է նաև մանկավարժական համակարգի ժողովրդավարացման, մարդասիրական ղեկավարման, մանկավարժական առաջավոր փորձի ներդրման, գործողությունների համաձայնեցվածության, կարգապահության, աշխատանքների կենտրոնացման, մանկավարժական կոլեկտիվի նախաձեռնողականության, նպատակների ընտրության, ուսումնական ծրագրերի ու պլանների նկատմամբ միասնական պահանջների՝ գիտականության, նպատակաուղղվածության, համալիր մոտեցման սկզբունքները:

Պ. Շանշյանի տեսչության շրջանում, թեմական դպրոցում պատշաճ մակարդակով էին կազմակերպվում նաև դաստիարակչական աշխատանքները: Մինչ այդ թեմական դպրոցում կիրառվող ճնշման, անխնա ծեծի ու խիստ պատիժների փոխարեն Շանշյանի ժամանակ ուսուցիչները սկսում են գործադրել համոզման, խրախուսանքի և բարոյական դաստիարակության տարբեր մեթոդներ: Ուշադրու-

3. Լեո, Շուշիի թեմական դպրոցի պատմություն: Տե՛ս նաև, ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 299:
4. Այդ մասին տես, Մ. Սանթրոսյան, Ներսիսյան դպրոցի պատմություն, Երևան, 1981:

թյան է արժանի այն փաստը, որ թեմական դպրոցի մանկավարժական ժողովում[5] առաջին անգամ Շանշյանի տեսչության շրջանում քննության էր առնվում անարդարացի, հակամանկավարժական պատիժների հարցը և առաջ քաշվում դաստիարակության առաջավոր, հումանիստական մեթոդները՝ խրախուսման, համոզման և այլն:

Համբարձում Առաքելյանի «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր» աշխատությունից տեղեկանում ենք, որ 1864-1865 ուստարվա մանկավարժական ժողովի արձանագրության մեջ շեշտված է, որ յուրաքանչյուր դասարանում նշանակված է դաստիարակ, դաստիարակի օգնական, և ամեն ամիս դաստիարակը մանրամասն տեղեկագիր է ներկայացնում տեսչին, հոգաբարձուին ոչ միայն դասարանի առաջադիմության, այլև կարգապահության մասին: Մանկավարժական ժողովում քննարկվել է նաև աշակերտների վարքի գնահատման խնդիրը. գնահատվում էր՝ «գոհ ենք», «դժգոհ ենք»[6]: Աշակերտների վարքն ուսումնասիրելու և նրանց բարոյական արժանիքները զարգացնելու խնդրում Պ. Շանշյանն առաջին նախապայման է համարում սիրել երեխաներին, հարգել, չվիրավորել նրանց ինքնասիրությունը, մերձենալ դաստիարակության օբյեկտներին՝ աշակերտներին, ընդհանրապես վերաբերմունքի մեջ լինել համբերատար, ներողամիտ: Դա նկատելի էր նաև Շանշյանի հետնորդների շրջանում:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախում մշակութային զարթոնքի այդ տարիներին Շանշյանի նորամուծությունները մեծ նշանակություն ունեցան դպրոցների ներքին կյանքում: Զարթոնքի այս գաղափարներով էր սնվում երկրամասի առաջավոր մտավորականությունը, այդ գաղափարներով էին դաստիարակվում նաև դպրոցների սաները:

Պ. Շանշյանի նախաձեռնությամբ 1864թ. Շուշիում բացվում է առաջին բարեկարգ օրիորդաց դպրոցը, որը Պռոշյանն անվանել է «Երջանկության սկիզբը, մեծ և նշանավոր օր: Հախումյանցի սեփական դահլիճում, որի դռները մինչև օրս բացվում էին խնջույքների և պատվավոր հյուրերի համար, այսօր լուսավորության տաճար եղավ Շուշիի հայ աղջիկներին»[7]:

Շուշիում հախուռն թափով սկսված Շանշյանի դպրոցական-լուսավորչական գործունեությունը տվեց շոշափելի արդյունքներ: Դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ հմուտ մանկավարժի կազմած ծրագիրն այսօր մեզ համար ունի պատմական փաստաթղթի արժեք:

Պետրոս Շանշյանը Շուշիի թեմական դպրոցում իր կարճատև գործունեության տարիներին անգնահատելի ծառայություններով մնայուն տեղ գրավեց Արցախի մշակույթի, դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության մեջ:

<u>Պերճ Պռոշյան (1837-1907թթ.):</u> Հայ գրականության դասական, անվանի մանկավարժ, ով կյանքի մեծ մասը նվիրեց ազգային դպրոցին և սիրով ծառայեց նրան: Լինելով ժողովրդայնության ոգու մարմնացում, Պռոշյանը վառ պահեց մեր մեծ լուսավորիչների ավանդները, լայնորեն իրականացրեց նրանց երազանքը նաև հայ կնոջ ազգային կրթություն տալու վերաբերյալ: Հայտնի է, որ XIX դարի առաջին կեսին և այնուհետև մինչև Պռոշյանը, 60-ական թվականներին արևելա-

5. Լեո, նշվ. աշխ., էջ 284-285:
6. Հ. Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր, Շուշի, 1913թ., էջ 56-57:
7. Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964թ., էջ 246:

հայ մանկավարժական մտքի համարյա բոլոր ներկայացուցիչները՝ Թաղիադյան, Աբովյան, Նազարյան, Նալբանդյան, Ս. Շահազիզ, Ռաֆֆի և ուրիշներ, դառնությամբ ու խոր վրդովմունքով են մատնանշել հայ կնոջ տգիտությունը, ընտանեական սահմանափակվածությունը և ստրկական վիճակը, այդ իսկ հետևանքով՝ հասարակական կյանքին միանգամայն անհաղորդ, անմասն մնալու տխուր կացությունը, ընդգծել կրթված-լուսավորված հայ կնոջ դերն ընտանիքում և դպրոցում աճող սերնդի կրթության-դաստիարակության, ամենագլխավորը՝ ազգային ոգու, մայրենի լեզվի պահպանման գործում: Նրանք հրապարակավ պայքար են մղել հայ կնոջ հետամնացության դեմ և կոչ արել հայ հասարակությանը՝ բացել դպրոցներ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար կամ գոնե պահպանել երկսեռության սկզբունքը դպրոցում: XIX դարի 60-ական թվականների սկզբին Անդրկովկասում հայ աղջիկների կրթության ամենաեռանդուն ջատագովներից մեկը Պռոշյանն էր: Նա էր նաև իգական առաջին դպրոցի սկզբնավորողը Թիֆլիսում և այլ վայրերում, որտեղ նա աշխատում էր որպես ուսուցիչ: Թիֆլիսի հայաշատ վայրերում բացելով մի շարք իգական դպրոցներ (նշանավոր էր «Գայանյան» հայտնի օրիորդաց դպրոցը, հիմնադրվել է 1861-62 ուսումնական տարում), Պ. Պռոշյանն ընդունում է Պետրոս Շանշյանի հրավերը՝ Արցախի մշակութային կենտրոն Շուշի քաղաք և բացել բարեկարգ օրիորդաց դպրոց:

Դեռևս նոր պաշտոնավայր չհասած՝ Պռոշյանը, ոգևորված լինելով աղջիկների դպրոցների ստեղծման գաղափարով, իր Շանշյանին հայտարարում է. «Ես առանց աղջկանց դպրոցի ապրել չեմ կարող»[8]: Շանշյանը խոստանում է ըստ ամենայնի օժանդակություն այդ խնդրում: Եվ կարճ ժամանակ անց այդ գործիչների ու նրանց գաղափարակից և աջակից Գարեգին Մուրադյանի, մի քանի այլ առաջավոր անձնանց ջանքերը պսակվում են հաջողությամբ: Շուշիի մեծահարուստ Համբարձում Հախումյանը և նրա կինը՝ Մարիամը, ջերմ հավանություն տալով այդ գաղափարին, իրենց ընդարձակ բնակարանը սիրով տրամադրում են աղջիկների նորաբաց դպրոցին (1864թ.) և ամեն կերպ օժանդակում նրա զարգացմանը: Պ. Պռոշյանը Մարիամ Հախումյանի հետ միասին գրում է օրիորդաց դպրոցի կանոնադրությունը, որը տպագրվում, լույս է տեսնում առանձին բրոշյուրով. «Ղարաբաղի տիրամայր Սուրբ Մարիամ օրիորդաց ուսումնարանի բացվելը» (Շուշի, 1913թ.):

Տաղանդավոր գրող, վիպասան Մուրացանն իր «Խորհրդավոր միանձնուհի» վեպում՝ գրում է, որ Պռոշյանը և Շանշյանը մեծ դժվարությամբ հայոց Շուշի քաղաքում բացում են Արցախի առաջին օրիորդաց դպրոցը: Շուշիի հայ հասարակության շրջանում արծարծելով աղջիկների կրթության անհրաժեշտությունը, նա իր շուրջը համախմբում է այդ գաղափարի կողմնակից մի քանի ազդեցիկ անձանց (Մ. Ժամհարյան, Ա. Պողոսբեկյան, Գ. Տեր-Հակոբյան, Բարսեղ քահանա Տեր-Մովսիսյան և ուրիշներ) և հորդորում նրանց ոչ միայն Շուշի քաղաքում, այլև գավառի գյուղերում ևս բացել իգական դպոցներ:

Պ. Պռոշյանը թեմական դպրոցում թեկուզ և կարճատև (1863-1865թթ.), բայց բեղմնավոր գործունեություն ծավալեց: Մանկավարժական գործունեության ընթացքում Պռոշյանն ամենայն նախանձախնդրությամբ աշխատում էր նպաստել ոչ միայն իգական, այլև արական դպրոցների բացմանն ու բարեկարգմանը՝ Շուշի քաղաքում և գավառի գյուղերում: Պռոշյանը վերանորոգչական մեծ գործունեություն ծավալեց՝ թարմացնելով դպրոցական առարկաները, ուսուցման ու

8. Ար. Շավարշյան, Հայ մանկավարժներ, Գիրք «Բ», Երևան, 1958թ., էջ 183:

դաստիարակման մեթոդները, նպաստելով աշակերտության առաջադիմությանը և բարոյական դաստիարակությանը: Նա իսպառ վերացրեց աշակերտների հանդեպ ամեն տեսակ ֆիզիկական պատիժների գործադրությունը, ուսուցչությանը պարտադրելով մարդկային վերաբերմունք, տակտ հանդես բերել և ամենագլխավորը՝ անբասիր վարքով, անձնական օրինակով դաստիարակել սաներին:

Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում թե՛ Պ. Շանշյանը, և թե՛ Պ. Պռոշյանն իրենց հավասարակշռված, պահանջկոտ, բայց սրտացավ հոգատարությամբ ու բեղմնավոր մանկավարժական գործունեությամբ ուսանելի օրինակ հանդիսացան և՛ ուսուցչության, և՛ աշակերտության համար, արժանանալով ինչպես դպրոցականների, այնպես և լայն հասարակության խոր հարգանքին:

XIX դարի 70-ական թվականներին Արցախում, լուսավորության, մշակույթի, ու դպրոցական կյանքում ընթացող տեղաշարժերը պայմանավորված էին մի խումբ աչքի ընկնող գրական-հասարակական գործիչների և մասնագետ մանկավարժների նոր սերնդի բազմաբովանդակ գործունեությամբ:

<u>Խորեն վարդապետ Ստեփանե (1840-1900թթ.):</u> Հայ լուսավորչական շարժման անվանի գործիչ, մանկավարժ, գրող-հրապարակախոս, մամուլի անխոնջ մշակ: Բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, ավարտել էր Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նրա գործունեությունն ընթացել է հայկական թեմական դպրոցներում (Երևանում, Ախալցխայում, Բաքվում և այլուր), և որտեղ էլ աշխատել է՝ ձգտել է իրականացնել իր մանկավարժական սկզբունքները՝ թարմացնել ուսումնական պլանները, ծրագրերը, դասավանդման առարկաները, ուսուցման և դաստիարակության մեթոդները, միաժամանակ հրատարակել ու սկիզբ դնել հայ մանկավարժական մամուլին:

Եռանդուն ու բանիմաց մանկավարժը բեղուն մանկավարժական գործունեություն ծավալեց նաև Շուշիի թեմական դպրոցում 1873-1874թթ.: Ստանձնելով թեմական դպրոցի տեսչի պաշտոնը, Ստեփանեն մեծ աշխատանք է կատարել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու գործում: Պ. Շանշյանից, Պ. Պռոշյանից հետո թեմական դպրոցում մասամբ ընկնում է ուսման որակը, ուսուցիչների շրջանում հաճախակի էին լինում խռովություններ, բացակայում էր մանկավարժական համագործակցությունը, որը բացասական ներգործություն էր ունենում աշակերտության ուսման առաջադիմության վրա:

Խորեն Ստեփանեի տեսչության ժամանակ Շուշիի թեմական դպրոցում մեծ փոփոխություններ կատարվեցին թե՛ ուսման և թե՛ դաստիարակության դրվածքում: Այսպես, օրինակ, որոշակի փոփոխություններ կատարվեցին ուսումնական պլաններում, ծրագրերում, ավելի մեծ ծավալով ավանդվում էին հումանիտար և բնագիտական առարկաները. հայոց լեզվին և գրականությանը շաբաթական հատկացնում էր 4-5 ժամ (մինչ այդ՝ 2-3 ժամ), մաթեմատիկային՝ 5 ժամ, հայոց պատմությանը՝ 4 ժամ, աշխարհագրությանը՝ 2 ժամ, ռուսաց լեզվին՝ 2 ժամ, կրոնին՝ 2 ժամ և այլն: Ընդամենը՝ «ա» դասարանում 22 ժամ, «բ» և «գ» դասարաններում՝ 24 ժամ, իսկ բարձր (4-րդ և 5-րդ) դասարաններում՝ 26-28 ժամ: Ի տարբերություն թեմական դպրոցի նախորդ տարիների ուսումնական պլանի, նոր ուսումնական պլանում ռուսաց լեզվին հատկացվեց 2 ժամ: Ստեփանեն բարձր հիմքի վրա դրեց հատկապես ռուսաց լեզվի դասավանդումը: Նրա նախաձեռնությամբ կազմվեցին մի շարք առարկաների (վայելչագրություն, նկարչություն, երգերաժշտություն) ուսումնական ծրագրեր: Ինչպես Շանշյանի տեսչության, այն-

պես էլ Ստեփանեի ժամանակ սահմանվում են ուսումնական պարապմունքների և արձակուրդների ավելի հարմար ժամկետներ: Ուսումնական պարապմունքները տեղի են ունենում սեպտեմբերի 1-ից մինչև հունիսի վերջը, իսկ հուլիս և օգոստոս ամիսներին աշակերտներին տալիս են ամառային արձակուրդ: Ստեփանեն դպրոցի մանկավարժական ժողովում առաջարկում է, որ դպրոցում երեխաների ընդունելությունը կատարվի տարին մեկ անգամ՝ օգոստոսի վերջին: Խորեն Ստեփանեն առաջին անգամ սահմանում է դպրոցի մանկավարժական խորհրդի պարտականությունները[9]: Դրանք են.

1. մանկավարժական խորհրդում քննարկել դասավանդման կարգն ու մեթոդները և հսկել դասավանդմանը,

2. ժամանակին ձեռք բերել ուսումնական դասագրքեր, ձեռնարկներ, ծրագրեր հայոց թեմական դպրոցներից,

3. ուսումնական առարկաների բաշխումը կատարել ըստ դասարանների և ըստ համապատասխան մասնագետների,

4. դասերի պատրաստման ժամկետների և քննությունների կարգի սահմանում,

5. աշակերտների գիտելիքների գնահատում, նրանց փոխադրում հաջորդ դասարաններ կամ, անընդունակության պատճառով, հեռացում դպրոցից և այլն:

Թեմական դպրոցի մանկավարժական ժողովի 1874թ. սեպտեմբերի 2-ի նիստում Ստեփանեն առաջարկում է շաբաթվա ընթացքում ուսուցիչներին մի ժամ ազատ թողնել դասատվությունից, «որպեսզի բոլոր վարժապետներն այդ ժամին ներկա լինեն յուրաքանչյուր վարժապետի հերթով ավանդած դասին. սրանով ինքը կկարողանա յուրան նկատմունքներն անել դասատվության եղանակի մասին հետագա նիստերում, որպեսզի կարելի լինի միություն ձգել դպրոցական կյանքի մեջ»[10] (այսօրվա հասկացությամբ դպրոցներում փոխադարձ դասալսումների կազմակերպումն է): Ստեփանեն հոգաց թեմական դպրոցի բարեկարգման և ուսուցիչների վիճակի բարելավման մասին: Նրա շնորհիվ թեմական դպրոցն առաջադիմեց և արժանացավ թե՛ ուսուցիչների և թե՛ հասարակության համակրանքին: Թեմական դպրոցի երրորդ դասարանի աշակերտներից արդեն ընդունվում էին արքունական ուսումնարանի (Շուշիի քաղաքային ուսումնարանի) երրորդ դասարան[11]: Թեմական դպրոցի աշակերտների թիվը Ստեփանեի ժամանակ հասավ 300-ի: Ազգային գործիչը միաժամանակ հոգ է տանում նաև Արցախի թեմում ընդլայնելու ծխական և օրիորդաց դպրոցների ցանցը:

Այսպիսով, թեմական դպրոցում աշխատելու տարիներին Խորեն Ստեփանեն Արցախի թեմում իր հարուստ փորձով կարգավորում է դպրոցական գործերը, հաստատում մանկավարժական ժողով, մշակում դասավանդվելիք առարկաների ծրագրերը, ակտիվորեն մասնակցում հայ պարբերական մամուլի հրատարակման գործին: Խորեն Ստեփանեի մանկավարժական գործունեությանը նվիրված իր աշխատության մեջ Ս. Գասպարյանը մատնանշում է, որ ազգային գործիչը հայ դպրոցի հետամնացության գլխավոր պատճառներից մեկը համարում է որակյալ ուսուցչության բացակայությունը[12]: Դպրոցի մանկավարժական խորհրդի նիստե-

9. Լեո, նշվ. աշխ., էջ 288-289: Նաև Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 570:
10. Նույն տեղում:
11. «Մշակ», 1874թ., թ. 52:
12. Խ. Գասպարյան, Խորեն եպիսկոպոս Ստեփանեի մանկավարժական գործունեությունը (ծննդյան 120 և մահվան 60-ամյակի առթիվ), էջմիածին, 1960թ., թ. 5, էջ 26:

ում նա անընդհատ խոսում է այդ ցավոտ երևույթի մասին և ընդգծում ուսուցչական նոր կադրեր պատրաստելու անհրաժեշտությունը: Այդ տեսանկյունով էլ նա առաջարկում է թեմական դպրոցին կից ստեղծել մի վերջին՝ մանկավարժական-մասնագիտական դասարան, որտեղ պատրաստվեն մանկավարժական տեսությանն իրազեկ ու գործնականին ծանոթ դպրոցական գործիչներ[13]: Անդրադառնալով ուսուցիչների վերապատրաստման հարցին, Ստեփանեն առաջարկում է նաև թեմական դպրոցում կազմակերպել ամառային մանկավարժական դասընթացներ ծխական դպրոցների ուսուցիչների համար և առաջին անգամ ինքը ծրագիր է մշակում ու կազմակերպում տասնօրյա դասընթացներ, ինչը հետագայում ավանդույթ է դառնում Արցախի դպրոցական ու մանկավարժական ասպարեզի գործիչների համար:

Այդ ամենից բացի, Խորեն Ստեփանեն Արցախի մշակույթի գործիչներից առաջինն էր, ով իր գործունեության հենց սկզբից մեծապես զբաղվում էր նաև հայ պարբերական մամուլի հրատարակման գործով: Արձանագրելով, որ Խորեն Ստեփանեն որոշ չափով բարելավեց ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը, կենդանություն մտցրեց դպրոցական կյանքում, Լեոն նշում է. «Ստեփանէն Շուշիում շարունակեց իր «Հայկական աշխարհի» (1874թ.) հրատարակութիւնը: Եվ այս առաջին անգամն էր, որ Շուշիում լույս էր տեսնում պարբերական հրատարակութիւն: Վճռած լինելով ամսագիր տպագրել Շուշիում, նա աշխատեց կենդանացնել, որքան հնար է, դպրոցի տպարանը»[14]:

Մշակույթի ու կրթության ասպարեզի անվանի գործիչը Շուշիում իր կարճատև գործունեության շրջանում (1873-1874թթ.) գրեթե մշտապես եղել է քաղաքի հասարակական տարբեր ընկերությունների ու կազմակերպությունների վարչությունների անդամ («Գրադարանային», «Մարդասիրական» հրատարակչական և այլն) և մեծ դեր կատարել բազմաբովանդակ մշակութա-լուսավորչական ձեռնարկումների իրականացման գործում:

XIX դարի 80-ական թվականներին Արցախի թեմում կրթական-գրական գործիչների կողքին ասպարեզ է մտնում մասնագետ մանկավարժների մի պատկառելի խումբ, ովքեր նոր երանգներ մտցրին հայ ժողովրդի այս հատվածի մանկավարժության մեջ, ջանացին գիտական հիմնավորում տալ կրթական գործընթացին, տեսականորեն մշակեցին ու գործնականում իրականացրին նրա զարգացումը: Այդ տասնամյակում արցախահայ դպրոցական-կրթական ասպարեզում աչքի ընկնող գործիչներն էին Ղ. Աղայանը, Ս. Մանդինյանը, Հ. Առաքելյանը, Ս. Հախումյանը, Տ. Նազարյանը, Ն. Տեր-Ավետիքյանը, Ս. Գյուլզադյանը և ուրիշներ:

Մեր ձեռքի տակ եղած փաստագրական հարուստ նյութերն ու արխիվային տվյալները, այդ գործիչների անձնական արխիվներում պահպանվող հուշերը հնարավորություն են ընձեռնում մանրամասն ներկայացնել նրանց մանկավարժական, լուսավորչական գործունեությունն Արցախի թեմի դպրոցներում, միաժամանակ, գիտամանկավարժորեն հիմնավորել և ցույց տալ նրանց կողմից կիրառված այն առաջավոր մեթոդները, հնարներն ու միջոցները, որոնք խթանել են դասի որակի արդյունավետության բարձրացումը և ուսանելի են նաև այսօրվա ազգային դպրոցի ուսուցիչների համար: Հարկ է նշել, որ վերոնշյալ և կրթության ոլորտի շատ այլ գործիչների, պրակտիկ մանկավարժների թողած հարուստ ժա-

13. Ականավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանի տեսչության շրջանում (1880-1881թթ.) Շուշիի թեմական դպրոցներում բացվում է մանկավարժական բաժանմունք: Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 404:
14. Լեո, նշվ. աշխ., էջ 374:

ռանգության ուսումնասիրումը և Արցախի թեմի դպրոցներում կիրառած ուսուցման ու դաստիարակության առաջավոր ձևերի ու մեթոդների ստեղծագործաբար օգտագործումը, անշուշտ, կարող են մեր ուսուցչությանը տեսական ու մեթոդական օգնություն ցույց տալ: Ժամանակակից դպրոցի ուսուցչի համար տեսական և գործնական առումով մեծ նշանակություն ունի անցյալի մեր մանկավարժների ուսանելի փորձի ուսումնասիումը: Ահա թե ինչու առաջին անգամ փորձել ենք մանրամասն ներկայացնել նրանց մանկավարժական գործունեությունը Շուշիի թեմական, օրիորդաց, ծխական դպրոցներում, ինչպես նաև ներկայացնել լուսավորչական գործունեությունը՝ մշակույթի ոլորտում, բարեգործական, կրթասիրական ընկերությունների հիմնադրման, ծխական դպրոցների ցանցի ընդլայնման, մանկավարժական կադրերի պատրաստման, ուսուցիչների համար մանկավարժական դասընթացների կազմակերպման գործում, նրանց ձեռնարկած արմատական բարեփոխումները դպրոցաշինության ասպարեզում:

<u>Ղազարոս Աղայան (1840-1911թթ.):</u> Հայ գրականության դասական, անվանի մանկավարժ, ով մեծ վաստակ ունի Արցախի դպրոցական-կրթական գործում: Նա Շուշիի թեմական դպրոցում աշխատել է, նախ, որպես ուսուցիչ, ապա՝ տեսուչ: Աղայանը թեմական դպրոցում իր գործունեության ընթացքում փայլեց մանկավարժի բացառիկ ընդունակություններով, ուսուցիչ-դաստիարակի ինքնաբուխ տաղանդին միացնելով իր փորձառությունը և համառ աշխատասիրությունը: Որպես հայոց լեզվի, գրականության, հայոց պատմության և վայելչագրության ուսուցչի նրա ամենասովորական դասերն անգամ ընթանում էին հետաքրքիր ու արդյունավետ: Ինչպես վկայում է թեմականի ուսուցիչ (1884-1885 ուստարում՝ տեսուչ) Սամվել Մովսիսյանը[15], թեմական դպրոցի ուսուցիչները հաճախ էին առիթ ունենում ներկա գտնվելու Ղ. Աղայանի դասերին և ընդօրինակելու նրա առաջավոր փորձը: Աղայանը,- նշում է Մովսիսյանը,- թեմականի ուսուցչական խմբի շունչն ու ոգին էր, նա կենտրոնական դիրք էր գրավում, բոլորին համախմբում իր շուրջը, մանավանդ անփորձներին և օգնում նրանց ինչպես անձնական խուրհուրդներով, այնպես էլ մանկավարժական-մեթոդական զեկուցումներով, փորձնական դասեր ու դրանց շուրջը մտքերի փոխանակություն կազմակերպելով: Ուսուցչական ժողովներում ելույթներ էր ունենում զանազան հարցերի մասին[16]: Ավելորդ չէր լինի մատնանշել Աղայանի ուսանելի դրույթները ուսուցչի մասին, որոնք, մեր կարծիքով, շատ օգտակար կլինեն այսօրվա մեր դպրոցի ուսուցիչների, հատկապես սկսնակների համար:

Ղ. Աղայանի մանկավարժական ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում ուսուցչին, նրա մասնագիտական պատրաստությանը, նրա դերին ու կոչմանը նվիրված ուսանելի դրույթները: Մեծ նշանակություն տալով մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության գործում ուսուցչի դերին, Աղայանն ասում էր, որ ուսուցիչը դպրոցի կենտրոնական դեմքն է, կրթադաստիարակչական ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարը[17]:

Ուսուցչի գործի հաջողությունը մեծամասամբ կախված է նրա հետևողականությունից: Մինչդեռ,- ասում էր Աղայանը,- ուսուցիչները երբեմն նույնիսկ իրենց ավանդած առարկաների և նրանց ուսուցման եղանակների մեջ հետևողական չեն լինում: Աղայանը նկատում է, որ «Միևնույն առարկան այսօր Կիրակոսն է դաս

15. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 58:
16. Տե՛ս Ղ. Աղայանի անձնական արխիվում պահպանվող նամակները: Կադ. դիվ., ֆ. 56, ց. 3, գ. 78:
17. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963թ., էջ 47:

տալիս, վաղը՝ Մարկոսը և միևնույն առարկայի շարունակության ժամանակ այսօր տաքին է փչում, վաղը՝ հովին, և այս բոլոր պոչավոր հանցանքներն ընկնում են անմեղ մանուկների վրա, մեկը ապտակ է զարկում, մյուսը քանոն, մի ուրիշը չոքեցնում, չորրորդը անհաց է թողնում, մի քանիսն էլ այնպիսի պատիժներ են տալիս, որ ոչ ոքի մտքով անցած չլինի մինչև այն օրը, և զվարճանում են յուրյաց հրաշալի գյուտով»[18]:

Աղայանը միաժամանակ նշում է, որ լավ ուսուցիչը աշակերտի իդեալն է. «Ով չգիտե, որ աշակերտը, ատելով վարժապետին, ատում է նաև նրա ուսմունքը, որքան որ այդ օգտակար լիներ և ընդհակառակն, պատվելով վարժապետին, սիրում է և նորա դասերը, թեև դոքա անօգուտ ևս լինեին: Ո՞վ մեզանից, ուսումնարանի չորս պատերից ազատվել չեն լինի, միտը չէ բերում այս և այն վարժապետի բնավորությունը, երգիծաբանական կերպով ներկայացնում սորա-նորա շարժվածքը և խոսվածքը: Ո՞վ մեզանից սրբությամբ չի հիշում այն վարժապետի անունը, որ թե՛ բանիվ և թե՛ գործով աշխատում էր զարգացնել աշակերտաց բարոյականությունը»[19]: Ահա թե ինչու Ղ. Աղայանը մեծ ուշադրություն էր դարձնում ուսուցչի անձնավորությանը:

Ղ. Աղայանն ուսուցչի կարևոր որակներից է համարում նրա ստեղծագործելու, նորը, առաջավորը որոնելու և հայտնագործելու կարողությունը, ինչը մնում է որպես այսօրվա ուսուցչին ներկայացվող կարևոր պահանջ: Նրա կարծիքով մանկավարժությունն արվեստ է, իսկ ուսուցիչը՝ արվեստագետ: Դաստիարակելիս և ուսուցանելիս ուսուցիչը ճարտարապետի նման պիտի ձգտի իր ուսուցման գործը վարպետորեն կառուցել այնպես, որ կարողանա դաստիարակության և ուսուցման մեջ համաչափություն պահպանել: Ինչպես արվեստագիտությունը, նույնպես և ուսուցչությունը բնատուր ձիրք է: Դպրոցը և, մանավանդ, նախակրթական դասարանը, պետք է հանձնել նման բնատուր ձիրք ունեցող ուսուցչի: Ուսուցիչները չպետք է հույսները դնեն ոչ միայն բնատուր ձիրքի վրա, այլև շարունակ զբաղվեն ինքնազարգացմամբ ու ինքնակրթությամբ:

Ղ. Աղայանն իրավացիորեն գտնում է, որ ուսուցիչը դասի ժամանակ պիտի ունենա զվարթ տրամադրություն, պահպանի ձայնի մեղմությունը և երբեք դեմքին չտա կնճռոտ ու տխուր արտահայտություն, պարապմունքի ընթացքում աշխատի զբաղեցնել բոլորին, ուշադրությունը կենտրոնացնի անցնելիք նյութի վրա:

«Պարտավորություն վարժապետաց» հոդվածում Աղայանը գրում է. «Վարժապետը դասախոսելու ժամանակ պետք է ձայնի մեղմություն պահպանե, չպետք է յուր դասախոսությունը ընդհատե «սուս», «հանդարտ կացեք» և նմանապիսի բառերով, կամ քանոնով չխկչխկացնե սեղանը, այլ կշարունակե յուր դասախոսությունը և միևնույն ժամանակ յուր ակնարկությունը կկենտրոնացնե այն աշակերտի վրա, որի ուշադրությունը ուրիշ բանի վրա է ընկել»[20]:

Ուսուցման հաջողության հիմքը Աղայանը համարում է ուսուցչի կողմից իր գործը և աշակերտներին սիրելը, նրանցով ոգևորվելը: «Գլխավոր և միակը ուսուցման հոգին է, այն կյանքը, որով զարգանում է սովորողի միտքը…»: Նա ընդգծում է, որ դպրոցական գործի և աշակերտների հեղինակության վրա մեծ չափով անդրադառնում է ուսուցիչների փոխհարաբերությունը: Այդ պատճառով

18. Ղ. Աղայան, «Խորհրդածություն դաստիարակության վերա», Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963թ., էջ 67:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում:

նրանք իրար հետ պիտի աշխատեն հաշտ և սիրով, իսկ եթե նրանց փոխհարաբերությունները վատ են, ապա աշակերտությունը չպիտի այդ նկատի: Անթույլատրելի է համարում միմյանց բամբասելը: Թերություն նկատած դեպքում պիտի խոսել մանկավարժական ժողովում, այն էլ փաստերով՝ առանց միմյանց վիրավորելու: Այդ առթիվ «Պարտավորություն վարժապետաց» հոդվածում Աղայանը գրում է. «Ոչ մի վարժապետ մի ուրիշի չպետք է բամբասե ժողովրդի մեջ, բայց ժողովրդի մեջ ամեն մեկը ազատ է նկատողությունը մյուսի թերությանց վերա անել, սոսկ փաստեր առաջ բերելով, առանց պատվո դիպչող բառեր գործ դնելու»[21]:

Ղ. Աղայանը մեծ ուշադրություն է դարձրել ուսուցչի և աշակերտի ջերմ փոխհարաբերությանը, նա նշում է, որ դպրոցից դուրս ևս այդ փոխհարաբերությունը պիտի լինի ընկերական: Ուսուցիչները և աշակերտները կարող են այցելության գնալ միմյանց, միասին զբոսանքի գնալ, լրագրեր կարդալ, խոսել, երգել, ծիծաղել, զվարճանալ. նման հարաբերությունը բարձրացնում է ուսուցչի հեղինակությունը: Այնպես որ աշխատանքի հաջողությունը մեծ մասամբի կախված է ուսուցչից, նրա տակտից, նրա «արվեստագիտությունից»:

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատության մեջ Լեոն ասում է, որ Աղայանը խստորեն պայքարում էր դպրոցում տիրող կամայականությունների դեմ, նա աշակերտների հոգատար դաստիարակն էր, նրա ամենասովորական զրույցներն ու դասերն ընթանում էին հաճելի, հետաքրքիր և արդյունավետ: Աղայանը, շարունակում է Լեոն, երեխաներին սիրում էր բուռն սիրով, մանուկների աշխարհը և նրանց դաստիարակությունը նրա տարերքն էին. նա դաստիարակչական գործը բոլոր զգացմունքներից ամենավսեմը համարեց[22]: Ղ. Աղայանի անձնական արխիվում պահպանվում են տարբեր վայրերից (Երևանից, Թիֆլիսից, Շուշիի թեմականից և այլ վայրերից) նրան գրած իր սաների՝ աշակերտ-աշակերտուհիների նամակները, որտեղ հարգանքի ու խոր ակնածանքի հետ անկեղծ կարոտ և ափսոսանք են հայտնում իրենց սիրելի ուսուցչի բացակայության առթիվ[23]: Շնորհիվ իր այդ կարողությունների, Ղ. Աղայանը շուտ հասավ մանկավարժական վարպետության և իրավամբ դարձավ հայ ուսուցիչների ուսուցիչը:

Աղայանն իր տեսչության շրջանում (1880-1881թթ.) որակական մի շարք փոփոխություններ կատարեց թեմական դպրոցի ներքին կյանքում:

Այսպես, օրինակ, թեմական դպրոցում ուսումնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման և որակի բարձրացման՝ դպրոցում աշակերտների ընդունվելու, պարապմունքների ռեժիմի, առաջադիմության, քննությունների, արձակուրդների, արտադասարանական աշխատանքների կազմակերպման (դասերից դուրս և ամառային արձակուրդներին) և այլ հարցերի վերաբերյալ իր առաջարկությունները նա ներկայացնում է մանկավարժական ժողովին, որտեղ դրանք քննարկվում և մեծ հավանության են արժանանում: Համառոտակի ներկայացնենք այդ առաջարկություններն ու մանկավարժական մեթոդական խորհուրդները[24].

1. թեմական դպրոցում ուսուցիչները պարտավոր են հաղորդվելիք ուսումնական նյութը պլանավորել աշակերտ-աշակերտուհիների հնարավորություններին համապատասխան,

---

21. Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 76:
22. Լեո, Շուշիի թեմակ. դպ. պատմութ., էջ 314:
23. Ղ. Աղայանի արխիվ, թ. 14, 16, տե՛ս, ՀԱԱր. ն. 56, գ. 152, 542:
24. Ղ.Աղայանի մանկավարժական առաջարկությունների մասին տես՝ Լեո, նշվ. աշխատություն, էջ 14-18, և իր անձն. արխիվում պահպանվող նյութերը:

2. դասին՝ ուսումնական նյութի ամրապնդման նպատակով վարժությունների կատարում, ժամանակի հնարավոր ծախսումը հաշվի առնելով,

3. դասի ընթացքում աշակերտ-աշակերտուհիների ազգային, գաղափարաքաղաքական դաստիարակության ապահովում, նրանց մեջ ազգային արժանապատվության, պատասխանատվության զգացման ձևավորում,

4. աշակերտների մտածողության ինքնուրույնության, ստեղծագործական մտքի, ուսման մեջ դժվարությունների հաղթահարման կարողության զարգացում,

5. աշակերտների ամենօրյա առաջադիմության, ուշիմության կամ ծուլության և անկարգապահության մասին ուսուցիչ-դաստիարակները պարտավոր են տեղյակ պահել տեսչին կամ դպրոցի հոգաբարձուին,

6. դպրոցում աշակերտների վարքի կանոնների հաստատում,

7. յուրաքանչյուր աշակերտ պարտավորվում է բերել իր հետ ամեն օրվա դասերի պիտույքները, դասագրքերը, կանոնավոր հաճախել դասերին,

8. ուսումնական տարին ավարտելուց հետո կազմակերպել հրապարակային քննություններ, որին ներկա լինեն նաև ծնողները, հասարակության ներկայացուցիչները և այլն[25]:

Ուշագրավ են նաև ուսումնական տարվա ապրիլին կայացած մանկավարժական խորհրդի նիստում Աղայանի քննարկած հետևյալ հարցերը.

- գործադրվող դասագրքերի պիտանությունը, ուսումնական պլանների, ծրագրերի կատարումը, աշակերտների առաջադիմությունը թեմական և օրիորդաց դպրոցում,
- դասավանդման կարգն ու մեթոդները, վերահսկողությունը դասարանում,
- ուսումնական առարկաների բաշխումն ըստ ուսուցիչների մակարդակի,
- փոխադարձ դասալսումների կազմակերպում և առաջավոր փորձի ընդօրինակում և այլն[26]:

Ղ.Աղայանի տեսչության շրջանում լուրջ փոփոխություններ են կատարվել թեմական դպրոցի ուսումնական աշխատանքների կազմակերպման ու որակի բարձրացման ուղղությամբ: Անշուշտ, չափազանց կարևոր է նման ուսանելի օրինակը կիրառել նաև այսօրվա դպրոցում:

Նորարար մանկավարժ Աղայանն իր տեսչության օրոք մեղմ բարքեր ու վայելուչ հարաբերություններ հաստատեց թեմական դպրոցի ուսուցիչների ու աշակերտների միջև, իսպառ վերացվեցին պատիժը, սպառնալիքն ու ծեծը (ոչ միայն թեմականում, այլև օրիորդաց և ծխական դպրոցներում), մի բարեփոխություն, որ աշակերտին դրդում էր դեպի ջանասիրություն ու կարգապահություն: Նա իբրև ընկեր էր վարվում աշակերտների հետ, մասնակից էր լինում նրանց խաղերին ու զբոսանքներին և իր առաքինի վարքով կենդանի օրինակ էր ծառայում աշակերտների, ուսուցիչների համար:

Ղ. Աղայանի տեսչության օրոք Շուշիի թեմական դպրոցում ուսումնական պարապմունքները կազմակերպվում էին ոչ միայն պատշաճ մակարդակով՝ դպրոցի ուսումնական պլանով, համապատասխան դասացուցակով, այլև բոլոր աշակերտների համար՝ պարտադիր ուսումնական պարապմունքերից բացի, մեր այսօրվա ըմբռնմամբ՝ կազմակերպվում էին նաև արտադասարանական աշխատանքներ (դա Շուշիի դպրոցի կյանքում նորարարություն էր): Աղայանի խորհրդով թեմականի հայոց լեզվի, գրականության, պատմության ուսուցիչները (Մ.

25. Լեո, նշվ. աշխ., էջ 684-685:
26. Նույն տեղում:

Շահինջանյան, Մ. Սամվելյան, Ա. Գուլիքևխյան, Ա. Ջալալյան և ուրիշներ) կազմակերպում էին գրական ցերեկույթներ, որտեղ աշակերտները հանդես են գալիս հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններին նվիրված զեկուցումներով («Վարդանանց պատերազմը», «Սամվելի հոր դավաճանությունը», «Գևորգ Մարզպետունու սխրագործությունը» և այլն): Թեմական դպրոցի շրջանավարտներից մեկը՝ Ղ. Աղայանի սան Գր. Տեր-Ղազարյանը, իր հուշերում պատմում է, որ ամեն շաբաթ երեկո տեղի էին ունենում գրական երեկոներ, որոնց նպատակն էր թե՛ հայերեն գրելու մեջ վարժվելը և թե՛ մոտիկից հայ մատենագիրներին ծանոթանալը, որոնցից յուրաքանչյուրը մի դասախոսության առարկա էր դառնում, այդ երեկոներին աշակերտները վարժվում էին թե՛ վիճաբանության և թե՛ կանոնավոր խոսելու մեջ[27]: Թեմական դպրոցում ուսուցիչների և աշակերտների ուժերով կազմակերպվում էին նաև թատերական ներկայացումներ, լույս էին տեսնում աշակերտական ձեռագիր «Օիածան», «Աշակերտ» խորագրերով պատի թերթեր: Վկայաբերենք դրանցում հրապարակված հոդվածներից մի քանիսի վերնագրերը. «Որդու լավ ուսումը սփոփում է ծնողներին», «Ջբոսանք», «Դպրոցական էքսկուրսիայի արդյունքները» և այլն:

Թեմական դպրոցի վերջին դասարանի առաջադեմ աշակերտները շաբաթ օրերը ճաշից հետո հրապարակավ ընթերցում էին իրենց հորինած բանաստեղծություններն ու խրատական խոսքերը, պարտավորեցնում նաև առաջին և երկրորդ դասարանի աշակերտներին՝ ներկա գտնվելու այդ ընթերցումներին ու ճառերին՝ ի խրախույս աշակերտների: Բացի այդ, թեմական դպրոցի ուսուցիչների ղեկավարությամբ կազմակերպվում էին էքսկուրսիաներ դեպի Շուշիի տպարանները (այդ ժամանակ Շուշիում գործում էր 2 տպարան), որտեղ մասնակիցները ծանոթանում էին տպագրական, հրատարակչական գործին, և աշակերտներն իրենց այդ տպավորությունների մասին գրում էին դպրոցական պատի թերթում: Այս ամենը հավաստում է Ղ. Աղայանի տեսչության օրոք թեմական դպրոցի աշակերտության զգալի մասի ստեղծագործական ակտիվությունը:

Այսպիսով, վերոհիշյալ համառոտակի շարադրանքից էլ կարելի է եզրակացնել, որ ականավոր հայ մանկավարժի շնորհիվ Շուշիի թեմական դպրոցի կյանքում արմատական վերափոխումներ կատարվեցին և Ղ. Աղայանի ուսուցչության ու տեսչության ժամանակաշրջանը համարվեց «Վերածնության շրջան» (Լեո):

Սեդրակ Մանդինյան (1844-1915թթ.): Անվանի մանկավարժ, ով իր մասնագիտական պատրաստությամբ կարևոր տեղ է գրավում XIX դարի 70-80-ական թվականների արևելահայ դպրոցի և մանկավարժական մտքի զարգացման գործում աչքի ընկած մասնագետ մանկավարժների շարքում: Ծնվել է Թիֆլիսում: Սկզբնական կրթությունը ստացել է վրացական միջավայրում՝ գիմնազիայում, այնուհետև ավարտել Մոսկվայի Լազարյան ճեմարանը: 1863թ. վերադառնալով Անդրկովկաս, Մանդինյանը նվիրվում է նոր կազմակերպվող հայ բեմին, հանդես բերելով դերասանական արտակարգ ընդունակություններ:

Ս. Մանդինյանը հայ անվանի դերասաններ Գ. Չմշկյանի, Մ. Ամերիկյանի, Ա. Սուքիասյանի հետ շրջել է հայոց գավառները, 1865թ. եղել է Շուշիում, ինչպես ազգագրագետ Երվանդ Լալայանն է վկայում, տվել է մի քանի ներկայացումներ և Արցախում հիմք դրել թատերական գործին[28]: Գևորգ Չմշկյանն իր հիշողություն-

27. Այդ մասին տես Աղայանի անձնական արխիվում պահպանվող նրա սաների նամակները, Կաթ. դիվ., ֆ. 56, ց. գ. գ. 78:
28. «Ազգագրական հանդես», 1897թ., Բ գիրք, էջ 106-107:

ներում բավականին մանրամասնորեն նկարագրում է այդ ճանապարհորդությունը Թիֆլիսից Գանձակի վրայով Շուշի[29]: 1868թ. նա թողնում է թատերական գործը և 1869թ. անցնելով Պետերբուրգ, ընդունվում համալսարանի իրավագիտության ֆակուլտետ, մնալով այնտեղ միայն մեկ տարի: 60-ական թվականներին ռուսական հասարակական-լուսավորչական եռուն շարժման (որը ղեկավարում էր ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին) ազդեցության տակ նա հակվում է դեպի մանկավարժությունը:

Ստանալով բարձրագույն կրթություն Գոթայի ուսուցչական սեմինարիայում, ապա Հայդելբերգի և Լայցպիգի համալսարաններում ուսումնասիրելով մանկավարժություն և հոգեբանություն՝ 1874թ. ամռանն արտասահմանից վերադառնում է հայրենիք և անմիջապես նվիրվում մանկավարժական գործունեության: Նա նշանակվում է Ներսիսյան դպրոցի տեսուչ և այդ պաշտոնը վարում 4 տարի: 1880-1881թթ. Ս. Մանդինյանը որպես տեսուչ աշխատում է Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում, միաժամանակ նորաբաց ռեալական ուսումնարանում (ընդամենը երեք ամիս) դասավանդում ռուսաց լեզու, պատմություն, գերմաներեն: Ս. Մանդինյանի և թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի ուսուցիչների՝ մաթեմատիկոս Ա. Ն. Իվանովի, հնագետ Գոմելի, ֆիզիկայի, ֆրանսերենի ուսուցիչ Հարութ Մելիքյանի և ուրիշների ջանքերով Շուշիում բացվել է հասարակական գրադարան, հրատարակվում են զանազան գրքեր ու բրոշյուրներ, նախապատրաստվում է ամսագրի հրատարակություն: Երկու դպրոցների ուսուցիչների հետ միասին մշակութալուսավորչական աշխատանքներ էին տարվում ժողովրդի մեջ:

Չնայած Ս. Մանդինյանը ընդամենը մեկ տարի աշխատեց թեմական դպրոցում, սակայն իր գործունեությամբ բարի անուն վաստակեց Շուշիի թեմական դպրոցի կյանքում, ռեալական ուսումնարանում:

Ուշագրավ է այն, որ այդ կարճ ժամանակաշրջանում Ս. Մանդինյանը թեմական դպրոցին կից բացեց մանկավարժական դասարան, ինչպես Լեոն է վկայում. «Չորրորդ դասարան ավարտողներից կազմվեց յատուկ մանկավարժական դասարան, ուր Մանդինյանի դասախոսությունները լսում էին ինն աշակերտ, երկու աշակերտուհի և երկու ուսուցիչ (դրանց թվում և Գաբրիել Գյուլիքևխյանը, որն աշխատում էր թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում.Ա.Ա և Գ.Հ.[30])»: Լեոն իրավացիորեն նկատում է, որ հիշյալ ժամանակաշրջանում Շուշիի մտավոր հետաքրքրության գլխավոր կենտրոնը ներկայացնում էր հայ մտավորականների մի շրջան, որի մեջ աչքի էին ընկնում Ղ. Աղայանը, Ս. Մանդինյանը, Հ. Առաքելյանը, Ա. Թոխմախյանը և ուրիշներ: Նրանք պարբերաբար ժողովներ էին գումարում, կազմակերպում խմբակային ընթերցանություններ, քննարկում զեկուցումներ, առաջարկություններ էին անում ուսումնական գործի բարելավման վերաբերյալ:

Շուշիի թեմական դպրոցում Ս. Մանդինյանը եռանդուն մանկավարժական գործունեություն է ծավալել: Որպես տեսուչ՝ այստեղ աշխատել է իրականացնել իր մանկավարժական սկզբունքները, որպեսզի թեմական, օրիորդաց և քաղաքի ծխական դպրոցներն ունենան միասնական կանոններ ու սկզբունքներ, որպեսզի նրա տարբեր օղակներ օրգանապես փոխկապակցված լինեն և միմյանց շարունակություն կազմեն:

Այդ տեսանկյունով էլ նա կազմում և թեմական դպրոցի հոգաբարձության ու

29. Գ. Չմշկյան, Իմ հիշատակարանը, Երևան, 1964, էջ 51-52:
30. Լեո, Շուշիի թեմակ. դպրոցի պատմ., էջ 404:

մանկավարժական խորհրդին է ներկայացնում ուսման ծրագրի նախագիծ՝ ուսումնական աշխատանքները վերակառուցելու մասին: Այդ նախագծի համաձայն՝ թեմական դպրոցում ուսման տևողությունը սահմանվում էր 7 տարի, ինչպես ռեալական ուսումնարանում (նախկին 6-ի փոխարեն), օրիորդաց դպրոցներում՝ 4-5 տարի, ծխական դպրոցներում՝ 1-4 տարի: Նախատեսվում էին 3 հիմնական ընդհանուր կրթական դասարաններ, 2 միջնակարգ դպրոցի դասարաններ և 2 մասնագիտական-մանկավարժական դասարաններ, որտեղ պատրաստվեն ուսուցչական կադրեր տարրական (ծխական) դպրոցների համար[31]: Ուսման նախագծում նախատեսված էին ավանդվելիք առարկաները, ժամերը, ծրագրային նյութերի ծավալն ու սահմանները, ուսումնական հարցերը լուսաբանող բազմաթիվ էական ու մանրամասն բացատրություններ: Մանդինյանը կազմում է նաև ուսման նախագիծ օրիորդաց և ծխական դպրոցների համար և ցանկանում էր սահմանել միասնականություն ու վերացնել գոյություն ունեցող խառնաշփոթությունը և անհիշխանությունը դպրոցական կյանքում:

Ս. Մանդինյանի կազմած ուսման նախագծի համապատասխան՝ Շուշիի թեմական դպրոցը (ինչպես Ներսիսյան դպրոցը, Երևանի, Նոր Նախիջևանի թեմական դպրոցները), պետք է պատրաստի որոշակի մասնագիտության տեր մարդկանց, այնպես որ՝ սովորողները դպրոցն ավարտելով ստանային մի որոշ մասնագիտություն, և որոշ հասունության հասնեն: Նախորդ բաժնում մենք մատնանշեցինք, որ Մանդինյանի տեսչության ժամանակ Շուշիի թեմական դպրոցի «Չորրորդ դասարան ավարտողներից կազմվեց մանկավարժական դասարան, ինչպես Լեոն է գրում. «Յատուկ մանկավարժական դասարան, ուր Մանդինյանի դասախոսությունները՝ մանկավարժությունից և հոգեբանությունից լսում էին թեմականի աշակերտները և սկսնակ ուսուցիչները[32]»: «Գործ» ամսագիրը (Շուշի, 1882թ.), նույնպես բարձր է գնահատում Մանդինյանի ջերմեռանդ գործունեությունը Շուշիի թեմական դպրոցում[33]:

Մանդինյանի կազմած ուսումնական նախագծի համաձայն՝ դպրոցներում (թեմական, օրիորդաց և ծխական), պետք է ընդունվեն 7-8 տարեկան դարձած երեխաները, որպեսզի ի վիճակի լինեն հոգևորական կամ ուսուցիչ դառնալ: Թեմական դպրոցն ավարտած առաջադեմ աշակերտները պետք է մանկավարժական խորհրդի որոշմամբ երաշխավորվեն ուսումը շարունակելու Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ մանկավարժական, բանասիրական, փիլիսոփայական, աստվածաբանական գիտություններ ձեռք բերելու համար:

Սովորողներին ընդհանուր կրթություն տալու նպատակով, նորարար մանկավարժն առաջարկում էր թեմական դպրոցի առաջին երեք դասարաններում (1-3-րդ դասարաններ) ուսուցանել տարրական գիտելիքներ, 4-5-րդ դասարաններում տալ ընդհանուր կրթություն, իսկ վերջին երկու տարում սովորեցնել որոշ մասնագիտություն:

Քանի որ թեմական դպրոցի 1-3-րդ դասարանները համապատասխանում էին ծխական դպրոցներին (տարրական տիպի), հետևաբար վերջիններս պետք է լրացնեին այդ դպրոցի կադրերի պակասը, իսկ թեմականի շրջանավարտները, ուսումը շարունակելու դեպքում, ինչպես ասացինք, պետք է ընդունվեին վերոնշ-

31. Այդ մասին տես՝ Հ. Առաքելյան, Ղարաբաղի թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր, էջ 58-59: Նաև, Լեո, նշվ. աշխ., էջ 408-410:
32. Լեո, նշվ. աշխ., էջ 404-405:
33. Տե՛ս «Գործ», 1882թ., թ.1, էջ 89-90:

յալ ուսումնական հաստատությունները: Թեմական դպրոցի ներքին կյանքը վերափոխելու այս նախագծով նա նպատակ ուներ Ներսիսյան դպրոցում կուտակած հարուստ փորձը տարածել նաև Արցախի թեմում և ստեղծել միասնական դպրոցական համակարգ՝ միասնական ծրագրերով ու դասագրքերով և պատրաստել կրթված կադրեր, որոնք սիրով զբաղվեին հարազատ ժողովրդի լուսավորության գործով, ժողովրդական դպրոցը հիմնովին ծառայեցնեն նրա իսկական տիրոջ՝ ժողովրդի շահերին:

Ս. Մանդինյանը մեծ դժվարությամբ, ժամանակի դպրոցական քարացած կյանքն ու սովորությունները փոփոխության ենթարկելով, նոր թարմ խոսք է ասում, նոր սովորություններ, կարգուկանոն, կազմակերպվածություն է մտցնում հատկապես թեմական դպրոցում և գործնական ձեռնարկումներ անում: Այսպես, թեմական դպրոցում նորություն էր այն, որ Մանդինյանի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ առաջին անգամ ուսուցիչները միմյանց մոտ փոխադարձ դասալսումներ են անցկացնում, այդ առթիվ մտքերի փոխանակություն կազմակերպում, արդյունքները քննարկում մանկավարժական ժողովներում: Մանդինյանի պահանջով ուսուցիչներն ուսումնական տարվա ընթացքում անցած ուսումնական նյութերի մասին տեղեկագրեր էին ներկայացնում՝ դասընթացը լրիվ կատարե՞լ են, թե՞ ոչ: Բացի այդ, նաև պահանջվում էր, որ ուսուցիչները, որպես դաստիարակ, առանձնակի ուշադրություն դարձնեն աշակերտների մեջ քաղաքավարություն և վարվեցողություն կրթելու հարցերին:

Ս. Մանդինյանի նախաձեռնությամբ թեմական դպրոցում յուրաքանչյուր եռամսյակում քննություն-ստուգումներ են անցկացվում և արդյունքները քննարկվում պարբերաբար գումարվող մանկավարժական ժողովներում: Աշակերտների տարիքային առանձնահատկություններից և զարգացման մակարդակից ելնելով՝ ուսուցիչները գրականության ցուցակներ են կազմում, իսկ ընթերցանության գործը կազմակերպելու համար որոշ ուսուցիչների համար սահմանվում է հատուկ վարձատրություն: Լեոն նշում է, որ Մանդինյանի տեսչության շրջանում հատուկ ուշադրություն էր դարձվում նաև աշակերտների գրավոր աշխատանքներին: Դպրոցական կարգապահության հարցը մանկավարժական ժողովների կարևոր հարցերից մեկն էր համարվում[34]:

Իր մանկավարժական հարուստ փորձով և տեսական պատրաստությամբ Ս. Մանդինյանը Շուշիի թեմական դպրոցում ոչ միայն բարձր հիմքի վրա դրեց ուսումնական պլաններում ներառված առարկաների դասավանդումը, այլև մշակեց խիստ կարևոր նշանակություն ունեցող հետևյալ մանկավարժական առաջարկությունները.

1. թեմական, ծխական և օրիորդաց դպրոցներում աշակերտների թույլ պատրաստությունը նկատի ունենալով, այսուհետև պարտադիր համարել ուսումնական ծրագրի լրիվ անցումը: Ցանկալի է պակաս չափով անցնել, բայց, այնպես անցնել, որ անցածը հիմնավոր լինի, անհրաժեշտության դեպքում նորից ու նորից բացատրություններ տալ, աշակերտներին հասկացնել, նրանց գիտակցության մեջ մի նոր բան ավելացնելու պայմանով, բայց ոչ շտապողականություն հանդես բերել և արդյունքները ոչնչի հավասարեցնել,

2. առանձնապես ուշադրություն դարձնել բոլոր աշակերտների պատմելու եղանակի վրա: Չբավարարվել երկրորդական, մանր-մունր հարցերի պատաս-

34. Լեո, նշվ. աշխ., էջ 404-405:

խաններով, պահանջել հասկացածը բացատրել կապակցված ամփոփ մտքերով, գեղեցիկ ձևով,

3. չպետք է բավարարվել միայն բացատրություններ տալով, այլ պետք է հետևել, որ ուսուցչի բացատրածը դառնա աշակերտի սեփականությունը: Այսօրվա ուսուցչի համար ուսանելի է նաև այն խորհուրդը, որ ուսման մեջ միշտ պետք է տարբերել երկու հանգամանք, որոնցից յուրաքանչյուրն առանձին ժամանակ է պահանջում. այլ բան է ուսումնական նյութը աշակերտին հաղորդելու պահը, որ ամեն մի ուսուցիչ էլ կատարում է, այլ բան է հաղորդած գիտելիքներն աշակերտի սեփականությունը դարձնելը:

Ահա այս վերջին կողմի վրա է բազմափորձ մանկավարժ Մանդինյանը թեմական դպրոցի ուսուցիչների ուշադրությունը հրավիրում և պահանջում զարգացնել այն:

Ս. Մանդինյանն առաջարկում էր նաև ուսուցիչների շրջանում ստեղծել աշխատանքի միասնականություն և փորձի փոխանակում: Այդ նպատակով նույն առարկան դասավանդող ուսուցիչները պետք է խորհրդակցեն միմյանց հետ, ունեցած պակասները փոխադարձաբար լրացնեն, միջոցներ որոնեն հաջողությունների հասնելու համար, երբեմն հաճախեն միմյանց դասերին, ավագ դասարանի ուսուցիչը կրտսերին հայտնելու է նրա պակասությունները (թերությունները), որպեսզի նա վերացնի դրանք: Ցանկալի է, որ դաստիարակները ծնողների և երեխաների խնամակալների հետ հաճախակի հանդիպումներ ունենան՝ անհրաժեշտ խորհուրդներ տալու և ծնողների դիտողությունները լսելու համար:

Ս. Մանդինյանը թեմական դպրոցում չափազանց մեծ կարևորություն էր տալիս աշակերտների նկատմամբ ուսուցիչների միասնական մոտեցմանը և գտնում էր, որ ուսուցիչները կարգապահություն հաստատելիս, պատիժներ գործադրելիս պետք է հանդես գան միասնաբար: Նրանք ճշտությամբ պետք է կատարեն դպրոցական կանոնադրության պահանջները, հաճախակի այցելեն միմյանց դասերին, իրենց դասատվության ընթացքում նկատած թերություններն ու սխալներն ուսուցչական ժողովների քննության առարկա դարձնեն, միմյանց գործնական օգնություն ցույց տան:

Ս. Մանդինյանը թեմական դպրոցում իր կարճատև գործունեության ընթացքում ոչ միայն պատշաճ մակարդակով ղեկավարել է մանկավարժական կոլեկտիվը, այլև ձգտել բարձր հիմքի վրա դնել ուսումնական աշխատանքների կազմակերպումը, կիրառել ուսումնական առաջավոր մեթոդներ և խորհուրդներ տվել ուսուցիչներին բարձրացնելու ուսումնական առարկաների դասավանդման արդյունավետությունը: Համառոտակի կանգ առնենք այդ հարցերի վրա:

Թեմական դպրոցի մանկավարժական խորհրդում (1881թ. ապրիլին)[35] ունեցած իր ելույթում Մանդինյանն իրավացիորեն նշում է, որ եթե կրթության նպատակն է սովորողի կամքի և բարոյական գաղափարներից առաջացած իմացական կարողությունների ստեղծումը, ապա ուսուցման նպատակն է սովորողի մտավոր կարողությունների և կամքի զարգացումը: Ուսուցումը պետք է սանի մեջ նախ և առաջ հետաքրքրություն զարգացնի: Այստեղից էլ բխում է ուսուցիչ-դաստիարակի խնդիրը՝ ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել սովորողի անհատական առանձնահատկությունները: Նա պետք է լավ իմանա, թե իր սանի մեջ

35. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Շուշիի թեմական դպրոցում Ս. Մանդինյանի պրակտիկ մանկավարժական գործունեության մասին մանրամասն տե՛ս «Ս. Մանդինյան, Մի էջ հայկական ուսուցման պատմությունից, Թիֆլիս, 1910, էջ 128, Մ. Սանթրոսյան, Ներսիսյան դպրոցի պատմություն, Եր., 1981, էջ 136-137, Ա.Գ. Դանիելյան, Ս. Մանդինյան, Եր. 1964, էջ 54-102:

ինչն է հարկավոր ամրացնել, զարգացնել, ինչը ձևավորել, ինչպիսի լրացուցիչ մտքեր ունի աշակերտը պատրաստի վիճակում և ինչ նոր մտքեր պետք է ըմբռնելի դարձնել նրան: Նա գտնում է, որ դպրոցում ուսուցումը կարելի է սկսել միայն այն ժամանակ, երբ նրա ողջ ընթացքի համար մշակված է ճիշտ նախագիծ: Այս պահանջը պարտադիր կարգով պետք է գործադրվի թե այն դեպքում, երբ պարապմունքները մի հերթի են մի քանի ուսուցիչներով և թե այն դեպքում, երբ ուսուցանում են մի նոր հերթով և ուսուցիչների նոր կազմով: Ուսուցիչներին խորհուրդ է տալիս, որ պահպանվի դասավանդվող առարկաների միջև օրգանական կապը և հետաքրքիր ու արդյունավետ դարձնեն դասերը, գործադրեն ուսուցման ռացիոնալ ձևեր, մեթոդներ ու հնարներ: Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկելով դասալսումների արդյունքները, Մանդինյանը մատնանշում է, որ ուսուցիչները դասերին նախապատրաստվելիս, պետք է անընդհատ որոնումներ կատարեն, ընտրեն ուսուցման արդյունավետ մեթոդներ (ուսուցչի գիտելիքների շարադրման, զրույցի, ցուցադրման, ինքնուրույն աշխատանքի, վարժությունների և այլն), հնարներ, միջոցներ՝ դասն ավելի հետաքրքիր և արդյունավետ կազմակերպելու համար:

Այսպիսով, իր տեսչության շրջանում Ս. Մանդինյանի կազմած և թեմական դպրոցի մանկավարժական խորհրդում ընդունված վերոհիշյալ մանկավարժական դրույթները լրջորեն օգնեցին դպրոցում աշակերտների առաջադիմությունը (նաև օրիորդաց և ծխական դպրոցներում) բարձրացնելու գործին, նպաստեցին ուսուցիչների մանկավարժական ստեղծագործական աշխատանքներին:

Այդ դրույթների մի զգալի մասն իրենց թարմությունը չեն կորցրել նույնիսկ ժամանակակից դպրոցում: Գտնում ենք, որ յուրաքանչյուր ուսուցչի համար ուսանելի կլինեն Մանդինյանի մշակած մանկավարժական պահանջները և դրանք պետք է ստեղծագործաբար օգտագործվեն պրակտիկ գործունեության ընթացքում:

Համբարձում Առաքելյան (1855-1918թթ.): Հայտնի հասարակական գործիչ, հրապարակախոս, գրող, բարերար, Արցախի կրթական գործի, մշակույթի պատմության մեջ աչքի ընկած դեմքերից մեկը: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքի՝ Շուշիի, թեմական դպրոցում, այնուհետև տեղափոխվել է Գյուլզադյանի դպրոց: Այստեղ նա ձեռնամուխ է լինում մի շարք լեզուների ուսումնասիրությանը և 1874թ. վերադառնում հայրենի քաղաք: Այդ ժամանակ Արցախի կրթական, մշակութային կյանքում սկսվել էր լուսավորչական մի ակտիվ շարժում՝ թեմական, օրիորդաց, ծխական դպրոցների ներքին կյանքի վերափոխումների ոլորտում, ինչպես նաև գրատպության, պարբերական մամուլի, արվեստի և մշակույթի այլ բնագավառներում[36]: Նրա հայրենանվեր ու եռանդուն գործունեությունը նշանավորվել է մի շարք մշակութալուսավորչական նախաձեռնությունների ոլորտում: Բոլոր միջոցներով նրան աջակցում էր հայ մշակույթի ականավոր գործիչ, Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Խորեն Ստեփանեն, որը Թիֆլիսից բերում էր անհրաժեշտ տպագրական սարքավորումներ և Շուշիի հոգևոր հայրերի տպարանում հրատարակում «Հայկական աշխարհ»[37] գրական-մանկավարժական ամսագիրը: Ամսագրի առաջնորդողներում և հրապարակախոսական ու գիտահանրամատչելի մի շարք հոդվածներում Հ. Առաքելյանն արծարծում էր հայ իրականությանը վերաբերող զանազան կենսական ու ցավոտ

36. Լեո, նշվ. աշխ., էջ 374:
37. «Ստեփանե», «Հայասեր», «Իշխան Բագրատունի», Թիֆլիսեցի հայ և այլ ստորագրություններով Խ. Ստեփանեն հաճախակի հանդես է գալիս պարբերական մամուլում:

խնդիրներ, մերկացնում հայ իրականության խոցելի կողմերը, մատնանշում հայ ժողովրդի այս հատվածի՝ որպես ազգության մի մասի գոյության պահպանման նախապայմանները, նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման ուղիները:

1880-ական թվականներին Արցախի մշակույթի նոր սերնդի գործիչների մեջ Համբարձում Առաքելյանը հանդես եկավ ամենից ավելի արմատական պահանջներով և փայլուն հիմնավորեց հասարակ ժողովրդին լուսավորելու հարցերը: 1877-1882թթ. զբաղեցնելով Շուշիի թեմական դպրոցի տեսչի պաշտոնը, նա ազգային գործում բացառիկ տեղ է հատկացնում լուսավորությանը՝ գտնելով, որ դրանով է զարգանում ազգային մշակույթը, ազգային լեզուն: Ըստ նրա՝ լուսավորության հիմնական օջախը դպրոցն է, որտեղ հայ սերունդն իր կրթությունը պետք է ստանա մայրենի լեզվով և ազգային ոգով: Նա համամիտ էր «Հյուսիսափայլի» մտավորականության՝ Նազարյանցի և Նալբանդյանի գաղափարներին, հայ ժողովրդի լուսավորությունը, առաջադիմությունը, ազգային կյանքի վերանորոգությունը պետք է սկսվի ժողովրդական դպրոցից: Այդ նկատառումով էլ Համբարձում Առաքելյանը նախանձախնդիր եղավ ոչ միայն բարձրացնելու դպրոցական ցանցի ընդլայնման խնդիրը, այլև մտահոգվելու դպրոցների համար նյութական միջոցներ հայթայթելու հարցով: Այդ շրջանում Արցախի ժողովուրդը դեռևս չուներ գոյության պահպանման տնտեսական աղբյուր, իսկ առանձին նվիրատվություններն ամբողջությամբ չէին բավարարում դպրոցների ծախսերը, ինչի պատճառով դրանք հաճախ փակվում էին:

Մշակութային գործիչը, եռանդուն գործունեություն ծավալելով, հանձն առավ հիմնադրել Կովկասի հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղը Շուշիում (1881թ.)[38], որի վարչության նախագահն ու գանձապահ-քարտուղարը Լեոն էր: Հ. Առաքելյանի հորդորներով Շուշիի հասարակության ներկայացուցիչներն ակտիվ մասնակցություն են ունեցել՝ նվիրատվություններ, հանգանակություններ և այլ միջոցառումներ կազմակերպելու գործին:

Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձուների խորհրդի նիստում (1881թ. ապրիլին)[39] Հ. Առաքելյանը նշում է, որ հայկական դպրոցների բացման ու պահպանման հետ կապված ամենադժվարին խնդիրը նյութական-դրամական միջոցների հարցն է, ուստի և այդ միջոցները պետք է հայթայթի ինքը՝ ժողովուրդը, նրա առաջադեմ մտավորականությունը՝ նվիրատվությունների և հանգանակած գումարների միջոցով: Նրա այս հորդորներին արձագանքեց Արցախի ամբողջ հայությունը, ինչը դրական արդյունք տվեց:

Համբարձում Առաքելյանի ձեռնարկումներից էր նյութական միջոցների տրամադրումը նոր պարբերականի՝ Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» գրական ժողովածուի հրատարակությանը: Համբարձում Առաքելյանի մշակութային, լուսավորչական, հասարակական-քաղաքական գործունեությունը ծավալվում է հատկապես 20-րդ դարի առաջին տասնամյակներին: 1889թ. բնակություն հաստատելով Թիֆլիսում, նա վարում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության քարտուղարի (1894-1900թթ.), այնուհետև ազգային հոգաբարձության խորհրդի նախագահի պաշտոնը (1900-1906թթ.), ընտրվում Ռուսաստանի առաջին (1906թ.) և երկրորդ (1907թ.) պետական դումաների անդամ, 1908թ.-ից՝

38. Տե՛ս Լեո, Երեսնամեակ բարեգործական ընկերութեան Կովկասում (1811-1911թթ.), էջ 18:
39. «Տեղեկագիր», Երևան, 1894թ., էջ 77:

«Մշակ» թերթի խմբագիր, 1913թ.՝ «Արոր» ամսագրի խմբագիր, 1915թ.՝ ստեղծում ու գլխավորում է հայ գաղթականներին օգնող հանձնաժողովը, հիմնադրում է նաև «Հայ ազգաբնակչության մեջ գրագիտություն տարածելու ընկերություն»:

Արցախի մշակութային կյանքի կարևոր իրադարձություններից էր Համբարձում Առաքելյանի և հայ մտավորականության կարող ուժերի նախաձեռնությամբ կազմակերպված հայ գրերի 1500 և հայ տպագրության 400-ամյակների տոնակատարությունները, որոնք մեծ հանդիսավորությամբ նշվեցին 1912թ. Արցախի մշակութային կենտրոն Շուշիում, նրա գավառներում և առիթ դարձան գիտական նոր ուսումնասիրությունների ու գեղարվեստական գործերի հրապարակ գալուն:

Բազմաբովանդակ էին Հ. Առաքելյանի գործունեության ոլորտները: Հայ գրականության պատմության ու զարգացման հարցերը մշտապես գտնվել են նրա ուշադրության կենտրոնում: Նրա բեղուն գրչին են պատկանում «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը» (Վենետիկ, 1911թ.) արժեքավոր մանկավարժական աշխատությունը, Շուշիում հրատարակված պարբերականներում լույս տեսած բազմաթիվ մանկավարժական հոդվածներ, գրախոսականներ, մշակութային կյանքն արտացոլող հրապարակումներ և այլ բնույթի նյութեր:

Համբարձում Առաքելյանն իր բազմաբովանդակ գործունեության տարիներին անգնահատելի ծառայություն մատուցեց Արցախի մշակույթի զարգացմանը:

<u>Նիկողայոս Տեր-Ավետիքյան (1856-1924թթ.):</u> Գրականագետ, մամուլի անխոնջ մշակ, մանկավարժ, ով զգալի ներդրում ունի Արցախի XIX դարի 80-ական թվականների գրական ու մանկավարժական մտքի զարգացման գործում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի Շուշի քաղաքի թեմական դպրոցում, ապա ավարտել էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1873-1876թթ.) և զբաղվել ուսուցչությամբ, դասավանդել հայոց, ռուսաց լեզուներ, հայ գրականություն, պատմություն, բնագիտություն և այլ առարկաներ: Տեր-Ավետիքյանը վարել է նաև Արցախի թեմի դպրոցների տեսչի պաշտոնը (1879-1880) և իր ամբողջ ջանքերը նվիրել երկրամասի դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացմանը: Հմուտ մանկավարժը Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում աշխատելու տարիներին, որպես տեսուչ և հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի ուսուցիչ, իր շուրջն է համախմբում փորձառու ուսուցիչներին՝ իրականացնում գործնական մի շարք ձեռնարկումներ.

- կարգուկանոն է հաստատում դպրոցական կյանքում,
- ճշգրտում է ծխական, օրիորդաց դպրոցներում ուսումնական աշխատանքների կազմակերպման ժամկետը (4 ժամ),
- կարգավորում է ուսումնական պլաններում ներառված առարկաների դասավանդման հաջորդականությունը,
- ճշգրտում ուսումնական առարկաների բաշխումը համապատասխան մասնագետների և որակի,
- մանկավարժական խորհրդի որոշմամբ վերացնում է ծխական դպրոցներում դեռևս կիրառվող խստագույն պատժաձևերը, առաջնակարգ տեղ տալիս երեխայի խրախուսման մանկավարժական լավագույն մեթոդին և այլն:

Իր տեսչության շրջանում Ն. Տեր-Ավետիքյանը որոշակի դեր խաղաց Արցախի կրթական գործի զարգացման բնագավառում: Նա ցանկանում էր հայ դպրոցը տեսնել կարգավորված վիճակում, անընդհատ որոնումների ու պրպտումների մեջ էր, անհանգստանում էր Արցախի թեմի դպրոցների անմխիթար վիճակով: Մի առիթով նա ընդգծել է, որ նույնիսկ թեմական դպրոցը ռեալական ուսումնարանի համեմատ բարեկարգ վիճակում չէ, անընդհատ փակվում, բացվում է, որակյալ

մանկավարժական կադրերը տեղափոխվում էին ուրիշ քաղաքներ կամ ռեալական ու քաղաքային ուսումնարաններ: «Քնար խոսնակի» էջերում հանդիպում ենք նրա բազմաթիվ հոդվածների՝ նվիրված Արցախի կրթական կյանքին: Իր հոդվածներում Ն. Տեր-Ավետիքյանը մեծ ուշադրություն էր դարձնում ազգային կրթությանը, հայ ժողովրդի լուսավորությանը, հայ մանուկների կրթության ու դաստիարակության գործին: Նրա գրականագիտական, մանկավարժական բնույթի հոդվածներում, ժողովածուներում կարմիր թելի պես անցնում է այն կարևոր սկզբունքը, թե հայ մանկանը պետք է ապրել տալ հայի անցյալն ու ներկան, «հայի ոգով» պետք է կրթել նրան, դասավանդման ոչ միայն լեզուն, այլև բովանդակությունը պետք է ազգային՝ հայկական լինեն: Հիշենք «Հյուսիսափայլի» խմբագիր Ստեփանոս Նազարյանցի ուսանելի դրույթն այն մասին, որ ազգային գոյության, նրա պահպանության ամենագլխավոր գործոնը հայոց լեզուն է. «Հայոց ազգի տունը պիտի և կարող է շինվել նրա լեզվի շինությամբ», «Հայի համար յուր լեզուն պարտական է համարել յուր ամենասուրբ բանը, յուր աչքի լույսը, յուր սրտի արյունը»…[40] Ըստ Նիկ. Տեր-Ավետիքյանի՝ ազգաշինության գործում բացառիկ է լուսավորության դերը, դրանով է զարգանում ազգային մշակույթը, ազգային լեզուն:

Ն. Տեր-Ավետիքյանի ժամանակակից Սեդրակ Մանդինյանը, դպրոցը համարելով ուսուցման ու դաստիարակության կարևոր կրթատուն, ձգտում էր, որ այն դառնա իրոք ազգային հաստատություն[41]: Ս. Մանդինյանը ցանկանում է հայ դպրոցը տեսնել որպես ազգային դպրոց: Այդ են ընդգծում նաև Ստ. Նազարյանցը, Մ. Նալբանդյանը, Ղ. Աղայանը, Ս. Շահազիզը, Հ. Թումանյանը և ուրիշներ: Հայոց առաջին ուսուցչական համագումարում[42] (1882թ. օգոստոսի 20) Ղ. Աղայանը, խոսելով դպրոցն ազգային դարձնելու մասին, նշում է, որ կան երեք կարևոր միջոցներ, որոնք որոշում են դպրոցի բովանդակությունը: Դրանք են՝ առաջին հերթին ուսուցչական լավորակ կադրերը, որոնք պետք է տիրապետեն և հայերենին, և ռուսերենին: Ազգային դպրոցը պահանջում է, որ աշակերտի հայերենը կարևոր և գեղեցիկ հայերեն լինի, իսկ ռուսերենը՝ կանոնավոր և գեղեցիկ ռուսերեն: Դրա հետ մեկտեղ դասավանդման մեթոդը լինի կյանքում ստուգված և արդյունավետ, իսկ դասագրքերը՝ խելացիորեն մշակված և սովորողների տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան: Ահա այն պահանջները, որ առաջադրում էին հայ ականավոր մանկավարժները դպրոցին, որոնց առկայության դեպքում մեր դպրոցը կարող է դառնալ ազգային դպրոց: Այդ պահանջները համահունչ են նաև մեր ժամանակներում: Ն. Տեր-Ավետիքյանը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության, ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպան էր, ինչպես Աբովյանը, Ալամդարյանը, Նալբանդյանը և ուրիշներ:

Արցախի կրթական գործի զարգացման նվիրյալ Ն. Տեր-Ավետիքյանը ջերմորեն պաշտպանում է վերը նշված և այլ առաջավոր գործիչների գաղափարներն ազգային լեզվի պահպանման, ազգային դպրոցի զարգացման մասին: Նա ևս ընդգծում էր, որ հայ ժողովրդի լուսավորության առաջին և հիմնական օջախն ազգային դպրոցն է: Այդ միտումով էլ Տեր-Ավետիքյանը Շուշիի թեմական դպրոցի մանկավարժական ժողովի մի նիստում[43] ունեցած իր ելույթում նշում է, որ Արցախի թեմի բոլոր գյուղերում, ինչպես նաև Նուխիի գավառի հայկական գյուղերում

40. Ար. Շավարշյան, Հայ մանկավարժներ, գիրք «Ա», էջ 181-182:
41. Լեո, նշվ. աշխ., էջ 402-403:
42. «Գործ», 1882թ., թ. 1, էջ 89:
43. Լեո, նշվ. աշխ., էջ 384-385:

պետք է բացվեն ծխական դպրոցներ և գրագիտությունը դառնա ժողովրդի բոլոր խավերում համատարած: Լեոն վկայում է, որ թեմական դպրոցի մանկավարժական ժողովում Ն. Տեր-Ավետիքյանն իր ելույթում անդրադարձել է դպրոցի ներքին կյանքին վերաբերվող հարցերին: Նա նշում է, որ Արցախի թեմում (նկատի ունենք նաև Նուխիի գավառի հայկական դպրոցները) բարեկարգ դպրոցներ ստեղծելու համար անհրաժեշտ են որոշ պայմաններ՝ հաջող դասագրքեր ու ձեռնարկներ բոլոր դասարանների համար, նաև ուրիշ կարևոր պարագաներ և կահավորանք, բայց ամենակարևորը և ամենավճռականը ուսուցիչներին և դպրոցները նյութական միջոցներով ապահովելու խնդիրն է[44]:

Ինչպես նշել ենք, Արցախի կրթական գործիչները (Շանշյան, Պռոշյան, Խ. Ստեփանե, Ս. Մանդինյան և ուրիշներ) առաջնային էին համարում թեմական դպրոցում ուսուցիչների համար մանկավարժական դասընթացների կազմակերպումը: Ն. Տեր-Ավետիքյանը նույնպես տոգորված էր այդ գաղափարով: Նա ոչ միայն ծրագիր է մշակում, այլև, որպես թեմական դպրոցի տեսուչ, իր վրա է վերցնում այդ դասընթացներն իրականացնելու զանազան հոգսեր ու պարտականություններ: Նա ողջունում է Ս. Մանդինյանի նախախաձեռնությունը, որի արդյունքում Շուշիի թեմական դպրոցում ստեղծվել է վերջին՝ մանկավարժական մասնագիտական դասարան, որն ավարտողներն իրավունք ունեն դասավանդելու թեմի ծխական դպրոցներում:

Իր տեսչության շրջանում Տեր-Ավետիքյանը թեմական դպրոցի հոգաբարձությանն է ներկայացնում մի նախագիծ՝ թեմական, օրիորդաց, ծխական դպրոցներում ուսումնական աշխատանքները վերակառուցելու նպատակով: Նախագծում նշվում է, որ Արցախի թեմի և Նուխիի գավառի հայկական դպրոցները դեռևս չունեն ուսումնական աշխատանքի պլանների ու ծրագրերի միակերպություն, ինչը խոչընդոտում է դպրոցական գործի զարգացմանն ու նրա ուսումնադաստիարակչական աշխատանքի խելացի կազմակերպմանը, նաև պահանջում է ստեղծել յուրաքանչյուր տիպի դպրոցի համար միասնական ուսումնական պլան ու ծրագիր, որի համաձայն՝ թեմական դպրոցի առաջին և երկրորդ դասարաններում շաբաթական ծանրաբեռնվածությունը կազմի 25-26 ժամ, բարձր դասարաններում՝ 32-33 ժամ, իսկ ծխական դպրոցներում՝ 25-27 ժամ: Տեսուչն առաջարկում է. այն դպրոցներում, որտեղ անցնում են մարմնամարզություն, այդ առարկայի համար հատկացվի 2 ժամ, իսկ որտեղ այն չէին անցնում՝ հատկացվի 25 րոպե: Դպրոցական բոլոր տեսական ու գործնական պարապմունքները՝ դասամիջոցներով հանդերձ, 5 ժամվա տևողությունից չպետք է անցնեն և օրական դասերի թիվը 5-ից ավելին չպիտի լինի, դասի տևողությունը, ինչպես ընդունված է ծխական դպրոցների կանոններում, սահմանվում է 45 րոպե: Թեմական և ծխական դպրոցների դասընթացներին վերաբերող այդ պահանջներն արտացոլում են գտնել թեմական և ծխական դպրոցների վերաբերյալ ընդունված (1879-1880թթ.) կանոններում:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի թեմում դպրոցական գործի կարգավորումը դարձել էր անհետաձգելի խնդիր: Առարկայական ուսումնական պլաններ ու ծրագրեր մշակելու և ընդհանուր քննարկման դնելու համար շատ դպրոցներում ստեղծվում էին հանձնաժողովներ, մանկավարժական խորհուրդներ, հոգաբարձուական ժողովներում քննարկում էին ուսումնական պլանների, ծրագրերի, ուսման բովանդակության,

44. Նույն տեղում:

տարբեր առարկաների դասավանդման հետ կապված շատ հարցեր: Այդ հարցերին է անդրադառնում Տեր-Ավետիքյանը ժամանակի պարբերական մամուլում լույս տեսած իր հոդվածներում, մեթոդական ձեռնարկներում, ուսուցիչների համար կազմված ուղեցույցներում:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց Ն. Տեր-Ավետիքյանը զբաղվում էր նաև գրական աշխատանքով և հրատարակչական գործով: 1881թ. ապրիլին նա Շուշիում՝ Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում, հրատարակում է «Քնար խոսնակ» գրական ժողովածուն (ունեցել է միայն մեկ համար): Ինքնատիպ այդ հրատարակության մեջ զետեղվել են ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական գործեր ռուս և եվրոպական դասականներից՝ Պուշկինից, Լերմոնտովից, Գյոթեից, Շիլլերից, Բայրոնից և այլ հեղինակներից:

Սա պատահական երևույթ չէր. ժողովածուի հեղինակը, լինելով կրթված, զարգացած մարդ, գործերն ընտրելիս առաջին հերթին հաշվի էր առնում դրանց գաղափարական բովանդակությունը, քաղաքական իմաստը: Նշենք, որ Ն. Տեր-Ավետիքյանը նոր դեմք չէր գրական աշխարհում: 1883 թվականից սկսած՝ նա աշխատակցում էր «Աղբյուր» ամսագրին: Լ. Մելիք-Ադամյանի հետ նա «Փայտաշեն խրճիթից մինչև Սպիտակ տունը» ստեղծագործությունը փոխադրում է հայերենի և հրապարակում ամսագրի 4-րդ համարում: Նրա գրչին են պատկանում 12 անուն գրքեր, այդ թվում՝ «Վերածնության դար» գրական երկը, «Տեղագրական նամականի», որ լույս տեսավ 1888թ. Թիֆլիսում՝ Մ. Ռուտինյանի տպարանում:

Ուշագրավ է նրա «Պուշկինի արձանը» բանաստեղծությունը՝ գրված 1880թ. հուլիսի 6-ին, Մոսկվայում: Հեղինակը շատ բարձր է գնահատում ռուս մեծ բանաստեղծի ստեղծագործությունները՝ համարելով դրանք բացառիկ քանքարի և շռայլ տաղանդի արտահայտություններ: Ժողովուրդն իր չխամրող սերը պոետի նկատմամբ արտահայտել է ջերմորեն: Հայ հեղինակը նրան անվանում է հայրենի աշխարհի «ազատության արուսյակ»:

Այսպիսով, վերը շարադրվածից կարող ենք եզրակացնել, որ Ն. Տեր-Ավետիքյանն իր մանկավարժական գործունեության հարուստ փորձով և գրական-ստեղծագործական աշխատանքով որոշակի դեր խաղաց ուսումնասիրվող ժամանակաշրջանի Արցախի դպրոցի ու մանկավարժական մտքի, ինչպես նաև գրականագիտական մտքի զարգացման ասպարեզում:

<u>Սիմեոն Գասպարի Հախումյան (1855-1905թթ.):</u> Անվանի հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ, թարգմանիչ, մանկավարժ, ով իր բացառիկ տեղն ունի XIX դարի երկրորդ կեսի Արցախի կրթական գործի երախտավորների շարքում: Ծնվել է Շուշի քաղաքում: Սկզբնական շրջանում աշակերտել է Պետրոս Շանշյանին, ավարտել թեմական դպրոցը, այնուհետև սովորել (1875-1878թթ.) Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Նա չի բավարարվել միջնակարգ կրթությամբ և խորամուխ է եղել առանձին գիտությունների մեջ, հարուստ գիտելիքներ ձեռք բերել, մասնավորապես, հայկական, ռուսական և արտասահմանյան գրականությունների գծով, տիրապետել մի քանի լեզուների:

Սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետում (1900-1902թթ.): Ս. Հախումյանն իր գործունեությունը նախապես ծավալել է մանկավարժության ասպարեզում: 1879թ. 24-ամյա Ս. Հախումյանը եղել է Կարսի հայկական դպրոցի ուսուցիչն ու տեսուչը, իսկ 1880-1882թթ.՝ հայրենի Շուշի քաղաքի թեմական, օրիորդաց դպրոցներում, ռեալական ուսումնարանում դասավանդել հայոց և ռուսաց լեզուներ:

Ս. Հախումյանը եռանդուն ուսուցանող էր, նրա գործադրած մեթոդները ցանկալի արդյունք էին տալիս: Նա շատ հաճախ դժգոհում էր իր աշակերտներից՝ նրանց չառաջադիմելու պատճառը տեսնելով ծուլության, անընդունակության մեջ: Նա ստեղծագործաբար մշակում է ուսուցման գործընթացն ակտիվացնող այն ուղիները, եղանակները, որոնք կարող են խթանել երեխաների առաջադիմությունը: Թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի մանկավարժական ժողովի նիստերին ներկայացնում էր խիստ կարևոր նշանակություն ունեցող մանկավարժական առաջարկություններ.

1. աշակերտների թույլ պատրաստությունը նկատի ունենալով՝ այսուհետև պարտադիր չհամարել ծրագրի լրիվ անցնումը,

2. ցանկալի է պակաս չափով անցնել, որ անցածը հիմնավոր լինի, անհրաժեշտության դեպքում նորից ու նորից բացատրություններ տալ աշակերտներին, հասկացնել՝ նրանց գիտակցության մեջ մի նոր բան ավելացնելու պայմանով, բայց ոչ թե շտապողականություն հանդես բերել և արդյունքները ոչնչի հավասարեցնել,

3. առանձնապես ուշադրություն դարձնել բոլոր աշակերտների պատմելու եղանակի վրա: Չբավարարվել երկրորդական, մանր-մունր հարցերի պատասխաններով, պահանջել հասկացածը բացատրել կապակցված, ամփոփ մտքերով, գեղեցիկ ձևով,

4. աշակերտների անհաջող պատմածը կրկին պատմել տալ, մինչև որ ուսուցիչը գոհ մնա, որպեսզի աշակերտը հասկանա. հասկացածը գեղեցիկ ոճով բացատրել կարողանալը դպրոցի և ուսուցչի համար մեծ նշանակություն ունի,

5. Չպետք է բավարարվել միայն բացատրություններ տալով, այլ պետք է հետևել, որ ուսուցչի բացատրածը դառնա աշակերտի սեփականությունը,

6. ուսման մեջ միշտ պետք է տարբերել երկու հանգամանք, որոնցից յուրաքանչյուրն առանձին ժամանակ է պահանջում. այլ բան է նյութը աշակերտին հաղորդելու պահը, որ ամեն մի ուսուցիչ էլ կատարում է, այլ բան է հաղորդած գիտելիքներն աշակերտի սեփականությունը դարձնելը: Ահա այս վերջին հանգամանքի վրա են Ս. Հախումյանը և ժամանակի հայ անվանի մանկավարժները (Ղ. Աղայան, Ս. Մանդինյան, Պ. Շանշյան, Ա. Բահաթրյան և ուրիշներ) ուսուցիչների ուշադրությունը հրավիրում և պահանջում զարգացնել այն,

7. անհրաժեշտ է ուսուցիչների մեջ ստեղծել աշխատանքի միասնականություն և փորձի փոխանակում: Այդ նպատակով նման առարկաներ դասավանդող ուսուցիչները պետք է խորհրդակցեն միմյանց հետ, ունեցած պակասը փոխադարձաբար լրացնեն, միջոցներ որոնեն հաջողությունների հասնելու համար, հաճախեն միմյանց դասերին, ավագ դասարանի ուսուցիչը կրտսերին հայտնի նրա պակասությունները, որպեսզի նա վերացնի դրանք, կրտսերների համար պարզի, թե ինչ է պակասում և ինչ պահանջներ կան,

8. ցանկալի է, որ դաստիարակները ծնողների և խնամակալների հետ հաճախակի հանդիպումներ ունենան անհրաժեշտ խորհուրդներ տալու և ծնողների դիտողությունները լսելու համար,

9. Գոյություն ունեցող ուսուցչական ծանուցումների մատյանը, որտեղ պետք է գրվեն աչքի ընկնող ծույլերի անունների և անհրաժեշտ տեղեկությունները հայտնվեն դպրոցական վարչությանը, չի գործածվում,

10. անհրաժեշտ է ստեղծել սերտ կապ ուսուցիչների և դպրոցի ղեկավարության միջև, ամեն ինչ ժամանակին հաղորդել ղեկավարությանը, որպեսզի նա էլ իր միջոցները գործադրի, օգնի, խորհուրդներ տա: Սակայն ոմանք սխալ ձևով

խուսափում են այսպիսի հարաբերություններից[45]:

Սեդրակ Մանդինյանի անձնական արխիվից[46] տեղեկանում ենք, որ անվանի մանկավարժը Երևանի հայոց թեմական դպրոցի մանկավարժական ժողովում գրեթե նույն առաջարկություններն էր անում:

Վերոհիշյալ մանկավարժական դրույթները լրջորեն օգնեցին թեմական և օրիորդաց դպրոցների աշխատանքների բարելավմանը և նպաստեցին ուսուցիչների մեթոդա-մանկավարժական պատրաստվածության որակի բարձրացմանը: Նրան հատուկ էր բարելավել մայրենի լեզվի ուսուցումը դպրոցներում, վերականգնել և զարգացնել ազգային ավանդույթները, ճանապարհ հարթել դպրոցի ժողովրդականացման համար:

Ս. Հախումյանը Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին հսկայական աշխատանք է կատարել դպրոցական ծրագիրը բարելավելու և միասնական դարձնելու, կրթական համակարգում հաջորդականություն մտցնելու, ինչպես նաև մանկավարժական առաջավոր մեթոդների կիրառման և ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Նրա նախաձեռնությամբ Շուշիում ձևավորվում ու զարգանում է նաև գրադարանային գործը: Գանձասարի, Դադի, Ամարասի, Գտչա և այլ վանքերից, ինչպես նաև էջմիածնից, հայկական գաղթօջախներից (Մոսկվա, Նոր Նախիջևան, Թիֆլիս, Բաքու և այլն) հավաքվում են ձեռագրեր մատյաններ, հայերեն և օտար լեզուներով հայագիտական բազմաթիվ գրքեր և պարբերական մամուլի («Հյուսիսափայլ», «Արարատ», «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Կռունկ Հայոց աշխարհի», «Դաստիարակ», «Դպրոց», «Հայկական աշխարհ», «Քնար-խոսնակ», «Փորձ», «Արձագանք» և այլն) հարուստ հավաքածուներ, որոնք իրենց արժեքով ու եզրակացությամբ գրավում են թեմական, օրիորդաց դպրոցների, ռեալական ուսումնարանի շատ ու շատ սովորողների, Շուշիի հայ հասարակության ուշադրությունը: Հայրենասեր գործիչը թեմական դպրոցում կազմակերպում է «Ընթերցասիրաց թանգարանային ընկերութիւն», որի անդամներն (թվով 15 հոգի) իրենց նվիրատվությունների միջոցներով գյուղական դպրոցներում ստեղծում են գրադարան-ընթերցարաններ, տրամադրում իրենց հավաքած գրքերից, պարբերականներից մեկական օրինակ:

Թեմական դպրոցի պատմությանը նվիրված Լեոի աշխատությունից տեղեկանում ենք, որ Ս. Հախումյանը թեմական դպրոցի մանկավարժական ժողովում առաջարկություններ էր անում աշակերտների քննությունների կազմակերպման, գիտելիքների ստուգման, գնահատման, ուսման մեջ իրենց լավ դրսևորած աշակերտներին պարգևատրելու մասին: Այսպես, Հախումյանն առաջարկում է թեմական և օրիորդաց դպրոցներում ուսումնական տարվա վերջում հատուկ հանձնաժողովի կողմից կազմակերպել հրապարակային քննություններ, որին ներկա լինեն նաև դասավանդող ուսուցիչները, ծնողները, հասարակության և ուրիշ դպրոցների ներկայացուցիչները: Հետագայում թեմական դպրոցի շրջանավարտները (Մ. Շամիրյան, Տեր-Մովսիսյան, Հ. Մամիկոնյան և ուրիշներ) իրենց հուշերում գրում են, որ հրապարակային քննությունները վերածվում էին տոնախմբության: Յուրաքանչյուր քննություն սկսվում էր և ավարտվում երաժշտությամբ: Դպրոցի սաները տարբեր լեզուներով ճառեր, բանաստեղծություններ էին արտասանում՝ դրսևորելով իրենց գիտելիքները և կարողությունները: Թեմական դպրոցում քն-

45. «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի մասին համառոտ տեղեկագիր» (1851-1912), էջ 58:
46. ՀԳԱԱ Սեդրակ Մանդինյանի ֆոնդ, թ. 4, «Թեմական դպրոցի արձանագրությունների գիրք»:

նությունների ժամանակ իրենց դրսևորած լավագույն աշակերտները պարգևատրվում էին գրքերով, նկարներով: Այն ժամանակ թեմական, օրիորդաց և ծխական դպրոցներում գոյություն ունեին աշակերտների գիտելիքների գնահատման հետևյալ նիշերը՝ «5», «5/5», «5/4», «4-3», «+3», «2», «2-»: Դպրոցներում գնահատվում էր ոչ միայն առաջադիմությունը, այլև վարքը:

Լեոի վերոնշյալ աշխատության մեջ, ինչպես նաև «Գործ» ամսագրում հրապարակած հոդվածներում կրկին հանդիպում ենք Ս. Հախումյանի առաջավոր, հումանիստական մանկավարժական հայացքներին: «Ուսուցչի պարտավորությունը» խորագրով հոդվածում գրվում է, որ ուսուցչի պարտականությունը ոչ միայն երեխաներին գիտելիքներ հաղորդելն է, այլև իր կողմից քարոզվող «մարդավայել քաղաքավարության» և ամեն տեսակ առաքինությունների խոսուն ու կենդանի օրինակ լինելը: Հատկապես փոքրերին կարելի է համոզել ոչ այնքան խոսքով, որքան բարի գործի օրինակով, քանզի նրանք խիստ տպավորվող են թե՛ լավի և թե՛ վատի նկատմամբ[47]: Ուսուցչի տված խորհուրդներից մեկն էլ այն է, որ նա պետք է հայրաբար սիրի իր բոլոր աշակերտներին, նրանց հետ պետք է վարվի ոչ ավելորդ խստությամբ և ո՛չ էլ նրանց երես տալով ու սանձանձարկ դարձնելով: Անթույլատրելի է աշակերտներին հայհոյել նախատական խոսքերով: Ս. Հախումյանը նաև խորհուրդ է տալիս ուսուցիչներին, որ հաճախակի շփվեն աշակերտների հետ, ավելի լավ ճանաչեն նրանց, հաճախեն նրանց տները՝ ծանոթանալու ընտանեկան պայմաններին, կազմակերպեն զբոսանքներ ու էքսկուրսիաներ:

Աշակերտներն էլ դասերից դուրս պետք է մոտիկից շփվեն իրար հետ, իսկ դրա համար պետք է ստեղծել ընդհանուր զբոսանքներ[48]: Ուշագրավ է Հախումյանի ուսանելի դրույթն այն մասին, որ ուսուցչի գործունեության հաջողությունը պետք է հիմնված լինի աշակերտի հետ ունեցած փոխհարաբերությունների ճիշտ և համակողմանի կազմակերպման վրա: Աշակերտն իբրև անհատականություն ունի իր հոգեկան ինքնատիպ ներաշխարհը, որը երբեք չպետք է անտեսվի ուսուցչի կողմից:

Այսպիսով, ամբողջ ասվածից կարելի է եզրակացնել, որ Ս. Հախումյանը չափազանց կարևոր նշանակություն էր տալիս աճող սերնդի դաստիարակության գործում ուսուցչի դերին:

Բեղմնավոր մանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ Ս. Հախումյանը Շուշիում զբաղվում է նաև պարբերական մամուլի հրատարակման գործով: Նա փափագում էր ունենալ տպագիր օրգան՝ ոչ թե դրա միջոցով հեղինակություն ձեռք բերելու, այլ ժողովրդին օգտակար լինելու համար: Կովկասի փոխարքայության թույլտվությամբ 1882թ. Շուշիում սկսում է հրատարակվել նրա «Գործ» գրական, քաղաքական և ազգային հանդեսը (1882-1884թթ.):

Ամսագրում արծարծված բազմապիսի հարցերի հետ Ս. Հախումյանը առաջ է քաշում մանկավարժական առաջադեմ գաղափարներ՝ կանանց կրթության, դպրոցական գործն Արցախի թեմում կարգավորելու, դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու և այլնի մասին: Նա գտնում էր, որ ամեն մի բարեկիրթ և հասկացող հասարակություն, որն ունի իր սեփական ազգային կրթական հաստատությունները, պետք է հաշիվ պահանջի ուսումնական հաստատությունների գլուխ կանգնած անձանցից: «Գործ» ամսագրում Հախումյանը

47. «Գործ», 1882թ.:
48. Նույն տեղում:

պարբերաբար հրատարակում է թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի, եկեղեցական-ծխական դպրոցների ներքին կյանքին առնչվող բազմազան հոդվածներ՝ դպրոցների կառուցվածքի, դասարանական կազմի և աշակերտների քանակի, ուսուցման ու դաստիարակության առաջավոր մեթոդների կիրառման, թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում փորձնական դասերի կազմակերպման (Հակոբ Խոջամիրյանի, Սամվել Գյուլզադյանի, Գաբրիել Գյուլիքևխյանի, Ալեքսանդր Հովհաննիսյանի, Ներսես Աղասարյանի և ուրիշների մոտ), մանկավարժական ժողովներում քննարկվող աշակերտների առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

Լայն է եղել Ս. Հախումյանի հրապարակախոսական, լրագրողական, մանկավարժական գործունեությունը. աշխատել է Թավրիզի հայկական դպրոցներում (1883թ.), ղեկավարել Թիֆլիսի հայկական թատերախումբը (1895-1896թթ.), եղել է Բաքվի հայկական թատրոնի ռեժիսորը (1897-1898թթ.): Ս. Հախումյանի հրապարակախոսական-լրագրողական աշխատանքը սկսվում է «Մշակ» թերթից: Այստեղ նա հանդես է եկել 1885-1892թթ., «Տարազ» և «Աղբյուր» ամսագրերում՝ 1890-1892թթ., «Արձագանքում»՝ 1884-1887թթ., «Նոր դարում»՝ 1899թ. և այլուր:

Ս. Հախումյանը պարբերաբար ելույթներ է ունեցել ռուսական մամուլի էջերում, մասնավորապես “Новое обозрение”, “Тифлисский листок”, “Кавказ” և այլ թերթերում:

Նրա տաղանդը դրսևորվել է մանկավարժության, թատերական բնագավառներում: Ս. Հախումյանը տոգորված էր ազնիվ նպատակներով՝ օգտակար լինել հայրենիքին և ժողովրդին[49]:

Առանձին գրքերով հրատարակվել են Ս. Հախումյանի «Մանիկ» վիպակը (1889թ.), Էդգրեն Լեֆլերից, Պեր Գյունտ Իբսենից կատարած թարգմանություններ:

«Լումա» ամսագիրը, նրա մահվան առիթով բնութագրելով նրա կյանքն ու գործունեությունը, գրում է. «Հախումյանի արժանիքը ոչ թե այն է, որ նա երկար տարիներ գործել է իբրև լրագրող և հրապարակախոս, այլ որովհետև նրա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգի, անօրինակ և անձնվեր սեր դեպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականությունը, որովհետև նորա գրվածքները դյութիչ են, անկեղծ, սրտից բխած, տպավորիչ, սուր ու ջախջախիչ»[50]:

Ազգանվեր գործիչը մեծ ավանդ է ներդրել հայրենի երկրամասի ժողովրդի պատմության ու բազմադարյա մշակույթի հարցերի լուսաբանման գործում, որի հավաստիքը նրա թողած հարուստ պատմագիտական, հայ դպրոցի պատմությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություններն են:

<u>Տիգրան Հակոբջանի Նազարյան (1858-1926թթ.):</u> Հայտնի հրապարակախոս, խմբագիր, հրատարակիչ, հասարակական գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Դեռևս տեղի թեմական դպրոցում սովորելու տարիներին դրսևորել է նկատելի ընդունակություններ ինչպես ուսման, այնպես էլ լրագրության մեջ՝ խմբագրում ու ձեռագիր վիճակում հրատարակում էր աշակերտական խմորատիպ «Ծիածան», «Աշակերտ»[51] թերթերը, կատարում մի շարք հասարակական-քաղաքական աշ-

49. Մ. Մխիթարյան 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, էջ 186-187:

50. «Լումա», 1905թ., թ. 5:

51. Հետագայում այդ պարբերականները տպագրվում են Մ. Մահտեսու տպարաններում՝ «Ծիածան» (1916թ.), «Աշակերտ» (1917թ.):

խատանքներ, միաժամանակ թղթակցում «Հայկական աշխարհ» ամսագրին:

1876թ. թեմական դպրոցն ավարտելուց հետո պատանի Նազարյանը մեծ եռանդով նվիրվում է հասարակական-կազմակերպչական աշխատանքին: Նրա օգնությամբ կարգի է բերվում 60-ական թվականներից մոռացության մատնված քաղաքային գրադարանը, իսկ 1879թ. Շուշիում հիմնում է հրատարակչական գրասենյակ, որի առաջին հրատարակությունն էր մեզ արդեն հայտնի Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» ժողովածուն՝ հեղինակի ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններով: Ինքը՝ Նազարյանը, ռուսերենից թարգմանել ու հրատարակել է լեհ գրող Հենրիխ Սենկևիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, Ալֆոնս Դոդեի «Երկու մանրավեպը» (բնագրից) և այլն:

1880-ական թվականների սկզբին Տ. Նազարյանն Արցախում արդեն հայտնի էր իր գրական-հրապարակախոսական ու մշակութային գործունեությամբ: Նա ակտիվորեն մասնակցում է Ս. Հախումյանի «Գործ» ամսագրի հրատարակմանը՝ դառնալով հանդեսի հրապարակախոսական, գրական, մշակութային բաժինների ամենահիմնական հեղինակը և խմբագրության հաստատուն հենարաններից մեկը: Իսկ մինչև այդ նա իր լրագրային առաջին թղթակցությունները տպագրում է «Մշակ»-ում: «Լրագրական իմ թոթովանքը ես «Մշակ»-ի մեջ եմ սկսել»,[52]- նշել է նա: «Գործ» հանդեսում հրապարակված հոդվածներում Տ. Նազարյանը բացահայտեց իր հասարակական-քաղաքական մտահայեցողությունը և հրապարակախոսական սկզբունքները: Նա միաժամանակ իր շուրջն է համախմբում երիտասարդ մտավորականության կարող ուժերին (Սեդրակ Մանդինյան, Հակոբ Խոջամիրյան, Ալեքսանդր Հովհաննիսյան, օրիորդ Ոսկի Թավրիզյան և ուրիշներ), որոնց գործունեության շնորհիվ երկրամասում հայ հասարակական միտքը վերելք է ապրում: Նրանք հետևողականորեն մերկացրին ցարիզմի ազգային քաղաքականության արատները, հայ կյանքի առաջադիմությանը խոչընդոտող հետադիմությունն ու պահպանողականությունը՝ առաջադրելով ժողովրդական զանգվածների զարթոնքին ու առաջադիմությանը նպաստող կենսական խնդիրներ:

Կ. Նազարյանի սկսած օգտակար մշակութային նախաձեռնություններից է Շուշիում գրքերի հրատարակության բավարար մակարդակով կազմակերպումը: Նա ակտիվություն է հանդես բերում հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի ստեղծման գործում: Շուշիի տեղական վարչության միջոցով որոշում են Մ. Մահտեսու տպարանում հրատարակվելիք գրքերի ուղղությունն ու թեմատիկան, որի հիմնական նպատակն էր աշխատավորական զանգվածների համար լույս ընծայել օգտակար գրքեր, ընդարձակել նրանց մտավոր հորիզոնը, սեր առաջացնել դեպի գիտությունն ու լուսավորությունը:

Խրախուսանքի էր արժանի արվեստի բնագավառում Տիգրան Նազարյանի ձեռնարկած գործը: Երաժշտական մշակույթի զարթոնքի տարիներին ստեղծված միջավայրը Շուշիում դրական ազդեցություն ունեցավ Տիգրան Նազարյանի վրա: Նա վաղ մանկության և պատանեկության տարիներին սիրել է թատերական գործը: Թեմական դպրոցում սովորելու տարիներին ակտիվորեն մասնակցել է թատերական ներկայացումներին, հաճախ հանդես եկել նաև առանձին համերգներում և ձեռք բերել ճանաչում ու հարգանք: Նրա ստեղծագործական առաջին փորձերը՝ Շուշիում երիտասարդ կարող ուժերով համերգային նվագախմբի կազմակեր-

52. «Տարազ», 1912թ., թ. 5, էջ 108:

պումը, պիեսների[53] ինքնատիպ բեմադրումը թեմական, օրիորդաց դպրոցներում, արժանացել են հասարակության բարձր գնահատանքին: Մշակութային եռուն կյանքով ապրող Շուշիում, Արցախի մյուս գավառներում (նրա խումբը հաճախակի համերգներով հանդես էր գալիս գյուղերում) Տիգրան Նազարյանը լայն ճանաչում գտավ:

Հասարակական մեծ նշանակություն տալով հրապարակախոսությանը, Տիգրան Նազարյանը նպատակադրվում է աշխատել լրագրության ասպարեզում: 1881թ. հրատարակչական աշխատանքում փորձված, ազգային առաջադիմության ոգով տոգորված Նազարյանը գալիս է Թիֆլիս, հայ հասարակական մտքի զարգացման և մտավոր բախումների կենտրոնատեղին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայ ժողովուրդը համախմբվում էր առաջավոր դեմոկրատ մտավորականների շուրջը: Ժողովրդի կրթության, լուսավորության, հասարակական-քաղաքական կյանքի բարելավման հարցերը լայնորեն քննարկվում էին ժամանակի առաջավոր գաղափարների տեսանկյունից: Թիֆլիսում նա սերտ կապեր է հաստատում Միքայելյան արհեստագիտական ուսումնարանի ուսուցիչ Գաբրիել Միրզոյանի, նրա կնոջ՝ հայ մանկական թարգմանչական գրականության վետերան Նատալյա Տեր-Մարկոսյանի[54] ու նրանց շուրջը համախմբված առաջադեմ երիտասարդության հետ, որոնք նպատակադրվել էին ստեղծել մանկական գրականություն, ինչպես և մանկական «Աղբյուր» պարբերականը:

Տիգրան Նազարյանը հայ ժողովրդի ազատության հույսը կապում էր Ռուսաստանի հետ, իհարկե, ոչ ցարական, այլ ազատագրված Ռուսաստանի, խստորեն քննադատում ցարիզմի գաղութային քաղաքականությունը: Նա մասնակցում է 1908թ. Լիսաբոնում կազմակերպված գրականագետների, արվեստագետների և խաղաղության միջազգային ընկերության ցուցահանդեսին. ներկայացնում է հայ մատենագիրների լուսանկարները և նրանց երկերից մեկական հատորներ:

Լայն էր Տիգրան Նազարյանի լրագրողական-հրապարակախոսական գործունեությունը: Նա մտահոգվում էր ապագա հրատարակիչների ու լրագրողների պատրաստման գործով: Եվ այդ նպատակով դիմում է կառավարությանը՝ թույլտվություն խնդրելով երկու տարվա դասընթացներ բացել երիտասարդ լրագրողների համար: Նրա նպատակն էր մայրենի լեզվից բացի, նրանց սովորեցնել անգլերեն, իտալերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն և այլ լեզուներ, կազմակերպել հայ, ռուս, վրաց գրականության և պատմության, կովկասագիտության ու հոգեբանության դասընթացներ: «Մշակ»-ը 1912թ. հունիսի 29-ի համարում գրում է. «Տիգրան Նազարյանի նպատակն է՝ առանց ազգի խտրութեան տալ պրոֆեսիոնալ ուսում երկսեռ լրագրողներին»[55]:

Նա մեծ հոգատարություն է ցուցաբերում այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց գրական գործերով ցանկանում են օգնել Արցախի ժողովրդին և իրենց համեստ ավանդն են ներդնում երկրամասի բնակչության լուսավորության գործում:

XX դարի երկրորդ տասնամյակում Տիգրան Նազարյանի համար սկսվում է

---

53. Նրա «Ճըպատըդ քոլադ կտրի» և «Դալի ադաթներան» պիեսները բեմադրվել են նշված դպրոցներում, այնուհետև հրատարակվել 1887թ.: Տ. Նազարյանը Շուշիում գրել է հինգ գործողությունից բաղկացած «Արոզա» պիեսը, որը հրատարակվել է առանձին գրքով, 1912թ. Թիֆլիսում:

54. Նատալյա Տեր-Մարկոսյանը համարվում է «Հայերեն գրքի հրատարակության ընկերության» առաջին թարգմանչուհին և այդ «ընկերության» հիմնադիրներից մեկը: Այդ մասին տե՛ս «Աղբյուր», 1884թ., թ. 8-9, 2-րդ բաժին, էջ 31:

55. «Մշակ», 1912թ., 29-ին հունիսի:

հասարակական-կազմակերպչական աշխատանքների ավելի եռանդուն շրջան: Նա Թիֆլիսում բացում է արհեստագիտական դպրոց՝ ապաստան գտած արևմտահայ գաղթականների համար (19015թ.), նույն թվականին հիմնում է «Հրատապ սփոփանք մայր հայաստանցիներին» ապաստանը, ուր կազմակերպվում է որբ մանուկների սննդի ու դաստիարակության գործը, 1916թ. հիմնադրում է Թիֆլիսի բժիշկների, երաժիշտների, լուսանկարիչների ընկերություններ և այլն:

Ժամանակի մամուլը («Մշակ», «Մուրճ», ռուսական "Родник", վրացական «Թատրոն և կյանք» և այլն) բարձր է գնահատել նրա կատարած աշխատանքը: Նրա բեղուն գործունեության մասին դրվատանքի խոսքեր են ասել հայ գրականության խոշորագույն դեմքեր Շիրվանզադեն, Նար-Դոսը, Մուրացանը, Հովհաննես Թումանյանը և ուրիշներ[56]: Իր արգասավոր գործունեությամբ Տիգրան Նազարյանը մեծ դեր խաղաց Արցախի մշակույթի պատմության մեջ:

Բալաբեկ Աղասարյան (1880-1881թթ.): Հայտնի բժիշկ, մանկավարժ, ով բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել Շուշիի թեմական դպրոցում՝ XIX դարի 80-ական թվականների սկզբին: Որպես տեսուչ և բնագիտության ու քիմիայի ուսուցիչ, նա թեմական դպրոցում մտցնում է բնական գիտությունների դասավանդումը: Պետերբուրգից Մկրտիչ Սանասարյանի միջոցով ձեռք են բերվում մի շարք լաբորատոր սարքեր ու գործիքներ, և առաջին անգամ դպրոցում ստեղծվում է բնագիտական պատկերների և մոդելների ժողովածու, զգալիորեն աճում է աշակերտների թիվը: Օրինակ, եթե 1878թ. աշակերտների թիվը 200-ից չէր անցնում, ապա 1880թ. հասնում է 500-ի[57]: «Մշակ» թերթի մարտի 20-ի թ. 4-ում[58] տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ Բ. Աղասարյանի տեսչության շրջանում՝ նրա ջանքերով ուսուցիչներն ու աշակերտները ստեղծում են նաև բնագիտական կաբինետ, որտեղ տեղավորված են և՛ բնագիտական սարքավորումները, և՛ աշակերտների ուժերով (ուսուցիչների ղեկավարությամբ) բազմաթիվ բույսերից կազմած հերբարիումները, գծագրերը, աղյուսակները, նկարած աշխարհագրական քարտեզները և տարբեր իրեր, որոնք նպատակ ունեն դասը դիտողական դարձնել: Մեծ նշանակություն տալով ուսուցման ընթացքում զննականության դերին, Բ. Աղասարյանն իրավացիորեն նշում է, որ այն ուսուցումը դարձնում է ավելի արդյունավետ, որը մշտապես ուղեկցվում է զննականությամբ: Դիտողականությամբ հագեցված դասը աշակերտների մեջ առաջ է բերում խորհելու ցանկություն, դասարանում ստեղծվում է յուրահատուկ պրոբլեմային իրավիճակ և տնտեսվում է ժամանակը: Դիտողականության օգնությամբ ավելի է հեշտանում դասանյութի բացատրությունը, նրա ամրակայումն ու յուրացումը:

Բ. Աղասարյանը խորհուրդներ է տալիս թեմական, օրիորդաց և ծխական դպրոցների ուսուցիչներին, որ պետք է ուսուցման ընթացքում ճիշտ ընտրել զննական միջոցները, ուսուցման մեթոդները, որպեսզի կարողանալ սովորողների բոլոր զգայարանները մասնակից դարձնել ուսումնասիրվող նյութի ընկալման, իմաստավորման գործընթացներին: Նա խորհուրդ է տալիս նաև ուսուցիչներին, որ աշակերտները պետք է զննական պարագաների հետ ծանոթանան բնական վիճակում՝ դպրոցական ճանապարհորդությունների, էքսկուրսիաների և, առհասարակ, զանազան դիտումների ժամանակ, քանզի այդպիսով իսկ նրանք բույսե-

56. Տե՛ս «Տարազ», 1903թ., թ. 32, էջ 286: Այդ մասին տե՛ս նաև Ալ. Շիրվանզադե, Բիբլիոգրաֆիա, Երևան, 1959, էջ 73:
57. «Մշակ», 1880, թ. 110:
58. «Մշակ» 1881, թ. 111-112:

ը, կենդանիները, հանքատեսակները և այլ առարկաներ ու երևույթներ անմիջապես ընկալում են զգայարանների միջոցով: Աղասարյանը չափազանց մեծ նշանակություն է տալիս դպրոցական էքսկուրսիաների կազմակերպմանը, այն առումով, որ այդ դեպքում երեխաները հնարավորություն են ունենում ուսուցչի պատմած պատմական, իրական դեպքերի նկարագրությունը տեսնել բնական վիճակում՝ առարկաները, երևույթները դիտարկելիս:

Բալաբեկ Աղասարյանը թեկուզ և կարճատև մանկավարժական գործունեություն է ունեցել Շուշիի թեմական դպրոցում, սակայն անկեղծորեն նվիրվել է երկրամասի լուսավորության գործին, վերանորոգչական աշխատանք է տարել թեմականում, նպատակ ունենալով բարձրացնել բնագիտական առարկաների դասավանդման որակը:

Սամվել Գյուլզադյան (1855-1932թթ.): Գրականագետ, թարգմանիչ, հրապարակախոս, XIX դարի երկրորդ կեսի Արցախի կրթական գործի նշանավոր գործիչներից: Ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, իսկ հետո Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, եռանդուն մանկավարժական և գրական գործունեություն է ծավալել Երևանի, Թիֆլիսի հայկական դպրոցներում, ղեկավարվել ուսուցման ու դաստիարակության առաջավոր սկզբունքներով ու մեթոդներով: 1885-1887թթ. Ս. Գյուլզադյանը, որպես հայոց լեզվի, գրականության, վայելչագրության ուսուցիչ, աշխատել է նաև Շուշիի թեմական դպրոցում, ֆրանսերեն և գծագրություն դասավանդել ռեալական ուսումնարանում: Շնորհիվ նրա եռանդուն գործունեության և հմտության, սաները կարճ ժամանակում առաջադիմում էին հայոց լեզվից, գրականությունից և ֆրանսերենից: Իր մանկավարժական գործունեության տարիներին Ս. Գյուլզադյանը բարի անուն վաստակեց Շուշիի թեմական դպրոցում և հասարակության շրջանում: Թեմական դպրոցի ուսուցիչների՝ Սամվել Մովսիսյանի (տեսուչ), Ալեքսանդր Բաղդասարյանի, Գրիգոր Թառումյանի, Սարգիս Գուլիքևխյանի[59] և ուրիշների հետ պարբերաբար ժողովներ էր գումարում, կազմակերպում հայոց լեզվի, գրականության, պատմության, ֆրանսերեն լեզվի խմբակներ, ընթերցանություններ, քննարկում զեկուցումներ, առաջարկություններ անում ուսումնական գործի բարելավման վերաբերյալ: Թեմական դպրոցում աշակերտների նկատմամբ սերը, անձնուրաց նվիրումը, խանդավառությունը, աշակերտի հոգեկան մղումները նկատելու և նրա ապրումներին իր զգացմունքներով պատասխանելու կարողությունն այն դրույթներն են, որ առաջադրում էին թեմական դպրոցի վերոնշյալ և շատ այլ մանկավարժներ: Ս. Գյուլզադյանը դպրոցի մանկավարժական ժողովում խոսում էր այն մասին, որ ուսուցիչն իր վարքագծով, առաքինությամբ ու կատարելությամբ լավագույն օրինակ պիտի ծառայի աշակերտի համար: Այդ հատկանիշները պետք է ջանալ պահպանել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների ընթացքում: Այսօրվա ուսուցչի համար ուսանելի է նաև աշակերտի նկատմամբ մանկավարժական ճիշտ մոտեցման մասին արտահայտած նրա դրույթները: «Եթե ուսուցիչը վերաբերվում է աշակերտի նկատմամբ որպես մի մարդու, որը կարող է լավ սովորել, եթե նրան չի թողնում անօգնական վիճակում, եթե անընդհատ երեսին չի նետում նրա տկարությունը, ապա աշակերտն ամեն ինչ անում է, որպեսզի հաղթահարի իր առջև ծառացած ուսումնական դժվարությունները, քանի որ համոզված է իր ուժերին և հնարավորություններին[60]»: Ս. Գյուլզադյանը եռանդուն ուսուցանող էր, նրա գործադրած մե-

59. Այդ մասին մանրամասն տես, Հ. Առաքելյանի նշվ. աշխ., էջ 60-61:
60. Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 464-465: Նաև Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 61-62:

թոդները ցանկալի արդյունք էին տալիս: Նա շատ հաճախ մանկավարժական ժողովներում ընդհանրացնում էր իր սաների ուսման առաջադիմությունը, երբեք չէր դժգոհում նրանցից և խորհուրդ էր տալիս, հատկապես սկսնակ ուսուցիչներին, որ նպատակային և հիմնավոր դարձնեն հաղորդվող թեմայի յուրացումն աշակերտների կողմից, նրանց մեջ դասերի նկատմամբ առաջացնեն տրամադրվածություն և ուսման նկատմամբ իմացական (ճանաչողական) հետաքրքրություն:

Իր մանկավարժական գործունեությանը զուգընթաց, տարիների հարուստ փորձ կուտակած Ս. Գյուլզադյանը զբաղվել է նաև գրական գործունեությամբ, գեղարվեստական թեմաներով (պատմվածքներ, նովելներ, թարգմանություններ) բազմաթիվ ստեղծագործություններ տպագրել ոչ միայն Կովկասի, այլև արտասահմանյան պարբերական մամուլում, թարգմանել մի շարք գրքեր ռուս նշանավոր գրողներից: Առաջին անգամ պարսկերենից հայերեն է թարգմանել Ֆիրդուսու «Ռուստամ և Զոհրաբը» «Շահնամեից» և 1893թ. տպագրել Շուշիում: Հաջորդ տարին Սամվել Գյուլզադյանի թարգմանությամբ լույս է տեսնում Ֆիրդուսու «Զոհրակ Բուրասալի Աժդահակը»: Թարգմանություններն աչքի էին ընկնում, և ժամանակի մամուլը դրվատանքի խոսք էր ասում դրանց մասին:

Ս. Գյուլզադյանի աշխատությունների զգալի մասի գաղափարական հենքը հիմնականում հայրենասիրությունն էր, ժողովրդասիրությունը, ժողովրդավարությունը, հայ ազատագրական պայքարը: Լինելով զարմանալի աշխատասեր, ընդունակ և ընթերցասեր անձնավորություն՝ մշտապես հետևում էր եվրոպական և ռուսական գրականությանը, գիտական-մանկավարժական մամուլին, ուշադիր ուսումնասիրում, շատ աշխատություններ թարգմանում կամ հոդվածների նյութեր դարձնում տարբեր պարբերականներում՝ ուսուցչության գիտամանկավարժական մակարդակը բարձրացնելու, դպրոցական աշխատանքում հետաքրքրություններ առաջացնելու, հայ մանկավարժական միտքն առաջ մղելու համար:

<u>Մանուկ Աբեղյան (1865-1944թթ.):</u> Անվանի հայագետ, ով XIX դարի 80-ական թվականներին մեծ ներդրում է ունեցել Արցախի թեմի դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման գործում: Բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել թեմական դպրոցում (1885-1887թթ.), միաժամանակ ռեալական ուսումնարանում: Մ. Աբեղյանը թեմական դպրոցում դասավանդել է հայոց լեզու և գրականություն, հայ մատենագրություն, հայոց պատմություն, իսկ ռեալական ուսումնարանում՝ Ռուսաստանի պատմություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն[61]:

Իր պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում Մ. Աբեղյանը փոփոխություններ է մտցնում այդ առարկաների դասավանդման դրվածքի մեջ և մանկավարժական հարուստ փորձ ունեցող թեմականի ուսուցիչներ Սամվել Մովսիսյանի, Անդրեաս Աբրահամյանի, Գարեգին քահ. Հովհաննիսյանի, Հովհաննես Թամաշյանի (ռեալական ուսումնարանի տեսուչ), Սարգիս Գյուլիքևխյանի, Գրիգոր Բաղերյանի, Մատթևոս Մուրադյանի, Արամ Քալանթարյանի և ուրիշների հետ միասին կիրառում է ուսուցման ու դաստիարակության գործընթացն աշխուժացնող առաջավոր սկզբունքներ ու մեթոդներ:

Եվրոպական առաջավոր մտքին լավատեղյակ ականավոր գիտնականը՝ հայագետը, լեզվաբանը, մանկավարժը (սովորել է Բեռլինի, Ենայի, Լայպցիգի և Փարիզի համալսարաններում, ավարտական քննությունները հանձնել է Ենայի հա-

61. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 61-64:

մալսարանում և ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան) կազմակերպում է փորձնական դասեր, ընդլայնում սովորողների տեսական գիտելիքները հայոց լեզվից, գրականությունից, հայոց և ընդհանուր պատմությունից:

Մեծ ուշադրություն դարձնելով հայ ժողովրդի լուսավորությանը, հայ մանուկների կրթության ու դաստիարակության գործին, Մ. Աբեղյանն ասում էր, որ յուրաքանչյուր ազգի զավակ պետք է կրթություն ստանա և դաստիարակվի նախ և առաջ իր մայրենի լեզվով, որը և ճիշտ է, և բնական: Ամեն մի ազգ դարերի ընթացքում ստեղծել է իր ուրույն ազգային կերպարանքը, սովորությունները, վարք ու բարքը, բայց այդ բոլորի մեջ ոչ մի բան այնքան բնորոշ չէ, ինչքան լեզուն, որը ծագել ու զարգացել է տվյալ ազգի պատմական զարգացման հետ մեկտեղ: Աբեղյանը, օգտագործելով իր նախորդների ու ժամանակակիցների Խ. Աբովյանի, Ս. Նազարյանցի, Ռ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Աճառյանի, ականավոր մանկավարժներ Ղ. Աղայանի, Ս. Մանդինյանի, Բ. Բահաթրյանի և ուրիշների՝ մայրենի լեզվի վերաբերյալ ունեցած ժառանգությունը, գտնում էր, որ մայրենի լեզուն ժողովրդի լուսավորության, ազգային մշակույթի զարգացման, ազգային ինքնուրույնության պահպանման գլխավոր միջոցն է: Լեզուն մարդու բուն հոգեկան կյանքի շտեմարանն է, լեզվով է իմացվում, թե մարդը ինչ է, հետևաբար ծիծաղելի է այն մարդը, որի հոգեկան շտեմարանին չի համապատասխանում նրա լեզուն: Լեզուն է, որ մտքի հետ զուգընթաց զարգանում է, փոխվում, չի թողնում, որ ազգն անշարժության մեջ մնա և չինական պարսպով, ինչպես Մանդինյանն է ընդգծում, անջատվի մյուս ազգերից[62]: Մ. Աբեղյանը հայ ժողովրդին լուսավորելու միջոցով ձգտում էր զարկ տալ ազգային մշակույթի, հայ դպրոցի, մայրենի լեզվի զարգացմանը, որի համար կոչ էր անում թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի հայ ուսուցիչներին, թե՝ հային տվեք այն գործիքը, որով ավելի լավ կարող է արտահայտել իր հոգու գաղտնիքները, իր ցեղի հիմնական ուժը: Տվեք նրան այն գործիքը, որ ինքն է ստեղծել ուրիշ ազգերի հետ հաղորդակցվելու համար: Իսկ այդ գործիքը նա համարում էր մայրենի լեզուն: Ահա թե ինչու Մ. Աբեղյանը Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում աշխատելու տարիներին առօրյա հրատապ պահանջ էր համարում ավանդվելիք առարկաների դասավանդումը բարձր հիմքի վրա դնելը, ամենակարևորը՝ մայրենի լեզվի ուսուցումը, հատկապես ռեալական ուսումնարանում, որտեղ հիմնականում դասավանդվում էր ռուսաց լեզվով: Նա այս դրույթը ջերմորեն պաշտպանում է երկու տեսանկյունից՝ մայրենի լեզուն որպես հոգեբանորեն ամենամատչելին, սեփական մտքերը, զգացմունքները հասցնելու և ուրիշինը հասկանալու բնական միջոց և ապա՝ որպես ազգության ինքնապահպանման հզոր գործոն[63]: Մ. Աբեղյանը հմուտ թարգմանիչ էր, տիրապետում էր ռուսերենին, գրաբարին, եվրոպական հին և նոր մի քանի լեզուների: Մեծ է նրա դերը հայերի և ռուսների մշակութային կապերի զարգացման գործում: Նա հայ պատմիչների գործերը թարգմանում է ռուսերեն, որով և ռուս հասարակությանը ծանոթացնում մեր հին հոգևոր ու աշխարհիկ մատենագրության գանձերին: Ուշագրավ է նշել այն փաստը, որ ռեալական ուսումնարանի բարձր դասարանի աշակերտներին սովորեցնում է թարգմանություններ կատարել հայերենից ռուսերեն և ընդհակառակը: Հետագայում այդ մասին ռեալական ուսումնարանի սան, մաթեմատիկոս Բահաթուր Բահաթրյանն իր հուշերում պատմում է, որ Մ. Աբեղյանի թարգմանությունները կարևոր էին ոչ

62. Ս. Մանդինյան, «Արարատի» 1883-ում տպագրված հոդվածները, թ. 1-2:
63. «Հայոց լեզվի ուղղագրություն», Թիֆլիս, 1892թ., էջ 146:

միայն հայերի և ռուսների մշակութային կապերի զարգացման, այլև Արևելքի, եվրոպական ժողովուրդների պատմությունն ուսումնասիրելու գործում, որովհետև հայ ժողովրդի պատմությունը սերտորեն կապված է այդ ժողովուրդների պատմության հետ: Բ. Բահաթրյանը միաժամանակ նշում է՝ մեզ համար շատ հետաքրքիր էր, որ գերմաներեն, ֆրանսերեն լեզվով հատվածներ էր արտասանում եվրոպական դասականներից և սովորեցնում նույն ձևով արտասանել:

Մ. Աբեղյանը մեծ վաստակ ունի հայագիտության, հայ գրականության, լեզվաբանության զարգացման գործում: Նա շուրջ 41 տարի աշխատել է ուսումնական հիմնարկներում, որից 11 տարի՝ Թիֆլիսի Ներսիսյան, Հովնանյան, Շուշիի թեմական, ռեալական և այլ դպրոցներում, իսկ 30 տարի՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ էջմիածնի ճեմարանում, Կովկասյան համալսարանում (Թիֆլիս), Երևանի պետական համալսարանում: 1885 թվականից մինչև իր կյանքի վերջը՝ շուրջ 60 տարի, մանկավարժական աշխատանքին զուգահեռ Մ. Աբեղյանը ծավալել է նաև գիտական, գրական ու հասարակական բեղմնավոր գործունեություն: Այսօր էլ բարձր է գնահատվում նրա մանկավարժական-հասարակական գործունեությունը, մասնավորապես, նրա խոշոր ծառայությունները հայագիտության զարգացման ասպարեզում[64]:

Մ. Աբեղյանը կրթել ու դաստիարակել է հազարավոր աշակերտների, ուսանողների, որոնցից շատերը բուհն ավարտելուց հետո նրա օրինակով իրենց նվիրել են մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ գործին:

<u>Նիկիտա Աբրահամի Խանդամիրյան (1847-1917թթ.):</u> Անվանի թատերական գործիչ, բարերար, ով անգնահատելի ծառայություն է մատուցել Արցախի մշակույթին: Ծնվել է Շուշիում: Դեռևս թեմական դպրոցում սովորելու տարիներին մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում թատերարվեստի նկատմամբ, երազում հայրենի Շուշիում թատրոն ստեղծել: Ակտիվորեն մասնակցել է Շուշիում Գևորգ Չմշկյանի ամառային ներկայացումներին, Ս. Հեքիմյանի «Սամվել կամ կրոնք և տիրասիրություն» պիեսի բեմադրությանը: Նրա հետ էին թատերասերներ Հ. Սահրադյանը, Գ. Եզնիկյանը, Մ. Տեր-Դավթյանը և ուրիշներ[65]:

Չմշկյանի թատերախմբի մեկնումից հետո Ն. Խանդամիրյանը Շուշիի թատերասեր երիտասարդների կարող ուժերով հաճախակի ներկայացումներ է տալիս հայ հասարակության համար, արժանանում նրանց համակրանքին:

Թատերական ասպարեզում կատարելագործվելու նպատակով Ն. Խանդամիրյանը մեկնում է Փարիզ, խորապես ուսումնասիրում թատերական գործն ու արվեստը, հմտանում նաև օտար լեզուների (ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն) մեջ: Նրան կլանում է Փարիզի մշակութային կյանքի հորձանուտը՝ խորապես ուսումնասիրում է կերպարվեստը, երաժշտությունը, գրականությունը: Սակայն ամենից առավել երիտասարդ Խանդամիրյանի էությունը պարուրում է թատրոնը և նա ամբողջովին նվիրվում է թատերական արվեստին:

1889թ. Ն. Խանդամիրյանը Փարիզից Շուշի է վերադառնում թատերական ասպարեզում կատարելագործված, գիտելիքների կայուն պաշարով, խանդավառված ձեռնարկելիք գործի ապագայով: Այդ շրջանում մեծ աշխուժություն էր

64. Մանուկ Աբեղյանի գրականագիտական, մանկավարժական գործունեության մասին տես՝ Մ. Աբեղյան, Երկեր հ. 4, Երևան, 1970թ.: Լեո, Շուշիի թեմական դպրոցի պատմությունը, էջ 494-496, Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 61-64:

65. Բ. Հարությունյան, XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն, հ. 1, Երևան, 1982թ., էջ 119:

նկատվում Շուշիի թատերական կյանքում: Ոգևորված ականավոր դերասան Պետրոս Ադամյանի ներկայացումներից, թատերասեր երիտասարդները Համբարձում Հախումյանի տան վերնահարկում կառուցված դահլիճում հաճախակի ներկայացումներ են տալիս: Թատերարվեստում բավականին փորձ կուտակած Ն. Խանդամիրյանը նոր թարմություն է հաղորդում Շուշիի թատերական կյանքին: Նորարարություն էր այն, որ նրա թատերախմբի գործունեության ընթացքում (1889-1891թթ.) Շուշիի գավառից հրավիրված թատերասեր երիտասարդների հետ խաղում էին նաև կանայք՝ արվեստի բարձր կոչումն իրենց մեջ զգացող երիտասարդ աղջիկները (Գ. Թառումյանը, Գ. Աթաբեկյանը, Օ. Գյանջեցյանը և ուրիշներ), որոնք բարի նախանձով դիտել են Պ. Ադամանին, Զաբելին, Ալմա Սաֆրազյանին և ցանկացել նմանվել նրանց:

Մինչև նոր կահավորված թատրոնի շենքի կառուցումը, մշակութային գործիչը թեմական դպրոցի դահլիճում, Համբարձում Հախումյանի տան ընդարձակ դահլիճում և գյուղերում սեփական բեմադրությամբ ներկայացնում է Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ», Ն. Փուղինյանի «Դալալ Ղալոն», Վարդանանց տոնին՝ «Վարդանանց պատերազմը», Մոլիերի «Բռնի ամուսնություն», Է. Տեր-Գասպարյանի «Կռվապատճառը ես էի», «Արշակ Երկրորդ» և այլ ներկայացումներ[66]:

Երկու տարվա անխոնջ աշխատանքից հետո Ն. Խանդամիրյանը 1891թ. հուլիսի 7-ին ավարտում է նոր թատրոնի շինարարությունը և ծավալում բեղուն գործունեություն: Շուշիի թատրոնի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ Բ. Խանդամիրյանը (Խանդամիրյանի ազգակից) հիշատակում է, որ թատրոնի շենքում նախատեսված էր հանրակացարան դերասանների համար, որին դրսից հարում էր մրգատու ծառերով պարտեզը: Թատրոնի շենքը կառուցվում է Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցուց ոչ հեռու[67]:

Ն. Խանդամիրյանի ուշագրավ նախաձեռնություններից մեկը եղավ «Թատերական ընկերություն» միության կազմակերպումը Շուշիում, որի անդամները Շուշիի մտավորականության, ընդունակ երիտասարդների մի խումբ էր: Ընկերությունն զգալիորեն ընդարձակում է խաղացանկը՝ հաճախակի ներկայացումներ տալիս գյուղերում: Խանդամիրյանը ձգտում էր մեծացնել թատրոնի եկամուտը, անձնական ներդրում տրամադրելով ընկերության ֆոնդին, դիմում է Շուշիի հարուստ գերդաստաններին, Հախումյաններին, Թառումյաններին և հասարակությանը, որպեսզի միջոցներ տրամադրեն թատրոնին՝ աղքատ բնակչության համար ձրի ներկայացումներ բեմադրելու, նրանց լուսավորելու համար: Հայրենասեր գործիչն ընկերության անդամների գերխնդիրն է համարում գավառի դպրոցներում ստեղծել թատերական խմբեր, դրանցում ընդգրկել թատերասեր երիտասարդներին՝ պատանիների ու աղջիկների:

Օտար լեզուներին տիրապետող թատերական գործիչը ձեռնամուխ է լինում Շուշիի քաղաքային գրադարանը համալրել հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով պարբերականներով ու գրականությամբ: Նրա ազգակից Բ. Խանդամիրյանը հիշատակում է, որ Ն. Խանդամիրյանն իր անձնական գումարներով Ֆրանսիայից ստանում էր պատկերազարդ «Իլյուստրացիոն» հրատարակությունը, որին կից առանձին հատորներով Շուշի էին ուղարկվում Զոլայի, Մոլիերի, Ռուսսոյի, Ստենդալի, Մոպասանի և այլ դասականների երկերը: Ֆրանսիայից նա իր հետ բերել

66. Ա. Խաչատրյան, Թատերական կյանքի ձևավորումը Շուշիում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2003թ., թ. 2, էջ 199:
67. Բ. Խանդամիրյան, Ս. Հարությունյան, էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, էջ 10-11:

էր հայագիտական գրականություն, ռուս դասականների՝ Լերմոնտովի, Պուշկինի, Դոստոևսկու և շատ ուրիշների ստեղծագործությունները: Խանդամիրյանը միաժամանակ զբաղվել է թարգմանությամբ. ֆրանսերենից թարգմանել է Ժորժ Օնեի «Դոկտոր Ռամոն», ռուսերենից՝ «Անձկության ժամեր» բանաստեղծությունների ժողովածուն, գրել է մի քանի պիեսներ[68]:

Ն. Խանդամիրյանի եռանդուն գործունեության և մեծ բարերարության (բավականին նյութական միջոցներ է տրամադրում թատրոնի զարգացմանը) շնորհիվ Շուշին ունեցավ մշտապես գործող պրոֆեսիոնալ դերասանական կազմ, ընդարձակվեց ներկայացումների խաղացանկը: Հաճախ հյուրախաղերով Շուշի էին գալիս հայ բեմի տաղանդավոր դերասանները՝ Հովհաննես Աբելյանը, Վարդան Մելիքյանը, Գրիգոր Ավետյանը, Գևորգ Պետրոսյանը, Հովհաննես Զարիֆյանը, Արմեն Արմենյանը, ինչպես նաև ռուսական, ուկրաինական թատերական արվեստի բազմաթիվ գործիչներ:

Բեղուն էր Ն. Խանդամիրյանի ղեկավարած թատրոնի գործունեությունը (1891-1905թթ.): Նա նպաստել է, որ դերասաններն ու դերասանական խմբերը, ինչպես նաև կոմպոզիտորներն ու երաժիշտներն իրականացնեն իրենց ծրագրերը: Ազգային դեմքերը, ազգամիջյան բարեկամության ցույցերով հանդես եկող հայերն ու ռուսները, ուկրաինացիները, վրացիները հյուրընկալվել են Շուշիի թատրոնում և ցուցադրել իրենց արվեստը: Առավել գնահատելին այն է, որ հայրենասեր գործիչը թատերական հյուրախաղերին առնչվող բոլոր միջոցները վերցնում էր իր վրա, կատարում բարեգործական մեծ գործ՝ հոգուտ երկրամասի մշակույթի զարգացման:

Ն. Խանդամիրյանի գլխավորած թատրոնի գործունեությունն ընդհատվեց 1905թ. օգոստոսի 25-ին, երբ հայ-թաթարական ազգամիջյան կոտորածների ժամանակ Շուշիի թատրոնը հրո ճարակ դարձավ: Ականավոր դերասան Վաղարշ Վաղարշյանը, այդ օրերին ականատես լինելով ողբերգությանը, գրում է. «Ես տեսա, թե ինչպես բորբոքուն, ահռելի մի բոց հարևան տնից սողաց դեպի «Խանդամիրյան» թատրոնը, տանիքն առավ իր կործանարար ճարճատյունի մեջ և շենքը սկսեց բոցավառվել: Կարծես ոչ ոք չէր տեսնում այդ կործանարար աղետը, որ գնար օգնության: Ես ճչալով փորձ արի վազել դեպի բոցավառվող թատրոնը, հրացանավոր մի մարդ բռնեց թևիցս և ինձ շպրտելով բակի մի անկյունը, հրամայեց չշարժվել: Թատրոնի շենքը անտեր ու անօգնական իմ աչքի առաջ ճարճատում էր բոցերի ափից...[69]»:

Ն. Խանդամիրյանը դիմում է իշխանությանը՝ ստանալու ապահովագրված շենքի ու գույքի արժեքը, սակայն Պետերբուրգից հայտնում են, որ «անկարգությունների ու ջարդերի ժամանակ ապահովագրությունները չեն վճարվում»[70]: Ազգային մեծ գործիչը հուսահատ հեռանում է հայրենի Շուշիից: Ն. Խանդամիրյանի մահվան արձագանքը տպագրվում է «Տարազ»[71] ամսագրում, ուր հոդվածագիրը (Ա. Ն.) բարձր գնահատական է տալիս նրա ազգանվեր գործունեությանը:

Այսպիսով, Շուշիի պրոֆեսիոնալ թատրոնի կազմավորման շրջանը կապվում է Ն. Խանդամիրյանի արգասավոր գործունեության հետ, և նա պատվավոր տեղ ունի արցախահայ թատրոնի պատմության մեջ:

---

68. Նույն տեղում, էջ 12:
69. Վ. Վաղարշյան, ընկերներս, բարեկամներս և ես, գիրք Ա, Երևան, 1959թ., էջ 53-54:
70. Նույն տեղում:
71. «Տարազ», 1917թ., թ. 11-12, էջ 80-81:

Լևոն Սարգսյան (1862-1926թթ.): Անվանի մանկավարժ, հրապարակախոս: Պատկանում է մասնագետ մանկավարժների այն նոր սերնդին, որը կրթություն ստանալով ռուսաստանյան և արտասահմանյան համալսարաններում, XIX դարի 90-ական թվականներին արգասավոր մանկավարժական գործունեություն է ծավալել Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում: 1884թ. ավարտել է Լազարյան ճեմարանի գիմնազիական դասընթացը, իսկ 1889թ.՝ Մոսկվայի համալսարանի բնագիտական բաժանմունքը:

1889-1891 թվականներին պաշտոնավարում է Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, բարեփոխումներ մտցնում այդ դպրոցների ներքին կյանքում:

Լայն ճանաչում գտնելով մանկավարժական գործունեության մեջ, Լ. Սարգսյանը 1891-1892 ուստարում ստանձնում է Շուշիի թեմական դպրոցի տեսչի պաշտոնը:

Լեոն գրում է. «Իր ձեռքն առնելով երկարատև անկարգ դրութիւնից քայքայուած դպրոցը, Լեոն Սարգսյանը իսկույն ևեթ ցույց տուեց իր անսպառ եռանդը, իր կազմակերպչական աչքի ընկնող ընդունակութիւնները: Դպրոցը բարեկարգվում էր արագ, ուսուցչական խումբը մի հազվագիւտ համերաշխութեամբ էր գործում իր տեսչի հետ: Եվ մի կարճ միջոցում թեմական դպրոցի անունը բարձրացավ, հասարակութեան ուշադրութիւնն ու սէրը գրավեց»:[72] Հետագայում ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը նրան տվել է հետևյալ գնահատականը. «Ժամանակի ազդեցիկ և ինքնավստահ գործիչներից էր քաղաքի թեմական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսյանը[73]»:

Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին (1892-1895թթ.), Լ. Սարգսյանը մեծ եռանդով նպաստում է Արցախի մշակույթի՝ դպրոցի, լուսավորության, հրատարակչական գործի զարգացմանը: Իր շուրջը համախմբելով թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի փորձառու մանկավարժներին՝ (Տեր-Միքայելյան, Վլադիմիր Բարսեղյան, Բաբաթունի Բեկյան, Հարություն Ադամյան և ուրիշներ), նա կատարելագործում է դպրոցի կրթության բովանդակությունը (ուսումնական ծրագրերը, դասագրքերը), բարելավում առարկաների դասավանդման դրվածքը, դպրոցի ներքին կարգ ու կանոնը: Շնորհիվ նրա եռանդուն գործունեության և հմտության՝ բարելավվում է դասավանդման դրվածքը նաև ծխական դպրոցներում:

Նորարարությունն այն էր, որ թեմական դպրոցում հրավիրված մանկավարժական ժողովներին մասնակից էին դառնում նաև ծխական դպրոցների (Դիզակի, Վարանդայի, Խաչենի գավառների) ուսուցիչները, լսվում էին նրանց հաշվետվությունները, առաջարկություններն ու ցանկությունները և համատեղ ուղիներ էին մշակվում տեղ գտած թերությունները վերացնելու համար: Նրա տեսչության ժամանակ աճում է Շուշիի թեմական դպրոցի տարեկան եկամուտը՝ հասնելով 17000 ռուբլու[74]: Թարմություն է մտցվում ուսուցչական կազմի մեջ, բարեփոխումներ են կատարվում թեմական դպրոցի ներքին կյանքում: Լ. Սարգսյանը բնական գիտություններ էր դասավանդում նաև Շուշիի ռեալական ուսումնարանում: Նա հաճախակի հրավիրում էր մանկավարժական ժողովներ, քննարկում բազմապիսի ուսումնադաստիարակչական հարցեր, միջոցներ մշակում վերացնելու բացահայտված թերությունները:

---

72. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 455:
73. Ա. Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969թ., էջ 76:
74. Լեո, նշվ. աշխ., էջ 450-460:

Թեմական դպրոցի մանկավարժական ժողովի մի նիստում (1893թ. մարտի 20) քննելով ուսուցման բովանդակությունն ու նպատակը՝ Լ. Սարգսյանը գտնում է, որ ուսուցման կրթադաստիարակչական դերը կապահովվի.

ա) եթե սովորողների զարգացման ամեն մի աստիճանում գործադրվեն թե՛ պատմական և թե՛ բնագիտական նյութեր,

բ) եթե զանազան հետաքրքրությունների մեջ բնագիտական և պատմական նյութերի անհրաժեշտ հավասարակշռությունը պահպանվի,

գ) եթե հաղորդած տարբեր ուսումնական նյութերի վերաբերյալ աշակերտների մեջ ստեղծված մտավոր կարողություններն ամբողջացվեն ու զարկ տրվի ինքնագործունեությանը,

դ) եթե ուսուցվող բոլոր առարկաների կենտրոնում դրվի այնպիսի նյութ, որ բարոյականություն է հաստատում[75]:

Այստեղից էլ այն կարևոր պահանջը, որ ուսուցումը պետք է երեխային կրթի, իսկ դա կնշանակի, որ կրթությունը հետապնդում է բարոյական նպատակներ, հետևաբար ուսուցման հիմքում դրված են կրթադաստիարակչական խնդիրներ: Իսկ դրանք ուսուցման ընթացքում հաջողությամբ կիրականացվեն, եթե պատմական և բնական գիտությունների, կամ ինչպես Լ. Սարգսյանն է ասում, ուսմունքների համամասնությունը պահպանվի:

Լ. Սարգսյանն ուսուցման արդյունավետության բարձրացման առաջատար խնդիրը համարում է օրգանական կապի ճիշտ պահպանումը դասավանդվող առարկաների միջև: Իր պրակտիկ գործունեության ընթացքում նա լուրջ ուշադրություն էր դարձնում նաև կարդալու, գրելու, հաշվելու, նկարելու, մարմնամարզության գծով ձեռքբերվող հմտությունների վրա: Նրա պատկերացմամբ՝ այդ կարևոր խնդիրները հաջողությամբ կլուծվեն, եթե ուսուցումը տարվի մոտիկից դեպի հեռուն, պարզից բարդը, հեշտից դժվարը, հայտնիից դեպի անհայտը սկզբունքով (այս կանոնները ժամանակին առաջ են քաշել գրեթե բոլոր անվանի հայ մանկավարժները): Բայց բոլոր դեպքերում, ասում է Լ. Սարգսյանը, խստորեն պետք է հաշվի առնել աշակերտի անհատական առանձնահատկություններն ու ընդունակությունները: Նոր առարկայի դասավանդումը պետք է այնպես տարվի, որ աշակերտի ունեցած մտավոր կարողությունները զարգացվեն:

Նոր առարկան դասավանդելիս աշակերտն իր ուշադրությունը կենտրնացնում է դրա վրա և այստեղ է, որ պետք է ձգտել, որպեսզի երեխայի ստացած նոր մտքերը հաջողությամբ կապվեն հին մտքերի հետ: Անհրաժեշտ է ստեղծել ամուր հիմք և դրա վրա կառուցել նորանոր մտքեր ու գաղափարներ: Այդ առումով էլ ամեն ինչ պետք է երեխային հաղորդել իր ժամանակին, այսինքն՝ հաշվի առնել ոչ միայն անհատական, այլև տարիքային առանձնահատկությունները:

Ինչպես տեսնում ենք՝ Լ. Սարգսյանը մեծ նշանակություն էր տալիս ուսուցման մատչելիության սկզբունքին, որը պահանջում է ուսուցումն այնպես կառուցել, որ համապատասխանի երեխաների հնարավորություններին և հոգեբանական առանձնահատկություններին: Լ. Սարգսյանն ուսուցիչներին ասում էր, որ աշակերտների տարիքին և մտավոր ուժերին համապատասխանող նյութը, դասավանդման ակտիվ սկզբունքներն ու մեթոդներն ուսուցումը դարձնում են առավել արդյունավետ և հետաքրքիր: Հաղորդվող նյութի բովանդակությունն ու ծավալը պետք է անպայման համապատասխանեն սովորողների զարգացմանը և գիտե-

75. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 461:

լիքների պաշարին: Ուսուցումը երեխաների համար պետք է լինի հետաքրքիր, մատչելի և հաստատուն: Գիտելիքների հաստատունության հասնելու հիմնական պայմանը նա համարում է ուսուցչի կողմից ուսումնական նյութի պարզ ու մատչելի շարադրումը, այնպես, որ աշակերտների մեջ հետաքրքրություն առաջանա ուսման նկատմամբ:

Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում երկամյա գործունեության ընթացքում Լ. Սարգսյանը դասավանդման նոր մեթոդներով, հայրենաշունչ զրույցներով ընդլայնում է սաների մտահորիզոնը, զարգացնում նրանց ստեղծագործական միտը, նրանց մեջ ձևավորում լուսավոր ապագայի համոզմունքներ:

Համբարձում Առաքելյանի, Լեոի աշխատություններից[76] տեղեկանում ենք, որ Լ. Սարգսյանը, թեմական դպրոցի մանկավարժական ժողովում վերլուծելով փոխադարձ դասալսումների արդյունքները, ուսուցիչներին (Հովհաննես Գյուլնազարյան, Սուրեն Աթայան, Ստեփան Դեմուրյան, Անդրեաս Աբրահամյան, Տիգրան Գրիգորյան և ուրիշներ) խորհուրդ է տալիս առաջնորդվել հետևյալ մանկավարժական պահանջներով.

1. շարունակել կատարելագործել ուսուցման մեթոդները, հարստացնել իր մանկավարժական ու հոգեբանական գիտելիքները, խորապես տիրապետել մասնագիտությանը,

2. ակտիվացնել դասապրոցեսը, բոլոր աշակերտներին ներգրավել ուսումնական, ստեղծագործական գործունեության մեջ, յուրաքանչյուրի հետ տանել անհատականացված աշխատանք,

3. ուսուցման արդյունավետ մեթոդների ու հնարների միջոցով զարգացնել աշակերտների տրամաբանական մտածողությունը, երևակայությունն ու ճանաչողական ակտիվությունը, ճիշտ ուղու վրա դնել սովորողների նախասիրություններն ու հակումները, ուղենշել նրանց ապագա մասնագիտությունը,

4. դասին նախապատրաստվելիս հաշվի առնել տվյալ դասարանի աշակերտների իրական ուսումնական հնարավորությունները,

5. ինչպիսին էլ լինի դասի նպատակը, անհրաժեշտ է նրա մեջ տեսնել հետաքրքրականը, դրականը, նորը,

6. լսել թեմական, օրիորդաց և ծխական դպրոցների մի քանի դաս և ընդօրինակել ու պրակտիկայում կիրառել դասավանդման լավագույն մեթոդները,

7. մանկավարժական ճիշտ մոտեցում ունենալ յուրաքնչյուր աշակերտի նկատմամբ, ժամանակին վերացնել նրա վարքում դրսևորված շեղումները և այլն:

Ինչպես տեսնում ենք, Լ. Սարգսյանը, իր պրակտիկ փորձից ելնելով, ցանկանում է, որ յուրաքանչյուր ուսուցիչ լինի շրջահայաց և ուսուցման մեթոդներից ու եղանակներից (գիտելիքների շարադրման, զրույցի, պատմելու ու բացատրելու, վարժությունների, ինքնուրույն աշխատանքի և այլն) օգտվի խելացիորեն, առաջնորդվի ավանդական (դասական մանկավարժների կողմից մշակված՝ Աբովյան, Աղայան) և իր ժամանակաշրջանի նորագույն մեթոդների զուգակցմամբ: Անվանի մանկավարժի առաջ քաշած դրույթներն ուսանելի են նաև այսօրվա ազգային դպրոցի ուսուցիչների համար:

---

76. Հ. Առաքելյան, Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր, էջ 66-68, Լեո, նշվ. աշխ., էջ 460-461:

Այսօրվա դպրոցի ուսուցիչների համար ուսանելի է նաև թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի մանկավարժական ժողովներում արտահայտված առաջատար այն պահանջները, համաձայն որոնց ուսուցիչները դպրոցում կարգապահություն հաստատելիս, պատիժներ գործադրելիս պետք է աշակերտների նկատմամբ միասնական մոտեցում ցուցաբերեն: Նրանք ճշտությամբ պետք է կատարեն դպրոցական կանոնադրության պահանջները, հաճախակի այցելեն միմյանց դասերին և իրենց դասատվության ընթացքում նկատած թերություններն ու սխալներն ուսուցչական ժողովների քննության առարկա դարձնեն, միմյանց օգնություն ցույց տան[77]:

Լ. Սարգսյանն ուսուցիչների և աշակերտների միջև ամուր կապ հաստատելու լավագույն միջոցներ է համարում դպրոցական հանդեսները, զբոսաշրջությունը, ճանապարհորդությունը, դպրոցական պարտեզի մշակությունը և այլն, որոնք ունեն լուրջ կրթադաստիարակչական նշանակություն: Ուշագրավ է այն փաստը, որ Լ. Սարգսյանը Շուշիում իր կարճատև մանկավարժական գործունեության շրջանում կազմակերպում էր նման միջոցառումներ:

Հ. Առաքելյանը «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր» (1858-1912թթ.) գրքում նշում է. «1892-1893 ուսումնական տարվա վերջին թեմականի և ռեալականի բարձր բաժանմունքներից մի խումբ սաների դեպի Սևան, Ղարաբաղի գեղատեսիլ վայրեր էքսկուրսիայի տանելով՝ յաջողություն էինք ունեցել: Էքսկուրսիային մասնակցում էին 40-42 հոգի աշակերտներ և աշակերտուհիներ, ուսուցիչներ Լ. Սարգսյանը, Լ. Մանվելյանը, Գևորգ Ղարաջյանը, Սարգիս Գյուլիքևխյանը, Ստեփան Դեմուրյանը (երաժշտագետ), Բագրատ Տեր-Սահակյանը և մի քանի ծնողներ»:[78]

Լ. Սարգսյանն «Արծագանքում» տպագրված մի հոդվածում գրում է, որ թե՛ թեմականում և թե՛ ռեալական ուսումնարանում էքսկուրսիաների, ճանապարհորդությունների պատրաստությունները սկսում էին մի քանի ամիս առաջ:

Լ. Սարգսյանն իր մանկավարժական գործունեության տարիներին հատուկ ուշադրություն էր նվիրում ռեալական ուսումնարանում ամուր գիտակցական կարգապահության ստեղծման, ներդպրոցական վերահսկողության, դասասենյակներից օգտվելու, դասերը սկսելու և ավարտելու, դասամիջոցների կազմակերպման հարցերին: Ներդպրոցական բոլոր հարցերում Լ. Սարգսյանը պաշտպանում էր գիտական մանկավարժության պահանջները: Լուրջ ուշադրություն էր դարձնում դպրոցական առողջապահության հարցերին: Պահանջում էր դասասենյակները կահավորել անհրաժեշտ գույքով, պիտույքներով և այլ հարմարություններով, լիակատար կարգապահություն հաստատել դասերի ընթացքում, դասամիջոցներին, արտադպրոցական աշխատանքներում և այլն:

Կովկասի ուսումնական մասի հոգաբարձուին ներկայացրած՝ Շուշիի ռեալական ուսումնարանի տեսչի՝ Արշակ Տեր-Միքայելյանի և էջմիածնին ներկայացրած թեմական դպրոցի տեսուչներ Եղիշե Մադաթյանի, Տիրայր վարդապետի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 1894-1899 թվականներին Շուշիի ռեալական ուսումնարանում դասավանդել են Լևոն Մանվելյանը, Ստեփան Կանայանը, գերմաներենի ուսուցիչ գերմանացի է. Ռեոսլերը, Ջալալ Տեր-Գրիգորյանը, Գրիգոր Ներսիսյանը, Քրիստափոր Փարիջյանը, Հովհաննես Միրզաբեկյանը, Միքայել Տեր-

77. Լ. Սարգսյան, «Հին ցավ ժողովրդական կրթության գործը մեզանում», Մոսկվա, 1892թ., նաև նրա «Մայրենի խոսք» ընթերցանության ձեռնարկը, «Մուրճ», 1906թ., թ.1:
78. Տե՛ս Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 68-69, նաև ՀՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, էջ 182, 543:

Ղուկասյանը, Վարդան Տեր-Օհանյանը, Արշակ Չիլինգարյանը, Կոնստանդին Ադամյանը, Սարգիս Յուզբաշյանը և ուրիշներ[79]:

Լ. Սարգսյանի լուսավորչական գործունեության կարևորագույն էջերից մեկն Արցախի թեմում երկսեռ դպրոցների ցանցի ընդլայնումն ու մանկավարժական կադրերով ապահովումն էր: Այդ տարիներին նոր դպրոցներ են բացվում Վարանդայի գավառում՝ Սարուշեն, Թաղավարդ, Դիզակի՝ Բանազուր, Տող, Խաչենի՝ Բալուջա, Բադարա գյուղերում:

Արցախի մշակույթին նվիրված գործիչն ակտիվ մասնակցություն է ունենում նաև շուշեցի մտավորականության կարող ուժերի նախաձեռնությամբ «Հայրենաօգուտ ընկերություն» կազմակերպելու գործին: Ընկերությունը որոշակի քայլեր է անում. օգնում է դպրոցական գործին, օժանդակում գրքերի լույս ընծայմանը, ընթերցարանի հիմնմանը, գյուղերում մշակութա-լուսավորական օջախների բացմանը, որոշակի աշխուժության առաջացմանը նաև թատերական կյանքում: Լ. Սարգսյանի նախաձեռնությամբ Շուշիի թեմական դպրոցում ուսուցիչների և աշակերտների ուժերով կազմակերպվում են թատերական ներկայացումներ, երգչախումբ և այլ մշակութային ձեռնարկումներ՝ գրատպության զարգացմանը, հրատարակչական գործի առաջընթացին օգնելու նպատակով: Նրա հետաքրքիր նախաձեռնություններից մեկն էլ այն էր, որ առաջին անգամ թեմական դպրոցի մանկավարժական ժողովում բարձրացնում է «Ղարաբաղի թեմական դպրոցի պատմություն» գրելու հարցը:

Լեոն նշում է. «1892թ. դեկտեմբերի 12-ին առաջարկել է մանկավարժական խորհրդին՝ դպրոցիս գոյութեան պատմութիւնը գրելու խնդիրը»[80]: Համբարձում Առաքելյանը, որ հանձնաժողովի մեջ էր, դպրանոցի 75-ամյակի առթիվ գրում է համառոտ պատմությունը՝ «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամեակը» (1858-1913թթ.), իսկ Լեոն գրում է ամբողջական պատմությունը:

Այսպիսով, Լ. Սարգսյանը Շուշիում կարճատև մանկավարժական գործունեության ընթացքում իր հարուստ փորձը և գիտելիքները նվիրաբերեց Արցախի ժողովրդի լուսավորության, մշակույթի զարգացման, մատաղ սերնդի կրթության, դաստիարակության գործին:

<u>Հոնան Դավթյան (1865-1918թթ.):</u> Ծնվել է Շուշիում, սովորել տեղի թեմական դպրոցում, 1886թ. ավարտել նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1892-1893թթ. եղել է Թավրիզի Լիլավա թաղի երկսեռ դպրոցների տեսուչ, իսկ 1898-1900թթ.՝ ուսուցիչ, հասարակական-հեղափոխական գործիչ: Այստեղ Հոնանն իր ընկերներով մի շարք լուսավորչական ձեռնարկումներ էր անցկացրել՝ դասախոսություններ, կիրակնօրյա ձրի դասընթացներ, երեկույթներ և այլ միջոցառումներ, մի խոսքով կենդանություն է տվել Թավրիզի քարացած կյանքին: Նրա լուսավորչական ձեռնարկումներին աջակցում էին Նիկոլ Դումանը, Պետոն, Սաքոն, Վարդանը և ուրիշներ: Մշակութային աշխատանքին զուգընթաց՝ կատարում էր ուրիշ, ավելի ծանր ու դժվարին գաղափարական աշխատանք:

Երկար տարիներ վարել է «Դրոշակ» թերթի խմբագրի, տպագրիչի պաշտոնները[81]: Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ եղել է Շուշիում՝ Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) գլխավոր խորհրդատուն: 1910թ. սկսած՝ վարել է Թավրիզի «Կենտրոնական-թեմական դպրանոցի» տեսչությունը[82]:

---

79. Նույն տեղում:
80. Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 456:
81. Յ. Դավթեան, հ. Ա, Աթենք, 1988թ., էջ 78:
82. «Հորիզոն», Թիֆլիս, 1918թ., սեպտեմբերի 1:

Միքայել Վարանդյան (1870-1934թթ.): Ծնվել է Շուշիի գավառում (գ. Քյաթուկ), ավարտել Շուշիի ռեալական դպրոցը, այնուհետև՝ 1897թ., Ժնևի համալսարանը: Հրապարակախոս, փիլիսոփա, պատմաբան, ազգային-ազատագրական շարժման գործիչը Ժնևում համագործակցել է ՀՅԴ գործիչներ Ռոստոմի, Ք. Միքայելյանի, Հ. Դավթյանի հետ: Աշխատել է «Դրոշակ» (1898-ից), «Հառաջ» (1907-ից), «Հորիզոն» (1915-ից) թերթերի խմբագրություններում: Իր մասնակցությունն է ունեցել Հայկական հարցի օգտին Եվրոպայում քարոզչություն ծավալած «Պրո-Արմենիա» (1900-1914) թերթի հրապարակմանը[83]: Նրա քաղաքական ու մշակութային հետագա գործունեության համար նշանակալի դեր են խաղացել բազմաթիվ աշխատություններ, որոնցում փորձել էր առաջադեմ հասարակությանը ծանոթացնել հայրենիքում կատարվող իրադարձություններին: Ուշագրավ է, հատկապես, «Հայկական շարժման նախապատմութիւնը», որտեղ պարզաբանվում է հայ ազգային-ազատագրական պայքարի ակունքները: Նկարագրելով թանզիմաթյան շրջանը և սահմանադրական պայքարը՝ անդրադառնում է հայ գավառում Խրիմյանի ծավալած գործունեությանը[84], Արևմտյան Հայաստանի տարածքի նշանավոր պարբերականի՝ «Արծիվ Վասպուրականի» հրատարակությանը, խմբագրի հիմնադրած «Ժառանգավորաց» վարժարանի, նրա շրջանավարտների գործունեությանը: 1934թ. ազգային գործչի հետ պատահած դժբախտության պատճառով, նրա քաղաքական գործունեությունը դադարեց:

Լևոն Մանվելյան (1865-1919թթ.): Հայտնի մանկավարժ, գրող, գրականագետ, մատենագետ: Ծնվել է Ներքին Ագուլիսում, նախնական կրթությունն ստացել տեղի ուսումնարանում, այնուհետև ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմալեզվագրական բաժինը: Վերադառնալով հայրենիք, Լ. Մանվելյանը բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցում, իսկ 1894-1897թթ.՝ Շուշիի ռեալական ուսումնարանում, որպես հայոց լեզվի գրականության, մատենագիտության և պատմության ուսուցիչ:

Լ. Մանվելյանն իր ժամանակի կրթված անձնավորություններից մեկն էր, ուներ մտավոր լավ պատրաստվածություն, աչքի էր ընկնում հայ գրականության, մատենագրության, պատմության իմացությամբ:

Նա ռուս և հայ ժողովրդների բարեկամության ջերմ պաշտպան էր: Մոսկվայում ուսումնառության տարիներին նրա գրականագիտական, մանկավարժական հայացքները հիմնականում ձևավորվել են ռուսական առաջավոր դպրոցի մանկավարժական մտքի ազդեցության տակ:

Վերոնշյալ հայկական դպրոցներում ձեռք բերելով մանկավարժական հարուստ փորձ, Լ. Մանվելյանը որոշ փոփոխություններ է մտցնում նաև թեմական դպրոցներում, ռեալական ուսումնարանում հայոց լեզվի, գրականության, պատմության և մատենագրության առարկաների դասավանդման դրվածքի մեջ, ընդլայնում աշակերտների տեսական գիտելիքները գրականությունից, պատմությունից: Մանկավարժական-մեթոդական բնույթի հարցերի տեսական մշակման ասպարեզում նա նույնպես իր նախորդների (Ղ. Աղայան, Ս. Մանդինյան, Լ. Սարգսյան և ուրիշներ) նման նույնպես հանդիսացել է նորի և առաջադիմականի կրողն ու քարոզողը:

Մանկավարժական գործունեության տարիներին Լ. Մանվելյանը զգալի աշ-

83. Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996թ., էջ 432:
84. Մ. Վարանդեան, Հայկական շարժման նախապատմութիւնը, Ժնև, 1912, հ. 1, էջ 242-320:

խատանք է կատարել թեմական, օրիորդաց դպրոցներում և ռեալական ուսումնարանում ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակը բարձրացնելու գործում: Նրա ջանքերով բարձր հիմքերի վրա դրվեց հատկապես հայոց լեզվի և գրականության առարկաների դասավանդումը: Լ. Մանվելյանը ձեռնամուխ եղավ նաև թեմական դպրոցում հայ գրականության և պատմության խմբակի կազմակերպմանը, որին մասնակցում էին դպրոցի ուսուցիչները (Հովհ. Գյուլնազարյան, Գևորգ Ղարաջյան, Բագրատ Տեր-Սահակյան և ուրիշներ) և բարձր դասարանի աշակերտները: Գրական խմբակում (ինչպես ինքը՝ Լևոն Մանվելյանն է անվանում «Գրական ընկերություն») հայ գրականության, պատմության, հայ ժողովրդի պատմական անցյալին և ներկային վերաբերող թեմաների շուրջ ծավալվող բանավեճերը զարգացնում էին աշակերտների գրական միտքը և ճաշակը: Հետագայում գրական խմբակի անդամներից շատերն աչքի ընկնող տեղ գրավեցին հայ գրականության անդաստանում:

Չնայած Լ. Մանվելյանը կարճատև մանկավարժական գործունեություն ունեցավ Շուշիի թեմական դպրոցում, սակայն իր ակտիվ գործունեությամբ բարի անուն վաստակեց և՛ թեմականում, և՛ հասարակության մեջ:

1897թ. վերջերին, Լ. Մանվելյանին նորից հրավիրում են Ներսիսյան դպրոցում աշխատելու:

Հետագայում նա հանդես է եկել նաև որպես վիպագիր, դրամատուրգ և դերասան:

«Մուրճ» ամսագրում (1901-1906թթ. համարներում) տպագրված «Դպրոցական նամակներ» հոդվածաշարում Լ. Մանվելյանը քննարկում է մտավոր կրթության, բարոյական, ֆիզիկական, գեղագիտական դաստիարակության, դպրոցի ներքին կյանքին առնչվող մանկավարժական բազմազան հարցեր: Խոսելով դպրոցում ուսուցչի դերի մասին, Լ. Մանվելյանը նշում է, որ ուսուցիչը պետք է հանդես բերի նախաձեռնություն, ինքնուրույն ու մանկավարժական մոտեցում, ոչ թե մեխանիկորեն ընդօրինակի այս կամ այն մանկավարժական համակարգն ու եղանակը: Նա լուրջ պահանջներ է ներկայացնում ուսուցչի ոչ միայն անձնական օրինակի, այլև առարկայական ու մեթոդական պատրաստության նկատմամբ: Ելնելով իր պրակտիկ փորձից, նշում է, որ ուսուցիչը քրտնաջան աշխատանքով, գիտությանը տիրապետելով, ուսուցման բազմազան ձևեր ու մեթոդներ գործադրելով՝ պետք է ավելի նպատակաուղղի աշակերտների ջանքերն ուսումնական նյութը լավ ըմբռնելու համար:

Լ. Մանվելյանը վերը նշված պահանջները կիրառել է նաև Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում աշխատելու տարիներին՝ ձգտելով տարիների իր հարուստ փորձը փոխանցել երիտասարդ մանկավարժներին:

<u>Ստեփան Կանայան (1860-1937թթ.):</u> Հայ բանասիրության և մշակույթի վաստակաշատ գործիչ, մանկավարժ: Ավարտել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1874-1887թթ.), բարձրագույն կրթությունն ստացել Գերմանիայի մի շարք քաղաքների համալսարանների պատմագրական բաժիններում:

1891թ. վերադառնալով հայրենիք՝ նա մանկավարժական աշխատանքի է անցնում Գևորգյան ճեմարանում, ուր դասավանդում է հայոց և ընդհանուր պատմություն, բանահյուսություն, գերմաներեն: 1893-1895թթ. աշխատում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, իսկ 1895-1897թթ.՝ Շուշիի թեմական դպրոցում: Այստեղ դասավանդում է հայ բանահյուսություն, գրականություն, պատմություն, մատենագրություն, գերմաներեն լեզու: Եվրոպական առաջավոր մտքին լավատեղյակ ականավոր մշակութային գործիչն այդտեղ բարձր հիմքերի վրա դրեց հայ բա-

նահյուսության, պատմության, գերմաներեն առարկաների դասավանդումը: Բացի այդ, նա կազմակերպում էր փորձնական դասեր, ընդլայնում սովորողների գիտելիքները հայ բանահյուսությունից, գրականությունից, պատմությունից: Ս. Կանայանն իր մանկավարժական գործունեության երկու տարում, բացի թեմական դպրոցի ուսումնական պարապմունքներից, մեր այսօրվա ըմբռնմամբ, կազմակերպում է նաև արտադասարանական աշխատանքներ. որոնց մասնակցությունը կամավոր էր աշակերտների համար, իսկ ընտրությունը նույնպես կամավոր էր՝ ըստ նրանց հետաքրքրությունների ու հակումների: Հ. Առաքելյանի աշխատությունից[85] տեղեկանում ենք, որ Ս. Կանայանի կազմակերպած գրական խմբակին մասնակցում էին թեմական դպրոցի և ռեալական ուսումնարանի բարձր դասարանների աշակերտները (թվով 15 հոգի), որոնք հանդես էին գալիս հետաքրքիր թեմաներով. «Որդու լավ ուսումը սփոփում է ծնողներին», «Ինչպիսի աշխատասիրություն է պահանջում աշակերտից, որ ուսման առաջադեմ լինի», «Թեմական դպրոցի փորձառու ուսուցիչներ Ն. Տեր-Ավետիքյանի, Մ. Աբեղյանի գրականագիտական հայացքները», «Շուշին որպես Արցախի մշակութային կենտրոն» և այլն: Բացի այդ, Մանվելյանի նախաձեռնությամբ ամեն շաբաթ թեմական դպրոցում կազմակերպվում էին նաև գրական երեկոներ, որոնց մասնակցում էին նաև աշակերտների ծնողները, Շուշիի հայ հասարակության ներկայացուցիչները: Գրական երեկոների նպատակն էր թե՛ հայերեն գրելու մեջ վարժվելը և թե՛ մոտիկից հայ մատենագիրներին ծանոթանալը, որոնցից յուրաքանչյուրը մի դասախոսության առարկա էր դառնում. այդ երեկոներին աշակերտները վարժվում էին թե՛ բանավեճի և թե՛ կանոնավոր խոսելու մեջ: Այդ երեկոներին քննարկվող թեմաներից էին, օրինակ, Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց», Եղիշեի «Պատմություն հայոց», Մովսես Խորենացու «Պատմություն հայոց», Առաքել Դավրիժեցու «Պատմություն հայոց», Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղվանից աշխարհի» և այ աշխատություններ:

Թեմական դպրոցի տեսուչ Եղիշե Մադաթյանի 1896-1897 ուստարվա հաշվետվությունից[86] տեղեկանում ենք, որ Ստ. Կանայանի նախաձեռնությամբ թեմականի աշակերտները գրում էին «Ծիածան», «Նոր սերունդ» խորագրով ձեռագիր թերթեր, Արցախի բանահյուսության, պատմական անցյալի, մշակութային պատմության վերաբերյալ ստեղծագործական շարադրություններ, պատմվածքներ, ղարաբաղյան բարբառով հանելուկներ, հորինում հեքիաթներ:

Շուշիի թեմական դպրոցում կարճատև մանկավարժական գործունեության շրջանում Ստ. Կանայանը մեծ աջակցություն է ցուցաբերում նաև հրատարակչական գործին: Սրբագրում ու խմբագրում էր Մ. Մահտեսու տպարանում լույս տեսած բազմաթիվ գրքեր ու ձեռնարկներ, կազմում հայ բանահյուսության, գերմաներեն առարկաների դասավանդման ծրագրեր, նաև թարգմանություններ կատարում:

Այսպիսով, Ստ. Կանայանը թեմական դպրոցում թեկուզ և կարճատև գործունեություն ունեցավ, սակայն իր բազմաբովանդակ գործունեությամբ անգնահատելի ծառայություն մատուցեց Արցախի կրթության ու մշակույթի զարգացմանը:

<u>Էյզեն Ռեոսլեր:</u> Ազգությամբ գերմանացի գիտնական, մանկավարժ, Պետերբուրգի հնագիտական ընկերության անդամ, ով խնդրո առարկա ժամանակաշրջանում մանկավարժական գործունեություն է ծավալել Շուշիի թեմական դպրո-

85. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 68-69:
86. Լեո, նշվ. աշխ., էջ 494-496: Նաև տես՝ ՀՀԱԱ, ֆ. 56, ց. գ. 78, 943:

ցում, ռեալական ուսումնարանում: Շնորհիվ նրա եռանդուն գործունեության՝ թե՛ թեմական դպրոցում և թե՛ ռեալական ուսումնարանում բարձր հիմքի վրա դրվեց գերմաներենի դասավանդման դրվածքը, ինչի շնորհիվ կարճ ժամանակում աշակերտներն առաջադիմում էին գերմաներեն լեզվի իմացության մեջ:

Բուն մանկավարժական աշխատանքի հետ միասին է. Ռեսլերը թեմական դպրոցի պատմության, գրականության ուսուցիչների հետ (Ա. Գյուլիքևխյան՝ պատմություն, Մ. Աթաբեկյան՝ աշխարհագրություն, Յ. Ճաղարբեկյան՝ բանահյուսություն) միասին կազմակերպում է «Թանգարանային և հնագիտական» ընկերություն (1896-1897 ուստարում)[87]: Նրանք թեմականի և ռեալական ուսումնարանի բարձր դասարանի աշակերտների հետ միասին հնագիտական ուսումնասիրություններ են կատարում Արցախի գավառներում, հայտնաբերում բազմադարյա պատմություն ունեցող շատ արժեքավոր հնություններ՝ շինությունների մնացորդներ, անոթներ, դրամներ, զենքեր, զարդարանքներ, մատանիներ, եկեղեցական մատյաններ, սափորներ, գորգեր, գեղեցիկ մանվածքներ և այլ իրեր, որոնք վկայում են դարերի պատմություն ունեցող տեղի բնակիչների զբաղմունքի և մշակույթի զարգացման բարձր աստիճանի մասին: Հնագիտական ուսումնասիրություններ են կատարվում նաև Առաջաձորի, Խոջալուի տարածքներում, հայտնաբերվում դարերի պատմություն ունեցող հնությունների նմուշներ:

Ուշագրավ է նշել այն հանգամանքը, որ թեմական դպրոցին կից գործող թանգարանում ցուցադրվում էին նաև հնագիտական պեղումների ժամանակ աշակերտների ուժերով հայտնաբերված խաչքարերը, արձանագրությունները, գորգերը, ձեռագիր մատյանները, Արցախի բնակչության զբաղմունքի, ծիսակատարությունների, ժողովրդական այլ սովորությունների, ազգագրության, պատմության վերաբերյալ գտած հնությունները, հին եկեղեցական ձեռագիր գրքերն ու ավետարանները, հուշամատյանները, Շուշիում հրատարակված գրքերը (1827-1897թթ.), պարբերականների («Հայկական աշխարհ», «Քնար խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես») համարները և այլ իրեր: Հետագայում անվանի գրականագետ, բանասեր Լևոն Բաբայանը «Խոջալուի գերեզմանները» աշխատության մեջ մանրամասն ներկայացնում է գերմանացի հնագետ է. Ռեսլերի 4-5 տարվա հնագիտական պեղումները Խոջալուի և Առաջաձորի տարածքներում: Դրվատելով Շուշիի թեմական դպրոցի «Թանգարանային և հնագիտական» ընկերության անդամների նախաձեռնությունը, Երվանդ Լալայանը «Ազգագրական հանդես»-ի «Հնություններ» բաժնում նշում է, որ հայտնաբերված հնությունները դարերի պատմություն ունեն և ամենից առաջ վկայում են տեղի բնակիչների զբաղմունքի և մշակույթի զարգացման բարձր աստիճանի մասին[88]:

Թեմական դպրոցի շրջանավարտ Լևոն Բաբայանը վերոհիշյալ փաստագրական տվյալները հոդվածաշարով հրապարակում է «Ազգագրական հանդես»-ում, «Մշակ»-ում, այնուհետև՝ առանձին գրքով[89]:

<u>Ջալալ Հովհաննեսի Տեր-Գրիգորյան (1866-1940թթ.):</u> Հայտնի մանկավարժ, թարգմանիչ, գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի գրողների միության անդամ: Ծնվել է Ջրաբերդի գավառի Մաղավուզ գյուղում: Նախնական կրթությու-

87. Լեո, նշվ. աշխ., էջ 498-499: Նաև «Մշակ», 1898, թ. 6, հունվար 17, «Ազգագրական հանդես», Գ. Ա. էջ 5-6:
88. «Ազգագրական հանդես», 1896, Ա. գիրք, էջ 39:
89. Լ. Բաբայան, «Խոջալուի գերեզմանները», «Ազգագրական հանդես», 1896, գիրք Ա., էջ 39, «Մշակ» 1896, թ. 1:

նը ստացել է հայրենի գյուղի եկեղեցական-ծխական դպրոցում, այնուհետև՝ 1882թ., ավարտել Շուշիի ռեալական ուսումնարանը, 1887թ.՝ Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտը:

Ջ. Տեր-Գրիգորյանը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Որպես ուսուցիչ և տեսուչ աշխատել է Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի, Երևանի, ռուսահայ գաղթավայրերի (Ստավրոպոլ), Արցախի թեմի դպրոցներում, ինչպես նաև Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում դասավանդել հայ գրականություն, պատմություն, ռուսաց լեզու, գրականություն, Ռուսաստանի պատմություն, աշխարհագրություն:

Լավատեղյակ լինելով դարի 90-ական թվականների հայ մանկավարժական առաջավոր մտքին, Ջ. Տեր-Գրիգորյանը Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում աշխատելու տարիներին առօրյա հրատապ պահանջ էր համարում ավանդվելիք առարկաների արդյունավետ դասավանդումն ու առաջավոր մեթոդների կիրառումը, հատկապես պահանջում էր թեմական դպրոցում բարձր հիմքի վրա դնել ռուսաց լեզվի դասավանդումը: Նույնիսկ առաջարկում էր ռեալական ուսումնարանում ռուսաց լեզվի փորձառու ուսուցիչների մոտ կազմակերպել փորձնական դասեր՝ մասնակից դարձնելով նաև թեմականի ուսուցիչներին:

Երկրամասի մշակութային զարթոնքի նախանձախնդիր Ջ. Տեր-Գրիգորյանը, մանկավարժական գործունեությանը զուգընթաց, մեծ ջանքեր է գործադրում նաև տպագրության ասպարեզում: Ինչպես գիտենք, 90-ական թվականների կեսերին՝ գոլիցինյան ռեժիմի օրոք, հայ լուսավորչական թեմերում գրքերի ու պարբերականների հրատարակումը փականքի տակ է դրվում, հատկապես հայկական դպրոցները (եկեղեցական-ծխական, օրիորդաց) փակվելուց հետո: Այդ տասնամյակում, չնայած ժամանակաշրջանի խեղդուկ մթնոլորտին, ցարիզմի ազգահալած քաղաքականությանը, հայ մտավորականության նոր սերնդին հետևելով, Ջ. Տեր-Գրիգորյանը եռանդուն գործունեությամբ Շուշիում գործնական հիմքերի վրա է դնում գրքերի ու պարբերականների հրատարակության գործը: Օրինակ, Տեր-Սահակյանի՝ ժամանակի տեխնիկական սարքավորումներով հագեցած տպարանում խմբագրում ու սրբագրում է գեղարվեստական, ուսումնական գրքեր, ձեռնարկներ, ծրագրեր, դպրոցական կանոնադրություններ և թարգմանում այլ գրքեր:

«Մշակ» թերթի 1898թ. թիվ 6-ում[90] տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ Ջ. Տեր-Գրիգորյանը Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչների՝ Գևորգ Ղարաջյանի, Արշավիր Չիլինգարյանի, Կարապետ Վարդապետյանի և ուրիշների հետ կրթա-մշակութային գործունեություն է ծավալում Արցախի թեմի դպրոցներում (Զրաբերդի, Վարանդայի գավառներում), լինում է նաև հայրենի Մաղավուզ գյուղում, բացում (կառավարությունից գաղտնի) ծխական դպրոց, իսկ Աշան գյուղում՝ կենտրոնական ծխական դպրոց:

Նյութական օժանդակություն ստանալով հասարակությունից, նրանք գյուղերում հիմնում են նաև գրադարան-ընթերցարան, «դպրոցասիրաց» ընկերություն և այլ լուսավորչական ձեռնարկումներ իրականացնում:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ Ջ. Տեր-Գրիգորյանն աշխատակցել է «Աղբյուր-տարազ», «Մշակ», «Մուրճ», «Արարատ» և այլ պարբերականների, գործուն մասնակցություն ցուցաբերել հայ գրական-հասարակական կյանքին: Իր բազմաթիվ հոդվածներում, աշխատություններում արծարծել է նաև

90. «Մշակ», 1898, թ. 6:

հայ դպրոցի ներքին կյանքին առնչվող տարաբնույթ հարցեր, առաջ քաշել մանկավարժական-տեսական մի շարք արժեքավոր դրույթներ:

Աշխատելով Շուշիի ռեալական ուսումնարանում, նա կյանքի է կոչել իր մանկավարժական առաջադիմական հայացքները:

Արցախցի անվանի գիտնականը, մանկավարժը մտերմական կապեր է ունեցել Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, հայ գրականության այլ մեծերի հետ: Նա եղել է XIX դարի 90-ական թվականների Թիֆլիսի հայ գրական-հասարակական կյանքի ամենաակտիվ մասնակիցներից մեկը:

Ջ. Տեր-Գրիգորյանն իր գրական-մանկավարժական գործունեությունը շարունակում է նաև խորհրդային տարիներին: 1922թ. վերջերին նա շարունակում է բեղմնավոր մանկավարժական գործունեությունը Ջալալօղլիում (Ստեփանավան), Դիլիջանում, որտեղ մանկավարժական տեխնիկումի վարիչն էր: Այնուհետև տեղափոխվում է Երևան, մի շարք պատասխանատու պաշտոններ վարում ժողկրթության բնագավառում:

Ջ. Տեր-Գրիգորյանը գրել է մանկավարժական աշխատություններ՝ «Հայ մանկավարժության պատմություն», «Ի. Հ. Պեստալոցցի»՝ նվիրված դասական մեծ մանկավարժի կյանքին ու գործունեությանը, մեթոդական ձեռնարկներ ուսուցիչների համար, ակտիվ մասնակցություն ունեցել Խորհրդային Հայաստանի ժողկրթության համակարգի վերակառուցմանը (լուսժողկոմ՝ Աշոտ Հովհաննիսյանի, նրա տեղակալ, անվանի մանկավարժ Ար. Շավարշյանի հետ միասին), լուսժողկոմի կոլեգիայի անդամ էր և այլն: Բացի այդ, կատարել է մի շարք թարգմանություններ՝ Մ. Գորկու «Մրրկահավի երգը» չափածո գործը, Վ. Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը» կատակերգությունը, Ն. Գոգոլի «Խելագարի հիշատակարանը» վիպակը, Յուժին Սումբատովի «Դավաճանություն» պիեսը, որ տասնյակ տարիներ բեմադրվել է հայկական թատրոններում և այլ ստեղծագործություններ:

Լուսավորության բնագավառում կատարած անբասիր աշխատանքի համար 1931թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ աշխատանքի հերոսի կոչում: Կյանքի վերջին տարիներին ապրել է հայրենի Մաղավուզ գյուղում, որտեղ էլ մահացել է 1940թ. օգոստոսի 31-ին:

XX դարի առաջին երկու տասնամյակներում (1900-1920թթ.) Շուշիի ռեալական ուսումնարանում բեղմնավոր մանկավարժական գործունեություն են ծավալել հայագիտության, մշակույթի, հայ դպրոցի ու մանկավարժության ասպարեզի անվանի գործիչներ՝ **<u>լեզվաբան Հրաչյա Աճառյանը, գրականագետներ Արսեն Տերտերյանը, Հակոբ Խանլարյանը, նկարիչ Ստեփան Աղաջանյանը, լուսավորության բնագավառի գործիչներ Առաքել Առաքելյանը, Արշավիր Քամալյանը, քաղաքական գործիչ, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշներ:</u>** Մեր ձեռքի տակ եղած փաստագրական տվյալները հնարավորություն են ընձեռել համառոտակի ներկայացնել վերոհիշյալ և այլ գործիչների մանկավարժական գործունեությունը ոչ միայն Շուշիի ռեալական ուսումնարանում, թեմական դպրոցում, այլև, ընդհանրապես, Արցախի հոգևոր, մշակութային, լուսավորության բնագավառներում[91]:

Էջմիածնի Սինոդին ներկայացրած՝ Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ 1902-1903 ուստարում ռեալական ուսումնարանում դասավանդել են Հրաչյա Աճառյանը, Իշխան Ջուրաբյանը, Գարեգին Իսահակյանը, Հակոբ Արիստակեսյանը, Համբարձում Աբովյանը,

91. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 70-71:

Գոգա Գոձեան, Յու. Իվանովը, Կոստանդին Թունիբեկյանը, Գաբրիել Գյուլիքեխյանը և ուրիշներ:

Հրաչյա Հակոբի Աճառյան (1876-1953թթ.): Ծնվել է Կոստանդնուպոլսում, արհեստավորի ընտանիքում: Ավարտելով Պոլսի կենտրոնական վարժարանը (1895թ.), բարձրագույն կրթությունը ստանում է Փարիզի Սորբոնի համալսարանում: Ստանալով լեզվաբանական մեծ պատրաստություն՝ հայտնի գիտնականներ Անտուան Մեյեի, Հ. Հյուբշմանի և ուրիշների մոտ, Հ. Աճառյանը 1898թ. վերջին վերադառնում է հայրենիք, ամբողջովին նվիրվում գիտական ու մանկավարժական գործունեության:

Երկար տարիներ որպես հայոց լեզվի, գրականության, հայ մատենագրության ուսուցիչ աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Նոր Նախիջևանում, Ն. Բայազետում, Թավրիզում, 1902-1903 ուս. տարում՝ Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում, դասավանդել ռուսաց լեզու, գրականություն, պատմություն, գերմաներեն:

Անվանի լեզվաբանը, շնորհիվ եռանդուն գործունեության և հմտության, թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում իր շուրջն է համախմբում ոչ միայն ուսուցիչներին, այլև Արցախի հայ մշակույթի, գիտության ու արվեստի գործիչներին, որոնք թեմում ծավալում են ակտիվ գիտամանկավարժական աշխատանք:

Շուշիում մանկավարժական գործունեության տարիներին Հր. Աճառյանը ջանում է որքան հնարավոր է բարձրացնել ուսումնական առարկաների դասավանդման դրվածքը, ամենակարևորը՝ մայրենի լեզվի ուսուցումը: Նա հայագիտության երախտավորների (Աբովյան, Թաղիադյան, Նալբանդյան, Նազարյանց, Աղայան, Աբեղյան, Մանանդյան, Լեո և ուրիշներ) նման մայրենի լեզվի յուրացումը ջերմորեն պաշտպանում է երկու տեսանկյունից՝ մայրենի լեզուն որպես հոգեբանորեն ամենամատչելին, սեփական մտքերը, զգացմունքները հասկացնելու և ուրիշներին հասկանալու բնական միջոց և ապա՝ որպես ազգության ինքնապահպանման հզոր գործոն:

Հր. Աճառյանին շատ են զբաղեցրել մայրենի լեզվի ուսուցման հարցերը: Ականավոր լեզվաբանը մայրենի լեզվի ուսուցման հիմքում դնում է լեզվի ու մտածողության՝ որպես մի անբաժանելի ամբողջության, սկզբունքը, որը բխում է լեզվի մասին նրա ունեցած ճիշտ ըմբռնումից:

Ուսուցման գլխավոր նպատակը Աճառյանը համարում է այն, որ երեխան սովորի գրական մաքուր լեզուն հասկանալ և գործածել: Լեզուն կարելի է գործնական ճանապարհով սովորել, ինչպես երեխան տանը սկսում է խոսել, և տեսականորեն ձեռք բերել, այսինքն՝ վերացական գաղափարներով, տրամաբանական մտածողությամբ, կարճ ասած՝ քերականության միջոցով: Բայց, ընդհանրապես, լեզվի ուսուցումը պահանջում է գիտակից և բազմաթիվ կրկնվող վարժություններ, որոնց միջոցով ձեռք բերվող հմտությունները հետզհետե կդառնան սովորական և կայուն:

Հր. Աճառյանը լուրջ ուշադրություն էր դարձնում աշակերտների բառապաշարի հարստացմանը: Այդ նպատակով նա առաջարկում էր թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի աշակերտներին քառորդային, արձակուրդային (ինչպես նաև ամառը) շարադրություններ գրել, կազմել բառարաններ:

Թեմական դպրոցի տեսչի մի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Հր. Աճառյանը, Յ. Մելիքյանը, Ի. Տեր-Հովհաննիսյանը, երաժշտության ուսուցիչ Ստեփան Դեմուրյանը և ուրիշներ ռեալական ուսումնարանի բարձր դասարանի աշակերտների մասնակցությամբ կազմակերպել են երեկույթներ՝ նվիրված հայ մեծ

գրող և մանկավարժ Ղ. Աղայանին, անվանի գրող Գր. Բարխուդարյանի գրական-մանկավարժական գործունեության 40-ամյակին[92]: Հետաքրքիր էին նաև Վարդանանց տոնի առթիվ կազմակերպված երաժշտական միջոցառումները, որոնց մասնակցում էր քաղաքի հայ հասարակությունը: Հավաքված գումարները նվիրում էին որբ ու անապաստան աշակերտներին:

Հր. Աճառյանը, բարի համբավ թողնելով ռեալական ուսումնարանի մանկավարժական կոլեկտիվում, 1904թ. սկզբներին տեղափոխվում է Հայաստան, շարունակում իր գիտամանկավարժական գործունեությունը:

Երևանի պետական համալսարանի հիմնադրումից անմիջապես հետո Հր. Աճառյանը հրավեր է ստանում դասախոսելու ընդհանուր լեզվաբանություն, հնդեվրոպական լեզուներ, համեմատական քերականություն, հայերենի համեմատական քերականություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, գրաբար, ֆրանսերեն, գերմաներեն, պարսից լեզվի պատմություն և այլ առարկաներ: Անվանի լեզվաբանը սերունդներին թողել է մեծարժեք գիտական ժառանգություն, որն ամփոփված է նրա շուրջ երկու հարյուր գիտական աշխատություններում:

<u>Արսեն Հարությունի Տերտերյան (1882-1953թթ.):</u> Անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Շոշ (Շուշիքենդ) գյուղում՝ հոտեմբերի 31-ին: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել (1902թ.) Շուշիի թեմական դպրոցը, 1905թ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական- մասնագիտական բաժինը:

Բեղմնավոր է եղել Ա. Տերտերյանի գիտամանկավարժական գործունեությունը: Որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ (նաև դասավանդել է հայոց պատմություն) աշխատել է Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում (1905-1907թթ.), ինչպես նաև հայրենի գյուղի դպրոցում:

Շուշիում իր կարճատև մանկավարժական գործունեության ընթացքում Ա. Տերտերյանը մշապես նորի, առաջադիմականի կրողն ու տարածողն էր լուսավորության բնագավառում: Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Արշ. Չիլինգարյանը, Սինոդին ներկայացրած իր հաշվետվության մեջ ընդհանրացնելով ռեալական ուսումնարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր բնութագիրը, նշում է, որ 1906-1907 ուստարում ուսուցիչներ Ա. Տերտերյանի, Շ. Հարությունյանի, Գ. Գյուլիքեխյանի, Յ. Պետրոսյանի, Ա. Թունիբեկյանի, Խ. Վարդապետյանի և ուրիշների կողմից կազմակերպվել են փորձնական դասեր, գրական-գեղարվեստական միջոցառումներ, էքսկուրսիաներ և այլ տեսակի օրինակելի միջոցառումներ[93]: Շուշիում աշխատելու տարիներին Ա. Տերտերյանն ուսուցիչների համար կազմել է մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, որոնք մեծապես օգնել են մայրենի լեզվի դասավանդմանը:

Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Ա. Տերտերյանը 1908թ. մեկնում է Պետերբուրգ, որտեղ ուսանում է հոգեբանության ինստիտուտում, բայց ավարտել չի կարողանում՝ նյութական ծանր պայմանների պատճառով:

Երկար տարիներ (1909-1920թթ.), մինչև Երևանի պետական համալսարանում

92. Հ. Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր, էջ 71-72:
93. Նույն տեղում, էջ 66-67:

պաշտոնավարելը, զբաղվել է ուսուցչությամբ Երևանի թեմական դպրոցում, ինչպես նաև Արցախի թեմի դպրոցներում:

Ա. Տերտերյանը 1920թ. դեկտեմբերին հրավիրվում է Երևանի նորաստեղծ համալսարան՝ որպես հայ գրականության պատմության դասախոս, ուր աշխատում է մինչև իր կյանքի վերջը՝ անընդմեջ գլխավորելով հայ գրականության ամբիոնը: Աշխատել է նաև որպես ֆակուլտետի դեկան:

Իր առաջին ստեղծագործական քայլերը Ա. Տերտերյանը սկսել է 1905 թվականին, պարբերաբար հոդվածաշար տպագրել «Տարազ» ամսագրում, ուր առաջին անգամ լույս է տեսել նրա «Կուլտուրակա՞ն, թե՞ անկուլտուրական» վերնագրով հոդվածաշարը:

Ապագա գրականագետ-մանկավարժն ուսման պակասը լրացրել է ինքնակրթությամբ՝ ուսումնասիրելով Նալբանդյանի, Չերնիշևսկու, Բելինսկու և այլ նշանավոր մտածողների աշխատությունները, խորացնելով և ընդարձակելով իր գիտելիքները հայ, ռուս և եվրոպական մշակույթի բնագավառում:

Երևանի պետական համալսարանում աշխատելու տարիներին Ա. Տերտերյանը գրել է բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ ու մենագրական հետազոտություններ՝ նվիրված հայ գրականագիտության հարցերին: Արժեքավոր են հատկապես «Մուրացան», «Հայ կլասիկներ», «Պերճ Պռոշյան», «Հայ հայրենասեր գրողներ» և ուրիշ երկեր:

Ա. Տերտերյանն իր անձնական հարուստ գրադարանը կտակել է Շոշ գյուղին, և այժմ այդ գրադարանը կոչվում է նրա անունով: Գրադարանում դրված է Ա. Տերտերյանի կիսանդրին:

XIX դարի 90-ական թվականների վերջին սկսվում է Արցախի երաժշտական կյանքի զարգացման մի նոր փուլ, որն անմիջապես կապված էր Խանդամիրյան թատրոնի բեղուն գործունեության հետ: Այդ շրջանում իրենց բարձրարվեստ ստեղծագործություններով Շուշիում հանդես են գալիս մեր ազգային երաժշտության նշանավոր գործիչները, որոնք իրենց եռանդուն գործունեությամբ նոր ուղու վրա են դնում հայկական երաժշտության զարգացումը: Շուշի են գալիս մասնագետ-երգիչներ Արշակ Կոստանդյանը, Բեգլար Ամիրջանյանը (Միլանի կոնսերվատորիայի շրջանավարտ), Մոսկվայի մեծ թատրոնի երգիչ (բաս) Ներսես Շահրամանյանը և ուրիշներ: XX դարի սկզբին Արցախի երաժշտական կյանքում ակնառու դեր են խաղացել նաև Սպիրիդոն Մելիքյանը, Ստեփան Դեմուրյանը, Գրիգոր Միրզոյանը և ուրիշներ[94]: Դա նշանակալից իրադարձություն էր Արցախի մշակութային կենտրոն Շուշի քաղաքում:

Հայ անվանի երաժշտագետները բեղուն գործունեություն են ծավալում նաև Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում: Արցախահայերն առաջին անգամ հնարավորություն ունեցան ծանոթանալ հայ անվանի երաժիշտների ստեղծագործություններին, յուրացնել այդ բնագավառում կուտակված հարուստ փորձը:

<u>Սպիրիդոն Ավետիսի Մելիքյան (1880-1933թթ.):</u> Անվանի երաժշտագետ, երգահան: Ծնվել է Թիֆլիսում: Ավարտելով էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1902թ. աշակերտել է Կոմիտասին), նշանակվում է ճեմարանի երգեցողության ուսուցիչ: 1904թ. մեկնում է Բեռլին՝ երաժշտական կրթություն ստանալու: 1908թ. վերադառ-

94. Մ. Մուրադյան, Հայ երաժշտությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբում, Երևան, 1970, էջ 194: Նաև, Բ. Խանդամիրյան, Ս. Հարությունյան, էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 1978, էջ 19-20:

նում է հայրենիք, շարունակում մանկավարժական գործունեությունը Շուշիի թեմական դպրոցում[95] և ռեալական ուսումնարանում: Այստեղ էլ նա կազմակերպում է երգչախումբ և հագեցված ծրագրերով համերգներ տալիս Ջրաբերդի, Վարանդայի, Դիզակի գավառներում, Շուշի քաղաքում: Երաժշտությունը Սպ. Մելիքյանի գործընկերների կատարմամբ (նրա հետ էին նաև թեմականի, ռեալականի երաժշտության ուսուցիչներ Հովի. Գյուլնազարյանը, Կարապետ քահ. տեր Վարդապետյանը) հետզհետե նվաճում էր արցախցիների սրտերը և մուտք գործում նրանց կենցաղը:

1909թ. վերջերին Սպ. Մելիքյանը տեղափոխվում է Ներսիսյան դպրոց: Այստեղ նա կազմակերպում է հայ երաժշտական ընկերություն (1912թ.): Բեղմնավոր էր նրա գործունեությունը Երևանի, Էջմիածնի դպրոցներում (1913-1924թթ.): 1924-1933թթ. Երևանի կոնսերվատորիայում դասավանդում է երաժշտության տեսություն, միաժամանակ երգչախմբային դասարանի ղեկավարն էր: Իսկ 1930-1931թթ. եղել է կոնսերվատորիայի տնօրեն: Սպ. Մելիքյանը զբաղվել է նաև ստեղծագործական աշխատանքով՝ թողնելով հարուստ ժառանգություն երաժշտության բնագավառում: Այսպես, 1917թ. հրատարակում է «Շիրակի երգեր» ժողովածուն, 1931թ.՝ «Ազգագրական ժողովածու», «Ախթամար», «Գառնիկ ախպեր» և այլ ստեղծագործություններ:

<u>Ստեփան Գուրգենի Դեմուրյան (1872-1934թթ.):</u> Հայտնի հասարակական գործիչ, երգահան, երաժշտագետ, խմբավար, մանկավարժ: Ծնվել է Թիֆլիսում: Ավարտելով Ներսիսյան դպրոցը, աշակերտել է ականավոր երաժշտագետ Մակար Եկմալյանին՝ (1856-1905թթ.), որպես երաժշտության ուսուցիչ աշխատել է Երևանում, Գորիսում, Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում (1893-1895թթ).: Նրա եռանդուն գործունեության շնորհիվ թեմականի և ռեալականի բարձր դասարանների աշակերտներից կազմվել է մի երգչախումբ, հայ հոգևոր և դասական երգերի ծրագրերով համերգներ տրվել հայկական գյուղերում: Շուշիի թեմական դպրոցի տեսուչ[96] Լևոն Սարգսյանը Սինոդին ներկայացրած իր մի հաշվետվության մեջ նշում է, որ հայ ազգային երգի երախտավորներից մեկի՝ Ստ. Դեմուրյանի գլխավորությամբ Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում ստեղծվել են երգչախմբեր, որոնք ոչ միայն համերգներ են տալիս քաղաքում և գյուղերում, այլև մասնակցում Շուշիի, Գանձասարի, Ամարասի եկեղեցիներում և այլ վայրերում կատարվող, պատարագներին, հավաքած գումարը նվիրում հայոց բարեգործական ընկերությանը: Ստ. Դեմուրյանը, որ երաժշտական բարձրագույն կրթությունը ստացել է Պետերբուրգի կոնսերվատորիայում՝ Գաբելի վոկալ դասարանում, իր գործունեության տարիներին հրապարակել է երաժշտական գործիքների մասին հոդվածներ, մշակել երգեր, ժողովածուներ, գրել երգեր, մեղեդիներ և հարստացրել դարերի պատմություն ունեցող հայ երաժշտական միտքը:

<u>Գրիգոր Միրզոյան (Սյունի) (1876-1939թթ.):</u> Հայտնի երգահան, երաժշտագետ, հասարակական գործիչ, խմբավար և մանկավարժ: Ծնվել է աշուղի ընտանիքում: 1905թ. ավարտում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որպես երաժշտության ուսուցիչ աշխատանքի անցնում Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում: Այստեղ կազմակերպում է երգչախումբ, համերգներ տալիս Արցախի գյուղերում և ստացած գումարները տրամադրում Շուշիում գործող բարեգործա-

95. Մ. Սանթրոսյան, Ներսիսյան դպրոցի պատմություն, Երևան, 1981, էջ 177:
96. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 66-68:

կան ընկերությանը: Երկու տարվա մանկավարժական գործունեության ընթացքում Գ. Միրզոյանը բավականին մեծ աշխատանք է տանում Արցախի թեմում հայ երաժշտության քարոզման ու զարգացման գործում: Նրա ջանքերի շնորհիվ ռեալական ուսումնարանի սաները բարձր առաջադիմության հասան երաժշտության բնագավառում[97]:

Գ. Միրզոյանը երաժշտական բարձրագույն կրթությունը ստացել է Պետերբուրգի կոնսերվատորիայում: Դեռ ուսանողական շրջանում գրում է մի շարք ռոմանսներ: 1906-1907թթ. երաժշտության ուսուցիչ է աշխատում Ներսիսյան դպրոցում: 1908-1914թթ. դասավանդում է Էրզրումի Սանասարյան վարժարանում, այնուհետև տեղափոխվում է Թիֆլիս, մասնակցում երաժշտական ընկերության աշխատանքներին: Կյանքի վերջին տարիներն անց է կացնում ԱՄՆ-ում՝ մշտական կապ պահպանելով Մայր Հայաստանի հետ: Այդ տարիներին նա գրում է մի շարք երգեր, օպերետներ և օպերաներ: Գ. Միրզոյանը հեղինակ է գիտամանկավարժական թեմատիկայով, հայ երաժշտության պատմությանը նվիրված տասնյակ աշխատությունների, որոնց էջերում քննության են առնվում մանկավարժության, երաժշտության հարցեր:

Ավետիք Տեր-Պողոսյան (1880-1954թթ.): Հայտնի բնագետ, աշխարհագրագետ, մանկավարժ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Սովորել է Ներսիսյան դպրոցում, ապա Գևորգյան ճեմարանում, որն ավարտել է 1901թ.: 1903թ. մեկնում է Գերմանիա, ընդունվում Լայպցիգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի բնագիտական բաժին, այն ավարտում 1907թ. և հաջորդ տարին պաշտպանում դոկտորական թեզ: Այնուհետև վերադառնում է հայրենիք և աշխատում Շուշիի թեմական դպրոցում (1908-1909 ուստարում), ռեալական ուսումնարանում՝ որպես բնագիտության, աշխարհագրության ուսուցիչ: Այդ ժամանակ ռեալական ուսումնարանում դասավանդում էին Գ. Տ. Մինասյանը, Իս. Տեր-Ղազարյանը, Ա. Հայրապետյանը, Արշ. Տոնոյանը, Կ. քահ. Վարդապետյանը և ուրիշներ[98]: Թեմական դպրոցի տեսուչ Ար. Չիլինգարյանի՝ Շուշիի Սինոդին ներկայացրած մի հաղորդագրության մեջ նշվում է, որ բնագիտության ուսուցիչ Ա. Տեր-Պողոսյանի եռանդուն ջանքերով թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում ստեղծվում են մի շարք լաբորատոր սարքեր ու գործիքներ, կազմվում է բնագիտական պատկերների մոդելների ժողովածու, որի հիմքը, ինչպես Լեոն է վկայում, դրել է թեմական դպրոցի տեսուչ բժիշկ Աղասարյանը՝ 1879թ. Պետերբուրգից բերելով սարքեր, և բոլոր դասերը դարձնում դիտողական, դրանով իսկ սովորողների համար դյուրըմբռնելի դարձնելով ուսումնական նյութը:

Ուշագրավ է նշել այն փաստը, որ Ա. Տեր-Պողոսյանը միաժամանակ կազմակերպում էր էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը, սովորողների մեջ հետաքրքրություն զարգացնում բնության երևույթների նկատմամբ: Շատ հետաքրքիր էր կազմակերպում նաև աշխարհագրության դասը՝ օգտագործելով քարտեզներ, գծագրեր, նկարներ (մի մասը իր նախաձեռնությամբ երեխաներն էին պատրաստում) և այլ դիդակտիկ նյութեր: 1910-1920թթ. Ա. Տեր-Պողոսյանն աշխատում է Արղության դպրոցներում, Գևորգյան ճեմարանում, Ներսիսյան դպրոցում, ապա Երևանի ուսուցչական սեմինարիայում:

1920թ. նա հրավիրվում է որպես Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի դեկան, դասախոս և ամբիոնի վարիչ: Երկար տարիներ

97. Տե՛ս Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 171:
98. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 68-69:

դասախոսել է նաև գյուղատնտեսական և բժշկական ինստիտուտներում:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ Ա. Տեր-Պողոսյանը զբաղվել է նաև գիտական աշխատանքով: Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատանքների:

Արշակ Տոնոյան (1888-1942թթ.): Հայտնի մանկավարժ, մաթեմատիկոս: Միջնակարգ կրթությունն ստացել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ այն ավարտելով 1906թ.: Երկու տարի մաթեմատիկական առարկաներ է դասավանդել Գևորգյան ճեմարանում, իսկ 1908-1910թթ. աշխատել Շուշիի թեմական դպրոցում և ռեալականում[99]: Այստեղ աշխատելու տարիներին հրատապ պահանջ էր համարում մաթեմատիկական առարկաների դասավանդումը բարձր հիմքի վրա դնելը:

Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Արշակ Չիլինգարյանի հաշվետվության[100] մեջ նշվում է, որ այդ տասնամյակում Շուշի քաղաքի դպրոցական կյանքում նկատելի տեղաշարժը բացատրվում է թեմական դպրոցի ուսուցիչների (Արշակ Տոնոյան, Ավետիք Պողոսյան, Գրիգոր Մինասյան, Ռուբեն Մանասյան, Սպիրիդոն Մելիքյան, Արշակ Աստվածատրյան և ուրիշներ) մատուցած մեծ ծառայություններով: Նրանք ցանկանում էին արցախահայ դպրոցը տեսնել կարգավորված վիճակում, որպեսզի այն լինի նույնպես ապահով, ունենա կահավորված ուսումնական կաբինետներ, գրադարան-ընթերցարան: Իրենց եռանդուն գործունեության շնորհիվ վերոնշյալ և շատ ուսուցիչներ թեմական, օրիորդաց դպրոցներում, ռեալական ուսումնարանում կազմակերպում են մաթեմատիկայի, բնագիտության, աշխարհագրության, պատմության, հայ գրականության խմբակներ, աշակերտների ուժերով կահավորում ուսումնական կաբինետները, լաբորատորիաները: Նրանք մեծ ուշադրություն են դարձնում արցախահայության լուսավորությանը հայ մանուկների կրթության ու դաստիարակության գործին:

Ա. Տոնոյանը հետագայում (1910-1914թթ.) բարձրագույն կրթություն է ստանում Գերմանիայի Հելլե քաղաքի համալսարանում, ուր ներկայացնելով ավարտական թեզ՝ ստանում է դոկտորի գիտական աստիճան: 1914-1921թթ. աշխատում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում:

1921թ. Ա. Տոնոյանը հրավիրվում է Երևանի պետական համալսարան՝ որպես մաթեմատիկայի դասախոս: Տոնոյանը մեծ ծառայություն ունի մաթեմատիկական առարկաներից մայրենի լեզվով ուսումնական գրականություն ստեղծելու գործում: Նա եղել է համալսարանի տեխնիկական ու ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետների դեկան և բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ: 1930թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Հեղինակ է մի շարք գրական աշխատանքների ու հոդվածների:

Ալեքսանդր Մելիքյան (1877-1969թթ.): Հայտնի մանկավարժ, մաթեմատիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Դիզակում: Նախնական կրթությունը ստացել է տեղի երկդասյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Շուշիի ռեալական ուսումնարանում: Բարձրագույն կրթությունը ստացել է (1904-1908թթ.) Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում: Որպես մաթեմատիկայի ուսուցիչ (1908-1922թթ.) դասավանդել է Երևանի, Թիֆլիսի, Արցախի դպրոցներում:

Այդ տարիներին Ա. Մելիքյանը միաժամանակ նախագծել և կառուցել է (1908-1915թթ.) Երևանի ջրմուղը: Նա Հայաստանում առաջին տեխնիկումների կազմա-

99. Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 183:
100. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 72-73:

կերպիչներից է. 1922-1931թթ. եղել է Երևանի ինդուստրիալ տեխնիկումի տնօրենը:

Ա. Մելիքյանը 1931-1933թթ. գիտամանկավարժական գործունեություն է ծավալել Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում,՝ Երևանի պետական համալսարանում՝ 1933-1961թթ.: Եղել է համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների և աշխատությունների:

Գևորգ Ղարաջյան (Ստ. Արկումեդ) (1866-1936թթ.): Հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ: Ավարտել է (1883թ.) Ներսիսյան դպրոցը, ապա մինչև 1889թ. ուսանել Ժնևի համալսարանի սոցիոլոգիական ֆակուլտետում: Այդտեղ սերտ կապեր է ստեղծել ռուս վտարանդի հեղափոխական գործիչների հետ: Կովկաս վերադառնալուց հետո կապվում է տեղի սոցիալ-դեմոկրատների հետ:

Որպես մանկավարժ (հայոց լեզվի, գրականության, սոցիոլոգիայի, տրամաբանության ուսուցիչ) նա աշխատել է Գանձակի, Վերին Ագուլիսի, Երևանի դպրոցներում, իսկ 1909-1911թթ.՝ Շուշիի թեմական դպրոցում[101]: Այդ ժամանակ թեմական դպրոցում դասավանդել են բժիշկ Նիկոլայ Յարամիշյանը (տեսուչ), Գարեգին Գյուլիքևխյանը, Գրիգոր Տեր-Մինասյանը, Լևոն Թախտաճյանը (անվանի գիտնական Արմեն Թախտաճյանի հայրը), Սահակ Տեր-Ղուկասյանը և ուրիշներ: Թեմական դպրոցի տեսչի հաշվետվությունից[102] տեղեկանում ենք, որ Գևորգ Ղարաջյանը դասավանդել է նաև ռեալական ուսումնարանում՝ գրականություն, սոցիոլոգիա, տրամաբանություն և գերմաներեն լեզու առարկաները:

Բացի մանկավարժական գործունեությունից, դպրոցական բնույթի խնդիրներ արծարծելուց, Գ. Ղարաջյանն ակտիվորեն մասնակցում է Շուշիում հրատարակչական գործի զարգացմանը՝ Մելքոն Բաբաջանյանի տպարանում խմբագրում ու սրբագրում է գեղարվեստական գրքեր, ուսումնական ծրագրեր, դասագրքեր, ինչպես նաև թղթակցում «Ղարաբաղ» թերթին, որի անդրանիկ համարը լույս է տեսել 1911թ. նոյեմբերին[103]:

Հետագայում Գ. Ղարաջյանն աշխատել է Ներսիսյան դպրոցում, եղել է Վրաստանի հեղափոխական թանգարանի վարիչ (1920-1936թթ.), ապա՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան: Զբաղվել է դասախոսական, գրական աշխատանքով:

XX դարի երկրորդ տասնամյակում Արցախի քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցան էական տեղաշարժեր: Երկրամասի մտավորականության կարող ուժերը բացառիկ նշանակություն էին տալիս ժողովրդի լուսավորությանը՝ ձգտելով քաղաքական ինքնագիտակցություն և ազատագրական մղումներ ներարկել արցախահայությանը:

Աշոտ Գարեգինի Հովհաննիսյան (1887-1972թթ.): Հայտնի մանկավարժ, պատմաբան, պետական, քաղաքական գործիչ: Նախնական կրթությունը ստացել է հայրենի Շուշի քաղաքի ռեալական ուսումնարանում, բարձրագույնը՝ Գերմանիայի Ենա, Հալլե և Մյունխեն քաղաքների համալսարաններում: Ուսումնառության տարիներին շնորհալի, լայն հետաքրքրությունների տեր երիտասարդը խորանում է փիլիսոփայության, պատմության, տնտեսագիտության մեջ, տիրապետում գերմաներեն, ֆրանսերեն և լատիներեն լեզուներին: Հետագայում իր հուշերում

101. Մ. Սանթրոսյան, նշվ. աշխ., էջ 185:
102. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 74-75:
103. «Ղարաբաղ», 1911, նոյեմբերի 17:

Ա. Հովհաննիսյանը գրում է. «Ես մտա Հալլեի և այնուհետև Մյունխենի համալսարանը՝ պատմություն, փիլիսոփայություն ուսումնասիրելու և լսելու աշխարհահռչակ Հեկկելի, Օստոլիբմանի դասախոսությունները»[104]:

Գիտության մեծ պաշարով զինված՝ Ա. Հովհաննիսյանը 1913թ. օգոստոսին վերադառնում է Շուշի, աշխատանքի անցնում թեմական դպրոցում և դասավանդում գերմաներեն լեզու, ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, միաժամանակ 5-րդ դասարանի դաստիարակ էր[105]: Ռուսական և եվրոպական առաջավոր մտքին լավատեղյակ գիտնականը, պատմաբան-մանկավարժը փոփոխություններ է մտցնում այդ առարկաների դասավանդման դրվածքի մեջ, գործադրում ուսուցման գործընթացն ակտիվացնող առաջավոր մեթոդներ, ընդլայնում աշակերտների տեսական գիտելիքները Հայաստանի և Ռուսաստանի պատմության բնագավառում, կազմակերպում էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր, հուշակոթողներ, տեսականը զուգակցում գործնականի հետ: Երիտասարդ պատմաբան-ուսուցիչն ավելի շատ ուշադրություն էր դարձնում հայ ազատագրական պայքարին առնչվող թեմաների լուսաբանմանը և աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնում պատմական անցյալի ուսումնասիրության նկատմամբ:

Շարունակելով իր սիրելի ուսուցիչների՝ Ա. Տեր-Միրաքյանի, Բենիկ վարդապետի (թեմական դպրոցի տեսուչ), Ար. Ոսկանյանի, Ա. Թունիբեկյանի և ուրիշների լավագույն ավանդույթները, Ա. Հովհաննիսյանը ևս թեմական դպրոցում կազմակերպում է «պատմության խմբակ», որի անդամները՝ բարձր դասարանի լավագույն աշակերտները, ուսումնասիրություններ են կատարում Շուշիի գավառի տեղանքում (գերեզմանաքարերի, հուշարձանների, վիմագրերի ուսումնասիրում), հայտնաբերում Արցախի բնակիչների զբաղմունքի, մշակույթի զարգացման բարձր աստիճանի մասին գրություններ, անոթներ, դրամներ, զենքեր, սափորներ և այլ զարդաքանդակներ, այդ ամենը տեղադրում դպրոցում գործող փոքրիկ թանգարանում[106]: Գիտնականի, պատմաբան-մանկավարժի նրա գործունեությունն էլ ավելի է բարձրացնում թեմական դպրոցի (դասավանդել է նաև ռեալական ուսումնարանում) հեղինակությունը, նպաստում աշակերտների գիտական մակարդակի բարձրացմանը: Լեզուների իմացությունը, հայագիտության նվաճումներին լավատեղյակությունը, հարուստ մտավոր պաշարը մեծապես օգնել են նրան հետաքրքրական ու գիտամեթոդական առումով հագեցված դասախոսություններ կարդալ ինչպես աշակերտության, այնպես էլ հասարակության, մտավորականության համար (հատկապես՝ շատ հետաքրքիր էին գերմաներեն կարդացած դասախոսությունները):

Ա. Հովհաննիսյանը մանկավարժական աշխատանքին զուգահեռ՝ մշակույթն ու լուսավորությունը ձգտեց ծառայեցնել ազգային ազատագրության խնդիրներին: Միշտ աշխույժ էին անցնում նրա հանդիպումները դպրոցական կոլեկտիվների և քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների հետ: Նա մասնակցում էր երկրամասի հասարակական և մշակութային կյանքի գրեթե բոլոր հարցերի քն-

104. Ա. Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 84:

105. Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոդվածների ժողովածու), Երևան, 1971, էջ 11:

106. Թանգարանը ստեղծվել է թեմական դպրոցի ուսուցիչներ Արշակ Տեր-Միքայելյանի, Արտո Աբեղյանի, Իշխան Ջարուբյանի և ուրիշների նախաձեռնությամբ 1896թ., որի մասին հաղորդում է տպագրվում «Ազգագրական հանդես»-ում, 1896թ., Ա. գիրք, էջ 30:

նարկումներին, «Միրաժ» աշակերտական խմորատիպ ամսագրի հրատարակությանը (1913-1917թթ.): Ամսագրին աշխատակցել են քաղաքական գործիչներ՝ Գ. Մեհրաբյանը, Ա. Ավագյանը, Գր. Խաչինյանը և ուրիշներ: Ս. Ափյանն իր հուշերում պատմում է. «Շատ մեծ հեղինակություն ուներ «Միրաժ»-ը (10-12 թերթերի ծավալ) աշակերտության և ուսուցիչների մի մասի մոտ, համարներից մի քանիսը անլեգալ ուղարկել ենք ընկ. Ա. Հովհաննիսյանին ու Բաքու՝ մի երկու-երեք ընկերոջ»[107]:

Երիտասարդ գիտնականն ու ուսուցիչն իր գործունեության ընթացքում աչքի է ընկել նաև հասարակական-կազմակերպչական աշխատանքներով: Երբ Շուշիում 1913թ. օգոստոսի 10-ին և 11-ին տեղի ունեցավ Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակին նվիրված մեծ հոբելյանական տոնակատարություն[108], որին մասնակցում էին հայ հասարակության ներկայացուցիչներն ու մշակույթի երախտավորները, Աշոտ Հովհաննիսյանը՝ իբրև կազմակերպչական աշխատանքները ղեկավարող հանձնաժողովի անդամ, հրավիրված գործիչներին՝ Բաբկեն վարդապետին (Երևանի բարեգործական ընկերության ճյուղի կողմից), Ար. Աբեղյանին (Ներսիսյան դպրոցի մանկավարժական խմբից), Լեոյին (Երևանի թեմական դպրոցի հոգաբարձության կողմից), Ա. Տեր-Միքայելյանին (Արղության դպրոցի տեսուչ) և շատ ուրիշների (թվով 34 պատգամավոր) ուղեկցում էր Արցախի պատմական հիշարժան վայրեր՝ Գանձասար, Դադի վանք, Ամարաս և այլ վանքեր, ծանոթացնում երկրամասի բազմադարյա մշակույթի արժեքներին[109]:

Ա. Հովհաննիսյանը 1915-1917թթ. եռանդուն մանկավարժական գործունեություն է ծավալում էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Քաղաքական բուռն իրադարձությունների շրջանում նա քաղաքական-հեղափոխական աշխատանք է կատարում նաև իր հայրենի Շուշի քաղաքում (1917-1918թթ.), միաժամանակ հրատարակում է «Նեցուկ» հասարակական-քաղաքական շաբաթաթերթը[110], որին աշխատակցել են Հակոբ Հովհաննիսյանը (եղբայրը), Հակոբ Կամարին, Ալեքսանդր Ծատուրյանը (Ռուբենին), Սուրեն Դանիելյանը և ուրիշներ: Հետագայում Գառնիկ Ղազարյանն իր հուշերում պատմում է, որ այն ժամանակ «Նեցուկ»-ի շուրջը համախմբված քաղաքական, մշակութային ակտիվ գործիչների (Ե. Ներսիսյան, Գ. Աղայան, Գ. Թովմասյան և ուրիշներ) և այլ աշխատողների ջանքերով թերթը դարձավ ժողովրդական զանգվածների հենարանը[111]: Արցախահայ իրականության մեջ ծավալված մտավոր զարթոնքի շրջանում «Նեցուկ»-ը, իրոք, մեծ դեր խաղաց երկրամասի հասարակական-քաղաքական կյանքում և ինչպես Ս. Ավագյանն է գրում. «Ծնվեց այն օրերին, երբ Ղարաբաղը, իրոք «նեցուկների» խիստ կարիք ուներ, երբ անհրաժեշտ էին այնպիսի տպագիր օրգաններ, որոնք բարձր պահեին ժողովրդի ազատագրության պայքարի դրոշը, պարզ ու հասկանալի լեզվով խոսեին իրավազուրկ մարդկանց մասին»[112]:

Շաբաթաթերթի բաժիններն ունեին հետևյալ խորագրերը՝ «Կուսակցական-

107. Ս. Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմություն, էջ 191-192:
108. Հ. Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, էջ 15:
109. Հ. Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, էջ 15-16:
110. «Նեցուկ», 1917, թ. 1, 2:
111. Նույն տեղում:
112. Ս. Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմություն, էջ 247:

քաղաքական կյանք», «Պրոֆեսիոնալ կյանք», «Արտասահմանյան», «Գավառ», «Մշակութային-լուսավորական», «Լրատու» և այլն[113]: Խմբագրին՝ Աշոտ Հովհաննիսյանին, մեծապես հուզում էին հարազատ երկրամասի ժողովրդի թշվառ վիճակը, հայերի և թուրքերի թշնամական հարաբերությունները՝ դրանից դուրս գալու միակ երաշխիքը տեսնելով ազգային-ազատագրական պայքարի մեջ: Ա. Հովհաննիսյանը և թերթի հեղինակները տարբեր առիթներով նշում են, որ գավառի դրությունը ծանր է ոչ միայն տնտեսական և քաղաքական, այլև լուսավորության բնագավառում և ծրագրում են ուժերը ներածին չափ լուսավորել երկրամասի հայությանը, մասնավորապես, ժողովրդական այն զանգվածներին, որոնք անգրագիտության մեջ էին: Թերթի խմբագիրը յուրաքանչյուր համարում սևեռուն ուշադրություն է դարձրել մշակույթի այնպիսի կարևոր բնագավառների, ինչպիսիք էին դպրոցաշինությունը, մշակութա-լուսավորական օջախների (գրադարան-ընթերցարան, խրճիթ-ընթերցարան) ստեղծումը գյուղերում, անգրագիտության վերացումը երկրամասում: Ա. Հովհաննիսյանը երկամյա գործունեության (1917-1918թթ.) ընթացքում նվիրումով ծառայեց հայրենի երկրամասի ժողովրդին և իր պարբերականի միջոցով լուսաբանեց հայ բնակչության առօրյան, նրան մղելով արդար պայքարի: Ապագայի նկատմամբ վառ հավատով լի՝ Ա. Հովհաննիսյանը ձգտում էր օգնել ժողովրդին հասկանալու հասարակական-քաղաքական կյանքում կատարվող փոփոխությունները, որոնք նպաստավոր պայմաններ կստեղծեն ժողովրդի բարեկեցության ու զարգացման համար:

Հայրենի երկրամասում մանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեության տարիներին (1913-1914 և 1917-1918թթ.) նա լուրջ ծառայություններ մատուցեց ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացմանը, խորապես նպաստեց նրա քաղաքական զարթոնքին, ինքնաճանաչմանը:

Ա.Հովհաննիսյանը հասարակական-քաղաքական, լուսավորչական ու գիտական լայն գործունեություն է ծավալել խորհրդային շրջանում (1919-1972թթ.)[114]:

<u>Առաքել Գևորգի Առաքելյան (1887-1981թթ.):</u> Բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Խաչեն գավառի Խանածախ գյուղում: Ավարտելով Շուշիի թեմական դպրոցը, ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանում: Այստեղ նրան հրապուրում են գրականությունը, փիլիսոփայությունը, մանկավարժությունը, հոգեբանությունը: Ճեմարանավարտ 15-ամյա պատանին, որպես հայոց լեզվի, գրականության, պատմության ուսուցիչ, 1902-1907թթ. աշխատում է Իգդիրում, Երևանում և այլ վայրերում: 1908թ. սեպտեմբերին Առաքելյանը տեղափոխվում է Շուշի, դասավանդում թեմական և օրիորդաց դպրոցներում, ռեալական ուսումնարանում:

Նոր դարաշրջանի առաջին երկու տասնամյակներում (1908-1920թթ.) Ա. Առաքելյանը, իր մակնավարժական, գրական, հրապարակախոսական և հասարակական գործունեությամբ զգալիորեն առաջ է մղել Արցախի կրթամշակութային կյանքը: Այդ նպատակով նա ակտիվ մասնակցություն է ունեցել երկրամասի մի շարք ձեռնարկումների՝ դպրոցների, գրադարան-ընթերցարանների, մշակութա-լուսավորական այլ օջախների հիմնադրման գործում, զանազան հասարակա-

113. Տե՛ս «Նեցուկ», 1917, օգոստոսի 24-ի թ. 2, սեպտեմբերի թ. 4, գ համարները և այլն:

114. Տե՛ս էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Վ. Դիլոյան, Աշ. Հովհաննիսյանի մասին, էջ 9-15, Աշ. Հովհաննիսյանի Հուշեր և բնութագրումներ գրքում՝ Խ. Բարսեղյանը նրա մասին, էջ 3-8:

կան կազմակերպությունների, ընկերությունների աշխատանքին, գործնականորեն արձագանքել արցախահայ կյանքին վերաբերող բազմազան հրատապ խնդիրների:

Ա. Առաքելյանի գործունեությունը համընկնում է այն շրջանին, երբ հայկական դպրոցների փակումից հետո (1896-1906թթ.) Արցախում վերստին բացվում էին դրանք (1906-1907թթ.):

Պետք էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, մշակել կանոնադրություններ, դպրոցներն ապահովել նյութական բազայով: Այդ ուսումնական տարում նրա ղեկավարությամբ որոշակի աշխատանք կատարվեց մի շարք գյուղերում. Գիշի, Ճարտար, Թաղավարդ, Սարուշեն, Դահրավ, Ջրաբերդ և այլ վայրերում բացվեցին ծխական դպրոցներ երկու տարվա դասընթացով:

Նրա առաջին ձեռնարկումը եղավ թեմական դպրոցում ուսումնական հանձնաժողովի կազմումը (անդամներ՝ Ա.. Առաքելյան, Ա.. Տերտերյան, Լ. Վարդունի, Գ. Ներսիսյան, Գ. Ղազարյան և ուրիշներ), որի նպատակն էր՝ ա) դպրոցների համար մշակել նոր ուսումնական ծրագրեր, դասագրքեր, բ) կազմել նոր դպրոցական կանոնադրություն, հիմք ընդունելով Ստ. Լիսիցյանի, Մ. Աբեղյանի, 1906թ. Ղ. Աղայանի կազմած կանոնադրությունների դրույթները, գ) Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում կազմակերպել մեկամյա ուսուցչական դասընթացներ՝ դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու համար և այլն: Ա. Առաքելյանի մշակած դպրոցական նոր կանոնադրության համաձայն՝ 1909-1910 ուստարում Արցախի թեմում ծխական դպրոցներն ունեին 4-ամյա, իսկ երկդասյանները՝ հնգամյա դասընթաց: Ստանձնելով թեմի դպրոցների տեսուչի պաշտոնը (1911-1914թթ.), նա ընդլայնում է երկսեռ դպրոցների ցանցը, որոնցից շատերը երկդասյա էին: Մեծ ուշադրություն է դարձվում լեզուների ուսուցմանը, բարելավում է ուսուցչական կազմը, մտցնում է մանկավարժական առավել ընդունելի մեթոդներ ու ձևեր: «Ղարաբաղ» թերթում տպագրած «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911-1912 ուս. տարում» հոդվածում, Ա. Առաքելյանը մանրամասն ներկայացնում է դպրոցների վիճակը, բացահայտում թերությունները, նշում տարբեր առարկաների ավանդման ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը:

Այդ տարիներին Ա. Առաքելյանը երկրամասի լուսավորական-կրթական գործին նվիրված հոդվածներով հանդես է գալիս «Ղարաբաղ» (1911-1912)[115], «Նեցուկ» (1917), «Մշակ» (1913), «Փայլակ» (1915-1917), «Ղարաբաղի Սուրհանդակ» (1918) և այլ պարբերականներում: «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911-1912 ուսումնական տարում» ծավալուն հոդվածաշարում Ա. Առաքելյանը նշում է, որ 1910-1911 ուստարում թեմի ծխական դպրոցները զուրկ են եղել թեմական տեսչից, դպրոցների ղեկավարությունը հանձնված էր տեղական հոգևոր վարիչներին, ինչի հետևանքով դպրոցները ծայրաստիճան քայքայման ու անկման են հասել, փակվել են մի շարք դպրոցներ, իսկ եղածներում կրթված ու ցեղզավոր ուսուցիչներին շատ տեղերում փոխարինեցին «անկիրթ, կիսագրագետ անձնավորություններ»[116]:

Հոդվածի հեղինակը միաժամանակ ցույց է տալիս ուսումնական գործի որոշ առաջընթացը հաջորդ ուստարում: Ա. Առաքելյանը Ղարաբաղի եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչն էր (1912), նրա ջանքերով գավառի

115. «Ղարաբաղ», 1912, թ. 34: «Խորհրդային մանկավարժ», 1988, թ. 1, էջ 71:
116. «Մշակ», 1913, թ. 151:

դպրոցները համեմատաբար առաջադիմում են. բարելավվում է ուսուցումը, ուսուցչական ասպարեզը հիմնականում մաքրվում է անորակ դասատուներից, կարգ ու կանոն է մտցվում դպրոցների ներքին կյանքում, հոգ է տարվում լեզուների ուսուցումն ամուր հիմքերի վրա դնելու համար:

Ա. Առաքելյանի տեսչության շրջանում՝ 1912-1914թթ., դպրոցական գործի որոշակի աշխուժությունը նկատելի էր հատկապես Շուշիում. գործում էին թեմական հոգևոր դպրոցը 300 աշակերտով, Մարիամյանը՝ 250 աշակերտով (երկսեռ), եկեղեցական-ծխական միդասյա երկսեռ դպրոցներ, ուր սովորում էին 60 աղջիկ և տղա, Մեղրեցոց եկեղեցական դպրոցը՝ 70, Թադևոսյանը՝ 120, քաղաքայինը՝ 250, ռեալական ուսումնարանը՝ 400 աշակերտով: Բացի այդ, քաղաքում կային Մարինսկի ռուսական օրիորդաց դպրոցը՝ 100-ից ավելի աշակերտով և մի մասնավոր տարրական դպրոց՝ 60 աշակերտով: Այդ ժամանակ Ղարաբաղում գործում էին 60-ից ավելի հայկական դպրոցներ[117]:

Դրական աշխատանքների հետ մեկտեղ Ա. Առաքելյանը բացահայտում էր դպրոցներում շարունակվող թերությունները, նշում տարբեր առարկաների ավանդման խելացի կազմակերպման անհրաժեշտությունը:

Դպրոցական հարցերի լայն լուսաբանման հետ մեկտեղ Ա. Առաքելյանն իր հոդվածներում ձգտում էր ընթերցողների մեջ սեր առաջացնել դեպի մանկավարժությունը, գիտությունը, գրականությունը և արվեստը:

Ա. Առաքելյանը 1932թ. վերջերին տեղափոխվում է Երևան, շարունակում իր գիտամանկավարժական գործունեությունը: Նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչն էր 1934-1972թթ.: Առաքելյանի գրչին են պատկանում 40-ից ավել գիտական հոդվածներ, աշխատություններ, արժեքավոր են, մանավանդ, «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմությունը» (եռահատոր), «Գրաբարի դասագիրքը», «Հունական, հռոմեական գրականությունը» (2 հատորով) աշխատությունները:

Նրա՝ գիտնական-մանկավարժի ղեկավարությամբ գիտական թեզեր են պաշտպանել գիտությունների մի շարք թեկնածուներ, դոկտորներ, որոնցից շատ շատերն այսօր աշխատում են կրթության բնագավառում:

<u>Արշավիր Քամալյան (1889-1969թթ.):</u> Անվանի մանկավարժ, հրապարակախոս, կրթական գործի կազմակերպիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է ռեալական ուսումնարանում: Այնուհետև ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

Վերադառնալով հայրենիք՝ աշխատում Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում (1911-1917թթ.), դասավանդում ռուսաց լեզու, պատմություն, իրավագիտություն և այլ առարկաներ: Հետագայում դասավանդել է նաև Ստեփանակերտի դպրոցներում, Բալուջայում և այլուր:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց Ա. Քամալյանն աշխատել է նաև Շուշիում լույս տեսնող (1911-1917թթ.) «Փայլակ» քաղաքական-հասարակական, սոցիալ դեմոկրատական (հիմնականում ունեցել է բոլշևիկյան ուղղություն) թերթին: Խմբագիր-հրատարակիչը եղել է Լևոն Վարդապետյանը: Թերթին աշխատակցել են նաև Լեոն, Ա. Առաքելյանը, Լ. Վարդունին և ուրիշներ:

Շուշիում լույս տեսնող «Փայլակ», «Ծիածան» (1916թ.), «Ղարաբաղ» (1911-

117. «Մշակում» տպագրվ. Առ. Առաքելյանի հոդվածաշարը «Ղարաբաղի դպրոցների վիճակը» 1913, թ. 151:

1919թթ.), «Արցախ» (1919թ.) և այլ պարբերականներում հրապարակած բազմաթիվ հոդվածներում՝ «Հայ կրթական կյանքը», «Դպրոցը մանկավարժական հիմնարկություն է», «Դպրոցական ռեֆորմ» և այլն, Արշավիր Քամալյանը առաջ է քաշում Արցախում դպրոցական գործի բարելավման և, ընդհանրապես, մշակութալուսավորչական աշխատանքների կարգավորման հարցերը: Կարևոր է համարում ինչպես բարձրորակ ուսուցչական կադրերի առկայությունը, այնպես էլ ուսուցման կազմակերպումը նոր հիմունքներով, նոր առարկաների մտցնումը դպրոցում, լեզուների ուսումնասիրումը և այլն: «Փայլակ» թերթի թիվ 25-ում տպագրված մի հոդվածում Ա. Քամալյանը գրում է. «Ղարաբաղի ինտելիգենցիան պիտի և պարտավոր է կազմակերպվելու, նա պիտի յուր ձեռքը վերցնի ժողովրդին նոր ոգով կրթելու գործը, որպես միակ ընդունակ տարրը այդ խնդրում: Անհրաժեշտ է համախմբվել և անհապաղ գործի անցնել, այլ կերպ ժամանակակից ինդուստրիան յուր անտարբերությամբ մեծ պատասխանատվություն է վերցնում յուր վրա: Անհրաժեշտ է բարձր հիմքի վրա դնել ժողովրդական կրթության գործը Ղարաբաղում»[118]:

Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումից հետո Ա. Քամալյանն աշխատում է որպես մարզային լուսբաժնի վարիչ (լուսժողկոմ՝ 1923-1925թթ.): Այնուհետև Ստեփանակերտում և Բաքվում աշխատում է ժողկրթության տարբեր մարմիններում:

Բացի վերոնշյալ գործիչներից, քննարկվող ժամանակաշրջանում Արցախի կրթական գործի, մշակույթի զարգացմանը նպաստել են նաև թեմական դպրոցի տեսուչներ **Բենիկ Վարդապետը, Նիկոլայ Յարամիշյանը, ուսուցիչներ Կարապետ Վարդապետյանը, Լևոն Թախտաճյանը, Գրիգոր Տեր-Պողոսյանը, Հրանտ Տեր-Մելիքյանը, ինչպես նաև թեմականի շրջանավարտներ, հոգևոր-մշակութային գործիչներ, կին լուսավորիչ մանկավարժներ:** Այդ մասին մանրամասն կներկայացվի աշխատության հաջորդ բաժիններում:

118. «Փայլակ», 1917, թ. 25, 27:

4. Շուշիի թեմական դպրոցի սաները և նրանց գործունեությունը (1850-1920թթ.)

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Շուշիի թեմական դպրոցն իր գործունեության սկզբնական փուլում և հետագա շրջաններում, իրապես լինելով համարյա միակ քիչ թե շատ ժամանակակից բարեկարգ դպրոցն Արցախի թեմում, դեպի իրեն էր ձգում հայ ուսումնատենչ պատանիներին ոչ միայն Արցախից, Հայաստանից, այլև Նուխիի գավառի, Բաքվի հայաշատ վայրերից, Անդրկովկասի հայ լուսավորչական այլ թեմերից, ինչպես նաև Ռուսաստանի հայաբնակ հեռավոր վայրերից: Անուրանալի է այն իրողությունը, որ Արցախի հոգևոր թեմական դպրոցը տվել է բարձրորակ կադրեր, որոնք հետագայում դարձել են անվանի գիտնականներ, գործիչներ, գրողներ, մանկավարժներ, բժիշկներ, իրավաբաններ, տնտեսագետներ, զորավարներ, ռազմական ու հոգևոր-մշակութային գործիչներ և այլ մասնագետներ: Իրենց բեղմնավոր գործունեությամբ նրանք ակնառու դեր են խաղացել հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

Մեր ձեռքի տակ եղած փաստագրական տվյալները, նրանց անձնական արխիվում պահպանված փաստաթղթերը, հուշերը և այլ բազում նյութեր հնարավորություն են ընձեռել ներկայացնել թեմականի վաթսունից ավելի շրջանավարտների կյանքն ու գործունեությունը՝ նախախորհրդային և խորհրդային շրջաններում: Մեր ուսումնասիրությունների ժամանակ հանդիպումներ ենք ունեցել թեմական դպրոցի շրջանավարտների բարեկամներից շատերի հետ, որոնք նյութեր են տրամադրել մեզ՝ թեկուզ և համառոտակի հնարավորինս ներկայացրել նրանց գործունեության պատմությունը, որը, կարծում ենք, ավելի կհարստացնի մեր կողմից ներկայացվող աշխատության բովանդակությունը:

Լազար Քրիստափորի Դավթյան (1820-1879թթ.)[1]: Ռուսական բանակի հայազգի գործիչ, գեներալ-լեյտենանտ: Ծնվել է Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի գավառային ուսումնարանում, այնուհետև երկու տարի սովորել Շուշիի նորաբաց թեմական դպրոցում:

Լ.Դավթյանը որպես շարքային ծառայել է Շիրվանյան հետևակային գնդում և կռվել Շամիլի լեռնականների դեմ: 1868-1877թթ. նա եղել է պահեստային, իսկ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Լազարևը (ռուսական բանակում մեր հայրենակցին Լազարև էին անվանում) նշանակվել է Կարսը պաշարած բանակային կորպուսի հրամանատար, գլխավորել Կարսի գրոհը և գրավել այն: Ռուսական բանակի հրամանատար Լորիս Մելիքովը Ռուսաստան մեկնելուց հետո **Լազարևին** է վստահել Կովկասյան առանձին գործող կորպուսի հրամանատարությունը, իսկ պատերազմի ավարտից հետո նա նշանակվել է Կովկասյան երկրորդ կորպուսի հրամանատար:

Հարկ է նշել, որ Արցախյան լեռնաշխարհում ծնված տաղանդավոր գիտնականները, արվեստի, գրականության, ռազմական-քաղաքական, դպրոցի ու մանկավարժության, մշակույթի ականավոր գործիչները, չնայած գործունեություն են ծավալել հայրենիքից դուրս, այնուամենայնիվ նրանք միշտ կապված են եղել իրենց ժողովրդի հետ, միասին պայքարել օտար զավթիչների դեմ, ղեկավարել ազգային-ազատագրական շարժումը, կոփել իրենց մարտական ոգին, միմյանց հետ կիսել ուրախությունն ու տխրությունը, ստեղծել ու թողել հարուստ ժառան-

1. Վալտեր Դիլոյանը «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից» աշխատության մեջ նշում է, որ Լազարյանների տոհմը ծյուղավորված է եղել, բնակություն է հաստատել Ռուսաստանում, ինչպես նաև Արևելյան Հայաստանում:

գություն ռազմական արվեստի, գիտության տարբեր բնագավառներում:

Այդպիսին էր նաև Լ.Դավթյանը, որը մինչև կյանքի վերջը կապված էր հայրենի Շուշի քաղաքի հասարակական-քաղաքական գործիչների հետ, պայքարել իր ժողովրդի լուսավոր ապագայի համար:

Առաքել Բահաթրյան (1848-1883թթ.): Վաստակաշատ մանկավարժ, հոգեբան, հասարակական գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է հոգևոր ուսումնարանի հիմքի վրա հաստատված Շուշիի թեմական դպրոցում: Այդ տարիներին դպրոցում որպես տեսուչ էր աշխատում հայտնի հասարակական գործիչ, ականավոր մանկավարժ Պետրոս Շանշյանը, նրա օգնական՝ գրող Պերճ Պռոշյանը:

Ա. Բահաթրյանի ուսումնառության տարիներին թեմական դպրոցն ուներ երկու նախապատրաստական և երեք հիմնական դասարաններ: Շուշիում մեծ հեղինակություն ու ճանաչում ունեցած Բահաթրյանների գերդաստանից դուրս ելած կրտսեր Առաքելը դպրոցում աչքի էր ընկնում իր ընդունակությամբ, արժանանում տեսչի, սիրելի ուսուցիչների՝ Պ. Պռոշյանի, Գ. Մուրադյանի, Սարգիս Տեր-Ղազարյանի, Մանուչար Փիրումյանի և այլոց ուշադրությանն ու դրվատանքին:

Որոշ ժամանակ անց ուսումնատենչ պատանին ձգտում է բարձրագույն կրթություն ստանալ ու նվիրվել իր ժողովրդի լուսավորության գործին: «Աղբյուր» ամսագրի շուշեցի թղթակիցը (Ա. Հովհաննիսյան) գրել է. «Վերին աստիճանի ազնիվ, հաստատակամ Առաքելը մտքում դրել էր, ինչպես էլ որ լինի, օրինավոր ուսում ձեռք բերել, իսկ հետո ոչ թե խոսքով, այլ գործով ցույց տալ իր անհուն սերը իր ազգին ու հայրենիքին»[2]:

1868թ. ապրիլին մեկնում է ուսումը շարունակելու Թիֆլիսի «Կլասիկական» (դասական) գիմնազիայում: Եվ չնայած Բահաթրյանը հաջողությամբ հանձնում է բոլոր քննությունները, նրան չեն ընդունում՝ համապատասխան դասարանի համար պահանջվող տարիք չունենալու պատճառով:

1869թ. Ա. Բահաթրյանն ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի գիմնազիական բաժին, իսկ այնուհետև ավարտում (1874թ.) նույն կրթօջախի արևելյան լեզվագիտության լիցեյը և ստանում թեկնածուի գիտական աստիճան: Այստեղ նա աշակերտում է հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանցին:

Լազարյան ճեմարանում ուսումնառությունն ավարտելուց հետո Ա. Բահաթրյանը Ստ. Նազարյանցի և Բ. Պատկանյանի երաշխավորությամբ, որպես ռուսական կառավարության թոշակառու, գործուղվում է Գերմանիա՝ մանկավարժական գիտություններ ուսումնասիրելու: Նա երկու տարի սովորում է Հայդելբերգի և Լայպցիգի համալսարաններում, ուսումնասիրում մանկավարժություն, հոգեբանություն, մեթոդիկա, փիլիսոփայություն:

1876թ. աշնանը Ա. Բահաթրյանը Գերմանիայից վերադարձավ Ռուսաստան և, որպես պետական թոշակառու, համաձայն ընդունված պայմանի, հինգ տարով աշխատանքի պարտավորվեց արքունական դպրոցներում՝ նշանակվեց Սիմֆերոպոլի (Ղրիմ) թաթարական ուսուցչական սեմինարիայի տեսուչ:

Ի դեպ, «Ծիծեռնակ» երգի խոսքերի հեղինակ Գևորգ Դոդոխյանն այդ ժամանակ նույն սեմինարիայում ռուսաց լեզվի դասատու էր և ընկերական ջերմ մտերմությամբ կապված էր իր տեսչի հետ: Այդտեղ Ա. Բահաթրյանի ջանքերով հիմնվե-

2. «Աղբյուր», Թիֆլիս, 1884, թ. 3, էջ 13: Նաև տե՛ս Ն. Հարությունյան, Առաքել Բահաթրյան, Երևան 1992, էջ 14:

ցին հայ կանանց ընկերություն, հասարակական գրադարան-ընթերցարան:

Ա. Բահաթրյանը մանկավարժական գործունեությունը շարունակում է (1881-1882թթ.) Ներսիսյան, այնուհետև՝ Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցներում: Մանկավարժական ասպարեզ մտնելու հենց առաջին օրից Ա. Բահաթրյանը թարմություն բերեց, շոշափելով այնպիսի նոր հարցեր ու ցավոտ խնդիրներ, որոնք հայ իրականության համար նորություն էին: 1875-1876թթ. Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում տպագրվում են Ա. Բահաթրյանի մանկավարժական առաջին հոդվածները: Նրա առաջին լույս տեսած աշխատությունն է «Համառոտ գործնական հոգեբանություն», «Ձեռնարկ հայ ուսուցիչների համար» (1882թ. Թիֆլիս): Մինչ այդ՝ 30 տարի առաջ, 1851թ. Մոսկվայում տպագրվեց Ստ. Նազարյանցի «Յաղագս փորձնական հոգեբանության ճառ» աշխատությունը: Այնուհետև լույս են տեսնում նրա «Ուղեցույց ուսուցչի, ընդհանուր մեթոդիկա և առաջին տարվա նյութի մշակությունը» (1882), «Մայրենի լեզվի ուսումը տարրական դպրոցների մեջ» և այլն:

Արշավիր Շավարշյանը գրում է, որ գործնական մանկավարժության ասպարեզում Բահաթրյանի ամենամեծ ձեռնարկությունը մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկայի մշակումն է[3]: «Մանկավարժական թերթ» և «Վարժարան» ամսագրերում հրապարակվում է հայոց լեզվի դավանդման մեթոդիկայի ընդարձակ ուսումնասիրությունը, որն ընդգրկում է այդ առարկայի մեթոդիկայի և՛ տեսությունը, և՛ պատմությունը[4]: Այնուհետև հրատարակում է «Առաջին ընթերցարան» (1895), «Այբբենարան և առաջին ընթերցարան» (2-րդ տպագրությունը՝ 1884թ.), «Օրինակելի դասեր Սրբազան պատմությունից» (1883թ.) և այլ աշխատություններ: Հայ պարբերական մամուլում լույս են տեսել նրա 100-ից ավելի մանկավարժական թեմաներով հոդվածներ՝ նվիրված դաստիարակության, ուսուցման, դասավանդման մեթոդների, դպրոցի ներքին կյանքին առնչվող հարցերի լուսաբանմանը: Ա. Բահաթրյանի հասարակական-մանկավարժական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 1882թ. ամռանը Թիֆլիսում հրավիրված հայ ուսուցիչների անդրանիկ համագումարի նախապատրաստման և հրավիրման ուղղությամբ կատարված աշխատանքը: Համագումարը բացվեց օգոստոսի 20-ին և տևեց 20 օր[5]: Ա. Բահաթրյանը համագումարի կարգադրիչ հանձնաժողովի անդամ էր: Նա համագումարում հանդես եկավ «Ուսուցման ընդհանուր մեթոդիկա», «Գրել-կարդալ սովորեցնելու մեթոդիկա» զեկուցումներով:

Այսպիսով, Ա. Բահաթրյանն իր ջերմեռանդ գործունեությամբ մանկավարժության բնագավառ մուտք գործեց XIX դարի 70-ական թվականներին՝ հայ հասարակական հոսանքների բախման ամենաեռուն շրջանում, որը սկիզբ էր առել տասնամյակներ առաջ: Հետևելով հայ լուսավորչական շարժման ռահվիրաներին՝ Նալբանդյանին, Նազարյանցին, Բահաթրյանը, որպես մասնագետ մանկավարժ, ընդհանուր առմամբ հանդես եկավ նոր առաջավոր կրթադաստիրակչական հայացքներով, մասնավորապես, ծանրանալով դասավանդման խնդիրների վրա, որոնց կարիքը մեծապես զգում էր տակավին մեթոդական խարխափումների մեջ դեգերող հայ ուսուցչությունը: Չնայած կարճատև կյանք ապրեց Ա. Բահաթրյանը, սակայն թողեց մանկավարժա-հոգեբանական հարուստ ժառանգություն և իր վաստակով պատվավոր տեղ գրավեց XIX դարի հայ մանկավարժու-

3. Ա. Շավարշյան, Հայ մանկավարժներ, Գիրք «Բ», էջ 294:
4. Նույն տեղում:
5. Արշավիր Շավարշյան, Հայ մանկավարժներ, Գիրք «Բ», էջ 290-291:

թյան երախտավորների՝ Աբովյանի, Թաղիադյանի, Աղայանի, Նազարյանցի, Մանդինյանի շարքում:

Արցախի մշակութային կենտրոն Շուշիի մասին գրած հուշերում մշակութային գործիչները ջերմությամբ են խոսում նաև Ա. Բահաթրյանի մասին:

Սպանդար Սպանդարյան (1844-1922թթ.): Հասարակական գործիչ, հրապարակախոս, խմբագիր: Ծնվել է Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Խալիպյան դպրոցում, այնուհետև սովորել Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում: Բարձրագույն կրթություն ստացել է Գերմանիայի Լայպցիգի համալսարանում (1870-1872թթ.): Ավարտելով իրավաբանական ֆակուլտետը, վերադառնում է Թիֆլիս և աշխատակցում «Մշակ»-ին՝ «Դոկտոր Սպանդարյան, «Յունիուս» ծածկանուններով: 1877թ. վերջերից աշխատակցում է «Մեղու Հայաստանի» թերթին, որի շնորհիվ վերջինս ձեռք է բերել ուրույն դիմագիծ հայ հասարակական կյանքում և վերածվել ծանրակշիռ պարբերականի: 1883թ. ստացել է «Նոր դար» լրագրի հրատարակության իրավունքը և նույն թվականի դեկտեմբերին լույս ընծայել նրա առաջին համարը:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին (1896-1903թթ.) հայ դպրոցի, եկեղեցու նկատմամբ վարած ցարիզմի ազգահալած քաղաքականության դեմ ուղղված իր հրապարակային ելույթներում Սպ. Սպանդարյանը խստորեն քննադատում է ցարիզմի ռեակցիոն քաղաքականությունը: Կովկասի փոխարքա Գոլիցինի հրամանով հայ մտավորականության մեծ մասն ազատվում է աշխատանքից, աքսորվում Կովկասից: Սպ. Սպանդարյանն արժանանում է նրանց ճակատագրին: Աքսորից խուսափելու համար 1910թ. նա մեկնում է Փարիզ, պարբերաբար թղթակցում հայ պարբերական մամուլին՝ քննադատում ցարիզմի քաղաքականությունը հայերի նկատմամբ: 1912թ. ծերբակալվում է նրա հեղափոխական որդին՝ Սուրեն Սպանդարյանը: Ընտանիքը հայտնվում է ծանր կացության մեջ, և նրա մասին հոգ է տանում Սպանդարյանների բարեկամ Ոսկի Տեր-Հովհաննիսյանը (Մուրացանի կինը):

Սպ. Սպանդարյանը, որպես ազգային-պահպանողական հոսանքի տեսաբան, հայ ժողովրդի փրկության և հուսալի ապագայի երաշխիքների թվում կարևոր տեղ է հատկացրել եկեղեցուն ու կրոնին, ազգային եկեղեցին համարել է «Նեցուկ հայ ազգի գոյությանը»: Այս առումով էլ բանավիճել և մերժել է Գ. Արծրունու՝ դպրոցները հոգևոր իշխանությունից անջատելու տեսակետը:

Սպ. Սպանդարյանն իր հրապարակախոսական գործունեության ընթացքում հետևողականորեն անդրադարձել է հայ հասարակական կյանքի առաջընթացի այնպիսի խնդիրների, ինչպիսիք են երկսեռ կրթությունը, կանանց ու տղամարդկանց իրավահավասարությունը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը, տպագրական գործի զարգացումը, մամուլի հեղինակության բարձրացումը: Այս առաջատար խնդիրները ժամանակին առաջ է քաշել նաև հայ մշակույթի անվանի գործիչ, հրապարակախոս, մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանը:

Սպ. Սպանդարյանի հրապարակախոսության մեջ որոշակի տեղ են գրավել ազգային-ազատագրական պայքարի հարցերը: Այդ կապակցությամբ նա ժամանակի պարբերական մամուլում հրապարակել է բազմաթիվ հոդվածներ՝ հայ ժողովրդին կոչ անելով համախմբվել և պայքարել իր անկախության համար:

Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան) (1854-1908թթ.): Հայ գրականության դասական, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է մասնավոր դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Շուշիի թեմական դպրոցում, որի տեսուչն էր Խորեն Ստեփանեն:

Գերազանց ավարտելով (1873թ.) թեմական դպրոցը՝ որպես հայոց լեզվի և

գրականության ուսուցիչ աշխատել է Շուշիի գավառի դպրոցներում, նաև թեմական դպրոցում: 1877-1878թթ. շրջագայել է Արցախի ու Սյունիքի պատմական հիշարժան վայրերում, ուսումնասիրել հին հիշատակարաններ, արդյունքում գրել «Հասան-Ջալալյան հոգևոր-մշակութային գործչի համառոտ տոհմագրությունը», որը լույս է տեսել «Փորձ» ամսագրի 1880թ. թիվ 5-ում»[6]:

1878թ. վերջերին տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ մնացել է մինչև կյանքի վերջը: Ի սկզբանե սովորել է հաշվապահություն, աշխատանքի անցել առևտրական տներից մեկում, միաժամանակ զբաղվել գրական գործունեությամբ:

Մուրացանը գրական ճանաչման է արժանացել «Ռուզան կամ Հայրենասեր օրիորդ» (1881) պատմական դրամայով, որն առաջին անգամ հրատարակվել է 1900թ., «Թատրոն» հանդեսում:

Արժեքավոր են Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհի» (1889թ.), «Լուսավորության կենտրոն» (1892թ.), «Նոյի ագռավը» (1899թ.) «Առաքելյանը» (1902թ.), «Գթության քույրեր» (1902թ.), «Գևորգ Մարզպետունի» (1896թ.), «Անդրեաս երեց» (1897-98թթ.) և շատ այլ ստեղծագործություններ:

Մուրացանի ստեղծագործությունը հայ դասական գրականության ինքնատիպ էջերից է: Նրա գրական ժառանգության լուսաբանմանն են նվիրված Վ. Պարտիզունու «Մուրացան» (Եր. 1956), Ար. Տերտերյանի «Մուրացան» (Եր. 1971), Ս. Սարինյանի «Մուրացան» (տիպաբանությունը, էթիկական պատմության փիլիսոփայությունը, Եր. 1976), արժեքավոր ուսումնասիրությունները:

<u>Մարգար Առուստամյան (Առուստամով) (1854-1901թթ.):</u> Բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, համաճարակագետ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի թեմական դպրոցը: Բարձրագույն կրթությունը ստացել է Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի վիրաբուժական բաժնում (1873-1877թթ.):

Որպես զինվորական բժիշկ գործուղվել է Կովկասյան ռազմաճակատ: Մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին: 1879թ. վերջին զորացրվելուց հետո վերադարձել է հայրենի Շուշի քաղաք, որտեղ բժշկական գործունեության հետ միաժամանակ ծավալել է հասարակական աշխատանք: Այստեղ նա բացել է գրադարան-ընթերցարան և իր անձնական՝ բժշկագիտության վերաբերյալ գրքերը (հայերեն, ռուսերեն) նվիրել գրադարանին, թեմական, օրիորդաց դպրոցներում անվճար դասավանդել հիգիենա, անատոմիա, բժշկական օգնություն ցույց տվել Շուշի քաղաքի և գավառի հայ բնակչությանը: Լեոն իրավացիորեն նշում է, որ 80-ական թվականների սկզբներին Շուշիի հայ մտավորականության շրջանում աչքի էր ընկնում նաև բժիշկ Մ. Առուստամյանը[7]: Նրա մանկավարժական գործունեության (թեմական, օրիորդաց դպրոցներում Մ. Առուստամյանն աշխատել է 1880-1885թթ.), երկրամասի բնակչության բուժօգնության և այլ լուսավորչական ձեռնարկումների մասին մեծ ակնածանքով է խոսել անվանի մշակութային գործիչ Համբարձում Առաքելյանը[8]:

Մ. Առուստամյանը 1885թ. տեղափոխվում է Պետերբուրգ, որտեղ և աշխատում է որպես համաճարակագետ՝ կենտրոնական հիվանդանոցում: Որպես Ռուսաստանում ճանաչված համաճարակագետ՝ Մ. Առուստամյանը մի խումբ ընկերների (բժիշկների) հետ 1892թ. հուլիսին մեկնում է Աստրախանի նահանգ՝ պայքարելու

6. ՀՀ Հանրագիտարան, հ.8, էջ 96:
7. Լեո, նշվ. աշխ., էջ 460-461:
8. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 78-79:

տարածված խոլերայի դեմ, իսկ այնուհետև մասնակցում 1899թ. միջինասիական տափաստաններում բռնկված ժանտախտի համաճարակի դեմ տարվող պայքարին: Մ. Առուստամյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև Աստրախանի հայկական գաղութի հասարակական կյանքին:

Մ. Առուստամյանը զբաղվել է նաև գիտական գործունեությամբ: Այն ամփոփված է շուրջ 20-ից ավելի գիտական աշխատություններում, որոնցում արծարծվում են թոքաբորբերի առաջացման, ձկնորսարանների սանիտարական վիճակի բարելավման, բանվորների բժշկական օգնության կազմակերպման հարցերը: Նրա աշխատությունների մի մասը վերաբերում է բորոտության, ժանտախտի և խոլերայի հարցերին:

Մ. Առուստամյանը գիտականորեն հաստատեց ձկան թույնի մանրէային բնույթը և տվեց բուտուլիզմի կլինիկայի հանգամանալից նկարագրությունը: Նա մահացել է 1901թ. նոյեմբերի 14-ին, Արմավիրում, թաղվել է հայրենի Շուշի քաղաքում:

Մ. Առուստամյանի կերպարը, որպես համաճարակագետի, գրող Վ. Կորոլենկոն մարմնավորել է իր «Ինը ֆունտանոց ռեյդի կարանտին» պատմվածքում[9]:

<u>Լեո (Առաքել Բաբախանյան) (1860-1932թթ.):</u> Անվանի պատմաբան: Ծնվել է Շուշիում, դերձակի ընտանիքում: 1874թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, իսկ 1878թ.՝ քաղաքային գիմնազիան: Հոր մահից հետո մեկնում է Բաքու՝ աշխատանք որոնելու և մեծ դժվարություններ ու զրկանքներ կրում: Այդ բոլորը հետագայում նա մանրամասն նկարագրել է իր «Պանդուխտ» վիպակում, որի տակ և առաջին անգամ ստորագրել է «Լեո»: 1879-1881թթ. Լեոն աշխատել է որպես նոտարի գրագիր, ապա Շուշիի հեռագրատանը՝ հեռագրիչ: 1881թ. աշխատում էր որպես Հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գանձապահ:

Դեռևս 1870-ական թվականներին, երբ ուսանում էր թեմական և քաղաքային դպրոցներում, ակտիվորեն աշխատակցում էր «Մշակ»-ին, «Արծագանք»-ին, «Տարազ»-ին, «Աղբյուր»-ին, «Արարատ»ին, «Արմենիա»-ին (Մարսել) և բազմաթիվ այլ թերթերի ու հանդեսների: Տիգրան Նազարյանի («Տարազ»-ի խմբագիր) և մյուսների նման Լեոն մտահոգված էր հայրենիքի լուսավորության և առաջադիմության խնդիրներով: Նա գործնական քայլեր էր կատարում Շուշիի տպարանները կարգավորելու, տպագրական անհրաժեշտ հարմարանքներ հայթայթելու ուղղությամբ:

Լեոն Շուշիում հրատարակում էր ուսումնական և գրական-գեղարվեստական աշխատություններ, որոնց նյութը պատմական էր՝ հագեցած հայրենասիրական գաղափարներով: Նրա առաջին գրքույկը («Ուխտավորի հիշատակարանը») լույս է տեսնում հենց Շուշիում՝ 1884թ.: Լեոն սիրում է հրատարակչական գործը, երբեմն կատարում էր խմբագրական, նաև՝ սրբագրական աշխատանք: Մտահոգված էր, որպեսզի իր ծննդավայրում աճեն հրատարակչական գործի նվիրյալներ և բարձր մակարդակի հասնի գրատպությունն Արցախում:

Ոչ միայն Շուշիում, այլև Բաքվում ու Թիֆլիսում աշխատելու ժամանակ Լեոն իր կապերը չէր խզում Արցախից, հետաքրքրվում էր հայրենի երկրամասի մշակութային կյանքով և հնարավորինս նպաստում նրա զարգացմանը: 1893թ. Բաքվում, երբ «Արոր» տպարանի կառավարիչն էր, տպագրական որոշ նյութեր է ուղարկում Շուշի: 1895թ. մշտական աշխատանքի անցնելով «Մշակ»-ի խմբագրու-

9. Л.А. Оганесян, А.С. Куоян, О природе рыбьего яда, Եր. 1958:

թյունում, Լեոն ձգտում էր հնարավորինս մեծ տեղ տալ Արցախի առօրյայի լուսաբանմանը, պարբերաբար նյութեր տպագրել և՛ Շուշիից, և՛ Արցախի այլ բնակավայրերից:

1906թ. մանկավարժական աշխատանքի է անցնում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, իսկ 1924-1930թթ. Երևանի պետական համալսարանում դասախոսում է հայոց պատմություն, հայ մատենագրություն:

Լեոն բավական ջանքեր է գործադրել հայ ժողովրդի ընդհանուր պատմության կուրս ստեղծելու, նրա դասավանդումը կանոնավոր հունի մեջ դնելու ուղղությամբ: Նա հայ պատմագրության ամենանշանավոր դեմքերից մեկն է և թողել է անչափ հարուստ գիտական-գրական ժառանգություն: Լեոի նշանավոր աշխատություններից են. «Հայոց պատմությունն» (3 հատորով, 1հ. Թիֆլիս, 1917թ. 2-րդ հ. և 3-րդ հ. Երևան, 1946թ.), «Հայկական տպագրությունը» 12 հատոր, Թիֆլիս, 1907, «Գրիգոր Արծրունի» (3 հատ. Թիֆլիս, 1902, 1903, 1905), «Մեսրոպ Մաշտոց», (Թիֆլիս, 1904, Երևան, 1902), «Անի», (Երևան, 1946 և 1963), «Անցյալից» (Թիֆլիս 1925), «Խոջայական կապիտալ» (Երևան 1934), «Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի» (Թիֆլիս, 1914), «Ստեփանոս Նազարյանց» (Թիֆլիս, 1902), «Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում» (Թիֆլիս, 1911), «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի» (Թիֆլիս, 1914), «Գեղարվեստական երկեր» (Երևան 1959) և այլն[10]:

Մելիք (Սողոմոն) Շահնազարյան (1862-1942թթ.): Գրականագետ, հրապարակախոս, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Ավարտելով թեմական դպրոցը (աշակերտել է Ղ. Աղայանին 1879-1880թթ.), ուսումը շարունակել է Գևորգյան ճեմարանում և այն ավարտել 1883թ.: Մանկավարժական գործունեություն է ծավալել Ագուլիսի, Բաքվի, Գանձակի, Դերբենդի հայկական դպրոցներում՝ դասավանդելով հայոց լեզու, գրականություն, պատմություն, կրոն: XIX դարի 90-ական թվականների սկզբներին՝ մինչև հայկական դպրոցների փակվելը, Մ. Շահնազարյանը բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել Արցախի թեմի դպրոցներում (թեմական, օրիորդաց և ծխական): Մ. Շահնազարյանը միաժամանակ զբաղվում էր նաև հասարակական գործունեությամբ: Բացի այդ, Տեր-Սահակյանի բարեկարգ տպարանում խմբագրում ու սրբագրում էր գրքեր, ուսումնական ձեռնարկներ: Շուշիի աչքի ընկնող մտավորականների (Տ. Նազարյան, Սոֆյա Առաքելյան, Գրիգոր Տեր-Ղազարյան, Հովհաննես Տեր-Գրիգորյան և ուրիշներ) հետ ակտիվորեն մասնակցում է «Հայուհյաց բարեգործական» ընկերության հիմնադրման գործին: Նրանց և այլոց նախաձեռնությամբ Շուշի քաղաքում, մոտակա գյուղերում (Շոշ, Չանախչի, Ննգի, Սարուշեն և այլն) ժողովներ էին գումարվում. որոշվում էր նվիրատվությունների միջոցով հիմնել մարդասիրական ընկերություն, միաժամանակ հանգանակություններ կատարել և այդ գումարները ծախսել չքավոր աշակերտներին նպաստավելու համար:

Զբաղվել է նաև ստեղծագործական աշխատանքով: Սկզբում աշխատակցել է «Մուրճ», «Աղբյուր», «Նոր դար» պարբերականներին, հրապարակել մանկավարժական բնույթի հոդվածներ, լույս ընծայել գրականագիտական աշխատություններ: Դրանցից են «Հայ գյուղացու սև օրը» (Թիֆլիս, 1990), «Գործակատար Մարտիրոսը» (Թիֆլիս, 1913), «Ազգային դպրոցի վիճակը» («Մուրճ», 1890), «Հայ գյուղագիրները» (Թիֆլիս, 1913) և այլն:

10. Այդ մասին մանրամասն տես՝ Ա. Կ. Օհանյան, Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1969:

Մ. Շահնազարյանը մեծ հոգատարություն էր ցուցաբերում այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց գրական գործերով ցանկանում էին օգնել Արցախի ժողովրդին և իրենց համեստ ավանդն էին ներդնում երկրամասի բնակչության լուսավորության գործում:

Ստեփան Աղաջանյան (1863-1940թթ.): Անվանի գեղանկարիչ: Ծնվել է Շուշի քաղաքում, դերձակի ընտանիքում: Սովորել է Շուշիի թեմական դպրոցում (1872-1881թթ.) և ռեալական ուսումնարանում (1881-1884թթ.):

Ավարտելով ռեալականը՝ Ս. Աղաջանյանը մեկնում է Բաքու, 1886-ին՝ Ֆրանսիա, սովորում Մարսելի նկարչական ստուդիայում (1886-1890թթ.), ապա Փարիզի Ժյուլիանի ակադեմիայում (1891-1900), պրոֆեսորներ Բ. Կոնստանի և Ժ.Պ. Լորանսի արվեստանոցներում:

Ս. Աղաջանյանի ստեղծագործության վրա մեծ ազդեցություն է գործել Գ. Կուրբեի ռեալիստական արվեստը: Դեռևս ակադեմիական բնույթի իր գործերում Աղաջանյանը դրսևորել է գեղանկարչական բացառիկ ունակություն, մարդու ներաշխարհը ռեալիստոներն բացահայտելու կարողություն («Բրետանուհին», 1898, «Ակադեմիական էտյուդ», 1899):

Ստ. Աղաջանյանը 1900թ. վերջերին վերադարձել է հայրենի Շուշի քաղաք, որտեղ շարունակել է ստեղծագործական աշխատանքը, միաժամանակ նկարչություն, գծագրություն, արվեստի պատմություն դասավանդել թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում: Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետն իր մի հաշվետվության մեջ նշում է, որ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ս. Աղաջանյանի դասերը, կազմակերպած ցուցահանդեսները ռեալական ուսումնարանի դահլիճում, որ նա կարողանում է բացահայտել աշակերտների ստեղծագործական կարողությունները, նկարչական ունակությունները:

Երկու տարի Շուշիում մնալուց հետո Ս. Աղաջանյանը տեղափոխվում է Բաքու (1902-1904թթ.), որտեղ և շարունակում է ստեղծագործական աշխատանքը: 1904թ. տեղափոխվում է Դոնի Ռոստովի հայկական համայնք, ուր մինչև 1921թ. ստեղծագործում է և միաժամանակ նկարչություն դասավանդում ռուսական, հայկական դպրոցներում ու պետական նկարչական ստուդիայում:

1921թ. Ս. Աղաջանյանը տեղափոխվում է Երևան և որպես գեղանկարչության դասատու պաշտոնավարում (1922-1929թթ.) գեղարվեստաարդյունաբերական տեխնիկումում (այժմ Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան)[11]:

Ս. Աղաջանյանը կապող օղակ էր XIX և XX դարերի հայ նկարիչների միջև՝ նոր բարձրության հասցնելով ազգային ռեալիստական նկարչությունը[12]:

Եղիշե Մադաթյան (1865-1918թթ.) (գեներալ Վալերիան (Ռոստոմ) Մադաթովի ազգակիցը): Գրականագետ, թարգմանիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է ծխական դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի թեմական դպրոցը (ուսուցիչն էր Խորեն Ստեփանեն), ուսումը շարունակել Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա՝ համալսարանում (1884-1888թթ.):

Հայ գրականության, հայոց պատմության ուսումնասիրության հարցերը մշտապես գտնվել են նրա ուշադրության կենտրոնում: Այդ միտումով էլ երկար տարիների ուսումնասիրության արդյունքներն ընդհանրացնում է «Փավստոս Բյուզանդ» աշխատության մեջ, որը որպես գիտահետազոտական աշխատանքի թեմա, 1890թ. ապրիլին պաշտպանում է Վիեննայի համալսարանում և ստանում

11. Երեմյան Ա և Գյուրջյան Գ. նկարիչ Ստեփան Աղաջանյան, կյանքն ու արվեստը, Ե. 1927:
12. Ե. Մարտիկյան, Ստ. Աղաջանյան, Ե. 1956:

դոկտորի գիտական աստիճան: Հետագայում (1892) այդ աշխատությունը լույս է տեսնում առանձին գրքով:

Երիտասարդ գրականագետ-պատմաբանը 1891թ. սկզբներին վերադառնում է հայրենի Շուշի քաղաք և մանկավարժական գործունեություն ծավալում թեմական, օրիորդաց ու ծխական դպրոցներում: Որպես տեսուչ՝ Ե. Մադաթյանը թեմական դպրոց մտավ նրա ներքին կյանքը հեղաբեկող մտահոգացումներով, հայ գրականության, պատմության, մատենագրության և այլ առարկաների ուսուցման վիճակն արմատապես վերափոխող նպատակներով[13]: Համբարձում Առաքելյանը թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ պատմությանը նվիրված իր աշխատության մեջ նշում է, որ Ե. Մադաթյանը Շուշիում կարճատև մանկավարժական գործունեության ընթացքում իր հարուստ փորձը, գիտելիքները նվիրաբերեց Արցախի ժողովրդի լուսավորության, մշակույթի զարգացմանն ու մատաղ սերնդի կրթության, դաստիարակության գործին[14]:

1893-1896թթ. Ե. Մադաթյանն աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այնուհետև՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում[15]: Հետագա տարիներին զբաղվել է գրական ստեղծագործական աշխատանքով: Նա գրականագիտական հոդվածներով հանդես է եկել ժամանակի պարբերական մամուլում՝ «Մուրճ», «Արարատ», «Արձագանք», «Ազգագրական հանդես» և այլ ամսագրերում ու թերթերում:

Ե. Մադաթյանը կատարել է նաև մի շարք թարգմանություններ Բայրոնի, Բերանժեի, Լերմոնտովի ստեղծագործություններից:

Մինչև կյանքի վերջը Ե.Մադաթյանը կապված էր հայրենի Շուշի քաղաքի մատավորականության հետ, ակտիվորեն մասնակցում էր Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդես»-ի «Ա» և «Բ» գրքերի հրատարակությանը: Արցախի մշակութային կյանքին նվիրված գործիչը բացառիկ նշանակություն էր տալիս երկրամասի ժողովրդի լուսավորությանը՝ ձգտելով քաղաքական ինքնագիտակցություն և ազատագրական մղումներ ներարկել արցախահայությանը:

<u>Գարեգին Կարապետի Հովսեփյան (1867-1952թթ.):</u>[16] Անվանի հոգևոր գործիչ, հայագետ ու մանկավարժ: Ծնվել է 1867թ., Ջրաբերդ գավառի Մաղավուզ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև ավարտել էջմիածնի ճեմարանի լսարանական բաժինը, որի շրջանավարտները դառնում էին ուսուցիչներ, եկեղեցական, հասարակական-քաղաքական գործիչներ: Ապա դասավանդել է Ալեքսանդրապոլի, Արցախի դպրոցներում, նվիրվել ազգային դպրոցի զարգացմանն ու վերակառուցմանը:

Բարձրագույն կրթությունն ստացել է Բեռլինի, Հալլեի, Լայպցիգի համալսարաններում: 1897թ. մարտին Լայպցիգում պաշտպանել է թեզ, ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստճան:

Անքակտելի թելերով կապված լինելով հարազատ ժողովրդի հետ, օժտված լինելով ազգային բարձր գիտակցականությամբ՝ Գ. Հովսեփյանը 1897թ. սկզբներին վերադառնում է հայրենիք և գիտամանկավարժական, հասարակական-քա-

---

13. Լեո, նշվ. աշխ., էջ 472-473:
14. Հ. Առաքելյան, նշվ. աշխ. էջ 62-63:
15. Գ.Ա. Մադոյան, Եղիշե Մադաթյանի և Գրիգոր Խալաթյանի նամակագրությունը, Լրաբեր հասարակ. գիտությունների, 1976, թ. 6:
16. ՀՀ Հանրագիտարան, հատ. 6, էջ 80:

ղաքական, հոգևոր-մշակութային բեղմնավոր գործունեություն ծավալում Հայաստանում, ռուսահայ և այլ գաղթօջախներում: Դասախոսել է Գևորգյան ճեմարանում, ձեռնադրվել վարդապետ, եղել է Մատենադարանի (Էջմիածնում) պետ, ճեմարանի տեսուչ, միաժամանակ՝ «Արարատ» ամսագրի խմբագիր: Մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին, կրակոտ ճառով հանդես եկել արցախցի քաջարի զինվորների առջև. «Իմ հայրենակիցներ, շատ սիրելի, պաշտելի Արցախ աշխարհի քաջ զավակներ, հիմա ես ձեզանից մեկն էմ, օրհասի առաջ կանգնած հայրենիքի զինվոր: Ես էլ ձեզ պես եկել եմ պատերազմի դաշտ, և ինձ համար չկա ոչ նահանջ, ոչ վերադարձ, քանի որ Արարատյան երկրում թուրք ասկյարն է քայլում, մեր ազգ ու հայրենիքի վրայից վերացած չէ մահացու վտանգը»*...

1921-1928թթ. Գ. Հովսեփյանը դասավանդել է Երևանի պետական համալսարանում (արվեստ և հնագիտություն), միաժամանակ՝ ականավոր ճարտարապետ Ա. Թամանյանի հետ մասնակցել Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի ստեղծմանը: Եղել է նաև ղրիմահայ համայնքի, Նոր Նախիջևանի (1927-1933թթ.), ԱՄՆ-ի (1938-1943թթ.) հայոց թեմերի առաջնորդ (արքեպիսկոպոս է ձեռնադրվել 1925թ.) հայրապետական լիազոր պատվիրակ՝ Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայկական կենտրոններում, Սփյուռքում (1934-1938թթ.), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս է օծվել 1945թ.:

Գ.Հովսեփյանի ողջ գործունեությունը սերտորեն առնչված էր ժամանակի հայկական կյանքին: Դա ազգային վերածնության գաղափարների և անկախության համար պայքարի մի ժամանակաշրջան էր, երբ գրողը, գիտնականն ու հասարակական գործիչը, կյանքի ու զարթոնքի կոչելով ազգին, հույս ու հավատ էր ներշնչում գալիքի հանդեպ:

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության տարբեր ժամանակաշրջանների ու խնդիրների լուսաբանմանն են նվիրված Գ. Հովսեփյանի «Օրբելյանի և Մինաս Խաթունի սերունդ», «Դարի քաղաքական և հոգևոր վերելքը Արևելյան Հայաստանում» արժեքավոր ուսումնասիրությունները, որոնցում փաստագրական հարուստ նյութերի, բազմաթիվ ձեռագրերի և այլ աղբյուրների հիման վրա երևան է հանում հայ ժողովրդի հերոսական պայքարի պատմությունը և մոռացության փոշու մեջ թաղված հետաքրքիր փաստեր՝ դրանց մեկնաբանությամբ հանդերձ:

Անվանի հայագետի հետազոտական աշխատանքների մի ծավալուն մասը՝ «Հայ- արաբական բժշկական և մշակութային հարաբերության խնդիրները», «Մի էջ հայ արվեստի ու մշակույթի պատմություն» և այլն, վերաբերում է հայ ժողովրդի մշակութային պատմության շատ քիչ ուսումնասիրված հիմնահարցերի:

Մեր բոլոր մեծերի նման Գ, Հովսեփյանը հայապահպանության գլխավոր հույսը կապում էր դպրոցի և մանկավարժների հետ, քանի որ ժամանակը պահանջում էր վերակառուցել ազգային դպրոցը՝ այն աշխարհականացնել: Հովսեփյանը Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Ս. Շահազիզի, Ղ. Աղայանի, Մ. Մանդինյանի և այլոց պես բուռն պայքար էր մղում ազգային նոր դպրոցը ժողովրդականացնելու, նրանում մարմնական պատիժը վերացնելու, մանկավարժական նոր առարկաներ մտցնելու համար:

Հանդես գալով ժամանակի պարբերական մամուլում («Արարատ», «Փորձ», «Արձագանք», «Մուրճ», «Նոր դպրոց»)՝ նա առաջ էր քաշում պահանջներ, որոնք այսօր էլ արդիական են հնչում.

ա) Ազգային դպրոցներում (Հայաստանում, հայկական գաղթօջախներում)

* Տե՛ս Բ.Ուլուբաբյան, Սարդարապատ, Երևան, 1990:

պետք ծաղկի ոտնահարված հայոց լեզուն, հայ սերունդը կրթություն ստանա մայրենի լեզվով, խոսի և մտածի հայերեն,

բ) սերնդին անհրաժեշտ է տալ ընդհանուր կրթություն, որը կապահովի մտավոր կարողությունների ներդաշնակ զարգացումը,

գ) դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու համար պետք է կազմակերպել վերապատրաստական դասընթացներ,

դ) հարկավոր է հիմնել կրթական-լուսավորական կենտրոններ, կազմակերպել բարեգործական ընկերություններ, արվեստի, գրականության երեկոներ, ուսանողական ընկերություններ՝ երիտասարդության մեջ հայրենասիրության ու ազգասիրության ոգի ներարկելու համար:

Գ. Հովսեփյանը հայկական համալսարան կամ ակադեմիա ստեղծելու ջատագովն էր՝ ինչպես Հ. Թումանյանը, Ստ. Մալխասյանցը, Մ. Աբեղյանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ: 1912թ., երբ տոնվում էր հայ տպագրության 400-ամյակը, հայկական համալսարան հիմնադրելու խնդրին նվիրված առաջին նիստը հրավիրվեց Հ. Թումանյանի տանը, որին մասնակցում էր նաև Գ. Հովսեփյանը:

Երևանի համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրվանից Գ. Հովսեփյանն ականավոր հայագետներ Հ. Մանանդյանի (առաջին ռեկտոր), Մ. Աբեղյանի, Ար. Տերտերյանի, Գ. Ղափանցյանի և ուրիշների հետ սկսեց դասախոսել այնտեղ՝ միաժամանակ գիտահետազոտական աշխատանք կատարելով հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության բազմազան հարցերի ուղղությամբ: Ուշագրավ են հատկապես միջնադարյան հայոց դպրոցների գլուխգործոցը համարվող Գլաձորի համալսարանի պատմությանը և Այրիվանքի, Գեղարդի դպրոցի ուսուցչապետ Մխիթար Այրիվանեցու, Մեծոփեցու գործունեությանը նվիրված նրա աշխատությունները:

Հասարակական-քաղաքական, հոգևոր մշակութային գործունեությանը զուգահեռ նա կատարել է նաև գիտամանկավարժական աշխատանք՝ գերազանց պատեկարցնելով նոր ժամանակներում դպրոցի, մշակույթի, գիտության զարգացման հիմնահարցերը: Գարեգին Հովսեփյանի նախաձեռնությամբ ստեղծվել են գիտական և ուսումնական հիմնարկների բաժիններ, ինստիտուտներ, կաբինետներ, գրադարաններ ինչպես Հայաստանում, այնպես էլ հայ գաղթօջախներում:

Գ. Հովսեփյանն Արցախի ժողովրդի ծոցից ելած այն ինքնատիպ ու մեծ անհատականություններից էր, ովքեր մեր գիտությունն ու մշակույթը հարստացրին ծանրակշիռ ներդրումներով, նպաստեցին հայ հասարակական կյանքի առաջընթացին՝ լուրջ ծառայություններ մատուցելով հոգևոր մշակույթի զարգացմանն ու ինքնաճանաչմանը: Նրա ողջ կյանքը հայ դպրությանն ու մշակույթին և հայ հավատքին նվիրվածության մի գեղեցիկ և ուսանելի օրինակ է ու դեռ շատ սերունդներ պիտի դաստիարակվեն այդ խնկելի մարդու կերպարով:

<u>Բահաքուր Բահաքրյան (1872-1934թթ.):</u> ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, մաթեմատիկոս, ինժեներ-քիմիկոս, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում (Համբարձում Առաքելյանի, Մովսես Սամվելյանի լավագույն աշակերտներից էր), այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և այն ավարտել 1890թ.:

Երկու տարի Բուլղարիայի հայկական դպրոցներում դասավանդելուց հետո՝ 1892-1896թթ. բարձրագույն կրթություն է ստանում Ժնևի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում: Այնուհետև՝ 1899թ., ավարտում է Բելգիայի Գենտիկի

ինժեներական դպրոցը՝ ինժեներ-քիմիկոսի կոչումով:

Բ. Բահաթրյանը 1900թ. վերջին վերադառնում է Եվրոպայից և որպես ինժեներ աշխատում (1900-1914թթ.) Բաքվում, Սամարղանդում, անդրկասպյան քաղաքներում ու Սիբիրում՝ հատկապես ոսկու և նավթի հետախուզական արշավախմբերում:

Բ. Բահաթրյանը 1914թ. անցել է մանկավարժական աշխատանքի: Աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ (1914-1918թթ.), ապա՝ Երևանի զանազան միջնակարգ դպրոցներում:

1923թ. Բ. Բահաթրյանը հրավիրվել է Երևանի պետական համալսարան, սկզբում դասավանդել բանֆակում, ապա տեխնիկական ֆակուլտետում ու մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում՝ բարձրագույն հանրահաշիվ, թվերի տեսություն և մաթեմատիկական անալիզ առարկաներ[17]:

Բ. Բահաթրյանը զբաղվել է հայ մաթեմատիկայի պատմության հարցերով, մասնավորապես, VII դարի ականավոր գիտնական Անանիա Շիրակացու մաթեմատիկական ձեռագրերի ու ժողովրդական հաշվումների մեթոդների ուսումնասիրությամբ: Բ. Բահաթրյանը մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է:

Մարտիրոս Մարտիկի Սարուխանյան (1873-1896թթ.): Հայ ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակից: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, բարձրագույն կրթություն ստացել Պետերբուրգի բարձրագույն մեքենագիտական դպրոցում:

1899թ. Մ. Սարուխանյանը մեկնում է Ժնև, այնուհետև՝ արևմտահայության ազատագրական պայքարին մասնակցելու նպատակով, Վան:

Եղել է Վանի 1896թ. ինքնապաշտպանության ղեկավարներից, մի քանի տասնյակ մարտիկներից բաղկացած խմբով Վանի բնակչությանը պաշտպանել թուրքական կանոնավոր զորքերի, խաժամուժի և քրդական համիդեականների հարձակումներից:

Վանի հերոսական ինքնապաշտպանության ավարտից հետո Մ. Սարուխանյանն իր խմբով (70 մարտիկ) փորձել է անցնել Պարսկաստան, սակայն շրջապատվել է թուրք-քրդական գերակշիռ ուժերի կողմից և ընկել անհավասար մարտում: Արցախցի հերոսին՝ Մ. Սարուխանյանին, է նվիրված անվանի բանաստեղծ Շ. Կուրղինյանի «Հառաջ անվեհեր» բանաստեղծությունը:

Հակոբ Գարեգինի Հովհաննիսյան (1875-1941թթ.) (ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի եղբայրը): ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, քիմիկոս, դոկտոր-պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետու ավարտել է Շուշիի թեմական դպրոցը (1896թ.), ուսումը շարունակել Գերմանիայի Բոննի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի քիմիական բաժնում: 1897-1900թթ. աշխատում է պրոֆեսոր Էդուարդ Բյուխների մոտ և ստանում քիմիական գիտությունների թեկնածուի աստիճան, իսկ 1903թ. Հայդելբերգի համալսարանի բնագիտական ֆակուլտետում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն: Հ. Հովհաննիսյանը 1903թ. վերջերին վերադառնում է հայրենիք, մանկավարժական աշխատանքի անցնում Շուշիի թեմական դպրոցում (1904-1907թթ.) որպես քիմիայի դասատու: Այդ նույն տարիներին նա դասավանդել է նաև Շուշիի ռեալական ուսումնարանում:

Հ. Հովհաննիսյանը 1906-1907թթ. մեկնում է Գերմանիա և Ստրասբուրգի ու

17. Լ.Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարան, 1963, էջ 247:

Բեռլինի համալսարաններում զբաղվում ֆիզիոլոգիական քիմիայի և մանրեաբանության ուսումնասիրությամբ: Վերադառնալով Եվրոպայից՝ նա աշխատում է (1908-1920թթ.) Բաքվում, որտեղ և ստեղծում է քիմիկա-մանրեաբանական լաբորատորիա: Բաքվի կոմունայում 1918թ. նա եղել է փախստականների գործերի կոմիսար: 1920-1921թթ. Շուշիի լիազորն էր փախստականների գործերով: 1921թ. փոխադրվում է Երևան և աշխատանքի անցնում ժողտնտխորհում: 1922թ. փետրվարի 14-ին նշանակվում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր և այդ պաշտոնում մնում մինչև 1930թ. սեպտեմբեր: 1930-1936թթ. աշխատել է որպես բժշկական ինստիտուտի տնօրեն, համատեղության կարգով վարել ՀՀ գիտությունների ինստիտուտի նախագահի պաշտոնը: 1936թ. սեպտեմբերին նշանակվել է Արմֆանի կենսաբանական ինստիտուտի տնօրեն:

Հ. Հովհաննիսյանը մի շարք արժեքավոր գիտական աշխատությունների հեղինակ է[18]:

<u>Լևոն Աթաբեկյան (1875-1918թթ.):</u> Հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ, բանաստեղծ: Ծնվել է Զրաբերդի գավառի Կուսապատ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը: Բարձրագույն կրթությունը ստացել է Լայպցիգի համալսարանի հասարակագիտական ֆակուլտետում, որտեղ ուսումնասիրում էր սոցիալական գիտություններ:

1897-1899թթ. ուսումը շարունակում է Բեռլինի համալսարանի բժշկագիտական բաժանմունքում, այնուհետև (1900-1902թթ.) Ցյուրիխի համալսարանում:

1903թ. սկզբներին վերադառնում է Եվրոպայից և բժշկական ու հասարակական-քաղաքական գործունեություն ծավալում Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, Գանձակում, Շուշիում: Ակտիվորեն մասնակցում է հակացարական քաղաքականության դեմ ծավալված շարժումներին և կրակոտ ճառով հանդես է գալիս թեմական դպրոցի և ռեալական ուսումնարանի աշակերտների առաջ, որից հետո Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ Գր. Միրզոյանի մասնակցությամբ աշակերտները կազմակերպում են ազգային մեծ տոնախմբության վերածված համերգ: Շուշիի հասարակայնությունը գոհունակությամբ էր ունկնդրում Լ. Աթաբեկյանի ելույթները՝ նվիրված նշանավոր գրողների, արվեստագետների հոբելյանական տարելիցներին, ազգային-ազատագրական պայքարի, անկախության հարցերին[19]:

Ռուսական հեղափոխության օրերին Լ.Աթաբեկյանը մեծ աշխատանք է կատարում Բաքվի բանվորների շրջանում: Նրա ջանքերով Բաքվում հիմնվել է թոքախտավորների հիվանդանոց:

Լ. Աթաբեկյանը փետրվարյան հեղափոխությունից հետո ընտրվել է Անդրկովկասյան կոմիսարիատի, ապա Անդրկովկասյան սեյմի անդամ: 1917թ. դեկտեմբերին եղել է Հայոց Ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղի փոխնախագահ, այնուհետև՝ անդամ:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի միակ ուղին նա տեսնում էր Ռուսաստանի հետ համախմբվելու մեջ:

Հասարակական-քաղաքական գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև գրական գործունեությամբ, գրել է խոհական, քաղաքական քառյակներ, բանաստեղծություններ և ժողովրդական մոտիվներով զրույցներ, 1913թ. Բաքվում լույս

18. Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 252:
19. Ս.Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմությունը, Երևան, 1989, էջ 165:

է տեսնում նրա բանաստեղծությունների ժողովածուն:

Լ. Աթաբեկյանի գրիչը բեղմնավոր էր իբրև լրագրող. «Անիվ», «Շեփոր», «Զնդան», «Առավոտ» և այլ պարբերականներում հանդես էր գալիս «Ռիխարդ», «Սմբատ Սմբատյան» և այլ ծածկանուններով: Նրա նախաձեռնությամբ 1917թ. Բաքվում հրատարակվում է «Առողջ կյանք» թերթը, որը հիմնականում քարոզում էր մարդու ֆիզիկական առողջության պահպանման նորմաները:

Լ.Աթաբեկյանի ստեղծագործությունների պսակը «Ապստամբություն» պոեմն է, որը նա գրել է 1911թ.: Տարբեր ժամանակներում Շուշիում լույս տեսած «Փայլակ» (1915-17թթ.), «Ղարաբաղ» (1911-12թթ.), «Ծիածան» (1916թ), Ծիծաղ (1916թ.), «Միրաժ» (1913-17թթ.), “Шушинская жизнь»” (1913-1914թթ.), «Նեցուկ» (1917թ.), «Պայքար» (1916թ.) և այլ պարբերականներում նրա հրապարակված ստեղծագործությունները համահունչ էին ժամանակի ոգուն, աչքի էին ընկնում գեղարվեստական արժանիքներով, լեզվամտածողության բարձր մակարդակով[20]:

Լ. Աթաբեկյանը հայրենի երկրում միաժամանակ որոշակի աշխատանք է տարել նաև լուսավորական, կրթական գործը բարձր հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Ժամանակի պարբերական մամուլում հրատարակած հոդվածներում նա առաջարկում էր ազգային դպրոցներում տալ ընդհանուր կրթություն, որը կապահովի աճող սերնդի մտավոր կարողությունների ներդաշնակ զարգացումը, դպրոցները համալրել որակյալ մանկավարժական կադրերով:

Շուշիի ռեալական ուսումնարանի աշակարտների, մանկավարժական կոլեկտիվի հետ ունեցած հանդիպումների ժամանակ, Լ. Աթաբեկյանը նշում էր, որ անհրաժեշտ է հիմնել կրթական-լուսավորական կոնտրոններ Արցախի թեմում, կազմակերպել բարեգործական ընկերություններ, արվեստի, գրականության երեկոներ, ուսանողական (աշակերտական) ընկերություններ՝ երիտասարդության մեջ հայրենասիրության ու ազգասիրության ոգի ներարկելու համար: Անհրաժեշտ է համարում նաև Արցախի թեմում ազգային դպրոցների ցանցի ընդլայնումը:

<u>Ֆրեյդուն Հակոբի Աղալյան (1876-1944թթ.):</u> Հայտնի մշակութային գործիչ, ճարտարապետ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում (նրան դասավանդել են Մովսես Սամվելյանը (տեսուչ), Մակար Բարխուդարյանը, Մանուկ Աբեղյանը և այլ մանկավարժներ), այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ճարտարապետական բաժնում, որն ավարտել է 1898թ. ու վերադարձել հայրենիք՝ Երևան, աշխատել որպես ճարտարապետ:

Ֆ.Աղալյանը 1903-1921թթ. աշխատել է Բաքվում որպես ճարտարապետ: Նախագծել և կառուցել է Բաքվի երկաթուղու ուղեմատույցը, մի շարք կամուրջներ, ուսումնական շենքեր: Այնուհետև Արմավիրում նախագծել է հայկական եկեղեցին, Կիսլովոդսկում՝ ամառանոցային շենքեր, որոնք այսօր էլ պահպանվում են: 1921թ. վերջերին տեղափոխվել է Երևան, որտեղ էլ ապրել ու ստեղծագործել է մինչև կյանքի վերջը: Նրա նախագծերով կառուցվել են ՔանաքեռՀԷԿ-ի վարչական և բնակելի շենքերը, ջրային տնտեսության նախարարության բնակելի շենքը Երևանում, Գետամեջի (Աբովյանի շրջան) ջրացանցը: Միաժամանակ (1930-1937թթ.) եղել է Քանաքեռշինի ճարտարապետական բաժնի վարիչը:

20. «Աղբյուր» 1912, թ.1, «Ղարաբաղ», 1912, թ. 1, 1912, թ. 38:

Ֆ.Աղալյանը ճարտարապետական, նախագծային աշխատանքներին զուգընթաց զբաղվել է նաև գիտամանկավարժական գործունեությամբ: Դասավանդել է Բաքվի պետական համալսարանում, տեխնիկումում (1917-1920թթ.), Երևանի ինդուստրիալ տեխնիկումում (1922-1929թթ.), Երևանի համալսարանի տեխնիկական ֆակուլտետում (1926-1929թթ.), պոլիտեխնիկական ինստիտուտում (1935-1937թթ.) և այլ ուսումնական հաստատություններում:

Ֆ.Աղալյանը տեսական մեխանիկայի գծով նշանավոր գիտնական, վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աշոտ Տեր-Մկրտչյանի հետ միասին հաճախակի այցելել է հայրենի քաղաք Շուշի, հանդիպել մտավորականության, հասարակայնության հետ, իր ավանդը ներդրել հայրենական գիտության զարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում:

<u>Անդրեաս Հովսեփի Արզումանյան (1876-1931թթ.):</u> Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է Վարանդայի Թաղավարդ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև սովորել Շուշիի թեմական դպրոցում, ուսումը շարունակել ռեալական ուսումնարանում: Բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1894-1898թթ.), այնուհետև ավարտել (1903թ.) Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Պրակտիկ գործունեությանը զուգընթաց Ա. Արզումանյանը բժշկական մի շարք առարկաներ է դասավանդել Մոսկվայի համալսարանում:

1926թ. տեղափոխվել է Երևան և ղեկավարել (1926-1931թթ.) պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի նյարդաախտաբանական և հոգեբանության ամբիոնը:

Ա. Արզումանյանի գիտական աշխատությունները նվիրված են բազմանյարդաբորբի, հիպոֆիզի և գանգի հիմքի ուռուցքների ուսումնասիրություններին:

<u>Հովնան Համբարձումի Գաբիրելյան (1876-1946թթ.):</u> Բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, մանկաբույժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել Մոսկվայի Լազարյան ճեմարանում, 1904թ. ավարտել Մոսկվայի համալսրանաի բժշկական ֆակուլտետը: 1904-1909թթ. աշխատել է Մոսկվայի մանկական հիվանդանոցում: 1914թ. նշանակվել է Բաքվի մանկական հիվանդանոցի սուր վարակիչ հիվանդությունների բաժանմունքի վարիչ: Նրա ջանքերով 1920թ. Բաքվի պետական համալսարանում հիմնադրվել է մանկաբուժության ամբիոն, որի վարիչն էր մինչև 1936թ.:

1936թ. Հ. Գաբրիելյանը հրավիրվել է Երևանի պետական համալսարան, որտեղ հիմնադրել է մանկական հիվանդությունների ամբիոնը և ավանդել մանկաբուժության առարկան:

Հ. Գաբրիելյանի գրչին են պատկանում 40-ից ավելի գիտական աշխատություններ՝ նվիրված երեխաների բրուցելիոզի, պալարախտի, մալարիայի, մենինգիտի, կարմրուկի, լեյնմանիոզի, դիզենտերիայի և այլ հիվանդությունների բուժման հարցերին: Հ. Գաբրիելյանը եռանդուն աշխատանք է կատարել նաև Հայաստանի հանքային ջրերի ու առողջարանների հետազոտման բնագավառում:

Հ.Գաբրիելյանը եղել է Երևանի մանկաբույժների ընկերության, ՀՀ առողջապահության ժողկոմատի մանկաբուժական խորհրդի անդամ: Այսօր նրա անվամբ է կոչվում Երևանի մանկական առաջին կլինիկական հիվանդանոցը: Նա ոչ միայն պրակտիկ բժիշկ էր, գիտնական մանկավարժ, խոշոր կլինիցիստ, այլև իսկական

հայրենասեր, Արցախի ժողովրդին նվիրյալ գործիչ:

Ասլան Շահնազարյան (1877-1955թթ.): Հայտնի բանասեր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, միջնակարգը՝ թեմական դպրոցում և Գևորգյան ճեմարանում, բարձրագույնը՝ Պետերբուրգի համալսարանում, 1910թ. ավարտելով արևելյան լեզուների բաժանմունքը:

Բարձրագույն կրթության մեջ կատարելագործվելու նպատակով Ա.Շահնազարյանը մեկնում է Գերմանիա, Բեռլինի համալսարանում ծանոթանում միջնակարգ դպրոցների դասավանդման մեթոդիկային ու ծրագրերին:

Հայրենիք վերադառնալուց հետո նա մանկավարժական աշխատանք է տանում Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում (1911-1913թթ.), այնուհետև աշխատում Գևորգյան ճեմարանում, Ներսիսյան դպրոցում, դասավանդում հայոց լեզու, գրականություն, պատմություն, գրաբար և Արևելքի պատմություն:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Ա. Շահնազարյանը դասախոսել է Երևանի պետական համալսարանում, մանկավարժական, պոլիտեխնիկական ինստիտուտներում: Նրա գրչին են պատկանում տասից ավելի պատմագիտական աշխատություններ:

Արշակ Աթայան (1877-1937թթ.): Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ: Ծնվել է Դիզակի գավառի Մեծ Թաղեր գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում (հիմ. 1840թ.), այնուհետև ուսանել Շուշիի թեմական դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Ուսումնառության տարիներին նրա գրած քնարական բանաստեղծությունները տպագրվել են (1895թ.) «Աղբյուր», «Տարազ» և «Մուրճ» ամսագրերում:

1898-902թթ. ծառայել է ցարական բանակում: 1903-1904թթ.՝ որպես սրբագրիչ աշխատել է «Մուրճ» ամսագրի (Թիֆլիս) խմբագրությունում:

1900-1903թթ. մանկավարժական գործունեություն է ծավալել Վրաստանի, Երևանի, Արցախի թեմի հայկական դպրոցներում՝ դասավանդել հայոց լեզու, գրականություն, բանահյուսություն, պատմություն, այնուհետև՝ 1904-1906թթ., Իրանի Սալմաստ գավառի Սովրա գյուղում: Այստեղ նա միաժամանակ գրի է առել Սալմաստի բոլոր հայկական 23 գյուղերի վիճակագրությունը, ժողովրդական երգն ու բանահյուսությունը, որը տպագրվել է նոր Զուղայում 1906թ.՝ «Սալմաստի տեղեկագրական ուսումնասիրություն» խորագրով: 1907-1911թթ., որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, աշխատել է Նոր Զյուղայի հայկական դպրոցներում, ապա պաշտոնավարել ռուս-պարսկական բանակի Սպահանի բաժանմունքում:

1912-1922թթ. աշխատել է Իրանում խորհրդային դիվանագիտական մարմիններում: Այդ տարիներին եղել է նաև քառաձայն երկչախմբի ղեկավար, մեներգել դերասան՝ հյուրախաղերի եկած Սիրանույշի և Արմեն Արմենյանի խմբերում:

Ա.Աթայանը գրել է դրամատիկական երկեր, որոնցից «Սասունցի Դավիթը» Ա.Արմենյանը բեմադրել է Թեհրանում (1921թ.), Ալեքսանդրապոլում (1922թ.):

1923թ. Ա.Աթայանն ընտանյոք վերադարձել է Հայաստան, որպես մանկավարժ աշխատել Երևանում, Ստեփանակերտում, Հադրութում և այլ վայրերում: Աշխատել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի պատասխանատու քարտուղար, լուսժողկոմի բաժնի վարիչ:

Ա.Աթայանը զբաղվել է նաև թարգմանությամբ: Առաջինն է, որ հայերեն թարգ-

մանել է Մ.Գորկու «Պառավ Իզերգիլը» պատմվածքը, «Կլիմ Սամգինի կյանքը» և «Մայրը» վեպերը: Թարգմանել է նաև Օմար Խայամի քառյակները:

Հայկ Ավետյան (1878-1965թթ.): Անվանի ճարտարապետ: Ծնվել է Շուշի քաղքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև սովորել ռեալական ուսումնարանում: 1908թ. ավարտել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի ճարտարապետության բաժինը: Որպես ճարտարապետ 1910-1928թթ. աշխատել է Բաքվում: Նրա նախագծերով կառուցվել են մի շարք ուսումնական և բնակելի շենքեր:

Հ. Ավետյանի նախագծերով 1929թ. վերջերին կառուցված բազմաթիվ բնակելի և հասարակական շենքերից նշանավոր են Լենինականի բժշկական տեխնիկումը, տեքստիլ կոմբինատի վարչական շենքը, քաղաքային ծննդատունը, կարի ֆաբրիկայի մանկապարտեզը և այլ շինություններ:

Արամ Մանուկյան (Սարգիս Հովհաննիսյան) (1879-1919թթ.): Անվանի ազգային-քաղաքական, պետական գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, ապա տեղափոխվել Երևան, ավարտել տեղի թեմական դպրոցը (1901թ.):

Ա. Մանուկյանը հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալներից է: ՀՅԴ հանձնարարությամբ 1901–03թթ. աշխատել է Բաքվում, Ելիզավետպոլում (Գանձակում), Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում: 1903թ. Կարսից զենք, զինամթերք և կամավորական խմբեր է փոխադրել Արևմտյան Հայաստան: 1904–08թթ. գործել է Վանում, ապա Օրդու քաղաքում զբաղվել ուսուցչությամբ, այնուհետև 2 տարի ապրել է Ժնևում: 1910թ. վերադարձել է Վան, դարձել Վասպուրականի հայության ամենաճանաչված գործիչներից մեկը: Եղել է 1915թ. Վանի ինքնապաշտպանության (ապրիլ-մայիս) կազմակերպիչներից ու ղեկավարներից, որի հաղթական ավարտից հետո ռուսական հրամանատարությունը նրան նշանակել է Վասպուրականի նահանգապետ (նահանգապետությունը գոյատևել է 70 օր): Հուլիսի 2-ին ռուսական զորքերի անակնկալ նահանջից հետո կազմակերպել է Վասպուրականի հայության գաղթը Արևելյան Հայաստան:

1916–17թթ. Մանուկյանը եղել է Թիֆլիսի Ազգային բյուրոյի անդամ. զբաղվել է հիմնականում արևմտահայ գաղթականության հարցերով: Մեծապես նպաստել է 1917թ. մայիսի 2–11-ը Երևանում անցկացված Արևմտահայերի 1-ին համագումարի կազմակերպմանը: 1917թ., որպես Հայոց ազգային խորհրդի լիազոր-ներկայացուցիչ, Թիֆլիսից ժամանել է Երևան, գլխավորել նորաստեղծ Հատուկ կոմիտեն, որն օժտված էր լայն լիազորություններով, իսկ 1918թ. մարտին Երևանի տարբեր խավերի ներկայացուցիչների ժողովում ընտրվել է դիկտատոր (արտակարգ լիազորություններ ունեցող պաշտոնատար անձ): Նա բազմաթիվ կոչերով և ուղերձներով դիմել է հայ ժողովրդին՝ կազմակերպված պայքար մղելու, սեփական ուժերին վստահելու, թուրքական հարձակումներից երկրի պաշտպանությունը նախապատրաստելու համար:

Կառավարության դերը կատարել է Ա.Մանուկյանի ջանքերով ստեղծված կառավարման վարիչների մարմինը, որի նախագահը և զինվորական գործերի վարիչն ինքն էր:

Ա.Մանուկյանը Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերի (1918թ., մայիս) ժամանակ ապահովել է հայկական բանակի թիկունքի անվտանգությունը: 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ղեկավարել է երկիրը՝ մինչև Թիֆլիսում ստեղծված Հայաստանի կառավարության ժամանումը (հուլիսի 23-ին) Երևան: Մանուկյանը Հայաստանի առաջին

հանրապետության փաստացի հիմնադիրն է: Նա նոր կառավարության մեջ ստանձնել է ներքին գործերի նախարարի պաշտոնը, որի իրավասության տակ էին նաև լուսավորության, հաղորդակցության, պարենավորման ու խնամատարության ոլորտները, տեղական իշխանությունների ձևավորումը: Մանուկյանը մեծ ջանքեր է գործադրել հանրապետությունում պարենային ճգնաժամը մեղմելու, գրագրությունների լեզուն հայացնելու, հարյուր հազարավոր փախստականների և որբերի կացությունը հնարավորինս բարելավելու համար: Նրա անմիջական մասնակցությամբ երկիրը ձերբազատվել է հայոց պետականության նկատմամբ թշնամաբար տրամադրված մահմեդականներից:

Մանուկյանը մահացել է բծավոր տիֆից:

Արամ Մանուկյանի մասին գրվել են գրքեր, հյուսվել երգեր, նրա անունով կոչվել են փողոցներ Երևանում և ՀՀ այլ բնակավայրերում, կիսանդրին կանգնեցվել է Երևանում (2009թ.):

<u>Դավիթ Տեր-Դանիելյան (Դավիթ Անանուն) (1879-1943թթ.):</u> Հրապարակախոս, պատմաբան, հասարակական գործիչ: Ծնվել է Ջրաբերդի գավառի Մեծ Շեն գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև ավարտել Ելիզավետպոլի (Գանձակի) քաղաքային գիմնազիան:

Երկար տարիներ (1898-1905թթ.) դասավանդել է Արցախի թեմի դպրոցներում: 1905-ից հարել է հնչակյան կուսակցությանը, իսկ հետո՝ հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությանը, դարձել նրա գաղափարախոսը: 1918թ. վերջերին ապրել է Թիֆլիսում, իսկ 1919-ից՝ բնակություն հաստատել Երևանում:

Այդ տարիներին աշխատակցել է «Մշակ», «Նոր հոսանք» թերթերին և կազմակերպել «Մեր ուղին» (1912թ.), «Գործ» (1917թ.), «Հայաստանի կոոպերացիա» (1919թ.), «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» (1912թ.), «Նորք» (1922թ.) և այլ պարբերականների հրատարակությանը:

1920-1926թթ. աշխատել է որպես Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, 1926-ից ապրել է Աստրախանում, որտեղ և մահացել է 1943թ. ապրիլին:

Զբաղվել է նաև գիտական գործունեությամբ: Հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը» (հ.1, 1916, հ.2, 1922թ. հ.3, 1926թ.), «Ազգային հարցը և դեմոկրատիան» և այլ գիտական հոդվածներ[21], որոնք նվիրված են հայ ժողովրդի մշակույթի, հասարակական-քաղաքական պատմության հարցերի լուսաբանմանը՝ առանցք ընդունելով հայերի ազգահավաքման գաղափարը:

<u>Եղիշե Բաղդասարյան (1881-1919թթ.):</u> Երաժշտական, հասարակական գործիչ, երգահան, խմբավար, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել (1901թ.) Պետերբուրգի կոնսերվատորիայում՝ Ա.Կ.Լյադովի դասարանում:

Ե.Բաղդասարյանը մանկավարժական գործունեություն է ծավալել Բաքվում, Արմավիրում (հայկական համայնքներում), Շուշիում և այլուր: Նա կազմակերպել է երգչախմբեր, ժողովրդական գործիքների նվագախմբեր և որպես խմբավար հանդես եկել համերգներով, արժանացել հայ հասարակայնության համակրանքին: Նա երաժշտական-ստեղծագործական գործունեություն է ծավալել նաև Մոսկվայի հայ համայնքում, հիմնադրել հայկական երգչախմբային ընկերություն

21. Տե՛ս ՀՀ Հանրագիտարան, հ.1, էջ 366:

(1910թ.), գլխավորել նրա գործունեությունը:

Ե.Բաղդասարյանը միաժամանակ զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Մոսկվայի Լազարյան ճեմարանում դասավանդել է երաժշտության տեսություն:

Ե.Բաղդասարյանի մասնակցությամբ կազմվել և հրատարակվել են ականավոր արվեստագետ, նկարիչ Հովհաննես Այվազովսկու հիշատակին նվիրված «Գեղարվեստական ալբոմը» (Պետերբուրգ 1903), «Արցունքներ» գրական-գեղարվեստական-երաժշտական ժողովածուն (Պետերբուրգ 1907): Նա բազմաթիվ երգերի, խմբերգերի, ռոմանսների, ինչպես նաև ժողովրդական երգերի ու շարականների դաշնակումների հեղինակ է: Ըստ արվեստաբանների տեղեկատվության՝ գրել է «Անուշ» (1909թ., ըստ Հովհ. Թումանյանի համանուն պոեմի), «Արտավազդ Բ» (ըստ Հար. Թումանյանի) օպերաները, «Անտառի մանուկը» (ըստ Ղ.Աղայանի) մանկական երաժշտական պատկերը[22]:

Ե.Բաղդասարյանի երգերից լայն ժողովրդականություն են վայելել «Աղջիկ բախտավոր» («Անուշ») և «Կործանվեցավ չարն իսպառ» («Արտավազդ Բ») խմբերգերը:

Այսօր պահպանվել է երաժշտագետ-մանկավարժի ստեղծագործական ժառանգության մեկ մասը միայն: Նրա շնորհիվ հայկական դպրոցներում բարձր դասարանների աշակերտների կազմից ստեղծվել են երգչախմբեր, որոնք համերգներ են տվել հայկական գյուղերում: Հաճախակի եղել է հայրենի Շուշի քաղաքում, համերգներ տվել քաղաքում և գավառի գյուղերում:

<u>Արսեն Տերտերյան (1882-1953թթ.):</u> Անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր- պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1940), ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934թ.)

Ծնվել է Վարանդայի Շոշ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում: 1892թ. ընդունվել և 1902թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը: 1905թ. ավարտել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1905-07թթ. հայ գրականության պատմություն է դասավանդել Շուշիի հոգևոր սեմինարիայում:

1907-09թթ. սովորել է Պետերբուրգի նյարդահոգեբանական ինստիտուտում:

1909-20թթ. գրականության պատմություն և տեսություն է դասավանդել Երևանի թեմական դպրոցում:

1920-53թթ. հայ գրականության պատմություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում: 1929-53թթ. եղել է համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչը:

1943թ. առանց դիսերտացիայի պաշտպանության նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Մահացել է Երևանում:

Ա. Տերտերյանի գիտամանկավարժական գործունեության, գրականագիտական աշխատանքների մասին մանրամասն ներկայացվել է նախորդ բաժնում:

<u>Դանիել Ղազարյան (1883-1958թթ.):</u> Երգահան, խմբավար, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել (1911թ.) Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում, իսկ 1921թ. ավարտել նաև կոնսերվատորիան:

22. Շահվերդյան Ա. Հայ երաժշտության պատմության ակնարկներ, 19-րդ և 20-րդ դարում, Եր. 1959, էջ 236:

Որպես երաժշտության ուսուցիչ՝ Դանիել Ղազարյանն աշխատել է Բաթումում, Երևանում, Բաքվում, Շուշիում: 1933 թվականից Երևանում զբաղվել է խմբավարությամբ և մանկավարժական մեթոդական աշխատանքով:

Զբաղվել է նաև ստեղծագործական աշխատանքով: Նրա ստեղծագործությունները բազմաժանր են՝ մանկական երաժշտական պատկերներ, երգեր, դաշնամուրային և նվագախմբային պիեսներ, քայլերգեր և այլն: Լայն ժողովրդականություն են վայելում նրա «Սոս և Վարդիթեր» երաժշտականացված դրամայի հատվածները, քաղաքային ժողովրդա-երաժշտական ոճի վրա հիմնված ռոմանսները և այլն:

Դ. Ղազարյանը երաժշտական հարցերին նվիրված իր գիտահետազոտական աշխատություններով զգալի ծառայություն է մատուցել հայ երաժշտության պատմության զարգացմանը:

Սարգիս Բաղդասարյան (1887-1949թթ.): Պետական, հասարակական, քաղաքական գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը և ուսումը շարունակել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1908-1910թթ.):

Ս.Բաղդասարյանը հեղափոխական, քարոզչական աշխատանք է կատարել Բաքու, Թիֆլիս և Պետերբուրգ քաղաքներում, ընտրվել (1908թ.) Պետերբուրգի հեղկոմի և նրա գործադիր հանձնաժողովի անդամ, իսկ 1917թ.՝ Պետերբուրգի հեղկոմի քարտուղար: Ղեկավարել է Պուտիլովի գործարանի բանվորների, զորամասերի հեղափոխական ելույթները:

Պատասխանատու պաշտոններ է վարել պետական հրատարակչական հիմնարկներում և հեռագրական գործակալությունում: 1920թ. տեղափոխվել է Խորհրդային Հայաստան, վարել մի շարք պատասխանատու պաշտոններ: 1921-1922թթ. եղել է արդյունաբերության ժողկոմ, 1922-1926-ին՝ Անդրֆեդերացիայի ջրային տնտեսության գլխավոր վարչության պետ: Եղել է Անդրֆեդերացիայի կենտգործկոմի անդամ, 1927-2931թթ.՝ ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների նախագահի տեղակալ, ապա՝ ԽՍՀՄ ռետինատրեստի նախագահ: 1931-1935թթ աշխատել է ԽՍՀՄ պետպլանում: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների, աշխատությունների:

Հայկ Գյուլիքևխյան (1886-1951թթ.): Անվանի գրականագետ, փիլիսոփա, հասարակական գործիչ, պրոֆեսոր, ԽՍՀՄ գրողների միության անդամ: Ծնվել է Խաչեն գավառի Խնձրիստան գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը: 1906թ. մեկնել է Գերմանիա, Ենայի և Լայպցիգի համալսարաններում հետևել փիլիսոփայության, քաղաքատնտեսության և գրականության դասընթացներին: 1907թ. սովորել է Ցյուրիխի (Շվեյցարիա) համալսարանում: 1912թ. գարնանը Հայկ Գյուլիքևխյանը գալիս է Մոսկվա: Նույն թվականի դեկտեմբերին նորից վերադառնում է Գերմանիա, շարունակում ուսումը և ավարտում Հայդելբերգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, պաշտպանում դոկտորական թեզը (1914թ.): Նույն տարում ձերբակալվել է իբրև ռուսահպատակ և ուղարկվել գերմանական համակենտրոնացման ճամբար, որտեղից ազատվել է 1918թ.:

1918-1919թթ. եղել է Աստրախանում, ծառայել 11-րդ բանակում, խնբագրել “Красный войн” թերթը, իսկ 1919թ.՝ “Красный рабочий” թերթը: 1920թ. աշխատել է Գրոզնիում՝ որպես ՌԿ(բ)Կ քաղկոմի ագիտբաժնի վարիչ, ապա՝ քարտուղար: Նույն թվականին փոխադրվել է Հայաստան, կարճ ժամանակ խմբագրել

Երևանի «Կոմունիստ» հայերեն թերթը: 1921թ. աշխատել է Ալեքսանդրապոլում՝ որպես գավառային կոմիտեի կուլտպրոպբաժնի վարիչ և «Կարմիր Շիրակ» թերթի խմբագիր: 1923թ. ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ էր, մի տարի հետո՝ «Վերելք» ամսագրի խմբագիրը, այնուհետև՝ Երևանի պետական համալսարանի դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասախոս: 1924-1927թթ. եղել է Երևանի պետական համալսարանի ուսումնական գծով պրոռեկտորը, նկատելի դեր խաղացել համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում: 1931-1934թթ.աշխատել է ՀԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ռեկտոր, 1934թ.՝ լուսժողկոմատին առընթեր գրականության և պատմության ինստիտուտի ռեկտոր: 1936-1938թթ. խմբագրել է «Հայկական ՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիրք»-ը: 1939 թվականից Արմֆանի գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող էր: Կյանքի վերջին տարիներին աշխատել է Երևանի պետական ռուսական մանկավարժական ինստիտուտում (ներկայիս՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան):

Հրատարակված են Հ. Գյուլիքևխյանի 30-ից ավելի գիտական աշխատություններ, բազմաթիվ հոդվածներ, որոնք նվիրված են արվեստի և գրականության տեսության հարցերին:

Իսահակ Իվանի Դովլաթյան (Դովլաթով) (1887-1938թթ.): Պետական, քաղաքական գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, ապա ավարտել ռեալական ուսումնարանը: Բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, այնուհետև ավարտել Մոսկվայի համալսարանը, զբաղվել հեղափոխական գործունեությամբ:

Ի.Դովլաթյանն ակտիվորեն մասնակցել է հոկտեմբերյան հեղափոխությանը, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը: Վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ Ադրբեջանում (1920-1923թթ.) և Հայաստանում (1932-1937թթ.):

Բալա Գրիգորի Մելիքյան (1888-1935թթ.): Ճանաչված երաժիշտ, թառահար: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է քաղաքի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել թեմական դպրոցը: Ուսումնառության տարիներին մեծ ձգտում ուներ երաժշտության հանդեպ, և հաճախ ակտիվորեն մասնակցում էր թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում կազմակերպված սիրողական երգչախմբերի համերգներին, որոնք կազմակերպում էր թեմականի ուսուցիչ Զուրաբյանը: Այն ժամանակ Հայաստանում, Արցախում ազգային երաժշտության տարածման միջոցներից մեկը դպրոցներն էին: Երաժշտությունը, որպես դասավանդման առարկա, վաղուց էր մուտք գործել Արցախի դպրոցները: Եթե դարի 60-70-ական թվականներին դպրոցներում այն սահմանափակված էր միայն հոգևոր երաժշտության շրջանակներում, ապա 80-90-ական թվականներին դրությունը հետզհետե փոխվեց, և Շուշիի թեմական դպրոցում երաժշտության դասավանդման գործը դրվեց պատշաճ մակարդակի վրա, շնորհիվ հայտնի երաժշտագետների՝ Վ. Դեմուրյանի, Գր. Միրզոյանի և շատ ուրիշների եռանդուն գործունեության:

Բ. Մելիքյանը հատուկ երաժշտական կրթություն չի ստացել: Ինքնուս երաժշտի նրա ճաշակն ու ունակությունները ձևավորվել ու զարգացել են Շուշիի ժողովրդական-երաժշտական միջավայրում, հոր՝ այդ ժամանակ արդեն նշանավոր թառահար Գրիգոր Մելիքյանի (1859-1929թթ.) ազդեցությամբ:

Բ.Մելիքյանը տասնինը տարեկան հասակում արդեն ճանաչված թառահար էր

և իր գործունեությամբ կապված էր նաև Բաքվի, Թիֆլիսի ու Երևանի երաժշտական կենտրոններին: Իր կազմակերպած գործիքային անսամբլների հետ միասին համերգներով հանդես էր գալիս (որպես մենակատար և նվագակցող) նաև Մոսկվայում ու Լենինգրադում:

1900-ական թվականների սկզբներին (1905-1908թթ.) Թիֆլիսից, Երևանից, Բաքվից, Ռուսաստանի հայաշատ վայրերից Արցախ էին ժամանում երաժշտական խմբեր և իրենց ստեղծագործական ու կատարողական աշխատանքով անհրաժեշտ նախադրյալներ ստեղծում Արցախում երաժշտական կրթության զարգացման համար: Այդ ուղղությամբ ակտիվ գործունեություն էր ծավալում նաև արդեն հայտնի երաժիշտ Բ. Մելիքյանը: Նա իր կազմակերպած երգչախմբով համերգներ էր տալիս Շուշիում և գավառի գյուղերում, արժանանում ժողովրդի մեծ համակրանքին: Հետագայում երաժշտական բեղուն գործունեություն է ծավալել Հայաստանում:

<u>Միքայել Վարունցյան (1880-1962թթ.):</u> ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: Ծնվել է Վարանդայի գավառի Թաղավարդ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում, այնուհետև սովորել Շուշիի թեմական դպրոցում: Բարձրագույն կրթությունը ստացել է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում (1907-1910թթ.): Որպես մեխանիկայի մասնագետ աշխատել է Թիֆլիսում (1910-1919թթ.), իսկ 1919 թվականից՝ Երևանում:

Մ.Վարունցյանը գիտա-մանկավարժական գործունեություն է ծավալել Երևանի պետական համալսարանում (1923-1930թթ.), պոլիտեխնիկական ինստիտուտում (1930-1956թթ.), որտեղ հիմնադրել է գծագրական երկրաչափության և գծագրության ամբիոնը, այն ղեկավարել մինչև 1956թ.: Ռուսերենից թարգմանել է գծագրական երկրաչափության առաջին հայերեն դասագիրքը, կազմել խնդիրների գիրք բուհերի համար: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների և աշխատությունների:

Նա հաճախակի էր այցելում Արցախ՝ իր ավանդը բերելով հայրենի երկրամասի գիտության, մշակույթի զարգացման, ինչպես նաև երիտասարդ կադրերի պատրաստման գործին:

<u>Բաղդասար Ավագյան (1883-1918թթ.):</u> Քաղաքական գործիչ, մանկավարժ: Ծնվել է Դիզակի գավառի Թաղուտ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի թեմական դպրոցը: Բարձրագույն կրթությունը ստացել է Խարկովի անասնաբուժական ինստիտուտում, որտեղից էլ հեղափոխական գործունեության համար հեռացվել է: 1905թ. վերադարձել է Բաքու և զբաղվել ուսուցչությամբ: 1910-1916թթ. դասավանդել է Շուշիի գավառի դպրոցներում: 1917թ. տեղափոխվում է Բաքու, մասնակցում հեղափոխական շարժումներին, եղել է Բաքվի զինվորական պատգամավորների քարտուղար (1918): Բաքվի կոմունայի օրոք նշանակվել է քաղաքի մշակույթի բաժնի պետ: 1918թ. մարտի մուսավաթական խռովության ջախջախումից հետո աշխատել է որպես Բաքու քաղաքի պարետ:

Բ.Ավագյանը գնդակահարվել է 1918թ. սեպտեմբերի 20-ին՝ Բաքվի 26 կոմիսարների հետ միասին:

<u>Հակոբ Խանլարյան (1885-1966թթ.):</u> Բանաստեղծ, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է քաղաքի թեմական դպրոցում (1897-1903թթ.), այն փակվելուկց հետո՝ Շուշիի ռեալական ուսումնարանում, որն ավարտել է 1907թ.:

Շուրջ 55 տարի զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Ուսուցչություն է արել Արցախի թեմի դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, դասավանդել է նաև Շուշիի թեմական դպրոցում՝ 1908-1909 ուստարում, ռեալական ուսումնարանում, Բաքվում, Գորիսում, Թիֆլիսում: Միաժամանակ աշխատակցել է պարբերական մամուլին՝ «Լումա», «Աղբյուր», «Տարազ», «Մարտակոչ», «Նոր դպրոց», «Հովիվ» և այլ պարբերականների:

Հ. Խանլարյանը մանկավարժական գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև գրական-ստեղծագործական աշխատանքով, հաղորդակցվել, շփվել ժամանակի անվանի բանաստեղծների՝ Հովհ. Թումանյանի, Վ.Փափազյանի, Ավ. Իսահակյանի, Հակոբ Հակոբյանի և ուրիշների հետ: Հատկապես մտերմական կապեր է ունեցել Հ. Թումանյանի հետ: Հ.Խանլարյանին ուղղած նամակներից մեկում (1911թ. հուլիսի 15-ին), Հովհ. Թումանյանը գրում է.

«Ազնիվ բարեկամ պ. Հ.Խանլարյան

Ում դիմելու եք Ձեզ համար և գիտեք, որ խնդիրս չի մերժել, մի խոշոր գործի պատճառով ստիպված եղա նրան դիմելու, որ և կատարեց ու այսպիսով ետ ընկավ Ձեր գործը, որ սակայն միշտ մոտ է իմ սրտին ու միշտ մտքումս: Շատ քիչ մարդիկ կան, որոնց կարելի է դիմել և ես ի նկատի ունեմ դարձյալ մեկին և սպասում եմ նրա Թիֆլիս գալուն:

Պ. Հ.Խանլարյան, դուք արժանի եք ամեն խրախուսանքի և ամեն աջակցության:

Շնորհակալ եմ Ձեր ցավակցության համար իմ՝ ճշմարիտ որ մեծ վշտի առիթով (Ղազարոս Աղայանի մահով): Ես մի ժամանակ Մանգլիս եմ լինելու, եթե նամակ գրեք՝ ուղարկեցեք այնտեղ, թեև միևնույն է՝ խմբագրությունից էլ հասցնում են ինձ:

Ձերմ բարևներով միշտ Ձեր բարեկամ՝ Հովհ. Թումանյան»[23]:

Հ.Խանլարյանի մի շարք բանաստեղծությունների տեքստերով երգեր են ստեղծել կոմպոզիտորներ Ազատ Մանուկյանը, Դանիել Ղազարյանը, Արշալույս Այվազյանը: Ռուսերեն առանձին գրքով լույս է տեսել նրա բանաստեղծությունների ժողովածուն (Շուշի, 1919թ.), որը թարգմանել է Մ. Ջանումյանը:

Հակոբ Խանլարյանը նկատելի ներդրում է ունեցել Արցախի դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման գործում:

<u>Ռուբեն Տեր-Գյանջեցյան (1885-1954թթ.):</u> Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ առողջապահության վաստակավոր գործիչ: Ծնվել է Նուխի քաղաքում: Ծնողները տեղափոխվել են Շուշի, որտեղ և՝ թեմական դպրոցում ստացել է նախնական կրթությունը: Այնուհետև սովորել է ռեալական ուսումնարանում: 1913թ. ավարտել է Մոնպելիեի (Ֆրանսիա) համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1914-1928թթ. աշխատել է Երևանի, Թիֆլիսի, Լենինականի, այնուհետև Բաքվի հիվանդանոցներում՝ որպես գլխավոր բժիշկ:

Բժշկագիտության ոլորտում շարունակել է գիտամանկավարժական գործունեություն ծավալել Երևանի բուհերում աշխատելու շրջանում (1933-1935թթ.): Եղել է Երևանի բժշկական ինստիտուտի սանիտարական ֆակուլտետի թերապիայի, այնուհետև հոսպիտալային թերապիայի ամբիոնների վարիչ, միաժամանակ եղել է (1950-1954թթ.) այդ ինստիտուտի տնօրենի տեղակալ, ապա՝ տնօրեն[24]:

Հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների, որոնցից արժեքավոր են

23. Հ.Թումանյան, 5-րդ հատոր, Հայպետհրատ, Եր. 1945, էջ 337, 343:
24. ՀՀ Հանրագիտարան, հ.շ, էջ 116:

«Մալարիայի բուժումը» (Եր. 1944), «Մալարիայի կլինիկան» (Եր. 1945), «Ստամոքսի և տասներկումատնյա աղիքի խոց» (Եր. 1946) և այլ հետազոտություններ:

Արշակ Հակոբյան (1886-1960թթ.): Հայտնի ֆիզիոլոգ, ֆիզիոթերապևտ, բժշկագիտության դոկտոր-պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել թեմական դպրոցը և բարձրագույն կրթություն ստացել Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1911թ. ավարտելով համալսարանը, վերադառնում է Եվրոպայից և որպես թերապևտ-բժիշկ աշխատում Կիևում (1912-1914թթ.):

1919թ. վերջերին տեղափոխվել է Երևան, աշխատել տարբեր հիվանդանոցներում: Զուգահեռաբար զբաղվել է գիտա-հետազոտական աշխատանքով: Մասնակցել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի հիմնադրմանը, հիմնել ֆիզիոլոգիայի ամբիոն և այն ղեկավարել մինչև 1936թ.: Առաջին անգամ Երևանում կազմակերպել է նյարդային հիվանդությունների բաժանմունք, որի բազայի վրա հետագայում ստեղծվել է նյարդաբանության կլինիկա, ուր 1936թ. հիմնել է նյարդաբանության ամբիոն և մինչև կյանքի վերջը ղեկավարել այն[25]:

Հեղինակ է մի շարք արժեքավոր աշխատությունների, որոնք նվիրված են նյարդային հիվանդությունների բուժմանը:

Գրիգոր Ներսիսյան (1887-193..թթ.): Բանաստեղծ, հրապարակախոս, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է քաղաքի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել թեմական դպրոցը, որտեղ աշակերտել է ականավոր հայագետների, լեզվաբաների (Գ.Գուլիքևխյան, Լ.Սարգսյան, Հր.Աճառյան, Բենիկ Վարդապետ): Թեմականն ավարտելուց հետո դասավանդել է Արցախի թեմի դպրոցներում, նաև ռեալական ուսումնարանում: Ինչպես իր զեկուցագրում նշում է թեմական դպրոցի տեսուչ Տիրայր Վարդապետը, կրթօջախի աշակերտներն իրենց ուսուցիչների՝ Մ.Շահնազարյանի, Գ. Ներսիսյանի առաջնորդությամբ էքսկուրսիաներ էին կազմակերպում դեպի Շուշիի, Զաբրայիլի, Զանգեզուրի գավառները[26]:

Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով 1915թ. վերջերին մեկնում է Մոսկվա և ընդունվում առևտրի ինստիտուտ, սակայն նյութական սուղ պայմանների պատճառով ուսումը կիսատ է մնում: 1916թ. վերջերին վերադառնում է Հայաստան, Ալեքսանդրապոլի գավառի դպրոցներում շարունակում մանկավարժական գործունեությունը (1917-1919թթ.):

1920-1928թթ. մանկավարժական գործունեություն է ծավալել Ղրիմի հայկական դպրոցներում, այդտեղ ևս կիրառել իր առաջավոր մանկավարժական փորձը, կազմակերպել գրական երեկոներ, ցերեկույթներ, խմբակներ՝ նպատակ ունենալով հայ երիտասարդների մեջ ներարկել ազգային ոգին: Ուշագրավ են հատկապես նրա կողմից կազմակերպված փորձնական դասերը:

1928թ. վերջերին վերադառնում է Արցախ և շարունակում գիտամանկավարժական, հոգևոր-մշակութային գործունեությունը հայրենի երկրամասի դպրոցներում:

Գ.Ներսիսյանը 1928-1937թթ. հայոց լեզու և գրականություն է դասավանդել

25. Տե՛ս Լ.Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարան, Երևան:
26. Հ.Առաքելյան, Ղարաբաղի թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր, 1858-1912թթ., էջ 72-73:

Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Միաժամանակ եղել է «Կայծ» գրական-գեղարվեստական, քննադատական և գյուղատնտեսական ամսագրի խմբագիրը: Ամսագրի էջերում լուսաբանվել են արցախահայության տնտեսական, քաղաքական, լուսավորական կյանքին առնչվող բազմազան հարցեր: Գրական, գեղարվեստական, տնտեսական թեմաներով բազմաթիվ հոդվածներ են տպագրվել ամսագրի տարբեր համարներում:

Նրա գրական ստեղծագործություններից նշանավոր են «Փոթորիկը», «Նոր տարին», «Ես հավատում եմ», «Արշալույսին», բանաստեղծությունները, «Ձախջախված ժանիքներ» պիեսը և այլ գործեր: Շուշիում տպագրվել են նրա «Թախծոտ էջեր» (Բ. Տեր-Սահակյանի տպարան, 1911), «Խորտակված յոյսեր» (Մ. Բաբաջանյանի տպարան, 1911) գրքերը, Երևանում՝ «Գրաբաց Բղդո» գիրքը (պետհրատ, 1931):

Գ. Ներսիսյանը, Արցախի շատ այլ անվանի մտավորականների հետ մեկտեղ, ավաղ, նույնպես զոհ գնաց անհատի պաշտամունքի տարիներին թափ առած ստալինյան-բերիական հալածանքներին:

<u>Լևոն Բաբայան (1880-1958թթ.):</u> Գրական և հասարակական գործիչ, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի թեմական դպրոցը (նրան դասավանդել են Ար. Տերտերյանը, Ս.Գյուլզադյանը, Գ.Գյուլիքևխյանը, Ար. Շամիրյանը, Ար. Չիլինգարյանը և ուրիշներ)[27], բարձրագույն կրթություն ստացել Գերմանիայում: 1902թ. վերադառնում է հայրենի Շուշի քաղաք, աշխատում թեմական դպրոցում (մինչև փակվելը՝ 1903թ.) այնուհետև դասավանդում է ծխական, օրիորդաց դպրոցներում:

1906թ. սեպտեմբերին աշխատանքի է անցնում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ուր դասավանդել է հայ գրականություն, պատմություն, աշխարհագրություն:

Լ.Բաբայանը ինչպես Արցախում աշխատած տարիներին, այնպես էլ Ներսիսյան դպրոցում որոշակի դեր է խաղացել հայ մանկավարժական մտքի զարգացման ասպարեզում:

Զբաղվել է նաև գրական գործունեությամբ: Միաժամանակ գրել, հրատարակել է աշխարհագրության դասագիրք, գրականության դասավանդման մեթոդական ձեռնարկ, այլ արժեքավոր աշխատություններ («Լեո», Թիֆլիս, 1908, 28 էջ) «Խոջալուի գերեզմանները») ու բազմաթիվ գիտական հոդվածներ, որոնք տպագրվել են նաև Շուշիի պարբերականներում:

<u>Հակոբ Կամարի (Բեջանյան) (1889-1930թթ.):</u> Քաղաքական, պետական գործիչ: Ծնվել է Ջրաբերդի գավառի Լյուլասազ (Մինգրելսկ) գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում (1897-1900թթ.), ապա ավարտել ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել Գորիի ուսուցչական սեմինարիայում, որն ավարտել է 1909թ. ու զբաղվել մանկավարժական, հեղափոխական գործունեությամբ:

1909թ. ղեկավար մասնակցություն է ունեցել Կովկասի բոլշևիկյան գրեթե բոլոր թերթերի և ամսագրերի հրատարակմանը, միաժամանկ աշխատել է Բաքվի կուսակցական կազմակերպություններում (1909-1912թթ.): 1915-1916թթ. դասավանդել է Ելիզավետպոլում (Գանձակ): 1915թ. «Պայքար» թերթի խմբագրական կոլեգիայի անդամ էր:

---

27. Տե՛ս Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 68-69:

Հեղափոխական գործունեությանը զուգընթաց՝ ակտիվորեն թղթակցել է ժամանակի պարբերական մամուլին: Նրա հոդվածաշարերը («Կարմիր գծեր», «Բանվորությունը և գյուղացիական չքավորությունը», «Պատերազմ» և այլն) տպագրվել են «Նեցուկ» (Շուշի, 1917 օգոստոս) թերթում, որի խմբագիրն էր Աշոտ Հովհաննիսյանը: Թերթին թղթակցում էին նաև Ա.Ծատրյանը, Ա.Դանիելյանը և ուրիշներ: Թերթը հրատարակվել է ութ համար:

Եղել է «Կոմունիստ» թերթի (Թիֆլիս, 1918-1919) խմբագիր:

1920-1921թթ. կուսակցական ղեկավար աշխատանք է կատարել Զանգեզուրում, այնուհետև Լեռնային Ղարաբաղում:

Արտեմ Պողոսի Աղամալյան (1882-1963թթ.): Քաղաքական, պետական գործիչ: Ծնվել է Վարանդայի Սարգսաշեն գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել ռեալական ուսումնարանում, որն ավարտելուց հետո զբաղվել է հասարակական-քաղաքական, հեղափոխական աշխատանքով:

Մասնակցել է Շուշիում ծավալված հասարակական-հեղափոխական շարժումներին, ցարիզմի դեմ մղված պայքարին: 1903թ. արտասահմանից (Լենինի հանձնարարությամբ) Անդրկովկաս է տեղափոխում «Իսկրա» թերթը: 1914թ. մասնակցում է Բաքվից Ելիզավետպոլ ընդհատակյա տպարանի տեղափոխմանը: 1918թ. Բաքվի կոմունայի ակտիվ գործիչներից էր: Մեծ աշխատանք է կատարել ազգամիջյան կռիվների ժամանակ Բաքվի հայերի պաշտպանության գործում:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ: Ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի (1926-1928թթ.), վերստուգիչ հանձնաժողովի (1928-1932թթ.), Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի (1923-1931թթ.) և Հայաստանի կենտգործկոմի (1927-1937թթ.) անդամ:

Դավիթ Տեր-Կարապետյան (1879-1943թթ.): Հասարակական գործիչ, հրապարակախոս, պատմաբան: Ծնվել է Ջրաբերդի գավառի Մեծ շեն գյուղում: Շուշիի ռեալական ուսումնարանի 5-րդ դասարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ելիզավետպոլի քաղաքային գիմնազիայում:

1898թ. վերջերին տեղափոխվում է Բաքու և աշխատում նավթահանքերում՝ որպես գրասենյակային բաժնի վարիչ, ապա՝ վարչության պետի տեղակալ:

Սամսոն Ապրեսով (Ապրեսյան) (1889-....՞թթ.) Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, բարձրագույն կրթությունը ստացել Պետերբուրգում: Տեղափոխվելով Բաքու՝ աշխատել է նավթային արդյունաբերության ձեռնարկություններում, հետագայում՝ ԽՍՀՄ այլ քաղաքներում:

Ս. Ապրեսովի գիտահետազոտական ուսումնասիրություններն ամփոփված են 50-ից ավելի գիտական աշխատություններում:

Արտեմ Տեր-Խաչատուրով (Խաչատրյան) (1886-1963թթ.): Գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր:Ծնվել է ներկայիս Ստեփանակերտ քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում: Այն փակվելուց հետո ուսումը շարունակել է ռեալական ուսումնարանում, որն ավարտել է 1904թ.: Բարձրագույն կրթությունը ստացել է Գերմանիայի համալսարաններում:

Երկար տարիներ դասախոսական ու գիտահետազոտական աշխատանք է կատարել Թիֆլիսում, խորհրդային շրջանում տևական ժամանակ դասախոսել է քաղաքի պոլիտեխնիկական ինստիտուտում, զբաղեցրել է նրա էլեկտրատեխնի-

կական ֆակուլտետի դեկանի և ուսումնական մասի վարիչի պաշտոնները:

Հեղինակ է 14 աշխատության, 30-ից ավելի գիտական հոդվածների[28]:

Մկրտիչ Մովսեսի Յուզբաշյան (1882-1961թթ.): Ինժեներ-էլեկտրամեխանիկ, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է քաղաքի թեմական դպրոցում, ապա ավարտել ռեալական ուսումնարանը, այնուհետև՝ Գերմանիայի Դարմշտադտի պոլիտեխնիկական ինստիտուտը (1905-1910թթ.): Երկար տարիներ աշխատելով Քյոլնում և Բեռլինում՝ կատարելագործվել է մասնագիտության մեջ: Վերադառնալով Եվրոպայից՝ աշխատել է մի շարք քաղաքներում: 1923-1930թթ. աշխատել է Թիֆլիսի էլեկտրամեխանիկական գործարանում որպես տնօրեն (1923-1924թթ.) և ապա՝ գլխավոր ինժեներ: 1930թ. գարնանը տեղափոխվել է Երևան՝ ղեկավարելով քաղաքի տրամվայի գծի շինարարությունը: 1930-1937թթ. եղել է Երքաղգործկոմի տրամվայի վարչության պետ և գլխավոր ինժեներ: 1932թ. դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Մ. Յուզբաշյանը էլեկտրատեխնիկայի հայերեն լեզվով առաջին դասագրքի հեղինակն է: 1935-1955թթ. լույս է տեսել նրա «Ընդհանուր էլեկտրատեխնիկա» երկհատորյա աշխատությունը՝ որպես ձեռնարկ բուհերի ուսանողների, դասախոսների համար:

Սիմոն Մովսեսի Յուզբաշյան (1886-1960թթ.): Մկրտիչ Յուզբաշյանի եղբայրը: Անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, իսկ բարձրագույն կրթությունը ստացել է Ֆրայբուրգի (Գերմանիա) համալսարանում: 1911թ. վերադարձել է Եվրոպայից և դասախոսական աշխատանքի անցել Թիֆլիսի բուհերում: 1929-ից աշխատել է Անդրկովկասի անասնաբուժական տարբեր ինստիտուտներում,1931-ից՝ Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում, որտեղ կազմակերպել է ընդհանուր կենսաբանության և գենետիկայի ամբիոն, որի վարիչն է եղել, միաժամանակ դասախոսել Երևանի պետական համալսարանում (1934-ից):

Մ.Յուզբաշյանի նախաձեռնությամբ 1935թ. հիմնադրվել է ԽՍՀՄ ԳԱ Արմֆանի և կենսաբանության ինստիտուտը, որի տնօրենն էր մինչև 1939թ.: 1939թ. Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի կենսաբանության ամբիոնի վարիչն էր:

Մ.Յուզբաշյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են կենդանիների օրգանների ապաճման հիմնահարցերին: Զբաղվել է նաև ընդհանուր կենսաբանության հարցերով:

Միքայել Շահնազարյան (1887-19...թթ.): Գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, ապա ավարտել ռեալական ուսումնարանը: Բարձրագույն կրթությունն ստացել է Պետերբուրգում: Վերադառնալով Եվրոպայից՝ 1912ից սկսում է աշխատել նավթաարդյունաբերության տարբեր ձեռնարկություններում:

1929թ. վերջերին խորհրդային կառավարությունը Մ.Շահնազարովին գործուղում է Ամերիկա՝ գազի արդյունաբերության դրվածքին ծանոթանալու: Վերա-

28. Տե՛ս Ս. Կարապետյան, Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանում, Ստեփանակերտ, 1962, էջ 42-43:

դառնալով՝ 1932թ. Բաքվում ձեռնամուխ է լինում գազի արտադրության ու օգտագործման խնդրի իրացմանը: Մ.Շահնազարովի ուսումնասիրություններն ընդհանրացված են 18 աշխատության մեջ, 20 ամսագրային հոդվածներում՝ նվիրված գազի արդյունաբերության հիմնահարցերին:

Գրիգոր Միքայելի Սաղյան (1880-1937թթ.): Բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, ապա ավարտել նաև ռեալական ուսումնարանը: Ուսումը շարունակել է Բեռլինի, ապա Ենայի համալսարանների բժշկական ֆակուլտետներում: 1903թ. ավարտելով ուսումը՝ վեց տարի մանկաբուժության, պալարախտի (տուբերկուլյոզի) և թերապիայի գծով մասնագիտացել է Բեռլինի կլինիկաներում: 1909թ. վերադառնում է Գերմանիայից և աշխատանքի անցնում Բաքվի քաղաքային հիվանդանոցներում:

Գ.Սաղյանը 1918թ. նախաձեռնել է հայ որբ ու անօթևան երեխաների բուժօգնության գործը: Եղել է Հայաստանի որբանոցային գործերի գլխավոր լիազոր և գաղթականներին ու որբերին տեղավորելու համար մասնավոր շենքերի գրավման հանձնաժողովի նախագահ: Դիլիջանում կազմակերպել է առաջին մանկական պալարախտային դիսպանսերը 1925-1927թթ.՝ երկու առողջարաններով և Երևանի 2-րդ պալարախտային հիվանդանոցը (1935-ից՝ Գ.Սաղյանի անվան 2-րդ պալարախտային դիսպանսեր), 1931թ.՝ «Նորք» մանկական առողջարանը, 1935թ.՝ Երևանի պալարախտային գիտահետազոտական ինստիտուտը (եղել է այդ ինստիտուտի տնօրենը):

Գ.Սաղյանի գրչին են պատկանում տասնյակ գիտական աշխատություններ:

Խորեն Սարգսյան (1891-1970թթ.): Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև սովորել է Բաքվի քաղաքային գիմնազիայում: 1917թ. ավարտել է Պետրոգրադի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը:

1921թ. տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել Հայաստանի գիտական ինստիտուտում, որպես գիտաշխատող: 1922-24թթ. եղել է Երևանի պետական կենտրոնական թանգարանի արխիվների բաժնի վարիչ, միաժամանակ ռուսաց լեզու դասավանդել Երևանի հայկական ռազմական դպրոցում և մանկավարժական տեխնիկումում: 1930-36թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում, հետագայում աշխատել որպես գրական թանգարանի տնօրեն, գրականության և լեզվի ինստիտուտի գիտաշխատող, գիտական քարտուղար, ապա՝ նույն ինստիտուտի տնօրեն:

1943-47թթ. ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենն էր, 1947-70թթ.՝ նույն ինստիտուտի հայ հին գրականության բաժանմունքի վարիչ:

1964թ. առանց դիսերտացիայի պաշտպանության նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

Հեղինակ է «Նալբանդյանը և լեզվի հարցեր» (1956թ.), «Գրականության և կյանքի արահետներով» (1974թ.), `«Մանկության քաղաքը» (1970թ.), «Մանուկ Աբեղյանը և հայ հին գրականության պատմությունը»[29] (1946թ.), «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին» (1961) և այլ արժեքավոր աշխատությունների:

29. Տե՛ս Խ.Սարգսյան, Մ.Աբեղյանը և հայ հին գրականության պատմությունը, Երևան, 1946:

Վաղարշ Վաղարշյան (Վաղարշակ Բոգդանի Տեր-Պողոսյան) (1894-1959թթ.): Հայ արվեստի նշանավոր գործիչ, ժողովրդական արտիստ, ռեժիսոր, դրամատուրգ, պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել թեմական դպրոցը, երկու տարի ուսուցչություն արել Շուշիի գավառի դպրոցներում:

Մեծ արվեստագետի բեմական գործունեությունը սկսվում է 1915թ. վերջերին: Բազմաթիվ դերակատարումներով հանդես է եկել Թիֆլիսի, Բաքվի, Կրասոնդարի, Դոնի Ռոստովի, ղրիմահայ գաղութի հայկական թատրոններում՝ ամենուրեք հիացմունք պատճառելով հանդիսատեսներին:

Վաղարշ Վաղարշյանի բեմական գործունեությունը կապված է Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հետ: 1923թ. սկսել է խաղալ այդ թատրոնում, իսկ 1941-1949թթ. եղել է նրա գեղարվեստական ղեկավարը: Նրա կերտած լավագույն դերերից են Սուրենը (Շիրվանզադեի «Պատվի համար»), Գագիկը, (Դ.Դեմիրճյան «Երկիր հայրենի»), Ասլան Ամին (Վ.Վաղարշյանի «Օղակում»), ռևիզորը՝ Գոգոլի համանուն պիեսում, Համլետը՝ Վ.Շեքսպիրի համանուն ողբերգության մեջ և այլն: Բացի այդ, Գ.Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրել է Բ.Ռոմաշովի «Հրե կամուրջ» պիեսը, Տիգրան Հախումյանի (շուշեցի Ս.Հախումյանի որդին) «Թշնամին», Ալեքսանդր Ֆադեևի «Ջարդը», Մ.Գորկու «Դոստիգաևը և մյուսները» և այլ դրամաներ: Նկարահանվել է նաև կինոյում: Վ. Վաղարշյանը նաև դրամատուրգ և թարգմանիչ էր, գրել է «Ղողանջ», «Սուլթան Աբդուլ Համիդ», «Գագիկ երկրորդ», «Օղակում», «Վանքաձոր», «Մոխրագույն գայլը» պիեսները, թարգմանել Շիլլերի «Սեր և խարդավանքը»[30] և այլն:

Վ.Վաղարշյանը զբաղվել է նաև մանկավարժական աշխատանքով. 1944թ. դասախոսել է Երևանի թատերական ինստիտուտում:

Սիմոն Սարգսյան (Սարկիսով) (1895-1971թթ.): Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում: Այնուհետև ծնողների հետ տեղափոխվել է Թիֆլիս, ուսումը շարունակել Ներսիսյան դպրոցում (1911-1915թթ.): Բժշկական բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայի համալսարանում (1918-1923թթ.), այնուհետև ավարտել է Մոսկվայի կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտը[31]:

1925թ. Ս.Սարկիսովի նախաձեռնությամբ Մոսկվայում կազմակերպվել է ուղեղի բջջակերտվածքի (ցիտոարխիտեկտոնիկա) լաբորատորիա: Վերջինս 1928թ. վերակառուցվել է ուղեղի ԳՀԻ-ի, որի անփոփոխ տնօրեն էր նա մինչև 1968թ.:

Ս.Սարկիսովը եղել է ԽՍՀՄ առողջապահության նախարարության բժշկական գիտխորհրդի նյարդաախտաբանների և հոգեբույժների համամիութենական ընկերության նախագահ, նյարդաախտաբանների միջազգային ֆեդերացիայի փոխնախագահ, ԽՍՀՄ ԲԳԱ նախագահության, Բեռլինի ԳԱ թղթակից անդամ, Մեծ Բրիտանիայի թագավորական բժշկական ընկերության և արտասահմանյան այլ երկրների նյարդաախտաբանների ու հոգեբույժների ընկերությունների անդամ:

Ականավոր գիտնականը եռանդուն աջակցություն է ցուցաբերել Հայաստանի

30. Այդ մասին մանրաման տես՝ Վ.Վաղարշյան, Երկերի ժողովածու, երկու հատորով, հ.1, 1975, հ.2, 1975:
31. ՀՀ Հանրագիտարան, հ.10, էջ 235:

բժշկագիտության զարգացմանը: Եղել է Երևանի բժշկական ինստիտուտի ստեղծման նախաձեռնողներից մեկը, օգնել ստեղծելու հագեցած լաբորատորիաներ, իր հարուստ փորձն է ներդրել գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում:

Վլադիմիր Խաչատրյան (1894-1971թթ.): Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, իսկ բարձրագույնը՝ Ցյուրիխի, Բեռլինի, Բոնnի համալսարաններում: Բժշկագիտության գծով դոկտորական թեզը պաշտպանել է Ցյուրիխի համալսարանում: Դոկտորի աստիճանով վերադարձել է Ռուսաստան և աշխատել Պետերբուրգում, Թիֆլիսում, Երևանում: Այցելում էր նաև հայրենի Շուշի, բժշկի իր ծառայությունը մատուցում հայրենակիցներին:

Հեղինակ է 30-ից ավելի բժշկա-առողջապահական գրքերի, որոնք հրատարակվել են հայերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներով: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել Երևանում բժշկական կադրերի պատրաստման, վերապատրաստման, հատկապես բժշկական ինստիտուտի հիմնադրման, լաբորատորիաների ստեղծման գործում:

Ալեքսանդր Հովհաննիսյան (1895-1949թթ.): Հայ բեմի տաղանդավոր վարպետ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ: Ծնվել է Խաչեն գավառի Բադարա գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Շուշիի թեմական դպրոցում:

Ա. Հովհաննիսյանի դերասանական առաջին քայլերն արվել են հայ անվանի կոմպոզիտոր Ստեփան Դեմուրյանի մոտ, երբ վերջինս 1911թ. այցելում է Շուշի և թեմական, օրիորդաց դպրոցների, ռեալական ուսումնարանի աշակերտներից կազմում երգչախումբ, կազմակերպում երաժշտական-թատերական ներկայացումներ քաղաքում, ինչպես նաև թեմի մի շարք գյուղերում: Այդ խմբի ելույթները մեծ հիացմունք էին պատճառում Արցախի հայ հասարակությանը:

Գրիգոր Խաչյան (1896-1963թթ.): Պետական, քաղաքական գործիչ, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում (1908-1916թթ.), այնուհետև ուսումը շարունակել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Թեմականում սովորելու տարիներին Գ.Խաչատրյանն իր դասընկերների՝ Սիմոն Ափյանի, Անդրանիկ Ավագյանի, Գևորգ Թովմասյանի, հետ միասին 1913թ. Շուշիում գաղտնի հրատարակում է «Միրաժ» ամսագիրը (Ս.Ափյանի տանը), որի յուրաքանչյուր համար ուներ աշակերտական տետրի 10-12 թերթի ծավալ: Ամսագրի խմբագիր Գրիգոր Մեհրաբյանը և սրբագրիչ Մկրտիչ Մելքումյանը ջանում էին «Միրաժը» դարձնել ընդհատակյա հեղափոխական խոսափող: Շատերն էին մասնակցում նրա տպագրությանն ու տարածմանը:

1920թ. սկսած՝ Գ.Խաչյանը կուսակցական աշխատանք է կատարում Արցախում, եղել է կուսմարզկոմի քարոզչության բաժնի վարիչ, մարզային թերթի խմբագիր և այլն: Մի շարք տարիներ զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդել Շուշի քաղաքի, մարզի դպրոցներում:

Միքայել Արուքչյան (1897-1981թթ.): Արվեստագետ, Հայաստանի ժողովրդական նկարիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, ապա սովորել ռեալական ուսումնարանում: Երբ ընտանիքը տեղափոխվում է Բաքու՝ ուսումը շարունակում է տեղի արական գիմնազիայում:

Մ.Արուքչյանը 1919թ. ավարտում է Սարատովի բարձրագույն գեղարվեստական տեխնիկական արվեստանոց-ուսումնարանը: Իր առաջին բեմական ձևավո-

րումը՝ «Փաստաբան Պատլեն» (1919թ.), նա կատարել է տեղի երգիծանքի թատրոնում և արժանացել բարձր գնահատանքի:

1919-1920թթ. ծառայել է լեգենդար զորավար Գայի (Հայկ Բժշկյան) հեծյալ կորպուսում՝ որպես գրասենյակային աշխատող-նկարիչ-լրագրող:

Քաղաքացիական պատերազմից հետո ուսումը շարունակել է Բեռլինի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1921-1923թթ.), այնուհետև՝ (1924-1925թթ.) Փարիզի Կոլառոսսի ակադեմիայում:

1925թ. վերջերին տեղափոխվում է Հայաստան:

1928-1939թթ. Գ.Սունդուկյանի անվան թատրոնի գլխավոր նկարիչն էր: Տարբեր տարիների աշխատակցել է նաև Լենինականի, Բաքվի, Թիֆլիսի, Ստեփանակերտի հայկական թատրոններին:

<u>Քրիստափոր Պետրոսյան (1897-1971թթ.):</u> Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Վարանդա գավառի Տրնավազ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, բարձրագույնը՝ Բորդոյի համալսարանում (Ֆրանսիա): Աշխատել է Ռուսաստանի տարբեր քաղաքներում, բայց ամենից շատ՝ Երևանում, որտեղ եղել է օրթոպեդիկ ինստիտուտի հիմնադիրը և ղեկավարը: Հեղինակ է տասից ավելի աշխատությունների և մի շարք գիտական հոդվածների, որոնք նվիրված են բժշկագիտության զարգացմանը:

1937թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

<u>Արտաշես Արզումանյան (1898-1978թթ.):</u> Դերասան, Հայաստանի ժողովրդական արտիստ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, ապա ավարտել ռեալական ուսումնարանը:

Որպես դերասան աշխատել է Բաքվի, Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոններում (1929-49թթ.): 1956-ից՝ Լենինականի Մռավյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան էր: Նրա լավագույն դերակատարումներից են՝ Հայրապետը (Ա.Շիրվանզադե, «Նամուս», 1936թ.), Մինթոևը (Շիրվանզադե, «Մորգանի խնամին», 1949թ.), Բալաբեկը (Ն. Զարյան, «Աղբյուրի մոտ», 1950թ.), Մելիք աղան (Վ. Վաղարշյան, «Օղակում», 1956թ.), Նազարը (Դեմիրճյան, «Քաջ Նազարը» 1956թ.), Սչաստլիվցևը (Ա.Օստրովսկի, «Անտառ», 1968թ.) և այլն:

Ա.Արզումանյանը տարբեր առիթներով եղել է իր ծննդավայրում, հանդիպումներ ունեցել տեղի հայ հասարակության,՝ մտավորականության, արվեստի աշխատողների հետ, կազմակերպել թատերական ներկայացումներ և այլ միջոցառումներ:

<u>Սերգեյ Իսայի Վարունցյան (1898-1977թթ.):</u> Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել (1923թ.) Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետում: Որպես գլխավոր գյուղատնտես աշխատել է (1926-1940թթ.) Գյանջայի (Գանձակի, 1935-ից՝ Կիրովաբադ) փորձասելեկցիոն կայանում, որը հետագայում վերակազմավորվել է բամբակագործական գիտահետազոտական ինստիտուտի, եղել է նաև բամբակենու սելեկցիայի, սերմնաբուծության և գենետիկայի բաժնի վարիչ:

1940-1948թթ. Ս.Վարունցյանը եղել է ԽՍՀՄ գյուղատնտեսության նախարարության տեխնիկական մշակաբույսերի սորտափորձարկման պետական բաժանմունքի հանձնաժողովի գիտական քարտուղար, իսկ 1961-1964թթ.՝ ԽՍՀՄ գյու-

ղատնտեսական ԳԱ բուսաբուծության և սելեկցիայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Ս.Վարունցյանը համատեղության կարգով դասախոսել է Մոսկվայի, Երևանի, Բաքվի գյուղատնտեսական ինստիտուտներում, եղել է «Ագրոբիոլոգիա» ամսագրի (1949-1965թթ.) գլխավոր խմբագրի տեղակալը:

Հեղինակ է 40-ից ավելի գիտական աշխատությունների ու հոդվածների, որոնք վերաբերում են հիբրիդացման ժամանակ տնտեսապես արժեքավոր հատկանիշների ժառանգման, հիբրիդացման առավել արդյունավետ մեթոդների մշակման, սորտափորձարկման հարցերին, բամբակենու սերմնաբուծության համակարգի կազմակերպմանը՝ նոր սորտերի արագ բազմացման համար:

Սամվել Սաֆարյան (1902-1969թթ.): ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի իսկական անդամ, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել ռեալական ուսումնարանում: Հետագայում ծնողների հետ միասին տեղափոխվում է Երևան, որտեղ և ավարտում է միջնակարգը: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պետական համալսարանում՝ 1928թ. ավարտելով տեխնիկական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը:

Երիտասարդ ճարտարապետն աշխատակցել է հայ անվանի ճարտարապետ, ակադեմիկոս Ա.Թամանյանին:

1938թ. ղեկավարել է Երքաղխորհրդի գործկոմի ճարտարապետական արվեստանոցը, ապա ճարտարապետության գործերի վարչության արվեստանոցները, 1955-ից անընդմեջ՝ «Հայպետնախագիծ» ինստիտուտի տիպային նախագծման արվեստանոցը: 1941-1953թթ. եղել է Հայաստանի ճարտարապետների միության նախագահ:

Նրա նախագծերով կառուցվել են ավելի քան 100 բնակելի ու հասարակական շենքեր, որոնցից են Երևանի Կիրովի անվան գործարանի բնակելի թաղամասը (1932-1934թթ.), որը նախագծվել է ճարտարապետներ Մ.Մազմանյանի, Հ.Մարգարյանի և Գ.Քոչարի հետ միասին, Արզնու թ. 2 առողջարանը (1933-1953թթ.), Պրոֆեսորների տունը Երևանի Աբովյան փողոցում (1934թ.), բնակելի շենքեր Լենինի և Հոկտեմբերյան (նախկին) պողոտաների վրա (1939-1944թթ.), գյուղատնտեսական և բժշկական ինստիտուտները (1934-1955թթ.), Հայկական ԽՍՀ տաղավարը համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում (1939-1954թթ.) և այլն:

Ս. Սաֆարյանի և նրա մի շարք հեղինակակիցների՝ ճարտարապետներ Ա.Սարգսյանի, Մ.Քեշիշյանի, Մ.Մազմանյանի և ուրիշների տիպային նախագծերով կառուցվել են Բյուրականի աստղադիտարանի համալիրը (1947-1956թթ.), Լենինականի (Գյումրի) Ա.Մռավյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքը (1965-1972թթ.), պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղի համալիրը Կիրովականում (1968-1970թթ.):

Միաժամանակ՝ 1937-ից անընդմեջ դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժնում, դաստիարակել ճարտարապետների մի քանի սերունդ[32]:

Անդրանիկ Ղազարյան (1904-1985թթ.): Գեներալ-մայոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել (1927թ.) Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան զինվորական դպրոցը,

32. Տե՛ս ՀՀ Հանրագիտարան, հ.10, էջ 254:

ապա ծառայել 76-րդ հայկական դիվիզիայում՝ որպես շտաբի պետ, գնդի հրամանատար: 1938-1939թթ. աշխատել է Երևանի պետհամալսարանում՝ որպես ռազմագիտության ամբիոնի վարիչ, ապա՝ դասախոս:

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ.), եղել է 215-րդ դիվիզիայի հրամանատար, Ղրիմի ճակատամարտում արժանացել Խորհրդային Միության հերոսի կոչման[33]:

Պատերազմի ավարտից հետո աշխատել է Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում՝ որպես դասախոս, իսկ հետո՝ ռազմագիտության ամբիոնի վարիչ: 1955թ.-ից պահեստի գեներալ-մայոր էր:

Քրիստափոր Նիկոլայի Փիրումյան (Փիրումով) (1895-1985թթ.): Գիտության վաստակավոր գործիչ, բժշկագիտության դոկտոր-պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ավարտել ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետում, որն ավարտել է 1917թ.:

Ք.Փիրումյանը 1923-1928թթ. աշխատել է ՀԽՍՀ առողջապահության ժողկոմատում, եղել սանիտարահամաճարակային բաժնի պետ, ժողկոմի տեղակալ, 1928-1942թթ.՝ Երևանի տրոպիկական ինստիտուտի տնօրեն: 1942թ-ից մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, զորացրվելուց (1946թ.) հետո շարունակել է տնօրենի իր աշխատանքը նույն ինստիտուտում՝ մինչև 1952թ.: 1953-1973թթ. եղել է տրոպիկական ինստիտուտի տնօրենի տեղակալ գիտական աշխատանքների գծով, Երևանի բժշկական ինստիտուտի տրոպիկական հիվանդությունների ամբիոնի վարիչ: Համարվում է Հայաստանում սանիտարահամաճարակային ծառայության հիմնադիր:

Ք.Փիրումյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են մանկական հիվանդությունների, հատկապես մալարիայի դեմ պայքարի միջոցառումների մշակման, ՀՀ-ում մալարիայի վերացման հարցերին: Բժշկագիտության բնագավառում ունեցած ծառայությունների համար պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

Լևոն Մուշեղի Վարդապետյան (1884-1943թթ.): Ծնվել է Վարանդայի գավառի Գյուլնե Ճարտար գյուղում: 1892-1899թթ. սովորել է Շուշիի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում: Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

Ավարտելով այն՝ վերադարձել է Արցախ, ակտիվ աշխատանք ծավալել ժողկրթության մակարդակի բարձրացման, պարբերական մամուլի հրատարակման և այլ բնագավառներում:

Ի վերջո բավարարելով Լ. Վարդապետյանի քանիցս հղած դիմումները՝ Կովկասի փոխարքայության մամուլի գործերի կոմիտեն նրան թույլատրեց Շուշիում լույս ընծայել «Փայլակ» անունով թերթ:[34] Այն տպագրվում էր Բ. Տեր-Սահակյանի տպարանում՝ շաբաթական երեք համար պարբերականությամբ: Առաջին համարը լույս է տեսել 1915թ. մարտի 8-ին: Քաղաքական-հասարակական, սոցիալ-դեմոկրատական ուղղվածության այդ պարբերականի վերահսկիչ նշանակվեց Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչ Հայկ Կոստանդյանը, խմբագիր՝ Լ.

33. Տե՛ս ՀՀ Հանրագիտարան, հ.7, էջ 20:

34. Տե՛ս «Փայլակ», Շուշի, 1917, թ.1: «Փայլակ» թերթի խմբագիր-հրատարակիչը Լևոն Վարդապետյանն էր, իսկ մի քանի համարներ խմբագրել են Լևոն Վարդունին, Առաքել Առաքելյանը, Գր. Ներսիսյանը, Արշավիր Քամալյանը և ուրիշներ:

Վարդապետյանը: Թերթում լույս տեսած իր մի շարք հոդվածներում Լ. Վարդապետյանն արծարծում էր դպրոցական գործի կարգավորմանն առնչվող հարցեր, գտնում էր, որ ամեն մի բարեկիրթ և գիտակից հասարակություն, որն ունի իր սեփական, ազգային ուսումնական հաստատությունները, պետք է հաշիվ պահանջի այդ կրթօջախների գլուխ կանգնած անձանցից: Ժողովրդի առջև հաշվետվությամբ հանդես գալը բարձրացնում է նրանց պատասխանատվությունը: Թերթի էջերում զգալի տեղ էր հատկացնում Ղարաբաղում գործող դպրոցների գործունեության լուսաբանմանը: «Փայլակ»-ի մի շարք խմբագրականների հեղինակը Լ. Վարդապետյանն էր:

Խորհրդային իշխանության տարիներին Լ.Վարդապետյանը պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Հայաստանում, եղել է պարենավորման ժողկոմ, հանրապետության դատախազ, գերագույն դատարանի նախագահ, վարել այլ պաշտոններ:

<u>Լևոն Վարդունի (Վարդապետյան) (1898-1975թթ.)</u> (Լևոն Մուշեղի Վարդապետյանի եղբայրը): ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, անվանի մանկավարժ: Ծնվել է Վարանդայի գավառի Գյունե Ճարտար գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև ավարտել Շուշիի թեմական դպրոցը (1917թ.) և զբաղվել մանկավարժական գործունեությամբ, դասավանդել է Շուշի քաղաքի, հայրենի Ճարտար գյուղի դպրոցներում:

Արցախի թեմի դպրոցներում իր կարճատև մանկավարժական գործունեության ընթացքում միշտ նորի, առաջադիմականի կրողն էր: Դպրոցներում անց է կացրել գրական-գեղարվեստական երեկոներ ու ցերեկույթներ՝ նվիրված հայ մեծ մանկավարժների, գրողների (Աբովյան, Աղայան, Թումանյան, Առ. Առաքելյանի, Ա. Տերտերյան և այլն) կյանքին ու գործունեությանը, կազմակերպել էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ:

Միաժամանակ աշխատակցել է Շուշիում լույս տեսած «Փայլակ»[35], «Ծիածան»[36], «Եռանդ»[37], «Աշակերտ»[38] պարբերականներին, գործուն մասնակցություն ցուցաբերել հայ գրական, հասարակական, լուսավորչական կյանքին: Իր մի շարք հոդվածներում արծարծել է նաև Արցախի դպրոցի ներքին կյանքին առնչվող բազմազան հարցեր, առաջ քաշել մանկավարժական-տեսական, ուսուցչի մեթոդական, մասնագիտական պատրաստվածությանը վերաբերող մի շարք արժեքավոր դրույթներ:

1922թ. վերջերին տեղափոխվում է Հայաստան և նշանակվում Երևանի, Էջմիածնի գավառների լուսբաժնի վարիչ, 1930-1932թթ.՝ Աշտարակի շրջկոմի քարտուղար: 1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Հետպատերազմյան շրջանում՝ 1946-1952թթ., աշխատել է որպես ՀԽՍՀ դպրոցների գիտահետազոտական ինստիտուտի (այնուհետև՝ Մանկավարժական գիտությունների ինստիտուտ) տնօրեն: 1954-1955թթ. եղել է Երևանի օտար լեզուների ման-

35. «Փայլակ», քաղաքական-հասարակական, սոցիալ դեմոկրատական թերթ: Լույս է տեսել Շուշիում, 1915-1917թթ., Բ. Տեր-Սահակյանի տպարանում, շաբաթը երեք անգամ: Խմբագիրը Լևոն Վարդապետյանն էր:

36. «Ծիածան», գրական-գեղարվեստական ամսագիր: Լույս է տեսել Շուշիում 1916թ.: Խմբագիր-հրատարակիչը բանաստեղծ Միսաք Պետրոսյանն էր, որն իր հուշերում գրում էր. «Որոշեցինք կազմակերպել Շուշիում մի համերգ, որի եկամուտով հրատարակել «Ծիածան ամսագիրը», համերգին մասնակցում էին Լ.Վարդունին, Խոր. Լորենցը, Գր. Ներսիսյանը և ուրիշներ»:

37. «Աշակերտ», խմորատիպ թերթ: Լույս է տեսել Շուշիում, 1917թ., խմբագրել է Լ.Վարդունին:

38. «Եռանդ», աշակերտական թերթ: Լույս է տեսել Շուշիում, 1917թ.:

կավարժական, իսկ 1956-1962թթ.՝ Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի տնօրեն, 1962-1975թթ.՝ մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների, մեծ թվով գիտական հոդվածների, որոնցում լուսաբանել է մանկավարժության տեսական և գործնական հիմնահարցեր:

Գուրգեն Գաբրիելյան (1903-1956թթ.): Դերասան, Հայաստանի ժողովրդական արտիստ: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, ապա ավարտել ռեալական ուսումնարանը:

Բազմազան էր Գ. Գաբրիելյանի գործունեության ասպարեզը՝ թատրոն, կինո, ռադիո, մանկավարժություն, դրամատուրգիա, թարգմանություն:

Մասնագիտական կրթությունը ստացել է Թիֆլիսի դրամատիկական ստուդիայում: 1924թ. եղել է Հայաստանի առաջին պետթատրոնի (այժմ՝ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն) դերասան: Ուշագրավ դերակատարումներով հանդես է եկել Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ», «Խաթաբալա», «Պեպո», Ա. Շիրվանզադեի «Պատվի համար» և շատ այլ պիեսների բեմադրություններում, ունեցել է նաև կինոդերակատարումներ:

Արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի, Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման:

Սամվել Հովհաննեսի Գրիգորյան (1907-1986թթ.): Բանաստեղծ, թարգմանիչ: Ծնվել է Վարանդայի գավառի Շոշ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև տեղափոխվել Բաքու և ուսումը շարունակել տեղի հայկական թ. 22 միջնակարգ դպրոցում: Ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը (1928թ.), աշխատանքի է անցել Բաքվում. ԱդրԽՍՀ պետական ռադիոկոմիտեում՝ որպես հայկական հաղորդումների (1928-1937թթ.) խմբագիր, «Գրական Ադրբեջան» գրական-գեղարվեստական հանդեսի գլխավոր խմբագիր (1957-1979թթ.): 1967-1977թթ. եղել է Ադրբեջանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ:

Նրա գրչին է պատկանում բանաստեղծությունների, թարգմանությունների շուրջ 30 ժողովածու:

Ռուբեն Տեր-Գասպարյան (1892-1966թթ.): Աշխարհագրագետ, պատմաբան, մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում: Ավարտել է թեմական դպրոցը, ուսուցչական աշխատանք կատարել ծխական, օրիորդաց դպրոցներում: 1918-1920թթ. դասավանդել է թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում (աշխարհագրություն, պատմություն), միաժամանակ գրադարանի վարիչի պաշտոն էր վարում ռեալական ուսումնարանում:

Զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ: Մի խումբ ուսուցիչների (Հ.Մուսայելյան, Բ.Թորոսյան, Գր. Պողոսյան և ուրիշներ) հետ միասին գյուղերում բացել է գրադարան-ընթերցարաններ, կազմակերպել գրական-գեղարվեստական երեկույթներ, համերգներ և այլ միջոցառումներ:

Աշխատակցել է Շուշիում լույս տեսած մի շարք պարբերականների («Արցախ»[39], «Ղարաբաղի Սուրհանդակ»[40], «Նոր կյանք»), ակտիվ մասնակցություն ունեցել երկրամասի մշակութային-հասարակական կյանքին:

---

39. «Արցախ» հասարակական-քաղաքական և գրական շաբաթաթերթ: Հրատարակում է Ղարաբաղի Ազգային խորհուրդը: Լույս է տեսել 7 համար, 1919թ. Շուշիում:

40. «Ղարաբաղի Սուրհանդակ» հասարակական-քաղաքական թերթ: Լույս է տեսել Շուշիում 1918թ.:

Շատ քչերի հետ միասին նույնպես մազապուրծ փրկվել է Շուշիի հայ բնակչության ջարդերից, որոնք իրագործվեցին 1920թ. մարտի 23-ին՝ ադրբեջանա-թուրքական զորքերի և քրդական բաշիբոզուկների միացյալ ուժերով: Հետագայում, երբ խորհրդային իշխանություն հաստատվեց նորաստեղծ Ադրբեջանում, մեկնեց Բաքու (այդ մասին հուշեր է գրել իր «Շուշի» աշխատության մեջ[41]), որպես դասախոս աշխատանքի անցել Բաքվի մանկավարժական ինստիտուտում: Այնուհետև տեղափոխվել է Երևան (1956թ.), ուր ապրում և ստեղծագործում էր մինչև կյանքի վերջը:

Ի շարք այլ գիտական հետազոտությունների՝ զբաղվել է նաև հայրենի Շուշի քաղաքի հոգևոր-մշակութային պատմության ուսումնասիրությամբ, որի արդյունքում ծնվել է նրա «Շուշի» աշխատությունը (Երևան, 1992, ՀՀ ԳԱ հրատարակչություն*), որն արժեքավոր ներդրում է անդրկովկասյան քաղաքների զարգացման ընթացքի պատմահամեմատական հետազոտության ասպարեզում: «Պատմագիտական աղբյուրների, սկզբնաղբյորների հիման վրա գրված այս աշխատությունը կարող է զգալիորեն նոսրացնել պատմական ուսումնասիրության վատառողջ այն մթնոլորտը, որ խորհրդային պատմագիտության մեջ հակագիտական ու սպառնալից ընթացք է ստացել, մանավանդ, վերջերս՝ Ադրբեջանի գիտնականների հիմնազուրկ ու միտումնավոր «ուսումնասիրությունների» հետևանքով» (ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան)[42]:

<u>Զավեն Մելիք-Թանգյան (1905-1966թթ.):</u> Ինժեներ տեխնոլոգ, գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել ռեալական ուսումնարանում: Հետագայում՝ Շուշիի հայկական ջարդերից հետո, ծնողների հետ միասին տարագրվելով Բաքու (1920թ.), ավարտում է տեղի գիմնազիան: Բարձրագույն կրթությունը ստացել է (1926-1930թթ.) Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտում: Ուսումն ավարտելուց հետո աշխատել է «Ազնևֆթպրոեկտ» ինստիտուտում՝ որպես ինժեներ, 1933թ-ից՝ գլխավոր ինժեներ:

Մասնակցել է համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ բաց ծովում ստեղծված «Նավթային քարեր» քաղաքատիպ ավանի նախագծմանը և կառուցմանը:

Խորհրդային իշխանության տարիներին Կասպից ծովի նավթարդյունահանման նավատորմի նավերից մեկը կրում էր նրա անունը:

<u>Ռուբեն Իվանի Ավանեսով (Ավանեսյան) (1902-1986թթ.):</u> Լեզվաբան, Ռուսաստանի ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր: Ծնվել է Շուշի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է թեմական դպրոցում, ապա ավարտել նաև ռեալական ուսումնարանը, ուսումը շարունակել Մոսկվայի պետական համալսարանում (1922-1926թթ.): Ավարտելով այն, դասախոսել է Ռուսաստանի տարբեր բուհերում, միաժամանակ զբաղվել գիտա-մանկավարժական ստեղծագործական աշխատանքով:

Եղել է ԽՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտի պատմական քերականության և բառագիտության բաժնի վարիչ, սլավոնագետների միջազգային կոմիտեին առընթեր ընդհանուր սլավոնական լեզվաբանական քարտեզագրքի հանձնաժողովի, ԽՍՀՄ ԳԱ լեզվի և գրականության բաժանմունքին կից բարբառագիտու-

41. Աշոտ Հովհաննիսյանը գրել է «Շուշի» գրքի հանձնարարական բաժինը, էջ 7-8:
* Տե՛ս Ռ.Տեր-Գասպարյան, Շուշի, Երևան, 1992:
42. Նույն տեղում:

թյան ու լեզվի պատմության գիտական խորհրդի նախագահ:

Հնչյունաբանության մոսկովյան ուղղության հիմնադիրներից է: Նրա բազմաթիվ գիտական աշխատություններ, ժամանակի պարբերական մամուլում, գիտական տեղեկագրերում հրապարկված հոդվածները հիմնականում վերաբերում են ռուսաց լեզվի բարբառագիտությանն ու հնչյունաբանությանը, ուղղագրությանն ու ուղղախոսությանը: Նրա ղեկավարությամբ ու խմբագրությամբ կազմվել և հրատարկվել է ռուս ժողովրդական մի շարք խոսվածքների երկու քարտեզագիրք:

Հեղինակ է "Очерки грамматики русского литературного языка", ч. 1, М. 1945, "Очерки русской диалектологии", Г. 1, М. 1949, "Фонетика современного русского литературного языка", М. 1956, "Русское литературное произнощение" изд. М. 1968 և բազմաթիվ այլ աշխատությունների, հոդվածների:

Նրա ղեկավարությամբ պատրաստվել են գիտությունների մի շարք թեկնածուներ, դոկտորներ: Անմիջական մասնակցություն է ունեցել հայրենի երկրի գիտական կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործում:

Ինչպես վկայում են արխիվային և այլ փաստաթղթեր, Շուշիի թեմական դպրոցն են ավարտել մեծ թվով անվանի մարդիկ՝ **Աբել Սողոմոնյան, Գրիգոր Տեր-Առաքելյան, Ավետիս Գասպարյան, Նիկողայոս Հարությունյան, Հովհաննես Հովհաննիսյան, Եկատերինա Բահաթրյան, Հռիփսիմե Բաղդասարյան, Արամ Բաբայան, Արմենակ Բեգլարյան, Թեմուր Մովսիսյան և շատ ուրիշներ,** որոնց գործունեությունը հատուկ ուսումնասիրության թեմա է («Շուշիի թեմական դպրոցի սաները և նրանց արգասավոր գործունեությունը»), սակայն, մեր ուսումնասիրության բնույթից ելնելով, հնարավորինս կարողացել ենք առաջին անգամ համառոտակի ներկայացնել (ոչ լրիվ) թեմականի 60-ից ավելի շրջանավարտների ծավալած գործունեությունը լուսավորչական, գիտամանկավարժական, քաղաքական, ռազմական և գիտության այլ ոլորտներում:

Հարկ է նաև նշել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած խեղդուկ մթնոլորտին, ցարական կառավարության ազգահալած քաղաքականությանը և նյութական ծայրաստիճան դժվարություններին, այնուամենայնիվ, Շուշիի թեմականի սաները մաքառումների գնով, անձնվիրաբար շարունակել են կրթել ու դաստիարակել հայ մանուկներին՝ նպաստելով հայրենի երկրամասի մշակույթի, գիտության զարգացմանը և թողել գիտակրթական հարուստ ժառանգություն, որն ուսանելի է այսօրվա սերնդի համար:

5. Արցախի թեմի հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեությունը 1850-1920թթ.

Աշխատության սույն գլխի երրորդ բաժնում մենք հանգամանորեն ներկայացրինք Արցախի կրթական և մշակութային գործիչների գործունեությունը (1800-1850թթ.) Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում, ինչպես նաև Արցախի թեմի հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեությունը, նրանց դերը երկրամասի հայ հասարակական, քաղաքական կյանքում, մշակույթի, լուսավորության զարգացման գործում: Անուրանալի է այն իրողությունը, որ դարեր շարունակ Արցախի թեմի առաջնորդների (սկսած Գանձասարի Հասան Ջալալյան տոհմի հոգևոր գործիչներից ընդհուպ մինչև մեր օրերը) հոգածության շնորհիվ Արցախ աշխարհում, նույնիսկ քաղաքական ամենածանր պայմաններում, պահպանվել է ազգային կրթօջախների կենսահաստատությունը: Հոգևոր-մշակութային գործիչները V դարից մինչև XIX դարի առաջին կեսը թեմում ծավալել են մշակութային, շինարարական լայն գործունեություն, նրանց շնորհիվ վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ, ստեղծվել են հարուստ ձեռագրատուն, դպրանոց, բարձրարժեք ձեռագրերի մատենադարան, կրթվել են հոգևոր հովիվներ, որոնք իրենց նպաստն են բերել Արցախի, ինչպես նաև հայոց մյուս թեմերի մտավոր ու մշակութային կյանքի զարգացմանը:

Բովանդակալի ու բեղմնավոր է նաև XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին երկու տասնամյակներում (1850-1920թթ.) Արցախի թեմի առաջնորդների, եկեղեցական գործիչների գործունեությունը: Նոր ժամանակներում շարունակելով անցյալ դարերի թեմական առաջնորդների ավանդույթները, Արցախի հոգևոր-մշակութային գործիչները ցարական իշխանության օրոք ևս հաղթահարել են բազում դժվարություններ, իրենց շուրջը համախմբել ժողովրդին և համառորեն պայքարել ցարիզմի ռեակցիոն քաղաքականության դեմ, որի ազդեցությամբ փակվել էին նաև Արցախի թեմի դպրոցները: Սակայն հոգևոր գործիչները եկեղեցիներին կից՝ գաղտնի, պահպանել են կրթօջախները՝ առաջնորդվելով հետևյալ կարգախոսով. «Դպրոցը հայերի համար կենսական նշանակություն ունի, առանց նրա հայ ազգը գոյություն ունենալ չի կարող» ***(Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյան):***

Հայտնի է, որ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին՝ մինչև հայկական դրոցների վերաբացումը (1905թ.), հայ դպրոցի, այդ թվում՝ Արցախի դպրոցի, համար ստեղծվել էին խիստ անբերանպաստ պայմաններ: Ցարական իշխանությունների անդադար հալածանքները, Կովկասի փոխարքայության ուսումնական վարչության ամենօրյա միտումնավոր հսկողությունը, դպրոցական ասպարեզի սահմանափակումները խոր վիատություն ու հուսալքություն առաջ բերեցին կրթական և հոգևոր գործիչներից շատերի մոտ: Սակայն Արցախի հոգևոր-մշակութային գործիչները միշտ էլ ազգային դպրոցի վաղվա օրվա նկատմամբ վստահություն են սերմանել ժողովրդի մեջ՝ հորդորելով պահպանել նախնիների ստեղծած հոգևոր արժեքները, լուսավորության օջախները՝ հանուն ազգային գոյատևության, ինչին խորապես ու սրբությամբ հավատացել են:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի քաղաքական, ազգային ու հանրային կյանքում տեղի ունեցող էական տեղաշարժերին զուգընթաց՝ թեմի հոգևոր-մշակութային, եկեղեցական գործիչները կարողացան հնարավորինս պահպանել ու վերակերտել նախնյաց ստեղծած արժեհամակարգը, այն համապատասխանեցնել ժամանակի շնչին ու պահանջներին՝ նպաստելով հարազատ ժողովրդի

հոգևոր վերակենդանացմանը և վերափոխմանը:

Փաստագրական նյութերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է ընձեռել համառոտակի ներկայացնելու այն հոգևոր-մշակութային գործիչներին, ովքեր, սկսած XIX դարի կեսերից մինչև XX դարի առաջին երկու տասնամյակները լայն լուսավորչական գործունեություն են ծավալել Արցախի թեմում: Միաժամանակ կներկայացվի Նուխիի հոգևոր սեմինարիան ավարտած գործիչների անցած ազգանպաստ ուղին ոչ միայն Արցախի, այլև մյուս թեմերում:

Աշխատության երրորդ գլխում հանգամանորեն լուսաբանել ենք Գանձասարի Հասան Ջալալյան տոհմի նշանավոր հոգևոր-մշակութային գործիչների՝ Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանի գործունեությունը, ովքեր լուրջ նախադրյալներ ստեղծեցին երկրամասի մշակույթի հետագա առաջընթացի համար:

<u>Եղիա վարդապետ Հասան-Ջալալյան (1835-1910թթ.):</u> Ծնվել է Գանձասարի վանքապատկան Վանք գյուղում: Կրթությունը ստացել է Սարգիս արքեպիսկոպոս Հասան Ջալալյանի խնամքի ու հոգածության ներքո՝ Սանահինի վանական և Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցներում, ապա կատարելագործվել Կ.Պոլսում: Ավարտելուց հետո մանկավարժական գործունեություն է ծավալել Շուշիի թեմական դպրոցում, իսկ այնուհետև՝ Նուխիի ազգային հոգևոր ուսումնարանում՝ դասավանդելով հայոց լեզու, գրականություն, պատմություն և կրոն:[1]

«Արարատ» ամսագրի 1870թ., թ. 2-ում հրապարակված իր հոդվածում Նուխիի ուսումնարանի ուսուցիչ Արամ Տոնյանը (դասավանդում էր նաև Նուխիի Ս. Մարիամ օրիորդաց դպրոցում) գրում է, որ Հասան-Ջալալյան ազգակից Եղիա վարդապետի գործունեության շրջանում (1867-1868թթ.) Նուխիի ազգային հոգևոր ուսումնարանը գտնվել է համեմատաբար նպաստավոր պայմաններում: Այն 1870թ. ունեցել է 4 ուսուցիչ և 114 աշակերտ: Հոդվածում Ա.Տոնոյանը փաստում է, որ Եղիա վարդապետը Նուխիի արական ծխական, Ճալեթ գյուղի ծխական դպրոցներում ձրի դասավանդել է հայոց պատմություն և կրոն:[2]

Եղիա վարդապետը որպես աբեղա ձեռնադրվել է 1868թ. օգոստոսի 16-ին՝ Սևանի վանքում, Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի կողմից: Իսկ 1869թ. ստացել է վարդապետական կոչում: Սևանի վանքում աշխատելու շրջանում հրատարակել է Մանուէլ վարդ. Գիլմուշխանցու «Պատմութիւն անցից Սեւանայ» գրքույկը: 1879թ. նշանակվել է Ամարասի վանքի վանահայր՝ մինչև 1884թ. վերջը[3]: Այդ տարիներին զբաղվել է մատենագիտական աշխատանքներով, նվիրատվություններ կատարել հoգուտ եկեղեցական-ծխական դպրոցների: Օրինակ, այդ ժամանակ Ամարասի վանքում գործող եկեղեցական-ծխական դպրոցը, որն ուներ 26 աշակերտ, պահպանվում էր վանքի ունեցած դրամագլխի տոկոսների հաշվին, տեղի բնակչության նվիրատվությունների միջոցներով:[4]

Հետագա տարիներին՝ 1885-1886թթ., Եղիա վարդապետը եղել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասախոս, 1893-ին՝ Մուղնու ս. Գևորգ վանքի վանահայր, 1896թ.՝ Մ.Աթոռի հանդերձապահ: Եղել է նաև լավ հայկաբան, Ս. Գրքի հմուտ մասնագետ[5]:

<u>Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյան (1807-1882թթ.):</u> Արցախի թեմի առաջ-

1. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 56-57:
2. «Արարատ», 1870, թ.2, էջ 305: Նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ 56, գ.31, թ.15, գ.37, թ.8, գ.50, թ.60:
3. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմ. գիրք թ. էջ 910:
4. ՀՀ ԱԱ, ֆ.56, գ.1, գ.173:
5. Նույն տեղում:

նորդ: Ծնվել է Աշտարակում[6]: Ավարտել է Ս. Էջմիածնի Ժառանգավորաց վարժարանը: 1828թ. օգոստոսի 13-ին ստացել է սարկավագության աստիճան, 1831թ. նոյեմբերին ձեռնադրվել է կուսակրոն քահանա և վեղար ստացել Հովհաննես Կաթողիկոսից: 1835թ. հոկտեմբերի 2-ին ստացել է վարդապետական աստիճան: 1841թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: 1854թ. փետրվարի 19-ին Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսի կոնդակով նշանակվել է Արցախի և Շամախու եկեղեցական գործերի քննիչ, ապա՝ Արցախի թեմի առաջնորդ (1857-1861թթ.):

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրած աշխատության մեջ Լեոն նշում է, որ Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանի մահից հետո որոշ ժամանակ Արցախի թեմը մնաց առանց հոգևոր առաջնորդի: Նույնպիսի վիճակ էր նաև հայոց մյուս թեմերում, քանի որ Ամենայն Հայոց Ներսես կաթողիկոսը դրանով ցանկանում էր ավելի հաստատուն դարձնել նրանց ենթակայությունը Մ.Աթոռին: Սակայն նրա մահից հետո, կաթողիկոսական տեղապահը Անդրկովկասի երեք թեմերի համար նշանակեց ժամանակավոր կառավարիչներ, որոնք պիտի կառավարեին թեմերը մինչև նոր կաթողիկոսի ընտրությունն ու հաստատությունը»[7]: Լեոի աշխատության մեջ, ինչպես նաև Ս. Բեհբությանի «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գիրք Թ. «Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ (1813-1933)» գրքում հիշատակվում է, որ կաթողիկոսի տեղապահի կոնդակով 1857թ. հունիսին Արցախի թեմի ժամանակավոր կառավարիչ է նշանակվում թեմի առաջնորդ Գևորգ Վեհապետյանը[8]:

Արխիվային փաստաթղթերից և այլ աղբյուրներից[9] տեղեկանում ենք, որ Արցախի թեմի առաջնորդն իր կարճատև գործունեության տարիներին որոշակի դեր է խաղացել երկրամասի դպրոցների բարեկարգման ու լուսավորության զարգացման գործում: Այսպես, նա լայն հնարավորություն է տվել տեղական հայ բնակչությանը՝ նշելու եկեղեցական տոներն ու ծիսակատարությունները, թույլատրել է Ղարաղշլաղ գյուղում (ներկայիս Բերդաձոր) կատարել եկեղեցու օծման արարողությունը, որոշ քայլեր է ձեռնարկել ինչպես Շուշիի, այնպես էլ Նուխիի հոգևոր դպրոցների, թեմում գործող եկեղեցական ծխական դպրոցների բարեկարգման ու նոր դպրոցների բացման ուղղությամբ: Մասնավորապես, արխիվային մի փաստաթղթում կարդում ենք, որ կաթողիկոսի թույլտվությամբ Արցախի թեմի առաջնորդ Գևորգ Վեհապետյանը 1857-1858թթ. եկեղեցական ծխական դպրոցներ է բացել Ամարասի, Գանձասարի վանքերում, Նուխիի գավառի հայկական Նիժ գյուղում, ուր սովորում էր 15-20 աշակերտ: Երեխաներին այդտեղ սովորեցնում էին գլխավորապես հայերեն լեզվով: Ամարասի վանքի դպրոցը պատրաստում էր հոգևորականներ, Գանձասարի վանքինը՝ տարրական գրագիտության մի հիմնարկություն էր թե՛ հոգևորականների և թե՛ աշխարհականների համար: Այդ մասին նշվում է նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի 75-ամյա պատմությանը նվիրված Ստ. Մալխասյանցի աշխատության մեջ:[10] Ուշագրավ է, որ Նուխիի և Արցախի հայ հասարակությունն անտարբեր չմնաց դպրոցական շարժման նկատմամբ՝ միջոցներ հատկացնելով ծխական դպրոցներին:

---

6. Նրա կենսագրականի մասին տես, վավերագրեր Հայ եկեղեցու պատմ. Գիրք թ. էջ 612:
7. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 278:
8. Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ., էջ 912:
9. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.1, գ.8088, թ.5, նաև Ս. Խուդոյան, նշվ. գիրքը, էջ 350, Մ.Բալայան, Հայ Աղվանից եկեղեցին, 2009, էջ 194-195:
10. Ստ. Մալխասյանց, Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյա գոյության (1824-1899), Թիֆլիս, 1900, էջ 83:

Թեմական առաջնորդ Գևորգ Վեհապետյանի լուսավորչական ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ Շուշիի մտավորականության առաջատար գործիչների (Պ.Աստվածատրյան, Պ.Բաբայան, Ե. Բահաթրյանց և ուրիշներ) նախաձեռնությամբ 1858թ. Շուշի քաղաքում հիմնադրվեց ընկերություն, որը 1859թ. բացեց առաջին գրադարան-ընթերցարանը: Ընկերությունն ստանում ու տարածում էր ռուսական և եվրոպական գրականություն (այդ մասին մանրամասն նշվել է աշխատության չորրորդ գլխում): Մի տարի հետո գրադարան-ընթերցարան բացվեց նաև Նուխի քաղաքում[11]: Իր գործունեության շրջանում թեմի առաջնորդը լայն հնրավորություններ տվեց երկրամասում ընդլայնելու ծխական դպրոցների ցանցը:

<u>Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց (1864-1878թթ.):</u> Արցախի թեմի առաջնորդ: Նրա լուսավորչական գործունեությունը ներկայացված է սույն աշխատության երրորդ գլխում:

<u>Անտոն վարդապետ Վարդազարյան (1842-1917թթ.):</u> Ամարասի, Գանձասարի վանահայր: Ծնվել է Ջրաբերդի գավառի Մարաղա գյուղում: 1876թ. ստացել է վարդապետական աստիճան և նշանակվել Ամարաս վանքի միաբան, ուր և երկար տարիներ վարել է վանահոր պաշտոն, այնուհետև եղել է Գանձասարի վանահայր: Պաշտոններ է վարել նաև Մ. Աթոռում: Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի (1813-1933թթ.) պատմությանը նվիրած աշխատության մեջ[12] նշվում է, որ նա 1876-1878թթ. որոշ քայլեր է ձեռնարկել դպրոցների բարեկարգման և եկեղեցաշինարարական աշխատանքների իրականացման ուղղությամբ:

<u>Արիստակես վարդապետ Սեդրակյան (1844-1906թթ.):</u> Արցախի դպրոցական-կրթական ասպարեզում մեծ երախտիքի տեր հոգևոր-եկեղեցական գործիչ: Նա մեկն է հայ հոգևորականության այն ներկայացուցիչներից, ովքեր դրական դեր կատարեցին Արցախի դպրոցական գործի զարգացման բնագավառում: Ամենայն Հայոց Գևորգ կաթողիկոսի կոնդակով 1876թ. նշանակվել է Արցախի թեմական առաջնորդի փոխանորդ, քանի որ թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Հասան Ջալալյանցը հիվանդ էր: Ա. Սեդրակյանը փոխանորդի կարգավիճակով մինչև 1881թ. առաջնորդեց Արցախի թեմը:

Կաթողիկոսի մեկ այլ կոնդակով[13] Արիստակես վարդապետը նշանակվել է նաև Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի տեսուչ (1876-1878թթ.) և մեծ ուշադրություն դարձրել կրթօջախի բարեկարգմանը: Իր շուրջը համախմբելով դպրոցի լավագույն ուսուցիչներին (Հակոբ Իշխանյան, Սարգիս Տեր-Ղազարյան, Գ. Դովլաթյան, Մանուչար Փիրումյան և ուրիշներ)[14] Արսիտակես վարդապետը կարգավորում է դպրոցական գործերը, մշակում դասավանդվելիք առարկաների ուսումնական պլաններն ու ծրագրերը, որոշակի փոփոխություններ մտցնում մանկավարժական ժողովի կանոնադրության մեջ (որը մշակել է Խորեն Ստեփանեն), և ընդգծում նախ ծխական դպրոցների համար ուսուցչական կադրեր պատրաստելու անհրաժեշտությունը:

Արխիվային փաստաթղթերից[15] և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ

---

11. Այդ մասին տե՛ս Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում, (1881-1911), Թիֆլիս, 1911, էջ 11: Նաև, «Կռունկ հայոց աշխարհի», 1860, թ.2, էջ 148:
12. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմ. Գիրք թ., էջ 913:
13. «Վավերագրեր» Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը, գիրք Թ, 1813-1933թթ., Երևան, 2011, էջ 336, 629, նաև ՀՀ ԱԱ, ֆ. 56, g.1, գ. 173:
14. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 57-58:
15. «Դպրոց», 1875-76, թ. 4, էջ 133:

Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցի փակվելուց հետո (Մարիամյան օրիորդաց դպրոցը գործել է 1864-1875թթ.), 1876թ. աշնանը Արիստակես վարդապետի ջանքերով Շուշիում բացվել է աղջիկների առանձին դպրոց՝ Հռիփսիմյան անունով («Շուշու Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը»):[16] Այդ դպրոցը Սեդրակյանի տեսչության շրջանում ունեցել է 5 ուսուցիչ և 70-80 աշակերտուհի: Ինչպես նշել է Լեոն, բացումից մոտ մեկ տարի հետո Հռիփսիմյան դպրոցն իր ճակատագիրը կապել է թեմական դպրոցի հետ, լինելով նրան կից:[17] Հետագայում՝ 1881թ., աշակերտուհիների թիվը հասել է 120-ի, իսկ 1884-ին այս դպրոցը եղել է բավականաչափ պատկառելի մի ուսումնական հաստատություն իր 13 ուսուցիչ-ուսուցչուհիներով և 171 աշակերտուհիներով: Ունեցել է միջնակարգ դասընթաց:[18]

Ինչպես հայտնի է դարի 70-ական թվականներին ցարական կառավարությունն ամբողջ ճակատով ուժեղացնում է ռեակցիոն քաղաքականությունը լուսավորության բնագավառում: Կառավարության հրամանով Կովկասի իշխանությունները խիստ հսկողության են սահմանում հայ լուսավորչական թեմերի տեսուչների, ուսուցիչների գործունեության նկատմամբ:

Չնայած այդ ամենին, Արցախի թեմում ակտիվանում է հայ մտավորականության, հոգևոր եկեղեցական գործիչների նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման գործում: Համեմատաբար մեծանում է նաև տեղական բնակչության հետաքրքրությունը լուսավորչական գործի նկատմամբ:

Արիստակես Սեդրակյանի տեսչության շրջանում թեմական դպրոցի աշակերտության թիվը հասավ 260-ի (իսկ մինչ այդ եղել է 200), բարելավվեց դպրոցի ներքին կարգուկանոնը, ինչպես այդ մասին «Արարատ» ամսագրում գրում է շուշեցի Սիմոն քահանա Տեր-Իսրայելյանը. «Թեմական դպրոցը Սեդրակյանի տեսչության շրջանում իր առաջխաղությամբ մի ուրախ առիթ եւ գրեթե իր առաջին շրջաններից տարբեր եւ յառաջադեմ շրջան եւ ուղղութիւն ստացավ: Դպրոցական հորիզոնի վերայ կարծես մի կենսատու արեւ ծագեցավ շնորհիվ նորան եռանդուն գործունեութեան[19]:

Երբ Գևորգ Դ Կաթողիկոսի կոնդակով[20] Արիստակես վարդապետ Սեդրակյանը հաստատվեց Արցախի թեմի առաջնորդական փոխանորդ, հոգ տարավ նաև թեմի գավառներում եկեղեցական-ծխական դպրոցներ, նախակրթարաններ, օրիորդաց դպրոցներ բացելու մասին, միաժամանակ հանգանակություններ էր կատարում և հավաքած գումարներով գյուղերում դպրոցներ բացում: Անվանի եկեղեցական-կրթական, մշակութային գործիչը լավ էր հասկանում, որ երկրամասում ժողովրդական կրթության բարելավումն ամենից առաջ կախված է որոշակի նյութական միջոցներից, և այդ միջոցները պետք է ստեղծի ինքը՝ ժողովուրդը:

Արիստակես վարդապետի եռանդուն գործունեության շնորհիվ ծխական դպրոցներ են բացվել Շուշի քաղաքում (2 դպրոց՝ յուրքանչյուրում սովորում էր 20-30 աշակերտ), Վարանդայի գավառի Ավետարանոց, Քեթուկ, Հացի, Խնուշինակ, Դիզակի գավառի Ազոխ, Մեծ Թաղլար, Տող, Ջրաբերդի գավառի Մադաղիս, Բեգում Սարով, Գյուլաթաղ և այլ գյուղերում: Յուրաքանչյուր դպրոցում սովորում

16. Ս.Խուդոյան, Արևելահայ դպրոցները 1830-1920թթ., Երևան, 1987, էջ 377-378:
17. Տե՛ս Լեո, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմ., էջ 385-386:
18. Նույն տեղում:
19. «Արարատ», 1876, թ. 1, էջ 54-55:
20. Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմ, նշվ. աշխ., էջ 929-930:

էին 25-30, երբեմն՝ 30-ից ավելի աշակերտ-աշակերտուհիներ, որոշ գյուղերում գործել են երկսեռ դպրոցներ: Օրինակ, Աշան գյուղի երկսեռ դպրոցում սովորում էին 20 տղա, 12 աղջիկ, իսկ Մեծ Թաղլարի դպրոցի 45 աշակերտներից 15-ը աղջիկներ էին:[21]

Արիստակես վարդապետը, որպես Նուխիի հաջորդության փոխանորդ, եռանդուն լուսավորչական գործունեություն է ծավալել գավառի հայկական գյուղերում: Այսպես, օրինակ, նրա ջանքերով Նուխիի գավառի հայկական Արեշ, Գալ բալ, Ճալեթ, Նեմեթապար, Նիժ գյուղերում բացվում են եկեղեցական-ծխական դպրոցներ, նախակրթարաններ, որտեղ սովորում էր 15-20 աշակերտ:[22] «Դպրոց» ամսագիրը, ընդհանուր թվով, ցույց է տալիս Նուխիի գավառի 11 հայկական գյուղերում 11 ծխական դպրոցների առկայությունը: «Դպրոց» ամսագրի 1876թ. թ. 2-ում տպագրված մի հոդվածից (հեղինակ՝ Նուխիի արական հոգևոր դպրոցի ուսուցիչ Արամ Տոնյան) տեղեկանում ենք նաև, որ Արիստակես վարդապետը վերաբացել է Նուխիի հայկական Ս. Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոցը, որն ուներ 67 աշակերտուհի, Վարդաշեն գյուղի օրիորդաց դպրոցը՝ 22 աշակերտուհի:[23]

«Արարատ» ամսագիրը հաղորդել է, որ Նուխիի հաջորդության փոխանորդ Արիստակես վարդապետի հորդորանքով Խոշկաշեն հայկական գյուղի ժողովուրդը չտեսնված եռանդով ձեռնամուխ է եղել իրենց գյուղի դպրոցի շենքի կառուցմանը՝ միայն մեկ օրում փոխադրելով այնտեղ «յոթ հարյուր սայլ քար և կիսով չափ ավազ և այլ կարևոր նյութեր»:[24]

Արիստակես վարդապետը նաև լայն հասարակական գործունեություն է ծավալել թե՛ Շուշիում և թե՛ Նուխիի գավառում. ուսուցիչների, հայ հասարակության կարող ուժերի ջանքերով գյուղերում բացել է լուսավորչական օջախներ, գրադարան-ընթերցարան: Իր գործունեության տարիներին (1876-1881թթ.) Արիստակես վարդապետը գրեթե անընդմեջ եղել է Շուշիում և Նուխիում գործող հասարակական տարբեր ընկերությունների ու կազմակերպությունների, վարչությունների («Գրադարանային», «Հրատարակչական», «Մարդասիրական» և այլն) անդամ և մեծ դեր է կատարել բազմաբովանդակ մշակութա-լուսավորչական ձեռնարկումների իրականացման գործում:

<u>Հովսեփ վարդապետ Փինաչյան (1859-1889թթ.):</u> XIX դարի երկրորդ կեսի արցախահայ լուսավորչական շարժման գործիչ, անվանի մանկավարժ: 1867թ. ավարտել է Ս. Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը և ձեռնադրվել սարկավագ: 1872թ. ստացել է կուսակրոն քահանայության աստիճան, 1879թ. նշանակվել է Գանձասարի վանքի վանահայր: Զբաղվել է մանկավարժությամբ[25]: Նրա մանկավարժական գործունեության մասին համառոտակի տեղեկություններ են տրվում արխիվային փաստաթղթերում, պարբերական մամուլում («Արարատ», «Արձագանք», «Գործ» և այլն), այլ աղբյուրներում, ինչն էլ հնարավորություն է ընձեռել ներկայացնելու նրա լուսավորչական գործունեությունն Արցախի թեմի, այդ թվում՝ Նուխիի գավառի հայկական դպրոցներում:

---

21. Այդ մասին տե՛ս «Դպրոց», 1875-76թթ. համարները, թ. 1, 2, 3, 4, նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ.56, ց. 1, գ. 78, 149, 162, 173, «Արարատ», 1876թ., թ. 1, 2 համարները:
22. «Դպրոց», 1877, թ. 2:
23. Նույն տեղում:
24. «Արարատ», 1876-1877, թ.1, էջ 244:
25. Տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Թ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ (1813-1933թթ.), Երևան, 2001, էջ 914:

XIX դարի 70-ական թվականներին Արցախի թեմում մեծ թափ ստացավ լուսավորչական ու դպրոցական շարժումը: Դպրոցական կյանքի համեմատական աշխուժացումն առաջ է քաշում կրթության գործը բարելավելու խնդիրներ: Դրանց լուծմանն է նվիրվել հայ մանկավարժության նոր սերունդը: Այդ տասնամյակում Արցախի դպրոցին զգալի ծառայություններ մատուցեց Հովսեփ Փինաչյանը (որոշ աղբյուրներում գրված է Փինջյան):

«Դպրոց» ամսագրի 1875թ. թիվ 3-ում տպագրված հոդվածից տեղեկանում ենք, որ 1875-76 ուստարում Կուսապատ գյուղում բացվել է միդասյա ծխական դպրոց՝ 25 աշակերտով, ուսուցիչն էր Հովսեփ Փինջինյանը (Փինչյան): Իսկ 1878թ. Կուսապատում բացվել է երկդասյա ծխական պետական դպրոց՝ 88 աշակերտով, որն ուներ 3 բաժանմունք, 5 ուսուցիչ: Դպրոցի տնօրեն է նշանակվել էջմիածնի Գևորգյան ճեմարանում կրթություն ստացած վարդապետ Հովսեփ Փինջինյանը:[26] Արխիվային տվյալների համաձայն՝ Հովսեփ վարդապետը Կուսապատ գյուղի նախակրթարանում դասավանդում էր 1873թ.:[27]

Հովսեփ վարդապետի նախաձեռնությամբ ակտիվանում է Զրաբերդ գավառի ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման գործում: Նա ձեռնամուխ է լինում նաև բարեգործական գործունեության՝ հանգանակությունների, նվիրատվությունների միջոցով բարելավում է Զրաբերդ գավառում գործող դպրոցների նյութական վիճակը: Կուսապատի, Մարաղայի, Թալիշի, Մաղավուզի և այլ գյուղերի բնակչությունը նվիրածությամբ օգնում է նորաբաց դպրոցներին:

Արխիվային փաստաթղթերում հիշատակվում է նաև, որ Հովսեփ վարդապետը լուսավորչական գործունեություն է ծավալել նաև Նուխիի գավառի հայկական դպրոցներում: Այսպես, Նուխիի ազգային հոգևոր դպրոցում (հիմնադրվել է 1838թ.՝ Շուշիի թեմական դպրոցի հետ միաժամանակ) հիմնադրում է «Ընթերցասիրած ընկերություն», որը բացեց գրադարան-ընթերցարան (1881թ.): Նյութական միջոցներ հանգանակելով քաղաքի, գավառի հայությունից, Հովսեփ, վարդապետը դպրոցներ է բացում Նուխի քաղաքում (ծխական դպրոց, 1881թ.), հայկական[28] Սուր, Սուլթան Նուխի գյուղերում և այլ վայրերում:

<u>Մակար Գրիգորի Բարխուդարյան (1832-1906թթ.):</u> Նշանավոր հոգևոր-մշակութային գործիչ, ազգագրագետ, հնագետ, մանկավարժ: Ծնվել է Խաչեն գավառի Խնածախ գյուղում, քահանայի ընտանիքում: Մանուկ հասակում եղել է դերձակի աշակերտ, սովորել հայրենի գյուղի եկեղեցական-ծխական դպրոցում, ապա՝ 1862թ., միաբանակցել Երուսաղեմի Ս. Հակոբ վանքին:

1862-1868թթ. ուսանել է Երուսաղեմի ժառանգավորաց դպրոցում[29] (վարժարանում), ուսման վերջին երկու տարիներին աշակերտել հայտնի մանկավարժ, կրոնական և հասարակական գործիչ Մելիքսեդ արքեպիսկոպոս Մուրադյանին[30] (Մելիքսեդ Մուրադյանը Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի հետ միասին 1864թ. Շուշիում բացել է օրիորդաց դպրոց) և 1869թ. հունիսի 22-ին ձեռնադրվել սարկավագ: Երուսաղեմի Եսայի պատրիարքի կողմից 1870թ. ձեռնադրվել է վարդապետ: 1875թ. եղել է տպարանի տեսուչ, 1876թ. մեկնել է Կ.Պոլիս և ստանձնել Զմ-

26. «Դպրոց», 1875, թ.3:
27. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.78, 543: Նաև՝ Լեո, նշվ. աշխ.՝ թեմ. դպ. պատմ., էջ 275-276:
28. ՀՀ ԱԱ, ֆ.56, օր., գ.31, թ.15, գ.37, թ.8, գ. 50, թ.60: «Արարատ», 1870, թ.1, «Մուրճ», 1890, թ.6, էջ 1024: Նաև տե՛ս Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 350-352:
29. Այդ մասին մանրամասն տես՝ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ. նշվ. աշխ., էջ 907:
30. «Արարատ», 1906, թ. 2, էջ 116-117:

յուռնիայի առաջնորդական փոխանորդի պաշտոնը, միաժամանակ վարել քարոզչի, լուսարարի և հիվանդանոցի տեսչի պաշտոնները:

Գևորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով 1880թ. ընդունվել է էջմիածնի միաբանության անդամ, իսկ 1881թ. սեպտեմբերին աշխատանքի նշանակվել նորաբաց Շուշիի ռեալական ուսումնարանում՝ որպես կրոնի ուսուցիչ: Համբարձում Առաքելյանը «Շուշիի թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր» աշխատության մեջ վկայում է, որ Մ.Բարխուդարյանը թեմական դպրոցում դասավանդել է 1884-1887թթ.: Այն ժամանակ, բացի նրանից, թեմական դպրոցում դասավանդում էին Սամվել Մովսիսյանը (տեսուչ), Սամվել Գյուլզադյանը, Միհրան Շահիջանյանը, Գաբրիել Գյուլիքևխյանը (Հայկ Գյուլիքևխյանի հայրը), Գրիգոր Թառումյանը, Ամիրամ Ջալալյանը, Գարեգին քահանա Հովհաննիսյանը (Աշոտ Հովհաննիսյանի հայրը):[31] Հ.Առաքելյանը նաև նշում է, որ Մ.Բարխուդարյանի նախաձեռնությամբ շաբաթը մեկ անգամ հերթական ժողով էր նշանակվում, քննարկվում էին փորձնական դասերի արդյունքները, միաժամանակ դպրոցում կազմակերպվում էր թատերական ներկայացում (ներկայացնում էին «Արշակ Բ»): Դպրոցի համար ստանում էին հետևյալ թերթերը՝ «Նոր դար», «Մեղու», «Աղբյուր», “Семья и школа”, «Խիկար», «Բուրաստան մանկանց»[32] և այլն:

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ Լեոն հիշատակում է, որ Մ. Բարխուդարյանի գործունեության շրջանում կազմակերպվել է երգչախումբ, որը երգում էր Շուշիի Ղազանչոց եկեղեցում, Ամարասի, Գանձասարի վանքերում կամ ննջեցյալների պատարագին, իսկ հավաքված գումարը տրամադրվում էր ծխական դպրոցներին և կամ աղքատ ընտանիքներին:[33]

Շուշիի դպրոցներում աշխատելու տարիներին Մ. Բարխուդարյանը (արխիվային որոշ փաստաթղթերում նշվում է, որ դասավանդել է նաև հայրենի Խնածախ գյուղի դպրոցում) միաժամանակ եռանդագին զբաղվում էր նաև մշակույթի, լուսավորության զարգացման հարցերով, ակտիվ մասնակցություն ցուցաբերում հանգանակությունների և այլ միջոցառումների կազմակերպմանը: Նա եղել է Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձուների, Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի խորհուրդների անդամ: Շուշիի բարեգործական ընկերության խորհրդի նիստերում[34] (նախագահում էր Համբարձում Առաքելյանը) Մ. Բարխուդարյանը նշում էր, որ Արցախի թեմի, Նուխիի գավառի հայկական դպրոցների բացման ու պահպանման հետ կապված ամենադժվարին խնդիրը նյութական (դրամական) միջոցների հարցն է, ուստի այն պետք է լուծվի հետևյալ աղբյուրների հաշվին՝ կամավոր ժողովրդական նվիրատվությունների, եկեղեցու ունեցած դրամագլխի տոկոսների, մոմավաճառության եկամուտների, Շուշի քաղաքում պսակադրությունների ժամանակ ստացված նվերների, քահանաների մուծած գումարների (1-ական ռուբլի), բարեգործական ընկերության անդամների հատկացրած որոշակի գումարների և այլ աղբյուրների[35]: Ուշագրավ է նշել այն փաստը, որ եկեղեցական նշանավոր գործիչն առաջարկում էր աղքատ ընտանիքների երեխաներից ուսման վարձ չվերցնել:

31. Հ.Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր (75-ամյակի պատմ. նվիրված), էջ 58-59:
32. Նույն տեղում:
33. Լեո, Շուշիի թեմական դպ. պատմ, էջ 448-449: Այդ մասին նաև նշում է Հ.Առաքելյանը, նշվ. աշխ, էջ 58:
34. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 60-61:
35. Նույն տեղում:

Խիստ արժեքավոր է Մ. Բարխուդարյանի թողած ժառանգությունը ինչպես Արցախի հնագիտական պեղումների, բազմադարյա պատմության ուսումնասիրության բնագավառում, այնպես էլ մանկավարժական մեթոդիկայի ասպարեզում, որտեղ նա նորի, առաջադիմականի կրողն ու ջատագովն էր: Նա ժամանակի բարձրակիրթ անձնավորություններից մեկն էր, ուներ մտավոր լավ պատրաստություն, աչքի էր ընկնում հայ մատենագիտության, պատմության, գրականության, մանկավարժության, կրոնագիտության իմացությամբ:

Հայ գիտության նվիրյալ մշակը ձեռնամուխ եղավ Արցախի պատմության խոր ուսումնասիրությանը և ազգային-ազատագրական շարժումների հանգամանալի շարադրմանը: Նրա հետազոտական աշխատանքներն ամփոփված են «Արցախ», «Աղվանից երկիր և դրացիք» աշխատություններում, բազմաթիվ հոդվածներում: Իր գիտական աշխատություններում նա ընդհանրացրել է տարիների ընթացքում հավաքած պատմագիտական տեղեկություններն Արցախի պատմական տարածքի հնությունների, հուշարձանների, արձանագրությունների, եկեղեցիների, խաչարձանների ու տապանաքարերի մասին՝ ցանկանալով հիշեցնել մեզ, թե մեր երկրամասում նախնիներից ավանդ մնացած ինչ արժեքներ, մեր ազգի անցյալի պատմության մութ կետերը լուսաբանող ինչ հուշակոթողներ կան: «Աղվանից երկիր և դրացիք» (1893թ.) և «Արցախ» (1895թ.) աշխատությունների համար Մ.Բարխուդարյանն արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակի:

Մանկավարժական բնույթի հարցերը արծարծված են նրա «Բարոյական առածներ», «Չնաշխարհիկ տղա», «Միրզա Աննա» և այլ ժողովածուներում: Այդ ստեղծագործությունները ժամանակի առաջավոր մանկավարժական գաղափարների կոթողներ են: Այս և այլ վավերագրերում մենք գտնում ենք նոր, առաջավոր մանկավարժական հայացքներ, ուսուցման, դաստիարակության առաջատար պահանջներ:

Հետագայում Մ.Բարխուդարյանը եղել է նաև Շամախու թեմի առաջնորդ, Ալեքսանդրապոլի թեմի առաջնորդական փոխանորդ, Ագուլիսի Թովմա Առաքելոց վանքի վանահայր, վարել այլ պաշտոններ հայ լուսավորչական թեմերում:[36]

Նշանավոր հոգևոր-մշակութային գործիչն իր ողջ կյանքը նվիրել է ոչ միայն Արցախի, Հայաստանի, այլև Արևելյան Անդրկովկասի հայաշատ վայրերի մշակույթի զարգացմանը: Մակար Բարխուդարյանի աշխատանքը արգասավոր եղավ վերակառուցման, ճարտարապետության զարգացման ասպարեզում: Շամախու թեմում, որպես թեմական առաջնորդ, նա զգալի շինարարական աշխատանքներ է ծավալել, կառուցել ուսումնական շենքեր, բացել դպրոցներ թեմի հայկական գյուղերում՝ Մադրասայում (այդտեղ բացել է նաև իգական դպրոց), Թոբուշեն և այլ վայրերում[37]:

Մինչև կյանքի վերջը նա անձնվիրաբար ծառայել է կրթական գործին ու եկեղեցաշինությանը: Անշուշտ, Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը առավելապես կապված էր հայրենի երկրամասի հետ և ձգտում էր մշակույթն ու լուսավորությունը ծառայեցնել ազգային ազատագրության գերխնդրին: Մեծ սիրով էր լցված Արցախի մշակույթի ու նրա տաղանդավոր հոգևոր գործիչների (Հասան Ջալալյանի, Եսայի Հասան Ջալալյանի, Բաղդասար Մետրապոլիտի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանի) նկատմամբ: Ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական բարդ պայմաններում նրանք կարողացան պահպանել Արցախի մշակույթի

36. Տե՛ս Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 454-456:
37. Տե՛ս Մեսրոպ արքեպ. Սմբատեան, «Նկարագիր Շամախոք թեմի», Թփխիս, 1897, էջ 539-540:

ինքնատիպությունն ու միասնությունը, ինչը կարևոր դեր խաղաց ազգային համախմբման, առաջադիմական գաղափարների մշակման ու տարածման գործում: Մակար Բարխուդարյանը տոգորված էր ազգային արժանապատվության բարձր զգացումով:

Խաչիկ ծայրագույն վարդապետ Դաղյան (1863-...՞): Եղել է Մակար Բարխուդարյանի սանը, քննարկվող ժամանակաշրջանում լայն լուսավորչական գործունեություն է ծավալել Արցախի թեմում: Սանդրո Բեհբուդեանի աշխատության[38] տվյալներով՝ ծնվել է Արցախի Զարդարաշեն գյուղում, քահանայի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում, աշակերտել Սեդրակ Մանդինյանին (թեմականի տեսուչ), Ղազարոս Աղայանին, Մակար Բարխուդարյանին, Սամվել Գյուլզադյանին, Գարեգին քահանա Հովհաննիսյանին և ուրիշների: Նույնպես տոգորված էր ազգային արժանապատվության բարձր զգացումով, իր ուսուցիչների՝ հայ մշակույթի ու նրա գործիչներ նկատմամբ խորը հարգանքով ու սիրով:

Որպես հայոց պատմության, մատենագրության և կրոնի ուսուցիչ՝ Խաչիկ Վարդապետը դասավանդել է Շուշի քաղաքի և գավառի դպրոցներում: Նա բոլոր ջանքերը գործադրում էր դպրոցներում այդ առարկաների դասավանդումը բարձր հիմքի վրա դնելու համար: Որպես կուսակրոն հոգևորական ձեռնադրվել է 1888թ., իբրև սարկավագ պաշտոնավարել է Ամարասի, Ս.Գրիգորիս և այլ վանքերում: 1888-1894թթ. միաժամանակ զբաղվել է հնագիտական պեղումներով: Մինչև կյանքի վերջը նա զբաղվել է այդ աշխատանքով, սակայն մշտապես գտնվել է հայ հասարակական, կրոնական, վարչական և մշակութային կյանքի բովում:

Հետագայում՝ 1894թ.-ից, Խրիմյան Հայրիկի հրավերով աշխատել է ս.Էջմիածնում՝ որպես սարկավագ, և ճեմարանի 5 սարկավագների հետ միասին ձեռնադրվել է վարդապետ: Հավաստի արխիվային փաստաթղթերի և այլ աղբյուրների համաձայն՝[39] հայ լուսավորչական թեմերում, Շուշիում, Նուխիում վարել է բազմաթիվ պաշտոններ, կատարել հնագիտական պեղումներ, կազմակերպել թանգարաններ, զբաղվել հետազոտական աշխատանքով: Խորհրդային տարիներին ենթարկվել է հալածանքների ու բանտարկության, մահացել ու հողին է հանձնվել Զվարթնոցում (մահվան թվականը մեզ անհայտ է):

XIX 80-ական թվականների սկզբներին ժողովրդական լուսավորության ասպարեզում սկիզբ առած ցարիզմի ռեակցիոն քաղաքականությունն ավելի ծանր դրսևորումներ ստացավ ազգային ծայրամասերում: Ընդհանրապես 80-ական թվականների սկզբից խիստ սաստկացավ ազգային ճնշումը: Մայրենի լեզուներով հրատարակությունների արգելումը, ազգային մշակույթի գործիչների հալածանքը զուգակցվում էին հարկադրական ռուսալեզու ուսուցմամբ, ուղղափառության տարածմամբ[40]: Ցարական կառավարությունն ամբողջ ճակատով ուժեղացնում է հետադիմական քաղաքականությունը լուսավորության բնագավառում:

---

38. Սանդրո Բեհբուդեան, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.) Երևան, 2007, էջ 907:

39. Այդ մասին տես, Ս. Բեհբուդյանի նշվ. աշխ., էջ 908: Լեո, թեմական դպ. պատմ., էջ 492-494: Հ. Առաքելյանի նշվ. աշխ, էջ 69-70: Նաև՝ ՀՀ ԱԱ, կաթ. դիվ. ֆ.56, ց.1, գ.78, 543:

40. Свод статистических сведений по учебным заведениям Кавказского учебного округа, за двадцатилетний период 1878-1898, 22-ст. 122.

Ժողովրդական լուսավորության ասպարեզում սկսված ռեակցիան ավելի ծանր անդրադարձավ հայ իրականության վրա: Որքան բարձրանում է հայ ազգաբնակչության ազգային ինքնագիտակցությունը, ուժեղանում ինքնուրույնության ձգտումը, այնքան ինքնակալությունն ավելի էր խստացնում հակամիջոցները, հայկական դպրոցների նկատմամբ սահմանելով համատարած հսկողություն:

Չնայած այդ ամենին, Արցախում ակտիվանում է ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման, լուսավորական, բարեգործական ընկերությունների հիմնադրման և այլ հանրօգուտ միջոցառումների կազմակերպման գործում:

Անդրեաս Վարդապետ Տեր-Անդրեասյան (Տէր-Անդրէասեան Տ. Անդրեաս արքեպիսկոպոս (1834-1882թթ.): Նշանավոր հոգևոր գործիչ, Արցախի թեմի առաջնորդ, ում ամբողջ գործունեությունը (թեկուզև կարճատև) սերտորեն առնչվում է արցախահայության կյանքում առաջացած հուզող հարցերի հետ:

Ծնվել է Կ.Պոլսում: Կրթությունը ստացել է ծննդավայրում: 1857թ. մարտի 16-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ աբեղա, իսկ 1861թ. մայիսի 15-ին Մաթեոս Ա. կաթողիկոսը նրան ձեռնադրում է եպիսկոպոս: Եղել է Շամախու (Ատրպատականի թեմերի առաջնորդ), 1878-ին՝ Գևորգյան հոգևոր ճեմարանի վերատեսուչ: 1880թ. սեպտեմբերի 23-ին կաթողիկոսի կոնդակով կարգվել է Արցախի թեմի առաջնորդ (1880-1882թթ.)[41]:

Թեմակալ առաջնորդը, իր գործունեության այդ շրջանում պայքարելով թեմում եղած թերությունների վերացման համար, ձեռնամուխ է լինում դպրոցական բարենորոգումների իրագործմանը, Շուշիի ու Նուխի գավառներում ընդլայնում եկեղեցական-ծխական դպրոցների ցանցը, որպեսզի այն հանրամատչելի լինի հասարակության բոլոր խավերի և, մանավանդ, հասարակ ժողովրդի համար, ինչպես նաև դպրոցներն ապահովում եկեղեցիներից, վանքերից և այլ աղբյուրներից ստացված գումարներով ու ձգտում է լույս տարածել չքավոր ու խավար զանգվածի մեջ: Անդրեաս արքեպիսկոպոսի հորդորանքով Նուխիի գավառի հայկական գյուղերում (Ամիրավան, Դաշբուլաղ, Մեջլիս և այլն) կազմվել է դպրոցական ընկերություն,[42] որը որոշել է բաց անել եկեղեցական-ծխական դպրոցներ, նաև նվիրատվությունների միջոցով օգնել չքավոր ընտանիքների երեխաներին, որոնք սովորում են դպրոցներում:

Թեմի առաջնորդն ակտիվ մասնակցություն է ցույց տվել Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի հիմնադրման գործին, որի նախաձեռնողը եղել է ականավոր մշակութային գործիչ Համբարձում Առաքելյանը: Անդրեաս արքեպիսկոպոսը եղել է բարեգործական ընկերության անդամ (1881-1882թթ.) և նրա հորդորներով Շուշիի ու Նուխիի հայ հասարակության ներկայացուցիչներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նվիրատվություններ, հանգանակություններ և այլ միջոցառումներ կազմակերպելու գործին: Չնայած Արցախի թեմում կարճատև գործունեությանը, Անդրեաս արքեպիսկոպոսը, այնուամենայնիվ, արդյունավետ էր նրա անձնվեր նվիրումը երկրամասի հոգևոր-մշակութային կյանքի զարգացմանը:

Գրիգոր Արքեպիսկոպոս Սարգսյանց (1883-1886թթ.)[43]: Արցախի թեմի առաջ-

41. Այդ մասին մանրամասն տե՛ս Սանդրո Բեհբուդեան, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմ. Գիրք Թ. (Արցախի Առաքել. եկեղեց թեմ, նշվ. աշխ. էջ 348, 912):
42. Ս.Խուդոյան, նշվ. աշխ., էջ 342-344, նաեւ ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 23, թ.3:
43. Նույն տեղում, էջ 341-342:

նորդ, այդ պաշտոնում, համաձայն «Արարատ» ամսագրի տվյալների[44] ՝ կարգվել է Անդրեաս արքեպիսկոպոսի մահից հետո (նա մահացել է 1882թ. և թաղվել Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցու բակում)[45], Սինոդի հոգևոր խորհրդի կողմից (այդ ժամանակ Գևորգ կաթողիկոսի մահից հետո կաթողիկոսական աթոռը թափուր էր մնացել և Սինոդը կառավարում էր հոգևոր խորհուրդը):

Թեմի նոր առաջնորդը նույնպես նվիրված էր կրթական գործին: Երբ 1884թ. փետրվարի 16-ին հրապարակվեց բարձրագույն իշխանության կողմից հաստատված «Կանոններ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների»-ն, որի համաձայն դպրոցները պետք է անհապաղ ենթարկվեն լուսավորության նախարարության ուսումնական վարչությանը, թեմական առաջնորդն Էջմիածնի Սինոդի որոշմամբ չկատարեց այդ կանոնները՝ պատճառաբանելով, որ հայկական դպրոցները հայոց կաթողիկոսի անմիջական իրավասությանն են ենթարկվում: Սակայն կառավարությունը չընդունեց այդ պատճառաբանությունը. 1885թ. փետրվարի 5-ի որոշմամբ փակվեցին նաև Արցախի թեմի հայկական դպրոցները: Թեմի առաջնորդի հորդորանքով Շուշիի և Նուխիի գավառների մի շարք եկեղեցիների կից գործել են կառավարությունից գաղտնի դպրոցներ:

1886թ. հունվարի 16-ին կայսրը հաստատեց հայկական դպրոցները վերաբացելու որոշումը: Արցախի թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի՝ Էջմիածնի Սինոդին ներկայացրած տվյալների համաձայն Շուշիի և Նուխիի գավառներում բացվում են 28 հայկական նոր դպրոցներ, որտեղ սովորում էր ավելի քան 1000 աշակերտ, այդ թվում՝ 60-ը՝ հոգևորականների երեխաներ, 24-ը՝ ազնվականների, 50-ը՝ աստիճանավորների, 100-ը՝ վաճառականների, 300-ը՝ արհեստավորների, 490-ը՝ երկրագործների[46]:

Շուշիի և Նուխիի հայ հասարակությունը, թեմական դպրոցի ուսուցիչները, համախմբվելով թեմական առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի շուրջը, կարևոր դեր կատարեցին Արցախի հոգևոր-մշակութային կյանքում՝ լուսավորչական աշխատանք տանելով ժողովրդի մեջ: Միաժամանակ նրանք ձեռնամուխ եղան նվիրատվությունների միջոցով դպրոցների նյութական վիճակի բարելավմանը: Հոգևոր նշանավոր գործչի այս հորդորումներին արձագանքեց ամբողջ արցախահայությունը, ինչը դրական արդյունք տվեց:

<u>Կարապետ եպիսկոպոս Այվազյանց (1840-1898թթ.):</u> Արցախի թեմի առաջնորդ, որի օրոք (1887-1895թթ.) նույնպես որոշակի առաջընթաց է ապրել թեմի հոգևոր-մշակութային կյանքը: Ծնվել է Կեսարիայում: Մանուկ հասակում ծնողների հետ հաստատվել է Վաղարշապատում: Սովորել է Էջմիածնի Ս.Աստվածածին եկեղեցու դպրոցում, այնուհետև՝ Ժառանգավորաց դպրոցում: 1861թ. ձեռնադրվել է սարկավագ, 1864-ին՝ աբեղա: 1868թ. ստացել է վարդապետական մասնավոր իշխանություն: 1880թ. եղել է Արցախի թեմի ժամանակավոր կառավարիչ: 1886թ. Մակար կաթողիկոսը նրան ձեռնադրել է եպիսկոպոս և 1887թ. հունիսի 3-ին հաստատել Արցախի թեմի առաջնորդ[47]:

Մատենադարանի արխիվային մի փաստաթղթում կարդում ենք. «Կարապետ սրբազանը փառաւորապես եւ շքեղապես ընդունվեցաւ Շուշոյ հայ հասարակութիւնից, որը առաջին անգամն է, որ ժողովուրդը այսպիսի համակրական ցույցե-

44. «Արարատ», 1883, թ. 2, էջ 168-169:
45. Վավերագրեր հայ. եկ. պատմ., գիրք, էջ 913:
46. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 113, գ. 149, 314, թ. 50-60:
47. Տե՛ս Սանդրո Բեհբուդեան, նշվ. աշխ., էջ 348, 906:

րով է ընդունում իւր հովուին»[48]: Ղազանչեցոց եկեղեցու հայր Մակարը առաջ անցավ եւ բերանացի ուղերձով ընդունելով Սրբազանին ասաց, որ Ղարաբաղիս գործերի թուլութիւնները, ուսումնարանների տառապեալ վիճակը եւ այլ պակասութիւները Ձեզ էին սպասում, Սրբազան Հայր, որ առանց վհատելու, յուսահատուելու, քաջաբար գործեք եւ յաղթահարէք տգիտութեան»[49]:

Թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազյանցի առաջին քայլերից մեկը եղավ դպրոցական գործի կարգավորումը: Նա Շուշիի թեմական դպրոցի և Նուխիի ազգային հոգևոր ուսումնարանի տեսուչներից պահանջում է, որ վիճակագրական տեղեկություններ ներկայացնեն թեմի ազգային դպրոցների (եկեղեցական-ծխական, օրիորդաց և ռուսական տիպի ուսումնարանների) մասին, որպեսզի հնարավոր լինի կարգադրություններ անել և վերացնել թերությունները: Շուշիի կոնսիստորիայի ներկայացրած վիճակագրական տեղեկությունների համաձայն՝ Շուշիի և Նուխիի գավառներում այդ ժամանակ գործում էին 32 հայկական եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնցից 11-ը՝ Նուխիում, 6 օրիորդաց դպրոցներ, որորնցից 2-ը՝ Նուխիում, և 2 ռուսական տիպի ուսումնարաններ, աշակերտության թիվը հասնում էր 1200-ի, որից Շուշիի թեմական դպրոցում՝ 300, Նուխիի հոգևոր ուսումնարանում՝ 250[50]:

Սակայն պետք է նշել, որ թեմի առաջնորդը տեղերից ստանում էր երբեմն հակասական կամ ոչ լրիվ տվյալներ, հաճախ էլ տեղերից նման տվյալներ չէին ներկայացնում. դպրոցների անկայուն վիճակի, աշակերտների անկանոն հաճախման, տնտեսական ծանր պայմանների հետևանքով հնարավորություն չէր լինում ստույգ տվյալներ ունենալ նաև նյութապես անապահով դպրոցների մասին:

Շուշիի կոնսիստորիայի հանձնաժողովի նիստում (որին մասնակցում էին թեմական դպրոցի տեսուչ Սամվել Մովսիսյանը, ավագ ուսուցիչներ Մակար Բարխուդարյանը, Մանուկ Աբեղյանը, Գարեգին քահանա Հովհաննիսյանը, Շուշիի և Նուխիի հայ հասարակության ներկայացուցիչները) թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը կաթողիկոսի անունից նրանց առջև խնդիր է դնում յուրաքանչյուր գյուղում դպրոց բանալ: Միաժամանակ նշում է, որ նյութական անապահովությունը եղել է արցախահայ դպրոցի մշտական ուղեկիցը, շատ հաճախ պատճառ դառնալով, որ հազիվ ծնունդ առած՝ նորաբաց դպրոցը դադարեցնի իր գոյությունը: Դպրոցների գոյության միջոցները կազմվելու էին կամավոր ժողովրդական նվիրատվություններից, եկեղեցու ունեցած դրամագլխի տոկոսներից, աշակերտների (նկատի ունի ունևոր խավի) ուսման վարձից և այլ աղբյուրներից: Թեմի առաջնորդն իր ելույթում նաև արձանագրում է, որ Շուշի և Նուխի քաղաքներում, ինչպես նաև գյուղերում գործող բոլոր եկեղեցիները պարտավոր են իրենց կից ունենալ մեկական ծխական դպրոց: Նման դպրոցների նպատակն է կրթել մանուկներին և նրանց պատրաստել ընդունվելու թեմական դպրոց կամ Շուշիի ռեալական, Նուխիի քաղաքային ուսումնարան:

Թեմական նոր առաջնորդի շնորհիվ նախորդ շրջանի համեմատությամբ թեմում սկսեց կրկնապատկվել դպրոցների և աշակերտների թիվը: Դա բացատրվում է նաև նրանով, որ Կարապետ Այվազյանցն իր իրավասության տակ կենտրոնացրեց Շուշիի և Նուխիի գավառների հայկական բոլոր դպրոցները: «Արարատ»

48. Մատենադարան, Արխիվ, Կաթ. դիվ., թղթ. 236, վավերագիր 47:
49. Նույն տեղում, էջ 349:
50. Տես ՀՀ ԱԱ, ֆ 56, գ.52, ց. 1, գ. 78, գ. 543: Գ.314, թ.60, 80, գ.149, թ. 166: Նաև տե՛ս Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 342-353:

ամսագրի մի հոդվածից[51] տեղեկանում ենք, որ թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի եռանդուն գործունեության շնորհիվ բավականին առաջադիմություն էր նկատվում Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում, Նուխիի ազգային-հոգևոր ուսումնարանում: Օրինակ, զգալիորեն աճում է աշակերտների թիվը թեմական դպրոցում՝ 350-400, իսկ Նուխիի հոգևոր ուսումնարանում՝ 300, դպրոցներում ստեղծվում են կահավորված դասասենյակներ[52]: Բացի այդ, թեմի առաջնորդի նախաձեռնությամբ գավառի գյուղերում մեծանում է տեղական բնակչության հետաքրքրությունը լուսավորչական գործի նկատմամբ: Հասարակությունը ցանկություն է հայտնում յուրաքանչյուր գյուղում կառուցել դպրոցի շենք: Հաճախակի Արցախի և Նուխիի գյուղերից խնդրագրեր էին ներկայացնում Շուշիի կոնսիստորիային՝ բաց անել դպրոցներ, օգնել բարեկարգելու եղածները: Գյուղերում ժողովներ էին հրավիրվում, խնդրում թեմի առաջնորդին՝ հոգաբարձու ընտրել իրենց միջից: Արխիվային մի փաստաթղթում կարդում ենք, որ 1893թ. Ջրաբերդի գավառի Մադաղիս գյուղի բնակչությունը խնդրագիր է ուղարկում Շուշիի կոնսիստորիա և խնդրում գյուղում բաց անել եկեղեցական-ծխական դպրոց (ուսումնարան) և իրենց միջից ընտրել հոգաբարձու (դպրոցը պետք է կրեր Ս. Եղիշեի անունը)[53]: Կաթողիկոսի համաձայնությամբ թեմի առաջնորդը բավարարում է ոչ միայն Շուշիի գավառի տեղական բնակչության, այլև Նուխիի գավառի Բեկլարքենդ, Խոշկաշեն, Կենդոկ, Կախ-Ավանի, Ճալեթ և այլ գյուղերի հայ բնակչության պահանջները՝ բացելու ուսումնարաններ և կառուցելու նոր դպրոցական շենքեր, ապահովելու նաև մանկավարժական որակյալ կադրերով (մենք այդ մասին արդեն նշել ենք նախորդ բաժիններում):

Արցախի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազյանցը մտահոգված էր ոչ միայն դպրոցական ցանցի ընդլայնման, վերանորոգչական աշխատանքների կատարման, այլև լուսավորչական այլ ձեռնարկումների իրականացման խնդիրներով: Նա թեմական, օրիորդաց դպրոցների տեսուչներից, առաջավոր ուսուցիչներից և կոնսիստորիայի անդամներից պահանջում է տեղական բնակչության աջակցությամբ գյուղերում բաց անել նաև գրադարան-ընթերցարաններ, ուսուցիչների և աշակերտների ուժերով կազմակերպել ցերեկույթներ, գրական հանդեսներ, թատերական ներկայացումներ և այլ միջոցառումներ, որոնք նպաստեն Արցախի թեմում ազգային լուսավորության զարգացմանը:

Արցախի թեմի առաջնորդը մեծ աջակցություն է ցուցաբերում նաև հոգևոր տեսչության տպարանի հրատարակչական աշխատանքներին, նշանակալի գործունեություն ծավալում Շուշի և Նուխի քաղաքներում, հայկական գյուղերում եկեղեցիների շինարարության ու վերանորոգման ուղղությամբ: Նրա ուշադրության կենտրոնում էին թեմի հոգևոր հայտնի կենտրոնները, որոնց ճարտարապետական վաղեմի շուքը պահպանելու հետ միասին ջանում էր դրանցում կենդանի պահել մշակութային օջախների շունչը:

Համբարձում Առաքելյանը Շուշիի թեմական դպրոցի ուսումնական մասի պատմությանը նվիրած աշխատության մեջ[54] արձանագրում է, որ Արցախի թեմի առաջնորդ Կարապետ Այվազյանցը հաճախ իր մոտ խորհրդակցության էր հրավիրում Շուշի և Նուխի քաղաքների, գավառների հայ հասարակության աչքի ընկ-

51. Տե՛ս «Արարատ», 1889, թ.2, էջ 164-165: Նաև՝ «Մշակ», 1894, թ. 126:
52. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.1, գ.78, 149, 152, 543:
53. Նույն տեղում:
54. Տե՛ս Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 63-64:

նող ներկայացուցիչներին, թեմական դպրոցի տեսուչներին, հոգաբարձուներին, խոսում երկրամասի ժողովրդի անմխիթար ներկայի ու նրան այդ վիճակից հանելու անհրաժեշտության մասին, ծանոթացնում թեմի գավառներում հայկական դպրոցական ցանցն ընդլայնելու, դպրոցական շենքերը վերանորոգելու, նվիրատվությունների միջոցով դպրոցները պահպանելու իր ծրագրին: Հայ մտավորականները, տեսնելով թեմակալ առաջնորդի ձեռնարկած բարեշորոգչական ու շինարարական մեծ աշխատանքները, իրականացվող լուսավորչական ձեռնարկումները, համախմբվում են նրա շուրջը, իրենց պատրաստակամությունը հայտնում դպրոցների, լուսավորական օջախների բացման համար կատարել նվիրատվություններ և ամեն կերպ օգնել, նպաստել նրա ծրագրի կենսագործմանը: Թեմի առաջնորդի գործունեության շրջանում կատարված լուսավորչական ձեռնարկումների և այլ աշխատանքների թվում կարելի է հիշատակել նաև մի շարք վանքերի, եկեղեցիների, զանգակատների շինարարությունը: Համախմբվելով նրա շուրջ՝ ժողովուրդը ձեռնամուխ եղավ հայրենի երկրի ավերված գյուղերն ու վանքերը, եկեղեցիները, կամուրջներն ու մատուռները վերականգնելու աշխատանքներին:

Արխիվային փաստաթղթերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ Արցախի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Այվազյանի գործունեության շրջանում, մինչև հայկական դպրոցների փակումը (1895-1905), թեմում կրթական գործը, հոգևոր մշակույթի այլ ոլորտներ ընթանում էին վերելքի ուղիով, ինչը, անշուշտ, նախապայմաններ է ստեղծում հետագա զարգացման համար: Թեմի առաջնորդի ջերմեռանդ լուսավորչական գործունեության մասին գովեստով են խոսում թեմական և օրիորդաց դպրոցների աշակերտ-աշակերտուհիները, Սարգիս քահանա Գյուլիքևխյանը, Վահան քահանա Շահումյանցը, Գրիգոր քահանա Տեր-Ղազարյանցը՝ նշանավոր հոգևոր գործչին ուղղված իրենց նամակում[55]: Վկայակոչենք Ս.Գյուլիքևխյանի ելույթը թեմի առաջնորդին ընդունելու ժամանակ և մի հատված նամակից. «Կարապետ Եպիսկոպոս Այվազեանը Ղարաբաղի հայերի համար անծանօթ անձնաւորութիւն չէ: Նա մինչեւ Անդրէաս արքեպիսկոպոսի Ղարաբաղ գալը, վարում էր փոխանորդի պաշտոն (1880թ.): Ամենքս նրան ճանաչում ենք, գիտենք եւ աչքերով տեսել ենք նրա անկողմնապահ գործունեութիւնը, աչալրջութիւնը եւ հեռատեսութիւնը, լսել ենք նրա իմաստալից քարոզները, խորհուրդները եւ մի քննական հայացք ձգելով նրա գործունեութեան վրա, ամենքս էլ ոգեւորուած ենք...»[56]: Շուշիի օրիորդաց դպրոցի մի աշակերտուհի իր նամակում նշում է. «Իմ բոլոր ընկերուհիներիս կողմից շնորհաւորում են Ձեր գալուստը, որին ահա քանի ամիս է անհամբեր սպասում էինք: Ձեր մուտքը Արցախի թեմը, Սրբազան հայր, մէջս շատ իղձեր, զգացմունքներ եւ մտքէր է զարթուցանում... Մեր մանկական լեզվովը ույժ, կարողութիւն եւ երկար կեանք ենք մաղթում, որպէսզի միջոց ունենաք մեր այս դէպի Ձեր ունեցած բոլոր յույսերը ի կատար ածելու»[57]:

Արխիվային փաստաթղթերում ծանոթանում ենք բազմաթիվ նամակների, վիճակագրական տեղեկությունների, թեմական դպրոցի տեսուչ Եղիշե Մադաթյանի հաշվետվություններին, որտեղ մանրամասն ներկայացվում է թեմի առաջնորդ Կարապետ Այվազյանցի բեղուն լուսավորչական գործունեությունը: Իր կար-

55. Այդ նամակների բովանդակության մասին տե՛ս Սանդրո Բեհբութեան, նշվ. աշխ., էջ 344-352:
56. Նույն տեղում, էջ 349:
57. Նույն տեղում, էջ 350:

ճատև գործունեության տարիներին անգնահատելի ծառայություններով Կարապետ Եպիսկոպոս Այվազյանցը մնայուն տեղ գրավեց Արցախի մշակույթի պատմության անդաստանում:

Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյան (Սաթունցյան): Արցախի թեմի առաջնորդ, նշանավոր հոգևոր գործիչ: Ծնվել է 1852թ., Աշտարակ գյուղում: 1867-1872թթ. սովորել է Ս. Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, 1873թ. ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1876թ. ստացել վարդապետական իշխանություն: 1883թ. նշանակվել է Արցախի թեմի և Նուխիի առաջնորդական փոխանորդ: 1895թ. հունվարի 27-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կոնդակով հաստատվում է Արցախի թեմի առաջնորդ և պաշտոնավարում մինչև 1897թ. վերջը[58]:

XIX դարի 90-ական թվականների կեսերին ցարական կառավարությունը շարունակում էր ազգային դպրոցների նկատմամբ սահմանափակումները: Օրինակ, 1896թ. կառավարությունը փակում է հայկական ծխական դպրոցների զգալի մասը, իսկ մի տարի հետո եղած եկեղեցական-ծխական դպրոցները հանձնվում են լուսավորության նախարարության տնօրինությանը: Կառավարության թ.4457 հրամանի[59] համաձայն առաջարկվում էր Ղարաբաղի թեմի կառավարիչ (առաջնորդ) Գարգեին Սաթունյանցին փակել թեմի եկեղեցական ուսումնարանները: Կովկասյան իշխանությունները ձգտում էին դպրոցների գույքի և նյութական միջոցների հաշվին բացել արքունի դպրոցներ, որտեղ ուսուցումը տարվելու էր ռուսերենով:

Սակայն թեմի առաջնորդը հրաժարվեց Կովկասյան իշխանութուններին հանձնել փակված դպրոցների մեծ մասի գույքը (այդ մասին մանրամասն նշվել է աշխատության 4-րդ գլխում), պատճառաբանելով, որ դա եկեղեցու սեփականությունն է: Նա միաժամանակ հորդորում էր Շուշիի և Նուխիի հայ հասարակությանը՝ հրաժարվել նյութական միջոցներ տրամադրել արքունի դպրոցների պահպանությանը:

Չնայած ժամանակաշրջանի խեղդուկ մթնոլորտին, թեմի առաջնորդի նախաձեռնությամբ Շուշիի և Նուխիի գավառների որոշ գյուղերում (Վարանդայում՝ Սարուշեն, Ննգի, Ճարտար, Ջրաբերդի գավառի Տոնաշեն, Մադաղիս, Մաղավուզ, Նուխիի գավառի Արեշ, Նիջ, Նեմինաթապատ և այլն) պահվում էին մայրենի լեզվով գաղտնի մասնավոր դպրոցներ: Այդ մասին Լեոն գրում է. «Գյուղերում բացված էին գաղտնի դպրոցներ: Ես նույնիսկ իմացա, որ Կարսի շրջանում այդ գաղտնի դպրոցները ունեն նաև թեմական տեսուչ»[60]: Արխիվային փաստաթղթերի տվյալների համաձայն՝ Շուշիի գավառում այդպիսի դպրոցների քանակը հասնում էր 5-ի, յուրաքանչյուր դպրոցում սովորում էր 25-30 աշակերտ, իսկ Նուխիի գավառում՝ 3-ի, յուրաքանչյուր դպրոցում՝ 15-20 աշակերտ[61]:

Չնայած ցարական իշխանությունները ուսուցիչներից ստորագրություններ էին վերցնում, որ չեն զբաղվի մասնավոր տներում կամ գաղտնի դպրոցներում երեխաների ուսուցմամբ, սակայն թեմի առաջնորդը սկսեց միջոցներ որոնել որևէ կերպ դպրոցները պահպանելու համար: Հորդորում է տեղական բնակչությանը հասարակական վճիռներ կայացնել դպրոց հիմնելու մասին և խնդրագրերով դի-

58. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Արցախ: Առաքելական եկեղեցու թեմ (1813-1933), էջ 583, 913:
59. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.314, գ.280, թ.15, նաև Վ.Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 175-176:
60. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 134-135:
61. ՀՀ ԱԱ, ֆ. 406, ց. 1, գ.57, թ. 3-4, ց.2, գ. 624, թ.2:

մել կաթողիկոսին: Օրինակ, արխիվային փաստաթղթերում հանդիպում ենք Շուշիի և Նուխիի գավառներից կաթողիկոսին, թեմի առաջնորդ Գարեգին Սաթունյանին և թեմական տեսուչներին ուղղված բազմաթիվ խնդրագրերի, որոնց տակ 100-ից ավելի ծխականների ստորագրություններ կան: Խնդրագրերում ստորագրողները ուղղակի աղաչում էին թույլ չտալ փակելու դպրոցները, միաժամանակ ասվում է. «Հազիվ մեր երեխաները սկսել էին ընտելանալ մայրենի և ռուսաց լեզուների գիտության, սակայն ստիպված են նորից խավարի մեջ ընկնել[62]»:

Ստեղծված անբարենպաստ պայմաններում (երբ լրիվ փակվել էին հայկական դպրոցները), թեմական առաջնորդը սկսեց միջոցներ որոնել որոշ թվով լուսավորչական ձեռնարկումներ իրականացնելու համար. նպատակն էր լուսավորել ժողովրդին: «Մշակ» թերթի 1896թ. թ.2-ում[63] տպագրված «Դպրոցական գյուղական գրադարաններ» հոդվածում նշվում է, որ Արցախի թեմում դպրոցները փակվելուց հետո թեմի առաջնորդ Գարեգին Սաթունյանի հորդորանքով որոշ գյուղերում բացվում են գրադարան-ընթերցարաններ, որպեսզի մատաղ սերնդի կրթական գործը կանգնած լինի հաստատուն հիմքի վրա, նրան հնարավորություն տրվի շարունակելու ընթերցանությունը: Գրադարանները, շարունակում է հոդվածագիրը, ծառայում են նրան, որպեսզի կրթվող սերնդի մեջ անմոռաց պահպանվի տարրական դպրոցից ստացած գրագիտությունը: Առանց գրադարանի դպրոցի տված օգուտները շատ անգամ բացասական են լինում և ապարդյուն[64]:

Արցախի թեմի առաջնորդը ցարիզմի ռեակցիոն քաղաքականության պայմաններում մտահոգված էր ոչ միայն եկեղեցիներին կից գաղտնի դպրոցներ, նաև մասնավոր դպրոցներ, գրադարան-ընթերցարաներ բացելու, այլև Շուշիի և Նուխիի հայ հասարակության առաջավոր գործիչների, թեմական դպրոցի և ռեալական ուսումնարանի ուսուցիչների նախաձեռնությամբ գեղարվեստական ցերեկույթներ, երեկույթներ, գրական հանդեսներ, թատերական ներկայացումներ և այլ միջոցառումներ կազմակերպելու խնդրով: Քանի որ դպրոցները փակված էին, թեմական առաջնորդն առաջնակարգ տեղ էր հատկացնում լուսավորչական-մշակութային միջոցառումներին, որոնց այդ անբարենպաստ պայմաններում վիճակված էր խոշոր դեր խաղալ արցախահայության, ինչպես նաև թեմի մեջ մտնող Նուխիի գավառի հայության կյանքում:

Թեև նորանշանակ առաջնորդ Գարեգին Սաթունյանի գործունեությունը կարճ տևեց (1895-1897թթ.), այն էլ՝ ժամանակաշրջանի խեղդուկ մթնոլորտում, այնուամենայնիվ, նա կարողացավ լուսավորչական որոշ ձեռնարկումներ իրականացնել, ինչպես և աշխատանքներ տանել նաև եկեղեցաշինության, բնակելի տների վերակառուցման, մշակույթի այլ ճյուղերի զարգացման բնագավառում:

<u>Սահակ վարդապետ Բաղդասարյանց:</u> Անվանի հոգևոր գործիչ, Արցախի թեմի հաջորդ և կոնսիստորիայի կառավարիչ (կենսագրականը տես՝ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ. էջ 907): «Արարատ»[65] ամսագրի 1894թ. թիվ 7-ում տպագրված մի հոդվածից (հոդվածի հեղինակի անունն անհայտ է) տեղեկանում ենք, որ 1894թ. Մակար կաթողիկոսի կոնդակով Սահակ վարդապետ Բաղդասարյանցը նշանակվել է Նուխիի հաջորդ: Նիջ գյուղի բնակիչների աջակցությամբ՝ կառավարությունից գաղտնի, նա բացել է եկեղեցական-ծխական դպրոց 20 աշա-

62. Նույն տեղում, ֆ. 406, g. 1, գ. 57, թ. 3-4:
63. «Մշակ», 1896, թ.2:
64. Նույն տեղում:
65. «Արարատ», 1894, թ. 7, էջ 227:

կերտով: Արխիվային մի փաստաթղթում[66] նշվում է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կոնդակով Սահակ վարդապետը 1897թ. փոխադրվել է Շուշի՝ որպես թեմի հաջորդ և կոնսիստորիայի կառավարիչ: Այդ ժամանակաշրջանում ցարական կառավարության որոշմամբ Արցախի թեմում փակվել էին եկեղեցական-ծխական դպրոցները: Սահակ վարդապետը թեմի հայ բնակչությանը հորդորում է խնդրագրերով դիմել կաթողիկոսին, կովկասյան իշխանություններին՝ խնդրելով թույլատրել վերաբացելու եկեղեցական-ծխական դպրոցները: Արխիվային փաստաթղթերում պահպանվող մի խնդրագրում գավառի բնակիչները գրում են. «Աղաչում ենք, մեր մեծերիս օրերը համարված են, խղճացեք մեր մատաղ սերնդին, միք թողնի արցունքոտ աչքերով նորից խավարի մեջ խարխափել»[67]: Մկրտիչ կաթողիկոսն էլ իր հերթին փորձեց ստեղծված վիճակից ելք գտնել, սակայն ապարդյուն: Երբ դպրոցները փակվեցին, կաթողիկոսի կարգադրությամբ Սահակ վարդապետը գավառի բնակչությանը հանձնարարեց դպրոցների ունեցվածքը դնել փակի տակ, իսկ դպրոցական շենքերի պահպանումը վերապահել տեղական եկեղեցիներին:

Հետագայում Սահակ վարդապետը եղել է Ալեքսանդրապոլի հաջորդ (1903թ.), իսկ հետո՝ Ճալեթի վանքի վանահայր Նուխիի վիճակում[68]:

XIX դարի վերջերին, XX դարի սկզբներին (1898-1905թթ.), այսինքն՝ մինչև հայկական դպրոցների բացումը, Արցախի թեմի առաջնորդների՝ Անանիա եպիսկոպոս Պարզյանցի լուսավորչական գործունեության մասին արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում չի հիշատակվում:

«Արարատ» ամսագրի 1897թ.[69] համարում տպագրված Սինոդի վիճակագրական տվյալներից տեղեկանում ենք, որ Արցախի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանի գնալուց հետո 1898թ. մարտի 7-ին Կովկասի կառավարչապետ Գոլիցինին ուղղված նամակով Ամենայն Հայոց Մկրտիչ կաթողիկոսն առաջարկում է ժամանակավորապես Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնում հաստատել Անանիա եպիսկոպոս Համազասպյանին: Կաթողիկոսը մարտի 22-ին[70] հատուկ կոնդակով հաստատում է Անանիա Համազասպյանին որպես Ղարաբաղի թեմի առաջնորդ, սակայն, Պետերբուրգից ստանալով մերժողական պատասխան, ստիպված է լինում այս անգամ արդեն հատուկ գրություն (թ. 274 հրաման, ապրիլ) ուղարկել Շուշի՝ Անանիա եպիսկոպոսին ետ կանչելու մասին[71]: 1898թ. հունիսին Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը հանդես եկավ նոր միջնորդագրով, որով խնդրում էր իշխան Գ.Մ.Գոլիցինին՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ հաստատել[72] **Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեցյանին:** Նա պաշտոնավարում է մինչև 1903թ.:

Ինչպես նշվել է, XIX դարի վերջերին հայերի դեմ ծավալված հալածանքի պայմաններում հայկական դպրոցները փակելուց հետո, կովկասյան իշխանությունները 1898թ. ձեռնամուխ եղան մարտի 26-ի օրենքով նախատեսված հայկական

66. ՀՀ.ԱԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8, գ. 50, թ. 68:
67. Նույն տեղում, գ. 543, թ. 2,3:
68. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան գիրք Թ. էջ 907:
69. «Արարատ», 1897, էջ 377:
70. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, էջ 387-389:
71. Նույն տեղում:
72. Մ.Բալայան, Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, էջ 200-201:

եկեղեցական-ծխական դպրոցների շենքերի ու գույքի ընդունմանը: Իսկ 1903թ. հայոց եկեղեցական կալվածքների առգրավման վերաբերյալ ռուսական կառավարության հրամանագրերը (հունիսի 12-ի օրենքի[73] համաձայն) ըստ էության մեծագույն հարված հասցրին հայ եկեղեցուն ու դպրոցին: Ինչպես հայ լուսավորչական մյուս թեմերում, այնպես էլ Արցախի թեմում եկեղեցական նշանավոր գործիչները, թեմի առաջնորդները և առաջադեմ մտավորականությունը թեկուզ դիմադրություն էին ցույց տալիս, սակայն չկարողացան պահպանել եկեղեցական-ծխական, օրիորդաց, 1903թ. հունիսի 12-ի օրենքով փակված թեմական դպրոցները, որոնք ծառայում էին նաև երկրամասի հայ սերնդի ազգային դաստիարակությանը:

Գրիգոր եպիսկոպոս: Արցախի թեմի հոգևոր առաջնորդ (1903-1905թթ.): Նշանակվել է Ամենայն Հայոց Մկրտիչ կաթողիկոսի կոնդակով 1903թ. օգոստոսին՝ թ.290 հրամանի համաձայն[74]: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում փակվել էին թեմի հայկական դպրոցները՝ բացի Շուշիի ռեալական (արքունի) ուսումնարանից: Առաջին իսկ օրվանից թեմական առաջնորդը ձեռնամուխ եղավ երկրամասում (Շուշիի և Նուխիի գավառներում) որոշ միջոցառումների իրականացմանը: Հանձնարարեց թեմի եկեղեցիների, վանքերի (այդ թվում՝ Նուխիի գավառի) վանահայրերին քարահանքի, վարելահողերի եկամուտները հավաքել՝ վանքերը վերանորոգելու համար[75]: Նրա նախաձեռնությամբ թեմում ամենուրեք տարեային հավաքներ ու ժողովներ էին գումարվում, որոշում պայքարի ելնել, հանրագրեր էին կազմում և ուղարկում էջմիածին ու թեմական առաջնորդներին՝ պահանջելով չենթարկվել ցարի որոշմանը, բողոքել, դիմադրել և պահանջել Կովկասի իշխանություններից վերաբացել հայկական դպրոցները:

Կովկասյան իշխանությունների կողմից դպրոցների փակմանը զուգընթաց սահմանափակվում է նաև Շուշիում և Նուխիում գործող բազմապիսի կամավոր ընկերությունների գործունեությունը: Չնայած դրան, այնուամենայնիվ, թեմական առաջնորդի ջանքերով որոշ գյուղերում՝ Մեծ Թաղլար, Բանազուր, Ազոխ, Ճարտար, Նոգի, Սարուշեն, Կուսապատ, Նուխի գավառի Վարդաշեն, Նիժ և այլուր, հասարակական ընկերությունները կառավարությունից գաղտնի շարունակում են իրենց կրթանպաստ գործունեությունը:

XX դարասկզբի տարիները ծանր էին դպրոցական, մշակութա-լուսավորչական աշխատանքի, մամուլի, գրատպության և հասարակական ընկերությունների գործունեության համար: Գործադրվում էին բազմաթիվ միջոցներ՝ Արցախի աշխատավոր մարդկանց կամքն ու համառությունը, ոգին կոտրելու համար, բայց դա չէր հաջողվում: Աստիճանաբար ավելի է բարձրանում ժողովրդի ինքնագիտակցությունը: Նա ջանքեր է ներդնում վերականգնելու արվածը, կառուցելու հայ-թաթարական ընդհարումների (1905-1906թթ.) ժամանակ քանդվածը: 1905թ. օգոստոսի 1-ին՝ կայսերական որոշումների համաձայն, տեղական իշխանություններն օգոստոսի 4-ին թույլատրեցին բացել նաև Արցախի թեմի դպրոցները:

Հայտնի է, որ հայ դպրոցը 10-տարի (1895-1905թթ.) փակել էր իր դռները և, վերաբացվելով, կանգնեց դժվարին խնդիրների առաջ: Պետք էր հավաքել ուսուցչության ցիրուցան ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, կովկասյան իշ-

73. Այդ մասին տես, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ. էջ 438-439:
74. Այդ մասին տես, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ. էջ 438-439:
75. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ. էջ 439:

խանություններից ընդունել դպրոցական գույքն ու շենքերը, մի խոսքով՝ ամեն ինչ նորից սկսել:

Արցախի դպրոցի պատմության այս ժամանակաշրջանում (1905-1920թթ.) թեմում՝ մշակույթի, լուսավորության, եկեղեցաշինության, գրահրատարակչության, պարբերական մամուլի հրատարակման, ժողովրդի բնակելի շենքերի վերանորոգման և այլ աշխատանքների կատարման ասպարեզում բեղմնավոր գործունեություն են ծավալել հոգևոր-մշակութային նշանավոր գործիչների նոր սերնդի ներկայացուցիչները՝ Աշոտ եպիսկոպոս Շախյանը, Բենիկ Վարդապետը, Զավեն եպիսկոպոս Բաբայանցը, Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը: Նրանց հետ միասին բեղուն լուսավորչական գործունեություն են իրականացնում նաև հայ մտավորականներից շատերը:

<u>Աշոտ եպիսկոպոս Շախյան:</u> Արցախի թեմի հոգևոր առաջնորդ (1905-1909թթ.): Նշանակվել է Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի՝ 1905թ. ապրիլի 8-ի կոնդակով:[76] Թեմական առաջնորդը հոգևոր գործունեությանը զուգընթաց ակտիվ մասնակցություն է ունեցել երկրամասի մի շարք ձեռնարկումների՝ դպրոցների, գրադարան-ընթերցարանների, մշակութա-լուսավորական այլ օջախների հիմնադրման գործում, աջակցել զանազան հասարակական կազմակերպությունների աշխատանքին: Աշոտ եպիսկոպոսի գործունեությունը համընկնում է այն շրջանին, երբ նոր թափով (օգոստոսին) բռնկվեցին ազգամիջյան՝ հայ-թաթարական ընդհարումները: Նման մղձավանջային պայմաններում թեմական առաջնորդը, այնուամենայնիվ, փորձ արեց անհետաձգելի միջոցառումներ իրականացնել: Թույլտվություն ստանալով Կովկասյան իշխանություններից, եկեղեցուն է վերադարձնում նախկինում խլված կալվածքները, ինչը նյութական լուրջ հնարավորություններ պիտի ընձեռեր վերաբացված դպրոցների լիարժեք գործունեության համար: Կաթողիկոսի թույլտվությամբ կոնսիստորիան հրավիրում է ներկայացուցչական ժողով (1906թ. ապրիլ)[77] և պատվիրում թեմական դպրոցի տեսուչներին անցկացնել հոգաբարձուների ընտրություններ և նոր կազմ ընտրել: Սակայն միջոցառումը հետաձգվեց (ներկայացուցչական ժողովի մասնակիցների մի մասը չէր ներկայացել)[78]: Դպրոցների (Շուշիի և Նուխիի գավառների) հետագա գոյությունը ևս վտանգված էր նյութական միջոցների սղության պատճառով: Ստեղծված անբարենպաստ պայմաններում թեմի առաջնորդը ոչ միայն չհուսահատվեց, այլև, հաղթահարելով բազում դժվարություններ, ջանքեր էր գործադրում և կոչ էր անում երկրամասի հայությանը, ինչպես նաև Նուխիի գավառի հայ հասարակությանը դիմումներ հղել հայ լուսավորչական թեմերին, ազգային հաստատություններին և ունևոր մարդկանց, քանզի խնդիրը սոսկ դպրոցների վերաբացումը չէր, այլ նյութական միջոցներով դրանց ապահովումը, ինչպես նաև երկրամասում քարուքանդ եղած շենքերի, եկեղեցիների ու վանքերի վերանորոգումը: Այդ մասին Լեոն գրում է. «Դա մի ահագին խորհուրդ էր ներկայացնում: Յաղթանակում էր կեանքի գաղափարը: Նույն այն միջոցին, երբ աղէտը մի ժողովրդի գոյութիւնն էր վտանգել, հինաւուրց կրթատունը գալիս էր այդ իսկ ոոպէին բաց անելու իր փակված դռները, որպէսզի կեանքի և առաջադիմութեան յաղթանակը

76. «Արարատ», 1905, էջ 320: Նրա կենսագրականի և գործունեության մասին տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, էջ 18-29, 450-458, 911: Նաև Մ.Բալայանի նշվ. աշխ., էջ 201:
77. ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1851, թ. 1, 2 ձեռագիր:
78. Տե՛ս Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 582:

տնկէ ապաժոյժ աւերակների ապականութեան մեջ»[79]:

Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի կոչն ու դիմումները արձագանքներ ունեցան, և արդեն 1906թ. օգոստոսից ստացվեցին առաջին նպաստները Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձության և «Արամազդ» ընկերության կողմից: Նա ջանքեր է ներդնում վերականգնելու այրվածը, կառուցելու քանդվածը (1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ), կենդանություն տալու այն ամենին, ինչ փչացել, մոխիր է դարձել: Թեմի առաջնորդի հայրենասիրական նախաձեռնություններին արձագանքում են առաջադիմական գաղափարներով տոգորված մտավորականները, շատ քաղաքական կազմակերպություններ, ընկերություններ, առանձին անձնավորություններ: Արձագանքում են նաև Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Ռուսաստանի հայաշատ վայրերում ապրող բնիկ արցախցիները: «Մշակ» թերթի 1906թ. թ. 116-ում տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ 1906թ. Շուշիում մի քանի մտավորականների ուժերով կազմակերպվում է «Հայրենաօգուտ ընկերություն»[80] 46 անդամներով: Ընկերության նպատակն էր նյութական օժանդակություն ցույց տալ տասնյակ դպրոցների, սովյալների, տառապյալների, լույս ընծայել գրքեր, պարբերականներ, բացել գրադարան-ընթերցարան: Երևանում, Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում բնակվող շուշեցի հայրենասեր գործիչները (Ս. Յուզբաշյան, Մ. Տեր-Մինասյան, Ս. Դոլուխանյան, Ա. Թադևոսյան և ուրիշներ) հանրօգուտ նվիրատվություններ են անում ընկերության ֆոնդին՝ լուսավորչական օջախներ ստեղծելու, գյուղերում գրադարան-ընթերցարաններ բացելու, բնակելի և դպրոցական շենքերը վերանորոգելու ու կառուցելու համար: Սակայն, չբավարավելով դրանով, թեմակալ առաջնորդը խնդրեց և իրավունք ստացավ Ամենայն Հայոց Հայրապետից՝ շրջագայելու Ռուսաստանի հայաբնակ վայրերում՝ Արցախի դպրոցների (թեմական, միդասյա և երկդասյա ծխական, օրիորդաց և երկսեռ) հետագա գոյությունն ապահովելու նպատակով միջոցներ հանգանակելու համար: Անշուշտ, հոգևոր-մշակութային նշանավոր գործչի հայրենասիրական նախաձեռնությունները դրական արդյունք տվեցին:

Այսպես, 1909թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հղած վիճակագրական տեղեկագրում թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը համառոտակի տեղեկություններ է տալիս թեմի հոգևոր առաջնորդարանի հոգածության շնորհիվ Արցախի և Նուխիի գավառներում կրթական կյանքի աշխուժացման մասին: Համաձայն այդ վիճակագրական տեղեկույթուններ՝ եթե 1906-1907թթ. ուսումնական տարում Արցախի ամբողջ թեմում կային 40 հայկական դպրոցներ, որոնցից ամենաշատը երկսեռ երկդասյա դպրոցներ էին, և սովորող աշակերտության թիվը հասնում էր 1940-ի (միայն թեմական դպրոցում՝ 361 աշակերտ)[81], ապա 1908-1909 ուսումնական տարում դպրոցների թիվը հասավ 65-ի՝[82], յուրաքանչյուրում սովորում էր 30-40 աշակերտ-աշակերտուհի, իսկ թեմական դպրոցում սովորում էր 400-ից ավելի աշակերտ, դասավանդում 22 ուսուցիչ[83]:

---

79. Նույն տեղում, էջ 585:
80. «Մշակ», 1906, թ. 116:
81. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 73-74:
82. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ., էջ 20-22: Նաև ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց.3, գ. 78, 543:
83. Գ.Հարությունյան, Արցախի դպրոցն ու մանկավարժական միտքը 5-19-րդ դարերում և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, 2002, էջ 67-68:

«Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան» Գիրք Թ. (Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմ 1813-1933թթ.), աշխատության առաջաբանում (էջ 3-32), Սանդրո Բեհբուդեանը, գնահատելով Աշոտ եպիսկոպոսի մատուցած ծառայություններն Արցախի թեմում, գրում է, որ թեմի առաջնորդի գործունեության շրջանում (1905-1909թթ.) «Արցախում դժուարութիւներ կային նաև ուսուցչական կազմի ընտրութեան հարցում: Գրագէտ, բանիմաց վարժապետների պակասի պատճառով գիւղական դպրոցներում աշխատանքի էին հրաւիրւում տարրական, թերի կրթութեամբ կիսագրագէտ մարդիկ: Աշոտ եպիսկոպոսի նախաձեռնութեամբ 1907-1908 ուս. տարում նման ցածր վարկանիշ ունեցող դպրոցները փակւեցին»: «Շնորհիւ այդպիսի խիստ վերաբերմամբ դէպի կրթական գործը, վերջինիս արժէքը գիւղացիները, թէև դանդաղօրեն, բայց տարեցտարի աւելի ու աւելի հաստատօրէն կերպով ըմբռնում են: Այդ ըմբռնումը նկատելի չափով նպաստում է կանոնաւոր դպրոցների աճեցման ու յարատևման, դրան ապացույց կարող է ծառայել այն խոշոր երևույթը, որ վերջին ուսումնական տարուայ ընթացքում (1908-1909թթ.) Ղարաբաղի թեմում կանոնաւոր դպրոցների թիւն աւելացել է 24-ով»[84]: Անշուշտ, այդ աշխատության առաջաբանում մատնանշված են նաև բազում հիմնախնդիրների մասին, որոնց իրագործման համար մտահոգ էր թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախյանը:

Հետագա տարիներին Աշոտ եպիսկոպոսն աշխատել է հայ լուսավորչական տարբեր թեմերում, Մ. Աթոռում վարել զանազան պաշտոններ[85]:

<u>Բենիկ վարդապետ:</u> Արցախի թեմի առաջնորդ: Այդ պաշտոնում հաստատվել է Ամենայն Հայոց Մատթեոս Բ. կաթողիկոսի՝ 1910թ. հունվարի 26-ի կոնդակով: Մինչ այդ եղել է Շուշիի թեմական դպրոցի տեսուչ:

Բենիկ վարդապետի՝ որպես թեմական առաջնորդի, գործունեությունը շատ կարճատև էր, ընդամենը մեկ տարի (1910-1911թթ.) աշխատեց թեմում, այն պատճառով, որ թեմում շարունակում էին ներեկեղեցական հակասությունները: Փաստի պարզ վկայություն են հանդիսանում այն անհիմն բողոքագրերը, որոնք իրականությանը չէին համապատասխանում, բայց սուր քննադատության էին ենթարկում թեմական առաջնորդին՝ «միայն ու միայն նպատակ ունենալով փութացնելու եպիսկոպոսի հեռացումն»[86]: Անկախ ամեն տեսակի և շատ դեպքերում կաթողիկոսին հղված անհիմն բողոքագրերի, իրար հակասող վավերագրերի, այնուհանդերձ, Բենիկ Վարդապետի՝ որպես թեմական առաջնորդի թեկուզև կարճատև գործունեությունը թույլ է տալիս ենթադրելու, որ նրա նկատմամբ ժողովուրդը հատուկ համակրանք ուներ: Բայց և այնպես, նրա դեմ կազմակերպված դավադիր քայլերի արդյունքը եղավ այն, որ նա շուտով զրկվեց թեմի հոգևոր առաջնորդի պաշտոնից:

Բենիկ վարդապետը Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին՝ տեսչության շրջանում (1900-1903թթ.), և որպես թեմի առաջնորդ՝ կարճատև գործունեության շրջանում, անկեղծորեն նվիրվել է արցախահայության լուսավորության գործին:

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ Լեոն գրում է, որ երբ փակվեցին հայկական դպրոցները, դարավերջին սկսվեց

84. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ. էջ 20-22: Նաև ՀՀ ԱԱ, ֆ. 57, գ. 2, Գ. 1815, է. 1-2 ձեռագիր-բնագիր:
85. Նրա կենսագրականի մասին տե՛ս նշվ. աշխատ. էջ 911:
86. Վավերագրեր Հայ եկեղեցու պատ. Գիրք Թ. էջ 479:

նաև հայ մամուլի ու գրականության հալածանքը, ազգային հարցեր շոշափող հոդվածներն արգելվում էին մամուլում, փակվում էին հայոց հրատարակչական ընկերությունները, և պետք է ասել, որ արցախահայ դպրոցի համար ստեղծված այդ ծանր կացության շրջանում միակ գործող թեմական դպրոցի արժանավոր տեսուչն էր Բենիկ վարդապետը, որի տեսչության օրոք բավականին առաջադիմություն էր նկատվում Շուշիի թեմական դպրոցում[87]: Համբարձում Առաքելյանը «Թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիրը» աշխատության մեջ գրում է. «Հոգաբարձութիւնը մարտի 13-ին 1901թ. Մ 132 գրութեամբ Բենիկ վարդապետին 3 տարով նույն պայմաններով տեսուչ է հրաւիրում: Տեսչի ջանքերով թեմական դպրոցի աշակերտների թիւն հասաւ 570-ի, մոսկվաբնակ շուշեցիները (Թառումյան, Ժամհարյան, Յուզբաշյան) դպրանոցին նուիրում են 5000 ռուբլի, որ այդ գումարի տոկոսը որդեգիրներ պահւեն իրենց անվանը: 3000 ռուբլի էլ որ դպրանոցի դահլիճը կանոնաւոր կահաւորի»[88]: Համբարձում Առաքելյանն իր աշխատության մեջ մանրամասն ներկայացնում է Բենիկ վարդապետի գործունեությունը թեմական դպրոցում. «Տեսուչի ջանադիր գործունեութեան շնորհիւ լինում են գրական առաւօտներ՝ աշակերտների համար ժողովրդական բանհիւսութիւնից առնւած Ջ-եցոց (զեկուցումներ), տալիս են վերջնական աւարտական շարադրություններ. նիւթերն են թուղթ ընդհանրական, Կիրակոս Գանձակեցի, Եզնիկ, Դաւրիժեցի, գաղթականութեան պատմութիւն, հայոց յարաբերութիւնը ռուսաց հետ հայոց եկեղեցուց տոմար և այլն: Յառաջադեմ աշակերտներին նուիրում են «Ինքն օգնութիւն», «Գաղափարական Քահանայ», «Ոդիսական և Իլիական», Գամառ- Քաթիպայի բանաստեղծությունները, «Հռօ կինը», «Սիրտ», «Ճըշմարտութիւնը միշտ յաղթում է» և այլն»[89]:

Համբարձում Առաքելյանը նաև հիշատակում է, որ 1901-1902 ուսումնական տարում (սեպտեմբերի 11-ից մինչև հունիսի 1-ը) թեմական դպրոցի տեսուչը հրավիրել է 24 մանկավարժական խորհրդի նիստ հրավիրել է ճանաչված լեզվաբանների, հայագետների՝ Հր. Աճառյանին, Սամվել Գյուլզադյանին, Հայկ Հովհաննիսյանին, Կարապետ Թունաբեկյանին, Արշակ Տեր-Ոսկանյանին, Գարեգին Գուլիքևխյանին և ուրիշներ: Նրանք առօրյա հրատապ պահանջ էին համարում ավանդվելիք առարկաների դասավանդումը բարձր հիմքի վրա դնելը և գործադրում էին ուսուցման գործընթացն ակտիվացնող առաջավոր մեթոդներ:

«Արարատ» ամսագրում թեմական դպրոցի ուսուցիչ Կարապետ քահանա Վարդապետյանի տպագրված հոդվածում[90] նշվում է, որ թեմական դպրոցի տեսուչ Բենիկ Վարդապետն առաջին իսկ օրից հոգաց դպրոցի բարեկարգման և ուսուցիչների վիճակի բարելավման մասին: Նրա շնորհիվ թեմական դպրոցն առաջադիմեց և արժանացավ թե՛ ուսուցիչների և թե՛ Շուշիի հայ հասարակության համակրանքին: «Նրա տեսչության շրջանում,- շարունակում է հոդվածի հեղինակը,- դպրանոցն ստանում է Հայաստանից, Թիֆլիսից, Մոսկվայից պարբերականներ՝ «Արարատ», «Աղբյուր», «Բազմավեպ», «Գուքան», «Լումայ», «Մուրճ», «Հանդես Ամսօրեայ» (Արևմտահայ պարբերական), «Տարազ», “Вестник воспитания”, “Педагогический сборник”, “Вопрос философии и психологии”, «Մշակ»,

87. Լեո, նշվ. աշխ., էջ 578:
88. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 66-67:
89. Նույն տեղում:
90. «Արարատ», 1902, թ. 3, էջ 182-183:

«Նոր դար» և այլն[91]: Հոդվածի հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է Բենիկ վարդապետի տեսչության շրջանում Շուշիի թեմական դպրոցում կազմակերպված բազմաբնույթ դաստիարակչական միջոցառումները: Ուշագրավ է հատկապես հայ մեծ գրող, մանկավարժ, թեմական դպրոցի նախկին ուսուցիչ (1879-1881թթ.) Ղազարոս Աղայանի մանկավարժական գործունեության 40-ամյակին նվիրված գրական ցերեկույթի կազմակերպումը, որտեղ աշակերտներն ու ուսուցիչները հանդես են գալիս զեկուցումներով նվիրված՝ Մեսրոպ Մաշտոցի, Ներսես Շնորհալու, Խ. Աբովյանի, Պերճ Պռոշյանի, Մանուկ Աբեղյանի լուսավորչական, մանկավարժական, գրականագիտական գործունեությանը: Իսկ ամառային արձակուրդներին աշակերտներին հանձնարարում են գրել ստեղծագործական շարադրություններ[92]:

Արխիվային փաստաթղթերից[93] և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Բենիկ Վարդապետի տեսչության շրջանում թեմական դպրոցում ամեն տարի կազմակերպվում էին ցուցահանդեսներ՝ ներկայացնելով աշակերտների լավագույն աշխատանքներից նմուշներ, գրաբար և աշխարհաբար շարադրություններ, նկարներ, ձեռագործեր (Շուշիի օրիորդաց դպրոցի աշակերտուհիների) և այլ նյութեր: Մանկավարժական ժողովներում շնորհալի և ուսման առաջադեմ աշակերտներին խրախուսում էին զանազան նվերներով: Արտադասարանական միջոցառումները միաժամանակ նպատակ ունեին աշակերտների մեջ դաստիարակելու բարոյական վսեմ հատկություններ, գեղագիտական ճաշակ, զարգացնելու նրանց ձիրքերն ու ընդունակությունները արվեստի տարբեր բնագավառներում:

Դաստիարակչական նշանակություն ունի նաև թեմական դպրոցի խառը ժողովներում (ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ) շնորհալի աշակերտներին խրախուսելը, անկարգներին պատժելը, աշակերտների վարքի գնահատումը՝ դասարանում, ընթերցասրահում, միջանցքում, բակում և այլուր: Բենիկ Վարդապետի տեսչության շրջանում գնահատվել է նաև աշակերտների վարքը: Օրինակ, Լեոն վկայում է, որ 1902-1903 ուստարում (մինչև դպրոցի փակվելը) Շուշիի թեմական դպրոցում ոչ մի աշակերտ չի արձակվել վատ վարքի համար: «Ընդհակառակը, աշակերտների մեջ նկատվում էր մի առանձին հարգանք ու սեր դեպի վարչությունն ու ամբողջ ուսուցչական խումբը և գիտակցական վերաբերմունք դեպի իրենց պարտականությունները և ուսումնարանական նոր կարգ ու կանոնները»[94]:

Բենիկ վարդապետի տեսչության շրջանում՝ 1903թ. դեկտեմբերի 10-ին, ստացվում է էջմիածնի Սինոդի հրամանը՝ Կովկասի քաղաքական մասի կառավարչապետի կարգադրությամբ (1903թ. հունիսի 12-ին ընդունած օրենքի համաձայն) փակել նաև Շուշիի թեմական դպրոցը: Ելիզավետպոլի նահանգապետը նախազգուշացնում է դպրոցի տեսուչներին, որպեսզի փակման ժամանակ անկարգություններ չլինեն, քանի որ տեղական իշխանություններն իսկույն կճնշեն դրանք[95]: Դպրոցը փակելուց հետո ամբողջ գույքը ցուցակագրելով, հանձնվում է առաջնորդին, իսկ շինությունը՝ օրենքի համաձայն, անցնում է կառավարության ձեռքը՝ իբրև եկեղեցական իշխանությանը պատկանող կալվածք:

91. Նույն տեղում: Նաև տե՛ս Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 68:
92. Տե՛ս «Արարատ», 1902, թ. 3, էջ 184:
93. ՀՀ ԱԱ, ֆ.56, g.3, գ.78, թ.10, գ.543, թ.12: Նաև տե՛ս Հ. Առաքելյան, նշվ. աշխ. էջ 89:
94. Լեո, Շուշիի թեմակ. դպ. պատմ., էջ 685:
95. Լեո, նշվ. աշխ., էջ 579-580:

Ինչպես Անդրկովկասի հայաշատ վայրերում, այնպես էլ Արցախում հետզհետե ավելի ու ավելի են ծավալվում դժգոհությունները ցարիզմի այդ ստոր քաղաքականության կապակցությամբ: Շուշիի թեմական դպրոցի փակումը և գույքի ընդունումը լուրջ ընդհարումներ առաջացրին: Ուժեղ դիմադրություն ցույց տվեց Շուշին, մոլեգնեց ժողովրդական ցասումը: Այստեղ հակացարական խմորումները լայն տարածում էին ստացել: Բենիկ Վարդապետի նախաձեռնությամբ թեմական դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները կազմակերպում էին բողոքի ցույցեր[96], ժողովներ և որոշում էին պայքարի ելնել՝ պաշտպանելու իրենց իրավունքները: Նման ցույցեր են կազմակերպում նաև Շուշիի ռեալական ուսումնարանի հայ աշակերտներն ու ուսուցիչները: Նահանգապետի կարգադրությամբ աքսորվեցին հակացարական ցույցերի մասնակիցները, այդ թվում՝թեմական դպրոցի տեսուչ Բենիկ Վարդապետը, իսկ դպրոցի շենքը վերածվեց զորանոցի[97]:

Համբարձում Առաքելյանն իր աշխատության մեջ հիշատակում է, որ Բենիկ վարդապետն ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, այնուհետև Օդեսայի համալսարանի փիլիսոփայա-մանկավարժական գիտությունների բաժինը, եղել է Երևանի թեմական և Երևանի թեմի դպրոցների տեսուչ: Աքսորավայրից վերադառնալով՝ կաթողիկոսի թույլտվությամբ աշխատել է Երևանի թեմական դպրոցում, դասավանդել փիլիսոփայություն, պատմություն, մանկավարժություն և կրոնական առարկաներ: Ինչպես նշեցինք, Ամենայն Հայոց Մատթեոս Բ Կաթողիկոսի կոնդակով 1910թ. Բենիկ Վարդապետը նշանակվել է Արցախի թեմի առաջնորդ: Եվ չնայած այն հանգամանքին, որ նրա նկատմամբ իրականությանը չհամապատասխանող բողոքներ կային և թեմի ներսում շարունակում էր անհամերաշխ մթնոլորտ տիրել, այնուամենայնիվ, իր կարճատև գործունեության ընթացքում շատ բան արեց թեմական դպրոցի զարգացման, ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների հրատարակման, մանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ: Որպես թեմակալ առաջնորդ՝ նշանակալի գործունեություն է ծավալել թե՛ դպրոցաշինության և թե՛ շինարարական-վերանորոգչական ասպարեզում: Բենիկ Վարդապետը ջանում էր երկրամասում կենդանի պահել մշակութային օջախների շունչը:

<u>Զավեն Բաբայանց:</u> Արցախի թեմի հոգևոր առաջնորդ (1911-1916թթ.): Որպես թեմակալ առաջնորդ նրա արգասավոր գործունեության շնորհիվ զգալի տեղաշարժ է կատարվում քննարկվող ժամանակաշրջանում Արցախի հոգևոր-մշակութային կյանքում: «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան (Գիրք Թ)[98]» աշխատության տվյալների համաձայն՝ Արցախի թեմակալ առաջնորդ է նշանակվել Ամենայն Հայոց Մատթեոս Բ Կաթողիկոսի 1911թ. մայիսի 2-ի կոնդակով: Մինչ այդ եղել է Բաքվի գործակալութեան ղեկավարի պաշտոնում, ինչպես նաև տեղի հոգաբարձուների խորհրդի անդամ և հայոց բարեգործական ընկերության նախագահ»[99]: Մշակութա-լուսավորչական, եկեղեցաշինական, դպրոցաշինական ծրագրերի իրականացման ուղղությամբ նրա ծավալած եռանդուն գործունեության մասին մի շարք վկայություններ կան «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», Լեոի «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի»,

---

96. Նույն տեղում: Նաև տե՛ս Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 69:
97. Լեո, նշվ. աշխ., էջ 578:
98. Տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ, էջ 526-527, էջ 596-198, 907:
99. ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1820, թ. 45 ձեռագիր, Գ. 1830, թ. 47-48:

Համբարձում Առաքելյանի «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիրը (նվիրված դպրոցի 75-ամյակին)», Ս.Խուդոյանի «Արևելահայ դպրոցները 1830-1920թթ.» աշխատություններում, ինչպես նաև Հայաստանի Ազգային արխիվի բազմաթիվ փաստաթղթերում (ֆ. 56, g.3, գ. 78, գ. 54, ֆ. 57, g. 2, գ. 1811, թ. 1-12, գ. 1908, թ. 3-19 և այլն), Շուշիում լույս տեսած պարբերականներում («Ղարաբաղ», «Միրաժ», «Փայլակ»), Ղարաբաղի դպրոցների տեսուչ Առաքել Առաքելյանի (1911-1914թթ.) հաշվետվություններում և այլ աղբյուրներում:

Հայկական դպրոցների վերաբացումից հետո (1905-1906թթ.) 1906-1916 թվականները շրջադարձային եղան արցախահայության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Արցախի թեմի արժանավոր առաջնորդների՝ Գրիգոր արքեպիսկոպոսի, Աշոտ եպիսկոպոսի, Բենիկ վարդապետի, թեմական դպրոցի տեսուչների և այլոց հոգևոր-մշակութային բեղուն գործունեությունը (1903-1911թթ.) նախադրյալներ ստեղծեցին դարի երկրորդ տասնամյակում արցախահայ մշակույթի, դպրոցի, լուսավորության, եկեղեցաշինության և այլ ոլորտներում հետագա առաջընթացի համար: Սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշակի զարգացման արդյունքում այդ տասնամյակում մշակույթի այլ բնագավառների հետ մեկտեղ երկրամասում սկսեցին զարգանալ լուսավորությունը, դպրոցը, հրատարակչական գործը: Լուսավորության բնագավառի ներկայացուցիչները եռանդուն գործունեություն են ծավալում նաև պարբերականներ հրատարակելու ասպարեզում:

Զավեն եպիսկոպոս Բաբայանցի առաջնորդության շրջանում համեմատաբար զգալի աշխատանքներ են կատարվել դպրոցաշինության, եկեղեցաշինության, Շուշի քաղաքի բնակելի տների վերակառուցման, ճարտարապետության զարգացման ասպարեզում, այդ թվում նաև թեմի մեջ մտնող Նուխիի գավառում: Այդ նպատակով թեմի առաջնորդն իր մոտ խորհրդակցության է հրավիրում կոնսիստորիայի անդամներին, Շուշիի և Նուխիի հայ հասարակության աչքի ընկնող ներկայացուցիչներին, ներկայացնում երկրամասի ժողովրդի անմխիթար ներկան և նրան այդ վիճակից հանելու անհրաժեշտության հրամայականը, միաժամանակ ծանոթացնում էջմիածնի Սինոդին ներկայացրած իր զեկուցագրին. «Համառոտ տեղեկագիր Ղարաբաղի թեմի հայ ազգաբնակության հոգևոր-վարչական, դպրոցական և կալուածական դրութեան մասին» (էջմիածնի Սինոդին, յունվար 1911 (1912թթ.)[100]:

Ներկայացնելով թեմում տիրող ընդհանուր իրավիճակը, թեմական առաջնորդը զեկուցագրում իր մտահոգությունն էր արտահայտում դպրոցական գործի վիճակի, հատկապես պատմական նշանակության վանքերի ավերման և քայքայման փաստի կապակցությամբ. «Ամբողջ Ղարաբաղը զարդարող և պատմական նշանակութիւն ունեցող, իր ժամանակին հայ ժողովրդի քաղաքականութեան նկատմամբ որոշ դեր կատարած վանքերն, այժմ ըստ մեծի մասին ոչ միայն պատմութեան սեփականութիւն են դարձել, այլև դատապարտուել են յաւիտենական մոռացութեան, ենթարկւելով աւերման, քայքայման և ամայութեան»:

Ինչպես բխում է զեկուցագրի բովանդակությունից, քաղաքական ծանր իրավիճակում է հայտնվել դարեր շարունակ ժողովրդին ոգեշնչող և համախմբող մեր

100. Այդ մասին (զեկուցագիրը բաղկացած է 20 էջից) տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան Գիրք Թ., էջ 544-552: Նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 57, g.2, գ.1908, թ.3-19 ձեռագիր-բնագիր:

հոգևոր հաստատությունը և այդ վիճակով մտահոգ Զավեն եպիսկոպոսը, նախ, կատարում է իր առաջարկությունները՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով, միաժամանակ հույս հայտնում, որ «Ժամանակի պահանջ հանդիսացող վերոյիշեալ պայմաններն ի կատար ածելով, մենք կարող կը լինենք քիչ թե շատ բարեկարգել, ինչպես մեր վարչական, կրթական և այլ հաստատութիւնները, այնպես էլ մեր հարուստ կալուածները և շահագործել նրանց մեջ թագնուած հարստութիւները ի օգուտ և ի պայծառութիւն Ս. էջմիածնի, ինչպես Ղարաբաղի, այնպէս և ընդհանուր հայ ժողովրդի և մեր ազգային կրթական և կուլտուրական հաստատութիւնների»[101]:

Էջմիածնի Սինոդը, Ռուսական իշխանությունները 1912թ. Զավեն եպիսկոպոսին թույլատրեցին կազմակերպելու հանգանակություն՝ Ղարաբաղի սահմաններից դուրս նույնպես մեծ հեղինակություն վայելող Շուշիի թեմական դպրոցի հոբելյանական 75-ամյակը նշելու, միաժամանակ կրթօջախի, ինչպես նաև թեմի միդասյա և երկդասյա դպրոցների նյութական պայմանները բարելավելու նպատակով: Ձեռնարկված միջոցառումները, իրավամբ, շուտով տվեցին իրենց դրական արդյունքները: Այսպես, օրինակ, արխիվային մի փաստաթղթում[102] կարդում ենք, որ բաքվաբնակ շուշեցի Նիկոլայ Առաքելյանն իր դստեր հիշատակը հարգելու համար 50 հազար ռուբլի գումար է նվիրել հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղին՝ դպրոցական շենքերը, եկեղեցիները և այլ բնակելի շենքեր վերակառուցելու նպատակով. «Մշակ» թերթը[103] հետաքրքիր փաստ է բերում իր 1913թ. հուլիսի համարում: Թերթը ընթերցողներին պատմում է, որ շուշեցի Նիկիտա Խանդամիրյանի բարեկամ՝ մոսկվաբնակ Ա. Խանդամիրյանը իր հարստությունից 10 հազար ռուբլի կտակեց թեմական դպրոցին, 2 հազար ռուբլի Ղազանչեցոց եկեղեցու վերանորոգման, 3 հազար ռուբլի՝ աղքատանց ընտանիքների բնակելի շենքերի վերանորոգմանը: Նման բարերար գործ են կատարում նաև շուշեցի բաքվաբնակ պարոնուհի Ղարաբեկյանցը (1000 ռուբլի), Պողոս Ալեքսանյանը (3000 ռուբլի), Նուխեցի պարոն Ախվերդյանը (10000 ռուբլի) նվիրում է Ճալեթ գյուղի հասարակությանը՝ բարեկարգելու տեղի Ս. Աստվածածին վանքը և այլն:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ թեմի առաջնորդի զեկուցագիր-կոչին արձագանքում է երկրամասի հայ հասարակությունը: Գյուղական վայրերում նույնպես հանգանակություն էին կատարում և հավաքած գումարները հատկացնում կրթօջախների վերանորոգչական աշխատանքներին:

Դպրոցական գործով մտահոգված թեմակալ առաջնորդը կոնսիստորիայի նիստում թեմի հայ հասարակության ներկայացուցիչներին, թեմական դպրոցի տեսուչներին, հոգաբարձուներին և Նուխիի հայ հասարակության ներկայացուցիչներին կարգադրում է ընդլայնել միդասյա, երկդասյա դպրոցների ցանցը, որոշ փոփոխություններ կատարել դպրոցների ներքին կյանքում, ապահովել որակյալ ուսուցչական կադրերով: Զավեն եպիսկոպոսն իրավացիորեն նշում է, որ մեր ազգային դպրոցի նպատակն է կրթել մանուկ սերնդին և սովորեցնել այնպիսի առարկաներ, այնպիսի գիտություններ, որոնք կնպաստեն նրանց բազմակողմանի զարգացմանը. «Հայ եկեղեցին միշտ ընդունած նախանձախնդիր վերաբեր-

101. Նույն տեղում, էջ 599: Նաև Մ. Բալայանի նշվ. աշխ., էջ 204-205:
102. ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1815, 1-12 ձեռագիր, բնագիր:
103. «Մշակ», 1912-1913թթ. համարները...

մունք է ունեցել մանուկների դաստիարակութեան խնդիրների հանդէպ, միշտ այդ ոլորտը եղել է հոգածութեան առարկայ և ուշադրութեան կենտրոնում»[104]:

Հավաքված հայ մտավորականները, տեսնելով թեմի առաջնորդի ձեռնարկած բարենորոգչական ու շինարարական մեծ աշխատանքները, համախմբվում են նրա շուրջը, իրենց պատրաստակամությունը հայտնում դպրոցների բացման, շենքերի կառուցման, վանքերի ու եկեղեցիների վերանորոգման համար կատարել նվիրատվություններ և ամեն կերպ օգնել, նպաստել նրա ձեռնարկած ազգաշահ գործին: Եվ այսպես, արցախահայ հասարակության մեջ և նրա սահմաններից դուրս բնակվող արցախահայերի (Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում և այլ քաղաքներում) շրջանում սկսվում է դրամական, շարժական ու անշարժ կայքի, մեծ ու փոքր նվիրատվությունների լայն շարժում:

Համբարձում Առաքելյանը Շուշիի թեմական դպրոցի 75-ամյա պատմությանը նվիրված իր աշխատության մեջ գրում է, որ թեմական դպրոցի 75-ամյակի առթիվ «Մոսկւաբնակ ղարաբաղցի Բաղդասար Արզումանեանի խոշոր նւիրատվութիւնը կազմւում է 200.000 ռուբլի յօգուտ թեմ. դպրոցին[105]: Որպես ուսանելի օրինակ ներկա սերնդին, վկայում ենք մեծ հայրենասեր բարերարի նամակի բովանդակությունը՝ հղած թեմի առաջնորդին. «Ես Շուշի քաղաքացի մոսկւաբնակ Բաղդասար Արզումանեանցս ի վաղուց աչքի առնելով Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի նիւթական անմխիթար վիճակը, որը վտանգ է սպառնում նրա ապագայ լուսատու յարատեւութեան, և կամենալով, որ այդ պատկառելի հիմնարկութեան 75-ամյակը, որ լինում է ներկայումս, գոնէ կարողանար նրան բարձրացնել նիւթապես այնքան, որ նա կարենար մշտական և աւելի լույս տարածել իմ հայրենակից Ղարաբաղի համար կամքովս իմ միջոցներից նւիրաբերում եմ ծննդավայր Ղարաբաղի Շուշի քաղաքի հայոց հոգևոր թեմական դպրանոցին երկու հարիւր հազար ռուբլի նրա ապահովութեան համար, որպիսի գումարը պետք է ընդմիշտ մընայ անձեռնմխելի, իսկ տոկոսիքը իւրաքանչիւր տարի մտնում է նույն դպրանոցի նախահաշւե մեջ»[106]:

«Նոր դպրոց» պարբերականի 1913թ. թ.7-ում տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ Շուշիի թեմական դպրոցի 75-ամյակի հոբելյանի տոնահանդեսի օրը՝ օգոստոսի 10-11-ին, Բաղդասար Արզումանյանից կողմից արված խոշոր նվիրատվության հետ միասին արել են նաև ուրիշ անհատներ՝ Միքայել Արամյանը (30 հազար ռ.), Մկրտիչ Հովհաննիսյանը և Սուրեն Ադամյանը (20000 ռուբլի), Պողոս Ղուկասյանը (10 հազար ռուբլի), Դավիթ-Խան-Ավան Յուզբաշյանը (մի տպարան և 10 հազար ռ.), Մնացական Խունունցը (7 հազ. ռ.) Գրիգոր Առաքելյանը (5 հազար ռ.), Արշակ Ղուկասյանը (3 հազ. ռուբ.), Մանուչար Ավագյանը և Մարկոս Դոլուխանյանը (3 հազարական ռուբլի) և շատ ուրիշներ: Ընդամենը, մինչև թեմական դպրոցի հանդեսի օրը, յօգուտ թեմական դպրոցի ստացված էր 317, 624 ռուբլի 95 կոպեկ»[107]:

Անժխտելի փաստ է, որ դարի երկրորդ տասնամյակում թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոսի եռանդուն գործունեության շնորհիվ գյուղերում բացվեցին մի-

104. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1908, թ. 3-19 ձեռագիր-բնագիր, նաև «Վավերագրեր հայ եկեղեցու պատմ.», էջ 22:

105. Մանրամասն տե՛ս Հ. Առաքելյան, Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, ուսումնական մասի համառոտ տեղեկագիր, էջ 76-78:

106. Նույն տեղում, նաև «Նոր դպրոց», 1913, թ. 7: (Ղարաբաղի Հոգևոր թեմակ. դպ. Յոբելյան):

107. «Նոր դպրոց», 1913, թ. 7, էջ 14-16:

դասյա դպրոցներ, Շուշի, Նուխի քաղաքներում, Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի կենտրոններում՝ երկդասյա դպրոցներ, ընդլայնվեց նաև մշակութա-լուսավորական օջախների՝ գրադարանների, ընթերցարանների և այլ հիմնարկների ցանցը, աստիճանաբար բարձրացավ բնակչության գրագիտության մակարդակը: Թեմական առաջնորդի բեղուն գործունեության արդյունքում Շուշիում վերելք են ապրում նաև հայ հրատարկչական գործն ու պարբերական մամուլի հրատարակումը: Հրատարակված բազմաբնույթ գրքերի ու պարբերականները որոշակիորեն նպաստեցին երկրամասի ժողովրդական զանգվածների լուսավորությանն ու զարգացմանը:

Թեմի առաջնորդի մշակութա-լուսավորական ձեռնարկումներից մեկն էլ այն էր, որ առաջին անգամ Շուշի քաղաքում (1912թ. ապրիլ) մեծ շուքով նշվեցին համահայկական երկու մեծ հոբելյաններ՝ հայ տպագրության 400 և հայոց գրերի գյուտի 1500-ամյակը, և Արցախի գրատպության սկզբնավորման ու զարգացման 85-ամյակը (1827-1912թթ.)[108]: Զավեն եպիսկոպոսի նախաձեռնությամբ թեմի գավառներում կազմակերպվեցին բազմապիսի միջոցառումներ՝ երեկույթներ, ցերեկույթներ, գրավաճառության տոնահանդեսներ և ստացված ու հանգանակված գումարները հատկացվեցին Մ.Մահտեսիի, Մ. Բաբաջանյանի տպարաններում նոր հրատարակությունների իրականացմանը:

Բացի լուսավորչական ձեռնարկումներից, թեմական առաջնորդ Զավեն եպիսկոպոսի աշխատանքների թվում կարելի է հիշատակել եկեղեցիների, վանքերի շինարարական, վերանորոգչական լայնածավալ աշխատանքները: Համախմբվելով նրա շուրջը, երկրամասի մտավորականությունը, լայն հասարակությունը ձեռնամուխ եղան հայրենի երկրի բազմադարյա պատմությունը հիշեցնող մատուռների, խաչքարերի, քանդված եկեղեցիների, վանքերի գմբեթների վերականգնման աշխատանքներին: Լեոի վկայությամբ՝ Արցախի թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոսի գործունեության շրջանում խոշոր կառուցողական աշխատանք կատարվեց հատկապես Շուշի, Նուխի քաղաքներում, Վարանդայի, Դիզակի գավառներում և այլուր[109]: Շուշիում լույս տեսած պարբերականների («Միրաժ», «Միություն», «Փայլակ», «Ծիածան և այլն) տարբեր համարներում երկրամասի մշակութային օջախների, լուսավորության, եկեղեցաշինության, հասարակական կյանքին վերաբերող հարցերի քննարկումից բացի, ակտիվորեն հեղինակները լուսաբանում են նաև Զավեն եպիսկոպոսի լուսավորչական գործունեությունն ու արցախահայության կացության հնարավոր փոփոխությունները:

Սակայն, չնայած ժամանակի առաջադեմ գործիչների աջակցությանը, Զավեն եպիսկոպոսի ծավալած հոգևոր-մշակութային, լուսավորչական գործունեությունը դժվարությամբ էր ուղի հարթում արցախահայ հասարակական կյանքում: Դա էլ պայմանավորված էր ժամանակաշրջանում տիրող քաղքական բարդ իրադարձություններով: Այնուամենայնիվ, նշանավոր հոգևոր գործիչն ամուր հիմքեր ստեղծեց երկրամասի մշակույթի, լուսավորության, կրթական օջախների հետագա զարգացման համար:

Արխիվային փաստաթղթերից[110] և այլ աղբյուրներից[111] տեղեկանում ենք, որ

108. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 72-74:
109. Լեո, նշվ. աշխ., էջ 588-589:
110. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 589, 1-2 ձեռագիր-բնագիր:
111. «Վավերագրեր», Գիրք Թ. նշվ. աշխ., էջ 600, 913:

1916թ. ապրիլի 20-ին, Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսի հայրապետական կոնդակով Զավեն եպիսկոպոս Բաբայանցն ազատվեց Արցախի թեմակալ առաջնորդի պաշտոնից:

Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյան: Արցախի թեմի առաջնորդ (1916-1920թթ.): Նշանակվել է Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսի հայրապետական կոնդակով 1916թ. ապրիլի 20-ին, այդ պաշտոնում փոխարինելով Զավեն եպիսկոպոս Բաբայանցին: Նրա եռանդուն գործունեության մասին մի շարք վկայություններ կան «Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան» աշխատության մեջ և այլ աղբյուրներում: Ավարտել է Շուշիի հոգևոր սեմինարիան (1886թ.), նույն թվականի նոյեմբերի 19-ին ձեռնադրվել աբեղա: Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանից վարդապետական կոչում է ստացել 1887թ. հուլիսի 16-ին և նշանակվել Արցախի թեմի Նուխիի առաջնորդական փոխանորդ, Ս. Էջմիածնի Սինոդի անդամ: 1896թ. կոնդակով ազատվում է այդ պաշտոնից:

1913թ. փետրվարի 27-ին նշանակվել է Տաթևի վանքի վանահայր: 1916թ. ապրիլի 30-ին նշանակվել է Արցախի թեմի առաջնորդ: 1917թ. Գարեգին Ծ. վարդապետ Հովհաննիսյանի, Գևորգ վարդապետ Չորեքչեանի հետ օծվել է եպիսկոպոս[112] և ազգաշահ առաքելությամբ նվիրվել հայրենի ժողովրդին լուսավորելու վեհ գործին:

Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Գրիգորյանի գործունեությունը համընկնում էր առաջին համաշխարհային պատերազմի, թուրքական իրար հաջորդող արշավանքների ժամանակներին: Համաշխարհային պատերազմի ու թուրքական ասպատակությունների արհավիրքին ավելացավ նաև 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում սկսված սոցիալիստական հեղափոխությունը, որի հետևանքով Ռուսաստանում ստեղծված խառնակ իրավիճակն իր անմիջական անդրադարձներն ունեցավ նաև կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների և, մասնավորապես, հայ ժողովրդի վրա: Արխիվային մի վավերագրում այսպես է արտացոլվում ժամանակաշրջանի խառնակ իրավիճակը. «Համաշխարհային պատերազմի Կովկասեան ճակատում, ուր սուր և յստակ էին մեծ տէրութիւնների շահերն ու հեռահար նպատակները, իրադարձութիւներն աւելի ու աւելի մռայլ և վտանգաւոր բնույթ էին ստանում քրիստոնեա հայի համար: Ռուսական յեղափոխութիւնն առ աւելի ևս սրեց ու արագացրեց իրադարձութիւնների ընթացքը»[113]:

«1918թ. փետրուարին օսմանացիք յառաջացան դէպի Հայաստան, այս սարսափելի լուրը ծանր ճնշեց Ղարաբաղի հայոց վրայ, որոնք չուզեցին դիմադրել թուրքերու յառաջխաղացումին, և սեպտեմբեր 25-ին թույլ տուին, որ 5000 թուրք զինուորներ Շուշի մտնեն»[114]:

Իհարկե, ստեղծված այդ քաղաքական բարդ իրադրության, ազգամիջյան ընդհարումների ժամանակաշրջանում անհնարին է դառնում թեմի առաջնորդարանի բնականոն գործունեությունը: Սակայն նշենք, որ ինչպես միշտ՝ հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններում, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ենթարկվելով օտար նվաճողների ու վայրագ ցեղերի ասպատակություններին, հայ ժողովուրդն ամենաօրհասական պահին անգամ երբեք չի

112. Նրա կենսագրականի մասին տե՛ս «Վավերագրեր», գիրք Թ., էջ 913:
113. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ.57, ց. 2, գ. 1253, թ. 5, ձեռագիր-բնագիր: Նաև տե՛ս Տ. Ջաւէն Ա. Քինյ. Արզումանեան, Ազգապատում, հատոր Դ. գիրք Ա. նիլ. Եորք, 1995, էջ 235:
114. Նույն տեղում:

կորցրել հոգու արիությունը և մտքի սլացքը, այդ դժնդակ ժամանակաշրջանում էլ մեր հոգևոր առաջնորդները չեն կորցրել իրենց հոգեկան կորովը, ամենադժվարին պայմաններում միջոցներ ու հնարներ են գտել մշակութային ամենաբազմազան դրսևորումներում արտահայտելու իրենց հույզերն ու ձգտումները, կոչ անելով ժողովրդին մաքառել իր գոյության, մշակույթի և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող կրթական օջախների համար:

Արցախահայության համար ստեղծված այդ ծանր իրավիճակում թեմակալ առաջնորդ Վահան եպիսկոպոսը հետևողականորեն զբաղվել է երկրամասի ժողովրդի լուսավորության հարցերով, խորին համոզվածությամբ ծավալել իր եկեղեցասիրական, ազգասիրական քարոզչությունը՝ արցախահայ հասարակական կյանքում եկեղեցու գերիշխող դերն ապահովելու համար: Նրա եզրահանգմամբ՝ չնայած ստեղծված ծանր իրավիճակին, այնուամենայնիվ, ազգի բարեկեցության և առաջընթացի հիմնական նախապայմանը լուսավորվելն է, դպրոցներ կառուցելը, կանանց ու աղջիկներին կրթելը, ինչն ազգի իմացական, բարոյական ու նյութական բարօրության հիմքն է:

Այդ նպատակով էլ թեմի առաջնորդն իր գործունեության առաջին օրվանից, չնայած առաջացած աննպաստ պայմաններին, ձեռնամուխ եղավ մի շարք անհետաձգելի միջոցառումների իրականացմանը: Կոնսիստորիայի 1916թ. հունիսին[115] հրավիրված նիստում (մասնակցում էին Շուշիի, Նուխիի հայ հասարակության ներկայացուցիչները, թեմական դպրոցի տեսուչները, հոգաբարձուները և ուսուցիչների մի մասը) դիմելով մասնակիցներին, ասում է, որ նման ծանր իրադրության մեջ պետք է մաքառել ու պահպանել հայոց ազգային կրթական օջախների կենսահաստատությունը. «Դպրոցների գոյութիւնը պետք է պահպանել անհրաժեշտաբար, ինչ գնով ուզում է լինի, անհրաժեշտ է վճարել ուսուցիչների ռոճիկները կանոնաւոր կերպով, ապահովել նրանց ամեն պարագայում, որպեսզի չտուժի դպրանոցի կրթական գործը և ուսուցչութիւնը հնարաւորութիւն ունենայ անթերի կատարել իր մանկավարժական պարտականութիւնը»[116]:

Ժողովրդին թշվառ վիճակից դուրս բերելու և նրա առաջադիմությունն ապահովելու գործում Վահան եպիսկոպոսը որոշիչ նշանակություն էր տալիս լուսավորությանը: Այստեղից հետևում էր, որ կրթությունը, լուսավորությունը ժողովրդին կընձեռեն ազատագրման հնարավորություններ: Խիստ մտահոգված լինելով երկրամասի ժողովրդի ծանր վիճակով, նա շրջագայում է Շուշիի, Նուխիի գավառների գյուղերը, կոչ անում արցախահայերին հզոր ուժ կազմել ոչ միայն թուրքական, այլև անգլիական կամայականության դեմ, չգաղթել երկրից, որովհետև քանի դեռ հայերը բազմաթիվ կլինեն Արցախում, Հայաստանում, Թուրքիայի և Անգլիայի համար շատ դժվար կլինի ոտնակոխ անել մեր երկիրը: Թե թեմակալ առաջնորդ Վահան եպիսկոպոսը և թե թեմի մյուս հոգևոր հայրերը, ազգային առաջադիմության գործում որպես վճռական գործոն ընդունելով լուսավորությունը, կրթական օջախների կենսահաստատությունը, դրա հետ մեկտեղ չէին բացառում ժողովրդի զինված պայքարն ընդդեմ օտար զավթիչների բռնության: Նրանք լիովին արդարացնում էին ժողովրդական ազատագրական շարժումները՝ ուղղված հակաժողովրդական քաղաքականություն վարող կառավարությունների դեմ

115. «Վավերագրեր», Գիրք. Թ., էջ 620:
116. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 589, թ. 17-18, ձեռագիր-բնագիր:

և կոչ են անում անողոք պայքարել հանուն ազատության, անկախության ու լուսավոր ապագայի:

Հայտնի է, որ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Շուշի քաղաքի, գավառի գյուղերի մի մասը ավերվել է, քարուքանդ էին եղել նաև շատ եկեղեցիներ, բնակելի շենքեր, բնակչության մի մասը ցրվել էր տարբեր հայաշատ վայրեր՝ Վրաստան, Բաքու, Ռուսաստան և տոչորվում հայրենիքի կարոտից, մի մասն էլ անելանելի վիճակում պահպանում էր իր գոյությունը: Թեմի առաջնորդը նամակ է ուղարկում Մայր Աթոռ, որում մանրամասն ներկայացնում է թուրքական հարձակումների հետևանքով, ստեղծված կացությունը, եկեղեցիների ու վանքերի բացահայտ կողոպուտն ու ավերվածությունները, միաժամանակ կոչ անում արցախցիներին վերադառնալ հայրենի երկիր, վերակառուցել քանդվածը, այրվածը, շենացնել և բնականոն հուն փոխադրել կյանքը:

Հիրավի, ժամանակաշրջանի քաղաքական բարդ իրադրության, ազգամիջյան ընդհարումների շրջանում անհնարին էր բեղուն լուսավորչական գործունեություն ծավալել: Այնուամենայնիվ, Վահան եպիսկոպոսը հնարավորինս ջանում է նպաստավոր պայմաններ ստեղծել՝ գավառի գյուղերում պահպանելու կրթական օջախների գոյությունը: Օրինակ, ըստ արխիվային փաստաթղթերի, Հադրութի (Դիզակի գավառ) Ս. Թարգմանչաց միդասյա դպրոցը վերաբացվել է 1916-1917 ուսումնական տարում, ունեցել 180 աշակերտ, 5 ուսուցիչ, դպրոցը պահվում էր մոսկվաբնակ և թիֆլիսաբնակ հադրութցի բարերարների միջոցներով[117]: Մի այլ փաստաթղթում նշվում է, որ Նուխիի Ս.Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1905թ.: 1914-1915 ուստարում դարձյալ փակվել է, բայց ահա թեմի առաջնորդի աջակցությամբ վերաբացվել 1916-1917 ուսումնական տարում՝ ունենալով 185 աշակերտուհի, 6 ուսուցիչ-ուսուցչուհիներ[118]: Թեմական առաջնորդի եռանդուն գործունեության շնորհիվ մի շարք գյուղերում պահպանվել են լուսավորական օջախները՝ դպրոցները, գրադարան-ընթերցարանները: Եվ, չնայած ժամանակաշրջանի բարդ իրադարձությունները բացասաբար էին անդրադառնում նրա գործունեության վրա, այնուամենայնիվ, Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանն աշխատում էր մեծ ոգևորությամբ: Նա ամեն կերպ ձգտում էր բարելավել արցախահայության ծանր կացությունը՝ ուժեղացնելով նրանց պաշտպանվածությունը: Այդ նպատակի իրականացման համար արցախահայության ազատագրման, նրա ինքնուրույնության և միասնության (Հայաստանի հետ) վերականգնման միակ ելքը համարում էր զինված պայքարը և այս գաղափարով ժողովրդին ոգեշնչելու համար բազմաթիվ օրինակներ է բերում հայ ժողովրդի պատմական անցյալից:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններին, այնուամենայնիվ, Արցախի թեմի հոգևոր-մշակութային նշանավոր գործիչները և շատ այլ անվանի հայ մտավորականներ մշակույթի տարբեր ոլորտներում հնարավորինս բեղուն գործունեություն են ծավալել և նախադրյալներ ստեղծել դպրոցի, լուսավորության, մշակույթի այլ ոլորտների հետագա զարգացման համար: Արցախի թեմական առաջնորդները կարողացել են ստեղծված ծանր իրավիճակում, նույնիսկ օր-

117. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ.56, g.3, գ.543, թ. 12, գ.492, թ.122: (Արխիվային փաստաթղթում բարերաների անունները չեն նշվում):
118. Նույն տեղում, թ. 271:

հասական պահին (1905-1920թթ.) երկրամասի ժողովրդին դուրս բերել թշվառ վիճակից, բնականաբար, որպես առաջնահերթ հրամայական, նրա առաջադիմության գործում որոշիչ նշանակություն տալով լուսավորությանը: Նրանք կոչ էին անում ժողովրդին միաբանությամբ պայքարել ազատության ու անկախության համար: Հիրավի, դարեր ի վեր, ինչպես և մեր ուսումնասիրվող ժամանակաշրջանում, հայ եկեղեցին, լուսավորչական դավանաբանությունը եղել է որպես հայ ժողովրդի ազգապահպանման հիմնական միջոց, անկախության, ազատության համար ծավալված ժողովրդական շարժումների նախաձեռնող, իսկ եկեղեցական ականավոր գործիչները խորին համոզվածությամբ ծավալել են արգասավոր լուսավորչական գործունեություն ու ազգասիրական քարոզչություն:

6. Արցախի կին լուսավորիչ-մանկավարժների գործունեությունը 1850-1920թթ.

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում արցախահայության լուսավորության, մասնավորապես, դպրոցական գործը՝ մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, եղել է նաև հայրենասիրության գաղափարներով տոգորված կին լուսավորիչ-մանկավարժների ուշադրության կենտրոնում: XIX դարի 50-ական թվականներից սկսած՝ Արցախի կին լուսավորիչ-մանկավարժներն ակտիվորեն մասնակցել են երկրամասի հասարակական, քաղաքական աշխատանքներին, արցախահայության համար ստեղծված ամենածանր պայմաններում անգամ, հետևողականորեն, տղամարդկանց համահավասար զբաղվել երկրամասի ժողովրդի լուսավորության հարցերով՝ չխնայելով ջանք ու եռանդ, իսկ անհրաժեշտության և վճռական պահերին՝ կյանքը զոհաբերել այդ նպատակների իրականացման համար: Մեր աշխատության այս բաժնում փորձել ենք արխիվային փաստաթղթերի, մամուլի, ամսագրերի և այլ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա հնարավորինս համառոտ ներկայացնել 1850-1920թթ. Արցախի կին լուսավորիչ-մանկավարժների ծավալած լուսավորչական, ազգանվեր և ազգապահպան գործունեությունը: Բնականաբար, փաստագրական նյութերի բացակայության պատճառով հնարավոր չի եղել աշխատության մեջ ընդգրկել բոլոր նշանավոր կին գործիչներին:

Ինչ խոսք, նրանք բոլորն էլ արժանի են դրվատանքի և բարձր գնահատանքի:

Արցախի կրթական համակարգի պատմության տարբեր շրջաններում՝ 1850-1920թթ., հայտնի և անհայտ բազմաթիվ ուսուցիչների հետ մեկտեղ կին լուսավորիչ-մանկավարժներն անմնացորդ նվիրվել են աճող սերնդի կրթության ու դաստիարակության սուրբ ու պատվավոր գործին, ինչպես նաև երկրամասի մշակույթի զարգացմանն ու առաջընթացին:

XIX դարի 50-60-ական թթ. հայ իրականության մեջ ծավալվող հասարակական-քաղաքական և մանկավարժական շարժումն իր բարերար ազդեցությունն է ունենում նաև Արցախում: Այստեղ ևս սկսում են զարգանալ մանկավարժական միտքն ու կրթական գործը: Այդ տարիներին նոր ժամանակների պահանջներին համապատասխան ձևավորվում է հայ ազգային դպրոցն իր բնորոշ առանձնահատկություններով: Միաժամանակ գործում են եկեղեցական-ծխական, հոգևոր, թեմական, իգական դպրոցներ: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում, մեծ աշխատանք է տարվում կրթական միասնական համակարգ ստեղծելու ուղղությամբ: Հայ մտավորականը, հարազատ ժողովրդին ծառայելու նպատակներով խանդավառված, նախընտրում է աշխատել նաև մանկավարժության բնագավառում:

Հայ և ռուս լուսավորիչ մտածողների ու դեմոկրատների հայացքներով սնված հայ մանկավարժների մի սերունդ (Պ.Շանշյան, Պ.Պռոշյան, Խ. Ստեփանե, Ս. Մանդինյան և ուրիշներ), մասնագիտական բարձրագույն կրթությունը ստացած լինելով արևմտաեվրոպական զարգացած երկրների կենտրոնական քաղաքներում, Ռուսաստանում, մանկավարժական գործունեություն են ծավալում նաև Արցախի թեմի դպրոցներում: Նրանց հետ միասին երկարամյա կամ կարճատև մանկավարժական, լուսավորչական, բարեգործական գործունեություն են իրականացնում նաև երկրամասի կին լուսավորիչ-մանկավարժները:

Արխիվային փաստաթղթերի, հայ դպրոցի պատմությանը նվիրված աշխատությունների և հայ աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մինչև XIX

դարի 60-ական թվականներն Արցախի թեմում գրեթե չկար բարեկարգ իգական դպրոց:

Եղիսաբեթ Սարգսյանց (1834-...՞): Շուշիի կուսանոցի միաբանուհի: Լեոի վկայությամբէ[1], մինչև Մարիամյան օրիորդաց դպրոցի բացումը դարի 50-ական թվականներին Եղիսաբեթ Սարգսյանցն է առաջին անգամ զբաղվել կանանց կրթության հարցերով: «Նա Շուշիում հայտնի էր Աքեր անունով»[2]: Աքեր Եղիսաբեթ Սարգսյանցը կատարում էր Շուշիի հարուստ աղջիկների վարժուհու պաշտոն: Նրա բացած իգական (խալֆայական) մասնավոր դպրոցում սովորում էր 10-15 օրիորդ, որոնք ծնկաչոք սերտում են այբբենարան, սաղմոս, կտակարան»[3]: Ուշագրավ է նշել նաև այն փաստը, որ Եղիսաբեթ Սարգսյանցի մասնավոր դպրոցում անվճար սովորում էին նաև Շուշիի հայ հասարակության աղքատ խավի երեխաները: Հայրենասեր կին լուսավորիչ մանկավարժի մեջ ինքնավստահություն առաջացավ ավելի հաստատուն հիմքի վրա դնելու աղջիկների կրթության գործը: Հետագայում Եղիսաբեթ Սարգսյանցը դասավանդել է նաև Շուշիի Մարիամյան օրիորդաց բարեկարգ դպրոցում:

Մարգարիտ Ալեքսանյան (1838-1902թթ.)[4]: Գեղանկարչուհի, լուսավորիչ մանկավարժ: Ծնվել է Շուշի քաղաքում, 50-ական թվականներին նախնական կրթությունը ստացել տեղի օրիորդաց (Եղիսաբեթ Մարգարյանցի) մասնավոր դպրոցում, այնուհետև զբաղվել ինքնակրթությամբ, հմտացել արվեստի բնագավառում, զբաղվել հայկական գեղագրությամբ ու վայելչագրությամբ:

Դեռ փոքր հասակից Մ. Ալեքսանյանը մեծ սեր ուներ գիր ու գրականության նկատմամբ: Տաթևի վանքում նա տեսնում է շքեղ կազմված մի ավետարան և մտահղանում է զբաղվել գեղանկարչությամբ: Լեոն «Գեղագիր» ալբոմի առաջաբանում նշում է, որ երիտասարդ Մարգարիտն իր սենյակը դարձնում է նկարչական արվեստանոց: Նա պատրաստում է «Հայկական գեղանկարչություն» ալբոմը և հրատարակում[5]:

Երիտասարդ գեղանկարչուհու ձեռնարկած գործերի մեջ ուրույն տեղ է գրավում այն ձեռագիր Ավետարանը, որն այժմ պահվում է էջմիածնի եկեղեցու թանգարանում: Հինգ տարվա (1867-1872թթ.) ընթացքում հայ կինը՝ մշակույթի անխոնջ մշակը, բացառիկ գեղեցիկ ձեռագրով արտագրել է ծավալուն գիրքը՝ չխնայելով իր աչքերի լույսն ու ֆիզիկական տկարությունը: «Տարազ» ամսագրի 1891թ. թ.22-ում տպագրված մի հոդվածում, բարձր գնահատելով Մ.Ալեքսանյանի՝ Արցախի մշակույթին մատուցված ծառայությունները, Լեոն գրել է. «Պետք է հասկանալ նրա գծած յիւրաքանչյուր գծի պատմութիւնը, պետք է իմանալ ինչպիսի հանգամանքների մեջ ձեռքին այդչափ նրբութեամբ, ճաշակավոր դասավորութեան է հասել, և այն ժամանակ ամենայն իրավամբ կարող ենք գովել կամքի ուժը, համառ ու չարքաշ աշխատութեան պտուղը, որ անկասկած ստեղծագործողի բնականից բարձր ընդունակութիւններն է հայտնում»[6]:

Նա մտահոգված էր իր ձեռքի աշխատանքի տպագրությամբ: Ձեռագիրն ու-

1. Այդ մասին տես, Լեոի առաջաբանը տիկին Մարգարիտ Ալեքսանյանի «Գեղագիր» ալբոմին, Թիֆլիս, 1891, էջ 1:
2. Նույն տեղում, էջ 2-3:
3. Լեո, նշվ. աշխ., էջ 1-2:
4. Նրա կենսագրականի և գործունեության մասին տե՛ս Լեո, Շուշիի թեմական դպ. պատմ., էջ 290-291, նաև «Արարատ», 1868, թ. 5, էջ 62:
5. Լեո, նշվ., աշխ., էջ 3-4:
6. «Տարազ», 1891, թ. 22, էջ 324:

ղարկում է Վենետիկ՝ իր ծախքով հրատարակելու համար, բայց դա իրականանում է միայն հետագայում՝ նրա մահից հետո, հայ բարերաների հովանավորությամբ:

Մ. Ալեքսանյանը 60-70-ական, առավել ևս 80-ական թվականներին Արցախի մշակույթի, կրթական այն գործիչներից մեկն էր, ովքեր հայրենասիրաբար իրենց ուժերը նվիրաբերել էին երկրամասի մշակութային զարթոնքին և իրատեսորեն էին ըմբռնում ազգի լուսավորության իրականացումը: Այդ ժամանակաշրջանի Արցախի մշակույթի, կրթական գործի կազմակերպիչները գտնում էին, որ երկրամասի ժողովրդի գիտակցության արթնացման համար հարկավոր են առավել ներգործուն միջոցներ՝ լուսավորական օջախների հիմքում Շուշիի, Նուխիի գավառներում գրահրատարակչական գործի զարգացում, պարբերական մամուլի հրատարակում, և այլ լուսավորական ձեռնարկումների իրականացում:

Ժողովրդին լուսավորելու ազնիվ մղումով Մ. Ալեքսանյանը մանկավարժական, լուսավորչական գործունեություն է ծավալում Արցախի թեմի կրթական օջախներում, «դպրոցասեր հայուհյաց» ընկերություններում, մանկավարժական, գրական-գեղարվեստական մամուլի հրատարակության ասպարեզում նա եղել է Շուշիում լույս տեսած գրքերում ու պարբերականներում զետեղված նկարների հեղինակը:

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված Լեոի[7], Համբարձում Առաքելյանի[8] աշխատություններից, «Հայկական աշխարհ»[9], «Գործ»[10] ամսագրերում լույս տեսած հոդվածներից տեղեկանում ենք, որ Մ. Ալեքսանյանը երկար տարիներ նկարչություն, վայելչագրություն, երգ-երաժշտություն է ավանդում Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցում՝ (նաև ձեռագործ) 1864-1876թթ., թեմական դպրոցում՝ 1878-1882թթ., ռեալական ուսումնարանում՝ 1883-1886թթ.: Համաձայն այդ աղբյուրների և արխիվային փաստաթղթերի[11], Արցախի թեմում՝ Շոշ, Սարուշեն, Ննգի, Ճարտար և այլ գյուղերում լուսավորություն տարածելու մեծ ջանքեր է թափում Մ.Ալեքսանյանը՝ հատկապես աղջիկ երեխաների կրթության գործը կազմակերպելու համար: Վերոնշյալ դպրոցներում աշխատելու տարիներին փոփոխություններ է մտցնում այդ առարկաների դասավանդման դրվածքի մեջ և առօրյա հրատապ պահանջ էր համարում ավանդվելիք առարկաների դասավանդումը բարձր հիմքի վրա դնելը: Դրվատելով այդ երևույթը, «Գործ» հանդեսը գրել է, որ «հայ կրթությամբ դաստիարակված օրիորդները և ապագա մայրերը հոգով պիտի դաստիարակեն իրենց զավակներին և մեր հասարակության մեջ նոր թարմ կյանք մտցնեն»[12]: Այնուհետև «Գործը» գրում է, որ հայոց օրիորդաց դպրոցի շրջանավարտներն իրենց գեղեցիկ առաջադիմությամբ և զարգացմամբ պիտի միշտ հայ դպրոցի զարդը կազմեն և օրինակ հանդիսանան իրենց հաջորդներին: Այդպիսիններից էին Մարգարիտ Ալեքսանյանը, Մարիամ Հախումյանը, Սոֆյա Առաքելյանը, Եկատերինա Բահաթրյանը, Հասմիկ Մալխասյանը, Վարսենիկ Գյանջեցյանը, Ոսկի Թավրիզյանը, Շուշանիկ Բեգլարյանը և շատ ուրիշներ, որոնք բեղմնավոր մանկավարժական գործունեություն են ծավալել Արցախի թե-

7. Լեո, Շուշիի թեմակ. դպ. պատմ., էջ 292-293:
8. Հ.Առաքելյան, Շուշիի թեմ, դպ. պատմության 75-ամյակին նվիրված «Ուսումնական մասի համառոտ տեղեկագիրը», էջ 68-69:
9. «Հայկական աշխարհ», 1874/75, թ. 1, 2:
10. «Գործ», 1882, թ. 2:
11. ՀՀ ԱԱ, ֆ. 56, g. 3, գ. 78, թ. 12, գ. 543, թ. 12-14:
12. «Գործ», 1882, թ.1, էջ 89:

մի դպրոցներում, խորացել գիտության տարբեր ճյուղերում, ակտիվորեն մասնակցել գավառի լուսավորական-հասարակական կյանքին և հմտացել մանկավարժական արվեստի մեջ[13]:

Բուն մանկավարժական աշխատանքին զուգահեռ Մ. Ալեքսանյանը հետաքրքիր ու բովանդակալից լուսավորչական ձեռնարկումներ է իրականացրել: Այսպես, 1869թ. գեղանկարչուհին հիմնադրում է «Շուշիի կուլտուրական Միություն»[14] ընկերությունը, որի գործունեությունը ժամանակակիցները (Մակ. եպ. Բարխուդարյան, Գրիգոր Տեր-Ղազարյան) շատ բարձր գնահատեցին: Ազգանվեր գեղանկարչուհին միության անդամների նախաձեռնությամբ հավաքում է բազմաթիվ ձեռագիր մատյաններ, ավետարան, թեմական դպրոցի կից ստեղծում նկարչական արվեստանոց, որի սաները (Ստ.Աղաջանյան, Միքայել Արուտչյան և ուրիշներ) հետագայում դարձան արվեստի վաստակավոր գործիչներ: Ուշագրավ է հատկապես նրա պատրաստած «Հայկական գեղանկարչութիւն» ալբոմը, որը ընկերության միջոցներով հրատարակվել է Շուշիի Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպարանում 1872թ.: Լեոն գրում է, որ Մ. Ալեքսանյանի հիմնած ընկերությունը որոշակի նյութական միջոցներ է հատկացնում ոչ միայն դպրոցներին, այլև գեղարվեստական և այլ տիպի գրականության հրատարակմանը[15]: Փաստորեն այդ տասնամյակում բոլոր ընկերություններն ունեին մի նպատակ՝ զարկ տալ հայոց հինավուրց Շուշի քաղաքի մշակութային կյանքի, լուսավորության զարգացմանը, ընդլայնել դպրոցական ցանցը թեմում:

XIX դարի 60-ական թվականներին արցախահայ հասարակական կյանքն առաջընթաց էր ապրում, իսկ այդ կյանքը հուզող խնդիրների նկատմամբ նոր մոտեցումներն ասպարեզ էին հանում նորանոր նշանավոր լուսավոր դեմքեր, որոնք վճռական նշանակություն տալով աղջիկների կրթության և դաստիարակության հարցերին, ակտիվ մասնակցություն են ունենում Արցախի թեմում իգական դպրոցներ հիմնելու գործին:

Կանանց կրթության հարցը հայ մտավորականությունը (Ս.Նազարյանց, Մ. Նալբանդյան, Ս. Շահազիզ, Պ. Պռոշյան, Ղ. Աղայան, Գր. Արծրունի, Ռաֆֆի, Ռ. Պատկանյան և ուրիշներ) լայն քննարկման առարկա դարձրեց առանձնապես XIX դարի 60-ական թվականներին (այդ մասին մանրամասն նշվել է սույն աշխ. 4-րդ գլխում): Այդ տասնամյակում հայ իրականության մեջ սկիզբ առած լուսավորչական շարժումն առաջադրեց նաև կանանց կրթության հարցը: Հայ մտավորականությունը կանանց կրթությունն ու դաստիարակությունը համարում էր ազգային վերածնության կարևոր նախապայմաններից մեկը և առաջ քաշում գրագետ մայրեր պատրաստելու, իգական բարեկարգ դպրոցներ հիմնելու խնդիրը. «Մեզ մայրեր են պետք, իրենց զավականց կրթության հոգ տանող մայրեր,- գրում է Աղայանը,- ուրեմն պետք է նախ կրթված մայրեր դաստիարակել, աղջիկների համար ևս դպրոցական կրթությունը պարտադիր դարձնելով»[16]:

Եվ այսպես, դարի 60-ական թվականների սկզբին, Ռուսաստանում և արևմտաեվրոպական երկրներում բարձրագույն կրթություն ստացած հայ մանկավարժների մի սերունդ (Պետրոս Շանշյան, Պերճ Պռոշյան և ուրիշներ) հանդես

13. Նույն տեղում: «Գործ», 1882, թ.1, էջ 89:
14. Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, էջ 205: Նաև տե՛ս Մ.Հարությունյան, Մշակութային կյանքը Արցախում 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին, 2010, էջ 22:
15. Տե՛ս Լեոի հոդվածը «Տարազ», 1891, թ. 22, էջ 324:
16. Տե՛ս ՊԳԹ. Աղայանի արխիվ, թիվ 11, էջ 24-25:

են գալիս Արցախի թեմում կրթական ընկերությունների, միությունների, կանանց կրթության գործը պատշաճ մակարդակով կազմակերպելու նախաձեռնությամբ:

Մարիամ Հախումյան (1822-...՞): Շուշեցի մեծահարուստ Համբարձում Հախումյանի («Գործ» պարբերականի խմբագիր-հրատարակիչ Սիմեոն Գասպարի Հախումյանի պապը) տիկինը, ակտիվ մասնակցություն է ունեցել Շուշիի բարեկարգ առաջին օրիորդաց դպրոցի բացմանը և գործունեությանը: Ժամանակակիցների (Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչներ՝ Կարապետ քահ. Հախումյան և ուրիշներ)[17] վկայությամբ, Հախումյանների ընտանիքը մասնավոր կերպով վաղուց էր զբաղվում օրիորդների կրթությամբ: Լեոն վկայում է, որ տիկին Մարիամն իր տանը դաստիարակում էր յոթ աղքատ ընտանիքների աղջիկների՝ սովորեցնում էր գրել, կարդալ, ձեռագործ: Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Պետրոս Շանշյանի ժամանակ էր, երբ հայրենասեր կնոջ՝ Մ. Հախումյանի, մեջ միտք հղացավ Արցախի թեմում ավելի հաստատուն հիմքի վրա դնել կանանց կրթության գործը[18]: Առաջնորդվելով կանանց լուսավորելու ազնիվ մղումով, նա եկել էր այն եզրահանգման, որ արցախահայության բարեկեցության և առաջընթացի հիմնական պայմաններից մեկը ոչ միայն արական, այլև իգական դպրոցների հիմնումն ու դրանց միջոցով ժողովրդի մեջ լուսավորության տարածումն է, ինչն ազգի իմացական, բարոյական ու նյութական բարօրության հիմքն է: Ինչպես Ստ. Նազարյանցն է ասում, հայ կինն էլ պետք է ուսյալ լինի, նա ավելի շատ է շփվում երեխաների հետ, նրանց ազդեցությունը մեծ է ընտանեկան դաստիարակության մեջ. «Մայրը պիտի ուսուցանե յուր զավակներին ազգային լեզու, մայրը պիտի տնկե տղայական սրտերի մեջ ազգութեան սերմը այնպիսի խնամքով և հոգաբարձութեամբ, որ Հյուսիսի սրտաբեր մրրիկը կամ Հարավի այրող օդը չկարողանային չորացնել նորանից ծլելու բույսը»[19]:

Այդ միտումով էլ ուշագրավ է Մ. Հախումյանի Ամենայն հայոց կաթողիկոսին հղած նամակը Շուշիում օրիորդաց բարեկարգ դպրոց բացելու մասին. «Գիտելով ձեր սերը դեպի ազգային լուսավորությունը և հաստատ լինելով, որ ամեն մի ազգային գործ, առավել ևս ազգային լուսավորութեան, ցանկալի է Ձերդ սրբազանութեան ազգասեր սրտի, ես Շուշուայ քաղաքի տիկնանց կողման է՝ դիմում եմ Ձերդ սրբազանութեանը և խնդրում եմ խոնարհաբար տալ մեզ հրաման բանալ ուսումնարան, արժանացնելով ընդունել ուսումնարանը Ձերդ սրբազանութեան բարձր հովանավորութեան ներքոյ: Ընդսմին խնդրում ենք խոնարհաբար առաջարկել Ղարաբաղում հոգևոր դպրոցի տեսչին ընդունել ուսումնարանի ուսումնական մասի կառավարությունը՝ համաձայն այն կարգադրութեան (կանոնադրութեան), որ ընդսմին ներկայացնում եմ Ձերդ Բարեհաճութեանը»[20]:

Կաթողիկոսի կողմից կանոնադրությունը հաստատվելուց հետո Մ. Հախումյանի նախաձեռնությամբ Շուշիի հայ տիկնանց միաբանությունն իգական դպրոց հիմնելու համար ստեղծում է «Դպրոցասեր հայուհյաց ընկերություն»[21] անվամբ կազմակերպություն: Նախաձեռնությունը լայն արձագանք է գտնում. հավաքվում է անհրաժեշտ գումար, 40 հայ կանայք որդեգիրներ պահելու և ուսման վարձը վճարելու պատրաստակամություն են հայտնում: Անձամբ թեմական առաջնորդ

17. Համբ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 54-55:
18. Տե՛ս Լեո, Շուշիի թեմակ. դպ. պատմ., էջ 291-292:
19. «Հյուսիսափայլ», 1860, թ. 1, էջ 79:
20. Տե՛ս Պ. Շանշյան, Ղարաբաղի տիրամայր Սուրբ-Մարիամի օրիորդաց ուսումնարանի բացվելը, էջ 12:
21. Մելքիսեդեկ եպիս. Մուրադյան, Պետրոս Շանշյան, էջ 73:

Ստեփանոս արքեպիսկոպոսը երկու աղջիկ է որդեգրում[22]: Նրա մասին Պռոշյանը գրել է. «Բարեբախտաբար այդ ժամանակ Ղարաբաղի թեմի հոգևոր առաջնորդի պաշտոնում գտնվել է մի մարդ, որը պաշտպանել և օգնել է աղջիկների դպրոցի կազմակերպման, դա Ստեփանոս արքեպիսկոպոսն է»: Վերջապես, 1864թ. գարնանը դպրոցը բացվում է: Խորին երախտագիտությամբ գնահատելով Մ. Հախումյանի ազգաշահ առաքելությունը, Պերճ Պռոշյանը մեծ ոգևորությամբ գրել է. «Օհ, բայց ի՞նչ մեծ պահքը ամենքին ավետում էր ամեն տեղ Շուշվա տիկնանց ազգասիրությունն, ո՞ր գերդաստանի հայրը և ճշմարիտ հայրը կորդ էին չուրախանալ իրենց ընտանեաց արած այսպիսի օգտավետ և ընդհանուրին վերաբերյալ գործի համար[23]:

Նորաբաց օրիորդաց դպրոցին Մ. Հախումյանը հատկացրեց իր տան հինգ սենյակը, իսկ թեմական դպրոցի ուսուցիչները՝ (Ա.Պողոսբեկյան, Գր. Տեր-Հակոբյան, Կարապետ Մուրադյան և ուրիշներ) հանձն են առնում ձրի պարապել և իրենց վրա են վերցնում իգական դպրոցի ուսումնական մասի հսկողությունը:

Արցախահայության մշակութային կյանքում, լուսավորության բնագավառում կատարվող տեղաշարժերի մասին չափազանց հետաքրքիր նյութ է մատուցում 1863-1886թթ. Թիֆլիսում հրատարակված «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը: «Տեղեկություններ արևելահայ և արևմտահայ իրականության կրթական-մշակութային կյանքի մասին» (ամենօրյա նորություններ) բաժնում թերթը, անդրադառնալով կանանց կրթության հարցին, գրում է. «Օրիորդաց դպրոցը այնքան աչքի ընկնող գործ էր այն ժամանակ Կովկասի կյանքի մեջ, որ անգամ նրա վրա մեծ ուշադրություն է դարձրել Կովկասի փոխարքայուհի Օլգա Ֆեոդորովնան. նա շնորհակալություն է հայտնում Մարիամ Հախումյանին «Օրիորդաց դպրոցի հոգաբարձությունը իր ձեռքն առնելու և նրա մասին հոգս քաշելու համար»[24]: «Մեղու Հայաստանի»-ին իր 1865թ. թ.25-ում շնորհակալական խոսք է հղում տիկին Մ. Հախումյանին, որ ձեռնամուխ եղավ Արցախի թեմում կանանց կրթության սկզբնավորմանը (նկատի ունենք կանանց բարեկարգ դպրոցի, քանի որ 50-ական թթ. կանանց կրթության հիմքը դրել է Եղիսաբեթ Սարգսյանը): «Անտարակույս է,- գրում է թերթը,- որ մեր ազգային յառաջադիմութեանը վերաբերյալ բարի գործը մեծ ուրախություն է պատճառում մեր բոլոր համազգիներին, ի թիվս որոնց մեզ էլ»[25]: Պերճ Պռոշյանը, Պետրոս Շանշյանը Մարիամ Հախումյանի հետ միասին գրում են դպրոցի կանոնադրությունը, որը կոչվում է «Ղարաբաղի Տիրամայր սուրբ Մարիամյան օրիորդաց ուսումնարանի կանոնադրություն»[26]: Կանոնադրության համաձայն Մարիամյան օրիորդաց դպրոցը պետք է պատրաստեր կրթված հայուհիներ, որոնք կարողանային դասավանդել ծխական դպրոցներում:

Մարիամ Հախումյանը, հետևողականորեն զբաղվելով արցախահայ կանանց կրթության ու լուսավորության հարցերով, խորին համոզվածությամբ ծավալել է արդյունավետ լուսավորչական գործունեություն: Ինչպես նշեցինք, սկզբում նա Շուշիում հիմնադրում է «Դպրոցասեր հայուհյաց ընկերություն» (1864թ.), այնուհետև Սոֆյա Առաքելյանի, Մարգարիտ Ալեքսանյանի և ուրիշների հետ միասին 1865թ. ապրիլին հիմնադրում է «Ազգանվեր հայուհյաց» Շուշիի հայ տիկնանց մի-

22. Մելքիսեդեկ եպիս. Մուրադյան, Պետրոս Շանշյան, էջ 73:
23. Ղարաբաղի տիրամ. Ս. Մարիամ, օրիորդ. ուսում. բացվելը, էջ 18-19:
24. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1864, թ. 46:
25. «Մեղու Հայաստանի», 1865, թ. 25, էջ 127:
26. Պ. Շանշյանը, Պ. Պռոշյան, Ղարաբաղի տիրամայր սուրբ Մարիամի օրիորդաց ուսումնարանի բացվելը, էջ 12-13:

ություն, որի անդամների թիվը հասնում էր 48-ի[27]: Լեոն հիշատակում է, որ այդ ընկերության մեջ ընդգրկված էին նաև Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի գավառների հայ կանանց ներկայացուցիչները[28]: Ընկերության նպատակն էր Արցախի թեմում, ինչպես նաև Նուխիի գավառի հայկական գյուղերում ընդլայնել իգական դպրոցների ցանցը: Մ. Հախումյանն ընկերության անդամներին հորդորում է նվիրատվությունների միջոցով ապահովել նորաբաց իգական դպրոցների նյութական միջոցները, քանի որ նրա համոզմամբ՝ կանանց կրթության բարելավումն ամենից առաջ կախված է որոշակի նյութական միջոցներից, և այդ միջոցները պետք է ստեղծի ինքը՝ ժողովուրդը: Այսպես, օրինակ, արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Մ. Հախումյանի նախաձեռնությամբ 1866-1867 ուստարում Նուխի քաղաքում բացվում է Ս. Մարիամյան օրիորդաց միդասյա դպրոց, որտեղ սովորում էր 15 աշակերտուհի, դասավանդում էր 1 ուսուցիչ՝ Արամ Տոնյանը: Հետագայում՝ 1873թ., այդ դպրոցն ունեցել է 20 աշակերտուհի, իսկ 1881թ. եղել է միջնակարգ օրիորդաց դպրոց՝ ունեցել 4 բաժանմունք, 67 աշակերտուհի, 5 ուսուցիչ-ուսուցչուհիներ[29]: Արխիվային փաստաթղթերում կան տվյալներ նաև, որ Մ. Հախումյանի հորդորոնաքով և անմիջական օգնությամբ 70-ական թվականների սկզբներին Դիզակում, Վարանդայում (կենտրոնում) տեղի հայ մտավորականները բացել են աղջիկների դպրոցներ, որոնք այն ժամանակվա հայ գյուղի համար բացառիկ երևույթ էր: Ս. էջ. Սինոդի պաշտոնական տվյալների համաձայն՝ դարի 70-ական թվականներին Արցախի թեմում (1874-1875թթ.) գործում էին 4 իգական դպրոցներ, իսկ Շուշի քաղաքում՝ 2 երկսեռ դպրոց՝ 40 աշակերտով, որից 27-ը տղաներ էին: Այդ նույն շրջանում Նուխի քաղաքում կային 1 մասնավոր օրիորդաց ուսումնարան և 1 երկսեռ դպրոց՝ 18 աշակերտով, որից 8-ը տղաներ էին[30]: «Գործ» ամսագրի խմբագիր Սեմեոն Հախումյանը 1882թ. թ.1-ում տպագրած ծրագրային հոդվածներից մեկում գրում է, որ Մ. Հախումյանի խորթափանցության և իմացական կարողությունների, եռանդուն գործունեության շնորհիվ Արցախի թեմում բացված օրիորդաց դպրոցները մեծ աշխատանք կատարեցին «ազգային և ընտանեական կյանքի համար», զգալի ավանդ մուծեցին բարոյական վերածնության գործում, առաջադեմ մեթոդներով կազմակերպվեց ուսուցման և դաստիարակության գործն օրիորդների շրջանում[31]:

XIX դարի 70-ական թվականներին՝ Արցախի մշակութային վերելքի տարիներին, զարթոնքի այդ գաղափարներով էր սնվում երկրամասի առաջավոր մտավորականությունը (Խորեն Ստեփանե, Ղ. Աղայան, Ս. Մանդինյան և ուրիշներ), և այդ գաղափարներով էին դաստիարակվում նաև Մ. Հախումյանի բացած օրիորդաց դպրոցի սանուհիները:

Հետևելով վերոհիշյալ գործիչների ուսանելի օրինակին, Մ. Հախումյանը, բացի պրակտիկ մանկավարժական գործունեությունից, օրիորդաց դպրոցական, մանկավարժական բնույթի խնդիրներ արծարծելուց, ակտիվ մասնակցություն է ունենում նաև Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» մանկավարժական ամսագրի հրատարակմանը: Ամսագրում արծարծված բազմապիսի հարցերի հետ նա առաջ է քաշում նաև կանանց կրթության, դպրոցական գործն Արցախի թեմում

27. Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), էջ 291-292:
28. Նույն տեղում:
29. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8, գ.50, թ. 60: Նաև տե՛ս «Դպրոց», 1875, թ. 4, էջ 138:
30. Նույն տեղում, ֆ. 56, g.3, գ.52, թ.15-20, գ.78, թ.43-46:
31. «Գործ», 1882, թ. 2:

որոշ չափով կարգավորելու, իգական դպրոցները որակյալ մանկավարժական կադրերով ապահովելու և այլ խնդիրներ: Եվ իրապես, նրա լուսավորչական ձեռնարկումներն արդյունք տվեցին: Մեկ տասնամյակում (1864-1874թթ.) Արցախի թեմում ընդլայնվեց իգական դպրոցների ցանցը, օրիորդաց դպրոցները բավականաչափ առաջադիմություն են ցույց տալիս, ոգևորություն պատճառելով իրենց աշակերտուհիներին և նրանց ծնողներին, ուսուցչուհիների մեծ մասն էլ, ինչպես Մարիամ Հախումյանը, Եղիսաբեթ Սարգսյանցը, Մարգարիտ Ալեքսանյանը, Սոֆյա Առաքելյանը և ուրիշներ, աշխատել է ձրիաբար:

Հենվելով ժամանակակիցների վկայությունների վրա, Լեոն իրավացիորեն նշում է, որ առաջադեմ մարդ է եղել նաև այդ խելացի ու հայրենասեր կնոջ ամուսինը՝ Համբարձում Հախումյանը, որը ոչ միայն բոլոր միջոցներով օժանդակել է իր կնոջ ձեռնարկումների իրագործմանը, նյութական միջոցներ տրամադրել թե՛ դպրոցների բացման և թե՛ պարբերական մամուլի հրատարակմանը, այլև շատ բան է արել շուշեցիներին բացատրելու աղջիկների կրթության կարևորությունը[32]:

Այսպիսով, կանանց կրթության գործի կազմակերպման ջատագով Մարիամ Հախումյանը, Արցախի թեմում մանկավարժության ասպարեզ մտնելով նոր մտահղացումներով, իր անգնահատելի ծառայություններով մնայուն տեղ գրավեց երկրամասի կրթության ու մշակույթի պատմության մեջ:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի թեմում ինչպես արական, այնպես էլ իգական դպրոցների բացման, բազմազան լուսավորչական ձեռնարկումների իրականացման գործում կարևոր դեր են կատարել նաև լուսավորիչ-մանկավարժներ Սոֆյա Առաքելյանը, Եկատերինա Բահաթրյանը, Սաթենիկ Բաղդասարյանը, Հասմիկ Մալխասյանը, Եղիսաբեթ Փիրումյանը, Հռիփսիմե Բաղդասարյանը, Վարսենիկ Գյանջեցյանը և շատ ուրիշներ: Արխիվային նյութերի, ժամանակի պարբերական մամուլում լույս տեսած (հատկապես Շուշիում հրատարակված պարբերականներում) հոդվածների և այլ աղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել մեզ էական տեղեկություններ տալ նրանց ազգանվեր լուսավորչական ու բարեգործական գործունեության մասին:

XIX դարի 60-ական թվականները, հիրավի, դարձան Արցախի թեմում իգական դպրոցի գաղափարական հիմնավորման ու նախապատրաստման որոնումների ժամանակաշրջան, երբ հայ լուսավորիչները ճանապարհ էին հարթում երկրամասում կանանց կրթության, լուսավորության համար: Իսկ դարի 70-ական թվականները շրջադարձային եղան ոչ միայն արցախահայության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, այլ նաև կանանց կրթության ու դաստիարակության կազմակերպման գործում՝ այն համարելով ազգային վերածնության կարևոր նախապայմաններից մեկը (Ղ. Աղայան):

<u>Սոֆյա Առաքելյան (1856- ...՞):</u> Հրապարակախոս, հասարակական գործիչ, գրող, մանկավարժ, մեծ բարերար Համբարձում Առաքելյանի քույրը, ով ժամանակի զարգացած և կրթված օրիորդներից էր, գիտեր մի քանի լեզու, զբաղվում էր գրքերի թարգմանությամբ և զգալի աշխատանք է կատարել երկրամասում լուսավորչական, բարեգործական և հատկապես կանանց կրթության ասպարեզում[33]:

Արխիվային փաստաթղթերից[34], մասնավորապես, «Դպրոց» ամսագրի 1875-

32. Լեո, Շուշիի թեմակ. դպ. պատմ., էջ 295:
33. Տե՛ս նույն տեղում, էջ 410-412, 420:
34. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.78, թ.12, գ.543, թ. 18-19:

1876թթ. թ.4-ում[35] տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցի փակումից (1874թ.) հետո թեմական դպրոցի տեսուչ Արիստակես վարդապետ Սեդրակյանի, Սոֆյա Առաքելյանի ջանքերով Շուշի քաղաքում 1876թ. ապրիլին բացվել է աղջիկների առանձին դպրոց՝ Հռիփսիմյան անունով: Այդ դպրոցն ունեցել է 2 ուսուցիչ, 2 ուսուցչուհի (Սոֆյա Առաքելյան, Մարգարիտ Ալեքսանյան), 70 աշակերտուհի: Տիկին Սոֆիայի օժանդակությամբ և մի շարք բարեգործական ձեռնարկումների շնորհիվ 1881թ. դպրոցը ունեցել է 4 բաժանմունք, 120 աշակերտուհի և 3 ուսուցիչ, 2 ուսուցչուհի: 1884-ին դպրոցը եղել է բավականաչափ պատկառելի մի ուսումնական հաստատություն՝ իր 13 ուսուցիչ-ուսուցչուհիներով և 171 աշակերտուհիներով: Տեսուչն էր Մովսես Սամվելյանը, նրա օգնական՝ Սոֆյա Առաքելյանը, որը դասավանդում էր ռուսերեն, օտար լեզուներ, երգ-երաժշտություն, ձեռագործ և հայոց պատմություն[36]:

Ս. Առաքելյանի եռանդուն գործունեության շնորհիվ Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը ծաղկուն վերելք է ունենում 80-90-ական թվականներին՝ մինչև հայկական դպրոցների փակվելը (1896թ.): Այսպես, Լեոն հիշատակում է, որ 1888թ. այն, որպես երկդասյա դպրոց, ունեցել է 199 աշակերտուհի, 14 ուսուցիչ-ուսուցչուհի (Գաբրիել Գյուլիքևխյան, Մովսես Սամվելյան, տեսուչ՝ Գարեգին քահ. Հովհաննիսյան, Եկատերինա Մելիք-Սարգսյան, Եկատերինա Բահաթրյան, Զարուհի Արզումանյան, Ելենա Առաքելյան՝ Սոֆյայի քույրը, Գալյա Հովակիմյան և ուրիշներ), իսկ 1891-92 ուստարում՝ եղել է 4 դասյա դպրոց: 1896-ին դպրոցը փակվել է, 1906-ի փետրվարին՝ վերաբացվել[37]: Արխիվային մի փաստաթղթում նշվում է, որ 1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 5 բաժանմունք, որոնցում սովորել է 218 հոգի, այդ թվում 29-ը՝ տղա[38]:

XIX դարի 80-90-ական թվականներին, մինչև դպրոցների փակվելը (1895-96թթ.), Արցախի թեմի մշակութային կյանքում, սկսվել էր լուսավորչական ակտիվ շարժում՝ դպրոցների պահպանման համար նվիրատվությունների, գրատպության, պարբերական մամուլի, արվեստի և մշակույթի այլ բնագավառներում: Հայկական դպրոցների պահպանման ուղղությամբ Համբարձում Առաքելյանի բարեգործական ընկերության (1881թ.) անդամները ձեռնամուխ եղան գործնական աշխատանքի. մեկը մյուսի հետևից ստեղծվեցին զանազան խմբակներ, միություններ, ընկերություններ, որոնք իրենց հիմնական անելիքներից էին համարում նաև նորաբաց արական, իգական դպրոցներին նյութական օգնություն ցույց տալը: Այդ տասնամյակում Ս. Առաքելյանի գործունեությունը նշանավորվել է մի շարք մշակութա-լուսավորչական, բարեգործական նախաձեռնությունների ոլորտում: Այսպես, «Գործ» ամսագրի 1882թ. թ. 2-ում[39] տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ Ս. Առաքելյանը եղել է Շուշիում գործող հասարակական տարբեր ընկերությունների, հոգաբարձուների խորհրդի անդամ: Նրա հորդորներով Շուշիի հայ հասարակության ներկայացուցիչները, ինչպես և «Դպրոցական հայուհյաց» միության անդամներն ակտիվ մասնակցություն են ցույց տվել Համբարձում Առաքելյանի նախաձեռնությամբ «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Շուշիի մասնաճյուղի հիմնադրման (1881թ.), նվիրատվությունների, հանգանա-

35. «Դպրոց», 1875-1876, թ. 4, էջ 133:
36. Լեո, նշվ. աշխ., էջ 385-386: Նաև, «Արարատ», 1875, ԺԲ էջ 458: ՀՀ ԱԱ, ֆ.19, գ.5, թ.85:
37. Լեո, նշվ. աշխ., էջ 385-387: Նաև, «Արարատ», 1888, թ. 2, էջ 422:
38. ՀՀ ԱԱ, ֆ. 56, g.3, գ. 78, թ. 1-18:
39. «Գործ», 1882, թ.2:

կությունների և այլ միջոցառումների կազմակերպման գործին: Այդ ժամանակ, ընկերության Շուշիի ճյուղի վարչության նախագահի (նախագահը՝ Համբարձում Առաքելյանն էր) տեղակալ, գանձապահ ու քարտուղար Լեոն գրում է, որ Համբարձում Առաքելյանի, Սոֆյա Առաքելյանի, Սամվել Մովսիսյանի (թեմական դպրոցի տեսուչ) Ջավադ Իշխանյանի և ուրիշների նախաձեռնությամբ ընկերության անդամների թիվը, տարեցտարի ավելանալով, հասնել էր 160-ի: Նվիրատվությունների ու հանգանակությունների միջոցով մուտքագրվել էր 1148 ռուբլի 65 կոպ., որից 200 ռուբլի նվիրել էր Սոֆյա Առաքելյանը, 500 ռուբլի՝ շուշեցի հայտնի հարուստ ու բարերար Մարկոս Դոլուխանյանը[40]: Բարեգործական ընկերության միջոցներով Շուշի քաղաքում և գավառի գյուղերում բացվում են արական, ծխական, իգական դպրոցներ, գրադարան-ընթերցարան: Օրինակ, Շուշի քաղաքի գրադարան-ընթերցարանը բացվում է 1886թ. մարտին: Գրադարանն ուներ 4917 գիրք, որից 242-ն իր անձնական գրադարանից նվիրել էր Սոֆյա Առաքելյանը[41]: Ուշագրավ է, որ նրա նախաձեռնությամբ 1892-1893թթ. Շուշիի մի խումբ երիտասարդներ (տղաներ և աղջիկներ) իրենց ժողոված փողերի մի մասը նվիրում են գրադարանին, իսկ մյուս մասը հանձնում բարեգործական ընկերության վարչությունը՝ գրքեր հրատարակելու համար[42]: Դա ուսանելի օրինակ է դառնում նաև գավառի գյուղերի երիտասարդության համար, որը նույնպես հանգանակություններ էր կատարում և հավաքած գումարները հատկացնում նորաբաց դպրոցին, գրադարան-ընթերցարանին՝ գրքեր, ամսագրեր ձեռք բերելու համար: Ս. Առաքելյանի բարեգործական ձեռնարկումների թվում կարելի է նշել նաև մի ուշագրավ փաստ ևս. նրա նախաձեռնությամբ 1894թ. Շուշիում մի խումբ երիտասարդներ (տղաներ և աղջիկներ) Խանդամիրյանի թատրոնի դահլիճում ներկայացում են տալիս (Ժորդ Օնեի «Դարբնապետ» կատակերգությունը) և հավաքած 300 ռուբլին բարեգործական նպատակով նվիրում ընկերության վարչությանը[43]:

Բացի վերոնշյալ ծառայություններից, Սոֆյա Առաքելյանն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև տպագրության զարգացման ու գրավաճառության կազմակերպման գործում: Հոգևոր տեսչության, Մահտեսի Հակոբյանի տպարաններում սրբագրում ու խմբագրում էր գրքեր, ուսումնական ծրագրեր, կատարում թարգմանություններ՝ ռուսերենից, այլ օտար լեզուներից (որոնց գերազանց տիրապետում էր): Օրինակ, խմբագրել ու սրբագրել է Լեոի «Կույր աղջիկը» (1887), «Հիշատակարանը» (1889), Համբարձում Առաքելյանի «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը» (ուսումնական մասի համառոտ տեղեկագիրը) և այլ գրքեր:

Լինելով զարգացած, կրթված օրիորդ, Սոֆյա Առաքելյանը հանդես էր գալիս մամուլի էջերում և արծարծում ժամանակի հուզող հարցեր, այդ թվում՝ հայ կնոջ կրթության խնդիրը: Այդ տեսակետից ուշագրավ է նրա «Մշակ»-ի 1876թ. նոյեմբերի 17-ի համարում տպագրված նամակը Շուշիից. «Աշխարհի մեջ երջանիկ ապրելու համար պետք է կրթված, զարգացած ընտանիքներ ունենալ և որովհետև ընտանիքին կենդանություն տվողը և նորա ծաղիկը կինն է, ուստի և կնկան տղամարդից ավելի հարկավոր է կրթել, ուսում ստանալ... Մեր հայ ընտանիքները հա-

40. Լեո, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, էջ 205-206:
41. Լեո, նշվ. աշխ., էջ 206-208:
42. «Տեղեկագիր», 1894, էջ 77: Նաև՝ Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 64-65:
43. «Տեղեկագիր», 1894, էջ 77-78:

մարյա թե ստրկական վիճակի մեջ են. տան մեջ տիրապետողը, հրամայողը տղամարդի բռնապետական իշխանությունն է, որին ամենքը պարտավոր են հնազանդվել անպայման կերպով, կինը համարվում է միայն այդ իշխանության համար մեքենայական գործիք: Այսպիսի մի աննախանձելի վիճակ բարվոքելու համար մեր ազգային գրականության սեպուհ պարտականությունն է ժողովրդի մեջ տարածել առողջ մտքեր, թե ինչ ասել է ընտանիք, ինչ ասել են ամուսիններ, որոնք են տղամարդու և կնկա առանձին պարտավորությունները»[44]:

Ս. Առաքելյանը Շուշի քաղաքի մի քանի կրթված կանանց հետ միասին ձգտում է ստեղծել «Կանանց հանրամատչելի գրադարան», ինչպես նաև այդ սերիայով լույս է ընծայում դյուրըմբռնելի գրքեր, ուսումնական ձեռնարկներ և դպրոցական կանոնադրություններ, հաշվետվություններ: Նա ակտիվ մասնակցություն է ունենում գյուղերում իգական դպրոցներ հիմնելու գործին:

Աներկբա կարելի է ասել, որ կյանքի փորձով իմասնացած, արցախցի հայրենասեր լուսավորիչ մանկավարժը՝ Սոֆյա Առաքելյանը, իր գործունեության բազմազանությամբ ու կանանց կրթության լայն ծրագրերի իրականացման ձգտումով հասել է ցանկալի արդյունքի: Շնորհիվ նրա եռանդուն ջանքերի՝ օրիորդաց դպրոցի սանուհիները կարճ ժամանակում առաջադիմում էին հայոց, ռուսաց և օտար լեզուների մեջ:

<u>Եկատերինա Բահաթրյան (1870-1944թթ.):</u> Հայ մշակույթի անվանի գործիչ, դրամատուրգ, երաժշտագետ, մանկավարժ և բարերար: Իր բացառիկ տեղն ունի XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբների Արցախի երախտաշատ կին լուսավորիչ մանկավարժների շարքում: Ծնվել է Շուշի քաղաքում, հասարակական գործիչ և մեծ բարերար Բեգլար Բահաթրյանի (եղել է Շուշիում բարեգործական ընկերություն հիմնադրող գործիչներից մեկը և Համբարձում Առաքելյանի անմիջական օգնականը) ընտանիքում: Ի դեպ, նշենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի հասարակական-քաղաքական կյանքում, լուսավորության, մշակույթի, դպրոցական-կրթական գործի զարգացման ասպարեզներում մեծ երախտիք ունեն Բահաթրյանները՝ ականավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանը, գիտության վաստակավոր գործիչ, մաթեմատիկոս, Անանիա Շիրակացու մաթեմատիկական ձեռագրերն ուսումնասիրած Բահաթուր Բահաթրյանը և ուրիշներ:

Ե.Բահաթրյանը նախնական կրթությունը ստացել է Շուշիի Հռիփսիմյան օրիորդաց դպրոցում, աշխատակցել Արիստակես վարդապետ Սեդրակյանին, Սոֆյա Բաբայանին, Մարգարիտ Ալեքսանյանին և երևելի շատ այլ մանկավարժների: Այնուհետև (1882-1888թթ.)[45] ավարտել է տեղի ռեալական ուսումնարանը, որպես հայոց, ռուսաց լեզուների, հայ գրականության պատմության և երաժշտության ուսուցչուհի դասավանդել Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում և իր ամբողջ ջանքերը նվիրել երկրամասի մշակույթի, դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացմանը:

Լինելով երիտասարդ, բայց փորձառու ուսուցչուհի, Ե. Բահաթրյանը 1888-1896թթ. դասավանդել է Շուշի քաղաքի և գավառի Շոշ, Սարուշեն, Ննգի գյուղերի արական, իգական դպրոցներում[46]: Բացի այդ, նա իրականացրել է գործնական նշանակության մի շարք ձեռնարկումներ. ա) կարգ ու կանոնի հաստատում

44. «Մշակ», 1876, 17 նոյեմբեր:
45. Լեո, Շուշիի թեմ. դպ. պատմ., էջ 385-386, 543:
46. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 68-69: Նաև ՀՀ ԱԱ, ֆ. 56, g.3, գ.7, թ.10, գ.543, թ.18:

օրիորդաց դպրոցներում, բ) ուսումնական աշխատանքների կազմակերպման ժամանակի ճշգրտում (միադասյա երկսեռ դպրոցում՝ 4 ժամ, երկդասյա երկսեռ դպրոցում՝ 5-6 ժամ), գ) ծխական դպրոցներում դեռևս կիրառվող խստագույն պատիժների վերացում, առաջնակարգ տեղի հատկացում երեխայի խրախուսման մանկավարժական մեթոդին: Հիրավի, այդ հարցերում նրա համար ուսանելի օրինակ են ծառայել Սոֆյա Առաքելյանի, Գաբրիել Գյուլիքևխյանի, Ղազարոս Աղայանի, Սեդրակ Մանդինյանի՝ աշակերտի նկատմամբ մանկավարժական ճիշտ մոտեցման սկզբունքներն ու մեթոդները:

Բուն մանկավարժական աշխատանքի հետ միասին Ե. Բահաթրյանը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում նաև թատրոնի ու երաժշտության նկատմամբ: Դարի 80-90-ական թվականներին Արցախի թատրոնի ու երաժշտական մշակույթի ձևավորումը՝ թատերական և սիրողական խմբերի կողմից իրականացվող ներկայացումները, դպրոցական երաժշտական երեկույթների ու ցերեկույթների հաճախակի կազմակերպումը, արժանացավ հասարակության հոգատարությանը, զգալի չափով աշխուժացավ թատերական ու երաժշտական կյանքը, աճեց նրա հասարակական դերը ժողովրդի գաղափարական և գեղարվեստական դաստիարակության գործում:

Մանկավարժական պրակտիկայում արդեն մեծ համբավ ունեցած ուսուցչուհուն՝ Ե. Բահաթրյանին, կլանում է նաև Արցախի մշակութային հորձանուտը. խորապես ուսումնասիրում է թատերագիտությունը, երաժշտագիտությունը, ինչն էլ նախադրյալներ ստեղծեց նրա հետագա ստեղծագործական գործունեության համար: Ավելորդ չենք համարում բերել մշակույթի բնագավառում դրսևորած նրա գործունեության մի քանի ուշագրավ օրինակ:

Այսպես, թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը հայ թատրոնի պատմությանը նվիրած իր աշխատության մեջ[47] նշում է, որ Շուշիում թատերական կյանքը զարթոնք է ապրում 1886թ., տաղանդավոր դերասանների (Աբրահամ Գասպարյան, Հովհաննես Ճաղարբեկյան և ուրիշներ) թատերախմբի մեկնումից հետո տեղական ուժերով թեմական և օրիորդաց դպրոցների ուսուցիչների ու աշակերտների և արձակուրդ եկած երիտասարդների ուժերով հաճախակի են տրվում թատերական ներկայացումներ (Գ.Սունդուկյանի «Պեպո», «Քանդված օջախը») Շուշի քաղաքում և գավառի գյուղերում: Լեոն հիշատակում է, որ 1891-1892 ուստարում[48], թեմական և օրիորդաց դպրոցների ուսուցիչներ Եկատերինա Բահաթրյանը, Ելենա Առաքելյանը (Սոֆյա Առաքելյանի քույրը), Սամվել Գյուլադյանը և ուրիշներ գավառի ծայրամասերի հայ բնակչությանն սպասարկելու նպատակով համաձայնում էին անվճար ներկայացումներ ու համերգներ տալ ոչ միայն Շուշի քաղաքում, այլև գավառի գյուղերում՝ բացօթյա հարմարավետ պայմաններում:

Շուշիի թեմական դպրոցի 75-ամյա պատմությանը[49] նվիրված աշխատության մեջ Համբարձում Առաքելյանը նշում է, որ երաժշտության ուսուցչուհի Ե. Բահաթրյանի (նաև դասավանդում էր հայոց, ռուսաց լեզուներ, պատմություն) գործունեության շրջանում թեմական և օրիորդաց դպրոցներում երաժշտության դասավանդման գործը դրվեց պատշաճ մակարդակի վրա: Նրա նախաձեռնությամբ թեմական և օրիորդաց դպրոցներում կազմակերպվեցին երգչախմբեր, որոնք

47. Տե՛ս Հ.Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն, XIX դար, Երևան, 1996, էջ 416-417: Նաև «Նոր դար», 1887, հուլիս, թ. 8:
48. Լեո, Շուշիի թեմակ. դպ. պատմ., էջ 438-439:
49. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 64-65:

եկեղեցիներում երգելուց բացի, մասնակցում էին նաև դպրոցական հանդեսներին, թատերական ներկայացումներին և կատարում ինչպես ազգային-հայրենասիրական, այնպես էլ ժողովրդական երգեր[50]: Այս շրջանում նորություն էր այն, որ Թիֆլիսից, Երևանից, Բաքվից, Ռուսաստանի հայաշատ վայրերից Արցախ էին գալիս երաժշտական խմբեր և իրենց ստեղծագործական ու կատարողական աշխատանքով պայմաններ ստեղծում Արցախում երաժշտական կրթության զարգացման և կատարողական կադրերի պատրաստման համար: Ե. Բահաթրյանը երաժշտական կրթություն է ստացել Բաքվում, երբ իրենց ընտանիքը 1900թ. տեղափոխվել էր այնտեղ, ու նվիրվել ստեղծագործական աշխատանքի: Ազգամիջյան ընդհարումների, քաղաքական բարդ իրադարձությունների ծանր շրջանում (1918-1920թթ.) նրանց ընտանիքը տեղափոխվում է Հայաստան, որտեղ ապրել և ստեղծագործել է մինչև իր կյանքի վերջը:

Նրա դրամատիկական լավագույն գործերից են «Կամքի եղերգը», «Արա և Շամիրամ» (1915)[51] պիեսները: Ե. Բահաթրյանի «Արտավազդ» հերոսական դրաման բեմադրվել է Ալեքսանդրապոլում (Գյումրիում), Բաքվում, Թիֆլիսում, Ստեփանակերտում և այլուր:

Իսկ մինչև այդ, նա իր լրագրային առաջին թղթակցությունները տպագրում է «Արարատ», «Արձագանք», «Նոր դար», «Մշակ» և այլ պարբերական մամուլում: Այսպես, օրինակ, «Արարատ» ամսագրի 1892թ. առաջին ծրագրային համարում տպագրված «Դպրոցասեր տիկնանց» ընկերության գործունեությունը Շուշիում»[52] խորագրով հոդվածը նվիրված է ընկերության անդամների (Շուշի քաղաքի հայուհիների) ազգանվեր գործունեությանը, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան իգական դպրոցներ հիմնելու գործում: Երախտագիտությամբ է գնահատում Մարգարիտ Ալեքսանյանի, Մարիամ Հախումյանի, Սոֆյա Առաքելյանի մատուցած ծառայությունները՝ բարեկարգ օրիորդաց դպրոցներ բացելու և նյութական միջոցներով աջակցություն ցույց տալու գործում: Հոդվածում Ե. Բահաթրյանն անդրադառնում է նաև «Ազգանվեր հայուհյաց» Շուշիի հայ տիկնանց ընկերության (որի հիմնադիրներից մեկն էլ ինքն է) գործունեությանը: Ինչպես նշել ենք՝ կազմակերպության անդամների թիվը հասնում էր 40-ի, որի նպատակն էր Արցախի թեմում, նաև Նուխիի գավառի հայկական գյուղերում իգական դպրոցներ բացել: Ե. Բահաթրյանն այնուհետև հոդվածում խոսքը որոշակիացնում է ազգության մեջ հայ կնոջ ունեցած դերի հարցում: Նշելով, որ հայ կինը մեծ առաքելություն ունի կատարելու, նա գրում է. «Ընտանիքը ամուր է նրա շնորհիվ», հայ կինը ազգային ավանդույթների պահապանն է, ուրեմն՝ կրթական, լուսավորչական նպատակներ հետապնդող ընկերությունները պետք է մեծ աշխատանք կատարեն ոչ միայն Շուշի քաղաքում, այլև գավառի գյուղերում՝ կանանց շրջանում, և այդ միտումով էլ պետք է ընդլայնել իգական դպրոցների ցանցը[53]:

1895թ. «Նոր-դարի»[54] էջերում կարդում ենք նաև Ե. Բահաթրյանի «Ցարիզմի ռեակցիոն քաղաքականությունը հայ դպրոցի նկատմամբ» հոդվածը, որտեղ խիստ քննադատում է ռուսական կառավարության քաղաքականությունը հայերի

50. Հ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 66-67:
51. Բ.Խանդամարյան, Ս. Մուրադյան, էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 1978, էջ 19: Նաև՝ «Մշակ», 1894, հուլիս, թ. 16, Մ.Մուրադյան, Հայ երաժշտությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին, Երևան, 1970, էջ 194:
52. «Արարատ», 1892թ., թ.1, էջ 48-50:
53. Նույն տեղում:
54. «Նոր-դար», 1895, թ. 16:

նկատմամբ, միաժամանակ գնահատում նաև Ռուսաստանի առաջադեմ մտավորականների քննադատական դիրքորոշումը՝ հայերի նկատմամբ դրսևորած ցարիզմի դպրոցական քաղաքականության խնդրում: Հոդվածում բերում է անվանի մշակութային գործիչ, գրականագետ (դասավանդել է նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանում 1897-1899թթ.) Յուրի Վեսելովսկու խոսքը. «Բռնի ռուսացումը երևան էր գալիս կառավարության համառ ջանքերի մեջ, որն ուզում էր ոչ միայն դպրոցում սովորող «այլազգիներին» (հայերին, վրացիներին, լեհերին) ռուս դարձնել, այլև ամենից առաջ նրանց զինել այն բանի դեմ, ինչով որ ապրել են նրանց նախնիները՝ տարանջատել նրանց հայրենի տարերքից, շատ դեպքերում՝ խիստ սահման կանգնեցնել հայրերի ու որդիների միջև, ստիպել նրանց և՛ բառացի, և՛ փոխաբերական իմաստով խոսել տարբեր լեզուներով»[55]: Ե. Բահաթրյանը «ոստիկանական ավերումներ» էր համարում հայ դպրոցի նկատմամբ ցարական կառավարության ստոր քաղաքականությունը՝ հայ դպրոցի բռնի վերացումը, դպրոց, որն ստեղծվել է ժողովրդի ու նրա լավագույն զավակների տասնամյակների տքնաջան ու անձնազոհ ճիգերով:

«Մշակ» թերթի էջերում նա տպագրել է հոդվածներ՝ նվիրված Արցախի թեմի օրիորդաց դպրոցների ուսումնական գործի բարելավմանը, ինչպես նաև երկրամասի մշակութային կյանքին:

Ե. Բահաթրյանն իր հոդվածներում նաև բարձրացնում էր արցախահայ կյանքի առաջադիմությունը խոչընդոտող հետադիմության ու պահպանողականության հարցը, առաջադրելով նաև երկրամասի ժողովրդական զանգվածների զարթոնքին ու առաջադիմությանը նպաստող կենսական խնդիրներ:

Իր ժողովրդի գալիք պայծառ օրը տեսնելու համոզմունքով լի՝ Ե. Բահաթրյանը մինչև կյանքի վերջը հաստատուն շարունակում էր գործունեությունն արցախահայ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Նա մեծ հոգատարություն էր ցուցաբերում այն մարդկանց նկատմամբ, ովքեր ցանկանում են օգնել հայրենի երկրամասի ժողովրդին և իրենց համեստ ավանդը ներդնում Արցախի հայ բնակչության լուսավորության գործում:

Այսպիսով, վերը համառոտ շարադրածից և փաստագրական նյութերի վերլուծությունից գալիս ենք այն եզրահանգման, որ Ե. Բահաթրյանի՝ մեծ հայրենասեր ու լուսավորիչ մանկավարժի, ողջ կյանքն արցախահայ ժողովրդի արվեստին, մշակույթին և հավատքին նվիրվածության օրինակ է:

XIX դարի 80-90-ական թթ. Արցախի թեմում ընդլայնվում է ոչ միայն արական, այլև իգական դպրոցների ցանցը: Այդ գործում կարևոր դեր են կատարել Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցների ուսուցիչները: Ուշագրավ է նշել այն փաստը, որ դպրոցական այս նախաձեռնությանը անտարբեր չմնաց Արցախի հայ հասարակությունը: Եթե մինչև այդ հնարավոր էր միայն Շուշի քաղաքում, Նուխիում, գավառի կենտրոններում (Վարանդայում, Դիզակում, Ջրաբերդում) բացել օրիորդաց դպրոցներ, հիմնել Դպրոցասեր հայուհյաց ընկերություններ կամ Հայուհյաց բարեգործական ընկերություններ (Շուշիում), ապա հետագայում այդ ալիքը տարածվում է նաև գյուղերում: Գյուղական հասարակությունն աշխատում էր ետ չմնալ իրենց աղջիկներին կրթության տալու գործում: Հայ մանկավարժական մամուլում պարբերաբար հոդվածներ էին տպագրվում Արցախի թեմում կին լուսավորիչ մանկավարժների գործունեության մասին: Օրինակ, Տիգրան Նազարյանի

55. Вестник воспитания, 905, № 9, ст. 25.

«Աղբյուր» ամսագրի 1889թ. թ. 2-ում[56] տպագրված մի հոդվածում նշվում է, որ Թիֆլիսի Գայանյան, Բաքվի Հռիփսիմյան, Երևանի Գայանյան, Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցների գերազանցիկ շրջանավարտներն ազնիվ մղումով լուսավորչական գործունեություն են ծավալել հայ լուսավորչական թեմերում, այդ թվում նաև Արցախի թեմի հայկական դպրոցներում:

Սաթենիկ Զաքարյան: Անվանի մանկավարժ, Երևանի Գայանյան օրիորդաց դպրոցի (հիմնադրվել է 1866թ.) շրջանավարտ: Արխիվային մի փաստաթղթում[57] կարդում ենք, որ նա մեծ մասամբ ձրիաբար կամ չնչին աշխատավարձով անձնվիրաբար ուսուցչություն է արել Արցախի թեմի Շուշի քաղաքի Հռիփսիմյան օրիորդաց[58] միջնակարգ, Հադրութի Մարիամյան օրիորդաց[59], Նուխի քաղաքի Ս.Մարիամյան օրիորդաց միջնակարգ[60] դպրոցներում, ինչպես նաև Վարանդա գավառի Գիշիի[61], Ճարտարի[62] արական ծխական դպրոցներում: Արխիվային փաստաթղթերում կան տվյալներ, որ 1907-1908թթ. նույնպես դասավանդել է Գիշիի երկդասյա երկսեռ դպրոցում: Իգական դպրոցներում ավանդում էր՝ հայոց, ռուսաց լեզուներ, երգեցողություն, ազգային պատմություն, աշխարհագրություն և ձեռագործ, իսկ ծխական միդասյա դպրոցներում՝ հայոց լեզու, թվաբանություն, երգեցողություն և նկարչություն: Ս. Զաքարյանի ծննդյան թվի մասին արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում վկայություն չկա, սակայն նշվում է նրա մանկավարժական, լուսավորչական և բարեգործական գործունեության մասին:

Այսպես, արխիվային փաստաթղթերից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ վերոնշյալ դպրցներում աշխատելու տարիներին Ս. Զաքարյանը մանկավարժական աշխատանքին զուգընթաց զբաղվել է նաև երկրամասի ժողովրդի լուսավորության գործով, մշտապես ակտիվ մասնակցություն ունեցել գյուղաշխարհի հայ հասարակական կյանքին, մի շարք ձեռնարկումների՝ գյուղերում գրադարան-ընթերցարանների հիմնադրմանը, երգ-երաժշտության, թատերական ներկայացումների աշակերտական խմբակների ստեղծմանը, բնակչության համար համերգների և այլ միջոցառումների կազմակերպմանը: Միաժամանակ, ձեռք է մեկնել նաև հասարակական կազմակերպությունների, ընկերությունների աշխատանքին, և իր գործով արձագանքել երկրամսի հայ բնակչությանը վերաբերող բազմազան հրատապ խնդիրների:

«Մշակ» թերթի 1892թ. թ. 2-ում[63] տպագրված Շուշի գավառի մի թղթակցի հոդվածում նշվում է, որ Շուշիի Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցի ուսուց-

---

56. «Աղբյուր», 1889, թ. 2:
57. ՀՀ ԱԱ, ֆ.56, g.3, գ.78, թ.43, գ.543, թ.18:
58. Շուշի քաղաքի Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1874-75 ուս. տարում («Դպրոց», 1875, թ.1) սկզբում եղել է միդասյա, 1884-ին՝ երկդասյա միջնակարգ դպրոց, գործել է մինչև 1917-18 ուստարին:
59. Հադրութի Մարիամյան օրիորդաց դպրոցը բացվել է 1890թ. («Արարատ», 1890, թ.1):
60. Նուխի քաղաքի Ս.Մարիամյան օրիորդաց դպրոցը բացվել է 1873-ին («Դպրոց», 1875-76թթ. թ.4), գործել է մինչև 1910թ.:
61. Վարանդա գավառի Գիշի գյուղի ծխական դպրոցը բացվել է 1888թ. (ՀՀ ԱԱ, ֆ.56, գ.149, թ.112): Փակվել է 1896-ին, վերաբացվել՝ 1906-1907թթ. երկդասյա-երկսեռ դպրոցը, որտեղ ուսանում էին 27 տղա և 27 աղջիկ:
62. Ղուզե Ճարտարի ծխական դպրոցը բացվել է 1907թ., իսկ Գյունե Ճարտարինը՝ 1908թ. (ՀՀ ԱԱ, ֆ.56, գ.43, թ.6):
63. «Մշակ» 1892, թ.2: Կարելի է անվարան ասել, որ այդ շրջանում հայկական ոչ մի թերթ չի ունեցել գյուղական այնքան թղթակիցներ, որքան «Մշակը»: Նրանց նամակները «Մշակը» դարձնում են գյուղական կյանքի մի հանրագիտարան, որտեղ անսպառ նյութ կարելի է գտնել նաև Արցախի թեմի գյուղերի 80-90-ական թթ. սոցիալ-տնտեսական, մշակութային տեղաշարժերի մասին:

չուհիների՝ Սաթենիկ Զաքարյանի, Եկատերինա Սարգսյանի, Ելենա Առաքելյանի և ուրիշների նախաձեռնությամբ Շուշի քաղաքում հիմնվել է «Ազգանվեր հայուհյաց» ընկերություն (այդպիսի մի ընկերություն առաջին անգամ հիմնադրվել է Շուշիում 1865թ.), որի նպատակն էր նվիրատվությունների և հանգանակությունների միջոցով գյուղերում բացել երկսեռ դպրոցներ, գրադարան-ընթերցարաններ: «Մշակ» թերթի 1898թ. թ. 6-ում[64] տպագրված շուշեցու մի հոդվածում նշվում է, որ 1894-1895 ուստարում, Շուշիի երկսեռ օրիորդաց դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիները, այդ թվում նաև Ս. Զաքարյանը, պարբերաբար համերգներ էին տալիս ոչ միայն Շուշի քաղաքում, այլև գավառի գյուղերում, միաժամանակ տղաներին, աղջիկներին սովորեցնում ազգային, հայրենասիրական երգեր, նրանց մեջ պատվաստում սեր հայկական երաժշտական մշակույթի նկատմամբ:

Եվ չնայած դարի 90-ական թվականների կեսերին ծանր, վտանգներով լի կացություն է ստեղծվում հայ հասարակության համար. ցարական իշխանությունների կողմից խիստ հսկողություն է սահմանվում առանց այն էլ աղքատության ճիրաններում գալարվող հայ դպրոցի վրա, փակվում են նաև հայկական բարեգործական, դպրոցասիրաց, թատերական և այլ ընկերությունները, այնուամենայնիվ, Շուշիի թեմական դպրոցի նվիրյալ մանկավարժների հետ միասին Արցախի կին լուսավորիչ-մանկավարժները շարունակում էին իրենց լուսավորչական գործունեությունը, մեծ ջանքերի շնորհիվ՝ կառավարությունից գաղտնի պահպանելով կրթօջախները, փորձում վերականգնել հասարակական ընկերությունների կրթանպաստ գործունեությունը:

Բացի վերոնշյալ կին լուսավորիչ-մանկավարժներից, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի թեմում բազմաբովանդակ մշակութա-լուսավորչական ձեռնարկումների իրականացման գործում աչքի ընկնող դեմքերից են նաև Հեղինե Մալխասյանը, Հռիփսիմե Բաղդասարյանը, Զարուհի Արզումանյանը և շատ ուրիշներ:

<u>Հեղինե Մալխասյան:</u> Անվանի մանկավարժ, Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցի շրջանավարտ: «Արարատ» ամսագրի 1890թ. թ. 12-ում տպագրված Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Եղիշե Մադաթյանի հաշվետվության մեջ (Վիճակագրական տեղեկություններ Արցախի թեմի դպրոցների մասին) նշվում է, որ Հադրութի (Դիզակի գավառի կենտրոն) Մարիամյան օրիորդաց դպրոցը հիմնվել է 1890թ. սեպտեմբերին: Առաջին ուսուցչուհին է եղել Հ. Մալխասյանը: Օրիորդաց դպրոցի երկու միացյալ բաժանմունքներում սովորել է 50 աղջիկ: Ուսումնական առարկաները նույնն էին, ինչ տղաների միդասյա ծխական դպրոցում, ավելացել է միայն ձեռագործը: 1893-1894 ուստարվանից դպրոցը դարձել է երկդասյա՝ 4 բաժանմունքով, իսկ հաջորդ ուսումնական տարում ունեցել է 5 բաժանմունք. 84 աշակերտուհի, 4 ուսուցչուհի: 1896թ. փակվել է, և նրա փոխարեն բացվել աղջիկների պետական ռուսական տիպի դպրոց: 1906թ. վերաբացվել է օրիորդաց դպրոցը 3 բաժանմունքով, իսկ 1907-1908 ուստարում՝ ունեցել 4 բաժանմունք, որոնցում սովորում էր 114 աղջիկ, 1909-1910 ուստարվանից տղաների և աղջիկների դպրոցների որոշ խմբեր միացվում են, և բացվում է երկդասյա երկսեռ դպրոց, որն ունենում է 5 բաժանմունք՝ 150 աշակերտ-աշակերտուհի, 8 ուսուցիչ-ուսուցչուհի: Այդ տարիներին (1890-1910թթ.) օրիորդաց երկդասյա երկսեռ դպրոցի տնօրենն էր Հ. Մալխասյանը[65]:

---

64. «Մշակ», 1898, թ.6:

65. Այդ մասին մանրամասն տե՛ս «Արարատ», 1890 թ.12, էջ 696, 1894, թ. 7, էջ 227, «Նոր դպրոց», 1913, թ.3, էջ 65-71, թ.5, էջ 54-62: Նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ.122, թ.1, գ.543, թ. 13:

«Նոր դպրոց» ամսագրի 1913թ. թ.3-5 համարներում տպագրվել է Հադրութի Ս. Թարգմանչաց միդասյա (1879թ.), այնուհետև երկդասյա (1886թ.) դպրոցի ուսուցիչ Սերգեյ Տեր-Գասպարյանի «Հադրութի արական և իգական դպրոցների համառոտ պատմությունը՝ 1876-1910թթ.» խորագրով ծավալուն հոդվածը[66], որտեղ հանգամանորեն նշվում է նաև Հադրութի Մարիամյան դպրոցի տնօրեն, Շուշիի հոգաբարձուական խորհրդի, «Ազգանվեր հայուհյաց» ընկերության անդամ Հ. Մալխասյանի մանկավարժական գործունեության, նրա իրականացրած մշակութա-լուսավորչական մի շարք ձեռնարկումների մասին:

Համաձայն հոդվածի տվյալների՝ Հ. Մալխասյանն աշխատել է նաև Հադրութի Ս. Թարգմանչաց միդասյա-երկդասյա դպրոցում (հիմնադրվել է 1879թ.), դասավանդել հայոց լեզու, գրականություն, պատմություն, աշխարհագրություն, երգերաժշտություն (աղջիկների դպրոցում՝ ձեռագործ) և նկարչություն առարկաները:

1893-1894 ուստարում Հ. Մալխասյանն ստանձնում է օրիորդաց երկդասյա դպրոցի տնօրենի պաշտոնը և ձեռնամուխ լինում որոշ փոփոխությունների իրականացմանը դպրոցի ներքին կյանքում: Նա պայքարում է դպրոցում տիրող կամայականությունների դեմ, պահանջում, որպեսզի դպրոցում ուսուցիչներն իրենց աշակերտների համար լինեն հոգատար, պահանջկոտ դաստիարակ, մարդասիրական վերաբերմունք ցուցաբերեն յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, հաճախակի մասնակցեն աշակերտների խաղերին, զբոսանքներին, էքսկուրսիաներին, և ամենասովորական զրույցներն ու դասերը պետք է ընթանան հաճելի, հետաքրքիր ու արդյունավետ: Հոդվածի հեղինակը, որպես ականատես, պատմում է, որ առաջին իսկ օրից Հ. Մալխասյանը Հադրութի Մարիամյան օրիորդաց երկդասյա դպրոցում, այնուհետև Ս.Թարգմանչաց միդասյա դպրոցում աշխատելու տարիներին (1890-1913թթ.)[67] ուսուցչական խմբի (կոլեկտիվի) շունչն ու ոգին էր, բոլորին համախմբում էր իր շուրջը, օգնում նրանց ինչպես անձնական խորհուրդներով, այնպես էլ մանկավարժական-մեթոդական զեկուցումներով: Նրա եռանդուն գործունեության շնորհիվ այդ տասնամյակում Հադրութում կանանց կրթության գործը դառնում է հրամայական պահանջ: Կյանքի պահանջներին համընթաց ժողովրդի մեջ ավելի է բորբոքվում հետաքրքրությունը կանանց կրթության գործի նկատմամբ:

«Նոր դպրոց», «Արարատ» ամսագրերի տարբեր համարներում տպագրված նամակներից,[68] արխիվային որոշ փաստաթղթերից[69] տեղեկանում ենք, որ Արցախի թեմում, երբ փակվեցին հայկական դպրոցները (1895-1905թթ.), Հ. Մալխասյանը դասավանդել է Մարիամյան օրիորդաց դպրոցի փոխարեն բացված աղջիկների պետական (ռուսական տիպի) դպրոցում: Իսկ, երբ վերաբացվում են հայկական դպրոցները (1905-1906 ուստարում), Հ. Մալխասյանը, որպես նորաբաց Մարիամյան երկդասյա դպրոցի տնօրեն, շարունակում է իր բեղուն մանկավարժական գործունեությունը մինչև 1913թ. (նրա հետագա գործունեության մասին արխիվային փաստաթղթերում չի հիշատակվում):

---

66. «Նոր դպրոց», 1913, թ.3, էջ 65-71, թ.5, էջ 52-62: Նաև տե՛ս Շուշիի կոնսիստորիայի «Վիճակագրական տեղեկություններ Արցախի թեմի դպրոցների 1888-1889 ուս. տարվա», էջ 101, ՀՀ ԱԱ, ֆ.56, գ.543, թ.12, «Արարատ», 1913, թ.4, էջ 301:
67. «Նոր դպրոց», 1913, թ.3, էջ 66-68:
68. «Նոր դպրոց», 1913, թ.5, էջ 54-58:
69. ՀՀ ԱԱ, ֆ.56, գ.122, թ.1, գ.543, թ.13:

Հ. Մալխասյանը եռանդուն զբաղվում էր ոչ միայն կանանց կրթության գործը բարձր հիմքի վրա դնելու խնդրի լուծմամբ, ինչը նա համարում էր ազգային վերածնության կարևոր նախապայմաններից մեկը, այլև իրականացնում մի շարք լուսավորչական ձեռնարկումներ՝ դպրոցներում գրադարան-ընթերցարանների բացում, ուսուցիչների և աշակերտների ուժերով բնակչության համար համերգների, թատերական ներկայացումների կազմակերպում, միաժամանակ ձեռնամուխ էր լինում բարերարչական գործի՝ ձգտելով հանգանակությունների, նվիրատվությունների միջոցով ինչ-որ չափով բարելավել դպրոցների նյութական վիճակը, որպեսզի այդ կրթօջախները չդադարեցնեն իրենց գործունեությունը:

Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսյանի՝ «Արարատ» ամսագրի 1894թ. թ.4-ում տպագրված «Վիճակագրական տեղեկություններ 1893-1894թթ. Արցախի դպրոցների մասին» հոդվածում նշվում է նաև Դիզակի գավառի դպրոցներում Հ. Մալխասյանի կազմակերպած բազմաբնույթ միջոցառումների մասին: Օրինակ, 1892-1893 ուստարում նրա նախաձեռնությամբ Մարիամյան օրիորդաց դպրոցի ուսուցչուհիների և աշակերտուհիների ուժերով երաժշտական երեկույթներ ու ցերեկույթներ են կազմակերպվում ոչ միայն դպրոցում, այլ նաև հաճախակի՝ գավառի գյուղերում, այդպիսով իսկ զգալի չափով նպաստելով բնակչության շրջանում երաժշտական կյանքի աշխուժացմանը: Հետագայում (1907-1917թթ.) Մարիամյան օրիորդաց դպրոցն ունենում է իր երգչախումբը,[70] որը ոչ միայն համերգներով էր հանդես գալիս գավառի գյուղերում, այլև հսկայական աշխատանք կատարում Արցախի ժողովրդական երգերի հավաքման ու մշակման, երաժշտական բազմազան գործերի ստեղծման ասպարեզում: Այդ ժամանակաշրջանում երաժշտության տարածման ուղիներից մեկը դպրոցներն էին: Երաժշտությունը՝ որպես դասավանդման առարկա, վաղուց էր մուտք գործել Արցախի դպրոցները: Ուշագրավ է նշել նաև այն փաստը, որ Հ. Մալխասյանի տնօրինության շրջանում Մարիամյան օրիորդաց երկդասյա երկսեռ դպրոցում՝ 1907-1908 ուսումնական տարում, շնորհալի ուսուցիչների և աշակերտների ուժերով, բացի համերգներից, հաճախակի էին տրվում նաև թատերական ներկայացումներ՝ օրիորդաց, Ս.Թարգմանչաց դպրոցներում, ինչպես նաև բնակչության համար:

Այսպիսով հայրենասեր կին լուսավորիչ-մանկավարժն իր գործունեության տարիներին մեծ նվիրվածություն է դրսևորել ոչ միայն կանանց կրթության նկատմամբ՝ ձգտելով բարելավել այն, այլև լայն մշակութա-լուսավորչական գործունեություն ծավալել Դիզակի գավառում՝ վաստակելով դպրոցասերի մեծ համբավ:

Ինչպես վկայում են արխիվային և այլ փաստաթղթեր[71], ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի թեմում բեղուն մանկավարժական գործունեություն է ծավալել նաև **Հռիփսիմե Բաղդասարյանը,** ով, ավարտելով Թիֆլիսի Մարիամյան Հովնանյան դպրոցը (հիմ. 1877թ.), երկար տարիներ ուսուցչություն էր անում Վարանդա գավառի Ավետարանոց (Չանախչի), Ճարտար գյուղերի դպրոցներում: Այդ ոգով էր տոգորված **Զարուհի Արզումանյանը,** որը դասավանդել է Շուշի քաղաքի Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցում (1884-1910թթ.),[72] Շուշիի կուսանաց մենաստանի (կուսանոցի Անապատին) կից գործող ծխական դպրոցում (հիմնադրվել է 1873թ.) 1890-1892 թթ.,[73] այդ թվականներին երգ-երաժշտու-

70. Նույն տեղում:
71. ՀՀ ԱԱ, ֆ.56, ց.3, գ.78, թ.43:
72. Լեո, նշվ. աշխ., թեմ. դպ. պատմ., էջ 385-386: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1885, թ.63:
73. ՀՀ ԱԱ, ֆ.56, գ.43, թ.6, գ.50, թ.60:

թյուն դասավանդել նաև Շուշի քաղաքի Մեղրեցուց Ս.Աստվածածին եկեղեցու արական դպրոցում: Նրա հետ միասին Շուշի քաղաքի և գավառի դպրոցներում երկարամյա մանկավարժական գործունեություն են ծավալել նաև **Ելենա Առաքելյանը, Եկատերինա Սարգսյանը, Գալյա Հովակիմյանը, Ոսկի Թավրիզյանը, Վարսենիկ Գյանջեցյանը, Շուշանիկ Բեգլարյանը և շատ ուրիշներ,** որոնց բեղուն մանկավարժական գործունեությունը շարունակվեց նաև խորհրդային շրջանում՝ Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցներում ***(այդ մասին մանրամասն՝ աշխատության երկրորդ հատորում):***

Այսպիսով, վերոհիշյալ համառոտ շարադրանքից էլ դժվար չէ եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած ցարական կառավարության ազգահալած քաղաքականության հետևանքով Արցախի թեմում ստեղծվել էին ծայրահեղ դժվարություններ, հատկապես դպրոցների նյութական ապահովության ոլորտում, այնուամենայնիվ, վերոնշյալ և շատ ուրիշ կին լուսավորիչ-մանկավարժները, ժողովրդական ուսուցիչները, մեծ մաքառումներով ու անձնվիրաբար շարունակել են իրենց ազգաշահ լուսավորչական գործունեությունը, ինչը երախտագիտությամբ է գնահատվում նաև այսօր՝ մեր ժամանակներում:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԻՃԱԿՆ ԱՐՑԱԽԻ ԹԵՄՈՒՄ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ (1900-1920 թթ.)

1. Արցախի դպրոցի ընդհանուր բնութագիրը 1900-1920թթ.

Քննարկվող ժամանակաշրջանում՝ 1900-1920թթ., Արևելյան Հայաստանում, (նաև Արցախում) տեղի ունեցան նշանակալից իրադարձություններ: Սոցիալ-տնտեսական, քաղաքական տեղաշարժերը, ծավալված հեղափոխական-գաղափարական սուր պայքարը հասարակական միտքը բևեռեցին երկրամասի առաջընթացի ուղիների որոնման վրա: Նրանք, ովքեր անվերապահորեն ընդունում էին հեղափոխության ռուսական ուղին, հավաքագրվեցին հասարակական մտքի հեղափոխական հոսանքի բանակում: Նրանք, ովքեր, չմերժելով ռուսական քաղաքակրթությունը ու դեմ չլինելով յուրացնելու նրա նվաճումները, սակայն նախանձախնդիր էին ազգային առանձնահատկությունների և ինքնուրույնության պահպանման խնդրում, խմբավորվեցին ազգային ինքնուրույնության-պահպանողականության դրոշի տակ: Այս երկու հոսանքներն էլ արտահայտում էին քաղաքական իրադարձությունների շիկացած մթնոլորտում որոշ չափով տուժող ժողովրդի շահերը: Ինչպես միշտ՝ անցյալ դարերում, այնպես էլ բնութագրվող ժամանակաշրջանում հայերի ռուսական կողմնորոշումը զորացավ՝ հիմքում փայփայելով ռուսական զենքի օգնությամբ ազատագրվելու և ազգային ինքնուրույնությունը պահպանելու հույսը: Արևմտյան Հայաստանը թուրքական անարգ լծից ազատագրելու համար ծավալված ազգային-ազատագրական պայքարը, կամավորական շարժումն աննախադեպ թափ ստացան ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության շրջանում, վերջինիս արցախյան հատվածում: Սկսված լինելով ցարական կառավարության ազգահալած քաղաքականության պայմաններում՝ հայ ազատագրական շարժումը նոր փուլ մտավ, ազգային ինքնագիտակցությունը հասավ սեփական ուժին ապավինելու, ազատությունը զենքով նվաճելու անհրաժեշտության ըմբռնմանը: Ճիշտ է, 1900-1920թթ. ինչպես Արևելյան Հայաստանի մի շարք տարածքներում, այնպես էլ Արցախում ստեղծվեցին տարբեր կուսակցություններ, խմբակներ («Հեղափոխական», «Բոլշևիկյան», «Զքավորական», «Դաշնակցական», «Հնչակյան» և այլն) ու միություններ, որոնք հասարակական-քաղաքական կյանքում նշանակալից դեր խաղացին, սակայն նրանց գործունեությունը չարգասավորվեց միասնական ծրագրի բացակայության պատճառով: Բայց ճշմարտությունն այն է, որ այն մեծապես խթանեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացումը: Հասարակական հոսանքների պայքարը նախապատրաստեց և հանգեցրեց նոր՝ քաղաքական կուսակցությունների ձևավորման փուլին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի նշանակալի իրադարձություններն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաև երկրամասի մշակութային, դպրոցական կյանքի զարգացման վրա՝ ժողովրդական լուսավորության ասպարեզում առաջադրելով նոր պահանջներ ու նոր խնդիրներ:

Հարկ է նշել, որ XX դարի սկզբներին ցարական կառավարությունը դեռևս շարունակում էր վարել հետադիմական հակահայկական քաղաքականություն (ինչ-

պես XIX դարի 80-90-ական թվականներին), հատկապես լուսավորության բնագավառում: Ռուսաստանի մյուս ճնշված ժողովուրդների նման Անդրկովկասի, այդ թվում նաև Արցախի հայ բնակչությունն անմասն չէր երկրում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերից: Ազգային զարթոնքը, ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման անհրաժեշտությունը հրամայաբար պահանջում էին հրաժարվել հին կրոնական սխոլաստիկ դպրոցից և նորովի վերակառուցել հայ ազգային դպրոցը:

Այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի տրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում, ինչպես նաև Արցախում ծավալվող հասարակական, հեղափոխական, ժողովրդավարական և կրթալուսավորչական շարժման ազդեցությամբ հայ առաջադեմ գործիչներն իրենց հրապարակախոսական և քաղաքական հրապարակումներում կամ գեղարվեստական գործերում բազմազան խնդիրներ էին արծարծում ժողովրդական կրթության վերաբերյալ և քննարկում մանկավարժական բազմաբնույթ հարցեր: Նշենք, որ այդ ժամանակաշրջանում լուսավորության տարածման և դպրոցական գործի զարգացման բնագավառում հսկայական դեր կատարեց նաև ժամանակի պարբերական մամուլը («Արարատ», «Մշակ», «Նոր դպրոց», «Աղբյուր», Շուշիի՝ «Ղարաբաղ», «Միրաժ», «Միություն», «Փայլակ», «Պայքար», «Նեցուկ» և այլն), որն արտահայտում էր ժողովրդավարական խավերի տրամադրություններն ու հայացքները: Անշուշտ, ցարական կառավարությունը չէր կարող անտարբեր մնալ ծավալվող հասարակական, ժողովրդական շարժման նկատմամբ: Այդ իսկ պատճառով կիրառեց իր ռեակցիոն քաղաքականությունը, հատկապես լուսավորության բնագավառում:

Աշխատության չորրորդ գլխում անհրաժեշտ փաստագրական նյութերի պատմաքննական վերլուծության հիման վրա հանգամանորեն ցույց ենք տվել, որ ցարական կառավարությունն իր լուսավորչական-դպրոցական քաղաքականությունը (ռուսականացման քաղաքականությունը) սկսել էր կիրառել դեռևս XIX 30-ական թվականներին, այն ավելի ուժեղացրել 80-ական, առավել ևս 90-ական թվականներին: Այդ քաղաքականությունը հիմնականում հետևյալ նպատակներն էր հետապնդում.

ա) առաջին հերթին արքունական դպրոց ավարտողների մեջ դաստիարակել հավատարիմ, հպատակային զգացումներ դեպի Ռուսաստանն ու ցարը,

բ) պատրաստել տարբեր կարգի ու որակավորման աստիճանավորներ ռազմական, պետական, դատական ապարատի տեղական մարմինների համար,

գ) արգելակել Ռուսաստանի ծայրամասերում գոյություն ունեցող զեմստվոյական դպրոցների բացումը և ընդլայնել եկեղեցական ծխական դպրոցների թիվը,

դ) ուժեղացնել հոգևորականության ազդեցությունը տարրական դպրոցների վրա և սահմանել կառավարական խիստ հսկողություն ուսուցիչների գործունեության նկատմամբ,

ե) ոչ ռուս ժողովուրդներին արգելել դպրոցներում ուսուցումը տանել մայրենի լեզվով և այլն[1]:

Հայ դպրոցի անհրապույր ներկան և է՛լ ավելի դժգույն ապագան խիստ անհանգստություն էին պատճառում հայ և ռուս ականավոր գործիչներին: Բնութագրելով ցարիզմի ռեակցիոն քաղաքականությունը՝ հայտնի հասարակական, քա-

1. Арешян С. П. Армянская печать и царская цензура, Ереван, 1953, ст. 22-26. Նաև, Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, էջ 168-170, 182-184:

ղաքական գործիչ Սարգիս Կասյանը (Տեր-Կասպարյան, 1876-1937թթ., ծնված Շուշի քաղաքում, ավարտել է ռեալական ուսումնարանը) գրել է. «Տասնյակ տարիների ընթացքում ինքնակալությունը ճիգ ու ջանք է թափել ազգայնապես դիմազուրկ անել Անդրկովկասի բաղկացուցիչ մասերը, խառնաշփոթ անել նրա ազգային քարտեզը, դարձնել նրան, եթե կարելի է այսպես ասել, ապազգային ազգությունների կոնգլոմերատ: Քմահաճ վարչական բաժանումներով, բռնի արտագաղթով ու ներգաղթով նա ստեղծում է Անդրկովկասում ազգությունների ու ժողովուրդների իրար հյուսված և խառնիճաղանճ մի ցանց, մի քաոսային «ամբողջություն», ուրպեսզի հիշատակություն անգամ չլինի ազգային տերիտորիաների մասին, որպեսզի ազգություններից և ոչ մեկը չհամարձակվի մտածել ազգային ամենաչնչին շահի մասին՝ որոշ տերիտորիաների վրա, առանց շոշափելու մի ուրիշ ազգության նույնքան ավելի չնչին շահը...»:[2]

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Կովկասում հաստատված գոլիցինյան ռեժիմը խորացրեց հայահալած քաղաքականությունը, որի մասին հետագայում ռուս հայտնի քաղաքական գործիչ Յուրի Վեսելովսկին (ռուս գրականության պրոֆեսոր, վաստակաշատ գիտնական, Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասախոս)[3] գրում է. «Որքան տանջալի ու ցավալի է գիտակցել, որ ռուս ժողովուրդը կարծես թե պատասխանատու է այն ամենի համար, ինչ նրա անունով կատարվում էր Ռուսաստանի ծայրամասում: Ինքնակալական ռեժիմը մեկ անգամ չէ, որ կեղծավորաբար քողարկված էր նրա շահերով՝ արշավի ելնելով ուրիշների կուլտուրայի դեմ... բայց միշտ էլ ուզում էր հավատալ, որ ռուս ժողովուրդը այստեղ մեղք չունի, որ նրա անունով ինքնակոչ կերպով խոսում էին ազատության ճնշողներն ու թշնամիները»:[4]

Հայ ժողովրդի բարեկամը՝ Յուրի Վեսելովսկին, «Восточный сборник»-ում[5] (այդ ժողվածուն Մոսկվայի Լազարյան ճեմարանում լույս է տեսել 1905-1914թթ., հայ և ռուս գիտնականների համագործակցությամբ և կարևոր երևույթ էր հայ և ռուս ժողովուրդների մշակութային առընչությունների զարգացման գործում) ամենախիստ կերպով մերկացնում է նաև թուրք ջարդարարների կողմից իրագործվող հայաջինջ քաղաքականությունը:

Ի դեպ, նշենք, որ դեռևս 1897թ. Լազարյան ճեմարանի դասախոսների և Յու. Վեսելովսկու անմիջական նախաձեռնությամբ և ռուս գիտնականների մասնակցությամբ հրատարակվում է «Братская помощь пострадавшим в Турции армянам» (Том 1 и 2, 1897г.) գիտական և գրական ժողվածուն:

Այս երկհատորյակի հրատարակությունը հայ և ռուս գիտնականների համագործակցության փայլուն դրսևորում է, որի ավանդույթները շարունակվում են նաև մեր օրերում: Լուսավորության բնագավառում հայերի նկատմամբ ցարիզմի վարած հրեշավոր քաղաքականությունը, դպրոցների, եկեղեցիների ու վանքերի գույքի բռնի գրավումը, գոլիցինյան ստոր ռեժիմը, հայերի դեմ ուղղված հալածանքը Յու. Վեսելովսկին և ռուս առաջադեմ մտավորականները համարում էին «ոստիկանական ավերումներ» այն բանի, ինչ որ հայ ժողովուրդն անում է իր լուսավորման համար»:[6]

---

2. «Նորք», 1923, Գիրք 3, էջ 132:
3. Ա. Իգնատյան, Լազարյան ճեմարան, Երևան, 1969, էջ 278-279:
4. “Вестник воспитания”, 1905, N 9, ст. 134.
5. Նույն տեղում, էջ 135-136:
6. Ա. Իգնատյան, նշվ. աշխ., էջ 279-280:

Ինչպես նշել ենք աշխատության 4-րդ գլխում, հայերի դեմ ծավալված անզուսպ հալածանքի պայմաններում, հայ լուսավորչական բոլոր թեմերում, այդ թվում նաև Արցախի թեմում կրթական գործի զարգացման համար XIX դարի վերջին և XX դարի սկզբին ստեղծվեցին անբարենպաստ պայմաններ, կառավարության որոշմամբ տասը տարի շարունակ (1895-1905թթ.) փակվեցին հայկական դպրոցները: Գոլիցինի առանձնահատուկ մտահոգության առարկա էին նաև հայկական բարեգործական ընկերությունները, որոնց նա համարում էր հեղափոխական-ազգային շարժմանն օժանդակող մարմիններ, ոչ պակաս վտանգավոր, քան դպրոցները: Սկսվեց հայ մամուլի ու գրականության չտեսնված հալածանք:

Արցախի թեմի առաջնորդի՝ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեցյանի, էջմիածնի Սինոդին ներկայացրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 1900-1903թթ. ամբողջ թեմում փակված դպրոցների քանակը հասնում էր 26-ի, որտեղ դասավանդում էր ավելի քան 32 ուսուցիչ և սովորում 790 աշակերտ[7]:

Ժամանակակիցների (թեմի դպրոցի ուսուցիչներ Արշակ Չիլինգարյան, Արամ Թարխանյան, Համբարձում Առաքելյան) հիշողությունների հիման վրա Լեոն վկայում է, որ դպրոցների փակումը կատարվում էր ոստիկանական բռնի ուժով, որը և մեծ վիշտ էր պատճառում ժողովրդին: Իշխանություններն ուսուցիչներից ստորագրություն էին վերցրել, որպեսզի նրանք մասնավոր տներում կամ գաղտնի դպրոցներում չզբաղվեն երեխաների ուսուցմամբ[8]:

Հայերի կրթական գործի դեմ սկսած ցարիզմի լայն հալածանքը միայն տարրական դպրոցներով չսահմանափակվեց: Ցարիզմը փակեց նաև թեմական դպրոցները, այդ թվում՝ Շուշիի թեմականը (1903-1905թթ.): Թեմական դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետն աքսորվեց, իսկ դպրոցի շենքը վերածվեց զորանոցի:

Իսկ ի՞նչ պայմաններում փակվեց Շուշիի թեմական դպրոցը: Վկայում ենք թեմականի աշակերտ Աբրամ Կիսիբեկյանի[9] հուշերից մի հատված. «Հնչում է զանգը, բոլորս դուրս ենք գալիս բակը: Թեմական դպրոցի փողոցի երկայնքով կանգնած են զորքեր ու ոստիկաններ: Նրանք խուզարկել են դպրոցը, ձերբակալել բարձր դասարանների աշակերտներից և ուսուցիչներից մի քանի հոգի, որոնք մասնակցել են 1903թ. հունիսի 12-ին ցարի կողմից ընդունված «օրենքի» դեմ բողոքի ցույցին: Մեր սիրելի ուսուցիչներից մի քանի հոգի գտնվում էին բանտում: Այսպես մենք ամեն օր գնում էինք դպրոց, բայց ոչ մի պարապմունք չէր լինում: Գալիս էին մեր ուսուցիչներից, որոնք չեն ձերբակալվել, մի քանի խոսք էին ասում, որ չմոռանանք մեր մայրենի լեզուն, սիրենք մեր դպրոցը, մեր ազգը և գլուխները դնում սեղանի վրա, երեսները ծածկում ձեռքերով, իսկ մենք՝ երեխաներս, ազդվելով մեր ուսուցիչներից, լուռ, մեր արցունքները հոսում էին, բայց ոչ մի ձայն չէինք հանում:

Զինվորականները հանկարծ մտան դպրոցի բակը, աշակերտներին և ուսուցիչներին զոռով դուրս արին դասարաններից, դպրոցի բակից ու դարպասը փակեցին: Մեր սիրելի տեսուչ Իլ. Զորաբյանը նորից պատվիրեց մեզ սիրել մայրենի լեզուն ու պինդ պահել, չմոռանալ մեր սիրելի դպրոցը: Նրա և ուսուցիչների արցունքները թափվում էին, նա այլևս իրեն զսպել չկարողացավ, իսկ մենք՝ հարյու-

7. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 10, գ. 314 և 220:

8. Լեո, Շուշիի թեմական դպրոցի պատմություն, էջ 580-582:

9. Աբրամ Կիսիբեկյան (1892-1972 թթ.). ծնվել է Վարանդա գավառի (Մարտունի) Սխտորաշեն գյուղում, հունվարի 22-ին: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի եկեղեցական ծխական դպրոցում, այնուհետև ընդունվել է Շուշիի թեմական դպրոցը 1903թ. և ավարտել 1913թ.: («Հուշեր», 2011, հատ. 1, էջ 3-18):

ռավոր երեխաներ, բարձր լաց լինելով, բռնած իրար ձեռքից վերջին «մնաս բարովն» ասելով դուրս եկանք բակը ու այնտեղից էլ՝ փողոց... Ահա այսպես փակեցին մեր սիրելի թեմական դպրոցը՝ բազմաթիվ երեխաների փողոց շպրտելով...»:[10] Համբարձում Առաքելյանի աշխատության տվյալների համաձայն, այդ ժամանակ Շուշիի թեմական դպրոցում սովորում էր 570 աշակերտ, դասավանդում 26 ուսուցիչ»:[11]

Այդ մասին Լեոն գրել է. «Հազիվ է փոքր-ինչ սկսել լուսավորական գործը, երբ նորից մի դժբախտություն է հարվածում Ղարաբաղի թեմի հայ ազգաբնակչությանը»:[12]

Շուշիի թեմական դպրոցը փակելուց հետո ամբողջ գույքը ցուցակագրվում և հանձնվում է թեմի առաջնորդին, իսկ շինությունը, օրենքի համաձայն, անցնում է կառավարության ձեռքը՝ իբրև եկեղեցական իշխանությանը պատկանող կալվածք:

1903թ. հունիսի 12-ի օրենքի համաձայն հայ լուսավորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատություններին և ուսումնարաններին պատկանող ամբողջ անշարժ գույքը և կապիտալը՝ բնակեցված ու չբնակեցված հողերը, անտառները, մարգագետինները և այլն, անցնում են պետական համապատասխան մինիստրությունների (նախարարությունների) տնօրինությանը: Ընդ որում՝ անշարժ գույքը կառավարվելու էր հողագործության և պետական գույքերի մինիստրության, իսկ կապիտալները՝ ներքին գործերի մինիստրության կողմից: Հայկական եկեղեցական ծխական դպրոցները զրկվում են գոյության միջոցներից: Այդ օրենքն ամբողջությամբ ուղղված էր հայ ժողովրդի ու նրա մշակույթի դեմ: Լեոյի բնութագրմամբ՝ դա մի արտակարգ պատժամիջոց էր հայ ժողովրդի նկատմամբ, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը, փաստորեն, եկեղեցին էր. «Եթե վերջինս հնազանդեցվեր ու դառնար հլու կամակատար, ապա, ցարական բյուրոկրատիայի կարծիքով, ժողովուրդը կդիմազրկվեր և ոչինչ այլևս անել չէր կարող»:[13]

Հիշյալ օրենքի համաձայն՝ սկսվեց նաև հայ մամուլի և գրականության հալածանքը: Ազգային հարցերը շոշափող հոդվածներն արգելվում էին մամուլում, փակվում են հայոց հրատարակչական ընկերությունները, այդ թվում նաև Շուշիում: Խստագույն գրաքննություն սահմանվեց հայ մամուլի ու գրականության նկատմամբ, արգելվեցին հայ մշակույթի գործիչների, այդ թվում և գրողների հոբելյանների կատարումը: Գ. Լևոնյանը մի առիթով նշում է, որ 1890-1906թթ. տխուր շրջան էր հայ մամուլի համար: Դրա հիմնական պատճառը, իհարկե, քաղաքական իրավիճակն էր, ցարական գրաքննության դաժանությունը: Ցարիզմն ամեն կերպ ձգտում էր փականքի տակ դնել լուսավոր միտքը և ոչ մի կերպ թույլ չտալ հրապարակ հանել մասսայական գրականություն, հրատարակել թերթ, ամսագիր, հանդես, որտեղ կարող էին թափանցել հակակառավարական և հեղափոխական մտքեր: Հետզհետե ավելի դաժան է դառնում գրաքննությունը, հատկապես 1905թ. հեղափոխության նախօրյակին:[14]

---

10. Աբրամ Կիսիբեկյան, նշվ. աշխ., էջ 120-123:
11. Համբարձում Առաքելյան, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, էջ 66: Նաև, «Նոր դպրոց», 1907, թ. 7:
12. Լեո, Շուշիի թեմական դպրոցի պատմություն, էջ 578:
13. Նույն տեղում, էջ 580: Տե՛ս նաև Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, էջ 239:
14. Տե՛ս Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 133:

Ցարիզմի այդ հակաժողովրդական քաղաքականության դեմ գնալով ծավալվում են դժգոհությունները: Ամենուրեք տարերային հավաքներ ու ժողովներ են կազմակերպում, որոշում պայքարի ելնել և ցույցեր կազմակերպել: Առանձնապես ուժեղ դիմադրություն ցույց տվեցին Շուշիի հայ հասարակությունը և թեմականի աշակերտները, երբ տեղական իշխանությունները պատրաստվում էին փակված թեմականի գույքը վերցնել:

Արցախի հասարակության քաղաքական գիտակցության բարձրացմանը նպաստում էին նաև այն երիտասարդները, ովքեր սովորում էին երկրի տարբեր քաղաքաների միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում: Ամռան ամիսներին վերադառնալով հայրենի քաղաք՝ նրանք իրենց հետ բերում էին առաջադիմական (հեղափոխական-դեմոկրատական) գաղափարներ և ձգտում էին կազմակերպել ժողովրդի հասարակական, քաղաքական շարժումը՝ հանուն անկախության:

Հայ մշակույթի ու կրթական օջախների նկատմամբ ցարական կառավարության ցուցաբերած բռնության սաստկացումը չի ընկճում հայերին: Ընդհակառակը, նրանց մեջ էլ ավելի են ուժեղանում քաղաքական ու ազգային ինքնագիտակցությունը, հայրենասիրության ոգին, ազգապահպանման ձգտումները: Քանի որ նոր սկզբունքներով գործող հայկական դպրոցներում հայոց լեզու և գրականություն չէին ավանդվում, հայ ծնողներն իրենց երեխաների կրթությունը հայոց լեզվով գերադասում էին կազմակերպել տնային պայմաններում: Այդ նպատակով էլ հայաբնակ տարբեր վայրերում սկսեցին ստեղծել մայրենի լեզվով կրթություն տվող գաղտնի դպրոցներ: Պետք է ասել, որ ցարիզմի ազգահալած քաղաքականությունը հայ ժողովրդի ամենալայն զանգվածների շրջանում արթնացրել էր ազգային ինքնագիտակցությունը և բուռն սեր ու հետաքրքրություն մայրենի լեզվի, գրականության ու մշակույթի բոլոր ճյուղերի նկատմամբ: Գանձակի նահանգապետը Կովկասի փոխարքային ուղղված իր զեկուցագրում դժգոհում է, որ ժողովուրդը խիստ միահամուռ է հանդես գալիս, թաքցնում ու հովանավորում է ագիտատորներին, բաց է անում գաղտնի դպրոցներ, արհամարհանքի և ատելության մթնոլորտ ստեղծում պետական մարմինների նկատմամբ: Ցարիզմի ազգահալած քաղաքականության դեմ լայն ծավալ ստացավ համաժողովրդական շարժումը: Ռուսական առաջին հեղափոխության (1905թ.) վերելքը վերջապես ստիպեց ցարիզմին՝ վերացնելու հայերի նկատմամբ երկու տասնամյակից ավելի վարվող իր քաղաքականությունը: 1905թ. օգոստոսի 1-ին ընդունվեց որոշում 1903թ. հունիսի 12-ի օրենքի փոփոխման մասին: Որոշման համաձայն (հրամանի III, IV կետեր)՝ թույլատրվում էր Կովկասյան փոխարքայության սահմաններում եկեղեցիներին ու վանքերին կից բացել եկեղեցական ծխական դպրոցներ: Հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով ժողովրդին ազդարարվեց հրամանագրի մասին՝ բացել հայկական դպրոցները: Եվ այսպես, 1905-1906 ուստարում Արցախի թեմում վերաբացվեցին հայկական դպրոցները, իսկ նույն հրամանի IV կետի համաձայն՝ 1905թ. օգոստոսի 4-ին բացվեց Շուշիի թեմական դպրոցը: Վերաբացված հայկական դպրոցները կանգնում էին դժվարին խնդիրների առաջ: Պետք էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, պետությունից ընդունել դպրոցական գույքն ու շենքերը, մի խոսքով՝ ամեն ինչ նորից սկսել:

Հայերի նկատմամբ ցարական կառավարության վերաբերմունքի փոփոխումը, մասնավորապես, հայկական դպրոցների վերաբացումը մեծ աշխուժություն է առաջացնում հայ հասարակական և մշակութային կյանքում, այդ թվում նաև

մանկավարժների շրջանում: Կրկին հրավիրվում են ուսուցչական ժողովներ (1905թ. օգոստոս), լույս են տեսնում մանկավարժական պարբերականներ: 1907թ. «Կովկասահայ դպրոցների ուսուցչական միություն»-ն ունեցավ իր տպագիր օրգանը՝ «Նոր դպրոց» ամսագիրը, որտեղ հրատարակված հոդվածներում քննության են առնվում դպրոցի բնույթին, ղեկավարությանը, ուսուցման բովանդակությանը, ձևերին ու մեթոդներին վերաբերող բազմապիսի հարցեր, մշակվում են ծխական (1906թ.), հետո նաև թեմական (1907թ.) դպրոցների նոր ծրագրեր: Նոր ծավալ է ստանում դասագրքերի ստեղծման գործը: Այդ շարժմանը եռանդագին մասնակցում են ժամանակի նշանավոր հայ մանկավարժներն ու գրողները՝ Ղ. Աղայանը, Լ. Մանվելյանը, Իս. Հարությունյանը, Տ. Ռաշմաճյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Լ. Շանթը, Վ. Փափազյանը, Ա. Լիսիցյանը, Հ. Մանանդյանը և ուրիշներ: Հիշատակված առաջավոր գրողներն ու մանկավարժներն իրենց կազմած ծրագրերում, դասագրքերում և մեթոդամանկավարժական աշխատություններում լայնորեն արտահայտեցին ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը ժողովրդական սկզբունքներով վերակառուցելու գաղափարները:

Հայկական դպրոցների վերաբացումից հետո հայ անվանի մանկավարժների, դպրոցի և մանկավարժության ասպարեզի գործիչների՝ Ղ. Աղայանի, Ստ. Լիսիցյանի, Հ. Մանանդյանի, Ստ. Մալխասյանի, Մ. Աբեղյանի և ուրիշների նախաձեռնությամբ 1906թ. կազմվում է ծխական դպրոցների նոր կանոնադրություն: Կանոնադրության բովանդակության վրա զգացվում է ժամանակի առաջադիմական ուղղությունների ազդեցությունը: Դրանում իրենց արտահայտությունն են գտել դպրոցի ժողովրդականացման, աշխարհականացման և այլ առաջավոր գաղափարներ: Նոր կանոնադրությամբ նախատեսվում էր, որ տարրական դպրոցը պետք է լինի երկամյա, քառամյա և վեցամյա: Նրա նպատակն էր համարվում «կյանքի ընդհանուր նոր պահանջներին բավարարություն տալը, ուստի այս հաստատության մեջ պետք է ներդաշնակորեն միացած լինեն մտավոր, բարոյական և ֆիզիկական կրթությունը»:[15]

Անշուշտ, կանոնադրությունն ընդունվելուց հետո Արցախի թեմում ընդլայնվում է դպրոցական ցանցը: Սինոդի 1906թ. տվյալներով՝ Արցախի ամբողջ թեմում բացվում են 23 եկեղեցական ծխական դպրոցներ, որոնցից 6-ը երկդասյա էին, մնացածը՝ միդասյա: Վերջինս ուներ 4-ամյա դասընթաց, իսկ երկդասյա՝ հնգամյա դասընթաց: Նոր կանոնադրության համաձայն՝ հայկական դպրոցների համակարգի մեջ մտնում էին ծխական քառամյա և վեցամյա տարրական դպրոցներ: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1906-1907 ուստարում Արցախի թեմում գործում էր 40 դպրոց, որոնց կեսից ավելին երկսեռ երկդասյա էին: Այդ տասնամյակում սովորող աշակերտության քանակը հասնում էր 940-ի:[16] Ամենից ուշագրավն այն է, որ Արցախում բացվող դպրոցների մեծ մասը երկսեռ էր. մի հանգամանք, որ այն ժամանակվա համեմատ, անկասկած, առաջադիմական երևույթ էր: Ինքնին հասկանալի է, որ ժամանակի առաջադիմական պահանջները թելադրում էին, որ կնոջը, ինչպես հայ առաջադեմ մանկավարժներն էին նշում (Ղ. Աղայան, Իս. Հարությունյան, Տ. Ռաշմաճյան, Ստ. Լիսիցյան և ուրիշներ), պետք է կրթություն և դաստիարակություն տալ, ընդգրկել հասարակական գործունեության, ժողովրդի լուսավորության, ազատագրության համար մղվող պայքարի գործին: Նշենք, որ եթե մինչև XIX դարի 90-ական թվականները Արցախի թեմում

15. «Նախագիծ կանոնադրության ծրագիր հայոց տարրական դպրոցների», Թիֆլիս, 1906, էջ 12:
16. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 543, թ. 1-35, գ. 221, թ. 1-3:

գործում էր միայն Շուշիի բարեկարգ Մարիամյան օրիորդաց դպրոցը, որտեղ քիչ թե շատ կրթական աշխատանք էր տարվում, ապա հայկական դպրոցների վերաբացումից հետո, նոր կանոնադրության համաձայն, ընդլայնվում է միդասյա և երկդասյա՝ արական, իգական դպրոցների ցանցը, հատկապես 1907-1908 ուստարում:

Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Ստ. Տեր-Ավետիսյանի՝ 1909թ. օգոստոսի 4-ին գրած զեկուցագրում հայտնվում է, որ Շուշիի Մեղրեցոց միդասյա տղայոց դպրոցը բացվել է 1907թ. աշնանը: Այն բաղկացած է երկու բաժանմունքից՝ I և II: Դպրոցում սովորում է 70 աշակերտ: Այնուհետև ասվում է, որ «Ագուլեցոց միդասյա երկսեռ դպրոցը բացվել է 1908թ. սեպտեմբերին, բաղկացած է մի բաժանմունքից, ուր սովորում է 42 աշակերտ, որից 23-ը տղաներ են, իսկ 19-ը՝ աղջիկներ»:[17]

Զեկուցագրում նաև նշվում է, որ 1906-1907 ուստարում Վարանդա գավառի Աշան գյուղի միդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, որոնցում սովորում էին 38 տղա և 15 աղջիկ, ուներ 1 ուսուցիչ, Թաղավարդ գյուղի արական ծխական դպրոցում սովորում էր 80 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ, Գյունե Ճարտարի երկսեռ դպրոցի 68 աշակերտից 18-ը աղջիկ էր, Դիզակի գավառի Բանազուր գյուղի երկդասյա երկսեռ դպրոցի երեք բաժանմունքում սովորում էր 78 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ:[18]

Տեսչի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ որոշակիորեն կարգավորվում է դպրոցական գործը նաև Խաչենի ու Զրաբերդի գավառներում: Մատաղիս գյուղի միդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 56 աշակերտ, որից 22-ը՝ աղջիկ, Մեծ շենի երկսեռ միդասյա դպրոցն ուներ 2 բաժանմունք, 46 աշակերտ, մեկ ուսուցիչ, Մարտակերտ գյուղի ծխական իգական դպրոցում սովորում էր 60 աշակերտուհի և այլն: «Նոր դպրոց» ամսագրի 1913թ. III համարում տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ 1906-1907 ուստարում Հադրութում վերաբացվում է Մարիամյան օրիորդաց երկդասյա դպրոցը (դպրոցը հիմնվել է դեռևս 1890թ., առաջին ուսուցչուհին էր Հեղինե Մալխասյանը, այն փակվել է 1896-1905 թթ.), որն ուներ 4 բաժանմունք, 111 աշակերտուհի, 4 ուսուցիչ: Հադրութի արական երկդասյա դպրոցում սովորում էր 60 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 1912թ. այդ դպրոցը դարձավ երկդասյա երկսեռ, որտեղ սովորում էր 180 աշակերտ, որից 88-ը՝ աղջիկ:[19]

Թեմական դպրոցի տեսուչը հայտնում է նաև, որ համեմատաբար կանոնավոր են գործում Բալլուջայի, Դաշբուլաղի, Բադարայի, Ննգիի, Կուսապատի, Ղուզե Ճարտարի, Մյուրիշենի, Հերհերի, Ղզղալայի (Բերդաշեն), Մոխրաթաղի, Նորագյուղի, Սարուշենի և այլ գյուղերի միդասյա, երկդասյա երկսեռ ծխական դպրոցները, որոնք ապահովված էին գործիմաց, խոր գիտելիքների տեր ուսուցիչներով, և որոշակիորեն բարձրանում էր աշակերտների ուսման առաջադիմությունը:

Ինչպես տեսնում ենք, Արցախի թեմում դպրոցների վերաբացումից հետո զգալի տեղաշարժ կատարվեց ժողովրդական կրթության բնագավառում, ընդլայնվեց դպրոցների ցանցը, կատարելագործվեց կրթության բովանդակությունը, ժողովրդի շրջանում քիչ թե շատ բարձրացավ գրագիտության տոկոսը: Սակայն ռեակցիայի տարիներին դպրոցներն անմխիթար վիճակում հայտնվեցին:

Արցախի դպրոցների ընդհանուր վիճակի, ներքին կյանքում կատարվող փո-

17. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 543, թ. 1-35, գ. 221, թ. 1-3:
18. Նույն տեղում, գ. 543, թ. 25, 26:
19. «Նոր դպրոց», 1913, թ. 3, տես նաև ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 543, թ. 12, ց. 15, գ. 543, թ. 1-35:

փոխությունների մասին պարբերաբար հաղորդումներ է տալիս 1910թ. Շուշիում տպագրվող «Ղարաբաղ» թերթը, որն առաջ էր քաշում ոչ միայն կանոնավոր դպրոցներ ունենալու, այլև ուսուցումն ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը: «Թերթը և կրթական գործը», «Թերթը և հայ ուսուցչությունը»[20] և այլ հոդվածներում ու թղթակցություններում ընդգծվում է կրթության, մատաղ սերնդի դաստիարակության և ընդհանրապես այդ բնագավառում պատասխանատվության բարձրացման կարևորությունը: Թերթը հայրենակից ուսուցիչներից պահանջում էր խոր զգացումով ու սրտացավությամբ մոտենալ հանձնարարված գործին, մտածել լիարժեք քաղաքացիներ պատրաստելու մասին: Նա գրում է. «Ըստ երևույթին, բոլոր հայ ուսուցիչները գիտեն, որ չկա մի այլ ասպարեզ, քան ուսուցչականը, ուր մարդ անհատը այնքան պատասխանատվության ենթակա լինի թե հասարակական կարծիքի և թե հենց իր սեփական խղճմտանքի առջև. չկա ավելի ծանր ու դժվարին պաշտոն, քան ուսուցչականը:[21] Ստանձնելով այդ վեհ պաշտոնը՝ մարդն իր մեջ պիտի զգա կոչում, սեր և պատրաստություն, նա պիտի իր կատարած աշխատանքից որոշ բավականություն ստանա և ոչ ձանձրույթ, նա պիտի գոհունակությամբ և լրջությամբ կատարի իր սրբազան միսիան՝ մատաղ սերնդին դաստիարակելու պատասխանատու գործը, հակառակ դեպքում անօգուտ կանցնեն նրա թափած ջանքերն ու ճիգերը»:[22]

Թերթի 1911թ. 6-րդ համարում տպագրված մի թղթակցության մեջ հոդվածագիրն ընթերցողին ասում է դառը ճշմարտությունը: Նա գրում է, որ շատերը չեն մտահոգվում դպրոցի էության և բովանդակության բարձր մակարդակով, որի պատճառով ուսուցման պրոցեսն ամբողջությամբ ձանձրույթ է և ժամանակի ապարդյուն վատնում: «Դպրոցը,- գրում է թերթը,- գոյություն ունի, բայց բովանդակություն չունի, կյանք ունի, էություն չկա, դա սարսափելի է և հետին ծայր հասած մտավոր թշվառության արտահայտություն»:[23] Հոդվածի հեղինակը մտածում էր դպրոցներում բարձրորակ ուսուցիչներ ունենալու մասին. մի բան, որ ժամանակի ցավոտ հարցերից մեկն էր: 1912թ. VI համարում «Ղարաբաղը» հրապարակում է նաև Ճարտար գյուղի դպրոցի անմխիթար վիճակը ներկայացնող մի փաստ, որը բնորոշ էր գավառի համար: Հոդվածի հեղինակը գրում է. «Չեմ կարծում, թե գտնվի մի այնպիսի աղքատ դպրոց, ինչպիսին է Ճարտար գյուղի եկեղեցական ծխական միդասյա դպրոցը... Շինությունը վերին աստիճանի խախուտ է, պատերը՝ ծակծկոտ, և ցուրտ եղանակներին դասարանը դառնում է սառնատուն: Իսկ եթե անձրև է, սենյակում փոքրիկ լճակներ են գոյանում: Դպրոցն ունի միայն մի քանի կոտրտված նստարաններ և մի գրատախտակ: Դպրոցը չունի գրադարան, պիտույքներ, հարկավոր նկարներ, քարտեզներ, որով ավելի դժվարանում է դասատվությունը»:[24] Հույս է հայտնվում, որ նման վիճակը երկար չի շարունակվի, որոշ չափով կկարգավորվեն դպրոցներին հատկացված շենքերը, տները, բայց դա մնում է լոկ հույս և ուրիշ ոչինչ:

Եվ ահա անցնում է մի տարուց էլ ավելի, թերթը ստիպված անդրադառնում է այդ հարցին. «Շուշիի ծխական դպրոցները» խորագրով հոդվածում թղթակիցը բողոքում է, որ Շուշիում հիմնական դպրոցների թիվը չի ավելանում, և միայն եկե-

20. ՀՀ ԱԱ, ֆ. 56, g. 3, գ. 265, թ. 144-150:
21. «Ղարաբաղ», 1911, թ. 1, 2, 13:
22. Նույն տեղում, նոյեմբերի 17:
23. Նույն տեղում, թ. 6:
24. Նույն տեղում, 1912, թ. 6:

ղեցիներին կից են հիմնվում, այսպես կոչված, դպրանոցներ: Ավելին՝ «ծխական դպրոցների մեջ մանկավարժական կապ, միություն չկա: Ամեն մի դպրոց, անկախ մյուսից, ձգտում է ինքնուրույն կերպով առաջ ընթանալ՝ տալով փոքր չափով գրագիտություն իր սաներին»:[25] Հոդվածագիրը բացեիբաց ընդգծում է, որ ծխական դպրոցները չեն հագեցնի իրենց «սաների ուսման ծարավը, որովհետև երկու-երեք կամ չորս տարվա դասընթացով, այն էլ՝ միացյալ բաժանմունքներով և փողոցից հավաքած երեխաներով, շատ դժվար է ցանկալի արդյունք տալ»:[26] Մի այլ հոդվածում հրապարակվում են դպրոցներում աշակերտների գիտելիքները գնահատելու մի քանի տխուր փաստեր, շեշտվում, որ հոգաբարձուները չեն մտածում աշակերտների քննությունները կանոնավոր անցկացնելու մասին, առանձին ուսուցիչներ քննությունը վեր են ածում մի յուրօրինակ խաղի. «Քննության «սարսափելի» կանաչ մահուդի շուրջը բազմած են ընթերականեր, որոնք շատ անգամ թույլ հասկացողություն ունեին դրվելիք առարկայի նկատմամբ, հաճախ նույնիսկ հայերեն չիմացողներ, որոնք, աշակերտի ճոռում խոսքերից շլացած կամ խիստ բարեհոգի լինելով, բաշխում են նրան մի «ձեռք» թվանշան»:[27]

Արցախի թեմում դպրոցական կյանքում զգալի տեղաշարժ է կատարվում հատկապես 1911-1912 ուստարում՝ Առաքել Առաքելյանի տեսչության շրջանում: Շրջագայելով գավառի դպրոցները, ծանոթանալով ներքին կյանքին՝ թեմական տեսուչը 1912թ. մայիսի 10-ին «Ղարաբաղ» թերթում տպագրում է «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911-1912 ուստարում» խորագրով հոդված (հաշվետվություն), որտեղ նշվում է դպրոցական գործի որոշակի աշխուժացումը Շուշի քաղաքում, ուր գործում էին թեմական հոգևոր դպրոցը՝ իր 300 աշակերտներով, ռեալական ուսումնարանը՝ 400, Մարիամյան օրիորդաց դպրոցը՝ 250 աշակերտներով, Հռիփսիմյան օրիորդացը՝ 218, Մարիամ Ղուկասյան միջնակարգ դպրոցը՝ 225, իսկ 1915թ.՝ 300 աշակերտուհիներով: Ագուլեցուց եկեղեցուն կից երկսեռ միդասյա դպրոցում սովորում էր 60 երեխա, որից 15-ը՝ աղջիկ, Մեղրեցուց եկեղեցու գավթում՝ 70 երեխա, «Իսահակ Մաթևոսյան-Թադևոսյան» երկսեռ դպրոցներում՝ 80 երեխա:

Ա. Առաքելյանը բացահայտում է դպրոցներում շարունակվող թերությունները, նշում տարբեր առարկաների ավանդման խելացի կազմակերպման անհրաժեշտությունը:

Իր հոդվածում Ա. Առաքելյանը նշում է, որ 1911-1912 թվականներին Շուշի քաղաքում և գյուղերում որոշակի աշխատանք էր կատարվում նաև մշակութային կյանքի բնագավառում: Այստեղ հայ և այլազգի անվանի դերասաններն իրենց ներկայացումներով շարունակում էին գեղագիտական հաճույք պատճառել լեռնաշխարհի մարդկանց: Եվ չնայած Ն. Խանդամիրյանի թատրոնի շենքն իր շքեղ կառուցվածքով հրդեհի ճարակ դառավ (1905թ.), բայց չէին դադարում բեմադրությունները Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում և Մելիք-Հայկազյանի տան դահլիճներում, իսկ ամառային ամիսներին՝ քաղաքային ակումբում: Հայ դրամատիկ խմբի կազմակերպիչներ Ա. Մելիքյանը, Պ. Ավետիքյանը և ուրիշներ մի շարք ներկայացումներ են տալիս գավառի գյուղերում:

Հայ արվեստի, մշակույթի անվանի գործիչների նախաձեռնությամբ Շուշի քաղաքի ակումբում կազմակերպում էին մշակութային բազմապիսի միջոցառում-

25. Նույն տեղում, 1912, թ. 34:
26. Նույն տեղում:
27. Նույն տեղում:

ներ. հանդիսավոր պայմաններում նշվում էր այս կամ այն գրողի կամ արվեստագետի, դպրոցական գործչի (Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Կոմիտաս, Մ. Թաղիադյան, Պ. վարդապետ Ղարաբաղցի, Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյան, Լեո, Հ. Առաքելյան, Մ. Հախումյան և ուրիշներ) հոբելյանը կամ պատմական նշանավոր տարեթիվ (Ավարայրի ճակատամարտը, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանի հետ և այլն): Ստեղծագործական երեկոներին հանդես եկող առաջադեմ աշակերտները, հայրենի Շուշի քաղաք արձակուրդ եկած ուսանողները կարդում էին իրենց բանաստեղծությունները և փոքրիկ պատմվածքները, ինչպես նաև հատվածներ պոեմից կամ վեպից: Առաքել Առաքելյանի անմիջական նախաձեռնությամբ 1912թ. հոկտեմբերին Շուշի քաղաքում մեծ շուքով տոնվեցին հայ տառերի գյուտի 1500-ամյա և հայ տպագրության 400-ամյա հոբելյանները: Այս առիթով, զեկուցումներից բացի, կազմակերպվեցին գեղարվեստական բաժիններ բարձր դասարանների աշակերտների ու աշակերտուհիների մասնակցությամբ: Առաքելյանը նաև հայտնում է, որ համեմատաբար կանոնավոր էր գործում Կովկասյան հայ բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը: Այն հարստացել էր հարյուրավոր գրքերով, ստանում էր պարբերաբար լույս տեսնող հայերեն, ռուսերեն թերթեր: Շուշիի հոգևոր տեսչության տպարանը շարունակում էր տպագրել և՛ ուսումնական, և՛ գիտական-գեղարվեստական գրքեր:

Արցախի մամուլի պատմության հմուտ գիտակ Ս. Ավագյանը իրավացիորեն նշում է, որ չնայած Ղարաբաղը հայտնվել էր ծանր պայմաններում, այնուամենայնիվ, Շուշիում, մասնավորապես, գավառներում, ակտիվորեն էին գործում կրթական, կուլտուր-լուսավորչական օջախները, շարունակում էին լույս տեսնել տպագիր օրգաններ, գրքեր, գրքույկներ՝ տարբեր թեմաներով, որոնք փոքրիշատե նպաստում էին աշխատավորության աշխարհիրմբռնմանը, գիտական մակարդակի բարձրացմանը, որոշակի ուղի էին հարթում առաջընթացի համար:[28]

Վերոհիշյալ փաստագրական տվյալներից կարելի է եզրակացնել, որ Արցախի թեմում դպրոցների վերաբացումից հետո՝ 1906-1912 թթ., ժողկրթության բնագավառում զգալի տեղաշարժ կատարվեց. ընդլայնվեց միդասյա, երկդասյա երկսեռ դպրոցների ցանցը, հրատարակվեցին դպրոցական նոր կանոնադրություններ, ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր, որոնցում առաջնակարգ նշանակություն էր տրվում աշխարհիկ կրթությանը՝ նախորդ տասնամյակների համեմատ: Սակայն Արցախի թեմում կրթական գործի այդ վերելքը կարճ տևեց: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին (1913-1914 թթ.) նվազեց դպրոցների քանակը: Դրանց թիվը, ըստ պաշտոնական տվյալների, հասնում էր 49-ի, որտեղ սովորում էր 3010 աշակերտ, դասավանդում՝ 79 ուսուցիչ:[29]

Արցախում կրթական վիճակն ավելի վատթարացավ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքացիական պատերազմի տարիներին: Պատերազմը ներկլանում էր նյութական վիթխարի ռեսուրսներ և մարդկային մեծ ուժ: Քայքայված ժողովրդական տնտեսության պայմաններում կրթության բնագավառի աշխատունակ մարդկանց մեծ մասը զորակոչվել էր բանակ, շատ գործարաններ ու արդյունաբերական ձեռնարկություններ, ինչպես նաև գյուղական տնտեսություններ մնացել էին առանց աշխատավոր ձեռքի, իսկ դպրոցների մեծ

28. Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 183: Տե՛ս նաև նույնի Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982:
29. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 50, թ. 32, 173, թ. 18:

մասը՝ առանց ուսուցիչների: Էջմիածնի Սինոդին ներկայացրած իր տեղեկագրում թեմական դպրոցի տեսուչ Նիկ. Յարամիշյանը հաղորդում է, որ դպրոցական գործը գտնվում է անմխիթար վիճակում, Արցախի գավառներում գոյություն ունեցող 60 դպրոցներից շատ քչերն են գործում, և դրանք էլ զուրկ են ամենահասարակ հարմարություններից, ուսումնական ամենաանհրաժեշտ զննական պիտույքներից, դիդակտիկ նյութերից և այլն: Դպրոցները չունեն կաբինետներ և լաբորատորիաներ, դպրոցական շենքերի բացակայության դեպքում հաճախ դասերը տեղի են ունենում մասնավոր տներում, նույնիսկ խրճիթներում:

Արցախի դպրոցական գործի բարելավման և ընդհանրապես կուլտուր-լուսավորչական աշխատանքների որոշ կարգավորման հարցերին է անդրադառնում Շուշիում 1915թ. հրատարակված «Փայլակ» թերթը: «Հայ դպրոցը» հոդվածում բնորոշելով դպրոցի տեղը հասարակական կյանքում՝ թերթը գրում է. «Դպրոցը մանկավարժական հիմնարկություն է. այդ իսկ պատճառով նրա հիմքում, որպես ամենից ամուր և ամենից ապահով պատվանդան, պիտի դրված լինի մանկավարժական ճշմարտությունը: Իսկ ամեն կրթության, մտքի, հոգեկան ուժերի, ամեն մշակույթի մանկավարժական բազան այս ճշմարտությունն է. նպատակահարմար և հասարակաօգուտ կրթության համար մայրենի լեզուն միակ բնական և անփոխարինելի միջոցն է...»:[30]

Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ, ճանաչված մանկավարժ Լևոն Վարդունին «Դպրոցական ռեֆորմ» առաջնորդող հոդվածում կարևոր է համարում ինչպես բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալը, այնպես էլ ուսուցումը նոր հիմունքներով կազմակերպելը, դպրոցներում նոր առարկաներ մտցնելը, լեզուների ուսումնասիրումը և այլն: Ուշագրավ է հատկապես ականավոր պատմաբան Լեոյի հոդվածը «Փայլակի» 1917թ. XX համարում, ուր հեղինակը դնում է աղջիկների ու կանանց կրթության, մտավոր զարգացման և դաստիարակության կենսականորեն անհրաժեշտ լինելու խնդիրը: Լեոն գրում է, որ կինը, կրթվելով, էական գիտելիքներ ձեռք բերելով, պետք է լինի տղամարդուն հավասար, մեր հասարակության իրավահավասար անդամը: Կրթություն տալու հետ միասին կնոջը պետք է սովորեցնել կատարել տարբեր աշխատանքներ, տիրապետել տարբեր մասնագիտությունների: Իսկ «Կազմակերպչական գործի անհրաժեշտությունը» հոդվածում Արշավիր Քամալյանը գրում է. «Ղարաբաղի ինտելիգենցիան պիտի և պարտավոր է կազմակերպելու, նա պիտի յուր ձեռքը վերցնի ժողովրդին նոր ոգով կրթելու գործը, որպես միակ ընդունակ տարրը այդ խնդրում: Անհրաժեշտ է համախմբվել, անհապաղ գործի անցնել, այդ կերպ ժամանակակից ինտելիգենցիան յուր անտարբերությամբ մեծ պատասխանատվություն է վերցնում յուր վրա: Ժամանակը պահանջում է զոհաբերություն. մենք պարտավոր ենք այդ զոհը տալու ազատության ընդհանուր գործին»:[31]

1919թ. Շուշիում լույս տեսած «Նոր կյանք» հասարակական-քաղաքական թերթի հուլիսի 20-ի համարում Արշավիր Քամալյանը համառոտակի ներկայացնում է Արցախի դպրոցների վիճակը: Չնայած Ղարաբաղում դրությունն ավելի ծանր էր, և ժամանակավոր կառավարության Ղարաբաղի գործադիր կոմիտեն ոչինչ չէր անում աշխատավորների համար, այնուամենայնիվ, Ղարաբաղի անվանի գործիչների, ուսուցիչների՝ Ս. Տեր-Մինասյանի, Լ. Աթաբեկյանի, Ա. Ավագյանի, Ա. Հովհաննիսյանի, Ա. Առաքելյանի, Լ. Վարդունու, Մ. Տեր-Ավետիքյանի և ուրիշ-

30. «Փայլակ», 1915, թ. 1:
31. Նույն տեղում, 1917, թ. 20 և 25:

ների, ջանքերով Շուշի քաղաքում, գավառի գյուղերում զգալի տեղաշարժ է կատարվում դպրոցական կյանքում»:[32] Ըստ պաշտոնական տվյալների՝ 1918-19 ուստարում Փիրջամալի դպրոցում սովորում էր 60 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ, Քյաթուկ գյուղի միդասյա երկսեռ դպրոցում՝ 50 աշակերտ, իսկ Դահրավի դպրոցում՝ 66 աշակերտ (18-ը՝ աղջիկ): Այդ ուսումնական տարում ուսումնական գործը բավարար հիմքի վրա էր նաև Դամիրչիլար (Ջրաղացներ), Դռնավազ (Կարմիր գյուղ), Թաղավարդ (Ներքին), Էդիլլու, Հաղորտի, Կուսապատ, Ննգի, Սարուշեն, Սպիտակաշեն և այլ գյուղերի դպրոցներում:[33] Համեմատաբար ավելի բարեկարգ վիճակում էին Շուշի քաղաքի թեմական, օրիորդաց դպրոցները, ռեալական ուսումնարանը և Ագուլեցոց, Մեղրեցոց եկեղեցիների գավթում գործող ծխական դպրոցները:

Առաջին աշխարհամարտի տարիներին չափազանց ծանր էր Արցախի կրթական վիճակը: Բերենք մի փաստաթուղթ. Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը 1918թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությանը գրել է. «Պատերազմի վերջին երկու տարում Արցախում դրությունն այնքան ծանր էր, գլխավորապես տնտեսական կողմից, որ մեր կրթական հիմնարկները, գլխավորապես թեմական դպրոցը, վտանգի ենթարկվեցին: Այդ կրթարանները պահելու համար ժողովուրդը ուժ չուներ, իսպառ ցամաքեցին սովորական եկամուտի աղբյուրները...

...Արցախն ուներ 60 գյուղական դպրոց, որոնցից և ոչ մեկն այսօր գոյություն չունի: Գոյություն չունեն նաև քաղաքում եղած եկեղեցական ծխական հինգ դպրոցները: Այս օրերին միայն թեմական դպրոցը բացվեց, բայց առանց միջոցի:

Թեպետ գիտեմ, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես մի նորածին կառավարություն, ունի ավելի մեծ հոգսեր ու կարիքներ, բայց և այնպես հավատացած եմ, որ կրթական գործը պետք է թանկ լինի հանրապետության համար, և նա չի խնայի ըստ հնարավորության օգնության ձեռք մեկնելու մեր կրթական հիմնարկներին»:[34]

Այսպիսով՝ չնայած ազգային ճնշման քաղաքականությունն այս կամ այն չափով արգելակում է ժողովրդական կրթության առաջընթացը, այնուհանդերձ, որոշակիորեն կարգավորվում էր դպրոցական գործը, դպրոցներ են բացվում Շուշիում և մի շարք գյուղերում: Արցախում խորհրդային կարգերի հաստատումից հետո ժողովրդական ուսուցիչները մեծ մաքառումներով ու անձնվիրաբար շարունակում էին կրթել ու դաստիարակել հայ մանուկներին:

32. «Նոր կյանք», 1919, թ. 1 և 5:
33. «Արարատ», 1917, թ. 9-10, էջ 685-686: ՀՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 283, թ. 58:
34. ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 5: Տե՛ս նաև, Հրանտ Աբրահամյան, Արցախյան գոյամարտը, Երևան, 1991, էջ 93-94:

2. Արցախի թեմի առանձին դպրոցների (նաև Նուխիի հայկական դպրոցների) ընդհանուր բնութագիրը

Ելնելով աշխատության բնույթից, նպատակահարմար գտանք Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմությունը ստեղծելու միտումով կանգ առնել ոչ միայն բնութագրվող ժամանակաշրջանի դպրոցական գործի վիճակի, այլև երկրամասի հայկական առանձին դպրոցների ստեղծման ու գործունեության պատմության վրա՝ սկսած XIX դարի սկզբից մինչև XX դարի երկու տասնամյակը:

Պետք է շեշտել, որ Արցախի թեմի, այդ թվում՝ Նուխիի գավառի հայկական ոչ բոլոր դպրոցների մասին է, որ գրվել է ժամանակի պարբերական մամուլում կամ տարբեր ժամանակներում և մեր ժամանակներում հրատարակված աշխատություններում: Հատկապես, Արցախի թեմի առանձին դպրոցների պատմության մասին (1906-1920թթ.) նույնիսկ հուշագրական (տպագիր կամ ձեռագիր) տեղեկություններ չկան: Արցախի գավառների առանձին դպրոցների պատմությանը վերաբերող նյութերը պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվում, Մատենադարանի ձեռագրերում, Ազգային գրադարանի անձեռնմխելի ֆոնդերում պահպանվող ձեռագրերում, հայ մշակույթի գործիչների առանձին արխիվներում և ժամանակակիցների հուշերում, ինչպես նաև հայ պարբերական մամուլի (1858-1920թթ.), Շուշիում լույս տեսած պարբերական մամուլի (1874-1919թթ.) առանձին համարներում լույս տեսած հոդվածներում, «Վիճակագրական տեղեկություններ»-ում, թեմի առաջնորդների, թեմական դպրոցի տեսուչների հաշվետվություններում, «Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան» գիրք թ. Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.) արժեքավոր աշխատության մեջ և այլ աղբյուրներում:

Հարկ է նշել, որ արցախահայ կրթական գործի կազմակերպման համար նախադրյալներ ստեղծվեցին V-XVIII դարերում, առավել ևս XIX դարում:

Մինչև XIX դարը Արցախի թեմի առանձին դպրոցների պատմության մասին արխիվային փաստաթղթերում, հայ դպրոցի պատմությանը նվիրված աշխատություններում չի հիշատակվում, նույնիսկ մինչև XIX դարի 30-ական թվականների կեսերը: Մեզ հայտնի է, որ Շուշիի թեմական դպրոցի պատմությունը[1] գրել է բազմավաստակ պատմաբան Լեոն, իսկ թեմական դպրոցի 75-ամյա համառոտ պատմությունը՝ Համբարձում Առաքելյանը:[2] Սակայն XIX դարի 30-ական թվականներից Արցախի թեմում բացվում են եկեղեցական, ծխական, 60-ական թվականներից՝ իգական դպրոցներ, 1880-ականին՝ ռեալական ուսումնարան[3], 90-ականի սկզբներին՝ երկդասյա արական դպրոցներ: Անշուշտ, անհրաժեշտ է, որ այդ ժամանակաշրջաններում գործող առանձին դպրոցների պատմությունը գրվի, որին էլ ձեռնամուխ եղան սույն աշխատության հեղինակները:

Հայտնի է, որ մինչև XX դարի սկիզբը հայ լուսավորչական թեմերում, այդ թվում նաև Արցախի թեմում հայկական դպրոցները գործում էին եկեղեցուն կից: Հարկ է նշել, որ Հայ Առաքելական Եկեղեցին կիրառվող հալածանքներին և բռնություններին հակազդում էր նաև կրթա-մշակութային աշխույժ գործունեությամբ, դրանով իսկ, կամա թե ակամա, նպաստելով ազգային զարթոնքին և ազ-

1. Մանրամասն տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայ հոգևոր թեմական դպրոցի պատ.:
2. Համբարձում Առաքելյան, Շուշիի թեմ. դպ. 75-ամյա պատ.:
3. Հ. Գրիգորյան, Գ. Հարությունյան, Շուշիի ռեալականը:

գային գաղափարախոսության ձևավորմանը: Ազատագրական պայքարի գաղափարները, արևմտահայ և արևելահայ իրականության մեջ ծավալվող սահմանադրական, լուսավորչական շարժումները, հայ ժողովրդի ազգային համախմբման գործընթացի աշխուժացումը նոր խնդիրներ էին առաջադրում նաև եկեղեցու կրթամշակութային գործունեությանը: Անշուշտ, հայ եկեղեցու գործունեությունը ծավալվեց մինչև խորհրդային շրջանը:

XX դարի սկզբին հայկական դպրոցների վերաբացումից հետո (1905) արմատական փոփոխություններ են կատարվում Արցախի կրթական համակարգում, եկեղեցական-ծխական դպրոցների փոխարեն, 1906թ. հայկական դպրոցների վերաբերյալ ընդունված կանոնադրության համաձայն, վերաբացվում են միդասյա, երկդասյա երկսեռ դպրոցներ, որոնք գործում էին 1907-1908 ուստարվանից մինչև խորհրդային շրջանը:

Ըստ պաշտոնական տվյալների, ինչպես նախորդ դարերում, այնպես էլ 1906-1920 թվականների ժամանակահատվածում Արցախի թեմում ընդգրկված էին Դիզակի (Հադրութ), Վարանդայի (Մարտունի), Շուշի քաղաքը և նրա մերձակա գյուղերը, Խաչենի, Ջրաբերդի (որի գավառի մեջ ընդգրկվում էր նաև Գյուլիստանը), Նուխիի գավառները: 1906-1914թթ., մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ազգամիջյան ընդհարումները (1918-1920), Արցախի թեմում կար 226 գյուղ և 2 քաղաք (Շուշի և Նուխի), գոյություն են ունեցել 128 հայկական դպրոցներ, որոնցում սովորել է 4.586 աշակերտ-աշակերտուհի, որոնցից աշակերտներ՝ 2937, իսկ աշակերտուհիներ՝ 1649, հասակով՝ 8-ից մինչև 15-16 տարեկան[4]: Բոլոր դպրոցներում պաշտոնավարել է 102 ուսուցիչ, որոնցից 80-ը՝ ուսուցիչ, իսկ 22-ը՝ ուսուցչուհի: Բոլոր դպրոցները ծախս են ունեցել 51.605 ռ. 14 կոպ., որից յուրաքանչյուր սովորողի վրա ծախս է ընկնում 11ռ. 25կոպ.: Դպրոցների թիվը նվազել է հատկապես 1918-1920թթ.:[5]

Այժմ հավաստի աղբյուրների հիման վրա համառոտակի ներկայացնենք առանձին դպրոցների պատմությունը ըստ գավառների:

4. Այդ մասին մանրամասն տե՛ս Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Գիրք Թ. Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), Երևան, 2011, էջ 470-471: Նաև տե՛ս «Արարատ», 1888-1890, 1913 համարները, «Նոր դպրոց», 1907-1913թթ. համար:

5. Նույն տեղում:

2.1. Դիզակի գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը (հիմնադրման օրից մինչև 1920թ.)

Հայկական դպրոցների վերաբացումից հետո (1905) Դիզակի գավառում դպրոցների թիվն անհամեմատ մեծանում է, մինչև 1917-1918 ուսումնական տարին, որից հետո նվազում է քաղաքական բարդ իրադարձությունների՝ ազգամիջյան ընդհարումների հետևանքով:

Արցախի թեմի առաջնորդների և Շուշիի թեմական դպրոցի տեսուչների՝ Ս. Էջմիածնի Սինոդին ներկայացրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 1906-1916թթ. Դիզակի գավառում կար 23 հայկական միդասյա, երկդասյա արական, իգական երկսեռ դպրոցներ, որտեղ դասավանդում են 22 ուսուցիչ և 4 ուսուցչուհի: Բոլոր դպրոցներում սովորել է 845 աշակերտ, որից 251-ը՝ աշակերտուհի: Դպրոցների ընդհանուր ծախսը կազմել է 10.060 ռուբլի, որից յուրաքանչյուր սովորողի հաշվով՝ 11 ռ. 90 կոպ.[1]: Դիզակի գավառի 41 հայկական գյուղերում գործող 23 հայկական դպրոցների համառոտ պատմությունը (1906-1920թթ.) ներկայացվում է արխիվային հարուստ տվյալների, պարբերական մամուլի, այդ թվում՝ Շուշիում լույս տեսած պարբերական մամուլի հրապարակումների և այլ աղբյուրների ընձեռած հնարավորությունների, ու ժամանակակիցների հուշերի հիման վրա:

1. Հադրութի արական միդասյա-երկդասյա դպրոց:

«Նոր դպրոց» ամսագրի 1913թ. թ. 3-5-ում տպագրված Ս. Տեր Գասպարյանի (1913թ. Հադրութի արական դպրոցի ուսուցիչ) հոդվածից տեղեկանում ենք, որ Հադրութում կանոնավոր (բարեկարգ) դպրոցի հիմքը դրել է Հովհաննես Տեր-Գրիգորյանը 1879-ին: Դա եղել է եկեղեցական ծխական դպրոց (իսկ մինչ այդ եղել է նախակրթարան՝ 1869թ.), որի առաջին ուսուցիչն է եղել հայտնի մշակութային գործիչ Ալեքսանդր Արարատյանը: Աշակերտների թիվը հասել է 60-ի: Դպրոցը փակվել է 1895թ. մայիսին և վերաբացվել 1906թ. փետրվարին՝ ունենալով Ա բաժանմունք, 34 աշակերտ, 2 ուսուցիչ:

1908-1909 ուստարում միդասյա դպրոցում սովորող աշակերտների թիվը հասնում է 87-ի, իսկ ուսուցիչներինը՝ 4-ի: 1909-1910 ուստարվանից տղաների և աղջիկների դպրոցները միանում են, և մտցվում է խառը (երկսեռ) ուսուցում: 1911-1912 ուստարում եղել է երկդասյա դպրոց, ուր սովորել են 60 տղա, 104 աղջիկ: 25 տարվա ընթացքում (1879-1912թթ., չհաշված փակված տարիները) դպրոցում աշխատել են 25 ուսուցիչ և 12 ուսուցչուհի (ընդ.՝ 37 ուսուցիչ), սովորել են 480 տղա և 350 աղջիկ: 1913-ին դպրոցի համար կառուցվել է նոր շենք՝ «Հին հանգստարան» կոչվող հողամասի վրա: 1915-ին երկդասյա երկսեռ դպրոցն ունեցել է 180 աշակերտ, 12 ուսուցիչ, 4 ուսուցչուհի[2]: Դպրոցների տարեկան տնտեսական ծախսը 1908-1909թթ. կազմել է 3510 ռուբլի: Աշակերտների ուսման վարձից՝ 1400 ռ., հասարակական տուրքից՝ 800 ռ., եկեղեցուց՝ 200 ռ., կամավոր նվերնե-

1 Այդ մասին մանրամասն տե՛ս, «Վավերագրեր», Գիրք Թ. էջ 470: Նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, գ. 543, գ. 492, «Արարատ», 1907-1913թթ. համարները: Տե՛ս նաև, Հ. Աբրահամյան, Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ս. Էջմիածին, 2009:

2. Վերոնշյալ դպրոցի պատմության մասին տե՛ս «Նոր դպրոց», 1913, թ. 3, էջ 65-71, թ. 5, էջ 54-62: Նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543, թ. 12, գ. 492, թ. 122: «Արարատ», 1913, թ. 4, էջ 301: Ս. Խուդոյան, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Երևան, 1987, էջ 346: Մ. Բարխուդարյան, Արցախ, 1995, էջ 452:

ից՝ 120 ռ. և եկեղեցապատկան գումարի տոկոսներից՝ 200 ռ.՝ ընդամենը 2720 ռուբլի, մնացած 790 ռուբլին՝ Շուշիի բարեգործական ընկերությունից:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

2. Հադրութի Մարիամյան օրիորդաց միդասյա դպրոց:

Արխիվային փաստաթղթերից և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Դիզակի գավառի կենտրոնում (Հադրութում) արական դպրոցից բացի գործել է նաև օրիորդաց դպրոց: Այն հիմնվել է 1890թ. սեպտեմբերին: Առաջին ուսուցչուհին եղել է Հեղինե Մալխասյանը: Երկու միացյալ բաժանմունքում սովորել է 50 աղջիկ: Դպրոցը փակվել է 1895թ. և վերաբացվել 1906թ. հունվարին, որպես միդասյա դպրոց՝ 3 բաժանմունքով: 1907-1908 ուստարում ունեցել է 4 բաժանմունք, որոնցում սովորում էր 114 աղջիկ, 1908-1909 ուստարում երկդասյա էր: 1909-1910 ուստարում միացվում են տղաների և աղջիկների դպրոցները:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության կողմից տրված միջոցներով, նաև՝ Շոշի բարեգործական ընկերության կողմից: Հետագայում՝ 1914 ուստարում, միացվում են երկու դպրոցները՝ արական և իգական, դրա փոխարեն բացվում է երկդասյա երկսեռ դպրոց[3], որը պահպանվել է մինչև խարհրդային շրջանը:

3. Ազոխ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1873թ. Ազոխ գյուղում բացվել էր նախակրթական՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: «Դպրոց» ամսագրի 1875թ. թիվ 1-ում տպագրված «Վիճակագրական տեղեկություններում» նշվում է, որ 1874-75 ուստարում Ազոխում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 22 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 80-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1886թ.: Կան տվյալներ, որ Ազոխ գյուղում գործել է նաև իգական դպրոց՝ 1890թ., որտեղ սովորում էր 15 աղջիկ: 1894թ. Ազոխ գյուղի միդասյա ծխական դպրոցում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Երկու տարի հետո դպրոցը փակվում է և վերաբացվում 1907թ. նոյեմբերին:

Միդասյա երկսեռ դպրոցն ուներ 1 բաժանմունք, 49 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ, և 1 ուսուցիչ՝ Արսեն Ղուկասյան, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը: Դպրոցը գործել է նաև 1917թ.:

Դպրոցը պահվում էր ազոխցիների Մշակութային միության նպաստով (տարեկան 200ռ.) և աշակերտների ուսման վարձով: Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[4]:

4. Աղբուլաղ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Ս. Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալների համաձայն՝ Դիզակ գավառի Աղբուլաղ գյուղի եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1886թ.: Դպրոցն ուներ 25 աշակերտ, 1 բաժանմունք, ուսուցիչն էր Արամ Տեր-Բաղդասարյանը: 1889-1890թթ. դպրոցն ունեցել է 30 աշակերտ, 1 ուսուցիչ:

90-ական թվականների կեսերին դպրոցը փակվել է և վերաբացվել 1908թ.: Միդասյա երկսեռ դպրոցն ուներ 35 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ, 1 ուսուցիչ՝ Վահրամ Վարդապետյանը, որն ավարտել է Երևանի թեմական դպրոցը: 1914թ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվել է աշակերտների ուսման վարձով և գյուղի եկեղեցու նպաստով:

---

3. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 122, 128, «Արարատ», 1890, թ. 12, 1913, թ. 3, էջ 65-71, թ. 5, էջ 54-62:
4. Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 314, գ. 149, գ. 543:

Այդ խղճուկ վիճակում դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[5]:

5. Առաքյալ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Եղիշե Մադաթյանի և թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախյանի վիճակագրական տեղեկագրի համաձայն՝ 1888-89 ուստարում Առաքյալ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1894թ. դպրոցն ուներ 30 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896-1896 թթ. փակված հայ դպրոցների ցուցակում նշվում է նաև այս դպրոցը: Դպրոցի փակված լինելու փաստը հաստատվում է նրանով, որ այն 1906-ին վերաբացվել է: 1907-1908 ուստարում միդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 40 աշակերտ, որից 8-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Աշոտ Բայանդուրյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը:

Դպրոցը գործել է նաև 1915 թվականին:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության կողմից ցույց տրված միջոցներով:

Այդ խղճուկ վիճակում դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[6]:

6. Բանազուր գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Բանազուր գյուղում 1873թ. գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ մինչ այդ գործել է նախակրթարան (1870թ.)՝ 15 աշակերտով: 1874-75 ուստարում դպրոցն ուներ 30 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ:

80-ական թվականների վերջերին Բանազուր գյուղում գործել է նաև իգական դպրոց՝ 20 աշակերտուհիով, դասավանդում էր ուսուցչուհի Մարիամ Հովակիմյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցները:

1891-95 ուստարում Բանազուր գյուղում բացվում է միդասյա ծխական դպրոց՝ 40 աշակերտով, ուսուցիչն էր Ալեքսանդր Տեր-Սահակյանը: Երբ Արցախի թեմում փակվում են հայկական դպրոցները (1895-1896թթ.), այդ գյուղում դպրոցը գաղտնի գործում էր: 1906-ի տվյալներով դպրոցը միդասյա երկսեռ էր, ուներ 3 բաժանմունք, 78 աշակերտ, որից 57-ը տղա էր, իսկ 21-ը՝ աղջիկ: Այն ուներ 2 դասատու՝ ուսուցիչ Հակոբ Տեր-Եսայանը և ուսուցչուհի օր. Աղազարյանցը: Հ. Տեր-Եսայանն ավարտել է Շուշիի քաղաքային ուսումնարանը և ուսուցչական ցենզը ստացել Գանձակի գիմնազիայում: Օրիորդ Աղազարյանցը պետական օրիորդաց գիմնազիայի 5-րդ դասարանի վկայագիր ուներ:

1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 82 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ, 1911-ին՝ 70 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ բանազուրցիների հայրենակցական միության նպաստով (տարեկան 700 ռ.) և աշակերտների ուսման վարձով: Դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը[7]:

7. Գտիչ վանքի դպրոց:

Լեոն իր «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի» (1914թ.) աշխատության մեջ նշում է, որ XIX դարի 50-ական թվականներին Ղարաբաղի 11 վանքերում՝ Գանձասար, Ս. Հակոբի, Դադի, Գտիչ և այլն, գործում էին եկեղեցական-ծխական դպրոցներ:

Նշենք, որ Գտիչ վանքում դպրոցը գործել է դեռևս վաղ միջնադարում, իհար-

5. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 1-18, գ. 149, գ. 543, «Նոր դպրոց», 1913, թ. 3:
6. Նույն տեղում, նաև «Արարատ», 1913, թ. 2:
7. Նույն տեղում, նաև «Նոր դպրոց», 1909, թ. 7:

կե, ընդհատումներով՝ մինչև XIX դարը: 1836թ. ընդունված կանոնադրությունից հետո վանքում գործել է դպրոց՝ 25 աշակերտով, որտեղ սովորում էին նաև հարևան գյուղերից եկած երեխաները: Լեոն նաև նշում է, որ Գտիչ վանքի եկեղեցական-ծխական դպրոցը գործել է XIX դարի 60-ական թվականներին: 1875թ. «Դպրոց» ամսագրի թիվ 4-ում տպագրված վիճակագրական տեղեկություններում նույնպես նշվում է այս դպրոցի գոյությունը՝ 1870-ական թվականներին: Այն պահել է Առաքել վարդապետ Կոստանդյանը:

Հետագա տարիների վավերագրերում այս դպրոցը չի հիշատակվում[8]:

8. Դոլանլար գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

«Արարատ» ամսագրի 1886-1887 թվականների թիվ 3-ում և թիվ 4-ում տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ 1886-87 ուստարում Դոլանլար գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ՝ Թևան Ամիրջանյանը: 90-ական թվականների կեսերին դպրոցն ունեցել է 35 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ:

Արխիվային մի փաստաթղթում նշվում է, որ վերոհիշյալ գյուղի դպրոցը գործել է նաև 1897-98թթ.՝ ունենալով 40 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: 1908-1909 ուստարում դպրոցը միդասյա երկսեռ էր, որն ուներ 45 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ՝ Հակոբ Տեր-Միքայելյանը, որն ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Դպրոցը գործել է նաև 1914թ.՝ 30 աշակերտով:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության կողմից հատկացված միջոցներով:[9]

9. Դուդուկչի գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Արցախի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի՝ Սինոդ ներկայացրած տեղեկագրում նշվում է, որ 1888թ. Դիզակի գավառի Դուդուկչի գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով: Դասավանդում էր 1 ուսուցիչ: Սակայն նշենք, որ մինչ այդ գյուղում գործել է նախակրթարան (1886թ.)՝ 15 աշակերտով: 1894թ. միդասյա ծխական դպրոցն ուներ 30 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ այս դպրոցը գաղտնի գործել է 1897թ.՝ ունենալով 35 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ:

1907-1908 ուստարում բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 45 աշակերտով, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Վրույր Առաքելյանը, որը Ներսիսյան դպրոցի շրջանավարտ էր:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության կողմից տրված միջոցներով[10]:

10. Էդիլլու գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Ս. Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1873թ. Էդիլլու գյուղում բացվել է նախակրթարան՝ 12 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1874-75 ուստարում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1881թ. Էդիլլու գյուղի բնակչությունը մի խնդրանքով դիմում է կաթողիկոսին՝ թույլատրել բացելու ծխական դպրոց: 1882-83 ուստարում բացվում է արական դպրոց՝ 30 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

---

8. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, գ. 543, «Արարատ», 1886, թ. 4, «Նոր դպրոց», 1909, թ. 7, «Դպրոց», 1875, թ. 4:

9. «Արարատ», 1886, թ. 4, «Մշակ», 1889, թ. 28, «Նոր դպրոց», 1908, թ. 3:

10. ՀՀ ԱԱ, ֆ. 28, ց. 7, գ. 10, «Արարատ», 1885, թ. 4, «Նոր դպրոց», 1907, թ. 4:

80-ական թվականների վերջերին (1889թ.) այստեղ գործել է նաև իգական դպրոց՝ 15 աշակերտուհիով:

Երբ փակվում են Արցախի թեմի մի շարք դպրոցներ (1896թ.), այսեղ գաղտնի գործում է դպրոցը, որտեղ սովորում էին նաև հարևան գյուղերից եկած երեխաները:

1908թ. Էդիլլու գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց, որտեղ սովորում էր 47 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկներ: Ուսուցիչն էր Հայրապետ Ղազարյանը: Դպրոցը գործել է նաև 1914թ.:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[11]:

11. Թաղասեր գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Նախկին Կարյագինի գավառի (Ելիզավետպոլի նահանգ)՝ այժմ Հադրութի շրջանի Թաղասեր գյուղի եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1887թ., որն ուներ 25 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1894թ. դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896թ., երբ փակվում են հայկական դպրոցները, այստեղ գաղտնի գործել է դպրոցը: 1908-1909 թթ. ուստարում Թաղասեր գյուղում բացվում է միդասյա երկսեռ ծխական դպրոց: Այն ուներ 45 աշակերտ, 2 բաժանմունք: Ուսուցիչն էր՝ Միհրան Տեր-Առաքելյանը, որն ավարտել է Երևանի թեմական դպրոցը: 1914թ. դպրոցն ուներ 35 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության կողմից ցույց տրված միջոցներով[12]:

12. Թաղլար գյուղի միդասյա, այնուհետև՝ երկդասյա երկսեռ դպրոց:

Անվանի բանասեր Ալեքսանդր Երիցյանը «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի» աշխատության մեջ նշում է, որ 1840-ական թվականներին Դիզակի գավառի Թաղլար գյուղում գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով: Իսկ արխիվային մի այլ փաստաթղթում կարդում ենք, որ 1868թ. հիշյալ գյուղում գործում էր եկեղեցական-ծխական դպրոց՝ 30 աշակերտով: 70-ական թվականներին (1876թ.) Թաղլար գյուղում բացվում է միդասյա ծխական դպրոց, որն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, 1 ուսուցիչ: 1880թ. բացվում է միդասյա երկսեռ դպրոց: Այն ուներ 3 բաժանմունք, 40 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Բացի երկսեռ դպրոցից, Էջմիածնի Սինոդի թույլտվությամբ գյուղում բացվում է Սուրբ Մարիամյան օրիորդաց դպրոց՝ 40 աշակերտուհիով[13]:

Յուրաքանչյուր աշակերտուհի տարեկան վճարում էր 1 ռուբլի, իսկ արական և իգական դպրոցները տարեկան նպաստ էին ստանում եկեղեցուց, գյուղի բնակչությունից (յուրաքանչյուր գյուղացուց՝ 20-30 կոպեկ) և այլ աղբյուրներից: Այդպիսի չնչին միջոցներով պահվող երկու դպրոցներն էլ փակվում են 1885թ.: Վերաբացումից հետո դպրոցն ուներ 80 աշակերտ, 2 ուսուցիչ: Թաղլարցիները որոշ գումար են հավաքում և դպրոցի համար կառուցում մի փոքրիկ շենք: Արական դպրոցը նորից փակվում է 1896թ., սակայն իգականը կառավարությունից գաղտնի շարունակում էր գործել:

1906 թվականին արական դպրոցը վերաբացվում է: 1907-1908 ուստարում երկսեռ դպրոցն ուներ 5 բաժանմունք, 127 աշակերտ, որից 17-ը՝ աղջիկ: Ուսու-

11. «Մեղու Հայաստանի», 1885, թ. 7, «Դպրոց», 1875, թ. 4, «Նոր դպրոց», 1907-1908 թթ., թ. 3, թ. 4:
12. «Մուրճ», 1889, թ.4, նաև տես, ՀՀԱԱ, ֆ.27, գ.10:
13. Ալ. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 244: Նաև տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543, թ. 17:

ցիչներն էին Համազասպ Երիցյանը և Գրիգոր Զաքարյանը: Դասավանդում էին հայոց և ռուսաց լեզուներ, պատմություն, Հայաստանի, Ռուսաստանի աշխարհագրություն, բնագիտական առարկաներ (մաթեմատիկա, երկրաչափություն, ֆիզիկա, կրոն, արվեստ, մարմնակրթություն և այլ առարկաներ):

1910-11 ուստարում դպրոցում սովորում էր 130 աշակերտ:

Դպրոցն ուներ սեփական շենք: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ թաղլարեցի Գյանջեցյանի նվիրատվությամբ, բնակչության կողմից տրված միջոցներով:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[14]:

13. Թաղուտ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Ըստ պաշտոնական տվյալների, 1889թ. Թաղուտ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ մինչ այդ գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցուն կից գործել է դպրոց: 1894թ. դպրոցն ուներ 30 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 1 բաժանմունք, 45 աշակերտ: Ուսուցիչն էր Գրիգոր Ասրյանը, որն ավարտել էր Ներսիսյան դպրոցը:

Դպրոցը գործել է նաև 1913 թվականին, ուներ 2 բաժանմունք, 52 աշակերտուհի, դասավանդում էր 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության կողմից տրված միջոցներով[15]: Դպրոցի հետագա գործունեության մասին արխիվային փաստաթղթերում չի հիշատակվում:

14. Խանձաձոր գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

«Նոր դար» թերթի 1886թ. թ. 1-ում տպագրված մի հոդվածից և Կաթ. դիվ. ֆ.56, գ. 78, թ. 1-12-ում զետեղված նյութերից տեղեկանում ենք, որ Խանձաձոր գյուղում XIX դարի 80-ական թվականներին (1886թ.) բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 22 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Այն ուներ 1 բաժանմունք, 40 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Եփրեմ Տեր-Մանվելյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը, ստանում էր տարեկան 300 ռուբլի ռոճիկ:

Դպրոցը գործել է նաև 1916 թվականին, ուներ 48 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության կողմից տրված միջոցներով[16]:

15. Խծաբերդ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

«Նոր դար» թերթի 1886թ. թ. 1-ում տպագրված մի հոդվածում նշվում է, որ 1889թ. Խծաբերդ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1893-94 ուստարում միդասյա ծխական դպրոցն ուներ 1 բաժանմունք, 30 աշակերտ, 1 ուսուցիչ:

Դպրոցը փակվում է 1896թ. և վերաբացվում 1908-1909 ուստարում: Այն միդասյա երկսեռ էր, ուներ 3 բաժանմունք, 40 աշակերտ, որից 14-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Կարապետ Սահրադյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը, ուսուցչություն է արել նաև Թաղլար, Տող գյուղերում: Նա մասնավոր ուսուցչու-

14. «Արարատ», 1889, թ. 10, «Նոր դպրոց», 1913, թ. 2: Նաև ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543, թ. 1-18:
15. «Նոր դար», 1886, թ. 1, 1887, թ. 28: Նաև՝ Կաթ. դիվ., ֆ. 56, գ. 78, թ. 1-12:
16. Նույն տեղում:

թյամբ զբաղվել է նաև հայ դպրոցների փակ ժամանակ, տարեկան ստանում էր 350 ռուբլի ռոճիկ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[17]: Դպրոցը գործել է նաև 1915-1916 ուստարում՝ ունենալով 2 բաժանմունք, 52 աշակերտուհի, 2 ուսուցիչ:

16. Ծամձոր գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

XIX դարի 70-ական թվականներին Ծամձոր գյուղում գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով, իսկ մինչ այդ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից կար մասնավոր դպրոց:

Մի տարի փակ մնացած դպրոցը 1886թ. վերաբացվում է: Այն ուներ 30 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: Երբ 90-ական թվականների կեսերին (1896թ.) փակվում են հայկական դպրոցները, այստեղ գաղտնի գործում է դպրոցը:

1908-1909 ուստարում Ծամձոր գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց, որտեղ սովորում էր 35 աշակերտ: Ուսուցիչն էր Արամ Տեր-Հովակիմյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով:

Դպրոցը գործել է նաև 1913-1914 ուս. տարում՝ ունենալով 1 բաժանմունք, 42 աշակերտ, 1 ուսուցիչ[18]:

Այդ խղճուկ վիճակում դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

17. Կեմրակուճ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

«Նոր դար» թերթի 1909թ. թ. 4-ում տպագրված մի հոդվածում նշվում է, որ 1894-95թ. ուստարում Կեմրակուճ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1908-1909 ուստարում: Այն միդասյա երկսեռ էր, ուներ 35 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ՝ Հովակիմ Տեր-Միրզոյան, որն ավարտել էր Ներսիսյան դպրոցը:

1914թ. միդասյա երկսեռ դպրոցն ուներ 45 աշակերտ, 1 բաժանմունք և 1 ուսուցիչ:

Կան տվյալներ, որ դպրոցը գործել է նաև 1917թ.՝ ունենալով 52 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[19]:

18. Մամեդաձոր գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1886թ. Մամեդաձոր գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ գյուղի Սուրբ Մինաս եկեղեցուն կից գործել է դպրոց: 1888-89 ուստարում գյուղի ծխական դպրոցում սովորում էր 35 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին դպրոցը չի գործել, փակվել է Արցախի դպրոցների հետ միասին: 1908թ. հոկտեմբերին բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 30 աշակերտով: Ուսուցիչն էր Արսեն Տեր-Մելիքյանը, որը ավարտել է Ներսիսյան դպրոցը:

1910թ. դպրոցն ունեցել է 40 աշակերտ, որից 14-ը՝ աղջիկ:

Դպրոցը հիմնականում պահվում էր աշակերտների ուսման վարձով:

Կան տվյալներ, որ դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը[20]:

19. Մոխրենես գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1894թ. Մոխրենես գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշա-

17. «Նոր դար», 1886, թ. 1: Նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ. 56, g. 3, գ. 78, 143, 152, «Մուրճ», 1890, թ. 6:
18. «Արարատ», 1886, թ. 10, «Նոր դպրոց», 1908, թ. 4:
19. «Նոր դար», 1897, թ. 1, «Նոր դպրոց», 1909, թ. 4:
20. Մ.Բարխուդարյան, Արցախ, էջ 64-65: Նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 182: «Նոր դպրոց», 1913, թ. 3:

կերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Երկու տարուց հետո դպրոցը փակվել է և վերաբացվել 1908թ. աշնանը: Այն միդասյա երկսեռ էր, ուներ 35 աշակերտ, որից 9-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Արև Տեր-Պողոսյանը, որն ավարտել էր Գանձակի քաղաքային ուսումնարանը:

1910-1911 ուստարում դպրոցում սովորում էր 40 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ, իսկ 1914-ին սովորում էր 45 աշակերտ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի եկեղեցու նպաստով[21]:

20. Շաղախ (Սարիշեն) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1873թ. Շաղախ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 31 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1876թ. այն ուներ 35 աշակերտ: 80-ական թվականների կեսերին (1885թ.) փակվել է և մի տարուց հետո վերաբացվել: Այն միդասյա ծխական արական դպրոց էր, որտեղ սովորում էր 35 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է նաև 1896թ. և վերաբացվել 1908թ. սեպտեմբերին: Ուներ 1 բաժանմունք, 46 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Գրիգորիս Տեր-Գրիգորյանը, որն ավարտել է Շուշիի թեմական դպրոցը:

1910-1911ուստարում դպրոցն ունեցել է 50 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր Մշակութային միության նպաստով (տարեկան 200 ռ.), գյուղի հասարակության կողմից տրված միջոցներով (տարեկան 110ռ.) և աշակերտների ուսման վարձով[22]:

Դպրոցը գործել է մինչև 1915թ.՝ ունենալով 36 աշակերտ, 1 ուսուցիչ:

21. Ջրակուս գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Ս. Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1894թ. Ջրակուս գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 22 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ մինչ այդ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով, դա խալիֆայական տիպի դպրոց էր, որտեղ սովորում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. աշնանը: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 50 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ, 3 բաժանմունք, 1 ուսուցիչ՝ Արամ Երիցյանը, որն ավարտել էր Երևանի թեմական դպրոցը, երկու տարի ուսուցչություն էր արել Արցախի թեմի դպրոցներում:

Դպրոցը պահվում էր Մշակութային միության նպաստով (տարեկան 200ռ.) ու հասարակության կողմից տրված միջոցներով:

Դպրոցը գործել է նաև 1914թ.՝ ունենալով 36 աշակերտ, 1 ուսուցիչ[23]:

22. Տագ գյուղի միդասյա, երկդասյա երկսեռ դպրոց:

XIX դարի 80-ական թվականներին Տագ գյուղը եղել է ժամանակի խոշոր բնակավայրերից մեկը, ունեցել է 2849, իսկ 1915թ.՝ 3500 հայ բնակիչ:

Հին է նաև Տագ գյուղի դպրոցի պատմությունը: Ըստ արխիվային տվյալների, 1870թ. Տագ գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1874-75 ուստարում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 80-ական թվականների կեսերին (1885թ.) դպրոցը փակվում է և վերաբացվում 1887-88թթ.: Այն կոչվում էր «Սուրբ Սահակյան» դպրոց, որտեղ

21. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543: Նաև՝ «Արարատ», 1894, թ. 3, «Նոր դպրոց», 1908, թ. 4:
22. Նույն տեղում, գ. 43, գ. 543, «Արարատ», 1889, թ. 4, «Նոր դպրոց», 1913-14, թ. 3, 5:
23. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, գ. 543: Նաև՝ «Նոր դպրոց», 1914, թ. 10:

սովորում էր 35 աշակերտ: 90-ական թվականների կեսերին դպրոցը նորից փակվում է և վարաբացվում 1906-1907 ուստարում: 1914թ. երկդասյա երկսեռ դպրոցն ուներ 5 բաժանմունք, 158 աշակերտ, 5 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր Շուշիի բարեգործական ընկերության հաշվին և աշակերտների ուսման վարձով:

Դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը[24]:

23. Տող գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Ս. Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1873թ. Տող գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Իսկ մինչ այդ (1870թ.) գյուղում գործել է նախակրթարան: 1874-75 ուստարում դպրոցն ունեցել է 25 աշակերտ, ուսուցիչն էր Սերոբ Տիրացուն: 1886թ. տվյալներով՝ Տող գյուղի ծխական դպրոցն ուներ 2 բաժանմունք, 65 աշակերտ, 2 ուսուցիչ: 1894-95 ուստարում դպրոցն ունեցել է 78 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել՝ 1906թ. սեպտեմբերին:

Վերաբացված երկսեռ միդասյա դպրոցն ուներ 3 բաժանմունք, 66 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Դասավանդում էին Ալեքսանդր Միրզոյանը և նրա կինը՝ Վարդուհի Միրզոյանը: 1910-11թթ. դպրոցում սովորում էր 70 աշակերտ, իսկ 1915թ. ունեցել է 35 աշակերտ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և Շուշիի բարեգործական ընկերության հաշվին[25]:

Դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը:

24. Տումի գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Արցախի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի՝ Ս. Էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում (1882թ.) նշվում է, որ Տումի գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Իսկ արխիվային մի այլ փաստաթղթում նշվում է այն փաստը, որ Տումի գյուղում 1870-ական թվականներին գործել է նախակրթարան՝ 15 աշակերտով:

1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. աշնանը: Այն միդասյա երկսեռ էր, ուներ 2 բաժանմունք, 40 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Թադևոս Պետրոսյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը:

Դպրոցը գործել է նաև 1914թ.՝ ունենալով 50 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և Շուշիի բարեգործական ընկերության նպաստով[26]:

24. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 43, գ. 543, «Արարատ», 1882, «Նոր դպրոց», 1907, թ. 3, 1913, թ. 4, 1914, թ. 10:
25. Նույն տեղում, գ. 50, 543, «Նոր դպրոց», 1911, թ. 9-10, 1914, թ. 10:
26. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 1-8, գ. 543, թ. 1-4, «Նոր դպրոց», 1911, թ. 9-10:

2.2. Վարանդա գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը (հիմնադրման օրից մինչև 1920թ.)

Արցախի դպրոցի պատմության զարգացման շրջաններում Վարանդա գավառում դպրոցների թիվը մյուս գավառների համեմատ ավելի է մեծանում: 1917-1920թթ. դպրոցների թիվը նվազում է քաղաքական բարդ իրադարձությունների, ազգամիջյան ընդհարումների հետևանքով: Այստեղ կնշվեն 1906-1908 թթ. բացված դպրոցները:

Արցախի թեմի առաջնորդների և Շուշիի թեմական դպրոցի տեսուչների՝ էջմիածնի Սինոդին ներկայացրած վիճակագրական տվյալների համաձայն, 1906-1917թթ. Վարանդա գավառում կային 65 հայկական գյուղեր, 40 միդասյա, երկդասյա արական, իգական երկսեռ դպրոցներ: Մինչև 1895թ. գավառի Ամարասի վանքում գործել է միդասյա դպրոց: Ի դեպ, նշենք, որ Վարանդա գավառում դպրոցները հիմնադրման օրից մինչև 1906 թվականը եղել են արական և իգական եկեղեցական-ծխական: Դպրոցների վերաբացումից հետո, հայկական դպրոցների վերաբերյալ ընդունված նոր կանոնադրության (1906թ.) համաձայն՝ Հայաստանում և Արցախի թեմում բացվում են նոր տիպի՝ միդասյա, երկդասյա երկսեռ դպրոցներ: Դպրոցներում դասավանդում էր 28 ուսուցիչ և 12 ուսուցչուհի: Բոլոր դպրոցներում ընդհանուր առմամբ սովորել է 1450 աշակերտ, որոնցից աշակերտներ՝ 960, աշակերտուհիներ՝ 490: Բոլոր դպրոցները միասին ունեցել 12060ռ. ծախս, որից յուրաքանչյուր սովորողի վրա ընկնում է մոտ 9 ռ. 36 կոպ.[1]:

Վարանդա գավառի դպրոցների համառոտ պատմությունը լուսաբանվում է հիմնականում արխիվային հարուստ փաստաթղթերի, ժամանակի պարբերական մամուլում լույս տեսած հոդվածների, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների հիման վրա:

<u>1. Ավետարանոց (Չանախչի) գյուղի միդասյա և երկդասյա երկսեռ դպրոց:</u>

Մատենադարանի արխիվային ֆոնդերից տեղեկանում ենք, որ XIX դարի առաջին կեսին (1841թ.) Ավետարանոց գյուղի երեխաները որոշ գրագիտություն են ստացել Ամարաս վանքի եկեղեցական դպրոցում: Մի այլ փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1868թ. հայոց եկեղեցական-ծխական դպրոցների կանոնադրության ընդունումից հետո 1869թ. Ավետարանոց գյուղում Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 15 աշակերտով: 1873թ. բացվում է նախակրթարան՝ 20 աշակերտով, դասավանդում էր նույն գյուղի բնակիչ Ալեքսանդր քահանա Ամիրյանցը: Նախակրթարանում երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ և հաշվել:

Ավետարանոց գյուղի բնակչությունը 1874թ. մի խնդրագիր է ուղղում կաթողիկոսին՝ բացելու միդասյա ծխական դպրոց:

Այդ նույն թվականի հոկտեմբերին բացվում է միդասյա ծխական դպրոցը, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ:

XIX դարի 80-ական թվականների կեսերին (1885թ. փետրվարի 16-ին) ցարական կառավարության կողմից ընդունվում է որոշում՝ հայկական դպրոցների փակման վերաբերյալ: Արցախյան թեմի մի շարք դպրոցների հետ փակվում է նաև Ավետարանոց գյուղի դպրոցը և վերաբացվում 1886թ. սեպտեմբերին: Այդ շրջանում դպրոցն ուներ 2 բաժանմունք, 50 աշակերտ և 2 ուսուցիչ: 1896թ. դպրոցը

1. «Վավերագրեր», Գիրք Թ, էջ 470-471: Նաև տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 420-560, «Արարատ», 1888-1890թթ. համարները, «Նոր դպրոց», 1907-1913 թթ. համարները:

նորից փակվում է և վերաբացվում 1906-1907 ուստարում: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 28 աշակերտ, որից 9-ը՝ աղջիկներ: Դպրոցն ուներ 3 բաժանմունք, 1 ուսուցչուհի՝ Հռիփսիմե Բաղդասարյանը: Նա ավարտել էր Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան դպրոցը 1884թ. և 22 տարի ուսուցչություն արել հայոց ծխական ու պետական տարրական դպրոցներում: Յուրաքանչյուր սովորողից ստանում էր ամիսը 60 կոպեկից մինչև մեկ ռուբլի: 1908-1909 ուստարում Ավետարանոց գյուղում բացվում է երկդասյա երկսեռ դպրոց, որտեղ սովորում էր 82 աշակերտ: Դպրոցն ուներ 4 բաժանմունք, 3 ուսուցիչ: 1915թ. դպրոցն ունեցել է 52 աշակերտ, 2 ուսուցիչ, 1917թ.՝ 95 աշակերտ, 2 ուսուցիչ[2]:

Դպրոցն ուներ սեփական շենք, որը կառուցվել էր գյուղացիների և հայոց բարեգործական ընկերության նյութական միջոցներով: Ծանր պայմաններում դպրոցն իր գոյությունը պահպանել է մինչև խորհրդային շրջանը:

2. Ամարաս վանքի դպրոցը:

Աշխատության առաջին բաժնում նշեցինք, որ դեռևս 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը Ամարասում դպրոց էր բացել: Հետագա ժամանակներում՝ մինչև XIX դարը, այստեղ դպրոցը գործել է ընդհատումներով, ժամանակավոր խաղաղության տարիներին:

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրած իր աշխատության մեջ Լեոն նշում է, որ XIX դարի առաջին կեսին Արցախի վանքերում, նույնպես և Ամարասում (1837թ.) գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով: Դպրոցը գործել է նաև 1860-70-ական թվականներին՝ ունենալով 20 աշակերտ, 1 ուսուցիչ[3]:

90-ական թվականների կեսերին, երբ փակվել են հայկական դպրոցները, այստեղ կառավարությունից գաղտնի գործել է դպրոցը, որտեղ սովորում էին հարևան գյուղերից եկած երեխաները: Կարելի է ասել, որ Ամարասի դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը:

3. Ավդուռ գյուղի միդասյա երկսեռ դպրոցը:

Ավդուռ գյուղում եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1886թ., որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 1889-90 ուստարում դպրոցն ունեցել է 28 աշակերտ, 2 բաժանմունք, 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին, երբ փակվում են հայկական դպրոցներն Արցախում, այստեղ կառավարությունից գաղտնի գործել է դպրոց, որտեղ սովորում էին հարևան գյուղերից եկած երեխաները:

Արցախի թեմի կոնսիստորիայի՝ էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ 1906-1907 ուստարում Ավդուռ գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 3 բաժանմունք, 54 աշակերտ, որից 22-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Բարութել Թառումյանը, որն ավարտել է Գևորգյան ճեմարանը, մի տարի ուսուցչություն է արել Հացի գյուղի ծխական դպրոցում: Տարեկան ստանում էր 480 ռուբլի[4]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ ավդուռցիների Հայրենակցական Միության միջոցներով, իսկ գյուղական հասարակությունը վճարում էր տարեկան 100-150 ռուբլի:

---

2. «Կավկազսկի կալենդար», 1888, թ. 6: Նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 1-4, գ. 543, թ. 11, գ. 492, թ. 200, «Նոր դպրոց», 1913, թ. 4, 5:

3. «Նոր դպրոց», 1908, թ. 3, էջ 106: Նաև տես ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, 149, գ. 78, «Նոր դպրոց», 1913, թ. 5:

4. «Դպրոց», 1875, թ. 4: Նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 1-8, գ. 543, թ. 1-10, «Նոր դպրոց», 1907, թ.1:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

4. Աշան գյուղի միդասյա և երկդասյա երկսեռ դպրոց:

1848թ. հոկտեմբերին Աշան գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 30 աշակերտով, ուսուցիչն էր Հովակիմ Շինդինյանցը: Նա յուրաքանչյուր աշակերտից ամիսը ստանում էր 40-50 կոպեկ: Սակայն կան տվյալներ, որ մինչ այդ Աշանի երեխաները գրագիտություն են ստացել Ամարաս և Գտչա վանքերին կից գործող դպրոցներում: 1868թ. ծխական դպրոցների կանոնադրությունից հետո այստեղ բացվում է նաև նախակրթարան՝ 15-20 աշակերտով: Երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ և հաշվել: 1877-78թթ. Աշան գյուղի ծխական դպրոցում սովորում էր 60 աշակերտ, ուսուցիչն էր Բահաթուր Տեր-Թովմասյանը: 90-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1906-1907 ուստարում: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 33 աշակետ, որից 15-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Արամ Ալահվերդյանը, որն ավարտել է Ներսիսյան դպրոցի 6-րդ դասարանը և երկու տարի ուսուցչություն արել Թաղլարի, Թաղավարդի և Կաղարծիի դպրոցներում:

1908-1909 ուստարում Աշան գյուղում բացվում է երկդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 3 բաժանմունք, 95 աշակետ, 3 ուսուցիչ, իսկ 1917թ. դպրոցն ունեցել է 4 բաժանմունք, 88 աշակետ, 4 ուսուցիչ[5]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ աշանցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 300ռ.), և գյուղի հասարակության միջոցներով:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

5. Արանզամինի (Վարազաբուն) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1870թ. Արանզամին գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից բացվում է դպրոց՝ 15 աշակերտով: «Դպրոց» ամսագրի 1875թ. թիվ 1-ում տպագրված վիճակագրական տվյալները վկայում են, որ 1874-1875 ուստարում գյուղում գործում էր ծխական դպրոց՝ 2 բաժանմունքով, 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1868թ. ծխական դպրոցների կանոնադրության համաձայն՝ դպրոցում դասավանդում էին մայրենի լեզու, թվաբանություն, կրոն, երգեցողություն, նկարչություն: Ընդհանրապես, այդ առարկաները դասավանդում էին բոլոր եկեղեցական-ծխական դպրոցներում: 1884-85 ուստարում դպրոցն ուներ 2 բաժանմունք, 78 աշակերտ, 2 ուսուցիչ: Մի տարի հետո այն փակվում է: 1886-87 ուստարում գյուղում բացվում է Սուրբ Գրիգորի անվան միդասյա ծխական դպրոցը: 80-ական թվականների վերջերին գյուղի բնակչության խնդրանքով Ս. Էջմիածնի Սինոդի թույլտվությամբ բացվում է օրիորդաց դպրոց: Այս երկու դպրոցները միասին ունեին 65 աշակերտ, 9 աշակերտուհի, 2 ուսուցիչ:

XIX դարի 90-ական թվականների կեսերին փակվում են արական և իգական դպրոցները: 1906թ. հոկտեմբերին գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 2 բաժանմունքով: Այն ուներ 42 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Արամ Վերդյանը: 1915թ. դպրոցն ունեցել է 2 բաժանմունք, 78 աշակերտ, 2 ուսուցիչ[6]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ համագյուղացի Տեր-Հովհաննիսյանի նպաստով (տարեկան 260 ռ.), և գյուղի բնակչության միջոցներով:

6. Աղբուլաղ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1873թ. Վարանդա գավառի

---

5. ՀՀ ԱԱ, ֆ. 56, g. 3, գ. 78, 140, 231, 543: Նաև՝ «Մշակ», 1894, թ.22, «Նոր դպրոց», 1909, թ.3, էջ 52-54:
6. ՀՀ ԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 50, 60, 78, 140, «Մշակ», 1888, թ. 4, «Արարատ», 1913, թ. 4, «Նոր դպրոց», 1914, թ. 3:

Աղբուլաղ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 19 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1884-85 ուստարում դպրոցն ուներ 25 աշակերտ, 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1907-1908 ուստարում: Նորաբաց միդասյա դպրոցում սովորում էր 25 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվել է աշակերտների ուսման վարձով[7]:

7. Գիշի գյուղի միդասյա և երկդասյա երկսեռ դպրոց:

XIX դարի 60-ական թվականների վերջերին (1868թ.), հայկական ծխական դպրոցների վերաբերյալ ընդունված կանոնադրությունից հետո, («Կանոնք. եկեղեցական-ծխական դպրոցներիս») Արցախի թեմում բացվում են նախակրթարաններ, եկեղեցական-ծխական դպրոցներ:

Ըստ էջմիածնի պաշտոնական տվյալների՝ 1870թ. Գիշի գյուղում բացվում է նախակրթարան՝ 10 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1875թ. գյուղում գործում էր նախակրթարան՝ 15 աշակերտով:

80-ական թվականների սկզբին Գիշու առաջավոր մտավորականությունը մի խնդրագիր է ուղարկում էջմիածնի կաթողիկոսին՝ թույլտվություն ստանալու գյուղում բացել ծխական դպրոց:

1880-81 ուստարում բացվում է միդասյա ծխական դպրոց, որն ուներ 35 աշակերտ, 1 ուսուցիչ, 1 բաժանմունք: Երբ 1885թ. կառավարության որոշմամբ Արցախի թեմում փակվում են որոշ դպրոցներ, այստեղ գաղտնի գործում էր դպրոցը: 1889-1890թթ. այն ուներ 2 բաժանմունք, 65 աշակերտ, ուսուցիչն էր Միքայել Տեր-Բախշյանը: Դպրոցը երկսեռ էր և ուներ 3 բաժանմունք, փակվում է 1903թ. և վերաբացվում՝ 1905թ. վերջերին: Սովորող 55 աշակերտից 28-ը տղա էր, 27-ը՝ աղջիկ: Ուսուցչուհին էր Սաթենիկ Զաքարյանը: 1908-1909 ուստարում Գիշի գյուղի երկդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 88 աշակերտ, դասավանդում՝ 3 ուսուցիչ, իսկ 1915թ. աշակերտների թիվը հասնում էր 60-ի[8], 1916-1917 ուստարում դպրոցն ուներ 70 աշակերտ և 2 ուսուցիչ:

Դպրոցն ուներ սեփական շենք: Այն պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության միջոցներով:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

8. Գյունե Ճարտար գյուղի միդասյա և երկդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալներով՝ 1874-75 ուստարում Գյունե Ճարտարում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, 1 բաժանմունքով, ուսուցիչն էր Կարապետ Սահակյանը: 1883-84 ուստարում Գյունե Ճարտարում բացվում է երկսեռ դպրոց՝ 57 աշակերտով, որից 17-ը՝ աղջիկ:

Դպրոցը փակվել է 1885թ. և վերաբացվել 1887թ.: 1888-89 ուստարում դպրոցը կոչվել է Ս. Գրիգորյան տղայոց միդասյա ուսումնարան, որտեղ սովորում էր 28 աշակերտ: Ճարտար գյուղի բնակչության խնդրանքով 1889թ. էջմիածնի Սինոդը թույլատրում է բացելու օրիորդաց դպրոց, որն ուներ 30 աշակերտուհի և մեկ վարժուհի: 1896թ. այդ երկու դպրոցները փակվում են և վերաբացվում 1906թ.: Սակայն նշենք, որ 1900-1902թթ. Գյունե Ճարտարում գործում էր կառավարությունից գաղտնի մասնավոր դպրոց: 1906-1907 ուստարում Գյունե Ճարտարում բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 3 բաժանմունքով: Դպրոցում սովորում էր 80

7. «Մշակ», 1888, թ. 4, «Արարատ», 1917, էջ 678, «Նոր դպրոց», 1907-1908 թթ., թ. 2, 3:
8. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 1-10, գ. 149, 543: Նաև՝ «Մշակ», 1895, թ. 6, «Նոր դպրոց», 1913, թ. 3, էջ 62, թ. 5, էջ 64:

աշակերտ, որից 12-ը աղջիկ էր: Ուսուցիչն էր Ղազար Տեր-Գրիգորյանը: 1908-1909թթ. դպրոցը երկդասյա երկսեռ էր, որտեղ սովորում էր 90 աշակերտ-աշակերտուհի, դասավանդում էին 2 ուսուցիչ և 1 ուսուցչուհի[9]:

Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ Աբրամ Կիսիբեկյանն իր հուշերում (1913-1917թթ. դասավանդել է Գյունե Ճարտարի դպրոցում) փաստում է, որ 1915-1916 ուստարում Գյունե Ճարտարի դպրոցն ուներ 2 դասարան, 84 աշակերտ, որից 32-ը՝ աղջիկ: Երկդասյան երկսեռ դպրոցի առաջին դասարանում սովորում էր 39 աշակերտ, երկրորդ դասարանում՝ 45: Դպրոցի հոգաբարձուական խորհրդի նախագահն էր Բարսեղ Գասպարյանը, որը երկար տարիներ աշխատել է Գյունե Ճարտարի, Ղուզե Ճարտարի, Խնուշինակի և Գիշիի դպրոցներում[10]:

Աբրամ Կիսիբեկյանն իր հուշերում ներկայացնում է Գյունե Ճարտարի երկդասյա դպրոցի 1916-1917 ուստարվա հաշվետվությունը, որի համաձայն՝ դպրոցն ուներ 4 դասարան, 118 աշակերտ, որից 62-ը՝ աղջիկ, դասավանդում էր 5 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ ճարտարցիների Հայրենակցական Միության նյութական միջոցներով[11]:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

<u>9. Դահրազ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:</u>

1873թ. Դահրազ գյուղում բացվում է ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 80-ական թվականների կեսերին դպրոցում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա դպրոցում սովորում էր 30 աշակերտ, իսկ 1917թ. դպրոցն ունեցել է 66 աշակերտ, 3 բաժանմունք, 3 ուսուցիչ[12]:

Դպրոցը պահվել է աշակերտների ուսման վարձով և բնակչության միջոցներով:

<u>10. Դռնավազ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:</u>

Մինչև XIX դարի 70-ական թվականները Դռնավազի (այժմ՝ Կարմիր գյուղ) Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով: 1873թ. գյուղի հասարակությունը մի խնդրանքով դիմում է կաթողիկոսին՝ գյուղում բացելու ծխական դպրոց:

Էջմիածնի վիճակագրական տվյալներով՝ 1874-75 ուստարում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց, որն ուներ 2 բաժանմունք, 56 աշակերտ, որից 4-ը սովորում էր անվճար: Դպրոցի բացմանն ու ապահովմանը մասնակցում են գյուղի բնակչությունը և Հայոց բարեգործական ընկերության առանձին անդամներ: 1887-88թթ. Դռնավազ գյուղում գործում էր միդասյա ծխական դպրոց, որն ուներ 57 աշակերտ և 1 ուսուցիչ, իսկ 1892-93 ուստարում այն ուներ 59 աշակերտ և 2 ուսուցիչ: Դպրոցը կոչվում էր Սուրբ Պողոս-Պետրոսի անունով: Հայկական մյուս դպրոցների նման այս դպրոցը ևս փակվում է 1896թ. և տասը տարի հետո՝ 1906թ., արդեն 3 բաժանմունքով վերաբացվում: Միդասյան երկսեռ դպրոցում սովորում էր 62 աշակերտ, որից 28-ը՝ աղջիկ: Ուսուցչուհին էր Շուշանիկ Տեր-Մարտիրոսյանը: Այն եղել է հարևան գյուղերի (Դաշուշեն, Արկաթելի-Մխիթարաքենդ) կենտրոնական դպրոցը:

---

9. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, ց. 1, գ. 43, գ. 50, գ. 149, «Մշակ», 1895, թ. 6:
10. Աբրահամ Կիսաբեկյան, «Հուշեր», Գիրք 1, Երևան, 2011, էջ 236-260:
11. Նույն տեղում, էջ 242:
12. «Արարատ», 1917, էջ 678:

Դպրոցը պահվում էր Մշակութային միության նպաստով (տարեկան 200ռ.) և սովորողների ուսման վարձով ու բնակչության նյութական միջոցներով: Այն իր գոյությունը պահպանում է մինչև խորհրդային իշխանության հաստատումը[13]:

11. Դամիրչիլար (Զրաղացներ) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Բաքվի հայ Մշակութային միության միջոցներով պահված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև Վարանդա գավառի Դամիրչիլար (Զրաղացներ) գյուղի դպրոցը: Այդ ցուցակը հրապարակված է «Նոր դպրոց» ամսագրի 1908թ. թիվ 4-ում (էջ 84): Իսկ արխիվային մի այլ փաստաթղթում՝ «Վիճակագրական տեղեկություններ՝ 19-րդ դարի 80-ական թվականների Արցախի թեմի դպրոցների», նույնպես նշվում է վերոհիշյալ գյուղի դպրոցը:

Դպրոցում սովորում էր 20 աշակերտ: Ուրեմն, կարելի է ասել, որ Դամիրչիլար գյուղում եկեղեցական-ծխական դպրոց գործել է դեռևս 80-ական թվականներին: Արխիվային ոչ մի փաստաթղթում չի նշվում, թե այդ դպրոցը փակվել է 90-ական թվականների կեսերին: 1908-1909 ուստարում Դամիրչիլար գյուղում գործել է միդասյա երկսեռ դպրոց՝ 25 աշակերտով, 1 բաժանմունքով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[14]:

12. Եմիշճան գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսյանը Ս. Էջմիածնի Սինոդին ներկայացրած «Վիճակագրական տեղեկություններ Արցախի թեմի դպրոցների՝ 19-րդ դարի 90-ական թվականների» իր զեկուցագրում մանրամասն ներկայացնում է Վարանդա գավառում գործող դպրոցները: Այդ ցուցակում նշում է, որ 1892-93 ուստարում Եմիշճան գյուղում գործում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում է 1 ուսուցիչ: Կարելի է ենթադրել, որ մինչ այդ Եմիշճան գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցուն կից գործել է դպրոց, որտեղ երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն:

1895թ. գյուղում բացվում է ծխական միդասյա դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Մեկ տարի հետո դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Այն միդասյա երկսեռ դպրոց էր 2 բաժանմունքով, որտեղ սովորում էր 30 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Իսկ 1915թ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ[15]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով, գյուղի բնակչության միջոցներով:

13. Թաղավարդ (Ներքին) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1868թ. Վարանդա գավառի Թաղավարդ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով, դասավանդում էր գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու քահանա՝ տեր Պողոսը: Աշակերտներին սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել, կրոն:

Իսկ Ներսիսյան դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում Ալեքսանդր Երիցյանը նշում է, որ XIX դարի 40-ական թվականներին մասնավոր դպրոցներ են գործել Աշան, Գյունե Ճարտար, Ներքին Թաղավարդ գյուղերում:

1875թ. «Դպրոց» ամսագրի թիվ 4-ում տպագրված վիճակագրական տեղեկություններում նշվում է, որ 1874-75 ուստարում Ներքին Թաղավարդ գյուղում բաց-

13. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, ց. 1, գ. 43, գ. 50, գ. 149, «Մշակ», 1895, թ. 6:
14. Նույն տեղում, ֆ. 56, գ. 543, «Դպրոց», 1875, թ. 4, «Նոր դպրոց», 1911, թ. 3:
15. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 45, թ. 7, «Մուրճ», 1889: «Նոր դպրոց», 1913, թ. 3, էջ 52-54:

վում է միդասյա ծխական դպրոց՝ 30 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1880-81 ուստարում գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 3 բաժանմունք, 40 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկներ, դասավանդում էր 2 ուսուցիչ: 1884-ին աշակերտների թիվը հասնում է 63-ի:

Բացի երկսեռ դպրոցից, Ս. Էջմիածնի Սինոդի թույլտվությամբ գյուղում բացվում է Սուրբ Մարիամյան օրիորդաց դպրոց՝ 40 աշակերտուհիով: Յուրաքանչյուր աշակերտուհի տարեկան վճարում էր 1 ռուբլի, իսկ արական և իգական դպրոցը տարեկան նպաստ էր ստանում եկեղեցուց և բնակչությունից (յուրաքանչյուր գյուղացուց 20-30 կոպեկ) և այլ աղբյուրներից: Այդպիսի չնչին միջոցներով պահվող երկու դպրոցներն էլ փակվում են 1885թ.: Վերաբացվելով 1888-89 ուստարում՝ այն կոչվել է «Սուրբ Մեսրովբյան տղայոց միդասյա ուսումնարան», որտեղ սովորել է 30 աշակերտ, իսկ 1894-ին այն ունեցել է 40 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

1896-ին փակվել է, վերաբացվել 1906-ին՝ որպես երկսեռ դպրոց: Դպրոցն ուներ 80 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ: Ուսուցիչներն էին Հովհաննես Հովհաննիսյանը և Հռիփսիմե Թառումյանը:

1908-1909 ուստարում երկդասյա երկսեռ դպրոցն ունեցել է 86 աշակերտ, 3 բաժանմունք, 3 ուսուցիչ:

1915 թ. աշակերտների քանակն իջել է 29-ի:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով, որը սահմանված էր 4 կարգի՝ 6 ռ., 5 ռ., 4 ռ., 3 ռ.: Բնակչությունը ևս որոշ օգնություն էր ցույց տալիս:

Այդ վիճակում դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը[16]:

14. Խաչմաչ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Արցախի թեմի կոնսիստորիայի՝ Էջմիածնի Սինոդին ներկայացրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 1873թ. Խաչմաչ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 27 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Անցնում էին կրոնական առարկաներ, հայերեն, ռուսերեն լեզուներ, ընթերցանություն և վայելչագրություն, ազգային պատմություն և այլն: 1883թ. բացվում է ծխական դպրոց: Բացի վերոհիշյալ առարկաներից, ավելացվում են քերականություն, թվաբանություն, ձեռագործ (աղջիկների համար), նախնական գիտելիքներ աշխարհագրությունից, Ռուսաստանի և Հայաստանի ընդհանուր պատմությունից:

90-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1906-1907 ուստարում: Այն միդասյա էր, ուներ 2 բաժանմունք, 1 ուսուցիչ, 25 աշակերտ: 1915թ. դպրոցն ուներ 45 աշակերտ, 2 բաժանմունք, 1 ուսուցիչ[17]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով, Շուշիի բարեգործական ընկերության միջոցներով:

15. Խնուշինակ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալներով՝ 1870թ. Խնուշինակ գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1873թ. բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, ուսուցիչն էր Տեր-Միքայել քահանան: 1875-76 ուստարում դպրոցն ունեցել է 25 աշակերտ, 1 ուսուցիչ: 80-ական թվականների կեսերին (1885թ.) փակվել է և վերաբացվել 1888-89 ուստարում: Դպրոցը նորից փակվում է 1896թ. և վերաբացվում՝ 1906թ. սեպտեմ-

16. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 43, գ. 492, Մ. Բարխուդարյան, «Արցախ», էջ 118: Նաև՝ «Արարատ», 1917, էջ 482:
17. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 43, գ. 492, Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 118: Նաև՝ «Նոր դպրոց», 1914, թ. 3:

բերին: Վերաբացված միդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, 56 աշակերտ, որից 18-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Նիկողայոս Հարությունյանը: 1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 66 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ[18]:

Դպրոցը հիմնականում պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության միջոցներով:

Այն իր գոյությունը պահպանել է մինչև խորհրդային շրջանը:

16. Ծովատեղ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Արցախի կոնսիստորիայի՝ էջմիածնի Սինոդին ներկայացրած տեղեկագրի տվյալներով՝ 1873թ. Ծովատեղ գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ մինչ այդ (1870թ.) գործել է մասնավոր դպրոց: «Դպրոց» ամսագրում տպագրված (1875թ. թիվ 4) վիճակագրական տեղեկություններում նշվում է, որ 1874-75 ուստարում Ծովատեղ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 22 աշակերտով: Ուսուցիչն էր՝ Հովսեփ Տիրացուն: Դպրոցը դարավերջին փակվում է և վերաբացվում 1907թ.: Վերաբացված միդասյա երկսեռ դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, որից 17-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր՝ Մատթևոս Գաբրիելյանը:

1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 45 աշակերտ, 2 բաժանմունք, 1 ուսուցիչ:

Դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը:

Այն պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության միջոցներով[19]:

17. Կաղարծի գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1869թ. Կաղարծի գյուղում գործել է մասնավոր դպրոց՝ 10 աշակերտով: 1873թ. բացվում է նախակրթարան՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել, կրոնական առարկաներ: Կաղարծիի բնակչությունը 1877-78թթ. խնդրագրով դիմում է կաթողիկոսին և թույլտվություն ստանում դպրոց բացել: Նորաբաց դպրոցն ուներ 19 աշակերտ, 2 բաժանմունք և 1 ուսուցիչ՝ Տեր-Մարտիրոս քահանան: 1886-87թթ. դպրոցն ուներ 2 բաժանմունք, 29 աշակերտ և 1 ուսուցիչ: Այն փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. սեպտեմբերին: Նորաբաց միդասյա դպրոցն ուներ 3 բաժանմունք, 59 աշակերտ, որից 16-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Տեր-Հայրապետյանը, որն ավարտել է Ներսիսյան դպրոցը և ուսուցչություն արել Արցախի թեմի դպրոցներում: 1908-1909 ուստարում դպրոցն ուներ 3 բաժանմունք, 65 աշակերտ, 2 ուսուցիչ, իսկ 1915թ. ունեցել է 50 աշակերտ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բաքվաբնակ կաղարծեցիների նպաստով (տարեկան 300 ռուբլի): Դպրոցն ուներ սեփական շենք[20]:

18. Կարաբուլաղ (Ակնաղբյուր) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1894թ. Կարաբուլաղ գյուղի հասարակայնությունը դիմել է կաթողիկոսին՝ խնդրելով կարգադրություն անել իրենց գյուղում բացելու եկեղեցական-ծխական դպրոց: Հավանաբար դպրոցն այդ թվականին էլ հիմնվել է:

Հավաստի է, որ այն 1895թ. գործել է՝ ունենալով 25 աշակերտ: Գործել է նաև 1907թ.: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, ուներ 2 բաժանմունք, 35 աշակերտ, ուսուցիչն էր Արամ Տեր-Հայրապետյանը: 1909-1910թթ. դպրոցն ունեցել է 52

18. «Արարատ», 1886, թ. 10: Նաև՝ Կաթ. դիվ., ֆ. 56, գ. 78, 543, «Նոր դպրոց», 1908-1909, թ. 2, 3:
19. Նույն տեղում, գ. 186, գ. 192, գ. 543:
20. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 43, գ. 543, «Նոր դպրոց», 1908, թ. 1:

աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ[21]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության միջոցներով:

19. Հացի գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1873թ. Հացի գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1874-75 ուստարում գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, ուսուցիչն էր Հովհաննես քահանա Տեր-Սարգսյանը: 1878-79 ուստարում գյուղում գործում էր միդասյա ծխական դպրոց՝ 2 բաժանմունքով, 30 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Ուշագրավ է, որ Հացի գյուղի բնակչությունը մտահոգվում էր նաև իգական դպրոց բացելու խնդրով: Այդ նպատակով էլ 1886թ. խնդրում է Ս. Էջմիածնի Սինոդին՝ թույլատրել գյուղում իգական դպրոց բացել: Նորաբաց իգական միդասյա դպրոցն ուներ 2 բաժանմունք, 49 աշակերտ և 1 ուսուցչուհի՝ Եղիսաբեթ Սարգսյանը: Դպրոցի տարեկան ծախսը կազմում էր 800 ռ.:

90-ական թվականների կեսերին, երբ փակվում են հայկական դպրոցները, այստեղ կառավարությունից գաղտնի գործել է դպրոցը՝ 35 աշակերտով: Այդտեղ սովորում էին նաև հարևան գյուղերից եկած երեխաները: 1906-1907թթ. Հացի գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 3 բաժանմունք, 48 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Հովհաննես Նասիբյանը, որն ավարտել է Շուշիի թեմական դպրոցը: 1908-1909 ուստարում բացվում է երկդասյա երկսեռ դպրոց՝ 56 աշակերտով: 1911թ. այն ուներ 66 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ: Այդ թվականին համագյուղացի Ջիվանշիր Ղազյանցի միջոցներով դպրոցի համար կառուցվել է նոր շենք: 1915թ. դպրոցն ունեցել է 44 աշակերտ, 1917թ.՝ 78 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ հացեցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 270ռ.) և աշակերտների ուսման վարձով (180ռ.): Այդպիսի պայմաններում դպրոցն իր գոյությունը պահպանել է մինչև խորհրդային շրջանը[22]:

20. Հարավ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1883թ. Հարավ գյուղի Սուրբ Մեսրոպ եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով: 1886-87 ուստարում բացվում է ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Էջմիածնի ուսումնական հանձնաժողովի կողմից հաստատված «Ծխական դպրոցների կանոնների» համաձայն՝ անցնում էին կրոն, հայերեն ընթերցարան, քերականություն, թվաբանություն, ռուսաց լեզու, ազգային պատմություն, վայելչագրություն և այլ առարկաներ: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1909թ. հոկտեմբերին: Այն միդասյա երկսեռ էր, ուներ 1 բաժանմունք, 1 ուսուցիչ, 25 աշակերտ, որից 8-ը՝ աղջիկ[23]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի հասարակության միջոցներով:

21. Հերհեր գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի հաշվետվության մեջ ներկա-

21. Նույն տեղում, «Արարատ», 1913, էջ 622:
22. Նույն տեղում, գ. 542, «Նոր դպրոց», 1908, թ. 2, 1913, թ. 3, էջ 52-54:
23. Մատենադարան, կաթ. դիվ. վավ. 309: Նաև տե՛ս, ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, «Նոր դպրոց», 1914, թ. 3:

յացվում է հայկական դպրոցների ընդհանուր վիճակը՝ XIX դարի երկրորդ կեսին: Ըստ այդ ցուցակի, 1888-89թթ. Արցախի թեմում գործել են 30-ից ավելի հայկական դպրոցներ: Այդ ցուցակում նշվում է նաև Հերհեր գյուղի դպրոցի անունը: 1889թ. Արցախի թեմի գյուղերից բազմաթիվ խնդրագրեր են ուղարկում էջմիածին՝ կաթողիկոսին, խնդրելով բացել եկեղեցական-ծխական դպրոցներ: Հերհեր գյուղի բնակչությունը ևս խնդրագրով դիմում է կաթողիկոսին՝ (1890թ.) բացելու ծխական դպրոց: 1894թ. Հերհեր գյուղում բացվում է դպրոց՝ 20 աշակերտով: Կան տվյալներ, որ մինչ այդ Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիս եկեղեցուն կից գործել է մասնավոր դպրոց՝ 15 աշակերտով, ինչպես Հացի, Հաղորտի, Գիշի, Աշան, Ճարտար և այլ գյուղերում էր:

Դպրոցի հետագա ճակատագրի մասին արխիվային փաստաթղթերում չի նշվում: Հայաստանի պետական արխիվի Կաթ. դիվ. ֆ. 56 գ. 78-ում նշվում է, որ ռուսական առաջին հեղափոխությունից հետո՝ 1905թ. Արցախի թեմում վերաբացվում են հայկական դպրոցները: Մի ցուցակում նշվում է, որ 1908-1909թթ. Հերհեր գյուղում գործել է միդասյա դպրոց՝ 25 աշակերտով: Դպրոցը գործել է նաև 1914թ.՝ ունենալով 35 աշակերտ[24]:

Դպրոցը պահվել էր բաքվաբնակ հերհերցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 200ռ.) և աշակերտների ուսման վարձով:

22. Հաղորտի գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1873թ. Հաղորտի գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1874-75 ուստարում էջմիածնի Սինոդի թույլտվությամբ Հաղորտիում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 1 բաժանմունքով, 29 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1886թ. դպրոցն ուներ 35 աշակերտ, 1 ուսուցիչ: 1892-93 ուստարում բացվում է միդասյա երկսեռ դպրոց, որտեղ սովորում էր 35 աշակերտ, որից 16-ը՝ աղջիկ, դասավանդում էր 1 ուսուցիչ:

1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1907թ. նոյեմբերին: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, որն ուներ 3 բաժանմունք, 45 աշակերտ, ուսուցիչն էր տեղացի Տեր-Գրիգոր քահանա Առաքելյանը, որն ավարտել է Շուշիի թեմական դպրոցը: 1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 3 բաժանմունք, 58 աշակերտ, 2 ուսուցիչ, իսկ 1915-ին՝ 40 աշակերտ[25]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ հաղորտեցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 250ռ.) և աշակերտների ուսման վարձով:

23. Ղավախան գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1870թ. Ղավախան գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1873-74 ուստարում կաթողիկոսի թույլտվությամբ բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Աշակերտներին սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել, կրոն: 1886թ. Ղավախան գյուղի միդասյա ծխական դպրոցն ուներ 25 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ՝ Հովհաննես Տեր-Գրիգորյանը: XIX դարի 90-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 42 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ, 1 բաժանմունք, ուսուցիչն էր Արտաշես Տեր-Միքայելյանը, որն ավարտել էր Գանձակի քաղաքային դպրոցը: 1911թ. դպրոցն ունեցել է 50 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ[26]:

---

24. Նույն տեղում, գ. 43, 543, «Արարատ», 1913, թ. 2, էջ 452, «Նոր դպրոց», 1913, թ. 3, էջ 52:
25. Նույն տեղում, գ. 43, 543, «Մշակ», 1874, թ. 1, կաթ. դիվ. ֆ. 56, գ. 543:
26. «Մշակ», 1874, թ. 1: Նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543, թ. 1-18:

Դպրոցը հիմնականում պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի եկեղեցու նպաստով:

24. Ղզղալա (Բերդաձոր) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1873թ. Ղզղալա գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, ուսուցիչն էր՝ Թովմաս քահանա Տեր-Իսրայելյանը: «Դպրոց» ամսագրի 1875թ. թիվ 1-ում տպագրված «Վիճակագրական տեղեկություններ»-ում նշվում է, որ 1874-75 ուստարում Ղզղալա գյուղի դպրոցում սովորում էր 29 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 1881թ. դպրոցն ունեցել է 25 աշակերտ: Այն փակվել է 1885թ. և վերաբացվել 1887-88 ուստարում: Միդասյան ծխական դպրոցում սովորում էր 30 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ գյուղում գործել է նաև իգական դպրոց՝ 1894թ., ունենալով 15 աշակերտուհի:

90-ական թվականների կեսերին այդ երկու դպրոցները փակվում են և վերաբացվում 1906 թվականի սեպտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 51 աշակերտ, 3 բաժանմունք, ուսուցիչն էր Աբել Սողոմոնյանը, որն ավարտել է Շուշիի թեմական դպրոցը:

1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 66 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը հիմնականում պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի եկեղեցու նպաստով[27]:

25. Ղուզե Ճարտար գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալներով՝ 1883-84 ուստարում Ղուզե Ճարտարում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, 1 բաժանմունքով, ուսուցիչն էր Կարապետ Սահակյանը: 1883-84 ուստարում Ղուզե Ճարտարում բացվում է երկսեռ արական հոգևոր ուսումնարան՝ 57 աշակերտով, որից 17-ը՝ աղջիկ:

Դպրոցը փակվել է 1885թ. և վերաբացվել 1887թ.: 1888-89 ուստարում դպրոցը կոչվել է Ս. Գրիգորյան տղայոց միդասյա ուսումնարան, որտեղ սովորում էր 28 աշակերտ: Ճարտար գյուղի բնակչության խնդրանքով 1889թ. Սինոդը թույլատրում է բացելու օրիորդաց դպրոց, որն ուներ 30 աշակերտուհի և 1 վարժուհի: 1896թ. այդ երկու դպրոցները փակվում են և վերաբացվում 1906թ.: Սակայն նշենք, որ 1900-1902թթ. Ղուզե Ճարտարում կառավարությունից գաղտնի գործում էր մասնավոր դպրոց: 1906-1907 ուստարում Ղուզե Ճարտարում բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 3 բաժանմունքով: Դպրոցում սովորում էր 80 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր՝ Ղազար Տեր-Գրիգորյանը: 1908-1909թթ. դպրոցը երկդասյա երկսեռ էր, որտեղ սովորում էր 90 աշակերտ-աշակերտուհի: 1915թ. դպրոցն ունեցել է 70 աշակերտ:

Դպրոցը պահվել է աշակերտների ուսման վարձով: Այն պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[28]:

26. Մուշկապատ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1886-87 ուստարում Մուշկապատ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1894թ. դպրոցն ունեցել է 35 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ:

Դպրոցը փակվում և վերաբացվում է 1908թ. դեկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ ծխական դպրոցն ուներ 2 բաժանմունք, 32 աշակերտ, որից 6-ը՝ աղ-

27. Նույն տեղում: Նաև՝ «Նոր դպրոց», 1908, թ. 4:
28. ՀՀ ԱԱ, ֆ. 28, գ. 10, թ. 35, գ. 99: Տե՛ս նաև Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 366:

ջիկ: Ուսուցիչն էր՝ Առստամ Հովհաննիսյանը, որն ավարտել է Շուշիի քաղաքային դպրոցը, ուսուցչություն է արել հայոց ծխական դպրոցներում: 1911թ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ, 2 բաժանմունք, 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության կողմից տրված միջոցներով[29]:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

27. Մյուրիշեն (Տիրիքենդ) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1873թ. Մյուրիշեն գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1874-75 ուստարում դպրոցում սովորում էր 25 աշակերտ, ուսուցիչն էր Արշակ Տեր-Հայրապետյանը: 80-ական թվականների կեսերին դպրոցը փակվել է և վերաբացվել 1894թ.: Այն ուներ 1 բաժանմունք, 30 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896թ. փակվում է և վերաբացվում 1906թ. սեպտեմբերին:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 69 աշակերտ, որից 27-ը՝ աղջիկ: Դպրոցն ուներ 3 բաժանմունք, 2 ուսուցիչ՝ Լևոն Զաքարյանն ու Ավետիս Գասպարյանը: Նրանք ուսուցչություն են արել Թաղավարդի, Թաղլարի, Ճարտարի և այլ դպրոցներում:

Զաքարյանը պարապում էր ռուսաց լեզու, թվաբանություն, գծագրություն, Գասպարյանը՝ հայոց լեզու, պատմություն, կրոն, երգեցողություն: Այս առարկաներն անցնում էին նաև մյուս բոլոր դպրոցներում:

Դպրոցը գործել է նաև 1911թ.՝ ունենալով 45 աշակերտ:

Դպրոցը պահվում էր հիմնականում բաքվաբնակ մյուրիշենցիների և ավդուռցիների Հայրենակցական Միության միջոցներով (տարեկան 110-150ռ.) և աշակերտների ուսման վարձով[30]:

28. Մսմնա գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1884թ. Մսմնա գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, ուսուցիչն էր Սերգի Տեր-Իսրայելյանը: Կան տվյալներ, որ մինչ այդ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց: Մի տարի հետո դպրոցը փակվում է և վերաբացվում 1886թ.: 1889-90 ուստարում դպրոցն ունեցել է 30 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ:

90-ական թվականների կեսերին, երբ փակվել են հայկական դպրոցները, այստեղ կառավարությունից գաղտնի գործել է դպրոց, որտեղ սովորում էին նաև հարևան գյուղերից եկած երեխաները:

1908-1909 ուստարում Մսմնա գյուղում բացվում է միդասյա երկսեռ ծխական դպրոց: Այն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, 1 ուսուցիչ՝ պ. Մելիք Տեր-Գրիգորյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը:

1914թ. դպրոցն ունեցել է 52 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ[31]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ մսմնացիների Հայրենակցական Միության կողմից (տարեկան 150 ռ.) և աշակերտների ուսման վարձով:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

29. Նախիջևանիկ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1873թ. Նախիջևանիկ գյուղում բացվում է նախակրթարան՝ 10 աշակերտով: 1886թ. բացվում է եկեղեցա-

29. «Նոր դպրոց», 1911, թ. 4:
30. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 78,գ. 28, ց. 1, գ. 10: «Արարատ», 1886, թ. 10: Նաև՝ «Նոր դպրոց», 1911, թ. 4:
31. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 165, գ. 543:

կան-ծխական դպրոց՝ 1 բաժանմունքով, 25 աշակերտով: 1895թ. դպրոցն ուներ 2 բաժանմունք, 30 աշակերտ, 1 ուսուցիչ: Մի տարի հետո դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 40 աշակերտ: Ուսուցիչն էր Ա. Արամյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը: Տարեկան ստանում էր 250 ռ.:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով: Կան տվյալներ, որ դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[32]:

30. Ննգի գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1874-75թթ. Ննգի գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1880թ. տվյալներով՝ գյուղում գործում էր ծխական դպրոց, որն ուներ 1 բաժանմունք, 25 աշակերտ: Ուսուցիչն էր Գրիգոր Հովհաննիսյանը: 80-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1905թ.: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 72 աշակերտ, որից 38-ը տղա էր, 34-ը՝ աղջիկ: Դպրոցի ուսուցիչն էր Ստեփան Վարդանյան-Շերմազյանը, որն ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը:

1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 80 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ: 1915թ. դպրոցում սովորում էր 45 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ[33]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բաքվաբնակ ննգեցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 200ռ.):

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

31. Նորշեն (Ենիքենդ) գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Ալեքսանդր Երիցյանը «Պատմություն Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի 75-ամյա պատմության» աշխատության մեջ (էջ 184) նշում է, որ 1870-ական թվականներին Նորշեն գյուղում գործել է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1874-75 ուստարում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1881թ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: 1884-ին աշակերտների թիվն ավելացել է երկուսով, 1885-ին փակվել է և վերաբացվել 1887-88 ուստարում:

Դպրոցը կրկին փակվել է 1896թ. և վերաբացվել 1908թ. հունվարին: Միդասյան երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 60 աշակերտ, որից 18-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Գրիգոր Թևազյանը, որն ավարտել էր Ներսիսյան դպրոցի լրիվ դասընթացը: Տարեկան որպես ռոճիկ որոշված էր 480 ռուբլի: 1911թ. դպրոցն ունեցել է 72 աշակերտ, որից 28-ը՝ աղջիկ, 2 ուսուցիչ[34]:

Դպրոցը պահվել է բաքվաբնակ նորշենցի Բաղդասար Հակոբյանցի նպաստով (տարեկան 200ռ.) և աշակերտների ուսման վարձով:

32. Շեխեր գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալների համաձայն՝ XIX դարի 80-ական թվականների վերջերին Շեխեր գյուղի Սուրբ Վարդան եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով: 1888-89 ուստարում՝ գյուղի բնակչության խնդրանքով, կաթողիկոսը թույլատրում է բացել եկեղեցական-ծխական դպրոց: Այն ուներ 20 աշակերտ, 1 ուսուցիչ՝ Տեր Առաքել քահանան:

90-ական թվականների կեսերին դպրոցը փակվել է և վերաբացվել 1908թ. հոկ-

32. «Արարատ», 1889, էջ 673-682: Նաև՝ «Նոր դպրոց», 1909, թ. 3, էջ 52-54:
33. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 122,գ. 543, «Նոր դպրոց», 1911, թ. 4:
34. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 122,գ. 543: Նաև՝ «Նոր դպրոց», 1911, թ. 4:

տեմբերին: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, ուներ 1 բաժանմունք, 1 ուսուցիչ, 35 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ:

Կան տվյալներ, որ դպրոցը գործել է նաև 1914թ.՝ ունենալով 45 աշակերտ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և եկեղեցու նպաստով:

Այդ խղճուկ վիճակում դպրոցը գոյութուն է ունեցել մինչև խորհրդային շրջանը[35]:

33. Պառավաթումբ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Ս. Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1895թ. Պառավաթումբ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Մի տարի հետո դպրոցը փակվում է և վերաբացվում 1909թ. հոկտեմբերին: Միդասյան երկսեռ դպրոցում սովորում էր 35 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Տիրան Ուլուբաբյանը, որն ավարտել էր Գանձակի քաղաքային դպրոցը:

1909-1910թթ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ, 2 բաժանմունք, 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվել է աշակերտների ուսման վարձով և բնակչության կողմից տրված միջոցներով[36]:

34. Սարգսաշեն գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Սարգսաշեն գյուղի եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1894թ., որտեղ սովորում էր 22 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ: Մի տարի հետո դպրոցը փակվել է և վերաբացվել 1908թ.: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, ուներ 45 աշակերտ, որից 14-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Վահան Տեր-Հայրապետյանը, որն ավարտել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրանոցը:

1911թ. դպրոցում սովորում էր 52 աշակերտ, դասավանդում 2 ուսուցիչ, 1915-ին դպրոցն ունեցել է 30 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ[37]:

Դպրոցը պահվել է հիմնականում աշակերտների ուսման վարձով և բնակչության միջոցներով:

35. Սարուշեն գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1870թ. Սարուշեն գյուղում բացվում է նախակրթարան, որտեղ սովորում էր 20-25 աշակերտ: 1879թ. Սարուշեն գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 30 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Սարուշենի դպրոցը փակվում է 1885թ. և վերաբացվում 1886-87 ուստարում՝ ունենալով 25 աշակերտ, 1 ուսուցիչ:

1890թ. գյուղում բացվում է միդասյա երկսեռ Գրիգորյան ուսումնարան: Այն ուներ 60 աշակերտ, որից 20-ը՝ աղջիկ, ուսուցիչն էր Թովմաս Այվազյանը: 90-ական թվականների կեսերին, երբ փակվել են դպրոցները, այստեղ կառավարությունից գաղտնի գործել է դպրոցը: Այդ ժամանակ Սարուշենում բացվել է նաև իգական դպրոց՝ 45 աշակերտուհիներով, դասավանդում էր վարժուհի Հռիփսիմե Այվազյանը: Նշենք, որ շոշեցի մեծապատիվ Գրիգոր Այվազյանն իր միջոցներով (2000ռ.) նորոգել է այդ երկու դպրոցները:

1906-1907 ուստարում միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 62 աշակերտ, որից 18-ը՝ աղջիկ, ուսուցիչն էր Սոկրատ Մելիք-Շահնազարյանը: 1915թ. Սարուշեն գյուղում գործում էր միդասյա երկսեռ դպրոց՝ 65 աշակերտով, ուներ 2 բաժանմունք, 2 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր Գրիգոր Այվազյանի ժառանգների

35. Նույն տեղում:
36. Նույն տեղում: Նաև՝ «Մուրճ», 1894, թ. 4:
37. «Նոր դպրոց», 1910, թ. 10: Նաև տե՛ս, կաթ. դիվ., ֆ. 28, գ. 10, «Արարատ», 1890, թ. 4:

նպաստով (տարեկան 300ռ.) և աշակերտների ուսման վարձով: Դպրոցն ուներ սեփական շենք, պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[38]:

36. Սխտորաշեն գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսյանի՝ էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ 1893-94 ուստարում Սխտորաշեն գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 18 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Աշակերտներին սովորեցնում էին գրել-կարդալ, հաշվել, կրոն, երգեցողություն, նկարչություն, ազգային պատմություն:

Երկու տարի հետո դպրոցը փակվել է և վերաբացվել 1908թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա ծխական դպրոցն ուներ 30 աշակերտ, 1 ուսուցիչ՝ Հակոբ Տեր-Միքայելյանը, որն ավարտել էր Ներսիսյան դպրոցը:

1909-1910թթ. դպրոցն ունեցել է 52 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ[39]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և եկեղեցու նպաստով: Այդ խղճուկ վիճակում դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

37. Սպիտակաշեն գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1894թ. Սպիտակաշեն գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Երկու տարի հետո դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 35 աշակերտ, 1 բաժանմունք: Ուսուցիչն էր Տեր-Մատթևոս Առաքելյանը: 1914թ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ, իսկ 1917թ.՝ 62 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության կողմից տրված միջոցներով[40]:

38. Սոս գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալներով՝ Սոս գյուղի դպրոցի պատմությունն ավելի հին է: Այստեղ՝ 1857թ., Սուրբ Գևորգ եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով, իսկ մինչ այդ՝ Վարանդա գավառի մյուս գյուղերի պես Սոս գյուղի երեխաները նույնպես ուսանել են Ամարաս վանքի դպրոցում:

1870թ. Սոս գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ՝ Արամ Տեր-Եգանյանը: 1874-75 ուստարում դպրոցն ունեցել է 25 աշակերտ, 1 ուսուցիչ: 80-ական թվականների կեսերին Սոս գյուղում բացվում է միդասյա երկսեռ ծխական դպրոց, որտեղ սովորում էր 35 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ:

1887թ. Սոս գյուղում բացվել է նաև դպրոց, որտեղ սովորում էր 15 աշակերտուհի: 90-ական թվականների կեսերին այդ երկու դպրոցները փակվում են և վերաբացվում 1907-1908 ուստարում: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 1 բաժանմունք, 36 աշակերտ, որից 9-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Եսայի Քամալյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ սոսեցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 200ռ.) և աշակերտների ուսման վարձով:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[41]:

---

38. Նույն տեղում: Նաև՝ «Մուրճ», 1890, թ. 4, «Արաքս», 1890, թ. 1:
39. Նույն տեղում: Նաև՝ ֆ. 56, գ. 543, թ. 1-8:
40. ՀՀ ԱԱՐ., ֆ. 28, գ. 10, գ. 543: Նաև՝ «Վիճակագրական տեղեկություններ 1889-1890 թվականների»:
41. Նույն տեղում, ֆ. 56, ց. 3, գ. 78, նաև՝ «Նոր դպրոց», 1909, թ. 4:

39. Փիրջամալ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Փիրջամալ գյուղում առաջին դպրոցը՝ նախակրթարանը, բացվել է 1874թ.: Դպրոցում սովորում էր 15 աշակերտ, ուսուցիչն էր Մանաս Ներսիսյանը: 1876-77 ուստարում Փիրջամալ գյուղում բացվում է նաև եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 80-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1888թ., սովորում էր 27 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ:

1890-94թթ. դպրոցի 25 աշակերտից 10-ը աղջիկ էր: Դպրոցը նորից փակվում է 1896թ. և վերաբացվում 1908թ. սեպտեմբերին: Միդասյան երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 60 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Տելեմակ Տեր-Մովսիսյանը:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ փիրջամալցի Միրզա Սարուխանյանի նպաստով (տարեկան 200ռ.): Աշակերտների մեծ մասը սովորում էր անվճար:

40. Քերթ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

Արխիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք, որ Քերթ գյուղում 1882թ. բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:[42] Կան տվյալներ, որ մինչ այդ գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով: 1887թ. Քերթ գյուղի բնակչության խնդրանքով էջմիածնի կաթողիկոսը թույլատրում է բացել միդասյա ծխական դպրոց: Մի տարի հետո բացվում է դպրոցը, որտեղ սովորում էր 30 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ:

1893-94 ուստարում դպրոցն ուներ 45 աշակերտ, 1 բաժանմունք և 1 ուսուցիչ: Դպրոցը փակվում է 1896թ. և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 52 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ[43]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ քերթցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 200ռ.) և աշակերտների ուսման վարձով:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

41. Քյաթուկ գյուղի միդասյա երկսեռ դպրոց:

1870թ. Քյաթուկ գյուղում բացվում է նախակրթարան՝ 15-20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Այնուհետև՝ հաջորդ տարում, բացվում է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 27 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ՝ Հովհաննես Հովսեփյանը: Գյուղում 1888թ. գործում էր միդասյա ծխական դպրոց՝ 35 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1893-94 ուստարում դպրոցն ուներ 45 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը փակվում է 1896թ. և վերաբացվում 1907-1908 ուստարում: Այդ ժամանակ միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 50 աշակերտ, որից 15-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Համազասպ Տեր-Հակոբյանը, որն ավարտել էր Ալեքսանդրապոլի քաղաքային դպրոցը՝ 1906թ.: Երկու տարի ուսուցչություն էր արել Խաչենի Դաշբուլաղ գյուղի միդասյա դպրոցում, ստանում էր տարեկան 450 ռուբլի:

Դպրոցը 1914թ. ունեցել է 66 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ[44]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ քյաթուկցիների Հայրենակցական Միության միջոցներով և աշակերտների ուսման վարձով:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

---

42. «Արարատ», 1886, թ. 4: Նաև՝ ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543:
43. «Մեղու Հայաստանի», 1888, թ. 17: «Արարատ», 1886, թ. 10, «Մուրճ», 1890, թ. 4:
44. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 52, 78, գ. 543: Նաև տե՛ս «Արարատ», 1917, էջ 678:

2.3. Շուշի քաղաքի դպրոցների ընդհանուր բնութագիրը (հիմնադրման օրից մինչև 1920թ.)

Շուշի քաղաքում կրթամշակութային կյանքն աշխույժ վերելք ապրեց XIX դարում՝ շնորհիվ Գանձասարի Հասան-Ջալալյան տոհմի նշանավոր գործիչների՝ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի, և պատմաշրջանի Արցախի մշակույթի ու մանկավարժության երախտավորների՝ Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի, Խորեն Ստեփանեի, Սեդրակ Մանդինյանի, Ղազարոս Աղայանի, Համբարձում Առաքելյանի, Սիմեոն Հախումյանի, Նիկողայոս Տեր Ավետիքյանի, Տիգրան Նազարյանի, Նիկիտա Խանդամիրյանի և շատ ուրիշների ազգաշահ առաքելության: Նրանց հետ միասին կարճատև, կամ երկարատև ժամանակ արգասավոր գործունեություն են ծավալել նաև Արցախի թեմի հոգևոր-մշակութային գործիչներն ու թեմի առաջնորդները, որոնց մասին հանգամանորեն նշել ենք աշխատության 4-րդ և 5-րդ գլուխներում:

Այդ և շատ այլ գործիչներ ոչ միայն նպաստեցին Շուշի քաղաքի մշակութային կյանքի զարթոնքին, այլև նախադրյալներ ստեղծեցին կրթական համակարգի զարգացման համար: Սկսած XIX դարի 30-ական թվականներից մինչև XX դարի երկրորդ տասնամյակը Շուշի քաղաքում բացվեցին տարբեր տիպի կրթական հաստատություններ: Ինչպես նշեցինք նախորդ բաժնում, XX դարի սկզբին Շուշի քաղաքի կրթական համակարգում նույնպես փոփոխություններ են կատարվում. նախկին եկեղեցական-ծխական իգական առանձին դպրոցների փոխարեն 1906թ. կանոնադրության համաձայն վերաբացվում են միդասյա, երկդասյա երկսեռ դպրոցներ: 1906-1920թթ. Շուշի քաղաքի կրթական հաստատությունների համակարգում ներառվում են նաև թեմական, Մարիամ-Ղուկասյան միջնակարգ դպրոցները և ռեալական ուսումնարանը:

Այդ տարիներին Շուշի քաղաքում գործող միությունների, ընկերությունների և կազմակերպությունների հետ և կողքին Հայ Առաքելական եկեղեցին, ժամանակի ոգուն և պահանջներին համահունչ, կրթական գործունեությունը ծավալում և ամրապնդում էր նաև թեմի գավառներում:

Պատմագիտական աղբյուրներից[1] հայտնի է, որ Շուշիի հայոց եկեղեցիների անուններով բնորոշվում է նրա բնակիչների զանազան վայրերից գաղթած լինելը Շուշի: Օրինակ, Շուշիի բնակիչների մի մասը գաղթել է Նախիջևանի գավառի Ղազանչի գյուղից, Ագուլիսի և Մեղրու կողմերից: Գալով Շուշի՝ նրանք կազմում են իրենց թաղերն ու կառուցում իրենց եկեղեցիները և նրանց կից բացում եկեղեցական-ծխական դպրոցներ:

Ագուլիսեցիներն ու ղազանչեցիները կազմել են Շուշիի նախնական ազգաբնակչությունը: Աբրամ Կիսիբեկյանը նաև հիշատակում է, որ XX դարասկզբին (1900-1905թթ.) Ագուլեցոց եկեղեցին ուներ 447, Ղազանչեցոցը՝ 367, իսկ Մեղրեցոցը՝ 102 ծուխ[2]: «Կավկազսկի կալենդար»-ի 1914թ. տվյալներով՝ Շուշին ունեցել է 42.568 շունչ, որից հայեր՝ 22.416, թուրքեր՝ 18.865, ռուսներ՝ 1.188, այլք՝ 99 շունչ[3]: Անշուշտ, Շուշի քաղաքի ազգաբնակչության քանակական աճը, սոցիալ-

1. Մանրամասն տե՛ս Լեո, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմություն, Մ. Բարխուդարյան, «Արցախ», Ա. Կիսաբեկյան, նշվ. աշխ., էջ 290:
2. Ա. Կիսաբեկյան, նշվ. աշխ., էջ 291:
3. «Կավկազսկի կալենդար», 1914, էջ 462-464: Նաև՝ Ա. Կիսաբեկյան, նշվ.աշխ., էջ 290-292:

տնտեսական, մշակութային կյանքում նկատելի տեղաշարժերը և այլ իրադարձություններ իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաև դպրոցական կյանքի ու լուսավորության զարգացման վրա: Հայ առաջադեմ գործիչների, բարեգործական ընկերությունների, միությունների և նվիրյալ բարերարների աջակցությամբ Շուշի քաղաքում հետզհետե սկսեցին բացվել տարբեր տիպի դպրոցներ:

Արխիվային հարուստ նյութերի, Շուշիի կրթական օջախներում բեղուն գործունեություն ծավալած ժամանակիցների հուշերի և այլ աղբյուրների հիման վրա այժմ ներկայացնենք Շուշի քաղաքի տարբեր տիպի դպրոցների համառոտ բնութագիրը՝ հիմնադրման օրից մինչև 1920թ.:

1. Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոց

Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմությունը գրել է Լեոն՝ «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի» (Թիֆլիս, 1914): Այդ դպրոցի գործունեության մասին հանգամանորեն տեղեկություններ են տրվում նաև Մ. Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին» (1964), Վ. Երկանյանի «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում» (1970), Ս. Խուդոյանի «Արևելահայ դպրոցը 1800-1920թթ.» աշխատություններում, ինչպես նաև պարբերական մամուլում լույս տեսած առանձին հոդվածներում: Այդ նկատառումով էլ մենք այստեղ կսահմանափակվենք միայն մի քանի համառոտ տեղեկություններով, կվկայակոչենք նոր փաստեր, որոնք առնչվում են Շուշիի թեմական դպրոցի գործունեությանը:

Հայկական դպրոցների վերաբերյալ ընդունված առաջին պաշտոնական կանոնադրության համաձայն (1836թ. հայտնի «Պոլոժենիեն»), 1838թ. հունիսի 22-ին բացվում է Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ առաջին միջնակարգ ուսումնական հաստատությունն Արցախում: Թեմական դպրոցի հիմնական խնդիրն է եղել հայ եկեղեցու սպասավորների պատրաստումը: Սակայն հայ հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց և նրա թելադրանքով թեմական դպրոցն աստիճանաբար հեռացել է իր հիմնական խնդրից և ավելի ու ավելի մոտեցել աշխարհիկ նպատակների իրականացմանը: Այդ դպրոցներից են դուրս եկել մեր ծխական տարրական դպրոցների ուսուցիչների մեծ մասը, հայ մշակույթի ու հասարակական մտքի գործիչները: Դա վերաբերում է նաև Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցին, որը նշանավոր դեր է խաղացել Արցախի ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Թեմական դպրոցը բազմիցս ենթարկվել է ցարական կառավարության հետապնդումներին, փակվել, վերաբացվել, գտնվել իշխանության հսկողության տակ, բայց և պատվով է ծառայել արցախահայերի մշակույթի, լուսավորության, գիտության առաջընթացի ազգանվեր գործին:

Շուշիի թեմական դպրոցը հետզհետե ձեռք է բերել աշխարհիկ բովանդակություն (իհարկե, բոլորովին չհրաժարվելով իր հոգևոր ուղղությունից) և դարձել թեմի միակ ազգային միջնակարգ դպրոցը: Տարբեր ժամանակներում թեմական դպրոցում բեղմնավոր մանկավարժական աշխատանք են կատարել ականավոր մանկավարժներ, գրողներ ու հասարակական գործիչներ: Նկատի ունենք հատկապես Պ. Շանշյանի, Պ. Պռոշյանի, Խ. Ստեփանեի, Ս. Մանդինյանի, Հ. Առաքելյանի, Լ. Սարգսյանի, Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Հ. Հովհաննիսյանի և ուրիշների աշխատանքը[4]:

4. Լեո, Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի պատմություն, էջ 290-302: «Մեղու Հայաստանի», 1884, թ. 90:

Նախնական շրջանում թեմական դպրոցն աղքատության մեջ ծնված մի փոքրիկ ուսումնական հաստատություն էր, որ չի ունեցել նույնիսկ իր սեփական շենքը, այլ տեղավորված էր մի մասնավոր մարդու տանը:

Սկզբում ունեցել է մոտ 20 աշակերտ, ուսուցիչների մի մասը պարապել է առանց վարձատրության: Անցել են հայոց լեզու, ռուսաց լեզու, պարսկերեն, թվաբանություն, սրբազան պատմություն, երգեցողություն:

XIX դարի 60-ական թվականներին թեմական դպրոցը հանձնվում է Շուշիի հասարակության կողմից ընտրված հոգաբարձությանը: Այսպիսով, իրականանում է դպրոցական կյանքում ժողովրդի մասնակցության ապահովման ժողովրդավարական սկզբունքը, որը հայ իրականության մեջ առաջ քաշել ու պաշտպանում էին Մ. Նալբանդյանը, Ս. Նազարյանը, Պ. Շանշյանը և ուրիշներ: Սահմանափակվում էին հոգևոր իշխանության իրավունքները: Այդ սկզբունքն իր արտահայտությունն է գտնում նաև Շուշիի թեմական դպրոցի 1861թ. կազմված ու կաթողիկոսի կողմից հաստատված կանոնադրության մեջ (կանոնադրության տեքստը տե՛ս Լեոի գրքում՝ էջ 252)[5]:

Շուշիի թեմական դպրոցը մեծ փոփոխությունների է ենթարկվում, երբ Մատթևոս կաթողիկոսը շուշեցիների խնդրանքով 1863թ. թեմականի տեսուչ է նշանակում առաջավոր գաղափարներով տոգորված Պետրոս Շանշյանին: Վերջինիս օգնականն էր Պերճ Պռոշյանը, որն այնտեղ դասավանդել է հայոց լեզու, հայ գրականություն և ազգային պատմություն: Նրանց ջանքերով թեմական դպրոցը սկսում է ծաղկել, դառնում եռդասյան՝ իր երկու ծխական դպրոցներով: Փոխվում է նաև դպրոցի անունը: Այն կոչվում է «Եղիշյան ազգային հոգևոր դպրոց»՝ 5-րդ դարի հռչակավոր պատմիչ Եղիշեի անունով:

Շուշիի թեմական դպրոցում բեղմնավոր մանկավարժական գործունեություն են ունեցել փիլիսոփայության դոկտոր Վասակ Պապաջանյանը (1877-78թթ.), եվրոպական համալսարանում մանկավարժական կրթություն ստացած Սեդրակ Մանդինյանը (1879-81թթ.): Նրանց շնորհիվ առաջին անգամ թեմականում ավանդվել է մանկավարժություն, իսկ չորրորդ դասարան ավարտողներից կազմվել է մանկավարժական հատուկ դասարան, որը տեղի ծխական դպրոցների համար պատրաստել է ուսուցիչներ: 1881-82 թթ. թեմական դպրոցի ուսուցչի, ապա նաև տեսչի պաշտոն է վարել անվանի գրող, մանկավարժ Ղ. Աղայանը: Հետագայում տեսչի պաշտոնում աշխատել են նաև Լևոն Սարգսյանը, Պետրոս Մելքումյանը, Ստեփանե Դեմուրյանը և ուրիշներ[6]:

Շուշիի թեմական դպրոցը բազմիցս փակվել-վերաբացվել է հայերի ու հայ դպրոցների նկատմամբ վարած ցարական կառավարության քաղաքականության տատանումների հետևանքով:

Այս դրությունը շարունակվում է մինչև 1905թ. աշունը: Թեմականն ավելի բարեկարգ տեսք է ստացել1908-1910թթ.՝ տեսուչ Ավետիք Տեր-Պողոսյանի օրոք և նրա ջանքերով:

1913թ. բավական մեծ շուքով տոնվել է դպրոցի 75-ամյակը (1838-1913թթ.), որի կապակցությամբ գրվել է Լեոի գիրքը՝ նվիրված թեմականի պատմությանը: Այդ գրքից, արխիվային և այլ տպագիր նյութերից մենք հիմնականում քաղել ենք դպրոցին վերաբերող այս նյութերը:

5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:

2. Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոց

Կանանց կրթության հարցը հայ իրականության մեջ լայն քննարկման առարկա դարձավ հատկապես անցյալ դարի 60-ական թվականներին: Այդ տասնամյակում հայ իրականության մեջ սկիզբ առած լուսավորչական շարժումն առաջադրեց նաև կանանց կրթության հարցը: Հայ մշակույթի ականավոր գործիչներն իգական դպրոցներ բաց արին հայոց թեմերում, այդ թվում նաև Արցախում՝ Շուշիում:

Երկար չի եղել այդ դպրոցի կյանքը, բայց անչափ հետաքրքիր էր նրա սկզբնավորման ու գոյության պատմությունը, որը շարադրված է Պ. Պռոշյանի, Պ. Շանշյանի «Ղարաբաղի Տիրամայր Սուրբ Մարիամյան օրիորդաց ուսումնարանի բացվելը» գրքույկում (Շուշի, 1864թ.) և թեմական դպրոցին նվիրված Լեոի աշխատության մի շարք էջերում:

Վճռական նշանակություն տալով աղջիկների կրթության և դաստիարակության հարցերին, Պ. Պռոշյանը և Պ. Շանշյանը ակտիվ մասնակցություն են ունենում իգական դպրոցների հիմնադրմանը:

Եվ այսպես, 1864թ. մի խումբ գործիչների՝ Պ. Շանշյանի, Գարեգին Մելիքսեթ Մուրադյանի, Պ. Պռոշյանի համառ ջանքերով բացվում է Շուշիի բարեկարգ առաջին օրիորդաց դպրոցը:

Դպրոցի նպատակն էր «պատրաստել լուսավորյալ վարժապետուհի և լուսավորյալ մայրեր». նշված է Շանշյանի և Պռոշյանի կազմած օրիորդաց դպրոցի կանոնադրության մեջ (էջ 293, Լեոի գրքում): Այստեղ ուսուցումը պետք է տարվեր մայրենի լեզվով՝ հայերենով: Ուսուցանվելու էին կրոնական առարկաներ, հայոց պատմություն, աշխարհագրություն, ձեռագործություն, վայելչագրություն, նկարչություն և երգեցողություն:

Իգական դպրոցի բացման գործում և գործունեությանն ակտիվ մասնակցություն է ունեցել, Շանշյանից և Պռոշյանից ոչ պակաս դեր է խաղացել մի հոյակապ անձնավորություն, խելոք ու խիզախ մի կին՝ Մարիամ Հախումյանը, շուշեցի մեծահարուստ Համբարձում Հախումյանի տիկինը[7]: Առաջադեմ մարդ էր նրա ամուսինը, որը բոլոր միջոցներով օժանդակել է կնոջ ձեռնարկումների իրագործմանը, միաժամանակ Շուշիի հասարակայնությանը բացատրել կնոջ կրթության կարևորությունը:

Իգական դպրոցի կազմակերպմանն անմիջապես օգնել է Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը, ինչպես Պռոշյանն է գրել. «Ղևոնդ է հանդիսանում 5-րդ դարու հայ տիկնանց ազգասիրության հոգին ավելի ընդարձակելու Շուշվոյ տիկնաց մեջ», իսկ Լեոն ավելացնում է՝ «առանց որի հազիվ թե կարող կլիներ իրականանալ այդպիսի մի շարժում՝ Շուշու մեջ» (էջ 295):

Լեոն միաժամանակ նշում է, որ մի քանի տարի առաջ Հախումյանների ընտանիքում աղջիկների ուսուցում է անցկացվել, տիկին Մարիամ Հախումյանի մոտ միտք է հղացել աղջիկների համար մի կանոնավոր դպրոց հիմնելու մասին: Եվ այդ նկատառումով էլ Շուշիի հասարակության մեջ բացատրական աշխատանք է տարել՝ բացելու իգական դպրոցներ, օժանդակելու այդ գործին: Նախապատրաստական բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո Մարիամ Հախումյանը դիմում է թեմական առաջնորդին՝ խնդրելով թույլատրել օրիորդաց դպրոցի բացումը:

---

7. Լեո, նշվ. աշխ., էջ 220-302: Նաև տե՛ս «Մեղու Հայաստանի», 1884, թ. 9:

Շուշիի օրիորդաց դպրոցի բացումը եղել է մեծ տոնախմբություն շուշեցիների համար: Իր գործունեության տարիներին օրիորդաց դպրոցը բավական մեծ առաջադիմություն է ցույց տվել՝ ոգևորելով իր աշակերտուհիներին և նրանց ծնողներին: Ուսուցիչների մեծ մասն այնտեղ աշխատել է ձրիաբար:

4. Շուշիի Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոց

Արցախի կոնսիստորիայի՝ էջմիածնի Սինոդին ներկայացրած վիճակագրական տեղեկագրում արձանագրված է, որ, բացի Մարիամյան բարեկարգ օրիորդաց դպրոցից, Շուշիում գործել է նաև Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը, որը բացել է Արիստակես վարդապետ Սեդրակյանը՝ 1876 թվականին: Նշենք, որ Մարիամյան օրիորդաց դպրոցը փակվել էր 1874-1875 ուստարում, և Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը բացվել էր նրա փոխարեն: Այն 1877թ. ունեցել է երկու բաժանմունք՝ 70 աշակերտուհի, 4 ուսուցիչ: 1881թ. դպրոցը եղել է երկսեռ, ունեցել է 120 աշակերտուհի, իսկ 80-ական թվականների վերջերին՝ 170 աշակերտուհի, 13 ուսուցիչ-ուսուցչուհի: Դպրոցն ունեցել է միջնակարգ դասընթաց: 1896թ. այն փակվել է և վերաբացվել միայն 1906թ. փետրվարին: 1908-1909 ուստարում Հռիփսիմյան օրիորդաց երկդասյա դպրոցն ունեցել է 5 բաժանմունք, 218 աշակերտ, որից 29-ը՝ տղաներ[8]:

XX դարի առաջին տասնամյակում Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը եղել է բավականաչափ պատկառելի մի ուսումնարան՝ իր ուսուցիչ-ուսուցչուհիներով և 199 աշակերտուհիներով: Դպրոցի տեսուչն էր Մովսես Սամվելյանը, ուսուցիչ-ուսուցչուհիներ՝ Գաբրիել Գյուլիքևխյանը, Մելիք Սարգսյանը, Եկատերինա Բահաթրյանը, Զարուհի Գյուլիքևխյանը, Ելենա Առաքելյանը, Գալյա Հովակիմյանը, Նաիրա Փիրումյանը և ուրիշներ: 1911-1912 ուստարում օրիորդաց դպրոցը եղել է երկսեռ, ունեցել է 5 բաժանմունք, որոնցում սովորում էր 218 աշակերտ-աշակերտուհի[9]:

5. Շուշիի կույսերի մենաստանին (Կուսանաց անապատին) կից ծխական դպրոց

1873թ. Շուշիում գործել է երկսեռ դպրոց՝ մեկ բաժանմունքով, որտեղ սովորել է 32 աշակերտ, այդ թվում 20-ը՝ աղջիկ: 80-ական թվականների կեսերին դպրոցն ունեցել է 50 աշակերտ (բոլորը տղաներ), դասավանդել է 1 ուսուցիչ: Այն փակվել է 1885թ. և վերաբացվել 1886թ. հոկտեմբերին: Դպրոցը պահվել է Շուշիի հասարակության, ինչպես նաև առանձին բարերարների միջոցներով[10]:

6. Շուշի քաղաքի հոգևոր ծխական դպրոց

Շուշիի թեմական դպրոցի տեսչի զեկուցագրում նշվում է, որ 1861-62 ուստարում Շուշիում բացվել է առաջին ծխական դպրոցը: Այն գործել է թեմական դպրոցին կից և համարվել է նրա նախապատրաստականը: «Արարատ» ամսագրի թ. 11-ում նշվում է, որ 1871-72 ուստարում այդ դպրոցն ունեցել է 105 աշակերտ: Թեմականի «Արցախի դպրոցների վիճակագրական տվյալները 1874-75թթ.» զեկուցագրում, որ տպագրվել է «Դպրոց» ամսագրում, վկայվում է այն փաստը, որ այդ ուսումնական տարում Շուշիում գործում էր 3 ծխական դպրոց: 1877թ. այդ դպրոցները միասին ունեցել են 108 աշակերտ, 4 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր Շուշիի հասարակության միջոցներով և աշակերտների ուսման վարձով[11]:

---

8. Լեո, նշվ. աշխ., էջ 385-386: Նաև տե՛ս «Մեղու Հայաստանի», 1884, թ. 53, ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60, գ. 199, թ. 17-23, գ. 182, թ. 14:
9. Նույն տեղում, ֆ. 19, գ. 5, թ. 85 գ. 492, թ. 122:
10. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 43, թ. 6, գ. 50, գ. 78:
11. Նույն տեղում, գ. 543, թ. 1-10:

6. Շուշի քաղաքի Ագուլեցոց ծխական դպրոց

Լեոն Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված աշխատության մեջ նշում է, որ 1860-ականների սկզբին թեմական դպրոցի նորընտիր հոգաբարձությունը որոշում է կայացնել քաղաքի չորս եկեղեցիների, այդ թվում՝ Ագուլեցոց եկեղեցուն կից բացել ծխական դպրոց: 70-ական թվականներին այդ դպրոցում սովորում էր 40 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ:

Ծխական դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. աշնանը: Այն միդասյա երկսեռ էր՝ 1 բաժանմունքով, 42 աշակերտով, որից 19-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Գրիգոր Ղարագյոզյանը, որն ավարտել էր Ներսիսյան դպրոցը և մի տարի ուսուցչություն արել Վարանդա գավառի Մյուրիշեն գյուղի միդասյա ծխական դպրոցում: Դպրոցը պահվում էր Շուշիի հայոց բարեգործական ընկերության և հասարակության միջոցներով:

1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 2 բաժանմունք, 42 աշակերտ (19 աղջիկ), իսկ 1914-1915 ուստարում՝ 67 աշակերտ[12]:

7. Շուշիի Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոց

XIX դարի 60-ական թվականներին Շուշիում բացվում է Մեղրեցոց Ս. Աստվածածին արական դպրոցը՝ 20 աշակերտով: 1874-75 ուստարում սովորում էր 26 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին դպրոցը փակվել է և վերաբացվել 1906թ. աշնանը:

Նորաբաց միդասյա արական դպրոցն ուներ 2 բաժանմունք, 70 աշակերտ, 2 ուսուցիչ: Իսկ 1915թ. դպրոցն ունեցել է 3 բաժանմունք, 126 աշակերտ, 3 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր եկեղեցու միջոցներով, աշակերտների ուսման վարձով և կամավոր նվիրատվություններով[13]:

8. Շուշիի Նոր կամ Վերին քաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Թադևոսյան ծխական դպրոց

Ըստ արխիվային փաստաթղթերի՝ այս դպրոցը 1860թ. գործել է 20 աշակերտով: «Դպրոց» ամսագրում տպագրված մի նամակում նշվում է, որ 1874-75 ուստարում դպրոցն ունեցել է 1 բաժանմունք, 26 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896թ. փակվել է և վերաբացվել 1906թ. աշնանը:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 101 աշակերտ, որոնցից 31-ը՝ աղջիկ: Դասավանդում էր 3 ուսուցիչ: 1915թ. դպրոցն ուներ 123 աշակերտ[14]:

Դպրոցը պահվում էր թիֆլիսաբնակ շուշեցի դրամատեր Թադևոսյանի միջոցներով (տարեկան 1600 ռուբլի):

9. Շուշիի Գայանե Դանիելյանի երկսեռ դպրոց

Արցախի թեմի տեսչի՝ էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ 1873թ. Շուշիի եկեղեցուն կից գործում էր Գայանե Դանիելյանի մասնավոր դպրոցը, որտեղ սովորում էր 10 աշակերտուհի: 80-ական թվականներին դպրոցը երկսեռ էր, ուներ 1 բաժանմունք, 25 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1906թ. աշնանը:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 40 աշակերտ, որից 26-ը՝ աղջիկ: Դասավանդում էր 1 ուսուցիչ:

---

12. «Դպրոց», 1875-1876, թ. 4, էջ 138: Նաև, «Նոր դպրոց», 1907, թ. 3, էջ 54-56:
13. Նույն տեղում: Լեո, նշվ. աշխ., էջ 275: Նաև, «Արարատ», 1913, թ. 2:
14. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6:

Դպրոցը պահվում էր եկեղեցու միջոցներով և աշակերտների ուսման վարձով[15]:

10. Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոց

Շուշիի թեմի տեսչի՝ «Արարատ» ամսագրի 1913թ. թ.89-ում տպագրված զեկուցագրում նշվում է, որ շուշեցի 4 հարուստ եղբայրներ, իրեն սիրելի քրոջ՝ Մարիամի հիշատակը հավերժացնելու համար, որոշել են ծննդավայրում բացել օրիորդաց դպրոց և այն կոչել իրենց քրոջ անունով: Այդ նպատակով էլ դիմել են Ամենայն Հայոց Կաթողիկոսին, խնդրել նրան թույլատրել և միաժամանակ առաջադրել են այն պայմանները, որոնք պիտի պարտադիր կերպով պահպանվեին այդ դպրոցի հիմնադրման և հետագա գործունեության ընթացքում:

Ամենից առաջ նրանք հայտնել էն, որ շուշեցի Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյաններն իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով ինքնահոժար կամքով էջմիածնի և Ամենայն հայոց կաթողիկոսի տրամադրության տակ են դնում երկու հարյուր հազար ռուբլի և Շուշիում գտնված իրենց սեփական տունը՝ քառասուն հազար ռուբլի արժողությամբ, Շուշիում «Մարիամ Ղուկասյան» անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար: Այդ տան մեջ պետք է տեղավորվեր դպրոցը, իսկ նվիրաբերած գումարի տոկոսներով պահվեր այն: Այնուհետև նրանք նշել են, որ իրենց դպրոցը պետք է լինի հայկական, այնտեղ բոլոր առարկաների ուսուցումը պետք է անպայման տարվի հայոց լեզվով, ռուսաց լեզվով, Ռուսաստանի պատմությունից և աշխարհագրությունից բացի:

Մարիամ Ղուկասյան դպրոցը բացվել է 1913-1914 ուստարում: Այն բավական խոշոր ուսումնական հաստատություն էր, ուներ 11 ուսուցիչ-ուսուցչուհի և 320 աշակերտուհի: Նշանակալից է նաև, որ 1917-ին այն արդեն ունեցել է լրիվ միջնակարգ դասընթաց[16]:

Այդ ժամանակաշրջանում Շուշիում գործել է նաև ռուսական տիպի Մարինսկու օրիորդաց միջնակարգ դպրոցը (1896-1902)՝ 227 աշակերտուհիներով[17]:

11. Շուշիի հայկական մասնավոր դպրոցները

Նպատակահարմար ենք գտնում այստեղ հիշատակել Շուշի քաղաքում գործած նաև մասնավոր դպրոցները, նկատի ունենալով, որ եկեղեցական-ծխական դպրոցները մեծ մասամբ ստեղծվում էին այդ դպրոցների հիմքի վրա և կամ նույնիսկ սկզբնական շրջանում հանդես էին գալիս առանձին անհատների (հիմնադիրների կամ ուսուցիչների) անունով: Շուշիի քաղաքային ռեալական (պետական) ուսումնարանի տեսչի մի զեկուցագրից հայտնի է դառնում, որ 1881թ. այդ քաղաքում, բացի թեմական, արական, իգական ծխական դպրոցներից, գործել են նաև մի շարք հայկական մասնավոր դպրոցներ:

Դրանք են.

1. Ա. Բաղդասարյանի մասնավոր դպրոցը՝ 29 աշակերտով:

2. Ա. Պարոնյանի դպրոցը՝ 40 աշակերտով:

3. Ա. Տեր Գրիգորյանի դպրոցը՝ 30 աշակերտով:

4. Ա. Տեր Հովհաննիսյանի դպրոցը՝ 35 աշակերտով:

5. Վ. Շախունցի մասնավոր դպրոցը՝ 30 աշակերտով:

15. «Նոր դպրոց», 1910, թ. 1:

16. «Արարատ», 1912, թ. 8-9, էջ 685-686, 1916, էջեր 307-312, 323, 627, 784: 1917, էջ 620: Նաև, Ս. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 351-353:

17. Նույն տեղում:

2.3. Շուշի քաղաքի ռուսական պետական դպրոցների ընդհանուր բնութագիրը (1830-1920 թթ.)

1. Շուշիի գավառային ուսումնարան

Շուշի քաղաքում գավառային ռուսական պետական ուսումնարանը բացվել է 1831թ.[1]: Որպես պետական դպրոց՝ այնտեղ, Անդրկովկասի մյուս գավառային դպրոցների նման, դասավանդումը հիմնականում տարվում էր ռուսերեն լեզվով: Նրա նպատակն էր ռուսաց լեզուն տարածել տեղական բնակչության մեջ: Մեր ձեռքի տակ է գտնվում ուսումնարանի վարիչի հաշվետվությունն ըստ 1850թ. ամիսների (սկսած հունվարից), ուղղված Կովկասի ուսումնական շրջանի արքունական դպրոցների տեսուչին (Շամախի-Դերբենդյան դպրոցների կառավարչին)[2], որից երևում է, որ այդ ուսումնարանը հիմնադրումից մոտ 20 տարի անց իրենից ներկայացնում էր ավելի շուտ տարրական կամ ոչ լրիվ միջնակարգ դպրոց՝ կազմված երեք դասարանից, որոնցում 1850թ. հունվարին սովորում է. առաջին դասարանում՝ 71, երկրորդում՝ 33, երրորդում՝ 10 հոգի:[3] Աշակերտների քանակը 1850թ. ամսեամիս մի քանի հոգով ավելանում կամ պակասում է դասարաններում, իսկ նրանց ընդհանուր թիվը հունվարին հավասար էր 114, ապրիլին՝ 117, սեպտեմբերին՝ 100, իսկ նոյեմբերին՝ 106 հոգու: Ուսումնարանի մանկավարժական կազմը բաղկացած էր վարիչից, 2 ուսուցչից (Կուզանով և Բոյարդին) և երկու կրոնուսուցչից (Ար. Մելքոնյան և Ալավերդի օղլի), որոնք միաժամանակ ավանդում էին հայերեն և թաթարերեն լեզուները:

Աշակերտներն ըստ ազգությունների կազմում են՝ հայեր 82-92 հոգի (ըստ ամիսների), մուսուլմաններ՝ 17-ից մինչև 20 հոգի: Ըստ ծագման (դասերի)՝

Բեկական ծագումով	- 34-43 հոգի (ըստ ամիսների)		
Հոգևորական	- 8-14	,,	,,
Օբեր-սպայական	- 4-7	,,	,,
Մելիքական	- 5-13	,,	,,
Քաղաքացիների դաս	- 42-50	,,	,,
Աստիճանավոր և անհատներ-	4	,,	,,
Դպրոցին անհայտ ծագ.	- 3-5	,,	,,:

Հաշվետվության մեջ ասված է նաև, թե ինչ առարկաներ են անցնում Շուշիի գավառային ուսումնարանում՝ ըստ դասարանների.

1-ին դասարանում՝

1. կրոն (աղոթքներ),
2. ռուսաց լեզու (ընթերցանություն քրեստոմատիայից և Կռիլովի առակներից),
3. թվաբանություն,
4. հայերեն և թաթարերեն լեզուներ (ընթերցանություն),
5. վայելչագրություն:

---

1. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, 543:
2. Նույն տեղում, ց.1, գ.5, թ.83:
3. Գավառական անվանյալ պետական դպրոցները 1831թ. սկսեցին բացվել Անդրկովկասի զանազան քաղաքներում, դրանց թվում և Շուշիում 1. (Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոց, էջ 91-92): Նաև տե՛ս Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին, էջ 37-38:

2-րդ դասարանում՝

1. կրոն (հավատո հանգանակ և մահմեդական կրոնի ներածություն (իմամաթի մասին),

2. ռուսաց լեզու (բացատրականում ընթերցանություն, պատմվածքներ և թարգմանություններ, գոյական անուններ),

3. թվաբանություն (ամենափոքրերը-կրտսերները՝ անվան թվերի բաժանումը, մեծերը՝ կոտորակներ),

4. աշխարհագրություն (փոքրահասակները՝ ներածություն, մեծերը՝ Ռուսաստանի քաղաքները, գետային գլխավոր համակարգերը),

5. հայոց լեզու (մինչև գոյական անունների հոլովումը),

6. թաթարերեն լեզու (ընթերցանություն և բացատրական թելադրություն),

7. վայելչագրություն (մաքրագրություն):

3-րդ դասարանում՝

1. կրոն (հավատո հանգանակ, մահմեդականները-նույնը, ինչ որ 2-րդ դասարանում),

2. ռուսաց լեզու (քերականությունից-տրական հոլով առանց նախդիրի, ընթերցանություն, օրինակներ ըստ կանոնների, պատմվածքներ, գրավոր աշխատանքներ),

3. թվաբանություն (մինչև կարճ համամասնության անդամների տեղափոխում և եռակի կանոնի խնդիրներ),

4. աշխարհագրություն (մաթեմատիկական մեծ շրջանների և երկրագնդի կառուցվածքի մասին),

5. ընդհանուր պատմություն (ներածություն, Եվրոպա, եգիպտացիներ և պարսիկներ),

6. ռուսաց պատմություն (առաջին շրջան),

7. երկրաչափություն (հունվարին չկա),

8. հայոց լեզու (մինչև գոյականների համաձայնությունը),

9. թաթարերեն լեզու (ընթերցանություն թարգմանությամբ, բացատրական թելադրություն),

10. վայելչագրություն[4]:

Դատելով ըստ ավանդվող առարկաների՝ պետական գավառային ուսումնարանն ուներ յուրահատուկ ծրագրեր, որտեղ հիմնականը լեզուն և թվաբանությունն էր, բայց նշանակալի տեղ էր բռնում նաև կրոնը: Ուսումնարանում անցնում են նաև պատմություն և աշխարհագրություն: Ավանդման հիմնական լեզուն ռուսերենն էր, բայց ավանդվում էին նաև հայոց և թաթարերեն լեզուներ (հայ և մահմեդական երեխաների համար առանձին-առանձին): Այս տեղական լեզուներով ավանդվում է և կրոնը (կրոնուսույցը միաժամանակ լեզվի դասատու է):

Շուշիի գավառային ռուսական պետական ուսումնարանը գոյություն է ունեցել մի քանի տասնամյակ և զգալի դեր խաղացել ռուսաց լեզվի տարածման գործում: Ուսումնարանի ուսուցիչները թեմական դպրոցի բացման առաջին տարիներին մասամբ լրացրել են թեմականի մանկավարժական կազմը: Այսպես, օրինակ, ուսումնարանի վարիչ՝ հայազգի Մելքոն Խիտրովը, XIX դարի 40-ական թվականներին միաժամանակ նշանակվում է թեմականի տեսուչ և, ըստ Լեոյի, թեմականում նոր մանկավարժական կարգեր է մտցնում[5]:

4. Այստեղ տալիս ենք հունվար ամսին անցնելիք առարկաների ծրագրերը: Հետևյալ ամիսներին անցնում են նույն առարկաների ծրագրերի շարունակությունը:

5. Տես Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 189-203:

2. Շուշի քաղաքի ռուսական ոչ լրիվ միջնակարգ դպրոց

Շուշիի գավառային ռուսական պետական ուսումնարանը 70-ական թվականներից վերակազմավորվում է Շուշիի պետական քաղաքային դպրոցի[6], որը պահպանում է իր գոյությունը մինչև 1920թ. որպես ոչ լրիվ միջնակարգ դպրոց և մեծ դեր է խաղում Շուշիում՝ տալով բավականին ստվար մտավորական կադրեր: Այս դպրոցում սովորել են գլխավորապես հայեր, որոնք կազմել են աշակերտների մեծամասնությունը[7]:

3. Շուշիի ռեալական ուսումնարան

XIX դարի երկրորդ կեսից սկսած՝ Շուշին դառնում է Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկը, որտեղ լայն ծավալ են ստանում ազգային ինքնագիտակցության վերելքը պայմանավորող տպագրության, մամուլի, հրատարակչական գործի, մանկավարժության և դպրոցի զարգացման միտումները:

Դարի երկրորդ կեսին Շուշիում կատարվում են զգալի տեղաշարժեր: Շուշին դառնում է հայ մշակույթի կարևոր կենտրոնը՝ մտավորականության ուրույն բանակով, որտեղ առկայծող հասարակական միտքը լայն ճանապարհ է բացում առաջադիմական գաղափարների տարածման համար:

Առաջընթացը նկատելի էր, մասնավորապես, դպրոցական ասպարեզում. բացվում են նոր տիպի դպրոցներ:

Շուշիի թեմական դպրոցին նվիրված իր աշխատության մեջ Լեոն նշում է, որ 1881թ. Շուշիում իրագործվեցին մի շարք մշակութային ձեռնարկումներ. «Բացվեց հասարակաց գրադարան, հրատարակվեցին զանազան գրքեր և գրքույկներ, Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» գրական պարբերական ժողովածուն (Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում), նախապատրաստական աշխատանքներ էին տարվում (Ս. Հախումյանի խմբագրությամբ) «Գործ» գրական, քաղաքական և ազգային հանդեսի հրատարակման (այն հրատարակվել է Շուշիում և Թիֆլիսում, 1882-1884թթ.), հիմնվեց Շուշիում Կովկասի բարեգործական ընկերության մասնաճյուղ (1881թ. սեպտեմբեր) և այլն: Շուշիում ճիշտ նույն տարվա՝ 1881թ. սեպտեմբերից բացվեց ռեալական ուսումնարան»[8]:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ այդ ժամանակաշրջանում Կովկասում կային պետական 9 ռեալական ուսումնարաններ՝ Թիֆլիսում, Բաքվում, Քութայիսում, Շամախիում, Շուշիում և այլ վայրերում: Ուսումնական շրջանի (օկրուգի) հոգաբարձության տվյալների համաձայն՝ Անդրկովկասի ռեալական ուսումնարանների բացման հարցը կայսեր հանձնարարությամբ քննարկման առարկա է դառնում դեռևս 1879թ. վերջերին՝ Պետերբուրգի Կովկասյան Կոմիտեում, որտեղ այն արժանանում է ընդհանուր հավանության: Ռուսական կառավարությունը նպատակահարմար է գտնում նաև Շուշիում ռեալական ուսումնարանի հիմնումը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արցախն իր գերիշխանության տակ է

6. Քաղաքային դպրոցի հիմնադրման տարին համարվում է 1875թ. «Ազգագրական հանդես», 1897, էջ 106, տետր 14, էջ 19:

7. 1897թ. հայ աշակերտների թիվը դպրոցում հավասար էր 131 հոգու, թաթարներինը՝ 36 հոգու, ռուսներինը՝ 4 հոգու: Հայերը մնացած տարիներին նույնպես միշտ մեծամասնություն են կազմել: Շուշիի քաղաքային դպրոցը՝ հանձինս իր ուսուցիչների (Յակով Զեդգենիձե և Համբարձում Տեր-Եղիազարով), 1891թ. տպագրության է տվել մի շարք հետաքրքիր աշխատություններ Շուշի քաղաքի և նրա տնայնագործության, նաև շերամապահության մասին: Տե՛ս Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. Тифлис, 1891, стр. 1-79. ,,гор. Шуша''.

8. Լեո, նշվ. աշխ., էջ 514:

գտնվում՝ ռուսահպատակ է դեռևս 1805 թվականից:*

Ինչ խոսք, ցարիզմի լուսավորչական-դպրոցական քաղաքականությունն Անդրկովկասում և Ռուսաստանի այլ ծայրամասերում միտված չէր բարձրացնելու այդտեղ ապրող բնիկ ժողովուրդների լուսավորչական ու մշակութային վերելքը: Դրանով ցարիզմը նպատակ ուներ Անդրկովկասը վերջնականապես ենթարկել իրեն ոչ միայն տնտեսապես, այլև իր լուսավորչական քաղաքականությամբ: Ըստ այդմ էլ ստեղծվում են նոր դպրոցներ:

1880թ. օգոստոսին հրատարակվում է «Անդրկովկասի ուսումնարանների կանոնադրությունը», որի համաձայն՝ ռեալական ուսումնարանները, իրենց կրթական համակարգով, կազմակերպական հիմունքներով և բովանդակությամբ պետք է մոտենան համառուսականին: Ըստ կանոնադրության՝ Անդրկովկասում գտնվող ռեալական ուսումնարանները ենթարկվում են Թիֆլիսի գիմնազիայի տնօրինությանը, իսկ վերջինս էլ իրեն ենթակա բոլոր ուսումնական հաստատություններով գտնվում էր տեղի գլխավոր ուսումնական իշխանության անմիջական իրավասության տակ: Դպրոցական գործի ղեկավարման այս համակարգը, մասնակի փոփոխություններով, շարունակում է մինչև 1920 թվականը:

Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում Լեոն նշում է, որ Շուշիի ռեալական ուսումնարանը մի նոր տիպի ուսումնական հաստատություն է, որը մոտ 40-ամյա գոյության ընթացքում պակաս դեր չի խաղացել Շուշիի մատաղ սերնդի կրթության գործում, քան Ղարաբաղի թեմականը, թեև թեմականի նման երկարամյա կյանք չի ունեցել:

Շուշիի ռեալական ուսումնարանը պետական ուսումնական հաստատություն էր, նպատակն էր ռուսաց լեզուն տարածել տեղական ռուսահպատակ բնակչության շրջանում: Վերոհիշյալ կանոնադրության համաձայն՝ ռեալական ուսումնարանում բոլոր առարկաները պետք է դասավանդվեն ռուսերեն լեզվով, բացառությամբ կրոնական առարկաների: Հետագայում (1906թ.) Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձությունը (ռեալական ուսումնարանի հոգաբարձուի հորդորմամբ) թույլատրում է նաև որոշ առարկաներ դասավանդել հայերեն:

Անդրկովկասի ռեալական ուսումնարանների վերաբերյալ ընդունված կանոնադրությամբ՝ Շուշիի ռեալական ուսումնարանը (գիմնազիայի տիպի) միջնակարգ ուսումնական հաստատություն է, ավարտողներն իրենց ուսումը մեծ մասամբ շարունակում էին Ռուսաստանի տեխնիկական բուհերում և դառնում ճարտարապետներ, հաղորդակցության ուղիների ճարտարագետներ և այլ տեխնիկական մասնագետներ: Բարձրագույն որակավորում ստանալու նպատակով ռեալական ուսումնարանի շրջանավարտներից շատերն իրենց ուսումը շարունակում էին Ռուսաստանի, Եվրոպայի համալսարաններում և, վերադառնալով հայրենիք, նվիրվում գիտության, մշակույթի, լուսավորության ու կրթության զարգացմանը:

Շուշիի ռեալական ուսումնարանի տեսչի՝ Անդրկովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությանը (Թիֆլիս) ներկայացրած հաշվետվության մեջ (ըստ ամիսների՝ սկսած 1882թ. հունվարից) նշվում է, որ ռեալական ուսումնարանն իր հիմնադրումից հետո իրենից ներկայացնում է միջնակարգ դպրոց, որն ունի 2 նախա-

* 1805թ. մայիսի 14-ին Քյուրակչայ գետի ափին տեղակայված վրանում գեներալ Ցիցիանովը և Իբրահիմ խանը կնքեցին Ղարաբաղի՝ Ռուսաստանին միանալու մասին պայմանագիրը: Քյուրակչայի պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցավ Արևելյան Հայաստանի՝ այն ժամանակ Ղարաբաղի խանության կազմում գտնվող Զանգեզուրը՝ Ղափանի, Սիսիանի և Գորիսի շրջաններով: Տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, գիրք Ա, Երևան, 2010, էջ 192:

պատրաստական և 5 հիմնական դասարան: Աշակերտները 6-րդ դասարանն ավարտելուց հետո ստանում էին հասունության վկայական, իսկ 7-րդ դասարանն ավարտելուց հետո՝ ավարտական վկայական[9]:

Շուշիի ռեալական ուսումնարանն ուներ վերատեսուչ (տնօրեն), տեսուչ, կրոնուսույցներ (3 լեզվով՝ հայերեն, ռուսերեն և թաթարերեն) և ուսուցիչներ, որոնք ավանդում էին հետևյալ առարկաները. ռուսաց լեզու, մաթեմատիկա, պատմություն, բնագիտություն, աշխարհագրություն, ֆրանսերեն և գերմաներեն, գծագրություն և գեղագրություն, երաժշտություն, երգեցողություն, թաթարերեն (թուրքերեն) լեզու, հետագայում՝ 1906 թվականից հետո, հայոց լեզու, պատմություն, գրականություն: Ռեալական ուսումնարանն ուներ իր դպրոցական բժիշկը և դաստիարակների օգնականը: Ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերն ու եղանակները, ուսումնարանի ներքին կյանքին առնչվող հարցերը մանրամասն կներկայացվեն հաջորդ բաժիններում:

Շուշիի ռեալական ուսումնարանի տեսչի հաշվետվություն մեջ և այլ աղբյուրներում նշվում է, որ 1881-1882 ուս. տարում ուսումնարանում սովորում էր 334 աշակերտ, որոնցից 252-ը՝ հայեր, մնացածը՝ այլազգի. ռուսներ, վրացիներ, թուրքեր, հույներ և այլն: Շուշիի ռեալական ուսումնարանն իր աշակերտների թվով 3-րդ տեղն էր գրավում Կովկասում: Իսկ Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձության հաշվետվության համաձայն՝ 9 ռեալական ուսումնարաններում կար 3.494 աշակերտ, Թիֆլիսի ռեալական ուսումնարանում՝ 632, Բաքվի՝ 607, Քութայիսի՝ 241 աշակերտ և այլն[10]:

Շուշիի ռեալական ուսումնարանի 40-ամյա գոյության տարիներին աշակերտների թիվը տատանվել է: Համաձայն Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձության հաշվետվության՝ 1881-82 ուստարում ուսումնարանն ունեցել է 334, իսկ ուսումնական տարվա վերջին՝ 323 աշակերտ: Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությանը ներկայացրած ռեալական ուսումնարանի տեսչի՝ Հովհաննես Տեր-Գրիգորյանի (թեմականի ուսուցիչ) մեկ այլ զեկուցագրում նշվում է, որ 1883-1884 ուստարում ուսումնարանն ունեցել է 340 աշակերտ: Իսկ հետագայում ուսումնարանում սովորել է մինչև 440-500 աշակերտ:

Ե. Լալայանի խմբագրած «Ազգագրական հանդեսի» 1896-97թթ. տվյալների համաձայն՝ Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտության ազգային կազմն ուներ հետևյալ պատկերը. հայեր՝ 252, 267, 286, ռուսներ՝ 40-45, վրացիներ՝ 14-16, թաթարներ (թուրքեր)՝ 10-12, հույներ՝ 4-6[11]:

Ռեալական ուսումնարանը, իսկապես լինելով գրեթե միակ քիչ թե շատ ժամանակակից բարեկարգ ուսումնական հաստատությունն Արցախի թեմում (ի տարբերություն թեմականի նա չի փակվել), դեպի իրեն էր ձգում ուսումնածարավ հայ պատանիներին ոչ միայն Արցախի թեմից, այլև հեռավոր հայաշատ վայրերից:

Արխիվային տվյալների և այլ աղբյուրների հիման վրա ստորև ներկայացվում են Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտության ազգային կազմը, ուսուցիչների թիվն ըստ ուսումնական տարիների:

---

9. Նույն տեղում: Նաև՝ “Кавказский календарь:, 1882/1883 гг.
10. “Кавказский календарь”, 1893-1898 гг.
11. Երվանդ Լալայան, «Ազգագրական հանդես», 1897, էջ 102-112, 1914, էջ 405:

(աղյուսակ 1)

Ուստարի	Աշակերտների քանակը	Ազգության կազմը		Ուսուցիչներ
		հայ	այլ ազգի	
1881-82	234	252	82	16
1885-86	340	263	77	18
1891-92	386	292	94	19
1895-96	372	268	104	22
1903-1904	398	312	84	22
1905-1906	354	262	92	22
1907-1908	382	278	104	22
1912-1916	420	333	87	23
1919-1920	466	352	114	23

Բերված թվերը ցույց են տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում, ի տարբերություն Շուշիի թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանն ընթացել է վերելքի ուղիով ոչ միայն կազմակերպական, մանկավարժական տեսակետից, այլև քանակական ցուցանիշներով: Աղյուսակից երևում է, որ Անդրկովկասի ուսումնարանների նման Շուշիի ռեալական ուսումնարանն ավելի բարվոք վիճակում էր, հայկական դպրոցների համեմատ ունեցել է ուսուցիչների և աշակերտների առավել մեծ քանակություն, ավելի ապահովված էր նյութապես: Ռեալական ուսումնարանի աշակերտության ճնշող մեծամասնությունը հասարակության բարձր խավերի զավակներ էին: Ընդհանրապես, արքունի ուսումնարաններ ավարտողներն օգտվում էին այնպիսի արտոնություններից ու իրավունքներից, որոնցից բոլորովին զուրկ էին հայկական դպրոցների շրջանավարտները:

Հրապարակելով երկու դպրոցների (թեմական, ռեալական) հաշվետվությունը՝ «Գործ» հանդեսը (1882-1884 թթ.) գրում է, որ Շուշիի ռեալական ուսումնարանն աչքի է ընկել իր ուսուցիչներով, աշակերտներով և ուսուցման ձևերով: Ուսումնարանի 22 ուսուցիչները (թեմական դպրոցում՝ 16-17 ուսուցիչ) և նրանց օգնականներն ամեն կերպ ձգտել են աշակերտության մեջ սեր պատվաստել դեպի գիտությունն ու գրականությունը, ուսումը, քաղաքակրթությունը: Նշում են հատկապես Սեդրակ Մանդինյանի[12], Սիմեոն Հախումյանի, Համբարձում Առաքելյանի, Հակոբ Խոջամիրյանի, Սամվել Գյուլզադյանի, Գաբրիել Գյուլիքևխյանի, բժիշկ Աղասարյանի, Ջավադ բեկ Իշխանյանի, Ալեքսանդր Հովհաննիսյանի, Ներսես Աղասարյանի (որոնք աշխատում էին նաև թեմական դպրոցում) և ուրիշների՝ հայ մշակույթի, գրականության ու արվեստի տարբեր բնագավառների մշակների անունները: Հանդեսը որոշ մանրամասներ է հաղորդում ռեալական ուսումնարանի կառուցվածքի, դասարանական կազմի և աշակերտների քանակի մասին: Շեշտվում է, որ ռեալական ուսումնարանում ուսման տևողությունը 7 տարի է, բաղկացած 2 նախապատրաստական և 5 հիմնական դասարանից: 6-րդ դասարանն ավարտողները ստանում են հասունության վկայական, 7-րդը՝ ավարտական վկայական[13]: Իսկ հոգևոր թեմական դպրոցը բաղկացած է 3 պատրաստականից, չորս դասարանից և մի մասնագիտական-մանկավարժական բաժնից, որի ուսման տևողությունը մեկ տարի է: Աշակերտների թիվը թեմականի մասնագիտական բաժանմունքում սովորող 11 պատանիների հետ միասին հասնում էր 386-ի: Նրանց մեծ

12. Նույն տեղում: Նաև՝ «Գործ», 1882, թ. 1, 1883, թ. 1-2:
13. «Գործ», 1882, 1883 թթ. համարները:

մասը սովորում էր «Ա», «Բ» և «Գ» պատրաստականներում, յուրաքանչյուրում ընդգրկված էր միջին հաշվով 80 աշակերտ[14]:

Լեոն նշում է, որ ռեալական ուսումնարանի բացումը Շուշիում որոշ վտանգ է սպառնում թեմական դպրոցին, քանի որ նա պետք է դեպի իրեն քաշեր քաղաքում սովորել ցանկացողներին, մանավանդ, որ միանգամայն ապահովված էր պետական միջոցներով (կայուն բյուջեով) և ավելի ապահով ու լայն ասպարեզ էր խոստանում այդ դպրոցն ավարտողներին հետագայում ուսումը շարունակելու և լավ պաշտոններ գրավելու համար (նա ապահովում էր ռուսերենին տիրապետելը): Եվ հիրավի, Շուշիի այդ ուսումնարանում սովորելու ցանկությունը խիստ մեծ էր, ունևոր դասակարգերն ամեն կերպ աշխատում էին իրենց զավակներին մտցնել այդ ուսումնարան: Լեոն միաժամանակ գրում է. «Շուշիի ունևոր դասակարգերը, որ դրանից առաջ ստիպված էր իր զավակներին գոնե գրագիտություն սովորեցնել թեմական դպրոցում, այժմ միանգամայն հեռանում էր նրանից: Հեռանում էր նույնիսկ և փոքր ի շատէ ունևոր արհեստավորութիւնը, հեռանում էին նույնիսկ այն տեսակ տարրերը, որոնք կարող էին ուրիշներից ստացած օգնութեամբ, ողորմութեամբ ուսում տալ իրենց երեխաներին»[15]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կառավարությունն առավել մեծ ուշադրություն էր դարձնում Շուշիի ռեալական ուսումնարանի, քան թեմական, իգական և ծխական դպրոցների տնտեսական առաջադիմության վրա:

Հայտնի է, որ նյութական անապահովությունը և անորոշությունը եղել են հայ դպրոցի մշտական դաժան ուղեկիցները, շատ հաճախ պատճառ դառնալով, որ հազիվ ծնունդ առած՝ այն դադարեցնի իր գոյությունը: Ազգային դպրոցների պահպանման և բեղմնավոր գործունեության վճռական պայմաններից մեկը Մ. Նալբանդյանը համարում էր նյութական միջոցներով դպրոցի ապահովումը: Նա գտնում էր, որ ազգի արծաթը պիտի ներդրվի դպրոցների վերակառուցման գործում, «թող աշխատեն դպրոց շինել, աշակերտ հասունացնել, ազգ լուսավորել»[16]:

XIX դարի երկրորդ կեսին հայ իրականության մեջ ծավալված լուսավորչական շարժումը ոչ միայն նախանձախնդիր եղավ բարձրացնելու դպրոցական գործը, այլև մտահոգվելու դպրոցի համար նյութական միջոցներ հայթայթելու հարցով: Առաջադեմ մտավորականների անմիջական նախաձեռնությամբ հայ հասարակայնությունը ձեռնամուխ եղավ գործնական աշխատանքի, մեկը մյուսի ետևից ստեղծվեցին զանազան խմբակներ, միություններ, ընկերություններ, որոնք իրենց հիմնական անելիքներից էին համարում նաև նորաբաց դպրոցներին նյութական օգնության ցուցաբերումը: Դեռևս Ստ. Նազարյանցը «Հյուսիսափայլում» առաջարկեց Ռուսաստանում ստեղծել մի «ընդհանուր հայկական ընկերություն», որի առաջնահերթ խնդիրը լիներ չքավոր հայերի զավակներին կրթության տալը և նրանց օգնելը կյանքում տեղ գրավելու:

«Մեր ցանկությունն է,- ասում է Նազարյանցը,- որ կարողանանք ժողովրդին մոտեցնել փոքր ինչ դպրության հետ, նյութ և սնունդ դնել հայկական չոր ու ցամաք դպրության մեջ և ինչպես մի կողմից լեզուն, մյուս կողմից և նույն ինչքան դպրության հոգին և ուղղությունը որքան կարելի է շինենք ժողովրդական»[17]:

---

14. Նույն տեղում, 1884:
15. Նույն տեղում: Նաև՝ Ս. Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմությունը, Երևան, 1989, էջ 96:
16. Նույն տեղում:
17. «Հյուսիսափայլ», 1859, թ. 8, էջ 675:

1881թ. հունիսի 8-ին Թիֆլիսում փոխարքայի պաշտոնակատար Լորիս Մելիքովը հաստատեց մի կանոնադրություն, որը կոչվեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերության կանոնադրություն»: Այն հրատարակվեց «Կավկազսկի» լրագրի պաշտոնական բաժնում նույն թվականի հոկտեմբերի 16-ին: Ըստ կանոնադրության՝ 1881-82 ուստարում Շուշիում ստեղծվեց հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղ, որի վարչության նախագահն էր պատմաբան Լեոն, որը միաժամանակ գանձապահն էր ու քարտուղարը: Նրա հոգաբարձության շրջանում թեմական դպրոցի եկամուտը 8000 ռուբլուց հասավ 17000-ի[18]:

Ի տարբերություն թեմական դպրոցի, Շուշիի ռեալական ուսումնարանն ունեցել է համեմատաբար ավելի ընդարձակ բյուջե, համեմատաբար բարեկարգ ֆիզիկայի ու քիմիայի կաբինետներ, ընդհանուր ու ֆունդամենտալ (գլխավորապես ռուսերեն լեզվով) գրադարան, ուր գրադարանավարի պաշտոն է վարել (1918-1920 թթ.) «Շուշի» գրքի հեղինակ Ռուբեն Տեր-Գասպարյանը:

Նյութական միջոցներն ու եկամուտները թե իրենց բնույթով և թե իրենց չափով տարբեր են եղել ռեալական ուսումնարանի գոյության տարբեր ժամանակներում: Ռեալական ուսումնարանի տեսչի զեկուցագրի և այլ աղբյուրների համաձայն՝ 1881-1882 ուստարում ուսումնարանի տարեկան բյուջեն կազմում էր. մուտք՝ 35,413 ռուբլի, ելք՝ 35,413 ռուբլի, իսկ թեմական դպրոցինը՝ 14,843 ռուբլի[19]: Հետագա տարիներին ռեալական ուսումնարանի բյուջեն հասել է մինչև 35,945 ռուբլու:

Ի դեպ, Շուշիի ռեալական ուսումնարանի եկամուտների մեջ նշանակալի տեղ են գրավում նաև նվիրատվությունները:

Լեոն նշում է, որ Շուշիի ռեալական ուսումնարանը հիմնադրման օրից գրավել է հայ հասարակայնության սերն ու համակրանքը, և կարող անձինք թե՛ դպրոցի վարիչների հորդորանքով և թե՛ ինքնակամ բազմաթիվ նվերներ են ընծայել նրան՝ անշարժ գույք, փող, գրքեր և այլն:

Համարձակ կարող ենք ասել, որ չնայած ռեալական ուսումնարանը ռուսական էր, բայց հայ հասարակայնությունը հոգատար վերաբերմունք էր ցուցաբերում նրա նկատմամբ: Ամեն մի բարեգործ եթե ձգտել է կամ կենդանության օրոք, կամ էլ հաճախ ետմահու կտակներով, գումարներ հատկացնել թեմական դպրոցի բարգավաճման գործին, ապա մի մասն էլ հատկացրել է ռեալական ուսումնարանին (կահավորել կաբինետները, կրթաթոշակ հատկացվել որբ երեխաներին)՝ այն համարելով ազգային ուսումնական հաստատություն, քանի որ սովորողների մեծամասնությունը հայեր էին:

Համաձայն ռեալական ուսումնարանի տեսչի հաշվետվության՝ բացի պետության կողմից հատկացված միջոցներից (ուսումնարանի տարեկան բյուջեն կազմում էր 34-35 հազար ռուբլի), ուսումնարանի եկամուտի աղբյուրներն էին նաև մասնավոր նվիրատվությունները, որոնք կատարվում էին ամենաբազմազան առիթներով ու ձևերով: Ավելորդ չենք համարում բերել կամավոր նվիրատվությունների մի քանի օրինակներ: 1882թ. Շուշիի հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղի առաջին տարվա նախահաշիվն էր 1148 ռուբլի 65 կոպեկ (մուտք), որից 500 ռուբլին նվիրել էր շուշեցի Մարկոս Դոլուխանյանը: Վարչությունը նախագծում է Շուշիում բացել գրադարան-ընթերցարան, որոշ գումար (1000 ռուբլի) հատկացնել ռեալական ուսումնարանի որբ ու կարիքավոր երեխա-

18. Լեո, Կովկասի հայոց բարեգործական ընկերություն, Թիֆլիս, 1911, էջ 205:
19. Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 62-64:

ներին՝ նրանց ձրի ուսուցումը կազմակերպելու համար: 1898թ. Շուշիի ընկերության վարչության եկամուտները (մուտքը) կազմել են 2500 ռուբլի: Վարչության խորհրդի տարեկան տեղեկագրի մեջ կարդում ենք, որ այդ գումարները ծախսվում էին գրադարանին, տառապյալներին, թեմական դպրոցին, ռեալական ուսումնարանի չքավոր աշակերտներին նպաստ տալու համար[20]: Տեղեկագրի մեջ նշվում է, որ 1893թ. Շուշիի մի խումբ երիտասարդներ իրենց ժողոված փողերի մի մասը նվիրում են գրադարանին, իսկ մյուս մասը հանձնում Շուշիի վարչությանը՝ գրքեր հրատարակելու, թեմական, ռեալական դպրոցների աշակերտներին նպաստ տալու համար:

1897թ. «Մշակի» թիվ 15-ում տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ 1897թ. ամռանը մի խումբ ուսանող երիտասարդներ, որոնք արձակուրդ են եկել հայրենի Շուշի քաղաք, թեմական և ռեալական ուսումնարանների մասնակցությամբ Խանդամիրյանի թատրոնի դահլիճում ներկայացումներ են տալիս («Արշակ Բ», «Վարդանանք») և հավաքած 300 ռուբլին նվիրում Շուշիի բարեգործական ընկերության վարչությանը: Գումարը հատկացվում է ծխական, թեմական, իգական դպրոցների կահավորմանը, մի մասն էլ ռեալական ուսումնարանի կարիքավոր աշակերտներին՝ որպես նպաստ[21]:

Շուշիի ռեալական ուսումնարանի տեսուչ Հովնան Թամաշյանի (դասավանդում էր նաև թեմական դպրոցում) զեկուցագրում, որ ներկայացվել էր Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուին, նշվում է, որ 1886-1887 ուստարում կառավարությունը ռեալական ուսումնարանին հատկացրել է 36252 ռուբլի, իսկ “Кавказский календарь”-ի մի ցուցակից տեղեկանում ենք, որ XIX դարի 90-ական թվականների վերջերին այն հասնում է 38320 ռուբլու: Այդ գումարի 25%-ը առանձին նվիրատվություններ էին:

Լեոն թեմական դպրոցին նվիրված աշխատության մեջ գրում է, որ թեմական դպրոցում ուսուցիչների միջին աշխատավարձը տարեկան կազմում է. տեսչինը՝ 1200-1246 ռ., ուսուցչինը՝ 525-725 ռ., իսկ ռեալական ուսումնարանում տեսչինը՝ 1356-1425 ռ., ուսուցչինը՝ 896-992 ռ.[22]:

Ռեալական ուսումնարանի հոգաբարձությունը տարեկան մուտքն ավելացնելու համար հենվում էր նաև աշակերտական ուսման վարձի վրա: Ազնվական երեխաների ուսման տարեկան վարձը կազմում էր տարեկան 16-18 ռուբլի, չքավորներինը՝ 9-10 ռուբլի: Նշենք նաև, որ աշակերտների թոշակները լինում էին մի քանի կարգի՝ լիաթոշակ՝ 7-8 ռուբլի, կիսաթոշակ՝ 6 ռուբլի, քառաթոշակ՝ 3 ռուբլի, ձրիավարժ՝ որբ ու անապաստան երեխաների համար, որոնց կարիքները հոգում էին տեղի բարեգործական-մարդասիրական ընկերության անդամները: Ընկերությունը վարում էր նաև ընդհանուր բարեգործություն՝ աջակցություն էր ցույց տալիս Շուշի քաղաքի, թեմի հայերի ընտանիքներին՝ սովյալներին, հիվանդներին, աղետյալներին, հետագայում՝ նաև հայ գաղթականներին:

Շուշիի ռեալական ուսումնարանի տեսչի մի զեկուցագրում նշվում է, որ 1895-96 ուստարում ուսումնարանի 372 աշակերտներից 20-25%-ը ձրիավարժ էր (Լեոյի վկայությամբ՝ թեմական դպրոցի 35-40%-ն էր ձրիավարժ), շատերը գրենական պիտույքներ, դասագրքեր էին ստանում վերոհիշյալ ընկերությունից[23]:

---

20. «Տեղեկագիր», 1898, էջ 71: Նաև, Լեո, նշվ. աշխ., էջ 205:
21. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 264:
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում:

Ի դեպ, արքունի դպրոցների համեմատությամբ, հայկական ուսումնական հաստատությունների սակավաթիվ առավելություններից մեկն էլ այն էր, որ այստեղ ուսումը ձրի էր կարիքավոր երեխաների համար: Բազմապիսի հիմնադրամների (բարեգործական ընկերությունների՝ Շուշիի, Նուխիի, Բաքվի և այլն) հաշվին աշակերտների զգալի մասն ստանում էր նպաստ, թոշակ և այլ կարգի օգնություն:

Վերը ասվածից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ռեալական ուսումնարանի նյութական ապահովվածությունն ավելի բարվոք էր, քան Շուշիի ծխական, թեմական, օրիորդաց դպրոցներում: Չնայած պետությունը ոչ մի կոպեկ չէր տրամադրում ազգային դպրոցներին, այնուամենայնիվ, արցախահայ հասարակությունը, նրա առաջավոր մտավորականությունը հոգ էին տանում կրթական գործի առաջընթացի, տարբեր տիպի դպրոցների նյութական վիճակի ինչ-որ չափով բարելավման մասին:

XIX դարի 90-ական թվականների կեսերին, կոնկրետ՝ 1895-96 ուստարում Շուշիի ուսումնական հաստատությունների ընդհանուր պատկերն այսպիսին էր. քաղաքում գործում էին 10 հայկական դպրոցներ, որոնցում սովորում էր 981 աշակերտ, դասավանդում՝ 36 ուսուցիչ, ռուսական 2 տիպի դպրոցների 543 աշակերտից 349-ը և 30 ուսուցիչներից 25-ը հայեր էին[24]:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում ցարական կառավարության՝ այլազգիների նկատմամբ վարած դպրոցական քաղաքականության հետևանքով Շուշի քաղաքում փակվեց հայկական դպրոցների մեծ մասը (1896-1905թթ.), նույնիսկ թեմական դպրոցը (1903թ.), հայ երեխաները հարկադրված սովորում էին ռեալական ուսումնարանում, մի մասն էլ՝ քաղաքային ռուսական դպրոցում:

Աղյուսակ 2

Դպրոցի տիպեր	Դասարաններ	Աշակերտներ	Հայ	Այլ ազգի	Ուսուցիչներ	Մուտք	Ելք
Հայոց թեմական դպրոց	7	497	497	-	17-18	14.843	14.843
Ռեալական ուսումնարան	7	372	268	104	22	35.413	35.413
Քաղ. դպ. (ռուսական)	4	171	131	40	5	1.122	1.122
Մարիամ օր. դպրոց	3	76	76	-	4	4.452	4.452
Մարիամ-Ղուկ. օր. դպրոց	2	68	-	-	2	3.264	3.264
Գայանե Դանիելյան երկ. օր. դպրոց	2	62	62	-	2	2.322	2.322
Հռիփսիմյան օր. դպրոց	1	34	34	-	1	1.322	1.322
աստ-ծ ծխական դպրոց	1	28	28	-	1	1.264	1.264
հոգ. ծխական դպրոց	1	30	30	-	1	1.122	1.122
Մեղր-ց ծխական դպրոց	1	26	26	-	1	442	442
Միդասյա մասնավոր դպրոց	3	100	100	-	3	-	-

24. Լեո,Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, էջ 510: Նաև, ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, գ. 543:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Կովկասում հաստատված Գոլիցինյան ռեժիմն աննախընթաց աստիճանի հասցրեց հայահալած քաղաքականությունը: Ռուս առաջադեմ գրողներից մեկն իր հիշողություններում պատմում է, որ Կովկասյան վարչության գլուխ անցնելով (1897թ.) և ոգեշնչվելով ցարական ռեակցիայի ու սևհարյուրակային մամուլի հզոր աջակցությամբ, «Իշխան Գոլիցինը գնաց Կովկասում բնակվող բոլոր ազգությունների դեմ, որովհետև նա բոլորին ուզում էր ռուսացնել, բայց, բնականաբար, ամենից թշնամաբար նա վերաբերվեց հայերին»[25]:

Ցարիզմն անողոք բռնությունների ճանապարհով արհեստականորեն հայկական հարց էր ստեղծում նաև Ռուսաստանի սահմաններում: Շուրջ տասը տարի (1896-1905 թթ.) փակվեցին հայկական դպրոցները, բարեգործական ընկերությունները, սկսվեց հայ մամուլի ու գրականության չտեսնված հալածանք: Ազգային ամենաչնչին հարցեր շոշափող հոդվածներն անգամ արգելվում էին մամուլում: Հայաստանում, Շուշիում (ինչպես նաև Անդրկովկասի, Ռուսաստանի հայաշատ վայրերում) հրատարակվող հայկական թերթերին կտրականապես արգելվեց հաղորդումներ զետեղել Արևմտյան Հայաստանի և, առհասարակ, հայկական հարցի մասին: Փակվեց նաև (1900թ.) Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը, որն իր գոյության քսան տարիների ընթացքում հրատարակել է ընդամենը 174 անուն-գիրք, որից 108-ը թարգմանական էր: Հայ գրողների նկատմամբ գրաքննչական հալածանքը հասավ մեծ չափերի: Սակայն այդ շրջանում Շուշիի ռեալական ուսումնարանում կառավարությունից գաղտնի գործում էր հայ բարեգործական ընկերությունը:

Ցարիզմի ազգահալած քաղաքականությունը խոր ցավ էր պատճառում ռուս անվանի գործիչներին, ինչպիսին էր Յուրի Վեսելովսկին: Նա այլազգիների նկատմամբ ցարիզմի մղած հալածանքը «խաչակրած արշավանք» էր համարում: «Вестник воспитания» 1905թ. թ.9-ում տպագրված մի հոդվածում նա գրում է. «Որքան տանջալի ու ցավալի էր գիտակցել, որ ռուս ժողովուրդը կարծես թե պատասխանատու է այն ամենի համար, ինչ նրա անունով կատարվում էր Ռուսաստանի ծայրամասերում: Ինքնակալական ռեժիմը մեկ անգամ չէ, որ կեղծավորաբար քողարկվում էր նրա շահերով՝ արշավի ելնելով ուրիշների մշակույթի դեմ»[26]:

Շուշիի ռեալական ուսումնարանի գոյության և հետագա զարգացման հետ կապված ամենացավոտ պրոբլեմներից մեկը ուսումնարանի շենքի հարցն էր, որը շարունակ զբաղեցրել է ինչպես ուսումնարանի ղեկավարությանը, այնպես էլ հայ բարերարներին և հասարակայնությանը:

Ուսումնարանի առաջին ուսումնական պարապմունքները 1881թ. կազմակերպվում էր շուշեցի հայտնի հարուստ Մովսես բեկի տանը, իսկ այնուհետև Կովկասի փոխարքայի որոշմամբ հայոց թաղամասում 1901թ. կառուցվում էր մի փոքր շենք[27]: Ռուբեն Տեր-Գասպարյանը «Շուշի» գրքում վկայում է, որ շուշեցի մեծահարուստ, անվանի գործիչ Գրիգոր Առաքելյանի (Առաքելով) միջոցներով կառուցվում է ռեալական ուսումնարանի նոր շենք (1901-1908թթ.), որն ուներ ընդարձակ դահլիճ՝ ամենամեծը Շուշի քաղաքում, եթե չհաշվենք Խանդամիրյանի դահլիճը, որտեղ թատերական ներկայացումներ էին տրվում մինչև նրա այրվելը՝

25. Եր. Լալայան, նշվ. գիրքը, էջ 102-118: Նաև, Լեո, նշվ. աշխ., էջ 522-524: «Մշակ», 1906, թ. 55:
26. Նույն տեղում:
27. Ռ. Տեր-Գասպարյան, Շուշի, էջ 109-113:

1905թ. հայ-թուրքական բախումների ժամանակ[28]: «Տարազ» շաբաթաթերթի 1900թ. թիվ 22-ում տպագրված «Շուշու ռեալական դպրոցի շինութեան հիմքը» հոդվածում նշվում է. «Շուշում անցեալ կիրակի շատ մեծ հանդիսով հիմք դրվեց ռեալական դպրոցի շինութեան, որ իր ծախքով կառուցանում է շուշեցի նավթաարդյունաբերող պ. Գրիգոր Առաքելյանը»:

Լեոի վկայությամբ՝ ռեալական ուսումնարանի շենքն ամենից հոյակապն էր Շուշի քաղաքում:

"Кавказский календарь"-ի տարբեր համարներում հանդիպում ենք շնորհակալական նամակների, հեռագրերի, որոնցում հայ առաջադեմ մտավորականները մեծ գովեստով են խոսում Գրիգոր Առաքելյանի ծառայությունների մասին:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ Շուշի քաղաքում, ինչպես նաև գյուղական վայրերում, նույնպես հանգանակություն էին կատարում և հավաքած գումարները հատկացնում ռեալական ուսումնարանի շենքի կառուցմանը: Շուշիի հայ հասարակայնությունը նյութական օգնություն էր ցույց տալիս. 60 սայլ փայտ է բերել տալիս, օգնում է շինությանը հարկավոր այլ նյութերով:

Շուշիի ռեալական ուսումնարանն իր 40-ամյա գոյության ընթացքում[29] մեծ դեր խաղաց արցախահայության հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքի, դպրոցի և մանկավարժական մտքի զարգացման գործում: Շնորհիվ ռեալական ուսումնարանի՝ հայ երիտասարդները, ավարտելով այն, որակավորում էին ստանում Ռուսաստանի և Եվրոպայի համալսարաններում, հաղորդակից դառնում ռուս և եվրոպական առաջավոր մշակույթին, հասարակական-քաղաքական շարժումներին և, վերադառնալով հայրենիք, նվիրվում ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման սուրբ ու պատվավոր գործին:

Ռուս առաջավոր մշակույթին հաղորդակից դառնալու գլխավոր միջոցը ռուսաց լեզուն և գրականությունն էր: Այդ առարկաները պատվավոր տեղ էին գրավում ռեալական ուսումնարանում դասավանդվող առարկաների շարքում:

Ուսումնարանի սաները կատարելապես տիրապետում էին ոչ միայն իրենց մայրենի, այլև ռուսաց և օտար լեզուներին:

Շուշիի ռեալական ուսումնարանը սերտ կապերի մեջ էր քաղաքի թեմական, օրիորդաց դպրոցների, էջմիածնի Գևորգյան ճեմարանի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի և այլ ուսումնական հաստատությունների հետ: Լեոն իրավացիորեն նշում է, որ Շուշիի հայ առաջավոր մտավորականները, որոնցից շատերը ռեալականի ուսուցիչներն էին և նրա սաները, ձգտում էին ուսումնարանը դարձնել Արցախի ժողովրդի մշակութային, կրթական, լուսավորչական կենտրոն, ինչպես թեմական դպրոցը: Ցարիզմի՝ հայերի դեմ ծավալած հալածանքի պայմաններում, երբ Արցախի թեմում փակվել էր հայկական դպրոցների ճնշող մեծամասնությունը, Շուշիի ռեալական ուսումնարանը, ինչպես Լեոն է նշում, պահպանել է ազգային ուսումնական հաստատության կերպարանքը՝ հեռավոր ծայրամասերից եկած հայ երեխաներին չխորթացնել հայ իրականությունից, մայրենի լեզվից, միշտ վառ պահել ազգային ինքնաճանաչման ոգին:

Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Համբարձում Առաքելյանը (1881-1882թթ.), որը ֆինանսների և աշխարհագրության ուսուցիչ էր աշխատում նաև ռեալական ուսումնարանում, հետագայում գրել է. «Շուշվա թեմական դպրոցի և ռեալական ուսումնարանի ուսուցիչների (Գաբ. Գյուլիքևխյան, Ղ. Աղայան, Ս. Մանդինյան,

28. Ռ. Տեր-Գասպարյան, նշվ. աշխ., էջ 109-113:
29. Տե՛ս Հ.Գրիգորյան, Գ.Հարությունյան, Շուշիի ռեալականը, Երևան, 2001:

Ալեքսանդր Հովհաննիսյան, Հակոբ Խոջամիրյան, Սիմեոն Հախումյան և ուրիշներ) կողմից շուտով կազմակերպվեց մի մտերմական գրական շրջան, որին մասնակցում էին երկու դպրոցների ավարտական դասարանի աշակերտները, շարունակ խոսում էին եկեղեցական-ծխական դպրոցների թիվը ավելացնելու, գրադարան-ընթերցարան հիմնադրելու, հայ հասարակայնության մեջ մշակութալուսավորական միջոցառումներ կազմակերպելու մասին»[30]:

Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվում է «Հնասերների ընկերություն», որին մասնակցում էին նաև լավագույն աշակերտները: Ընկերության նպատակն էր ուսումնասիրել Արցախի հնությունները, պատմությունը, մշակութային հարուստ ճյուղերը: Ուշագրավ է այն փաստը, որ այդ ընկերությանը մասնակից աշակերտներից շատերը հետագայում դարձել են ականավոր հայագետներ, ազգագրագետներ և այլ մասնագետներ (որի մասին մանրամասն կներկայացվի աշխատության վերջին գլխում):

Շուշիի ռեալական ուսումնարանն իր կրթական համակարգով, բովանդակությամբ, ուսուցիչներով, սաների ինքնուրույն աշխատանքներով, հրատարակություններով և բազմազան միջոցառումներով օգտակար դեր էր կատարում արցախահայ հասարակական կյանքում: XIX դարի վերջերին հայերի դեմ ծավալված իշխանությունների հալածանքի պայմաններում Շուշիի ռեալական ուսումնարանը դարձել էր արցախահայերի ազգային ուսումնական հաստատություն, ինչպես նաև կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական շարժումների, առաջավոր մտավորականների կենտրոն, որտեղ կազմակերպվում էին քննարկումներ և առաջ քաշվում արցախահայության ազատագրական պայքարին առնչվող բազմազան հարցեր:

Դարավերջին Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Յանովսկին շրջաբերականով դիմեց տեղական մարմիններին՝ մինչև 1899թ. հունիսի վերջը շտապ կարգով ընդունել հայկական բոլոր փակված դպրոցների շարժական ու անշարժ գույքը, նրանցից ստացված եկամուտներն ուսումնական վարչության անունով մտցնել պետական գանձարան: Ուսումնական վարչությունն ամեն կերպ ձգտում էր իր ձեռքում կենտրոնացնել հայկական դպրոցների գոյության բոլոր միջոցները: Բռնագրավում էին ոչ միայն դպրոցական շենքերն ու գույքը, այլև դպրոցների համար որպես եկամուտի աղբյուր հանդիսացող հողակտորները, առևտրական կրպակները, մասնավոր կտակները, արժեթղթերը: Կարճ ժամանակում Կովկասյան իշխանությունները հիմնականում ընդունեցին հայկական դպրոցների գույքը: 1899թ. օգոստոսին էջմիածնի Սինոդին Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Տիրայր վարդապետի ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ Արցախի թեմում փակվել է հայկական դպրոցների մեծ մասը, տեղական իշխանությունները բռնագրավել են դպրոցական գույքը, ըստ պաշտոնական տվյալների փակվել են 25-ից ավելի հայկական դպրոցներ, իսկ 1903թ. հունիսի 12-ի օրենքի համաձայն փակվեց նաև Շուշիի թեմական դպրոցը[31]:

Գնալով ավելի էին ծավալվում ժողովրդի դժգոհությունները, տեղերում ժողովներ ու հավաքներ էին կազմակերպվում, որոշում էին պայքարի ելնել, հանրագրեր էին կազմում և ուղարկում էջմիածին ու թեմական առաջնորդներին՝ պահանջելով չենթարկվել կովկասյան իշխանությունների որոշմանը, բողոքել, դիմադրել:

30. Հ . Առաքելյան, նշվ. աշխ., էջ 47:
31. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 333, 357, ֆ. 406, գ. 57, գ. 642, թ. 2:

Ցարիզմի ուժեղացող ազգային-գաղութային և ռեակցիոն լուսավորչական քաղաքականությունն արտահայտվում էր նաև Շուշիի ռեալական ուսումնարանում: Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի որոշմամբ ռեալական ուսումնարանից հեռացնում են ձրիավարժ սաներին, բացահայտ թե գաղտնի կառավարության կամակատարները դիմում են ամեն միջոցի՝ ուսումնարանի հայ ազգային ոգին եթե ոչ վերացնելու, ապա գոնե նվազեցնելու համար: Նույնիսկ արգելվում էր ռեալական ուսումնարանում խոսել հայերեն, իսկ ուսուցիչները, որոնց մեծ մասը հայեր էին, կարգադրություններն անում էին մայրենի լեզվով:

Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուն պահանջում է.

1. բոլոր կարգադրությունները և հրամաններն արձակել անպայման ռուսաց լեզվով, նույնիսկ նոր ընդունված փոքրիկների համար,

2. փոխել աղոթքի կարգը. նախ՝ աղոթել ռուսերեն, ապա՝ հայերեն, հաշվի առնելով այն, որ պետականությունը բարձր է ազգությունից,

3. գրադարանը մաքրել հայերեն և ռուսերեն կասկածելի գրքերից,

4. հայ դասատուներին և աշակերտներին առաջարկվում է ռուսների ներկայությամբ մշտապես խոսել ռուսերեն[32]:

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին այս ամենը Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտության շրջանում ստեղծել էր լարված մթնոլորտ: Ուսումնարանում անմխիթար էր հատկապես ձրիավարժ սաների վիճակը: Սահմանված ցածր թոշակը գների բարձրացման պայմաններում չէր բավարարում նրանց նվազագույն պահանջները, ուսումնարանի ձրիավարժ սաները դժգոհում էին ուսումնական հաստատության ներքին կյանքից: Ռեալական ուսումնարանի աշակերտությունն ակտիվորեն մասնակցում էր նաև Շուշիում ծավալվող քաղաքական իրադարձություններին:

Այսպես, օրինակ, ռուսական առաջին հեղափոխության օրերին Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտությունը կազմակերպել էր բուռն աշակերտական ցույցեր և այդ տեսակետից առաջատար դեր խաղացել Շուշիի ամբողջ հասարակության կյանքում, ունեցել է իր ընդհանուր աշակերտական մամուլը (աշակերտական խմորատիպ «Աշակերտ» թերթը, լույս է տեսել Շուշիում, 1917թ., ուներ առաջադիմական ուղղություն, խմբագրել են Լևոն Վարդունին և Մովսես Հարությունյանը, տպագրվել է մի քանի համար): «Մշակի» 1905թ. մարտի 24-ի համարում նշվում է, որ 1905թ. փետրվարի 10-ին ռեալական ուսումնարանի աշակերտները, որոնց թիվը հասնում էր 400-ի, դասադուլ են անում, ջարդում են լուսամուտների ապակիները, պատռում «քարտեզները», ուսուցիչների մատյանները և, մանավանդ, ամենից ատված վարքագրության ընդհանուր ցուցակը...»[33]:

«Մշակի» մի այլ համարում տպված հոդվածից տեղեկանում ենք, որ ռեալական ուսումնարանի աշակերտների շարժմանը միանում են նաև Շուշիի թեմական, Մարիամյան օրիորդաց, տեղի ծխական դպրոցների ու քաղաքային ռուսական դպրոցի աշակերտները, բայց նրանց սկսածը երկար չի տևում, շուտով դասերը վերսկսվում են:

Փաստեր կան, որ ռեալական ուսումնարանի աշակերտ Արսեն Գյուրջյանցի՝ 1903թ. նոյեմբերին կազմակերպած խմբակի անդամ-աշակերտները բավականին ակտիվ էին գործում Շուշիում, առիթը բաց չէին թողնում և թռուցիկներ էին տարածում քաղաքում: Արսեն Գյուրջյանցի աշակերտական խմբակը դարձավ մարտա-

32. «Кавказский календарь», 1903-1904 համարները:
33. «Մշակ», 1905, թ. 53-54:

կան մի կազմակերպություն և փաստորեն հանդիսացավ Շուշիի սոցիալ-դեմոկրատական խմբակի հիմքը[34]:

Շուշիի դպրոցներից յուրաքանչյուրը հանդես էր գալիս պահանջներով: Շատ հետաքրքիր է իմանալ հենց թեմականի և ռեալականի աշակերտների մի քանի պահանջների մասին, որոնք ամփոփված են 41 կետի մեջ: Ահա մի քանիսը.

1. դպրոցը դասել պետական միջնակարգ դպրոցների շարքը՝ համալսարան մտնելու հնարավորություն տալով,

2. բանալ 7-րդ դասարան,

3. զարկ տալ աշխարհաբար լեզվին, վանել գրաբարը և ավանդել իբրև դասական լեզու, Ե դասարանից,

4. ռուսերենը կանոնավոր հիմքերի վրա դնել,

5. կրոնական առարկաները կրճատել և դրա փոխարեն ընդլայնել բնագիտականը,

6. մաթեմատիկան լրիվ անցնել իր բոլոր մասերով,

7. վերացնել թվանշանները և թվանշանային ատեստատը ու մտցնել հուշանշանների նոր եղանակ[35]:

Բացի վերը նշվածից, աշակերտները պահանջում էին դպրոցը դարձնել ժողովրդական, անտեղի չպատժել իրենց, վերացնել ծեծը, հարստացնել գրադարանը, հաճախակի կազմակերպել երեկույթներ, մի խոսքով ծավալել մշակութային միջոցառումներ:

Բաքվի «Каспий» թերթի հրապարակման համաձայն՝ Շուշիի ռեալականի աշակերտների հիմնական պահանջներից մեկն էլ տեղական լեզուների ուսումնասիրումը պարտադիր դարձնելն էր: Հայտնի է, որ մինչև 1904-1905 ուստարին մայրենի լեզուները հանված էին դպրոցներից. ոչ հայը, ոչ վրացին, ոչ այլ ազգային փոքրամասնության պատկանողը չէր կարող իր մայրենի լեզուն սովորել պետական որևէ դպրոցում: Այդ լեզուները կարելի էր լսել միայն կրոնի դասերին:

Սակայն ցարական կառավարությունը քնած չէր. իբրև պատասխան աշխատավորական ցույցերի ու գործադուլների, նա ձգտում էր սեպ խրել Անդրկովկասի ժողովուրդների մեջ, հրահրել ազգամիջյան կռիվներ: Եվ դա որոշ չափով հաջողվում էր նրան: 1905-1907թթ. հայ-թաթարական ընդհարումներ տեղի ունեցան Արցախում, որի հետևանքով այրվեց Շուշի քաղաքի մեծ մասը: 1905թ. օգոստոսի 27-ին «Մշակ» թերթն այդ մասին գրում է. «Սարսափելի աղետ եղավ Շուշիի գլխին: Օգոստոսի 16-ին սկսվեց կատաղի զինված ընդհարում հայերի և թուրքերի մեջ, որն անընդհատ տևեց մինչև օգոստոսի 20-ի կեսօրը: Այրվել էր հայոց թաղամասը: Կրակը կլանեց մոտ 400 տուն, որոնց թվում քաղաքային վարչությունը, հիվանդանոցը, հաշտարար դատարանը, Մարիամյան դպրոցը, դեղատունը, թատրոնը և գրեթե հայերի ամբողջ մագազինները[36]:

Զինված ընդհարումներ են տեղի ունենում նաև գավառի շատ գյուղերում: Արյունալի կռիվը շարունակվում է 1906թ. մայիսին: Ժողովուրդը հյուծվել էր ծանր վիճակից. ամենուր խռովություն էր, մարդասպանություն, թալան, գողություն:

Խոսելով հայ-ադրբեջանական ընդհարումների մի քանի պատճառների մասին՝ Ալ. Ռուբենին (Ծատուրյանը) իր հոդվածներից մեկում կոչ էր անում երկու ժողովուրդներին՝ այսուհետև ևս ապրել բարեկամաբար, համագործակցված՝ ոչ մի

34. Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 144:
35. «Մշակ», 1906, թ. 55:
36. Նույն տեղում, թ. 56-58:

հավատ չընծայելով ցարական կառավարության ստահոդ հայտարարություններին:

Նշանավոր պատմաբան, ռեալական ուսումնարանի սան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը գրում է, որ 90-ական թվականների վերջերին հույսերի այդ աշխարհում էր ապրում նաև Շուշի քաղաքի երիտասարդությունը: Առաջադեմ երիտասարդներից կազմված խմբակը ստանում է «Կոկոն» անունը և գործում է բավականին եռանդուն: «Կոկոնի» ղեկավարներից էր Ալ. Ծատուրյանը, որն իր ընկերների շրջանում հայտնի էր «Ծատոր» անունով: Խորհելու, դատելու, տրամաբանելու ընդունակության, ուղղամտության ու սկզբունքայնության համար նա վայելում էր շատերի համակրանքն ու հարգանքը:

Ալեքսանդր Ծատուրյանը և «Կոկոնի» մյուս ղեկավարները շարունակում էին կազմակերպել Շուշիի թեմական դպրոցի, ռեալական ուսումնարանի աշակերտական ցույցերը: Նրանք իրենց դասընկերներին մղում էին արդարության համար պայքարի կոչ անելով մտնել «կյանքի աղմկահույզ հրապարակը»[37]:

Ժողովուրդը մտահոգվում էր վերականգնելու այրվածը, կառուցելու քանդվածը, կենդանություն տալու այն ամենին, ինչը փչացել, մոխիր էր դարձել: Սրան արձագանքում են շատ կազմակերպություններ, ընկերություններ և առանձին անձնավորություններ: Արձագանքում են նաև Թիֆլիսի հայերը, հատկապես նրանք, ովքեր ծնվել և հասակ էին առել Արցախում:

1906թ. մայիսի 20-ին «Աղբյուր-Տարազի» խմբագրատանը տեղի ունեցած խորհրդակցությանն իր բացման խոսքում Տիգրան Նազարյանն ասում է. «Աժուխ և մոխիր կտրած մեր չքնաղ Շուշին պարտական ենք վերաշինելու. մորթված, հոշոտված մեր եղբայրների ու քույրերի անդ ու անդաստանը պետք է մի-մի գեղաժիժաղ մշտադալար բուրաստան դարձնենք: Պիտի թե՛ մտավորապես և թե՛ տնտեսապես այնքան ուժեղանանք, որ այլևս ֆիզիկական կոպիտ ոչ մի ուժ չկարողանա մեզ դիպչել[38]:

Խորհրդակցության կոչը լայն արձագանք է գտնում հատկապես Արցախում: Տիգրան Նազարյանի անունով շուշեցիները հեռագիր են ուղարկում, որտեղ իրենց խորին շնորհակալությունն ու Շուշին կարճ ժամանակում վերականգնելու պատրաստակամությունն են հայտնում:

Կառավարության որոշմամբ (1905թ. օգոստոսի 1) 1905-1906 ուստարում Արցախի թեմում վերաբացվում են հայկական դպրոցները: Հասկանալի է՝ հայ դպրոցը, որ տասը տարի փակել էր իր դռները, կանգնում է դժվարին խնդիրների առաջ: Պետք էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կարգավորել դպրոցական ծրագրերը, պետությունից ընդունել դպրոցական գույքն ու շենքերը, մի խոսքով, ամեն ինչ նորից սկսել:

Արցախի ժողովուրդը ազգաշահ նվիրատվություններ է անում մշակութալուսավորական օջախներ ստեղծելու, գրադարան-ընթերցարան բացելու, գիրք, գրականություն հայթայթելու համար: «Մշակը» 1905թ. հունվարի 22-ի համարում հայտնում է, որ հայոց թեմական դպրոցի գրադարանը հարստացել է տիկին Նվարդ Ժամհարյանի նվիրատվությամբ: Նա իր հանգուցյալ ամուսնու՝ Մարգար Ժամհարյանի, ամբողջ գրադարանը (բաղկացած 238 կտոր գրքից) նվիրում է թեմական դպրոցի գրադարանին: Շուշիի ռեալական ուսումնարանի գրադարանից, որ ռեակցիայի տարիներին հայ ուսուցիչները գաղտնի պահել էին, բավականին

37. Նույն տեղում, թ. 56, 58:
38. Նույն տեղում, թ. 53, 54, 55:

քանակությամբ գրականություն են նվիրում թեմական, օրիորդաց դպրոցների գրադարաններին: «Մշակը» գրում է, որ մի շարք գյուղերում ևս բացվում են գրադարան-ընթերցարաններ: Լավ էր գործում հատկապես Դաշբուլաղի ժողովրդական գրադարանը՝ «Քերծ» անունով[39]:

Շուշիի ռեալական ուսումնարանի տեսուչ Ստ. Տեր-Ավետիքյանի (եղել է թեմական դպրոցի տեսուչ) 1909թ. օգոստոսի 4-ին գրած զեկուցագրի մեջ հայտվում է, որ այդ տարիներին բարեկարգ վիճակում էր միայն ռեալական ուսումնարանը, որտեղ սովորողների մեծամասնությունը հայեր էին: Համարյա բոլոր մշակութային միջոցառումները կազմակերպվում էին ուսումնարանում, աշխուժանում է թատերական կյանքը, քաղաքի երիտասարդության ուժերով ռեալական ուսումնարանում հաճախակի են կազմակերպվում բեմադրություններ, համերգներ, երեկույթներ, ակտիվություն է հանդես բերում նաև քաղաքի հայ հասարակայնությունը:

Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությանը (Թիֆլիս) ներկայացրած՝ ռեալական ուսումնարանի տեսչի հաշվետվության համաձայն 1908-1909 ուստարում ռեալական ուսումնարանում սովորում էր 382 աշակերտ, որից 275-ը՝ հայեր, աշակերտության թիվը 1918-1920թթ. հասնում է 444-ի, դասավանդող ուսուցիչները՝ 23-ի:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Շուշիի ռեալական ուսումնարանը, իրապես լինելով համարյա քիչ թե շատ ժամանակակից բարեկարգ դպրոցն արցախահայ իրականության մեջ, երբեք չի փակվել և իր 40-ամյա գործունեության ընթացքում պակաս դեր չի խաղացել երկրամասի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման, մատաղ սերնդի դաստիարակության ու կրթության գործում, քան Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը, թեև նրա նման երկարամյա կյանք չի ունեցել: Ուսումնարանը տարբեր ժամանակներում միշտ դեպի իրեն էր ձգում ուսումնատենչ պատանիներին ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի ու Անդրկովկասի տարբեր վայրերից, ինչպես նաև Ռուսաստանի հայաբնակ հեռավոր վայրերից:

Ռեալական ուսումնարանը պատրաստեց բավական թվով ուսուցիչներ Արցախի թեմի հայկական դպրոցների (նաև Արցախից դուրս գտնվող հայաշատ վայրերի) համար: Շրջանավարտներից շատերը, բարձրագույն կրթություն ստանալով Ռուսաստանի, Եվրոպայի համալսարաններում, դարձան ականավոր գիտնականներ, հայագետներ, մշակույթի, դպրոցի և մանկավարժության ասպարեզի հայտնի գործիչներ: Նրանցից շատերը բեղմնավոր գործունեություն են ծավալել Արցախի լուսավորության, մշակույթի, տնտեսության և այլ բնագավառներում:

Հակառակ ամեն տեսակ արտաքին միջամտությունների, ներքին դավերի, ռեալական ուսումնարանն անվարան հետևեց իր գլխավոր նպատակին, շնորհիվ հայ առաջավոր մտավորականների ծառայեց արցախահայության լուսավորության գործին:

Մեծ է Շուշիի ռեալական ուսումնարանի վաստակը հայ և ռուս ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման, երկու ժողովուրդների դարավոր բարեկամության զարգացման գործում:

Հետաքրքիր ու բազմակողմանի էր ինչպես Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի, այնպես էլ ռեալական ուսումնարանի գործունեությունը: Նրա սաներից շատերը (որոնց կենսագրությանը կծանոթանանք 5-րդ գլխում) ակտիվորեն մաս-

39. Նույն տեղում:

նակցում էին հայ հասարակական կյանքում կատարվող վերափոխումներին:

4. Շուշի քաղաքի ռուսական օրիորդաց դպրոցը

XIX դարի վերջերին Շուշիում բացվում է ևս մի դպրոց, որը մեծ դեր է կատարում Շուշիի առհասարակ տարածաշրջանի աղջիկների կրթության գործում: Դա ռուսական օրիորդաց Մարինսկու դպրոցն էր, որի բացումը հավանականորեն կատարվել է XIX դարի 90-ական թվականներին: Այն գտնվում էր «Նոր ժամի» («Կանաչ ժամի») թաղամասում, թեմական դպրոցի փողոցի վրա, թեմականից քիչ վերև: Իրենից ներկայացնում էր, մեր կարծիքով, прогимназия-ի տիպի դպրոց և իր գոյությունը պահպանել է մինչև 1920թ., ունենալով միջին հաշվով 200-300 աշակերտուհի, որոնց մեծ մասը հայուհիներ էին (1898թ. 257 աշակերտուհիներից՝ 240 հոգի), չնչին էր թաթարների թիվը (257-ը՝ 2 հոգի): Կային նաև ռուս աղջիկներ (14 հոգի) և այլք (1 հոգի)[40]:

Այսպիսով, XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակում Շուշիում գոյություն ունեցող դպրոցների մասին մեր տված համառոտ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Շուշին եղել է խոշոր մշակութային կենտրոններից մեկը:

40. Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 633: Նաև տե՛ս Հովհաննես Պետրոսյան, «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» կենսամատենագիտական ծանոթագրություններով, Երևան, 1960:

2.4. Շուշի քաղաքի հարակից գյուղերի դպրոցները

Ղարաղշլաղ (Բերդաձոր) գյուղի դպրոցը

Էջմիածնի Սինոդի թույլտվությամբ 1873-74 ուստարում Ղարաղշլաղ գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով: Դասավանդում էր մեկ ուսուցիչ՝ քահանա Արամ Տեր-Պետրոսյանը: Անցնում էին կրոն, գրել, կարդալ, հաշվել, վայելչագրություն, երգեցողություն և այլն:

80-ական թվականների կեսերին դպրոցն ուներ 2 բաժանմունք, 35 աշակերտ, մեկ ուսուցիչ: 1896թ. հայկական մյուս դպրոցների հետ փակվում, վերաբացվում է 1907-1908 ուստարում:

Վերաբացվելուց հետո այն միդասյա երկսեռ դպրոց էր, ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, 2 ուսուցիչ: Դպրոցում սովորում էր 15 աղջիկ[1]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ ղարաղշլաղցիների նպաստով (տարեկան 150 ռուբլի) և գյուղի բնակչության նյութական միջոցներով, աշակերտների ուսման վարձով:

Շուշիքենդ (Շոշ) գյուղի դպրոցը

Արխիվային մի փաստաթղթում նշվում է, որ մինչև XIX դարի 70-ական թվականներն Արցախի թեմի որոշ գյուղերում, նաև՝ Շոշ գյուղում, գործում էր եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով: Կան տվյալներ, որ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց, ուր դասավանդում էր Տեր Առաքել քահանան:

Հայ եկեղեցական-ծխական ու վանական դպրոցների 1873-ի մի ցուցակում դպրոց է ցույց տրված նաև Արցախի թեմի Շուշիքենդ գյուղում:

19-րդ դարի 70-ական թվականների վերջերին, երբ ակտիվանում է Արցախի ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման գործում, Շուշիքենդ գյուղի հասարակությունը նույնպես խնդրանքով դիմում է կաթողիկոսին՝ բացելու ծխական դպրոց: 1884-85 ուստարում բացվում է Գրիգորյան եկեղեցական-ծխական դպրոցը՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին դպրոցն ուներ 25 աշակերտ, 2 բաժանմունք, 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1907-1908 ուստարում:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցում սովորում էր 45 աշակերտ, որից 15-ը՝ աղջիկ, ուներ 2 բաժանմունք, 1 ուսուցիչ: Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[2]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բաքվաբնակ շուշիքենդցի բարերարների տրամադրած միջոցներով:

Սզնեք (Ներքին) գյուղի դպրոցը

Արցախի թեմի կոնսիստորիայի՝ Էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ 1873թ. Շուշիի գավառի Սզնեք գյուղում բացվում է նախակրթարան՝ 31 աշակերտով: Դասավանդում էր 1 ուսուցիչ: Իսկ 1875թ. «Դպրոց» ամսագրի թ. 1-ում տպագրված վիճակագրական տեղեկություններում նշվում է, որ 1874-75 ուստարում գյուղի հասարակայնության խնդրանքով կաթողիկոսը թույլատրում է բացել եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 80-ական թվականների վերջերին գյուղում գործում էր ծխական դպրոց՝ 35 աշակերտով, 2 բաժանմունքով, դասավանդում էր 1

1. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 43, թ. 7, գ. 52:
2. Նույն տեղում, գ. 165: Տե՛ս նաև Մ. Բարխուդարյան, նշվ.աշխ., էջ 131:

ուսուցիչ: Դպրոցում սովորում էին նաև աղջիկներ:

Կան տվյալներ, որ հայկական դպրոցները փակվելուց հետո այստեղ կառավարությունից գաղտնի գործել է դպրոց (1896թ.), որտեղ սովորում էին հարևան գյուղերից եկած երեխաները:

1907-1908 ուստարում Սզնեք գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 45 աշակերտով, որից 15-ը՝ աղջիկներ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և հասարակության միջոցներով[3]:

Քարին տակ գյուղի դպրոցը

1890թ. Քարին տակ գյուղում արդեն գործում էր եկեղեցական-ծխական դպրոց՝ 20-30 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ մինչ այդ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց՝ նախակրթարան 15 աշակերտով: Կառավարությունից գաղտնի այստեղ նույնպես գործել է դպրոց՝ հայկական դպրոցները փակվելուց հետո (1896-1905 թթ.):

1905թ. օգոստոսին, երբ կառավարության որոշմամբ թույլատրվում է վերաբացել հայկական դպրոցները, Քարին տակ գյուղում 1906-1907 ուստարում բացվում է միդասյա երկսեռ դպրոց: Այն ուներ 2 բաժանմունք, 41 աշակերտ, որից 10-ը աղջիկ էր: Ուսուցիչն էր Թադևոս Ազատյանը: Դպրոցը պահվում էր բաքվաբնակ քարինտակցիների նպաստով (տարեկան 300 ռ.), իսկ գյուղի բնակչությունը տարեկան հանգանակում էր 400ռ. և տրամադրում դպրոցին: Աշակերտների մի մասը սովորում էր անվճար:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[4]:

Քռասնի գյուղի դպրոցը

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալներով՝ 1894թ. Քռասնի գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ մինչ այդ գյուղի Սուրբ Հռիփսիմե եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 10 աշակերտով: Իսկ արխիվային մի այլ փաստաթղթում նշվում է, որ 1908-1909 ուստարում Քռասնի գյուղում բացվում է միդասյա դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության հանգանակած միջոցներով[5]:

3. Նույն տեղում, գ. 43: Նաև, «Դպրոց», 1875, թ. 1, «Նոր դպրոց», 1907, թ. 3:
4. «Մուրճ», 1895, թ. 6: Տե՛ս նաև, ՀՊԱ, թ. 56, գ. 50:
5. «Նոր դպրոց», 1907, թ. 3, էջ 52: Նաև, ՀՀ ԱԱ, ֆ. 19, գ. 52, թ. 7:

2.5. Խաչենի գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը (հիմնադրման օրից մինչև 1920թ.)

XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակում Խաչենի գավառում՝ հայ քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին զուգընթաց, զարթոնք են ապրում նաև լուսավորությունն ու կրթական գործը: Չնայած ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների, հայ-թաթարական ընդհարումների հետևանքով անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին, այնուամենայնիվ, Խաչենի գավառում հեղաբեկումների օրերին ևս հայ եկեղեցին պահպանեց իր դերը ժողովրդի հոգևոր մշակույթի ղեկավարման գործում և անգնահատելի ծառայություններ մատուցեց այդ ասպարեզում: Հայտնի է, որ դարեր շարունակ Հասան-Ջալալյան տոհմի հոգևոր գործիչների հոգածության շնորհիվ Արցախ աշխարհում պահպանվել է Գանձասարի՝ Խաչենի գավառի, հոգևոր մշակութային կենտրոն լինելու դերը, որը միաժամանակ եղել է հայ ազատագրական շարժումների կենտրոն: Այստեղ ծավալվել է մշակութային, լուսավորչական, շինարարական լայն գործունեություն, վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, եղել են հարուստ ձեռագրատուն, դպրանոց, ստեղծվել են բարձրարժեք ձեռագրեր, մատենադարան, կրթվել են հոգևոր գործիչներ, որոնք իրենց նպաստն են բերել Արցախի, ինչպես նաև հայոց մյուս թեմերի մտավոր և մշակութային կյանքի զարգացմանը:

Ըստ պաշտոնական տվյալների[1], XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի առաջին երկու տասնամյակը (1850-1920 թթ.), Խաչենի գավառում կային 24 հայկական գյուղեր, 19 տարբեր տիպի դպրոցներ, 3 գրադարան-ընթերցարան, 1 մատենադարան (Գանձասարում): Բոլոր դպրոցներում սովորել է 742 աշակերտ-աշակերտուհի, դասավանդել է 22-24 ուսուցիչ-ուսուցչուհի: Բոլոր դպրոցները, ընդհանուր առմամբ, տարեկան ունեցել են 3500ռ. ծախս, յուրաքանչյուր սովորողի հաշվով՝ 9 ռ. 36 կոպ.: Դպրոցները պահպանվել են աշակերտների ուսման վարձի, բարեգործական ընկերությունների, առանձին անհատների նվիրատվությունների հաշվին, որոնք կատարվում էին ամենաբազմազան առիթներով ու ձևերով:

Այժմ ներկայացնենք Խաչենի գավառի հայկական դպրոցների ընդհանուր բնութագիրը հիմնադրման օրից մինչև 1920 թվականը:

1. Առաջաձոր գյուղի դպրոցը

Արխիվային տվյալները վկայում են, որ 1889-90 ուստարում Խաչենի գավառի Առաջաձոր գյուղում գործել է եկեղեցական-ծխական դպրոց 25 աշակերտով: Դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ մինչ այդ՝ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից գործել է դպրոց: Գյուղի հասարակայնության խնդրանքով (197 տուն, 1520 բնակիչ) (“Кавказский календарь”, 1893) և կաթողիկոսի թույլտվությամբ (Կոնդակով) 1895թ. բացվել է ծխական դպրոց՝ 45 աշակերտով,

1. Մանրամասն տե՛ս Լեո, նշվ. աշխ.՝ Շուշիի թեմական դպրոցի պատմություն:
Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ.:
Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան, 1994:
Վ. Բալայան, Արցախի պատմությունը, Երևան, 2002:
Մ. Բալայան, նշվ. աշխ.:
«Վավերագրեր», Գիրք Թ, էջ 470-471:

որն ուներ 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: Երբ փակվել են Արցախի թեմի մի շարք դպրոցներ, 90-ական թվականների կեսերին այստեղ՝ կառավարությունից գաղտնի գործել է դպրոց, որտեղ սովորում էին նաև հարևան գյուղերից եկած երեխաները:

1908-1909 ուստարում բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 58 աշակերտով, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Հովակիմ Համազասպյանը, որն ավարտել է Ներսիսյան դպրոցը: 1910-11 ուստարում դպրոցն ունեցել է 78 աշակերտ: Դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը[2]:

2. Բաղարա (Պտրեցիք) գյուղի դպրոցը

Արխիվային փաստաթղթերից մեկում նշվում է, որ Բաղարա գյուղի եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1874-75 ուստարում, սովորում էր 12 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ՝ Սարգիս Տիրացուն: Սակայն կան տվյալներ, որ մինչ այդ գյուղում գործել է նախակրթարան՝ 10-15 աշակերտով: 1881թ. Բաղարա գյուղում գործում էր միդասյա արական ծխական դպրոց՝ 35 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1886-87 ուստարում դպրոցի բաժանմունքում սովորում էր 45 աշակերտ, որից 8-ը՝ աղջիկ: Դպրոցը փակվում է 1896թ. և վերաբացվում 1906թ. աշնանը: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, 48 աշակերտ, որից 8-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Վաղարշակ Տեր-Գրիգորյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը, մի տարի ուսուցչություն արել Դահրավի ծխական դպրոցում: Տարեկան ստանում էր 400 ռ. ռոճիկ:

1908-1909 ուստարում դպրոցն ուներ 52 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ[3]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով (տարեկան 200ռ.) և հասարակության հանգանակած միջոցներով (տարեկան 200ռ.): Այն գործել է մինչև խորհրդային շրջանը:

3. Բալուջա գյուղի դպրոցը

Խաչենի գավառի Բալուջա (Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում՝ Պալուջա) գյուղում ծխական դպրոց էր գործել դեռևս 1873թ.՝ ունենալով մեկ ուսուցիչ և 18 աշակերտ: Մինչ այդ գյուղում գործել է նախակրթարան՝ 10-15 աշակերտով: Հետագա տարիների (1874-1884) փաստաթղթերում այդ դպրոցն այլևս չի երևում:

Հայտնի է, որ Բալուջա գյուղում 1884թ. բացվել է միդասյա ծխական դպրոց, որն ուներ 2 բաժանմունք, 30 աշակերտ և մեկ ուսուցիչ: 1887-88 ուստարում դպրոցում սովորողների թիվը հասնում էր 45-ի, որից 13-ը՝ աղջիկներ, դասավանդում էր 2 ուսուցիչ: Հայկական մյուս դպրոցների հետ միասին կառավարությունը փակել է նաև այդ դպրոցը: Այն վերաբացվել է 1907-ին՝ բաքվաբնակ Աբրահամ Նասիբյանի միջոցներով: Այդ առիթով կաթողիկոս Խրիմյան Հայրիկը Նասիբյանի անունով ուղարկել է օրհնության կոնդակ:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, 95 աշակերտ, որից 15-ը՝ աղջիկ: Ուսուցիչներն էին Հակոբ Հակոբյանն ու Առաքել Առաքելյանը (ականավոր գրականագետ, ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը), 1910-11 ուստարում դպրոցն ուներ 100 աշակերտ[4]:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ բալուջեցի Աբրահամ Նասիբյանի նպաստով (տարեկան 600ռ.) և աշակերտների ուսման վարձով: Դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը:

---

2. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 28, գ. 543:
3. Նույն տեղում, «Նոր դպրոց», 1901, թ. 1:
4. Նույն տեղում: Նաև, «Արարատ», 1986, թ. 1:

4. Գանձասար վանքի դպրոցը

Գանձասարի վանքը վիթխարի դեր է խաղացել ոչ միայն հայ ազգային- ազատագրական շարժումներում, այլև Արցախ աշխարհի լուսավորության՝ կրթական, դպրոցական կյանքում: Տարբեր ժամանակներում այդտեղ գործել է եկեղեցական դպրոց, սակայն ստույգ թվականը չի նշվում: Օր. Աբ. Մովսիսյանի «Ուրվագծեր հայ դպրոցի մանկավարժության պատմության. 10-15-րդ դար» (Եր. 1958թ.) աշխատության մեջ վկայակոչվում է, որ XV դարում Գանձասար և Դադի վանքերում գործում էին դպրոցներ: Մ. Սանթրոսյանի «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» (1964թ.) աշխատության մեջ նշվում է, որ 1800թ. Գանձասարի վանքում գործել է եկեղեցական-ծխական դպրոց: Այդ փաստը վկայում է նաև Լեոն՝ «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի» գրքում: Իսկ Ս. Ջալալյանը «Մեղու Հայաստանի» լրագրի 1858թ. համարներում տպագրված իր ճանապարհորդական նոթերում նշում է, որ XIX դարի 20-30-ական թվականներին Գանձասարի վանքում գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով:

Լեոն իր գրքում նշում է, որ 1858թ. Գանձասարի վանքին կից գործում էր դպրոց՝ 30 աշակերտով: Այն տարրական գրագիտության մի հաստատություն էր՝ անխտիր թե հոգևորականների և թե աշխարհականների համար: 1820թ. Գանձասարի վանքի դպրոցում պարապել են այն ժամանակ հայտնի լուսավորիչ-մանկավարժներ Հովսեփ Արցախեցին, Տեր-Ավագյանը և Պողոս վարդապետ Ղարաբաղցին, որն աշխատել է նաև էջմիածնում: Նրան աշակերտել է Մ. Թաղիադյանը, իսկ Թիֆլիսում նրա աշակերտների թվում են եղել Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանցը:

Գանձասարի վանքի դպրոցը գործել է նաև հետագա ժամանակներում, նույնիսկ երբ մի քանի անգամ փակվել են հայկական դպրոցները (1885-1896թթ.), այստեղ գաղտնի գործել է դպրոցը, ուր ուսում էին ստանում շրջական գյուղերի երեխաները[5]:

5. Դահրավ (Ղայաբաշի) գյուղի դպրոցը

1870թ. Դահրավ գյուղում բացվել է նախակրթարան՝ 15 աշակերտով, իսկ 1873-74 ուստարում՝ եկեղեցական-ծխական դպրոց՝ 19 աշակերտով: Ուսուցիչն էր Տեր Սարգիս քահանան: Նա երեխաներին սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել և կրոն:

1886-87թթ. տվյալներով փոխվում է դպրոցի կրթության բովանդակությունը, ինչպես նաև սովորող աշակերտների կազմը, այն հասնում է 30-40 աշակերտի, որից 3-ը աղջիկ էր: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1906-1907 ուստարում: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, որն ուներ 3 բաժանմունք, 40 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Սեդրակ Պետրոսյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը, տարեկան ստանում էր 200 ռ. ռոճիկ, բնակարան, վառելիք, լույս, ծառա:

1909-1910 թթ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ, իսկ 1915թ.՝ 50 աշակերտ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության հանգանակած նյութական սուղ միջոցներով[6]:

6. Դաշբուլաղ գյուղի դպրոցը

Խաչենի գավառի Դաշբուլաղ գյուղի (նույնանուն հայաբնակ գյուղ է ունեցել նաև Նուխիի գավառը) ծխական դպրոցը հիմնվել է 1887-88 ուստարում՝ կաթողի-

5. «Մեղու Հայաստանի», 1858, թ. 17: Նաև տե՛ս նշված աշխատությունները:
6. «Արարատ», 1917, էջ 678: Նաև, ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543:

կոսի հատուկ կոնդակով: Սովորում էր 25 աշակերտ, դասավանդում մեկ ուսուցիչ: Եղել է կենտրոնական դպրոց, ուր սովորել են Խանցք և Մեհտիշեն գյուղերից եկած երեխաները: 1892-93 ուստարում դպրոցն ունեցել է 64 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

1895թ. աշակերտների թիվը պակասում է՝ հասնելով 35-ի, դասավանդում էր մեկ ուսուցիչ:

1896թ. դպրոցը փակվում է կառավարության կողմից, հավանաբար նրա փոխարեն բացվել է պետական դպրոց, որտեղ ուսուցումը տարվում էր ռուսերեն լեզվով:

1906-1907 ուստարում Դաշբուլաղ գյուղում բացվում է միդասյա երկսեռ ծխական դպրոց: Այն ուներ 3 բաժանմունք, 48 աշակերտ, որից 6-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Տեր-Ստեփանյանը: 1910-11 ուստարում դպրոցն ունեցել է 66 աշակերտ, իսկ 1917թ.՝ 78 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության հանգանակած նյութական սուղ միջոցներով[7]:

7. Դադի վանքի դպրոցը

Պատմագիտական աղբյուրները վկայում են, որ 13-րդ դարում Խաչենի գավառի կրոնական մշակութային կենտրոն է եղել նաև Դադի վանքը՝ Արցախի ճարտարապետական նշանավոր հուշակոթողներից մեկը: Այն 5-րդ դարից հիշատակվում էր որպես եպիսկոպանիստ և հոգևոր մշակութային կենտրոն Արցախ աշխարհում: Այստեղ անընդմեջ գործել է եկեղեցական, իսկ հետագայում՝ ծխական դպրոց:

Աբ. Մովսիսյանը «Ուրվագծեր հայ դպրոցի մանկավարժության պատմության (10-15-րդ դար)» աշխատության մեջ վկայում է, որ XIII դարում Դադի վանքում գործում էր եկեղեցական դպրոց: Նույնիսկ Հաթերքի Վախթանգ իշխանի կին Արզու խաթունն այստեղ բաց է անում մասնավոր դպրոց, ուր աղջիկներին սովորեցնում էր ձեռագործության արվեստ: Լեոն Շուշիի թեմական դպրոցին նվիրված աշխատության մեջ նշում է, որ XIX դարի առաջին կեսին եկեղեցական-ծխական դպրոցներ են գործել Ղարաբաղի վանքերում՝ Գանձասար, Գտիչ, Ամարաս, Ս. Հակոբ, ինչպես նաև՝ Դադի վանքում: XIX դարի 80-90-ական թվականներին, երբ փակվեցին հայկական դպրոցները, այստեղ գործել է դպրոցը, և կան հավաստի տվյալներ, որ այն գոյություն ուներ նաև հետագա ժամանակներում՝ մինչև խորհրդային շրջանը[8]:

8. Խանաբադ գյուղի դպրոցը

Արխիվային տվյալների համաձայն՝ 1870թ. Խանաբադ գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1884թ. գյուղի բնակչությունը խնդրագիր է ուղարկում կաթողիկոսին՝ թույլատրելու գյուղում բացել եկեղեցական-ծխական դպրոց: Այդ նույն տարին բացվում է դպրոցը՝ ունենալով 32 աշակերտ, ուսուցիչն էր Տեր-Խաչատուր քահանան: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1908թ. հոկտեմբերին: Վերաբացումից հետո դպրոցը միդասյա երկսեռ էր, ուներ 2 բաժանմունք, 58 աշակերտ, որից 15-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Տեր-Արիստակես Բաղալյանը, որն ավարտել էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Այդ դպրոցը հաճախում էին նաև հարևան Ղլիժբաղ գյուղի երեխաները:

1910-1911 ուստարում դպրոցն ուներ 66 աշակերտ, իսկ 1917թ.՝ 78 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ:

---

7. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 280, 184, 543: «Նոր դպրոց», 1907, թ. 3:
8. Նույն տեղում:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ խանաբադցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 120 ռ.): Այստեղ ուսուցումն անվճար էր[9]:

9. Խանքենդիի դպրոցը

Խանքենդին, այժմ՝ Ստեփանակերտ, նախկինում պատկանում էր Խաչեն գավառին:

Խանքենդիի դպրոցի մասին տվյալները հակասական են: Ըստ «Մուրճ» ամսագրի (1890թ.) 1886-87 ուստարում Խանքենդիում գործել է ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ, իսկ ըստ արխիվային փաստաթղթերի՝ 1875-76 ուստարում Խանքենդիում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 36 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1885թ. դպրոցը փակվում է: 1888թ. Խանքենդի, Խնածախ, Կրկժան, Փահլուլ և Ջամիլու գյուղերի համայնքների միացյալ որոշմամբ բացվում է Ս. Գևորգյան տղայոց միդասյա ուսումնարան: 1888-89 ուստարում այն ունեցել է 3 բաժանմունք, 1 ուսուցիչ և 30 աշակերտ:

Կաթողիկոսը Խանքենդի գյուղի ծխական դպրոցի հոգաբարձության կազմը հաստատել է 1890թ.: Դպրոցը 1894թ. ունեցել է 35 աշակերտ: 1895թ. Խանքենդիում գործում էր նաև օրիորդաց դպրոց, որտեղ սովորում էր 15 աղջիկ: Դասավանդում էր 1 վարժուհի: Այդ դպրոցները փակվել են 1896թ. վերջերին: 1906թ. դպրոցների վերաբացումից հետո Խանքենդիում գործում էր միդասյա երկսեռ դպրոց՝ 2 բաժանմունքով, սովորում էր 72 աշակերտ, որից 20-ը աղջիկ էր: Ուսուցիչներն էին՝ Գարեգին Խիզանյանը (Ներսիսյան դպրոցի շրջանավարտ), Ն. Տեր-Ստեփանյանը (Շուշիի թեմականի շրջանավարտ):

1914թ. դպրոցն ունեցել է 54 աշակերտ:

Դպրոցը պահվում էր սովորողների ուսման վարձով և գյուղի բնակչության հանգանակած նյութական միջոցներով[10]:

10. Խրամորթ գյուղի դպրոցը

Խրամորթ գյուղում 1894թ. գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը գործել է նաև 1898-99 ուստարում՝ կառավարությունից գաղտնի: Հետագա տարիներին՝ մինչև 1909թ., դպրոցի մասին արխիվային փաստաթղթերում տեղեկություններ չկան, միայն 1909-1910 ուստարում Խրամորթ գյուղում բացվել է միդասյա երկսեռ ծխական դպրոց՝ 35 աշակերտով, ուներ 1 բաժանմունք, 1 ուսուցիչ՝ Գրիգոր Ալահվերդյանը, որն ավարտել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը:

1914թ. դպրոցն ունեցել է 45 աշակերտ[11]:

Դպրոցը հիմնականում պահվում էր աշակերտների ուսման վարձով:

11. Ծմակահող գյուղի դպրոցը

Ծմակահող գյուղը մի ժամանակ եղել է Ջալալյան իշխանների գյուղաքաղաքը, այժմ նրա արևելյան մասում պահպանվում են տնատեղերը, շինության քարակիր մնացորդները: Գյուղն ունի նաև Սուրբ Ստեփանոս եկեղեցի, որը նույնպես հին է, այդ են վկայում նրա վրա գրված արձանագրությունները:

Արխիվային մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ XIX դարի 80-ական թվականներին գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 15 աշակերտով: 1894թ. բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում

---

9. Նույն տեղում:

10. «Մուրճ», 1890, թ. 6, «Դպրոց», 1874, թ. 4: Նաև, ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 75-543, «Արարատ», 1894, թ. 11, «Նոր դպրոց», 1913, թ. 3-5:

11. Նույն տեղում:

էր 1 ուսուցիչ: Մինչև 1910թ. այս դպրոցի մասին արխիվային փաստաթղթերում ոչ մի տվյալների չենք հանդիպում, միայն «Նոր դպրոց» ամսագրում նշվում է, որ 1910-11 ուստարում Ծմակահող գյուղում գործել է ծխական դպրոց՝ 25 աշակերտով: Դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը գործել է նաև 1917թ.՝ ունենալով 30 աշակերտ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և եկեղեցու նպաստով[12]:

12. Հաթերք գյուղի դպրոցը

Աբ. Մովսիսյանը «Ուրվագծեր հայ դպրոցի մանկավարժության պատմության. (10-15-րդ դար)» (1964թ.) աշխատության մեջ նշում է, որ XIII դարում Ղարաբաղի Խաչեն գավառի Հաթերքի Վախթանգ իշխանի տանը գործել է մասնավոր դպրոց, ուր տիկին Արզու խաթունը յոթ աղջիկների սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել և ձեռագործության արվեստ: Հետագա ժամանակներում այստեղ գործել են դպրոցներ՝ նախակրթարան (խալֆայական դպրոց), եկեղեցական-ծխական, իգական:

Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1881թ. Հաթերք գյուղում բացվում է ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1888-89 ուստարում դպրոցում սովորում էր 35 աշակերտ: 90-ական թվականների կեսերին, երբ փակվել են հայկական դպրոցները, այստեղ գործել է միդասյա ծխական դպրոց, որտեղ սովորում էին նաև հարևան գյուղերից եկած երեխաները:

1908-1909 ուստարում Հաթերք գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց՝ 45 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով: Կան տվյալներ, որ դպրոցը գործել է մինչև խորհրդային շրջանը[13]:

13. Ղշլաղ գյուղի դպրոցը

Դպրոցի հիմնադրման տարեթիվը մեզ անհայտ է: 1895թ. գործել է՝ ունենալով 1 ուսուցիչ և 25 աշակերտ: Այս դպրոցի մասին հաջորդ տեղեկությունները վերաբերում են 1908թ., երբ այն վերաբացվել է: 1908-1909 ուստարում դպրոցը երկսեռ միդասյա էր, ուներ 1 բաժանմունք, 40 աշակերտ, որից 8-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Արիստակես Սեդրակյանը, որն ավարտել էր Գանձակի քաղաքային ուսումնարանը:

Դպրոցը հիմնականում պահվում էր աշակերտների ուսման վարձով[14]:

14. Նորագյուղի (Քեշիշքենդ) դպրոցը

Արխիվային տվյալների համաձայն՝ XIX դարի 80-ական թվականներին (1886թ.) Նորագյուղում գործում էր եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Սակայն նշենք, որ մինչ այդ եղել է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1895թ. միդասյա ծխական դպրոցում սովորում էր 35 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1907թ. սեպտեմբերին: Նորաբաց միդասյա երսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, որից 17-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր տեղական քահանա Տեր-Միքայել Ձաքարյանը, որն ավարտել է Շուշիի թեմական դպրոցը: 1910-11 ուստարում դպրոցն ունեցել է 66 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ, իսկ 1917-ին՝ 78 աշակերտ:

Դպրոցը պահվում էր Մշակութային միության նպաստով (տարեկան 200ռ.) ու

12. Նույն տեղում:
13. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, 144, գ. 543, «Նոր դպրոց», 1908, թ. 5:
14. Նույն տեղում:

բաքվաբնակ նորագյուղցիների Հայրենակցական Միության նպաստով (տարեկան 100ռ.): Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[15]:

15. Ռև (Շալկա) գյուղի դպրոցը

Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներում նշվում է, որ 1895թ. Խաչեն գավառի Ռև գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Մի տարի հետո դպրոցը փակվում է և վերաբացվում 1907թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 38 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Ուսուցչուհին էր տիկին Աննա Մանուկյանը, որն ավարտել էր Թիֆլիսի Մարիամյան Հովնանյան դպրոցը:

1908-1909 ուստարում դպրոցն ունեցել է 3 բաժանմունք, 48 աշակերտ, որից 6-ը՝ աղջիկ: Հետագա տարիներին դպրոցի գոյության մասին արխիվային փաստաթղթերում ոչինչ չի նշվում:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և մշակութային միության նպաստով[16]:

16. Սարդարաշեն գյուղի դպրոցը

1894-95 ուստարում Խաչեն գավառի Սարդարաշեն գյուղում բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ մինչ այդ գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 15 աշակերտով: Հետագա տարիների վավերագրերում այս դպրոցը չի հիշատակվում: Միայն Շուշիի թեմական տեսչի էջմիածնի Սինոդին ներկայացրած տեղեկագրում նշվում է, որ 1908-1909 ուստարում Սարդարաշեն գյուղում գործել է միդասյա ծխական երկսեռ դպրոց՝ 30 աշակերտով:

Դպրոցը պահվում էր հիմնականում աշակերտների ուսման վարձով և գյուղի եկեղեցու նպաստով: Հետագայում՝ 1929թ., գյուղում բացվում է 4-ամյա տարրական դպրոց[17]:

17. Սեյդիշեն գյուղի դպրոցը

Արցախի թեմի կոնսիստորիայի էջմիածնի Սինոդին ներկայացրած վիճակագրական տվյալների համաձայն, XIX դարի 70-ական թվականներին Սեյդիշեն գյուղում բացվում է նախակրթարան՝ 25 աշակերտով, իսկ մինչ այդ գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 15 աշակերտով: 1885թ. կաթողիկոսի թույլտվությամբ Սեյդիշեն գյուղում բացվում է միդասյա ծխական դպրոց, որն ուներ 30 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: 1888-89 ուստարում դպրոցն ունեցել է 2 բաժանմունք, 37 աշակերտ, 1 ուսուցիչ: Այդ դպրոցի պահպանությանն ակտիվ մասնակցություն են ունեցել Տեր-Անդրեասյան-Սարամյան (Սարումյան) 3 եղբայրները, որոնք ի հիշատակ իրենց ծնողների տարեկան 150ռ. են հատկացրել իրենց ծննդավայրի դպրոցին՝ արժանանալով կաթողիկոսի գովասանական կոնդակին:

90-ական թվականների կեսերին դպրոցը փակվում է և վերաբացվում 1907-1908 ուստարում: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, որն ուներ 44 աշակերտ, 1 ուսուցիչ: 1915թ. դպրոցն ունեցել է 2 բաժանմունք, 45 աշակերտ, 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի բնակչության հանգանակած միջոցներով[18]:

---

15. Նույն տեղում: Նաև, «Արարատ», 1895, թ. 12:
16. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, 543, «Նոր դպրոց», 1910, թ. 6, 1915, թ. 3:
17. Նույն տեղում:
18. Նույն տեղում: Նաև, գ. 149, «Վիճակագրական տեղեկ.», 1888-1889: «Արարատ», 1895, թ. 1:

18. Վանք գյուղի դպրոցը

Հայ եկեղեցական-ծխական ու վանական դպրոցների 1873թ. մի ցուցակում դպրոց է ցույց տրված նաև Արցախի թեմի Վանք գյուղում: Բանն ան է, որ Արցախում գոյություն է ունեցել Վանք անունով երկու գյուղ՝ մեկը Դիզակի (կամ Ջաբրայելի) գավառում՝ Սպիտակ խաչ կոչվող վանքի մոտ, իսկ մյուսը՝ Խաչենի գավառում, Գանձասար վանքից ոչ հեռու:

Դպրոցը մեծ չի եղել (նախակրթարան), ունեցել է ընդամենը մեկ ուսուցիչ և 10 աշակերտ: 80-ական թվականներին (1886թ.) Վանք գյուղում բացվում է միդասյա արական ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին, երբ դպրոցները փակվում են, այստեղ գաղտնի գործել է դպրոցը: 1908-1909 ուստարում վերոհիշյալ գյուղում գործում էր միդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 2 բաժանմունք, 1 ուսուցիչ, 45 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: 1913թ. «Նոր դպրոց» ամսագրի թիվ 3-ում հրապարակելով մի թղթակցություն Վանք գյուղի դպրոցի մասին, Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Ն. Յարամիշյանը նշում է, որ Վանք գյուղում գործում է միդասյա ծխական երկսեռ դպրոց[19]:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

19. Վաղահաս (Վաղուհաս) գյուղի դպրոցը

Պատմագիտական աղբյուրները վկայում են, որ Վաղուհաս (հնում՝ Վաղահաս) պատմական գյուղ է՝ Վայկունիք, Բերդաձոր, Խաչեն, Ջրաբերդ գավառների սահմանագլխին, Թարթառի (Տարտու) հնագույն կամրջի և Իջևանատան մոտ: Մ. Բարխուդարյանը «Արցախ» գրքում նշում է, որ այս կամուրջը միջանկյալ կարևոր կապօղակ է հանդիսացել Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի վրա: Այս ճանապարհով Խաչեն, Ջրաբերդ գավառները կարճ ուղիով դարեր շարունակ կապված էին Սևանի ավազանին: Հին կամրջից երկու տասնյակ մետր ցած կառուցվել է նոր կամուրջ, որով Ջրաբերդի գավառը կապվում էր Քյալբաջարի (Քարվաճառի) հայոց հին շրջանի հետ:

Բարխուդարյանը նաև նշում է, որ հին Վաղահասը բազմաբնակիչ գյուղ է եղել 1800-ական թվականներին, ուներ հին եկեղեցի, որը կոչվում էր Մայրաքաղաք կամ Տիրամայր: Եկեղեցին ուներ գրադարան, որտեղ պահպանվել են հին ձեռագրեր, մատյաններ (այժմ այդ մատյանները գտնվում են Մատենադարանում):

Վաղուհասի հարավ-արևելյան մասում կա Մատաղիս անունով գյուղատեղ, որի շուրջ կան մեծ հանգստարան, խաչքարեր, եկեղեցի, մատուռներ: Ըստ ավանդության, այդ գյուղավանում եղել է 800 տուն, այդ են վկայում ավերակները:

Վաղուհասի շրջապատում եղած բնակավայրերի գոյության վկաներն են եկեղեցիները, գերեզմանատները, տնատեղերի ավերակները:

Վաղուհասի գյուղամիջին գտնվող եկեղեցին եղել է լուսավորության, մշակութային կենտրոն՝ ինչպես Գանձասարը, Դադիվանքը: Տարբեր ժամանակներում այստեղ գործել է դպրոց: Արխիվային փաստաթղթերում, տարբեր աղբյուրներում Վաղուհաս գյուղի դպրոցի պատմությունը վերագրում են տարբեր ժամանակների, քանի որ նրա շրջապատում կան նշանավոր վանքեր, եկեղեցիներ (Կարմիր վանք, Խաթրավանք, Եղցութալայի եկեղեցի, Մանդուռ հին Վաղուհասի կամ Երի-Վաղուհասի գյուղատեղի մոտ):

---

19. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 149, «Վիճակագր. տեղեկ.», 1888-89, էջ 103: «Նոր դպրոց», 1915, թ. 4:

Հավանաբար այդ եկեղեցիներին կից գործել է դպրոց: Այն ժամանակ եկեղեցիները, վանքերը համարվում էին լուսավորական-կրթական օջախներ:

Հայ եկեղեցական-ծխական դպրոցների 1873թ. մի ցուցակում նշվում է նաև Վանք, Վաղուհաս գյուղերի դպրոցները:

XIX դարի 80-ական թվականներին Արցախի թեմի դպրոցների վերաբերյալ կազմված վիճակագրական տեղեկություններում նշվում է Վաղուհաս գյուղի դպրոցի մասին՝ գործել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Արխիվային փաստաթղթերում չի նշվում Վաղուհասի դպրոցի փակման մասին՝ 90-ական թվականներին:

«Նոր դպրոց» ամսագրի 1907թ. թիվ 3-ում տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, որ 1907-1908 ուստարում Վաղուհաս գյուղում բացվում է միդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 1 բաժանմունք, 1 ուսուցիչ, 35 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ: 1910թ. դպրոցն ուներ 46 աշակերտ, 1 բաժանմունք, 1 ուսուցիչ: 1917թ. դպրոցի երեք բաժանմունքում սովորում էր 66 աշակերտ, դասավանդում՝ 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և եկեղեցական նպաստով[20]:

20. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 78, գ. 543, Դիվան հայ վիմագրության, «Մատենադարան», էջ 110, «Նոր դպրոց», 1911, թ. 1, էջ 18: Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 194:

2.6. Զրաբերդ գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը (հիմնադրման օրից մինչև 1920թ.)

Արխիվային փաստաթղթերում և այլ աղբյուրներում հիշատակված տեղեկությունների համաձայն, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Զրաբերդ գավառում կային 52 հայկական գյուղեր, 16 տարբեր տիպի դպրոցներ, 2 գրադարան-ընթերցարան: Դպրոցներում, ընդհանուր առմամբ, սովորել է 456 աշակերտ, որից 173-ը՝ աղջիկ, դասավանդել են 14 ուսուցիչ և 8 ուսուցչուհի: Բոլոր դպրոցներն ունեցել են 3060ռ. ծախս, որից յուրաքանչյուր աշակերտի հաշվով՝ 9 ռուբլի[1]: Դպրոցները հիմնականում պահպանվել են աշակերտների ուսման վարձով և մասնավոր մարդկանց (տարբեր քաղաքներում բնակվող ջրաբերդցիների) նվիրատվությունների հաշվին, մինչև խորհրդային շրջանը:

Փաստագրական նյութերի հիման վրա համառոտակի ներկայացնենք Զրաբերդ գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրն ըստ գյուղերի: Դպրոցների պատմությունն ընդգրկում է XIX դարի 50-ական թվականներից մինչև 1920 թվականը:

1. Բեգում Սարով գյուղի դպրոցը

Արխիվային տվյալները վկայում են, որ Զրաբերդ գավառի Բեգում Սարով գյուղում 1873թ. բացվել է նախակրթարան՝ 18 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1874-75 ուստարում բացվել է միդասյա ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Ուսուցիչ չունենալու պատճառով 1881թ. դպրոցը փակվել է: Ինչպես երևում է, հետագայում նորից բացվել ու գործել է, քանի որ մի հրապարակման համաձայն, մինչև 1904-1905թթ. ունեցել է հոյակապ դպրոցական շենք՝ կառուցված բագումսարովցիների միջոցներով, ավելի քան 1500ռ. արժողությամբ:

Այդ շենքը ավերակ է դարձել ազգամիջյան բախումների ժամանակ: Հայկական դպրոցի փոխարեն Բ. Սարովում բացվել է պետական դպրոց:

Դպրոցի հետագա ճակատագրի մասին արխիվային փաստաթղթերում ոչինչ չի նշվում[2]:

2. Գյուլաթաղ գյուղի դպրոցը

Շուշիի թեմական տեսչի՝ էջմիածնի Սինոդին ներկայացրած տեղեկագրում նշվում է, որ 1873թ. Գյուլաթաղ գյուղում բացվել է միդասյա ծխական դպրոց՝ 34 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 80-ական թվականների կեսերին դպրոցը փակվել է (1885թ.) և վերաբացվել 1886թ.: Դպրոցը նորից փակվել է 1896թ., վերաբացվել 1906թ.: Միդասյան երկսեռ դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, որից 19-ը՝ աղջիկներ: Ուսուցիչն էր Աբրահամ Ալավերդյանը, որն ավարտել էր Ներսիսյան դպրոցը:

1909-1910 ուստարում դպրոցն ուներ 52 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ[3]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով:

3. Երից Մանկանց վանքի դպրոցը

Լեոն «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի» աշխա-

1. «Վավերագրեր», Գիրք Թ, էջ 470-471: Նաև, Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., Եր. Լալայան, «Ազգագրական հանդես», 1896-97 թթ., Գիրք Ա, Բ:
2. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 7, գ. 78,թ. 10, գ. 543, թ. 7, «Նոր դպրոց», 1911, թ. 13, 14, էջ 15:
3. Նույն տեղում, գ. 47, 78, «Նոր դպրոց», 1909, թ. 6:

տության մեջ նշում է, որ Զրաբերդ գավառի երից Մանկանց վանքի (Իրիքման-կունք) դպրոցը գոյություն է ունեցել 1868թ., որտեղ սովորում էր 15 աշակերտ: Իսկ արխիվային այլ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ այդ վանքում դպրոցը գործել է դեռևս 1830-40-ական թվականներին (Գանձասար, Ամարաս, Գտիչ, Ս. Հակոբի վանքերի հետ միասին):

«Մեղու Հայաստանի» լրագրի մի հրապարակումից երևում է, որ այդ դպրոցը շարունակել է գործել նաև 80-90-ական թվականներին՝ ունենալով 25-30 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ: Նույնիսկ երբ փակվել են հայկական դպրոցները՝ 1896թ. կառավարության որոշման համաձայն, այստեղ գաղտնի գործել է դպրոցը: Հետագա տարիների վավերագրերում դպրոցի մասին չի նշվում[4]:

4. Էրքեջ գյուղի դպրոցը

Զրաբերդ գավառի էրքեջ (ներկայիս Մարտակերտ շրջկենտրոնի վերին մասում) գյուղում 1895թ. բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Մի տարի հետո դպրոցը փակվել է և վերաբացվել 1908թ. հոկտեմբերին: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, որն ուներ 2 բաժանմունք, 52 աշակերտ, որից 10-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Հմայակ Տեր-Դանիելյանը, որն ավարտել է Գանձակի քաղաքային դպրոցը՝ 1903թ., տարեկան ստանում էր 350 ռուբլի ռոճիկ: Դպրոցը գործել է նաև 1914թ.՝ ունենալով 45 աշակերտ[5]:

Դպրոցը պահվում էր միայն աշակերտների ուսման վարձով:

5. Թալիշ գյուղի դպրոցը

XIX դարի 80-ական թվականներին Զրաբերդ գավառի բազմամարդ գյուղերից մեկն էր նաև Թալիշ գյուղը: “Кавказский календарь”-ի 1886թ. տվյալներով՝ Թալիշ գյուղն ուներ 130 ծուխ, 1100 բնակիչ: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցուն կից դպրոցը գործել է դեռևս 1870-ական թվականներին:

1886թ. Թալիշի հասարակայնությունը խնդրագիր է ուղարկում կաթողիկոսին՝ գյուղում եկեղեցական-ծխական դպրոց բացելու խնդրանքով: Մի տարի հետո բացվում է դպրոցը՝ ունենալով 25 աշակերտ, 1 ուսուցիչ: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ դպրոցը գործել է նաև 1895թ.: 1896թ., երբ փակվում են հայկական դպրոցները, այստեղ գաղտնի գործել է դպրոցը:

1908-1909 ուստարում Թալիշ գյուղում բացվել է միդասյա երկսեռ ծխական դպրոց: Այն ուներ 2 բաժանմունք, 50 աշակերտ, 1 ուսուցիչ[6]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և բնակչության հանգանակած միջոցներով:

6. Կուսապատ գյուղի դպրոցը

Արխիվային տվյալների համաձայն՝ 1873թ. Կուսապատ գյուղում բացվել է մասնավոր նախակրթարան՝ 25 աշակերտով, ուսուցիչն էր Սահակ Զոհրապյանը: «Դպրոց» ամսագրի 1875թ. թիվ 3-ում տպագրված հոդվածից տեղեկանում ենք, որ 1875-76 ուստարում Կուսապատում բացվել է միդասյա ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Իսկ 1875թ. Կուսապատում բացվել է երկդասյա ծխական պետական դպրոց՝ 88 աշակերտով, ուներ 3 բաժանմունք, 3 ուսուցիչ: Դպրոցի տնօրեն է նշանակվել էջմիածնում կրթություն ստացած վարդապետ Հովսեփ Փինջինյանը: Հետաքրքրական է, որ այստեղ ուսուցումը տարվում էր ոչ միայն հայոց, այլ նաև ռուսաց լեզվով: Կուսապատի բնակչությունն

4. Նույն տեղում, գ. 182, թ. 10-18, «Մեղու Հայաստանի», 1895, թ. 10, Լեո, նշվ. աշխ., էջ 275:
5. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց, 3, գ. 182, թ. 10-18, «Մեղու Հայաստանի», 1895, գ. 543:
6. Նույն տեղում, «Նոր դպրոց», 1909, թ. 4:

ամենայն նվիրվածությամբ օգնում էր դպրոցին:

90-ական թվականների կեսերին, երբ փակվում են հայկական դպրոցները, այսեղ գործել է պետական դպրոցը: Այն ուներ 2 բաժանմունք՝ 5 դասարանով, 100 աշակերտ, 4 ուսուցիչ: Ուշագրավ է այն, որ 1901թ. Կուսապատում բացվել է նաև աղջիկների հայկական դպրոց՝ 3 բաժանմունքով: Պարապմունքները տարվել են հասարակական-քաղաքական գործիչ Ալ. Բեկզադյանների տանը՝ պետությունից գաղտնի, Շուշիի բարեգործական ընկերության հաշվին: Այն ուներ 2 բաժանմունք, աշակերտների թիվը հասնում էր 30-ի[7]:

Ծխական դպրոցների կանոնադրության համաձայն՝ երկդասյա դպրոցում դասավանդում էին հայոց, ռուսաց լեզուներ, Հայաստանի և Ռուսաստանի պատմություն, աշխարհագրություն, քերականություն, վայելչագրություն, կրոն, երգ, արվեստ, իսկ աղջիկների դպրոցում՝ բացի այդ առարկաներից, անցնում էին նաև ձեռագործ:

1906թ. տվյալներով՝ երկդասյա ծխական դպրոցը դառնում է միդասյա երկսեռ, որտեղ սովորում էր 53 աշակերտ, այդ թվում 24-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Աբգար Տեր-Առաքելյանը: 1908-1909 ուստարում դպրոցն ուներ 66, իսկ 1917թ.՝ 77 աշակերտ:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ կուսապատցիների Հայրենակցական միության նպաստով (տարեկան 300 ռ.) և աշակերտների ուսման վարձով[8]:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը:

<u>7. Հասանղայա գյուղի դպրոցը</u>

Զրաբերդ գավառի Հասանղայա գյուղում 1895թ. բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 18 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Կան տվյալներ, որ 1880թ., երբ գյուղի բնակչությունն ընդհարվել է պարսիկ բեկերի հետ, տեղափոխվել է Նիկոլայ Փիրումյանցի կալվածքը՝ Մարաղա գյուղից վերև, և ժամանակավոր բնակություն հաստատել: Այստեղ բացվել է նախակրթարան, երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն: 1893թ. վերադարձել են հայրենի գյուղ և բացել դպրոց: 1896թ. դպրոցը փակվում է և վերաբացվում 1909թ. հոկտեմբերին:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, որից 6-ը՝ աղջիկ, 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[9]:

<u>8. Մաղավուզ (Զարդախլու) գյուղի դպրոցը</u>

Պատմագիտական աղբյուրները վկայում են, որ Զրաբերդ գավառի Մաղավուզ գյուղն ամենահին բնակավայրերից մեկն է՝ հիմնված Թարթառ գետի աջ կողմի բարձրության վրա, Մեծ Շենի հյուսիսային կողմում, մի լեռնահովտում: Գյուղի հին լինելու մասին վկայում են նրա արևմտյան կողմում՝ Թարթառ գետի լանջի բարձրության վրա, գտնվող հանգստարանը, հնաշեն մատուռները, ուխտատեղերը, խաչքարերը, եկեղեցիները: Գյուղի մոտ կառուցված է Սուրբ Գևորգ եկեղեցին: 1880թ. գյուղն ուներ մոտ 520 բնակիչ:

Ըստ արխիվային տվյալների՝ XIX դարի 70-ական թվականներին եկեղեցուն կից գործել է դպրոց, որտեղ երեխաներին Տեր-Գրիգոր անունով քահանան սովորեցնում էր գրել, կարդալ, հաշվել, կրոն: 1888-89 ուստարում գյուղում բացվել է

---

7. Նույն տեղում:
8. «Նոր դպրոց», 1909, թ. 4: Նաև, ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, 543, «Դպրոց», 1875, թ. 4:
9. Նույն տեղում:

ծխական դպրոց՝ 25 աշակերտով, իսկ 1894թ. դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, 1 ուսուցիչ:

Դպրոցը փակվելուց հետո վերաբացվել 1907-1908 ուստարում: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, 1 ուսուցիչ՝ Միհրան Տեր-Գրիգորյանը, որն ավարտել էր Շուշիի թեմական դպրոցը:

Դպրոցը գործել է նաև 1914 թվականին[10]:

9. Մոխրաթաղ գյուղի դպրոցը

XIX դարի 90-ական թվականների կեսերին (1895թ.) Մոխրաթաղ գյուղում գործում էր եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20-35 աշակերտ, դասավանում էր 1 ուսուցիչ: Այս դպրոցը նույնպես փակվել է: Վերաբացվել է 1906թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 62 աշակերտ, որից 20-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր տեղական քահանա Տեր-Արիստակես Բաղալյանը, որն ավարտել էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1908-1909 ուստարում դպրոցն ուներ 66 աշակերտ, իսկ 1910-11 ուստարում՝ 72 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր մոխրաթաղցի Սաշաբեկ Սարիբեկյանի նպաստով (տարեկան 48ռ.), և Բաքվի հայոց Մշակութային միության նպաստով: Այստեղ ուսուցումն անվճար էր: Դպրոցն ուներ սեփական շենք: Այն պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[11]:

10. Մատաղես (ներկայումս՝ Մատաղիս) գյուղի դպրոցը

Արցախում գոյություն է ունեցել Մատաղես անունով երկու գյուղ. մեկը՝ Խաչենի գավառում՝ Վաղուհաս գյուղի հարավ-արևելյան մասում, Թարթառ գետի աջ ափին (այժմ ավերակ է, անմարդաբնակ), մյուսը՝ Ջրաբերդ գավառում, Թարթառ գետի ձախ ափին: Կան տվյալներ, որ մի ժամանակ Վաղուհասի մոտ գտնվող հին Մատաղես գյուղից բնակիչների մի մասը տեղափոխվել է այստեղ:

Արխիվային տվյալները վկայում են, որ Ջրաբերդ գավառի Մատաղես գյուղում եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1895թ., որն ուներ 20 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ: Մի տարի հետո դպրոցը փակվել է և վերաբացվել՝ 1908թ. սեպտեմբերին: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 56 աշակերտ, որից 22-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Աբգար Շահինյանը, որն ավարտել է Գևորգյան ճեմարանը: Դպրոցը գործել է նաև 1913թ.:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ պ. Սարիբեկյանի նպաստով (տարեկան 420ռ.), իսկ մանր ծախսերը հոգում էին գյուղացիները: Ուսումը ձրի էր: Մատաղեսի դպրոցում Տոնաշեն գյուղից սովորում էր 15 աշակերտ[12]:

11. Ջրաբերդի դպրոցը

Արխիվային փաստաթղթերում կարդում ենք, որ 1886թ. Ջրաբերդում (ներկայիս Մարտակերտ շրջկենտրոնը) բացվել է ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1907-1908 ուստարում: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 60 աշակերտ: Ուսուցիչն էր Մ. Նասիբյանը:

Դպրոցը գործել է նաև 1914թ.՝ ունենալով 78 աշակերտ, 2 բաժանմունք, 2 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ ջրաբերդցիների Հայրենակցական միու-

10. Նույն տեղում:
11. «Նոր դպրոց», 1911, թ. 6, ֆ. 56, գ. 543, թ. 10:
12. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 78, թ. 10, գ. 543, թ. 12-24, «Նոր դպրոց», 1913, թ. 6:

թյան նպաստով (տարեկան 300ռ.) և աշակերտների ուսման վարձով, ամիսը՝ 75 կոպեկ:

Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[13]:

12. Մարաղա գյուղի դպրոցը

Պատմագիտական աղբյուրները վկայում են, որ 1828թ. Պարսկաստանի Մարաղա գյուղից բնակիչների մի մասը գաղթել և բնակություն է հաստատել Արցախի Զրաբերդ գավառում՝ հիմնելով Նոր Մարաղա գյուղ:

XIX դարի 60-ական թվականներին Մարաղա գյուղում ապրում էր 450-ից ավելի մարդ, ուներ Սուրբ Աստվածածին եկեղեցին: Կան տվյալներ, որ եկեղեցուն կից գործել է դպրոց՝ 15 աշակերտով:

Էջմիածնի Սինոդի վիճակագրական տվյալներով՝ 1873թ. Մարաղա գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 30 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1886թ. գյուղում բացվել է միդասյա արական ծխական դպրոց՝ 40 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Երբ 1896թ. փակվել են հայկական դպրոցները, այստեղ գաղտնի գործել է դպրոցը:

Արխիվային փաստաթղթերում նշվում է, որ 1908-1909 ուստարում Մարաղա գյուղում գործում էր միդասյա երկսեռ դպրոց, որն ուներ 2 բաժանմունք, 52 աշակերտ, 2 ուսուցիչ: Դպրոցը գործել է նաև 1917թ.:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ մարաղացիների Հայրենակցական միության նպաստով (տարեկան 200ռ.) և աշակերտների ուսման վարձով[14]:

13. Մեծ Շեն գյուղի դպրոցը

Արխիվային փաստաթղթերից մեկում նշվում է, որ Զրաբերդ գավառի Մեծ Շեն գյուղում 1894թ. բացվել է եկեղեցական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Սակայն նշենք, որ մինչ այդ գյուղում գործել է նախակրթարան՝ 15-20 աշակերտով: 1895թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1906-1907 ուստարում: Այն միդասյա երկսեռ դպրոց էր, որն ուներ 3 բաժանմունք, 56 աշակերտ, որից 27-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Միսակ Պետրոսյանը, որն ավարտել էր Երևանի թեմական դպրոցը: Դպրոցը գործել է 1914թ.՝ ունենալով 66 աշակերտ, 3 բաժանմունք, 2 ուսուցիչ: Դպրոցն ուներ սեփական շենք: Այն նվիրել է (իր սեփական տունը) Ղարաբաղի թեմական կոնսիստորիայի պաշտոնյա, մեծշենցի Տիգրան Յուզբաշյանը: Մեծշենցիներն իրենց միոցներով դպրոցի համար կառուցել են նոր շենք:

Դպրոցը պահվում էր բաքվաբնակ մեծշենցիների Հայրենակցական միության նպաստով (տարեկան 270ռ.) և աշակերտների ուսման վարձով: Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[15]:

14. Չայլու գյուղի դպրոցը

XIX դարի 20-ական թվականների վերջերին (1828թ.) Պարսկաստանի Բադրբեով գյուղի բնակիչների մեծ մասը գաղթում է Արցախ, Զրաբերդ գավառ և Թարթառ գետի ձախ ափին հիմնում Ներքին Չայլու գյուղը: Իսկ նույն թվականին Պարսկաստանի Ուրմիո Ըռհաս գյուղից բնակիչները տեղափոխվում են իրենց հայրենակիցների մոտ՝ հիմնում Վերին Չայլու գյուղը: Ըստ "Кавказский календарь"-ի, 1860-ական թվականների մարդահամարի տվյալներով այդ երկու գյուղերից յուրաքանչյուրում ապրում էր 400-500 մարդ: Ունեին իրենց Ս. Աստվա-

13. Նույն տեղում, գ. 543, թ. 20:
14. Նույն տեղում, «Նոր դպրոց», 1914, թ. 6, «Արարատ», 1917, թ. 4, էջ 454:
15. «Նոր դպրոց», 1909, թ. 6, ֆ. 56, գ. 543, թ. 18-22:

ծածին եկեղեցին: Տարբեր ժամանակներում այդ եկեղեցիներին կից գործել է դպրոց, որտեղ սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն: XIX դարի 80-ական թվականների վերջերին երկու գյուղերի համայնքները միասին բացում են ծխական դպրոց՝ 45 աշակերտով: Այդտեղ սովորում էին նաև Վերին Չայլու գյուղի երեխաները: Արխիվային տվյալների համաձայն՝ 1908թ. այստեղ գործում էր միդասյա երկսեռ դպրոց՝ 66 աշակերտով, դասավանդում էր 2 ուսուցիչ: Հետագայում մեկ դպրոց է բացվում նաև Վերին Չայլու գյուղում[16]:

15. Ջանյաթաղ (Ճանկաթաղ) գյուղի դպրոցը

Զրաբերդ գավառի Ջանյաթաղ գյուղի բնակիչները 1828թ. տեղափոխվել են Պարսկաստանի Ղարադաղ գյուղից: Կառուցել են Սուրբ Գևորգ եկեղեցին: "Кавказский календарь"-ի տվյալներով՝ 60-ական թվականներին գյուղում ապրում էր 550 մարդ: Կան տվյալներ, որ գյուղի եկեղեցուն կից գործել է դպրոց:

XIX դարի 80-ական թվականների կեսերին (1886թ.) Ջանյաթաղ գյուղի բնակչությունը խնդրում է կաթողիկոսին՝ թույլատրել բացելու եկեղեցական-ծխական դպրոց: 1887-88 ուստարում բացվել է միդասյա արական ծխական դպրոց՝ 35 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1908թ. հոկտեմբերին: Այն միդասյա երկսեռ էր, ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը գործել է նաև 1914 թվականին:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[17]:

16. Սեյսուլան գյուղի դպրոցը

XIX դարի 60-ական թվականների վերջերին՝ "Кавказский календарь"-ի 1868թ. մարդահամարի տվյալներով, Զրաբերդ գավառի Սեյսուլան գյուղում ապրում էր 220 բնակիչ: Գյուղն ուներ Սուրբ Աստվածածին եկեղեցի: Տարբեր ժամանակներում այդ եկեղեցուն կից գործել է «խալֆայական» տիպի դպրոց, որտեղ երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն: 70-ական թվականներին վերոհիշյալ գյուղում բացվել է նախակրթարան՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ:

1886թ. գյուղի բնակչությունը խնդրագիր է ուղարկում կաթողիկոսին՝ թույլատրելու բացել ծխական դպրոց: 1887-88 ուստարում բացվել է միդասյա ծխական արական դպրոց՝ 30 աշակերտով: Դպրոցի հետագա ճակատագրի մասին արխիվային փաստաթղթերում չի նշվում: Միայն 1909թ. գյուղում բացվել է միդասյա երկսեռ դպրոց՝ 45 աշակերտով, որից 12-ը՝ աղջիկ, դասավանդում էր 1 ուսուցիչ:

Դպրոցը պահվում էր հիմնականում աշակերտների ուսման վարձով և բնակչության հանգանակած նյութական միջոցներով: Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[18]:

16. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 143, թ. 8, գ. 543, թ. 110:
17. Նույն տեղում: Նաև, «Կավկազսկի կալենդար», 1868, թ. 6, «Նոր դպրոց», 1911, թ. 6:
18. Նույն տեղում, ֆ. 28, գ. 10, գ. 182, գ. 543: Նաև, «Նոր դպրոց», 1911, թ. 6:

2.7. Նուխիի գավառի հայկական դպրոցների ընդհանուր բնութագիրը (1818-1920 թթ.)

Արխիվային փաստաթղթերը, պատմագիտական աղբյուրները և այլ նյութեր վկայում են, որ XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակում Նուխիի գավառում կար 47 հայկական գյուղ, որտեղ բնակվում էր 12820 բնակիչ: Գավառի գյուղերում գործել են 24 հայկական դպրոցներ, սովորել 12,492 աշակերտ, որոնցից 522-ը՝ աղջիկ: Բոլոր դպրոցները, ընդհանուր առմամբ, ունեցել են 15900ռ. ծախս, որից յուրաքանչյուր սովորողի հաշվով՝ 11 ռ. 95 կոպ.[1]:

Բացի այդ, Նուխի քաղաքում գործել են 2 գրադարան-ընթերցարան, «Ընթերցասիրաց գրադարանային», «Հայուհյաց բարեգործական», «Թանգարանային հնագիտական» ընկերություններ: Արցախի դպրոցի և մանկավարժության ասպարեզի գործիչները բեղուն գործունեություն են ունեցել նաև Նուխիի գավառի հայկական դպրոցներում (այդ մասին նշվել են աշխատության 3-րդ, 4-րդ և 5-րդ գլուխներում):

Արցախի թեմի առաջնորդներն իրենց փոխանորդն են ունեցել Նուխիի գավառում, որոնց արդյունավետ գործունեության տարիներին Նուխիի գավառում հայկական մշակույթը, լուսավորությունն ու կրթական գործն ընթանում էր վերելքի ուղիով, որը և նախապայմաններ էր ստեղծում նրա հետագա զարգացման համար:

Նուխին՝ պատմական Շաքին, եղել է Արցախի թեմի հոգևոր մշակութային կենտրոններից մեկը: Տարբեր ժամանակներում այստեղ բնակվող հայությունը չնայած ենթարկվել է դաժան փորձությունների, թուրքերի, պարսիկների կողոպտչական հարձակումներին, այնուամենայնիվ, ստեղծել է իր մշակույթը և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող դպրոցը: Հայ դպրոցի պատմությունը հետազոտողներն իրենց արժեքավոր մենագրություններում, ամսագրային հոդվածներում որոշ տեղեկություններ են տվել Արցախի թեմի Նուխիի գավառի մի քանի դպրոցների մասին, միայն նշելով դպրոցի հիմնադրման թիվը[2]:

Արխիվային փաստաթղթերից և այլ աղբյուրներից հավաքած նյութերը մեզ հնարավորություն են ընձեռել առաջին անգամ ներկայացնելու Նուխիի գավառի թվով շատ հայկական դպրոցների պատմությունը:

1. Նուխի քաղաքի հոգևոր դպրոցը (սեմինարիա)

Ա. Երիցյանը Ներսիսյան դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում նշում է, որ դեռևս 1818թ. Նուխի քաղաքում գործում էին 4 հայկական դպրոցներ, որոնցից 1-ը՝ եկեղեցական, 3-ը՝ ծխական: Այդ դպրոցները բացվել են Եփրեմ կաթողիկոսի հրամանով: Հիշյալ դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 15-20 աշակերտ, դասավանդում էր 4 ուսուցիչ, սովորեցնում էին գրել, կարդալ, հայոց լեզու և կրոն: 1829թ. կառավարության ընդունած պաշտոնական կանոնադրությունից հետո՝ 1831թ. Նուխի քաղաքում բացվում է պետական գավառային ուսումնարան, որտեղ սովորում էր 127 աշակերտ[3]:

1836թ. ցարական կառավարության կողմից հաստատվեց «Հայ լուսավորչա-

1. «Վավերագրեր», Գիրք Թ, էջ 470-472, Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., Եր. Լալայան, «Ազգագրական հանդես», 1896-1897, Գիրք Ա, Բ:
2. Ալ. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց դպրոցի, 1898, էջ 27:
3. Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին, 1964, էջ 3940, «Արարատ», 1870, թ.ԺԲ, էջ 895:

կան հավատքի հոգևոր կառավարման կանոնադրությունը», որի համաձայն հայոց բոլոր թեմերում բացվեցին թեմական դպրոցներ: Էջմիածնի Սինոդը կարգադրում է Արցախի թեմի կոնսիստորիային և թեմական Բաղդասար միտրոպոլիտին՝ Շուշիում բացել թեմական դպրոց (1838թ. հունիսին), իսկ Նուխիում՝ հոգևոր սեմինարիա:

Այսպիսով, Նուխիի Ազգային հոգևոր սեմինարիան սկսել է գործել 1838 թվականից: Լեոն Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում նշում է, որ Նուխի քաղաքի Ազգային հայոց հոգևոր դպրոցը հիմնվել է 1838 թվականին՝ Շուշիի թեմական դպրոցի հետ միաժամանակ: Սկզբում այն եկեղեցական-ծխական էր, իսկ հետո, ինչպես երևում է, դարձել էր հոգևոր դպրոց[4]: «Արարատ» ամսագրի 1870թ. ԺԲ համարում տպագրված մի հոդվածում նշվում է, որ «Հոգևոր դպրոցը տասը տարուց ի վեր (1860-1870) շարունակել է գործել»: Լեոն միաժամանակ նշում է, որ հոգևոր դպրոցը գործել է համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններում, կանոնավոր վիճակում, քան գավառի մյուս դպրոցները: 1874-75 ուստարում Նուխի քաղաքի հոգևոր դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ, 114 աշակերտ: 80-ական թվականների կեսերին աշակերտության թիվը հասնում է 224-ի:

1885թ. դպրոցը փակվել է հայկական բոլոր դպրոցների հետ միասին, վերաբացվել 1886թ.: Վերաբացումից հետո աշակերտների թիվը նվազել է՝ 1888թ. դարձել 144:

Հոգևոր դպրոցը նորից փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. աշնանը: Երկդասյան արական դպրոցում սովորում էր 239 աշակերտ, դասավանդում՝ 10 ուսուցիչ: 1910-11 ուստարում դպրոցն ուներ 6 բաժանմունք, 11 ուսուցիչ, 245 աշակերտ: Դպրոցը պահվում էր Նուխիի հայ հասարակայնության միջոցներով, Նուխիում գործող «Մարդասիրական ընկերության» օգնությամբ և աշակերտների ուսման վարձով: Դպրոցը գործել է նաև հետագա տարիներին, մինչև խորհրդային շրջանը[5]:

2. Նուխի քաղաքի արական ծխական դպրոցը

Հայոց ծխական դպրոցների կանոնադրության ընդունումից հետո Նուխիի հայ հասարակայնությունը խնդրում է կաթողիկոսին թույլատրել բացելու դպրոց: 1888թ. բացվում է դպրոցը՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Արցախի թեմի առաջնորդի՝ «Դպրոց» ամսագրում տպագրված զեկուցագրում նշվում է, որ 1874-75 ուստարում ծխական դպրոցն ունեցել է 27 աշակերտ, 1 ուսուցիչ: Ըստ վիճակագրական տվյալների՝ 80-ական թվականների սկզբներին Նուխի քաղաքում գործող 2 ծխական արական դպրոցներում սովորում էր 118 աշակերտ, դասավանդում՝ 1 ուսուցիչ: Հիշյալ դպրոցները փակվել են 1896թ. և վերաբացվել 1906թ. աշնանը: Նորաբաց միդասյա արական դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 35-40 աշակերտ, դասավանդում 2 ուսուցիչ: Դպրոցները պահվում էին հիմնականում աշակերտների ուսման վարձով և բարերար մարդկանց միջոցներով: 1907-1908 ուստարում բացվում է երկդասյա դպրոց՝ 2 բաժանմունքով, որտեղ սովորում էր 60 աշակերտ, դասավանդում 2 ուսուցիչ[6]:

3. Նուխի քաղաքի Ս. Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոցը

Ինչպես նշեցինք աշխատության նախորդ բաժնում, կանանց կրթության հարցը հայ իրականության մեջ լայն քննարկման առարկա դարձավ XIX դարի 60-

4. Լեո, Շուշիի թեմական դպրոցի պատմություն, էջ 215:
5. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 31, թ. 15, գ. 37, թ. 8, գ. 199, գ. 543:
6. «Նոր դպրոց», 1910, թ. 8, 9:

ական թվականներին: Հայ լուսավորչական թեմերում բացվում էին իգական դպրոցներ: Շուշիի օրիորդաց դպրոցի բացումից (1864թ.) տասը տարի անց՝ 1873-74 ուստարում Նուխի քաղաքում բացվում է իգական դպրոց, որտեղ սովորում էր 18 աշակերտուհի: 1883-84 թվականներին իգական դպրոցն ունեցել է 2 բաժանմունք, 5 ուսուցիչ, 82 աշակերտուհի: 1888թ. եղել է երկդասյա դպրոց՝ 4 բաժանմունքով, ունեցել է 67 աշակերտուհի: 1891թ. դպրոցը դարձավ չորսդասյան միջնակարգ: 90-ական թվականների կեսերին իգական դպրոցը փակվել է և վերաբացվել 1906-1907 ուստարում: Երկդասյան իգական դպրոցն ունեցել է 5 հիմնական և 2 զուգընթաց բաժանմունքներ, 355 աշակերտուհի[7]: Այս դպրոցն ավարտել է 13 ուսուցչուհի:

Տեղացիները ստանում էին 1-ին կարգի դասի համար 20ռ.՝ տարեկան, իսկ 2-րդ կարգի համար՝ 15ռ.: Ոչ տեղացիները ստանում էին 1-ին կարգի դասի համար 25ռ., իսկ 2-րդի՝ 20ռ.:

4. Ամիրավան գյուղի դպրոցը

Արցախի թեմի առաջնորդի՝ Էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ 1874-75 ուստարում Նուխիի գավառի Ամիրավան գյուղում բացվել է ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր մեկ ուսուցիչ: 1884թ. դպրոցն ունեցել է 39 աշակերտ: Իսկ 1886թ. դպրոցը կոչվել է «Ս. Գևորգյան տղայոց միդասյա ուսումնարան», որտեղ սովորել է ընդամենը 15 երեխա: Հայկական դպրոցների հետ փակվել է նաև այս դպրոցը՝ 1896թ.[8]:

1906-1907 ուստարում բացվել է միդասյա երկսեռ դպրոց՝ 3 բաժանմունքով, սովորում էր 53 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Սուքիաս Տեր-Զաքարյանը, որը տարեկան ստանում էր 400 ռուբլի: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով, եկեղեցու նպաստով ու հասարակության միջոցներով:[9]

5. Արեշ գյուղի դպրոցը

Արխիվային փաստաթղթերում նշվում է, որ դեռևս 1818թ. Եփրեմ կաթողիկոսի հրամանով Նուխիի գավառի Արեշ գյուղում բացվել է նախակրթարան՝ 15 աշակերտով: Ծխական դպրոցների կանոնադրության (1868) ընդունումից հետո այստեղ բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: «Արարատ» ամսագրի 1871թ. Ա համարում տպագրված մի հոդվածում նշվում է, որ այդ նույն թվին գյուղում գործում էր ծխական դպրոց՝ 25 աշակերտով, դասավանդում էր մեկ ուսուցիչ: Նման տեղեկությունները վկայում են նաև «Դպրոց» ամսագրում հրապարակված 1875-76 ուստարվա վիճակագրական փաստերը: Այս դպրոցը փակվել է 1885թ., մի տարի հետո վերաբացվել և նորից փակվել է 1896թ.: 1906-1907 ուստարում նորաբաց միդասյա դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր հիմնականում աշակերտների ուսման վարձով և եկեղեցու նպաստով[10]:

6. Բեգլարքենդ (Բեկլարիստ) գյուղի ծխական դպրոցը

Ծխական դպրոցների կանոնադրության հրապարակումից հետո Բեգլարքենդ (Բեկլարիստ) գյուղի հասարակությունը խնդրանքով դիմել էր կաթողիկոսին՝ գյուղում բացելու եկեղեցական-ծխական դպրոց: 1868-69 ուստարում բացվել է դպրոցը, որտեղ սովորում էր 20 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Սակայն

7. «Արարատ», 1869, թ.4, էջ 82, «Դպրոց» 1875, թ.4: «Վիճակ. տեղեկ. 1888-89 ուս. տարվա», էջ 103:
8. Նույն տեղում:
9. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 50, թ. 60, գ. 140, թ. 14, գ. 543, թ. 31:
10. «Վիճակագր. տեղեկատ. 1888-89 ուս. տարվա», էջ 106:

նշենք, որ արխիվային փաստաթղթերում կան տվյալներ, որ մինչ այդ՝ 1862թ. գործել է նախակրթարան: 1874-75 ուստարում դպրոցն ունեցել է 37 աշակերտ, 1 ուսուցիչ: 80-ական թվականների վերջերին դպրոցն ունեցել է 3 բաժանմունք, 40 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1906թ.: Միդասյան երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, որից 16-ը՝ աղջիկ, դասավանդում էր 2 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և հասարակության միջոցներով[11]:

7. Ղալբալ (Ղալբա) գյուղի դպրոցը

Էջմիածնի Սինոդի՝ 1873թ. Կովկասի փոխարքայությանը ներկայացրած հայկական դպրոցների ցուցակում նշված է նաև Նուխիի գավառի Ղալբալ (Ղալբա) գյուղի ծխական դպրոցը, որն ունեցել է 7 աշակերտ, 1 ուսուցիչ: 80-ական թվականներին գյուղում գործել է միդասյա ծխական դպրոց՝ 30 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. աշնանը: Նորաբաց միդասյա արական դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը հիմնականում պահվում էր աշակերտների ուսման վարձով[12]:

8. Դաշբուլաղ գյուղի դպրոցը

Նուխիի գավառի Դաշբուլաղ հայաբնակ գյուղը եղել է ժամանակի ամենախոշոր բնակավայրերից մեկը: 1915թ. նրա բնակիչների թիվը հասավ 2630-ի:

Արխիվային փաստաթղթերում նշվում է, որ այս գյուղում 1873թ. գործել է ծխական դպրոց՝ 24 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1882թ. Սինոդի կազմած և Կովկասի ուսումնարանի հոգաբարձությանը ներկայացված հայ դպրոցների ցուցակում նշված է նաև հիշյալ դպրոցը, որն ունեցել է 25 աշակերտ, 1 ուսուցիչ: 90-ական թվականների կեսերին այդ դպրոցը փակվել է և վերաբացվել 1906թ.: Նորաբաց միդասյա արական դպրոցում սովորում էր 35 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և եկեղեցու նպաստով[13]:

9. Խուշկաշեն անապատի գյուղի դպրոցը

Ս. Էջմիածնի պաշտոնական տվյալների համաձայն, Նուխիի գավառի Խուշկաշեն գյուղում 1870թ. բացվել է ծխական դպրոց: «Արարատ» ամսագրում տպագրված մի հոդվածում տեղեկացվում է, որ Նուխիի հաջորդության փոխանորդ Արիստակես վարդապետ Սեդրակյանի հորդորանքով Խուշկաշեն գյուղի հասարակությունը մեծ եռանդով ձեռնամուխ է եղել իրենց գյուղի դպրոցի կառուցմանը՝ միայն 1 օրում փոխադրելով այստեղ «Յոթ հարյուր սայլ քար և նույնչափ ավազ, ինչպես նաև՝ այլ կարևոր նյութեր»: Արխիվային մի այլ փաստաթղթում նշվում է, որ մինչ այդ գյուղում գործել է նախակրթարան՝ 20 աշակերտով[14]: 80-ական թվականների կեսերին դպրոցն ունեցել է 32 աշակերտ, 1 ուսուցիչ: Այն փակվել է 1896թ. և վերաբացվել 1906-1907 ուստարում: Նորաբաց միդասյա արական դպրոցն ուներ 2 բաժանմունք, 1 ուսուցիչ, 35 աշակերտ:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և հասարակության միջոցներով[15]:

10. Կախ ավանի հայկական արական դպրոցը

«Մեղու Հայաստանի» 1885թ. թիվ 7-ում տպագրված մի հոդվածում նշվում է,

11. «Արարատ», 1871, էջ 58, «Դպրոց», 1875-1876, թ. 4:
12. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8, գ. 149, թ. 14, գ. 543, թ. 22-24:
13. «Հրահանգ հայոց եկեղեցական ծխական դպրոցների», ֆ. 56, գ. 454:
14. Նույն տեղում:
15. «Վիճակագրակ. տեղեկ. 1888-89 ուս. տարվա», էջ 106:

որ Կախ ավանում ապրում էին գաղթական հայեր, և այնտեղի քահանա Հովհաննեսը եկեղեցու բակում գտնվող մի սենյակում երեխաներին ուսուցանում էր մայրենի լեզու: Նա Թիֆլիսիսց ստացել էր դասագրքեր և գրենական պիտույքներ: Արխիվային մի այլ փաստաթուղթ վկայում է, որ 90-ական թվականների սկզբներին գյուղում գործել է ծխական դպրոց: Այն փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ.:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, 82 աշակերտ, որոնցից 24-ը՝ աղջիկ: Դպրոցն ուներ 2 ուսուցիչ՝ Սարգիս և Մարիամ Իսրայելյան ամուսինները, որոնք ավարտել էին Շուշիի թեմական դպրոցը և երկու տարի ուսուցչություն արել Արցախի թեմի դպրոցներում[16]:

Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և գյուղի հասարակության միջոցներով:

11. Կախ գյուղի հայկական օրիորդաց Ս. Մարիամյան դպրոցը

Ս. Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալների համաձայն, 1894թ. հունվարին Կախ գյուղի հասարակության որոշմամբ բացվել է այդ գյուղի Ս. Մարիամյան օրիորդաց ծխական դպրոցը, որտեղ սովորում էր 15 աղջիկ: Երկու տարի հետո դպրոցը փակվել է կառավարության կողմից և վերաբացվել 1906թ.՝ տեղի արական դպրոցին միացած: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, որից 24-ը՝ աղջիկ: Դպրոցը պահվել է աշակերտների ուսման վարձով, գյուղի հասարակության միջոցներով[17]:

12. Կենդոկ (Քենդոկ) գյուղի դպրոցը

Արխիվային փաստաթղթերում նշվում է, որ Արեշ գավառի (Նուխիի գավառի մեջ էր մտնում) Կենդոկ գյուղում եկեղեցական-ծխական դպրոց է բացվել XIX դարի 80-ական թվականներին: Սովորում էր 20 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1906թ.: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 64 աշակերտ, որից 7-ը՝ աղջիկ: Ուսուցիչն էր Վահրամ Վարդապետյանը՝ Երևանի թեմական դպրոցի շրջանավարտ: Տարեկան ստանում էր 420ռ.: Դպրոցը պահվում էր Նուխիի Մշակութային միության նպաստով (տարեկան 250 ռ.) և աշակերտների ուսման վարձով[18]:

13. Հավարիկ գյուղի դպրոցը

Նուխիի փոխանորդ Արիստակես վարդապետ Սեդրակյանի՝ Ս. Էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշվում է, որ Արեշ գավառի հայկական գյուղերում 1870թ. կազմվել է դպրոցական ընկերություն, որը որոշել էր Հավարիկ գյուղում բացել եկեղեցական-ծխական դպրոց՝ ընդգրկելով նրանում հարևան գյուղերի երեխաներին: Նույն տարում էլ բացվում է եկեղեցական-ծխական դպրոց՝ 15 աշակերտով:

XIX դարի 80-ական թվականների կեսերին այդ դպրոցն ունեցել է 1 բաժանմունք, 25 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել՝ 1906թ. աշնանը: Նորաբաց միդասյա արական դպրոցն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր Արեշ գավառի հասարակության միջոցներով, Նուխիի Մշակութային ընկերության նպաստով և, մասամբ, աշակերտների ուսման վարձով[19]:

---

16. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 43, թ. 6:
17. Նույն տեղում, ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 52, գ. 78, թ. 43:
18. «Արարատ», 1870, էջ 244-245: «Մեղու Հայաստանի», 1885, թ. 7:
19. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 265, թ. 16, գ. 543, թ. 10-22:

14. Ղայաբաշի գյուղի դպրոցը

Էջմիածնի Սինոդի պաշտոնական տվյալների համաձայն, Նուխիի հաջորդության Արեշ գավառակի հայաբնակ Ղայաբաշի գյուղը եղել է ժամանակի ամենախոշոր բնակավայրերից մեկը: XIX դարի 70-ական թվականներին նշվել է, որ այն «բազմամարդ գյուղ է»: 1915թ. այդ գյուղն ունեցել է 3168 բնակիչ[20]: Այն գտնվել է շրջակա մի շարք հայկական գյուղերի կենտրոնում:

Արխիվային փաստաթղթերում նշվում է, որ այդ գյուղի դպրոցը գործել է դեռևս 1860-ական թվականներին, որտեղ սովորում էր 20 աշակերտ: 1974-75 ուստարում դպրոցում սովորում էր 35 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ, իսկ 1888-89 ուստարում սովորում էր 59 աշակերտ, այն կոչվել է «Ս. Ներսիսյան տղայոց միդասյա ուսումնարան»: 1891-ին գործել է որպես միդասյա արական դպրոց: 1896թ. փակվել է և վերաբացվել 1906թ.:

Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 2 բաժանմունք, 45 աշակերտ, որից 14-ը՝ աղջիկ: Ուսուցչուհին էր Սիրանուշ Պապովյանը, որն ավարտել էր Թիֆլիսի գիմնազիան և ուսուցչություն արել հայոց ծխական դպրոցներում: Տարեկան ստանում էր 400ռ.: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով և Նուխիի Մշակութային ընկերության նպաստով[21]:

15. Ճալեթ վանքի՝ Ապաճալեթ գյուղի դպրոցը

Ա. Երիցյանը Ներսիսյան դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում նշում է, որ դեռևս 1818թ. Նուխիի գավառի Ճալեթ գյուղում բացվել է եկեղեցական դպրոց՝ 15 աշակերտով: Հետագա տարիներին անընդմեջ այդ դպրոցը գործել է:

1874-75 ուստարում Ճալեթ գյուղի հասարակության խնդրանքով (էջմիածնի Սինոդի թույլտվությամբ) բացվել է ծխական դպրոց: Հետաքրքիր է, որ այդ դպրոցն անխափան (կառավարությունից գաղտնի) գործել է մինչև 1906թ.: 1907-1908 ուստարում բացվել է միդասյա երկսեռ դպրոց՝ 2 բաժանմունքով: Սովորում էր 70 աշակերտ՝ 60 տղա, 10 աղջիկ: Ուսուցիչն էր Բալաբեկ Տեր-Ղուկասյանը, որն ավարտել էր Նուխիի քաղաքային դպրոցը և 28 տարի ուսուցչություն արել հայկական դպրոցներում: Տարեկան ստանում էր 400ռ.[22]:

Դպրոցը պահվում էր եկեղեցու, հասարակության միջոցներով և աշակերտների ուսման վարձով:

16. Նիժ (Նիքս) գյուղի դպրոցը

Ա. Երիցյանը Ներսիսյան դպրոցի պատմությանը[23] նվիրված իր գրքում նույնպես նշում է, որ 1818թ. Նուխիի գավառի Նիժ գյուղում գործել է եկեղեցական դպրոց՝ 15 աշակերտով: 1868թ. Արիստակես վարդապետի և տեղացի Գալուստ Յուզբաշյանի ջանքերով բացվել է ծխական դպրոց, որտեղ սովորում էր 20 աշակերտ: 1888թ. դպրոցը կոչվել է Նիժ գյուղի Ս. Մեսրոպյան տղայոց միդասյա ուսումնարան, սովորում էր 25 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. աշնանը: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, 287 աշակերտ, որից 67-ը՝ աղջիկ: Երկդասյա դպրոցում դասավանդում էին ավագ ուսուցիչ Վահան Նիկողոսյանը և ուսուցիչներ Արտաշես Ջամարյանը, Շուշանիկ Շահազիզյանը և Սոֆյա Սայիյանը: 1874թ. դպ-

20. Նույն տեղում:
21. Նույն տեղում, ֆ. 56, գ. 23, գ. 53, գ. 149:
22. Ա. Երիցյան, Պատմ. 75-ամյա Ներսիսյան դպրոցի, 1898, էջ 107:
23. Նույն տեղում, էջ 271:

ոցն ունեցել է 250 աշակերտ, 7 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր Նուխիի Մշակութային ընկերության նպաստով և աշակերտների ուսման վարձով[24]:

17. Նիժ գյուղի օրիորդաց դպրոցը

Արխիվային փաստաթղթերում նշվում է, որ Նուխիի գավառի Նիժ գյուղի հասարակությունը հոգ էր տանում նաև իգական դպրոց բացելու մասին: Այդ նկատառումով էլ խնդրանքով դիմել էին կաթողիկոսին և Շուշիի թեմի առաջնորդին՝ թույլատրելու բացել հիշյալ դպրոցը: 1895թ. օգոստոսին կաթողիկոսի թույլտվությամբ Նիժ գյուղում բացվել է աղջիկների դպրոցը, որտեղ սովորում էր 60 աշակերտուհի, դասավանդում էր մեկ ուսուցիչ:

Երբ 90-ական թվականների կեսերին փակվեցին հայկական դպրոցները, այս դպրոցը գաղտնի գործել է, իսկ 1906-1907 ուստարում միացել է երկդասյա երկսեռ դպրոցին[25]:

18. Վարդաշեն գյուղի արական դպրոցը

Հայ եկեղեցական-ծխական հնագույն դպրոցներից մեկն է: Ա. Երիցյանը Ներսիսյան դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում նշում է, որ 1818թ. Վարդաշեն գյուղի եկեղեցուն կից բացվել է դպրոց՝ 15 աշակերտով, դասավանդում էր 1 քահանա: Ուսուցանում էր գրել, կարդալ, հայոց լեզու և կրոն[26]:

XIX դարի 60-ական թվականների վերջերին ծխական դպրոցների կանոնադրության (1868) ընդունումից հետո այստեղ բացվել է ծխական դպրոց, որտեղ սովորում էր 37 աշակերտ, դասավանդում էր 1 ուսուցիչ: «Դպրոց» ամսագրի տվյալներով 1874-75 ուստարում հիշյալ արական դպրոցում սովորում էր 78 աշակերտ, դասավանդում 2 ուսուցիչ: Արխիվային մի այլ փաստաթղթում նշվում է, որ 1818թ. Վարդաշեն գյուղում բացվել է միդասյա երկսեռ դպրոց՝ 65 աշակերտով, որոնցից 9-ը՝ աղջիկ: 1886թ. դպրոցը կոչվել է Ս. Սահակյանի անունով: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. աշնանը: 1907-1908 ուստարում միդասյա երկսեռ դպրոցն ուներ 3 բաժանմունք, 66 աշակերտ, որոնցից 42-ը՝ աղջիկ: Դասավանդում էր 2 ուսուցիչ՝ Քրիսափոր Տեր-Աբրահամյանը և Մարիամ Զաքարյանը: Նրանցից առաջինը Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ էր, երկրորդն ավարտել էր Թիֆլիսի գիմնազիան: Յուրաքանչյուրն ստանում էր 450 ռուբլի: Դպրոցը պահվում էր գյուղի հասարակության միջոցներով, ուխտատեղի հասույթով և աշակերտների ուսման վարձով: Դպրոցը պահպանվել է մինչև խորհրդային շրջանը[27]:

19. Վարդաշեն գյուղի օրիորդաց դպրոցը

Ուսումնատենչ վարդաշենցիները չեն բավարարվել միայն արական դպրոցով: Գրիգորիս վարդապետի հորդորանքով և օգնությամբ 1878թ. վարդաշենցիները հանգանակում են, հավաքում որոշակի գումար և բացում իգական դպրոց, որն այն ժամանակվա հայ գյուղի համար բացառիկ երևույթ էր: Մի քանի տարի իր գոյությունը պահպանելուց հետո իգական դպրոցը 1884թ. միացել է արական դպրոցին և Վարդաշենում սկսել է գործել միդասյա երկսեռ դպրոց, որտեղ սովորում էր 35 աշակերտ, որոնցից 9-ը՝ աղջիկ: Հետագայում վարդաշենցիների խնդրանքով կաթողիկոսը թույլատրում է նորից բացել իգական դպրոց, որը գործել է միայն 1895-1896 ուստարում:

---

24. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 43, թ. 9, գ. 50, թ. 63, գ. 199, թ. 17:
25. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 543, թ. 30, «Դպրոց», 1875, թ. 4:
26. Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 272-273:
27. «Արարատ», 1878, էջ 460:

Հայկական դպրոցների վերաբացումից հետո՝ 1907-1908 ուստարում Վարդաշեն գյուղում բացվել է երկսեռ դպրոց[28]:

20. Չանաղբուլաղ գյուղի դպրոցը

Արխիվային փաստաթղթերում Չանաղբուլաղ հայաբնակ գյուղը ցույց է տրված ինչպես Նուխիի, այնպես էլ՝ Արեշի գավառներում: Սինոդին ներկայացրած Արիստակես վարդապետի զեկուցագրում նշվում է, որ 1878թ. հիշյալ գյուղում գործում էր ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: Դպրոցը գործել է նաև 80-ական թվականներին՝ ունենալով 30 աշակերտ: Հայկական մյուս դպրոցների հետ այս դպրոցը նույպես փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. հոկտեմբերին: Նորաբաց միդասյա արական դպրոցն ուներ 1 բաժանմունք, 35 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[29]:

21. Նեմեթապատ (Նեմեթաբադ) գյուղի դպրոցը

Արեշի գավառակի հայկական Նեմեթապատ գյուղի ծխական դպրոցը բացվել է 1878թ., սովորում էր 20 աշակերտ, դասավանդում մեկ ուսուցիչ:

Դպրոցը գործել է նաև հետագա տարիներին՝ ունենալով աշակերտների տարբեր խմբաքանակներ. 1884-85 ուստարում դպրոցն ուներ 25 աշակերտ, 1885թ. փակվել է և վերաբացվել 1886թ., իսկ այդ ժամանակ սովորում էր 35 աշակերտ: Դպրոցը նորից փակվել է 1896թ. և վերաբացվել՝ 1906թ.: Նորաբաց միդասյա արական դպրոցն ուներ 1 բաժանմունք, 40 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր հիմնականում աշակերտների ուսման վարձով[30]:

22. Մեջլիս գյուղի (հայկական) ծխական դպրոցը

Արխիվային փաստաթղթերում նշվում է, որ 1873թ. Նուխիի գավառի Մեջլիս հայկական (կա նաև թուրքական գյուղ) գյուղում բացվել է ծխական դպրոց՝ 15 աշակերտով: 80-ական թվականներին դպրոցն ուներ 25 աշակերտ, 1 ուսուցիչ: 1896թ. դպրոցը փակվել է և վերաբացվել 1906թ.: Նորաբաց միդասյա դպրոցն ուներ 1 բաժանմունք, 5 աշակերտ և 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[31]:

23. Մարգուզ գյուղի (հայկական) ծխական դպրոցը

Արեշի գավառակի Մարգուզ գյուղում եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է XIX դարի 80-ական թվականներին: 1889-90 ուստարում դպրոցն ուներ 25 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը փակվել է 1896-ին և վերաբացվել 1906թ.: 1907-1908 ուստարում միդասյա դպրոցում սովորում էր 45 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[32]:

24. Սուլթան-Նուխի գյուղի դպրոցը

1886թ. հոկտեմբերին Սուլթան-Նուխի հայկական գյուղում բացվել է միդասյա արական ծխական դպրոց՝ 20 աշակերտով, դասավանդում էր 1 ուսուցիչ: 1888-89 ուստարում դպրոցում սովորում էր 31 աշակերտ: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1906թ. աշնանը: Նորաբաց միդասյա երկսեռ դպրոցն ուներ 1 բա-

---

28. ՀՀ ԱԱ, ֆ. 56, գ. 22, թ. 154, «Արարատ», 1895, թ. 9, էջ 365:
29. Նույն տեղում, ֆ. 56, գ. 43, թ. 9, «Հրահանգ. հայոց. եկեղ. ծխակ. դպրոցների», էջ 271:
30. «Նոր դպրոց», 1909, թ. 7:
31. Նույն տեղում:
32. ՀԱԱ, ֆ. 56, գ. 43, թ. 8, «Դպրոց», 1874-75 թթ., էջ 105:

ժանմունք, 35 աշակերտ, 1 ուսուցիչ: Դպրոցը պահվում էր աշակերտների ուսման վարձով[33]:

Եզրափակելով պատմական Արցախի առանձին դպրոցների վերաբերյալ համառոտ տեղեկությունները, պետք է ասել, որ նրա տարբեր տիպի դպրոցներում ուսուցանվել են (մի տեղ ավելի շատ, մյուսում՝ ավելի քիչ քանակությամբ) հետևյալ առարկաները՝ կրոն, Ս. Գիրք (կրոնական զանազան գիտելիքներ), հայոց լեզու, գրականություն, քերականություն, իմաստասիրական գրքերի ուսումնասիրում ու մեկնություններ, պատմություն, փիլիսոփայություն, թվաբանություն, աշխարհագրություն, նկարչություն, վայելչագրություն և այլ առարկաներ, իսկ օրիորդաց դպրոցներում՝ ձեռագործ (այդ մասին մանրամասն նշվել է աշխատության 4-րդ և 5-րդ գլուխներում):

33. Նույն տեղում, գ. 199, թ. 17, նաև տե՛ս «Մուրճ», 1890, թ. 6:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ ժողովրդի պատմությունը, հիրավի, լի է հերոսական էջերով, իսկ նրա սխրանքներով, ազատագրական պայքարով ու մեծ ձեռքբերումներով, մաքառումներով ու ողբերգական էջերով լեցուն անցած ուղին վկայում է նրա զարմանահրաշ կենսունակության, արարելու, ստեղծագործելու անկոտրում ոգու ու կամքի մասին:

Հայոց պատմությունը հարուստ է արժանահիշատակ իրադարձություններով, որոնց մեջ առանձնանում է հայ գրերի գյուտը, որը 405 թվականին ստեղծվեց հայ մշակույթի մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի կողմից՝ հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի և հայոց արքա Վռամշապուհի օգնությամբ ու առաջարկությամբ: Գրերի գյուտը երկրում առաջ բերեց մշակութային հզոր վերելք, ստեղծվեց դպրոցների լայն ցանց: Մշակութային այդ հզոր շարժման մեջ իրենց արժանի տեղն ունեցան Հայոց Արևելից կողմանք՝ Մեծ Հայքի թագավորության Արցախ և Ուտիք նահանգները:

Արցախը, լինելով արևելահայ հատվածի ամենանշանավոր նահանգներից մեկը, կարևոր դեր է կատարել հայ ժողովրդի կյանքում՝ նրա ամբողջ պատմության ընթացքում: Արցախահայությունը կիսել է ողջ հայ ժողովրդի դժվարին ճակատագիրը, իր ավանդը ներդրել նրա նյութական և հոգևոր մշակույթի, կրթական համակարգի ստեղծման ու զարգացման գործում:

Հայոց աշխարհի վեհանիստ անկյուններից մեկը՝ Արցախը, գոյատևել է շնորհիվ իր ազատատենչ զավակների, դպրության, հոգևոր գանձերի ու կրթական գործի նվիրյալների:

Արցախ աշխարհում հայ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը հայոց լեզվով հիմնադրվում և սկսում է զարգանալ 5-րդ դարից՝ հայ գրերի գյուտով, որը եղավ հայ ժողովրդի բազմադարյա պատմության խոշոր իրադարձություններից մեկը: Հայ ժողովրդի այս հատվածում՝ Արցախում, հայեցի կրթություն տվող դպրոցը նոր նշանակություն է ստանում, դառնում երկրամասի ժողովրդի ակնառու կռվաններից մեկը: Սկիզբ է առնում հայագիր գրականությունը, նախ, կրոնական, ապա՝ աշխարհիկ մատենագրական բովանդակությամբ: Եվ, իրավմամբ, զուր չէ, որ ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանը 5-րդ դարը համարում է հայեցի կրթության, մատենագրության աննախընթաց զարգացման «Ոսկյա դար», որը սկիզբ դրեց Գրիգոր Լուսավորիչի տոհմի վերին լուսավորիչը՝ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Իր բազմադարյա գոյության ընթացքում արցախահայ դպրոցն անցել է մեծ, բայց և դժվար ու բարդ ճանապարհ: Սոցիալ-տնտեսական և քաղաքական անբարենպաստ պայմանները չէին կարող իրենց կնիքը չդնել հայ դպրոցի վրա: Եվ, չնայած այդ ամենին, հայ ժողովրդի պատմության տարբեր փուլերում դպրոցը շարունակել է ավելի կամ պակաս չափով ծառայել հայ ժողովրդի մշակութա-լուսավորական կարիքներին, նրա ազգապահպանման գործին:

Արցախի ժողովրդին միշտ բնորոշ է եղել ազատասիրությունն ու լավատեսությունը: Այդ բանի համար նա մեծ չափով պարտական է նաև գրին, գրականությանը և այդ գիրն ու գրականությունը ժողովրդի մեջ պատվաստող դպրոցին և ուսուցչին:

Այդ ամենից հետո կարող ենք անվարան եզրակացնել, որ Արցախ աշխարհի ողջ տնտեսական-հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքն իր առանձնահատկություններով հանդերձ զարգացել է «մեկ ազգ, մեկ մշակույթ և մեկ հավատք» կարգախոսով՝ հավաստելով Արցախ աշխարհի միասնությունն ու պատկանելությունը Մայր Հայաստանին:

VII դարի հայ մատենագրության, մշակույթի ականավոր ներկայացուցիչ Մովսես Կաղանկատվացին «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատության մեջ խանդավառությամբ է նկարագրում, որ V դարի սկզբին լուսավորչական նպատակներով Հայոց Արևելից կողմանք եկավ Մեսրոպ Մաշտոցն իր մի խումբ աշակերտներով: Հաստատվելով Ուտյաց աշխարհի Գիտ բնակավայրին մերձակա Ճախճավատ և Լուսաբույր վայրերում՝ Մաշտոցը քրիստոնեական վարդապետությունն ամենուրեք քարոզում էր հայերենով, արդեն գործող դպրոցներում, մասնավորապես՝ Ամարասի եպիսկոպոսատան դպրատանը, մտցնում է հայերեն ուսուցում, հիմնում մի շարք հայկական դպրոցներ՝ զարկ տալով երկրամասի մշակութային վերելքին: Մաշտոցի և նրա աշակերտների գործունեությունը հիմնականում ծավալվել է Արցախի Մեծարանք, Մեծկվանք, Հաբանդ գավառներում՝ Ուտիքի Գարդմանում:

Արցախում լուսավորչական, մշակութային, դպրոցական կյանքն աշխույժ վերելք է ունենում Արցախ-Ուտիքյան հայաշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտի ժամանակաշրջանում, 5-րդ դարի վերջերին: Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագանի օրոք դպրոցական ցանցն ավելի է ընդարձակվում: Աղվենի՝ նրա օրոք ընդունված օրենքներից մեկում վկայվում է, որ երկրամասի եկեղեցիները հանդիսացել են նաև դպրոցներ, իսկ եկեղեցիներն ունեցել են աշակերտներ: Բացի եկեղեցուն կից գործող դպրոցներից, հիմնվել են նաև գյուղական դպրոցներ, որոնց ծախսերը հոգում էին գյուղական համայնքները: Ինչպես հավաստում է Կաղանկատվացին, Վաչագան Բարեպաշտ թագավորը մեծապես հետաքրքրվում էր ուսումնական գործով՝ հաճախակի այցելելով դպրոցները և ունկնդրելով աշակերտներին:

Չնայած օտարերկրյա զավթիչների հաճախակի ավերիչ արշավանքներին, Արցախը, Լեռնային Ուտիքը, շնորհիվ իրենց անառիկ դիրքի, Սյունիքի պես եղել են Հայաստանում հայ դպրոցական կյանքի պահպանման ու զարգացման առավել ապահով վայրերից: Անգամ Ամարասը, որն իր տեղադրությամբ և դիրքով համեմատաբար մատչելի է թշնամուն, եղել է մշակութային կարևոր կենտրոն, որտեղ հմուտ հոգևոր գործիչները կրթում էին ուսումնատենչ պատանիներին, ստեղծում մեծարժեք գործեր, արտագրում անցյալի մտքի արժեքավոր գործերը:

V-VI դարերում հոգևոր եկեղեցական դպրատներին զուգահեռ, որոնց մի մասը ժամանակի ընթացքում վերածվեց բարձր տիպի դպրոցների, Արցախում և Ուտիքում այդ կրթական հաստատությունները գործում էին թե հասարակական և թե մասնավոր դպրոցների կարգավիճակով: Արցախի և Ուտիքի բոլոր հայտնի դպրոցները մինչև XIX դարի վերջերը հիմնականում գործել են եկեղեցիներին կից:

Արաբական տիրապետության շրջանում կրթության գործը Հայաստանում և նրա Արցախյան հատվածում ծանր հարված կրեց, սակայն Հայաստանի թագավորության հիմնադրումով վիճակն արմատապես փոխվեց: Տնտեսության, առևտրի բուռն զարգացումը նպաստեց երկրամասի մշակութային կյանքի վերելքին: Ծաղկում ապրեցին Ամարասի, Դադի վանքի, Գտչավանքի և այլ եկեղեցիներին կից գործող դպրոցները, զարգացան ճարտարապետությունն ու արվեստները, պատմագիտությունը, իմաստասիրությունը, իրավունքը, արվեստը և բնական գիտությունները: Ընդլայնվեց գրչության կենտրոնների ցանցը: Իհարկե, պատմաշրջանում արշավանքների հետևանքով առաջացած մշակութային վերելքն զգալի նահանջից հետո վերստին զարթոնք ունեցավ հատկապես X դարում, կապված IX դարավերջին Հայաստանում Բագրատունյաց թագավորության հաստատման հետ:

Արցախի դպրոցական կյանքում մեծ աշխույժություն էր նկատվում հատկա-

պես X դարում, որը հայտնի է իր համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանով: Եվ եթե V-IX դարերում Արցախում աշխարհիկ դպրոցը ետին պլան էր մղվել կամ որոշ չափով դադարել է գործելուց, ու զգալիորեն թուլացել էր ուսուցման և կրթության աշխարհիկ ոգին, ապա IX դարավերջին, Բագրատունյաց թագավորության հաստատումից հետո, ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Արցախում, հիմնվել են զգալի թվով ուսումնակրթական օջախներ, մասնավոր դպրոցներ, մի խոսքով՝ ստեղծվել են բարենպաստ պայմաններ դպրոցական ցանցի ընդլայնման և աշխարհիկ կրթության տարածման համար: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ հոգևոր կրթության հիմքերը խարխլվել են: Ոչ, այն բավականին կենսահաստատ էր և այն էլ հատկապես վանական դպրոցներում: IX դարի վերջին և հատկապես X դարի սկզբին Արցախի դպրոցներում զգալի փոփոխության է ենթարկվել կրթության բնագավառը. մինչև այդ տիրապետող ներքին (հոգևոր) գիտություններից զատ սկսում են զգալիորեն մեծ տեղ հատկացնել նաև արտաքին գիտություններին՝ հունա-հռոմեական անտիկ դասական գրականությանը, փիլիսոփայությանը, տրամաբանությանը (հունական և հայկական), քերականությանը, հասարակական այլ առարկաներին, բնագիտությանը, բժշկագիտությանը, մաթեմատիկային, տոմարագիտությանը և այլն:

Հետագա ժամանակներում՝ մինչև XIX դարը, չնայած տնտեսական ու քաղաքական ծանր կացությանը (թաթար-մոնղոլների, թուրքմենական վայրագ ցեղերի, թուրք-պարսկական կործանարար արշավանքների ժամանակ ինչ փորձանք ասես, որ չի եկել Արցախի ժողովրդի գլխին), արցախահայ դպրոցը չի դադարել իր գոյությունն ու աշխատանքը: Երկրամասի ժողովուրդը, նրա առաջադեմ մտավորականությունն ամեն ինչ անում էին կրթական օջախները պահելու համար: Արցախում, երբեմն որոշ ընդհատումներով, շարունակել են գործել Գանձասարի, Դադի, Գտիչ, Ս.Հակոբի, Երից Մանկանց վանքերի, Շուշիի եկեղեցիներին կից գործող դպրոցները: Ամենածանր պայմաններում անգամ այդ կրթական օջախները կենաց ու մահու գոտեմարտում մաքառում էին ու պահում իրենց կենսահաստատությունը մինչև XIX դար՝ հայ նոր դպրոցի կազմավորման շրջանը:

Հարկ է նշել, որ բնութագրվող ժամանակաշրջանում (V-XVIII դարերում) Արցախ աշխարհում ժողովրդական լուսավորությունը, հատկապես դպրոցական գործը, դառնում է հայ նշանավոր գործիչների, մանկավարժների կենսական խնդիրներից մեկը: Կրթության զարգացման բնագավառում բացառիկ դեր է վերապահվում այդ շրջանի հոգևոր-մշակութային գործիչներ՝ մեծ ուսուցչապետ Ամպակի (եղել է Վաչագան արքայի ուսուցիչը), Վաչագանի թագավորության շրջանում Շուփաղիշ կաթողիկոսին, հայկական վերածննդի դարաշրջանի խոշորագույն գործիչ, արցախցի մեծ գիտնական Հովհաննես Սարկավագ իմաստասերին, իրավագետ և մանկավարժ Մխիթար Գոշին, Գանձասարի հոգևոր-մշակութային, հասարակական, քաղաքական ականավոր գործիչ Եսայի Հասան Ջալալյանին և շատ ուրիշների: Նրանց հետ միասին, Արցախ աշխարհի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում և դպրոցաշինության ասպարեզում մեծ դեր են խաղացել կին լուսավորիչ մանկավարժներ՝ Խաչենի իշխանուհի Խորիշահը, Վերին Խաչենի կամ Ծարի պետ Հասանի կինը՝ իշխանուհի Դոֆին, Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի կին՝ իշխանուհի Արզու խաթունը (պատմաշրջանում հայտնի էր որպես խոշոր մշակութային գործիչ և դպրոցաշինարար) և ուրիշներ:

Հայ ժողովրդի պատմության այդ շրջանում և XIX դարում պատմական Արցախը՝ որպես Հայոց աշխարհի անքակտելի պատմամշակութային, աշխարհագրական հատված և վարչատնտեսական միավոր, կրում էր հոգևոր-մշակութային և, մասնավորապես, դպրության զարգացման նույն միտումները, ուղղությունները և

ազգային ընդհանուր առանձնահատկությունները:

Արցախի հասարակական, քաղաքական, մշակութային և դպրոցական կյանքում զգալի տեղաշարժ կատարվեց հատկապես XIX դարում, որը եղել է մշակույթի և գիտության մի շարք բնագավառների, այդ թվում նաև կրթական համակարգի զարգացման մի հարուստ շրջան: Ռուսաստանին միանալուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Արցախի տնտեսական, մշակութային, կրթական համակարգի զարգացման համար, երբ ժողովրդական մանկավարժության գաղափարները լայն տարածում էին գտել Ռուսաստանի տարբեր վայրերում գործող հայ կրթօջախներում, այդ թվում նաև Արցախի թեմի հայկական դպրոցներում, առաջադրելով նոր պահանջներ, նոր խնդիրներ:

Արցախի հոգևոր-մշակութային, դպրոցական կյանքում աշխույժ վերելք է նկատվում XIX դարի 20-ական թվականներին՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Հայկական դպրոցները կառավարվում էին Ս.Էջմիածնի Սինոդի կողմից, որը դարձել էր դպրոցների իրավատերն ու կազմակերպիչը: Անշուշտ, բոլոր ժամանակներում չափազանց մեծ է եղել հայ եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի քաղաքական, հոգևոր, մշակութային կյանքում: Հայ եկեղեցին է եղել ոչ միայն միակ լուսավոր օջախը, որին վստահվել է հայ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, այլև դպրոցական կյանքի կազմակերպման շարժիչ ուժը: Այս տեսանկյունով էլ աշխատության 2-րդ գլխում համառոտակի ներկայացվում է XIX դարի առաջին կեսին Արցախի թեմի Հայ Առաքելական եկեղեցու դերը («Հայ եկեղեցին և դպրոցը» բաժնում) երկրամասի դպրոցաշինության ասպարեզում: Համոզիչ փաստերի վերլուծությունները և եզրակացությունները թույլ են տալիս համակողմանի գնահատել այն դերը, որը հայ եկեղեցին և նրա նշանավոր գործիչները ջերմեռանդորեն կատարել են Արցախի թեմում՝ XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակներում (այդ մասին տես 4-5-րդ գլուխը):

Այնուամենայնիվ, չի կարելի ժխտել այն ավանդը, որ հայ եկեղեցիներն ու վանքերը, ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Արցախ աշխարհում ներդրել են հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, լեզուն, հավատքը, մշակույթն ու կրթական գործը պահպանելու գործում:

XIX դարի 20-ական թվականների վերջին Արցախում սկզբնավորվում ու թափ է առնում ուսումնարանների բացման, ինչպես նաև մշակութային-լուսավորչական ու տպագրական գործընթացը: Շվեյցարիայի Բազել քաղաքի քարոզչական ընկերության գործիչները, գալով Շուշի, հիմնում են ուսումնարան (1827թ.), միաժամանակ, հայ մշակույթի գործիչների (Պողոս Վարդապետ Ղարաբաղցի, Հովսեփ Արցախեցի), Շուշիի հայ հասարակության մյուս ներկայացուցիչների աջակցությամբ սկիզբ են դնում նաև տպագրական գործին: Երկրամասի մշակութային զարթոնքի նախանձախնդիր արցախահայ մտավորականությունը և պատմաշրջանի հոգևոր-մշակութային գործիչները մեծ ջանքեր են գործադրում դպրոցաշինության, տպագրության ասպարեզում:

Դարի 30-ական թվականներին Արցախի թեմում դպրոցական ցանցն ընդլայնվեց հատկապես այն բանից հետո, երբ 1836թ. մարտի 11-ին ինքնակալության կողմից հաստատվեց «Հայ լուսավորչական հավատքի հոգևոր կառավարման կանոնադրությունը», որը հայտնի է «Պոլոժենիե» անվամբ: Այդ կանոնադրությամբ հայ լուսավորչական հասարակությունը բաժանվեց վեց թեմի՝ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Երևանի, Վրաստանի և Իմերեթիայի, Շիրվանի կամ Շամախու, Ղարաբաղի կամ Արցախի: Կանոնադրության համաձայն՝ Շուշին դառնում է թեմական առաջնորդանիստ քաղաք և հոգևոր կենտրոն՝ ինչպես Արցախի, այնպես էլ Նուխիի գավառի հայերի համար:

Հիշատակված կանոնադրությամբ իրավունք է տրվում բոլոր հայ թեմերում եկեղեցիներին կից հիմնել մեկական ծխական դպրոց, որը պետք էր բացվեր միայն հոգևոր իշխանության թույլտվությամբ: Կանոնադրությունը նախատեսում էր նաև բոլոր հայ թեմերում բացել հայկական բարձր տիպի (միջնակարգ մասնագիտական) դպրոցներ: Այսպես, 1838թ. հունիսի 22-ին Էջմիածնի Սինոդի որոշմամբ Շուշիում հիմնադրվում է Արցախի հայոց հոգևոր թեմական դպրոցը, որի պատմությունը հետագայում գրել է թեմականի շրջանավարտ, պատմաբան Լեոն:

Նույն կանոնադրության համաձայն Նուխիում բացվում է նաև ազգային հոգևոր ուսումնարան (1836թ.):

Դարի առաջին կեսին որոշակի փոփոխություններ են կատարվում դպրոցական գործի կառավարման համակարգում: Այսպես, օրինակ, 1829թ. օգոստոսի 2-ին ցարական կառավարության կողմից հրապարակվում է Անդրկովկասի համար առաջին պաշտոնական դպրոցական փաստաթուղթը՝ «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրությունը», որի համաձայն՝ Անդրկովկասի ուսումնական գործը և դպրոցական համակարգն իրենց կազմակերպական հիմունքներով, բովանդակությամբ պետք է մոտենային համառուսականին: Ըստ կանոնադրության՝ Անդրկովկասում գտնվող գավառային ուսումնարանները ենթարկվում էին Թիֆլիսի գիմնազիայի տնօրենին, իսկ վերջինս էլ իրեն ենթակա բոլոր ուսումնական հաստատություններով գտնվում էր տեղի գլխավոր ուսումնական իշխանության անմիջական իրավասության տակ:

Դպրոցական գործի ղեկավարման այս համակարգն Արցախի թեմում մասնակի փոփոխություններով շարունակվում է մինչև 1848թ., երբ Կովկասի փոխարքա Մ.Վորոնցովի նախաձեռնությամբ մշակվում է նախագիծ Կովկասի ուսումնական օկրուգ կազմակերպելու մասին: Այն կոչվում էր «Կանոնադրություն Կովկասյան ուսումնական օկրուգի և նրա ենթակա ուսումնական հաստատությունների մասին»: Այս կանոնադրության համաձայն՝ Շուշիի և Նուխիի դպրոցները ենթարկվում էին Շամախի-Դերբենդի տնօրինությանը՝ մինչև 1853թ., որից հետո դպրոցները գտնվում էին Թիֆլիսի տնօրինության ենթակայության տակ:

Անժխտելի է, որ ցարիզմի լուսավորչական-դպրոցական քաղաքականությունն Անդրկովկասում և Ռուսաստանի այլ ծայրամասերում նպատակ չէր դնում նպաստելու Անդրկովկասի ժողովուրդների լուսավորչական ու մշակութային վերելքին: Ցարիզմը նպատակ ուներ Անդրկովկասը վերջնականապես ենթարկել իրեն ոչ միայն տնտեսապես, այլև իր լուսավորչական քաղաքականությամբ: Ըստ այդմ էլ ստեղծվում են նոր դպրոցներ: Օրինակ, վերոհիշյալ կանոնադրությամբ նախատեսվում է Անդրկովկասում ունենալ մեկ գիմնազիա (Թիֆլիսում) և 20 պետական գավառային ուսումնարաններ: 1830թ. Շուշիում բացվում է պետական գավառային ուսումնարան, որն ուներ 127 աշակերտ, 15 ուսուցիչ, իսկ Նուխիում՝ 1831թ. (ուներ 110 աշակերտ, 12 ուսուցիչ): Գավառային ուսումնարաններում դասավանդումը հիմնականում տարվում էր ռուսերեն լեզվով: Ինչպես նշեցինք, եկեղեցական-ծխական դպրոցները մտնում էին Էջմիածնի Սինոդի իրավասության տակ, այդ թվում նաև թեմական դպրոցները:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ XIX դարի առաջին կեսին Արցախի թեմում (նաև Նուխիի գավառում) գործել են հետևյալ կարգի ուսումնական հաստատություններ.

1. ուսումնարան (1827թ.)
2. պետական գավառային ուսումնարան (1830թ.)
3. մասնավոր դպրոցներ (1820-1830թթ.)

4. թեմական դպրոց (Շուշի, 1838թ.)
5. եկեղեցական ծխական դպրոցներ (1836-1850թթ.)
6. Նուխիի գավառում՝ գավառային ուսումնարան (1831թ.), հոգևոր ուսումնարան (1836թ.), եկեղեցական ծխական և մասնավոր դպրոցներ:

Այսպիսով, XIX դարի առաջին կեսն արևելահայ, այդ թվում և Արցախի նոր դպրոցի կազմավորման այն շրջանն էր, երբ այն, զարնվելով ժողովրդական տգիտության ապառաժներին, սայթաքելով ու երերալով, ճանապարհ էր հարթում հետագայում ավելի հաստատուն ու որոշակի քայլեր անելու համար: Ինչպես ասվեց, քննարկվող ժամանակաշրջանում Արցախի թեմում նկատվում է դպրոցական գործի որոշակի աշխուժացում, սակայն երբ նոր էր սաղմնավորվում մեր ազգային նոր դպրոցը, չկար դպրոցական միասնական համակարգ, կանոնադրություն, չկար մի որոշակի մարմին, որն ի վիճակի լիներ կարգավորել և միօրինականություն մտցնել դպրոցների տիպերի ու բնույթի մեջ: Անկախ այս ամենից, Արցախի թեմում հայ դպրոցական գործը սկսել է առաջանալ, թեև շատ դանդաղ ու վարանոտ քայլերով: Դարի առաջին կեսն արցախահայ նոր դպրոցի կազմավորման այն շրջանն է, որը գնալով ավելի ուժեղ թափ է ստանում XIX դարի 2-րդ կեսին:

Քննարկվող ժամանակաշրջանում (1800-1850թթ.) երկրամասի ժողովրդի լուսավորության, մասնավորապես, դպրոցական գործը, մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցերը եղել են նաև Արցախի թեմի լուսավորիչ մանկավարժների, հոգևոր-մշակութային գործիչների ուշադրության կենտրոնում: Այսպես, դարի առաջին կեսին արցախահայ կյանքում հանդես են գալիս առաջին լուսավոր դեմքերը՝ Հովսեփ Արցախեցին, Պողոս Վարդապետ Ղարաբաղցին: Նրանք իրենց բեղուն գործունեությամբ զգալի դեր են խաղացել դպրոցի զարգացման, ուսուցչական կադրերի պատրաստման, դասագրքերի կազմման գործում: Այդ շրջանում վերոհիշյալ լուսավորիչների, Արցախի մտավորականության ստեղծագործական աշխատանքի, հոգևոր-մշակութային գործիչների գործունեության շնորհիվ երկրամասում լուսավորություն տարածելը, ժողովրդին ազգային ինքնագիտակցության բերելը, նրան գիր ու գրականությանը հաղորդակից դարձնելը հզոր խթաններ դարձան գրատպության զարգացման համար: Հրատարակչական գործը որոշակի բարելավվեց թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի ջերմեռանդ գործունեության շնորհիվ: Լեոն իրավացիորեն նշում է, որ անուրանալի է Բաղդասար միտրոպոլիտի ջանքերը դպրոցաշինության, գրատպության ասպարեզում, ինչպես նաև եկեղեցաշինության, մշակութային այլ ձեռնարկումների իրականացման ասպարեզում: Բաղդասար միտրոպոլիտից հետո Ջալալյան տոհմից Սարգիս Արքեպիսկոպոսը վարեց Արցախի թեմի առաջնորդի պաշտոնը և շարունակեց մշակութային ու շինարարական բարենորոգումները: Արցախի թեմի առաջնորդը բավականին մերձ էր ժողովրդին, նա մեծ նվիրվածություն էր դրսևորում կրթական գործի նկատմամբ, ձգտում էր բարելավել այն և վաստակում է դպրոցասերի համբավ:

Այսպիսով, XIX դարի առաջին կեսին Արցախի թեմի լուսավորիչները, հոգևոր մշակութային գործիչները ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական-քաղաքական բարդ պայմաններում կարողացան պահպանել արցախահայ մշակույթի ինքնատիպությունն ու միասնությունը, որը կարևոր դեր խաղաց ազգային համախմբման, առաջադիմական գաղափարների մշակման գործում: Այդ գործիչներն իրենց գործունեության բազմազանությամբ նախադրյալներ ստեղծեցին Արցախի թեմում մշակույթի, լուսավորության, կրթական գործի հետագա զարգացման համար:

Արցախի թեմի կրթական համակարգում զգալի փոփոխություններ են կատար-

վել հատկապես XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին երկու տասնամյակում:

Դարի երկրորդ կեսն ազգային դպրոցի գաղափարական հիմնավորման ու նախապատրաստության շրջան էր, որոնումների շրջան, երբ ազգանվեր հայ գործիչները ճանապարհ էին հարթում ազգային լուսավորության համար: Հայ ժողովուրդն ինքն էր զգում թարմացման ու տեղաշարժի պահանջ: Եթե XIX դարի առաջին կեսին հայ առաջադեմ գործիչներին մեծ ցավ էր պատճառում հասարակական անտարբերությունը, երբ լուսավորիչների գաղափարները բազմաթիվ խոչընդոտների էին հանդիպում, ապա այս շրջանում դրությունը զգալիորեն փոխվել էր:

Դարի երկրորդ կեսին, սկսած 60-ական թվականներից, արևելահայ իրականության մեջ ծավալվող լուսավորչական, մանկավարժական շարժումը շրջադարձային նշանակություն ունեցավ մեր ազգային դպրոցի կյանքում, առաջադրեց նոր պահանջներ, նոր խնդիրներ: Լուսավորչական շարժումն իր արձագանքներն ունեցավ նաև Արցախում: Հայ առաջավոր մտավորականությունը համակվեց այդ շարժման գաղափարներով և հետամուտ եղավ մշակելու հայկական դպրոցների նոր կանոնադրություններ: Լուրջ բաց էր այն, որ մինչև դարի 60-ական թվականները ծխական, թեմական դպրոցները չունեին մշակված միասնական կանոններ: Միայն 1867թ. Գևորգ Դ կաթողիկոսն էջմիածնի միաբաններից կազմում է մի հանձնաժողով, որը պիտի մշակեր դպրոցական ուսումնական կանոնադրությունը: Օրինակ, 1868թ. Սինոդի ուսումնական հանձնաժողովի կողմից ընդունված ծխական դպրոցների կանոնադրությունը որոշակի փոփոխություն մտցրեց դպրոցական կյանքում: Ու 1869թ. կաթողիկոսը հաստատեց նաև թեմական դպրոցների կանոնադրությունը, որը լուրջ փոփոխություններ մտցրեց դպրոցի ներքին կյանքում: Եթե մինչև այդ Արցախի թեմում ուշադրություն էր դարձվում միայն մասնավոր անձանց կողմից բացված խալֆայական (մասնավոր) տիպի դպրոցներին, ապա 1868թ. կանոնադրությունից հետո շատ գյուղերում բացվում են եկեղեցական-ծխական դպրոցներ, իսկ հասարակությունն էլ սկսում է հոգատարություն ցուցաբերել դպրոցական գործի նկատմամբ: Փաստորեն, XIX դարի 60-70-ական թվականները դառնում են Արցախում հայ դպրոցի, ազգային լուսավորության հետագա ժողովրդականացման շրջադարձային տարիներ:

Պատմաշրջանում Արցախի թեմում կրթական գործի զարգացման բնագավառում վճռական դեր խաղացին հատկապես Շուշիի թեմական դպրոցը, ռեալական ուսումնարանը, Նուխիի ազգային հոգևոր ուսումնարանը: Համակված ժողովրդին լուսավորելու գաղափարներով, ռուսական առաջավոր մշակույթի ազդեցությամբ հայ առաջավոր շատ մանկավարժներ ու մտավորականներ արգասավոր մանկավարժական գործունեություն են ծավալում Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում: Բարձր ենք գնահատում հատկապես Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի, Խ.Ստեփանեի, Սեդրակ Մանդինյանի, Ղազարոս Աղայանի, Համբարձում Առաքելյանի, Սիմեոն Հախումյանի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Լևոն Սարգսյանի և այլոց կարճատև, բայց բեղմնավոր մանկավարժական գործունեությունը Շուշիի թեմական դպրոցում, ռեալական ուսումնարանում, Նուխիի հայկական դպրոցներում: Անուրանալի է նրանց դերը ուսումնական ծրագրերի, դասագրքերի, կրթական համակարգի բարեփոխումների, ուսուցման ու դաստիարակության մեթոդների կատարելագործման, երկրամասի ծխական, իգական, միդասյա, երկդասյա դպրոցների համար ուսուցչական կադրերի պատրաստման գործում:

Աշխատության 4-րդ և 5-րդ գլուխներում մանրամասն ներկայացվում են

ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգն ու պայմանները, ուսուցչի պատրաստման հիմնախնդիրը, լուսավորչական շարժումը և կրթական գործի առաջադրած խնդիրները, կրթական գործի կազմակերպիչների, թեմական դպրոցի սաների լուսավորչական գործունեությունը, կին լուսավորիչ-մանկավարժների և այլ հիմնահարցերի պատմաքննական վերլուծությունը:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախում որոշ առաջընթաց է ապրում նաև կանանց կրթության գործը: Եթե մինչև XIX դարի 60-ական թվականները Շուշիում գործում էր միայն կուսանոցի միաբանուհի Եղիասաբեթ Սարգսյանցի մասնավոր դպրոցը, ապա 60-ական թվականներին Շուշիում բացվում է Մարիամյան օրիորդաց բարեկարգ դպրոցը (1864թ.), 70-ական թվականներին՝ Հռիփիսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը, XX դարի երկրորդ տասնամյակում (1913-1920թթ.)՝ Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց միջնակարգ դպրոցը: Իսկ գավառի գյուղերում բացվում են միդասյա իգական դպրոցներ: Նմամատիպ դպրոցներ են բացվում նաև Նուխիի գավառում:

Արցախի թեմում կանանց կրթության բնագավառում ևս անուրանալի է Պ.Պռոշյանի, Պ.Շանշյանի, Արիստակես վարդապետ Սեդրակյանի, Ղ.Աղայանի, Ս.Մանդինյանի, ինչպես նաև կին լուսավորիչ-մանկավարժներ Մարիամ Հախումյանի, Մարգարիտ Ալեքսանյանի, Սոֆյա Առաքելյանի, Եկատերինա Բահաթրյանի, Հեղինե Մալխասյանի և ուրիշների ներդրումը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի թեմի հոգևոր-մշակութային ազգանվեր գործիչների Գրիգոր Արքեպիսկոպոսի, Գարեգին Սաթունցյանի, Գարեգին Վարդապետի, Անանիա Եպ. Համազասպյանի, Աշոտ եպիսկոպոսի, Բենիկ Վարդապետի և ուրիշների գործունեության շնորհիվ երկրամասում ծավալվել է մշակութային, լուսավորչական, շինարարական լայն գործունեություն, վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ, ստեղծվել հարուստ ձեռագրատուն (Գանձասարում, Դադի վանքում, Ամարասում), դպրոցներ և մշակութային-լուսավորական այլ օջախներ (տես 5-րդ գլուխ):

Ինչպես տեսնում ենք, դպրոցական, մշակութային կյանքի աշխուժացումը, կրթական-լուսավորչական խնդիրների առաջ քաշումը խիստ ժամանակին էր և բխում էր երկրամասի ժողովրդի սոցիալական ու հասարակական պահանջներից: Սակայն, ժողովրդական լուսավորության ասպարեզում սկիզբ առած ցարական ռեակցիան ավելի ծանր դրսևորումներ ունեցավ հայ իրականության մեջ: Որքան բարձրանում էր հայ ազգաբնակչության ազգային ինքնագիտակցությունը, ուժեղանում ինքնուրույնության ձգտումը, այնքան ինքնակալությունն ավելի է ուժեղացնում հակամիջոցները հայկական դպրոցների նկատմամբ՝ սահմանելով խիստ հսկողություն: Դպրոցների և, ընդհանրապես, հայության դեմ ցարիզմի իրականացրած բացարձակ ռուսականացման քաղաքականությունը մեծ դժգոհություններ առաջացրեց ոչ միայն արևելահայերի, այլև արևմտահայերի շրջանում: Կ.Պոլսի «Արևելք» պարբերականն ահազանգող հոդվածներ էր տպագրում ցարիզմի քաղաքականության մասին: Կայսերահաստատ որոշումների (հայկական դպրոցների փակման, դպրոցական գույքի գրավման մասին) նկատմամբ քննադատական հոդվածներ էին տպագրվում նաև «Արարատ», «Մուրճ», «Մշակ» պարբերականներում: Տպագրվում էին նաև Արցախի գավառներից ստացված բազմաթիվ նամակներ, որոնցում արտահայտվում են հասարակության դժգոհությունները դպրոցների փակման կապակցությամբ և մեղադրվում էր ցարական կառավարությունը, որը, հաշվի չառնելով ժողովրդի շահերը, իրականացրեց իր ստոր քաղաքականությունը:

XIX դարի 90-ական թվականների կեսերին ծանր, վտանգներով լի կացություն

է ստեղծվում հայ հասարակության համար: Ցարական կառավարության խիստ ռեժիմն աննախընթաց աստիճանի հասցրեց հայահալած քաղաքականությունը, որը սկսել էր դեռևս 30-ական թվականներից: Անողոք բռնությունների ճանապարհով ոչ միայն փակվում էին հայկական դպրոցները, այլև խիստ հսկողության տակ էր դրվում հայ մամուլը, արգելվում էր մամուլում շոշափել ազգային հարցեր, հաղորդումներ զետեղել Արևմտյան Հայաստանի և, առհասարակ, հայկական հարցի մասին, ինչպես նաև նոր պարբերականների հրատարակությունը: Կովկասյան իշխանությունները հատուկ ուշադրություն դարձրին գրական հոբելյանների անցկացումն արգելելու վրա, այն բանից հետո, երբ հայ մամուլը 1901թ. լայնորեն նշեց Ղ. Ալիշանի մահը: Գոլիցինը եռանդուն հարձակում ծավալեց հատկապես հայության դեմ՝ զարգացրեց ու նոր աստիճանի հասցրեց գաղութային քաղաքականությունը:

Արխիվային նյութերի և սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա ներկայացվում է նաև Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ ցարական կառավարության քաղաքականությունը (1895-1905թթ.), կրոնագիտության դիրքերից արժևորվում է հայ եկեղեցու դերը 1903թ. եկեղեցական գույքի բռնագրավման հետ կապված հակացարական պայքարում: Հանգամանորեն ցույց է տրվում, որ հայ ժողովրդի հոգևոր արժանապատվությունը ոտնահարող այդ քաղաքականությունը բնականոն կերպով բացահայտ մերժողական վերաբերմունքի արժանացավ հայ ժողովրդի կողմից: Դրա վկայությունը դարձավ նաև Արցախի թեմում հակացարական համաժողովրդական շարժումը, որի գլուխ կանգնեցին երկրամասի Հայ Առաքելական Եկեղեցու նշանավոր գործիչները՝ հանձինս Ամենայն Հայոց կաթողիկոսի, որին ակտիվորեն աջակցեցին նաև հայ հասարակական-քաղաքական ուժերը:

Այսպիսով, հայերի դեմ ծավալված հալածանքի պայմաններում, ինչպես հայոց մնացած թեմերում, այնպես էլ Արցախի թեմում կրթական գործի զարգացման համար ստեղծվեցին անբարենպաստ պայմաններ: Կառավարության որոշմամբ տասը տարի շարունակ (1896-1905թթ.) փակվեցին հայկական դպրոցները: Ցարիզմի հայահալած քաղաքականության դեմ լայն ծավալ ստացավ համաժողովրդական շարժումը: Ռուսական առաջին հեղափոխության (1905թ.) վերելքը ստիպեց ցարիզմին վերանայել հայերի նկատմամբ երկու տասնամյակից ավելի տարվող իր քաղաքականությունը, և 1905թ. օգոստոսի 1-ին որոշում ընդունվեց 1903թ. հունիսի 12-ի օրենքի վերացման մասին: Որոշման համաձայն (հրամանի 3-րդ, 4-րդ կետեր) թույլատրվեց Կովկասյան փոխարքայության սահմաններում եկեղեցիներին ու վանքերին կից բացել եկեղեցական-ծխական դպրոցներ: Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով ժողովրդին ազդարարվեց հրամանագրի մասին՝ բացել հայկական դպրոցները:

XX դարի սկզբին հայերի նկատմամբ ցարական կառավարության վերաբերմունքի փոփոխումը, մասնավորապես, հայկական դպրոցների վերաբացումը մեծ աշխուժություն է առաջացնում հայ հասարակական և մշակութային կյանքում, այդ թվում նաև մանկավարժների շրջանում: Հայկական դպրոցների վերաբացումից հետո Արցախի թեմում մեծ փոփոխություն է կատարվում կրթական համակարգում: Նախկին եկեղեցական, ծխական, խալֆայական (մասնավոր) դպրոցների փոխարեն վերաբացվում են միդասյա, երկդասյա, արական, իգական և երկսեռ դպրոցներ: Հայկական դպրոցների վերաբերյալ նոր կանոնադրության ընդունումից (1906թ.) հետո Արցախի թեմում, այդ թվում նաև Նուխիի գավառում, ընդլայնվում է դպրոցական ցանցը: Կրկին հրավիրվում են ուսուցչական ժողովներ (1906-1908թթ.), լույս են տեսնում մանկավարժական նոր պարբերականներ:

Օրինակ, 1907թ. «Կովկասյան դպրոցների ուսուցչական միությունը», ունեցավ իր տպագիր օրգանը՝ «Նոր դպրոց» ամսագիրը, որտեղ հրատարակված հոդվածներում քննության են առնվում դպրոցի բնույթին, ղեկավարությանը, ուսուցման բովանդակությանը, ձևերին ու մեթոդներին վերաբերող բազմապիսի հարցեր, մշակվում են ծխական (1906թ.), հետո նաև թեմական (1907թ.) դպրոցների նոր ծրագրեր: Նոր ծավալ է ստանում դասագրքերի ստեղծման գործը: Այդ շարժմանը եռանդագին մասնակցում են ժամանակի նշանավոր հայ մանկավարժներն ու գրողները՝ Ղ.Աղայանը, Լ.Մանվելյանը, Իս.Հարությունյանը, Տ.Ռաշմաճյանը, Հ.Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Առ.Առաքելյանը, Վ.Փափազյանը, Ստ.Լիսիցյանը, Հ.Մանանդյանը և ուրիշներ:

Պատմաշրջանում Արցախի կրթական գործի զարգացմանը նպաստել են նաև Շուշիում տարբեր ժամանակահատվածներում լույս տեսած «Հայկական աշխարհ», «Քնար խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես» (XIX դարի երկրորդ կես), «Ղարաբաղ», «Պայքար», «Նեցուկ», «Նոր կյանք», «Փայլակ», «Ղարաբաղի սուրհանդակ» (XX դարի երկրորդ տասնամյակ) և այլ պարբերականներ: Դրանք լուսաբանել են ոչ միայն երկրի ներքին և արտաքին կյանքը, գավառի հոգսերը, այլև դպրոցի հետ կապված շատ հարցեր, քննադատել ուսուցման հին, սխոլաստիկ ձևերն ու մեթոդները, դրվատել նորը, առաջավորը: Ուշադրության է արժանի այն փաստը, որ դրանց էջերում թարգմանաբար տպագրվել են նաև առաջավոր ռուս և եվրոպական մանկավարժների հոդվածներ:

Այսպիսով, բազմադարյա պատմության դաժան փորձություններով անցած արցախահայությունը մոտեցավ իր պատմության նոր դարին՝ հասարակական-քաղաքական հեղաշրջումներով, փոթորկվող, լուսավորության ու ազատության գաղափարներով շնչող XIX դարին, որը նշանավորվեց պատմական բախտորոշ իրադարձություններով: Արևելյան Հայաստանը (նաև Արցախը) միացավ Ռուսաստանին: Այդ շրջադարձերը վճռական դեր խաղացին Արցախի ժողովրդի կյանքում, հիմք դնելով նոր ժամանակների պահանջներին համահունչ աշխարհայեցողությանը, մշակութային և նոր կրթական համակարգին, որը սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի ընդհանուր աշխուժացման, լուսավորչական շարժման հենքի վրա որոշ փոփոխություններ է կրել XIX դարի երկրորդ կեսին, առավել ևս XX դարի առաջին երկու տասնամյակում: Պատմաշրջանում մշակվել են կրթության համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնք առավել զարգացան խորհրդային շրջանում:

Հանրահայտ ճշմարտություն է, որ կրթական համակարգը միշտ էլ արտացոլել է այն փոփոխությունները, որոնք կատարվել են հասարակության մեջ և կոչված են բավարարելու նրա պահանջները: Ինչպես ցույց են տվել մեր բազմամյա ուսումնասիրությունները, սկսած V դարից մինչև XX դարի առաջին երկու տասնամյակը, հայ իրականությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական տեղաշարժերը, մշակութային զարթոնքը, անշուշտ, պահանջում էին նաև կրթադաստիարակչական նոր փոփոխություններ: Հիրավի XX դարի հայ կրթական համակարգի հիմքը դրվել է մաշտոցյան շրջանում և այնուհետ զարգացել խորհրդային շրջանում, որն ամբողջական կներկայացվի աշխատության երկրորդ հատորում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ.Խ., Երկեր հ. 4, Երևան, ՀԳԱ հրատ, 1970:
2. Աբեղյան Մ.Խ., Հայոց հին գրականության պատմություն, «Հայպետհրատ», Երևան 1944:
3. Աբեղյան Մ.Խ., Հայոց լեզվի ուղղագրություն, Թիֆլիս, 1982:
4. Աբրահամյան Ա.Գ., Շիրակացու Մատենագրությունը, «Հայպետհրատ», Երևան, 1944:
5. Աբրահամյան Ա.Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, «Հայպետհրատ», Երևան, 1953:
6. Աբրահամյան Ա.Գ., Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973:
7. Աբրահամյան Ա.Գ., Հայոց գրի և գրչության պատմություն, Երևան, 1959:
8. Աբրահամյան Ա.Վ., Հայկական լուսավորչական շարժումը և ժողովրդական կրթությունը, Երևան, 1985:
9. Աբրահամյան Հ., Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ս.Էջմիածին, 2009:
10. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, Երևան, 1950:
11. Ագաթանգեղոս, Պատմությունն հայոց, Թիֆլիս, 1909:
12. Ադոնց Ն., Անծանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից, Վենետիկ, 1925:
13. Ալեքսանյան Լ.Ղ., Գուրգեն Էդիլյան, «Հայպետհրատ», Երևան, 1973, 218 էջ:
14. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893 և Հայապատում, 1901:
15. Ալպոյաճյան Ա.Մ., Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946:
16. Աղաբաբյան, Դեպի դպրոց, մեր ծխական դպրոցների մասին, Թիֆլիս, 1912:
17. Աղայան Ղ., Երկերի ժող. հ.3, «Հայպետհրատ», Երևան, 1963:
18. Աղայան Ղ., Երկեր ժող. հ.4, «Հայպետհրատ», Երևան 1968:
19. Ղ. Աղայանի մանկավարժական ժառանգություն (հոդվածների ժողովածու) (150 ամյակի առթիվ), 1991:
20. Աղայան Ղ., Իմ կյանքի գլխավոր դեպքերը, Թիֆլիս, 1893:
21. Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, «Հայպետհրատ», Երևան,1963:
22. Աճառյան Հ., Պատմություն Հայոց նոր գրականության, Վաղարշապատ, պրակ. Ա. 1906:
23. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Երևան 1949, 2-րդ մաս, Երևան, 1951:
24. Այվազյան Գ., Պատմություն Խալիպյան ուսումնարանի հայոց (1858-1871), Թիֆլիս, 1880:
25. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), Հ.Ա., Բաքու 1916, հ.Բ (1870-1900), Էջմիածին, 1922:
26. Անմոռաց դեպքեր, Ներսիսյան դպրոցի սաներ, Երևան, 1965:
27. Ակնունի, Կովկասյան վերքեր, հատ 1, Ժնև,1903:
28. Ակնարկ հայ երաժշտության պատմության, Երևան, 1963:
29. Առաքելյան Ա.Գ., Հայ ժողովրդի մշակույթի զարգացման պատմություն, Երևան, 1975:
30. Առաքելյան Ա.Գ., Հայ ժողովրդի մշակույթի զարգացման պատմություն, հ.2, Երևան, 1959:

31. Առաքելյան Հ., Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը, ուսումնական մասի համ. տեղեկագիր (1858-1913), Շուշի:
32. Առաքելյան Հ., Իմ հիշողությունները. Շուշի, 1913, 71 էջ:
33. Առաքել վարդապետ, Դիզակի մելիքությունը, Երևան 1973:
34. Առաքելյան Խ., Խրիմյան Հայրիկի կաթողիկոսական ընտրությունը, Թիֆլիս, 1893:
35. Առաքելյան Գ., Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարերում, Երևան, 2003:
36. Առաքել Դավրիժեցի, Պատմություն հայոց, Վաղարշապատ, 1896:
37. Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակները 4-7-րդ դարերում, Երևան, 1949:
38. Ավագյան Ս.Դ., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Երևան, 1989:
39. Ավագյան Ս.Դ., էջեր Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքի պատմությունից, Երևան, 1982:
40. Արծրունի Թովմա, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:
41. Արշարունի Ա., Մոսկվայի համալսարանն ու հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955:
42. Արիստակես Լատիվերտցի, Պատմություն, Թիֆլիս, 1912:
43. Արտավազդ Սուրենյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրած Երուսաղեմ, 1918:
44. Արփիարյան Ս., ժամանակակից պատմության էջեր, Կ.Պոլիս պահպանողական վարչություններ (Նոր կյանք, Լոնդոն, 1898թ. 1-7):
45. Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրութեանց, պրակ Ա, Թիֆլիս, 1904:
46. Արարատյանց Ա., Հիմնարկություն գավառական ուսումնարանի, Թիֆլիս, 1889:
47. Բաբայան Լևոն, Լեո, Թիֆլիս, 1908:
48. Բաբայան, Խոջալուի գերեզմանները, «Ազգագրական հանդես», 1896:
49. Բաբայան Ա., Հայ գիրքն ու տպագրությունը, Երևան, 1963:
50. Բաբախանյան Ա., Հաշիվ Ղարաբաղի հայոց թեմական դպրանոցի հոգաբարձության, Շուշի, 1890:
51. Բաբայան Խ.Ս., Կղերիկոսական դպրոց, մեր ծխական դպրոցների մասին, Թիֆլիս, 1912:
52. Բալայան Զ., Դժոխք ու դրախտ, (Արցախի ազատագրական պատերազմի մասին), Երևան, 1995:
53. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002:
54. Բալայան Վ., Գիշի. Պատմական անցյալն ու ներկան, Երևան, 1997:
55. Բալայան Մ., Հայ Աղավնից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը) Ստեփանակերտ, 2009:
56. Բաղդասարյան Բ., էջեր Երևանի կրթական օջախների պատմությունից (1920-1971),1971:
57. Բաղալյան Մ., Իսահակ Հարությունյանը դաստիարակության մի քանի հարցերի մասին, «Լույս» հրատ., Երևան, 1975:
58. Բահաթուրյան Ա., Հայ մանկավարժներ, Երևան, գիրք Բ., 1993, Բահաթուրյան Ա., ուղեցույց հայ ուսուցչի, Թիֆլիս, 1882:
Բարխուդարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1985:

59. Բարխուդարյան Մ., Աղավնից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893:
60. Բարխուդարյան Մ.Ե., Արցախ, Թիֆլիս, 1895, Երևան, «Ամարաս», 1995:
61. Բարխուդարյան Վ.Բ., Հայկական գաղթավայրերը, Հայաս. լուս. նախար. տպ. Երևան, 1991:
62. Բարսեղյան Խ., Մի էջ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1964:
63. Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ.բ., Թիֆլիս, 1907:
64. Բարխուդարյան Վ., Ոսկանյան Վ., Հայ ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան,1978:
65. Բարսե Ս., Լեռնային Ղարաբաղ, Բաքու 1963:
66. Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886:
67. Բաստամյան Վ. Պատմական տեղեկություններ ազգային դպրոցների մասին, նոր դպրոց, Թիֆլիս, 1912:
68. Բեգլարյան Մ.Գ., Իմ սերնդի ճակատագիրը, «Սոնա» հրատ., Ստեփանակերտ, 1998, 162 էջ:
69. Բուդևղեան Արտաշես, Մանկավարժական համառոտ զրույցներ, Ս. Պետերբուրգ, 1901:
70. Բժշկյանց Հ., Հմտության մանկանց, Վենետիկ, 1796-1832:
71. Գամաղելյան Մ., Էջմիածնի Գևորգյան ճեմարանի պատմությունից, «Խորհրդային մանկավարժ», 1964թ. 3:
72. Գասպարյան Ռ.Հ., Շուշի, ՀԳԱ հրատ., Երևան, 1993:
73. Գամաղելյան Մ., Նվիրում կրթական գործի, Երևան, 1996:
74. Գալստյան Ա., Պատմական համառոտ տեղեկություն Բաքվի մարդասիրական ընկերության 25-ամյա գործունեության, Թիֆլիս, 1891:
75. Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978:
76. Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատամարտերում (XVI դարից մինչև 1917թ.), Երևան, 2004:
77. Գալստյան Թ.Հ., Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը, Երևանի պետ. համ. հրատ., Երևան, 1979:
78. Գասպարյան Մ., Հայերենի գրուսուցման տառահեգական մեթոդը և այդ մեթոդով կազմված հայ այբբենարանները 1500 տարվա ընթացքում, Երևան, 1946:
79. Գարգաշյան Ա., Քննական պատմություն հայոց, մասն Ա.Բ., Գ և Դ., Թիֆլիս, 1895:
80. Գաբրիելյան Մ.Ա., Խրիմյան Հայրիկ, Նյու-Յորք,1892:
81. Գեղամյան Ե., Ռուս. բյուրոկրատիան և հայերը, Բաքու, 1917:
82. Գևորգյան Լ., «Մուրճ» ամսագիրը, Երևան, 1982:
83. Գևորգյան Լ., Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996:
84. Գիլուխանդանեան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմությունը, մաս Ա. Փարիզ, 1943:
85. Գրիգորյան Զ., Ռուս – հայ ժողովուրդների համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957:
86. Գրիգորյան Զ., Ռուս – հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960:
87. Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005:
88. Գրիգորյան Գ., Ներսիսյան դպրոց, Երևան 1976:
89. Գազարյան Մ., Խորեն Եպիսկոպոս. Ստեփանեի մանկավարժական

գործունեությունը, էջմիածին 1960:
90. Գիտական աշխատություններ Երևանի Խ.Աբովյանի անվան մանկ. ինստ., 1960թ:
91. Գորոյան Ն., Դաստիարակություն հայոց, Թիֆլիս, 1880:
92. Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ,1910:
93. Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցման, Կ.Պոլիս, ՌՃՀԸ-1729:
94. Դանիելյան Է., Գանձասարի վանքը, Երևան, 2009:
95. Դանիելյան Ա.Գ., Սեդրակ Մանդինյան, «Լույս», հրատ., Երևան, 1964:
96. Դավթյան Հ., Հայ գիրքը 1801-1850թթ., «Հայպետհրատ», Երևան, 1967:
97. Դավթյան Հ.Խ., Զրույցներ դպրոցականի դաստիարակության մասին, Երևան, 1974:
98. Առաքել Դավրիժեցի, Պատմություն հայոց, Վաղարշապատ, 1896:
99. Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947:
100. Դիլոյան Վ., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (18-րդ դարի 2-րդ կես), Երևան, 1966:
101. Դիվան Խաչատուր Աբովյանի, Երևան,1940, նույնը հ.2, 1948:
102. Դիվան Հայոց պատմության, գիրք Ա.Բ. 1893. գիրք Գ.1894, գիրք Ժ,1912, գիրք ԺԱ,ԺԳ, 1917:
103. Դիստերվեգ Ադ., Մանկավարժական ընտիր երկեր, «Հայպետհրատ», Երևան,1963:
104. Դպրոցների նյութական դրամական ապահովվածության հարցը, Թիֆլիս, 1908:
105. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին, հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
106. Երզնկեան Գրիգոր, Դասավանդման խորհուրդներ, Վաղարշապատ, էջմիածին, 1892:
107. Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայքը XIX դարում, հ.Ա, Թիֆլիս, 1894:
108. Երիցյան Ալ., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, 496 էջ:
109. Երկանյան Վ.Ս., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), ՀԳԱ հրատ., Երևան, 1970:
110. Երկանյան Վ.Ս., Հայկական մշակույթը 1800-1917թթ., ՀԳԱ հրատ., Երևան, 1982:
111. Երզնիկյան Գ., Պատմություն մանկավարժության, Թիֆլիս, 1895:
112. Երեմյան Ե.Գ., Գյուրջյան, նկարիչ Ստեփանյան, Աղաջանյանի կյանքն ու արվեստը, Երևան 1927:
113. Եկեղեցական ծխական դպրոցների ծրագիր, «Արարատ», 1868:
114. ԵրՊՀ գիտական աշխատություններ՝ հ.12, 1940, հ.22, 1943, հ.23, 1947, հ.27, 1948:
115. ԵրՊՀ «Տեղեկագիր», հ. 11, Երևան, 1939:
116. Երխ. ԱՀՄի. ՀՄՀ գիտական աշխատություն, ժողովածու, թ. 2, Երևան 1942:
117. Զարբհանալանյան Հ., Հայկական հին գրականության պատմություն, Ա-Բ, Վենետիկ, 1886 և 1897:
118. Զարյան Ռ., էջեր հայ թատրոնի պատմությունից, Երևան, 1989:
119. Զաքարիա Սարկավագ, Պատմություն, հ. Ա,Բ և Գ, Վաղարշապատ 1870:

120. Էդիլյան Գ., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1923:
121. Էդիլյան Գ., Սեդրակ Մանդինյան, Թիֆլիս, 1916:
122. Թաղիադեանց Մ., Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847:
123. Թաղիադյան Մ., հ. 1, Կալկաթա, 1897:
124. Թամրազյան Հ.Ա., Արսեն Տերտերյան, Երևան պետհամ., հրատ, Երևան, 1982:
125. Թովմասյան Ս.Ս., Ստեփան Բալասանյանի գեղագիտական հայացքները, ՀԳԱ հատ., Երևան 1959, 123 էջ:
126. Թելունց Մ., Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, Երևան, 1995:
127. Թադևոսյան Մ., Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա. Շուշի, 1903:
128. Թումանյան Հ., հատ 5, Երևան, 1945:
129. Թովմա Արծրունի, Պատմությունն տանն Արծրունեանց, Թիֆլիս, 1927:
130. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-20թթ.), պատմական ակնարկ, Երևան, 2002:
131. Թադևոսյան Պատմություն Լազարյան տոհմի և Լազարյան ճեմարանի արևելյան լեզուաց, Վիեննա, 1953:
132. Թումանյան Կ., Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցին, Լոնդոն, 1905, հ.Ա.Բ.:
133. Թովմաս Արծրունի, Պատմություն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:
134. Թորոմանյան Թ., Հայկական ճարտարապետություն, Ա.Կ.Բ. հատ, Երևան, 1942 և 1948:
135. Թոփչյան Հ., Ցուցակ ձեռագրաց Խաչիկ Վարդապետի, Դադյան, Վաղարշապատ, 1898:
136. Իգնատյան Ա.Հ., Լազարյան ճեմարան, Երևան համ. հրատ, Երևան 1969:
137. Իգնատյան Ա., Ուշինսկին և հայ մանկավարժական միտքը, Երևան, 1975:
138. Իշխանյան Բ. Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914:
139. Իշխան Բ., Վիճակագրական ուսումնասիրություն Անդրկովկասյան ժողովուրդների, ժողովուրդների տերիտորիական բաժանումները և նրանց աճումը Անդրկովկասում, մաս Ա, Բաքու, 1919:
140. Ինճիճեան Հ.Ղ., Ստորագրութիան հին Հայաստանեանց, Վենետիկ, 1822:
141. Իշխանյան Ռ., Հայ գիրքը (1512-1920 թթ.), Երևան, 1981:
142. Լալայան Ե., հ.2, Արցախ, Վարանդա, ՀԳԱ հրատ, Երևան, 1988:
143. Լալայան Ե., Գանձակի գավառ, հ 1, Թիֆլիս, 1909:
144. Լալայան Ե., «Ազգագրական հանդես», 1897, էջ 102-112:
145. Լալայան Ե., Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915:
146. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 1838-1913, Թիֆլիս, 1914:
147. Լեո, Երեսնամյա հայոց բարեգործական ընկերություն Կովկասում 1881-1911թթ., Թիֆլիս,1911:
148. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
149. Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890:
150. Լեո, Ստեփանոս Նազարյանց,1902 հ. Ա. 224 էջ, հ.բ. 1902:
151. Լեոի առաջաբանը տիկ. Մ.Ալեքսանյանի «Գեղագիր ալբոմից», Թիֆլիս, 1891:

152. Լեո, Հայոց Պատմություն, հ. 2, Գիրք Բ, Հայպետհրատ, Երևան, 1967:
153. Լեո, հ. 3, Գիրք Ա., 1969 Գիրք Բ. 1973:
154. Լեո, հ.4, 1984:
155. Լեո, հ. 5, 1986:
156. Լեո, հ. 8, Սովետական գրող. հրատ., 1985:
157. Լեո, հայկական տպագրություն, հ.Ա. Բ. Թիֆլիս 1901:
158. Լեո, Մ.Թաղիադյան, «Դպրոց», Թիֆլիս, 1917:
159. Լեո, Պատմություն Երևանի թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914:
160. Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը, 1934, 203 էջ:
161. Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958:
162. ա) Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ Հայ ազգագրության և բանահյուսության նյութեր և ուսումնասիրություններ հ.12, Երևան, 1981:
162. բ) Խաչատրյան Հ., Վաչագան, Երևան, 1998:
163. ա) Խաչատրյան Հ.Հ., Գրական տեղեկատու, «Սովետական գրող» հր., Երևան, 1986:
163. բ) Խատիսյան Ս., Մանկավարժական խորհրդածություններ հայոց ուսումնական ուսումնարանների, Թիֆլիս, 1882, 126 էջ:
164. Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 1978:
165. Խոջաբեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին. «Հայաստան» հ., Երևան, 1991:
166. Խուդոյան Ս.Կ., Արևելահայ դպրոցները 1830-1920թթ., Երևան, «Լույս» հր., 1987:
167. Խուդոյան Ս.Կ., Միքայել Նալբանդյանը դաստիարակության մասին, Երևան, 1955:
168. Խուդոյան Ս.Կ., Սովետահայ դպրոցի պատմություն (1920-1941)թթ., Երևան, 1973:
169. Խզմալյան Թ., Ուսուցման և դաստիարակության հոգեբանական հիմունքները, Ալեքսանդրապոլ, 1910:
170. Խաչիկյան Լ., Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950:
171. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանաց աշխարհի, Թիֆլիս, 1913:
172. Կանոնադրություն Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Շուշի, 1859:
173. Կանոնադրություն Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Շուշի կաթ. դիվ., ֆ. 56, g. 3, գ. 311, թ. 46, 10 էջ:
174. Կանոնադրություն թեմական հոգևոր դպրոցի վիճակին հայոց Նոր Նախիջևանի, 1882:
175. Կանոններ Շուշիի հայոց թեմական դպրոցի հոգաբարձական ընտրության համար, Շուշի, 1899:
176. Կանոն թեմական հոգևոր դպրոցների վիճակին հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ, Նոր Նախիջևան, 1882:
177. Կանոնք եկեղեցական ծխական ուսումնարանների հայոց, Վաղարշապատ, 1889:
178. Կարապետյան Ս.Հ., Լեռնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան

գրադարանում, Ստեփանակերտ, 1962:
179. Կարինյան Ա. Բ., Ակնարկներ Հայ պարբերական մամուլի տպագրություն, ՀԳԱ հրատ. հ.1, Երևան, 1963:
180. Կարինյան Ա. Բ., Հայ պարբերական մամուլի պատմություն, ՀԳԱ., հ. 2, Երևան, 1960:
181. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանի բռնակցված շրջաններում, Երևան, 1999:
182. Կանայան Ստ., Ցուցակ հայերեն ձեռագրերի Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1893:
183. Կարինյան Հ., Մայր ցուցակ ձեռագիր Մատենից գրադարանի Սրբոյ Աթոռույն էջմիածնի, Թիֆլիս, 1863:
184. Կասյան Ս., Ռուսական ինքնակալության քաղաքականությունը Անդրկովկասում, «Նորք», 1923:
185. Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ., 1,2, Երևան, 2011:
186. Կարապետյան Հ., Մեծ պայքարի մարդիկ, Երևան, 1967:
187. Կարապետյան Լ., Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, 1992:
187. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի Հայերեն վիմագրերը, Երևան, 1997:
188. Կոմենսկի Յ.Ա., Մեծ դիդակտիկա, «Հայպետհրատ», Երևան, 1962, Կոստանտինով Ն.Ա., Մեդինսկի Մ., Մանկավարժության պատմություն, «Լույս» հրատ., Երևան, 1972:
190. Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց, կյանքը, գործունեությունը, Երևան, 1979:
191. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:
192. Կոստանդյան Կ., Հայ գիտության կորուստներից, «Բանբեր», գիտական ինստիտուտ, էջմիածին, 1922:
193. Կոստանդյան Կ., Հայոց վանքերը, Մոսկվա, 1886:
194. Կորյուն, Պատմություն հայոց և մահուան սրբոյն Մեսրոպայ Վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913:
195. Կոգա, Մետաքսագործությունն ու մետաքսագործությունների բանվորները Ղարաբաղում, Բաքու, 1918:
196. Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ., 1, Երևան, 2011:
197. Կյանքի էջեր, կազմողներ՝ Պ. և Գ. Գրիգորյաններ, Երևան, 2011:
198. Կրթությունը և գիտությունը Արցախում (գիտա-մեթոդական ամսագիր), թ.1-2, «Ամարաս», հրատ., Երևան, 2001, 92 էջ:
199. Կոնստանտինով Ն.Ա., Մանկավարժության պատմություն, Երևան, 1972:
200. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1909:
201. Հակոբյան Թ.Հ., Երևանի դպրոցները 1828-1880թթ., «Խորհրդային մանկավարժ», 1989:
202. Հայ ժողովուրդի պատմություն, ՀԳԱ հրատ., հ. 5, Երևան, 1974, Հ.6, 1972:
203. Հայոց եկեղեցական տարրական դպրոցների տարրական ծրագիր, Թիֆլիս, 1908:
204. Հայ եկեղեցական դպրոցների ուսումնական ծրագիր, Վաղարշապատ, 1910:
205. Հայ մշակույթի նշանավոր գործիչները Երևանի պետ. համալսարանի, 1976:

206. Հանրագիտարան, ՀԳԱ հրատ., հ.1, Երևան, 1974:
207. Հարությունյան Գ.Հ., Արևելահայ մանկավարժական միտքը 19-րդ դարի 2-րդ կեսին, «Հայպետհրատ», Երևան, 1978:
208. Հարությունյան Գ.Հ., Արևելահայ դպրոցն ու մանկավարժական միտքը 19-րդ դարի 50-60-ական թթ., Երևանի համ. հրատ., Երևան, 1979:
209. Հարությունյան Գ.Հ., Արցախահայ դպրոցը 5–19-րդ դարերում, Արցախ. հրատ, 2001թ:
210. Հարությունյան Գ.Հ., Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում, «Լույս» հրատ., 1985:
211. Հարությունյան Գ.Հ., Արցախի թեմի լուսավորիչները, «Ազատ Արցախ» հրատ., 2002:
212. Հարությունյան Ն.Կ., Առաքել Բահաթրյան, Երևանի համ. հրատ., 1992:
213. Հայկունի Եղիշե, Հովակիմ ավագ քահանա Գեղամյանց, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010:
214. Հարությունյան Վ.Բ., Արցախ հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ 1998:
215. Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ, ԺԹ դար, Երևան 1934:
216. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1879-1917, Երևան, 1963:
217. Հացունի Վ., Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936:
218. Հացունի Վ., Դաստիարակությունը հին հայոց մեջ, Վենետիկ, 1923:
219. Հայթյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակները 1830-1920 թթ., Երևան, 1989:
220. Հովհաննիսյան Ա. Գ., էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրու-թյան, ՀԳԱ հրատ., Երևան, 1971:
221. Հովհաննիսյան Ա. Գ., Հուշեր բնութագրումներ, «Հայպետհրատ», Երևան, 1969:
222. Հովհաննիսյան Ա. Գ., երկու բնութագիր, «Հայաստան» հրատ., Երևան, 1927:
223. Հովհաննիսյան Ա. Գ., Նալբանդյանն և նրա ժամանակը, Գիրք Ա, «Հայպետհրատ», 1955, Գիրք Բ, 1958:
224. Հովհաննիսյան Ա.Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևանի պետ. համ. հրատ., Երևան, 1971:
225. Հրահանգ հայոց եկեղեցական դպրոցների, ՀՊԱ, կաթ. դիվ. ֆ. 56, g., 3, գ. 954, թ. 1, 16 էջ:
226. ա) Հրահանգ հայոց հոգևոր թեմական դպրոցի Երևանյան, Տփխիս, 1888, 8 էջ:
226. բ) Հայկական արմատները, «Եզերք», թ. 2, 2007թ. օգոստոս:
227. Հարությունյան Մ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին, 2010:
228. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996:
229. Հին բոլշևիկների հիշողություններ, գիրք 2-րդ, Երևան, 1961:
230. Հովհաննիսյան Ա.,Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ., Երևան, 1959:
231. Հայ ժողովրդի պատմություն, հ.4, Երևան, 1972:
232. Հայ ժողովրդի պատմություն, հ.5, Երևան, 1975:
233. Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981:
234. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978:

235. Հովհաննիսյան Կ., էջեր Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, Երևան, 1981:
236. Հասարակական պայքարի վավերագրեր, կազմող Հ.Մելիքյան, Երևան, 1984:
237. Հարությունյան Ղ.Ս., Կասյան Վ., Երևան, 1965, Նաև Հ.Ն. Կասյան, Մեծ պայքարի մարդիկ, Գիրք 1, Երևան, 1963:
238. «Հայոց լեզվի ուղղագրություն», Թիֆլիս, 1892, էջ 146, «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության», Երևան 1922, էջ 16, «Հայոց լեզվի տեսություն, Երևան 1931, էջ 380 և այլն:
239. ա) Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907:
239. բ) Հարությունյան Բ., 19-20-րդ դարերի հայ թատրոնի թատերգության, հ.1, Երևան, 1982:
240. Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Երևան, 1996:
241. Հայակական հանրագիտարան, հ. 12:
242. Հովհաննես Սարկավագ, Յաղագս քահանության, Սոփերք, Վենետիկ, 1870:
243. Հովսեփյան Գ., Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930:
244. Հովսեփյան Գ., Գրչության արվեստը հին հայերի մեջ, էջմիածին, 1913:
245. Հայ մշակույթի օրրանը, 1824-1924թթ., Երևան, 1911:
246. Հայ մանկավարժներ. գիրք Ա, Բ., Երևան 1958-1961թթ:
247. Հայերեն կարդալու և ուսուցանելու հրահանգ, Թիֆլիս, 1869:
248. Հակոբյան Թ., Երևանի դպրոցները 1828-1880 թվականներին «Սովետական մանկավարժ» 1959:
249. Հայ նոր գրականության պատմություն, Երևան, 1962թ:
250. Համառոտ հաշիվ Շուշիի Սուրբ Մարիամյաց օրիորդաց ուսումնարանի, Շուշի, 1894:
251. Հաշիվ Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Շուշի, 1890:
252. Հայ ազգային կրթության ժողով, Կ.Պոլիս, 1860:
253. Հարությունյան Ս., Սարգիս Կասյան, Երևան. 1927:
254. ա) Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության:
254. բ) Հովսեփյան Գ., Հիշատակն ձեռագրաց, Ս.էջմիածին, 1862:
255. Հովնան Գ., Ռուս և հայ գրական կապերը. Երևան, 1960:
256. Հովհաննես Նազարյան, Հայոց ընդհանուր ուսուցչական ժողովի պատմություն, Թիֆլիս, 1883:
257. Հովհաննես Ղուկասյանց, Բողոքականությունը Կովկասու հայոց մեջ, Թիֆլիս, 1896:
258. Հայոց թեմական դպրոցների ծրագիր, Թիֆլիս. 1916:
259. Հայոց ազգի ուսումնասիրություն, ուսումնարանները և ուսուցիչները, Ս. Պետերբուրգ, 1865:
260. Հարությունյան Իսահակ, մեր թեմական դպրոցները, «Նոր դպրոց», Թիֆլիս, 1909, թ.4:
261. Հրահանգ հայոց հոգևոր դպրոցի Երևանյան, Թիֆլիս, 1888:
262. Համբարյան Ա.Ս., Հայոց եկեղեցական բռնագրաված գույքի օգտագործումը ցարիզմի կողմից 1903-1905թթ. ՀԽՍՀ (ՀՀ) ԳԱ. «Տեղեկագիր», հասարակական գիտ., 1961, թ.10:

263. Հարությունյան Իս., Ներսիսյան հոգևոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդությունը, Թիֆլիս, 1894:
264. ա) Հայ պարբերական մամուլի պատմություն 18-19-րդ դարերի հ.1, 2006:
264. բ) Ղազախեցյան Ա.Մ., Հանրակրթական դպրոցը Սովետական Հայաստանում, «Լույս» հրատ., Երևան, 1972, 222 էջ:
265. Ղանալանյան Հ.Տ., Գիտության երախտավորները, Երևանի պետ համ. հրատ., Երևան. 1982, 123 էջ:
266. Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի ուսումնական մասի համառոտ տեղեկագիր (1858-1912թթ.), Թիֆլիս, 1914, 63 էջ:
267. Ղարիբջանյան Լ.Ղ., Երևանի պետական համալսարան, «Միտք» հրատ., Երևան, 1965, 205 էջ:
268. Ղարիբյան Ա.Ս., Հայ մանկավարժության և լեզվաբանության հարցեր, Գիրք 1, Օժանդակ ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, «Լույս» հրատ., Երևան, 1969, 282 էջ:
269. Ղարաբաղի տիրամայր Սուրբ Մարիամի օրիորդաց ուսումնարանի բացվելը, Շուշի, 1864, 53 էջ:
270. Ղլտճյան Արսեն, Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1912. 204 էջ:
271. Ղազարյան Հ., Մաթեոս Մամուրյան, Երևան, 1961:
272. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, պ.գ.դ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2000:
273. Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցի հոգաբարձական հաշվետվությունը 1889-1890 թթ., Շուշի, 1890:
274. Ղազարյան Մ., Արցախի արհեստի գանձերը, Երևան, 1993:
275. Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց և թուղթ Առ Վահան Մամիկոնյան, Թիֆլիս, 1908:
276. Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1946 և 1950:
277. Ճաղլարբեկյան Յ., Վեհափառ հայրիկը, Թիֆլիս, 1893:
278. Մալխասյան Ս.Տ., Համառոտ պատմություն Ներսիսյան Հոգևոր դպրոցի 75-ամյա գոյության (1824-1899թթ.) Թիֆլիս, 1900, 215 էջ:
279. Մախչանյան Հ., Մանկավարժական մտորումներ, Երևան 1992:
280. Մախչանյան Հ.Մ., Հայ գրականության ուսուցման պատմություն(5-20-րդ դարեր), Երևանի համ. հրատ.,1979:
281. Մախչանյան Հ., Մանուկյան Մ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևանի համ. հրատ., 1997:
282. Մանդինյան Ս.Ա., Մանկավարժական տարակուսանքներ մեր մեջ, Թիֆլիս, 1875:
283. Մանդինյան Ս. Ա., Կյանքի հանգամանքների համառոտ թվաբանություն, Թիֆլիս, 1886:
284. Մանուկյան Մ.Մ., Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկություններ, «Լույս» հրատ., 1980:
285. Մելքումյան Մ.Ս., Վ. Ա., Սուխոմլինսկին և հայ իրականությունը, Երևան, 2000:
286. ա) Միրզաբեկյան Ջ.Մ. Մեսրոպ Թաղիադյան, ՀԳԱ հրատ., Երևան, 1911:
286. բ) Մխիթար Գոշ, Կաթողիկոսք և դեպք Աղուանից Աշխարհի, ՇԲ դար, Վենետիկ, 1864:

287. Մխիթարյան Մ.Հ.,19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, ՀԳԱ, հրատ., Երևան, 1976:
288. Մովսիսյան Ա.Խ., Ակնարկ հին հայերի կրթության մասին, Երևանի պետ համ. հրատ., 1939:
289. Մովսիսյան Ա.Խ., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, հայպետհրատ, Երևան, 1858:
290. ա) Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան 1966:
290. բ) Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, ելույթների և հոդվածների ժողովածու, Երևան, 2002:
291. Մարկոսյան Ս., Ռուս-ֆրանսիական, ռուս-անգլիական հակամարտությունը Պարսկաստանում Անդրկովկասի նվաճման կապակցությամբ, Երևան, 1935:
292. Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998:
293. Մելքումյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990:
294. Մուսլումով Ի., Մոսեսովա Ի., Սարգսյան Ե., Սովետական Ղարաբաղ, Բաքու, 1983:
295. Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 2001:
296. Մկրտչյան Ա., Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում, Երևան, 1992:
297. Մկրտչյան Լ., Արցախ-Ղարաբաղը՝ իր անցյալով և ներկայով, Աթենք, 1998:
298. Մկրտչյան Վ., Գեներալ-ադյուտանտ Լազարև, Երևան, 2001:
299. Մկրտչյան Շ., Արցախյան գրառումներ, Երևան, 2001:
300. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003:
301. Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, պաշտոնական փաստաթղթեր, ականատեսների վկայություններ և այլ նյութեր 1990թ., հունվարի 13-19-ի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով, Երևան, 1992:
302. Մուրադյան Մ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1985:
303. «Մանկավարժական հանրագիտարան» (ռուսերեն) հ.բ. էջ 649-650:
304. Մանդինյան Ս., «Մեր մանկավարժական տարակուսանքները, Թիֆլիս, 1875:
305. Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին, Երևան, 1970:
306. ա) Մանդինյան Մ., Մի էջ հայկական ուսուցման պատմությունից, Թիֆլիս, 1910:
բ) Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքեր, Երուսաղեմ, 1938:
307. Մելքումյան Ս., ԼՂՀ, ՀՀ ԳԱ. հր, Երևան, 1997:
308. Մանկավարժություն, Եր., 1969:
309. Մանդինյան Ս., Ինչ ծրագիրն է հարկավոր մեր ծխական ուսումնասիրություններին, Վաղարշապատ, 1882:

310. Մանդինյան Ս., Համառոտ մանկավարժություն, Թիֆլիս, 1878:
311. Մանդինյան Ս., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Եր., 1945:
312. Մխիթար Վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906:
313. Մարտինյան Մ., Ստեփան Աղաջանյան, Եր., 1956:
314. Մալխասյան Ս., Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի 75 ամյա գոյության (1824-1899), Թիֆլիս, 1900:
315. Մանանդյան Հ., Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928:
316. Մանդինյան Ս., Հայելի դաստիարակության տղայոց, Տպխիս, 1859:
317. Մատթեոս Ուռհայեցի, Պատմություն հայոց, Երուսաղեմ, 1869:
318. Մխիթար Անեցի, Պատմութիւն, Սանկտ-Պետերբուրգ, 1879:
319. Մխիթար Գոշ, Առակք և ոտանավորք խրատանք, Հրահանգ ուսումնասեր համբակած, Վենետիկ, 1790:
320. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1973:
321. Մուրադյան Դ., Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Եր., 1955:
322. Մելիքյան Մ., Հայ ազգի կազմավորման և նրա սոցիալական վերափոխման հարցի շուրջը, Եր., 1957:
323. Մովսիսյան Ա., Գասպարյան Մ. Ուշինսկու ազդեցությունը հայ մանկավարժների վրա 1870-ական թթ., Եր., 1945:
324. Մովսիսյան Ս., Ժողովրդական կրթության վիճակը և մարքսիստական մանկավարժական գաղափարների տարածումը Հայաստանում 1900-1917թթ., Եր., 1955:
325. Մ. Կորյուն, Պատմություն վարուց և մանկուան Մեսրոպայն Վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիս 1913:
326. Մանդինյան Ս., Դպրոցական կանոնադրություն, Թիֆլիս, 1875:
327. Մանդինյան Ս., Մի էջ հայկական ուսուցման պատմությունից, Թիֆլիս, 1920:
328. Նազարյան Հ., Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմություն, Թիֆլիս, 1883, 171 էջ:
329. Նազարյան Ս., Հայ մանկապատանեական մամուլը (1851-1917), ՀԳԱ հրատ., Եր.1979, 217 էջ:
330. Նազիկյան Գ.Ա. Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, «Լույս» հրատ., Եր., 1969, 382 էջ:
331. Նալբանդյան Մ., Ընտիր երկեր, Երևան, 1953, 683 էջ:
332. Ներսիսյան Հ.Մ., Թիֆլիսի Գայանյան դպրոցի պատմությունից «Սովետական մանկավարժ», 1959, էջ 3:
Ներսիսյան Հ.Մ., Դաստիարակությունն ու կրթությունն հայ կանանց դպրոցներում 19-րդ դարի երկրորդ կեսին, «Գիտական աշխատություններ», Երևանի համ. հրատ., պրակ 5, մաս 2, 1958, 128 էջ:
333. Նազարյան Հ., Կրթական վերածնություն, Կ.Պոլիս, 1901:
334. Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, Եր.,1955:
335. Ներսիսյան Մ.Գ., Խրիմյան հայրիկի դիմումը Նիկոլայ Երկրորդին (1907) և արխիվային այլ նյութեր (ՊԲԿ Երևան),1994:
336. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի պատմություն (1900-1917), ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1955թ.:

337. Շահազիզ Եր., Նոր Նախիջևանի ուսումնական գործի անցյալը, Թիֆլիս,1894:
338. Շահազիզ Եր., Դիվան Միքայել Նալբանդյանի, «Հայպետհրատ», Եր., 1932:
339. Շահնազարյան Ս., Որոշ կանոնադրության և ծրագրի անհրաժեշտությունը հայոց թեմական հոգևոր դպրոցների, Մոսկվա, 1900:
340. Շահնազարյան Ս., Հայոց թեմական հոգևոր դպրոցների կանոնադրության նախագիծը, Մոսկվա, 1902, էջ 172:
341. Շավարշյան Ա.Մ., Հայ մանկավարժներ (19-20-րդ դդ.), 1920, Եր.,1958:
342. Շավարշյան Ա.Մ., Հայ մանկավարժներ (19-րդ դար), Գիրք Ա., Եր., 1958, էջ 619:
343. Շավարշյան Ա., Աստվածատրյան Վ., Աղայան, «Մանկավարժ», Եր., 1941:
344. Շչուկինա Գ.Ի., Մանկավարժություն, «Լույս» հրատ., Եր., 1969:
345. Շատվորյան Հ., Թիֆլիսի հայ բարեգործական հաստատությունների պատմությունից (19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկիզբ):
346. Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ 19-20-րդ դարերում, Երևան, 1959:
347. Շահնազարյան Ա., Դպրանոցի աշակերտների մի քանի խրատներ, Մոսկվա, 1899:
348. Շահնազարյան Ա., Որոշ կանոնադրության ու ծրագրի անհրաժեշտությունը հայոց թեմական դպրոցներում, Մոսկվա, 1900:
349. Շավարշյան Ա., Բահաթրյանը մանկավարժ, Երևան, 1956:
350. Չամչյան Մ., Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի, հ. Գ, Վենետիկ, 1786:
351. Չերազ Մինաս, Ազգային դաստիարակություն, Կ.Պոլիս, 1876:
352. Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, մաս I, Երևան, 1940:
353. Պարսամյան Վ., Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947:
354. Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից (ուսումնասիրություն և փաստաթղթեր), Երևան, 1958:
355. Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն (1801-1917թթ.), հ.3, Երևան, 1967:
356. Պարսամյան Վ., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1978:
357. Պարսամյան Վ., Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1979:
358. Պետրոսյան Ռ., Արցախ. Պատերազմ, զինադադար, (հուշեր Արցախյան շարժման և ազատագր. պատերազմի մասին), Երևան, 2001:
359. Պզտիկեան Յարութիւն վրդ., Հայ ժողովրդի ազատգրութեան պայքարը (ԺԹ-ի դդ.), Երևան, 2004:
360. Պոտով Վ., Ղարաբաղի առաջին կամավորականները, Երևան, 1974:
361. Պռոշյան Պ., Հուշեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1940:
362. Պատկանեան Գ., Հայոց ազգի ուսումնառությունը, ուսումնարանները և ուսուցիչները, Ս. Պետերբուրգ, 1865:
363. «Պոլոժենիե», 1836թ. բարձրագույն կարգադրության յաղագս կառավարութեան գործոց լուսավորչական հայոց եկեղոցվոյ ի Ռուսաստանի, էջմիածին, 1836:

364. Պերպերյան Ռ., Դպրոցը և դպրությունը, Թիֆլիս, 1907:
365. Պատմական համառոտ տեսություն հայոց մարդասիրական ընկերության 25-ամյա գործունեության (1864-1889), Բաքու, 1891:
366. Պատվիրակություն Սուքիաս-Եպիսկոպոսի, Ս. Պետերբուրգի, հոգևոր դպրոցների մասին, արտատպված «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1907:
367. Պռոշյան Պ., Երկերի Ժող., հ. 7, Երևան, 1964:
368. Պռոշյան Պ., Վերին Ագուլեցոց երկու ուսումնարանի բացվելը և կանոնադրությունը, Մոսկվա, 1868:
369. Պռոշյան Պ., Գյուղական վարժապետներ, հ. 3, 1954:
370. Պատմական համառոտ տեղեկություն Բաքվա հայոց մարդասիրական ընկերության 35-ամյա գործունեության (1864-1889), Բաքու, 1891:
371. Ջալալյան Հ. Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփխիս, 1842, մասն Ա. 235 էջ, մասն Բ., 1858, 517 էջ:
372. Ջալալյան Ե.Հ., Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868:
373. Ջավախաշվիլի Ի. Վ., Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության մասին, Եր., 1937:
374. Ջուհարյան Թ. Գ., Հայ գրականության մեթոդիկա, Երևան, 1972:
375. Ջուհարյան Թ. Գ., Հայոց լեզվի և գրականության ուսուցման ուղին 40 տարում, «Սովետական մանկավ.», 1960:
376. Ռաշմաճյան Տ., Աղայանի դասագրքերը, «Խորհրդային մանկավարժ», 1940:
377. Ռշտունի Վ. Հ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, ՀԳԱ հրատ., Երևան, 1956, 552 էջ:
378. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Երևան, 1990; հ. Բ, 1990, հ. Ե, Երևան, 1990:
379. Ռաշմաճյան Տ., Աղայանի դասագրքերը, «Սովետական մանկավարժ», 1940, թ. 6:
380. Սանթրոսյան Մ. Հ., Հայ մեծ լուսավորիչ մանկավարժ Խաչատուր Աբովյան, «Հայպետհրատ», Երևան, 1964:
381. Սանթրոսյան Մ. Հ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, «Հայպետհրատ», Երևան, 1964:
382. Սանթրոսյան Մ. Հ., Ներսիսյան, Դպրոցի պատմություն, «Լույս» հր., Երևան, 1981:
383. Սարգսյան Լևոն, Ժողովրդական կրթության գործը մեզանում, Մոսկվա, 1892:
384. Սարգսյան Լևոն, Մի քանի օր Արցախում և Սյունիքում, Թիֆլիս, 1905, 88 էջ:
385. Սարգսյան Ն., «Դպրոց» ամսագրի դերը հայ մանկավարժության զարգացման գործում, «Սովետական մանկավարժ», 1965, թ. 7:
386. Սիմոնյան Ց. Ռ., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Երևանի համ. հրատ., Երևան, 1971:
387. Ստեփան Սարգսի Մալխասյանց, ՀԳԱ հրատ., 1962:
388. Սարգսյան Ա., Հեղափոխության կրակների միջով, Եր., 1967:
389. Սարգսյան Ս., Արցախ, պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Եր., 1996:
390. Սարգսյան Վ., Ոգու փորձություն, Եր., 2000:

391. Սարումյան Ն., ԼՂՀ ինքնավար մարզը 1960-1988թթ., Եր., 2008:
392. Սարուխանյան Ն., Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմները մինչ հեղափոխական հայ պատմության մեջ, Եր., 1971:
393. Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928:
394. Սիմոնյան Հ. Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք I, Եր., 2003, Գիրք II, Եր., 2003:
395. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, հ.Ա, Եր.1996, հ.Բ., Եր., 1996:
396. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երևան, 2000:
397. Սմբատեանց Մեսրովբ արքեպ., Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղյանի և մյուս վանորեից և ուխտատեղեաց ևս և քաղաքացն և գիւղօրէից որք ի Շամախոյ թեմի, Տփղիս, 1896:
398. Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը 19-րդ դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2010:
399. Սևյան Վ., Շուշի, Եր., 1991:
400. Սարգսյան Ս., Մանուկ Աբեղյանը և հայ գրականության պատմությունը, Եր., 1946:
401. Սարգսյան Լ., Թեմական դպրոցի հաշվետվությունը, Շուշի, 1893:
402. Սաղյան Մ., «Հյուսիսափայլը»-ի պոեզիան, Եր.,1956:
403. Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքն ու նրա հեռանկարները, Թիֆլիս, 1920:
404. Սամվելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, ՀԱ, Եր., 1931 հ.2, 1941:
405. Սանթրոսյան Մ.Հ., Մ. Թաղադյանը մանկավարժ, Եր., 1959:
406. Սարգսյան Լ., «Հին ցավ ժողովրդական կրթության գործը մեզանում», Մոսկվա, 1892:
407. Սարգսյան Լ.,«Մայրենի խոսք» ընթերցանության ձեռնարկ «Մուրճ», 1906, էջ 1:
408. Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության. Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), Եր., 2011:
409. Վաղարշյան Վաղարշ, Երկերի ժողովածու, հ.1, 1975, հ.2, 1975:
410.Վ իրխով Ռուդոլֆ, Կովկասի դերը քաղաքակրթության պատմության մեջ, թարգմանել է Աթաբեկյանը, 1892:
411. Վրացյան Ս. ՀՀ, Եր., 1993:
412. Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմությունը, հ.1,2, ԺՆև 1913-1913թթ.:
413. Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմության, Վենետիկ, 1862:
414. Տեր-Գրիգորյան Ա.Ա., Դանիելյան, Հայ ուսուցիչների առաջին համագումար «Սովետական մանկավարժ», 1958, թ.11:
415. Ռաֆֆի, Երկեր, հ.8, Երևան,1957, 722 էջ:
416. Ռաֆֆի, Երկեր, հ.9, 1958, 543 էջ:
417. Ռաֆֆի, Երկեր, հ.10, Եր.,1959, 709 էջ:
418. Տեր-Գրիգորյան Ա., Առաքել Բահաթրյան, ԽԱՄի գիտ. աշխտ., Եր., 1971:
419. Չմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Եր., 1964:
420. Չամչեանց Մ., Պատմութիւն հայոց, Բ. Վենետիկ, 1785:
421. Ուլուբաբյան Բ., Դադի վանք կամ Խոթա վանք, Բեյրութ, 1980, 54 էջ:
422. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-15-րդ դարերում, Եր.,1975, 453 էջ:

423. Ուլուբաբյաբ Բ., Զրուցարան, հ.Ա., Եր.,1988:
424. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմություն, Եր., 1994:
425. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Եր., 1994:
426. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Եր., 1997:
427. Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Եր., 2001:
428. Փավստոս Բյուզանդ, Պատմութիւն հայոց, Տփխիս, 1914:
429. Փափազյան Վ., Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910:
430. Քամալյան Արշավիր, Ձեկուցագրեր 1922-1932թթ. (ԼՂԻՄ-ի լուսժողկողմի հաշվետվություններ), Ստեփանակերտ, 1932:
431. Քաջբերունի, Ստ. Նազարյանցի շուրջ 60-ական թթ., Եր., 1917:
432. Օրմանյան Մ., արքեպ., Ազգապատում, հ.Գ. մաս Ջ., Բեյրութ, 1961, հ. Գ.-Երուսաղեմ, 1927:
433. Օհանյան Ա., Լեոյի գեղարվեստական գործունեությունը, Եր., 1969:
434. Օրբելյան Ստ., Ժամանակագրություն, Եր., 1942:

ՌՈՒՍԵՐԵՆ

435. Вирабян А.Н., Знаменитые арцахцы, изд. “Аполлон”, Ереван, 155 стр..
436. Жерваков Н.А., Хрестоматия по истории педагогики, Т, пед. Изд., Москва, 193, 551 стр..
437. Ионнисян А.Р., Россия. Армянское освободительное движение в 80-х годах XVIII столети, изд. АН, Ереван, 1990, 193 стр..
438. Кавказский учебный округ, Положение Кавказского учебного округа в 1848г.4, 8 стр..
439. Описание Крепости Шуша и всего Карабаха, “Северная пчела”, СПБ, 1831, N11.
440. Отчет попеч. Кавказский учебный округ, 1896г., 86 стр..
441. Пискунов А.И., Очерки истории школы и педагогической мысли народов СССР вторая половина 19-ого века, изд. педагогика, Москва, 197..., 599 стр..
442. Педагогическая энциклопедия, Т.изд., Совет. Энциклопед., Москва, 196.., 879 стр..
443.Памятная книжка Кавказского учебного округа на 1879 годы, Тифлис, 187, 120 стр..
444. Сборник постановлений Министерства народного просвещении, СПБ, т., 186, 1223 стр..
445. Саркисян Н.Р., История русско-армянских педагогических связей 60-70-х годов 19-ого в., “Советская педагогика”.
446. Записки Алексея Петровича Ермолова с приложением, 1798-1826гг., Москва, 1991.
447. Записки Кавказского отдела Императорского русского географического общества (ЗКОИРГО), кн. VI, Тифлис, 1862.
448. Закон Азербайджанской Советской Социалистической Республики О Нагорно-Карабахской автономной области, Баку, 1981.

449. “Кавказский календарь” на 1849, Тифлис, тип. Глав. Упр.Зак. Краей, 1848.
450. “Кавказский календарь” на 1850г., Тифлис, тип. канц. намест. Кавказского 1849.
451. “Кавказский календарь” на 1915г., Тифлис, тип. Глав.Упр. Зак. Краей, 1914.
452. Золян С., Г.Мирзоян, Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Сборник документов, Ереван, 1991.
453. К истории образования Нагорно-Карабахской области Аз.ССР, 1918-1925гг., Документы и материалы, под редакцией д.и.н., Д.Гулиева, Баку, 1989.
454. Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах, Степанакерт, 1989.
455. Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20-60-ые гг. XIX, ч. I, Феодальные отишения и колониальный режим 1847-1848гг., Москва-Ленинград, Москва-Ленинград, 1936; ч. II, Феодальные отношения и колониальный режим 1843-1868гг., Москва-Ленинград, 1937.
456. Бархударян С., Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, Ереван, 2011.
457. В.Миллер, Москва, издаваемый при Дашковском этнографическом музее, 1888.
458. Сборник статических сведений по Закавказскому краю, под редакцией Е.Кондратенко, ч.I, Тифлис, 1902.
459. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. I, Тифлис, 1881, вып. III, Тифлис, 1883, вып. V, Тифлис, 1886, вып. VII, Тифлис, 1889, вып. XX, Тифлис, 1894, вып. XXIX, Тифлис, 1901, вып. XXXVIII, Тифлис, 1908.
460. Свод статических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., издан по распоряжению главноначальствующего гражданского частию на Кавказе Закавказским статическим комитетом, Тифлис, 1888.
461. Свод статических сведений о Кавказе, поставлен и издан под редакцией Н.И.Воронова, т. I, Тифлис, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, 1869.
462. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т.1, Тифлис, 1887.
463. Сегаль Л., Елизаветпольская губерная, впечатления и воспоминания, Тифлис, 1902.
464. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I, Москва, ч. II, Москва, 1833/34.
465. Советско-иранские отношения в договорах, конвенциях и соглашениях, МИД СССР, сборник документов, Москва, 1946.
466. Статус Нагорного Карабаха в политико-прававых документах и материалах, Ереван, 1995.
467. Статистическое описание Закавказского края с присовокуплением статьи, Политическое состояние Закавказского края в начале XVIII века и сравнение оного с нынешним, сост. О.Евицкий, СПб., 1835.

468. Цифровые данные о служащих в Кавказском наместничестве, “Тифлисский вестник”, 10 сентября, 1877.
469. Шопен И., Исторические памятники Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852.
470. Тунян В., “Положение” Армянской церкви 1836-1875, Ереван, 2001.
471. Тунян В., Церковная политика самодержавия в Закавказье в первой половине XIX в., Ереван, 2005.
472. Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье первой половине XIX в., Ереван, 2003.
473. Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX –нач. XX вв., часть первая, 1800-1826гг., Ереван, 2006, часть вторая, 1826-1836гг., Ереван, 2006, часть тертья, 1836-1844гг., Ереван, 2006, часть четвертая, 1845-1876, Ереван, 2007.
474. Документы и материалы по истории Армянского народа, социально-политическое и экономическое положение восточной Армении после присоединения к России (1830-1870), под ред. Н.Тавакаляна, Ереван, 1993.
475.Рожкова М., Экономическая политика Царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. И русская буржуазия, Москва-Ленинград, 1949.
476.Описание Карабахской провинции, составленное в 1823 году. Подготовка ко 2-ому переизданию и автор предисловия З.Гаджиева, Баку, 2003.
477. Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897.
478. Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. I, ч. II, Москва, 1823.
479. Константинов М., История педагогики, М., 1986г.
480. Евангулов Г., Местная реформа на Кавказе, С.Петербург, 1914.
481. Ерошкин Н., История государственных учереждений дореволюционной России, Москва, 1983.
482. Заварян С., Экономические условия Карабаха и голод 1906-1907гг., С.Петербург, 1907.
483. Золян С., Нагорный Карабах, Проблема и конфликт, Ереван, 2001.
484. История человечества, под общей редакцией Г.Гельмальта, т. V, Юго-Восточная и Восточная Европа, С.Петербург, 1896.
485. Агаян Ц., Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, Баку, 1956.
486. Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, Ереван, 1970.
487. Агаян Ц., Роль России в исторических судьбах армянского народа, Москва, 1978.
488. Арешян С.С., Армянская печать и царская цензура, Ереван, 1957.
489. Арутюнян А.Б., Народы закавказья.
490. Арешян С.С., Армянская печать и царская цензура, Ереван, 1957.
491. Арутюнян А.Б., Народы Закавказья в борьбе против русской революции, Ереван, 1957.
492. Аванесов Р.И., Очерк грамматики русского литературного языка, М., 1945г..

493. Ахов М., Очерки армянского народа, Россия и армянство. Сиб., 1902.
494. С.Ю. Витте, Воспоминания, т.2, М. 1960.
495. Арутюнян Г., Шуши: нововыявленные исторические надписи, Степанакерт, 2008.
496. Акты собранные Кавказского археографическою коммисею, под ред. Ад. Берже, т.1, Тифлис, 1866, т. IV, ч.I, Тифлис, 1870, т. VII, ч.I, Тифлис, 1878, т. X, Тифлис, 1885.
497. "Всеподданейшая записка, содержащая главнейшие выводы отчеты о произведенной в 1905 году, по высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии", С.Петербург, 1905.
498. Обзор Елисаветпольской губернии за 1897г., Тифлис, 1898.
499. Обозрение Российских владений за Кавказом (в статическом, этнографическом, топографическом и финансовым отношениях), ч.3, С.Петербург, 1836.
500. Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е.и.в. князев Михаилом Николаевичем с декабря 1862- 6 декабря, 1872, Тифлис, 1873.
501. Полное собрание законов Российской империи, Собрание второе в 55 томах, т. XV, отд. 1, 1840г., С.Петербург, 1841, N13592.
502. Полное собрание законов Российской империи, т. XXII, N22806, Собственный его Императорского Величества Канцелярии, 1848.
503. Присоединение Восточной Армении к России, (Сборник документов), составители Ц.П. Агаян, С.В.Тер-Авакимова.
504. Д.А.Мурадян, В.А.Дилоян, т.1, Ереван, 1972.
505. Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов, Тифлис, 1925.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1. «Ազգագրական հանդես», Շուշի, 1896, Ա գիրք, 1897, Բ գիրք:
2. «Աղբյուր», Թիֆլիս, 1886, թ.2, 4:
3. «Աշակերտ», Շուշի, 1917, թ.1, 2:
4. «Ապառաժ», Շուշի, 1917, թ.1, 4, 6:
5. «Արարատ», Վաղարշապատ, 1869, թ.3, թ.4, 1870, թ.3, 1871, թ.1, 1883, թ.1, 2, 1886, թ.2, 4, 1893, թ.4, 6:
6. «Արձագանք», Թիֆլիս, 1882, թ.2, 7, 1893, թ.4:
7. «Արցախ», Շուշի, 1919, թ.1, 2, 4:
8. «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1969, թ.1:
9. «Բաքվի ձայն», Բաքու, 1913, թ.2:
10. «Գործ», Շուշի, 1882, թ.1, 1883, թ.2, 1884, թ.1:
11. «Դաստիարակ», Թիֆլիս, 1873-1874թթ. համարները:
12. «Դաստիարակ», 1903, թ.2:
13. «Դպրոց», Վաղարշապատ, 1875, թ.7, 1876, թ.4:
14. «Լումա», Վաղարշապատ, 1905, թ.4:
15. «Խորհրդային մանկավարժ», Երևան, 1940, թ.2, 1972թ. 12:
16. «Եռանդ», Շուշի, 1917, թ.2, 3:

17. «Ծիածան», Շուշի, 1916, թ.1:
18. «Ծիծաղ», Շուշի, 1916, թ.1, 2:
19. «Կոմունիստ», Բաքու, 1923, թ.43:
20. «Կռունկ հայոց աշխարհի», Թիֆլիս, 1860, թ.2:
21. «Հայկական աշխարհ», Շուշի, 1874, թ.8, 1875, թ.1, 1876, թ.1:
22. «Հյուսիսափայլ», Մոսկվա, 1859, թ.8:
23. «Ղարաբաղ», Շուշի, 1911, թ.1,3, 1912, թ.8, 38, 51:
24. «Ղարաբաղի սուրհանդակ», Շուշի, 1918, թ.1:
25. «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1878, թ.1:
26. «Մանկավարժանոց», Թիֆլիս, 1884, թ.2, 1887, թ.1:
27. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1864, թ.46, 1865, թ.17:
28. «Միրաժ», Շուշի, 1913-1917թթ., թ.1, 2:
29. «Միություն», Շուշի, 1913, թ.2, 4:
30. «Մշակ», Թիֆլիս, 1874, թ.5, 1876, թ.17, 1880, թ.10, 1882, թ.4, 1894, թ.126, 1897, թ.15, 1902, թ.106, 1905, թ.55, 1906, թ.116, 1909, թ.1:
31. «Մուրճ», Թիֆլիս, 1890, թ.2, 1901, թ.2, 1905, թ.11, 12, 1906թ. համարները:
32. «Նեցուկ», Շուշի, 1917, թ.4, 6, 8:
33. «Նոր դար», Թիֆլիս, 1887, թ.28:
34. «Նոր դպրոց», Թիֆլիս, 1908, թ.9, 1917, թ.4:
35. «Նոր կյանք», Շուշի, 1919, թ.1, 5:
36. «Պայքար», Շուշի, 1916, թ.1:
37. «Սրինգ», Շուշի, 1917, թ.1:
38. «Վարժարան», Թիֆլիս, 1882, թ.1, 1882, թ.2, 1884, թ.2:
39. «Տարազ», Թիֆլիս, 1891, թ.2:
40. «Տեղեկագիր», Թիֆլիս, 1894:
41. «Փայլակ», Շուշի, 1915-1917թթ., 1915 ապրիլի 2:
42. «Փորձ», Թիֆլիս, 1877, թ.2, 1880, թ.4:
43. «Քնար խոսնակ», Շուշի, 1881, թ.1:

ՌՈՒՍԵՐԵՆ

44. “Армянский воспитанник”, 1917.
45. “Вопросы литературы”, 1960-1978.
46. “Литература в школе”, 1958-1978.
47. “Кавказский календарь”, 1846, 1882, 83, 84, 85, 98, 99-1900, 1916.
48. “Народное образование”, 1958-1978.
49. “Вестник воспитания”, 1905 N9.
50. “Советская педагогика”, 1958.
51. “Современная жизнь”, 1914, Баку.
52. “Учительская газета”, 1941-1978.
53. “Шушинский листок”, 1911.
54. “Шушинская жизнь”, 1913-1914.
55. “Коммунист”, Баку, 1923, N43.
56. “Русская школа”, 1901, N1.
57. “Журнал Министерства народного образования”, 1869, 43.
58. “Кавказский Календарь”, 1887-1888 համարները:

59. “Кавказский Календарь”, 1882-1900 համարները:
60. “Кавказский Календарь”, 1881, г.4,5.
61. “Кавказский Календарь”, 1881, г.4,5.
62. “Кавказский Календарь”, 1882, 1883, 1884, 1885-1898гг. համարները:
63. “Кавказский Календарь”, 1881, N8.
64. “Вестник воспитания”, 1905, г.9, ст. 134.
65. “Кавказский Календарь”, 1902 г..
66. “Кавказский Календарь”, 188 , N5, 1897, N4, 1898, N, 1900, N1.
67. “Советская педагогика”, 1958, N4, 6.
68. “Коммунист”, Баку, 1923, N43, 44, 45.
69. “Русская школа”, Баку, 1901, N1.
70. “Учительская газета”, Москва, 1978, N16, 18.
71. “Шушинская листок”, Шуши, 1911, N 2, 4.
72. “Шушинская жизнь”, Шуши, 1913-1914, N4, 6.

Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվ

ֆ.2, g.1, գ.97:
ֆ.7, g.1, գ.29, 33, 50, 153:
ֆ.19, g.1, գ.111, 126, 140, 1780, 1782,
ֆ.20, g.1, գ.62, 103, 130, 340,
ֆ.27, գ.21, 24, 55,
ֆ.28, գ.281, 283,
ֆ.35, g.1, գ.74, 99, թ.128,
ֆ.47, գ.542, թ.980, 983,
(Կաթ. դիվան)
ֆ.56, g.1 գ.173, թ., գ. 149, թ.50,
g.3, գ.5, 31, 32, 50, 113, 114, 119, 138,
g.3, գ.78, 43, գ.543, թ.1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9,
թ.10, 11, 12, 13, 14, 15, գ.149, թ.110,
թ.164, 170, գ.257, թ. 473, 480, գ.173,
թ.44-104, գ. 137, թ.108-112, գ.293,
թ.290, 632, գ.945, թ.1-10, գ.299,
թ.57-61, գ.113, թ.20, գ.1022, թ.61-64,
գ.177, թ.27-74, գ.284, թ.13-15, գ.128,
թ.1-19, գ.50, թ.60-62, գ.69,
թ. 35, գ.78, թ.43-49, գ.289, թ.13-14,
գ.331, թ.3, գ.311, թ.46-49, գ.113,
թ.1-3, գ.314, թ.6-9, 80, գ.280, թ.18,
ֆ.101, g.1, գ.50,
ֆ.102, g.1, գ.68, 776,
ֆ.113, g.1, գ.41, 45, 92, 124, 583,
ֆ.406, g.1, գ.57, թ.3, 4, g.2, գ.624, թ.2, գ. 606, թ.3:
ֆ.56, g.3, գ.43, գ.50, գ.52, գ.140, գ.173, գ.182, գ.280:
ֆ.64, g.2, գ.5:
ֆ.85, g.24, գ.307:
ֆ.112, g.1, գ.57:
ֆ.113, g.2, գ.3, g.3, գ.56, գ.61, գ.250, գ.324:

ֆ.114, g.1, գ.70, գ.221, g.2, գ.45, գ.70:
ֆ.150, g.1, գ.252:
ֆ.190, g.1, գ.252:
ֆ.199, g.1, գ.9:
ֆ.200, g.1, գ.49, գ.581, g.2, գ.94, g.16, գ.563:
ֆ.201, g.1, գ.41:
ֆ.221, g.1, գ.30:
ֆ.278, g.1, գ.14:
ֆ.314, g.1, գ.34, գ.111, գ.141:
ֆ.319, g.1, գ.1:
ֆ.370, g.1, գ.39:
ֆ.1022, g.1, գ.42, g.8, գ.189, գ.203:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
«Մատենադարանի» արխիվային բաժին:
Կաթ. դիվան. թղթ.336, վավ. 17, թ.337, վավ.4, 74,
թ.166, վավ.344, թ.116, վավ.363,
թ.71, վավ.396, թ.72, վավ. 416,
թ.126, վավ. 399, թ.166, վավ. 863,

Ալ.Երիցյանի արխիվ, թղթ.149, վավ.172,
Մատթեոս արքեպ. արխիվ, թղթ. 168, վավ.1, թ.169, վավ.14:

Հայկական հանրապ. գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժին,
«Մուրճի» արխիվ, թ.209,
Հայկական Հանր. գիտ. ակադ. պատմության ինստ. Լեոյի արխիվ, g.1, գ.111, 127,
ԼՂՀ պետական արխիվային նյութեր,
ֆ.10, g.1, թ.1, 54, 15, 39, 46, 47, 48, 51, 52,
գ.2, թ.140, 141, 151, 161, թ.170:
ֆ.1, g.1, գ.1, գ.20, g.2, գ.1, գ.2, գ.3, գ.6, գ.9, գ.10, գ.11, գ.13, գ.15, գ.17, գ.19. գ.23, գ.24, գ.25, գ.29, գ.35, գ.38, գ.39, գ.45, գ.46, գ.47, գ.48, գ.53, գ.54, գ.264:
ֆ.2, g.1, գ.354:
ֆ.2, g.1, գ.2, գ.4, գ.6, գ.52:
ֆ.250, g.11, գ.1, թ.38, g.11, գ.1, թ.38-39, g.11, գ.2, թ.58, գ.60, թ.44, գ.8, թ.3,4, 9, 15, 17, 20, 30, g.4, գ.1, թ.1:
ֆ .254, g.1, պ.մ.1, կ.1, g.1, պ.մ.2, կ.1, g.4, գ.1, g.1, պ.մ.2, կ.1, g.1, պ.մ.3, կ.1, g.1, պ.մ.4, կ.1, g.5, պ.մ.1, կ.3, պ.մ.54. կ.4, g.1,
պ.մ.12, կ.1, g.5, պ.մ.1, կ.3, g.1, պ.մ.12, կ.1:
ֆ.268, g.1, գ.1, g.1, գ.2, գ.3, գ.4, գ.6, գ.10, գ.11, g.13, գ.17, գ.15, գ.19:
ֆ.485, g.1, գ.14:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.
ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ V-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ: ԿՐԹԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1. Համառոտ ակնարկ Արցախի կրթական համակարգի սկզբնավորման ու զարգացման պատմաշրջանների մասին (V-XVIII դարեր) 7
2. Կրթական գործի կառավարման համակարգը, դպրոցական կանոնները, հրահանգները, ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգն ու պայմանները..18
3. Հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեությունը V-XVIII դարերում 25
4. Վաչագան Բարեպաշտի լուսավորչական գործունեությունը.....33
5. Կրթական գործի կազմակերպիչները 39
6. Կին մանկավարժների լուսավորչական գործունեությունը 50

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ
1. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը արցախահայության դպրոցական գործի զարգացման գործընթացում 59
2. XIX դարի առաջին կեսին Արցախի դպրոցների տիպերը և կառավարման համակարգը 67
3. Հայ եկեղեցին և դպրոցը 71
4. Դպրոցների նյութական-դրամական վիճակը 74
5. Դպրոցի ներքին կարգ ու կանոնը 77

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ
1. Արցախի թեմի լուսավորիչ մանկավարժների գործունեությունը 80
2. Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի լուսավորչական, գրահրատարակչական գործունեությունը 85
3. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի լուսավորչական գործունեությունը....92

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ (1850-1896թթ.)
1. Արցախահայ դպրոցի նոր վերելքի նախապայմանները: Դպրոցի առաջին կանոնադրությունները և նրանց նշանակությունը 95
2. Արցախի դպրոցական համակարգը և նրա նյութական բազան XIX դարի երկրորդ կեսին (1850-1896թթ.) 109

3. Լուսավորչական շարժումը և կրթական գործի առաջադրած խնդիրները 134
4. Արցախի կրթական համակարգի բարեփոխումների և լուսավորության հարցերը Շուշիի պարբերական մամուլի էջերում (1874-1920) 138
5. Շուշիի թեմական դպրոցի լուսավորական գործունեությունը (1838-1920)....153
6. Հայկական դպրոցների վերաբերյալ ընդունված կանոնադրությունները (1870-1896) և ցարիզմի հակահայկական քաղաքականությունը լուսավորության բնագավառում 162
7. Հայ եկեղեցու դիմադրությունը ցարիզմի հակահայկական քաղաքականության դեմ և նրա ազգաշահ առաքելությունն ազգային դպրոցի պահպանման գործում 169
8. Արցախի դպրոցական գործի վիճակը 1896-1905թթ.: Դպրոցների փակումն ու վերաբացումը 178

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ: ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1850-1920 թթ.)

1. Ուսուցչի ընտրությունը, նշանակման կարգն ու պայմաններն Արցախի թեմում 1850-1890-ական թվականներին 183
2. Ուսուցչի պատրաստման հիմնախնդիրն Արցախի թեմում 1838-1920թթ. 191
3. Արցախի կրթական և մշակութային գործիչների գործունեությունը 1860-1920թթ. (առաջավոր փորձի ընդհանրացում) 206
4. Շուշիի թեմական դպրոցի սաները և նրանց գործունեությունը 1850-1920թթ. 266
5. Արցախի թեմի հոգևոր-մշակութային գործիչների լուսավորչական գործունեությունը 1850-1920թթ. 303
6. Արցախի կին լուսավորիչ-մանկավարժների գործունեությունը 1850-1920թթ. 336

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԻՃԱԿՆ ԱՐՑԱԽԻ ԹԵՄՈՒՄ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ (1900-1920 թթ.)

1. Արցախի դպրոցի ընդհանուր բնութագիրը 1900-1920թթ. 355
2. Արցախի թեմի առանձին դպրոցների (նաև Նուխիի հայկական դպրոցների) ընդհանուր բնութագիրը 368
2.1 Դիզակի գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը 370
2.2 Վարանդա գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը 379
2.3 Շուշի քաղաքի դպրոցների ընդհանուր բնութագիրը 395
2.4 Շուշի քաղաքի հարակից գյուղերի դպրոցները 420
2.5 Խաչենի գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը 422
2.6 Ջրաբերդ գավառի դպրոցների ընդհանուր բնութագիրը 431
2.7 Նուխիի գավառի հայկական դպրոցների ընդհանուր բնութագիրը 437
Ամփոփում 446
Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ 456

ԱՐՊԱՏ ՍԱՆՋԱՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԳՐԻԳՈՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՑԱԽԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Խմբագիր՝ Մ. Հաջյան
Սրբագրիչ՝ Ֆ. Ստեփանյան
Համակարգչ. շարվածքը՝ Լ. Բաղդասարյանի
Համակարգչ. էջադրումը՝ Թ. Հարությունյանի

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16,
ծավալը՝ 30 տպ. մամուլ: Տառատեսակը՝ Arial Armenian: Տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25, Ստեփանակերտ-2014
հեռ. +37447946360, +37497302002, E-mail:dizak-plus@mail.ru